
ՎՐԱԲ ՄԱՏԵՆԱԳԻՐՆԵՐ

Թ.Ժ ԴԱՐԵՐ



ԱՐԱՄ ՏԵՐ-ՂԵՎՈՆԴՅԱՆ

ՕՏԱՐ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՀԱՅԵՐԻ ՄԱՍԻՆ

16

FOREIGN SOURCES

ABOUT ARMENIA AND ARMENIANS

9(47.925)
Ա 82

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԱՐԱԲԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

Գ

ԱՐԱԲ ՄԱՏԵՆԱԳԻՐՆԵՐ

Թ - Ժ ԴԱՐԵՐ

3532

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ
ԲՆԱԳՐԵՐԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
ԱՐԱՄ ՏԵՐ-ՂԵՎՈՆԴՅԱՆԻ



ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ 2005

NATIONAL ACADEMY OF SCIENCES OF ARMENIA
INSTITUTE OF ORIENTAL STUDIES

ARAB SOURCES

III

ARAB HISTORIANS AND GEOGRAPHERS OF IX - X CENTURIES

INTRODUCTION AND TRANSLATIONS
FROM ORIGINAL TEXTS BY

Prof. ARAM TER-GHEVONDIAN

YEREVAN UNIVERSITY PUBLISHING HOUSE

YEREVAN 2005

ՀՏԴ 941 (479.25)
ԳՄԴ 63.3 (2Հ)
Ա 821



ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՏԵՆԱՇԱՐ
ԳԱԼՈՒՍՏ ԳՅՈՒԼԲԵՆԿՅԱՆ
ՀԻՄՆԱՐԿՈՒԹՅԱՆ

Հատորի կազմող և խմբագիր, ծանոթագրությունների և
ցանկերի հեղինակ, պատմ. գիտ. թեկնածու
Վահան Տեր-Ղևոնդյան

Ա 821 Արաբական աղբյուրներ Գ / Թարգմ. բնագրից, ներածությունը
Արամ Տեր-Ղևոնդյանի: Երևանի համալս. հրատ.: Եր., 2005, 704 էջ:

Գրքում քարգմանաբար ներկայացված են հատվածներ 9-10-րդ դարերի արաբ պատմիչների ու աշխարհագրագետների 19 երկերից: Դրանք հարուստ տեղեկություններ են պարունակում 7-10-րդ դարերի Հայաստանի և հարևան երկրների, ինչպես քաղաքական պատմության, այնպես էլ տնտեսության, վարչահրավական դրության ու մշակույթի վերաբերյալ:

Ուշագրավ տվյալներ կան նաև Հայաստանի լեռների, գետերի, լճերի, ընդհանրապես բուսական ու կենդանական աշխարհի, ինչպես նաև ճանապարհների, քաղաքների, արհեստների ու առևտրի մասին:

0503020913
Ա ——— 2005
704(02)05

ԳՄԴ 63.3 (2Հ)

ISBN 5-8084-0703-6

© ԵՊՀ հրատարակչություն, 2005 թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Կազմողի կողմից 7
Երկու խոսք 11
Ներածություն 13

Թ դար, պատմիչներ

Աբու Յուսուֆ 95
Հարկերի մատյան (Քիտաբ ալ-Խարաջ) 96
Ծանոթագրություններ 117

Վահբ իբն Մունաբբիհ, Իբն Հիշամ 121
Թագերի մատյան (Քիտաբ ալ-Տիջան) 122
Ծանոթագրություններ 125

Վակիդի 127
Ասորիքի նվաճումը (Ֆուտուհ ալ-Շամ) 128
Ծանոթագրություններ 130

Խալիֆա իբն Խայյաթ 133
Պատմություն (Տարիխ) 135
Ծանոթագրություններ 191

Իբն Կուտայբա 201
Գիրք իմացության (Քիտաբ ալ-Մաարիֆ) 202
Ծանոթագրություններ 204

Դինավարի 205
Մատյան երկարապատում ավանդությունների (Քիտաբ ալ-Ախբար ալ-Թիվալ) 206
Ծանոթագրություններ 219

Բալազուրի 223
Երկրների նվաճումը (Ֆուտուհ ալ-Բուլդան) 224
Ծանոթագրություններ 313

Յակուբի 329
Պատմություն (Տարիխ) 332
Ծանոթագրություններ 400

Թ դար, աշխարհագրագետներ

Խորեզմի 409
Գիրք երկրի պատկերի (Քիտաբ Սուրատ ալ-Արդ) 412
Ծանոթագրություններ 417

Ջահիզ 419
Հայացք վաճառականության վրա (Ալ-Տաբասսուր բի-լ-Տիջարա) 420
Ծանոթագրություններ 430

Իբն Խորդադբեհ 431
Գիրք ճանապարհների ու թագավորությունների մասին (Քիտաբ ալ-Մասալիք ուա ալ-Մամալիք) 433
Ծանոթագրություններ 455

Յակուբի 459
Գիրք երկրների մասին (Քիտաբ ալ-Բուլդան) 460
Ծանոթագրություններ 477

Իբն ալ-Ֆակիհ 479
Գիրք երկրների մասին (Քիտաբ ալ-Բուլդան) 480
Ծանոթագրություններ 505

Իբն Ռուստա 509
Գիրք թանկագին արժեքների (Քիտաբ ալ-Ալակ ալ-Նաֆիսա) 510
Ծանոթագրություններ 528

Ֆարղանի 531
Գիրք երկնային շարժումների մասին և աստղաբաշխության ժողովածու (Քիտաբ ալ-Հարաքատ ալ-Սամավիյա վա Իլմ ալ-Նուջում) .. 533
Ծանոթագրություններ 539

Կուդամա իբն Ջաաֆար 543
Հարկամատյան և արվեստ քարտուղարության (Քիտաբ ալ-Խարաջ ուա Սինաատ ալ-Քիտաբա) 544
Ծանոթագրություններ 565

Ժ դար, աշխարհագրագետներ

Իսթախրի 571
Գիրք թագավորությունների ճանապարհների մասին (Քիտաբ Մասալիք ալ-Մամալիք) 572
Ծանոթագրություններ 579

Իբն Հաուկալ 581
Երկրի պատկերը (Սուրատ ալ-Արդ) 583
Ծանոթագրություններ 643

Մուկադդասի 649
Լավագույն բաժանումները իկլիմների ճանաչման համար (Ահսան ալ-Տակասիմ ֆի Մաարիֆատ ալ-Ակալիմ) 650
Ծանոթագրություններ 660

Համառոտագրություններ 661
Ամփոփում (անգլերեն) 663
Ցանկեր 667

ԿԱԶՄՈՂԻ ԿՈՂՄԻՑ

Վաստակաշատ արաբագետ-հայագետ Արամ Տեր-Ղևոնդյանը 1980-ական թվականներին ձեռնարկել էր երկու ծավալուն ու հիմնարար աշխատանքներ, որոնք լինելու էին նախորդ տասնամյակների իր պրպտումների ու ուսումնասիրությունների տրամաբանական շարունակությունը:

Այդ աշխատությունների իրականացումն ու հրատարակումը ծանրակշիռ ներդրում էր լինելու Հայաստանում արաբագիտության ու միջնադարագիտության զարգացման գործում: Դրանցից առաջինը պիտի լիներ «Հայաստանը և արաբական աշխարհը է-ԺԶ դարերում» մեծածավալ աշխատությունը, որն ընդգրկելու էր հայ-արաբական փոխհարաբերությունները մարզպանական շրջանից մինչև օսմանյան տիրապետության հաստատումը: Ընդ որում, հեղինակը նպատակ ուներ անդրադառնալու հայ-արաբական ոչ միայն քաղաքական, այլև տնտեսական ու մշակութային բազմազան հարաբերություններին: Գիրքը ունենալու էր նաև մի այլ առանձնահատկություն: Եթե Ա. Տեր-Ղևոնդյանի «Հայաստանը և արաբական խալիֆայությունը» (1977) ներկայացնում է փոխհարաբերությունների պատմություն միշտ իբրև կենտրոն ունենալով Հայաստանը, ապա ստեղծվելիք գործը պիտի նախկինի համեմատ ավելի մեծ տեղ տար արաբական նյութին, զուգահեռ տաներ շարադրանքը և, լիներ ոչ թե շեշտված հայագիտական, այլ հավասարապես հայագիտական-արաբագիտական: Հանկարծահաս մահը կիսատ թողեց այս գործը: Շարադրված էին այդ աշխատության միայն առաջին հինգ գլուխները, որոնք առանձին գրքով հրատարակվեցին 1996 թվականին «Հայաստանը 6-8-րդ դարերում» խորագրով (ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն):

Երկրորդ ուղղությունը՝ արաբ մատենագիրների երկերի արաբերենից հայերեն թարգմանություններն ու հրատարակություններն էին, որոնք նա ծրագրել էր իրականացնել լիակատար ու համակարգված ձևով:

Արաբական պատմագրությունն ու աշխարհագրությունը ձևավորված գիտություն է դառնում Թ դարում ու զարգացում ապրում մինչև ԺԵ-ԺՋ դարերը, մինչև օսմանյան նվաճումը: Ուստի Ա. Տեր-Ղևոնդյանը ծրագրել էր ժամանակագրական սկզբունքով, թարգմանել, ծանոթագրություններով ու գիտական համապատասխան ապարատով հրատարակել արաբալեզու մատենագիրների բոլոր այն երկերից հատվածներ, որտեղ որևէ հիշատակություն կար Հայաստանի կամ հայերի մասին: Ընդ որում, արդեն արված գործը ցույց է տալիս, որ եթե 1981-ին հրատարակած 13-րդ դարի պատմիչ

Իբն ալ-Ասիրի երկերին նվիրված հատորում ուշադրության կենտրոնում է Հայաստանը և անմիջական հարևան երկրները, ապա թարգմանությունների այս նոր շարքը էլ ավելի լայն է բացում կարկինը, երբեմն ընդգրկելով նաև Բյուզանդիայի կենտրոնական մասը, Իրանի գրեթե բոլոր նահանգները, կովկասյան ու թյուրքական ամենատարբեր ցեղեր, Սիրիա, Իրաք, Պաղեստին, Եգիպտոս, մինչև անգամ հեռավոր Մաղրիբ ու Անդալուս (Մահմեդական Իսպանիա): Ընդ որում, բացի զուտ քաղաքական անցուդարձի վերաբերյալ հաղորդումներից, առատ տեղեկություններ կան առևտրատնտեսական հարաբերությունների, ժամանակի հարկային ու իրավական դրության, ամենատարբեր բնագավառների մասին: Ընդգծենք, որ այստեղ ևս գործել է վերոհիշյալ ուսումնասիրության սկզբունքը, այն է. հայ-արաբական փոխառնչություններին մոտենալ ոչ թե զուտ հայագիտական, այլ միջազգային տեսանկյունից, հայագիտության ու արաբագիտության նվաճումները զուգադրել այնպես, որ այս երկու բաղադրիչներից և ոչ մեկը չկորցնի իր գիտական լրջությունն ու մասնագիտական խորությունը:

Ցավոք, այս ասպարեզում ևս Ա. Տեր-Ղևոնդյանի նախաձեռնածը կիսատ մնաց: Նա հասցրել էր իրականացնել միայն առաջին հատորի համար նախատեսած թարգմանությունները և գրել էր մի ծավալուն ներածություն (ինչպես նաև Խորեզմիի, Ֆարղանիի, Յակուբիի ու Մուկադդասիի կենսագրությունները և փոքրաթիվ ծանոթագրություններ):

Հատորն ընդգրկում է Թ դարի 15 մատենագիրների (Աբու Յուսուֆ, Վահբ իբն Մունաբբիհ / Իբն Հիշամ, Վակիդի, Խալիֆա իբն Խայյաթ, Իբն Կուտայբա, Աբու Հանիֆա ալ-Դինավարի, Բալազուրի, Յակուբի, Խորեզմի, Ջահիզ, Իբն Խորդադբեհ, Իբն ալ-Ֆակիհ, Իբն Ռուստա, Ֆարղանի, Կուդամա իբն Ջաաֆար) պատմական ու աշխարհագրական բնույթի 16 երկեր, ինչպես նաև երեք աշխարհագրագետներ Ժ դարից (Իսթախրի, Իբն Հաուկալ, Մուկադդասի): Նշված դարաշրջանի խոշոր հեղինակներից ընդգրկված չէ միայն Թաբարին: Ամենայն հավանականությամբ Տեր-Ղևոնդյանը դեռ չէր ձեռնարկել Թաբարիի պատմության ամբողջական թարգմանությանը, որը հավանաբար, կամ կկազմեր առանձին հատոր, կամ Իսթախրիի, Իբն Հաուկալի ու Մուկադդասիի հետ միանալով, Ժ-ԺԱ դարերի այլ հեղինակների հետ, կամբողջացներ արաբական աղբյուրների հաջորդ հատորը:

Հայաստանի, կամ հայերի մասին տեղեկություններ պարունակող գլուխները, կամ ենթագլուխները Տեր-Ղևոնդյանը գիտակցաբար թարգմանել է ամբողջությամբ, ուստի ընթերցողը, երբեմն, կարող է հանդիպել դեպքերի կամ անձանց նկարագրությունների, որոնք առաջին հայացքից, Հայաստանի հետ անմիջական առնչություն չունեն:

Տառադարձության հարցում Ա. Տեր-Ղևոնդյանը ներկա հատորում հիմնականում հետևել է նույն այն սկզբունքներին, որոնք կիրառվել են 1981-ին լույս տեսած Իբն ալ-Ասիրի երկերի թարգմանություններում: Ուստի վերոհիշյալ հատորից, առանց որևէ փոփոխության, զետեղում ենք տառադարձության վերաբերող մասը (Տե՛ս Իբն ալ-Ասիր, Երևան, 1981, էջ 32-33):

«Մեր թարգմանության մեջ ամենադժվարին խնդիրներից մեկը տառադարձության հարցն է: Մինչ այժմ չկա հայերեն տառերով արաբերենի տառադարձություն, (որի համար պետք է լինեն տպագրական տառաձևեր, միջոցներ), ինչպես կա եվրոպական լեզուներում լատինական տառերով և ռուսերենում՝ ռուսական տառերով:

Այնուհանդերձ ստեղծել ենք մեզ համար պայմանական տառադարձություն, որը կիրառել ենք նաև այս թարգմանության մեջ: Արաբերենի 28 տառերից հնարավոր է հայերեն տառադարձել միայն 21-ը: Դրանք են ا(ա), ب (բ), ت(տ), ج(ջ), خ(խ), د(դ), ر(ռ, ր), ز(զ), س(ս), ش(շ), ط(թ)[1], غ(ղ), ف(ֆ), ق(կ), ك (ք), ل(լ), م(մ), ن(ն), ه(հ), و(ու), ي(յ):

Մնում է յոթ տառ, որոնց համար հայերենում չունենք համապատասխան համարժեքներ, ուստի և գոհացել ենք հարմարեցնելով: Այսպես լեզվաշրթնային ث(սա) տառի համար դրել ենք պարզապես ս: Սույն հայկական տառն օգտագործել ենք նաև լեզվաքմային ص(սադ) տառի համար: Կոկորդային ح(հա) տառի դիմաց դրել ենք սովորական հ, լեզվաքմային ذ(զալ) տառի դիմաց դ, լեզվաքմային ض(դադ) տառի փոխարեն նույնպես դ, լեզվաքմային ظ(զա) տառի համար զ: Սակայն ամենամեծ թերությունը կոկորդային ع(այն) տառի դիմաց ոչ մի հարմար գիր չլինելն է: Տվյալ դեպքում ապաթարցը հնարավոր չէ օգտագործել, որովհետև դա օգտագործել կարելի է «ալիֆ համզայի» համար, իսկ «այնի» համար թե՛ եվրոպական լեզուներում, թե՛ ռուսերենում ապաթարցի հակառակ ուղղությամբ կիսակլոր է օգտագործվում:

Հնարավորություն չկա նաև երկար ձայնավորներն (երկար ա, ու, ի) արտահայտելու:

Արաբերենի (ալ-) որոշիչ հոդը բաղաձայնով սկսվող բառից առաջ արտասանվում է ըստ իրեն հետևող տառի: Եթե նրան հաջորդում է արևային կոչվող բաղաձայներից մեկը (ت ث د ذ ر ز س ش ص ض ط ظ ل ن), ապա նրա լ հնչյունը, ազդվելով հաջորդ բաղաձայնից, կրկնակի է արտասանվում: Այսպես, գրվում է ալ-շամս (արև), բայց արտասանվում է աշ-շամս: Իսկ եթե հաջորդող բառի առաջին բաղաձայնը լուսնային է (ا ب ج ح خ ع غ ق ك م ه و ي), ապա կարդացվում է այնպես, ինչպես գրվում է: Այսպես, գրվում է ալ-կամար (լուսին) և նույն ձևով արտասանվում է: Հետևելով եվրոպական արևելագի-

[1] Այս տառի (ط) հայերեն տառադարձման հարցում չկա միասնական կարծիք: Ավելի հաճախ օգտագործվում է «տ» տառը, բայց մենք բոլոր տեղերում թողել ենք «թ», այնպես ինչպես գրել է Ա. Տեր-Ղևոնդյանը: (Վ. S. -Ղ.)

տության մեջ այժմ ընդունված սկզբունքին որոշիչ հողը գրում ենք միշտ ալ-ձևով, անկախ այն բանից, թե ինչպիսի բաղաձայն է նրան հաջորդում:

Նույնպես և Աբու (հայր) բառի դեպքում, երբ հոլովվելով դառնում է Աբի, ինչպես, օրինակ, Իբն Աբի Ջաֆար (Աբու Ջաֆարի որդի), դարձյալ գրում ենք եվրոպական արևելագիտության մեջ ընդունված ձևով Իբն Աբու Ջաֆար «Աբու» բառը միշտ պահելով ուղղական հոլովով»:

Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիան 1960-ական թվականների սկզբից ձեռնարկեց «Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին» շարքը, որի հրատարակման շնորհիվ հայերեն թարգմանվեցին հին հունական, բյուզանդական, ասորական, արաբական ու թուրքական արժեքավոր աղբյուրներ, որոնք ամփոփված են մինչ այժմ (1961-1990 թթ. ընթացքում) լույս տեսած 15 հատորների մեջ: Դրանցից երկուսը վերաբերում են արաբական աղբյուրներին: Նախ, 1965-ին հրատարակվեց Հակոբ Նալբանդյանի կազմած հատորը, որն ամփոփում էր 13-14-րդ դարերի երեք մատենագիրների (Յակուտ ալ-Համավի, Աբուլ-Ֆիդա և Իբն Շադդադ) երկերից հատվածներ: Իսկ 1981-ին Արամ Տեր-Ղևոնդյանի հեղինակությամբ լույս տեսավ ամբողջովին Իբն ալ-Ասիրին (13-րդ դար) նվիրված մի հատոր, որում թարգմանաբար տեղ են գտել հատվածներ նրա նշանավոր «Լիակատար Պատմություն», ինչպես նաև «Մոսուլի աթաբեկների պատմություն» երկերից:

Հայագիտության, մանավանդ պատմագիտության ու աղբյուրագիտության զարգացման համար այս անչափ կարևոր մատենաշարը 1990 թվականից հետո նոր հրապարակումներ չունեցավ: Եվ ահա, մեծ ընդմիջումից հետո, շնորհիվ **«Գալուստ Գյուլբենկյան» հիմնարկության** և նրա հայկական բաժնի անխոնջ տնօրեն, **դոկտոր Զավեն Եկավյանի** ազնիվ նախաձեռնության, հրատարակվեց պրոֆեսոր Արամ Տեր-Ղևոնդյանի անտիպ մնացած գործը, կազմելով «Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին» մատենաշարի հերթական հատորը:

Գիրքը հրատարակության պատրաստելու, մանավանդ ծանոթագրությունները կազմելու (առաջնորդվել ենք գոնե անհրաժեշտ նվազագույնը ապահովելու սկզբունքով) ընթացքում մեծապես օգտվել ենք վերոհիշյալ մատենաշարի նախորդ հրատարակություններից (հատկապես արաբական աղբյուրներից): Մասնագիտական խորհուրդների և աջակցության համար երախտագիտությունս եմ հայտնում ԵՊՀ Արաբագիտության ամբիոնի դոցենտ Դավիթ Հովհաննիսյանին և նույն ամբիոնի ասպիրանտ Մարատ Յավրումյանին:

Ներկա գիրքը ընդհանուր մատենաշարի մեջ 16-րդն է, իսկ արաբական աղբյուրների շարքում՝ 3-րդը:

Վահան Տեր-Ղևոնդյան

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Հայաստանի և հայ ժողովրդի միջնադարյան պատմության ուսումնասիրման համար հին հունական, բյուզանդական, ասորական, պարսկական, լատինական, վրացական, թուրքական և այլ պատմական աղբյուրներին առընթեր կարևոր նշանակություն ունեն արաբ մատենագիրների (պատմիչներ և աշխարհագրագետներ) երկերը, որոնք հորինվել են հիմնականում Թ-ԺԵ դարերում:

Սույն հատորում քաղվածաբար տեղեկություններ ենք թարգմանել Թ դարի թե՛ աշխարհագրական, թե՛ պատմական երկերից: Դրանց հեղինակներն են աշխարհագրագետներից՝ Խորեզմի (780-847), Ֆարղանի (Թ դար), Ջահիզ (775-869), Իբն Խորդադբեհ (820-912), Յակուբի (մահ. 897), Իբն ալ-Ֆակիհ (մահ. 903-ից հետո), Իբն Ռուստա (մահ. 913-ից հետո) և Կուդամա իբն Ջաաֆար (մահ. 932-ից հետո). պատմիչներից՝ Աբու Յուսուֆ (մեռ. 798), Իբն Հիշամ (մահ. 828/833), Վակիդի (մահ. 822), Խալիֆա իբն Խայյաթ (մահ. 854/855), Իբն Կուտայբա (մահ. 889), Դինավարի (մահ. 895) և Բալազուրի (մահ. 892). ապա Յակուբին, որն ունի թե՛ աշխարհագրական, թե՛ պատմական երկ:

Իններորդ դար հասկացությունը տվյալ դեպքում հարաբերական է: Իբն Խորդադբեհը, Իբն ալ-Ֆակիհը, Իբն Ռուստան և Կուդաման մահացել են տասներորդ դարի առաջին տասնամյակներում, սակայն աշխարհագրական գրականության մեջ համարվում են իններորդ դարի աշխարհագրական դպրոցի ներկայացուցիչներ: Աբու Յուսուֆին նույնպես կարելի է համարել իններորդ դարի պատմիչների շարքում, քանզի նրա իրավագիտական տեղեկությունները խիստ կարևոր նշանակություն ունեն Թ դարի պատմության համար և առնչվում են այս դարի իրադրությանը:

Սույն դարի արաբ մատենագիրների երկերում շարադրված է համաշխարհային պատմության այն ժամանակաշրջանը (Է-Թ դարեր), երբ աշխարհի հզոր տերություններից էր Արաբական խալիֆայությունը, իսկ Հայաստանը սերտ քաղաքական ու տնտեսական առնչության մեջ էր այդ պետության հետ:

Արամ Տեր-Ղևոնդյան

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ԴԱՐԱՇՐՋԱՆԸ

ա. Խալիֆայությունը

Դարեր շարունակ քաղաքակիրթ աշխարհից գրեթե մեկուսացած, վաչկատուն արաբը է դարում հանկարծակի մտավ պատմության ասպարեզ, անհավատալի արագությամբ կազմեց մի կայսրություն, որն իր ժամանակի ամենից ընդարձակն էր և արաբացրեց մեկ տասնյակից ավելի երկրներ, իսկ նրա կրոնը տարածվեց արևմուտքում մինչև Ատլանտյանի ափերը և արևելքում՝ Խաղաղ օվկիանոս: Սա պատմության տարօրինակություններից է:

Արաբական խալիֆայությունը որպես պետություն սաղմնավորվեց Արաբիայում: Այստեղ դեռևս Ք. ա. Ժ-Ը դարերում թերակղզու հարավում գտնվող Եմեն երկրամասում ծնունդ էր առել սեմական ազգաբնակչություն ունեցող մի թագավորություն Սաբա կոչված, որին հաջորդեց Հիմյարը (վերացավ 525 թ.): Այս հին սեմական ժողովուրդը դարերի ընթացքում արաբացավ, սակայն իր մշակույթով ազդեց վաչկատուն արաբի վրա:

Բուն արաբական ցեղերը դարեր շարունակ թափառել են իրենց թերակղզում և հայտնի են եղել դեռ ասորեստանյան ու բաբելական արձանագրություններում: Հելլենիստական դարաշրջանում հաճախ են ասպատակել և հաստատվել Ասորիքի ու Միջագետքի կողմերը[1]: Պետրան ու Պալմիրան (արաբ. Թադմոր) արաբական ծագումով բնակչություն ունեին, որն արամեացել էր, թեև Պետրայի արաբները կապված էին արաբական միջավայրին, մանավանդ որ Պետրայի նաբաթական գիրը հիմք էր դարձել արաբական գրի հնագույն ձևի առաջացմանը:

Դ-Է դարերում հեթանոս արաբների կյանքում փոփոխություններ էին կատարվում: Ցեղային կարգերը թեև մնում էին, սակայն տեղի էր ունենում շերտավորում և հարաբերությունները արտաքին աշխարհի հետ սերտանում էին: Ասորիքի հարավ-արևելյան կողմում հաստատվում է արաբական Ղասսան ցեղը, որը ենթարկվում է Բյուզանդիային, իսկ Միջագետքի հարավային Հիրա քաղաքում հաստատվում է Տանուխ

[1] Ph. Hitti, History of the Arabs, London, 1958, pp. 74-78.

ցեղը, որը ենթարկվեց Սասանյան Իրանին: Ղասսան ցեղը պաշտոնապես ընդունել էր քրիստոնեությունը միաբնակ (հակոբիկ) ասորիներից, իսկ Տաննուխը թեև ընդունել էր քրիստոնեությունը նեստորականներից, այսուհանդերձ Լախմ վերնախավը (տոհմը) պաշտոնապես մնում էր հեթանոս: Այս երկու ցեղերը[2] միջնորդ հանդիսացան քաղաքակիրթ աշխարհի և դարեր շարունակ մեկուսացած ցեղերի միջև: Ղասսանի ու Հիրայի ցեղապետերը հովանավորում էին անապատի արաբ բանաստեղծներին Ե-Զ դարերում:

Բուն Արաբիայի ցեղերի մեջ որոշ չափով տարածվել էր քրիստոնեությունը (Բաքր, Տաղլիբ և այլն) և մովսիսականությունը (հրեական կրոն), սակայն հիմնական զանգվածը միշտ մնում էր հեթանոս: Հիջազի արաբների կրոնը, որն ընդունված էր ամբողջ արաբական թերակղզում, բազմաստվածությունն էր: Գլխավոր աստվածությունը (ալլահը) երեք դուստր ուներ, որոնք հավանաբար Հիջազի երեք քաղաքների (Մեքքա, Թաիֆ և Յասրիբ՝ հետագայում Մադինա) դիցուհիներն էին:

Հիջազի քաղաքները և հատկապես Մեքքան առևտրական հարաբերություններ ունեին Ասորիքի հետ, ընդ որում մի քանի հազար ուղտերից բաղկացած կարավանները երթևեկում էին Հիջազի ու հյուսիսային երկրների միջև: Այս կարավանների տեր ցեղապետերը արդեն մեծապես տարբերվում էին ցեղի մյուս անդամներից և բավական նկատելի շերտավորում էր կատարվել ցեղերի ներսում: Հիջազը, որ համեմատաբար առավել զարգացած շրջանն էր Արաբիայում, բնականաբար ձգտում էր իր ազդեցությանը ենթարկելու մյուս շրջանները՝ Նաջդը (կենտրոնական Արաբիայում), Եմենը, Օմանը և այլն:

Արաբիայի միավորումը Հիջազի հովանու տակ իրականացավ նոր կրոնի՝ իսլամի (մահմեդականության) առաջացման շնորհիվ, որի հիմնադիրն էր Մուհամմադը: Նա 630 թվականին Մեքքայում տապալեց հեթանոսական կուռքերը և դարձավ Հիջազի մարգարեն և տիրակալը: Նույն թվին Արաբիայի տարբեր մասերից եկան հպատակություն հայտնելու և այսպիսով պատմության մեջ երբեք չմիավորված Արաբիան դարձավ մեկ իշխանության ենթակա:

Մուհամմադը մեռավ 632 թվականին: Նրա հաջորդները կոչվեցին խալիֆա (հաջորդ):

633-ին արաբները իրենց առաջին հարձակումը գործեցին բյուզանդական Պաղեստին նահանգի վրա: Անհավատալի արագությամբ անապատի ցեղերը նվաճեցին Բյուզանդական կայսրության հողերի մեծ մասը և ամբողջ Սասանյան Իրանը: Դա պայմանավորված էր ներքին ու արտաքին ազդակներով:

Ներքին ազդակներից պիտի հիշել տնտեսականը, քանի որ աղքատիկ Արաբիան բոլորովին ի վիճակի չէր գոհացնելու իր ռազմունակ ցեղերին, որոնք դարեր շարունակ ձգտել էին դուրս գալ և ասպատակել Միջագետքի, Պաղեստինի ու Ասորիքի արգավանդ ու բարեբեր հողերը: Նոր կրոնի դրոշի տակ միավորվելով, դարեր շարունակ իրար բզկտող արաբական ցեղերը իրենց ալաքն ուղղեցին արտաքին ուժերի դեմ: Իսլամը նպաստեց արաբների նվաճումներին հատկապես նաև այն պատճառով, որ նա հայտնի կրոններից միակն է, որ հանուն հավատի պատերազմը (ջիհադ) այլահավատների դեմ, հենց իր սրբազան մատյանում՝ Ղուրանում, համարում է ամեն մի հավատացյալի կրոնական պարտականությունը:

Այսուհանդերձ արաբական ցեղերի միավորումը և արաբական պետության կազմավորումը, որին անմիջապես հաջորդեցին նվաճումները, բոլորովին չէին տա այն առասպելական հաջողությունները, որոնց հասան արաբները, եթե չլինեին նաև արտաքին նպաստավոր գործոնները: Արաբների հաջողության երաշխիքը այն քաղաքական, տնտեսական ու հասարակական ճգնաժամն էր, որը համակել էր Բյուզանդիային ու Իրանին՝ արաբների ճանապարհը դեպի Ասորիք ու Միջագետք փակող պետություններին:

571 թվականից մինչև 629, միայն կարճատև ընդմիջումով (591-603) Բյուզանդիան ու Իրանը, կես դար գոտեմարտելով, լրիվ սպառել էին իրենց ռազմական հնարավորությունները: 629 թվականի հաշտությունից հազիվ չորս տարի էր անցել, երբ արաբները խուժեցին Պաղեստին ու Միջագետք իրենց առջև գտնելով ուժասպառ ու հյուծված զորքեր:

Երկու հզոր տերությունները նաև ներսից էին քայքայված: Քաղկեդոնի (451) տիեզերական ժողովից հետո կայսրության կողմից ընդունված երկաբնակությանը հակադրվեցին միաբնակ ուսմունքի կողմնակից (կամ երկաբնակությունը մերժող) եկեղեցիները՝ ղպտականը, ասորականը և հայկականը: Այնպիսի լարված տրամադրություններ էին ստեղծվել, որ Ասորիքում ու Եգիպտոսում նույնիսկ նախապատվությունը տալիս էին արաբներին: Սասանյան Իրանը նույնպես ներքուստ մաշված էր (չորս տարվա ընթացքում տասը արքաներ իրար

[2] Նախամահմեդական Արաբիայի մասին տես՝ C. de Perceval, Essai sur l' histoire des Arabes avant l' islamisme, 3 vol., Paris, 1847:

հաջորդեցին) մազդակյան աղանդավորական շարժման առաջացրած հակասությունների հետևանքով:

Այսպիսով արաբական պետության կազմավորումը և երկու հզոր տերությունների լիակատար քայքայումն (որը սոսկ պատահականություն էր) այնպիսի նպաստավոր իրադրություն ստեղծեցին, որ դարեր շարունակ միայն դրացի երկրներն ասպատակել երազող քոչվորը հանկարծ կարողացավ այնպիսի երկրներ նվաճել, որոնց գոյության մասին նվազագույն պատկերացումն իսկ չուներ:

Օմար խալիֆայի օրոք (634-644) Խալիդ իբն ալ-Վալիդ և Աբու Ուբայդա իբն ալ-Ջառահ զորավարները նվաճեցին Պաղեստինն ու Ասորիքը (633-640), Սաադ իբն Աբու Վակկասը գրավեց Միջագետքը և մտավ արևմտյան Իրան 637 և 641 թվականների հաղթանակներով, իսկ Ամր իբն ալ-Ասը նվաճեց Եգիպտոսը (640-642)[3]: Օգտվելով Յարմուքի ճակատամարտում Բյուզանդական կայսրության և Կադիսիայի ճակատամարտում Սասանյան զորքերի պարտությունից, Թեոդորոս Ռշտունին 639 թվականին միավորեց Հայաստանի երկու մասերը: Օմարի օրոք տեղի ունեցան 640 և 642-643 թվականների արշավանքները դեպի Հայաստան:

Օմարի սպանությունից հետո նրան հաջորդեց Օսման իբն Աֆֆանը (644-656), որն Օմայան տոհմից էր: Սրա օրոք շարունակվեցին նվաճումները և Իրանն ամբողջովին նվաճվեց, իսկ փախստական Հազկերտ Գ սպանվեց Մերվի մոտ: Թեոդորոս Ռշտունու և Մուավիայի 652-ին կնքած հաշտությունից ընդամենը երկու տարի անց՝ 654 թվականին ժամանակավորապես նվաճվեց Հայաստանը Հաբիբ իբն Մասլամայի ձեռքով: Եգիպտոսի կառավարիչ Ամրը նվաճել էր Լիբիան, իսկ դարի վերջին՝ 698-ին արաբները գրավեցին Աֆրիկա նահանգը (այժմյան Թունիսը) Կարթագեն մայրաքաղաքով[4]:

Սակայն Օսմանը շատ հակառակորդներ ուներ, որի գլխավոր պատճառը Օմայան տոհմից կառավարիչներ նշանակելն էր և նրան սպանեցին: Ասպարեզ իջան Ալիի կողմնակիցները, պահանջելով, որ խալիֆան լինի Մուհամմադի տնից, քանի որ Ալին նրա հորեղբորորդին

[3] Ph. Hitti, History of the Arabs, pp. 160-167.

[4] Հյուսիսային Աֆրիկան և Իսպանիան (Անդալուս) նվաճելուց հետո արաբներն անցան Պիրենեյան լեռնաշղթան ու ներխուժեցին Ֆրանկների թագավորությունը, սակայն Կարլ Մարտելը 732 թվականին (Մուհամմադի մահվանից ուղիղ հարյուր տարի անց) Տուրի, կամ Պուատիեի ճակատամարտում ետ շպրտեց նրանց մինչև Պիրենեյան լեռնաշղթան, որը հիմնականում դարձավ Խալիֆայության և Ֆրանկների սահմանը:

ու միակ դստեր՝ Ֆաթիմայի ամուսինն էր: Հայաստանում այդ ժամանակ իշխում էր Համազասպ Մամիկոնյանը:

Խալիֆա ընտրված Ալիի (656-661) դեմ ապստամբեցին Հիջազում և այլ նահանգներում: Նրա դեմ պայքարի դուրս եկավ Օմայան տոհմից Մուավիան: 661-ին սպանվեց Ալին, երբ արդեն Մուավիան 660-ին իրեն խալիֆա էր հռչակել Ասորիքում: Ալիի հակառակորդների դեմ կռիվների ընթացքում և նրա մահվանից անմիջապես հետո «ուղղահավատ» սուննի մահմեդականության կողքին երկու նոր ընդդիմադիր ճյուղեր առաջացան՝ Շիայի հոսանքը (Ալիի կողմնակիցներ) և խարիջիների հոսանքը (Ալիից հիասթափված ապստամբներ): Այս երկու ճյուղերն ամբողջ միջնադարում հակադրվել են մահմեդական աշխարհում միշտ տիրապետող սուննա (հետևորդները՝ սուննի) հիմնական ճյուղին:

Մուավիա Ա խալիֆայից (661-680) սկսած արաբների պատմության մեջ մի նոր ժամանակաշրջան սկսվեց[5]: Առաջին չորս խալիֆաներն ընտրվել էին մահմեդական համայնքի մեծամեծների կողմից: Մուավիան հիմք դրեց Օմայանների ժառանգական իշխանությանը (661-750) և այնուհետև այդ սկզբունքն ընդմիշտ գոյատևեց: Նա նստավայր ընտրեց Դամասկոսը, մինչդեռ նախկինում Մադինան էր մայրաքաղաքը և այդ օրվանից Արաբիան դադարեց խալիֆայության կենտրոնը լինելուց: Արտաքին ասպարեզում Մուավիան իր սլաքն ուղղեց Բյուզանդիայի դեմ և արաբական նորակազմ նավատորմիղը ցամաքային զորքի հետ միասին հարձակվեց Բյուզանդիայի վրա, հասնելով ընդհուպ մինչև Կոստանդնուպոլիս: Այդ տարիներին Հայոց իշխանն էր Գրիգոր Մամիկոնյանը (661-685), ապա՝ Աշոտ Բագրատունին (685-689): Սրանց օրոք Հայաստանը ուներ բավականաչափ ինքնուրույն վիճակ:

Օմար Ա և Մուավիա Ա խալիֆաները կազմակերպել էին արաբական խալիֆայությունը, սակայն Օմայան Աբդ ալ-Մալիք խալիֆան (685-705) էր, որ վերջնականապես ձև տվեց այս նորակազմ պետությանը[6]: Նա ընդհանուր պարտադիր պետական լեզու դարձրեց արաբերենը: 695 թվականին Դամասկոսում թողարկվեցին առաջին զուտ արաբատառ ոսկի և արծաթ դրամները, կարգավորվեցին հարկերը:

Արաբական նվաճումները շարունակվեցին Վալիդ (705-715) խալիֆայի օրոք: Արևմուտքում, ինչպես տեսանք, արաբները հասան Պիրենեյան լեռնաշղթային, իսկ արևելքում խալիֆայության զորքերն անցան

[5] H. Lammens, La Syrie, précis historique, Beyrouth, 1921, p. 66-71.

[6] Տես A. Vasiliev, Byzance et les Arabes, t. I, La dynastie d'Amorium, Bruxelles, 1935, p. 1-21.

3532

ՀՀԱԱ ԳՐԱԴԱՐԱՆ БИБЛИОТЕКА

Ամու Դարիա գետը և սկիզբը դրեցին իրանալեզու ազգաբնակչություն ունեցող Սողդ, Ֆերղանա, Խորեզմ և այլ նահանգների նվաճմանը:

Բյուզանդիայի հետ գոտեմարտը բորբոքվեց Սուլայման խալիֆայի (715-717) օրոք, երբ արաբները երրորդ հարձակումը գործեցին Կոստանդնուպոլսի դեմ, սակայն շուտով նահանջեցին: Բյուզանդիայից հետո խալիֆայության երկրորդ վտանգավոր ախոյանը խազարներն էին: Եզիդ Բ (720-724) և հատկապես Հիշամ (724-743) խալիֆաների օրոք խազարների հետ կատաղի ընդհարումների մի ամբողջ շարք է արձանագրված արաբ և հայ պատմիչների[7] մոտ, որը վերջացավ խալիֆայության հաղթանակով: Հիշամի ժամանակ վերջնականապես նվաճվեցին Միջին Ասիայի իրանական նահանգները և կազմակերպվեց մի մեծ նահանգ, որը կոչվեց Մավերաննահր (մա վարա ան-նահր) այսինքն «Գետից (Ամու Դարիա) այն կողմ [գտնվող երկրամաս]»:

Հիշամի մահվանից հետո Օմայան պետությունն ընթացավ քայքայման ուղիով: Կային ներքին լուրջ հակասություններ, որոնց հետևանքով Օմայանները կորցրեցին ամեն մի հենարան: Նրանց կատաղի թշնամիներն էին Ալիի կողմնակից Շիայի հետևորդները, որոնց իմամները (առաջնորդ) մնում էին Մադինայում: Անհաշտ պայքար էին մղում նաև խարիջիները: Օմայանները հենարան չունեին նաև սուննի մահմեդականների մոտ, քանի որ Մուհամմադի հորեղբայր՝ Աբբասից սերող Աբբասյանները, օգտվելով Շիայի հետևորդների ու խարիջիների պայքարից, ճարպկորեն սեղմում էին օղակը Օմայանների շուրջը: Կարևոր էր նաև այն պարագան, որ Օմայանները ոչ միայն ոչ մահմեդականների, այլև նույնիսկ ոչ արաբ մահմեդականների նկատմամբ խտրականության քաղաքականություն էին վարում, որի հետևանքով ոտքի կանգնեցին նաև պարսիկները՝ Աբբասյանների դատը պաշտպանելով:

747-ին ապստամբություն ծագեց Իրանի արևելյան Խորասան նահանգում Աբու Մուսլիմի գլխավորությամբ, որը պարզեց Աբբասյանների սև դրոշը Օմայանների սպիտակ դրոշի փոխարեն: Նրա կողմնակիցներն էին թե՛ պարսիկ դեհկանները (հողատեր), թե՛ գյուղացիությունը (մահմեդական և զրադաշտական) և թե՛ արաբներ: Նույն տարում ապստամբություն ծագեց նաև Հայաստանում:

749 թվականին Աբբասյան տոհմից Աբու-լ-Աբբասը Քուֆայի մզկիթում հռչակվեց խալիֆա: 750-ի հունվարի վերջին Զաբի ճակատամարտում Օմայան խալիֆա Մարուան Բ պարտություն կրեց Աբբասյանների զորքից ու փախավ, սակայն բռնվեց ու սպանվեց:

Իշխանությունն Աբբասյանների ձեռքն անցնելուց հետո խալիֆայության մեջ մեծ փոփոխություններ կատարվեցին: Արաբն այլևս մենակ չէր իշխում[8] լայնածավալ տերության մեջ, այլ նրա հետ մասնակցություն ունեին մահմեդականությունն ընդունած բոլոր ժողովուրդները և հատկապես պարսիկները: Ուստի Աբբասյան խալիֆայությունը համամահմեդական բնույթ ուներ և հենց դրա հետևանքով ոչ մահմեդական (զիմմի) ժողովուրդների վիճակը շեշտակիորեն վատթարացավ: Պարսիկներն այլևս ընդդիմադիր ուժ չէին, այլ ընդհակառակը, դարձել էին պետության հենարանը և քրիստոնյա ժողովուրդները մենակ մնացին խալիֆայության ճնշող քաղաքականության հանդեպ:

Աբբասյան պետության ժամանակ սահմաններն ավելի նեղ էին, քան Օմայանների օրոք: 754-ին Օմանն անկախ դարձավ, իսկ 756-ին Օմայանների մի ճյուղը Իսպանիայում (Անդալուս) հզոր պետություն հիմնեց: Հյուսիսային Աֆրիկայում՝ Մաղրիբի արևմտյան մասում Աբբասյանների իշխանությունը ձևական էր և 788-ին այն լրիվ անջատվեց դառնալով անկախ պետություն (Իդրիսիներ):

Առաջին Աբբասյան խալիֆան՝ Աբու-լ-Աբբասը (750-754) թեև սկզբում մնում էր Քուֆայում, շուտով նոր մայրաքաղաք կառուցեց՝ Հաշիմիյան (նույնպես Իրաքում): Սակայն Աբբասյան պետության իսկական հիմնադիրը դարձավ նրա եղբայր Աբու Ջաաֆար ալ-Մանսուրը (754-775), որն արյան մեջ խեղդեց ամեն մի ապստամբություն: 762-ին նա հիմնեց Բաղդադ մայրաքաղաքը: Հենց Մանսուր խալիֆայի իշխանության վերջին տարիներին՝ 774-775 բռնկվեց արաբական տիրապետության դեմ հայերի ամենահզոր ապստամբությունը Մուշեղ Մամիկոնյանի գլխավորությամբ, որը սակայն 775-ի գարնանը ճնշվեց:

Սասանյանների Տիզբոն մայրաքաղաքից ոչ հեռու գտնվող Բաղդադը նոր հորիզոններ բացեց պարսիկների առջև, որոնք ներթափանցեցին հասարակական կյանքի բոլոր ասպարեզները՝ հատկապես քաղաքական ու մշակութային: Արդյունքում ստեղծվեց մի նոր պաշտոնյա վերնախավ, որը գալիս էր Սասանյանների օրերից և այն ժառանգաբար վարեցին պարսիկ Բարմաքյանները, որոնցից առաջինը Խալիդն

[7] **Իբն ալ-Ասիր**, Երևան, 1982, էջ 83-84, 87-88, Պատմութիւն Ղևոնդեայ Մեծի վարդապետի Հայոց, Պետերբուրգ, 1887:

[8] Գերմանացի արաբագետ Յ. Վելհաուզենը Օմայանների վերացումը համարում է արաբական պետության անկում: Տե՛ս **J. Wellhausen**, Arab Kingdom and its fall, London, 1973:

էր: Ձեխ բարքերը, երգչուհիների հետ գինարբուքի գիշերները սովորական երևույթներ դարձան պալատում:

Նրա որդին ու հաջորդը Մահդին (775-785) երկրի ներսում համեմատաբար մեղմ քաղաքականություն էր վարում, իսկ դրսում՝ Բյուզանդիայի դեմ ուժեղ պայքար սկսվեց[9]:

Մահդիի երկրորդ որդու՝ Հարուն ալ-Ռաշիդի (786-809) անձնավորությունը պարուրված է հեքիաթային շղարշով, շնորհիվ «1001 գիշերների» ժողովածուի, սակայն իրականում նա ագահ և բռնակալ էր ոչ պակաս, քան իր պապը՝ Մանսուրը: Հարունի օրոք հարկերը աննախընթաց չափերի էին հասել: Նա անհանդուրժող գտնվեց Բարմաքյանների հանդեպ, որոնք մեծ փառքի էին տիրացել: 803-ին գլխատել տվեց վեզիր Ջաաֆարին և հարքունիս գրավեց նրանց առասպելական հարստությունը: Հարունը վերսկսեց պայքարը Բյուզանդիայի դեմ և վճռական հաղթանակներ տարավ: Ըստ լատին պատմիչների՝ Հարունը դիվանագիտական հարաբերությունների մեջ է եղել ֆրանկների Շարլեման (Կարլոս Մեծ) կայսեր հետ:

Հարունի օրոք Բաղդադն արդեն դարձել էր փարթամ քաղաք և համաշխարհային խոշոր կենտրոններից մեկը. արքունիքում իշխում էր զեխությունն ու շռայլությունը: Այս երևույթն առավել նկատելի դարձավ նրա որդու՝ Ամինի օրոք (809-813), որը զվարճանում էր Տիգրիս գետի վրա ծփացող կենդանակերպ ու թռչնակերպ շքեղ նավերի վրա:

Իր մահվանից առաջ Հարունը գահաժառանգ էր նշանակել Ամինին, որին պետք է հաջորդեր մյուս որդին՝ Մամունը[10]: Սակայն Ամինը խախտելով հոր կտակը գահաժառանգ հայտարարեց իր որդուն: Մամունը, որը ծնված էր պարսիկ մորից և Խորասանի փոխարքան էր, վայելում էր տեղի ազնվականության համակրանքն ու օժանդակությունը և այդ բանի շնորհիվ հաղթեց իր եղբորը ու գրավեց իշխանությունը:

Մամունի օրոք (813-833) քաղաքական իրավիճակն անհանգիստ էր: Նա արշավանքներ ձեռնարկեց Բյուզանդիայի դեմ, սակայն ինքն սպանվեց 833 թվականին՝ Տարսոնի մոտ: Մամունը պատմության մեջ հայտնի դարձավ որպես գիտության և մշակույթի մեկենաս, քաջալերելով ու կազմակերպելով հունարենից արաբերեն թարգմանական աշխատանքը:

Հարունի երրորդ որդին՝ Մուտասիմը (833-842) ծնված թյուրք

[9] **Tabari**, Tarikh, VIII, p. 152-153:
[10] **Yaqubi**, Tarikh, II, p. 436:

ստրկուհուց, մեծ չափով օգտագործեց միջինասիական թյուրք ստրուկներին, նրանցից կազմելով պահակազորք, որն այնքան նեղություն պատճառեց մայրաքաղաքին, որ խալիֆան 836-ին իր նստավայրը փոխադրեց Սամառա (արաբ. Սուռա ման ռաա):

Օտար ազդեցության և մշակութային զարթոնքի դեմ դուրս եկավ Մուտավաքքիլ խալիֆան (847-861), որը վստահություն չունենալով թյուրք պահակազորքի վայրագ զորապետերի վրա, հենարան փնտրեց սուննի պահպանողական հոգևորականության մոտ: Ձգտելով փրկել Աբբասյան պետությունը մասնատվածությունից, նա դաժան միջոցներ ձեռնարկեց միասնականությունը ամրապնդելու համար: Սրա օրոք՝ 850-852 թթ. ևս մի ապստամբություն բռնկվեց Հայաստանում, որը թեև ճնշվեց, սակայն անկախացման ընթացքն արդեն անշրջելի էր դարձել:

Մուտավաքքիլի[11] սպանությամբ վերջացավ Աբբասյանների հզորության շրջանը և սկիզբ առավ պետության թուլացման փուլը: Աբբասյաններից բաժանվեցին և անկախ պետություններ կազմեցին Սաֆֆարյանները Խորասանում (861), Բագրատունիները Հայաստանում (862), Ալիականները Թաբարիստանում (864), Թուլունիները Եգիպտոսում (868) և ապա Սամանիները Մավերաննահրում (875):

Աբբասյանների խալիֆայության քայքայման պատճառներն էին խոշոր հողատիրության, լինի սեփականատիրական (մուլք) թե պարգևական (իկթա), արագ զարգացումը ի հաշիվ պետականի, տեղական ոչ արաբ հողատեր դասի (պարսիկ դեհկաններ, հայ նախարարներ) հզորացումն ու անջատողական ձգտումները և ժողովրդական ազատագրական ապստամբությունները:

Աբբասյանների պետությունը իր գոյությունը պահպանեց որպես ոչ զորեղ քաղաքական միավոր 861-945 թվականներին, ընդգրկելով միայն Իրաքն ու Արևմտյան Իրանը: 945-ին Շիրազում իշխող պարսիկ Բուիները (Բուայհիներ) Բաղդադում իրենց ձեռքը վերցրին իրական իշխանությունը:

բ. <u>Մշակույթը</u>

Առաջին հայացքից դժվար է պատկերացնել, թե ինչպես է դարում անապատից դուրս եկող բավականին հետամնաց վաչկատուն արաբի լեզվով երկու հարյուրամյակ անց ստեղծվեց մի ճոխ և զարգացած

[11] **W. Muir**, The Caliphate, its rise, decline and fall, Edinburg, 1924:

գրականություն ու մշակույթ, որի կարևոր մասն էին կազմում աշխարհագրությունն ու պատմագրությունը: Այս հանելուկն ըմբռնելու համար անհրաժեշտ է հետադարձ ակնարկ նետել արաբական մշակույթի զարգացման ընթացքի վրա է-Թ դարերում:

Սեմական բոլոր ժողովուրդների (բաբելացիք, ասորեստանցիք, փյունիկեցիք, արամեացիք կամ ասորիներ, եբրայեցիք, հարավարաբացիք[12] և եթովպիացիք) մեջ ամենաուշը գիր ու գրականություն ունեցողը արաբն է: Մահմեդականության (իսլամ)[13] երևան գալու ժամանակ արաբներն արդեն կազմավորված գիր ունեին: Ե դարի վերջից և հատկապես Զ դարում և է դարի սկզբին հեթանոս արաբների մոտ առաջացավ բանավոր բանաստեղծական արվեստ: Հեթանոս արաբ բանաստեղծների բանավոր ստեղծագործությունները գրի առնվեցին միայն Թ-Ժ դարերում և համարվում են արաբական գրականության երախայրիքը:

Դ-է դարերում քրիստոնյա (ասորի) քարոզիչները ջանքեր թափեցին Արաբիայում քրիստոնեությունը տարածելու համար և որոշ հաջողություն ունեցան: Դա, ի վերջո, չհաջողվեց, սակայն քրիստոնեության և մովսիսականության ազդեցության տակ (բայց նրանց հակադրվող) մի նոր կրոն ծնվեց՝ իսլամը:

Արաբական մշակույթի այն հուշարձանը, որն իր ժամանակին գրի էր առնվել և իշխել միջնադարյան (մասամբ նաև նոր) գրականության վրա Ղուրանն (Կուրան) էր: Մուհամմադն (մահ. 632-ին) իր քարոզչական գործունեության ընթացքում, տարբեր առիթներով, թե՛ Մեքքայում, թե՛ Յասրիբում (Մադինա) բանավոր ձևով ժողովրդին հաղորդել էր (որպես ալլահի կողմից հայտնություն) իր նոր ուսմունքը, որը սակայն գրի առնվեց ու խմբագրվեց Օսման (644-656) խալիֆայի օրոք: Այս մատյանը կոչվել է Ղուրան (Կուրան) ընթերցվածքի իմաստով և պարունակում է 114 սուրա (փոքր գլուխ) դասավորված ոչ ժամանակագրական կարգով, ոչ էլ ըստ բովանդակության, այլ սոսկ ըստ ծավալի՝ ամենամեծից՝ ամենափոքրը:

Ըստ Ղուրանի և մահմեդական աստվածաբանության, երկնքում կա մի սրբազան մատյան (Գիրք), որից, ժամանակ առ ժամանակ, հայտնություններ են իջեցվում մարգարեներին: Այսպես, Տաուրատը (Թորա, Հին

[12] Եմենի բնիկ հին սեմական ժողովուրդը, պայմանականորեն հարավարաբացի կոչված, արաբանալով, նոր թափ հաղորդեց արաբական վաչկատուն ցեղերին, նպաստեց նրանց մակարդակի բարձրացմանը և արաբական մշակույթի սաղմնավորմանը: (Ա. Տ.-Դ.)

[13] *Ներկայում ընդունված է նաև «Մուսուլմանություն»:*

Կտակարան, Հնգամատյան) ի վերուստ իջեցվել է Մովսեսին, իսկ Ավետարանը (Ինջիլ) Հիսուսին, և այդ պատճառով հրեաներն ու քրիստոնյաները կոչվում են Գրքի ժողովուրդ (Ահլ ալ-Քիտաբ): Սակայն այս երկու մարգարեների հետևորդներն աղավաղել են երկնային Գրքից ի վերուստ իջեցված հայտնությունները, ուստի վերջին հայտնություններն իջեցվեցին Մուհամմադին և դա Ղուրանն է: Բանն այն է, որ Ղուրանն իր մեջ ներծծել էր Աստվածաշնչի (Հին (Տաուրատ) ու Նոր (Ինջիլ) Կտակարաններ) նյութը. հիշվում են Ադամը, Նոյը, Աբրահամը, Հակոբը, Հովսեփը, Մովսեսը, Դավիթը և ուրիշներ Հին Կտակարանից և Զաքարիան, Հովհաննես Մկրտիչը, Մարիամը և Հիսուսը՝ Նոր Կտակարանից: Ղուրանն արաբական պետության համար «օրենսգիրք» էր, իսկ լեզվական տեսակետից՝ անվիճելի հեղինակություն:

Սակայն այս ցածր մակարդակը չէր կարող բավարարել աշխարհակալ պետության պահանջները, քանզի արաբին վիճակված էր իշխել իրենից շատ ավելի բարձր ու հին մշակույթ ունեցող ժողովուրդների (պարսիկներ, հայեր, ասորիներ, ղպտիներ և այլն) վրա: Ուստի անհրաժեշտ էր շատ բան փոխ առնել, հատկապես օրենսդրական ասպարեզում: Արաբները (կառավարիչներ, հոգևորական դատավորներ) ծանոթացան և օգտվեցին իրենց նվաճած երկրներում եղած իրավական ավանդույթներից, որոնք մնացորդներն էին հռոմեաբյուզանդական և սասանյան-իրանական իրավունքի, բայց, որպեսզի դա ընդունելի լինի մահմեդական հասարակությանը, այդ ավանդույթները միահյուսել էին Մուհամմադին վերաբերող ավանդություններին, որոնք կոչվում էին հադիսներ (զրույցներ): Դրանք հարյուր հազարներով էին և հատուկ կերպով ուսումնասիրվում էին:

Հադիսների եվրոպացի ուսումնասիրողները, ինչպես հունգարացի Ի. Գոլդցիերը և հոլանդացի Ս. Հուրգրոնյեն, գտնում են, որ հադիսների ճնշող մեծամասնությունը հորինված է խալիֆայության կազմավորումից հետո: Դրանց մեջ կային ծիսակատարությանը, առք ու վաճառքին, տարբեր բնույթի պայմանագրերին, ստրուկների վաճառքին և այլ նյութերին վերաբերող զրույցներ, նույնիսկ հրեական ու քրիստոնեական հավատալիքներ և հունական փիլիսոփայության տարրեր: Սրանց հիման վրա ստեղծվեց մահմեդական իրավագիտությունը (ֆիկհ), որով առաջնորդվում էր գործնական օրենսդրությունը՝ շարիաթը:

Աբբասյանների հզորության ժամանակաշրջանում (750-861) պարսիկները ներթափանցեցին կյանքի բոլոր ասպարեզները, լինի քաղաքական, թե մշակութային, քանզի Աբբասյանները լրիվ բացել էին

դոները պետության բոլոր մահմեդական ժողովուրդների առջև՝ անկախ ծագումից:

Քաղաքական ասպարեզում պարսիկ Բարմաքյանները մուտք գործելով արքունիք նոր փայլ տվեցին նրան: Արաբական մշակույթի ասպարեզում չկա մի ճյուղ ուր պարսիկները պատվավոր դեր կատարած չլինեն: Հայտնի է նշանավոր քերականագետ Սիբավայհը (մահ. 796), իսկ բանաստեղծական արվեստի ասպարեզում Բաշշար իբն Բուրդը (714-784) և Աբու Նուվասը (762-813):

Արաբական գեղարվեստական արձակի զարգացմանը մեծ նպաստ բերեց պարսիկ Իբն ալ-Մուկաֆֆայի կողմից հնդկական առակների թարգմանությունը պահլավերենից արաբերենի:

Վերոհիշյալ հադիսների հիման վրա ստեղծվեց մահմեդական իրավագիտությունը, որի ամենատարածված դպրոցի (մազհաբ) հիմնադիրն է պարսիկ Աբու Հանիֆան (696-767): Նրա երկու հայտնի աշակերտները թողել են կարևոր ժողովածուներ՝ Աբու Յուսուֆը (մահ. 795) որը հեղինակն է հարկերի ու հողատիրության կարևորագույն աղբյուր «Հարկերի մատյանի» (Քիտաբ ալ-Խարաջ) և Շայբանին (մահ. 804) «Իրավագիտական փոքր ժողովածուի» (ալ-Ֆիկհ ալ-Սաղիր) հեղինակը: Հանիֆիների կրոնա-իրավագիտական դպրոցը տարբերվում է նրանով, որ ճկուն է, համեմատաբար հանդուրժող ոչ մահմեդականների նկատմամբ, թույլ է տալիս կրոնական կանոններին առընթեր օգտագործել աշխարհիկ սովորույթը (ադատ) և աշխարհիկ տիրակալների օրենքները (կանուն):

Մահմեդական կրոնաիրավագիտական մյուս երեք հայտնի դպրոցներն (մազհաբ) են՝ մալիքիները (պահպանողական), շաֆիիները (չափավոր պահպանողական) և հանբալիները (ծայրահեղ պահպանողական):

Սակայն պարսիկների եռանդուն մասնակցությունը քաղաքական ու մշակութային ասպարեզներում բավական չէր արմատական փոփոխություն մտցնելու արաբների մշակութային կյանքում: Իսկական հեղաշրջումը կատարվեց միայն այն բանից հետո, երբ հին հունական հարուստ մատենագրությունից բազմաթիվ գիտական երկեր թարգմանվեցին արաբերենի: Այստեղ ևս արաբն անզոր էր, քանզի լիովին անտեղյակ էր հունաց լեզվին և այս հարցում օգնության հասավ հին մշակույթի տեր ասորին:

Խալիֆայության ներսում, հարկավ, կային հելլեն մշակույթի կենտրոններ (Անտիոք, Եդեսիա, Ալեքսանդրիա), այսուհանդերձ Աբբասյան-

ները մեծ ջանքեր գործադրեցին Փոքր Ասիայից նոր ձեռագրեր բերելու համար: Դեռևս Մանսուր խալիֆան Բյուզանդիայի կայսրից ստացել էր հունարեն ձեռագրեր, որոնց մեջ եղել են Եվկլիդեսի երկերը: Հարուն ալ-Ռաշիդ խալիֆան (786-809) Փոքր Ասիա կատարած արշավանքների ժամանակ բազմաթիվ հունարեն ձեռագրեր էր ավարել հատկապես Ամորիոն և Անկիրիոն քաղաքներից: Մամունը պատվիրակություն էր ուղարկել Լևոն Հայկազն կայսրին հունարեն ձեռագրեր խնդրելով: Որպես հելլենական մշակույթի սիրահար Մամունն ամեն կերպ ձգտում էր իսլամը հաշտեցնել հունական փիլիսոփայության հետ: Ըստ Ժ դարի մատենագիր Իբն ալ-Նադիմի վկայության, Մամունը երազում տեսել էր Արիստոտելին, որը նրան համոզում էր, թե փիլիսոփայությունը կրոնին բոլորովին հակառակ չէ:

830 թվականին Մամունը Բաղդադում հիմնեց Իմաստության տունը (բայտ ալ-հիքմա), որն ուներ ճոխ մատենադարան և միաժամանակ կազմակերպեց մի ակադեմիա ու թարգմանական կենտրոն: Այդ օրվանից թարգմանական գործը ամուր հիմքերի վրա դրվեց, քանզի նա առատածեռն վարձատրում էր թարգմանիչներին:

Արաբներին հետաքրքրում էր հունական բժշկությունը, փիլիսոփայությունը և ճշգրիտ գիտությունները:

Թարգմանիչների մեջ խոշորագույն դեմքը նեստորական ասորի Հունայն իբն Իսհակն (809-873) էր: Մամուն խալիֆան նրան դարձրել էր Իմաստության տան վերատեսուչ, որտեղ նա ղեկավարում էր թարգմանիչների մի խումբ: Թարգմանվեցին Գալենոսի, Հիպոկրատեսի, Դիոսկորիդեսի երկերը, ինչպես նաև Պլատոնի ու Արիստոտելի աշխատությունները: Հունայնը թարգմանել է նաև Հին Կտակարանը հունարենից (Յոթանասնից), սակայն այն մեզ չի հասել: Հունայնը հռչակ ուներ նաև իբրև բժիշկ և ծառայել է Մուտավաքքիլ խալիֆայի արքունիքում:

Եթե Հունայնը նեստորական թարգմանիչների գլխավոր դեմքն է, ապա Սաբիտ իբն Կուռան (836-901) գլխավորում էր Խառանի սաբի (աստղապաշտ) թարգմանիչներին: Սաբիները թարգմանեցին Արքիմեդեսի և Ապոլոնիուս Պերգացու աստղաբաշխական և մաթեմատիկական գործերը: Միաժամանակ նրանք վերանայում էին նախորդների թարգմանած երկերը:

Թարգմանական գործը շարունակվեց նաև Ժ դարում մելքիտ ու հակոբիկ ասորի թարգմանիչների կողմից:

Միայն հունարենից կատարված այս հսկայական քանակությամբ թարգմանություններից հետո էր, որ ծնվեց այն արաբական (իրականում

արաբալեզու) մշակույթը, որը միջնադարյան արևելյան մշակույթի բաղկացուցիչ մասն է: Ի հարկե, արաբական կոչելը պայմանական է, քանի որ տեսանք թե ինչպիսի կարևոր դեր կատարեցին այդ մշակույթի կերտման մեջ պարսիկները, ասորիները և այլ ժողովուրդներ: Պատահական չէ, որ արաբական մատենագրության կարևորագույն ուսումնասիրության հեղինակ Կ. Բրոկելմանը[14] մինչև 750 թվականն ստեղծված մատենագրությունը կոչում է արաբական ազգային գրականություն, իսկ 750 թվականից մինչև ուշ միջնադար գոյացած մատենագրությունը՝ արաբալեզու մահմեդական գրականություն:

Թ-ԺԵ դարերի արաբական մշակույթի բաղկացուցիչ մասերն են (բացի չափածո և արձակ գեղարվեստական գրականությունից, դավանաբանական մատենագրությունից, քերականությունից ու բառարանագրությունից) **փիլիսոփայությունը, բժշկությունը, ճշգրիտ գիտությունները, աշխարհագրությունը և պատմագրությունը:**

ԱՐԱԲ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄՆ ՈՒ ՋԱՐԳԱՑՈՒՄԸ

ա. Պատմագրությունը

Կարելի էր ենթադրել, որ արաբական պատմական ավանդությունների հնագույն շերտը պետք է կազմավորված լիներ հնադարյան Եմենում, որից մեզ հասել են սաբայական ու հիմյարական արձանագրություններ պատմական բովանդակությամբ: Եմենի հինավուրց սեմական ժողովուրդը (հարավարաբացիք) ձուլվելով պետք է արաբներին փոխանցեր իր պատմական զրույցները: Այդ կատարվել է, սակայն բանն այն է, որ միջնադարյան արաբական պատմական աղբյուրներում մեզ հասել են սոսկ թագավորների անուններ և շատ աղոտ ու չափազանցված բանավոր առասպելներ այդ հնագույն շրջանի մասին: Այս զրույցներն ու առասպելները հավաքել ու գրի են առել «Թագերի մատյանի» (Քիտաբ ալ-Տիջան) Վահբ իբն Մունաբբիհը (մահ. 728/734) և Ուբայդա իբն Շարին, որոնց մատյանները մեզ չեն հասել, այլ նրանցից քաղվածքներ ենք գտնում հետագա արաբ մատենագիրների աշխատություններում: Այս երկուսի և հատկապես Վահբ իբն Մունաբբիհի գործերից կարևոր մասեր պահպանվել են Աբդ ալ-Մալիք իբն Հիշամի (մահ. 828/833) մոտ:

Հյուսիսային արաբների մոտ հավաքվել են զրույցներ հեթանոս ցեղերի արյունալի ընդհարումների, կռիվների մասին «Այյամ ալ-Արաբ» («Արաբների օրեր», այսինքն հիշատակելի [կռիվների] օրեր) կոչված, որոնք մահմեդական շրջանում հավաքել են Աբու Միհնաֆը (մահ. 774), Ավանա իբն ալ-Հաքամը (մահ. 763), Աբու Ուբայդան (մահ. մոտ 825): Հետագայում Հիշամ իբն Մուհամմադ ալ-Քալբին (մահ. 819) զբաղվել է այս զրույցներով, ինչպես նաև օգտագործել է Հիրայի քրիստոնյա արաբների դիվանատները: Նրանից քիչ բան է մեզ հասել:

Վաղ իսլամի շրջանի ուսումնասիրման համար հարուստ նյութ էին պարունակում Մուհամմադի մասին առաջացած բազմահազար զրույցները, որոնք կոչվում էին «հադիս»: Հայտնի է ալ-Զուհրին (մահ. 741/742), որն Օմայան խալիֆաների պատվերով գրի է առել հադիսները և դրանք, թեև պահվել են արքունի գանձարանում, սակայն հետագայում ոչնչացել են: Նման նյութերի հիման վրա շարադրվել են Մուհամմադի կենսագրությունը (Սիրա) և արշավանքների (Մաղազի) մասին գրականությունը: Մուհամմադի կենսագրությունը շարադրել է Մուհամմադ իբն Իսհակը (մահ. 768), սակայն այն մեզ չի հասել: Մուհամմադի կենսագրության հիմնական աղբյուրն է Աբդ ալ-Մալիք իբն Հիշամի երկը, որը գրված է իբն Իսհակի կորած աշխատության հիման վրա:

Իններորդ դարի սկզբին[15] արդեն աստիճանաբար նյութեր են կուտակվում խալիֆայության առաջին արշավանքների մասին: Առաջին արշավանքների և խալիֆայության նվաճումների մասին գրել է Վակիդին[16] (747-822) սակայն մեզ հասել է միայն չնչին մասը: Նման աշխատություններ գրել է նաև բասրացի ալ-Մադաինին (մահ. 830/849), սակայն մեզ չեն հասել:

Այս ամբողջ գրականությունը, որը մեծ մասամբ մեզ չի հասել կամ քաղվածաբար է հաղորդվել, իր ժամանակին օգտագործվել է պատմիչների կողմից, որոնք իրենց աշխատություններում հաճախ հիշում են թե քաղել են այսինչից կամ այնինչից: Այս վկայակոչելու (իսնադ) սովորությունը չափազանց տարածված է արաբական պատմագրության մեջ:

Այսպիսով Ը դարի և Թ դարի սկզբի պատմական աշխատություններից շատ քիչ բան է մեզ հասել: Սակայն կարևորագույն աշխատու-

[14] C. Brockelmann, Geschichte der Arabischen Litteratur, I, Weimar, 1898, S. 9, 69.

[15] Х. А. Р. Гибб, Арабская литература, стр. 43.

[16] Վակիդիի նյութերի մեծ մասն օգտագործել է նրա քարտուղար Իբն Սաադը (մահ. 844/845) «Կարգերի գիրք» (Քիտաբ ալ-Թաբակատ) աշխատության համար:

թյունը, որը պահպանվել է Աբու Յուսուֆի (մահ. 798) «Հարկերի մատյանն» է:

Իր կազմավորման շրջանում արաբ պատմագրությունը կրեց պարսկական, հրեական ու քրիստոնեական (հունաասորական) ազդեցությունները:

Պարսկական ազդեցությունը ներթափանցեց շնորհիվ իրանական վեպի՝ «Արքայից մատյանի» (Խվաթայ նամակ) արաբերեն թարգմանվելուն: Ըստ ավանդության, այն վերջնականապես գրի է առնվել Սասանյան արքա Հազկերտ Գ-ի (632-651) օրոք, ավելի ճիշտ՝ 632-637/641 թվականներին, այսինքն արաբական արշավանքների նախօրեին, քանզի 637-ին Կադիսիյայի և 641-ին Նեհավենդի պարտություններից հետո հազիվ թե նման աշխատանք կատարվեր: Այս մատյանն արաբերեն թարգմանվեց պարսիկ Աբդալլահ իբն ալ-Մուկաֆֆայի ձեռքով (721-757), սակայն ոչ պահլավերեն (միջին պարսկերեն) բնագիրը, ոչ արաբերեն թարգմանությունը չեն պահպանվել: Արաբերեն թարգմանություններից (Խուդայ նամե կամ Սիյար Մուլուք ալ-Ֆուրս՝ Վարք պարսից արքաների) օգտվել են Իբն Կուտայբան (մահ. 889), Աբու Հանիֆա ալ-Դինավարին (մահ. 895), Յակուբին (մահ. 897), Թաբարին (մահ. 923), Մասուդին (մահ. 956) և Համզա Իսֆահանին (մահ. 970): Արաբ մատենագրության և հատկապես պատմագրության մեջ շատ հաճախ նկատվում է շուուբիյյա (ժողովուրդների) կոչված այն հոսանքը, որը շեշտում է նվաճված ժողովուրդների գերազանցության զգացումը արաբների հանդեպ: Այսպիսի տրամադրություններ ունեն պարսկական ծագում ունեցող Իբն Կուտայբան, Դինավարին, Բալազուրին, Թաբարին ու Համզա Իսֆահանին:

Հրեաքրիստոնեական սուրբգրային նյութերն առատորեն գտնում ենք Ղուրանում, հավանաբար բանավոր աղբյուրներից քաղված: Իսկ Ը-Թ դարերում Աստվածաշունչն արդեն թարգմանվել է արաբերենի: Տասներորդ դարի մատենագիր Իբն ալ-Նադիմը վկայում է, որ Հարուն ալ-Ռաշիդի օրոք (786-809) Սհմադ իբն Աբդալլահ իբն Սալամ ալ-Ինջիլին Աստվածաշունչը (Տաուրատ) արաբերենի էր թարգմանել: Հունայն իբն Իսհակի (809-873) մասին նույնպես ասվում է, թե Աստվածաշնչի հունարեն «Յոթանասնից» բնագրից թարգմանել է Հին Կտակարանը: Այս թարգմանությունները մեզ չեն հասել, սակայն նույն դարում դրանք օգտագործել են Ալի ալ-Թաբարին (785-861) «Գիրք կրոնի ու տերության» (Քիտաբ ալ-Դին ուա լ-Դաուլա) աշխատության մեջ, ինչպես նաև Ջահիզը «Պատասխան քրիստոնյաներին» (ալ-Ռադդ

ալա-լ-Նասարա) երկում: Հին Կտակարանից բառացի երկարապատում մեջբերումներ ունեն Իբն Կուտայբան և Յակուբին:

Ինչ վերաբերում է հռոմեական ու բյուզանդական կայսրերի պատմությանը, որ գտնում ենք Յակուբիի մոտ, ապա դրանք հավանաբար ասորիների կողմից բանավոր կերպով հաղորդված նյութեր են:

Այսպիսով, Ը դարում և Թ դարի առաջին կեսում կուտակված պատմական նյութերը, միահյուսվելով օտար ազդեցությունների հետ, տվեցին արաբ պատմագրության զարգացման առաջին շրջանի պսակը հանդիսացող երկեր:

Իններորդ դարի երկրորդ կեսից մեզ են հասել չորս պատմիչների կարևոր երկեր՝ Իբն Կուտայբայի (մահ. 889) «Գիրք իմացությանը» (Քիտաբ ալ-Մաարիֆ), Աբու Հանիֆա ալ-Դինավարիի (մահ. 895) «Գիրք երկարապատում ավանդությունների» (Քիտաբ ալ-Ախբար ալ-Թիվալ), Բալազուրիի (մահ. 892) «Երկրների նվաճումը» (Ֆուտուհ ալ-Բուլդան) և Յակուբիի (մահ. 897) «Պատմությունը» (Տարիխ): Այս դարում սկիզբ առավ նաև տեղական պատմագրությունը, ինչպես Իբն Աբդ ալ-Հաքամի (մահ. 871) «Եգիպտոսի նվաճման պատմությունը»[17], Իբն Թայֆուրի (մահ. 893) «Բաղդադի պատմությունը»[18] և այլն:

Արաբական պատմագրության երկրորդ շրջանն ընդգրկում է Ժ դարը և ԺԱ դարի առաջին տասնամյակները (կարելի է ասել մինչև սելջուկյան արշավանքները):

Առաջին խոշոր դեմքը Աբդ ալ-Կադիր ալ-Թաբարին է (838-923), որը պարսիկ է և ծնվել է Թաբարիստանում: Գրել է «Գիրք մարգարեից ու թագավորաց» երկը, դեպքերի շարադրանքը տալով ըստ հիջրի տարիների: Նույն դարում համառոտ տարբերակով թարգմանվել է պարսկերենի:

Վերջերս հայտնի դարձավ Ժ դարի մի պատմիչի գործը, որը երկար ժամանակ մնում էր անտիպ. դա Քուֆին է, որի մասին հայտնի էր միայն, որ մահացել է 926 թվականին: Քուֆիի Պատմությունը բազմահատոր հետաքրքրական աշխատություն է: Որպես պատմիչ կարելի է հիշել նաև Ջահշիարիին (մահ. 942), որի «Վեզիրների ու քարտուղարների պատմությունը» Աբբասյանների օրոք եղած հարկային դրության մասին

[17] The History of the Conquest of Egypt, North Africa and Spain known as the Futuh Misr of Ibn al-Hakam. Ed. by **Ch. C. Torrey**. New Haven, 1922 (Yale Oriental Series, Researches 3).

[18] Sechster Band des Kitab Bagdad von **Ahmad ibn abi Tahir Taifur**. Hrsg. und ubers. von **H. Keller**, t. I: Arabischer Text; t. II: Deutsche Ubersetzung, Leipzig, 1908.

կարևոր տեղեկություններ ունի:

Եթե Թաբարին հայտնի է իր աշխատանքի մեծ ծավալով ու ընդգրկումով (տալով ամբողջ խալիֆայության մանրամասն պատմությունը), ապա Մասուդին հայտնի է որպես բազմակողմանի պատմիչ, որին նույնիսկ կոչել են արաբների Հերոդոտոս: Ունի «Ոսկե լվացարաններ ու գոհարների մարգագետիններ» հայտնի աշխատությունը, որը նրա գրած համառոտ պատմությունն է, իսկ նույնի ընդարձակ և միջին խմբագրությունները մեզ չեն հասել: Մահացել է Եգիպտոսի Ֆուսթաթ քաղաքում՝ 956-ին: Հիմնականում Իրանի պատմությանն է նվիրված Համզա Իսֆահանիի (մահ. 961) «Ազգերի պատմությունը» աշխատությունը:

Ժ դարում արաբ պատմագրության մեջ մի նոր երևույթ էր քրիստոնյա արաբ պատմիչների երևան գալը: Եվտիքիոս Սաիդ իբն ալ-Բաթրիկը (876-939) Ալեքսանդրիայի պատրիարքը իր «Գոհարների շարք» երկում շարադրել է Արևելքի պատմությունը մինչև 933 թվականը: Նույն դարում Սևերոս իբն ալ-Մուկաֆֆա եպիսկոպոսը գրել է Ալեքսանդրիայի ղպտի պատրիարքների պատմությունը: Ագապիոս (Մահբուբ) ալ-Մանբիջին գրել է Տիեզերական պատմություն մինչև Ժ դարի կեսերը: Առավել հայտնի է Յահիա իբն Սաիդ ալ-Անթաքին (980-1066), որը շարունակել է Եվտիքիոսի գործը՝ հասցնելով մինչև ԺԱ դարի կեսը:

Ժ դարի պատմիչների շարքը կարելի է դասել պարսիկ Իբն Միսքավայհին (մահ. 1038), որն իր «Ազգերի փորձը» գրել է դարի վերջերին, ինչպես նաև Բիրունիին (մահ. 1048), որն իր պատմական երկը գրել է 1000 թվականին:

Պատմագրությունը զարգացավ նաև հեռավոր Անդալուսում (Արաբական Իսպանիա), ուր Իսպանիայի արաբական նվաճման պատմությամբ հայտնի է Իբն Կութիյյան (մահ. 977):

ԺԱ դարի կեսերին կանգ առավ արաբ պատմագրության զարգացման բնականոն ընթացքը, քանզի սելջուկյան ավերիչ արշավանքները մոտավորապես մեկ հարյուրամյակ ամլության մի շրջան առաջացրին: Կարելի է միայն հիշել Հիլալ ալ-Սաբիին (970-1056), որը Պատմության հեղինակ է և Բաղդադի մանրամասն պատմության հեղինակ ալ-Խաթիբ ալ-Բաղդադիին (մահ. 1071), որոնք վերջին հաշվով, նախորդ շրջանին են պատկանում: Սակայն հեռավոր Իսպանիայում շարունակվում էր մատենագրության զարգացումը. հայտնի պատմիչ է Իբն Հայյանը (մահ. 1074), իսկ հատկապես երևան եկան Կենսագրական բառարաններ, որոնք պատմական կարևոր աղբյուրներ են:

Մերձավոր Արևելքում միայն ԺԲ դարի կեսերից որոշ աշխուժություն

է նկատվում պատմագրության մեջ: Իբն ալ-Կալանիսին (1073-1160) գրում է «Դամասկոսի պատմության հավելվածը», քանի որ նրանից առաջ Հիլալ ալ-Սաբին գրել էր «Դամասկոսի պատմությունը»: Հուշերի ձևով է գրված Ուսամա իբն Մունկիզի (1095-1188) աշխատությունը, որը կարևոր աղբյուր է խաչակիրների ու մահմեդականների հարաբերությունների մասին:

ԺԲ դարի կեսերից մինչև ԺԳ դարի կեսերը (մոնղոլական արշավանքները և մամլուքների իշխանության հաստատումը Եգիպտոսում) պատմագրությունը ծաղկեց տարբեր կենտրոններում: Կարևոր դեմք է Իբն ալ-Ջաուզին (մահ. 1200), որը եղել է Սալահ ալ-Դինի քարտուղարը և հեղինակ է բազմահատոր պատմության: Նրան ժամանակակից է Իմադ ալ-Դին ալ-Իսֆահանին (մահ. 1201), որը 1194-ին արաբերենի էր թարգմանել և ընդարձակել պարսիկ Անուշիրուան իբն Խալիդի աշխատությունը, իսկ նրա գործը մեզ հասել է ԺԳ դարում Բունդարիի կատարած համառոտ խմբագրությամբ: Այստեղ շարադրված են ԺԱ-ԺԲ դարերի դեպքերը: ԺԳ դարի սկզբին է գործել Սադր ալ-Դին ալ-Հուսայնին, որը նույնպես այդ շրջանի մասին է գրել: Յուրահատուկ տեղ ունի Իբն ալ-Ազրակ ալ-Ֆարիկին (1117-1226), որը ծնվել է Նփրկերտում և գրել է ԺԲ դարի դեպքերի մասին:

Սակայն այս շրջանի խոշորագույն դեմքն է Իբն ալ-Ասիրը (1160-1233), որի «Լիակատար պատմությունը» արաբ պատմագրության մեջ մեծ երևույթ է: Ջալալ ալ-Դին Խորեզմիի քարտուղար Նասավին (մահ. 1249) շարադրել է նրա գործունեության պատմությունը: Մուհամմադ ալ-Համավին (ԺԳ դ. առաջին կես) հեղինակ է ԺԲ-ԺԳ դարերի պատմության մասին աշխատության: Իբն ալ-Ջաուզիի թոռ Սիբթ իբն ալ-Ջաուզին (1186-1257) գրել է «Ժամանակի հայելի» կոչված աշխատությունը: Նրա ժամանակակից Իբն ալ-Ադիմը (1192-1262) շարադրել է Հալեբի պատմությունը մինչև 1243: Այս շրջանում Արևմուտքում (Մաղրիբ) հայտնի դեմք էր Մարրաքուշին, որը 1224-ին գրել է Հյուսիսային Աֆրիկայի քաղաքական իրադարձությունների մասին:

Արաբ պատմագրության զարգացման վերջին շրջանը համընկնում է մամլուքյան ժամանակաշրջանին (1250-1517), երբ արաբ մշակույթի հիմնական կենտրոնը Եգիպտոսն էր: Այստեղ ծաղկեց քրիստոնյա արաբ (ղպտի) պատմիչ ալ-Մաքինը (1205-1273), որը հեղինակ է «Օրհնյալ ժողովածու» կոչված տիեզերական պատմության: Նրան հաջորդեց Ասորիքում Աբու-լ-Ֆարաջ իբն ալ-Իբրին, կամ Բար Հեբրեոսը՝ (1226-1286) հակոբիկ ասորիների պատրիարքի տեղակալը, որի «Պե-

տությունների համառոտ պատմությունը» նույնպես տիեզերական պատմություն է: Կենսագրական բառարանների ասպարեզում կարկառուն դեմք է Իբն Խալլիքանը (1211-1282):

ԺԴ դարի առաջին կեսում իրար հաջորդեցին ալ-Ջահաբին (1274-1348) իր «Իսլամի պատմությամբ» և Աբու-լ-Ֆիդան (1273-1357) իր «Մարդկության համառոտ պատմությամբ»:

Դարի երկրորդ կեսում հայտնի է Իբն Քասիրը (1301-1373) և վերջապես արաբական պատմագրության մեծագույն դեմքը՝ Իբն Խալդունը (1332-1406), որի բազմահատոր «Պատմության» Առաջաբանը (Մուկադիմա) բացառիկ արժեք ունի որպես պատմության փիլիսոփայություն:

ԺԵ դարը արաբ պատմագրության վերջին կարևոր դեմքերն է տվել՝ Կալկաշանդի (1355-1418), Մակրիզի (1364-1442), Այնի (1360-1451), Իբն Տաղրիբիրդի (1411-1466) և Սույութի (1445-1505):

Արաբ պատմագրությունը հիմք դարձավ պարսկական, թուրքական ու այլ մահմեդական ժողովուրդների պատմագրության համար: Պարսիկ պատմիչների երկերը ներծծված են արաբ պատմագրության ավանդույթներով: Նույնը կարելի է ասել նաև թուրք պատմիչների մասին, որոնցից Մունաջջիմ Բաշին (մահ. 1702) արաբ պատմագրության նյութերը հանրագումարի բերող մի շատ կարևոր արաբերեն աշխատության հեղինակ է:

բ. Աշխարհագրությունը

Արաբական աշխարհագրական գրականությունը երկակի բնույթ ունի: Մի կողմից սերտորեն կապված է ճշգրիտ գիտությունների՝ աստղաբաշխության ու մաթեմատիկայի հետ, իսկ մյուս կողմից առնչվում է պատմագիտության և գեղարվեստական գրականության հետ:

Արաբները սովորություն ունեին որոշակի ձևով խմբավորելու կամ դասակարգելու գիտությունները: Նման մի դասակարգմամբ՝ դրանք բաժանում էին երկու խմբի՝ հին գիտությունների (ալ-Ուլում ալ-Կադիմա) և նոր գիտությունների (ալ-Ուլում ալ-Հադիսա): Առաջինների մեջ էին մտնում դպրությունը, դավանաբանական գրականությունը, իրավագիտությունը (Ֆիկհ) և պատմությունը, որոնք Օմայանների օրոք առաջացած էին համարվում, իսկ երկրորդ խմբի մեջ էին դասում աստղաբաշխությունը, մաթեմատիկան, բժշկությունը, փիլիսոփայությունը, համարելով, որ սրանք ավելի ուշ են զարգացել Աբբասյանների շրջանում:

Ահա այս երկրորդ խմբի մեջ էր նաև աշխարհագրությունը, որն իրոք սկսեց զարգանալ Աբբասյանների օրոք:

Աշխարհագրության առաջացումն ու զարգացումը արաբների մոտ սերտորեն կապված է խալիֆայության գործնական պահանջների հետ: Հարկահանության կազմակերպումը պահանջում էր պետության բոլոր նահանգների քաղաքների ու գյուղերի մանրակրկիտ հաշվառում: Թեպետ Իրանում եղել էին հարկամատյաններ, նույնպես և Բյուզանդիայում, այսուհանդերձ նոր պայմաններում անհրաժեշտ էր նոր ձևով կազմակերպել այն: Արդեն Ը դարում առաջացան արաբերեն հարկամատյաններ (ինչպես Աբու Յուսուֆի «Քիտաբ ալ-Խարաջը»), որոնք այնքան անհրաժեշտ էին հարկային դիվանի համար:

Լայնածավալ պետությանն անհրաժեշտ էին ճշգրիտ տեղեկություններ ճանապարհների, փոստային կայանների և հաղորդակցության միջոցների, ինչպես նաև ծովային ուղիների վերաբերյալ: Խալիֆայությանն անհրաժեշտ էին նաև բազմատեսակ տեղեկություններ այլ պետությունների, հատկապես Բյուզանդիայի մասին:

Այսպիսով Թ դարում պահանջն ստեղծեց մի գիտություն, որը հունարեն բառով կոչվեց «ջաղրաֆիյա», կամ «ջուղրաֆիյա»: Երբեմն արաբներն իրենց համար առավել հասկանալի ձևով ասում էին «Երկարությունների ու լայնությունների գիտություն» (Իլմ ալ-Աթուալ ու-ալ-Ասրադ), կամ «Քաղաքների դրության որոշման գիտություն» (Իլմ Տակուիմ ալ-Բուլդան): Ավելի որոշակի իմաստ ուներ «Ճանապարհների ու թագավորությունների գիտություն» (Իլմ ալ-Մասալիք ու-ալ-Մամալիք) արտահայտությունը, իսկ ոմանք արևելյան երևակայությամբ կոչում էին «Երկրների հրաշալիքների գիտություն» (Իլմ Աջաիբ ալ-Բիլադ):

Մաթեմատիկական աշխարհագրություն

Արաբների մոտ աշխարհագրության այս ճյուղն առաջացավ մասամբ հունական ու պարսկական, բայց հատկապես հունական ազդեցության տակ:

Աբբասյանների օրոք արքունիքում երևան եկավ աստղագուշակի (մունաջջիմ) պաշտոնը, որպես Սասանյան Իրանից եկող ավանդույթ: Արդեն 762-ին հիմնադրվեց Բաղդադը, Մանսուր խալիֆան քաղաքի հիմնադիր ճարտարապետների (մուհանդիս) և վերակացուների հետ նշանակել էր նաև երկու աստղագուշակի, որոնք սակայն, ըստ էության,

աստղաբաշխներ էին: Մեկը՝ պարսիկ Նաուբախտն էր, որի սերունդը հետագայում հայտնի դարձավ տարբեր ասպարեզներում, մյուսը՝ հրեա Մաշաալլահն էր:

Պարսկական աստղաբաշխական երկերը, որոնք այս շրջանում հասնում էին արաբներին, քիչ չափով ինքնուրույն էին, քանզի հիմնականում արտահայտում էին հնդկական գիտությունը, որն, ի դեպ, նաև ուղղակիորեն էր ներթափանցում արաբական միջավայր:

Ըստ արաբ մատենագիրների, 771 կամ 773 թվականին Մանսուրի արքունիքը ժամանեց հնդկական մի դեսպանություն, որի կազմում էր գիտնական Մանքան կամ Քանքան. սա իր հետ էր բերել հնդկերեն աստղաբաշխական մի երկ, որի մեջ աղյուսակներ կային: Այս գործի արաբերեն մշակումը Ֆազարիի ու Յակուբ իբն Թարիկի կողմից կոչվել է «Սինդհինդ գիրք» (Քիտաբ Սինդհինդ): Այժմ պարզված է, որ այս հնդկերեն աշխատության հեղինակն է եղել Բրահմագուպտան, որը 628-ին գրել է «Սիդդհանտա» կոչված գիրքը: Ահա այս գրքի անունը արաբական միջավայրում աղավաղվելով դարձել է Սինդհինդ, որի մեջ արտահայտված են Հնդկաստանի երկու մասերի արաբական անունները՝ Սինդ (Ինդոսի հովիտ) և Հինդ (Հնդկաստան): Սիդդհանտա նշանակել է գիտելիք, գիտություն, սակայն ժամանակի ընթացքում այս բառն օգտագործվել է ամեն մի աստղաբաշխական երկի համար:

Ֆազարին, օգտագործելով հնդկական նյութերը, կազմել է աստղաբաշխական աղյուսակներ՝ զիջ կոչված: Պահպանելով հանդերձ Սինդհինդի համակարգը, միաժամանակ լրացումներ է կատարել, հնդկական ժամանակի հաշվումը վերածելով արաբական տարիների և այլն: Նրա աստղաբաշխական աղյուսակից (զիջ) մի հատված պահպանվել է Ժ դարի պատմիչ Մասուդիի մոտ, որի հիման վրա եզրակացրել են թե դա գրված է եղել 786-ից անմիջապես հետո: Ֆազարին և նրա ժամանակակիցները կարևոր դեր կատարեցին արաբական աստղաբաշխության սկզբնավորման մեջ: Նա և Մաշաալլահը առաջիններն էին որ աստրոլաբներ (աստղագիտական չափիչ գործիքներ) կազմեցին:

Նախքան հունական ազդեցությունը արաբները երկարությունները չափում էին ըստ Արինի կամ «երկրի գմբեթի (կուբբատ ալ-արդ) միջօրեականի», որը գտնվում էր ինչ որ տեղ արևելքում: Ըստ հնդիկ գիտնականների տեսության, երկարությունները հաշվվում էին ըստ միջօրեականի, որն անցնում էր Լանկա (արաբ. Սարանդիբ, նոր ժամանակներում՝ Ցեյլոն) կղզու վրայով, որն, իբր, հասարակածի վրա է գտնվում: Ըստ հնդիկների՝ Լանկայի միջօրեականն անցնում էր Ուժայյինայի

(այժմ՝ Ուջայն Կենտրոնական Հնդկաստանի Մալվա գավառում) վրայով, ուր կա հայտնի աստղադիտարան: Արաբներն այս Ուջայնը փոխարինեցին Ուզայն, աղավաղելով՝ Արին: Այսպիսով արաբների մոտ տեղ գտավ այն տեսությունը, որ երկարությունների հաշիվն սկսում է Արինի միջօրեականից: Արին բառը ժամանակի ընթացքում պարզապես կենտրոնի իմաստ ստացավ:

Հնդկական աստղաբաշխական և աշխարհագրական տեսություններից բացի արաբական միջավայր ներթափանցեցին նաև իրանական համապատասխան նյութեր: Օրինակ, զիջ (աստղաբաշխական աղյուսակներ) բառը ծագում է պարսկերեն զիգից, պահլավերեն՝ զիկից, որն սկզբում նշանակել է հիմք: Արաբների մոտ յոթ իկլիմների հայտնի տեսությունը ծագել է իրանական յոթ քիշվարների (երկրներ) պատկերացումից, թեև այս տեսությունն ամրացավ միայն հունական ազդեցությունից հետո:

Պարսկերեն (պահլավերեն) հորինված երկերից մեկն էր, որ զգալի ազդեցություն է թողել արաբական աշխարհագրության մեջ: Դա արաբական միջավայրում «Զիջ ալ-Շահ» կամ «Զիջ ալ-Շահիրիար» կոչված աշխատությունն է, որի հիմքում ընկած է պահլավերեն «Զիկ-ի Շատրոայար» երկը՝ գրված 632-ին, Հազկերտ Գ-ի օրոք: Այն օգտագործել է Մաշաալլահը, ծանոթ է եղել նաև Խորեզմին:

Իններորդ դարի սկզբից հունական աշխարհագրությունը եկավ դուրս մղելու հնդկականն ու պարսկականը, իսկ դարի կեսին այն արդեն տիրապետող էր: Տեսական վերլուծությամբ ու գիտական հիմնավորումով զինված հունական աշխարհագրությունը բնականաբար պիտի ետ մղեր իր նախորդներին:

Հույն մեծ աշխարհագրագետ աստղաբաշխ Կլավդիոս Պտղոմեոսի (90-168) և քարտեզագետ Մարին Տիրացու (Ա դ. վերջ - Բ դ. սկիզբ) աշխատությունների թարգմանությունները և նրանց ծանոթացումը ծնունդ տվեցին արաբալեզու մաթեմատիկական աշխարհագրությանը: Պտղոմեոսից թարգմանվել են նախ նրա երկու հիմնական երկերը՝ Մեծ ժողովածուն, որն արաբները կոչում էին Մաջիսթի, կամ Միջիսթի (միջնադարյան Եվրոպայում Almagest) և Աշխարհագրական ուղեցույցը, որը պարզապես կոչվել է աշխարհագրություն:

Ալմագեստն առաջին անգամ թարգմանվել է Բարմաքյան վեզիր Յահիա իբն Խալիդի պատվերով՝ նախքան 803 թվականը: Դա կոչվում է հին թարգմանություն և բավարար մակարդակ չի ունեցել: Մամուն խալիֆայի օրոք կատարվել է նոր, որակով թարգմանություն մոտավորա-

պես 827/828 –ին: Ապա կրկին է թարգմանել Հունայն իբն Իսհակը (810-873), իսկ հետո այն խմբագրել է Սաբիթ իբն Կուռան (834-901): Ալմագեստը արաբերենից լատիներենի է թարգմանել Ժերար Կրեմոնացին 1175-ին:

Պտղոմեոսի երկրորդ աշխատությունը՝ Աշխարհագրությունը նախ թարգմանել է փիլիսոփա Քինդին (մահ. 874), ապա Սաբիթ իբն Կուռան ավելի ընտիր թարգմանություն է կատարել, իսկ Իբն Խորդադբեհը այն խմբագրել է: Բացի այս երկու մեծ աշխատություններից արաբերենի են թարգմանվել նաև Պտղոմեոսի մանր աշխատություններ, որոնք առնչվում են Ալմագեստին: Կա նաև մի արաբական երկ «Քիտաբ ալ-Մալհամա» (Պայքարի գիրք) կոչված, որը կապում են Պտղոմեոսի անվան հետ: Ըստ երևույթին սա Պտղոմեոսի և արաբական նյութերի մի խառնուրդ է, որին հղում է նաև ԺԳ դարի աշխարհագրագետ Յակուտը:

Այս բոլորի հետևանքով արաբների մոտ սկիզբ առան աստղագիտական պրպտումները: Բաղդադի ու Դամասկոսի աստղադիտարաններում կատարված դիտարկումների հիման վրա կազմվում են «Մամունի աստղաբաշխական աղյուսակները» Մամուն խալիֆայի օրոք, որոնք օգտագործվել են Խորեզմիի ու Ֆարղանիի կողմից: Կազմվել է նաև «Մամունի քարտեզ», որն անկասկած ազդված է եղել Պտղոմեոսի քարտեզներից:

Արաբական մաթեմատիկական աշխարհագրության առաջին խոշոր դեմքը Խորեզմին է, ապա՝ Ֆարղանին (երկուսն էլ Թ դարում), իսկ Ժ դարում հայտնի է Սուհրաբը, որի աշխատությունն այնքան նման է Խորեզմիի «Երկրի պատկերը» (Քիտաբ Սուրատ ալ-Արդ) գրքին, որ կարելի է այն Խորեզմիի երկի երկրորդ խմբագրությունը համարել: Նրան նախկինում կոչել են Իբն Սերապիոն՝ շփոթելով նույնանուն բժշկի հետ:

Նույն դարում ապրած, Աստղաբաշխական աղյուսակների հեղինակ է խառանցի աստղապաշտ սաբիների կրոնի հետևորդ ալ-Բատտանին (մահ. 929): Աստիճանաբար մաթեմատիկական աշխարհագրության կենտրոնները Բաղդադյան շրջանակներից տեղափոխվում են արևմուտք: Ֆաթիմյան Եգիպտոսում Իբն Յունուսը (մահ. 1009) աղյուսակներ է կազմում աշխատելով Մուկաթթամ լեռան (Կահիրեի մոտ) աստղադիտարանում: Իսպանիայում ալ-Զարկալին (մահ. 1087) մասնակցել է «Տոլեդոյի աստղաբաշխական աղյուսակների» հորինմանը, որի համար գրել է նաև մեկնություններ: Այս աղյուսակները ԺԲ դարում լատիներեն է թարգմանել Ժերար Կրեմոնացին:

Արևելքում մոնղոլական արշավանքներից հետո Մարաղայի աստ-

ղադիտարանում դիտումներ է կատարել Նասիր ալ-Դին Թուսին (մահ. 1274) և գրել «ալ-Զիջ ալ-Իլխանի» (Իլխանական աստղաբաշխական աղյուսակներ): Նա գրել է պարսկերեն և արաբերեն: Վերջապես կարելի է հիշել Ուլուղբեկին (մահ. 1449), որը 1428-ին հիմնել է Սամարղանդի աստղադիտարանը: Իր «Զիջե ուլուղբեկի» երկը գրել է պարսկերեն, սակայն շուտով այն թարգմանվել է արաբերենի:

Նկարագրական աշխարհագրություն

Եթե Թ դարի առաջին կեսում հանդես եկավ մաթեմատիկական աշխարհագրությունը, որի առաջին կարևոր դեմքը Խորեզմին (մահ. 847) է, ապա դարի երկրորդ կեսում կազմավորվեց նկարագրական աշխարհագրությունը, և նրա հիմնադիրն էր Իբն Խորդադբեհը (մահ. 912):

Մաթեմատիկական աշխարհագրությունը ուղղակի հունական ազդեցության տակ ծնունդ առավ, սակայն դժվար է նկարագրական աշխարհագրության համար մեկ որոշակի աղբյուր նշել: Վերջինս դեռ Թ դարի առաջին կեսում աստիճանաբար սաղմնավորվեց, թեև կրեց նաև հունական և պարսկական ազդեցությունը:

Իններորդ դարի առաջին կեսում արաբ մատենագրության մեջ առաջանում են «Քիտաբ ալ-Ամուաա» (Գիրք լուսնի երեսների) կոչված աշխատություններ, որոնց մեջ բանասերները լեզվաբանական մեկնաբանությունների հետ մեկտեղ տալիս են եղանակի ու բնության մասին տեղեկություններ: Այսպիսի աշխարհագրաբանասիրական աշխատություններ է հորինել անապատի հին ավանդությունների գիտակ Հիշամ ալ-Քալբին (մահ. 820): Նման երկերը մեծ մասամբ նվիրված էին լինում Արաբիայի աշխարհագրությանը, կլիմայական պայմաններին, թեև եղել են աշխատություններ, որոնք դուրս են եկել Արաբիայի սահմաններից:

Բազմակողմանի գրող ու մտածող Ջահիզը (մահ. 869) իր երկերում հաճախ է անդրադառնում աշխարհագրական երևույթներին, սակայն ժամանակի ընթացքում պարզվեց, որ զուտ աշխարհագրական բնույթի գրքեր էլ է հորինել: Արդեն հայտնի է նրա «Հայացք վաճառականության վրա» աշխատությունը:

Արաբները հեռավոր երկրների մասին գաղափար էին կազմում արշավանքների ընթացքում, կամ թշնամու ձեռքը գերի ընկնելով և կամ որոշ քաղաքական հանձնարարությամբ հեռավոր երկրներն այցելելով: Նման ճանապարհորդություններից (ցամաքային թե ծովային) վերադառնալով՝ տալիս էին իրենց տեսած երկրների նկարագրությունը:

Առևտուր կատարելու համար արաբներն ու պարսիկները ծովային ճանապարհորդություններ էին կատարում մինչև հեռավոր Մալայա և Չինաստան, իսկ Միջերկրական ծովում արաբական նավերը միշտ շրջագայության մեջ էին: Հայտնի է Սուլայման վաճառականի Հնդկաստան ու Չինաստան կատարած ճանապարհորդության նկարագրությունը, որը վերաբերում է 851 թվականին, թեև գրի է առնվել հաջորդ դարում:

Իններորդ դարի երկրորդ կեսում արդեն ձեռքի տակ ունենք լուրջ աշխարհագրական երկեր, որոնցից առաջինն է Իբն Խորդադբեհի աշխատությունը: Ապա պետք է հիշել Յակուբիի (մահ. 897) երկը, իսկ հաջորդ դարի սկզբին գործել են Իբն ալ-Ֆակիհը (մահ. 903-ից հետո), Իբն Ռուստան (մահ. 913-ից հետո) և Կուդաման (մահ. 932-ից հետո):

Տասներորդ դարում սկսում է մի նոր շրջան, երբ երևան եկավ «Դասական դպրոցը» արաբ աշխարհագրության մեջ: Սրա հիմնադիրն է Բալխին (850-934), որի աշխատությունը մեզ չի հասել: Ապա իրար են հաջորդում Իսթախրին (մահ. 951-ից հետո), Իբն Հաուկալը և Մուկադդասին (946-1000): Դասական դպրոցը հայտնի է իր քարտեզներով: Այս դարում հայտնի են նաև Աբու Դուլաֆը, Մակդիսին (մահ. 956) և հատկապես Մասուդին (մահ. 956): Այս խմբին կարելի է միացնել նաև բազմակողմանի գիտնական Բիրունիին:

Սելջուկյան արշավանքների կատարած ավերածության հետևանքով մշակույթի կենտրոնները (և հենց աշխարհագրության) Իրաքից ու Իրանից տեղափոխվում են արևմուտք՝ Իսպանիա և Եգիպտոս ու Սիրիա: ԺԱ-ԺԲ դարերում արաբական Իսպանիայում ծաղկում են աշխարհագրական բառարանի հեղինակ Բաքրին (մահ. 1094), Աբու Համիդ ալ-Ղարնաթին (մահ. 1169/1170) և հատկապես հռչակավոր Իդրիսին (1100-1165), որն ապրել է Սիկիլիայում և հեղինակ է հարուստ քարտեզների:

Եգիպտոսում ու Սիրիայում ծաղկել են Յակուտը (մահ. 1229) աշխարհագրական հայտնի բառարանի հեղինակը և Աբդ ալ-Լաթիֆը (մահ. 1231):

ԺԳ դարի երկրորդ կեսում և ԺԴ դարում աշխարհագրության զարգացման կենտրոններն էին Եգիպտոսն ու Սիրիան: Հայտնի են Իբն Սաիդը (մահ. 1274), Զաքարիա ալ-Կազուինին (մահ. 1283), որն ունի երկու աշխատություն՝ Տիեզերագիտություն և Աշխարհագրություն, ապա Դիմաշկին (մահ. 1327), Աբու-լ-Ֆիդան (մահ. 1331), ալ-Նուայրին (մահ. 1332), ալ-Օմարին (մահ. 1349) և ճանապարհորդ Իբն Բաթթութան (մահ. 1377):

ԺԵ դարում Իբն ալ-Վարդիով (մահ. 1457) և ծովագնաց Իբն Մաջիդով

վերջանում է արաբ աշխարհագրության զարգացումը, քանզի հաջորդ դարից, Օսմանյան տիրապետության հետևանքով սկսում է ամլության մի երեքդարյա շրջան թե՛ աշխարհագրության ու պատմության և թե՛ ընդհանրապես արաբ մատենագրության մեջ:

ԲՆԱԳՐԵՐԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՊԱՏՄԱԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ա. Արաբերեն պատմաաշխարհագրական բնագրերի հրատարակությունները

Թեև ԺԱ-ԺԳ դարերում Իսպանիայի Տոլեդո քաղաքում և Եվրոպայի այլևայլ վայրերում արաբերենից լատիներեն թարգմանության եռանդուն գործունեություն ծավալվեց, այսուհանդերձ, միջնադարյան Եվրոպային հետաքրքրում էր առաջին հերթին արաբական փիլիսոփայությունը, բժշկությունը և ճշգրիտ գիտությունները, իսկ պատմական և աշխարհագրական երկերը դեռ չէին հետաքրքրում:

Թարգմանվել էին միայն մաթեմատիկական աշխարհագրությանը վերաբերող գործերը, ինչպես Ֆարղանիի (Alfraganus) և Բատտանիի (Albategnius) երկերը:

Հետաքրքրությունը արաբական պատմագրության և աշխարհագրության նկատմամբ առաջացավ միայն ԺՋ և ԺԷ դարերում, արաբերեն տպագրության սկզբնավորումից անմիջապես հետո, երբ վերածննդի ազդեցության տակ եվրոպացի գիտնականները ավելի խորը և բազմակողմանի հետաքրքրություն սկսեցին ցուցաբերել Արևելքի նկատմամբ: Այդ ժամանակ արաբերենի և արաբական մատենագրության ուսումնասիրությունը սերտորեն կապված էին աստվածաբանության հետ և մտնում էին ընդհանուր արևելագիտության և սեմագիտության ոլորտների մեջ: Արաբերենի ուսումնասիրման կենտրոններն էին Հռոմը, Փարիզը, Լեյդենը (Հոլանդիա), Օքսֆորդը և Քեմբրիջը, որտեղ կային արաբերեն ձեռագրերի հավաքածուներ:

Արաբական տպագրության սկզբնավորումը Իտալիայում մեծ նշանակություն ունեցավ արաբագիտության և արևելագիտության սաղմնավորման համար: 1580-ական թվականներին Հռոմում (Մեդիչիների տպարանում) լույս տեսան առաջին արաբերեն գրքերը[19]: Շուտով լույս

[19] J. Fück, Die Arabischen Studien in Europa, Leipzig, 1955, S. 53-59.

տեսավ հոլանդացի բանասեր Թ. էրպենիուսի (1584-1624) արաբերեն քերականությունը[20] և ապա Գ. Գոլիուսի (1596-1667) արաբերեն-լատիներեն բառարանը[21]:

Աշխարհագրական առաջին աշխատությունը, որին Եվրոպան ծանոթացավ Հասան իբն Մուհամմադի (լատինական անունով Լևոն Աֆրիկացի) «Աֆրիկայի նկարագրությունն» է: Հեղինակը 1526 թվականին այն իտալերենի էր թարգմանել և 1550-ին հրատարակել Հռոմում, իսկ արաբերեն բնագրի վերաբերյալ տեղեկություններ չկան[22]:

1592 թվականին Հռոմի Մեդիչիների տպարանում լույս տեսավ ԺԲ դարի աշխարհագրագետ Իդրիսիի աշխարհագրությունը[23] (քաղվածաբար), որն արաբերեն աշխարհագրական բնագրի առաջին տպագրությունն էր: 1619-ին նրան հաջորդեց լատիներեն թարգմանությունը:

Առաջին արաբական պատմական երկը լույս տեսավ Լեյդենում (Հոլանդիա) Թ. էրպենիուսի ջանքերով: Դա ԺԳ դարի քրիստոնյա արաբ (ղպտի) պատմիչ ալ-Մաքինի պատմության լատիներեն թարգմանությունն էր[24]:

Սակայն հոլանդացի Յ. Գոլիուսն էր, որ լույս ընծայեց առաջին արաբերեն պատմական երկի բնագիրը՝ ԺԵ դարի պատմիչ Իբն Արաբշահի «Լենկթիմուրի պատմությունը»[25]:

Նա հետագայում հրատարակեց նաև Թ դարի արաբ աշխարհագրագետ Ֆարղանիի երկը արաբերեն բնագրով[26]:

Անգլիացի արևելագետ Է. Պոքոքիոսը (1604-1691) հրատարակեց երկու քրիստոնյա արաբ մատենագիրների բնագրերը՝ Թ դարի պատմիչ, Ալեքսանդրիայի մելքիտ (հունադավան) պատրիարք Եվտիքիոսի[27] և ԺԳ դարի ասորի պատրիարքի փոխանորդ (մափրիան) Աբու-լ-Ֆարաջ

[20] **Th. Erpenius**, Grammatica Arabica, Leiden, 1613.

[21] **J. Golius**, Lexicon Arabico-Latinum, Lugd. Bat., 1653.

[22] **И. Крачковский**, Избранные сочинения, IV, 1957, стр. 445-450.

[23] **Idrisi**, Oblectatio desiderantis in descriptione civitatum principalium et tractuum et provinciarum et insularum ... mundi, Romae, 1592.

[24] Historia Saracenica ... Arabice olim exarata a **Georgio Elmacino** ... et Latine reddita opera et studio Thomae Erpenii, Lugd. Bat., 1625.

[25] **Ahmedis Arabsiadae** vitae et rerum gestarum Timuri. Historia, Lugd. Bat., 1636.

[26] **J. Golius**, Muhammedis fil. Ketiri Ferganensis, qui vulgo Alfraganus dicitur. Elementa astronomica, Arabice et Latina, Amstelodami, 1669.

[27] Contexio gemmarum sive **Eutychii** ... Annales, Interprete E. Pocockio t. 1-2, Oxoniae, 1658-59.

Բար Հեբրեոսի[28] պատմական երկերը: Վերջինը հրատարակված է արաբերեն բնագրով ու լատիներեն թարգմանությամբ:

Այդ դարում հրատարակվել է նաև ԺԴ դ. մատենագիր Աբու-լ-Ֆիդայի աշխարհագրության մի հատվածը[29] Թ. Գրավիոսի (1612-1676) կողմից:

ԺԷ դարում արաբական մատենագրության ուսումնասիրության բնագավառում ակնառու նվաճում էր արևելագետ Բ. Դ'Էրբելոյի (1625-1695) «Արևելյան գրադարան» ֆրանսերեն աշխատությունը[30], որը մի հանրագիտարան է արաբների, պարսիկների, թուրքերի լեզվի, մատենագրության, պատմության, մշակույթի և այլ բնագավառների մասին, այբբենական շարակարգությամբ:

ԺԸ դարում սկիզբը դրվեց արաբական գրչագրերի նկարագրմանը. հրատարակվեցին ձեռագրացուցակներ լիբանանցի մարոնի Ասսեմանի ընտանիքի երեք անդամների կողմից. Ժ. Ասսեմանին (1687-1768) նկարագրեց Վատիկանի արևելյան ձեռագրերը[31], Ս. է. Ասսեմանին (1707-1782) նկարագրեց Ֆլորենտիայի արևելյան գրչագրերը, իսկ Ս. Ասսեմանին (1752-1821) Վենետիկի ձեռագրերն ու դրամները: Կարևոր է նույնպես մարոնի Մ. Ղազիրիի (լատ. Քազիրի, 1720-1791) էսկուրիալի (Իսպանիա) արաբերեն ձեռագրերի ցուցակը[32]:

Այս դարում արաբերեն բնագրեր հրատարակեց գերմանացի արևելագետ Յ. Յ. Ռայսկեն (1716-1774), որը կարևոր դեր կատարեց Գերմանիայում արաբագիտության զարգացման գործում: Նա հրատարակել է ԺԴ դարի մատենագիր Աբու-լ-Ֆիդայի պատմությունը[33]: Դարի վերջում լույս է տեսել Աբդ ալ-Լաթիֆի պատմաաշխարհագրական աշխատության բնագիրը Եգիպտոսի մասին[34]:

Հաջորդ դարի սկզբներին Յ. Ռայսկեի աշակերտ Ք. Ֆ. Շնուռերը (1742-1822) կազմեց արաբագիտական հրատարակությունների մատե-

[28] Historia compendiosa Dynastiarum authore **Gregorio Abul-Farajio** ... arabice edita, et latine versa ab Ed. Pocockio, Oxoniae, 1663.

[29] Chorasmiae et Mawaralnahrae...descriptio ex tabulis **Abulfedae**, (Th. Gravius), Londini, 1650.

[30] Bibliothèque orientale, par B. d'Herbelot, Paris, 1697.

[31] Bibliotheca Orientalis, Clementino-Vaticana, Romae, 1719-1728.

[32] Bibliotheca Arabico-Hispana Escurialensis, **M. Casiri**, Matriti, t. I-II, 1760-1770.

[33] **Abulfedae** Annales muslemici arabice et latine. Opera et studiis J. J. Reiskii. ed. J. G. Ch. Adler, t. I-V, Hafniae, 1789-1794.

[34] **Abdallatif's** compendium memorabilium Aegypti, ed. **J. White**, Tubingae, 1789.

նագիտություն, որը կոչվեց Արաբական Գրադարան[35]:

19-րդ դարում ծնվեց բուն արաբագիտությունը անջատվելով ընդհանուր արևելագիտությունից, աստվածաբանությունից և սեմագիտությունից: Ֆրանսիայում արաբագիտության հիմնադիրը դարձավ Սիլվեստր դը Սասին (1758-1838)[36]: Լավ իմանալով սեմական լեզուները, ինչպես նաև արաբերենը, պարսկերենն ու թուրքերենը, նա հանդես եկավ լայն գործունեությամբ: Դասավանդել է 1795-ին հիմնադրված Փարիզի «Արևելյան կենդանի լեզուների դպրոցում», Կոլեժ դը Ֆրանսում, որի տնօրենն է եղել 1823 թվականից, իսկ 1824-ից նաև վերոհիշյալ դպրոցի: 1821-ին հիմնել է «Ասիական ընկերությունը», որի առաջին նախագահն է եղել, ինչպես նաև «Ասիական հանդեսի» խմբագիրը (1822-1838):

Խիստ արժեքավոր է նրա արաբագիտական գործունեությունը: Նրա «Արաբերենի քերականությունը»[37] և «Արաբերենի հատընտիրը»[38] երկար ժամանակ արաբերենի ուսումնասիրման դասական ձեռնարկներ են եղել: Արաբական աղբյուրներից ֆրանսերենի է թարգմանել Աբդ ալ-Լաթիֆի երկը, ճոխ ծանոթագրություններով:

Սիլվեստր դը Սասին ամուր հիմքեր դրեց արաբագիտության և արաբական աղբյուրների ուսումնասիրման համար և Փարիզը դարձավ արաբագիտության կարևոր կենտրոն: Նրա աշակերտ է. Կատրըմերը (1782-1852)[39] հրատարակեց արաբ պատմիչ Մակրիզիի պատմության ֆրանսերեն թարգմանությունը[40], Իբն Խալդունի պատմության ներածության արաբերեն բնագիրը[41]: Ս. դը Սասիի մի ուրիշ աշակերտը Ժ. Ռենոն (1795-1867) նախ Մ. Գ. դը Սլենի (1801-1878) հետ հրատարակեց Աբու-լ-Ֆիդայի աշխարհագրությունը արաբերեն բնագրով[42], ապա ինքը տվեց նրա ֆրանսերեն թարգմանությունը: Դը Սլենը լույս ընծայեց նաև Իբն Խալդունի պատմության մի մասը[43] և Իբն Խալլիքանի կենսագրական բառարանի թարգմանությունը[44]:

Ս. Ռայսկեից հետո արաբագիտությունը ամուր հիմքեր ուներ Գերմանիայում: Վ. Ֆրայտագը (1788-1861) հիմնովին վերամշակելով Ց. Գոլիուսի արաբերեն-լատիներեն բառարանը, կազմեց արաբերեն-լատիներեն նոր բառարան: Արաբ մատենագրության ուսումնասիրման համար հույժ կարևոր նշանակություն ունեցավ Ժ դարի մատենագիր Իբն ալ-Նադիմի «Ֆիհրիստ»[45] (ցուցակ) և Ժէ դ. մատենագիր Քյատիբ Չելեբիի «Քաշֆ ալ-զունուն»[46] (կասկածների փարատում) երկերի հրատարակությունը Գ. Ֆլյուգելի (1802-1870) ջանքերով: Այս երկու մատենագիտական աշխատությունները հիշատակում են ոչ միայն մեզ հայտնի, այլև կորած կամ դեռ չհայտնաբերված բազմաթիվ աշխատություններ և հեղինակներ:

Արաբական աղբյուրների հրատարակման ասպարեզում բեղուն գործունեություն է ծավալել Ֆ. Վյուստենֆելդը (1808-1899): Մի ամբողջ գրադարան են կազմում նրա լույս ընծայած բնագրերը՝ Իբն Խալլիքանի կենսագրական բառարանը[47], Մեքքայի ժամանակագրությունները[48], Իբն Կուտայբայի պատմությունը[49], Նավավիի կենսագրական բառարանը[50], Յակուտի աշխարհագրական բառարանը[51], Բաքրիի աշխարհագրությունը[52], Կազվինիի տիեզերագիտությունը[53] և աշխարհագրությունը[54]:

Ֆրանսիայից ու Գերմանիայից բացի արաբագիտությունը ԺԹ դարում զարգացավ նաև Հոլանդիայում, Անգլիայում, Իտալիայում, Իսպանիայում, Ռուսաստանում և Շվեդիայում:

---

[35] Bibliotheca Arabica. ed. **D. Ch. F. Schnurrer**, Halae, 1811.

[36] **J. Fück**, Die Arabischen Studien in Europa, S. 140-152.

[37] **Sylvestre de Sacy**, Grammaire arabe, pt 1-2, Paris, 1810.

[38] **Idem**, Chrestomathie arabe, v. 1-3, Paris, 1826.

[39] **J. Fück**, Die Arabischen Studien, S. 152-153.

[40] Histoire des Sultans Mamlouks de l'Egypte, écrite en arabe par **Makrizi**, traduite par Quatremère, 2 vol., Paris, 1837-1845.

[41] Prolégomènes d'**Ebn Khaldoun**. Texte arabe par Quatremère, Paris, 1858.

[42] Géographie d'**Aboulféda**, texte arabe publié par M. Reinaud et M. G. de Slane, Paris, 1840.

[43] Histoire des Berbères et des dynasties musulmanes de l'Afrique septentrionales par **Ibn Khaldoun**, éd. Par de Slane, t. I-II, Alger, 1847-1851.

[44] **Ibn Khallikan**'s Biographical Dictionary, tr. by M. G. de Slane, v. I-IV, Paris, 1842-1871.

[45] Kitab al-Fihrist von **an-Nadim**, hrsb. von. **G. Flügel**, 2 Bde, Leipzig, 1871-1872.

[46] Lexicon bibliographicum et encyclopedicum (Haji Khalfa), ed. **G. Flügel**, 7 vol., Leipzig-London, 1835-1858.

[47] **Ibn Challican**, Vitae illustrium virorum, ed. **F. Wüstenfeld**, Goetingae, 1835-1850.

[48] Die Chroniken der Stadt Mekka, ed. **F. Wüstenfeld**, I-IV, Leipzig, 1857-1861.

[49] **Ibn Cuteiba**'s Handbuch der Geschichte, hrsg. von **F. Wüstenfeld**, Göttingen, 1850.

[50] The biographical dictionary of illustrious men, by **al-Nawawi**, ed. by **F. Wüstenfeld**, Göttingen, 1842-1847.

[51] **Jacut**'s Geographisches Wörterbuch, hrsg. von **F. Wüstenfeld**, 6 Bde, Leipzig, 1866-1873.

[52] Das geographische Wörterbuch des **el-Bekry**, hrsg. von **F. Wüstenfeld**, 2 Bde, Göttingen, Paris, 1876, 1877.

[53] **Cazwinis** Kosmographie, Erster Theil, hrsg. von **F. Wüstenfeld**, Göttingen, 1848.

[54] **Cazwinis** Kosmographie, Zweiter Theil, Die Denkmäler der Länder, hrsg. von **F. Wüstenfeld**, Göttingen, 1849.

Հոլանդիայում Ռ. Դոզին (1820-1883) հրատարակեց արաբական Իսպանիայի վերաբերյալ մի քանի բնագրեր, որոնցից է Մ. դե Գույեի հետ լույս ընծայած Իդրիսիի աշխարհագրության Հյուսիսային Աֆրիկային ու Իսպանիային վերաբերող հատվածը[55]: Անգլիայում արաբագետ է. Վ. Լեյնը (1801-1876) հրատարակեց արաբական աղբյուրների ուսումնասիրման համար շատ անհրաժեշտ արաբերեն - անգլերեն ութ հատորանոց բառարանը[56], ուր հին արաբական բառարանների (հատկապես Ֆիրուզաբադիի «Կամուս ալ-Մուհիթի») նյութերի հիման վրա մատուցված է դասական արաբերենի ամբողջ բառապաշարը:

Ռուսաստանում գործող գերմանացի արևելագետ Ք. Մ. Ֆրեյնը (1782-1851) դեռևս դարի սկզբին լույս էր ընծայել Իբն ալ-Վարդիի (ԺԵ դ.) աշխարհագրությունը[57] և ուսումնասիրել Իբն Ֆադլանի բնագիրը: [58]

Վերջապես հույժ կարևոր հրատարակություն էր արաբ պատմագրության ամենահայտնի դեմքերից Իբն ալ-Ասիրի (ԺԳ դ.) պատմության[59] բնագրի լույս ընծայումը շվեդացի արաբագետ Յ. Թորնբերգի (1807-1877) կողմից 14 հատորով:

Վերոհիշյալ հրատարակությունները իրականացվեցին Եվրոպայի տարբեր քաղաքներում գոյություն ունեցող ձեռագրական հավաքածուների օգտագործման շնորհիվ և բնականաբար այդ աշխատանքին զուգահեռ կազմվեցին ձեռագրացուցակներ, որոնք մեծ չափով դյուրացրին բնագրերի հետագա հրապարակումը: Գրեթե բոլոր խոշոր եվրոպական արևելագիտական կենտրոնների հավաքածուներն ունեցան պատշաճ ձեռագրացուցակներ:

Հոլանդիայում կազմվեց արևելագիտական կարևորագույն կենտրոն Լեյդենի հավաքածուի ձեռագրացուցակը Ռ. Դոզիի. Մ. Յ. դե Գույեի և այլոց ջանքերով[60]:

Լոնդոնի Բրիտանական թանգարանի ձեռագրացուցակը նախ

[55] Description de l'Afrique et de l'Espagne. éd. par **R. Dozy** et **M. J. de Goeje**. Leyde, 1886.

[56] Maddu-l-Kamus, an arabic-english Lexicon, by **E. W. Lane**, 1-8, London, 1863-1893.

[57] Aegyptus auctore **Ibn al-Wardi**, ed. **Chr. M. Fraehn**, Halae, 1804.

[58] **Fraehn C. M., Ibn Fozlan**'s und anderer Araber Berichte über die Russen älterer Zeit., SPb., 1823.

[59] **Ibn el-Athiri** Chronicon quod perfectissimum inscribitur. ed. **C. J. Tornberg**, 14 vol. Lugd. Bat., 1851-1876.

[60] Catalogus codicum orientalium Bibliothecae academiae Lugduno Batavae, I-IV, auctoribus **R. Dozy, M. de Goeje, P. de Long, M. Houtsma**. Lugd. Bat., 1851-1877.

կազմվեց անցյալ դարի կեսերին[61], ապա դարի վերջում լրացվեց[62], իսկ շարունակությունը կազմել են Ա. Էլիսը և է. էդուարդզը[63]: Կազմվել են նաև Օքսֆորդի ու Քեմբրիջի ձեռագրերի ցուցակները:

Գերմանիայում հատկապես հիշատակության է արժանի Բեռլինի արաբերեն գրչագրերի տասհատորանոց ձեռագրացուցակը, որի կազմողն է Վ. Ալվարդտը[64]: Ձեռագրացուցակներ ունեն նաև Հալլեի, Դրեզդենի, Մյունխենի[65], Լայպցիգի և այլ քաղաքների հավաքածուները:

Ֆրանսիայում արաբերեն ձեռագրերը կենտրոնացած են հիմնականում Փարիզի Ազգային գրադարանում, որի ձեռագրացուցակները կազմել են Մ. Գ. դը Սլեյնը և է. Բլոշեն[66]:

Իտալիայում կազմվել են Վատիկանի[67], Ֆլորենտիայի, Միլանի, Վենետիկի և այլ քաղաքների հավաքածուների ձեռագրացուցակներ: Իսպանիայում կազմվել են էսկուրիալի ձեռագրերի նոր ցուցակ[68], ինչպես նաև Մադրիդի, Գրանադայի և այլ քաղաքների հավաքածուների ձեռագրացուցակները: Պետերբուրգի արաբերեն ձեռագրերի ցուցակը կազմել է բարոն Վ. Ռոզենը[69]:

ԺԹ դարում ձեռագրացուցակներ կազմվեց նաև Կահիրեի Խեդիվա-

[61] Catalogus codicum manuscriptorum orientalium qui in Museo Britannico asservantur. Pars secunda codices arabicos. Londini, 1846.

[62] **Ch. Rieu**, Supplement to the Catalogue of the arabic manuscripts in the British Museum, London, 1894.

[63] A descriptive List of the Arabic manuscripts acquired by the trustees of the British Museum since 1894 composed by **A. G. Ellis** and **Edward Edwards**, London, 1912.

[64] Die Handschriftenverzeichnisse der königlichen Bibliothek in Berlin. Verzeichnis der arabischen Handschriften von **W. Ahlwardt**, 10 Bde, Berlin, 1887-1899.

[65] Die arabischen Handschriften der K. Hof- und Staatsbibliothek in München, beschrieben von **J. Aumer**, München, 1866.

[66] Catalogue des manuscripts arabes de la Bibliothèque Nationale par le **Baron de Slane**, Paris, 1883-1895.

[67] Catalogo dei Codici manoscritti orientali della Biblioteca Naniana (Venice), compilato dall'abbate **S. Assemani**, 2 Part., Padova, 1787-92.

[68] Les manuscripts arabes de l'Escurial décrits par **H. Derenbourg** et **E. Levi-Provencal**, I-III, 1884-1928, Madrid.

[69] Notices sommairs des manuscrits arabes du Musée asiatique par le **Baron V. Rosen**, St. Pétersbourg, 1881.

կան Գրադարանի[70] հավաքածուի համար:

ԺԹ դարի երկրորդ կեսում նոր թափ ստացավ արաբերեն պատմական և աշխարհագրական երկերի հրատարակման գործը և դրվեց ավելի բարձր հիմքերի վրա: Կարևոր նորություն էր այն, որ եթե նախապես (և դեռ ԺԷ դարից) բանասերների ուշադրությունը սևեռված էր հիմնականում ուշ շրջանի (ԺԲ-ԺԵ դդ.) արաբ պատմիչների և աշխարհագրագետների, իսկ Թ և Ժ դարերի հեղինակները գրեթե անծանոթ էին, ապա ժամանակի ընթացքում, շնորհիվ ձեռագրատներում հայտնաբերված եզակի ձեռագրերի, ուշադրության կենտրոնում գտնվեցին վերջիններս: Այս նոր շրջանում հատկապես աչքի ընկավ հոլանդացի հռչակավոր արաբագետ Մ. Յ. դե Գույեն (1836-1909): Նա հրատարակեց Թ դարի կարևորագույն պատմիչ Բալազուրիի «Երկրների նվաճումը»[71], ապա կազմակերպեց և ինքն էլ մասնակցեց Ժ դարի խոշոր պատմիչ Թաբարիի բազմահատոր երկի լույս ընծայմանը եվրոպայի լավագույն արաբագետների հետ միասին[72]: Սակայն նրա բեղուն գործունեության թագն է «Արաբ աշխարհագրագետների գրադարան» [73]ուբիատորանոց մատենաշարը, ուր ընդգրկված են Թ դարի (Իբն Խորդադբեհ, Յակուբի, Իբն ալ-Ֆակիհ, Իբն Ռուստա, Կուդամա) և Ժ դարի (Իսթախրի, Իբն Հաուկալ, Մասուդի, Մուկադդասի) երկերը:

Թ-Ժ դարերի աղբյուրների հրատարակումը մեծ նշանակություն ուներ պատմության և բանասիրության համար, քանի որ դրանք հնագույն և ստույգ սկզբնաղբյուրներ են, որոնցից օգտվել են հետագա բոլոր դարերի հեղինակները:

Շուտով լույս տեսավ Թ դ. երկրորդ կարևոր պատմիչ՝ Յակուբիի երկը[74] հոլանդացի արաբագետ Մ. Թ. Հաուցմայի (1851-1943) ջանքերով, իսկ դրանից առաջ լույս էր տեսել Ժ դարի պատմիչ Մասուդիի

[70] Fihrist al-kutub al-arabiya al-mahfuza bil-kutubkhana al-khediwiya, I-VII, Cairo, 1301-1308 (1883-1890).

[71] Liber expugnationis regionum auctore al **Beladsori** ed. **M. J. de Goeje**, Lugd. Bat., 1866.

[72] Annales auctore **Abu Djafar al-Tabari,** quos ediderunt **J. Barth, Th. Nöldeke** ... et **M. J. Goeje**, Lugd. Bat., 1879-1901.

[73] Bibliotheca Geographorum Arabicorum, edidit **M. J. de Goeje**.
I, Viae regnorum (**Istakhri**). II, Viae et regna (**Ibn Haukal**), III, Descriptio imperii Moslemici (**Mocaddasi**), IV, Continens indices V, Compendium libri Kitab al-Boldan (**Ibn al-Fakih**) VI, Kitab al-Masalik w-al-mamalik (**Ibn Khordadhbeh**) et exerpta e Kitab al-Kharaj (**Kodama ibn Djafar**) VII, Kitab al-alak an-nafisa (**Ibn Rosteh**) et Kitab al-boldan (**Yakubi**) VIII, Kitab al-tanbih w-al-ishraf (**Masudi**), Lugduni Batavorum, 1870-1894.

[74] Ibn Wadhih qui dicitur **al-Jaqubi** Historiae, 2 partes, ed. **M. Houtsma**, Lugd. Bat., 1883.

երկը[75] Բ. դը Մեյնարի ու Պ. դը Կուրտեյի կողմից: Ռուս արաբագետ Վ. Գիրգասը հրատարակեց Թ դ. պատմիչ Դինավարիի պատմությունը[76], որի համար հետագայում անվանացանկ կազմեց Ի. Կրաչկովսկին[77]:

Այսպիսով ստեղծվեց հավասարակշռություն ԺԱ դարից առաջ և ԺԱ դարից հետո ապրած մատենագիրների երկերի հրատարակման հարցում: Դրանից հետո անցյալ դարի վերջին և քսաներորդ դարի սկզբին իրար հաջորդեցին պատմիչների երկերի նոր հրատարակությունները: Մ. Հաուցման լույս ընծայեց ԺԲ դ. պատմիչ Իմադ ալ-Դին ալ-Իսֆահանիի (վերամշակված Բոնդարիի կողմից) սելջուկների պատմությունը[78]: Իտալացի արաբագետ Կ. Նալլինոն (1872-1938) լույս ընծայեց Բատտանիի (Ժ դ.) աստղագիտական և աշխարհագրական երկը[79]: Կարևոր էր ԺԱ դ. նշանավոր պատմիչ Իբն Միսքավայհի կրկնակի հրատարակությունը դարի սկզբին: Իտալացի բանասեր Լ. Կաետանին (1869-1935) հրատարակեց նրա բնագիրը[80], իսկ հետո անգլիացի արաբագետներ Հ. Ֆ. Ամեդրոզը (1854-1917) և Դ. Ս. Մարգոլիուսը (1858-1940) լույս ընծայեցին նրա պատմության այն մասը, որ նրա ինքնուրույն շարադրանքն է[81] (սկզբնական մասը Թաբարիից է արտագրած) բնագրով ու թարգմանությամբ (անգլերեն):

20-րդ դարի սկզբին արաբագիտության մեջ հատուկ ուշադրություն դարձվեց քրիստոնյա արաբ մատենագիրներին, որոնց երկերը հրատարակվեցին «Քրիստոնյա արևելյան մատենագիրների ժողովածու» և «Արևելյան հայրաբանություն» մատենաշարներում, որի մեջ ընդգրկված են բոլոր քրիստոնյա արևելյան (հայ, ասորի, ղպտի, արաբ, եթովպացի և այլն) մատենագիրների երկերը: Լիբանանցի բանասեր Լ. Շեյխոն հրատարակել է Եվտիքիոսի (Սաիդ իբն ալ-Բաթրիկ, Ժ դ.) պատմությունը և նրա շարունակությունը հանդիսացող Յահիա Անտիոքացու «Հավելվածը»[82]: Վերջինիս երկը, այլ ձեռագրի հիման վրա լույս է

[75] **Macoudi,** Les prairies d'or. Texte et trad. par **C. Barbier de Meynard** et **P. de Courteille**, 9 tomes, Paris, 1861-1877.

[76] **Abu Hanifa ad-Dinawari**, Kitab al-Akhbar at-Tiwal, publ. par **V. Guirgas**, Leide, 1888.

[77] Préface, var. et index publ. par **I. Kratchkovsky**, Leide, 1912.

[78] Recueil de textes relatifs à l'histoire des seljoucides par **M. Th. Houtsma,** I-IV, Leyde, 1886-1902

[79] **C. Nallino**, Al-Battani sive Albatenii opus astronomicum, Milano, 1904.

[80] The Tajarib al-Umam of **Ibn Miskawayh** by **L. Caetani**, v. I, V, VI, Leyden, London, 1909-1917

[81] **H. Amedroz** and **D. Margoliouth**, The Ecclipse of the Abbasid Caliphate, 7 vol., London, 1920/21.

[82] **Eutichii Patriarchae** Alexandrini Annales, I-II, ed. **L. Cheikho**, Corpus Scriptorum Christianorum Orientalium, Scriptores Arabici, III, t. VI, VII, Beryti, 1906, 1909. **Cheiko L., Carra**

ընծայել նաև ռուս բյուզանդագետ-արաբագետ Ա. Վասիլևը[83]:

Առաջին աշխարհամարտից հետո բնագրերի հրապարակման ասպարեզում հիշատակության արժանի է ավստրիացի արաբագետ Հ. ֆոն Մժիկի մատենաշարը, որն ընդգրկում է Թ և Ժ դդ. սկզբնաղբյուրներ (Խորեզմի, Ջահշիարի, Սուհրաբ)[84]:

Վերջերս լույս տեսան ԽՍՀՄ Գիտությունների Ակադեմիայի Արևելագիտության հաստատության Լենինգրադի բաժանմունքի արաբերեն գրչագրերի ժողովածուի ձեռագրացուցակի մի քանի հատորներ, որոնցից արժեքավոր են պատմության[85] և աշխարհագրության[86] վերաբերյալ հատորները:

Քսանական թվականներից արաբագետների ուշադրությունը սևեռված է արևելյան երկրների հավաքածուներին, որոնք դեռ կարոտ են մանրազնին քննության: Արդեն հրատարակված են արաբական երկրներում գտնվող գրչագրերի ձեռագրացուցակներ[87]: Հատկապես կարևոր են Կոստանդնուպոլսի ձեռագրական հավաքածուները, որոնք գոյացել են դեռևս արաբական երկրների նվաճման շրջանից (ԺՋ դ.) փոխադրված բազմահազար ձեռագրերից: Չնայած տեղական իշխանությունների չկամության հետևանքով այդ ձեռագրերի դժվարամատչելի լինելուն, այսուհանդերձ որոշ բանասերներ հաջողել են ձեռք բերել ու լույս ընծայել արաբերեն բնագրեր: Այսպես, հոլանդացի արաբագետ Յ. Հ. Կրամերսը (1891-1954) լույս ընծայեց Իբն Հաուկալի (Ժ դ.) բնագրի մի նոր հրատարակություն, Կոստանդնուպոլսում պահվող մի արաբերեն առավել հին և բնագրային տարբերություններ ունեցող գրչագրի հիման վրա[88]: Ժէ դարի պատմիչ Մունաջջիմ բաշիի ընդարձակ պատմական երկը, որի մեջ օգտագործված են բազմաթիվ կորած, կամ դեռ անհայտ,

---

de Vaux, Zayyat H., Annales de Jahia Ibn Said Antiochiensis, C. S. C. O., Scriptores Arabici, ser. III, t. VII, Beryti, 1909.

[83] Histoire de Yahia ibn Said d'Antioche, éd. et trad. en francais par I. Kratchkovsky et A. Vasiliev, Patrologia Orientalis, t. 18, P. 1924, t. 23, 1932.

[84] Mžik, Hans von, Bibliothek arabischer Historiker und Geographen I. Kitab al-Wuzara. al-Ğahšiyari III. Kitab Surat al-ard des Khwarizmi, 1926. V Kitab Agaib al-Akalim as-saba des Suhrab, 1930.

[85] Каталог арабских рукописей института народов Азии, в. 2, А. И. Михайлова, Географические сочинения, Москва, 1961.

[86] Каталог арабских рукописей института народов Азии, в. 3, А. И. Михайлова, История, Москва, 1965.

[87] Լույս են տեսել Կահիրեի, Բեյրութի, Դամասկոսի, Բաղդադի, Թունիսի և այլ արաբական քաղաքների ձեռագրացուցակները:

[88] Opus geographicum auctore Ibn Haukal secundum textum, ed. J. H. Kramers, Lugd. Bat., Lipsiae, 1938.

արաբերեն աղբյուրներ, հիմնականում մնում է անտիպ և միայն Վ. Մինորսկին հաջողել է մեծ դժվարությամբ երկու փոքրիկ հատված[89] ձեռք բերել և լույս ընծայել ընդարձակ ուսումնասիրությամբ հանդերձ:

ԺԹ-րդ դարի վերջից ու Ի դարի սկզբից արաբական երկրներում ևս սկսել են հրատարակել միջնադարյան պատմիչների ու աշխարհագրագետների երկերի բնագրերը: Արժեքավոր է Աբու Յուսուֆի «Հարկերի մասյան»[90] աշխատության հրատարակումը Կահիրեում (Բուլակ): Կահիրեում ու Բեյրութում լույս են տեսել մի շարք պատմիչների բնագրերը Աբու-լ-Ֆարաջ իբն ալ-Իբրի[91] (Բար Հեբրեոս, ԺԳ դ.), Կալկաշանդի (ԺԴ-ԺԵ դդ.)[92], Աբու-լ-Մահասին իբն Տաղրիբիրդի (ԺԵ դ.)[93], Իբն ալ-Ադիմ (ԺԳ դ.)[94], Իբն ալ-Ջաուզի (ԺԲ դ.)[95], Իբն Խալդուն (ԺԴ դ.)[96], Քուֆի (Ժ դ.)[97], Խալիֆա իբն Խայյաթ (Թ դ.) [98]և այլն:

Եղել են նաև Եվրոպայում կատարված հրատարակությունների նոր տպագրություններ, ինչպես Յակուբիի[99] ու Յակուտի[100] (ԺԳ դ.) երկերի վերահրատարակությունները: Կահիրեում լույս տեսավ Թաբարիի (Ժ դ.) քննական բնագիրը[101], ըստ նոր ձեռագրերի:

Դեռ շատ նորություններ կարող են ի հայտ գալ արաբական պատմագրության և աշխարհագրության ասպարեզում, շարունակելով պրպտումները Եվրոպայի և հատկապես արաբական երկրների ու Կոստանդնուպոլսի ձեռագրատներում:

---

[89] V. Minorsky, Studies in Caucasian History, London, 1953, p. 1-18 (ar.). Idem, A History of Sharvan and Darband, Cambridge, 1958, p. 1-32 (ar.).

[90] Abu Yousouf, Kitab al-kharadj, Bulaq, 1302 (1884-1885).

[91] Abu-l-Farag Gregorius Ibn al-Ibri, ed Salhani, Beyrouth, 1890.

[92] Kitab Subh al-Asha, talif al-Qalqashandi, I-XIV, al- Qahira, 1913-1919.

[93] An-Nudjum al-zahira, talif Abu-l-Mahasin ibn Taghribirdi, al-Qahira, 1348-1355 (1929/30-1936/37).

[94] Ibn al-Adim, Zubdat al-Halab, éd. Sami al-Dahhan, Dimashq, 1954.

[95] Ibn al-Gawzi, Kitab al-Muntazam, v. V-X, Haydarabad, 1937/38.

[96] Kitab al-Ibar. talif Ibn Khaldoun, t. 1-7, Bulaq, 1867/1868.

[97] Kufi, Kitab al-futuh, I-VIII, Haydarabad, 1968-1975.

[98] Tarikh, Khalifah ibn Khayyat, Beyrouth-Damas, 1977.

[99] Yaqubi, Tarikh, I-II, Beyrouth, 1960.

[100] Yaqut al-Rumi, Mudjam al-buldan, Beirut, I-V, 1977.

[101] Tarikh al-Tabari, éd. cririque par M. Abu-l-Fath Ibrahim, I-X, Le Caire, 1960-1969.

բ. Արաբ պատմագրության ուսումնասիրությունը

Առաջին ծավալուն ուսումնասիրությունը արաբ պատմագրության մասին կազմել է Ֆ. Վյուստենֆելդը, որը հայտնի է բազմաթիվ պատմական բնագրերի հրատարակությամբ: Նրա «Արաբ պատմագիրները և նրանց գործերը»[102] աշխատության մեջ ժամանակագրական կարգով հիշված են բոլոր արաբ պատմիչները, նույնիսկ ամենահետինը, կամ միայն անունով հայտնին, տալով մատենագիտական տեղեկություններ: Թեև անցած հարյուրամյակում շատ նորություններ են հայտնաբերվել, այսուհանդերձ, քանի որ նույն բնույթի մանրամասն (լիակատար) մատենագիտական նոր աշխատություն չկա, ուստի Ֆ. Վյուստենֆելդի՛ երկը պահպանում է իր արժեքը:

Կ. Բրոկելմանի հռչակավոր «Արաբական գրականության պատմություն»[103] երկասիրության մեջ, ի շարս այլ մատենագիրների հիշվում են նաև պատմագիրներն ու աշխարհագրագետները, սակայն պատմագիրները ոչ այնքան մանրամասն են հիշվում, ինչքան նախորդ աշխատության մեջ: Բրոկելմանի այս դարակազմիկ գործը մնում է արաբական մատենագրության պատմությանը (սկզբից մինչև մեր օրերը) նվիրված կարևորագույն երկը:

Արաբ պատմագրությանը նվիրված երկրորդ մենագրությունը Դ. Ս. Մարգոլիուսի «Դասախոսություններ արաբ պատմիչների մասին»[104] աշխատությունն է, ուր պատմագրության պատմությունը շարադրված է ժամանակագրական կարգով՝ սկզբնավորումից մինչև ԺԵ դար: Մարգոլիուսը տալիս է պատմիչների կենսագրությունը և վերլուծում նրանց երկերը, սակայն պետք է նշել, որ սա պատմագրության մանրակրկիտ պատմություն չէ, այլ ընդհանուր ակնարկ զարգացման շրջանների մասին:

Հետաքրքրական է Ֆ. Ռոզենտալի «Մահմեդական պատմագրության պատմությունը»[105] մենագրությունը, որը նվիրված է պատմության ընդհանուր հարցերին, ինչպես պատմագրության ծագման պարագաները, նրա դերը ընդհանուր մատենագրության մեջ, պատմագրության դասակարգումն ըստ բովանդակության՝ տոհմաբանություն, կենսագրական բառարաններ, քաղաքական և տնտեսական վիճակի նկարագրություն և

[102] **F. Wüstenfeld**, Die Geschichtschreiber der Araber und ihre Werke, Göttingen, 1882.

[103] **C. Brockelmann**, Geschichte der Arabischen Literatur, I-II, Weimar, 1898, Berlin, 1902. Supplement 3 Bde, Leiden, 1937-1942.

[104] **D. S. Margoliouth**, Lectures on Arabic Historians, Calcutta, 1930.

[105] **F. Rosenthal**, History of the Muslim Historiography, Leiden, 1952.

այլն: Առանձին գլխում քննարկվում են տիեզերական պատմությունները (Յակուբի, Թաբարի, Մասուդի, Իբն ալ-Ասիր և այլն): Հատուկ ուշադրություն է դարձնում քրիստոնյա արաբ պատմիչներին, նշելով նրանց կապը բյուզանդական պատմագրության հետ:

Յ. դը Սոմոձիի հոդվածը[106] մի յուրահատուկ վերլուծում է, ուր պատմագրությունը մի քանի շրջանների է բաժանվում: Զարգացման առաջին շրջանը մինչև Թ դարի վերջն է (Իբն Հիշամ, Իբն Սաադ, Վակիդի, Մադաինի, Բալազուրի): Երկրորդը դասական շրջանն է, երբ հանդես են գալիս Թաբարին, Մասուդին, Իբն Միսքավայհը, Իբն ալ-Ասիրը, Աբու-լ-Ֆարաջ Բար Հեբրեոսը և պատմակենսագրական բառարանների հեղինակներ Իբն Խալլիքանը, Կիֆթին: Նա հատուկ ուշադրություն է դարձնում Իբն ալ-Ջաուզիին ու նրա թոռ Սիբթ իբն ալ-Ջաուզիին: Ջահաբին մի նոր շրջան է բացում ունենալով բազում հետևորդներ: Սակայն խոշորագույն դեմքը արաբ պատմագրության մեջ Իբն Խալդունն է:

Հակիրճ, բայց շատ բովանդակալից աշխատություն է Հ. Ա. Գիբի «Մահմեդական պատմագրություն»[107] հոդվածը գրված Իսլամի հանրագիտարանի հավելվածի համար: Սա բառիս բուն իմաստով պատմագրության պատմություն է և մենագրության արժեք ունի: Ըստ նրա ժամանակագրության պատմագրության առաջին շրջանը հասնում է մինչև Ժ դարի սկիզբը (ընդգրկելով Թաբարին): Երկրորդ շրջանն ընդգրկում է Ժ-ԺԲ դարերը, իսկ երրորդ շրջանը՝ ԺԲ դարի վերջից ԺԵ դարի վերջը, իսկ ԺԶ-ԺԸ դարերի մասին խոսում է կանգ առնելով պարսկական ու թուրքական պատմագրության վրա՝ որպես արաբականի հիման վրա զարգացած ճյուղեր:

Կան նաև արաբ պատմիչների և աշխարհագրագետների հակիրճ կենսագրություններ և պատմագրության կամ աշխարհագրության համառոտ ակնարկներ, արաբական սկզբնաղբյուրներից քաղված հատվածներ պարունակող ժողովածուներում, որոնցից հատկապես պետք է հիշել Վ. Ի. Բելյաևի արաբ պատմագրության ակնարկը նման մի աշխատության մեջ[108]:

[106] **J. de Somogyi**, The development of Arabic Historiography, Journal of Semitic Studies, v. III, 1958, No 4, October, p. 373-387.

[107] **H. A. R. Gibb**, Muslim Historiography, The Encyclopaedia of Islam, Supplement, Leiden-London, 1938, p. 233-245.

[108] **В. И. Беляев**, Арабские источники по истории туркмен и Туркмении, Материалы по истории туркмен и Туркмении, т. I, М.-Л., 1939, стр. 12-40.

Այս բնագավառում լուրջ ներդրում են կատարել Ֆուադ Սեզգինը[109] և խորհրդային գիտնականներ Կ. Բոյկոն[110] և Ս. Պրոզորովը[111]:

Վերջերս լույս տեսավ արաբ մատենագրության պատմության մի նոր ծավալուն մենագրություն (հասնում է մինչև հիջրի 430 (1038/1039) թվականը), ուր տրված է արաբ պատմագրության պատմությունը և մատենագրական տվյալներ:

ԽՍՀՄ Գիտությունների Ակադեմիայի Արևելագիտության ինստիտուտի Լենինգրադյան բաժանմունքը ձեռնարկել է հրատարակել բազմահատոր «Վաղ միջնադարյան արաբական պատմական գրականությունը» մատենաշարը, որից ցայժմ երեք հատոր է լույս տեսել:

գ. Արաբ աշխարհագրական երկերի ուսումնասիրությունը

Արաբական աշխարհագրությունը նույնպես ունեցել է իր հատուկ ուսումնասիրողները: Առաջինը համարվում է Մ. Ռենոն[112], որի ներածությունը (գրված Աբու-լ-Ֆիդայի հրատարակության առթիվ) մի շատ լուրջ ուսումնասիրություն է, որը երկար ժամանակ իր այժմեականությունը չկորցրեց:

Հետաքրքրական է Ա. Ֆոն Կրեմերի «Արևելքի մշակութային պատմությունը»[113] հայտնի աշխատության մեջ աշխարհագրության վերաբերյալ գլուխը: Նույն բնույթի աշխատություն է նաև Կարրա դը Վոյի «Իսլամի մտածողներ»[114] աշխատության մեջ համապատասխան բաժինը: Առավել հետաքրքրական է հոլանդացի արաբագետ Յ. Կրամերսի «Աշխարհագրություն և առևտուր» հատվածը «Իսլամի ժառանգությունը» աշխատության մեջ[115]:

Հեղինակների ու տարբեր հարցերի մասին ավելի մանրամասն տեղեկություններ է տալիս Յ. Ռուսկան իր «Իսլամի աշխարհագրական

[109] F. Sezgin, Geschicte des arabischen Schrifttums, Bd I, Leiden, 1967.
[110] К. А. Бойко, Арабская историческая литература в Испании (VIII - первая треть XI в.), Москва, 1977.
[111] С. М. Прозоров, Арабская историческая литература в Ираке, Иране и Средней Азии в VII- середине X вв. Шиитская историография, Москва, 1980.
[112] M. Reinaud, Géographie d'Aboulfeda, I, Introduction générale à la Géographie des Orientaux, Paris, 1848.
[113] A. von Kremer, Culturgeschichte des Orients unter den Chalifen, II, Wien, 1877.
[114] Carra de Vaux, Les penseurs de l'Islam, II, Paris, 1922, p. 1-101.
[115] J. H. Kramers, Geography and Commerce, (The Legacy of Islam), Oxford, 1931, p. 79-107.

գրականության մասին»[116] երկասիրության մեջ, ուր հատկապես ուշադրություն է դարձրել նկարագրական աշխարհագրությանը և ճանապարհորդություններին:

Ֆ. Վյուստենֆելդի ու Մ. դե Գույեի աշխարհագրական բնագրերի հրատարակությունների հիման վրա լուրջ ուսումնասիրություններ ի հայտ եկան աշխարհագրության մասին, ինչպես օրինակ Հ. ֆոն Մժիկի Պտղոմեոսի և արաբական քարտեզագրության մասին հոդվածը[117], է. Հոնիգմանի աշխատությունը յոթը կլիմաների մասին[118] և այլն: Լույս տեսավ այնպիսի լուրջ քարտեզագրական ուսումնասիրություն ինչպիսին է Կ. Միլլերի «Արաբական քարտեզները» ծավալուն գործը:

Սակայն Ի. Կրաչկովսկին ամփոփեց աշխարհագրության վերաբերյալ ամբողջ եվրոպական գրականությունը և կազմեց մի մեծ մենագրություն[119]: Արաբական աշխարհագրության կազմավորման հարցը քննարկելուց հետո նա ժամանակագրական պարբերացումը տալիս է ըստ դարերի: Թ դարի աշխարհագրագետներին երեք մասի է բաժանում հունական դպրոցի աշխարհագրագետներ (Խորեզմի, Ֆարղանի, Սուհրաբ, Բատտանի և այլն), ապա Թ դարի բանասեր աշխարհագրագետներ և ճանապարհորդներ (Ջահիզ, Սալլամ Տարջուման, Սիրաֆի և այլն) և Թ դարի ընդհանուր աշխարհագրությունների հեղինակներ (Իբն Խորդադբեհ, Յակուբի, Իբն ալ-Ֆակիհ, Իբն Ռուստա, Կուդամա): Առանձնացնելով Մասուդիին հատուկ գլխում անցնում է դասական դպրոցին (Իսթախրի, Իբն Հաուկալ, Մուկադդասի), ապա բաժանում է արևելյան Իրան ու Միջին Ասիա (Բիրունի) և արևմտյան Իսպանիա ու Սիկիլիա (Բաքրի, Իդրիսի, Ղարնաթի) դպրոցների: ԺԳ դարը բաժանում է առաջին (Յակուտ և այլն) և երկրորդ (Կազվինի և այլն) կեսերի: ԺԴ դարն ամբողջովին է վերցնում (Դիմաշկի, Աբու-լ-Ֆիդա) և վերջապես ԺԵ դարին նվիրված մի քանի գլուխներով (Նուայրի, Օմարի, Իբն Խալդուն, Մակրիզի, Իբն ալ-Վարդի) վերջացնում է զարգացման շրջանը և պարսկական ու թուրքական աշխարհագրության պատմությունը շարադրելուց հետո նորից է անցնում ԺԶ, ԺԷ, ԺԸ դարերի արաբական աշխարհագրությանը:

Նորագույն աշխատությունը Ֆր. Տեշների «Աշխարհագրություն»

[116] J. Ruska, Zur geographischen Literatur im islamischen Kulturbereich, Geographische Zeitschrift, Leipzig, XXXIII, 1927, S. 519-528, 589-599.
[117] H. von Mzik, Ptolemaeus und die Karten der arabischen Geographen, Mitt. der k. k. Geogr. Ges. in Wien, LVIII, 1915, S. 152-176.
[118] E. Honigman, Die sieben Klimata, Heidelberg, 1929.
[119] И. Крачковский, Избранные сочинения, т. IV, М. -Л., 1957.

հոդվածն է Իսլամի հանրագիտարանի նոր հրատարակության մեջ[120]: Հեղինակը նշելուց հետո հնդկական, պարսկական և հատկապես հունական ազդեցություններն արաբ աշխարհագրական գրականությունը բաժանում է երկու շրջանի՝ դասական շրջան (Թ-ԺԱ դդ.), որի մեջ մտնում են Թ դարի Իրաքի դպրոցը (Իբն Խորդադբեհ, Յակուբի և այլն), որն Իրանշահրը 4 մասի է բաժանում և սկսում է Սավադի նկարագրությամբ, նրանց հակառակորդները, որոնք ըստ երկրների են բաժանում նկարագրությունն սկսելով Արաբիայից, ապա Ժ դարը, որը կոչում է Բալխիի դպրոցը (Իսթախրի, Իբն Հաուկալ, Մուկադդասի): Երկրորդ շրջանն ընդգրկում է ԺԲ-ԺՋ դարերը և իր մեջ ունի ստորաբաժանումներ ըստ բովանդակության՝ ընդհանուր աշխարհագրություններ (Իդրիսի, Աբու-լ-Ֆիդա և այլն), տիեզերագիտական երկեր (Կազվինի, Դիմաշկի, Իբն ալ-Վարդի), ճանապարհորդություններ (Իբն Բաթութա), ծովագնացություններ (Իբն Մաջիդ) և այլն:

Անհրաժեշտ է հատկապես ընդգծել, որ արաբ պատմագրության և աշխարհագրության ուսումնասիրման համար չափազանց կարևոր են Իսլամի հանրագիտարանի բարձր որակի հոդվածները առանձին պատմիչների և աշխարհագրագետների մասին:

դ. Արաբների պատմության ուսումնասիրությունը նոր դարերում

Արաբերեն պատմական ու աշխարհագրական բնագրերի հրատարակմանը զուգընթաց հետաքրքրություն է առաջանում դրանց հիման վրա շարադրելու արաբների պատմությունը:

Առաջին փորձը կատարվում է ԺԷ դարում Իսպանիայում: Ռ. Խիմենեսը (Տոլեդոյի արքեպիսկոպոս) գրում է մի լատիներեն երկ[121], որն ընդգրկում է արաբների պատմությունը Մուհամմադից մինչև Օմայանների վախճանը, ապա շարադրում է Իսպանիայի Օմայանների պատմությունը, ինչպես նաև Ալմորավիդների և Ալմոհադների շրջանը, որոնց անկումով վերջացավ մավրերի (արաբների) տիրապետությունը Իսպանիայում:

ԺԸ դարում Քեմբրիջի համալսարանի արաբերենի դասախոս Ս. Օքլին լույս է ընծայում «Սարակինոսների պատմություն»[122] մենագրությունը, շարադրանքն սկսելով Մուհամմադից ու հասցնելով մինչև Օմայան Աբդ ալ-Մալիքի մահը (705): Ապա մի քանի էջում հիշում է մնացած Օմայաններին ու բոլոր Աբբասյաններին մինչև 1258, ամեն մեկի շրջանը հակիրճ խոսքերով բնորոշելով: Օգտագործել է մինչ այդ հրատարակված արաբ պատմիչներին (Աբու-լ-Ֆարաջ, Մաքին). ոմանց էլ ձեռագիր վիճակում է ծանոթացել:

[120] **Fr. Taeschner**, Djughrafiya, Encyclopaedia of Islam, v. II, Leiden-London, 1965, p. 575-590.
[121] **Roderici Ximenez** archiepiscopi Toletani Historia Arabum, Lugduni Batavorum, 1625.
[122] **S. Ockley**, History of the Saracens, London, 1708.

Արաբների առաջին ընդհանուր պատմությունը գրում է Ֆրանսիացի աբբա դը Մարինյին իր քառահատոր մենագրության[123] մեջ, օգտագործելով իր ժամանակ հրատարակված աղբյուրները: Շարադրանքն սկսում է Մուհամմադից ու հասցնում մինչև Աբբասյանների վերջնական անկումը՝ 1258 թվական:

ԺԹ դարում, արդեն բոլորովին այլ որակի մենագրություններ իրար են հաջորդում քառասնական-հիսնական թվականներին: Գ. Վայլը (1808-1889) արաբական աղբյուրների հիման վրա հորինում է իր «Խալիֆաների պատմություն» եռահատոր աշխատությունը[124], ուր շարադրանքն սկսում է Մուհամմադի մահվանից հասնելով մինչև Աբբասյանների վերջնական վախճանը (1258): Նույն ժամանակ լույս է տեսնում Կուսեն դը Պերսեվալի (1795-1871) նախամահմեդական Արաբիայի[125] մասին լուրջ մենագրությունը: Քիչ անց հրատարակվեց Լ. Ա. Սեդիյոյի «Արաբների պատմություն»[126] աշխատությունը ուր շարադրված է նախամահմեդական Արաբիայի, Մուհամմադի, առաջին խալիֆաների, Օմայանների, Աբբասյանների և Հյուսիսային Աֆրիկայի ու Իսպանիայի Օմայանների պատմությունը: Արաբական մշակույթի ընդհանուր պատկերը ևս տալուց հետո, հեղինակը նկարագրում է արաբական ժողովուրդների վիճակը ԺԹ դարում:

Շարունակելով իր պրպտումները Լ. Ա. Սեդիյոն երկու տասնամյակ անց լույս է ընծայում երկհատորանոց մի մեծ աշխատություն «Արաբների ընդհանուր պատմություն»[127], ուր առավել մանրամասն շարադրված է նախորդ երկի նյութը, սակայն ավելացնելով Եգիպտոսի Ֆաթիմյանների ու մամլուքների պատմությունը, ապա հասցնելով մինչև ԺԹ դար: Մի խոշոր, ծոխ բաժին է հատկացված արաբական մշակույթի բոլոր ճյուղերին, վերջապես ընդհանուր ակնարկ նետելով ժամանակակից արաբների վիճակին:

[123] Histoire des Arabes sous le gouvernement des Califes, par l'**Abbé de Marigny**, t. I-IV, Paris, 1750.
[124] **G. Weil,** Geschichte der Chalifen, 3 Bde, Mannheim, 1846-1851.
[125] **C. de Perceval,** Essai sur l'histoire des Arabes avant l'Islamisme, 3 vol. Paris, 1847.
[126] **L. A. Sedillot,** Histoire des Arabes, v. I-II, Paris, 1854.
[127] **L. A. Sedillot,** Histoire générale des Arabes, I-II, Paris, 1877.

Որոշ ժամանակ անց լույս տեսավ Ա. Մյուլլերի (1848-1892) «Իսլամը Արևելքում և Արևմուտքում»[128] մենագրությունը, որը մասամբ հենվում է նախորդների նվաճումների վրա: Նա շարադրանքն սկսում է նախամահմեդական շրջանից (ընդգրկելով հարավարաբական թագավորության պատմությունը) և մատուցում խալիֆայության պատմությունը մինչև 1258 թվականը (Բաղդադի ավերումը մոնղոլների կողմից): Գ. Վայլից տարբերվում է նրանով, որ Աբբասյանների պատմությանը զուգահեռ շարադրում է նրանից անջատված պետությունների (Կարմաթներ, Ֆաթիմյաններ, Հյուսիսային Աֆրիկա) պատմությունը:

Շուտով նրան հաջորդեց Վ. Մյուիրի (1819-1905) «Խալիֆայությունը, նրա բարձրացումը, թուլացումն ու անկումը»[129], որն ընդգրկում է խալիֆայության պատմությունն սկզբից մինչև անկումը և դրանից հետո առաջացած պետությունների (Կարմաթներ, Ֆաթիմյաններ, Մամլուքներ) զարգացումը մինչև Օսմանյան նվաճումը:

Երբ արաբների ընդհանուր պատմության ուսումնասիրությունը հասավ որոշակի մակարդակի, բնականաբար անհրաժեշտություն էր դառնում նրա առանձին կարևոր նահանգների հատուկ ուսումնասիրությունը: Դեռևս անցյալ դարի վաթսունական թվականներին հոլանդացի արաբագետ Ռ. Դոզին (1820-1883) հանդես էր եկել «Իսպանիայի մահմեդականների պատմությունը»[130] մենագրությամբ: Ապա երևան եկան Ֆ. Վյուստենֆելդի (1808-1899) «Ֆաթիմյան խալիֆաների պատմությունը»[131] և Մ. Յ. դե Գույեի (1836-1909) «Բահրայնի Կարմաթների ու Ֆաթիմյանների պատմությունը»[132] մենագրությունները: 19-րդ դարի վերջին լույս տեսավ Պ. Շվարցի (1867-1938) «Իրանը միջնադարում, ըստ արաբ աշխարհագրագետների»[133] ինհիատոր աշխատության առաջին հատորը, ինչպես նաև Ն. Ա. Մեդնիկովի (1855-1918) Պաղեստինի մասին աշխատությունը[134]: 20-րդ դարի սկզբին Կ. Բեքերը (1876-1933) լույս ընծայեց «Իսլամի օրոք Եգիպտոսի պատմության մասին»[135]

[128] A. Müller, Der Islam im Morgen- und Abendland, 2 Bde, Berlin, 1885, 1887.
[129] W. Muir, The Caliphate its rise, decline and fall, London, 1891.
[130] R. Dozy, Histoire des musulmans d'Espagne, I-IV, Leyde, 1861.
[131] F. Wüstenfeld, Geschichte der Fatimiden-Chalifen, Göttingen, 1881.
[132] M. J. de Goeje, Mémoire sur les Carmathes du Bahrain et les Fatimides, Leide, 1886.
[133] P. Schwarz, Iran im Mittelalter nach den arabischen Geographen, Bd I-IX, Leipzig-Zwickau, Stuttgart, 1896-1936.
[134] Н. А. Медников, Палестина от завоевания ее арабами до крестовых походов, т. 1-4 (Пр. Пал. Сб. т. 17, в. 2, СПб, 1897-1903).
[135] C. H. Becker, Beiträge zur Geschichte Aegyptens unter dem Islam, I-II, Strassburg, 1902-1903.

երկհատորանոց մենագրությունը: Խալիֆայության սկզբնական շրջանի պատմության է վերաբերում Լ. Կաետանիի (1869-1935) «Իսլամի տարեգրությունը»[136] աշխատությունը:

Նորից անդրադառնալով խալիֆայության պատմությանը Յ. Վելհաուզենը (1844-1918) հորինեց «Արաբական պետությունը և նրա անկումը»[137] մենագրությունը, ուր խալիֆայության պատմությունը հասցված է մինչև Օմայանների անկումը, որը նա համարում է զուտ արաբական պետության վախճանը (750): Ապա Կ. Հյուարը (1854-1919) տվեց իր երկհատոր «Արաբների պատմությունը»[138], որը կառուցվածքով հիշեցնում է Լ. Ա. Սեդիյոյի մեծ աշխատությունը, բայց ավելի ծոխ է նյութերով:

Առաջին աշխարհամարտից հետո իրար հաջորդեցին մի քանի մենագրություններ խալիֆայության առանձին նահանգների մասին: Ժ. Լոռանը գրեց «Հայաստանը Բյուզանդիայի և իսլամի միջև»[139] բելգիացի Հ. Լամմենսը «Սիրիա, համառոտ պատմություն»[140], իսկ Հ. Ա. Ռ. Գիբը «Արաբական նվաճումները Միջին Ասիայում»[141] աշխատությունները:

Երեսնական թվականներին հրատարակվեցին Շ. Ժյուլիենի «Հյուսիսային Աֆրիկայի պատմությունը»[142] և Գ. Վիեթի «Արաբական Եգիպտոսը արաբական նվաճումից օսմանյան նվաճում (640-1517)»[143] պատմական ուսումնասիրությունները:

Արաբների ընդհանուր պատմության մասին վերջին արժեքավոր մենագրությունը լիբանանցի Ֆ. Հիտտիի «Արաբների պատմությունն»[144] է, որը ծոխ փաստերով նորագույն մեկնաբանություններ է տալիս արաբների բարդ պատմությանը, սկսելով Եմենի Սաբա ու Հիմյար թագավորություններից հասցնում է մինչև մեր դարը:

Ի միջի այլոց կարելի է հիշել նաև Կ. Բրոկելմանի[145] (1868-1956) և Բ. Շպուլերի[146] ամբողջ մահմեդական աշխարհի պատմությանը նվիրված հանրամատչելի աշխատությունները: Այս տեսակետից լուրջ նվաճում

[136] L. Caetani, Annali dell'Islam, I-X, Milano, 1905-1927.
[137] J. Wellhausen, Das arabische Reich und sein Sturz, Berlin, 1902.
[138] C. Huart, Histoire des Arabes, I-II, Paris, 1912-1913.
[139] J. Laurent, L'Arménie entre Byzance et l'Islam, Paris, 1919.
[140] H. Lammens, La Syrie, précis historique, I-II, Beyrouth, 1921.
[141] H. A. R. Gibb, The Arab conquests in central Asia, London, 1923.
[142] Ch. -A. Julien, Histoire de l'Afrique du Nord, Paris, 1931.
[143] G. Wiet, L'Egypte arabe de la conquête arabe à la conquête ottomane, Paris, 1938.
[144] Ph. Hitti, History of the Arabs, London, 1937.
[145] C. Brockelmann, Geschichte der islamischen Völker und Staaten, München-Berlin, 1939.
[146] B. Spuler, Geschichte der islamischen Lander, I-II, 1952, 1953.

պետք է համարել Քեմբրիջի հայտնի պատմագիտական շարքի մեջ «Իսլամի պատմության»[147] հրատարակումը, որն ընդգրկում է ոչ միայն հանրահայտ մահմեդական երկրների (արաբական աշխարհը, Իրանը, Թուրքիան և երբեմն Հնդկաստանը) այլև Ինդոնեզիական կղզիների ու Մալայայի մահմեդական պետությունների պատմությունը:

Աբբասյան խալիֆայությունից բաժանված տեղական պետությունների պատմության նկատմամբ հետաքրքրությունն ավելացավ երկրորդ աշխարհամարտից հետո ևս: Հատկապես հիշատակության արժանի է Լ. Պրովանսալի եռահատոր լուրջ մենագրությունը «Մահմեդական Իսպանիայի պատմությունը»[148] խորագրով, որը ոչ միայն քաղաքական, այլև տնտեսական ու հասարակական կյանքի պատմությանը նվիրված արժեքավոր գործ է: Մ. Կանարը լույս ընծայեց «Ջազիրայի ու Սիրիայի Համդանյանների պատմությունը»[149] աշխատությունը, որը շատ կարևոր է Հայաստանի Բագրատունյաց ժամանակաշրջանի պատմության ուսումնասիրման համար: Բ. Շպուլերի «Իրանը վաղ իսլամական շրջանում»[150] աշխատությունը ընդգրկում է Իրանի պատմությունը արաբական նվաճումից մինչև սելջուկյան արշավանքները, ուր հատուկ ուշադրություն է նվիրված Իրանի պետական, ռազմական, իրավական, հասարակական ու մշակութային կյանքի հարցերին:

Արաբների միջնադարյան պատմությամբ զբաղվել են նաև արաբական երկրների պատմաբանները, որոնցից հատկապես պետք է հիշել «Մահմեդական քաղաքակրթության պատմություն» աշխատության քրիստոնյա արաբ հեղինակ Ջիրջի Զայդանին (1861-1914): Հասան Իբրահիմ Հասանը շարադրել է «Իսլամի քաղաքական պատմությունը», իսկ Ալի Իբրահիմ Հասանը «Իսլամի ընդհանուր պատմությունը»:

Արաբական աշխարհի և մահմեդական երկրների պատմության ուսումնասիրման համար չափազանց կարևոր են տոհմաբանական աշխատությունները: Հայտնի են հատկապես է. Ցամբաուրի[151], Ս. Լեյն-Պուլի[152] և վերջերս նաև Բոսվորտի[153] տոհմաբանական տախտակները, որոնք արաբական աղբյուրների հիման վրա են կազմված:

[147] Cambridge History of Islam, v. I-II, Cambridge, 1970.
[148] E. Levi-Provencal, Histoire de l'Espagne musulmane, t. 1-3, Paris-Leiden, 1950-1953.
[149] M. Canard, Histoire de la dynastie des Hamdanides de Jazira et de Syrie, Paris, 1951.
[150] B. Spuler, Iran in früh-islamischer Zeit, Wiesbaden, 1952.
[151] E. de Zambaur, Manuel de généalogie et de chronologie pour l'histoire de l'Islam, Hannover, 1927.
[152] St. Lane-Poole, The Mohammadan Dynasties, London, 1894.
[153] C. E. Bosworth, The islamic Dynasties, Edinburgh, 1967.

Դեռևս անցյալ դարի յոթանասնական թվականներից, քաղաքական պատմությանը զուգահեռ, զարգացավ նաև արաբական խալիֆայության և այլ մահմեդական պետությունների տնտեսական ու հասարակական կյանքի ուսումնասիրությունը և դա նշանավորվեց մի շատ արժեքավոր մենագրության երևան գալով: Ավստրիացի արաբագետ Ալֆրեդ ֆոն Կրեմերը (1828-1889) լույս ընծայեց իր երկհատոր մենագրությունը «Արևելքի մշակութային պատմությունը խալիֆայության ներքո»[154], որը մի յուրահատուկ հանրագիտարան է, ուր ներկայացված են արաբների պատմության ու մշակույթի տարբեր կողմերը: Օմայանների, Աբբասյանների քաղաքական կյանքը, պետական ու հասարակական կարգը, զորքը, հարկերը և մահմեդական իրավագիտության կազմավորումը: Շատ արժեքավոր են խալիֆայության քաղաքների, հասարակական կազմի, առևտրի ու արհեստների զարգացմանը վերաբերյալ գլուխները: Վերջում խոսում է գեղարվեստական, գիտական ու պատմական գրականության մասին:

Նման կառուցվածք ունի Գ. Լը Բոնի «Արաբների քաղաքակրթությունը»[155] ստվար հատորը, որը շքեղ է և արվեստի հուշարձանների նկարներով հարուստ, սակայն գիտահանրամատչելի բնույթ ունի, եթե համեմատենք նրան նախորդող Ա. ֆոն Կրեմերի խորը գիտական երկի հետ:

Ա. ֆոն Կրեմերի հոյակապ աշխատությունը խթան հանդիսացավ, որ ուժեղանա հետաքրքրությունը տնտեսական կյանքի հարցերի նկատմամբ: Վ. Հեյդը հանդես եկավ «Արևելքի միջնադարյան առևտրի պատմությունը»[156] աշխատությամբ, իսկ Մ. վան Բերշեմը (1863-1921) «Հողային սեփականությունը և հողային հարկը առաջին խալիֆաների օրոք»[157] երկով, ուր քննության են առնված հողատիրության ձևերը (պետական, մուլք, վակֆ) և հարկերը:

Առաջին աշխարհամարտից հետո կրկին աշխուժացավ հետաքրքրությունը մահմեդական հասարակության կառուցվածքի և հողատիրության հարցերի նկատմամբ: Ա. Մեցի (1869-1914) «Իսլամի վերածնունդը»[158] բազմաբովանդակ աշխատության մեջ շոշափված են Թ-Ժ դարերի խալիֆայության պետական ու հասարակական կյանքի

[154] A. von Kremer, Culturgeschichte des Orient unter den Chalifen, I-II, Wien, 1875-1877.
[155] G. Le Bon, La civilisation des Arabes, Paris, 1884.
[156] W. Heyd, Histoire du commerce du Levant au Moyen Age, Leipzig, 1885.
[157] M. v. Berchem, La propriété territoriale et l'impôt foncier sous les premiers califes, Genève, 1886.
[158] A. Mez, Die Renaissance des Islams, Heidelberg, 1922.

տարբեր կողմերը՝ արքունիքը, կառավարիչները, քրիստոնյաներն ու հրեաները, հարկերը, ստրուկները, իրավագիտությունը, արհեստներն ու առևտուրը և այլն: Երեսնական թվականներին լույս տեսան Ա. Ն. Պոլիակի «Մահմեդական ավատատիրությունը»[159] և «Հողերի դասակարգումն, ըստ մահմեդական իրավունքի»[160] աշխատությունները: Առաջին ծավալուն հոդվածում հեղինակը տալիս է արևելյան ավատատիրության (ֆեոդալիտետ) բնորոշումը՝ ավատատերերի քաղաքում կենտրոնացած լինելը, պայքարը ավատատիրոջ ու տիրակալի (խալիֆայի) միջև, գյուղացիության անձնական ազատությունը, իսկ մոնղոլների ու մամլուքների օրոք ճորտացումը և այլն:

Երկրորդ աշխարհամարտից հետո արաբագիտության մեջ մեծ չափով ուժեղացավ տնտեսական ու հասարակական կյանքի ուսումնասիրման ձգտումը: Մ. Գոդֆրուա-Դեմոմբինի «Մահմեդական հաստատությունները»[161] երկը պետական ու հասարակական կառուցվածքի մասին մի հետաքրքրական մենագրություն է: Արժեքավոր է Ֆ. Լյոքքեգաարդի «Հարկերը մահմեդական աշխարհում դասական շրջանում»[162] աշխատությունը, ուր քննության են առնված տարբեր հարկատեսակներ: Ռ. Լևին լույս ընծայեց «Իսլամի հասարակական կառուցվածքը»[163] մենագրությունը: Գյուղացու իրավական վիճակին է վերաբերում Ա. Ք. Ս. Լեմբտոնի «Հողատերն ու գեղջուկն Իրանում»[164] երկը: Հետաքրքրական է է. Տիանի «Մահմեդական քաղաքացիական (հանրային) իրավունքի հաստատությունները»[165] և Լ. Գարդեի «Մահմեդական քաղաքը. հասարակական ու քաղաքական կյանք»[166] երկասիրությունները:

Միջնադարյան հասարակական կյանքի ու հողատիրության հարցերն ըմբռնելու համար չափազանց կարևոր է մահմեդական իրավունքի (իրավագիտության, ֆիկհ) ուսումնասիրությունը: Դեռևս անցյալ դարում Ա. ֆոն Կրեմերը իր «Տիրապետող գաղափարները իսլամում»[167] մենագրության մեջ էր դրել իրավագիտության ու դավանանքի հարցերի հետազոտման հիմքերն: Այս ասպարեզում մեծ վաստակ ունի հուն-

[159] **A. N. Poliak,** La féeodalité islamique, R. des Et. Isl., 1936, cahier III, p. 247-264.
[160] **A. N. Poliak,** Classification of Lands in the Islamic Law and its technical terms, The Amer. Jour. of Sem. Lang. and Lit., v. LVII Jan. 1940, I, p. 50-62.
[161] **M. Godefroy-Demombines,** Les institutions musulmans, Paris, 1946.
[162] **F. Lökkegaard,** Islamic taxation in the classic period, Copenhagen, 1950.
[163] **R. Levy,** The social Structure of Islam, Cambridge, 1957.
[164] **A. K. S. Lambton,** Landlord and peasant in Persia, Oxford, 1953.
[165] **E. Tyan,** Institutions du droit public musulman, Paris, 1954.
[166] **L. Gardet,** La cité musulmane, vie sociale et politique, Paris, 1954.
[167] **A. von Kremer,** Geschichte der herrschenden Ideen des Islams, Leipzig, 1868.

գարացի արաբագետ Ի. Գոլդցիերը (1850-1921) իր «Իսլամագիտական ուսումնասիրություններ»[168] և այլ աշխատություններով: Կարևոր է հիշել նաև Բ. Կառա դը Վոյի «Իսլամի մտածողները» երկը[169]:

Մահմեդական իրավագիտության ձևավորման նախնական աստիճաններին է նվիրված Զ. Շախտի «Մահմեդական իրավագիտության ծագումը»[170] երկը: Օգտակար աշխատություն է Ի. Պ. Պետրուշևսկու «Իսլամն Իրանում է-ժե դարերում»[171] աշխատությունը:

Վերոհիշյալ խնդիրների հետ սերտորեն կապված է ոչ-մահմեդականների (զիմմի՝ քրիստոնյաներ, հրեաներ և այլն) իրավական գոյավիճակի հարցը, որին նվիրված մենագրություններ են Ա. Ս. Տրիտոնի «Խալիֆաներն ու նրանց ոչ մահմեդական հպատակները»[172] և Ա. Ֆատտալի «Ոչ մահմեդականների իրավական գոյավիճակը մահմեդական երկրներում»[173]: Այս հարցերին և իսլամի ու քրիստոնեության պատմական հարաբերություններին է նվիրված Գ. ֆոն Գրյունեբաումի «Միջնադարյան իսլամը»[174] աշխատությունը:

Վերջերս լույս տեսավ Դ. և Ժ. Սուրդելների ծավալուն աշխատությունը (ճոխ լուսանկարներով) «Դասական իսլամի քաղաքակրթությունը»[175], որն ընդհանուր պատկերացում է տալիս մահմեդական միջնադարի տնտեսության ու մշակույթի տարբեր ճյուղերի մասին:

Ետպատերազմյան շրջանում արաբների պատմության մեջ տնտեսական ու հասարակական կյանքի հարցերին նվիրված աշխատություններ են Ե. Ա. Բելյաևի «Արաբները, իսլամը և արաբական խալիֆայությունը»[176] և հատկապես Ի. Պ. Պետրուշևսկու տարբեր աշխատություններում վերոհիշյալ հարցերին նվիրված մասերը[177]: Արաբների պատմությունը շարադրվել է նաև հայ պատմաբան Գ. Աստարճյանի կողմից[178]:

Արաբական աշխարհի պատմության ու մշակույթի բազմազան հար-

[168] **I. Goldziher,** Muhammedanische Studien, I-II, Halle, 1889-1890.
[169] **B. Carra de Vaux,** Les Penseurs de l'Islam, Paris, 1921-1926.
[170] **J. Schacht,** The Origins of Muhammadan jurisprudence, Oxford, 1950.
[171] **И. П. Петрушевский,** Ислам в Иране в VII-XV вв., Ленинград, 1966.
[172] **A. S. Tritton,** The Caliphs and their non-muslim subjects, London, 1930.
[173] **A. Fattal,** Le statut legal des non-Musulmans en pays d'Islam, Beyrouth, 1958.
[174] **G. von Grunebaum,** Medieval Islam, Chicago, 1946.
[175] **D. et J. Sourdel,** La civilisation de l'Islam classique, Paris, 1976.
[176] **Е. А. Беляев,** Арабы, ислам и арабский халифат, Москва, 1965.
[177] **И. П. Петрушевский,** в кн. История стран Зарубежной Азии в средние века, Москва, 1970, стр. 122-156, 364-379.
[178] **Գ. Աստարճեան.** Ընդարձակ, ընդհանուր արաբական պատմութիւն, Պեյրութ, 1961:

ցերի գիտական ուսումնասիրման համար բացառիկ նշանակություն ունի «Իսլամի հանրագիտարանը», որի առաջին հրատարակությունը չորս ստվար հատորներով և երեք լեզվով (գերմաներեն, անգլերեն, ֆրանսերեն) իրականացավ 1913-1936 թվականներին[179]: Ապա լույս տեսավ «Իսլամի համառոտ հանրագիտարանը» գերմաներեն ու անգլերեն[180], իսկ 1960 թվականից լույս է տեսնում Իսլամի հանրագիտարանը նոր հրատարակությամբ, դարձյալ երեք լեզուներով: Մինչ այժմ լույս են տեսել հինգ ստվար հատորներ, բայց աշխատանքը դեռ չի ավարտված: Նոր հանրագիտարանը ոչ միայն շատ ավելի ընդարձակ է, այլև կարևոր տեղ է գրավում տնտեսական ու հասարակական կյանքի երևույթների բացատրությունը:

ՀԱՅ - ԱՐԱԲԱԿԱՆ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

Թեև հին հայերը Վերին Միջագետքի արաբական վաչկատուն ցեղերին ծանոթ էին՝ կոչելով տաճիկ և նույնիսկ, ըստ հույն պատմիչ Պլուտարքոսի, Մեծն Տիգրանի զորքում հռոմեացիների դեմ կռվել են նաև արաբներ, այսուհանդերձ հայերի ու արաբների կանոնավոր առնչությունները սկիզբ են առել սոսկ է դարից: Դարերի ընթացքում եղել են քաղաքական, տնտեսական ու մշակութային փոխհարաբերություններ, սակայն տվյալ դեպքում մեզ հետաքրքրում են մշակութային առնչությունները:

Հարկավ հայ-արաբական մշակութային առնչությունները, հասկանալի պատճառներով (կրոնական պատվարը և այլն), այնքան սերտ չեն եղել, ինչպես հայ-հունական և հայ-ասորական հարաբերությունները էին, այսուհանդերձ եղել են մշակութային փոխհարաբերությունների հետաքրքրական փաստեր, որոնք արժանի են ուսումնասիրման:

է-Ը դարերից արդեն հայ մատենագիրները որոշակի պատկերացում ունեն արաբների ու նրանց կրոնի մասին: Սեբեոսը հնագույն պատմիչն է, որ խոսում է Մուհամմադ մարգարեի և արաբների երևան գալու մասին: Ղևոնդ պատմիչը Ղուրանը կոչում է փուրկան[181], որը նրա սուրաներից (գլուխներից) մեկի վերնագիրն է (Ֆուրկան) և միաժամանակ ամբողջ գիրքն է այդպես կոչում: Նրա մեջբերած Լևոն Գ կայսեր

[179] The Encyclopaedia of Islam, v. 1-4, Leyden-London, 1913-1936.
[180] Shorter Encyclopaedia of Islam, by **H. A. R. Gibb** and **J. H. Kramers**, Leiden, 1953.
[181] «Պատմութիւն Ղևոնդեայ մեծի վարդապետի Հայոց», Պետերբուրգ, 1887, էջ 58:

նամակում հիշվում են իսլամի բազում աղանդներ և աստվածաբանական հոսանքներ: Ղևոնդն օգտագործում է նաև «կուռա» (գրակարդաց, բարեպաշտ) արտահայտությունը, մահմեդական հոգևորականների մասին խոսելիս: ԺԳ դարի պատմիչ Վարդանը[182] հիշում է Ղուրանի սուրաներից՝ «սուրաթ ալբակարայ» (Կովի սուրա), նաև՝ մուդին (մուազզին, մինարեից աղոթքի հրավիրող, հայ. հաւատադիր): Սեբեոսից հետո բազում հայ պատմիչներ հիշում են Մուհամմադի զրույցի տարբերակներ:

է-Ը դարերում նվաճող արաբը, բացի Ղուրանից ու բանաստեղծություններից ոչինչ չուներ և շատ ավելի ցածր մշակութային մակարդակ ուներ, քան նրա լծի տակ գտնվող ժողովուրդները: Սակայն երբ Թ դարում գոյացավ արաբական ճոխ մշակույթը, արդեն նույն դարում սկսեցին հայերի և քրիստոնյա արաբների (տվյալ դեպքում արաբախոս ասորիների) առաջին մշակութային հարաբերությունները: Հաջորդ դարում՝ Բագրատունյաց թագավորության շրջանում Հայաստանում հետաքրքրություն առաջացավ առաջին հերթին արաբական բժշկության նկատմամբ: Ժ դարի վերջին, կամ ԺԱ դարի սկզբին է վերաբերում այն բժշկարանը, որն արաբերենից հայերեն էր թարգմանվել Հայոց հաղթական թագավոր Գագիկի օրոք: Բնականաբար խոսքը Գագիկ Ա-ի (990-1020) մասին է: Այս բժշկարանը քաղված է արաբական բժշկական երկերից: Նույնը կարելի է ասել մյուս բժշկարանի մասին, որի համար ձեռագրում ասված է, թե թարգմանվել է սուրբ թագավոր Հովհաննեսի հրամանով, այսինքն Հովհաննես Սմբատի (1020-1041) օրոք:

Կիլիկյան Հայաստանում շարունակվող և զարգացող հայ բժշկությունը էլ ավելի մեծ հետաքրքրություն ցուցաբերեց արաբական բժշկության նկատմամբ: ԺԲ դարում ասորի բժիշկ Աբու Սաիդը մարդակազմության վերաբերող իր գիրքը գրեց հայերեն, իսկ նույն դարում հանդես եկավ առաջին խոշոր դեմքը հայ բժշկության մեջ՝ Մխիթար Հերացին, իր «Ձերմանց մխիթարություն» աշխատությամբ: Երկրորդ խոշոր դեմքը Ամիրտովլաթ Ամասիացին է (ԺԵ դար), որը հայտնի է իր «Օգուտ բժշկութեան»[183] և «Անգիտաց անպէտ»[184] բժշկական երկերով: Սրանք, ինչպես նաև այլ հայ բժիշկներ օգտվել են արաբ նշանավոր բժիշկների աշխատություններից, միաժամանակ ներդնելով իրենց պրպտումների արդյունքները և կարևոր է նշել, որ նրանց բառապա-

[182] «Մեծին Վարդանայ Բարձրբերդցւոյ Պատմութիւն տիեզերական», Մոսկվա, 1861, էջ 92:
[183] Օգուտ բժշկության, Երևան, 1940:
[184] Անգիտաց անպետ կամ բառարան բժշկական նիւթոց, Վիեննա, 1926:

շարը լի է բազմաթիվ արաբերեն փոխառություններով:

Կիլիկիայում հայերեն է թարգմանվել նաև Դ դարի հույն մատենագիր Անատոլիոս Բերիտացու (առաջին խմբագրող) «Գիրք վաստակոց» (Geoponica) երկրագործական երկը, նրա արաբերեն թարգմանությունից:

Հետաքրքրական է նշել, որ հայ մեծանուն մատենագիր Գրիգոր Մագիստրոս Պահլավունին մոտիկից ծանոթ է եղել արաբական բանաստեղծական արվեստին (տաղաչափությանը) և հատկապես Ժ դարի արաբ հռչակավոր բանաստեղծ Մուտանաբբիին: ԺԴ դարում Առաքել Անեցին հայերեն է թարգմանել արաբական հանրահայտ «Հազար ու մեկ գիշեր» ժողովածուի շրջանակներին պատկանող «Պղնձե քաղաքի պատմությունը»: Թարգմանություններ են կատարվել նաև արաբական փիլիսոփայությունից:

Հայտնի է, որ արաբ մատենագիրները այցելելով Հայաստան բանավոր կերպով տեղեկացել են հայկական զրույցների մասին և գրի են առել իրենց երկերում: Արաբական տիրապետության վերջին շրջանում և Բագրատունյաց թագավորության ժամանակաշրջանում Հայաստան են այցելել Յակուբին, Մասուդին, Աբու Դուլաֆը: Ժ դարում Հայաստան (Վասպուրական) է այցելել և որոշ ժամանակ մնացել քրիստոնյա արաբ մատենագիր Կուսթա Բաալբաքին:

Արևելյան փիլիսոփայության պատմության մեջ նշվում է, որ Արիստոտելը արաբներին ծանոթ էր նորպլատոնականների (Պորփյուր, Դավիթ Հայկազն, այսինքն Դավիթ Անհաղթ) մեկնություններով: Դավիթ Անհաղթի հունարեն աշխատությունները նույն դերն են կատարել նաև Սասանյան Իրանում:

Հայերը մշակութային սերտ հարաբերություններ են ունեցել քրիստոնյա արաբների (Ասորիքի միաբնակ (հակոբիկ) ասորիների, հունադավան մելքիտների, Վերին Միջագետքի նեստորականների, մասամբ Լիբանանի մարոնականների (մարոնիներ) և Եգիպտոսի ղպտիների) հետ: Այս առնչությունները առաջին չորս համայնքների համար շարունակությունն էին հայ-ասորական վաղեմի բազմակողմանի հարաբերությունների, որոնք նոր ձևով արտահայտվեցին արաբացած ասորիների մոտ: Վերոհիշյալ հինգ քրիստոնյա արաբ համայնքների մոտ Ագաթանգեղոսի «Հայոց Պատմությունը» տարբեր խմբագրություններով հունարենի կամ ասորերենի միջոցով թարգմանվել է (ընդարձակ կամ համառոտ) արաբերենի: Ուղղակի հայերենից արաբերեն է թարգմանվել Վարդան Այգեկցու «Աղվեսագիրքը»:

Արաբերենի իմացությունը Հայաստանում անհրաժեշտ էր ոչ միայն խալիֆայության և այլ մահմեդական պետությունների տիրապետության շրջաններում, այլև հայկական անկախ պետականության պայմաններում, քանի որ արաբերենը միջազգային լեզու էր Արևելքում: Մեզ հասել են արաբերեն արձանագրություններ թե՛ Բագրատունյաց թագավորության, թե՛ Զաքարյան իշխանապետության օրերից: Արաբերենի իմացությունը առավել ևս անհրաժեշտ էր Կիլիկյան Հայաստանում:

ԺԵ-ԺԸ դարերում հայ իրականության մեջ որոշ հետաքրքրություն է արթնանում արևելյան լեզուների ու դպրության նկատմամբ: ԺԴ դարում Կիլիկիայի Հայոց թագավորության անկման և Հյուսիսային Հայաստանում Զաքարյան իշխանապետության քայքայման հետևանքով առավել ևս ուժեղացավ աղետալի արտագաղթը և աստիճանաբար գոյացան Հայաստանից դուրս մշակութային կենտրոններ: ԺԵ դարում այդ երևույթը պարզ դարձավ, երբ արևմտահայության համար մշակութային կենտրոն դարձավ Կոստանդնուպոլիսը, իսկ արևելահայության (Իրանի հայության) համար՝ Սպահանի արվարձան Նոր Ջուղան: Որոշ նշանակություն ստացավ նաև Հալեպը, որն արդեն արաբական միջավայրում էր: Որպես կարևոր մշակութային կենտրոն Լվովը (Լեհական թագավորության մեջ) ևս մասնակցություն ունեցավ այս շարժմանը: Ահա այս կենտրոններում ԺԵ-ԺԸ դարերում հետաքրքրություն է նկատվում արաբերենի նկատմամբ, մանավանդ որ Օսմանյան պետության մեջ և Իրանում արաբերենը դեռ կենդանի գրական լեզու էր, թեկուզ իրավագիտության և կրոնական գրականության ասպարեզներում: ԺԵ դարում Կոստանդնուպոլսում եղան նույնիսկ արաբագիր հեղինակներ (պատմիչ Մուհաջջիմ Բաշի և մատենագիր Հաջի Խալիֆա Քյաթիբ Չելեպի):

Տյուբինգենի (Գերմանիա) հայերեն ձեռագրերից մեկում տեղեկություն կա այն մասին, որ Հովհաննես քահանա Տիգրանակերտցին (ասորի) արաբերենից հայերեն է թարգմանել քրիստոնյա արաբ բժիշկ Յահիա իբն Ջազլայի (մահ. 1100) «Տակվիմ ալ-Աբդան» (Մարմինների կարգավորում) աշխատությունը, որը գրի է առնվել 1628 թվականին Լվով քաղաքում, բժշկապետ Հովհաննես Խոջա Ջուղայեցու համար: Հիշվում է նաև մի փոքրիկ թարգմանություն արաբ (ծագումով պարսիկ) նշանավոր բժիշկ Ռազիի երկերից: Այս փաստը վկայում է հայ բժիշկների արաբական բժշկության նկատմամբ հետաքրքրությունը, որ սկսվել էր դեռևս Բագրատունյաց թագավորության շրջանից, շարունակվել է ԺԵ դարում:

Լվովում ծնված, բայց էջմիածնում հաստատված Ստեփանոս Լեհա-

ցին (մեռ. 1669) լատիներենից հայերեն է թարգմանել Ղուրանը, որի ձեռագիրն այժմ գտնվում է Երևանի մատենադարանում:

ԺԷ դարում Նոր Ջուղայում հայտնի դարձավ Հովհաննես Մրքուզ վարդապետ Ջուղայեցին (1642-1716), որը Նոր Ջուղայում ուսումն ավարտելուց հետո գնացել է արաբական երկրներ և տիրապետել արաբերենին: Նա թարգմանել է Նոր Կտակարանը պարսկերեն և արաբերեն:

Արաբերեն իմացել եւ հավանաբար թարգմանություններ է կատարել Ավետիք ընթերցող Տիգրանակերտցի Բաղդասարյանը, որի աշխատանքները ծանոթ են 1684-1719 թվականներից: Տարբեր երկրներում շատ է թափառել, ընդ որում եղել է «Արապիստանում» և շեշտում է, որ գրասիրության պատճառով ուսումնասիրել է տարբեր լեզուներով գրքեր (ամենայն ազգաց գրոց) և առաջին հերթին հիշում է «արապաց»: Թարգմանել է «Ըստուրլաբի արուեստ» (աստրոլաբի արվեստ), «Թուրքին զիճն» (արաբ. զիջ՝ աստղաբաշխական աղյուսակներ) հավանաբար արաբերենից:

ԺԸ դարում Ղուկաս Խարբերդցին ձեռնամուխ եղավ Իսպանիայում (Անդալուս) ստեղծագործող արաբ նշանավոր փիլիսոփա բժիշկ Իբն Ռուշդի (Ավերրոյես Կորդուբացի, ԺԲ դար) բնագիտական երկերի լատիներենից հայերեն թարգմանությանը: Նրա այդ աշխատանքներից մեզ հասել է Արիստոտելի «Ջմասանցն կենդանեաց» երկի թարգմանությունը «ընդ ոճիւ Աւեռոսի Գօռտուպէնսիոյ»: Հայտնի է որ Ղուկաս Խարբերդցին Կոստանդնուպոլսի Հովհաննես Բաղիշեցի պատրիարքի (1715-1741) պատվերով լատիներենից և իտալերենից բազմաթիվ (20) գրքեր է թարգմանել: Հավանաբար այս աշխատությունը ևս պատրիարքի հանձնարարությամբ է թարգմանել:

Հայերը ԺԷ-ԺԸ դարերում անմիջական շփում ունեցան արաբական միջավայրի հետ Հալեբում և ընդհանրապես Սիրիայում ու Լիբանանում, ընդ որում այդ հարաբերությունները հիմնականում քրիստոնյա արաբների (արաբացած ասորիների) հետ էին: Հալեբն այդ դարերում արաբական մշակույթի և հատկապես քրիստոնյա արաբների մշակութային կարևորագույն կենտրոնն էր և արևելագետների կողմից հորջորջվել է «Ասիայի Աթենք»:

Սիրիայի (Հալեբ, Ալեքսանդրեթ, Բեյլան, Լաոդիկե) և Լիբանանի տարբեր վայրերում հաստատված հայերը սերտ հարաբերություններ ունեին տեղացի արաբների հետ, սակայն այդ առնչություններն առավել սերտ էին կաթոլիկության հարած հայերի միջավայրում, որոնց մի զգալի մասը արաբախոս էր դարձել: Հայերը ԺԷ-ԺԸ դարերում գաղթում

են Լեռնային Լիբանան և 1749-ին հիմնում Զմմառի հայ կաթոլիկ վանքը: Դրանից առաջ արդեն սկիզբ էր առել հայ կաթոլիկների կաթողիկոսությունը, որի աթոռակալները մինչև 1866 նստում էին Զմմառում: Ահա այս միջավայրում հայերը ոչ միայն արաբախոս են դառնում, այլև հանդես են գալիս հայազգի արաբագիր հեղինակներ: Գերմանացի արաբագետ Գ. Գրաֆը քրիստոնյա արաբական գրականությանը նվիրված իր բազմահատոր մենագրության մեջ հատուկ ենթագլուխ է նվիրել հայ կաթոլիկ հեղինակներին: ԺԷ դարի վերջում և ԺԸ դարի սկզբին հայտնի են Մկրտիչ ալ-Քասիհը (կաղ), ապա Աբրահամ Արծիվյանը, որը եղել է հայ առաքելական վարդապետ, ապա հարելով Հռոմի եկեղեցուն դարձել է հայ կաթոլիկ եկեղեցու հիմնադիր (մեռ. 1749): ԺԸ դարի վերջին ապրել է արաբագիր հեղինակ Հակոբ Յուսիֆյանը: ԺԹ դարից հայտնի են Գաբրիել Հադիդը, Իբրահիմ Քուբալին (Աբրահամ Քյուփելյան), Սարուֆին (Սերովբե) Այվազը, Անթուն Խանջին, Մելքոն Նազարյանը, Պողոս Բալիթը: Սրանք գրել են հիմնականում կրոնադավանաբանական գործեր, սակայն միաժամանակ Գաբրիել Հադիդը (երկաթ) արաբերեն է թարգմանել Ներսես Լամբրոնացու «Գիրք սիրոյ և խաղաղութեան» երկը, իսկ Անթուն Խանջին (Անտոն Խանջյան) գրել է «Համառոտ պատմություն Հայոց»:

Այսպիսով, միջնադարում և ԺԷ-ԺԸ դարերում հայ-արաբական առնչությունները որոշ շոշափելի արդյունքներ տվեցին: Սակայն հայ արևելագիտությունը և արաբագիտությունը սկզբնավորվեցին միայն ԺԹ դարում: Արևմտյան Եվրոպայի երկրներում ԺՋ-ԺԷ դարերի ընթացքում մեծ առաջընթաց կատարվեց արաբերեն բնագրերի հրատարակության և պատմության ու բանասիրության հարցերի ուսումնասիրման ասպարեզում, որը բնականաբար հետաքրքրություն պիտի արթնացներ նաև արևելյան (հատկապես քրիստոնյա) ժողովուրդների և, ի շարս այլոց, հայ ժողովրդի մոտ:

Հայ արևելագիտության և արաբագիտության հիմնադիր կարելի է համարել Գևորգ դպիր պալատցի Տեր Հովհաննեսյանին (1737-1812): Նա հեղինակ է պարսկերեն-հայերեն և արաբերեն-հայերեն բառարանների, պարսկերենի և արաբերենի քերականությունների, Օսմանյան պետության պատմության և այլ աշխատությունների: Նա քաջ գիտեր, բացի հայերենից ու թուրքերենից, հունարեն, լատիներեն, պարսկերեն, արաբերեն ու եբրայերեն: Ըստ Այվազյանի, նրա արաբերեն-հայերեն բառարանի ձեռագիրը գտնվում է Վենետիկի Մխիթարյան վանքում: Այս

բոլորից տպագրվել են պարսկերեն- հայերեն բառարանը[185] (որի վերջում տրված է 400 հայերեն բառերի համեմատությունը պարսկերենի հետ) և Օսմանյան պատմությունը:

Եթե Գևորգ դպիրը արաբերենի բառարանի և քերականության առաջին հեղինակն է, ապա Մ. Չամչյանը որպես հայ պատմագիտության հիմնադիր, առաջինն է, որ տվել է Հայաստանի արաբական շրջանի գիտական շարադրանքը, օգտագործելով հայկական և բյուզանդական աղբյուրները: Հետաքրքրական է արաբական շրջանի ժամանակագրությունը նրա մոտ: Նա է դարը (640-ական թթ. մինչև դարի վերջը) չի համարում արաբական տիրապետության շրջան (ինչպես նրանից հետո ուրիշներ սխալ կերպով համարեցին), այլ կոչում է «ժամանակ իշխանութեան կիւրապաղատից» և «ժամանակ իշխանութեան պատրկաց», իսկ արաբական տիրապետության շրջանը (ժամանակ իշխանութեան ոստիկանաց) սկսելով 691/693-ից, որը շատ մոտ է ճշմարտության, քանզի է դարում Հայաստանը կիսանկախ և, որոշ ժամանակ, նույնիսկ անկախ իշխանապետություն էր[186]:

Ղ. Ինճիճյանն առաջինն է, որ մասամբ դիմել է արաբական աղբյուրներին: Նա մասնակցել է Գ. Ագոնցի 1806 թվականին լույս տեսած բազմահատոր աշխարհագրական աշխատությանը, գրելով «Հայաստան» հատորը, որի շարադրման համար օգտագործել է արաբ հեղինակների եվրոպական լեզուներով եղած թարգմանությունները և, բացի այդ, Կոստանդնուպոլսում պատվիրել է արաբ աղբյուրների թարգմանություններ կատարել, սակայն վստահություն չունենալով թարգմանիչների հմտության վրա քիչ է օգտագործել դրանք: Իր եռահատոր «Հնախոսության»[187] մեջ «Աշխարհագիրք յայլոց ազգաց» վերնագրի տակ հիշում է ԺԲ դարի աշխարհագրագետ Իդրիսիին և ԺԴ դարի Աբու-լ-Ֆիդային: Այս աշխատության մեջ տարբեր գլուխներում անդրադառնում է արաբական շրջանի դեպքերին: Տալիս է արաբական արշավանքների և տիրապետության համառոտ պատմությունը, նկարագրում է հարկապահանջությունը և հայերի ապստամբությունները արաբական տիրապետության դեմ: Հիշում է Հայաստան գաղթած արաբ ցեղերին (Կայսիկք, Ուքմանիկ, Ջուրարիկ):

ԺԵ-ԺԸ դարերում հայագիտությունը որոշ զարգացում ապրեց թե հայ

[185] **Գևորգ Դպիր**, Պարսկերեն-հայերեն բառարան, Կ. Պոլիս, 1826:
[186] Տե՛ս **Հայր Միքայէլ Չամչեանց**, Պատմութիւն Հայոց, հ. 1-3, Վենետիկ, 1784-1786:
[187] **Ղ. Ինճիճեան**, Հնախօսութիւն աշխարհագրական Հայաստանեայց աշխարհի, Ա, Բ, Գ, Վենետիկ, 1835:

կական միջավայրում, թե Արևմտյան Եվրոպայում, ուր հատկապես զարգացավ նաև արաբական աղբյուրագիտությունը: Ահա այս հիման վրա սկսվեց արաբական աղբյուրների օգտագործումը հայագիտության մեջ:

Առաջին կարևոր դեմքը, որին կարող ենք այս աղբյուրագիտական բնագավառի հիմնադիրը համարել Մ. Ժ. Սեն Մարտենն է (1791-1837), որն իր «Հիշատակագիրք Հայաստանի մասին» մենագրության[188] առաջին հատորում շարադրում է Հայաստանի համառոտ պատմությունը և ժամանակագրությունը, սակայն հիմնականում նվիրված է Հայաստանի (Մեծ և Փոքր Հայք) պատմական աշխարհագրությանը: Այս աշխատության մեջ նա օգտագործել է հունարեն, արաբերեն, ասորերեն, պարսկերեն, թուրքերեն բազմաթիվ պատմաաշխարհագրական երկեր, ընդ որում առատորեն մեջ բերելով արաբ հեղինակների գործերը Մասուդիի (Ժ դար) պատմությունն ու աշխարհագրությունը, Իբն Հաուկալի (Ժ դար), Իդրիսիի (ԺԲ դար) աշխարհագրությունները, Իբն ալ-Ասիրի, Գրիգորիուս Աբու-լ-Ֆարաջի պատմական երկերը, Յակուտի (ԺԳ դար) աշխարհագրական բառարանը, Աբու-լ-Ֆիդայի (ԺԴ դար) աշխարհագրությունը: Պարսիկ հեղինակներից օգտվել է Համդալլահ Ղազուինիից, իսկ թուրք մատենագիրներից Քյատիբ Չելեբիի (ԺԷ դար) Ջիհաննումայից: Նյութեր է քաղել նաև Աբու-լ-Ֆարաջ Բար Հեբրեոսի ասորերեն պատմությունից: Երկրորդ հատորում զետեղված են հայ պատմիչներից թարգմանություններ, որոնց ծանոթագրություններում ևս օգտագործված են արաբ հեղինակները:

Մ. Սեն Մարտենի այս արժեքավոր երկի հրապարակումից հետո ավելացավ հետաքրքրությունը Հայաստանի և դրացի երկրների նկատմամբ: Ժ. Կլապրոտը լույս ընծայեց մի փոքրիկ ուսումնասիրություն Սև և Կասպից ծովերի միջև ընկած տարածքի մասին Մասուդիի հաղորդած տեղեկությունների շուրջը:

Ինքնատիպ աշխատություն է հայազգի Մուրաջա դ'Օհսոնի (1740-1807) «Կովկասի ժողովուրդները» հետմահու հրատարակված աշխատությունը[189], ուր տարբեր արաբ մատենագիրներից քաղված տեղեկությունները ի մի բերելով միաձուլել է, միաժամանակ տողատակ նշելով աղբյուրները. Թ դարից՝ Բալազուրի, Ժ դարից՝ Մասուդի, Թաբարի, Իբն Խաղլան, Իբն Հաուկալ, ԺԳ դարից՝ Իբն ալ-Ասիր, Զաքարիա Կազուինի, Յակուտ, ԺԴ դարից՝ Դիմաշկի, Աբու-լ-Ֆիդա, ԺԵ դարից՝ Իբն ալ-Վար-

[188] **St. Martin**, Mémoires historiques et géographiques sur l'Arménie, 2 vol., Paris, 1818-1819.
[189] **M. D'Ohsson**, Les peuples du Caucase, Paris, 1828.

դի: Օգտագործել է նաև Մունաջջիմ Բաշիի (ԺԷ դար) արաբերեն ծավալուն պատմության օսմաներեն թարգմանությունը (Ահմեդ էֆենդի) և այլն:

Շուտով հետաքրքրություն առաջացավ արաբական դրամների տվյալները Հայաստանի քաղաքական պատմությանն ի սպաս դնելու նպատակով: Ք. Մ. Ֆրենի (1782-1851) և այլոց դրամագիտական աշխատությունների[190] հիման վրա Յ. Հ. Պետերմանը (1801-1876) կազմեց Հայաստանի (Արմինիա) արաբ կառավարիչների առաջին ստույգ ցուցակը[191]:

Բ. Գ. Նիբուրը արաբերենից գերմաներենի թարգմանեց Կեղծ-Վակիդիի «Ասորիքի նվաճումները» երկից Վերին Միջագետքին (Ջազիրա) և Հայաստանին վերաբերող հատվածները[192]: Դա կարևոր է ոչ այնքան, որպես աղբյուր Հայաստանի նվաճման պատմության համար (քանի որ նրա անանուն հեղինակը ԺԲ դարում է հորինել) ինչքան անգնահատելի արժեք ունի Սասնա ծռեր վեպի հնագույն խավի ուսումնասիրման համար[193]:

Շարունակելով արաբական աղբյուրների տեղեկությունները հայագիտությանն ի սպաս դնելու գործը Շ. Դեֆրեմերին Ֆրանսիական Ասիական հանդեսում հոդվածների մի շարքով թարգմանաբար հրատարակեց արաբ (Բաքրի, Իբն ալ-Ասիր, Իբն Խալդուն) և պարսիկ (Խոնդեմիր, Միրխոնդ) մատենագիրներից քաղվածքներ Կովկասի (նաև Հայաստանի) և հարավային Ռուսաստանի մասին[194]:

Գերմանացի արևելագետ Ա. Դ. Մորդտմանը հավաքեց մի քանի արաբ պատմիչների տեղեկությունները Հայաստանի մասին: Նա քաղվածաբար հատվածներ թարգմանեց հետևյալ պատմիչներից՝ Բալազուրի, Թաբարի, Իբն ալ-Ասիր և Իբն Խալդուն:

Արաբական գրավոր պատմողական աղբյուրներին ու դրամներին

[190] **Ch. M. Fraehnii**, Recensio Numorum muhammedanorum, Petropoli, 1826, Quinque centuriae numorum anecdotorum Chalifarum cum Umeijadarum tum Abbasidarum, St. Petersb. 1837.

[191] **J. H. Peterman**, De Ostikanis, arabicis Armeniae Gubernatoribus, Berolini, 1840.

[192] "Geschichte der Eroberung von Mesopotamien und Armenien von Mohammed ben Omar el-Wakedi". Aus dem arabischen ubersetzt und mit Anmerkungen begleited von **B. G. Niebuhr**, Hamburg, 1847.

[193] Տե՛ս **Ա. Տեր-Ղևոնդյան**, Աղջիկ Տարոնի զրույցը ԺԲ դարի արաբական աղբյուրում, «Պատմաբանասիրական հանդես», 1978, 3 (82), էջ 265-286, *կամ* ***Ա. Տեր-Ղևոնդյան, Հոդվածների ժողովածու, Երևան, 2003, էջ 414-435:***

[194] **C. H. Défrémery**, Fragments de géographes et d'historiens arabes et persans inédits, relatifs aux anciens peoples du Caucase et de la Russie meridionale, Paris, Journal Asiatique, 1849, t. 13, 14. 1850, t. 16, 1851, t. 17.

առընթեր սկսեց հետաքրքրությունը նաև Հայաստանի արաբերեն և արաբատառ արձանագրությունների նկատմամբ: Ն. Վ. Խանիկովը (1822-1878) զբաղվեց Անիի աշտարակի պատի վրա Աբու Սահդ իլխանի արձանագրությամբ[195], որը նրա յարլիղն է:

Կիլիկյան Հայաստանի քաղաքական պատմության համար կարևոր փաստաթուղթ է Հայոց Լևոն Գ թագավորի և եգիպտոսի մամլուք սուլթան Կալաւունի միջև 1285 թվականին կնքված դաշնագիրը, որի բնագիրը Վ. Լանգլուան, պատմիչ Մակրիզիի բնագրից բերելով, հրատարակեց Կիլիկիայի հայկական թագավորության արքունի հրովարտակների և դաշնագրերի ժողովածուի[196] մեջ ֆրանսերեն թարգմանությամբ:

Հայաստանին վերաբերյալ արաբական մշակույթի և աղբյուրների նկատմամբ հետաքրքրություն արթնացավ նաև հայ իրականության մեջ ԺԹ դարի երկրորդ կեսում:

Դարի կեսերին լույս էր տեսել Մ. Բժշկյանի բազմալեզու քերականությունը, ուր առանձին գլուխներում (անուն, դերանուն, բայ և այլն) տրված են օսմաներենի, պարսկերենի և արաբերենի խոսքի մասերը և ընդհանրապես քերականությունը: Այդ տարիներին Վենետիկի «Բազմավեպ» և Կոստանդնուպոլսի «Երևակ» հանդեսներում լույս են տեսնում մի շարք հանրամատչելի հոդվածներ արաբների և նրանց մշակույթի մասին:

1869-ին լույս տեսավ Ղ. Ալիշանի «Յուշիկք հայրենեաց հայոց» աշխատության[197] առաջին հատորը, ուր մի քանի գեղարվեստական դրվագներ կան Հայաստանի արաբական շրջանի մասին, որոնք ըստ էության պատմական ուսումնասիրություններ են, ինչպես Բագրևանդի կռիվը, Ստեփանոս Սյունեցի, Աշոտ առաջին: Այս երկը գրված է հայ (թե արաբ) պատմիչների տեղեկությունների հիման վրա, որոնց նույնիսկ հղում է: Կիլիկյան Հայաստանի և արաբական երկրների հարաբերությունների մասին կարևոր տեղեկություններ ունի Ղ. Ալիշանի «Սիսուան» արժեքավոր մենագրությունը: Իսկ նրա «Սիսական», «Այրարատ» և «Շիրակ» մենագրությունները նույն բնույթի տեղեկություններ են հաղորդում Հայաստանի արաբական շրջանի և Բագրատունյաց ժամանակաշրջանի մասին:

[195] **M. N. Khanykoff**, Inscriptions musulmanes d'Ani et les environs de Bakou, Bulletin de l'Academie des Sciences de St. Petersbourg, 1849. Idem, Mémoires sur les inscriptions musulmanes du Caucase, Journale Asiatique, 1862, t. 20, p. 57-155.

[196] **V. Langlois**, Le Tresor des chartes d'Armenie au Cartulaire de la chancellerie royale des Roupeniens, Venise, 1863.

[197] **Ղևոնդ Ալիշան**, Յուշիկք հայրենեաց հայոց, հ. 1-2, 1869-1870:

Ապա իրար ետևից երևան եկան աղբյուրագիտական բնույթի աշխատություններ: Ա. Տեր-Հովհաննեսյանը հայերենի թարգմանեց արաբ պատմիչ Արաբշահի (ԺԵ դար) Լենկթիմուրի պատմությունը[198]: Դրանից մեկ տարի անց լույս տեսավ Ա. Դ. Մորդտմանի վերոհիշյալ ժողովածուի (արաբ պատմիչները Հայաստանի մասին) հայերեն թարգմանությունը: Ա. Տեր-Հովհաննեսյանը շուտով լույս ընծայեց Երուսաղեմի պատմությունը[199], որի մեջ օգտագործել է արաբական աղբյուրներ, արաբերեն վավերագրեր և արձանագրություններ:

Հայ-արաբական մատենագրական առնչությունների ուսումնասիրման հարցում կարևոր տեղ ունեն Ղ. Ալիշանի պրպտումները արաբերենից թարգմանված «Գիրք վաստակոց» կոչված աշխատության[200] մասին: Նախ Ղ. Ալիշանը գտնում է, որ «Գեոպոնիկա» աշխատության հեղինակն է Անատոլիոս Բերիտացին, որի հունարեն երկը թարգմանվել է արաբերեն և սրանից էլ հայերեն, իսկ հայերեն թարգմանչի անունը և թարգմանության վայրը մնում են անորոշ: Երեք տարի անց նա հրատարակում է «Գիրք վաստակոցի» բնագիրը և միաժամանակ հանգամանալից հոդված է գրում «Բազմավեպում», որոշելով որ թարգմանության վայրը Կիլիկիան է, իսկ ժամանակը ԺԳ դարը:

Այս հարցին անդրադարձել է հռչակավոր արաբագետ Կ. Բրոկելմանը[201], որը համեմատելով հայերեն և հունարեն բնագրերը եկավ այն եզրակացության, որ հավանաբար Անատոլիոս Բերիտացու հունարեն երկը թարգմանվել է արաբերեն և ապա սրանից էլ հայերեն, բայց այս հարցը պետք է չլուծված համարել, քանի դեռ հայերենը չի համեմատված բազմաթիվ գեոպոնիկաների հետ: Իսկ Կ. Բասմաջյանը կարծում է, թե «Գիրք վաստակոցը» թարգմանել է Մխիթար Հերացին ԺԲ դարի արաբ մատենագիր Իբն ալ-Ավամի երկրագործական երկից (Քիտաբ ալ-Ֆիլահա):

Հայերեն «Գիրք վաստակոցի», նրա արաբերեն բնագրի. իսկ վերջինիս հունարեն բնագրի (գեոպոնիկաների) փոխհարաբերության հարցը դեռ չի լուծված:

Հայ պատմիչների տեղեկությունները Մուհամմադի մասին կարևոր

[198] «Պատմութիւն Լենկ Թեմուրայ», թարգմ. **Ա. Տէր-Յովհաննէսեանց**, Երուսաղէմ, 1873:

[199] **Ա. Տէր-Յովհաննէսեանց**, Ժամանակագրական պատմութիւն Երուսաղէմի, Ա, Բ, Երուսաղէմ, 1890:

[200] Գիրք Վաստակոց, թարգմանութիւն նախնեաց յարաբացի լեզուէ, Վենետիկ,1877:

[201] **C. Brockelmann,** Geschichte der arabischen Litteratur, I-II, Weimar-Berlin, 1898-1902. Supplementband, I-III, Leiden, 1936-1942.

նշանակություն ունեն արաբների պատմության ուսումնասիրման համար: Ք. Պատկանյանը Սեբեոսի պատմության 1879-ի հրատարակության վերջում զետեղել է Մխիթար Անեցու պատմությունը (ուր մեծ տեղ է գրավում Մուհամմադի մասին զրույցը) և ապա «Յաւելուածք որ ինչ յաղագս Մահմետի են բանք առ մատենագիրս մեր», ուր հատվածներ կան Վարդան, Սամուել Անեցի, Կիրակոս, Մովսես Կաղանկատուացի, Թովմա Արծրունի պատմիչներից:

Հայ-արաբական գրական առնչությունների հարցի առաջին լուրջ ուսումնասիրողը Ղ. Հովնանյանն է (1817-1897), որն իր հոդվածներով այդ հարցին անդրադառնալուց հետո հանդես եկավ երկհատոր մենագրությամբ, որը թեև ավիրված է միջին հայերենի (նախնեաց ռամկօրէն) ուսումնասիրությանը[202], սակայն քանի որ արաբերենից հայերեն թարգմանությունները մեծ մասամբ միջին հայերեն են գրված և արաբերենից փոխառությունները հայերենում հիմնականում հենց միջին հայերենում են արտահայտված, ուստի նա շատ հաճախ անդրադառնում է հայ-արաբական մշակութային առնչություններին: Ղ. Հովնանյանը հորինել է նաև արաբերեն-հայերեն ընդարձակ բառարան, որն ընտիր գործ է համարվում:

Ղ. Ալիշանն ուսումնասիրել և թարգմանաբար հայերեն հրատարակել է ԺԲ-ԺԳ դդ. արաբագիր հայազգի հեղինակ Աբու Սահլի (Աբու Սալիհ) պատմական երկը[203], որտեղ նկարագրված են Եգիպտոսի վանքերը և միաժամանակ տեղեկություններ է հաղորդում Ֆաթիմյան Եգիպտոսում գործած հայ վեզիրների մասին:

ԺԹ դարի երկրորդ կեսում երևան եկան եվրոպացի հեղինակների ղրամագիտական լայն ընդգրկումով կազմված ուսումնասիրություններ, որոնք հետագայում հնարավորություն տվեցին ճշտելու Հայաստանի քաղաքական պատմության որոշ կողմեր և հատկապես հարստացնելու Արմինիայի կառավարիչների (ոստիկանների) ցուցակը:

Հայ-արաբական երկարատև առնչությունների հետևանքով հայերենը փոխառություններ է վերցրել արաբերենից, որոնք առաջին անգամ ուսումնասիրության առարկա դարձան Հ. Հյուբշմանի հայերենում սեմական փոխառություններին նվիրված աշխատության մեջ[204]: Նա հի-

[202] **Ղ. Յովնանեան**, Յետազօտութիւնք նախնեաց ռամկօրէնի վրայ, Վիեննա, 1897:

[203] **Աբուսահլ Հայ** (Աբու Սալիհ Հայ), Պատմութիւն եկեղեցեաց և վանօրէից Եգիպտոսի, Վենետիկ, ս. Ղազար, 1933:

[204] **H. Hübschmann**, Die semitischen Lehnwörter im Armenischen, Zeitschrift der Deutschen Morgenlandischen Geselschaft, 1892.

շում է 75 փոխառություններ արաբերենից հայերենին անցած և իրավացիորեն ավելացնում, որ բուն արաբական տիրապետության շրջանում քիչ փոխառություններ են անցել. միայն ԺԲ դարից նկատվում է արաբական փոխառությունների առատությունը (Մխիթար Հերացու մոտ, Գիրք Վաստակոց երկում և այլն): Նկատել է նաև, որ արաբերեն փոխառությունները ավելի հաճախ միջին (ռամիկ) հայերենով շարադրված երկերում են:

Հայերենում առկա արաբերեն փոխառությունների ուսումնասիրման համար կարևոր նպաստ է Ղ. Ալիշանի «Հայբուսակ» աշխատությունը[205], ուր առաջաբանում նշվում է, որ բուսաբանությունը սերտորեն կապված լինելով բժշկագիտության հետ, բնականաբար վերջինիս նման փոխ է առել բույսերի արաբերեն անուններ: Նա հիշում է 3400 բույսերի հայերեն անուններ, որոնց մեջ բազմաթիվ արաբերեն փոխառություններ կան:

Դարի վերջում ուժեղացավ ձգտումը ուսումնասիրելու Հայաստանի արաբական շրջանի պատմությունը: Համառոտ, բայց բովանդակալից է Պ. (հավանաբար Ս. Պալասանյան) ստորագրությամբ «Ակնարկ արաբական շրջանի Հայոց պատմության վրա» հոդվածը: Նկարագրված են Հայաստանի նվաճումը, արաբական վարչական համակարգը, ոստիկանների պարտականությունները, հարկային քաղաքականությունը և նույնիսկ հ-արաբական մշակութային առնչությունները: Հ. Դաղբաշյանը Բագրատունյաց թագավորության հիմնադրմանը նվիրված աշխատության[206] մեջ քննարկում է Հայաստանի Թ դարի առաջին կեսի պատմությունը, հասցնելով այն մինչև Աշոտ Ա-ի կողմից Հայաստանի ազատագրումը: Սասունի պատմությանն է վերաբերում Վ. Տոմաշեկի «Սասունը և Տիգրիսի ակունքների սահմանները» աշխատությունը[207], ուր արաբական աղբյուրների հիման վրա (Կեղծ Վակիդի, Բալազուրի, Թաբարի, Իբն ալ-Ասիր, Աբու-լ-Ֆիդա և այլն) Հայաստանի արաբական շրջանի շատ հարցեր է շոշափում:

Հետաքրքրական է Հ. Ֆ. Ամեդրոզի Հայաստանի Աղձնիք նահանգի և Նփրկերտի պատմության աղբյուրների մասին հոդվածները:

Հայաստանի արաբական շրջանի մասին առաջին մենագրությունը

[205] **Ղևոնդ Ալիշան**, Հայբուսակ կամ հայկական բուսաբառութիւն, Վենետիկ, 1895:
[206] **A. Daghbaschean**, Grundung des Bagratidenreiches durch Aschot Bagratuni, Berlin, 1893.
[207] **W. Tomaschek**, Sasun und das Quellengebiet des Tigres, Wien, 1896. Հայերեն թարգմ. **Վ. Տոմաշեկ**, Սասուն և Տիգրիսի աղբերաց սահմանները, պատմական և տեղագրական հետազոտութիւն, Վիեննա, 1896:

Մ. Ղազարյանի «Հայաստանն արաբական տիրապետության տակ» աշխատությունն[208] է, որը գրված է արաբական աղբյուրների լայն օգտագործմամբ: Այստեղ շարադրված է Հայաստանի քաղաքական, տնտեսական, հասարակական կյանքի պատմությունը պատշաճ մակարդակով. Արմինիայի կառավարիչների (ոստիկանների) առավել մանրամասն ցուցակը և քննության են առնված Հայաստանի տեղանունների արաբական ձևերը:

Այս շրջանում արաբ պատմագրության նկատմամբ հետաքրքրությունն այնքան ուժեղ էր, որ Ղ. Ալիշանը հայ պատմագրության պատմությանը նվիրված «Հայապատում» աշխատության[209] մեջ ի շարս Հայաստանի մասին այլ աղբյուրների հիշում է հետևյալ արաբ պատմիչներին և աշխարհագրագետներին՝ Բալազուրի, Յակուբի, Կուդամա, Թաբարի, Մասուդի, Իբն Հաուկալ, Մուկադդասի, Իբն ալ-Ջաուզի, Կազուինի, Իբն ալ-Ասիր, Յակուտ, Աբու-լ-Ֆիդա, Իբն ալ-Վարդի, Մակրիզի:

Հայաստանի արաբական և բագրատունյաց ժամանակաշրջանների պատմության հետ սերտ աղերս ունի բյուզանդագետ-արաբագետ Ա. Վասիլևի արժեքավոր մենագրությունը «Բյուզանդիան և արաբները»[210] կոչված, ուր արաբաբյուզանդական երեքհարյուրամյա պատերազմների մոտ հարյուրքառասունամյա (820-959) ժամանակաշրջանի մանրակրկիտ պատմությունն է շարադրված: Առատ կերպով օգտագործված են բոլոր արաբ պատմիչները և աշխարհագրագետները, որոնք տեղեկություններ են պարունակում այս հարցի շուրջը: Հետագայում Մ. Կանարը վերահրատարակեց այս աշխատությունը, թարգմանելով ֆրանսերենի և ծոխացնելով նոր ուսումնասիրությունների տվյալներով ու հարուստ

[208] **M. Ghazarian**, Armenien unter der Arabischen Herrschaft, Marburg, 1903. Սկրտիչ Ղազարյանը ծնվել է 1864 թ., Կարսում: Ավարտել է էջմիածնի Գևորգյան ճեմարանը, սովորել է Պետերբուրգի և ապա Բեռլինի համալսարաններում: Վերջինս ավարտելով գրել է «Հայաստանը արաբական տիրապետության տակ» դոկտորական թեզը (հրատարակվել է 1903-ին՝ Մարբուրգում): 1906-1912 թթ. քահանայագործել է Պետերբուրգի հայոց ս. Կատարինե եկեղեցում, միաժամանակ դասավանդելով տարբեր ուսումնական հաստատություններում: 1910 թ. հոգեհանգիստ է կատարել պաշտոնապես բանադրված Լև Տոլստոյի համար՝ նրա թաղման օրը, հայ համայնքի և ցուցարար ուսանողների խնդրանքով: Նա հանդես է եկել Պետերբուրգի մամուլում ("Новое время"), պատասխանելով սևհարյուրակային հեղինակների՝ հայ ժողովրդի դեմ գրած զրպարտիչ հոդվածներին: 1912-ից Հայաստանում զբաղվել է մանկավարժական աշխատանքով, եղել է Գևորգյան ճեմարանի տեսուչի օգնական: 1914-1919 թթ. եղել է տեսուչ Շամախիի և Ալեքսանդրապոլի ուսումնարաններում: Մահացել է 1919-ին Ալեքսանդրապոլում: (Տես **Ա. Տեր-Ղևոնդյան**, Լ. Տոլստոյի հոգեհանգիստը Պետերբուրգի Հայոց եկեղեցում, «Գրական թերթ», 22 սեպտ. 1978: **Գ. Ստեփանյան**, Կենսագրական բառարան, հ. Բ, Երևան, 1981, էջ 239):
[209] **Ղևոնդ Ալիշան**, Հայապատում, Վենետիկ, 1901:
[210] **A. Vasiliev**, Byzance et les Arabes, Bruxelles, t. I,1935 (1959),t. II (1968).

թարգմանություններով՝ արաբական աղբյուրներից:

Նույն սկզբունքներով են շարադրված Յ. Մարկվարտի Հայաստանի պատմությանը վերաբերող երկերը: Նախ իր «Արևելաեվրոպական և արևելաասիական հետազոտություններ» աշխատության[211] մեջ մի գլուխ է հատկացրել Հայաստանի պատմության այն շրջանին, որը կապվում է Բագրատունյաց գործունեության հետ: Հանդես Ամսօրյայում 1913-1915 թվականներին լույս տեսած և ապա առանձին հատորով հրատարակված «Հարավային Հայաստանը և Տիգրիսի ակունքները» աշխատության[212] մեջ արաբական և Բագրատունյաց շրջանների հարցերին է անդրադառնում, քննարկելով հատկապես Վասպուրականի ու Տարոնի պատմությանը վերաբերյալ բազում դրվագներ:

Հ. Թոփչյանն ուսումնասիրել է վիճակը Հայաստանում արաբական արշավանքների նախօրեին և նվաճումից հետո, ինչպես նաև արաբական տիրապետության վախճանը և Բագրատունյաց թագավորության ծնունդը[213]:

Հայաստանի և դրացի երկրների մասին արաբ աշխարհագրագետների տեղեկությունները, արաբերեն բնագրով և ռուսերեն թարգմանությամբ հրատարակել է Ն. Ա. Կարաուլովը Կովկասին նվիրված մատենաշարի մի քանի համարներում[214]: Նա ընդգրկել է Թ դարից Իբն Խորդադբեհին, Յակուբիին, Իբն Ռուստային, Իբն ալ-Ֆակիհին և Կուդամային, իսկ Ժ դարից Իսթախրիին, Իբն Հաուկալին, Մասուդիին և Մուկադդասիին: Այս աշխատանքը մեդալի է արժանացել և ապա Վ. Ռոզենի կողմից վերանայվելուց հետո լույս է տեսել վերոհիշյալ մատենաշարում: Այս աշխատանքը գովելի է նրանով, որ մինչև այժմ միակն է, ուր թարգմանությանը զուգահեռ տրվել է արաբերեն բնագիրը:

Նույն ժամանակ Բ. Խալաթյանցը Հանդես Ամսօրյայի էջերում (1903-1909) հրատարակեց մի խումբ արաբ պատմիչների (Բալազուրի, Թաբարի, Իբն Միսքավայհ, Իբն ալ-Ասիր) Հայաստանին վերաբերյալ հատվածների թարգմանությունը: Հետագայում այս աշխատանքը լույս

[211] **J. Marqwart,** Osteuropäische und ostasiatische Streifzüge, Leipzig, 1903.

[212] **J. Marqwart,** Südarmenien und die Tigrissqwellen, Wien, 1930.

[213] **H. Thopdschian,** Armenien vor und während der Araberzeit, Zeit. für arm. Phil., Marburg, 1903.

[214] **Н. А. Караулов,** Сведения арабских географов IX и X вв. По р. Х. о Кавказе, Армении и Адербейджане, в Сборнике материалов для описания местностей и племен Кавказа, Тифлис, XXIX (Истахри), 1901, XXXI (Ибн ал-Факих), 1902, XXXII (Ибн Хордадбех, Кудама, Ибн Русте, Якуби), 1903, XXXVIII (Мукаддаси, Масуди, Ибн Хаукал), 1908.

տեսավ առանձին հատորով[215]:

Մ. Օրմանյանն իր կոթողային «Ազգապատում» աշխատության մեջ մի շատ արժեքավոր բաժին ունի արաբական շրջանի մասին[216]: Թեպետ 1946-ին լույս տեսած, սակայն առաջին աշխարհամարտի սկզբին ավարտված աշխատանք է Լեոյի «Հայոց պատմության» երկրորդ հատորը[217], ուր մանրամասն շարադրված է արաբական շրջանի պատմությունը: Նա արաբական աղբյուրներից օգտվել է թարգմանություններով, սակայն նրա երկերում պատմական դեպքերի զարգացման ընթացքը մեծ հմտությամբ է պարզաբանված: Արաբական աղբյուրների լայն ընդգրկումով է գրված «Իսլամի Հանրագիտարանում» Մ. Շտրեքի «Հայաստան» ծավալուն հոդվածը[218], ուր է-ԺԳ դարերի քաղաքական, վարչական, տնտեսական կյանքի տարբեր կողմերն են ուսումնասիրված:

Հայ-արաբական մշակութային առնչությունների ասպարեզում իր լուման ունի Ն. Մառը: Կարևոր է նրա ներհուն աշխատությունը Վարդան Այգեկցու առակների (Աղվեսագիրք) և, հատկապես, վերջինիս արաբերեն թարգմանության մասին: Լոնդոնի «Ինդիա օֆիս» գրադարանի ձեռագրացուցակում նշված է եղել մի ձեռագիր, որն ասորատառ արաբերեն (քարշունի) էր և ուներ «Քիտաբ Ամսալ ալ-Սաալաբ» (Աղվեսի առակների գիրք) անվանումը, որին թեև ոմանք ուշադրություն էին դարձրել, սակայն նրա էությունը չէր պարզվել: Ն. Մառը պրպտելով ձեռագիրը, պարզում է, որ այդ արաբերեն առակները հայերենից են թարգմանված՝ Վարդանի Աղվեսագրքից: Այս կարևոր աշխատությունն անմիջապես ուշադրության առարկա դարձավ և Հ. Տաշյանը նախ «Հանդես Ամսօրյայի» էջերում, ապա առանձին հատորով ամփոփեց նրա բովանդակությունը:

1905 թվականին Ն. Մառը հրատարակեց Ագաթանգեղոսի Հայոց պատմության մի նոր արաբերեն խմբագրություն, որի ձեռագիրը հայտնաբերվել էր Եգիպտոսի Սինայի թերակղզու Ս. Կատարինե վանքում: Պարզվեց, որ մեզ հայտնի հայերեն բնագրից ու նրանից թարգմանված կամ ամփոփված խմբագրություններից բացի եղել է մեկ այլ հայերեն բնագիր, որի արաբերեն թարգմանությունն էր մեզ հասել: Ն. Մառը հրատարակեց արաբերեն բնագիրը, ռուսերեն թարգմանությունը հատուկ

[215] Արաբացի մատենագիրներ Հայաստանի մասին, հաւաքեց և թարգմանեց **Բագրատ Խալաթեանց**, Ազգային Մատենադարան, ՃԴ, Վիեննա, 1919:

[216] **Մաղաքիա արք. Օրմանեան,** Ազգապատում, հատոր Ա, Պէյրութ, 1959:

[217] **Լեո,** Հայոց պատմություն, Բ, Երևան, 1967:

[218] **M. Streck,** Armenia, The Encyclopaedia of Islam, Leyde-London, I , 1913, p. 435-449.

ուսումնասիրությամբ[219]: Հետագայում հայտնաբերված, բայց այս խմբին պատկանող բնագրերը «Վարք» անունը կրեցին, որպես մեկ խումբ:

Ն. Մառը գտնում է նաև, որ Մովսես Խորենացու հիշած Մար Աբաս Կատինան իրոք գրել է ժամանակագրություն, սակայն այդ ասորերեն բնագիրը կորել է և մեզ հասել է նրանից քաղված արաբերեն մի հատված:

Անդրադառնալով հայ միջնադարյան արձակի հարցերին, Ն. Անդրիկյանը քննության առավ երեք հայերեն բնագիր՝ «Պղնձե քաղաքի պատմությունը», որը նա վստահ է, թե թարգմանված է արաբերեն հազար և մեկ գիշեր ժողովածուից, «Ֆարմանի Աստանին» համարում է անորոշ ծագումով զրույց, իսկ «Հարցմունք աղջկանը» արաբական ծագում է վերագրում[220]: Ա. Չոպանյանը նույն «Պղնձե քաղաքի պատմությունը» և «Հարցմունք աղջկանը» համարում է հազար և մեկ գիշեր ժողովածուից թարգմանված:

Որոշ ժամանակ անց Հ. Լորանտին ևս անդրադարձավ «Պղնձե քաղաքի պատմությանը» համարելով այն «Հազար և մեկ գիշեր» ծողովածուից Մխիթար Անեցու կողմից կատարված թարգմանություն[221]:

Ք. Չրաքյանի կողմից Նանա ասորու Հովհաննու ավետարանի մեկնության հայերեն բնագրի հրատարակումից հետո ֆրանսիացի արևելագետ Լ. Մարիեսը մի հետաքրքրական հոդված հրատարակեց այս նյութի շուրջը, նշելով որ Նանան արաբերեն բնագիրը գրել է մոտավորապես 840 թվականին, իսկ հայերեն թարգմանությունը կատարվել է մոտավորապես 852-ին: Այս հարցի շուրջը Ն. Ակինյանը հանդես եկավ հատուկ ուսումնասիրությամբ, ուր մանրամասն վերլուծում է մեկնության գրության և թարգմանության հանգամանքները: Նանա ասորին Հայաստան էր հրավիրվել իշխանաց իշխան Բագարատ Բագրատունու կողմից, բանավիճելու երկաբնակ Թեոդորոս Աբիկուռայի հետ: Ապա Բագարատը պատվիրեց նրան գրել Հովհաննու ավետարանի մեկնությունը, որը նա գրեց արաբերեն և հետագայում այն թարգմանվեց հայերեն:

Մեր դարի սկզբին կրկին սկսեց հետաքրքրությունը Հայաստանի

[219] **H. Марр,** Крещение Армян, Грузин, Абхазов и Аланов святым Григорием (Арабская версия), Петербург, 1908.

[220] **Ն. Անդրիկեան**, Ազգային վէպերէն, Բագմավէպ, Վենետիկ, 1906, 7, 8:

[221] **H. Laurentie,** La version arménienne du conte de la ville d'airain, Revue des Etudes Arméniennes, 1921, t. I, fasc. 3.

արաբական արձանագրությունների նկատմամբ: Հայտնի վիմագրագետ Մ. վան Բերշեմը, որի արաբերեն արձանագրությունների դիվանը հետաքրքրական նյութեր է պարունակում Հայաստանի պատմության համար, հրատարակեց Նփրկերտի, Ամիդի և այլ վայրերի արաբական արձանագրությունները, որոնք վերաբերում են Արտուխյաններին և այլոց[222]: Ապա Մ. Տեր-Մովսիսյանը հրատարակեց Զվարթնոցի պատերի ծեփի վրա գրված արաբերեն արձանագրությունների գծանկարները Վ. Բարթոլդի որոշ դիտողություններով[223]:

Նշանակալի երևույթ է Ժ. Լորանի (1870-1955) մենագրությունը[224] Հայաստանի արաբական շրջանի մասին: Նա քննության է առնում երկրի ներքին վիճակը (վարչական, տնտեսական, նախարարական տիրույթներ, եկեղեցի, ապստամբություններ և այլն), ապա արաբաբյուզանդական պատերազմները և Աշոտ Ա Բագրատունու ջանքերով Հայոց թագավորության վերականգնումը: Հետագայում լույս տեսավ աշխատության վերամշակված և ճոխացված հրատարակությունը Մ. Կանարի կողմից, ուր որպես հավելված զետեղված են արաբ մատենագիրներից (Բալազուրի, Յակուբի, Իբն ալ-Ֆակիհ, Թաբարի, Իսթախրի, Իբն Հաուկալ, Մուկադդասի, Տաննուխի) քաղված հատվածների թարգմանություններ:

Դիմելով հայ բժշկության պատմության հարցերին Ղ. Տայանը Վենետիկի մատենադարանի ձեռագրերում հայտնաբերելով Մխիթար Հերացու մի փոքրիկ աշխատությունը արժեքավոր քարերի բուժիչ հատկանիշների մասին, հրատարակում է այն: Այստեղ ևս առատ են արաբական փոխառությունները, ինչպես Հերացու բժշկական հայտնի երկում: Հայ բժշկության ակնառու դեմքերից Ամիրտովլաթ Ամասիացու դեղաբանական «Անգիտաց անպէտ» և ախտաբանական «Օգուտ բժշկութեան» աշխատություններում լի են արաբերեն բժշկական և դեղագործական հատուկ բառերը: Այս երկու երկերի մեջ ամփոփված են հայերենում արաբերենից կատարված բժշկական փոխառությունների զգալի մասը:

Քսանական-երեսնական թվականներին նորից երևան եկան աշխատություններ նվիրված Հայաստանի արաբական շրջանին, կամ մասնե-

[222] **M. van Berchem,** Materiaux pour l'épigraphie et l'histoire musulmanes du Diyar-Bekr, dans "Amida", Heidelberg, Paris, 1907.

[223] **Մ. Տէր-Մովսիսեան**, Էջմիածին և Հայոց հնագոյն եկեղեցիները, «Ազգագրական Հանդես», ժէ, 1907, էջ 87-132, տախտ. ԺԲ, 8, 9, 10, 11, 12:

[224] **J. Laurent,** L'Arménie entre Byzance et l'Islam, depuis la conquête arabe jusq'en 886, Paris, 1919.

դական միջնադարին:

Արաբների պատմության հայտնի գիտակ Կ. Հյուարը «Հայկական ուսմանց հանդեսում» (REA) հրատարակեց մի հոդված[225], ուր քննության է առնում 938 թվականին Ատրպատականի զորավարներից Լաշքարիի Հայաստան կատարած ասպատակության և պարտության մասին Իբն Միսքավայհի (ԺԱ դար) տեղեկությունները: Ղ. Տայանը նույն ժամանակ Բազմավեպի էջերում հրատարակեց Իբն Մույասսարի (ԺԳ դար) հայ վեզիրներ Բադր ալ-Գամալիի, Աֆդալի և Վահրամ Պահլավունու մասին տեղեկությունների թարգմանությունը[226]:

Արաբական շրջանի որոշ հարցերով զբաղվել է Հ. Զորյանը, որն արաբական աղբյուրների օգտագործմամբ, ուսումնասիրել է արաբների հարկային քաղաքականությունը Հայաստանում և գյուղի ու քաղաքի միջև ստեղծված հակասությունը[227]:

Ինքնատիպ աշխատություն է Ժ. Միլդերմանսի Վարդան պատմիչի երկի արաբական շրջանին վերաբերող հատվածի ուսումնասիրությունը, ֆրանսերեն թարգմանությամբ և տարբեր հարցերի հետազոտմամբ:

Ժամանակի ընթացքում հրատարակված դրամագիտական նյութերը հնարավորություն տվեցին դրամագետ Ռ. Ֆասմերին (1888-1936) մի նոր քայլ կատարելու Արմինիայի կառավարիչների (ոստիկաններ) ցուցակը լրացնելու և ամբողջացնելու հարցում: Նրա ցուցակն ընդգրկում է Աբբասյան ժամանակաշրջանը[228]:

Իսլամին վերաբերող բնագրերը նույնպես զբաղեցրին հայ բանասերներին: Բ. Կյուլեսերյանի հրատարակած հայերեն ձեռագիրը Մուհամմադի կենսագրության մասին[229], հավանաբար արաբերենից է թարգմանված, մանավանդ որ վերնագրում նշված է նրա քարշունի (ասորատառ արաբերեն) լինելը:

Արաբական աղբյուրներն օգտագործված են Հ. Մանանդյանի Հայաստանի առևտրի ու քաղաքների մասին աշխատության[230] արաբա-

[225] **Cl. Huart,** Une razzia en Arménie au Xe siècle, Revue des l'Etudes Arméniennes, I, Paris, 1921, fasc. 4.

[226] **Ղ. Տայան,** Իպն Մույասսարի տարեգրութիւնները Եգիպտոսի երեք հայ նախարարաց մասին, Բազմավէպ, 1921, էջ 205-208:

[227] **Հ. Զորյան.** Արաբների հարկային քաղաքականությունը ֆեոդալական Հայաստանում, Երևանի համալսարանի տեղեկագիր, 2-3, Երևան, 1927:

[228] **R. Vasmer,** Chronologie der arabischen Statthalter von Armenien unter den Abbasiden, Wien, 1931.

[229] **Բ. Կիւլեսերեան,** Իսլամը հայ մատենագրութեան մէջ, Վիեննա, 1930:

[230] **Я. Манандян,** О торговле и городах Армении в связи с мировой торговлей древних времен, Ереван, 1954.

կան և Բագրատունյաց թագավորության շրջաններին վերաբերյալ գլուխներում. նույնը կարելի է ասել նրա արաբների Հայաստանում կատարած արշավանքների և ժողովրդական ապստամբությունների մասին աշխատությունների առնչությամբ:

Արաբաբյուզանդական սահմանային ընդհարումներին կրկին անդրադարձավ է. Հոնիգմանը կայսրության արևելյան սահմանների մասին իր մենագրության[231] մեջ, ուր նույնպես օգտագործված են արաբական մեծ թվով աղբյուրներ: Ի տարբերություն Վասիլևի, նա հատկապես ծանրանում է սահմանային ամրությունների հարցի վրա և այսպիսով շատ օգտակար է Հայաստանի արևմտյան գավառների դրության ուսումնասիրման համար:

Ինքնատիպ է Պ. Ժուզեի մենագրությունը Հայաստանում հաստատված արաբ կենտրոնախույս ուժերի (ամիրների) մասին[232]: Թ դարի առաջին կեսում, երբ թուլանում էր Աբբասյանների հեղինակությունը, տեղում հողային տիրույթներ ձեռք բերած արաբ զորավարներն ու ցեղապետերը, ձգտում էին ինքնուրույնության, հետևելով հայ նախարարների օրինակին: Դրանք արաբ պատմագրության մեջ կոչվում էին մուտաղալլիբներ (բռնացողներ):

Ն. Մառը Անիի պատմության մասին իր ուսումնասիրության[233] մեջ անդրադառնում է Անիի հայ (Զաքարյան) կառավարիչների մոնղոլական շրջանում թողարկած դրամների վրա գտնվող արաբերեն մակագրություններին, որպես իր ժամանակի համար օրինաչափ երևույթի:

Այդ ժամանակ նոր հրատարակված արաբերեն բնագրերից Հայաստանի Բագրատունյաց ժամանակաշրջանի ուսումնասիրման համար կարևոր են Մ. Կանարի հրատարակած նյութերը Համդանյան ամիր Սայֆ ալ-Դաուլայի (944-969) գործունեության մասին[234]: Կան հատվածներ ԺԲ-ԺԳ դարերի պատմիչներ Ֆարիկիից, Իբն Զաֆիրից, Զահաբիից: Հայաստանի առևտրի և արհեստների ուսումնասիրման համար կարևոր է նաև այդ շրջանում լույս տեսած Զահիզի (775-868) Աբբասյան շրջանի առևտրի մասին փոքրիկ երկը[235]:

[231] **E. Honigmann,** Die Ostgrenze des Byzantinischen Reiches, Corp. Brux. Hist. Byz.,III, Bruxelles, 1935.

[232] **П. Жузе,** Мутагаллибы в Закавказье в IX —XI вв., материалы по истории Грузии и Кавказа, вып. III, Тифлис, 1937.

[233] **Н. Марр,** Ани, Ленинград,1934.

[234] **M. Canard,** Les Hamdanides et l'Arménie, Annales de l'Institut d'études orientales, VII, Alger, 1943.

[235] **Djahiz,** at-tabassur bi-l-tidjara, Damas, 1932.

Իբն Խալլիքանի (1211-1282) հայտնի կենսագրական բառարանից ընդարձակ հատվածներ է թարգմանել Գ. Մըսրլյանը Հայաստանի պատմությանն առնչվող արաբ կառավարիչների ու զորավարների կենսագրություններից[236]:

Քառասնական թվականների սկզբին Երևանի համալսարանը հրատարակեց «Օտար աղբյուրները հայերի մասին» մատենաշարը, որի մեջ լույս է տեսել Հ. Աճառյանի թարգմանած Իբն Բաթութայի (ԺԴ դար) ուղեգրությունից տեղեկությունները Հայաստանի ու Կիլիկիայի մասին, ընդ որում հայերեն թարգմանության դիմաց տրված է արաբերեն բնագիրը[237]: Հետաքրքրական է Կ. Ղաֆադարյանի հին Հայաստանում ալքիմիայի զարգացման հարցին նվիրված մենագրությունը[238], ուր հայ ալքիմիկոսներից քաղված մեջբերումներից երևում է, որ նրանք օգտագործել են արաբ ալքիմիկոսների գործերը, քանզի հիշված են նշանավոր Ջաբիր իբն Հայյանը և ուրիշներ:

Դեռևս երեսնական թվականներից հետաքրքրություն էր առաջացել հայ-արաբական մշակութային առնչությունների նկատմամբ: Անդրադառնալով գեղարվեստական հարաբերություններին, Հ. Քյուրտյանը հատկապես կանգ է առնում գորգագործության ասպարեզում արևելքում հայերի կատարած կարևոր դերի վրա[239]:

Ն. Մառի հայտնաբերած արաբերեն Ագաթանգեղոսի (Վարք) ուսումնասիրման համար մեծ նշանակություն ունեցավ Ժ. Գարիթի հայտնաբերած և հրատարակած հունարեն մի նոր ագաթանգեղյան բնագիր (հունարեն Վարք, էսկուրիալ Իսպանիա)[240], որի մի մասը լինելով արաբերեն Վարքի աղբյուրը, հնարավորություն տվեց ճշտելու շատ անհասկանալի տեղեր արաբերեն բնագրում: Ժ. Գարիթը հրատարակեց նաև ԺԴ դարի արաբերեն մի համառոտ Վարք, որն ըստ նրա թարգմանված է ղպտերենից: Ն. Մառի հրատարակած ձեռագիրն սկզբում պակասավոր է եղել: Ամբողջական ձեռագիրը հայտնաբերեց և սկզբի պակասող հատվածը հրատարակեց Ա. Տեր-Ղևոնդյանը:

Ագաթանգեղոսի պատմության արաբերեն (ձեռագիրը՝ Սինայի Կա-

[236] **Իպն Խալլիքան,** Վեֆայաթ ալ-Այան (անհետացած երևելիներ), թարգմ. **Գ. Մըսրլեան**, Կահիրե, 1935:
[237] **Իբն-ի Բատուտա,** Օտար աղբյուրները հայերի մասին, 2, քաղեց և թարգմանեց **Հ. Աճառյան**, Երևան, 1940:
[238] **Կ. Ղաֆադարյան,** Ալքիմիան պատմական Հայաստանում, Երևան, 1940:
[239] **Յ. Քիւրտեան**, Հայ եւ Արաբ Գեղարուեստի Յարաբերութիւնը, Փարիզ, 1932:
[240] **G. Garitte**, Une Vie grecque inédite de Saint Grégoire d'Arménie, Analecta Bollandiana, t. 83, fasc. 3-4, Bruxelles, 1965.

տարինե վանք) ամբողջական թարգմանությունը (կատարված նրա հունարեն թարգմանությունից), որի հայտնաբերման մասին ժամանակին Ժ. Գարիթը հոդվածով հայտնել էր, հրատարակվեց արաբերեն բնագրով և ուսումնասիրությամբ Ա. Տեր-Ղևոնդյանի կողմից[241]: Ագաթանգեղոսի բնագրերի Վարք կոչված խմբից մի նոր արաբերեն ձեռագիր (Երուսաղեմի ս. Մարկոսի վանքում) լույս ընծայեց Մ. վան Էսբրուքը[242]: Շուտով Դամասկոսի հունադավան պատրիարքության շենքում հայտնաբերվեց սրա ասորերեն բնագիրը, որից թարգմանված էր: Ըստ նրա, ասորերենն իր հերթին պետք է հայերենից թարգմանված լինի:

Արաբական կնքագիտության ասպարեզում մի կարևոր գյուտ էր Հյուսիսային Կովկասի Կարաչայ (Կարաչայ-չերքեզական ԻՄ) մարզում 1940 թ. պեղումների ընթացքում հայտնաբերված արաբատառ կնիքը հասարակ քուֆի գրությամբ և «Աշուր իբն Սինբաթ» մակագրությամբ[243]: Վ. Ա. Կրաչկովսկայան գտնում է, որ այն պատկանել է Բագրատունյաց թագավորության հիմնադիր Աշոտ Ա Բագրատունուն, քանզի նրա օրոք դեռ սերտ էին Աբբասյան խալիֆայության հետ հարաբերությունները: Դվինի հնագիտական պեղումների ընթացքում ևս գտնվել են արաբերեն կնքադրոշմներ, որոնք անկասկած առևտրական գործարքների հետ են կապված:

Հայաստանի արաբական շրջանի ուսումնասիրման համար կարևոր են Ա. Ալպոյաճյանի (1879-1962) մի քանի աշխատությունները, ինչպես Կեսարիայի հայոց[244], Մալաթիայի հայոց[245], հայ գաղթականության պատմությունները[246], ինչպես նաև Հայաստանի պատմական սահմանների մասին ուսումնասիրությունը:

Հայ-արաբական առնչությունների բնագավառի մի կարևոր մասն է արաբական երկրներում գտնվող հայ գաղթավայրերի պատմությունը, ինչպես S. Սավալանյանցի Երուսաղեմի հայոց[247], Գ. Մըսրլյանի միջնա-

[241] **Ա. Տեր-Ղևոնդյան,** Ագաթանգեղոսի արաբական նոր խմբագրությունը, Երևան, 1968:
[242] **M. Van Esbroeck,** Un nouveau témoin du livre d'Agathange, "Revue des Etudes Arméniennes", VIII, Paris, 1971.
[243] **В. А. Кравковская,** Печать Багратида Ашота с арабской надписью, Краткие сообщения института истории материальной культуры, вып. XV, 1946, стр. 112-117.
[244] **Ա. Ալպոյաճեան,** Պատմութիւն հայ Կեսարիոյ, հ. 1-2, Կահիրե, 1937:
[245] **Ա. Ալպոյաճեան,** Պատմութիւն Մալաթիոյ հայոց, Կահիրե, 1961:
[246] **Ա. Ալպոյաճեան,** Պատմութիւն հայ գաղթականութեան, հ. 1-3, Կահիրե, 1941-1961:
[247] **Սաւալանեանց,** Պատմութիւն Երուսաղէմի, հ. 1, Երուսաղէմ, 1931:

դարյան Եգիպտոսի նշանավոր հայերի[248], Ա. Գարտաշյանի, Ա. Ալպոյաճյանի[249] և Հ. Թոփուզյանի եգիպտահայության, Ա. Սյուրմեյանի հալեպահայության[250], Ս. Վարժապետյանի լիբանանահայության[251], Ա. Սանջյանի օսմանյան շրջանի սիրիահայության[252] պատմությունները[253]:

ԺԷ-ԺԹ դարերում արաբական երկրներում (Սիրիա և Լիբանան) ապրող հայերի մշակութային կյանքի մասին հետաքրքրական տեղեկություններ ունի Ա. Կրիմսկին իր «Նոր արաբական գրականության պատմության»[254] մեջ: Այս բնագավառում շատ ավելի մեծ նշանակություն ունի Գ. Գրաֆի քրիստոնյա արաբների մատենագրության պատմության մեջ արաբագիր հայ մատենագիրներին հատկացված բաժինը[255]:

Ետպատերազմյան շրջանում կարևոր նորությունն այն է, որ Հայաստանի պատմության վերաբերյալ մի շարք նոր արաբերեն բնագրեր հրատարակվեցին: Վ. Մինորսկին կարողացավ ձեռք բերել երկու փոքր հատված Մունաջջիմ բաշիի (ԺԷ դար) «Ջամի ալ-տավարիխ» ծավալուն արաբերեն պատմությունից, որի ձեռագրերը փականքի տակ են Կոստանդնուպոլսում: Առաջինը Հայաստանին և արևելյան Անդրկովկասին վերաբերող մի հատված է, ուր խոսվում է Շադդադյանների մասին: Վ. Մինորսկին այն հրատարակեց բնագրով, անգլերեն թարգմանությամբ և լուրջ ուսումնասիրությամբ[256]: Երկրորդը վերաբերում է Շիրվանին (Շարվան) ու Դարբանդին և նույն սկզբունքներով է հրատարակված[257]: Նա անգլերեն թարգմանությամբ հրատարակեց Իբն ալ-Ազրակ ալ-Ֆարիկիի ձեռագրից հատվածներ, որոնց մի մասը լույս ընծայեց անգլիա-

[248] **Գ. Մըսրլեան**, Ականաւոր հայեր Եգիպտոսի մէջ, Կահիրե, 1947:

[249] **Ա. Ալպոյաճեան**, Արաբական միացեալ հանրապետութեան Եգիպտոսի նահանգը և հայերը, Կահիրե, 1960:

[250] **Ա. Սիւրմէեան**, Պատմութիւն Հալէպի հայոց, հ. Ա, Հալէպ, 1940, հ. Բ, Պէյրութ, 1946, հ. Գ, Փարիզ, 1950:

[251] **Սիսակ Վարժապետեան**, Հայերը Լիբանանի մէջ, Պէյրութ, 1951:

[252] **A. K. Sanjian**, The Armenian Communities in Syria under Ottoman Dominion, Cambridge,1965.

[253] *Արաբական աշխարհում կարևոր դեր կատարած հայ գործիչների, հայկական համայնքների և ընդհանրապես հայ-արաբական բազմաբնույթ կապերի պատմությանը մեծ տեղ է հատկացրել Նիկողայ Յովհաննիսյանը իր «Արաբական երկրների պատմություն» եռահատոր հիմնարար աշխատության մեջ, որի առաջին երկու հատորներն արդեն հրատարակված են: (Տես, Նիկողայ Յովհաննիսյան «Արաբական երկրների պատմություն», Երևան, հ. 1, 2003, հ. 2, 2004):*

[254] **А. Е. Крымский**, История новой арабской литературы, Москва, 1971.

[255] **G. Graf**, Geschichte der Christlichen Arabischen Literatur, Vatican, 1951,IV, S. 82-93.

[256] **V. Minorsky**, Studies in Caucasian History, London, 1953.

[257] **V. Minorsky**, A History of Sharvan and Darband, Cambridge, 1958.

կան արևելագիտական հանդեսում, իսկ այլ մասը Մունաջջիմ բաշիի վերոհիշյալ առաջին հատվածին նվիրված հատորում[258]: Վ. Մինորսկին մեշհեդյան կոչված հայտնի գրչագրից հրատարակեց Աբու Դուլաֆի (Ժ դար) աշխարհագրական երկը[259], ուր մատենագիրը հետաքրքրական տվյալներ է հաղորդում հայ եկեղեցական և աշխարհիկ երաժշտության ու սովորույթների մասին:

Կարևոր աշխատանք է կատարված նաև արաբերեն աղբյուրներից հայերեն թարգմանությունների ասպարեզում: Ա. Ադամյանը թարգմանել է հատվածներ Բալազուրիից և Յակուբիից[260]: Այս ասպարեզում հատկապես մեծ է Հ. Նալբանդյանի վաստակը, որը թարգմանել է Յակուտի (ԺԳ դ.) աշխարհագրական բառարանից, Աբու-լ-Ֆիդայի (ԺԴ դ.) պատմությունից և Իբն Շադդադի (ԺԳ դ.) «Սալաի ալ-Դինի կենսագրությունից» Հայաստանին և հայերին վերաբերյալ հատվածներ[261]: Ա. Տեր-Ղևոնդյանը թարգմանել է Մունաջջիմ Բաշիի այն հատվածը, որը վերաբերում է Դվինի ու Գանձակի Շադդադյաններին[262], ալ-Ֆարիկիից մինչ այժմ հրատարակված հատվածները[263] և Իբն ալ-Ասիրի երկերը «Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին» մատենաշարում, որտեղ հրատարակվել է նաև Հ. Նալբանդյանի վերոհիշյալ հատորը:

Արաբական աղբյուրների տեղեկությունների լայն ընդգրկումով են գրված Մ. Կանարի (1882-1982) Վերին Միջագետքի ու Սիրիայի Համդանյանների և Հայաստանի հարաբերություններին նվիրված աշխատությունները[264] և բազմաթիվ հայագիտական թեքումով կամ նրան առնչվող հոդվածները: Հիշատակության արժանի են նրա հոդվածները

[258] **V. Minorsky**, Caucasica in the History of Mayyafariqin, Bulletin of the School of Oriental and African Studies, XIII, 1949. Idem, Studies in Caucasian History, London, 1953, p. 86-99.

[259] **"Abu Dulaf Misar ibn Muhalhil's** Travels in Iran (circa A. D. 950), Arabic text", trans., comm., by **V. Minorsky**, Cairo, 1955.

[260] **Ա. Ադամեան, Պելատիորի** Արաբ պատմագիրը և հայերը, Բազմավէպ, 1953, էջ 77-82, 130-134: Նույնի, **Եակուբի** արաբ պատմագիր և հայերը, Բազմավէպ, 1957, էջ 153-159, 207-212, 262-266:1958, էջ 96-104:

[261] Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին, կազմեց **Հ. Թ. Նալբանդյան**, Երևան, 1965:

[262] **Ա. Տեր-Ղևոնդյան**, Մունաջջիմ Բաշիի 11-12-րդ դարերի անանուն աղբյուրը Դվինի և Գանձակի Շադդադյանների մասին, Բանբեր Մատենադարանի, 1962, 6, էջ 471-486: *Տես նաև* ***Ա. Տեր-Ղևոնդյան***, *Հոդվածների ժողովածու, էջ 70-85:*

[263] **Ա. Տեր-Ղևոնդյան**, Ֆարիկիի «Սփրկերտի պատմությունը» (12-րդ դար) Հյուսիսային Հայաստանի դեպքերի մասին, «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», Երևան, 6, Արաբական երկրներ, 1974, էջ 195-212: *Տես նաև* ***Ա. Տեր-Ղևոնդյան***, *Հոդվածների ժողովածու, էջ 266-283:*

[264] **M. Canard**, Les Hamdanides et l'Arménie, Annales de l'Inst. d'Et. Or., Alger, VII, 1948, Histoire de la dynastie des Hamdanides de Jazira et de Syrie, Paris, 1951.

Ֆաթիմյան Եգիպտոսի հայ վեզիրների և հատկապես Վահրամ Պահլավունու մասին[265]: Նույն բնույթի են Հ. Նալբանդյանի Հայաստանում արաբների հարկային քաղաքականության[266] և ոստիկանների մասին[267] հոդվածները, Ա. Տեր-Ղևոնդյանի «Արաբական ամիրությունները Բագրատունյաց Հայաստանում»[268] և «Հայաստանն ու արաբական խալիֆայությունը»[269] մենագրությունները և արաբ հեղինակ Ադիբ ալ-Սայյիդի «Հայաստանը արաբների պատմության մեջ» աշխատությունը[270]: Հայ-արաբական քաղաքական առնչությունների ուսումնասիրման համար կարևոր է Գ. Միքայելյանի մենագրությունը Կիլիկյան Հայաստանի պատմության մասին[271]:

Այս շրջանում շատեր զբաղվեցին հայ-արաբական մշակութային առնչություններով: Ս. Ճեվահիրճյանը արաբամահմեդական ճարտարապետության մեջ տեսնում է բյուզանդահայկական ազդեցություն, որն ընդունված է նաև այլ ուսումնասիրողների կողմից: Հայ ճարտարապետների դերը Եգիպտոսի Ֆաթիմյան շրջանի ճարտարապետության մեջ ընդգծում է նաև Ա. Օրագյանը:

Արաբական տաղաչափությանը և նշանավոր արաբ բանաստեղծ Մուտանաբբիին քաջ ծանոթ է եղել հայ մեծանուն մատենագիր Գրիգոր Մագիստրոս Պահլավունին, որը նշում է, թե նախ բազում ջանքեր թափելով սովորել է արաբների գիրն ու լեզուն և ապա տաղաչափական արվեստը, որին անդրադարձել է Բաբկեն Չուգասըզյանը: Պահլավունի իշխանը անձնական կապեր է ունեցել արաբ ամիրների (Մանուչե, Իբրահիմ) հետ և սրանց նամակագրությանն է անդրադարձել Հ. Թորոսյանը:

Կարևոր է հայերենում գտնվող արաբական փոխառությունների հարցը, որով առաջին անգամ զբաղվել է Հ. Հյուբշմանը[272]: Մեծանուն հայագետ Հ. Աճառյանն իր հայերենի պատմությանը նվիրված մենա-

[265] **M. Canard,** Un vizir chrétien a l'époque fatimide: l'Arménien Bahram, Annales de l'Institut d'Etudes Orientales, t. XII, Alger, 1954.

[266] **Հ. Նալբանդյան**, Արաբների հարկային քաղաքականությունը Հայաստանում, ԳԱ Տեղեկագիր (հասարակական գիտությունների),1956, 12:

[267] **Հ. Նալբանդյան,** Արաբ ոստիկանները Հայաստանում, ԳԱ Տեղեկագիր (հասարակական գիտությունների),1958, 8:

[268] **Ա. Տեր-Ղևոնդյան**, Արաբական ամիրայությունները Բագրատունյաց Հայաստանում, Երևան, 1965:

[269] **А. Н. Тер-Гевондян,** Армения и Арабский халифат, Ереван, 1977.

[270] **Adib al-Sayyid,** Arminiya fi l-Tarikh al-Arabi, Halab, 1972.

[271] **Г. Г. Микаелян,** История Киликийского армянского государства, Ереван, 1952.

[272] **H. Hübschmann,** Die semitischen Lehnwörter im Armenischen, Zeitschrift der Deutschen Morgenlandischen Geselschaft, 1892.

գրության[273] մեջ հատուկ գլուխ է հատկացրել արաբական փոխառություններին, որոնց թիվը հասնում է 702-ի: Այս հարցին անդրադարձել են նաև Մ. Մուրադյանը և Ն. Մկրտչյանը[274]:

Միջնադարյան հայ պատմագրությունը հարուստ տեղեկություններ ունի արաբների պատմության մասին, հատկապես Օմայան, Աբբասյան խալիֆայությունների և Եգիպտոսի սուլթանության մասին: Հատկապես կարևոր են պատմիչների տեղեկությունները Մուհամմադի կյանքի և գործունեության մասին, որի մատենագիտությունը տրված է Ա. Տեր-Ղևոնդյանի կողմից[275]:

Ա. Դարյանն իր բովանդակալից գրքույկով[276] փորձեց ի մի բերել հայ-արաբական միջնադարյան առնչություններին վերաբերող նյութերը: Կարևոր հայտնագործություն է այն, որ Ժ դարի արաբական Իխուան ալ-Սաֆայի (մաքրության եղբայրներ) «Թղթեր» կոչված հանրագիտարանից որոշ մասեր ԺԳ դարի հայ ականավոր մատենագիր Հովհաննես պլուզ Երզնկացին հայերեն է թարգմանել: Այդ մասին հետաքրքրական հոդված հրապարակեց Ս. Պարսումյան-Տատոյանը[277]:

Վերջին տարիներին լույս ընծայվեցին բնագրեր, որոնք կարևոր նյութ են պարունակում գիտական առնչությունների վերաբերյալ: Հայ բժշկության մասին իր պրպտումների ընթացքում Ս. Վարդանյանը լույս ընծայեց Աբու Սահդի մարդակազմությունը, որն ունի արաբական փոխառություններ և Իշոխի գիրքը բնության մասին[278], ուր ակներև է առնչությունը արաբական մշակույթին: Հատկապես հետաքրքրական է արաբ աշխարհագրության մեջ հայտնի 7 կլիմաների (կամ կլիմ) հիշատակումը: Իր տեսակի մեջ առաջինն է Բ. Չուգասըզյանի լույս ընծայած ձիաբուծության կարևոր երկը[279], որն առնչվում է արաբական ձիաբուծությանը, բայց հայ հեղինակների գործ է, շարադրված Կիլիկյան Հայաստանում:

«Հազար ու մի գիշեր» արաբական ժողովածուի մաս կազմող և միջ-

[273] **Հ. Աճառյան,** Հայոց լեզվի պատմություն, մ. 2, Երևան, 1951:

[274] *Տե՛ս, Н. Мкртчян, Семитские языки и армянский, Ереван, 2005.*

[275] **A. Ter-Ghevondian,** Auteurs arméniens chrétiens, Bibliographie du dialogue islamo-chrétien, Islamochristiana, 6, Roma, 1980, p. 279-287.

[276] **Ա. Դարեան,** Ակնարկ հայ-արաբ մշակութային կապերուն վրայ, Պէյրութ, 1972:

[277] **Ս. Պարսումեան-Տատոյեան**, Յովհաննէս Պլուզ Երզնկացիի «Ի Տաճկաց Իմաստասիրաց Գրոց քաղեալ Բանք»ին Աղբիւրը՝ «Բասա'էլ Իխուան Ալ-Սաֆա», Հայկազեան Հայագիտական Հանդէս, Պէյրութ, հ. Զ, 1977-1978, էջ 51-70:

[278] **Իշոխ**, Գիրք ի վերայ բնութեան, քննական բնագիրը, թարգմ. գրաբարից ռուսերեն և առաջաբանը՝ **Ս. Վարդանյանի**, Երևան, 1979:

[279] Բժշկարան ձիոյ և առհասարակ գրաստնոյ, ԺԳ դար, աշխ. **Բ. Լ. Չուգասըզյանի**, Երևան, 1980:

նադարյան հայ արձակի մեջ հայտնի «Պղնձե քաղաքի պատմությունը» գրույցի թարգմանության ժամանակի հարցը նոր մեկնաբանություն ստացավ Ն. Ակինյանի կողմից իր հայտնաբերած բնագրի ուսումնասիրման հիման վրա[280]:

Հ. Անասյանի «Հայկական մատենագիտություն» կոչված հայագիտական ծոխ հանրագիտարանում նշված են միջնադարից հասած բնագրեր, որոնք առնչվում են հայ-արաբական բանասիրության բնագավառին, ինչպես՝ Ախրապատին, Աղավետ (ախտարական), Աղեկախոս (երազահան) և այլ նյութեր[281], դրանք կարոտ են ուսումնասիրման:

Բավական հաջողություններ արձանագրվեցին դրամագիտության բնագավառում: Ա. Բիկովը 330 (941/942) հիջրի թվականին Դվինում թողարկված մի արաբատառ դրամի ուսումնասիրման միջոցով ճշտումներ կատարեց Դվինի և Բագրատունյաց Հայաստանի պատմության որոշ հարցերում:

Կիլիկյան Հայաստանի թագավոր Հեթում Ա-ի (1226-1269) երկլեզվյան (հայերեն-արաբերեն) դրամներին (Հեթում-Քայկուբադ, Հեթում-Քայխոսրով), որոնք Սիս մայրաքաղաքում են թողարկված, շատերն են (ինչպես Վ. Լանգլուա) անդրադարձել: Վերջերս այդ հարցով զբաղվեցին Պ. Պտուկյանը և հատկապես Պ. Սապպաղյանը[282]: Վերջինս ապացուցում է, որ ճիշտ չէ նախորդ ուսումնասիրողներից ոմանց կարծիքը, թե այդ դրամների առկայությունն արդյունք է նրա կախմանը Իկոնիայի սուլթանությունից: Նա զարգացնում է Կ. Սիպիլյանի[283] այն դրույթը, թե դրամները երկու լեզվով են թողարկված առևտրական հարաբերությունների աշխուժացման նպատակով:

Հայաստանի վերաբերյալ արաբական դրամների ուսումնասիրման ասպարեզում մեծ վաստակ ունի Խ. Մուշեղյանը, որի «Դվինի դրամական շրջանառությունը դրամագիտական տվյալներով» (ռուսերեն) մենագրությունը[284] հարուստ նյութեր է պարունակում Հայաստանի պատ-

[280] **Ն. Ակինեան**, Զրոյց Պղնձէ քաղաքի, Հանդէս ամսօրեայ, Վիեննա, 1958, 1-4: *Տես նաև* ***Հ. Մկրտչյան,*** *Արաբական գեղարվեստական արձակի նմուշների հայ միջնադարյան թարգմանությունները, Երևան, 1998:*

[281] **Հ. Անասյան**, Հայկական մատենագիտություն, Երևան, հ. Ա, 1959, հ. Բ, 1976:

[282] **Պ. Սապպաղեան**, Հեթում Ա-ի Հեթում-Քապել և երկլեզուեան դրամներու մասին, Հայկազեան հայագիտական հանդէս, հ. Ը, Պէյրութ,1980: Տես նաև նույն հեղինակի հոդվածների ժողովածուն՝ **Պ. Սապպաղեան**, Դրամագիտական հարցեր, Պէյրութ,1986:

[283] **Կ. Սիպիլեան**, Դասաւորութիւն Ռուբէնեան դրամոց, Վիեննա, 1892, Հավելված, էջ 19-20:

[284] **Х. А. Мушегян**, Денежное обращение Двина по нумизматическим данным, Ереван, 1962.

մության տարբեր շրջանների մասին: Արժեքավոր է նրա ծավալուն հոդվածը Արմինիա նահանգում Աբբասյան շրջանում թողարկված դրամների մասին[285] և Հավելվածը, որի նյութերի հիման վրա Ա. Տեր-Ղևոնդյանը կազմեց Արմինիայի կառավարիչների (ոստիկանների) նոր ցուցակը[286]:

Պ. Սապպաղյանը իր «Հայ-արաբական դրամագիտության մի քանի հարցերու շուրջը» ծավալուն հոդվածում[287] ընդգծելով նոր հրատարակված դրամագիտական աշխատությունների նշանակությունը (Խ. Մուշեղյան) միաժամանակ մեջ է բերում Արմինիայում թողարկված և մինչ այդ անհայտ մնացած դրամների լրացուցիչ ցուցակը (26 դրամ):

Հետաքրքրական աշխատանքներ են կատարվել նաև վիմագրության ասպարեզում: Վ. Ա. Կրաչկովսկայան հրատարակեց Ն. Մառի Անիում կատարած պեղումների ընթացքում հայտնաբերված մի արաբերեն արձանագրություն (քուֆի գրածևով), որը գտնվել է Անիի միջնաբերդի դռան վերևում և գրված է ԺԲ դարում Շադդադյանների կողմից: Դեռևս 1935 թվականին Ն. Մառի հիշատակին նվիրված ժողովածուի մեջ Ի. Յու. Կրաչկովսկին և նա հրատարակել էին մի հոդված Մանուչեի մզկիթի (աշտարակի) վրա Մանուչեի արաբերեն արձանագրության մասին[288]: Հ. Փափազյանը լույս ընծայեց Արաքսի հովտում իշխող Փիր Հուսայնի 1413 թ. արձանագրությունը դամբարանի վրա, ուր գուցե նրա հայրը՝ ամիր Սաադն է թաղված[289]:

Միջնադարում արաբերենը եղել է միջազգային լեզու և պատահական չէ, որ մեզ են հասել հայ տիրակալների թողած արաբերեն արձանագրություններ: Հայոց արքա Սմբատ Բ (977-990) Բագրատունին Հաղբատի վանքի Ս. Նշան եկեղեցու գմբեթի վրա գտնվող իր քանդակի ապարոշին փորագրել է տվել իր տիտղոսը «Շահնշահ Անիի թագավոր»[290], իսկ Հյուսիսային Հայաստանի իշխանապետության տիրա-

[285] **Խ. Մուշեղյան**, Աբբասյան դրամների թողարկումը Արմինիա նահանգում, VIII-IX դարերում, Պատմաբանասիրական հանդես, 1973, 4 :

[286] **Ա. Տեր-Ղևոնդյան**, Արմինիայի ոստիկանների ժամանակագրությունը, Պատմաբանասիրական հանդես, 1977, 1, էջ 117-128:

[287] **Պ. Սապպաղեան**, Հայ-արաբական դրամագիտութեան մէկ քանի հարցերու շուրջը, «Հայկազեան հայագիտական հանդէս», հ. Ե, Պէյրութ, 1974, էջ 161-181:

[288] **В. А. Крачковская, И. Ю. Крачковский**, Из арабской эпиграфики в Ани (надпись на мечети Манучехра), "АН СССР — академику Н. Я. Марру", Москва-Ленинград, 1935.

[289] **А. Д. Папазян**, Арабская надпись на гробнице туркменских эмиров в селе Аргаванд, "Ближний и Средний Восток", Москва, 1962.

[290] **Ա. Տեր-Ղևոնդյան**, Հաղբատի արաբերեն արձանագրությունը և Բագրատունի թագավորների տիտղոսները, «Լրաբեր հասարակական գիտությունների», 1979, 1, էջ 73-80: *Տես նաև* ***Ա. Տեր-Ղևոնդյան,*** *Հոդվածների ժողովածու, Երևան, 2003, էջ 436-443:*

կալներ Զաքարիան և Իվանեն Անբերդ ամրոցի ազատագրումից (1196) հետո արաբերեն արձանագրություն են թողել «Ամիրսպասալար Զաքարիա, Իվանա Արծրունի» բովանդակությամբ[291]:

Երկու արձանագրություն է հրատարակել Ա. Խաչատրյանը Թալինում Շադդադյանների թողած 570 (1174) հիջրի թվականի արձանագրությունը[292] և այն եռալեզու (արաբերեն, պարսկերեն, հայերեն) վիմագիր գրվածքը, որ գտնվում է Եղեգիսում[293]:

Վերջապես կուզենայինք հիշել «Իսլամի հանրագիտարանի» թե առաջին, թե երկրորդ հրատարակության մեջ Հայաստանին վերաբերող հոդվածները: Առաջին հրատարակության մեջ, բացի Մ. Շտրեքի «Հայաստան» ծավալուն գրվածքից, հոդվածների մի ամբողջ շարք ունի Վ. Բարթոլդը միջնադարյան Հայաստանի քաղաքների մասին: Նոր հրատարակության մեջ Մ. Կանարն ունի «Արմինիա» ծավալուն հոդվածը[294] և բազմաթիվ այլ հոդվածներ (Բահրամ ալ-Արմանի՝ Վահրամ Պահլավունի և այլն):

Դեռևս անցյալ դարի վերջից սկսել են հրատարակվել հայերեն-արաբերեն և արաբերեն-հայերեն բառարաններ: Ս. Դարբինյանը 1896 թվականին Կահիրեում լույս է ընծայում հայերեն-արաբերեն բառարան, ուր արաբերեն բառերը հայատառ են գրված: Ապա երկար ընդմիջումից հետո հիսնական թվականներին հալեպում լույս են տեսնում մի քանի բառարաններ դարձյալ հայերեն-արաբերեն Հ. Նազարյան, Հ. Հովսեփյան և այլոց (Հ. Շատ, Ա. Մաթար) և Բ. Չաթոյանի աշխատությունները: Հատկանշական է, որ փոխանակ սկսելու արաբերեն-հայերեն բառարաններով, առաջին հեղինակները կազմում են հայերեն-արաբերեն բառգրքեր, հավանաբար արաբական երկրներում հաստատված հայությանը արաբերեն արտահայտվելու հարցում օգնելու նպատակով:

Նույն ժամանակ արդեն արաբերեն-հայերեն բառարաններ են հրատարակվում Բեյրութում Հ. Թովմասյանի «Մշակ» մատենաշարի և Ժ. Թազպազյանի կողմից: Վերջինս կազմում է նաև հայերեն-արաբերեն

[291] **Ա. Տեր-Ղևոնդյան,** Չաքարիայի և Իվանեի արաբատառ արձանագրությունը Անբերդում, «Պատմաբանասիրական հանդես», 1971, 1, էջ 185-187: *Տե՛ս նաև* ***Ա. Տեր-Ղևոնդյան,*** *Հոդվածների ժողովածու, Երևան, 2003, էջ 206-208:*

[292] **А. А. Хачатрян,** Нижнеталинская арабская надпись 570/1174 г., «Պատմաբանասիրական հանդես», 1979, 4.

[293] **А. А. Хачатрян,** Трехъязычная надпись из Елегиса, Кавказ и Византия, вып. 3, Ереван, 1982. Տես նաև **А. А. Хачатрян,** Корпус арабских надписей Армении, VIII-XVI вв., вып. 1, Ереван, 1987. *Տե՛ս նաև* ***А. А. Хачатрян,*** *Корпус арабских надписей Армении VIII — XVI вв., вып. I, Ереван, 1987:*

[294] ***M. Canard,*** *Arminiya (I:634a), Encyclopaedia of Islam, CD-ROM edition.*

բառարան: Այս բոլորի մեջ հատկապես աչքի են ընկնում Ժ. Թազպազյանի բառարանները: Երևանում կազմվել է նաև Ս. Չուլճյանի և Հ. Սարգսյանի արաբերեն-հայերեն բառարանը, որը լույս է տեսել Բեյրութում:

Մեր օրերում Երևանում հրատարակվել են[295] արաբերեն և արաբատառ բնագրեր, որոնցից հատկապես պետք է հիշատակել Հ. Փափազյանի հրատարակած Մատենադարանի պարսկերեն վավերագրերի շարքը[296], որոնց մեջ կան հենց արաբերեն գրված վավերագրեր և կամ լրիվ արաբերեն տողեր պարսկերեն վավերագրերի մեջ: Որպես արաբերեն բնագրերի հրատարակություն կարելի է նշել Ա. Տեր-Ղևոնդյանի վերոհիշյալ Ագաթանգեղոսի ամբողջական բնագրի միջնադարյան արաբերեն թարգմանությունը[297] և Հ. Ժամկոչյանի՝ Իբն ալ-Ֆակիհի (Թ դար) աշխարհագրական երկի ընդարձակ խմբագրության որոշ հատվածների լույս ընծայումը, ըստ մեշհեդյան ձեռագրի[298]:

Հայ-արաբական բանասիրությունը, որպես հայագիտության օժանդակ ճյուղերից մեկը, դեռ կարող է օրըստօրե զարգանալ, քանզի արաբագիտության և հայագիտության ընդհանուր առաջընթացին առընթեր բնականաբար պետք է առավել ևս ուսումնասիրվեն այս երկու բնագավառներին առնչվող հարցերը:

[295] *Արամ Տեր-Ղևոնդյանը այս գրքի ներածությունը գրել է 1980-ականների կեսերին, ուստի, բնականաբար, այստեղ ընդգրկված չեն վերջին քսանամյակում հրատարակված ուսումնասիրությունները: Մեր կողմից փորձել ենք որոշ մասնակի լրացումներ կատարել, որոնք տպված են շեղատառերով (կազմողի կողմից):*

[296] Մատենադարանի պարսկերեն վավերագրերը, Հրովարտակներ, պրակ Ա (ԺԵ-ԺՁ դդ.), կազմեց **Հ. Դ. Փափազյան,** Երևան, 1958, պրակ Բ, Երևան, 1959:
Մատենադարանի պարսկերեն վավերագրերը, Կալվածագրեր, պրակ Ա, կազմեց **Հ. Դ. Փափազյան,** Երևան, 1968:

[297] **Ա. Տեր-Ղևոնդյան**, Ագաթանգեղոսի արաբական նոր խմբագրությունը, Երևան, 1968: Նույնի, Ագաթանգեղոսի արաբական խմբագրության (Վարք) նորահայտ ամբողջական բնագիրը, «Պատմաբանասիրական հանդես», 1, 1973: *Տե՛ս նաև* ***Ա. Տեր-Ղևոնդյան,*** *Հոդվածների ժողովածու, Երևան, 2003, էջ 237-265:*

[298] **Ибн ал-Факих, Ахбар ал-Булдан** (Известия о странах), Введение, перевод с арабского, издание текста и комментарии А. С. Жамкочяна, Ереван, 1979.

ԲՆԱԳՐԵՐ

Թ ԴԱՐԻ ՊԱՏՄԻՉՆԵՐ

ԱԲՈՒ ՅՈՒՍՈՒՖ (731 – 798)

Յակուբ իբն Իբրահիմ ալ-Անսարի ալ-Քուֆի Աբու Յուսուֆը ականավոր կրոնական իրավագետ էր, Հանիֆիական կրոնա-իրավագիտական դպրոցի (մադհաբի) հիմնադիրներից մեկը: Նա ուսանել է Քուֆայում ու Մադինայում, որտեղ նրա ուսուցիչներն են եղել Աբու Հանիֆան, Մալիք իբն Անասը, ալ-Լայս իբն Սաադը և ուրիշներ: Հետագայում ապրել է Քուֆայում, մինչև որ դատավոր նշանակվեց Բաղդադում, որտեղ նա վարեց այդ պաշտոնը մինչև իր մահը՝ 798 թվականին: Տեղեկություն կա, որ նա իր կյանքի ընթացքում այցելել է նաև Բասրա քաղաքը: Աբու Յուսուֆը ժամանակի ընթացքում դարձավ Հարուն ալ-Ռաշիդ խալիֆայի մերձավոր և վստահելի անձանցից մեկը, այն աստիճան, որ խալիֆան, իսլամի պատմության մեջ առաջին անգամ, նրան չնորհեց Դատավորաց դատավոր (կադի լ-կուդատ) կոչումը: Սա մի պատվավոր տիտղոս էր և որևէ կոնկրետ փունկցիա չէր նախատեսում: Միաժամանակ հատկանշական է, որ Հարուն ալ-Ռաշիդը նրա հետ խորհրդակցում էր ոչ միայն մահմեդական իրավունքի, այլև ֆինանսական քաղաքականության և նման այլ հարցերում: Ավելին, նրա հետ քննարկում էր խալիֆայության տարբեր մասերում դատավորների նշանակման հարցը:

Հարուն ալ-Ռաշիդի գլխավոր դատավոր Աբու Յուսուֆի «Հարկերի մատյանը» (Քիտաբ ալ-Խարաջ) կազմվել է խալիֆայի պատվերով: Այս երկը իր անվանումից ավելի լայն ընդգրկում ունի, քանի որ անդրադառնում է ողջ կառավարման ոլորտին՝ ջրային իրավունքից մինչև ռազմական գործը:

Ներկա թարգմանությունը կատարված է հետևյալ հրատարակությունից. Abu Yusuf, Kitab al-Kharaj, Cairo, 1302/1885. (Abu Yusuf, J. Schacht, EOI, CD-ROM, (I: 164a), Х. А. Р. Гибб, Арабская литература, Москва, 1960, стр. 43)

Տե՛ս նաև. - Edmond Fagnan, Livre de l' impôt foncier, Paris, P. Geuthner, 1921, 352 p. Абу Йусуф, Китаб ал-Харадж, С-Пб, 2001, 399 с.

ԱԲՈՒ ՅՈՒՍՈՒՖ

ՀԱՐԿԵՐԻ ՄԱՏՅԱՆ (ՔԻՏԱԲ ԱԼ-ԽԱՐԱՋ)

ԳԼՈՒԽ ԵԿԱՄՈՒՏԻ (ԱՎԱՐ) ՈՒ ՀՈՂԱՀԱՐԿԻ (ԽԱՐԱՋ) ՄԱՍԻՆ

ՀՋ 13-15

Հարցրել են Բիլալն ու իր բարեկամները Օմար իբն ալ-Խաթթաբ[1] [խալիֆայից], թե արդյոք պետք չէ՞ բաժանել այն, ինչ Ալլահը որպես նկամուտ (ավար) տվել է մահմեդականներին Իրաքում և Ասորիքում (Շամ) և մեր հողը չպե՞տք է բաժանել [որպես սեփականություն] նվաճողների միջև, ինչպես բաժանվում է զորքի ռազմավարը: Օմարն այդ բանը մերժեց և ասաց՝ Ալլահը ձեղանից հետո [սերունդներին] էլ է մասնակից դարձրել այդ նկամուտին, ու եթե հողը բաժանեմ, ձեզանից հետո նկողներին ոչինչ չի մնա, իսկ եթե հողերը մնան ինչպես որ կան, նույնիսկ [հետավոր] Սանաայի[2] հովիվը իր բաժինը կունենա այդ նկամուտից առանց դրա համար կարմրելու:*

Ինձ պատմել են մեր շեյխերից (ծերունիներից) ոմանք լսելով եղիդ իբն Աբու Հաբիբից, թե Օմարը գրել է Սաադ [իբն Աբու Վակկասին], երբ նվաճել էր Իրաքը, ասելով՝ ստացել եմ քո նամակը, որի մեջ հարցնում ես իմ կարծիքն այն մասին, թե մարդիկ (զորականները) խնդրել են քեզ, որ հողը բաժանես նրանց միջև որպես ռազմավար, քանի որ Ալլահն այն տվել է իբրև նկամուտ: Երբ ստանաս նամակս, թե ինչքան անասուն (մալ) ու հարստություն է հավաքվել ճամբարում և բաժանիր կովի մասնակիցների միջև: Սակայն Հողերն ու գետերը (ջրերը) թող մշակողների ձեռքում, որպեսզի մահմեդականների համար հասույթ ստանան: Եթե դու [հողերը] բաժանես կովի մասնակիցներին, ապա հետագա սերնդին ոչինչ չի մնա:

Ինձ պատմել են Մադինա[3] քաղաքի մեկից ավելի գիտուններ, թե երբ Սաադ իբն Աբու Վակկասի ղեկավարած Իրաքի զորքից [ներկայացուցիչներ] եկան Օմար իբն ալ-Խաթթաբի մոտ, վերջինս խորհրդակցեց Մուհամմադի[4] մտերիմների հետ դիվաններ կազմակերպելու ու հողը բաժանելու հարցերի շուրջը, քանզի Ալլահը որպես նկամուտ մահմեդականներին տվել էր Իրաքն ու Ասորիքը: Մարդիկ

* *Խոսքը Ֆայի մասին է:*

այդ մասին խոսեցին ու կամեցան, որ իրենց իրավունքը, այսինքն նվաճված հողերը բաժանվեն ու տրվեն [իբրև սեփականություն]: Սակայն Օմարն ասաց՝ իսկ ինչ կլինի մահմեդականների եկող [սերունդների] վիճակը, չէ որ նրանք կտեսնեն, որ հողն իր գեղջուկներով (ուլուջ) բաժանվել է, դարձել սերնդե սերունդ ժառանգական սեփականություն: Սա սխալ կարծիք է: Հարցրեց Աբդ ալ-Ռահման իբն Աուֆը՝ իսկ ո՞րն է ճիշտ կարծիքը՝ չէ որ Ալլահը որպես նկամուտ տվել է նրանց (նվաճողներին) այդ հողն իր գեղջուկներով: Պատասխանել է Օմարը՝ այնպես չէ, ինչպես ասում ես, համաձայն չեմ, Ալլահը վկա, որ ինձանից հետո հաղիվ թե նվաճվեն այնպիսի երկրներ, որ մեծ հարստություն ունենն, նույնիսկ գուցե նվաճվեն երկրներ, որոնք մահմեդականների վրա բեռ կլինեն: Եթե բաժանեմ Ասորիքի ու Իրաքի հողերը իրենց գեղջուկներով, ապա ինչպես կարելի կլինի ապահովել սահմանային ամրությունների (սուղուր)[5] ծախսերը և ոչինչ չի մնա հաջորդ սերնդին, այրիներին այս երկրում, ինչպես նաև Ասորիքում և Իրաքում:

Իսկ նրանք (զորականները) մեղադրեցին Օմարին ասելով, թե զրկում ես մեզ այն նկամուտից, որն Ալլահը հնարավորություն է տվել նվաճել մեր սրերով և դա այնպիսի մարդկանց օգտին է, որոնք ոչ մասնակցել են կռիվներին, ոչ տեսել և նրանց որդիներն ու թոռները նույնպես չեն մասնակցել:

Ասաց (Օմարը)՝ լսեցիք այս մարդկանց խոսքը, թե անիրավություն եմ արել, իսկ ինձ Ալլահը թող թույլ չտա որ անիրավություն գործեմ: Ես դժբախտ կլինեմ, եթե անիրավությամբ մեկի ունեցվածքը մյուսին տամ: Սակայն ես գտնում եմ, որ այլևս ոչինչ չի մնում նվաճելու Խոսրովի[6] (Քիսրա) հողերը գրավելուց հետո: Ալլահը մեզ ավար է տվել նրա ունեցվածքը, հողերն և գեղջուկները: Ավար ընկած ունեցվածքը ես բաժանեցի մարդկանց (ռազմիկներին)՝ ինձ վերցնելով մեկ հինգերորդը: Բայց հողերը իրենց գեղջուկներով որոշեցի թողնել, նրանց վրա հողահարկ (խարաջ) նշանակելով, իսկ նրանց վզին՝ գլխահարկ (ջիզիա), որը պարտավոր են վճարել: Այսպիսով, այդ հողերը կդառնան նկամուտի աղբյուր մահմեդականների թե՛ ռազմիկների, թե՛ որդիների ու նրանցից հետո նկողների համար: Ձե՞ք տեսնում, որ սահմանային ամրությունները կարիք ունեն ռազմիկների, որպեսզի այնտեղ հաստատվեն: Ձե՞ք մտածում, որ այս խոշոր քաղաքները (երկրները), ինչպես Ասորիքը, Վերին Միջագետքը (Ջազիրա), Քուֆան, Բասրան ու Եգիպտոսը կարիք ունեն, որ այնտեղ զորք կուտակվի և ապահովվի ռոճիկներով: Որտեղի՞ց կարելի կլինի այդ բոլորը հասցնել, եթե հողերն ու գեղջուկները բաժանվեն: Ամենքը միաբերան ասացին՝ ճիշտ է քո կարծիքը:

ՊԱՏԵՐԱԶՄԻ ԵՐԿՐԻ ԺՈՂՈՎՐԴԻ (ԱՀԼ ԱԼ-ՀԱՐԲ) ԵՎ ԱՆԱՊԱՏԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ՄԱՍԻՆ, ՈՐՈՆՔ ՍԱՀՄԵԴԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՆ ԸՆԴՈՒՆՈՒՄ ՊԱՀՊԱՆԵԼՈՒ ՀՈՂԵՐԸ ԵՎ ՈՒՆԵՑՎԱԾՔԸ

ԷՋ 35–36

Հարցրել ես ով իշխանդ Հավատացելոց[7], պատերազմի երկրի մարդկանց մասին, որոնք ընդունել են մահմեդականությունը իրենց անձերը, հողերը պահպանելու պայմանով և թե ինչ է օրենքն այդ մասին:

Նրանց կյանքը երաշխավորված է, իսկ այն ինչ ունեցել են նախքան մահմեդականանալը, ինչպես ունեցվածքը, ապա իրենցն է, նույնպես և հողերն իրենց [սեփականությունն] են և դա տասանորդ[8] վճարող հող է:*

Նույնը և անապատի բնակիչների (բդեախ) մասին, որոնք մահմեդականությունն ընդունելով պահպանում են իրենց ջրերը, երկիրը, որը մնում է որպես նրանց [սեփականությունը]: Նրանց հողը նույնպես տասանորդային հող է (արդ ուշր), որից նրանց չի կարելի հեռացնել և նրանք կարող են այն ժառանգել և պայմանագրով վաճառել: Այսպես է նաև ամեն մի երկիր, որի ժողովուրդը մահմեդականացել է և իր ամեն ունեցածը [սեփականություն] է:

Իսկ ամեն մի հեթանոս (չիրք)[9] ժողովուրդ, որի հետ իմամը (խալիֆան) հաշտության պայմանագիր է կնքել առ այն, որ ընդունելով նրա իշխանությունը և բաժանումները վճարի հողահարկ (խարաջ), ապա դրանք [այդ ժողովրդին պատկանող մարդիկ] զիմմեր (հովանավորյալներ) են[10], (ահլ զիմմա), իսկ նրանց հողը հողահարկային (արդ խարաջ) է, նրանցից [հարկ] կվերցվի այնքան, ինչքան որ հաշտության պայմանագրում նշված է, սակայն դա պետք է կատարվի բարեխղճորեն, առանց ծանրաբեռնելու ավելի քան որոշված է:

Ամեն մի հող, որ իմամը բռնի ուժով գրավել է, կարող է բաժանել նվաճող ռազմիկների միջև: Դա կանի ըստ իր ցանկության և նա իրավասու է: Այդ հողը կկոչվի տասանորդային հող (արդ ուշր): Սակայն եթե չկամեցավ բաժանել այդ հողը և հարմար գտավ այն թողնել [ոչ մահմեդական] տեղական ժողովրդի ձեռքում, ինչպես արեց Օմար իբն ալ-Խաթթաբը Սավադում[11], ապա նա իրավունք ունի այդպես վարվելու: Դա կլինի հողահարկային հող և դրանից հետո չպետք է հետ վերցնի նրանցից: Դա նրանց սեփականությունն (մուլք)[12] է, որը նրանք կժառանգեն և կամ պայմանագրով կվաճառեն: Նրանց վրա հողահարկ է դրվում, և ավելին, որը նրանց ուժից վեր է, չպետք է պահանջվի:

* Համաձայն իսլամական օրենքի հողը պատկանում է Ալլահին, իսկ մարդկանց այն տրվում է օգտագործելու համար:

ՏԱՍԱՆՈՐԴԱՑԻՆ ՀՈՂԻ (ԱՐԴ ԱԼ-ՈՒՇՐ) ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՀՈՂԱՀԱՐԿԱՑԻՆ ՀՈՂԻՑ (ԱՐԴ ԱԼ-ԽԱՐԱՋ)

ԷՋ 39

Իսկ ինչ վերաբերում է քո այն հարցին, ով իշխանդ հավատացելոց, թե ինչպիսին է սահմանը (տարբերությունը) տասանորդային հողի ու հողահարկային հողի միջև, ապա պետք է ասեմ, որ ամեն մի հող, որի ժողովուրդը նրա վրա մահմեդականացել է, լինի արաբների հող, թե օտարների (ոչ արաբներ – աջամ), դա նրանցն է և տասանորդային հող է, ինչպես Մադինան, երբ մահմեդականությունն ընդունեց այդ նպատակով, և եմենը, ինչպես նաև ամեն մեկը, որից չի կարելի գլխահարկ պահանջել և միայն պետք է ընդունի մահմեդականությունը կամ կռիվը, ինչպես արաբ կռապաշտներն են:

Ամեն մի օտարի (ոչ արաբի) հող, որը նվաճել է իմամը և թողել տեղական (ոչ մահմեդական) բնակիչների ձեռքում, հողահարկային հող է: Եթե այն բաժանի նվաճող ռազմիկներին, ապա կդառնա տասանորդային հող: Չէ որ այն հողերը, որ Օմար իբն ալ-Խաթթաբը նվաճել է օտարներից (ոչ արաբներից) և թողել է նրանց ձեռքում, հողահարկային են: Ընդհանրապես օտարների ամեն մի հող, որի [ոչ մահմեդական] ժողովուրդը պայմանագիր ունի և դարձել է զիմմի, հողահարկային է:

ՏԱՂԼԻԲ ՑԵՂԻ ՔՐԻՍՏՈՆՅԱՆԵՐԻ ԵՎ ԱՅԼ ԶԻՄՄԻՆԵՐԻ (ՀՈՎԱՆԱՎՈՐՅԱԼՆԵՐԻ)[13] ԴՐՈՒԹՅԱՆ ՈՒ ՆՐԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԻ ՄԱՍԻՆ

ԷՋ 68–69

Ամեն մի տասանորդային [մահմեդականին պատկանող] հող, որը կգնի Տաղլիբ ցեղի քրիստոնյան, դրա տասանորդը կկրկնապատկվի, ճիշտ այնպես, ինչպես կրկնապատկվում է նրանց (Տաղլիբ ցեղի մարդկանց) հարկը այն ունեցվածքի համար, որով առևտուր են անում: Ամեն ինչ, որի համար մահմեդականը մեկ է վճարում, Տաղլիբ ցեղի քրիստոնյան պետք է կրկինը վճարի:

Իսկ եթե մի որևէ զիմմի մարդ, բացի Տաղլիբ ցեղի քրիստոնյաներից, գնի տասանորդային հող, ապա Աբու Հանիֆան[14] գտնում է, որ պետք է այդ դեպքում հողահարկ պահանջվի և այդ որոշումը չփոխվի: Բանն այն է, որ երբ քրիստոնյան գնում է՝ մահմեդականից, ապա քանի որ զիմմին զաքատ[15] (բարեգործական հարկ) չի կարող վճարել, իսկ տասանորդը զաքատ է, ուստի այն վերածվում է հողահարկի:

Նման դեպքում ես նրան կպարտադրեի տասանորդ կրկնակի չա-

փով, որը հավասար է հողահարկի [նվազագույնին]: Եթե հողը նորից մահմեդականի վաճառվի, կամ քրիստոնյան մահմեդականանա, հողը նորից տասանորդային պետք է համարվի, ինչպես նախկինում եղել է:

Ինձ պատմել են մեր ծերուններից ոմանք, թե Հասանը և Աթան ասել են, թե այս պարագային տասանորդը պարզապես կրկնապատկված է:

Այս կարծիքն ինձ համար նախընտրելի է, քան Աբու Հանիֆայինը: Չէ որ, երբ միջոցներն օգտագործվում են մահմեդականի կողմից առևտրի համար, նա վճարում է տասանորդի քառորդը տասանորդիչ [պաշտոնյային] մուտով անցնելիս, ապա երբ այդ միջոցները (մալ) գնում է զիմմին առևտուր անելու համար, տասանորդիչ [պաշտոնյայի] մուտով անցնելիս նրանից պահանջվում է տասանորդի կեսը, այսինքն մահմեդականի վճարածի կրկինը, իսկ եթե [միջոցները] կրկին անցնեն մահմեդականին, նորից պահանջվում է նրանից միայն տասանորդի քառորդը: Այստեղ հարցը վերաբերում է նույն միջոցներին (մալ), որոնց էությունը փոխվում է ըստ սեփականատիրոջ բնույթի:

Այդպես է նաև տասանորդային հողը: Չէ որ, եթե զիմմին գնի արաբների երկրում (Արաբիայում) մի հող, որը խարաջային չի եղել [ինչպես Մեքքայում, Մադինայում և այլ նման վայրերում], ապա նման դեպքում ես խարաջ չեմ նշանակի, քանի որ սուրբ երկրում է գտնվում, այլ պետք է կրկնապատիկ սադակա[16] (ողորմության տասանորդ) դրվի, քանի որ զիմմիները կրկնակի են վճարում այն արժեքների համար, որով առևտուր են անում: Իսկ նրանցից ով մահմեդականանա, ապա նրա հողը նորից տասանորդային կդառնա, քանզի արդեն չի կարելի հողահարկ վերցնել:

ԳԼԽԱՀԱՐԿ (ՋԻԶԻԱ) ՎՃԱՐԵԼՈՒ ՊԱՐՏԱՎՈՐ ՄԱՐԴԿԱՆՑ ՄԱՍԻՆ

էջ 69–72

Գլխահարկը պարտադիր է բոլոր զիմմիների համար, լինեն հրեաներ (յահուդ), քրիստոնյաներ (նասարա), զրադաշտականներ (մաջուս), սաբիներ[17] ու սամարացիներ[18], որոնք ապրում են Սավադում և այլ վայրերում, ինչպես նաև Հիրայի[19] և այլ քաղաքների բնակիչների համար, բացի Տաղլիբ ցեղի քրիստոնյաներից ու հատկապես Նաջրանի[20] [քրիստոնյա] բնակիչներից:

Գլխահարկը պարտադիր է տղամարդկանց, բայց ոչ կանանց և երեխաներին: Հարուստներից (բարեկեցիկ) վերցվում է քառասունութ դիրհեմ[21], միջակներից՝ քսանչորս դիրհեմ, իսկ կարիքավոր, ձեռ-

քով աշխատող հողագործից՝ տասներկու դիրհեմ: Դա գանձվում է նրանցից ամեն տարի: Եթե դրամի փոխարեն բերեն գրաստ, ապրանքներ (իրեր) և այլ բաներ, դրանք կընդունվեն ըստ արժեքի: Սակայն որպես գլխահարկ չեն ընդունվի մեռելո-տի, խոզ, ոչ էլ գինի: Օմար իբն ալ-Խաթթաբը արգելել է նման բաներ վերցնելը որպես գլխահարկ: Նա ասել է՝ վերադարձրեք այդ բաներն իրենց տերերին, որ ծախեն և վերցրեք արժեքը: Սա գլխահարկի ենթակա մարդկանց վերաբերվելու ավելի զիջող ձևը կլինի: Ալի իբն Աբու Թալիբը[22], ինչքան տեղեկացել ենք, որպես գլխահարկ վերցնում էր ասեղներ, ձյութալար (մոմած թել) և այն հաշվում էր որպես գլխի հարկ (խարաջ ռուուսիհիմ):

Գլխահարկ չի վերցվում աղքատից, որին ողորմություն են տալիս, ոչ էլ կույրից, որը չունի ապրուստի միջոց կամ գործ, ոչ էլ ողորմություն ստացող զիմմիից կամ հաշմանդամից: Սակայն եթե հաշմանդամը կամ անկարողն ունեն եկամուտ, ապա նրանցից պետք է գլխահարկ վերցվի, նույնպես և կույրը կամ վանականները, որոնք ապրում են վանքերում (դիարատ), եթե ունեն եկամուտ պետք է գլխահարկ վերցվի, իսկ եթե իրոք չքավոր են և բարեկեցիկ մարդիկ նրանց ողորմություն են տալիս, գլխահարկ չի վերցվի: Նույնը վերաբերում է մենաստանների ճգնավորներին (ահլ ալ-սավամի), որոնք եթե ունեն հարստություն ու եկամուտ և իրենց ունեցածը տալիս են այլոց, որ ծախսեն վանքերի, վանականների ու տնօրինողների համար, ապա նրանցից գլխահարկ պետք է գանձվի՝ այն վերցնելով վանահորից (սահիբ ալ-դայր): Իսկ եթե վանահայրը, որի ձեռքում է այս բոլորը գտնվում ուրանա թե դա ճիշտ չէ ու երդվի Աստծով և այնպիսի երդումով, որով երդվում են նրա կրոնակիցները, թե իր մոտ այդպիսի բան չկա, պետք է թողնել ու ոչինչ չվերցնել:

Մահմեդականից գլխահարկ (ջիզիա ռաս) չի վերցվում: Միայն այն դեպքում, երբ մարդը մահմեդականացել է տարին լրանալուց հետո, ապա պարտավոր է գլխահարկ վճարել, քանի որ այդ գումարը մահմեդական համայնքին է պատկանում, ուստի նա պետք է վճարի: Իսկ եթե մահմեդականանա տարին վերջանալուց թեկուզ մեկ-երկու օր կամ մեկ-երկու ամիս և առավել կամ նվազ ժամանակով առաջ, ապա նրանից գլխահարկ չի վերցվի, միայն թե մահմեդականացած լինի նախքան տարին լրանալը: Կամ եթե նա պարտական է լինում գլխահարկը, սակայն մնում է նախքան վճարելը և կամ մի մասը վճարած լինի, իսկ մյուս մասը մնացած, ապա այն չի վերցվի ոչ նրա ժառանգորդներից, ոչ էլ նրա թողած ժառանգությունից: Նույն ձևով, եթե մեկը մահմեդականանա և գլխահարկի մի մասը պարտք մնացած լինի, ապա այն նրանից չի պահանջվի:

Գլխահարկ չի վերցվում նաև զառամյալ ծերունուց, որն

աշխատելու ի վիճակի չէ և ոչինչ չունի, ինչպես նաև տկարամիտ մարդուց: Զիմմիին պատկանող ուղտերից, կովերից, ոչխարներից զաքատ չի վերցվում: Այս հարցում տղամարդիկ ու կանայք հավասար են:

Պատմել է Սուֆիանը, լսելով Աբդալլահ իբն Թաուսից, իսկ նա՝ իր հորից և վերջինս՝ Աբդալլահ իբն Աբբասից, թե զիմմիները չունեն ոչ մի ունեցվածք բացի այն բանից, որը թողնված է որպես ողորմություն:

Զիմմիի, լինի տղամարդ թե կին, ունեցվածքից զաքատ չի վերցվում, բացի այն բանից, որով առևտուր են անում և այս դեպքում պետք է տասանորդի կեսը վճարեն: Սա վերցվում է այն դեպքում, երբ նրանց ունեցվածքի արժեքը երկու հարյուր դիրհեմի կամ ոսկու քսան մսխալի է հասնում և կամ նույն արժեքն ունեցող առևտրի իրեր (ապրանքներ) են ունենում:

Զիմմիներից ոչ ոքի չի կարելի ծեծել գլխահարկն ստանալու համար, և ոչ էլ նրանց կանգնեցնել արևի տակ, կամ այլ ձևով տանջել: Չի կարելի նրանց մարմնական տանջանքների ենթարկել, այլ անհրաժեշտ է գթասիրտ վերաբերմունք ցուցաբերել: Սակայն կարելի է նրանց բանտարկել, մինչև վճարեն այն ինչ պարտավոր են, և բանտից դուրս չեն գա, մինչև լրիվ չգանձվի գլխահարկը: Կառավարիչը (վալի) չպետք է թողնի ոչ մի քրիստոնյայի, հրեայի, զրադաշտականի, սաբիի և սամարացու, որը չվճարի գլխահարկը, կամ թույլ տա մի մասը չվճարել: Թույլատրելի չէ, որ մեկին թողնեն ու մյուսից ստանան, դա չի կարելի անել, քանզի նրանց կյանքն ու ունեցվածքը պահպանվում են միայն այն պայմանով, որ վճարեն գլխահարկը: Այնպես որ գլխահարկը խարաջային փողերի դրությունն ունի:

Ինչ վերաբերում է մեծ քաղաքներին (ամսար), ինչպես Մադինատ ալ-Սալամը (Խաղաղության քաղաք, Բաղդադ), Քուֆան, Բասրան և նմանները, ապա իմ կարծիքով իմամը (խալիֆան) պետք է ամեն մի մեծ քաղաքում [վերակացու] նշանակի բարեպաշտ, բարեգործ մարդու, որի աստվածավախության և պատվականի լինելուն կարելի է վստահել, տալով նրան օգնականների, որոնք նրա մոտ կհավաքեն տարբեր կրոնների մարդկանց՝ հրեաներին, քրիստոնյաներին, զրադաշտականներին, սաբիներին և սամարացիներին, և նա (վերակացուն) նրանցից կգանձի [գլխահարկը] ըստ դասերի (թաբակատ), ինչպես ասել ենք՝ քառասունօթի դիրհեմ ունևորներից, ինչպիսիք են դրամափոխները (սարրաֆ), բամբակի ու քաթանե կտորեղենի վաճառականը (բազազ), կալվածատերը (սահիբ ալ-դայա), վաճառականը (տաջիր) և բուժող բժիշկը: Ով զբաղվում է արհեստով (սինաա) կամ առևտրով, որով ապրուստ է ձեռք բերում, ապա ամեն մի արհեստով ու առևտրով զբաղվողից, ըստ նրա արհեստի ու առևտրի,

կվերցվի քառասունօթի դիրհեմ ունևորից և քսանչորս դիրհեմ միջակ՝ հասույթ ունեցողից: Իսկ ում արհեստը հնարավորություն է տալիս քառասունօթի դիրհեմ վճարելու, նրանից պետք է այդ գումարը վերցվի, իսկ ով ի վիճակի է միայն քսանչորս դիրհեմ վճարելու, թող այդքան առնվի նրանից: Տասներկու դիրհեմ է վերցվում ձեռքով աշխատողից՝ ինչպես դերձակը (խայյաթ), ներկարարը (սաբբաղ), հնակարկատ կոշկակարը (իսքաֆ), կոշկակարը (խառազ) և նմանները:

Երբ գլխահարկը հավաքվում է վերակացուների մոտ, նրանք տանում են այն արքունի գանձարան (բայտ ալ-մալ):

Ինչ վերաբերում է Սավադին, ապա հրամայիր քո հարկահան պաշտոնյաներին, որ իրենց կողմից ուղարկեն այնպիսի մարդկանց, որոնց աստվածավախությանը, հավատարմությանը վստահ են: Սրանք գնալով գյուղ կհրամայեն նրա տիրոջը (սահիբ) հավաքել բոլոր հրեաներին, քրիստոնյաներին, զրադաշտականներին, սաբիներին ու սամարացիներին և երբ հավաքվեն ուղարկված [հարկահանները], ըստ իմ նկարագրած դասավորության նրանցից կվերցնեն [գլխահարկը]: Հրամայիր նրանց, որ պահպանեն այն կարգը, որ ես որոշել ու նկարագրել եմ, որպեսզի չխախտեն սահմանված չափը և ոչինչ չպահանջեն այն մարդուց, որն ի վիճակի չէ գլխահարկ վճարելու և վերջապես անիրավություն չգործեն ու չճնշեն:

Իսկ եթե գյուղապետը նրանց ասի՝ ես ձեզ հետ կհամաձայնեմ նրանց (գլխահարկ վճարողների) մասին և այն կվճարեմ ձեզ, թող չհամաձայնեն այդ առաջարկին, քանզի նման դեպքում գլխահարկի գումարը կպակասի: Օրինակ գուցե գյուղապետը համաձայնության կգա [հարկահանների] հետ հինգ դիրհեմի չափով, իսկ գյուղում այնքան հովանավորյալներ (զիմմի) կան, որ եթե բոլորը վճարեն գլխահարկ, գումարը կգառնա հազար դիրհեմ և ավելի: Այսպես վարվել չի կարելի և աններելի է: Բացի վերոհիշյալ կորուստից, հնարավոր է, որ գյուղապետը այնպես հավաքի գլխահարկը իր շրջանում (կալված) ապրող զիմմիներից, որ ամեն մեկի բաժինը տասներկու դիրհեմից պակաս ստացվի, մինչդեռ այդ թվից պակաս չպետք է լինի: Կամ էլ նրանց մեջ կարող են լինել ունևորներ, որոնք պարտավոր են քառասունօթի դիրհեմ վճարել:

Հավաքած գումարը հարկային վերակացուները (վալի ալ-խարաջ) հողահարկի հետ միասին տանում են արքունի գանձարան (բայտ ալ-մալ), քանզի դա բոլոր մահմեդականների նկամուտն (ֆայ) է:

Սրան ավելացվում է նաև այն, որ վերցվում է զիմմիների այն միջոցներից (մալ, ապրանք), որ նրանք օգտագործում են առևտրի մեջ և նրանցից ովքեր գալիս են մեզ մոտ երաշխավորագիր (աման) խնդրելով, ինչպես նաև այն, որ վերցվում է զիմմիներից, երբ տասանորդային հողը անցնում է նրանց ձեռքը [դառնալով խարաջային]:

Այս բոլորը գնում է, որպես հողահարկ և բաժանվում է, ինչպես հողահարկը, սակայն հատկացումը նույնը չէ, ինչ սադակային է (ողորմության տուրք) կամ մեկ հինգերորդինը (խումս):

Ով իշխան հավատացելոց, պետք է հրամայես [հարկահաններին] մեղմ վերաբերվել քո մարգարեի ու հորեղբորորդու Մուհամմադի զիմմիներին, ուշադրություն դարձնելով, որ անարդարություն չգործեն, չնեղեն, ուժից վեր չծանրաբեռնեն նրանց և ունեցվածքից ոչինչ չվերցվի, եթե պարտական չեն: Զի որ առաքյալի[23] մասին պատմվել է, թե ասել է՝ ով անիրավություն գործի պայմանագիր կնքողին կամ կարողությունից վեր ծանրաբեռնի նրան, ես կրողոքեմ [վերջին դատաստանի օրը]: Օմար իբն ալ-Խաթթաբն ասել է մահվան րոպեին՝ իմ մահվանից հետո եկող խալիֆային կտակում եմ առաքյալի զիմմիներին, թող նա պահպանի նրանց հետ կնքված պայմանագիրը, կռվի նրանց համար և չծանրաբեռնի կարողությունից վեր:

Հիշամ իբն Ուրուան մեզ պատմել է, լսելով իր հորից, իսկ սա Սահլ իբն Զայդից, թե Ասորիքում անցնելիս տեսել է մարդկանց, որոնց կանգնեցրել էին արևի տակ և հարցրել է թե սրանք ինչ են արել, պատասխանել են թե կանգնեցրել են արևի տակ գլխահարկի պատճառով: Իսկ նա չհամաձայնելով դրան գնացել է նրանց պետի (ամիր) մոտ և ասել՝ ես լսել եմ առաքյալին, որ ասել էր՝ ով տանջի մարդկանց, Ալլահը նրան կտանջի:

Մեր ծերունիներից ոմանք մեզ պատմել են լսելով Ուրուայից, որը լսել էր Հիշամ իբն Հաքիմ իբն Հիզամից, թե ինքը տեսել է, որ Իյադ իբն Ղանմ[24] հովանավորյալ մարդկանց (ահլ ալ-զիմմա) կանգնեցրել է արևի տակ գլխահարկի [չվճարման] պատճառով: Ասել է՝ ով Իյադ, ի՞նչ է սա, չէ որ առաքյալը ասել է, ովքեր այս աշխարհում մարդկանց կտանջեն, այն աշխարհում (հանդերձյալում) իրենք կտանջվեն:

Ինձ պատմել է Հիշամ իբն Ուրուան, լսելով իր հորից, թե Օմար իբն ալ-Խաթթաբ [խալիֆան] վերադառնալով Ասորիք կատարած ճանապարհորդությունից, ճանապարհին տեսել է մարդկանց, որոնց արևի տակ էին կանգնեցրել և գլխին ձեթ քսել: Հարցրել է, թե սրանք ինչ հանցանք են գործել: Պատասխանել են, թե պարտավոր են գլխահարկ, բայց չեն վճարել, ուստի պետք է տանջվեն, մինչև վճարեն: Ասել է Օմարը՝ իսկ ինչ են ասում, ինչպես են արդարանում գլխահարկի համար: Պատասխանում են՝ ասում են, թե միջոցներ չունենք: Ասել է [Օմարը]՝ թողեք դրանց և ուժից վեր մի ծանրաբեռնեք, քանզի լսել եմ առաքյալին, որն ասում էր՝ մի տանջեք մարդկանց, իսկ ովքեր տանջում են այս աշխարհում, Ալլահը կտանջի նրանց մեռյալների հարության օրը: Ապա հրամայեց արձակել դրանց:

Պատմել է Ումայր իբն Նաֆին, լսելով Աբու Բաքրից, թե Օմար իբն ալ-Խաթթաբն ասել է, որ անցնելով մի տան դռան մոտով, ուր

կանգնած էր մի զառամյալ, մուրացիկ ծերունի թույլ տեսողությամբ, խփել է նեռից նրա ուսին և ասել՝ դու Գրքի ժողովրդի (ահլ ալ-քիտաբ)[25] ո՞ր [խմբից] ես: Պատասխանել է՝ հրեա եմ: Հարցրել է Օմարը՝ ի՞նչը քեզ հասցրել է այս աստիճանին, որում տեսնում եմ: Պատասխանել է՝ գլխահարկը, կարիքը և տարիները: Օմարը բռնել է ձեռքից, տարել իր տունը, ինչ-որ բան հագցրել, ապա կանչել արքունի գանձարանի վերակացուին (խազին բայտ ալ-մալ) ասել է՝ նրդվում եմ Ալլահով, մենք արդար չենք եղել նրա նկատմամբ, կերել ենք նրա երիտասարդությունը, իսկ ծերության ժամանակ անպաշտպան ենք թողել: Սադական նշանակված է կարիքավորների ու աղքատների համար: Կարիքավորները դրանք մահմեդականներ են, իսկ սա Գրքի ժողովրդի աղքատներից է: Նա ազատել է նրան ու նմաններին գլխահարկից: Աբու Բաքրն ասել է, թե ինքն ականատես է եղել Օմարի այս արարքին և տեսել է այդ ծերունուն:

ԳԼՈՒԽ ԶԻՄՄԻՆԵՐԻ ՀԱԳՈՒՍՏԻ ՈՒ ՏԱՐԱԶԻ ՄԱՍԻՆ

Ի դեպ անհրաժեշտ է կնիք դնել զիմմիների վզին, գլխահարկը հավաքելու ժամանակ, մինչև ավարտվի նրանց ստուգումը: Ապա այդ կնիքները ջարդում են, ինչպես արել է Օսման իբն Հանիֆը, եթե նրանք խնդրեն ջարդել:

Պետք է հրամայել, որ նրանցից ոչ ոք չնմանվի մահմեդականներին իր հագուստով, զրաստով և իր արտաքինով: Նրանց պետք է պարտավորեցնել, որ գուննար կոչված գոտին կապեն, որը նման է կոպիտ պարանի և որով ամեն մեկը պետք է գոտևորվի: Նրանց կոնաձև գլխարկները (կալանսուա) պետք է մարակված (մուդառաբա) լինեն, նրանց թամբերին պետք է կեղի ու մեջքի միջև նման նման փայտե գունդ կախեն, իրենց մույկերին (ոտնաման) կրկնակի փոկեր կապեն և ոչ թե այն ձևով մահմեդականների նման, նրանց կանանց պետք է արգելված լինի ուղտ հեծած գնալ:

Նրանք իրավունք չունեն նոր տաճարներ կամ եկեղեցիներ կառուցել, բացի նրանից որ պահել են ըստ պայմանագրի, երբ դարձել են զիմմի և այսպիսով տաճարն ու եկեղեցին նրանց է պատկանել: Նման պայմաններում ինչ որ կա, թողնվում է նրանց և չի քանդվի: Նույնը վերաբերում է ատրուշաններին (բայտ ալ-նիրան, կրակատուն): Զիմմիներին թույլատրվում է ապրել մահմեդականների քաղաքներում ու չուկաներում, վաճառել ու գնել, ընդ որում, նրանք չպետք է գինի վաճառեն, ոչ էլ խոզ, և կամ քաղաքում բացահայտ ցուցադրեն իրենց խաչերը: Նրանց կոնաձև գլխարկները ցցուն կերպով մարակված լինեն: Հրամայիր քո կառավարիչներին, որ նրանք զիմմիներին

այսպիսի տարազ պարտադրեն: Այսպես է հրամայել Օմար իբն ալ-Խաթթաբը, որ ստիպեն զիմմիներին այսպիսի տարազ կրել, ավելացնելով՝ որպեսզի ըստ տարազի հնարավոր լինի նրանց տարբերել մահմեդականներից:

Ինձ պատմել է Աբդ ալ-Ռահման իբն Սարիա իբն Սուբանը, որը լսել է իր հորից, թե Օմար իբն Աբդ ալ-Ազիզը գրել է իր կառավարիչներից մեկին՝ չթողնես, որ խաչը հայտնի երևա [դրսում], իսկ եթե [ցույց տան], ջարդիր ու ոչնչացրու: Ոչ քրիստոնյան, ոչ էլ հրեան չպետք է ձիու թամբին հեծած ման գան, այլ ավանակ նստեն, նրանց կանայք թող ուղտ չհեծնեն, սակայն կարող են ավանակ հեծնել: Այս մասին ամենախիտ հրաման տուր և քո անունից արգելք հրապարակիր, որ քրիստոնյան չկրի ոչ պարեգոտ (կաբա), ոչ թանկ կերպասից (խազզ) զգեստ, ոչ էլ փաթթոց: Ինձ պատմել են, որ քեզ մոտ եղած քրիստոնյաներից չատերը սկսել են նորից գլխին փաթթոց կապել, իսկ մնջքին գոտի չեն կապում, աչքի են ընկնում չքեղությամբ ու փարթամությամբ՝ մոռանալով համեստությունը: Երդվում եմ կյանքովս, եթե դա կատարվում է քեզ մոտ, ապա պարզապես արդյունք է քո թուլության, անկարողության ու զիջողամտության, իսկ եթե վերականգնես նախկին վիճակը, նրանք կիմանան թե ինչ մարդ ես դու: Ուստի մտածիր այն ամենի մասին, որ արգելեցի, և ինքդ արգելիր նրանց այդ բաները կրկնել: Խաղաղությունը քեզ հետ:

Ինձ պատմել է Ուբայդալլահը լսելով Նաֆիից, որը լսել էր Օմարի մաուլա Ասլամից, թե Օմարը հրամայել էր իր կառավարիչներին, որ զիմմիների վզին կնիք դնեն:

Քամիլ իբն ալ-Ալան պատմել է Հաբիբ իբն Աբու Սաբիտից, թե Օմար ալ-Խաթթաբը ուղարկել է Օսման իբն Հանիֆին Սավադի հողը չափելու և նրանց հողի ամեն մի ջարիբին[26], լինի մշակված, թե անմշակ, մեկ դիրհեմ և մեկ կաֆ[27] [ցորեն] է նշանակել և կնքել է Սավադի [այլահավատ] գեղջուկների: Նա կնքել է հինգ հարյուր հազար գեղջուկների ըստ դասերի՝ քառասունութ, քսանչորս և տասներկու [դիրհեմ հաշվով]: Երբ նա ստուգումը վերջացնելով նրանց հանձնել է դեհկաններին (գավառապետ հողատեր), կոտրել են կնիքները:

Պատմել է Ուբայդալլահը լսելով Նաֆիից, իսկ սա Օմար [խալիֆայի] մաուլա Ասլամից, թե Օմար իբն ալ-Խաթթաբը գրել է [գերի ընկած] անհավատների մասին՝ սպանեցեք ում վրայից որ անցել է սուրը (ածելի), իսկ նրանց կանանցից ու երեխաներից գլխահարկ վերցրեք միայն չորս դինար[28] կամ քառասուն դիրհեմ: Պահանջեց նրանցից ամեն մեկից մեկ մոդ[29] ցորեն հարկ վերցնել և վզին կնիք դրոշմել:

Ինձ պատմել է ալ-Աամաշը, լսելով Ումարա իբն Ումայրից կամ Մուսլիմ իբն Սուբայհ Աբու լ-Դուհայից, իսկ սա Մասրուկից և վերջինս Մուաղ իբն Ջաբալից, թե մարզարեն երբ ինձ ուղարկեց Եմենի կառավարիչ, հրամայեց ամեն մի չափահաս [այլահավատից] մեկ դինար պահանջել:

ԳԼՈՒԽ ՋՐԱԴԱՇՏԱԿԱՆՆԵՐԻ, ԿՌԱՊԱՇՏՆԵՐԻ ՈՒ ՀԱՎԱՏԱՓՈԽՆԵՐԻ ՄԱՍԻՆ

էջ 73–76

Բոլոր հեթանոսները (ահլ ալ-շիրք) ինչպես զրադաշտականները, կռապաշտները, կրակապաշտները, քարապաշտները, սաբիներն ու սամարացիք վճարում են գլխահարկ (ջիզիա), բացի մահմեդական հավատափոխներից ու արաբ կռապաշտներից, որոնց պետք է առաջարկվի մահմեդականություն և եթե ընդունեն լավ, ապա թե ոչ, նրանց տղամարդիկ կկոտորվեն, իսկ կանայք ու երեխաները կգերեվարվեն: Հեթանոսները, ինչպես կռապաշտները, կրակապաշտները, զրադաշտականները, իրենց մորթած անասունների ու ամուսնության հարցում նույն վերաբերմունքին ենթակա չեն, ինչ որ Գրքի ժողովրդի [նկատմամբ կա]:

Նրանք վճարում են գլխահարկ, սակայն թույլատրելի (հալալ) չէ նրանց կանանց հետ ամուսնանալ կամ նրանց մորթած անասունների միսն ուտել:

Մերունիներից մեկը պատմել է լսելով Ջաաֆար իբն Մուհամմադից, իսկ սա իր հորից թե Օմար իբն ալ-Խաթթաբին հարցրել են այն մարդկանց մասին, որոնք կրակապաշտներ են, ոչ հրեա, ոչ քրիստոնյա, այսինքն Գրքի ժողովուրդ (ահլ ալ-քիտաբ) չեն: Ասել է Օմարը չգիտեմ ինչպես վարվել նրանց հետ: Այդ ժամանակ Արդ ալ-Ռահման իբն Աուֆը ասել է՝ վկա եմ, որ առաքյալն ասել է, թե նրանց դատեցեք Գրքի ժողովրդի մասին եղած օրենքներով:

Պատմել է Իսմայիլ իբն Աբու Խալիդը, վերցնելով ալ-Շաաբիից, թե հարցրել են մի քրիստոնյա ստրուկի մասին, որին ազատագրել է մահմեդական տերը: Ասել է Շաաբին, նրան հողահարկ չի հասնում, քանզի օգտվում է իր տիրոջ գոյավիճակից (հովանավորությունից): Ես այս հարցի չուրջը հարցրել եմ Աբու Հանիֆային և նա պատասխանեց՝ ազատագրված ստրուկը պետք է վճարի հողահարկ քանզի իսլամի երկրում չի կարող լինել այնպիսի դիմմի, որը հողահարկ չվճարի իր անձի համար: Աբու Հանիֆայի կարծիքը հավանաբար լավագույնն է, որ լսել եմ այս հարցի չուրջը:

ԳԼՈՒԽ ՏԱՍԱՆՈՐԴԻ (ՈՒՇՈՒՐ) ՄԱՍԻՆ

ԷՋ 76-80

Իսկ տասանորդի (մեկ տասներորդ, մաքս) հավաքման համար կարծում եմ, որ պետք է նչանակես բարեպաշտ, աստվածավախ մարդկանց, հրամայելով նրանց ոտնձգություններ չգործել մարդկանց նկատմամբ անարդարություն չանել, որոշված [հարկից] ավելին չվերցնել, հետևել մեր տված ծրագրին, ապա ստուգես թե ինչպես են գործում և վերաբերվում [իրենց հսկած կետերից] անցնողներին և արդյոք կատարում են իրենց հրամայվածը: Եթե դանցանքներ են թույլ տալիս, հնոացրու և պատժիր նրանց:

Հրամայիր նրանց (պաշտոնյաներին), որ տարբեր ապրանքների գները պետք է գումարել իրար վրա, այն հաշվով, որ տասանորդիչի (մաքս հավաքողի) առջևից անցնելիս, առևտրի նպատակով տարված ամեն ինչի համար մահմեդականից պետք է վերցնել տասանորդի (մեկ տասներորդի) քառորդ արժեքը (2. 5 տոկոս), դիմմիից տասանորդի կեսը (5 տոկոս), իսկ օտարից (հարբի, պատերազմի երկրի մարդ) տասանորդ (10 տոկոս): Եթե [ապրանքի] արժեքը երկու հարյուր դիրհեմ կամ ավելի է, ապա [տուրքը] վերցվում է, իսկ եթե արժեքը երկու հարյուր դիրհեմից պակաս է, տուրք չի գանձվում: Այլ կերպ ասած, եթե [ապրանքի] արժեքը քսան մսխալի է հասնում վերցվում է տուրքը, իսկ եթե արժեքը քսան մսխալից պակաս է ոչինչ չի գանձվում: Եթե [վաճառականը] մի քանի անգամ անցնի և ամեն անգամին երկու հարյուրից պակաս արժեք ունեցող [ապրանք] ունենա, ոչինչ չի վերցվում, թեկուզ մի քանի անգամ տարածի արժեքը գումարելով հասնի հազար [դիրհեմի], միևնույնն է ոչինչ չի գանձվի, քանզի տարբեր անգամների արժեքները չեն գումարվում:

Ուստի եթե [վաճառականն] անցավ նրա (տասնորդիչի) մոտով երկու հարյուր կանխիկ (դրամահատված, մաղրուբա) դիրհեմով կամ քսան մսխալ ձույլ ոսկով (տիրը) և կամ էլ երկու հարյուր դիրհեմ ձույլ [արծաթով] կամ քսան մսխալ կանխիկ (դրամահատվածով), ապա մահմեդականից կվերցվի տասանորդի քառորդը (2. 5 տոկոս), դիմմիից տասանորդի կեսը (5 տոկոս), իսկ օտարերկրացուց (հարբի) ամբողջ տասանորդը (10 տոկոս): Հետո ոչ մի բան չի վերցվի մինչև հաջորդ տարվա նույն ժամանակը, եթե նույնիսկ անցնի [վաճառականը] մի քանի անգամ:

Նույն բանը գանձվում է, եթե [վաճառականն] անցնի վաճառքի համար գնված ապրանքով: Եթե ապրանքի արժեքը հավասար է երկու հարյուր դիրհեմի կամ քսան մսխալի, ապա նրանից [տուրք] կվերցվի, իսկ եթե նրա արժեքը հավասար չէ երկու հարյուր դիրհեմի կամ քսան մսխալի [մաքսից] ազատ է: Եթե օտարերկրացին

տասանորդը վճարելուց հետո մտնի օտար երկիր, ապա եթե մեկ ամիս անց կրկին անցնի տասանորդիչի մոտով, վերջինս նրանից կվերցնի տասանորդը, եթե իր հետ ունեցած [ապրանքը] արժի երկու հարյուր դիրհեմ կամ քսան մսխալ, քանզի վերադառնալով օտար երկիր, կորցնում է մահմեդական [պետության] օրենքներից (ահքամ) օգտվելու իրավունքը, սակայն եթե իր մոտ եղածը երկու հարյուր դիրհեմից կամ քսան մսխալից պակաս է, նրանից ոչինչ չի վերցվի, քանզի օրենքը (սուննա) պահանջում է, որ նվազագույնը լինի երկու հարյուր դիրհեմ կամ քսան մսխալ:

Այսպես, մահմեդականը վճարում է երկու հարյուրից հինգ դիրհեմ, դիմմին՝ երկու հարյուրից տաս դիրհեմ, իսկ օտարերկրացին՝ երկու հարյուրից քսան դիրհեմ: Այս հաշվով, եթե ոսկի վճարվի, մահմեդականից վերցվում է կես մսխալ, դիմմիից՝ մեկ մսխալ, օտարերկրացուց՝ երկու մսխալ:

Եթե ապրանքը վաճառքի նպատակով չի տարվում, ապա տասանորդիչի մոտով անցնելիս ոչինչ չի վճարվի: Սակայն եթե հովանավորյալն անցնի տասանորդիչի մոտով իր հետ ունենալով գինի կամ խոզ, այն կգնահատվի և նրանից կվերցվի կես տասանորդ (5 տոկոս), նույնպես և օտարերկրացի մարդիկ եթե անցնեն տանելով խոզեր ու գինիներ, այն կգնահատվի և նրանից տասանորդ (տաս տոկոս) կվերցվի: Եթե մահմեդականն անցնի տասանորդիչի մոտով տանելով ոչխարներ, կովեր, ուղտեր և ասի, որ դա արածացնելու համար է, պետք է երդվի և այդ դեպքում նրանից ոչինչ չի պահանջվի: Նույնպես և ամեն մի ուտելիք, որն անց է կացնում մարդը և ասի թե սա իմ ցանածն (մշակածն) է, նաև արմավի համար ասի, թե իմ արմավենուց է, ոչինչ չի վճարի, քանզի տասանորդը այն բանի համար է, որը գնված է վաճառականության համար: Նույն ձևով են վարվում նաև դիմմիի հետ, սակայն օտարերկրացին այդպիսի իրավունք չունի:

Տաղլիբ ցեղի դիմմին, Նաջրան քաղաքի, ինչպես նաև մնացած դիմմիների նման, որոնք Սուրբ Գրքի ժողովուրդ են կոչվում, վճարում են տասանորդ: Իսկ զրադաշտականները և հեթանոսները այս բանում նրանց հավասար են:

Եթե [մահմեդական] վաճառականն անցնի տասանորդիչի մոտով ունենալով անասուններ (մալ) կամ ապրանք, և ասի, թե վճարել եմ զաքաթը և այդ մասին երդվի, ապա դա կընդունվի և ոչինչ չի վճարի: Սակայն այս բանը դիմմիից և օտարերկրացուց չի ընդունվի, քանզի նրանք չեն կարող ասել, թե զաքաթ են վճարել:

Իսկ եթե մեկն անցնի իր հետ ունենալով դրամ (մալ) և հավաստի, թե ուրիշի դրամով է առևտուր անում (մուդարաբա) կամ ապրանքը [ապրուստի միջոց] է և երդվի, տուրքը չի վճարի: Նույնպես և ստրուկը, որն անցնի իր տիրոջ և իր ապրանքներով, տասանորդ չի վճարի,

մինչև իր տերը գա: Նաև պայմանագրով ազատագրված ստրուկը (մուքատաբ) իր ապրանքի համար տասանորդ չի վճարի: Իսկ վաճառականը, որը տանում է վաճառելու տակով գնած խաղող, արմավ (ռութբ), կամ թարմ պտուղ և արժեքը հավասար լինի երկու հարյուր դիրհեմի կամ ավելի, ապա նրանից կվերցվի տասանորդի քառորդը (2. 5 տոկոս), եթե մահմեդական է, տասանորդի կեսը (5 տոկոս) եթե զիմմի է և տասանորդ (10 տոկոս) եթե օտարերկրացի է: Իսկ եթե արժեքը երկու հարյուր դիրհեմից պակաս լինի, ոչինչ չի վճարի, եթե նույնիսկ մի քանի անգամ անցնի և ամեն անգամ էլ երկու հարյուր դիրհեմից պակաս լինի և կամ մի քանի անգամ անցնելուց հետո նրա գումարը հաշվելով հասնի հազարի, գարժյալ գաքատ (ուշր) չի վճարվի: Ձգնետք է մի քանի անգամ անցնելու համար արժեքները գումարել:

Տասանորդը (ուշուր) հաստատել է Օմար իրն ալ-Խաթթաբը և դա լավ է, եթե [պաշտոնյաները] խախտումներ չկատարեն և որոշվածից ավելին չվերցնեն: Տասանորդը, որ մահմեդականից է վերցվում, նույն սադական է, իսկ բոլոր զիմմիներից ու օտարերկրացիներից վերցվածը իր էությամբ հողահարկ (խարաջ) է: Նույնպես և ինչ որ բոլոր զիմմիներից վերցվում է ինչպես գլխահարկը և ինչ որ Տաղլիբ ցեղի մարդկանցից է վերցվում արջառի համար, հավասար է հողահարկի և բաժանվում է ինչպես հողահարկը:

Լսել եմ Իսմաիլ իրն Իբրահիմ իրն Մուհաջիրից, որը լսել է Աբու Յաղբուրից, իսկ սա Զիյադ իրն Հադիրից, թե առաջինը, որին Օմար իրն ալ-Խաթթաբը ուղարկել է որպես տասանորդիչ ես եմ եղել և ինձ հրամայել էր, որ ոչ ոքի չստուգեմ և ով անցնի ձեռքիս տակով նրանից գանձեմ քառասուն դիրհեմից մեկ դիրհեմ, եթե մահմեդական է, զիմմիներից՝ քսանից մեկ դիրհեմ, իսկ ով զիմմի չէ (օտարերկրացի է)՝ տասից մեկ դիրհեմ:

Պատմել է Ասիմ իրն Սուլայմանը, վերցնելով ալ-Հասանից, թե Աբու Մուսա ալ-Աշաարին գրել է Օմար իրն ալ-Խաթթաբին՝ մեր մահմեդական վաճառականները գնում են օտար (պատերազմի) երկիր և նրանցից տասանորդ են վերցնում: Օմարը գրել է նրան՝ դու էլ նրանցից վերցրու այնպես, ինչպես նրանք մահմեդական վաճառականներից են վերցնում և վերցրու զիմմիներից մեկ տասանորդի կեսը, մահմեդականներից՝ քսան դիրհեմից մեկ դիրհեմ, իսկ ինչ երկու հարյուր դիրհեմից ցածր է, դրանից ոչինչ մի վերցրու: Բայց եթե երկու հարյուր դիրհեմ է, դրանից հինգ դիրհեմ վերցրու, և ինչ ավելի է, նույն ձևով հաշվիր:

Ինձ պատմել է Ամր իրն Մայմուն իրն Միհրանը լսելով իր հորից, իսկ սա իր տատից, թե անցնում էի Մասրուկ [տասանորդիչի] մոտով ալ-Սիլ-սիլայի հետ, որը պայմանագրով ազատագրյալ ստրուկի էր

(մուքատաբա) և չատ ապրանք ուներ: Հարցրեց նրան՝ ինչ ես դու, պատասխանեց՝ պայմանագրով ազատագրյալ ստրուկի: Նա պարսկուհի էր և նույնը կրկնեց Թարգմանին պարսկերեն: Մասրուկն ասաց՝ ստրուկի (մամլուք) ունեցվածքից զաքատ չի վերցվում և թողեց նրան որ գնա:

Պատմել է Աբու Հանիֆան՝ վերցնելով Համմադից, իսկ սա Իբրահիմից, որ եթե զիմմիները գինի տանեն վաճառականության համար, նրա արժեքի համար պետք է վերցվի տասանորդի կեսը (5 տոկոս) և չի կարելի ընդունել զիմմիի խոսքը նրա գնի մասին, այլ պետք է զիմմիներից երկու հոգի բերել, որ գնահատեն այն և ապա կգանձվի տասանորդի կեսը:

ԳԼՈՒԽ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ, ՏԱՃԱՐՆԵՐԻ ՈՒ ԽԱՋԵՐԻ ՄԱՍԻՆ

էջ 80–88

Իսկ ինչ վերաբերում է, ով իշխանդ հավատացնելոց, քո այն հարցին զիմմիների դրության մասին և թե ինչպես մահմեդականների կողմից նվաճման ժամանակ նրանց թողնվել են տաճարները (հրեական), եկեղեցիները քաղաքներում ու մայրաքաղաքներում (ամսար) ու չեն քանդվել և թե ինչպես նրանց թույլատրվել է իրենց խաչերը տոն օրերին դուրս բերել:

Բանն այն է, որ մահմեդականների ու զիմմիների միջև կնքվել է հաշտության պայմանագիր ջիզիա վճարելու պայմանով և քաղաքները նվաճվեցին այն պարտավորությամբ, որ նրանց տաճարներն ու եկեղեցիները, թե՛ քաղաքի ներսում, թե՛ նրանից դուրս չպետք է քանդվեն, որ նրանց կյանքը (արյունը) երաշխավորվում է նրանով, որ [մահմեդականները] նրանց համար կռվելու են ու թշնամիներից պաշտպանելու: Այս բոլորի դիմաց զիմմիները պետք է մահմեդականներին ջիզիա վճարեն: Այս պայմաններով հաշտության դաշնագիր է կնքվել և գրվել պայմանագիր՝ պարտավորվելով նոր տաճարներ ու եկեղեցիներ չկառուցել: Նման պայմաններով են նվաճվել ամբողջ Ասորիքն ու Հիրան, բացի մի փոքր մասից: Ահա թե ինչու նրանց տաճարներն ու եկեղեցիները չեն քանդվել:

Ասել է Աբու Յուսուֆը՝ ինձ պատմել է մի գիտուն մարդ լսելով Մաքհուլ ալ-Շամիից, թե Աբու Ուբայդա իրն ալ-Ջառահը մտնելով Ասորիք, զիմմիների հետ հաշտության պայմանագիր կնքեց, ընդունելով, որ նրանց եկեղեցիներն ու տաճարները պետք է թողնեին, սակայն չպետք է կառուցեին ո՛չ նոր տաճարներ, ո՛չ էլ նոր եկեղեցիներ, որ նրանք պարտավոր էին ճանապարհ ցույց տալ մոլորված [մահմե-

դականին] և կամուրջներ կառուցել գետերի վրա, իրենց դրամով, մահմեդական անցորդին երեք օր կերակրել, չհայհոյել, չծեծել մահմեդականին, իրենց խաչերը բարձր չցուցադրեին իսլամի հետևորդների հավաքույթներում, խոզերին իրենց տներից դուրս չբերել մահմեդականների գտնված վայրերը, ազդանշանային կրակներ վառել Ալլահի համար պայքարի գնացող ռազմիկներին, իսկ Թշնամուն ցույց չտալ մահմեդականի թույլ կողմերը: Նրանք չպետք է իրենց [նկեղեցիների] զանգակները (նակկուս) հնչեցնեն ոչ ազանից[30] առաջ, ոչ էլ ազանի ժամանակ, տոնական օրերին խաչազրոշներ դուրս չբերեն, զնաք չկրեն տոնական օրերին և ոչ էլ տանը պահեն այն: Այս բոլոր [արգելվածներից] եթե որևէ մեկն աներ, ապա կպատժվեին և նրանցից [տուգանք] կգանձվի: Ահա այս պայմաններով հաշտություն կայացավ:

Այնժամ [զիմմիները] ասացին Աբու Ուբայդային՝ մեզ համար տարվա մեջ մի օր սահմաներ, որ կարողանանք մեր խնդրերը դուրս բերել առանց խաչազրոշների և դա թող լինի մեր ամենամեծ տոնի օրը: Մահմեդականները գտան, որ պետք է կատարել այն ինչ պայմանավորված են և այս պայմաններով քաղաքները նվաճեցին:

Երբ զիմմիները տեսան, որ մահմեդականները հավատարիմ կերպով կատարում են խոստումները և թե ինչքան լավ է նրանց վերաբերմունքը, ապա նրանց Թշնամիների դեմ խստասիրտ դարձան և օժանդակեցին մահմեդականներին: Ամեն մի քաղաքի բնակչություն, որը հաշտության պայմանագիր ուներ մահմեդականների հետ, մարդկանց ուղարկեց լուրեր հավաքելու հոռոմների ու նրանց թագավորի մասին, թե ինչ են կամենում ձեռնարկել: Այս ամեն քաղաքների բնակիչների առաքած սուրհանդակների կողմից լուր հասավ, թե հոռոմները այնպիսի զորք են հավաքել, որի նմանը չի տեսնված: Ամեն մի քաղաքի պետը (ռաիս) եկավ այն ամիրի մոտ, որին Աբու Ուբայդան փոխանորդ էր նշանակել և նրան հաղորդեց այդ մասին, իսկ ամեն մի քաղաքի տեղակալ նշանակված կառավարիչը գրեց Աբու Ուբայդային տեղեկացնելով այդ մասին և լուրերն իրար նման հասան Աբու Ուբայդային: Սակայն Աբու Ուբայդան և մահմեդականները գտնում էին, որ իրենց դրությունը վտանգավոր է: Աբու Ուբայդան գրեց իր նշանակած փոխանորդներից ամեն մեկին այն քաղաքներում, որոնց հետ հաշտության պայմանագիր էր կնքել, հրամայելով վերադարձնել զիմմիներին նրանցից հավաքված ջիզիան ու խարաջը և հանձնարարեց ասել նրանց՝ մենք վերադարձնում ենք ձեր դրամները, քանզի մեզ տեղեկություն է հասել, որ Թշնամին զորք է հավաքել մեր դեմ. դուք մեզ հետ պայմանավորվել էիք որ պաշտպաններ ենք, բայց քանի որ մենք ի վիճակի չենք այդ անել, ապա վերադարձնում ենք այն ինչ վերցրել էին ձեզանից: Մենք պարտավորվում ենք հարգել

այն պայմանները, որ ձեզ հետ կնքել ենք, եթե Ալլահը մեզ հաղթանակ պարգևի Թշնամու դեմ:

Երբ մահմեդականներն այս բանը ասացին և վերադարձրին այն դրամները, որ նրանցից հավաքել էին, զիմմիներն ասացին՝ թող Աստված ձեզ վերադարձնի մեզ մոտ և հաղթանակ պարգևի նրանց դեմ, եթե ձեր տեղում նրանք (հոռոմները) լինեին, ոչինչ չէին վերադարձնի և մեր եղածն էլ կտաներին, ոչինչ չթողնելով:

Աբու Ուբայդան սովորություն ուներ նրանց հետ պայմանագիր կնքել այս ձևով, տալով ինչ խնդրում էին, քանզի կամենում էր այս եղանակով սիրաշահել նրանց, որպեսզի այդ մասին լսելով նաև այլ քաղաքների բնակիչները, որոնց հետ դեռ հաշտության պայմանագիր չէր կնքել, ամապարեին իրենք ևս հաշտության պայմանագիր կնքել:

Սակայն քաղաքների շուրջը գտնվող գյուղերից վերցված դրամները, գերիները և իրեղենները Աբու Ուբայդան չեր վերադարձնում տերերին և մեկ հինգերորդն առնելուց հետո մնացած չորս հինգերորդը բաժանում էր մահմեդականների միջև:

Մահմեդականներն ու հեթանոսները (մուշրիքուն) բախվեցին և կատաղի պատերազմ տեղի ունեցավ, երկու կողմից շատեր կոտորվեցին, ապա Ալլահն օգնեց մահմեդականներին հեթանոսների դեմ, որոնց [մահմեդականների] ձեռքը հանձնեց և փախուստի մատնեց: Մահմեդականներն այնպիսի կոտորած սարքեցին, որի նմանը հեթանոսները չէին տեսել:

Երբ այն քաղաքի բնակիչները, որոնք պայմանագիր չունեին Աբու Ուբայդայի հետ, տեսան, թե ինչպես կոտորվեցին իրենց հեթանոս ընկերները, լուր ուղարկեցին Աբու Ուբայդային հաշտություն խնդրելով և նա հաշտություն (դաչինք) կնքեց նույն պայմաններով, որ տվել էր նախորդներին, միայն թե նրանք խնդրեցին ավելացնել այն պայմանը, որ եթե իրենց մոտ լինեն հոռոմներ, որոնք եկած լինեն կռվի և ապաստանած լինեն իրենց մոտ, նրաչխիք ստանան, որ կարող են իրենց իրեղեններով, ունեցվածքով ու ընտանիքներով հեռանալ Ռումի երկիրը[31] և ոչ ոք չխանգարի նրանց: Աբու Ուբայդան համաձայնեց և նրանք ջիզիա վճարեցին ու բացին նրա առջև քաղաքի դռները:

Աբու Ուբայդան վերադարձավ և ամեն մի քաղաքի կողքով անցնելիս, որի բնակիչները դեռ իր հետ հաշտության [պայմանագիր] չէին կնքել, ապա դրանց քաղաքապետերը (ռաիս) լուր էին ուղարկում, հաշտություն խնդրելով և նա համաձայնում էր, տալով նրանց այն, ինչ նախկիններին էր տվել և գրում էր իր ու նրանց միջև պայմանագրեր: Իսկ ամեն անգամ, որ անցնում էր այն քաղաքների կողքով, որոնց բնակիչներն արդեն նախապես նրա հետ հաշտություն էին կնքել և իր կողմից նշանակված կառավարիչներն իր անունից զիմմիներին վերադարձրել էին նրանցից վերցրած [հարկը], ապա

բնակիչները նորից էին տալիս նրան այդ վերադարձված գումարները և այն ջիզիայի ու խարաջի ձևով վճարելու պայմանով հաշտություն էր կնքվում և նրան դիմավորում էին չուկաներում ու վաճառքի վայրերում: Նա թողնում էր նույն պայմանները, որոնք տրվել էին նախապես, չփոխելով ու չպակասեցնելով:

Աբու Ուբայդան գրեց Օմարին հեթանոսների փախուստի և այն մասին, թե ինչ է Ալլահը մահմեդականներին տվել որպես ավար, զիմմիների հետ հաշտության պայմանագրի մասին, ինչպես նաև այն բանի վերաբերյալ, թե մահմեդականները ցանկություն ունեն իրենց միջև բաժանելու [զիմմիների] քաղաքները, դրանց բնակչությունը, հողը՝ նրա վրա գտնված գյուղերով ու ցանքսերով, և թե ինքը մերժել է այդ բանը՝ որոշելով գրել Օմարին ու նրա կարծիքը հարցնել:

Օմարը նրան գրեց՝ ես մտածեցի Ալլահի կողմից քեզ տրված ավարի մասին, որի մասին հիշել էիր և այն պայմանագիրը, որով հաշտություն ես կնքել քաղաքների ու մայրաքաղաքների (ամսար) հետ, այդ մասին խորհրդակցեցի Ալլահի առաքյալի մտերիմների (ասհար) հետ և նրանցից ամեն մեկն իր կարծիքն ասաց: Իմ կարծիքը համաձայն է Ալլահի Գրքին (Ղուրանին). բարձրյալ Ալլահն ասել է. «Ալլահը նրանց, որոնք նկան նրանցից (առաջին հավատացյալներից) հետո ընդունեցին իսլամը, դարձրեց ավարի (ֆայ) մասնակիցներ, մինչև [վերջին] հարուցման օրը»: Ուրեմն այն, ինչ Ալլահը տվել է որպես ավար (ֆայ), բաժանիր նրանց միջև, որոնք այն ձեռք են բերել: Իսկ զիմմիներին ջիզիա նշանակիր ըստ նրանց կարողության և այն բաժանիր մահմեդականների միջև: Իսկ զիմմիները պետք է հողը մշակեն, քանզի նրանք քաջ ծանոթ են դրան և շատ լավ են մշակում: Ոչ դու, ոչ քեզ մոտ եղած մահմեդականները չեք կարող բռնել ու [որպես ծառա] բաժանել նրանց. չէ՞ որ նրանց հետ հաշտության պայմանագիր ես կնքել և ջիզիա ես վերցրել, ըստ նրանց կարողության: Ալլահը մեզ և ձեզ բացատրել է ասելով իր Գրքում. «պատերազմեցեք Գիրք (Հայտնություն) ստացածներից նրանց դեմ, որոնք չեն հավատում Ալլահին, վերջին [դատաստանի] օրվան և արգելված չեն համարում այն, ինչ արգելել է Ալլահը և նրա առաքյալը ու չեն հավատում ճշմարիտ հավատով, մինչև որ վճարեն ջիզիան իրենց ձեռքով և ստորացած վիճակում»: Ուստի քանի որ դու նրանցից վերցրել ես ջիզիան, դու այլևս ոչինչ չպետք է առնես նրանցից: Արդյո՞ք մտածել ես, որ եթե մենք բռնենք այդ [երկրի] բնակչությունը և [որպես ծառա] բաժաննենք, ապա մեզանից հետո եկող մահմեդականներին ինչ կմնա: Երդվում եմ Ալլահով, որ նրանք այլևս մարդ չեն գտնի որ աշխատեցնեն նրան և ոչ մի հնարավորություն չեն ունենա նրա աշխատանքի արդյունքից: Մահմեդականները նրանց հաշվին են ապրում քանի դեռ վերջինները ողջ են, իսկ երբ մեռնենք ու նրանք ևս

մեռնեն, ապա մեր որդիները պետք է ապրեն նրանց որդիների հաշվին հավիտյան, քանի դեռ գոյություն ունեն, քանզի նրանք մնալու են իսլամի հետևորդների ծառաները (արիդ, սորուկ), քանի դեռ մահմեդական կրոնը տիրապետում է:

Ուստի նրանց հարկավորիր ջիզիայով ու մի թույլ տուր որ գերեվարեն և արգելիր մահմեդականներին, որ նրանց անիրավություն գործեն, վնաս հասցնեն, ունեցվածքը ուտեն, բացի այն դեպքից, երբ դա թույլատրելի է: Պարկեշտորեն պահպանիր այն բոլոր պայմանները, որոնց համար ուխտ ես կնքել նրանց հետ: Ինչ վերաբերում է տոնական օրերին խաչերը դուրս բերելուն, ապա մի խանգարիր նրանց այդ բանն անել քաղաքից դուրս, բայց առանց խաչադրոշների ու դրոշների և ինչպես արդեն քեզանից խնդրել են՝ տարեկան մեկ օր: Սակայն քաղաքում մահմեդականների ու նրանց մզկիթների չբջապատում թող չցուցադրեն խաչերը:

Այսպիսով Աբու Ուբայդան թույլ տվեց նրանց տարեկան մեկ օր այն տոնին, երբ նրանք ծոմ են պահում, իսկ մնացած օրերին զիմմիներն իրավունք չունեին խաչերը դուրս բերել: Ինչ վերաբերում է բնակիչների հետ կնքված հաշտության պայմանագրին, ապա ըստ այնմ նրանց տաճարներն ու եկեղեցիները մնացին ինչպես որ եղել են, այն չէին քանդելու և այդ հարցում նրանց նեղություն չպատճառեցին: Ահա թե ինչ էր կատարվել Ասորիքում մահմեդականների ու զիմմիների միջև:

էջ 86

Խալիդ իբն ալ-Վալիդը[32] կամենում էր Հիրան իր նստավայրը դարձնել, սակայն ստացավ Աբու Բաքր [Խալիֆայի][33] նամակը, որով [նա] հրամայում էր գնալ Ասորիք՝ օգնելու Աբու Ուբայդային և մահմեդական [զորքին]:

[Ասորիքում] Խալիդն անցնում էր Անատի մոտով և նրա պատրիկը դուրս եկավ ու խնդրեց հաշտության պայմանագիր և նա գոհացրեց նրան, այն պայմանով, որ ոչ մի տաճար կամ եկեղեցի չպետք է քանդվեր: [Եկեղեցիների] զանգերը չպետք է ուզած ժամին հնչեցնեին գիշեր թե ցերեկ, այլ միայն ադոթքի ժամանակ, իսկ խաչերը կարող էին դուրս բերել միայն տոնի օրը: Նրանցից պահանջեց, որ մահմեդականներին երեք օր հյուրասիրեն, ուղեցույցներ տան նրանց և ջիզիա վճարեն:

էջ 87

Այսպիսով թողնվեցին տաճարներն ու եկեղեցիները և չքանդվեցին, քան մահմեդականների ու զիմմիների միջև կնքված հաշտության պայմանագրի: Խալիդի այս պայմանագիրը չի մերժվել ոչ Աբու Բաքրի, ոչ էլ նրանից հետո իշխող Օմարի, Օսմանի[34] ու Ալիի[35] կողմից:

Ասել է Աբու Յուսուֆը՝ իմ կարծիքով չպետք է ոչ քանդել և ոչ էլ փոխել նրաշխավորվածը: Այս գործը պետք է թողնել այն վիճակում, ինչպես թողել են Աբու Բաքրը, Օմարը, Օսմանը, Ալին. չէ որ նրանք չեն քանդել ոչ մի բան, որը հիշված է եղել պայմանագրում: Ինչ վերաբերում է նոր կառուցված տաճարներին ու եկեղեցիներին, ապա դրանք պետք է քանդվեն: Այս գործը քննարկել են մեկից ավելի անցյալի խալիֆաներ, որոնք կամեցել են քանդել քաղաքներում ու մայրաքաղաքներում գտնվող տաճարներն ու եկեղեցիները: Այն ժամանակ քաղաքների բնակիչները ցույց են տվել այդ գրավոր պայմանագրերը, որով խաղաղություն է կնքվել մահմեդականների ու նրանց միջև: Իրավագետներն (ֆակիհ) ու [Մուհամմադի] մերձավորների հաջորդները մերժել են խալիֆաների այս ծրագիրը և նրանց մեղադրել այդպիսի նպատակ ունենալու համար, որի չնորհիվ նրանք (խալիֆաները) հրաժարվել են իրենց ցանկությունը կատարելուց: Հաշտության պայմանագիրը պետք է ի զորու ճանաչվի, ինչպես այն ճանաչել է Օմար իբն ալ-Խաթթաբը, մինչև մեոյանների հարության օրը: Ուստի արա ինչ հարմար կգտնես, բայց չէ որ դու թողել ես նրանց տաճարներն ու եկեղեցիները այն հիման վրա, որ արդեն հաղորդել եմ քեզ:

էջ 88

Պատմել է Սուլայմանը լսելով Հանաչից, որը լսել է Իբրիմայից, իսկ վերջինս Իբն Աբբասից, որ այլազգիները (աջամ) հարցրել են նրան, թե կարող են նոր եկեղեցիներ ու տաճարներ կառուցել մահմեդական [պետության] մայրաքաղաքներում (ամսար): Նա պատասխանել է՝ ինչ վերաբերում է արաբների կողմից հիմնադրված քաղաքներին, ապա զիմմիները չեն կարող նոր տաճար կամ նոր եկեղեցի կառուցել, չեն կարող [եկեղեցու] զանգը հնչեցնել, չեն կարող գինին հրապարակավ ցուցադրել, ոչ էլ խոզ բուծանել: Իսկ այլազգիների կողմից հիմնադրված քաղաքներում, որոնք արաբների կողմից նվաճվել են և բնակիչներն ընդունել են նրանց տիրապետությունը, ապա այլազգիներն իրավունք ունեն այն ամենին, որ պայմանագրում նշված է և արաբները պարտավոր են հավատարմորեն այն գործադրել:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

[1] **Օմար իբն ալ-Խաթթաբ** – *Մուհամմադ մարգարեին հաջորդած չորս ուղղահավատ խալիֆաներից (Աբու Բաքր (632-634), Օմար (634-644), Օսման (644-656) և Ալի (656-661)) երկրորդը: Նրա օրոք տեղի ունեցան Արաբական խալիֆայության ամենակարևոր նվաճումները՝ Սիրիան, Միջագետքը, Եգիպտոսը, Իրանի մի մասը:*

[2] *Սանաա – Հնագույն ժամանակներից Եմենի գլխավոր քաղաքը: Ներկայիս միավորված Եմենի հանրապետության մայրաքաղաքը: (Smith, Sana, EOI, CD-ROM, (IX: 1a))*

[3] *Մադինա – Մադինան, կամ Յասրիբը գտնվում է Արաբիայի Հիջազ երկրամասում Մեքքայից մոտավորապես 500 կմ դեպի հյուսիս: Գտնվում է այն առևտրական ճանապարհի վրա, որը Եմենից գնում է մինչև Ասորիք: (Hitti, History of the Arabs).*

[4] *Մուհամմադ – Ահմադ իբն Արդայլահ Մուհամմադը (570-632) Հաշիմ ցեղի Կուբայշ տոհմի ներկայացուցիչ, իսլամի և մահմեդական համայնքի հիմնադիրը: Մահմեդականների պատկերացմամբ Ալլահի մարգարե և առաքյալ, որի միջոցով մարդկանց է փոխանցվել Ղուրանի՝ մահմեդականների սուրբ Գրքի տեքստը: (Ислам, энц. словарь, стр. 178-180):*

[5] *Սուղուր – Սուղուր կամ «իկլիմ ալ-Սուղուր» էր կոչվում արաբական սահմանային ամրությունների գոտին, որն անմիջականորեն սահմանակցում էր Բյուզանդական կայսրության հետ: Սա հատուկ վարչական միավոր էր, որը երեքհարյուրամյա (7-10-րդ դդ.) արաբաբյուզանդական պայքարի ընթացքում գտնվում էր խալիֆայության կազմում: Այն ընդգրկում էր Մեծ Հայքի Բարձր Հայք և Զորրորդ Հայք (Մոփք) նահանգների որոշ արևմտյան գավառներ, Փոքր Հայքի հարավային կեսը, ինչպես նաև նախկին բյուզանդական նահանգներ Եփրատացիքն ու Կիլիկիան ամրողջովին: Սուղուրի նվաճումն ու որպես վարչական միավորում ձևավորման գործընթացը սկսվեց Օմար (634-644) և Օսման (644-656) խալիֆաների օրոք, չարունակվեց Մուավիա Ա-ի ժամանակ (661-680) և իր ավարտին հասավ Աբդ ալ-Մալիքի (685-705) օրոք: Վերջինիս օրոք վերջնականապես ձևավորվեցին Սուղուրի երկու գոտիները՝ Ջազիրայի (Վերին Միջագետք) սահմանային ամրությունների գոտին (ալ-Սուղուր ալ-Ջազարիյա) և Ասորիքի սահմանային ամրությունների գոտին (ալ-Սուղուր ալ-Շամիյա): Առաջինի մեջ էին մտնում հետևյալ ամրացված քաղաքները՝ Մալաթիա (վարչական կենտրոն), Հաղաս, Մարաչ, Զապետրա և այլն, իսկ երկրորդի մեջ՝ Տարսոնը (վարչական կենտրոն), Ադանան, Մամեստիան, Անազարբան և այլն: Վերջապես այս երկու գոտիներին ավելացվում էր նաև Թեոդոսիոպոլը, կամ Կարնո քաղաքը (Կալիկալա) Հայաստանում և Սամոսատը՝ Դիար Բաքրում: (Տե՛ս **Տեր-Ղևոնդյան,** Արաբ. սահմ. ամր. գոտին):*

[6] *Խոսրովի հողերը – Նկատի ունի Խոսրով Ա Անուշիրվանի (531-579) պետության տարածքները:*

[7] *Իշխան հավատացելոց - Արաբերեն՝ «ամիր ալ-մումինին», որ նշանակում է հավատացյալների իշխան, կամ հրամանատար: Այս անունը տրվում էր խալիֆային: Առաջին անգամ այն կրել է Օմար իբն ալ-Խաթթաբը, որին հետևել են Օմայան ու Աբբասյան խալիֆաները: Այս տիտղոսը իրենց են վերագրել նաև մի ամբողջ շարք այլ մահմեդական տիրակալներ (Կարմաթներ, Ֆաթիմյաններ, Այմոհադներ և ուրիշներ): (Shorter Enc. of Islam p. 42):*

[8] *Տասանորդ – կամ ուշր կոչվում է այն հարկը որ վճարվում է հողագործությունից ստացված ապրանքներից: Վճարում են մահմեդականները, այն հողերից, որոնք*

խալիֆայի կողմից նվիրաբերված լինելու պատճառով ադատված են խարաջից (հողահարկ) (Ислам, энц. словарь, стр. 247-248):

9 Շիրք (Հեհանոս) – նշանակում է Հեհանոս, բաղմաստվածչություն: Բուն իմաստը՝ Ալլահի կողքին ընդունել մի այլ աստծո գոյություններ, կամ պաշտել առարկաների ու մարդկանց, մի բան որ համարվում էր չեզոք միաստվածությունից (մոնոթեիզմից) և համարվում էր մեծագույն մեղք: Բայց այս բառը տրվում էր նաև բոլոր ոչ մահմեդականներին, որոնք (ինչպես հրեաներն ու քրիստոնյաները) կարող էին և մոնոթեիստներ լինել: Ավելին, այս անունը իսլամի մի ուղղության հետևորդը տալիս էր մի այլ՝ հակառակորդ ուղղության հետևորդին (ինչպես սուննիները՝ շիաներին և այլն): (Ислам, энц. словарь, стр. 300):

10 Ահլ դիմմա – Հովանավորյալներ: Այսպես են կոչվում այն ոչ մահմեդականները, որոնք ընդունել են մահմեդականների տիրապետությունը, վճարում են ջիզիա (գլխահարկ) և դրանով հանդերձ ստացել են մահմեդականների հովանավորություն (դիմմա), որը կայանում է արտաքին թշնամիներից պաշտպանության, ինչպես նաև անձի և գույքի անձեռնմխելիության մեջ: (Ислам, энц. словарь, стр. 27):

11 Սավադ – Սաուադ, Սաուադ (անահոդ), այսպես մահմեդական վաղ շրջանում կոչվում էր Իրաքը, կամ նրա հարավային մասը, ավելի ճիշտ Եփրատ և Տիգրիս գետերի միջև ողողված ու մշակված հողերը (մանավանդ հարավում): Այս բառը օգտագործվում էր նաև պարբերաբար մշակված ու ողողված ցանկացած հողատարածքի վերաբերյալ, ինչպես օրինակ Սավադ ալ-Բասրա, Սավադ ալ-Բուխարա և այլն:

Արաբները առաջին հերթին այսպես կոչեցին Իրաքի հարավը, ի նշան այն հակադրության, որ կար Արաբիայի «սպիտակ» անապատի ու Իրաքի կանաչապատ ու սև հողերի միջև: (H. H. Schaeder, Sawad, EOI, CD-ROM, (IX: 87a)):

12 Մուլք – Սեփականություն, ինչպես նաև հողատիրության տեսակ, որն առաջանում է ժառանգման, գնման, նվիրատվության, ինչպես նաև յուրացման (ոչ բերրի հողերի յուրացում և այլն) և ռազմական ավարի խլման ճանապարհով: (Ислам, энц. словарь, стр. 169):

13 Զիմմի – Զիմմիները նրանք են, որոնք օգտվում են Զիմմայից, իսկ Զիմման, մի տեսակ անվերջ նորոգվող, պայմանագիր է, որի միջոցով մահմեդական համայնքը ապահովում է հյուրընկալություն և պաշտպանվածություն (անվտանգություն) այլ կրոնների հետևորդների համար, որոնք ընդունել են իսլամի գերիշխանությունը: (Cl. Cahen, Dhimma, EOI, CD-ROM, (II: 227a)):

14 Աբու Հանիֆա – Աբու Հանիֆան (699-767) մահմեդական կրոնի և իրավագիտության մասնագետ է: Նրա անունով է կոչվում Մահմեդական կրոնա-իրավագիտական չորս դպրոցներից (մազհաբներ) մեկը՝ Հանաֆիների (Հանիֆիական) մազհաբը: (Ислам, энц. словарь, стр. 11, տե՛ս նաև սույն գրքի ներածության մեջ):

15 Զաքատ – Ոչ մեծ հարկ, որը գանձվում է հօգուտ ումմայի (մահմեդական համայնք): Սկզբում այս «զաքատը» տրվել է իբրև բարեգործություն, ոչ պարտադիր, կամավոր նվիրատվություն, որ տրվում էր յուրատեսակ փոխօգնության «ֆոնդին»: Հետագայում այն դարձավ պարտադիր, սակայն զաքատի չափը ժամանակի ընթացքում փոփոխվում էր: (Ислам, энц. словарь, стр. 74):

16 Սադաքա – ողորմություն, որը տալիս են ունևորները չունևոր մարդկանց համար: Համարվում է որ այն մաքրող ու սրբագործող նշանակություն ունի մահմեդականի համար: Հաղիսներում և իրավագիտական գրականության մեջ սադաքա է կոչվում զաքատը (Տե՛ս ծանոթագր. 15): Սադաքա է կոչվում նաև զաքատի այն տեսակը, որը տրվում է անաստուններից, նրանց մի մասը (բան բնդհանուր գլխաքանակի) հանձնելով որպես օգնություն: Սակայն համախ սադաքան և զաքատը չփոխվում են: (Ислам, энц. словарь, стр. 202, T. H. Weir [A. Zysow], Sadaka, EOI, CD-ROM, (VIII: 708b))

17 Սաբիներ – Արաբերեն ալ-սաբիուն, կամ ալ-սաբիյա: Կրոնական համայնք, որը «Ահլ ալ-Քիտաբի» կամ «Ահլ ալ-Ջիմմայի» մաս կազմելով, միջանկյալ դիրք է գրավում հավատացյալների ու հեթանոսների միջև, հետևաբար վայելում է մահմեդական համայնքի հովանավորություն:

Այս անունը տրվել է առնվազն երեք տարբեր կրոնական համայնքների: Այս համայնքի մասին հիշատակություն կա նաև Ղուրանում, սակայն մինչև այժմ հատակ չէ թե հատկապես ո՞ր համայնքը կամ ազանդն էր նկատի առնվում: Մուհամմադի ժամանակներում սա հավանաբար Արաբիայում բնակվող մի համայնքի անվանում էր, որ հետևում էր մանիքեականության նման մի ուսմունքի: Մյուս համայնքը, որին տրվում է «Սաբիներ» անվանումը Հարավային Իրաքում (Բաթահիհ) բնակվող հրեա-քրիստոնեական մի հին ազանդ էր: Եվ վերջապես Հայտնի են Խառանի սաբիները, վերին Միջագետքում, որոնք հետագայում (8-11-րդ դդ.) Ղուրանի այդ հիշատակությունն իրենց վերագրեցին: Նրանք հաստատվեցին նաև Բաղդադում և Իրաքի տարբեր մասերում: Սրանք հետևորդներն էին հին սեմական բաղմաստվածյան մի կրոնի, ունեին մեծապես հելլենացած վերնախավ: Սրանք սկսեցին անվանվել Սաբիներ, բան երևույթին ս. Գրքի ժողովրդի շարքում դասվելու և հալածանքներից ազատվելու համար: (F. C. de Blois, Sabi, EOI, CD-ROM, (VIII: 672a), Ислам, энц. словарь, стр. 74):

18 Սամարացիներ – Սամարացիները Իսրայելի ժողովրդի մաս են կազմում, բայց հրեական կրոնի հետևորդներ չեն: Իսլամի շրջանում սամարացիները, հրեաների ու քրիստոնյաների պես, համարվել են «Գրքի ժողովուրդ»: Սամարացիները օգտագործում էին երբայերենը, որպես կրոնական արարողությունների լեզու, արաբական նվաճման ժամանակ նրանք արամեախոս էին և չատ չուտով սկսեցին խոսել արաբերեն: Արաբ մատենագիրները հաճախ հիշում են սամարացիներին, որպես հմուտ բժիշկներ: Սամարացիները միշտ համարվել են չատ փակ, խստակյաց ու մաքրակենցաղ համայնք: (S. Noja Noseda, al-Samira, EOI, CD-ROM, (VIII: 1044a)):

19 Հիրա – Սասանյան Իրանի ազդեցության տակ գտնվող արաբական իշխանություն, կամ թագավորություն, Եփրատից արևելք բնակած տարածքներում: Այն ձևավորվել է 3-4-րդ դարերում: Գետնությունը հիմնել է արաբական Լախմ տոհմը: Հիրան առավել կարևորություն ձեռք բերեց 5-րդ դարում, երբ Սասանյանների հետ միասին պայքարում էր բնդդեմ Բյուզանդիայի: Հիրայի բնակչությունը հիմնականում քրիստոնյաներ էին, իսկ տիրակալները սկզբում հեթանոս, իսկ վերջին շրջանում՝ քրիստոնեացան: Հիրան գոյատևեց մինչև 7-րդ դարի սկիզբը: Հիրայի տիրակալները հովանավորեցին նախամահմեդական (ջահիլիյայի) շրջանի արաբ նշանավոր բանաստեղծներին: (Hitti, History of the Arabs, p. 81-84):

20 Նաջրան – Նաջրանը Արաբիա թերակղզու հարավային կեսում ամենակարևոր քրիստոնեական կենտրոնն էր 6-րդ դարում: Ընդ որում, գերակշռում էր միաբնակությունը: Կարելի է ասել, որ Նաջրանը վերածվել էր բոլոր քրիստոնյա արաբների սրբարանի քաղաքի: Նաջրանի քրիստոնյաների ինքնուրույնությունը վտանգվեց իսլամի հանդես գալով: Սկզբում մահմեդականները հանդուրժում էին նրանց, ապա Մուհամմադ մարգարեն թույլ տվեց նրանց հետևել իրենց կրոնին, դրա փոխարեն պահանջելով հատուկ հարկ վճարել, իսկ Օմար խալիֆայի (634-644) օրոք պահանջվեց, որ նրանք թողնեն իրենց քաղաքն ու գաղթեն: Սրանց մեծ մասը հաստատվեց Իրաքի Նաջրանիյա քաղաքում, Քուֆայից ոչ հեռու: Սակայն, բան երևույթին, դրանից հետո էլ Նաջրանում դեռ մնում էր բավական թվով քրիստոնյա բնակչություն, այնքան, որ 9-10-րդ դարերում կային եպիսկոպոսներ: (Irfan Shahid, Nadjran, EOI, CD-ROM, (VII: 871b)):

21 Դիրհեմ – արաբական արծաթե դրամ:

22 **Ալի իբն Աբու Թալիբ** – Ալի իբն Աբու Թալիբը (մահ. 661 թ. Հունվարի 21-ին) չորրորդն ու վերջինն է ուղղահավատ խալիֆաներից: Նա Մուհամմադ մարգարեի

դարմիկն ու փեսան էր, որի անվան հետ է կապվում իսլամի չիայական ուղղության ծագումը: (Ислам, энц. словарь, стр. 18):

[23] *Առաքյալի – Մուհամմադը Ղուրանում երբեմն անվանվում է «ռասուլ» (առաքյալ), երբեմն «նաբի» (մարգարե): Տվյալ դեպքում խոսքը Մուհամմադի ասույթներից, կամ այսպես կոչված «Հադիսներից» մեկի մասին է: «Հադիսներ» Մուհամմադի խոսքերի կամ գործերի մասին վկայություններ են, որոնք մահմեդական համայնքի համար Ղուրանից հետո իրավունքի երկրորդ աղբյուրն են հանդիսանում (Ислам. энц. словарь, стр. 262):*

[24] *Իյադ իբն Ղանմ – Իյադ իբն Ղանմ իբն Ջուբայր իբն Ամր Շադդադ իբն Ռաբիա իբն Հիլալ ալ-Կուրաղի ալ-Ֆիհրին մահացել է հիջրի 20 թվականին: Ամր Բաքրի թիկնապահն էր և Օմար խալիֆայի զորավարը: Մասնակցել է Յարմուքի վճռական ճակատամարտին (20 օգոստոս, 636) և կատարել է գրավումներ Հյուսիսային Ասորիքում: Գլխավոր դերակատարն է եղել Միջագետքի նվաճման մեջ: Նա է գրավել Ամիդն ու Ռակկան: (Տե՛ս Նալբանդյան, Արաբական աղբյուրներ, էջ 122):*

[25] *Ահլ ալ-քիտաբ – Գրքի ժողովուրդը (ահլ ալ-քիտաբ) հիշատակվում է Ղուրանում որպես մարդիկ, որոնք միջնակյալ դիրք են գրավում մահմեդական հավատացյալների ու հեթանոսների միջև: Այս կատեգորիայի մեջ են մտնում առաջին հերթին հրեաներն ու քրիստոնյաները, ինչպես նաև սաբիները, սրանց ավելացվում են նաև զրադաշտականները: (Ислам, энц. словарь, стр. 28):*

[26] *Ջարիբ – այն հավասար է չուրջ 2500 քառ. մետրի: (Тер-Гевондян, Армения, стр. 199).*

[27] *Կաֆ – կամ կաֆիզ: Մեծ չափի կաֆիզը (ցորենի կշռման չափ է) Իրաքում կշռում էր 48, 75 կգ, իսկ փոքրը՝ մոտավորապես 24, 108 կգ: (Хинц, Меры и веса, стр. 50-52):*

[28] *Դինար – արաբական ոսկեդրամ:*

[29] *Մոդ – կամ մուդդ՝ ցորենի ծավալը հաշվելու միավոր է, որը սովորաբար հավասար էր 1, 053 լիտրի, թեև տարբեր երկրներում այն փոփոխվում էր: (Хинц, Меры и веса, стр. 56).*

[30] *Ադան – կոչ որով հավատացյալներին հրավիրում են աղոթքի:*

[31] *Ռումի երկիր – Բյուզանդական կայսրություն:*

[32] *Խալիդ իբն ալ-Վալիդ – Մուհամմադ մարգարեի ժամանակակիցն էր, հռչակավոր զորավար: Նա բազմաթիվ հաղթանակներ է տարել Արաբիայի ներսում, ինչպես նաև ընդդեմ Բյուզանդիայի և Իրանի թե՛ Մուհամմադի, թե՛ Ամր Բաքրի և թե՛ Օմարի օրոք: Մահացել է 641/642 թվականին: (Shorter Enc. of Islam p. 236):*

[33] *Ամր Բաքր – Ամր Բաքր ալ-Սիդդիկր (572 – 634 օգ. 23) առաջինն է չորս ուղղահավատ խալիֆաներից: Առաջիններից էր, որ ընդունեց իսլամը և մշտապես աջակցում էր մահմեդական համայնքին: Նա ուղեկցում էր Մուհամմադին թե՛ Մեքքայում և թե՛ Մադինայում: Ամր Բաքրը իր դստերը՝ Այշային կնության տվեց Մուհամմադին: Երբ Մուհամմադը հիվանդացավ Ամր Բաքրին նշանակեց աղոթքի դեկավար: Մուհամմադի մահից հետո համայնքը Ամր Բաքրին ընտրեց խալիֆա, որը իշխեց երկու տարի (632-634) (Ислам, энц. словарь, стр. 8):*

[34] *Օսման – Օսման իբն Աֆֆանը (575 – 656) երրորդն է ուղղահավատ խալիֆաներից: Նա հարուստ վաճառական էր Օմայան տոհմից: Մուհամմադի առաջին հետևորդներից էր: Օմար խալիֆայի մահից հետո ստեղծված խորհուրդը խալիֆա ընտրեց Օսմանին, որը իշխեց 644-656 թվականներին: Նրա օրոք ավարտին հասցվեց Իրանի նվաճումը: Հենց Օսմանի նախաձեռնությամբ էր, որ կազմվեց Ղուրանի համահավաք տեքստը: 656-ին Օսմանի դեմ դավադրություն կազմակերպվեց ու խալիֆան սպանվեց:*

[35] *Ալի – Տե՛ս . Ամր Յուսուֆ, ծնթգր. 22:*

ՎԱՀԲ ԻԲՆ ՄՈՒՆԱԲԲԻՀ (մահ. 728/734) / ԻԲՆ ՀԻՇԱՄ (մահ. 828/833)

Եմենցի Ամր Աբդալլահ Վահբ իբն Մունաբբիհը Հարավային Արաբիայի ավանդությունների ու զրույցների պատմող ու ասացող է: Նա ուներ պարսկական ծագում և ծնվել էր Զիմարում, Սանաայից ոչ հեռու՝ 654/655 թվականին: Նրա հայրը՝ Մունաբբիհը, ըստ ավանդության, ընդունել էր իսլամ դեռևս Մուհամմադի կենդանության օրոք: Ինքը՝ Վահբը աշխատել է որպես դատավոր Սանաա քաղաքում: Իր կյանքի վերջում, ինչ-որ պատճառով, եմենի կառավարիչը Վահբին պատժում է մտրակի հարվածներով, որի հետևանքով նա մահանում է:

Վահբ իբն Մունաբբիհը (մահ. 728/734) առաջիններից է, որ հավաքել ու գրի է առել հին Արաբիայի (հին Եմենի) պատմությանը վերաբերող բանավոր զրույցները, որոնք սակայն առասպելախառն էին, որից հետագայում օգտվել են այլ պատմիչներ և առաջին հերթին Ամր ալ-Մալիք իբն Հիշամը (մահ. 828/833), որը վերամշակել ու խմբագրել է Վահբի «Թագերի մատյանը» երկը, որը մեզ հասել է հենց Իբն Հիշամի խմբագրությամբ:

Ամր Մուհամմադ Ամր ալ-Մալիք Իբն Հիշամը առավել հայտնի է որպես Մուհամմադ մարգարեի կենսագրության հեղինակ: Ասվում է, որ նրա ընտանիքը հիմյարական ծագում ուներ և Բասրայից տեղափոխվել է Եգիպտոս, որտեղ նա ծնվել ու ապրել է: Իրն Հիշամը տոհմագիտության ու քերականության փայլուն գիտակ էր: Նա մահացավ Եգիպտոսում 828 կամ 833 թվականին:

Ներկա թարգմանությունը կատարված է հետևյալ բնագրից. Wahb ibn Munabbih, Kitab attijan fi muluk Himyar, ed. Krenkow, Haydarabad, 1347 (1928).

(Encyclopaedia of Islam, Wahb ibn Munabbih, R. G. Khoury, v. XI, pp. 33-36, Ibn Hisham, W. Montgomery Watt, v. III, pp. 800-801, X. А. Р. Гибб, Арабская литература, Москва, 1960, стр. 123-124)

ԹԱԳԵՐԻ ՄԱՏՅԱՆ

(ՔԻՏԱԲ ԱԼ- ՏԻՋԱՆ)

ԹԱԳԵՐԻ ՄԱՏՅԱՆ ՀԻՄՅԱՐԻ ԹԱԳԱՎՈՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Վահր իրն Մունաբբիհից: Պատմել է Աբու Մուհամմադ Աբդ ալ-Մալիք իրն Հիշամը լսելով Ասադ իրն Մուսայից, իսկ սա Աբու Իդրիք իրն Սինանից, սա էլ իր մոր կողմից պապ Վահր իրն Մունաբբիհից:

էջ 46

Նա (Կահթանը) գրոհեց Բաբելոն (Բաբիլ)[1] հետապնդելով ալ-Իսքանանին Ատրպատականում, իսկ վերջինս նրա դեմ կանգնեց Հաբեթի որդիների հետ: Կահթանը հաղթեց ու սպանեց Իսքանանին, նրա Հաբեթի որդիներից բաղկացած զորքը ցրեց, ապա գնաց Հայաստան երկիրը և նրանից այն կողմ:*

էջ 47

*Նա (Աբդ Շամսը)** չարժվեց դեպի Բաբելոն, նվաճեց, կոտորեց նրանում եղած դժոխքի (բավար) որդիներին, մինչև հասավ Հայաստանի Հողը ու նվաճեց Հաբեթի որդիների Հողը:*

էջ 63

Նա (Մուաֆիր իրն Յաաֆուրը) նվաճում էր երկրներ, հարկ պահանջելով ու հասավ Եփրատ, անցավ դեպի Հայաստան, որը նվաճեց ու կոտորեց նրա այն թագավորներին, որոնք չէին հնազանդվում: Նա այստեղ գտավ տարբեր թագավորների, ապա անցնելով կամուրջը (կանթարա) անցավ Ատրիքի (Շամ) Հողը:

* Հարավարաբական ցեղերի առասպելական նախահայրը:

** Համանուն ցեղախմբի առասպելական նախահայրը:

էջ 65

Ասել է Վահբը երբ [Շադդադ իրն Ադը] թագավոր դարձավ հավաքեց իր զորքը: Նա կորովի մարդ էր և անցավ երկիրը տրորելով ու հասավ Մեծ Հայք (Արմինիա ալ-Քուբրա), ուր սպանեց ամեն մի ըմբոստի: Ապա անցավ Եփրատը դեպի արևելք, հաննելով նրա հնուավոր ծայրերը: Ով նրա դեմ կանգնում էր, սպանում էր նրան: Հասավ Սամարկանդի ափերը և մինչև Տիբեթ երկիրը: Ապա դիմեց Հայաստան և այնտեղից անցավ Ատրիք (Շամ):

էջ 80

Ասել է Վահբը՝ երբ Ռաիչը հասավ Խորասանի լեռները, ստացավ Հայաստանի նվերները, քանզի նրանք (հայերը) գգուչանում էին նրանից՝ իմանալով Հնդկաստանում կատարվածը: Հայաստանի թագավորները ուղարկել էին սպիտակ բաղնիներ, մետաքսեղեն (դիբաջ), թամբեր ու զարմանալի ապրանքներ, որ թագավորներին էին արժանի: Նա հարցրեց դեսպաններին՝ այս բոլորը ձեր երկրից է. ասացին՝ այո ոչ ավ արքա: Ասաց՝ մենք այլևս ոչ մի բան չենք գրավի, մինչև Հայաստանը չգրավենք: Նա առաջ չարժվեց դեպի Հայաստան նի Հողը: Նրա մոտ եկավ Շամմար իրն ալ-Աթթաֆ ալ-Հիմյարին հարյուր հազարով ու նրան հետևեց իր զորքով: Նվաճեցին Հայաստանը ու գրավեցին երկրի լեռնացքները մինչև երկրի մյուս կողմը, ինչ որ կար Արջ համաստեղության տակ և երկրի անկյուններում: Ապա վերադարձավ Ատրպատական:

էջ 100

Ապա [երկկոտոչավորը][2] նվաճեց Գոգն ու Մագոգը, Ջաբիրսայի ու Ջաբիրկայի ժողովուրդը, կոտորեց ում կարողացավ կոտորել, ում կամեցավ՝ նրաշխավորագիր տվեց: Նվաճեց Հայաստանը և այնտեղ եղած [ժողովուրդը], ապա թևքվեց դեպի Նեհավենդի կիրճը (Հովիտը) և այն կոչեց Բար ալ-Արուաբ (դռների դուռ, Դարբանդ) և նույն ձևով մինչև օրս կոչվում է:

Երկկոտոչավորը նվաճելով Գոգն ու Մագոգը կուվեց ու հաղթեց նրա ժողովրդին և մի ազգի, որը Նոյի որդի Հաբեթի որդի Իլջանից է սերում, թողեց Հայաստան կղզում Ջաբիրսայի կողմերում: Սրանք կոչվեցին Թուրքեր[3] (արաբ. տուրք), քանզի երկկոտոչավորը թողեց (տարաքա) նրանց ու դիմեց Գոգի ու Մագոգի երկիրը նվաճելու:

Լ Ջ 110

Ալեքսանդր Հռոմը (Հույնը)[4] ազնիվ, իմաստուն մարդ էր, Իկրիտիս ծոցի[5] ափին չինեց երկու փարոս՝ մեկը Բաբելոնի Հողում, մյուսը՝ նրանից արևմուտք Հայաստանում: Իկրիտիսի ծով է կոչվել արևմտյան ծովը:

Լ Ջ 131

Ապա [Աբրահան][6] դիմեց դեպի Ասորիք ու հասավ լեռնանցքը: Այստեղ ընդունեց Հռոմների ու Հայաստանի ժողովրդի նվերները, հետո գնաց Հասավ Մեքքա:

Լ Ջ 222

Շամմար Յուրիչ իբն Նաչիր ալ-Նաամ թագավորը Հզոր էր, ահագին, ուստի սուղերը, քրդերը, խուզերը (խուզիստանցի՞ք), զութթիները (գնչուներ), գոթերը, որոնք բոլորը Նոյի որդի Հարեթի որդիներն են, լուր ուղարկեցին իրենց Հարեթորդի եղբայրներին, որոնք Հայաստանի Հողում են՝ Բալջային ու Ջաջային և ասացին նրանց:

Լ Ջ 223

Ապա [Շամմար Յուրիչը] չարժվեց թողնելով Իրաքը, որտեղ Ֆարսի ու Հարեթի որդիների բազմությունը կար և դիմեց Ջազիրա, ապա գնաց դեպի Եփրատ՝ կամենալով հասնել Հայաստան:

Լ Ջ 225

Տուբբա Շամմար Յուրիչը հասավ Հայաստան, իսկ Կավատը[7] (Կուբադ) լսելով այդ մասին հրամայեց թուրքերին հարձակվել Հայաստանի վրա: Առաջ չարժվեցին թուրքերը՝ կամենալով Հայաստանի վրա հարձակվել: Նա (Եմենի թագավորը) կատաղի պատերազմ մղեց, ապա փախուստի մատնեց և խիստ կոտորեց, բացի նրանցից, ովքեր լեռներում ապաստանեցին: Նա Հայաստանի Հողում գերեվարեց, քաղաքներ ավերեց, իսկ Կավատը լսելով, որ Տուբբա Շամմար Յուրիչը Հայաստանում է իր տեղից չարժվել էր, իր հետ եղող պարսիկների, փերղանացիների, սուղդերի, քրդերի, զութթերի, խուզերի բազմությամբ, կամենալով արշավել արաբաց երկիրը:*

* *Թագավորի տիտղոսը Եմենում:*

ՎԱՀԲ ԻԲՆ ՄՈՒՆԱԲԲԻՀ / ԻԲՆ ՀԻՇԱՄ

ԹԱԳԵՐԻ ՄԱՏՅԱՆ (ՔԻՏԱԲ ԱԼ-ՏԻՋԱՆ)

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

[1] *Բաբելոն (Միջագետքի) – Արաբ մատենագիրները Բաբելոն, կամ Բաբիլ են անվանում ինչպես Բաբելոն քաղաքը, այնպես էլ Բաբելոնիա երկիրը: (Տե՛ս Babil, G. Awad, EOI, CD-ROM, (I: 846a)):*

[2] *Երկկոտոչավորը – Ալեքսանդր Մեծը, կամ Ալեքսանդր Մակեդոնացին մահմեդական մատենագիրների մոտ նույնացվում է Ղուրանի XVIII սուրայում հիշատակվող «զու-լ-կառնայն»-ի, այսինքն «երկկոտոչավորի» հետ: Երկկոտոչավորին տրվեց իշխանություն երկրի վրա ծայր արևմուտքից մինչև ծայր արևելք և նա, ի պատասխան ճնշված ժողովուրդների խնդրանքի, մի հսկա պատնեշ կառուցեց երկաթից ու պղնձից ընդդեմ առասպելական Գոգ ու Մագոգի (Յաջուջ և Մաջուջ) հարձակումների: (al-Iskandar, W. Montgomery Watt, EOI, CD-ROM, (IV: 127a)):*

[3] *Թուրքեր – Այսպես էին արաբները կոչում խազարներին և նրանց ցեղակիցներին, որոնց լեռները Թյուրքական լեռվարնատնիքին են պատկանում:*

[4] *Ալեքսանդր Հռոմ – Նկատի ունի Ալեքսանդր Մակեդոնացուն, տես ծնթգր. 2: Տվյալ դեպքում «Հռոմ» բառը օգտագործված է Հույն, Հելլեն իմաստով, մինչդեռ այլ տեղերում արաբ մատենագիրներն այս բառը օգտագործում են «Բյուզանդացի» իմաստով:*

[5] *Իկրիտիս ծոց – Իկրիտիսը կրետե կղզին է: Իկրիտիսի ծովը Միջերկրականն է, իսկ Իկրիտիսի ծոցը Համանական է Կրետեի մոտակա ծովն է: Պետք է նկատի ունենալ նաև, որ երբեմն, արաբ պատմիչները Կրետեն չփոթում են Կիպրոս կղզու հետ: (Ikritish, R. Mantran, EOI, CD-ROM, (III: 1082a)):*

[6] *Աբրահա – 6-րդ դարի Արաբիայի քրիստոնյա թագավոր, որն ըստ ավանդության, մի մեծ արշավանք է կատարել դեպի Մեքքա, Մուհամմադ մարգարեի ծննդյան տարին (570): Արժանահավատ աղբյուրների տեղեկությունների համաձայն Եթովպիայի թագավորը՝ Հելլեսթեյոսը, արշավեց դեպի Հարավային Արաբիա 531 թվականից մի քանի տարի առաջ, սպանեց այդ երկրի թագավորին, նշանակեց մի խամաճիկ թագավոր ու վերադարձավ իր երկիրը: Ապա տեղի ունեցավ հակաեթովպական ապստամբություն, որի հետևանքով գահին բազմեց Աբրահան: Նա փորձեց ինքնուրույն գահակալ մնալ չենթարկվելով ո՛չ եթովպիային, ո՛չ Բյուզանդիային և ո՛չ էլ Սասանյան Իրանին: Սակայն նրա հեռահար արշավանքների մասին արաբանագրություններն ու այլ պատմական աղբյուրները չեն հաղորդում: Մնացածը հետագայի առասպելական պատմություններ են, որ վերագրվել են Աբրահային: (Abraha, A. F. L. Beeston, EOI, CD-ROM, (I: 102a)):*

[7] *Կավատ – Հավանաբար սա Սասանյանների արքա Կավատ Ա-ն է (488–496, 498/499–531):*

ՎԱԿԻԴԻ (747–822)

Աբու Աբդալլահ Մուհամմադ իբն Օմար ալ-Վակիդին ծնվել է Մադինայում, եղել է Բաղդադի դատավորը: Նրան այդ պաշտոնին նշանակեց Մամուն խալիֆան գահին բարձրանալուն պես: Տեղեկություններ կան, որ նա չատ առատաձեռն անձնավորություն է եղել, փորձել է զբաղվել հացահատիկի առևտրով, բայց ձախողվել է և ընկել պարտքերի տակ: Վակիդին մահմեդական իրավագիտության մասնագետ էր: Հեղինակ է «Մատյան արշավանքների մասին» (Քիտար ալ-Մաղազի) գրքի, որտեղ չարադրում է Մուհամմադի կյանքի օրոք իրականացված արշավանքների պատմությունը:

Վակիդիին է վերագրվում նաև «Ասորիքի նվաճումը» (Ֆուտուհ ալ-Շամ) երկը, որից էլ կատարված են թարգմանություններ ներկա Հատորում: Թեև կան գիտնականներ (Լեդեր), որոնք այդ վերագրումը համարում են ոչ հիշտ:

(Вакыди, Е. А. Беляев, Сов. ист. энц., т. 2, М. 1962, стр. 930, *Encyclopaedia of Islam, v. XI, pp. 101-103, al-Wakidi, S. Leder).*

Տե՛ս նաև.

- History of Muhammeds campaigns by al-Wakidy, ed. By A. Kremer, Calcutta, 1856.

- Futuh ash-Sham, 1-2 v. Cairo, 1302 hijriyya.

- W. Nassau Less, 3 vols., Calcutta 1854-1862.

ՎԱԿԻԴԻ

ԱՍՈՐԻՔԻ ՆՎԱՃՈՒՄԸ (ՖՈՒՏՈՒՀ ԱԼ-ՇԱՄ)

ԳԻՐՔ ԻՄԱՑՈՒԹՅԱՆ

էջ 12

Նոյն այդ բանը կատարեց (կառուցեց տապանը) և Ալլահն ուղարկեց ջրհեղեղը երկրի վրա:

[Տապանը] մնաց ջրերի վրա հարյուր հիսուն օր:

Վեցերորդ ամսում կանգնեց Կարդա[1] լեռան վրա, իսկ տասներորդ ամսում երևացին լեռների գագաթները:

Իսկ Վահբն ասել է, թե մեզ պատմել են, որ տապանը (նավը) ճանապարհ ընկավ Ռաջաբ[2] ամսի վերջից տասն օր մնացած (Ռաջաբի 20) և մնաց տապանի վրա հարյուր հիսուն օր, ապա մեկ ամիս կանգնեց Արարադ (Ջուդի)[3] լեռան վրա, որը լեռ է Ջազիրա[4] երկրում և [մարդիկ] դուրս եկան Մուհառամ[5] ամսի վերջից տասն օր մնացած (Մուհառամի 20):

Երբ դուրս եկան, կառուցեցին Կարդա գյուղը, որը կոչվեց Սամանին[6] (Թամանին, ութսուն), քանզի նրանում կար ութսուն տուն, յուրաքանչյուրը ամեն մեկի համար, որը նրա (Նոյի) հետ ազատվել էր: Մինչև օրս էլ կոչվում է Սամանինի չուկա:

ՆՎԱՃՈՒՄՆԵՐԸ

Խորասանը[7] նվաճվեց Օսման խալիֆայի օրոք հաչտության [պայմանագրով]: Ինչ վերաբերում է Թարարիստանին[8], Վրկանին (Ջուրջան)[9] ու Ռեյին[10], ապա վերջինս նվաճվել է Օսման իբն Աֆֆանի խալիֆայության ժամանակ հաչտության [պայմանագրով] Արու Մուսա ալ-Աշաարիի կողմից, իսկ Թաբարիստանը նվաճել է Սաադ իբն ալ-Աս հաչտության [պայմանագրով]՝ Օսմանի օրոք:

Քիրմանն[11] ու Սիջիստանը[12] նվաճել է Աբդալլահ իբն Ամիր իբն Քարիզը հաչտության [պայմանագրով]. Ջաբայն[13] ամրողջովին նվաճվել է բռնի ուժով, իսկ Ահուազը[14], Ֆարսը[15] նույնպես նվաճվել են բռնի ուժով:

Սավադն ամբողջովին բռնի ուժով նվաճել է Սաադը Օմարի խալիֆայության ժամանակ, Ջազիրան հաչտության [պայմանագրով] նվաճել է Իյադ իբն Ղանմը: Ինչ վերաբերում է Ասորիքին (Շամ), ապա Աջնադինը նվաճվեց հաչտության [պայմանագրով] Արու Բաբրի խալիֆայության ժամանակ, իսկ Օմար իբն ալ-Խաթթաբը նվաճեց Սուրբ քաղաքը (Երուսաղեմ): Ասորիքի բոլոր քաղաքները նվաճվել են Օմարի օրոք հաչտության [պայմանագրով], սակայն ոչ նրա հոգային տիրույթները, որոնք բռնի ուժով են նվաճվել Յազիդ իբն Աբու Սուֆիանի, Շուրահբիլ իբն Հասանայի, Աբու Ուբայդայի ու Խալիդ իբն ալ-Վալիդի ձեռքով: Եգիպտոսը նվաճվել է հաչտության [պայմանագրով] Ամր իբն ալ-Ասի[16] ձեռքով: Մաղրիբը[17], որն Աֆրիկան (Իֆրիկիա)[18] է, նվաճվել է բռնի ուժով: Սահմանային ամրություններն գոտին (Սուղուր) և Կեսարիան նվաճվել են Օմարի օրոք՝ բռնի ուժով:

էջ 199

Ապա Մամունը[19] գնաց Տարսոն (Թարսուս)[20] երկու հարյուր տասնհինգ թվականի Մուհառամ ամսին (28 փետրվար – 29 մարտ 830): Նա հարձակվեց հռոմների վրա ու նվաճեց Կուռա, Խարսիանոն (Խարչանա) և Սամալու ամրոցները: Ապա վերադարձավ Դամասկոս (Դիմաշկ), հետո գնաց Եգիպտոս ու կրկին եկավ Դամասկոս:

Նա կրկին արշավեց հռոմների դեմ երկու հարյուր տասնյոթ թվականին (7 փետրվար 832 – 26 հունվար 833): Այդ տարի նվաճվեց Լուլուան և նա հրամայեց կառուցել Տիանան (Թուանա): Վերջապես Մամունը վերադարձավ ու գնաց Ռակկա:

Ապա նա վերստին դիմեց հռոմների երկիրը և մնաված Պոտանդոն (Բադանդուն) գետի մոտ երկու հարյուր տասնյոթ թվականի Ռաջաբ ամսի տասնյոթին (7 օգոստոս 833): Նրա մարմինը փոխադրվեց Տարսոն և այնտեղ թաղվեց:

[Մուտասիմի[21] օրոք] հռոմները պաշարեցին Զապետրան (Զիբաթրա): Ապա Իսհակն արշավեց նրանց դեմ, ասպատակեց Ռումի երկիրը երկու հարյուր քսաներեք թվականի Ջումադա Ա ամսին (31 մարտ – 29 ապրիլ 838) և գրավեց Ամորիոնը (Ամմուրիյա)՝ նույն տարվա Ռամադան ամսին (27 հուլիս – 25 օգոստոս 838):

ՎԱԿԻԴԻ

ԱՍՈՐԻՔԻ ՆՎԱՃՈՒՄԸ (ՖՈՒՏՈՒՀ ԱԼ-ՇԱՄ)

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

[1] *Կարդա յեո – Կարդան արաբական ձևն է Կորդուբ անվան: (Հ. Հիւրչման, «Հին Հայոց տեղւոյ անուններր», էջ 203, Երեմյան, Աչխարհացույց, էջ 60 (Տե՛ս Իրն ալ-Ասիր, էջ 364))*

[2] *Ռաջաբ ամիս – Մահմեդական օրացույցի 7-րդ ամիսը:*

[3] *Արարաղ (Զուղի) յեո – Զուղի արաբական անունն է Կորճայք նահանգի Արարաղ յեռան, որի վրա, բան Ղուրանի, կանգ առավ Նոյյան տապանը: (Տե՛ս Իրն ալ-Ասիր, էջ 364):*

[4] *Ջազիրա – Ջազիրա, որը նչանակում է կղզի (այսինքն Միջագետք) , ընդգրկում է վերին Միջագետքը և արաբական խալիֆայության կարևոր նահանգներից էր: Ուներ սահմ, քուրդ, արար և մասամբ նաև հայ ազգարնակչություն: Բաժանվում էր 3 մասի և կոչվում էր այնտեղ հաստատված արաբական ցեղերի անուններով: Այսպես Դիար Ռաբիա, այսինքն Մոսուլի չրջան, Դիար Բաքր Ամիդ կենտրոնով և Դիար Մուդար Եղեսիա (Ռուհա) կենտրոնով: Ջազիրայի կազմում էին հին հայկական Ադձնիք և Կորճայք նահանգները: Ամբողջ նահանգի կենտրոնն էր Մոսուլը, սակայն միչտ չէ, որ Ջազիրան մեկ վարչական միավոր էր, այլ Ը դարում բաժանվեց երկու մասի Մոսուլ և Ջազիրա (Տե՛ս Իրն ալ-Ասիր, էջ 367):*

[5] *Մուհառամ ամիս – Մահմեդական օրացույցի առաջին ամիսը:*

[6] *Սամանին – կամ Թամանին հայկական Թման գյուղն է Արարաղ յեռան մոտ: Արաբներեն սամանին նչանակում է ութսուն: (Տե՛ս Երեմյան, Աչխարհացույց, էջ 53, Իրն ալ-Ասիր, էջ 364):*

[7] *Խորասան – Այսօր այսպես է կոչվում Իրանի հյուսիս-արևելյան նահանգը Մաշհադ վարչական կենտրոնով: Սակայն միջնադարում Խորասան ավելի մեծ տարածք էր ընդգրկում իր մեջ ներառելով նաև այսօրվա Միջին Ասիայի և Աֆղանստանի մի մասը: Խորասանը միչտ հանդիսացել է Իրանի պատվարը հյուսիսից արչավող վաչկատուն, հիմնականում թյուրքալեզու ցեղերի դեմ ու թեև տարբեր ազգեր ու ցեղեր ժամանակի ընթացքում հաստատվել են Խորասանում, այն պահպանել է իր պարսկական դիմագիծը: (Khurasan, C. E. Bosworth, EOI, CD-ROM, (V: 55b)):*

[8] *Թաբարիստան – Նահանգ Հյուսիսային Իրանում կասպից ծովի հարավային ափին, ընդգրկելով թե՛ ափամերձ նեղ չերտը և թե՛ էլբուրսի լեռնաչղթայի չերտը: Այն միջնադարում սահմանափակվում էր արևմուտքում Գիլան և Դայլամ նահանգներով, իսկ արևելքում՝ Ջուրջան (Գուրգան): Հետագայում (մոնղոլական չրջանից հետո) օգտագործվել է Մազանդարան անվանումը: (Tabaristan, (Ed.), EOI, CD-ROM, (X: 18b)):*

[9] *Ջուրջան – Պահլավերեն Վրկանա, արաբերեն Ջուրջան, անտիկ Հյուրկանիա: Նահանգ է կասպից ծովի հարավ-արևելյան անկյունում: (Gurgan, R. Hartmann [J. A. Boyle], EOI, CD-ROM, (II: 1141a)):*

[10] *Ռեյ – Հին դարերում կոչվում էր Ռագա և գտնվում էր հին Մարաստանում: Արաբական չրջանում Ջիբալ նահանգում: Հարուն ալ-Ռաչիդ խալիֆան ծնվել է Ռեյում: Եղել է կարևոր առևտրական կենտրոն: (al-Rayy, V. Minorsky [C. E. Bosworth], EOI, CD-ROM, (VIII: 471a)):*

[11] *Քիրման – Այսպես է կոչվում իրանական նահանգը և նրա մայրաքաղաքը: Անուն ծագում է հին Կարմանիայից: Քիրման նահանգը գտնվում է Իրանի կենտրոնական մեծ անապատ Դաչտ-ի-Լուտից դեպի հարավ-արևմուտք: Քիրմանից հյուսիս գտնվում է Յազդը և Խորասանը, իսկ արևելքում Սիստանն ու Մակրանը (Բալուջիստանը): (Kirman, A. K. S. Lambton, EOI, CD-ROM, (V: 147a)):*

[12] *Սիջիստան – Սիջիստան կամ Սիստան: Արևելյան Իրանի մի նահանգ, որը գտնվում է Խորասանից հարավ և Բալուջիստանից հյուսիս: Ներկայումս վարչակա-*

նորեն բաժանված է Իրանի և Աֆղանստանի միջև: Արաբական տարբերակը Սիջիստան, ծագում է «Սակերի երկիր» կամ «Սակաստան» անվանումից: (Sistan, C. E. Bosworth, EOI, CD-ROM, (IX: 681b)):

[13] *Ջաբալ – Ջաբալ կամ Ջիբալ նահանգը Համադանի չրջանն է: Հետագայում խալիֆայության մեջ այս անվամբ նահանգ կար (Իրն ալ-Ասիր, էջ 364):*

[14] *Ահուազ – Քաղաքը գտնվում է Քարուն գետի վրա, Խուզիստանի դաչտավայրում: Սասանյան չրջանում կոչվում էր Հորմուզդ Արդաչիր, իսկ երբ արաբները գրավեցին այն կոչեցին «Սուկ ալ-Ահուազ», այսինքն «Հուզիների կամ Խուզիների չուկա» այն ցեղի անունով, որ ժամանակին այստեղ ապրել էր: (al-Ahwaz, L. Lockhart, EOI, CD-ROM, (I: 305b)):*

[15] *Ֆարս – Պարս բառի արաբացված ձևն է: Ֆարսը արևմուտքից և հարավ-արևմուտքից ողողվում է Պարսից ծոցի ջրերով և սահմանակից է Խուզիստանին: (Fars, L. Lockhart, EOI, CD-ROM, (II: 811a)):*

[16] *Ամր իբն ալ-Աս – Ամր իբն ալ-Աս ալ-Սահմին Մուհամմադի ժամանակակիցն էր և խալիֆայության սկզբնական չրջանի ամենանչանավոր զորավարներից մեկը: Նա պատմության մեջ է մտել, որպես եգիպտոսի նվաճումն իրականցնող, որը տեղի ունեցավ 640 թվականին: Ամր իբն ալ-Աս մահացավ 663 թվականին, երբ իննսունն անց էր: (Shorter Enc. of Islam, p. 42):*

[17] *Մաղրիբ – Այսպես են կոչել արաբները Աֆրիկայի այն մասը, որն իր մեջ ընդգրկում է Տրիպոլիտանիան, Թունիսը, Ալժիրը և Մարոկկոն: Մաղրիբը (արևմուտք) օգտագործվում է հակադրելով այն Մաչրիկին (արևելք, Լևանտ): Որոչ մասնագիրներ Մաղրիբ հասկացության մեջ ընդգրկում են նաև Իսպանիան և Սիցիլիան: (al-Maghrib, G. Yver, EOI, CD-ROM, (V: 1183a)):*

[18] *Իֆրիկիա – Մաղրիբի արևելյան մասը: Իֆրիկիա անվանումը ծագում է Provincia Africa անվանումից: Այդպես էր կոչվում Կարթագեն պետության նախկին տարածքը Հռոմեական կայսրության կազմում: Շատ անորոչ են Իֆրիկիայի սահմանները: Երբեմն այն չփոթվել է ողջ Մաղրիբի հետ, կամ դիտարկվել որպես նրանից դուրս մի միավոր: Այն հիմնականում ընդգրկել է Թունիսը, Ալժիրի մի մասը և Լիբիայի զգալի մասը, բայց միչտ կրել է փոփոխություններ: (Ifrikiya, M. Talbi, EOI, CD-ROM, (III: 1047a)):*

[19] *Մամուն – Աբբասյան խալիֆա Աբու-լ-Աբբաս Աբդալլահ ալ-Մամունը (786 – 833) որդին էր Հարուն ալ-Ռաչիդի: 809-813 թվականներին Խորասանի կառավարիչն էր, իսկ 813-ին իր եղբոր՝ Ամինի հետ ներքին պայքարում հաղթանակելուց հետո, բազմեց խալիֆայի գահին: Մամունը հայտնի է որպես գիտությունների հովանավոր: Կողմնակից էր մուտազիլիների ռացիոնալիստական ուսմունքին: Հաջող պատերազմներ է մղել բյուզանդիայի: Մահացավ 833-ին Տարսոնում (Сов. Ист. Энц. т. 9, стр. 19):*

[20] *Թարսուս – Տարսոն, քաղաք Կիլիկիայի հարավ-արևմտյան կողմում, կյուդնոս գետի ափին: (ՀՀՇՏԲ, հ. 5, էջ 59-60):*

[21] *Մուտասիմ – Աբու Իսհակ Մուհամմադ իրն Հարուն ալ-Ռաչիդը իչխեց 833-842 թվականներին: Նա որդին էր Հարուն ալ-Ռաչիդի, ծնված մի ստրկուհուց: Իր եղբոր և նախորդի՝ Մամուն խալիֆայի օրոք, ալ-Մուտասիմը օժտված զորավարի անուն վաստակեց Փոքր Ասիայում կռվելով և պետական կառավարման փորձ ձեռք բերելով որպես եգիպտոսի կառավարիչ: Ալ-Մուտասիմի գահակալության օրոք առաջին ռազմական գործողությունները հաջողություն բերեցին Արբասյաններին: Նախ ճնչվեց Խուռամյանների ապստամբությունը Բաբեկի գլխավորությամբ, ապա անձամբ գլխավորելով դինված ուժերը ալ-Մուտասիմը հաջողությունների հասավ Բյուզանդիայի դեմ պայքարում: Ճնչվեցին նաև մի չարք հյուլիսներ ու ապստամբություններ խալիֆայության տարբեր մասերում:*

Նա մահացավ Սամառայում 842 թ. հունվարի 5-ին: Նրան փոխարինեց որդին՝ Հարուն ալ-Վասիկը: Մուտասիմը իր մչակութային մակարդակով գիջում էր Մամունին, բայց տաղանդավոր զորավար էր և կարողացավ պահպանել Արբասյան խալիֆայության որպես ուժեղ և միասնական պետություն:

ԽԱԼԻՖԱ ԻԲՆ ԽԱՅՅԱԹ
(776/777 – 854/855)

Խալիֆա իբն Խայյաթ ալ-Ուսֆուրին, որը հայտնի է նաև Շաբաբ անվամբ, ծնվել է 776 կամ 777 թվականին Բասրայում (Իրաք): Նրա հայրը և պապը ուսումնասիրել են ավանդությունները (հադիս) Մուհամմադի կյանքի մասին: Խալիֆան ուսումնառությունն անց է կացրել Բասրայում, ուր նրա ուսուցիչներն են եղել Հիշամ ալ-Քալբին, ալ-Մադաինին և ուրիշներ, իսկ նրա աշակերտներից կարելի է հիշատակել Բուխարիին (որն իր կրոնական աշխատության մեջ հիշում է նրան) և Իբն Հանբալին: Խալիֆան մահացել է հիջրի 240 (854/855) թվականին, թեև որոշ մատենագիրներ այլ թվականներ են նշում: Ըստ որոշակի տվյալների նա ապրել է 80 տարի:

Խալիֆա իբն Խայյաթը հայտնի էր որպես «կենսագրությունների դասակարգում» (Թաբակատ) աշխատության հեղինակ: Հայտնի էր, որ նա գրել էր նաև պատմական մի երկ, որը սակայն կորած էր համարվում: Սակայն 1963 թվականին Մարոկկոյի մի հեռավոր մենաստանում, հայտնաբերվեց մի ձեռագիր, որը ինչպես պարզեց Բաղդադի համալսարանի իսլամի պատմության դասախոս, բանասեր Աքրամ Դիա ալ-Օմարին, Խալիֆա իբն Խայյաթի կորած համարվող պատմական երկն է, որը նա հրատարակեց 1967 թվականին Բաղդադում: Այս հայտնագործությունը մի բացառիկ երևույթ էր արաբագիտության մեջ, քանզի աշխատությունը ամբողջովին պահպանված հնագույն արաբական պատմական երկն է:

Նրա պատմական երկը մեզ է հասել եզակի ձեռագրով, որը Ռաբաթի մատենադարանում 199 թվահամարն է կրում: Ունի 336 էջ և գրված է մաղրիբյան հստակ գրությամբ: Որոշ տեղերում ձեռագիրը խոնավությունից տուժել է և ինչ-որ բառեր չեն կարդացվում: Գրչագրի վերջում կա ընդօրինակողի անունը՝ Ահմադ իբն Մուհամմադ ալ-Աչաարի և թվականը՝ հիջրի 477 (1085): Այս պատմական երկը մեզ է հասել Բակիյ իբն Մախլադի (817–889) խմբագրությամբ, որը Խալիֆայի աչակերտն էր Իրաքում:

Հեղինակն իր այս գիրքն սկսում է սահմանելով՝ թե ինչ բան է Պատմությունը, ապա անդրադառնալով Մուհամմադ մարգարեի ծնունդին, անցնում է Հիջրային (գաղթը Մեքքայից Մադինա 622-ին) դանց առնելով Մուհամմադի կյանքի մեքքայական շրջանը, որից հետո չարադրում է պատմությունը ընդհուպ մինչև 846 թվականը: Պատմիչը հատուկ ուշադրություն է դարձրել Օմայան խալիֆայությանը և Արաբական խալիֆայության արտաքին նվաճումներին:

Ներկա թարգմանությունը կատարված է 1977 թվականի Բեյրութ-Դամասկոսյան հրատարակությունից՝ Tarikh Khalifah ibn Khayyat, Beyrouth-Damas, 1977.

(Խալիֆա իբն Խայյաթը որպես Հայաստանի և Խալիֆայության է-թ դդ. պատմության աղբյուր: – Արևելյան աղբյուրագիտություն, 1, ՀՍՍՀ ԳԱ հրատ, 1988, էջ 134-150, կամ Ա. Տեր-Ղևոնդյան, Հոդվածների ժողովածու, Երևան, 2003, էջ 643-659, Ibn Khayyat al-Usfuri, Khalifa, S. Zakkar, EOI, CD-ROM, (III: 838b)):

Տե՛ս նաև.

– The History of Khalifah ibn Khayyat, v. 1-2, ed. By Akram D. al-Umari, 1967 (Baghdad).

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ (ՏԱՐԻԽ)

ՏԱՍՆՋՈՐՍ ԹՎԱԿԱՆ

(25 փետրվար 635 – 13 փետրվար 636)

ԴԱՄԱՍԿՈՍԻ ՆՎԱՃՈՒՄԸ

էջ 125-126

Այդ տարում նվաճվեց Դամասկոսը:

Արու Ուբայդա իբն ալ-Ջառահը Խալիդ իբն ալ-Վալիդի հետ գնացին ու պաշարեցին [Դամասկոսը]: Հաշտության պայմանագիր կնքեցին ու գրավեցին Ջաբիա դուռը (բար): Խալիդը [քաղաքի] դռներից մեկը գրավել էր բռնի ուժով, իսկ Արու Ուբայդան [քաղաքի հետ] վերջնական հաշտության պայմանագիր կնքեց:

Ինձ պատմել է Վալիդ իբն Հիշամը, լսելով իր հորից, իսկ նա պապից, թե Խալիդը հրամանատարն էր և բնակչության հետ պայմանագիր կնքեց, սակայն հազիվ էր կնքել, երբ հանվեց ու նրա փոխարեն հրամանատար դարձավ Արու Ուբայդան և նա ճանաչեց Խալիդի հաշտության պայմանագիրը և չփոխեց գրվածքը: Այնպես, որ նրանց մոտ եղած գրվածքը (քիտաբ) Խալիդի անունով էր: Սա ճիշտ չէ, քանզի Օմարը Խալիդին հեռացրեց հենց որ խալիֆա դարձավ:

Ինձ պատմել է Աբդալլահ իբն Մուղիրան, լսելով իր հորից, թե Արու Ուբայդան նրանց հետ հաշտության պայմանագիր կնքեց այն պայմանով, որ պահպանվեն նրանց եկեղեցիները, բնակարանները, նրանց անձերը, նրանց արգելք չդրվի տոնակատարություններ կատարել, նրանց եկեղեցիներից ոչինչ չքանդել: Այս պայմանագիրը կնքեց միայն քաղաքի հետ, իսկ մնացած երկիրը բռնի ուժով գրավեց:

Ասել է Իբն ալ-Քալբին՝ հաշտության պայմանագիրը կնքվել է կիրակի օրը, տասնչորս թվականի Ռաջաբ ամսի կեսին (4 օգոստոս 635) և պայմանագիրը կնքողն է եղել Արու Ուբայդա իբն ալ-Ջառահը:

Ինձ ասել է Բաքրը, լսելով Իբն Իսհակից, թե Արու Ուբայդան պայմանագիրը կնքել է Ռաջաբ ամսին:

ԵՄԵՍԱՑԻ (ՀԻՄՍ) ՈՒ ԲԱԱԼԲԵԿԻ ՆՎԱՃՈՒՄԸ

էջ 127

Ասել են Իբն Իսհակը և ուրիշներ, թե այդ տարում, այսինքն տասնչորս թվականին Եմեսան ու Բաալբեկը հաչտության պայմանագրով նվաճվել են Աբու Ուբայդայի կողմից Ջու-լ-Կաադա ամսին (17 դեկտեմբեր 635 – 15 հունվար 636): Ասվում է, թե դա կատարվել է տասնհինգ թվականին:

ՏԱՍՆՀԻՆԳ ԹՎԱԿԱՆ
(14 փետրվար 636 – 1 փետրվար 637)

ՀՈՐԴԱՆԱՆԻ, ԲԻԿԱԱՑԻ, ԲԱԱԼԲԵԿԻ ԵՎ ԵՄԵՍԱՑԻ ՆՎԱՃՈՒՄԸ

էջ 129–130

Ինձ պատմել է Աբդալլահ իբն Մուղիրան լսելով իր հորից, թե Շուրահբիլ իբն Հասանան նվաճել է ամբողջ Հորդանանը (Ուրդուն) բռնի ուժով, բացի Տիբերիայից (Թաբարիյա), որի ժողովուրդը հաչտության պայմանագիր էր կնքել: Դա կատարվել էր Աբու Ուբայդայի հրամանով: Իբն ալ-Քալբին նույնն է ասել:

Նրանք երկուսով ասել են, թե Աբու Ուբայդան ուղարկել էր Խալիդ իբն ալ-Վալիդին, որ նվաճի Բիկաայի հողը և Բաալբեկի ժողովուրդը նրա հետ հաչտության պայմանագիր կնքեց և նա նրանց գրավոր պայմանագիր տվեց:

Ասել է Իբն Մուղիրան, լսելով իր հորից, թե նա հաչտության պայմանագիր կնքեց խոստանալով պահպանել նրանց բնակարանները, եկեղեցիները և հարկ (խարաջ) նչանակեց: Ասել է Իբն ալ-Քալբին, թե Աբու Ուբայդան դուրս նկավ Եմեսա (Հիմս) գնալու նպատակով և նրան հանդիպեց Խալիդը: Նրանք սաստիկ կռվեցին [Հոռոմների] դեմ, ապա Հոռոմները փախուստի դիմեցին ու մտան իրենց քաղաքը: Նա (Աբու Ուբայդան) պաշարեց, իսկ նրանք հաչտության պայմանագիր խնդրեցին, որ նրաչխավորվեն իրենց ունեցվածքը, անձերը, եկեղեցիները և Եմեսայի հողերը հարյուր յոթանասուն հազար դինար [հարկով]:

Ինձ պատմել է Աբդալլահ իբն Մուղիրան, լսելով իր հորից, թե Աբու Ուբայդան հաչտության պայմանագիր էր կնքել քաղաքի (Եմեսայի) համար, ըստ Դամասկոսի բնակչության հետ կնքած պայմանագրի, իսկ նրանց մյուս քաղաքները բռնի ուժով նվաճեց:

ՅԱՐՄՈՒԿԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԸ

էջ 130–131

Այդ տարում տեղի ունեցավ Յարմուքի[1] ճակատամարտը:

Բաքրը լսելով Իբն Իսհակից ասել է, թե Ռումի զորքերը Յարմուքում հանդես նկան հարյուր հազար հոռոմներով և Կուդաա ցեղի [արաբներով]:

Նրանց հրամանատարն էր Սակկլարիոսը[2] (սակիլար), որը Հերակլի[3] ներքինիներից էր:

Ասել է Իբն ալ-Քալբին, թե հոռոմները երնք հարյուր հազար էին և նրանց հրամանատարն էր վահանը[4] (Բահան), որը Պարսից որդիներից էր և քրիստոնեություն ընդունելով միացել էր հոռոմներին: Աբու Ուբայդան [արաբական զորքերին] ավելացրեց ծայրամասային գնդերը և ռազմակայանների (աջնադ) հրամանատարներին: Օմարը նրան օգնության ուղարկեց Սաիդ իբն Ամիր իբն Հուդայմին և սաստիկ պատերազմից հետո Այլահը բազմաստվածյաններին (մուշրիքուն) պարտության մատնեց և նրանց մեծ թվով կոտորեց:

Ասել է Իբն ալ-Քալբին, թե ճակատամարտը տեղի ունեցավ երկուշաբթի օրը տասնհինգ թվականի Ռաջաբ ամսից հինգ օր անց (14 օգոստոսի 636):

ՏԻԶԲՈՆԻ (ՄԱԴԱՒՆ) ՆՎԱՃՈՒՄԸ

էջ 133

Ապա նկան Սաադն ու մահմեդականները և պաչարեցին Տիզբոնն ու նվաճեցին [...]

[Արաբները պատմում էին], թե նրանց կովերը բռնում և մորթում էինք, իսկ մարդիկ (արաբները) քամֆորան (քաֆուր) մսի վրա էին ցանում և ասում՝ ինչ դառն է պարսիկների աղը: Ասվել է նաև, թե մենք ոսկե անոթներ էինք ձեռք բերում և նրան մարդիկ (արաբներ), որոնք դեղինը փոխում էին սպիտակով, այսինքն՝ ոսկին արծաթով:

ՏԱՍՆՎԵՑ ԹՎԱԿԱՆ
(2 փետրվար 637 – 22 հունվար 638)

ՀԱԼԵԲԻ, ԱՆՏԻՈՔԻ, ՄԱՆԲԻՋԻ ՈՒ ՍՈՒՐԲ ՔԱՂԱՔԻ (ԵՐՈՒՍԱղԵՄ) ՆՎԱՃՈՒՄԸ

էջ 134–135

Այդ տարում նվաճվեցին Հալերը, Անտիոքը և Մանբիջը:

Աբդալլահը, լսել է Մուղիրայից, որին պատմել է նրա հայրը, թե՝

Աբու Ուբայդան Յարմուքի ճակատամարտը վերջացնելուց հետո ուղարկել է Ամր իբն ալ-Ասին Կիննասրին և նա Հալեբի, Մանբիջի (Մամբուկ) և Անտիոքի (Անթաքիա) հետ հաշտության պայմանագրեր կնքեց, իսկ Կիննասրինի մնացած մասերը բռնի ուժով գրավեց:

Ասել է Իբն ալ-Քալբին, թե Աբու Ուբայդան հաշտության պայմանագիր կնքեց Հալեբի բնակչության հետ և նրանց գրավոր ձևով տվեց: Ապա չարժվեց Աբու Ուբայդան իր [զորքի] առաջապահում ունենալով Խալիդ իբն ալ-Վալիդին և պաշարեց Երուսաղեմը (Իլիյա), իսկ նրանք հաշտության խնդրեցին այն պայմանով, որ ինքը, Օմար [իբն Խաթթաբ] տա [պայմանագիրը] և երաշխավորագիր (աման) պատրաստի իրենց համար: Աբու Ուբայդան գրեց Օմարին և նա եկավ ու հաշտության պայմանագիր կնքեց նրանց հետ, ապա մի քանի օր մնալով, վերադարձավ Մադինա:

Ասել է Իբն ալ-Քալբին, որ դա պատահել է տասնվեց թվականին:

Ինձ պատմել է Բաքրը, լսելով Իբն Իսհակից, թե Մուհամմադ իբն Թալհան իբն Ռուքանան լսելով Սալիմ իբն Աբդալլահ իբն Օմարից ասել է՝ Երուսաղեմի (Իլիյա) բնակչությունը դուրս եկավ Օմարի մոտ և նա հաշտության պայմանագիր տվեց գլխահարկ (ջիզիա) վճարելու պայմանով ու նրանք բացեցին [քաղաքի դռները]:

Այդ տարում մնռավ Ալլահի առաքյալի որդի Իբրահիմի մայրը՝ Մարիամը:

ՏԱՍՆՈՒԹ ԹՎԱԿԱՆ
(12 հունվար 639 – 1 հունվար 640)

ԵԴԵՍԻԱՑԻ (ՌՈՒՀԱ), ՍԱՄՈՍԱՏԻ (ՍՈՒՄԱՑՍԱԹ) ԵՎ ՋԱԶԻՐԱՑԻ ՆՎԱՃՈՒՄԸ

Ասել է Իբն Իսհակը, թե Եդեսիան նվաճվեց տասնութ թվականին:

Ինձ պատմել է Հաթիմ իբն Մուսլիմը, թե Աբու Մուսա ալ-Աշաարին նվաճել է Եդեսիան, Սամոսատը հաշտության պայմանագրով, իսկ մնացյալը՝ բռնի ուժով:

Նա ասել է, որ Աբու Ուբայդա իբն ալ-Ջառահը Ջազիրա էր ուղարկել Իյադ իբն ալ-Ղանմ ալ-Ֆիհրիին: Վերոհիշյալ քաղաքների նվաճումից հետո նա համաձայնեց ուղարկել նաև Աբու Մուսային: Նա (Իյադը) գնաց և նրա հետ էր Աբու Մուսան: Նրանք գրավեցին Խառանը (Հառան), Մծբինը (Նասիբին) և Ջազիրայի համայնքներին (Թավաիֆ) բռնի ուժով: Ասվում է նաև, որ Աբու Ուբայդան Խալիդ իբն Վալիդին ուղարկեց Ջազիրա և Աբու Մուսան համաձայնեց ու նվաճեցին Եդեսիան և Սամոսատը: Իսկ Խալիդը Աբու Մուսային և Իյադին

ուղարկեց Խառան և ժողովրդի հետ հաշտության պայմանագիր կնքվեց: Ապա Խալիդը չարժվեց դեպի Մծբին ու նվաճեց, ապա վերադարձավ դեպի Ամիդ և հաշտության պայմանագրով նվաճեց, իսկ երկուսի արանքում եղած հողերը բռնի ուժով նվաճեց:

Ինձ պատմել է Ջազիրայի ծերունիներից մեկը, թե Իյադ իբն Ղանմն է այդ բոլոր քաղաքների և Ջազիրայի այլ քաղաքների հետ հաշտության պայմանագիր կնքել: Նա գրավոր պայմանագրեր է տվել նրանց, որոնք մինչև օրս Իյադի անունով մնում են նրանց մոտ:

Մեզ պատմել է Վաքի իբն ալ-Ջառահը, լսելով Սաուրից, որը լսել էր Աբդ ալ-Ռահմանից, իբն Ասիդից, թե Խալիդ իբն ալ-Վալիդը Ամիդում մտել է մի բաղնիք և այդ մասին որոշ զրույց է հիշել:

Ինձ պատմել է մի մարդ, լսելով Մուղիրա իբն Զիյադ ալ-Մաուսիլիից, որը լսել էր Իբադա իբն Նուսեյրից, թե Աբու Մուսան Քուֆայից օգնական զորք ստանալով պաշարել էր Սամոսատը և այդ մասին որոշ զրույց է հիշել:

Մուաղ իբն Հիշամը պատմել է, թե լսել է իր Հորից, որը լսել է Կատադայից, իսկ նա Յունուսից, սա էլ Ջուբայրից, թե Աբու Մուսան Դարայում աղոթել է վախի աղոթքը, իսկ Դարան Ջազիրայի երկրում է և նրա ու Մծբինի միջև մի քանի փարսախ[5] է:

Ինձ պատմել է Հաթիմ իբն Մուսլիմը, թե Օմար [իբն Խաթթաբ] ուղարկել է Իյադին, որը նվաճել է Մոսուլը: Նա Ուտբա իբն Ֆարկադին իր փոխարեն ուղարկել է երկու բերդերից մեկը նվաճելու և սա ամբողջ երկիրը նվաճել է բռնի ուժով, բացի մի բերդից, որի բնակիչների հետ հաշտության պայմանագիր է կնքել: Դա կատարվել է տասնութ թվականին:

ՔՍԱՆ ԹՎԱԿԱՆ
(21 դեկտեմբեր 640 – 9 դեկտեմբեր 641)

ԵԳԻՊՏՈՍԻ ՆՎԱՃՈՒՄԸ

Է՛ջ 142–144

Ինձ պատմել է Վալիդ Իբն Հիշամը, լսելով իր Հորից և սա էլ պապից, ինչպես նաև Աբդալլահ իբն Մուղիրան լսելով Հորից և ուրիշներից, թե Օմար [իբն Խաթթաբ] գրել է Ամր իբն ալ-Ասին, որ գնա Եգիպտոս [արշավանքի] և նա գնացել է: Օմարը Զուբայր իբն ալ-Ավվամին նրան օգնության է ուղարկել ընկերակցությամբ Ումայր իբն Վահբ ալ-Ջամհիի և Բիսր իբն Արթաթ ալ-Ամիրիի և Խարիջա իբն Հանաֆայի: Նրանք Հասան Բաբիլոնի[6] (Այլուն) դուռը, սակայն նրան [պաշտպանները] դիմադրեցին և նա (Ամրը) բռնի ուժով նվաճեց:

Բերդի մարդիկ հաչտութիւն խնդրեցին:

Զուբայրն առաջինն էր, որ բարձրացել էր քաղաքի պարիսպը և մարդիկ նրան հետևել էին: Զուբայր իրն ալ-Ավվամը խոսել էր Ամրի հետ, որ [երկրի հողերը] բաժանվեն նվաճողների միջև: Ամրը այդ մասին գրել էր Օմարին, իսկ Օմարը պատասխանեց՝ ուտելն ավելի լավ է քան առանց ուտելիքի մնալը:

Պատմել է Սամ իրն Լահիյան, լսելով Իբրահիմ իրն Մուհամմադ ալ-Հաղրիից, որը լսել էր Իրն Աբու Ալիյայից, իսկ սա հորից, թե լսել եմ Ամր իրն ալ-Ասին, որ մզկիթի բեմից (մինբար) ասել է՝ նստել եմ [իշխանության] աթոռին և եգիպտոսի ոչ մի ղպտի ինձ հետ պայմանագիր (ահդ) կամ համաձայնագիր (իկդ) չունի. կամենամ կկոտորեմ նրանց, կամենամ կվաճառեմ, կամենամ [նրանց հողերը] կհինգերորդեմ (խամմաստու), բացի Անթաբուլսի[7] ժողովրդից, որն ինձ հետ հուսալի պայմանագիր ունի:

Լսել եմ Սամ Աբդալլահ իրն Սալիհից, որը լսել էր Իրն Լահիայից, իսկ նա Հարիս իրն Յազիդ ալ-Հաղրամիից, սա էլ Ալի իրն Ռիբահից թե [խալիֆա] Աբու Բաքր Սիդդիկը (ճշմարտաբան) ուղարկել էր Հաթիր իրն Աբու Բալտային եգիպտոսի Մուկաուկիսի[8] (պատրիարք) մոտ, Շարկիյա նահանգի գյուղերից մեկը և նա տվել էր [պայմանագիր] և այդպես էլ մնաց, մինչև որ Ամր իրն ալ-Աս մտավ [եգիպտոս] և կռվելով նրանց հետ այդ պայմանագիրը մերժեց:

Լսել եմ Սամ Աբդալլահ իրն Սալիհից, որը լսել էր ալ-Լայսից, իսկ նա Յազիդ իրն Աբու Հաբիբից, թե Մուկաուկիսը Ամր իրն ալ-Ասի հետ պայմանագիր էր կնքել այն պայմանով, որ ամեն մի ղպտի (եգիպտացի քրիստոնյա) երկու դինար վճարի: Այդ բանը լսելով Հերակլը զորք ուղարկեց, որը ամրացավ Ալեքսանդրիայում և Ամրին պատերազմի հրավիրեց: Նա կռվեց նրանց դեմ [ու հաղթեց] և ապա գրեց Օմար [խալիֆային]՝ Ալլահը մեզ պարգևեց Ալեքսանդրիայի նվաճումը բռնի ուժով, առանց որևէ պայմանագրի, կամ համաձայնագրի:

Սակայն ասվում է. վերցնելով Յազիդ իրն Աբու Հաբիբից, թե եգիպտոսը ամբողջովին նվաճվեց հաչտության պայմանագրով, բացի Ալեքսանդրիայից: Այս նույն խոսքերն է ասել նաև Լայսը:

ԱՆԹԱԲՈՒԼՍԻ ՆՎԱՃՈՒՄԸ

էջ 144

Լսել են Սամ Աբդալլահ իրն Սալիհից, որը լսել է Լայսից, իսկ սա Սահլ իրն Ուկայլից, նա էլ Աբդալլահ իրն Հուբայրայից, թե Օմարը Անթաբուլսի ժողովրդի հետ հաչտության պայմանագիր էր կնքել, իսկ դա Բարկա[9] երկիրն է Իֆրիկիայի ու եգիպտոսի միջև՝ գլխահարկ

(ջիզիա) վճարելու, կամ իրենց դավակներին, ում որ կամենան, գլխահարկի դիմաց վաճառելու պայմանով:

Լսել են Սամ իրն Աբու Մարիամից, որը լսել է Իրն Լահիյայից, իսկ նա Մուրսիդ իրն Աբդալլահ ալ-Հադրամիից, թե Անթաբուլսի ժողովուրդը եկավ, երբ [Ամրը] դարձավ Անթաբուլսի կառավարիչ և բերեց իր գրավոր պայմանագիրը:

Լսել են Սամ Աբդալլահ իրն Սալիհից, որը լսել էր Իրն Լահիյայից, իսկ նա Յազիդ իրն Աբու Հաբիբից, թե եգիպտոսի մարդիկ (մահմեդականները) ու սևամորթները (ասաուիդ) իրար հետ պայմանագիր, կամ համաձայնագիր չունեն, այլ կա պարզապես դինադարի (հուդնա) մեր և նրանց միջև. մենք նրանց որոշ ցորեն և ոսպ ենք տալիս, իսկ նրանք տալիս են ստրուկներ և մենք պետք է գնենք նրանց ստրուկներին:

ՔՍԱՆԵՐԿՈՒ ԹՎԱԿԱՆ
(30 նոյեմբեր 642–18 նոյեմբեր 643)

ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ ՆՎԱՃՈՒՄԸ

էջ 151

Այդ տարում նվաճվեց Ատրպատականը (Ադարբայջան):

Ինձ պատմել է նա, ով լսել է Իրն Իսհակից, թե դա նվաճվել է քսաներկու թվականին, իսկ հրամանատարն է եղել Մուղիրա իրն Շուբան:

Պատմել է Ալի իրն Մուհամմադը, թե Հուզայֆան հաչտության պայմանագիր է կնքել քսաներկու թվականին ութ հազար [դիրհեմի՞] դիմաց:

Ասել է Աբու Ուբայդան, թե այն նվաճել է Հաբիբ իրն Մասլամա ալ-Ֆիհրին[10] Ասորիքի զորքով, բռնի ուժով: Նրա հետ են եղել նաև Քուֆայի զորքերը և Հուզայֆան. նվաճումը կատարվել է Օմար խալիֆայի օրոք, սաստիկ ճակատամարտից հետո: Ասվում է նաև, թե այն նվաճել է Ուտբա իրն Ֆարկադը:

Մեզ պատմել է Յազիդ իրն Զուբայր լսելով Տիմիից, իսկ նա Աբու Օսմանից, թե՝ մենք ստացանք Օմարի նամակը [հարձակման մասին] երբ Ուտբա իրն Ֆարկադի հետ էինք:

Ատրպատականից գերիներ տանողներն էին՝ Արդալլահի տոհմը, Յահիա իրն Աբու Իսհակը և քատիբ (քարտուղար) Աբու ալ-Ալիյայի տոհմը:

ՔՍԱՆԵՐԵՔ ԹՎԱԿԱՆ
(19 նոյեմբեր 643 – 6 նոյեմբեր 644)

ԵԳԻՊՏՈՍ ԵՎ ՋԱԶԻՐԱ

Լ 155–156

[Օմարը] գրեց Ամր իրն ալ-Աասին, և նա չարժվեց դեպի Եգիպտոս ու նվաճեց այն՝ մնալով նրա կառավարիչը մինչև Օմարի մահը: Օմարն ուղարկել էր Իյադ իրն Ղանմին Ջազիրա, որի մասին գրել ենք, ապա հեռացրեց ու նշանակեց Հաբիբ իրն Մասլամա ալ-Ֆիհրիին, նրան հանձնարարելով Հայաստանի և Ատրպատականի նվաճումը: Ապա հեռացրեց նրան և նշանակեց Ումայր իրն Սաիդ ալ-Անսարիին և Սաիդ իրն Ամիր ալ-Հիզյամին:

ՔՍԱՆՀԻՆԳ ԹՎԱԿԱՆ
(28 հոկտեմբեր 645 – 16 հոկտեմբեր 646)

ԱԼԵՔՍԱՆԴՐԻԱՑԻ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՐԱ ՎԵՐԱՆՎԱՃՈՒՄԸ

Լ 158

Այդ տարում Ալեքսանդրիայի բնակչությունը ապստամբեց և նրա դեմ արշավեց Ամր իրն ալ-Աասը, որը Եգիպտոսի կառավարիչն էր: Նա կոտորեց, գերեվարեց, սակայն Օսման [խալիֆան] գերեվարվածներին վերադարձրեց և նորից տվեց զիմմիի [իրավական վիճակ]:

Ինձ պատմել է Մուհամմադ իրն Սաիդ ալ-Բահիլին, թե այդ տարում Ռումի թագավորը ներքինի Մանուելին[11] նավերով ուղարկեց Ալեքսանդրիա: Նրա բնակչությունն ապստամբեց, բացի Մուկաուկիսից: Ամր իրն ալ-Աասը քսանհինգ Թվականի Ռաբի Ա ամսում (26 դեկտեմբեր 645 – 24 հունվար 646) արշավեց ու բռնի ուժով նվաճեց Եգիպտոսի Հողը, բացի Այն Շամսից, որի հետ հաչտության պայմանագիր կնքեցին:

Լ 157–158

Այդ տարում Օսման իրն Աֆֆան [խալիֆան] Քուֆայից հեռացրեց Սաադ իրն Մալիքին և նշանակեց Վալիդ իրն Ուկբա իրն Աբու Մուայթին: Վալիդը Սալման իրն Ռաբիա ալ-Բահիլիին, որը Կուտայբա իրն Մաան իրն Մալիքի տոհմից էր, տասներկու հազարով ուղարկեց Պարտավ (Բարդաա)[12] և նա կոտորեց ու գերեվարեց:

Ասել է Աբու Ուբայդան լսելով Սամրիից, թե Օմար [խալիֆան] էր ուղարկել Սալման իրն Ռաբիային Պարտավ և նա նվաճեց:

ՔՍԱՆԻՆԸ ԹՎԱԿԱՆ
(14 սեպտեմբեր 649 – 3 սեպտեմբեր 650)

ԻՍԹԱԽՐԻ[13] ՆՎԱՃՈՒՄԸ

Լ 163

Այդ տարում Օսման իրն Աֆֆան [խալիֆան] Վալիդ իրն Ուկբային հեռացրեց Քուֆայից և նշանակեց Սաիդ իրն ալ-Աասին, որն արշավեց Հայաստան. նրա մի մասն արշավել էր Սալման իրն Ռաբիա ալ-Բահիլին: Սաիդն այնտեղ թշնամիների հանդիպեց: Սալմանն առաջ խաղաց դեպի Բալանջար[14] և այնտեղ վիրավորվեց:

Ասվում է, որ Օմարն էր Սալմանին ուղարկել Բալանջար:

ԲԱՑԼԱԿԱՆ[15], ՊԱՐՏԱՎ, ՎԻՐՔ, ՀԻՋԱՆ[16] ԵՎ ԲԱԼԱՆՋԱՐ ԱՐՇԱՎԱՆՔԸ

Լ 163

Ասել է Աբու Խալիդը, լսելով Աբու-լ-Բառայից, թե Սալմանն արշավեց Բայլական և հաչտության պայմանագիր կնքվեց, ապա եկավ Պարտավ և հաչտության պայմանագիր կնքելով գրավեց այն: Նա իր հնձյալների պետին ուղարկեց Վիրք (Ջուրգան) և հաչտության պայմանագիր կնքվեց: Սալմանը գնաց Հիզան (Խայդան) և հաչտության պայմանագիր կնքվեց, ապա հասավ Մաղքութք[17] (Մասկաթ) և բնակիչների հետ պայմանագիր կնքվեց: Նա վիրավորվեց (հարված կրեց) Բալանջարում:

Օսման [խալիֆան] գրեց Հաբիբ իրն Մասլամա ալ-Ֆիհրիին, որ Ասորիքից մեծ զորքով չարժվի: Հաբիբը հաղասի լեռնանցքի[18] կողմից գալով հասավ Վիրք, որի բնակչության հետ հաչտության պայմանագիր կնքեց: Նա ցորենի չտեմարանների (մաթամիր) համար [Փոքր Ասիայու՞մ] համաձայնեց և նրանց գրավոր [թուղթ] տվեց:

ԵՐԵՍՈՒՆՄԵԿ ԹՎԱԿԱՆ
(24 օգոստոս 651 – 11 օգոստոս 652)

Լ 166

Այդ տարում Իրն Աբու Սարհը արշավեց Միսր, Զանդանի Մամնատիայի (Մասսիսա)[19] կողմից:

ԵՐԵՍՈՒՆԵՐԵՔ ԹՎԱԿԱՆ
(2 օգոստոս 653 – 22 հուլիս 654)

ԱՐՇԱՎԱՆՔԸ ՄԱԼԱԹԻԱ[20] ԵՎ ԱՖՐԻԿԱ (ԱԲՐԻԿ)

Էջ 167

Ասել է Իբն ալ-Քալբին, թե այդ տարում Մուավիա իբն Աբու Սուֆիանը արշավանք կատարեց Մալաթիա և Աֆրիկա (Աբրիկ): Արշավեց նաև Հիան ալ-Մարաթի, որը Ռումի հողում է:

ՕՍՄԱՆ ԻԲՆ ԱՖՖԱՆԻ ԿԱՌԱՎԱՐԻՉՆԵՐԻ ԱՆՈՒՆՆԵՐԸ

Էջ 178–180

[Հիշված են՝ Մևքքա, Մադինա, Բասրա, Քուֆա, Եգիպտոս, Ասորիք, Եմեն, Խորասան, Սիջիստան, Սինդ, Բահրայն]

Էջ 180

Ամառային արշավանքը (սաիֆա) – Օսմանը գրել էր Մուավիային, որ արշավանք ուղարկի Ռումի երկիրը և նա առաքեց Յազիդ իբն ալ-Հուռ ալ-Արսիին, ապա Արդ ալ-Ռահման իբն Խալիդ իբն ալ-Վալիդին՝ երկու ամառային արշավանքի, հետո նրան հեռացրեց ու նշանակեց Սուֆիան իբն Աուֆ ալ-Ղամդիին: Սուֆիանը հարձակման էր դուրս գալիս ցամաքում, իսկ ծովի վրա իր փոխարեն նշանակել էր Ջունադա իբն Աբու Ումայյային: Այսպես չարունակվեց մինչև Սուֆիանի մահը, երբ Մուավիան նշանակեց Արդ ալ-Ռահման իբն Խալիդ իբն Վալիդին, ապա Ուբայդալլահ իբն Ռիբահին, որը ձմեռեց Ռումի երկրում:

ՔԱՌԱՍՈՒՆՄԵԿ ԹՎԱԿԱՆ
(7 մայիս 661 – 25 ապրիլ 662)

Էջ 205

Այդ տարում Մուավիան (խալիֆան) հաշտության պայմանագիր կնքեց Ռումի հետ:

ՔԱՌԱՍՈՒՆԵՐԿՈՒ ԹՎԱԿԱՆ
(26 ապրիլ 662 – 14 ապրիլ 663)

Այդ տարում Հաբիբ իբն Մասլամա ալ-Ֆիհրին մեռավ Հայաստանի հողում:

ՔԱՌԱՍՈՒՆՅՈՒԹ ԹՎԱԿԱՆ
(3 մարտ 667 – 19 փետրվար 668)

Էջ 208

Ասել է Իբն ալ-Քալբին, թե այդ տարում Մալիք իբն Հուբայրան ձմեռեց Ռումի երկրում, իսկ Աբու Արդ ալ-Ռահման ալ-Կինին՝ Անտիոքում:

ՔԱՌԱՍՈՒՆՈՒԹ ԹՎԱԿԱՆ
(20 փետրվար 668 – 8 փետրվար 669)

Էջ 209

Ասել է Իբն ալ-Քալբին, թե այդ տարում Աբու Արդ ալ-Ռահման ալ-Կինին (Կայնի) դարձյալ ձմեռեց Անտիոքում: Ոմանք էլ ասում են, թե [ձմեռել է] Իբն Մուքառիզը, որը Բանու Ամիր իբն Լուի տոհմից է:

ՔԱՌԱՍՈՒՆԻՆԸ ԹՎԱԿԱՆ
(9 փետրվար 669 – 28 հունվար 670)

Ասել է Իբն ալ-Քալբին, թե այդ տարում Մալիք իբն Հուբայրան ձմեռել է Ռումի երկրում: Ոմանք ասում են, թե ձմեռել է Ֆուդալա իբն Ուբայդ ալ-Անսարին, իսկ Արդալլահ իբն Մասաադան՝ ցամաքում:

ՄՈՒԱՎԻԱՅԻ ՆԱՄԱԿՆԵՐԻ, ԴԻՎԱՆԻ, ՍԵՆԵԿԱՊԵՏՈՒԹՅԱՆ (ՀԻՋԱԲԱ), ԱՌԱՋԱՊԱՀ ԶՈՐԱՄԱՍԻ (ՇՈՒՐԹԱ), ՊԱՀԱԿԱԶՈՐԲԻ (ՀԱՐԱՍ) ԵՎ ԿՆԻՔԻ (ԽԱՏԱՄ) ՎԵՐԱԿԱՑՈՒՆԵՐԸ

Էջ 228

Նրա (Մուավիայի) օրոք նամակների քարտուղար (քատիբ ալ-ռասաիլ) էր Ուբայդ իբն Աուս ալ-Ղասսանին:

Դիվանի և բոլոր գործերի վերակացու էր Սարջուն իբն Մանսուր Հոռմը (ալ-Ռումի):

Նրա սենեկապետն (հաջիբ) էր իր մաուլա Աբու Այյուբը:

Նրա առաջապահ զորամասի (շուրթա) հրամանատարն էր իր մաուլա Յազիդ իբն ալ-Մուռը: Երբ մեռավ Յազիդը, նա նշանակեց կայա իբն Համզա ալ-Համադանիին, ապա հեռացրեց ու նրա փոխարեն նշանակեց Զիհլ իբն Ամր ալ-Ուզրիին:

Նա (Մուավիան) առաջինն էր, որ ստեղծեց [արքունի] պահակազորք (հարաս) և հիմնեց կնիքի (խատամ) դիվանը: Պահակազորքի

հրամանատարն էր Հիմյար ցեղի մաուլա Մուխտարը, իսկ կնիքի [դիվանի] պետն էր Աբդալլահ իբն Ամր ալ-Հիմյարին:

ՎԱԹՍՈՒՆԵՐԿՈՒ ԹՎԱԿԱՆ
(20 սեպտեմբեր 681 – 9 սեպտեմբեր 682)

ԼՂ 236

Այդ տարում Աբդալլահ իբն Ասադ իբն Քարազ ալ-Կխարին արշավեց Կեսարիա, որը Հադասի [լեռնանցքից] այն կողմ է: Նույն տարում տեղի ունեցավ Ալի Հուսայն իբն Նումայր ալ-Սուքունիի արշավանքը, որը կատարեց Սուրիայում (Հյուսիսային Ասորիք):

ՅՈԹԱՆԱՍՈՒՆՀԻՆԳ ԹՎԱԿԱՆ
(2 մայիս 694 – 20 ապրիլ 695)

ԼՂ 272

Ասել է Իրն ալ-Քալբին, թե այդ տարում ամառային արշավանք կատարեց Մուհամմադ իբն Մարուանը[21], այն ժամանակ, երբ հոռոմները հարձակվել էին Մարաշի գավառի Ամկ [վայրի] վրա:

ՅՈԹԱՆԱՍՈՒՆՅՈԹ ԹՎԱԿԱՆ
(10 ապրիլ 696 – 29 ապրիլ 697)

ԼՂ 276

Ասել է Իրն Քալբին, թե Վալիդ իբն Աբդ ալ-Մալիքը արշավել է Ռումի հողը և հասել Մալաթիայի ու Մամեստիայի արանքը:

ՅՈԹԱՆԱՍՈՒՆՈՒԹ ԹՎԱԿԱՆ
(30 մարտ 697 – 19 մարտ 698)

ԼՂ 277

Ասել է Իրն ալ-Քալբին, թե այդ տարում տեղի ունեցավ Մուհրիզ իբն Աբու Մուհրիզի արշավանքը Ռումի երկիրը: Նա նվաճեց Ագկալան և երբ վերադառնում էր, նրա զորքն ընկավ տեղատարափ անձրևի տակ Հադասի լեռնանցքից այն կողմ և չատերը տուժեցին:

ՈՒԹՍՈՒՆՄԵԿ ԹՎԱԿԱՆ
(26 փետրվար 700 – 14 փետրվար 701)

ԼՂ 288

Այդ տարում Աբդ ալ-Մալիքը[22] իր եղբորը՝ Մուհամմադին ուղարկեց Հայաստան և այնտեղ բնակիչները դիմադրեցին, իսկ նա հաղթեց նրանց: Ապա նրանք հաշտություն խնդրեցին և նա հաշտության պայմանագիր կնքեց և նրանց կառավարիչ նշանակեց Նարիհ իբն Աբդալլահ ալ-Անագիին[23]: Նրանք դավաճանեցին ու սպանեցին նրան: Այդ տարում Աբդալլահ իբն Աբդ ալ-Մալիք իբն Մարուանը Մամեստիայի կողմից գրավեց Սիննան բերդը Ռումի երկրում:

ՈՒԹՍՈՒՆԵՐԵՔ ԹՎԱԿԱՆ
(4 փետրվար 702 – 23 հունվար 703)

ԼՂ 288

Այդ տարում Հաջջաջը Մուհամմադ իբն ալ-Կասիմին Ֆարսի կառավարիչ նշանակեց ու հրամայեց կոտորել քրդերին:

ԼՂ 289

Այդ տարում Աբդ ալ-Մալիք իբն Մարուանը իր եղբորը՝ Մուհամմադին ուղարկեց Հայաստան և նրանք (հայերը) հաշտության պայմանագիր ստացան: Նա կառավարիչ նշանակեց Աբու Շայխ իբն Աբդալլահ ալ-Ղանավիին[24] և Ամր իբն ալ-Սադի (Սադա) ալ-Ղանավիին[25], սակայն երկուսին էլ դավաճանեցին ու սպանեցին:

Այդ տարում Աբդալլահ իբն Աբդ ալ-Մալիք իբն Մարուանը արշավեց Ռումի երկիրը և ընդհարվեց հոռոմների հետ Սուրիայում և Լուլուայում, իսկ հոռոմները փախուստի դիմեցին:

ՈՒԹՍՈՒՆՋՈՐՍ ԹՎԱԿԱՆ
(24 հունվար 703 – 13 հունվար 704)

ԼՂ 290

Ինձ պատմել է Աբու Խալիդ իբն Սաիդը, լսելով Աբու Բառա ալ-Նումայրիից, թե հոռոմները հարձակվեցին Հայաստանի վրա Մուհամմադ իբն Մարուանի դեմ. Ալլահը պարտության մատնեց նրանց և դա կրակի (հրդեհի) տարին է[26]: Բանն այն է, որ Մուհամմադը

զորքի [83 թվականի] պարտությունից հետո [հայերի դեմ] ուղարկեց Օսման իբն Աֆֆանի մաուլա Զիյադ իբն ալ-Ջառահին և Հուբայրա իբն ալ-Սարաջ ալ-Հաղրամիին և նրանք վառեցին նրանց իբենց նկեղեցիներում, տաճարներում և գյուղերում: Հրկիզումը կատարվեց Նախճավանում (Նաչավա) և Վասպուրականում (Բասֆուրաջան):

Աբու Բառան ասել է, թե այդ արշավանքի ժամանակ էր, որ Սիսականից (Սիսաջան) գերեվարվեց Յազիդ իբն Ուսայդի մայրը, որը Սիսականի պատրիկի դուստրն էր:

էջ 291

Ասել է Իբն ալ-Քալբին, թե այդ տարում Արդալլահ իբն Արդ ալ-Մալիք իբն Մարուանը արշավեց Ռումի երկիրը, մինչև որ հասավ Տարենտևի (Թուրանդա) հողը:

Այդ տարում Արդալլահ իբն Արդ ալ-Մալիքը կառուցեց Մամեստիան (Մասսիսա):

ՈՒԹՍՈՒՆՀԻՆԳ ԹՎԱԿԱՆ
(14 հունվար 704 – 1 հունվար 705)

Այդ տարում Մուհամմադ իբն Մարուանը արշավեց Հայաստան և այնտեղ անցկացրեց ամառն ու ձմեռը:

Ինձ պատմել է Աբու Խալիդը, լսելով Աբու Բառա ալ-Նումայրիից, թե Մուհամմադ իբն Մարուանը վերադառնալով [Արմինիայի կառավարիչ] նշանակեց Արդալլահ իբն Հատիմ իբն ալ-Նուման ալ-Բահիլիին[27]: Սակայն վերջինս մեռավ և Մուհամմադ իբն Մարուանը նշանակեց նրա եղբորը՝ Արդ ալ-Ազիզ իբն Հատիմին[28], որը վերակառուցեց Դվին (Դաբիլ), Նախճավան և Պարտավ քաղաքները:

Ասել է Իբն ալ-Քալբին, թե ութսունհինգ թվականին Արդալլահ իբն Արդ ալ-Մալիքը, որը Մամեստիայում էր, [արշավանքի] ուղարկեց Յազիդ իբն Հունայնին: Հռոմեները մեծ բազմությամբ նրա դեմ դուրս եկան և [արաբ] ռազմիկները հարվածներ կրեցին Սասունայում[29] և վիրավորվեց Մայմուն ալ-Ջուրջումանին, Անտիոքի (Անթաքիա) ռազմիկներից մոտավորապես հազար հոգու հետ Տիանայի (Թուանա) մոտ:

ՈՒԹՍՈՒՆՎԵՑ ԹՎԱԿԱՆ
(2 հունվար – 22 դեկտեմբեր 705)

էջ 292

Ասել է Իբն ալ-Քալբին, թե ութսունվեց թվականին Մասլամա իբն

Աբդ ալ-Մալիքը արշավեց Ռումի երկիրը և նվաճեց Տուլակ (Բուլակ) բերդը, Ախրամ բերդը Աբդ ալ-Մալիք [խալիֆայի] մահվանից առաջ:

Այդ տարում Մուսա իբն Նուսայրը[30] Մուղիրա իբն Աբու Բուրդա ալ-Արդիին նավերով ուղարկեց և նա նվաճեց Աուլիյան՝ առաջինը Սիկիլիայի քաղաքներից Մադրիբում:

ԱԲԴ ԱԼ-ՄԱԼԻՔԻ ԿԱՌԱՎԱՐԻՉՆԵՐԻ ԱՆՈՒՆՆԵՐԸ

էջ 293

Ջազիրա - Արդ ալ-Մալիքը կառավարիչ նշանակեց իր եղբորը՝ Մուհամմադ իբն Մարուանին և նա մնաց մինչև Արդ ալ-Մալիքի և Վալիդի[31] մահը:

Հայաստան (Արմինիա) և Ատրպատական – [Արդ ալ-Մալիքը] այս երկու [նահանգների] կառավարիչ (փոխարքա) նշանակեց [կցելով Ջազիրային] Մուհամմադ իբն Մարուանին ութսուններեք թվականին, մնաց մինչև Արդ ալ-Մալիքի մահը: Ութսունհինգ թվականին Մուհամմադ իբն Մարուանը հանվեց և Հայաստանի (Արմինիա) ու Ատրպատականի կառավարիչ նշանակվեց Արդալլահ իբն Հատիմ իբն Նուման ալ-Բահիլին: Երբ Արդալլահը մեռավ, Մուհամմադ իբն Մարուան [փոխարքան] նշանակեց Արդ ալ-Ազիզ իբն Հատիմ իբն Նումանին[32]:

Ամառային արշավանքի (սաիֆա) հրամանատար – Մալիք իբն Ուբայդալլահ ալ-Հանաֆի, ապա [Արդ ալ-Մալիքը] նշանակեց իր որդուն՝ Վալիդ իբն Արդ ալ-Մալիքին, ապա Մուհամմադ իբն Մարուան իբն ալ-Հաքամին, հետո Ամր իբն Մուհրիզ ալ-Աչջաթիին:

էջ 299

Առաջապահ զորքի (չուրթա) հրամանատար – [Արդ ալ-Մալիքը] նշանակեց Յազիդ իբն Աբու Քաբշա ալ-Սաքսաքիին, ապա հանեց նրան ու նշանակեց Աբու Նաթիլ Ռիյահ իբն Արդ ալ-Ղասսանիին, ապա հեռացրեց ու նշանակեց Արդալլահ իբն ալ-Հաքամիին, հետո հանեց նրան ու նշանակեց Քաաբ իբն Համիդ ալ-Աբսիին մինչև Արդ ալ-Մալիքի մահը:

Նամակագրության քարտուղար – նշանակեց իր մաուլա Աբու-լ-Զուայզաային:

Հարկերի (խարաջ) և զորքի (ջունդ) [վերատեսուչ] – Սարջուն իբն Մանսուր ալ-Ռումին (Հռոմ) էր, ապա երբ Սարջունը մեռավ, նա նշանակեց Սուլայման իբն Սաադին՝ Բանու Խաչին ցեղի (Կուդաայի

մի ճյուղը) մաուլային և նա առաջինն էր, որ Ասորիքի դիվանի [գրագրությունը] արաբերենի վերածեց:

Կնիքի, գանձաբանների (բույուտ ալ-մալ) և գանձատների (խազային) [վերատեսուչը] – Կաբիսա իբն Ջուայր ալ-Խուզային էր, երբ մնում կաբիսան, նա նշանակեց Օմար իբն Հարիսին:

Սննեկապետ (հաջիբ) – նրա մաուլա Աբու Յուսուֆը:

Աբջունի պահակազորքի (հարաս) [պետը] – Հիմյար ցեղի մաուլա Ադի իբն Այաշը, ապա Աբու-լ-Ջուայդաային այս պաշտոնն էլ տվեց, հետո նշանակեց [...]

Աբդ ալ-Մալիքի իշխանության տևողությունը հենց սկզբից հաշվելով տասներեք տարի երեք ամիս և քսանութ օր էր:

ՈՒԹՍՈՒՆՅՈՒԹ ԹՎԱԿԱՆ
(23 դեկտեմբեր 705 – 11 դեկտեմբեր 706)

էջ 301

Այդ տարում Մասլամա իբն Աբդ ալ-Մալիքը նվաճեց Ֆիղամը (Ֆիկամ) և Ֆուրսան (ձիավորների) լիճը: Նրա զորքը հասավ Կալաուդիմասուս և կոտորեց ու գերեվարեց:

ՈՒԹՍՈՒՆՈՒԹ ԹՎԱԿԱՆ
(12 դեկտեմբեր 706 – 30 նոյեմբեր 707)

էջ 302

Այդ տարում Մուհամմադ իբն Մարուանը արշավեց Հայաստան և այնտեղ անցկացրեց ամառն ու ձմեռը:

Այդ տարում Մասլամա իբն Աբդ ալ-Մալիքը և Աբբաս իբն ալ-Վալիդ իբն Աբդ ալ-Մալիքը արշավանքի ելան և կանգ առան Անտիոքում, ուր ձմեռեցին: Հոռոմները մեծ զորք հավաքեցին ու գրոհեցին նրանց դեմ, իսկ Ալլահը հոռոմներին պարտության մատնեց և մեծ կոտորած տվեց, ասվում է հիսուն հազար մարդ [զոհվեց] և Ալլահը նվաճեց Ջուրսուման ու Տիանան (Թուանա):

ՈՒԹՍՈՒՆԻՆԸ ԹՎԱԿԱՆ
(1 դեկտեմբեր 707 – 19 նոյեմբեր 708)

էջ 302

Այդ տարում Կուտայբա իբն Մուսլիմը արշավեց Բուխարայի թագավոր Վարդան Խուդահի դեմ, սակայն չկարողացավ հաղթել ու վերադարձավ:

Այդ տարում Մուսա իբն Նուսայրը իր որդուն՝ Արդալլահ իբն Մուսային [ծովային] արշավանքի ուղարկեց և նա հասավ Մայորկա (Մայուրկա) և Մինորկա (Մինուրկա) կղզիները, որոնք գտնվում են Սիկիլիայի ու Անդալուսի (Իսպանիա) միջև ու նվաճեց: Այս արշավանքը կոչվում է ազնվականաց արշավանք, քանզի նրա հետ մասնակցում էին ազնվական (աշրաֆ) ռազմիկներ:

Այդ տարում Մուսա իբն Նուսայրը իր որդուն Մարուան իբն Մուսա իբն Նուսայրին արշավանքի ուղարկեց Հնուավոր Սուս (Սուս ալ-Ակսա): Նա քառասուն հազար գերեվարեց:

Այդ տարում Մասլամա իբն Աբդ ալ-Մալիքը արշավեց Ամորիոն (Ամմուրիյա) և բախվելով բազմաստվածյանների (մուշրիքուն) զորքի հետ, Ալլահը նրանց պարտության մատնեց:

ԻՆՆՍՈՒՆ ԹՎԱԿԱՆ
(20 նոյեմբեր 708 – 8 նոյեմբեր 709)

էջ 303

Այդ տարում Կուտայբա իբն Մուսլիմը երկրորդ անգամ արշավեց Վարդան Խուդահի դեմ, իսկ վերջինս օգնության կանչեց սողդերին ու թուրքերին և չրջակա [ցեղերին]: Կուտայբան բախվեց նրանց հետ և Ալլահը նրանց պարտության մատնեց ու ցաք ու ցրիվ արեց:

Այդ տարում Մասլամա իբն Աբդ ալ-Մալիքը արշավեց Սուրիա (Հյուսիսային Ասորիք) և այնտեղ հինգ բերդեր գրավեց:

Այդ տարում Աբբաս իբն ալ-Վալիդ իբն Աբդ ալ-Մալիքը արշավեց և հասավ Արգն (Արզան)[33], ապա վերադարձավ:

ԻՆՆՍՈՒՆՄԵԿ ԹՎԱԿԱՆ
(9 նոյեմբեր 709 – 28 հոկտեմբեր 710)

էջ 303

Այդ տարում Վալիդ իբն Աբդ ալ-Մալիք [խալիֆան] հեռացրեց Մուհամմադ իբն Մարուանին Ջազիրայից, Հայաստանից (Արմինիա) և

Ատրպատականից ու նշանակեց Մասլամա իրն Արդ ալ-Մալիքին: Մասլաման իննսունմեկ թվականին, Ատրպատականի կողմից արշավեց Թուրքերի դեմ, մինչև որ հասավ Դարբանդ (ալ-Բաբ)[34]: Նա նվաճեց քաղաքներ ու բերդեր և Դարբանդից այն կողմ էլ նրան հպատակվեցին:

ԻՆՆՍՈՒՆԵՐԿՈՒ ԹՎԱԿԱՆ
(29 Հոկտեմբեր 710 – 18 Հոկտեմբեր 711)

Էջ 304

Այդ տարում Մուսա իրն Նուսայրը իր մաուլա Թարիկին[35] ուղարկեց արշավանքի: Նա նկավ Տանժեր (Թանջա), որը ծովի ափին է, անցավ Անդալուս (Իսպանիա), որի թագավորը դուրս նկավ նրա դեմ: Նա (Թարիկը) կոտորեց, գերեվարեց ու գերեց ու սպանեց թագավորին:

ԻՆՆՍՈՒՆԵՐԵՔ ԹՎԱԿԱՆ
(19 Հոկտեմբեր 711 – 6 Հոկտեմբեր 712)

Էջ 305

Այդ տարում Աբբաս իրն ալ-Վալիդ իրն Արդ ալ-Մալիքը արշավեց Ռումի երկիրը և Ալլահը նրա ձեռքով նվաճեց մի բերդ, իսկ Մարուան իրն ալ-Վալիդը նույնպես արշավեց ու հասավ Խանջարա:

Այդ տարում Մասլամա իրն Արդ ալ-Մալիքը արշավեց և նվաճեց ալ-Հիսն ալ-Ջադիդի (Նոր բերդ) երկու գոները՝ Մալաթիայի կողմերում:

ԻՆՆՍՈՒՆՋՈՐՍ ԹՎԱԿԱՆ
(7 Հոկտեմբեր 712 – 25 սեպտեմբեր 713)

Էջ 306

Այդ տարում Կուտայբա իրն Մուսլիմը արշավեց Քարուլ, պաշարեց բնակիչներին, մինչև որ նվաճեց:

Այդ տարում Կուտայբան արշավեց Ֆարղանա, պաշարեց բնակիչներին, գրավեց ամրոցները, իր հնծյալ գնդերը ուղարկեց ու գրավեց Շաշը:

Այդ տարում Մասլամա իրն Արդ ալ-Մալիքը արշավեց Ռումի երկիրը և նվաճեց Սանդարան:

Այդ տարում Աբբաս իրն ալ-Վալիդը արշավեց Ռումի երկիրը, գրավեց Անտիոքը, Կարիթեան ծովի ափին:

Իննսունչորս թվականին Արդ ալ-Ազիզ իրն ալ-Վալիդը արշավեց Ռումի երկիրը, մինչև որ հասավ Ղազալա:

ԻՆՆՍՈՒՆՀԻՆԳ ԹՎԱԿԱՆ
(25 սեպտեմբեր 713 – 15 սեպտեմբեր 714)

Էջ 307

Այդ տարում Մուհամմադ իրն ալ-Կասիմը գրավեց Մուլտանը:

Այդ տարում Մասլամա իրն Արդ ալ-Մալիքը նվաճեց Դարբանդ (ալ-Բաբ) քաղաքը Հայաստանում և քանդեց նրա [ներքին] քաղաքը և կործանեց այն: Ապա ինը տարի անց Մասլաման վերակառուցեց այն:

ՄԱՍԼԱՄԱՆ ՆՎԱՃՈՒՄ Է ՇԻՐՎԱՆԸ[36], ՋՈՒՄՐԱՆԸ, ԲԱՌԱՆԸ, ՋՈՂԸ (ՍՈՒԼ)[37] ԵՎ ԴԱՐԲԱՆԴԸ

Ինձ պատմել է Արու Խալիդը, լսելով Արու Բառայից, որ նրան ասել է Յազիդ իրն Ուսայդը, Թե Մասլաման արշավեց Շիրվան (Շարվան), Ջումրան, Բառան, Ջողա (Սուլ) քաղաք և նվաճեց՝ հասնելով Դարբանդ (Բաբ):

Ասել է ինձ Արու Մարուան ալ-Բահիլին, լսելով իր տոհմի մի մարդուց, որը եղել է Մասլամայի մոտ, Թե Մասլաման պաշարեց Դարբանդը (Բաբ) և նրա մոտ նկավ մի մարդ ու խնդրեց, որ իրեն նրաշխավորագիր (աման) տա իր անձի, ընտանիքի (ահլ բայտ) համար, իսկ ինքը [փոխարենը] ցույց կտա քաղաքի [պարսպի] ճեղքվածքը: Նա տվեց [նրաշխավորագիրը] և մահմեդականները մտան քաղաք և [մարդը] տեղեկացրեց Թշնամու [դիրքի] մասին և կատաղի պատերազմ տեղի ունեցավ, երբ արշալույսը բացվեց, մի ծերունի մահմեդական գոռաց՝ Ալլահ աքբար (մեծ է Ալլահը) և Ալլահը հաղթանակ պարգևեց մահմեդականներին:

ՎԱԼԻԴ ԻԲՆ ԱԲԴ ԱԼ-ՄԱԼԻՔԻ ԵՎ ՀԱՋՋԱՋԻ ԿԱՌԱՎԱՐԻՉՆԵՐԻ ԱՆՈՒՆՆԵՐԸ

Էջ 311

Ջազիրա – Նրա և Հայաստանի (Արմինիա) կառավարիչ նշանակվեց Մուհամմադ իրն Մարուան իրն ալ-Հաքամ, որը մնաց մինչև [Արդ ալ-Մալիքի] մահը:

էջ 312

Ամառային արշավանքի (Սաիֆա) հրամանատար – Մասլամա իբն Արդ ալ-Մալիքը, ապա որդին՝ Աբրասը, ապա մյուս որդին՝ Օմարը:

ԻՆՆՍՈՒՆՎԵՑ ԹՎԱԿԱՆ
(16 սեպտեմբեր 714 – 4 սեպտեմբեր 715)

էջ 313

Սուլայման իբն Արդ ալ-Մալիք [խալիֆան][38] ամառային արշավանքի [Բյուզանդիա] ուղարկեց Մասլամա իբն Արդ ալ-Մալիքին:

Այդ տարում Աբրաս իբն ալ-Վալիդը արշավեց և գրավեց Թուբրուսը (Թուլուս) և Մարզուբանայնը: Բիշր իբն ալ-Վալիդը արշավեց ու վերադարձավ, իսկ Վալիդն այն ժամանակ մնում էր: Այդ տարում վիրավորվեց Ջիդարը, որը նրա (Բիշրի) հետ էր Ռումի երկրում:

ԻՆՆՍՈՒՆՅՈՒԹ ԹՎԱԿԱՆ
(5 սեպտեմբեր 715 – 24 օգոստոս 716)

ՅԱԶԻԴ ԻԲՆ ՄՈՒՀԱԼԼԱԲԻ ԱՐՇԱՎԱՆՔԸ ՎՐԿԱՆ (ՋՈՒՐՋԱՆ)[39]

էջ 314

Այդ տարում Յազիդ իբն Մուհալլաբը արշավեց Վրկան:

Պատմել է Աբու-լ-Հասանը, թե Յազիդը Վրկան արշավեց Սուլայման իբն Արդ ալ-Մալիքի խալիֆայության ժամանակ: Այդ ժամանակ դա (Վրկանը) քաղաք չէր, այլ լեռներով չրջապատված [վայր] էր և հասնում էր մինչև Ջողա (Սուլ) երկիր: Նա պաշարեց Բուհայրան (լիճ), որը ծովում կղզի էր: Յազիդը երեսուն հազար [զորք] ուներ: Նա մտավ, սակայն դժվարությունների հանդիպելով դուրս եկավ Բուհայրա և պաշարեց Ջողա երկիրը: Ջողա մարդիկ դուրս էին գալիս որոշ օրեր և կռվի բռնվում: Այսպես մնացին ամիսներ և նա հեռացավ նրանցից Ռամադան ամսին (7 ապրիլ – 6 մայիս):

Ինձ պատմել է Վալիդ իբն Հիշամը, լսելով Հորից, սա էլ պապից, թե Յազիդը նրանց հետ հաշտության պայմանագիր կնքեց հինգ հարյուր հազար դիրհեմ վճարելու [պայմանով], որն ամեն տարի պետք է վճարել:

Ինձ պատմել է Հատիմ իբն Մուսլիմը, լսելով Յունիս իբն Աբու Իսհակից, թե ինքը ականատես է եղել Յազիդ իբն Մուհալլաբի հետ: Ասել է, նա (Յազիդը) հաշտության պայմանագիր է կնքել հինգ հարյուր հազար դիրհեմ հինգ կշռով և նրան ուղարկեցին [թնակիչները] դգեստներ (սիյաբ), պարսկական կանաչ թիկնոցներ (թայալիսա) և հազար գլուխ [արջա՞ռ]:

Այդ տարում Մասլամա իբն Արդ ալ-Մալիքը արշավեց Բարջամա և այն հողը, որը նվաճել էր Վադդահը, որն Իբն Աուֆի բերդն է: Մասլաման նվաճեց նաև Հիան ալ-Հադիդը (Երկաթե բերդ) Սարդաուսալը, որը Ռումի երկրի ծայրամասում (դաուահի՝ արվարձան) է:

Օմար իբն Հուբայրան ձմեռեց ծովի վրա:

ԻՆՆՍՈՒՆՈՒԹ ԹՎԱԿԱՆ
(25 օգոստոս 716 – 13 օգոստոս 718)

ՅԱԶԻԴ ԻԲՆ ՄՈՒՀԱԼԼԱԲԻ ԱՐՇԱՎԱՆՔԸ ԹԱԲԱՐԻՍՏԱՆ

էջ 315-316

Այդ տարում Յազիդ իբն ալ-Մուհալլաբը արշավեց Թաբարիստան և սպահապետը (իսբահբադ) հաշտություն խնդրեց, իսկ նա մնդրեց: Սպահապետը օգնության կանչեց Ջիբալի ու Դայլամի[40] (Դելմկաց) ժողովրդին: Նրանք ընդհարվեցին լեռան լանջին և կատաղի կռիվ եղավ, ապա Ալլահը պարտության մատնեց բազմաստվածյաններին (մուշրիքուն), որոնք լեռը բարձրացան: Յազիդն ուղարկեց Հայյան ալ-Նաբթիին և սպահապետը նրա հետ հաշտության պայմանագիր կնքեց յոթը հարյուր հազար դիրհեմ և չորս հարյուր բեռ (ուիկր՝ անասնաբեռ) քրքում (զաաֆարան), կամ նրա գինը կանխիկ դրամով (այն) և չորս հարյուր մարդ տալու պայմանով, ընդ որում ամեն մի մարդուց մեկական սև բարձր գլխանոց (բուրնուս), պարսկական կամարակապ մեկական թիկնոց (թայլասան), արծաթե բաժակ (ջամ), մետաքսի հակ (սարկա) և դգեստ (քիրսուա): Յազիդն ընդունեց այն և նրանցից հեռացավ:

Ասել է Աբու-լ-Հասանը, թե Վրկանի (Ջուրջան) ժողովուրդը դավաճանեց Յազիդի՝ իր փոխարեն թողած մահմեդականներին և կոտորեցին նրանց: Երբ նա (Յազիդը) վերջացրեց Թաբարիստանի հաշտության գործերը, չարժվեց նրանց մոտ, իսկ նրանք ամրացան բերդերում ու նրանց պետն էր մարզպանը: Յազիդը մի քանի ամիս կռվեց, ապա նրանք եկան հպատակվեցին և իրենց ձեռքով տվեցին [հարկը]: Նա կոտորեց նրանց ռազմիկներին, ընտանիքները գերեվարեց ու երկու փարասախ հեռավորության վրա խաչեց նրանց: Տանեց երկու հազար հոգու քշեց տարավ Անդար՝ Վրկանի ձորը ու կոտորեց նրանց. ջուրը բաց թողեց նրանց արյան վրա և ջաղացքում նրանց արյունը [ցորենի հետ] աղաց և հաց թխեցին ու կերան, քանզի նա

երդվել էր այդպես վարվել:

Իննսունութ թվականին Մասլաման ձմեռեց Ռումի ծայրամասերում, իսկ Օմար իբն Հուբայրան ծովի վրա ձմեռեց: Մասլաման դուրս եկավ իր ձմեռանոցից և հասավ մինչև Կոնստանդնուպոլիս թե՛ ծովի, թե՛ ցամաքի կողմից: Նա անցավ ծոցը (խալիջ)[41] և նվաճեց սլավոնների (սակալիբա)[42] քաղաքը և [Դանուբի] բուլղարների[43] (բուրջան) զորքը հարձակվեց Մասլամայի վրա, սակայն Ալլահը փախուստի մատնեց նրանց ու Մասլաման քարուքանդ արեց այն ամենն, ինչ գտնվում էր ծոցի և Կոստանդնուպոլսի միջև:

ԻՆՆՍՈՒՆԻՆԸ ԹՎԱԿԱՆ
(14 օգոստոս 717 – 2 օգոստոս 718)

էջ 316

Այդ տարում խազարները[44] ասպատակեցին Հայաստանը, Ատրպատականը, որոնց կառավարիչն էր Արդ ալ-Ազիզ իբն Հաթիմ իբն Նուման ալ-Բահիլին: Սակայն Ալլահը կոտորեց բոլոր խազարներին և այդ մասին Արդ ալ-Յազիդը գրեց Օմար իբն Արդ ալ-Ազիզին, երբ նա ստացավ խալիֆայական իշխանություն: Օմարը Հայաստանի (Արմինիա) կառավարիչ նշանակեց Ադի իբն Ադիին: Սա փորել տվեց մի գետ, որը մինչև օրս էլ կոչվում է Ադիի գետ:

ՍՈՒԼԱՅՄԱՆ ԻԲՆ ԱԲԴ ԱԼ-ՄԱԼԻՔԻ ԿԱՌԱՎԱՐԻՉՆԵՐԻ ԱՆՈՒՆՆԵՐԸ

էջ 319

<u>Հայաստան (Արմինիա)</u> – Արդ ալ-Ազիզ իբն Հաթիմ իբն Նուման: Հայաստանում կառավարչի փոփոխություն չկատարվեց մինչև Սուլայման [խալիֆայի] մահը:

<u>Ամառային արչավանքները</u> – Այյուր իբն Սուլայման իբն Արդ ալ-Մալիք, ապա Մասլամա իբն Արդ ալ-Մալիք:

էջ 319- 320

Այդ տարում Օմար իբն Արդ ալ-Ազիզը (խալիֆան)[45] կերակուր և գրասեր ուղարկեց Մասլամա իբն Արդ ալ-Մալիքին Ռումի երկիրը և հրամայեց բոլոր նրանց, ովքեր իրեն բարեկամ էին, իր մոտ հավաքել: Այսպիսով նա օգնական զորք առաքեց և այսպիսով օժանդակեց մարդկանց (զորքին) և թույլ տվեց վերադառնալ:

Այդ տարում թուրքերը (խազարները) հարձակվեցին Ատրպատականի վրա:

Ինձ պատմել է Աբու Խալիդը, լսելով Աբու Բահայից և ուրիշներից, թե թուրքերը մարդկանց (զորքի) վրա հարձակվեցին և Արդ ալ-Ազիզ իբն Հաթիմ իբն Նուման ալ-Բահիլին գնաց նրանց դեմ, Ալլահը կոտորեց թուրքերին և նրանցից միայն փախստականը փրկվեց: Նա (Արդ ալ-Ազիզը) եկավ Օմար [խալիֆայի] մոտ, որը գտնվում էր Խունասիրայում:

ՀԱՐՅՈՒՐ ՄԵԿ ԹՎԱԿԱՆ
(24 հուլիս 719 – 11 հուլիս 720)

ՕՄԱՐ ԻԲՆ ԱԲԴ ԱԼ-ԱԶԻԶԻ ԿԱՌԱՎԱՐԻՉՆԵՐԻ ԱՆՈՒՆՆԵՐԸ

էջ 323

<u>Ջազիրա, Հայաստան (Արմինիա), Ատրպատական</u> – Հայաստանի (Արմինիայի) կառավարիչ էր նշանակված Արդ ալ-Ազիզ իբն Հաթիմ իբն Նուման[46], ապա նշանակվեց Ադի իբն Ադին[47], որն իրեն փոխանորդ նշանակեց Ջազիրայում՝ Սավադա Աբու-լ-Սաբահ իբն Սավադա ալ-Քինդիին:

էջ 324

<u>Ամառային արչավանքները</u> – Բաժանված էին Վալիդ իբն Հիշամի և Ամր իբն Կայս ալ-Սուքունտիի միջև:

ՀԱՐՅՈՒՐ ԵՐԿՈՒ ԹՎԱԿԱՆ
(12 հուլիս 720 – 30 հունիս 721)

էջ 327

Այդ տարում Աբբաս իբն Վալիդ իբն Արդ ալ-Մալիքը նվաճեց Դաբսան Ռումի երկրում:

ՀԱՐՅՈՒՐ ԵՐԵՔ ԹՎԱԿԱՆ
(1 հուլիս 721 – 20 հունիս 722)

էջ 328

Այդ տարում Յազիդ իբն Արդ ալ-Մալիքը (խալիֆան) Իրաքի կա-

ռավարիչ նշանակեց Օմար իբն Հուբայրա ալ-Ֆիզարիին: Սա հեռացրեց Արդ ալ-Ազիզ իբն Հարիս իբն ալ-Հաքամ իբն Աբու-լ-Ասին և [Մոթասանի] կառավարիչ նշանակեց Սաիդ իբն Ամր ալ-Հարաչիին: Եվ ահա սողդերը (ալ-սուղդ) դավաճանեցին և իրենց ընտանիքներով և ունեցվածքով գնացին իրենց երկրից: Նրանց դեմ դուրս եկավ Սաիդ իբն Ամր ալ-Հարաչին: Նրանք հաշտության պայմանագիր խնդրեցին այն պայմանով, որ վերադառնան իրենց երկիրը և գլխահարկ (ջիզիա) վճարեն: Նրանց մի մասը գնաց, մյուս մասը մնաց: Իսկ արաբական զորքը հարձակվեց նրանց վրա աջ ու ձախ կոտորելով և Սաիդը նրանց ի սպառ կոտորեց՝ գերեվարելով նրանց ընտանիքները:

Այդ տարում Միլակ իբն Սուֆար ալ-Բահրանին արշավեց Հայաստան (Արմինիա):

Ասել է Աբու Խալիդը, լսելով Աբու Բառայից, թե խազարները ընդհարվեցին Միլակ իբն Սուֆարի հետ Մարջ ալ-Հիջարայում և մահմեդականների մի խումբ կոտորվեց, Ռամադան ամսին (22 փետրվար – 23 մարտ) հարյուր երեք թվականին: Այդ տարի ձմեռը կատաղի էր և խազարները գրավեցին մահմեդականների ճամբարը:

Մուհամմադ իբն Մարուանը ամառային մեծ արշավանք կատարեց, իսկ Օսման իբն Հայյանը՝ ամառային փոքր արշավանք:

Այդ տարում Աբբաս իբն ալ-Վալիդը արշավեց Ռումի երկիրը:

էջ 329

Հարյուր երեք թվականին մեռավ Բանու Սաադ ցեղի մաուլա Վասսաբը, որը Քուֆայի բնակիչ էր. Մուսաաբ իբն Սաադ իբն Մալիքը, Մայմունայի մաուլա Աֆլա իբն Յասարը և Արդ ալ-Ազիզ իբն Հաթիմ իբն Նուման ալ-Բահիլին՝ Հայաստանում:

ՀԱՐՅՈՒՐ ՋՈՐՍ ԹՎԱԿԱՆ
(21 Հունիս 722 – 9 Հունիս 723)

ՋԱՌԱՀԻ[48] ՀԱՅԱՍՏԱՆԻ (ԱՐՄԻՆԻԱՅԻ) ԿԱՌԱՎԱՐԻՉ ԴԱՌՆԱԼԸ ԵՎ ԲԱԼԱՆՋԱՐԻ ՆՎԱՃՈՒՄԸ

էջ 329-330

Այդ տարում Յաղիդ իբն Արդ ալ-Մալիք [Խալիֆան][49] հեռացրեց Միլաք իբն Սաֆֆարին[50] Հայաստանի (Արմինիա) կառավարչի պաշտոնից և նշանակեց Ջառահ իբն Աբդալլահ ալ-Հաքամիին: Ջառահը արշավեց, նվաճեց Բալանջարը կիրակի օրը՝ Ռաբի Ա ամսից երեք օր

անց (22 օգոստոս) հարյուր չորս թվականին: Ապա Ջառահը հանդիպեց Խաքանի[51] որդուն Դարբանդից (Բաբ) երկու փարսախ այն կողմ, Առան գետի վրա: Նրանք սաստիկ ճակատամարտ տվեցին և Խաքանի որդին փախուստի դիմեց, իսկ մահմեդականները հետապնդեցին նրանց, կոտորելով, մեծ թվով սպանելով ու գերեվարելով:

Ինձ պատմել է Աբու Խալիդը, լսելով Աբու-լ-Բառա ալ-Նումայրիից, թե նրա ժողովուրդը (խազար) Ջառահից հաշտություն խնդրեց այն պայմանով, որ նա իրենց փոխադրի ու հաստատի Հիզանի (Խայդան) մերձակա չրջանում (ռուստակ) և նա փոխադրեց նրանց: Ապա եկավ Յազու ռուստակը և օրերով մնաց, իսկ նրանք հաշտություն խնդրեցին այն պայմանով, որ Ֆիլա ռուստակը փոխադրի:

Ասել է Աբու Բառան, որ իրեն պատմել է Սավադան՝ մի ճշմարտացան ծերունի, թե Ջառահի հետ էինք Բալանջարում և մի մահմեդական վեր կացավ ու ասաց՝ ո՞վ իր անձը կգոհի (յաչրի) Ալլահի սիրուն: Երեսուն մարդ արձագանքեց նրան, որոնք իրենց սրերի պատյանները ջարդեցին, հարձակվեցին արվարձանի սայլերի վրա, և [Թչնամի] զորքը հետագնելով վերցրեցին սայլերը, որոնք իրար էին կապված: Երբ մի սայլը ցած գլորվեց, բոլոր մնացածները նույնպես գլորվեցին, այնպես, որ սայլերը ընկան մահմեդականների ճամբարը (ասքար) և դրանք երեք հարյուր սայլեր էին:

Ապա [սայլերը] չուռ տվեցին դեպի Բալանջարի բնակիչները և մարդիկ [քաղաքի] դռնից փախան և Բալանջարի տերը (սահիբ) ձի հեծած ծլկեց: Ջառահը գրավեց Բալանջարը, ապա չարժվեց Թուրքերի դեմ, որոնք քառասուն ընտանիք (ահլ բայտ) էին և նրանից թույլտվություն խնդրեցին միանալ նրա հետ խազարների դեմ և նա (Ջառահը) ընդունեց ու գնացին Վարդանակերտ (Վարսան)[52]:

Այդ տարում Օսման (Ուսման) իբն Հայյան ալ-Մուռին և Արդ ալ-Ռահման իբն Սուլայմ ալ-Քայրին արշավեցին ու Սիսարան պաշարելով գրավեցին: Օսմանը նվաճեց Կեսարիան (Կայսարիյա), որը Հռոմների ամրոցներից էր:

ՀԱՐՅՈՒՐ ՀԻՆԳ ԹՎԱԿԱՆ
(10 Հունիս 723 – 28 մայիս 724)

էջ 331

Այդ տարում Ջարանը Թուրքերի մեծ զորքով արշավեց Հայաստան (Արմինիա): Նրա դեմ գրոհեց Ջառահ իբն Աբդալլահ ալ-Հաքամին և ընդհարվեցին մի վայրում, որը կոչվում է Իլգամ (մնա) և գտնվում է Կուրի ու Արաքսի (ալ-Ռաս) միջև, Ռամադան ամսին (1 փետրվար – 1 մարտ): Մի քանի օր կռվեցին և ապա Ալլահը փախուստի մատնեց

բազմաստվածյաններին (մուշրիքուն):

Ասել է Աբու Խալիդը, որ լսել է Աբու-լ-Բառայից, իսկ նա Մալիք իբն Ադհամից, թե Ջառահի հետ էինք ու կռվեցինք մինչև որ գիշերը մեզ իրարից անջատեց, սակայն Ալլահը մահմեդականների նվաճումն իրագործեց:

Ասել է Իբն ալ-Քալբին, թե այդ տարում Ջառահ իբն Աբդալլահը արշավեց Ալանաց երկիրը (ալ-Լան)[53], ապա հասավ մինչև Բալանջարի ետևում գտնվող քաղաքները: Մի քանիսը նվաճվեցին, իսկ մյուսների բնակիչները հեռացան: Նա կոտորեց ու ավարեց և դա կատարվեց հարյուր հինգ թվականին:

Ասել է Իբն ալ-Քալբին, թե այդ տարում Մարուան իբն Մուհամմադը ամառային աջ արշավանք կատարեց ու նվաճեց Ռումի երկրում մի քաղաք Անաջի կողմերում:

ՅԱԶԻԴ ԻԲՆ ԱԲԴ ԱԼ-ՄԱԼԻՔԻ ԿԱՌԱՎԱՐԻՉՆԵՐԻ ԱՆՈՒՆՆԵՐԸ

էջ 333

Հայաստան (Արմինիա) – Յազիդ իբն Արդ ալ-Մալիքը կառավարիչ նշանակեց Միլաք իբն Սաֆֆար իբն Ֆալհաս իբն Ջանբ ալ-Ջամմար իբն Մաուկիդ ալ-Նար ալ-Բահրանիին, Եմնասյի (Հիմս) բնակիչներից, Հարյուր երեք թվականին, ապա հեռացրեց նրան ու Հարյուր չորս թվականին նշանակեց Ջառահ իբն Աբդալլահ ալ-Հաքամիին[54]:

Ջազիրա – Ֆահդ իբն Մուհամմադ ալ-Քինդին և ալ-Աբս իբն Կայս իբն Շուրա իբն ալ-Արկամ ալ-Քինդին:

ՀԱՐՅՈՒՐ ՎԵՑ ԹՎԱԿԱՆ
(29 մայիս 724 – 18 մայիս 725)

էջ 336–337

Այդ տարում Ջառահ իբն Աբդալլահ ալ-Հաքամին Հայաստանից արշավեց [խազարների դեմ]:

Ինձ պատմել է Աբու Խալիդը, լսելով Աբու Բառա ալ-Նումայրիից, թե Ջառահ իբն Աբդալլահ ալ-Հաքամին ներխուժեց խազարաց երկիրը [Ալանաց դռների կողմից][55]: Ալանները հաշտության պայմանագիր կնքեցին և վճարեցին գլխահարկ (ջիզիա) և խարաջ (հողահարկ): Նա առաջինն է, որ վերադարձել է Ալանաց դռների (Բար ալ-Լան) կողմից:

Այդ տարում Իֆրիկիայի (Մաղրիբի) կառավարիչ Բիշր իբն Սաֆուանը Մուհամմադ իբն Աբու Բաքրին, որը Ջամհ տոհմի մաուլան է,

արշավանքի ուղարկեց և նա ասպատակեց Կորսիկան ու Սարդինիան:

Այդ տարում Սաիդ իբն Աբդ ալ-Մալիքը արշավեց Ռումի երկիրը:

Այդ տարում Մուավիա իբն Հիշամը ամառային արշավանք կատարեց:

ՀԱՐՅՈՒՐ ՅՈԹ ԹՎԱԿԱՆ
(19 մայիս 725 – 7 մայիս 726)

էջ 337

Այդ տարում Հիշամ իբն Աբդ ալ-Մալիքը հեռացրեց Ջառահ իբն Աբդալլահ ալ-Հաքամիին Հայաստանի (Արմինիա) և Ատրպատականի կառավարչի պաշտոնից և նշանակեց Մասլամա իբն Աբդ ալ-Մալիքին: Մասլաման արշավանքի ուղարկեց ալ-Հարիս իբն Ամր ալ-Թաիին[56]:

Ասել է Աբու Խալիդը, լսելով Աբու Բառայից, թե Հարիսը արշավեց ու Կուրի շրջանում (երկրում) գրավեց մի գավառ (ռուստակ), որը կոչվում էր Խաչդան:

Ասել է Աբու Բառան՝ Մասլաման այդ տարվանից սկսեց արշավել: Նա Մալաթիայից հարձակվեց ու պաշարեց Կեսարիան ու բռնի ուժով գրավեց և դա կատարվեց Հարյուր յոթ թվականի Ռամադան ամսից չորս օր անց (14 հունվար):

Ասել է Իբն ալ-Քալբին՝ այդ տարում Մուավիա իբն Հիշամը արշավեց Ռումի երկիրը և նրա զորքը առաջացավ. նա ուղարկեց Վադդահին, Վադդահիյայի տիրոջը, որը վառեց գյուղերն ու ցանքսերը և կտրատեց ծառերը:

Ասել է Իբն ալ-Քալբին՝ թե այդ տարում սաստիկ ժանտախտ կար Ասորիքում, այնպես որ մեծ վնաս հասավ գրաստին ու կովերին:

Այդ տարում Մուավիա իբն Հիշամը արշավեց Ռումի երկիրը և հասավ Արուլիյա (Ադրուլիյա):

ՀԱՐՅՈՒՐ ՈՒԹ ԹՎԱԿԱՆ
(8 մայիս 726 – 27 ապրիլ 727)

էջ 338

Այս տարում Մասլամա իբն Աբդ ալ-Մալիքը ամառային աջ արշավանք կատարեց, իսկ Ասիմ իբն Արդալլահ իբն Յազիդ ալ-Հիլալիին՝ ամառային ձախ արշավանք:

Այս տարում Խաքանի որդին ներխուժեց Ատրպատական:

Ասել է Աբու Խալիդը, լսելով Աբու Բառայից, թե Հարյուր ութ

Թվականին Մարտիք իբն Խաքանը ներխուժեց Ատրպատական ու պաշարեց Վարդանակերտ (Վարսան) քաղաքը, այն ռմբակոծեց քարանետ մեքենաներով (մանջանիկ) և լուրը հասավ ալ-Հարիս իբն Ամրին, որն առաջ խաղաց, կտրեց անցավ Արաքսը (ալ-Ռաս), Վարդանակերտը վերևի կողմից: Խաքանի որդին լսելով այդ մասին եկավ ալ-Հարիսի դեմ ու նրանք բախվեցին և Ալլահը փախուստի մատնեց Խաքանի որդուն ու նրա մերձավորներին և նրանցից մեծ բազմություն կոտորվեց և ալ-Հարիս իբն Ամրը սպանվեց, Ալլահը ողորմի նրան:

Այդ տարում Բիշր իբն Սաֆուանը Իֆրիկիայից արշավանքի ուղարկեց Կուսամ իբն Ավանա ալ-Քալբիին և ավար վերցնելով ապահով վերադարձավ:

Այդ տարում Մուավիա իբն Հիշամը արշավեց Ռումի երկիրը և ուղարկեց Բաթթալին՝ Խանջարա, որը նվաճեց այն:

ՀԱՐՑՈՒՐ ԻՆԸ ԹՎԱԿԱՆ
(28 ապրիլ 727 – 15 ապրիլ 728)

Լ 339

Այդ տարում Մասլամա իբն Աբդ ալ-Մալիքը արշավեց և զորքերը տարածեց Ատրպատականում ու նրանք այնտեղ ձմեռեցին:

Այդ տարում Մուավիա իբն Հիշամը արշավեց Ռումի երկիրը ու նվաճեց մի բերդ, որը կոչվում է ալ-Ղաթթասին:

ՀԱՐՑՈՒՐ ՏԱՍԸ ԹՎԱԿԱՆ
(16 ապրիլ 728 – 4 ապրիլ 729)

ԹԻՆԻ ՆՎԱՃՈՒՄՆԵՐԸ

Լ 339-340

Այդ տարում Մասլամա իբն Աբդ ալ-Մալիքը արշավեց խազարաց երկիրը և սրանք այն արշավներն են, որ կոչվում են Թինի արշավանքներ:

Ասել է Աբու Խալիդը, լսելով Իբն Բառա ալ-Նումայրիից, թե Մասլաման դիմեց Տալմիս (Տաֆլի՞ս) և Դարբանդի (Բաբ) մոտերքում հանդիպեց խազարաց բռնակալին (Թաղիա), որը բազմամարդ զորքով էր և նրանք չատ օրեր պատերազմեցին, ապա Ալլահը նրանց փախուստի մատնեց և պատահեց հարյուր տասը թվականի Ջումադա Բ ամսի յոթին, հինգշաբթի օրը (18 օգոստոս 728):

Ասել է Աբու Բառան, լսելով Աբդալլահ իբն Ուսայդ ալ-Քիլաբիից, թե Մասլաման անցավ Ալանաց դռնով (Բաբ ալ-Լան) և նրա դեմ ելան խազարները, որոնք գոտեմարտեցին նրա հետ այնքան, մինչև գիշերը անջատեց նրանց և Մասլաման անվնաս վերադարձավ:

Ասել է Իբն ալ-Քալբին, թե Մասլամայի պատերազմը նրանց հետ մոտավորապես մեկ ամիս տևեց, խիստ անձրևային պայմաններում:

Այդ տարում Մուավիա իբն Հիշամը արշավեց Ռումի երկիրը և գրավեց նրանց բերդերից երկուսը՝ Սիմլան ու ալ-Բուվվան (ալ-Մուվվա):

Ասել է Աբու Խալիդը, թե այդ տարում Ուբայդա իբն Աբդ ալ-Ռահման ալ-Ջաբուանին Սուլայմ ցեղից, եկավ Իֆրիկիա և Օսման իբն Աբու Ուբայդային յոթ հարյուր հոգով ուղարկեց արշավանքի. նա հարձակվեց Սիկիլիայի Սիրակուզա (Սարակուս) քաղաքի վրա: Նրանք բախվեցին ու գերի ընկավ նրանց պատրիկը և Ալլահը նրանց պարտության մատնեց:

Այդ տարում մնաւ ալ-Ֆարագդակը, իսկ Ջարիրը*՝ նրանից մեկ ամիս անց:

Այդ տարում մնաւ Վահբ իբն Մունաբբիհը:

ՀԱՐՑՈՒՐ ՏԱՍՆՄԵԿ ԹՎԱԿԱՆ
(5 ապրիլ 729 – 25 մարտ 730)

Լ 341

Այդ տարում Աչրաս իբն Աբդալլահ ալ-Սուլամին [լուր] ուղարկեց Թոխարիստանի[57] Թագավորներին ու նրանք եկան ներկայացան և արշավանք տեղի չունեցավ:

Այդ տարում Հիշամ իբն Աբդ ալ-Մալիք [Խալիֆան][58] իր եղբորը՝ Մասլամային հանեց Հայաստանի (Արմինիա) ու Ատրպատականի կառավարչի պաշտոնից և նշանակեց ալ-Ջառահ իբն Աբդալլահ ալ-Հաքամիին[59] երկրորդ անգամ:

Ասել է Աբու Խալիդը, լսելով Աբու-լ-Խաթթաբից, թե ալ-Ջառահը երկրորդ անգամ կառավարիչ դարձավ հարյուր տասնմեկ թվականին ու եկավ Տփղիս (Տաֆլիս) և արշավեց խազարների մի քաղաքի վրա, որը կոչվում է ալ-Բայդա, գրավեց այն, ապա մեկնեց: Խազարները մեծ բազմությամբ զորք հավաքեցին Խաքանի որդու հետ ու մտան Հայաստան և Խաքանի որդին առաջ չարժվեց ու պաշարեց Արդաբիլի[60] ժողովրդին:

Ասել է Իբն ալ-Քալբին, թե այդ տարում Մուավիա իբն Հիշամը

---

* Ֆարագդակ, Ջարիր – Օմայան չրջանի բանաստեղծներ:

ամառային ձախ արշավանք կատարեց [Ռումի երկիրը], սակայն հեռացավ, ոչ մի թակարդի չհանդիպելով:

Այդ տարում Սաիդ իբն Հիշամը նույնպես ամառային արշավանք կատարեց Ջազիրայից այն կողմ ու հասավ Կեսարիա (Կայսարիյա):

ՀԱՐՅՈՒՐ ՏԱՍՆԵՐԿՈՒ ԹՎԱԿԱՆ
(26 մարտ 730 – 14 մարտ 731)

էջ 442 – 443

Այդ տարում Աչրաս իբն Արդալլահ ալ-Սուլամին արշավեց Ֆարղանա և գրոհի հանդիպեց՝ նրան չրջապատեցին Թուրքերը: Հիշամ իբն Արդ ալ-Մալիք [խալիֆան] տեղեկանալով այդ մասին, նշանակեց [կառավարիչ] ալ-Ջունայդ իբն Արդ ալ-Ռահման ալ-Մուռիին:

Այդ տարում Ջառահը հարյուր տասներկու Թվականին Պարտավից (Բարդաա) եկավ Ատրպատական և Սաբալանի դաչտում (Մարջ Սաբալան) բանակ դրեց: Այստեղ կա մի գետ, որի վրա կամուրջ կապեց և դա այսօր կոչվում է Ջառահի կամուրջ:

Ասել է Աբու Խալիդը, լսելով Աբու Բառայից, Թե Ջառահը տասներկու Թվականին գրոհեց Խաքանի որդու դեմ, որը պաշարել էր Արդաբիլի ժողովրդին: Սաստիկ պատերազմ տեղի ունեցավ և Ջառահն սպանվեց, Ալլահը ողորմի նրան, հարյուր տասներկու Թվականին Ռամադան ամսից ութ օր մնացած (8 դեկտեմբեր 730):

Խազարները նվաճեցին Ատրպատականը և նրանց հնձյալները ասպատակեցին, մինչև որ հասան Մոսուլի մոտերքը: Նրանք Արդաբիլի դեմ քարանետ մեքենաներ (մանջանիկ) օգտագործեցին, իսկ Արդաբիլի ժողովուրդը կռվում էր նրանց դեմ: Սակայն, երբ պաշարումը երկարեց, հանձնեցին այն (քաղաքը): Խազարները մտան, կոտորեցին ռազմիկներին և նրանց ընտանիքներին գերեվարեցին:

Ասել է Աբու Խալիդը, լսելով Աբու-լ-Խաթթաբից, իսկ նա Սուլայմ ցեղի մի մարդուց, Թե Ջառահը սպանվել է Արշակում:

Ասել է Աբու-լ-Խաթթաբը, Թե Ջառահը երբ սպանվեց, Հիշամ իբն Արդ ալ-Մալիք [խալիֆան] Սաիդ իբն Ամր ալ-Հարաշիին ուղարկեց և նրա հետ տվեց արաբ ձիավորներ՝ փոստի (բարիդ) ձիերով: Սաիդ իբն Ամրը շարժվեց և հասավ Պարտավ:

Ասել է Աբու-լ-Խաթթաբը, լսելով Աբու Ալկամա ալ-Սակաֆիից, իսկ նա՝ Եմեսայի (Հիմս) բնակիչներից՝ մի ծերունուց, Թե լսել է Սաբիտ ալ-Բահրանիից, Թե Հարաշին մեզ մոտ՝ Պարտավ եկավ փոստի ձիերով և մենք միասին գնացինք Բայլական, իսկ նրանք գնացին Ատրպատական: Եվ ահա նրանց դեմ դուրս եկավ խազարների զորքը, բաղում սայլերով, որոնց վրա կային Արդաբիլի բնակիչներից

գերեվարվածներ ու կողոպուտ:

Ասել է Սաբիտը, Թե Հարաշին ինձ որպես հետախույզ ուղարկեց և ևկա [խազարների] բանակատեղի ու տեսա, որ [զորքը] քնած էր: Հեռացա ու նրանց տեղեկացրի: Սա իր զինակիցներին զարթնեցրեց և հարձակվեց ու փրկեց սայլերը՝ նրանց վրա եղածներով:

Ասել է Սաբիտը, Թե նա ինձ ուղարկեց Բայլական քաղաքը և Հիշամ իբն Արդ ալ-Մալիքին գրեց հաղթանակի մասին, ապա լուր ստացավ, Թե Վարդանակերտի կողմերը բազում սայլեր են բերել, որոնց վրա գերեվարվածներ և կողոպուտ կա: Նա գիշերանց հարձակվեց նրանց վրա և Թշնամիներից ով կար, կոտորեց, իսկ սայլերը մտցրեց Վարդանակերտ: Նա Հիշամին գրեց հաղթանակի մասին:

Նա առաջ խաղաց ու բախվեց խազարաց բռնակալի (Թաղիա) հետ և Ալլահը նրանց պարտության մատնեց ու բռնակալը փախավ և Հարաշին ձեռք բերեց նրանց մոտ եղած բոլոր մահմեդական գերեվարվածներին և ավարը:

Ասել է Աբու Խալիդը, լսելով Աբու Բառայից, իսկ նա Արդալլահ իբն Արդալլահ ալ-Ամիրիից, Թե Սաիդ իբն Ամր ալ-Հարաշին բախվեց Խաքանի որդու հետ և գիշերանց հարձակվելով սաստիկ կոտորած տվեց: Խազարաց բռնակալը փախավ, իսկ Հարաշին հաղթանակի մասին գրեց Հիշամ իբն Արդ ալ-Մալիքին:

Ասել է Իբն ալ-Քալբին, Թե Ջառահը և նրա զինակիցները նահատակվեցին Արդաբիլի դաչտում (Մարջ Արդաբիլ)[61]: Նա իր եղբորը ալ-Հաջջաջ իբն Արդալլահին իրեն փոխանորդ էր նշանակել: Սակայն նկավ ալ-Հարաշին և Ալլահը նրանց պարտության մատնեց ու նրանցից ամեն ինչ ազատեց:

Ասել է Իբն ալ-Քալբին, Թե Մասլամա իբն Արդ ալ-Մալիքը հարյուր տասներկու Թվականի Շավվալ ամսին (17 դեկտեմբեր 730 – 14 Հունվար 731) դուրս եկավ պատերազմի Թուրքերի դեմ, երբ սաստիկ անձրև ու ձյուն էր տեղում: Նա անցավ Դարբանդը (ալ-Բաբ), իսկ սա էլ ալ-Թաիին Թողել էր, որ կառուցապատի Դարբանդը և ամրացնի և այդ բանի համար զորքեր Թողեց: Ապա զորքեր ուղարկեց, որոնք քաղաքներ ու բերդեր գրավեցին և Ալլահի Թշնամիները իրենք իրենց կրակով վառեցին իրենց քաղաքներում:

Նույն հարյուր տասներկու տարում, ըստ Աբու Խալիդի, Ութայդա իբն Արդ ալ-Ռահմանը Իփրիկիայից արշավանքի ուղարկեց Սաբիտ իբն Խասիմին, որը Հորդանանի բնակիչներից էր, հարձակվելու Սիկիլիայի վրա. նա գերեվարեց, ավար վերցրեց և ապահով վերադարձավ:

Իբն ալ-Քալբին ասել է, Թե այդ տարում Մուավիա իբն Հիշամը Մալաթիայի կողմից ամառային արշավանք կատարեց [Ռում] և նվաճեց Խարսիանոնը (Խարչանա):

ՀԱՐՅՈՒՐ ՏԱՍՆԵՐԵՔ ԹՎԱԿԱՆ
(15 մարտ 731 – 2 փետրվար 732)

Էջ 344

[Հարյուր] տասներեք տարում Հիշամ [Խալիփան] իր եղբորը Մասլամային Հայաստանի (Արմինիա) և Ատրպատականի կառավարիչ նշանակեց, հանելով Սահիդ իրն Ամր ալ-Հարաչիին: Մասլամա իրն Արդ ալ-Մալիքը կառավարչի պաշտոնն ստանձնելուց հետո գնաց և ձերբակալեց Սահիդ իրն Ամրին, չղթայեց նրան ու բանտարկեց: Սակայն Հիշամը մարդ ուղարկեց ու նրան բանտից դուրս բերեց:

Ասել է Արու Խալիդը, լսելով Արու Բաուայից, թե Մասլաման նկավ և Հիզանի (Հայգան) ժողովրդին հաչտություն առաջարկեց, սակայն մերժեցին և նա կոտորեց նրանց: Նրանք երաչխավորագիր (աման) խնդրեցին և նա երդվեց, որ նրանցից մի մարդ կամ մի չուն չի սպանի: Նրանք հանձնվեցին, իսկ նա բոլորին կոտորեց բացի մի մարդուց և մի չնից ու գրավեց բերդը: Նա չարժվեց դեպի Սուրան երկիրը, որի թագավորը հաչտություն խնդրեց և նա հաչտություն կնքեց նրա հետ, ինչպես նաև Մասկաթի (Մազքութ) ու Կուրի (ալ-Քուռ) ժողովրդի հետ:

Մասլաման բախում ունեցավ Խաքանի հետ և սաստիկ պատերազմ տեղի ունեցավ, ապա Մասլաման հեռացավ ու գնաց Ղազալա և խազարների զորքերը պաչարեցին նրան, սաստիկ պատերազմից հետո Ալլահը խազարներին փախուստի մատնեց, իսկ Խաքանը փախավ:

Ասել է Արու Խալիդը, լսելով Արու-լ-Խաթթաբից, թե երբ Մասլաման նկավ, խազարները նրա դեմ գրոհեցին և Մասլաման չանդրադարձավ այդ բանին, մինչև որ նրան հայտնեցին և նա պատերազմեց նրանց դեմ, սակայն գիչերը խանգարեց նրանց: Մահմեդականները ամբողջ գիչերը մնացին գոռում գոչումներ արձակելով: Խազարները հեռացան, իսկ Մասլաման վերադարձավ ու նրա փոխարեն նչանակվեց Մարուան իրն Մուհամմադը:

Այս բոլորը կատարվել էր հարյուր տասներեք թվականին:

ՀԱՐՅՈՒՐ ՏԱՍՆՋՈՐՍ ԹՎԱԿԱՆ
(3 մարտ 732 – 20 փետրվար 733)

Էջ 345

Այդ տարում Հիշամ իրն Արդ ալ-Մալիք [Խալիփան] Մասլամա իրն Արդ ալ-Մալիքին հանեց Հայաստանի (Արմինիա), Ատրպատականի ու Ջազիրայի կառավարչի պաչտոնից և նչանակեց Մարուան իրն Մուհամմադին, հարյուր տասնչորս թվականի Մուհառամ ամսի (3 մարտ – 1 ապրիլ) սկզբին:

Ասել է Արու Խալիդը, լսելով Արու-լ-Բաուայից, թե Մարուանը նկավ հարյուր տասնչորս թվականին, մինչև որ անցավ ալ-Ռամմ գետը և արչավեց սլավոնների (սակալիբա) դեմ ու կոտորեց:

Ասել է Իրն ալ-Քալբին, թե այդ տարում Մուավիա իրն Հիշամը արչավեց Ռումի երկիրը: Աբդալլահ իրն ալ-Բաթթալը զորքով ընդհարվեց Կոստանդինի (Կուսթանթին) հետ և Ալլահը փախուստի մատնեց Թչնամուն, իսկ Կոստանդինը գերի ընկավ:

Էջ 346

Այդ տարում Մասլամա իրն Հիշամը արչավեց Ռումի երկիրը Ջագիրայից այն կողմ, գնալով, մինչև որ Հասավ Կեսարիա (Կայսարիյա):

ՀԱՐՅՈՒՐ ՏԱՍՆՀԻՆԳ ԹՎԱԿԱՆ
(21 փետրվար 733 – 9 փետրվար 734)

Էջ 346

Այդ տարում Մուավիա իրն Հիշամը Ռամադան ամսին (15 սեպտեմբեր – 13 նոյեմբեր 733) արչավեց ու հասավ մինչև Պափղագոնիա (Աֆլաջունիա)[62]:

ՀԱՐՅՈՒՐ ՏԱՍՆՅՈԹ ԹՎԱԿԱՆ
(19 մայիս 725 – 7 մայիս 726)

Էջ 348

Ասել է Արու Խալիդը, լսելով Արու-լ-Բաուայից, թե այդ տարում Մարուան իրն Մուհամմադը, որը Հայաստանի, Ատրպատականի կառավարիչ էր, երկու զորք ուղարկեց Կովկասյան լեռները: Զորքերից մեկը գրավեց ալաններից երեք բերդեր, իսկ մյուս զորքը պաչարեց Տուման չահին: Տուման չահը իջավ ու հպատակվեց Մարուան իրն Մուհամմադին: Մարուանը նրան ուղարկեց Հիշամ Արդ ալ-Մալիքի մոտ: Սակայն Հիշամը նտ ուղարկեց նրան և Մարուանը նորից նստեցրեց նրան իր թագավորության մեջ:

Ասել է Իրն ալ-Քալբին, թե այդ տարում Մուավիա իրն Հիշամը արչավեց Ռումի երկիրը, մինչև որ հասավ Սայրարա և նրա հեծյալ ջոկատները հասան Սարդա և գերեվարեցին:

ՀԱՐՅՈՒՐ ՏԱՍՆՈՒԹ ԹՎԱԿԱՆ
(20 Հունվար 736 – 7 Հունվար 737)

Այդ տարում Մարուան իբն Մուհամմադը արշավանք կատարեց Հայաստան ու մտավ Վրթանեսի (Վարտնես, Վարտանես) հողը երեք դռներից և Վրթանեսը փախավ խազարների մոտ՝ թողնելով ամրոցը: Մարուանը նրա առջև քարանետ մևքենաներ դրեց: Խումբինի բնակիչները սպանեցին Վրթանեսին ու նրա գլուխն ուղարկեցին Մարուանին: Մարուանը Վրթանեսի գլուխը ցուցադրեց ամրոցի բնակիչներին և նրանք իջան հանձնվեցին Մարուանին, որը կոտորեց ռազմիկներին ու գերեվարեց նրանց ընտանիքները:

Այդ տարում Մուավիա իբն Հիշամը արշավեց Ռումի երկիրը:

ՀԱՐՅՈՒՐ ՏԱՍՆԻՆԸ ԹՎԱԿԱՆ
(3 Հունվար – 28 դեկտեմբեր 737)

Էջ 349

Այդ տարում Մարուան իբն Մուհամմադը գրոհող արշավանք կատարեց և մտավ Ալանաց դռները: Նա անցավ ամբողջ Ալանաց երկիրը, այնպես որ նրանից դուրս եկավ դեպի խազարաց երկիրը: Անցավ Բալանջարով ու Սամանդարով և հասավ ալ-Բայդա, ուր լինում էր Խաքանը, սակայն Խաքանը փախավ:

Այդ տարում Մուավիա իբն Հիշամը արշավեց Ռումի երկիրը և հասավ Բոլոնիա (Բուլունիա): Սուլայման իբն Հիշամը նույնպես արշավեց Ռումի երկիրը՝ Ջազիրայի կողմից:

Այդ տարում Աբդ ալ-Մալիք իբն Մարուանը իբն Մուհամմադը սպանեց Հազար Թարխանին և նրա բոլոր զինակիցներին Հայաստան երկրում:

ՀԱՐՅՈՒՐ ՔՍԱՆ ԹՎԱԿԱՆ
(29 դեկտեմբեր 737 – 16 դեկտեմբեր 738)

Էջ 350

Մասլամա իբն Հիշամը արշավեց Ռումի երկիրը:

ՀԱՐՅՈՒՐ ՔՍԱՆՄԵԿ ԹՎԱԿԱՆ
(18 դեկտեմբեր 738 – 6 դեկտեմբեր 739)

ՄՈՒՀԱՄՄԱԴ ԻԲՆ ՄԱՐՈՒԱՆԻ ԱՐՇԱՎԱՆՔԸ ՀԱՅԱՍՏԱՆԻՑ

Էջ 351 – 352

Այդ տարում Մարուան իբն Մուհամմադը Հայաստանից արշավանք կատարեց, երբ նրա կառավարիչն էր: Նա հասավ Բայտ ալ-Սարիր (Գահի տունը) ամրոցը[63], կոտորեց ու գերեվարեց: Ապա եկավ մի ուրիշ բերդ, կոտորեց ու գերեվարեց: Մտավ Ղումիկ, որը մի բերդ է, ուր կա թագավորի տունը և այնտեղ կա թագավորի գահը (սարիր): Թագավորը դուրս եկավ ու փախավ մինչև այն բերդը, որ կոչվում է Խայզաջ, ուր կա ոսկե գահը: Մարուանն այնտեղ մի ձմեռ ու ամառ անցկացրեց և հաշտության պայմանագիր կնքեց տարեկան հազար գլուխ [անասուն] և հարյուր հազար մոդ [ցորեն] տալու պայմանով: Մարուանը գնաց մտավ Տումանի երկիրը և Տումանը՝ նրա թագավորը հաշտություն կնքեց նրա հետ: Գնաց Մարուանը և մտավ Ջարիբրան (Ջարուբիբրան) երկիրը, որի թագավորը հաշտություն կնքեց: Ապա Մարուանը եկավ Համզին (Խումրին), որի թագավորը մերժեց հաշտություն կնքել: Նա կռվեց Համզինի բերդերից մեկի դեմ մեկ ամիս, ապա ավերեց Համզին երկիրը և Համզինը հաշտություն խնդրեց և նա տվեց հաշտություն (սուլհ): Ապա Մարուանը եկավ Մաղար երկիրը և հաշտությամբ նվաճեց, գրավեց Քիրանը և Թաբարսարանի ու Ֆիլանի ժողովուրդը հաշտություն կնքեց:

[Հարյուր] քսանմեկ թվականին Մասլամա իբն Աբդ ալ-Մալիքը ամառային արշավանք կատարեց ու գնաց հասավ Մալաթիա:

Այդ տարում սպանվեց Բաթթալը Ռումի երկրում:

ՀԱՐՅՈՒՐ ՔՍԱՆԵՐԿՈՒ ԹՎԱԿԱՆ
(7 դեկտեմբեր 739 – 25 նոյեմբեր 740)

Էջ 353

Ինձ պատմել է Արու-լ-Յակղանը, թե այդ տարում Մուավիա իբն Հիշամը արշավել է Ռումի երկիրը, իսկ Սուլայման իբն Հիշամը արշավել ու պաշարել էր բոլոր հռոմեներին և մահմեդականները խիստ սով և գների սղություն ունեցան:

Էջ 354

Մուհամմադ իբն Հիշամը ամառային արշավանք կատարեց:

ՀԱՐՑՈՒՐ ՔՍԱՆԵՐԵՔ ԹՎԱԿԱՆ
(26 նոյեմբեր 740 – 14 նոյեմբեր 741)

Է՛ջ 354

Այդ տարում Սուլայման իբն Հիշամը ամառային արշավանք (սաիֆա) կատարեց:

ՀԱՐՑՈՒՐ ՔՍԱՆՀԻՆԳ ԹՎԱԿԱՆ
(4 նոյեմբեր 742 – 24 հոկտեմբեր 743)

ՀԻՇԱՄ ԻԲՆ ԱԲԴ ԱԼ-ՄԱԼԻՔԻ ԿԱՌԱՎԱՐԻՉՆԵՐԻ ԱՆՈՒՆՆԵՐԸ

Է՛ջ 360

Ամառային արշավանքը (սաիֆա) – Այն գլխավորել է Մասլամա իբն Աբդ ալ-Մալիքը, ապա Հիշամի երկու որդիները՝ Մուավիան ու Սուլայմանը:

Է՛ջ 361

Հայաստան (Արմինիա) – Երբ Յազիդ [Խալիֆան] մեռավ, նրա կառավարիչն էր ալ-Ջառահ իբն Աբդալլահ ալ-Հաքամին, որին Հիշամ [Խալիֆան] հաստատեց: Սակայն հարյուր յոթ թվականին հեռացրեց նրան և նշանակեց Մասլամա իբն Աբդ ալ-Մալիքին, ապա նրան ևս հեռացրեց [հարյուր] ինը թվականին ու երկրորդ անգամ կառավարիչ նշանակեց Ջառահին: Ջառահն սպանվեց հարյուր տասներկու թվականին և նա (Հիշամը) կառավարիչ նշանակեց Սաիդ իբն Ամր ալ-Հարաշիին, ապա [հարյուր] տասներեք թվականին հեռացրեց ու նշանակեց Մասլամա իբն Աբդ ալ-Մալիքին: Երբ Մասլաման վերադարձավ, իրեն հաջորդ նշանակեց Մարուան իբն Մուհամմադին: Վերջինս կառավարչի պաշտոնն ստանձնեց հարյուր տասնչորս թվականի սկզբին:

ԴԱՏԱՎՈՐՆԵՐԸ ՀԻՇԱՄ ԻԲՆ ԱԲԴ ԱԼ-ՄԱԼԻՔԻ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՕՐՈՔ

Ասորիքի առաջապահ պահակազորքի (չուրթա) պետը – Քաաբ իբն Համիդ ալ-Ուրսիին հաստատեց տասներեք տարի, ապա նրան Հայաստանի կառավարիչ նշանակեց, իսկ առաջապահ պահակազոր-

քի (չուրթա) պետ նշանակեց Յազիդ իբն Յաալա իբն Դախմ ալ-Աբսիին:

ՀԱՐՑՈՒՐ ՔՍԱՆՎԵՑ ԹՎԱԿԱՆ
(25 հոկտեմբեր 743 – 12 հոկտեմբեր 744)

ՎԱԼԻԴ ԻԲՆ ՅԱԶԻԴԻ ԿԱՌԱՎԱՐԻՉՆԵՐԻ ԱՆՈՒՆՆԵՐԸ

Է՛ջ 367

Ջազիրա, Հայաստան (Արմինիա), Ատրպատական – Մարուան իբն Մուհամմադ իբն Մարուանը մինչև Վալիդի սպանությունը: Մարուանը Հայաստանի ու Ատրպատականի վրա իրեն փոխանորդ նշանակեց Ասիմ իբն Աբդալլահ իբն Յազիդ ալ-Հիլալիին[64] ու մեկնեց Ասորիք:

Ամառային արշավանքի [դեկավարը] – ալ-Ղամր իբն Յազիդ իբն Աբդ ալ-Մալիք իբն Մարուանը:

ՍԱԻԴ ԻԲՆ ԲՈՒՀԴՈՒԼԻ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆԸ ՋԱԶԻՐԱՅՈՒՄ

Է՛ջ 371

Այդ տարում, այսինքն հարյուր քսանվեց Թվականին, Սաիդ իբն Բուհդուլը, որը Նիմր իբն Կասիթ ցեղից էր, ապստամբեց Ջազիրայում Շաաբան ամսին (19 մայիս – 16 հունիս), ապա կտրեց Տիգրիսը և անցավ Կարդա: Առաջ խաղաց և պաշարեց Մոսուլի գավառներից Մարջը: Սաիդի մոտ հավաքվեցին մոտավորապես հինգ հարյուր մարդ և նա պաշարեց Մոսուլը:

ՀԱՐՑՈՒՐ ՔՍԱՆՅՈԹ ԹՎԱԿԱՆ
(13 հոկտեմբեր 744 – 2 հոկտեմբեր 745)

ՄԱՐՈՒԱՆ ԻԲՆ ՄՈՒՀԱՄՄԱԴԻ ԽԱԼԻՖԱ ԴԱՌՆԱԼՈՒ ՀԱՎԱՏԱՐՄՈՒԹՅԱՆ ԵՐԴՈՒՄ ՍՏԱՆԱԼԸ (ԲԱՅԱԱ) ԵՎ ԻԲՐԱՀԻՄ ԻԲՆ ԱԼ-ՎԱԼԻԴԻ ՀԱՆՎԵԼԸ

Է՛ջ 382

Այդ տարում կատարվեց խռովությունը (ֆիտնա):

Ասել է Իսմաիլ իբն Իբրահիմը, թե Վալիդ իբն ալ-Վալիդը սպանվեց, երբ Մարուան իբն Մուհամմադ իբն Մարուանը Հայաստանի

(Արմինիա) կառավարիչն էր: Երբ նա լսեց Վալիդի սպանության մասին՝ մարդկանց կոչ արեց իրեն հավատարմության երդում (բայաա) տալ, որպես մահմեդականների կողմից ընդունվածի և նրան երդում տվեցին: Երբ նա լսեց Յազիդ իբն Վալիդի մահը, ևս կոչ արեց Կայս և Ռաբիա ցեղերին և Կայսից պահանջեց քսանվեց հազար [ռազմիկ] և Ռաբիայից յոթը հազար [ռազմիկ] և տվեց նրանց ռոճիկները: Կայսի վրա [հրամանատար] նշանակեց Իսհակ իբն Մուսլիմ ալ-Ուկայլիին, իսկ Ռաբիայի վրա՝ ալ-Մուսավիր իբն Ուկրային: Ապա մեկնեց Ասորիք և Ջազիրայի վրա իրեն փոխանորդ նշանակեց իր եղբորը՝ Արդ ալ-Ազիզ իբն Մուհամմադ իբն Մարուանին:

ՀԱՐՅՈՒՐ ՔՍԱՆՈՒԹ ԹՎԱԿԱՆ
(3 Հոկտեմբեր 745 – 31 սեպտեմբեր 746)

ԲԻՍԹԱՄ ԻԲՆ ԼԱՅՍ ԱԼ-ՍԱԱԼԱԲԻԻ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆԸ ԱՏՐՊԱՏԱԿԱՆՈՒՄ

ԷՋ 381–382

Այդ տարում, որ Հարյուր քսանութ թվականն է, Բիսթամ իբն Լայս ալ-Սաալաբին, որը Զայդ ցեղից էր, Ատրպատականում ապստամբեց: Նա [Աբբասյանների կողմնակից] Բայհասիների կարծիքին էր և սպանեց Մարուանի նշանակած կառավարչին: Ապա եկավ Բալաղ մոտավորապես քառասուն մարդկանցով: Նրա դեմ դուրս եկավ Յահիա իբն Արու-լ-Հուրը Մոսուլի զորքով, իսկ նա հաղթեց նրանց, ապա եկավ Կարդա, ուր նրա կողքով անցավ Ասորիքի մարդկանցից բաղկացած մի ավազակախումբ հազար հոգուց ավելի, սակայն նա գիշերային հարձակումով կոտորեց նրանց: Ապա գնաց Մծբին (Նասիբին) և այնտեղ սպանեց Շայբանի ցեղից մի մարդու, որը կոչվում էր Թարիկ ալ-Ահդար: Ապա գնաց Հայաստան և Ատրպատական և Ասիմ իբն Զայդը իր եղբորը՝ Արդ ալ-Մալիքին վեց հազար զորքով ուղարկեց նրա դեմ, իսկ ինքը (Բիսթամը) ուներ մոտավորապես երկու հարյուր մարդ, սակայն նա սպանեց Արդ ալ-Մալիքին ու նրան ընկերացողների գլուխները կտրեց: Դրանից հետո գնաց Շահրազուր, ուր կար Մարուանի նշանակած կառավարիչ Ջիդար իբն Կայսը:

ՀԱՐՅՈՒՐ ԵՐԵՍՈՒՆԵՐԿՈՒ ԹՎԱԿԱՆ
(20 օգոստոս 749 – 3 օգոստոս 750)

ՄԱՐՈՒԱՆ ԻԲՆ ՄՈՒՀԱՄՄԱԴԻ ԿԱՌԱՎԱՐԻՉՆԵՐԻ ԱՆՈՒՆՆԵՐԸ

ԷՋ 407

Հայաստան (Արմինիա) – Մարուանը Վալիդ [Խալիֆայի] սպանության ժամանակ հեռացել էր Հայաստանից և թողել Ասիմ իբն Արդալլահ իբն Յազիդ ալ-Հիլալիին: Դահհաք իբն Կայսը ուղարկեց Մուսաֆիր իբն ալ-Կասսարին, որն սպանեց Ասիմ իբն Արդալլահին: Լուրը հասավ Մարուանին և նա կառավարիչ նշանակեց Արդալլահ իբն Մուսլիմին, որը մեռավ: Ապա նա (Մարուանը) կառավարիչ նշանակեց Իսհակ իբն Մուսլիմին, սակայն Իսհակն ապստամբեց և Պարտավի ժողովուրդը ընտրեց Մուսաֆիր իբն Բուջայրին, մինչև որ հանդես եկավ Արու-լ-Աբբաս [Խալիֆան][65]:

ԴԱՏԱՎՈՐՆԵՐԸ

ԷՋ 408–409

Մարուանի առաջապահ պահակազորքի հրամանատարն էր Քաուսար իբն ալ-Աուաղ ալ-Ղանավին:

Նամակների քարտուղարը - Արդ ալ-Համիդ ալ-Քարիր:

Փոքր կնիքը (կնքապահ) - Արդ ալ-Աալա իբն Մայմուն իբն Միհրան:

Խալիֆայության կնիքը (կնքապահ) – իր մաուլաներից մեկը:

Սեննկապետը (Հաջիբ) – Սակլաբ, որը կոչվում էր Միկլաս, նրա մաուլաներից:

Խալիֆայի նամակների [քարտուղար] – Յահիա իբն Բաքիր իբն Արու Ռիբահ իբն Արու Ամարա:

ՍԱՖՖԱՀԻ[66] ԽԱԼԻՖԱՅՈՒԹՅՈՒՆԸ

ՀԱՐՅՈՒՐ ԵՐԵՍՈՒՆԵՐԵՔ ԹՎԱԿԱՆ
(9 օգոստոս 750 – 29 հուլիս 751)

ԷՋ 410

Այդ տարում Ռումի բռնակալ (Թաղիա) Կոստանդինը՝ Լևոնի որդին (Կուսթանթին իբն Ալյուն) հարձակվեց, պաշարեց Մալաթիան և նրա

դեմ կատաղի պատերազմ եղավ: Նա սեղմեց նրանց այն աստիճանի, որ հանձնվեցին երաշխավորագիր (աման) խնդրելով: Նա կործանեց քաղաքը, մայր մզկիթը և կառավարչի նստավայրը (դար ալ-իմարա), իսկ մահմեդական բնակչությանը ձիավորների ընկերակցությամբ իրենց տեղերը հասցրեց:

Այդ տարում Աբու-լ-Աբբաս [Սալիֆան] Մուհամմադ իբն ալ-Նադր իբն Յարիմ ալ-Հիմյարիին արշավանքի ուղարկեց և նա հասավ Տիանա (Թուալա, Թուանա) Ռումի երկրում:

ՀԱՐՅՈՒՐ ԵՐԵՍՈՒՆՋՈՐՍ ԹՎԱԿԱՆ
(30 Հուլիս 751 – 17 Հուլիս 752)

Էջ 411

Այդ տարում Աբու-լ-Աբբաս [Սալիֆան] մայրաքաղաքը Քուֆայից փոխադրեց ալ-Անբար:

Այդ տարում Աբդալլահ իբն Ալին, որն Ասորիքում էր, արշավանքի ուղարկեց ալ-Հարիս իբն Արդ ալ-Ռահման ալ-Հարաշիին, իսկ հռոմեները Քուսան (Գուսան)[67] պատրիկի գլխավորությամբ նրա դեմ դուրս եկան, Հարյուր երեսունչորս Թվականի Ջումադա Բ ամսին (25 դեկտեմբեր 751 – 22 Հունվար 752): Մուկատիլ իբն Հաքիմ ալ-Անաքին իր որդուն՝ Մուխալլադ իբն Մուկատիլին ուղարկեց, որը հռոմեների հետ բախվեց Ջորրորդ Արմինիայում[68], Մուխալլադը փախուստի մատնվեց, իսկ զորքը հանձնվեց:

ԱԲՈՒԼ-ԼԱԲԲԱՍ [ՍԱԼԻՖԱՅԻ] ԿԱՌԱՎԱՐԻՉՆԵՐԻ ԱՆՈՒՆՆԵՐԸ

Էջ 414

Ջազիրա – Երբ Մարուանը Ջաբի[69] [ճակատամարտում] պարտվեց, Աբդալլահ իբն Ալին մտավ Ջազիրա, ապա իր փոխարեն Թողնց Մուսա իբն Քաաբ ալ-Մարայիին: Հետո Աբու-լ-Աբբաս [Սալիֆան] իր եղբորը՝ Աբու Ջաաֆարին[70] նշանակեց Ջազիրայի, Հայաստանի (Արմինիա) և Ատրպատականի կառավարիչ: Ապա հրամայեց նրան գնալ Մնբքա՝ ուխտագնացության և նա գնաց՝ փոխանորդ Թողնելով Մուկատիլ իբն Հաքիմ ալ-Անաքիին, որը մնաց մինչև Աբու-լ-Աբբասի մահը:

Ամառային արշավանքների (Բյուզանդիա) հրամանատարներն էին՝ ալ-Նադր իբն Յարիմը և ապա Սալիհ իբն Ալին:

ՀԱՐՅՈՒՐ ԵՐԵՍՈՒՆՅՈՒԹ ԹՎԱԿԱՆ
(27 Հունիս 754 – 15 Հունիս 755)

Էջ 416

Այդ տարում Սմբատը (Սինբադ) Ռևյի բնակիչներին պայքարի հրահրեց և նրանք ապստամբեցին:

ՀԱՐՅՈՒՐ ԵՐԵՍՈՒՆՈՒԹ ԹՎԱԿԱՆ
(16 Հունիս 755 – 4 Հունիս 756)

Էջ 417

Այդ տարում Մուլաբբադ իբն Հարմալան, Աբու Ռաբիա ցեղից, Մոսուլում ապստամբեց: Աբու Ջաաֆարը նրա դեմ ուղարկեց Խազիմ իբն Խուզայմային, որը սպանեց նրան: Ասվում է, որ Մուլաբբադը ապստամբեց Հարյուր երեսունչորսին:

Այդ տարում Սալիհ իբն Ալին արշավեց և պաշարեց Դաբիկը: Եկավ կոստանդինը՝ Լևոնի որդին, Ռումի բռնակալը, Հարյուր հազարով և Սալիհը բախվելով նրա հետ կոտորեց ու գերեվարեց և ապահով դուրս եկավ:

ՀԱՐՅՈՒՐ ԵՐԵՍՈՒՆԻՆԸ ԹՎԱԿԱՆ
(5 Հունիս 756 – 24 մայիս 757)

Էջ 418

Ջաաֆար իբն Հանզալան դուրս եկավ արշավանքի և հասավ Մալաթիա, որը ավերակ էր և այնտեղ բանակ դրեց: Դուրս եկավ Մալաթիա նաև Արդ ալ-Վահիդը, որը ցանկց ու չատ կիր եփեց [փոռում], ապա վերադարձավ: Եկավ [Ռումի] բռնակալը և վառեց ցանքսերը:

ՀԱՐՅՈՒՐ ՔԱՌԱՍՈՒՆ ԹՎԱԿԱՆ
(25 մայիս 757 – 13 մայիս 758)

Էջ 418

Այդ տարում հավատացելոց իշխան (ամիր ալ-մումինին) Աբու Ջաաֆարը գրեց Սալիհ իբն Ալիին, հրամայելով վերակառուցել Մոպսուեստիա (Մասսիսա) քաղաքը: Նա ուղարկեց Ջիբրիլ իբն Յահիային, որը եկավ ու ճամբար դրեց նրա կողքին, մինչև որ կառուցեց այն: Նա

այդ գործն ավարտեց հարյուր քառասունմեկ թվականին:

Այդ տարում Աբու Ջաաֆարը (խալիֆան) ուղարկեց Արդ ալ-Վահհաբ իբն Իբրահիմ իբն Մուհամմադ իբն Ալիին, որ վերակառուցի Մալաթիան: Նա այնտեղ մնաց մեկ տարի, մինչև որ կառուցեց ու մարդկանց բնակեցրեց:

ՀԱՐՅՈՒՐ ՔԱՌԱՍՈՒՆՁՈՐՍ ԹՎԱԿԱՆ
(11 ապրիլ 761 – 31 մարտ 762)

ԷՋ 421

Այդ տարում Սալիհ իբն Ալին ուղարկեց Մասլամա իբն Յահիային՝ Ջիբրիլ իբն Յահիայի եղբորը, որը վերակառուցեց Ադանա ամրոցը[71]:

ՀԱՐՅՈՒՐ ՔԱՌԱՍՈՒՆՉԻՆԳ ԹՎԱԿԱՆ
(1 ապրիլ 762 – 20 մարտ 763)

ԷՋ 421

Այդ տարում Սալիհ իբն Ալին Իսա իբն Քասիր ալ-Նակկաշին նշանակեց [զորքի] հրամանատար: Սա արշավեց Սելևկիա (Սալուկիա), ապա եկավ Տիանա (Թուանա), ապա Կարմա և կոտորեց ու գերեվարեց:

ՀԱՐՅՈՒՐ ՔԱՌԱՍՈՒՆԻՆԸ ԹՎԱԿԱՆ
(16 փետրվար 766 – 5 փետրվար 767)

ԷՋ 424

Այդ տարում Աբու Ջաաֆար [խալիֆան] Հասան իբն Կահթաբային[72] ուղարկեց արշավանքի: Նա եկավ Կամախ[73] (Քամախ), որը Ջազիրայի երկրում է: Նրան [երդվի մարդիկ] դիմադրեցին և նա ձեռնունայն վերադարձավ:

ՀԱՐՅՈՒՐ ՀԻՍՈՒՆԵՐԿՈՒ ԹՎԱԿԱՆ
(14 հունվար 769 – 3 հունվար 770)

ԷՋ 426

Ամառային արշավանքը (սաիֆա) կատարեց Արդ ալ-Վահհաբ իբն

Իբրահիմ իբն Մուհամմադը, որը սակայն Թչնամու երկիր չկարողացավ մտնել:

ՀԱՐՅՈՒՐ ՀԻՍՈՒՆԵՐԵՔ ԹՎԱԿԱՆ
(4 հունվար 770 – 23 դեկտեմբեր 771)

ԷՋ 427

Ամառային արշավանքի (Բյուզանդիա) հրամանատարն էր Մասյուֆ իբն Յահիան, որը չկարողացավ Թչնամու երկիրը մտնել:

ՀԱՐՅՈՒՐ ՀԻՍՈՒՆՁՈՐՍ ԹՎԱԿԱՆ
(24 դեկտեմբեր 770 – 12 դեկտեմբեր 771)

ԷՋ 427

Աբու Ջաաֆար [խալիֆան] ամառային արշավանքի հրամանատար նշանակեց Զուֆար իբն Ասիմ իբն Արդալլահ իբն Յազիդ ալ-Հիլալիին և նա մտավ Մամևստիա, ապա հասավ ալ-Կուզզա: Նա իր ձիավոր զոհատները ցրեց ամեն կողմ և ավար վերցնելով դուրս եկավ (վերադարձավ) Մարաշի լեռնանցքից:

ՀԱՐՅՈՒՐ ՀԻՍՈՒՆՉԻՆԳ ԹՎԱԿԱՆ
(13 դեկտեմբեր 771 – 1 դեկտեմբեր 772)

ԷՋ 427

Այդ տարում Շիհաբ իբն Աբդալլահը ծովակալն էր:

Այդ տարում Յազիդ իբն Ուսայդ ալ-Սուլամին դուրս եկավ արշավանքի և դա կոչվում է Դան կիլլա արշավանքներ Խազարաց ծովի[74] կողմերում:

ՀԱՐՅՈՒՐ ՀԻՍՈՒՆՎԵՑ ԹՎԱԿԱՆ
(2 դեկտեմբեր 772 – 20 նոյեմբեր 773)

ԷՋ 428

Զուֆար իբն Ասիմ ալ-Հիլալին արշավեց Ռումի երկիրը, ասպատակեց Կանբան ու Իկոնիան (Կունիա):

ՀԱՐՑՈՒՐ ՀԻՍՈՒՆՑՈՐ ԹՎԱԿԱՆ
(21 նոյեմբեր 773 – 10 նոյեմբեր 774)

Ամառային արշավանք կատարեց Յազիդ իբն Ուսայդ ալ-Սուլամին, ավար վերցրեց և ապահով վերադարձավ:

ՀԱՐՑՈՒՐ ՀԻՍՈՒՆՈՒԹ ԹՎԱԿԱՆ
(11 նոյեմբեր 774 – 30 հոկտեմբեր 775)

էջ 429

Եվ հաջողություն ունեցավ Իբն Հումայդը, որը Մասյուֆ իբն Յահիային ուղարկել էր Ռում արշավանքի: Սա հարձակվեց Հաղասի լեռնանցքից և ապահով վերադարձավ Դարբ ալ-Ռահիբից (վանականի լեռնանցք):

ՀԱՐՑՈՒՐ ՎԱԹՍՈՒՆ ԹՎԱԿԱՆ
(19 հոկտեմբեր 776 – 8 հոկտեմբեր 777)

էջ 430

Ամառային արշավանքի հրամանատարն էր Սումամա իբն ալ-Վալիդ իբն ալ-Կաակաա իբն Խալիդ ալ-Արսին, որը ավար վերցրեց ու գերևարեց:

Այդ տարում մեռավ Խալիֆա իբն Խայյաթը:

ԱԲՈՒ ՋԱԱՖԱՐԻ ԿԱՌԱՎԱՐԻՉՆԵՐԻ ԱՆՈՒՆՆԵՐԸ

էջ 433

Ջազիրա – Աբու Ջաաֆարը [փոխարքա] նշանակել էր Մուկատիլ իբն Հաքիմ ալ-Աքքիին Աբու-լ-Աբբասի խալիֆայության օրոք:Աբու-լ-Աբբասի մահվանից հետո Արդալլահ իբն Ալին հարձակվեց ու պաշարեց Մուկատիլ իբն Հաքիմին Խառան քաղաքում, որը հաշտության պայմանագրով հանձնվեց: Աբու Ջաաֆար [խալիֆան] Աբու Մուսլիմին ուղարկեց Արդալլահ իբն Ալիի դեմ: Նրանք պատերազմեցին Մծբինում հարյուր երեսունյոթ թվականի Ջումադա ամսին (23 հոկտեմբեր – 21 նոյեմբեր 754): Արդալլահ իբն Ալին պարտվեց և Աբու Ջաաֆարը Ջազիրայի կառավարիչ նշանակեց Մուխարիկ իբն ալ-Ակկարին, ապա կառավարիչ դարձան Հումայդ իբն Կահթաբան, ալ-

Աբբաս իբն Մուհամմադ իբն Ալի իբն Աբդալլահ իբն Աբբասը, Մուսա իբն Սուլայմը, որը Խորասանի բնակիչներից է և Մուսա իբն Մուսաաբը՝ եմենի [ցեղի] մաուլան:

ԴԱՏԱՎՈՐՆԵՐԸ
[.....]

էջ 435-436

Առաջապահ զորքի հրամանատարը – Աբու Ջաաֆարը նշանակեց Աբդ ալ-Ջաբբար իբն Աբդ ալ-Ռահման ալ-Ազդիին [.....]

Նամակագրության վրա (ալ-ռասաիլ) – Աբու Այյուբ ալ-Մաուրիյանին:

Հարկերի քարտուղարը (քատիբ ալ-խարաջ) – Յազիդ իբն ալ-Ֆայդի:

Նվաճումների նամակագրությունը (ռասաիլ ալ-ֆուտուհ) – Աբդալլահ իբն Հումայդ:

Արքունի գանձարաններ (բույուտ ալ-ամուալ) – Աբբան իբն Սադաական մինչև Աբու Ջաաֆարի մահը:

Գանձարաններ (խազաին, պահեստներ) – Սուլայման իբն Մուջալիդը, որի մահվանից հետո պաշտոնը վերցրեց նրբորդին՝ Իբրահիմ իբն Սալիհ իբն Մուջալիդը՝ մինչև Աբու Ջաաֆարի մահը:

Խորասանի, [Ռումի] երկիրն ու նրա տիրույթները ամառային արշավանքների դիվանը – Աբդ ալ-Մալիք իբն Հումայդ [.....]

Զորքի (ջունդ) վերակացությունը – Իսհակ իբն Սալիհ իբն Մուջալիդ:

Կնիքի դիվանի (դիվան ալ-խատամ) վրա – Աբու Մանսուր ալ-Քատիբը (քարտուղար) Խորասանի բնակիչներից:

Սեննեկապետը (հաջիբ) – Իր (Մանսուրի) մաուլաններից՝ Իսա իբն Նաջիհը, ապա Աբու Խասիբը և Ռաբիան և վերջապես [գահաժառանգ] Մահդին:

ՄՈՒՀԱՄՄԱԴ ԱԼ-ՄԱՀԴԻԻ ԽԱԼԻՖԱՑՈՒԹՅՈՒՆԸ
ՀԱՐՑՈՒՐ ՎԱԹՍՈՒՆՄԵԿ ԹՎԱԿԱՆ
(9 հոկտեմբեր 777 – 27 սեպտեմբեր 778)

էջ 436

Այդ տարում Միքայել (Միխայիլ) պատրիկը Հաղասի լեռնանցքի կողմից հարձակվեց ու հասավ Հիրտանա լեռնանցքը, հաղթեց բնակիչներին, ապա եկավ Անզուրան գյուղը, կոտորեց, գերեվարեց ու

կրակով այրեց: Հետո նկավ Մարաշ, ուր Իսա իրն Ալին կայազոր էր դրել: Նրա (Միքայելի) դեմ դուրս նկավ Սալիմ ալ-Բուրնուսին ու կռվեց, սակայն ոչ մի արդյունքի չհասավ: Ապա նկավ Պիրամոս (Ջայհան)[75] գետը: Սումամա իրն ալ-Վալիդը, որ ռազմի էր դուրս նկել, Ռումի դեմ ուղարկեց Մալալա իրն Հիքմային Միքայելին հետապնդելու և հասավ նրան լեռնանցքի մոտ, սակայն Մալալան ու զինակիցները պարտվեցին:

ՀԱՐՑՈՒՐ ՎԱԹՍՈՒՆԵՐԿՈՒ ԹՎԱԿԱՆ
(28 սեպտեմբեր 778 – 16 սեպտեմբեր 779)

էջ 437

Այդ տարում ալ-Հասան իրն Կահթաբան արշավեց և հասավ Բաթնա: Նա իր հնծյալ ջոկատներն ամեն կողմ ուղարկեց և կործանեց ու գերեվարեց: Նա իր որդուն՝ Մուհամմադ իրն ալ-Հասանին ուղարկեց Ամորիոն (Ամմուրիյա), ապա ինքը՝ Հասանը, ևս հասավ ու նրանց միջև ընդհարում տեղի ունեցավ, ապա նա հեռացավ:

Այդ տարում Մուհամմարաներն[76] ապստամբեցին Վրկանում (Ջուրջան):

ՀԱՐՑՈՒՐ ՎԱԹՍՈՒՆԵՐԵՔ ԹՎԱԿԱՆ
(17 սեպտեմբեր 779 – 5 սեպտեմբեր 780)

Այդ տարում [ապագա] հավատացելոց իշխան Հարունն[77] իր Հոր խալիֆայության օրոք ամառային արշավանք կատարեց, մեծ թվով գերեվարեց և ձեռք բերեց տնային կահկարասի ու ապրանքներ:

ՀԱՐՑՈՒՐ ՎԱԹՍՈՒՆՋՈՐՍ ԹՎԱԿԱՆ
(6 սեպտեմբեր 780 – 25 օգոստոս 781)

էջ 438

Այդ տարում Աբդ ալ-Քաբիր իրն ալ-Համիդը իրն Աբդ ալ-Ռահման իրն Յազիդ իրն ալ-Մաթթաբը ամառային արշավանք կատարեց [Ռում] ու պարտվեց: Մահդին նրա վրա զայրացավ ու բանտարկեց Մաթբակում և կամեցավ սպանել նրան:

ՀԱՐՑՈՒՐ ՎԱԹՍՈՒՆՀԻՆԳ ԹՎԱԿԱՆ
(26 օգոստոս 781 – 14 օգոստոս 782)

Այդ տարում [ապագա] հավատացելոց իշխան Հարունը իր Հոր խալիֆայության օրոք ամառային արշավանք կատարեց, մինչև որ իջավ Ծոցը [Կոստանդնուպոլսի՞] և վերադարձավ Հարյուր վաթսունվեց (782-783) թվականին:

ՀԱՐՑՈՒՐ ՎԱԹՍՈՒՆՅՈԹ ԹՎԱԿԱՆ
(5 օգոստոս 783 – 23 հուլիս 784)

էջ 439

Այդ տարում հռոմեների հետ գերիների փոխանակում կատարվեց Աբդ ալ-Համիդ իրն ալ-Դահհաքի ձեռքով:

ՀԱՐՑՈՒՐ ՎԱԹՍՈՒՆՈՒԹ ԹՎԱԿԱՆ
(24 հուլիս 784 – 13 հուլիս 785)

էջ 439

Այդ տարում Մահդի [խալիֆան][78] գրեց Ալի իրն Սուլայման իրն Ալիին հրամայելով վերակառուցել (կառուցել) Հադաս քաղաքը: Սա ուղարկեց Ալի ալ-Մուսայիբ իրն Զուհայրին՝ հրամայելով վերակառուցել այն:

ՄԱՀԴԻԻ ԿԱՌԱՎԱՐԻՉՆԵՐԻ ԱՆՈՒՆՆԵՐԸ

էջ 441

Ջաղիրա - Երբ մնռավ Աբու Ջաաֆարը, նրա կառավարիչն էր Մուսա իրն Մուսաաբը, իսկ Մահդին նրան հեռացրեց և նշանակեց ալ-Մուսայիբ իրն Զուհայրին: Ապա հանեց նրան ու նշանակեց Աբդ ալ-Սամադ իրն Ալիին, ապա՝ ալ-Ֆադլ իրն Սալիհին, Ալի իրն Սուլայման իրն Ալիին, Ումրան իրն ալ-Միհնալին, Ալի իրն Սուլայմանին՝ երկրորդ անգամ, Աբդ ալ-Մալիք իրն Սալիհին՝ երկու անգամ և Աբդալլահ իրն Սալիհին:

ԱԲԴ ԱԼ-ՍԱԼԱՄ ԱԼ-ՅԱՇՔԱՐԻԻ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆԸ

ԿՋ 443

Մահդիի խալիֆայության օրոք Արդ ալ-Սալամ իրն Հաչիմ ալ-Յաշքարին հարյուր վաթսուն թվականին ապստամբեց Բաջարմայում, եկավ Մծբին, ուր կառավարում էր Մինհալ իրն Ումրան իրն Կինան ալ-Քիլաբին Ջաաֆարիների տոհմից, որը հարկերի վերակացու էր: Նա (Արդ ալ-Սալամը) զորք ուղարկեց քսան հազարով, սակայն չկարողացավ գրավել: Ապա եկավ Ռաս ալ-Այն[79], ուր Յամիմ ցեղի մարդիկ դիմադրեցին նրան: Եկավ Ամիդ, ուր նրան դիմադրեց Իսա իրն Մուսա ալ-Խորասանին, և Արդ ալ-Սալամի մարդիկ պարտվեցին: Սակայն նա ասաց՝ Ալլահը վկա ձեզանից վրեժ եմ առնելու, քանզի դուք անհավատ (քուֆֆար) մարդիկ եք, հարձակումից փախչում եք և չունեք բաղմություն: Նրանք նետ նկան [Ամիդ] և Իսայի մարդիկ պարտվեցին ու Արդ ալ-Սալամը հարձակվեց, մենամարտեց և սպանեց նրան:

ՀԱՐՅՈՒՐ ՅՈԹԱՆԱՍՈՒՆ ԹՎԱԿԱՆ
(3 Հուլիս 786 – 21 Հունիս 787)

ՄՈՒՍԱ [ԱԼ-ՀԱԴԻԻ] ՆՇԱՆԱԿԱԾ ԿԱՌԱՎԱՐԻՉՆԵՐԸ

ԿՋ 446

Ջազիրա – Այստեղ նշանակել էր Խորասանի բնակիչներից մի մարդու, որի, ըստ որդու, անունն (քունիա) էր Արու Հուրայրա և ապա կառավարիչ դարձավ Իբրահիմ իրն Սալիհը:

ՀԱՐՈՒՆ ԱԼ-ՌԱՇԻԴԻ ԽԱԼԻՖԱՑՈՒԹՅՈՒՆԸ

ԿՋ 448

Այդ տարում հոռոմները նկան գերիների փոխանակման համար:

ՀԱՐՅՈՒՐ ՅՈԹԱՆԱՍՈՒՆՄԵԿ ԹՎԱԿԱՆ
(22 Հունիս 787 – 10 Հունիս 788)

Այդ տարում Սուլայման իրն Աբդալլահ ալ-Ասսամը արշավեց ու մտավ Ռումի երկիրը, ավար վերցրեց և ապահով վերադարձավ:

Այդ տարում Տարսոնը (Թարսուս) վերակառուցվեց Ֆարաջ ալ-Խիսիյի (Ներքինու) ձեռքով:

ՀԱՐՅՈՒՐ ՅՈԹԱՆԱՍՈՒՆԵՐԿՈՒ ԹՎԱԿԱՆ
(11 Հունիս 788 – 30 մայիս 789)

Այդ տարում Ջուֆար իրն Ասիմ ալ-Հիլալին ամառային արշավանքի դուրս եկավ և իր որդուն՝ Արդ ալ-Ազիզ իրն Ջուֆարին ուղարկեց [Հարձակման]: Սա գնաց, մինչև որ հասավ Պիրամոս (Ջայհան) գետը, սակայն ցրտի պատճառով վերադարձավ:

ՀԱՐՅՈՒՐ ՅՈԹԱՆԱՍՈՒՆԵՐԵՔ ԹՎԱԿԱՆ
(31 մայիս 789 – 19 մայիս 790)

ԿՋ 449

Այդ տարում ամառային արշավանքի հրամանատարն էր Արդ ալ-Մալիք իրն Սալիհ իրն Ալին:

ՀԱՐՅՈՒՐ ՅՈԹԱՆԱՍՈՒՆՋՈՐՍ ԹՎԱԿԱՆ
(20 մայիս 790 – 9 մայիս 791)

Այդ տարում նույնպես ուխտագնացությունը գլխավորեց հավատացյալոց իշխան Հարուն ալ-Ռաշիդը: Ամառային արշավանք չեղավ, միայն թե Արդ ալ-Մալիք իրն Սալիհը իր որդուն՝ Արդ ալ-Ռահմանի իրն Արդ ալ-Մալիք իրն Սալիհին ուղարկեց [հետախուզական արշավանքի], որը հասավ Ռիքաբ լեռնանցքը և գերեվարեց ու տնային կահկարասի բերեց:

ՀԱՐՅՈՒՐ ՅՈԹԱՆԱՍՈՒՆՀԻՆԳ ԹՎԱԿԱՆ
(10 մայիս 791 – 27 ապրիլ 792)

Այդ տարում Արդ ալ-Մալիք իրն Սալիհը արշավեց Ռումի երկիրը և դա Իկրիթիայի արշավանքն էր սահմանային ամրություններից դուրս (Սուղուր) բոլոր բնակիչների դեմ: Նա հարձակվեց Սաֆսաֆի լեռնանցքից ու կոտորեց տասնինը հազար գլուխ [մա՞րդ] ու Հաղասի լեռնանցքով վերադարձավ:

ՀԱՐՑՈՒՐ ՅՈԹԱՆԱՍՈՒՆՎԵՑ ԹՎԱԿԱՆ
(28 ապրիլ 792 – 17 ապրիլ 793)

Այդ տարում ամառային արշավանք չի եղել: Արդ ալ-Մալիք իբն Սալիհ իբն Ալին գրեց Մուխալլադ իբն Յազիդ իբն Օմար իբն Հուբայրային, հրամայելով, որ առաջ խաղա դեպի Դարաա, մինչև որ հասնի Արդ ալ-Ռահման իբն Արդ ալ-Մալիք իբն Սալիհը: Արդ ալ-Ռահմանը հասավ ու նվաճեց և դա երկար պատմություն ունի:

ՀԱՐՑՈՒՐ ՅՈԹԱՆԱՍՈՒՆՅՈԹ ԹՎԱԿԱՆ
(18 ապրիլ 793 – 6 ապրիլ 794)

ԷՋ 450

Հարունը (խալիֆան) Արդալլահ իբն Սալիհ իբն Ալիին ամառային արշավանքի ուղարկեց, իսկ Սուլայման իբն Ռաշիդ ալ-Սակաֆիին՝ ձմեռային արշավանքի: Արդալլահը ողջ առողջ վերադարձավ: Սաստիկ ձմեռը նեղեց Սուլայմանին և նրա զինակիցներից ոմանք ըմբոստացան, ոմանք մեռան, իսկ [մնացածները] հասան Մալաթիա:

Այդ տարում Յասար իբն Սակլաբը արշավեց Մամեստիայի բնակիչների դեմ: Նա Սաֆսաֆից հարձակվեց, ապա հասավ Տիանա (Թուանա), հետո վերադարձավ ու իջավ Մարջ ալ-Շահմ, ավար վերցրեց և ողջ վերադարձավ:

ՀԱՐՑՈՒՐ ՈՒԹՍՈՒՆ ԹՎԱԿԱՆ
(16 մարտ 796 – 4 մարտ 797)

ՎԱԼԻԴ ԻԲՆ ԹԱՐԻՖ ԱԼ-ՇԱՐԻԻ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ԷՋ 451-452

Այդ տարում Յազիդ իբն Մազիադն սպանեց Յազիդ իբն Թարիֆ ալ-Շարիին Ջազիրայի երկրում:

Վալիդ իբն Թարիֆը Տաղլիբ ցեղին պատկանող Հայյ իբն Ամր տոհմից էր, որոնց կոչում էին չան ատամներ (ադրաս ալ-քիլաբ): Նա Եփրատի ափին երեսուն հոգով ապստամբեց, գնաց Ռաս ալ-Այն և հանդիպեց մի բազմաց մարդու, կոչված Ամր իբն Մանսուր, որը վաճառական էր և իր հետ կար մի քրիստոնյա, կոչված Անաստաս (Նաստաս): Նա հանդիպեց նրանց Ռաս Այնի մոտակայքում, սպանեց Ամր իբն Մանսուրին, վերցրեց նրա ունեցվածքը, իսկ քրիստոնյային բաց թողեց:

Ապա եկավ Ռաս ալ-Այն, ուր կրակ գցեց, սակայն չկարողացավ պարսպից ներս մտնել: Եկավ Բաարբայա, որը Մծբինի գավառում է և այնտեղ Տալլ Աբու-լ-Ջաուզայի մոտ հանդիպեց Բիզարին, որը Տաղլիբ ցեղից էր: Բիզարը ընդհարման մեջ պարտվեց, նրա մարդկանցից ոմանք սպանվեցին, իսկ նա գնաց Մծբին: Ապա Վալիդը եկավ Դարա և քսան հազարով [դիրհեմո՞վ] վաճառեց (փրկագին առավ) Դարան: Եկավ Ամիդ և նրա համար էլ Խմատ իբն Խամից ու նրա տոհմից (ահլ բայտ) ստանալով քսան հազար [դիրհեմ] եկավ Նփրկերտ (Մայյափարիկին) քսան հազար մարդկանցով: Ապա անցավ Սարբաթը[80], և սա մի գետ է (ձոր, վաղի), որը հոսում է Հայաստանից: Նա անցավ գետը դեպի Արդ (Արզան) և այնտեղ կանգ առավ ու նրանք (բնակիչները) քսան հազարով փրկագնեցին քաղաքը: Նա սպանեց այստեղի բնակիչներից մի երևելի մարդու, Շայբան ցեղից, որը կոչվում էր Մուռա: Ապա եկավ Խլաթ[81] (Խիլաթ), որը քսան օր պաշարեց և նրանք (բնակիչները) իրենց անձերը փրկագնեցին երեսուն հազարով [դիրհեմո՞վ]: Շարժվեց դեպի Ատրպատական, ապա եկավ Հուլուան և այնտեղ գտավ Ցահիա ալ-Հարաչիին, որին հաղթեց ու զինակիցներին կոտորեց: Հասավ Հաուլայա, հետո ալ-Սուդկանիյա, անցավ Տիգրիսի արևմտյան ափը, եկավ Բալադ և նրանք (բնակիչները) քաղաքը փրկագնեցին հարյուր հազարով:

Ապա գնաց Մծբին, ուր կային Իբրահիմ իբն Խազիմն ու Բիզարը Տաղլիբ ցեղի մարդկանց հետ: Առաջ խաղաց Վալիդը ու կանգնեց մի բլրի վրա՝ Հոռոմների դռան (Բար ալ-Ռում) դիմաց: Նա քաղաքի պարսպի մի ճեղքվածքից, որի գոյությունը [բնակիչները] չէին նկատել, մտավ քաղաք: Իբրահիմ իբն Խազիմը և Բիզարը դուրս եկան Հոռոմների դռնից: Վալիդը հետապնդեց նրանց և, հասնելով Իբրահիմի ետևից, սպանեց նրան հարյուր յոթանասունութ թվականի Ջու-լ-Հիջջա ամսին (26 փետրվար – 26 մարտ 795) չորեքշաբթի օրը: Սրան սպանեց մի սևամորթ, որի անունն էր Աբու-լ-Հավարի: Նրա գլուխն ու մորուքը լվացին, դրեցին մի նիզակի ծայրին, երկու օր [ցուցադրեցին], ապա ուղարկեցին Բաղդադ:

Վալիդը հինգ օր կողոպտեց Մծբինը և հինգ հազար մարդ կոտորեց, ավարի տալով չատ ունեցվածք ու գրաստ: Նա բռնեց ալ-Մուաֆի իբն Սաֆուանին, որը Բիզարի բարեկամներից էր ու սպանեց նրան: Նրա (Վալիդի) մոտ եկավ Ջաաֆար իբն Արդալլահ իբն Հաչիմ ալ-Տաղլիբին ու նրանից գնեց քաղաքը հիսուն հազարով:

Սակայն նրա (Վալիդի) դեմ դուրս եկավ Յազիդ իբն Մազիադը և սպանեց նրան Բաղդադում:

ԲԱՍԻՐԻ, ՍԱՀՍԱՀԻ ՈՒ ՖԱԴԻԼ ԻԲՆ ԱԲՈՒ ՍԱԻԴԻ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆԸ

Լ 453-454

Տամիմ ցեղից մի մարդ, Բասիր անունով, ապստամբեց և երկու ամիս մնաց, մինչև որ Արու Հուբայրան նրան սպանեց:

Ապա ապստամբեց Սահսահ ալ-Շայբանին և նրան սպանեցին Բիզարն ու Դաուդ իբն Իսմայիլը:

Ապստամբեց նաև Ֆադիլ իբն Արու Սաիդը, Ռադանից, և նա Շայբան ցեղի պետն էր: Նա քսան ձիավորներով ապստամբեց ու եկավ Ջազիրա և նրա հետ հաշտություն կնքեցին հարյուր հազարով ու ոչ ոք չսպանվեց: Ապա նա եկավ Բալաղ Նուման, Մծբինից հինգ փարսախ այն կողմ, ուր տասներկու հազար մարդ կոտորեց Տաղլիբ ցեղից: Նա եկավ Մծբին հինգ հարյուրով ու կանգ առավ դռան առջև: Նրա մարդիկ մտան քաղաք և մարդկանց դուրս բերեցին Հոռոմների դռնից և նա ասաց՝ վաճառեցեք դրանց: Նա տվեց երկու դիրհեմ և ոչ ոք չպատասխանեց. գցեց ևս երկու դիրհեմ և նրանց քաղաք վերադարձրեց:

Ապա եկավ Դարա և նրանց հետ հաշտություն կնքեց հինգ հազարով [դիրհեմո՞վ]: Եկավ Ամիդ ու հաշտություն կնքեց քսան հազարով: Անցավ [Եփրատը], եկավ Նփրկերտ (Մայյափարիկին) և հաշտություն կնքեց տաս հազարով: Եկավ Արզն ու քսան գիչեր մնաց և հաշտություն կնքեց քսան հազարով: Եկավ Խլաթ ու մի քանի օր մնաց, ապա վերադարձավ Մծբին երկու հազարով: Մուամմար իբն Իսա ալ-Արդին նրա դեմ ուղարկեց Ղանմ ցեղից մի մարդու տասներկու հազարով: Ֆադիլը եկավ Մոսուլ. Ապա Ջաբ. Մուամմարը նրա ետևից հասավ Ջաբի մոտ և Մուամմարը պարտվեց: Սակայն նրա մարդիկ կրկին հարձակվեցին և Ֆադիլին ու զինակիցներին գետին տապալելով սպանեցին:

ՋԱՐԱՇԱ ԻԲՆ ՇԱՅԲԱՆԻ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆԸ

Լ 454-455

Ասել է Արու-լ-Հասանը, լսելով Ալի իբն Սուլայմից, թե Ջարաչա իբն Շայբանը հարյուր յոթանասունինը թվականին (795/796) ապստամբեց և եկավ Սավադ (Ստորին Միջագետք), ապա Բանդանիջին և այնտեղ սպանեց Օմար իբն Ումրան իբն Ջամիլ ալ-Ֆադարիին [.....]

Ապա նա եկավ Սինդարադ և իր մարդկանց ուղարկեց Նիհավանդի ու Համադանի կողմերը, որպեսզի նրանցից հարկեր հավաքեն: Ֆադլ իբն Յահիան նրա դեմ ուղարկեց Իբրահիմ իբն Ջիբրիլին երկու հազարով և հանձնարարեց, որ փիթր (Թաթխման) տոնի օրը հարձակվի: Սա եկավ ու հասավ Մահ, ապա դիմեց Ջարաչայի դեմ և Ջարաչան հարյուր ութսուն մարդկանցով բախվեց նրա հետ, իր մոտ ունենալով Արու Սուրը, որը Հայաստանի բնակիչներից էր: Նրանք սաստիկ պատերազմ ունեցան [.....]

Ջարաչան սպանվեց քնած վիճակում ու նրա հետ կոտորվեցին նաև նրա տասներեք զինակիցները և Իբրահիմը լսելով նրա մահը, վերադարձավ Հիտ:

ՀԱՐՅՈՒՐ ՈՒԹՍՈՒՆՋՈՐՍ ԹՎԱԿԱՆ
(1 փետրվար 800 – 19 հունվար 801)

Լ 457

Աբդալլահ իբն Սալիհը Ռումի երկիրը արշավանքի ուղարկեց Ահմադ իբն Հարուն ալ-Շայբանիին և նա ավարով ողջ վերադարձավ:

Այդ տարում հավատացելոց իշխան Հարունը Սալիհ իբն Բայհասի ալ-Քիլաբիին ուղարկեց Ռումի թագուհի Կիսայի[82], ասվում է նաև Ղիսայի (Ադուսթա) մոտ՝ գերիների փոխանակման համար:

ՀԱՐՅՈՒՐ ՈՒԹՍՈՒՆՀԻՆԳ ԹՎԱԿԱՆ
(20 հունվար 801 – 9 հունվար 802)

Այդ տարում չեղավ ամառային արշավանք [դեպի Ռում]:

ՀԱՐՅՈՒՐ ՈՒԹՍՈՒՆՅՈԹ ԹՎԱԿԱՆ
(30 դեկտեմբեր 802 – 19 դեկտեմբեր 803)

Լ 458

Այդ տարում հավատացելոց իշխան Հարունը իր որդուն՝ ալ-Կասիմին ամառային արշավանքի ուղարկեց, նրա հետ առաքելով Արդ ալ-Մալիք իբն Սալիհին և Սահմանային ամրություններում գտնու (Սուդուր) ռազմիկներին (մարդկանց): Նա մտավ Սաֆսաֆի լեռնանցքը, մինչև որ հասավ Կուռա: Նիկեփորը (Նիկիփուր)[83] նրա մոտ մարդ ուղարկեց առաջարկելով, որ եթե հեռանա, ինքը նրան երեք հարյուր քսան մահմեդական գերի կտա: Այդպես էլ արեց և նա (Կասիմը) հեռացավ:

ՀԱՐՑՈՒՐ ՈՒԹՍՈՒՆԻՆԸ ԹՎԱԿԱՆ
(8 դեկտեմբեր 804 – 26 նոյեմբեր 805)

ԼՂ 458

Այդ տարում [Ռումի] բռնակալը (թագիա) արշավեց Անարզաբա[84] (Այն Ջարբա), Քանիսա ալ-Սաուդա[85] (Սև Եկեղեցի) և Ադանա:

ՀԱՐՑՈՒՐ ԻՆՆՍՈՒՆ ԹՎԱԿԱՆ
(27 նոյեմբեր 805 – 16 նոյեմբեր 806)

ԼՂ 459

Այդ տարում հավատացելոց իշխան [Հարունը] արշավեց Ռումի երկիրը և իր զորավարներին ցրեց տարբեր ուղղություններով:

Հավատացելոց իշխանը կանգ առավ Տիանայում (Թուանա), իսկ [Ռումի] բռնակալը առաջարկեց նրան հեռանալ՝ խոստանալով դրամական գումար: Նա (Հարունը) մերժեց ու պահանջեց միայն գերիների ազատ արձակում, գլխահարկի (ջիզիա) վճարում իր (կայսեր) գլխի ու որդու գլխի համար: Եվ նա (կայսրը) երեսուն հազար դինար (ոսկեդրամ) գլխահարկ առաքեց:

ՀԱՐՑՈՒՐ ԻՆՆՍՈՒՆԵՐԿՈՒ ԹՎԱԿԱՆ
(6 նոյեմբեր 807 – 24 հոկտեմբեր 808)

ԼՂ 460

Այդ տարում խուռամինները ապստամբեցին Ջիբալ [նահանգում] և հավատացելոց իշխան Հարունը արշավանքի ուղարկեց Խուզայմա իբն Խազիմին, որը կոտորեց ու գերեվարեց:

ՀԱՎԱՏԱՑԵԼՈՑ ԻՇԽԱՆ [ՀԱՐՈՒՆԻ] ԿԱՌԱՎԱՐԻՉՆԵՐԸ

ԼՂ 463

Ջազիրա – Հարունի կողմից նշանակված կառավարիչներն էին՝ Մուհամմադ իբն Խալիդ իբն Բարմաք, Մուհամմադ իբն Իբրահիմ, Խուզայմա իբն Խազիմ, Յազիդ իբն Մազիադ, Սուլայման իբն Աբու Ջաաֆար և Մուհամմադ իբն Ջամիլ: Խուզայմա իբն Խազիմը երկրորդ կառավարչության չրջան ունեցավ մինչև Հարունի մահը:

ԵՐԿՈՒ ՀԱՐՑՈՒՐ ՏԱՍՆԶՈՐՍ ԹՎԱԿԱՆ
(11 մարտ 829 – 27 փետրվար 830)

ԼՂ 474

Այդ տարում խուռամինների կողմից սպանվեց Իբն Հումայդ ալ-Թուսին, որը [խալիֆայի] զորքի հրամանատարն էր:

ԵՐԿՈՒ ՀԱՐՑՈՒՐ ՏԱՍՆԻՆԸ ԹՎԱԿԱՆ
(16 հունվար 834 – 4 հունվար 835)

ԼՂ 476

Այդ տարում ծաթները[86] (ալ-զութթ) դուրս բերվեցին Բաթիհայից Բաղդադ Ուջայֆի ձնորով:

ԵՐԿՈՒ ՀԱՐՑՈՒՐ ՔՍԱՆ ԹՎԱԿԱՆ
(5 հունվար – 25 դեկտեմբեր 835)

Այդ տարում Հասան իբն Մուսաարը արշավեց Ռումի երկիրը, սակայն պարտվեց, փախուստի մատնվեց ու նրա ամբողջ զորքը գերի ընկավ:

ԵՐԿՈՒ ՀԱՐՑՈՒՐ ՔՍԱՆԵՐԿՈՒ ԹՎԱԿԱՆ
(14 դեկտեմբեր 836 – 2 դեկտեմբեր 837)

ԼՂ 477

Այդ տարում տեղի ունեցավ Աֆշինի ճակատամարտը անհավատ (քաֆիր) Բաբեկի հետ, որին նա հաղթեց ու սպանեց իր երկրում: Նրա զորքը գերի վերցրեց և դուրս բերեց նրա երկրում եղած բոլոր մահմեդական գերիներին: Բաբեկը փախավ, իսկ նա (Աֆշինը) գերի բռնեց նրան և հաղթանակի մասին գրեց հավատացելոց իշխանին:

ԵՐԿՈՒ ՀԱՐՑՈՒՐ ՔՍԱՆԵՐԵՔ ԹՎԱԿԱՆ
(3 դեկտեմբեր 837 – 22 նոյեմբեր 838)

ԼՂ 477

Երկու հարյուր քսաներեք թվականին հավատացելոց իշխան Աբու

Իսհակ ալ-Մուտասիմ Բիլլահը մեծ բազմությամբ ներխուժեց Ռումի երկիրը: Ափչին Հայդար իրն Քաուսը նկավ ու բախվեց [Ռումի] բռնակալի հետ մի վայրում, որը կոչվում է Լուբյա՝ նրանից երկու մղոն հեռավորության վրա: Նա (Ափչինը) պարտության մատնեց նրան ու կոտորեց նրա զինակիցներից չորս հազար հոգու:

Հավատացելոց իշխանը գնաց ու պաշարեց Ամորիոնը (Ամմուրիյա): Ափչինը հասավ նրա ետևից և հավատացելոց իշխանը բռնի ուժով գրավեց այն երեքշաբթի օրը Ռամադան ամսից տասներեք օր մնացած (12 օգոստոս 838): Նա մեծ կոտորած սարքեց և մեծ թվով գերեվարեց, քաղաքը կործանեց ու ավերեց: Մինչ այդ, դեռ Ամորիոն չհասած, հավատացելոց իշխանը քանդել էր իր անցած բոլոր գյուղերը և հոռոմները ամեն կողմ փախել էին:

Այդ տարում կործանվեց Անկարան, ապա հավատացելոց իշխանը վերադարձավ չարաթ օրը, Ռամադան ամսից ինն օր մնացած (16 օգոստոս 838): Նա չորս հազար հոգու գլխատել տվեց և այսպես իր ընթացքի ժամանակ անընդհատ կոտորում էր գերիներին ու վառում ամեն ինչ, մինչև որ հասավ իսլամի երկիրը:

Այդ տարում հավատացելոց իշխանը գերի վերցնելով անհավատ Բաբեկին, հրամայեց կտրել ձեռքերն ու ոտքերը, ապա գլխատել տվեց ու խաչեց նրան: Դա կատարվեց երկու հարյուր քսաներեք թվականի Սաֆար ամսին (2-30 Հունվար 838):

ԵՐԿՈՒ ՀԱՐՅՈՒՐ ԵՐԵՍՈՒՆՄԵԿ ԹՎԱԿԱՆ
(7 սեպտեմբեր 845 – 27 օգոստոս 846)

էջ 480

Այդ տարում գերիների փոխանակում եղավ Ռումի երկրում: Այդ [արարողության] դևկավարն էր Ահմադ իրն Սաիդ իրն Մուսլիմ ալ-Բահիլին: Մահմեդականներից մոտավորապես չորս հազար վեց հարյուր մարդ, նույնքան էլ կանայք ու երեխաներ փոխանակվեցին:

ԽԱԼԻՖԱ ԻԲՆ ԽԱՅՑԱԹ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ
(ՏԱՐԻ)

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

[1] *Յարմուք – 636 թվականի օգոստոսի 20-ին, Ասորիքի հարթավայրում, Բուսրա քաղաքից ոչ հեռու, Յարմուք գետի (Հորդանան գետի վտակ) ափին տեղի ունեցավ վճռական ճակատամարտը բյուզանդական ու արաբական բանակների միջև: Կայսերական բանակը գլխավորի ջախջախվեց: Դրանով իսկ վճռվեց Ասորիքի ճակատագիրը, որը բյուզանդացիք, փաստորեն, ընդմիշտ կորցրին (եթե նկատի չունենանք ժ-ԺԱ դարերում Անտիոքի և որոշ հյուսիս-արևմտյան շրջանների վերանվաճումը): Կորցնելով իր ամենահարուստ նահանգներից մեկը, Հերակլ կայսրը բացականչեց «Մնաս բարով, ով Սիրիա, և ինչպիսի հրաչալի երկիր ենք թողնում թշնամուն»: (Hitti, History of the Arabs, pp. 152-154):*

[2] *Սակելլարիոս – Ասոքր Հերակլիոս կայսեր եղբոր՝ Թեոդորոս սակելլարիոսի (կայսերական գանձապետ) մասին է, որը մեծաթիվ զորքով ուղարկվեց Դամասկոսի կողմերը՝ արաբների առաջխաղացումը կանգնեցնելու համար, բայց ծանր պարտություն կրեց Յարմուքի ճակատամարտում: (Տե՛ս Թեոփանես Խոստովանող, էջ 46):*

[3] *Հերակլ – Հերակլը կամ Հերակլիոսը (575-641) Բյուզանդիայի կայսրն է եղել 610-641 թվականներին: Նա իշխանության է եկել կայսրության ներքին ու արտաքին ճգնաժամի պահին: Հերակլիոսին հաջողվել է վերակազմակերպել բանակը և կարգավորել կայսրության ներքին կյանքը, որի հետևանքով Բյուզանդիայի դիրքերը ժամանակավորապես ամրապնդվեցին: 626 թվականին նա ջախջախեց ավարներին, իսկ 627-628 թվականներին՝ իր գլխավոր հակառակորդ Սասանյաններին՝ նրանց ձեռքից ետ խլելով բյուզանդական տիրույթները Ասիայում և Եգիպտոսում: Սակայն նույն այս կայսրի օրոք էր, որ Բյուզանդիան ծանր պարտություն կրեց արաբներից, կորցնելով Միջագետքը, Սիրիան, Պաղեստինն ու Եգիպտոսը: Հերակլիոսի օրոք էր, որ հունարենը վերջնականապես դուրս մղեց լատիներենը որպես պետության ու եկեղեցու պաշտոնական լեզու: (Сов. Ист. Энц., т. 6, стр. 212):*

[4] *Վահան – Սա Հայ զորավար էր բյուզանդական բանակում, որի մասին հիշատակում է նաև Թեոփանես խոստովանողը: Հետաքրքիր տեղեկություն է հաղորդում Թեոփանես Խոստովանողը այս զորավարի մասին «Մակելլարիոսի զորքը պարտություն է կրում: Վահանի զորքերն ապստամբություն բարձրացնելով, Վահանին կայսր են հռչակում, իսկ Հերակլիոսին՝ գահընկեց հայտարարում»: (Տե՛ս Թեոփանես Խոստովանող, էջ 46-47): Հետաքրքիր է, որ եթե բյուզանդացի հեղինակները որպես բյուզանդական բանակի հրամանատարներ հիշատակում են ներքինի Թեոդորոսին և Վահանին, ապա արար մատենագիրները Յարմուքում կռվող կայսերական բանակի հրամանատար են համարում Վահանին և միայն երբեմն հիշատակում Մակելլարիոսին(այսինքն Թեոդորոսին):* (Большаков, Ист. халифата, т. 2, стр. 55):

[5] *Փարասախ – Մեկ փարասախ (պարասանգ) կազմված է 3 մղոնից, այսինքն երկու փարասախ կլորացված ձևով հավասար է 6 կմ-ի* (Хинц, Меры и веса, стр. 72):

[6] *Բաբիլոն (Եգիպտոսի) – կամ Բաբելոն քաղաքը Եգիպտոսում: Ենթադրվում է, որ Հին եգիպտական Pi-Hapi-n-On անվանումը հույների կողմից աղավաղվելով և նմանեցվելով իրենց արդեն հայտնի քաղաքի (Միջագետքում) անվանը կոչվել է*

Բարեյոն: Այն գտնվում է Վերին և Ստորին Եգիպտոսի սահմանագլխին: Արաբական նվաճման ժամանակ Բաբելոնի անկումը կարևոր նշանակություն ունեցավ ամբողջ Եգիպտոսի նվաճման համար: Նրանից ոչ հեռու հիմնվեց Ֆուսթաթ ռազմական ճամբարը (հետագայում քաղաք), իսկ ավելի ուշ՝ Կահիրեն: Ժամանակի ընթացքում Բաբելոնի և Ֆուսթաթի միջև սահմանները ջնջվեցին, իսկ Բաբելոն անվանումը չարունակեցին գործածել միայն պատիները: Հետագայում արևմտյան որոշ հեղինակներ Բաբելոն, կամ Բաբիլոնիա ասելով նկատի ունեին Կահիրե քաղաքը:

Տվյալ դեպքում արաբական «Բաբայյուն» ձևը օգտագործված է կրճատ «Այյուն» ձևով: (Babalyun, C. H. Becker, EOI, CD-ROM, (I: 844b)):

7 Անթաբուլս – Բարկա քաղաքը Հյուսիսային Աֆրիկայի Կիրենաիկա երկրամասում: Տե՛ս նաև ծնթգր. 9:

8 Մուկաուկիս – Այն անձը, որ արաբական ավանդության մեջ հիշատակված է որպես պատիների ու հույների դեկավար Եգիպտոսի նվաճման ժամանակ:

Ներկայումս ընդունված է, որ Մուկաուկիս կոչվածը Ալեքսանդրիայի մելքիտ պատրիարք Կյուրոսն է, թեև արաբ պատմիչները Մուկաուկիս ասելով նկատի են ունեցել ոչ միայն նրան, այլև այլ անձանց: Բազմաթիվ փորձեր են արվել վերծանելու այս տարօրինակ բառը: Դրանցից մեկը հետևյալն է. քանի որ Կյուրոս պատրիարքը նախքան Եգիպտոս ուղարկվելը Փասիսի (Կողքիս, Կոլխիդա) եպիսկոպոսն էր, ուստի երբ նրան նշանակեցին Ալեքսանդրիա, տեղական ժողովուրդը նրան կոչեց «կովկասցի» կամ «կողքիսցի», որը իր հերթին արաբական ձև ստանալով դարձավ ալ-Մուկաուկիս: (al-Mukawkis, K. Ohrnberg, EOI, CD-ROM, (VII: 511a)):

9 Բարկա – Արաբ հեղինակներն այսպես են կոչում թե՛ քաղաքը որ այժմ կոչվում է ալ-Մարջ և թե՛ ողջ Կիրենաիկա երկրամասը: Դա մի թերակղզի է, որը խորանում է Միջերկրական ծովի մեջ, բաժանելով Եգիպտոսը Մաղրիբից: (Barka, J. Despois, EOI, CD-ROM, (I: 1048 b)): Տե՛ս ծնթգր. 7:

10 Հաբիբ իբն Մասլամա– Մուավիայի զորավարներից էր: Մնվել է Մեքքայում մոտ. 617-ին Կուրայշ ցեղին պատկանող Ֆիհրի տոհմում: Նա մասնակցել Ասորիքի նվաճմանը և հռչակավոր դարձավ բյուզանդացիների դեմ պայքարում: Մուավիայի հրամանով նա նվաճեց Հայաստանը 654 թ.-ին, ապա դարձավ Հյուսիսային Ասորիքի կառավարիչ և պայքարեց բնդդեմ Մարդաիտների (Ջարաջիմա) և բյուզանդացիների: Օսման խալիֆայի մահից հետո նա պաչտպանեց Մուավիային բնդդեմ Ալիի: Սիֆֆինի ճակատամարտում Հաբիբը զնկավարում էր սիրիական բանակի ձախ թևը: Ապա հանդես եկավ որպես Մուավիայի ներկայացուցիչ Ալիի հետ բանակցություններում: Հաբիբ իրն Մասլաման մահացավ 662-ին, կամ մի քանի տարի անց՝ չբոլորած 50 տարին (Habib ibn Maslama, J. W. Fuck, EOI, CD-ROM, (III: 12b)):

11 Ներքինի Մանուել (Մանուիլ) – Մանուել Հայկազնր Հերակլ կայսեր զորավարն էր, որը առաջնորդեց բյուզանդական զորքերը դեպի Եգիպտոս՝ արաբների դեմ: Նրա մասին հիշատակում է Միքայել Ասորին: (Տե՛ս Իրն ալ-Ասիր, էջ 368):

12 Պարտավ (Բարզաա) – Քաղաք Մեծ Հայքի Ուտիք աչխարհի Ուտի Առանձնակ գավառում, ժամանակակից Բարդա քաղաքից 5-6 կմ հս-արմ.: Արաբական տիրապետության չրջանում եղել է Արմինիա նահանգի երկրորդ կենտրոնը Դվինից հետո (ՀՀԵՏԲ, հ. 4, էջ 319):

13 Իսթախր – Քաղաք Ֆարս նահանգում: Բուն անունը պահլավերեն Ստախր, հայերեն Ստահր: (Istakhr, M. Streck [G. C. Miles], EOI, CD-ROM, (IV: 219b)):

14 Բալանջար – Խազարական կարևոր քաղաքներից մեկը համանուն գետի վրա: Գտնվում էր Դարբանդից, կամ Բար ալ-Աբուաբից հյուսիս: Ըստ Մասուդիի Բալանջարը Խազարների մայրաքաղաքն էր մինչև ԱԹիլր: Բալանջարը հաճախ ևթարկվում էր հարձակումների արաբախազարական պատերազմների ժամանակ (Balandjar, D. M. Dunlop, EOI, CD-ROM, (I: 985a)):

15 Բայլական – Քաղաք Մեծ Հայքի Փայտակարան աչխարհում, վերջինիս կենտրոնը: Եղել է թագավորանիստ, քարաչեն և պարսպապատ քաղաք: (ՀՀԵՏԲ, հ. 5, էջ 230):

16 Հիլան – Քաղաք կամ գավառ Բիթինիսի նահանգում (ՀՀԵՏԲ, հ. 3, էջ 412-413):

17 Մագդութք – Քաղաք և երկրամաս Կասպից ծովի ափին, Շապուրանից հյուսիս և Դարբանդից (Բար ալ-Աբուար) հարավ:

18 Հաղասի յեռնանցք – Լեռնանցք Հաղաս բերդաքաղաքի մոտ: Հաղասը կամ Հադաթը բերդաքաղաք է Լեռնային Կիլիկիայում, Մարաչի գավառի հս-արլ կողմում, Այնթապից Մալաթիա տանող ճանապարհի վրա:

19 Մասիսա կամ Մասիսա – Դաչտային Կիլիկիայի մսխ, Ամանոսիս կամ Մոպսուեստիա քաղաքն է:

20 Մալաթիա – Քաղաք Փոքր Հայքում, Եփրատի աջ ափում: (ՀՀԵՏԲ, հ. 3, էջ 636):

21 Մուհամմադ իրն Մարուան – Խալիֆայության Հյուսիսային երկրամասի (Արմինիա, Ատրպատական, Ջազիրա), ինչպես նաև սահմանային զոտու (Սուղուր) փոխարքա 693-709 թթ.: Զևականորեն իչխեց 693-ից: Նա իրականացրեց Հայաստանի և հարակից երկրների նվաճումը: Ըստ էության, կանոնավոր կերպով իչխել սկսեց 701 թ.: (Տեր-Ղևոնդյան, Արմ. ոստիկանների ժամանակագրություններ):

22 Արդ ալ-Մալիք – Արդ ալ-Մալիքը Օմայան դարաչրջանի հինգերորդ խալիֆան էր: Իչխել է 685-705 թթ.: Մնվել է հիջրայի 26 (646-647) թվականին: (Abd al-Malik ibn Marwan, H. A. R. Gibb, EOI, CD-ROM, (I: 76a)):

23 Նարիհ իրն Արդալլահ ալ-Ակաղի – Սա հավանաբար Հայաստանի կառավարիչ Արդալլահն է, որի մասին հիչատակում են հայկական աղբյուրներ՝ Հովհաննես կաթ. Դրասխանակերտցի, Ասողիկ: (Տեր-Ղևոնդյան, Արմ. ոստիկանների ժամանակագրություններ):

24 Աբու Շայխ իրն Արդալլահ ալ-Ղանավի – Արմինիայի կառավարիչն է (հիչատակում է Իրն ալ-Ասիրը), որը կառավարեց 701-703 թթ.: Նրան սպանեցին հայերը 703 թ. ապստամբության ժամանակ: (Տեր-Ղևոնդյան, Արմ. ոստիկանների ժամանակագրություններ):

25 Ամր իրն ալ-Սադի (Սադա) ալ-Ղանավի – Այլ աղբյուրներում որպես կառավարիչ հիչատակվում է միայն Աբու Շայխ իրն Արդալլահը, իսկ Խալիֆա իրն Խայաթի տեղեկություններից երևում է, որ այս երկուսը միասին են կառավարել և նույն ժամանակ էլ սպանվել են ապստամբների ձեռքով: (Վ. Տ.-Ղ.):

26 Կրակի տարին (Հարիկ) – 705 թվականը, երբ արաբները, հայ նախարարներին դավադրաբար չցնելով Նախճավանի ու Խրամի եկեղեցիները, հրկիզեցին, զրանով իսկ «պատժելով» 703-ի ապստամբության համար, արաբ պատմիչների կողմից հիչվում է որպես կրակի տարի (սանատ ալ-Հարիկ):

27 Արդալլահ իրն Հատիմ իրն ալ-Նուման ալ-Բահիլի – Ըստ երևույթին նչանակվել է կառավարիչ, բայց, իր պարտականություններին չանցած, մահացել է: Նրա փոխարեն նչանակվել է եղբայրը՝ Արդ ալ-Ազիզ իրն Հատիմ ալ-Բահիլին (705-709):

28 Արդ ալ-Ազիզ իրն Հատիմ – Արդ ալ-Ազիզ իրն Հատիմ ալ-Բահիլին (705-709) ըստ Իրն Տաղրիբիրդիի նչանակվել է 85 հ. թ. (704). Ibn Taghribirdi, A, 209, սակայն ավելի հավանական է 705 թ. : Վերաչինեց արաբների կողմից ավերված Դվինը: Նրա ջանքերի չնորհիվ Հայաստան վերադարձան Հայոց իչխան Սմբատ Բագրատունին և այլ նախարարներ. Ղևոնդ, 35, Ասողիկ, 125: (Տեր-Ղևոնդյան, Արմ. ոստիկանների ժամանակագրություններ):

29 Սաուսանա – Ամրոց Մամեստիայի կողմերում: (Իրն ալ-Ասիր, էջ 66):

30 Մուսա իրն Նուսայր – Մուսա իրն Նուսայր Աբդ ալ-Ռահման իրն Զայդ ալ-Լախմին Արևմտյան Մաղրիբի ու Իսպանիայի նվաճողն է: Նա ծնվել է 640 թվականին:

Տարբեր պաշտոններ վարելուց հետո մոտավորապես 698 թվականին նա նշանակվում է Իֆրիկիայի կառավարիչ: Դրանից հետո Մուսան իր ենթակայության տակ գտնվող դինված ուժերով սկսեց մի փառավոր հաղթարշավ: Նախ նա ամրապնդեց արաբական նվաճումը Իֆրիկիայում, ապա նվաճեց Արևմտյան Մաղրիբը՝ իրեն ենթարկելով բերբերական ցեղերին: Այս նվաճումների ժամանակ Մուսայի մոտ դինակիցն ու զորավարն էր Թարիկը: Հենց վերջինս էլ արդեն նոր՝ Վալիդ խալիֆայի օրոք, 711 թվականին ներխուժեց Իսպանիա: Մի տարի անց Մուսան անձամբ մտավ Իսպանիա: Մինչև 714-ը Իսպանիայի մեծ մասը նվաճված էր ու միացված Խալիֆայությանը, իսկ վարչականորեն՝ ենթակա Մաղրիբին Մուսա իրն Նուսայրի գլխավորությամբ: Իսպանիայից վերադառնալով հակառական ավարով Մուսան վերադարձավ Կայրուան և այստեղից չարունակեց իր ուղին դեպի Սիրիա, Դամասկոս: Մուսան հասավ մայրաքաղաք Վալիդ խալիֆայի մահանալուց անմիջապես առաջ: Այստեղ էլ 1-2 տարի անց նա վախճանվեց (Musa ibn Nusayr, C. Levi-Provencal, EOI, CD-ROM, (VII: 643b)).

[31] Վալիդ – Օմայան չրջանի հզոր խալիֆաներից մեկը, որը հաջորդելով Արդ ալ-Մալիքին, իչխեց 705-715 թթ. էլ ավելի ընդարձակելով խալիֆայության սահմանները: Նրա օրոք ամենամեծ ճեռքբերումն, անկասկած, Իսպանիայի (Անդալուս) նվաճումն էր, որով արաբները, երկար ժամանակով, հաստատվեցին Եվրոպայում:

[32] Արդ ալ-Ազիզ իրն Հատիմ իրն Նուման – Տե՛ս Խալիֆա իրն Խայյաթ, ծնթգր. 28:

[33] Արդն (Արդան) – Չլփոթել Արդան ալ-Ռումի (Կարնո քաղաք) հետ: Արդնը (Աղձնը) քաղաք և գավառ է Մեծ Հայքի Աղձնիք նահանգի հարավ-արևելյան մասում: Արդնը Բիթլիսի լեռնանցքով, կամ Զորա պահակով անցնող ճանապարհով կապվում էր Այրարատ նահանգի հետ: Արդն գավառը եղել է Աղձնիքի րդեչխության կենտրոնը: (Տե՛ս Հայկ. սովետ. հանրագիտարան, հ. 1, էջ 257):

[34] Դարբանդ – Բար ալ-Արուար, Դռների Դուռը: Հակա ամրություններ կառուցված կովկասյան լեռների և Կասպից ծովի միջև եղած անցուդարձը պաշտպանելու համար Հյուսիսի ցեղերի հարձակումներից: Այս ամրություններ կառուցված էին դեռևս Սասանյանների օրոք: Ավանդաբար դրա կառուցումը վերագրվում էր Խոսրով Անուշիրվանին (6-րդ դար): Հետագայում չափազանց կարևոր նշանակություն ստացավ Արաբական խալիֆայության օրոք, մանավանդ Խազարների դեմ պայքարում: (Bab al-Abwab, D. M. Dunlop, EOI, CD-ROM, (I: 835b)):

[35] Թարիկ – Թարիկ իրն Զիյադր աղգությամբ բերբեր մի զորավար էր, որի հրամանատարությամբ Խալիֆայության զորքերը սկիզբ դրեցին Իբերական թերակղզու նվաճմանը (711 թ.): Մինչ այդ նա Տանժերի կառավարիչն էր նշանակված Իֆրիկիայի նահանգապետ Մուսա իրն Նուսայրի կողմից: Օգտագործելով այդ ժամանակ Իբերական թերակղզում իչխող Վեստգոթերի թագավորության ներքին թուլությունն ու կենտրոնախույս տրամադրություններ ունեցող իչխաններին, Թարիկը 4 նավերով մի քանի անգամ գնալ-գալով իր մոտ 12000 դինվորներով, անցավ նվաճման: Թարիկը իր զորքի հետ ափ դուրս եկավ մի լեռան ստորոտի մոտ, որն այնուհետև սկսեց կրել Ջաբալ Թարիկ (աղավաղված Ջիբրալթար), այսինքն «Թարիկի լեռ» անունը, նույն անվանումը տալով նաև Նեղուցին:

[36] Շիրվան – Քաղաք էր Բուն Աղվանքի և Կասպից ծովի միջև: Սկսած Թ դարից Շիրվան, կամ Շարուան անուն տրվեց մերձկասպյան չրջաններր րնդգրկող ողջ երկրամասին, որն իր հերթին մտնում էր Խալիֆայության Արմինիա նահանգի (ոստիկանության) մեջ, կազմելով Առաջին Արմինիան (Աղվանքի և Դարբանդի հետ միասին):

[37] Ջումբանր, Բաոանր և Ջողր (Սոլ) – քաղաքներ էին Շիրվանի ու Դարբանդի միջև:

[38] Սուլայման իրն Արդ ալ-Մալիք խալիֆան – Օմայան դինաստիայի 7-րդ խալիֆան (715-717) որդին էր Արդ ալ-Մալիք իրն Մարուան խալիֆայի և հաջորդեց իր եղբոր՝ Վալիդին: Իր եղբոր՝ Վալիդի խալիֆայության օրոք, Սուլայմանր Պաղեստինի կառավարիչն էր և աչխատում էր զարգացնել Ռամլան, այն դարձնելով Պաղեստինի նոր մայրաքաղաք: Նա որոչակի հակասություններ մեջ էր փոխարքա Հաջջաջի և հենց խալիֆայի՝ Վալիդի հետ: Եղբոր մահից հետո նա բաղմեց գահին: Սուլայմանր չատ կարճ իչխեց և նրա քաղաքականությունր չէր տարբերվում իր նախորդներից: Նրա օրոք տեղի ունեցած կարևոր իրադարձություններից էր Բյուզանդիայի դեմ մեծ արչավանքր, որի ժամանակ թեև առանց հաջողության, բայց պաշարման ենթարկվեց Կոստանդնուպոլիսր: (Sulayman ibn Abd al-Malik, R. Eisener, EOI, CD-ROM, (IX: 821a)):

[39] Ջուրջան – Տե՛ս Վակիդի, ծնթգր. 9:

[40] Դայլամ – Դայլամները կամ Դեյլմիկները Հին ժողովուրդ են, որոնց մասին Հիչատակում են անտիկ հեղինակները: Բնակվում էին Հիմնականում Կասպից ծովի Հարավային ափերին՝ Իրանի Հյուսիսում: Դեյլմիկները Հատուկ աչխուժության ցուցաբերեցին Ժ դարում, կռվելով տարբեր տիրակալների Համար: Դայլամից են ծագում իրանական Զիյարի (927-1090), Սալարյան, կամ Մուսաֆիրի (916-1090) և Բուի, կամ Բուվայհի (935-1055) տոհմերր, որոնք պետություններ կազմեցին Իրանի Հյուսիսային և Հարավային չրջաններում: ((Daylam, V. Minorsky, EOI, CD-ROM, (II: 189b) և Իբն ալ-Ասիր, էջ 386):

[41] Խալիջ – Հավանաբար նկատի ունի Մարմարա ծովը (Վ. Տ.-Դ.):

[42] Սակալիբա – Սակլար բառի հոգնակին, որ արաբական աղբյուրներում նչանակում է սլավոն, ինչպես նաև Հյուսիսային Եվրոպայի բնակիչ: Քանի որ սլավոնական երկրներից չատ ստրուկներ տարվեցին Խալիֆայություն, մանավանդ Մահմեդական Իսպանիա (Անդալուս) Սակալիբա բառր սկսեց գործածվել «ոաղմիկ ստրուկներ» կամ «սպիտակամորթ ստրուկներ» իմաստով, նույն իմաստով ինչպես թյուրք ոաղմիկներր Աբբասյան խալիֆայությունում (al-Sakaliba (VIII: 872b), EOI, CD-ROM, P. Guichard, Mohamed Meouak, ինչպես նաև Իբն ալ-Ասիր, էջ 383):

Տվյալ դեպքում օգտագործված է իր բուն՝ «սլավոններ» իմաստով:

[43] Բուրջան – Դանուբյան Բուլղարիան:

[44] Խազարներ – Վաչկատուն ժողովուրդ, որ բնակվում էր Հարավոռուսական տափաստաններում: Թյուրքական ծագումով այս ժողովուրդր վերոհիչյալ տարածքներում Հայտնվում է 6-րդ դարում Կենտրոնական և Միջին Ասիայից տարբեր ցեղերի դաղթերի Հետևանքով: Իրականում դա տարբեր ալթայական ծագում ունեցող ցեղերի՝ Հոներ, սաբիրներ, օղուրներ, թյուրքեր, մի կոնֆեդերացիա էր: Այս բոլորին միասին կոչում էին խազարներ, իսկ երբեմն էլ դրա փոխարեն օգտագործում էին թյուրքեր տերմինր: Մինչև այժմ էլ Հայտնի չէ, թե արդյո՞ք գոյություն է ունեցել խազար անունով ցեղ: Ամեն դեպքում այսպես կոչված արևմտյան թյուրքերը «խազարներ» անունով Հանդես են գալիս 7-րդ դարի առաջին տասնամյակներին, պարսկարյուզանդական պատերազմների ընթացքում: Այդ ժամանակ նրանք Բյուզանդիայի դաչնակիցներն էին՝ ամայացնելով Սասանյան տիրույթները Անդրկովկասում: Նույն 7-րդ դարում առաջացան երկու թյուրքական պետություններ՝ Խազարական խաքանությունր և Բուլղար-Մնողուր պետությունր: Այս երկուսի միջև առաջացած բախումից Հաղթող դուրս եկան խազարները, իսկ բուլղարները գաղթեցին Հիմնականում երեք ուղղությամբ: Մի մասը չարժվելով դեպի Հյուսիս, Հիմնեց Վոլգա-Կամայի Բուլղարների պետությունր, մյուս մասը Ասպարուխի գլխավորությամբ ներխուժեց Բալկաններ, Հիմնելով Դանուբյան Բուլղարիան, իսկ մի մասն էլ մնաց խազարական տիրապետության տակ, սրանց Հետնորդները Հետագայում Հաստատվեցին Հյուսիսային Կովկասում (Բալկարիա): Դրանից Հետո խազարները զբաղեցրին տեր ու տիրական Հյուսիսային Կովկասի ու Վոլգայի Հարավային ավազանի անծայրածիր տարածքներում: Նրանց միակ լուրջ Հակառակորդը Արաբական խալիֆայությունն էր, որի Հետ դաժան պայքար ծավալվեց 7-8-րդ

դարերում (Khazar, W. Barthold, P. B. Golden, EOI, CD-ROM, (IV: 1172a)):

45 Ծմար խալիֆա – Տե՛ս Աբու Յուսուֆ, ծնթգր. 1:

46 Աբդ ալ-Ազիզ իբն Հաթիմ իբն Նուման – Տե՛ս ծնթգր. 28-ր:

47 Ադի իբն Ադի – Ադի իբն Ադի իբն Ամիրա (կամ Ումայրա) ալ-Քինդին կառավարիչ է եղել 715–717 թվականներին: Նրան նշանակեց Սուլայման խալիֆան. Beladsori, 205: (Տեր-Ղևոնդյան, Արմ. ոստիկանների ժամանակագրություն):

48 Ջառահ իբն Աբդալլահ ալ-Հաքամ – Արմինիայի և Ատրպատականի փոխարքա է նշանակվել երկու անգամ 722–725 և 729–730 թվականներին: Փոխարքա դառնալով պայքար սկսեց խազարների դեմ: Սպանվեց 730 թվականին: (Տեր-Ղևոնդյան, Արմ. ոստիկանների ժամանակագրություն):

49 Յազիդ խալիֆա – Յազիդ (Եզիդ) Բ -ր Օմայան դինաստիայի խալիֆա է, որ իշխել է 720–724 թվականներին:

50 Միլաք իբն Սաֆֆար – Միլաք իբն Սաֆար ալ-Բահրանին իշխել է չատ կարճ 721 թվականին: (Տեր-Ղևոնդյան, Արմ. ոստիկանների ժամանակագրություն):

51 Խաքան – Նախապես կաղան, կամ խաղան: Այս տիտղոսը, որ նշանակում է կառավարող, կամ գերագույն կառավարող, թյուրքերը փոխ առան Ավարներից կամ Հեփթաղներից: Այսպես էր կոչվում խազարների, կամ, որ նույնն է, թյուրքական տարբեր ցեղերի կոնֆեդերացիայի առաջնորդը (Khakan, J. A. Boyle, EOI, CD-ROM, (IV: 915a)):

52 Վարդանակերտ (Վարսան) – Քաղաք Փայտակարանում՝ Արաքս գետի աջ կողմում, նախքան վերջինիս Կուրի հետ խառնվելը: Մյուս Վարդանակերտը գտնվում է Այրարատում, ուր ապստամբ հայերը 703-ին հաղթեցին իրենց հետապնդող արաբական կայազորին: Արաբ մատենագիրները գիտեն միայն Փայտակարանի Վարդանակերտը, որը գտնվում էր Արաքսից հարավ: (ՀՀՇՏԲ, հ. 4, էջ 776 և Իբն ալ-Ասիր, էջ 373):

53 Ալանաց երկիր – Արաբներեն սովորաբար հիշատակվում է Ալ-Լան ձևով: Իրանական մի ժողովուրդ, որը հանդիսանում է ներկայիս օսերի նախնին: Սրանք հիշատակվում են առաջին դարից: 371 թվականին ալանները պարտվում են հոներից և նրանց մի մասը վանդալների հետ միասին գաղթում է դեպի արևմուտք, կտրել անցնելով Ֆրանսիան, Իսպանիան, մասնակցելով Հյուսիսային Աֆրիկայում վանդալների թագավորության ստեղծմանը: Իսկ տեղում (Հյուս. Կովկաս) մնացած ալանները իրենց հարևանների՝ բուլղարների, թյուրքերի ու խազարների ճնշման տակ դաչտային մասերից տեղափոխվում են լեռները, մոտավորապես այն տարածքը, որտեղ այսօր գոյություն ունի Օսեթիան: (Alan, W. Barthold, V. Minorsky, EOI, CD-ROM, (I: 354a)):

54 Ջառահ իբն Աբդալլահ ալ-Հաքամի – Տե՛ս Խալիֆա իբն Խայաթ, ծնթգր. 48:

55 Ալանաց դռների – Արաբ. Բաբ ալ-Լան կամ Բաբ Ալլան, Դուռն Ալանաց, պարսկ. Դար-ի Ալան, ներկայիս Դարիալի կիրճը՝ Կովկասյան լեռների միջին մասում: Բաբ ալ-Աբուաբի (Դարբանդ) հետ միասին այս լեռնանցքը ևս արաբների համար կարևոր նշանակություն ուներ խազարների դեմ պայքարում (Bab al-Lan, D. M. Dunlop, EOI, CD-ROM, (I: 837a)):

56 Հարիս իբն Ամր ալ-Թաի – Արմինիայի կառավարիչ 724–725 թվականներին: Յազիդ (Եզիդ) խալիֆայի նշանակած վերջին ոստիկանն էր Արմինիայում. Beladsori, 206: Ըստ Կաղանկատվացու Հերթը (Հարիսը) նշանակվեց Հայոց 174 թ. ձմռանը (725) և անցկացրեց Հայտնի աշխարհագիրը. Մովսես Կաղանկատվացի, 258, Ղևոնդ, 100: (Տեր-Ղևոնդյան, Արմ. ոստիկանների ժամանակագրություն):

57 Թոխարիստան – Սա մի երկիր է որի տարածքն ընդգրկում է ներկայիս Աֆղանստանի Ֆարյար, Ջուզջան, Բալխ, Սանանգան, Կունդուզ, Թախար և Բադախշան նահանգները: Սրանց լեռուն պատկանում էր Հնդիրանական լեզվախմբին: Արաբները դժվարությամբ նվաճեցին այս երկիրը(Tukharistan, W. Barthold – [C. E. Bosworth], EOI, CD-ROM, (X: 600b)):

58 Հիչամ իբն Արդ ալ-Մալիք – Օմայան դինաստիայի տասներորդ խալիֆան, որը իշխել է 724–743 թվականներին: Նա հաջորդեց իր ավագ եղբայրներին (Վալիդ, Սուլայման, Յազիդ Բ) և իշխեց ավելի երկար: Նրա օրոք ամրապնդվեցին նվաճումներն արևելքում, կատաղի պայքար ծավալվեց խազարների դեմ, մեկ անգամ ևս պաչարման ենթարկվեց Կոստանդնուպոլիսը: Միաժամանակ արաբները պարտություններ կրեցին բյուզանդացիներից, ապստամբական տրամադրություններ կային Մադրիրում, սկսեցին նկատվել Օմայան պետության քայքայման նախանչանները: (Hisham, F. Gabrieli, EOI, CD-ROM, (III: 493a)):

59 Ջառահ իբն Աբդալլահ ալ-Հաքամ – Տե՛ս Խալիֆա իբն Խայաթ, ծնթգր. 48:

60 Արդաբիլ – Արդաբիլը քաղաք և գավառ է Ատրպատականում: Արաբական նվաճումից հետո այն դարձավ կարևոր կենտրոն և կառավարչի նստավայրը մերթ Հաստատվում էր Մարաղայում, մերթ Արդաբիլում: (Ardabil, R. N. Frye, EOI, CD-ROM, (I: 625a)):

61 Մարջ Արդաբիլ – Արդաբիլի դաչտը:

62 Աֆյաջունիա (Պափղագոնիա)– Փոքր Ասիայի Հյուսիսային երկրամասը, որի ափը ողողում է Սև ծովը:

63 Բայտ ալ-Մարիք (Գահի տունը) ամրոց – Մարիքը մի խոչոր երկրամաս էր և ավատական իշխանություն Հյուսիսային Կովկասում. Դարբանդից դեպի Հյուսիս-արևմուտք, որը, հարևան իշխանությունների հետ մեկտեղ գտնվում էր Խազարական պետության ենթակայության տակ: Իսկ հիչատակված ամրոցը, հավանաբար, Մարիքի իշխանության կենտրոնն էր:

64 Ասիմ իբն Աբդալլահ իբն Յազիդ ալ-Հիլալի – Նչանակվել է կառավարիչ 744 թվականին, նույն տարում սպանվել է: (Տեր-Ղևոնդյան, Արմ. ոստիկանների ժամանակագրություն):

65 Աբու-լ-Աբբաս խալիֆա – Առաջին Աբբասյան խալիֆան (750–754): Քուֆայի մեծ մզկիթում խալիֆա հռչակվելուց հետո նրա առաջին խնդիրն էր լիակատար պարտության մատնել Օմայաններին: Նա հետապնդեց ու սպանեց Մարուան Բ-ին, ապա ճնչեց տարբեր տեղերում ծագած ըմբոստությունները: Օմայան ընտանիքի գրեթե բոլոր անդամները դաժանորեն ոչնչացվեցին: Աբու-լ-Աբբասը իր տոհմի ապստամբական չարժումը դարձրեց իրավազոր իշխանություն և հիմքերը դրեց այն պետության, որն իր վերջնական տեսքը պիտի ձեռք բերեր արդեն հաջորդ խալիֆայի՝ Մանսուրի օրոք (Abu l-Abbas al-Saffah, S. Moscati, EOI, CD-ROM, (I: 103b)):

66 Սաֆֆահ – Առաջին Աբբասյան խալիֆա Աբու-լ-Աբբասը կոչվում էր Սաֆֆահ, որը նչանակում է արյունարբու, որովհետև Աբբասյանների իշխանության հաստատումը իրականացավ հրի ու սրի միջոցով (Իբն ալ-Ասիր, էջ 374): Տե՛ս նաև ծնթգր. 65:

67 Քուսան – Հայազգի Քուչաներ Ջորրորդ Հայքի բնակիչներից էր. մասնակցել էր Բյուզանդիայի՝ արաբների դեմ մղած պատերազմներին: Նրա մասին խոսում են, թե՛ արաբ (Թաբարի, Իբն ալ-Ասիր), թե՛ ասորի (Դիոնիսիոս Տելլմահրացի) պատմիչները: Ըստ Աճառյանի, սա հայկական Գուսան անունն է: Տե՛ս Հայոց անձնանունների բառարան, Ա, էջ 510: (Denys de Tell Mahre, p. 56. Տե՛ս Իբն ալ-Ասիր, էջ 374):

68 Ջորրորդ Արմինիա – Ջորրորդ Հայաստանը, այսինքն Ջորրորդ Հայքը լավ ծանոթ է արաբներին: Մեծ Հայքի Մուիք նահանգը այս անունն (Armenia Quarta) ստացավ Հուստինիանոս Ա կայսեր 536 թ. հրովարտակով: Արաբները հենց սկզբից մեծ ուչադրություն դարձրին այս նահանգի վրա Բյուզանդիայի դեմ պայքարում նրա ռազմավարական կարևոր դիրքի պատճառով: Արաբական արչավանքների նախօրեին Ջորրորդ Հայքի կազմում էր Մարտիրոպոլիսը (Նփրկերտ): (Իբն ալ-Ասիր, էջ 367):

69 Ջար – Տիգրիս գետի ձախակողմյան վտակը, Մեծ Ջար:

70 Աբու Ջաաֆար – Աբու Ջաաֆար Արդ Ալլահ իբն Մուհամմադ իբն Ալի ալ-

Մանսուրը Աբբասյան երկրորդ խալիֆան էր և իշխեց 754-775 թվականներին: Նա հաջորդեց իր եղբորը՝ Աբու լ-Աբբասին, որը նրան նշանակել էր որպես ժառանգորդ: Իր գահակալության առաջին տարիներին Աբու Ջաաֆարը հիմնականում զբաղված էր գահի թեկնածուների ու ապստամբական ուժերի դեմ պայքարելով: Դառնալով գրության տերը, Աբու Ջաաֆարը ծրագրեց ստեղծել մի ուժեղ և կենտրոնացված պետություն: Նրա մեծագույն իրագործումը նոր մայրաքաղաքի՝ Բաղդադի հիմնադրումն էր: Սկզբում այն, հիմնականում, ռազմական ու վարչական կենտրոն էր, բայց շատ չանցավ վերածվեց խոշորագույն առևտրական կենտրոնի: Ներքին ու արտաքին հակառակորդների դեմ տարած հաղթանակների համար նա ստացավ ալ-Մանսուր, այսինքն «Հաղթական» պատվանուն: (al-Mansur, H. Kennedy, EOI, CD-ROM, (VI: 427a)):

71 Ադանա ամրոց - Ադանա ամրոցը, կամ քաղաքը Հնում կոչվել է «Անտիոքիա առ Սարոսիս» ի պատիվ Անտիոքոսի, Հետո «Մաքսիմյան Ադանեանք» ի պատիվ Մաքսիմիանոս կայսեր: Ե դարի երկրորդ կեսին ավան, կամ դյուղավան էր, Զ դարում Հուստինիանոսը նորոգեց քաղաքը և կառուցեց կամուրջ: Ադանան մասամբ վերաշինվեց 758 թվականին ալ-Մանսուր խալիֆայի կողմից և դարձավ լավ ամրացված ու բազմաբնակ վայր: (Նալբանդյան, Արաբական աղբյուրներ, էջ 127):

72 Հասան իբն Կահթաբա - Արմինիայի կառավարիչ 771-775 թվականներին: Հիշվում է դրամների վրա. 154 (770-771), Առան 154, Արմինիա (771-772), Առան, 155: Բոլորի վրա հիշվում է Մահդի փոխարքայի հետ: Հիշված է նաև առանձին Բարդաա, 158 (774-775): Նրա օրոք ծագեց 774-775 թթ. մեծ ապստամբություններ Հայաստանում Մուշեղ Մամիկոնյանի գլխավորությամբ. Ղևոնդ, 137-152: (Տեր-Ղևոնդյան, Արմ. ոստիկանների ժամանակագրություններ):

73 Կամախ (Քամախ) - Քաղաք և ամրոց Մեծ Հայքի Բարձր Հայք աշխարհի Դարանաղի գավառում, գտնվում է Արևմտյան Եփրատի ձախ ափին: (ՀՀՇՏԲ, հ. 2, էջ 913):

75 Ջայհան գետ – Ջեյհան, գետ Միջերկրական ծովի ավազանում, Կիլիկիայում:

76 Մուհամմարաներ – Մուհամմարաներ, կամ Մուհամմիրաները (կարմրագգեստներ) Բաբեկի Խուռամյաններն էին: Խուռամյաններին երբեմն կապում էին Մազդաքյան չարժման հետ, իսկ վերջիններիս կոչում կարմիր հագուստ կրողներ, արաբերեն «մուհամմիրա»: (Իբն ալ-Ասիր, էջ 380 և Mazdak, M. Guidi [M. Morony], EOI, CD-ROM, (VI: 949a)):

77 Հարուն – Հարուն իբն Մուհամմադ իբն Արդ Ալլահը, կամ Հարուն ալ-Ռաշիդը Աբբասյան հինգերորդ խալիֆան է, որի անունը առավել հայտնի է որպես հեքիաթային անձնավորության: Երիտասարդ տարիքում մասնակցելով բյուզանդացիների դեմ արշավանքների նա իրեն դրսևորեց որպես օժտված զորավար: Նրա ղեկավարությամբ Աբբասյան բանակը հասավ մինչև Բոսֆորի ափերը: 786 թվականին նա հռչակվեց խալիֆա: Հարունը մեծապես հենվում էր իր վեզիրի՝ Յահյա իբն Խալիդի և նրա երկու որդիների՝ ալ-Ֆադլի և Ջաաֆարի վրա: Պարսիկ Բարմաքյանների այս ընտանիքը Հմուտ վարչարարությամբ 17 տարի կառավարեցին հսկա կայսրության տնտեսությունը: Այն բանից հետո, երբ 803 թվականին խալիֆան ոչնչացրեց այս ընտանիքը և հարքունիս գրավեց նրանց առասպելական հարստությունը, վեզիրների դերը պակասեց խալիֆայության մեջ: Հարունի գահակալությունը բոլորովին էլ այնպես անամպ չէր ինչպես մնացել է ժողովրդի հիշողության մեջ: Այն իրականում մշտական անհանգիստ քաղաքական վիճակների պատմություն է: Բավական է նշել, որ արդեն խալիֆայությունից անջատված Իսպանիայի Օմայան ամիրությունից բացի, Հենց Հարունի օրոք, նախ Մաղրիբում անկախացան Իդրիսիները, ապա Իֆրիկիայում իրենց պետությունը ստեղծեցին Ագլաբիները: Մշտական անհանգիստ վիճակում էին նաև արևելյան նահանգները: Հարուն ալ-Ռաշիդի ձեռք բերած հռչակը կապվում է ԹԵրևս այն հանգամանքի հետ, որ նա չհետում էր Աբբասյանների իշխանության

կրոնական բնույթը և հաղթական պատերազմներ մղեց Բյուզանդիայի դեմ: Պարտության մատնելով նախ Իրենե թագուհուն, ապա Նիկեփոր կայսեր, Հարուն ստիպեց վերջինիս ստորագրել ստորացուցիչ հաշտություն: Իշխեց մինչև 809 թ: (Harun al-Rashid, F. Omar, EOI, CD-ROM, (III: 232b)):

78 Մահդի խալիֆա – Աբու Արդ Ալլահ Մուհամմադը, կամ ալ-Մահդին Մանսուր խալիֆայի որդին էր և Աբբասյան Թվով երրորդ խալիֆան: Նա գահին բազմեց 775 թվականին, Բաղդադում: Նա ևս, իր հոր նման, հենվում էր խորասանյան բանակի վրա: Նա իր նախորդներից ավելի ընդգծում էր խալիֆայի դերը որպես իսլամի պաշտպան: Նրա այս կրոնապաշտության մի նշանն էլ իր պատվանունն է՝ ալ-Մահդի, որ նշանակում է մեսիա, փրկիչ: Մահդիի գահակալությունն հիմնականում խաղաղության ու ծաղկման շրջան էր խալիֆայության համար: Մահդին մահացավ 785 թվականին, որի ժամանակ, մի պատահարի հետևանքով: (al-Mahdi, H. Kennedy, EOI, CD-ROM, (V: 1238a)):

79 Ռաս ալ-Այն – Քաղաք Վերին Միջագետքում, Եղեսիայի շրջանում (ՀՀՇՏԲ, հ. 4, էջ 439):

80 Սարրաթ – կամ Սարրաղ. Տիգրիսի վտակներից մեկը, հոսում էր Արդն քաղաքի միջով:

81 Խլաթ (Խիլաթ) - Քաղաք և նավահանգիստ Բիթլիսի նահանգում, Վանա լճի արևմտյան ափին, Հնում հիշատակվում է որպես Մեծ Հայքի Տուրուբերան աշխարհի Բդնունիք գավառի բարգավաճ քաղաքներից մեկը: Խլաթը վարչական մեծ նշանակություն ստացավ է դարից, երբ այն Մամիկոնյանների նստավայրն էր: Այստեղ կար միջնաբերդ և Ը դարում արաբական կայազոր էր նստում: (ՀՀՇՏԲ, հ. 2, էջ 737 և Իբն ալ-Ասիր, էջ 369):

82 Կիսաա – Նկատի ունի Իրենե կայսրուհուն: Ապրել է 752-803 թթ.: Լևոն Դ կայսեր (775-780) կինն էր: Ամուսնու մահվանից հետո եղավ խնամակալ, ապա նաև աթոռակից իր որդուն՝ Կոնստանտին Զ-ին: Ապա կուրացրեց որդուն և ինքը դարձավ կայսրուհի 792-802 թվականներին: Նրա օրոք Բյուզանդիան պարտվեց արաբներին ու բուլղարներին ու նրանց հարկ էր վճարում: 802 թ. Կայրս Մեծր ամուսնական առաջարկ արեց Իրենեին, նպատակ ունենալով միավորել երկու կայսրությունները, սակայն բանակցությունների ընթացքում Իրենեն գահընկեց արվեց: (Сов. Ист. Энц., т. 6, стр. 286-287):

83 Նիկիֆուր – Նոսքր Նիկեփոր կայսեր մասին է: Իշխանության գլուխ անցավ 802-ին Իրենե կայսրուհու գահընկեցությունից հետո: Արաբների դեմ անհաջող պատերազմից հետո, 806-ի հաշտության ստիպված էր մի չարք քաղաքներ դիջել նրանց: Սպանվեց Բուլղարիայի դեմ պատերազմի ժամանակ: (Сов. Ист. Энц., т. 10, стр. 213).

84 Այն Զաբբա – կամ Անազարբա. քաղաք է Կիլիկիայում: Բուռ արաբերեն թարգմանվում է որպես «Հոսուն աղբյուր»: Հայերը այն անվանել են «Ածաւարզա», կամ «Անարզարա»: Կոստանդիանոսի նոր քաղաքական օրենքով, երբ Կիլիկիան երեք մասերի բաժանվեց, Անարզարան դարձավ Երկրորդ Կիլիկիայի մայրաքաղաքը: «Աշխարհացույցի» մեջ Անարզարան հիշատակվում է, որպես Կիլիկիայի մայրաքաղաք՝ Տարսոնի հետ միասին, որը Առաջին Կիլիկիայի մայրաքաղաքն էր: 525 թ. Հուստինիանոսը նորոգեց երկրաշարժից վնասված քաղաքը և կոչեց Հուստինիանուպոլիս: Արաբների գրավումից հետո, որպես սահմանային գոտու քաղաք, կարևորություն ստացավ: Հարուն խալիֆան վերանորոգեց ու ամրացրեց այն 796 թվականին: (Նալբանդյան, Արաբական աղբյուրներ, էջ 186-187):

85 Քանիսատ ալ-Սաուդա - արաբ. նշանակում է Սև եկեղեցի, Հավանարար Սև լեռների (Ամանոսյան) լեռների վրա գտնվող վանքերն են: (Վ. Տ. -Ղ.)

86 Մաֆեր (ալ-դուֆեր) - Գնչուներին տրված անվանումներից մեկը:

ԻԲՆ ԿՈՒՏԱՅԲԱ (828–889)

Աբու Մուհամմադ Աբդալլահ իբն Մուսլիմ ալ-Դինավարի Իբն Կուտայբան 9-րդ դարի արաբ խոշորագույն մատենագիրներից է: Նա հայտնի է որպես կրոնագետ, բանասեր և «ադաբի» (լայն իմաստով հումանիտար գիտությունների ողջ համակարգը) մասնագետ: Նա Խորասանից ծագող մի պարսիկ արաբացած ընտանիքից էր, իսկ մոր կողմից՝ ծագում էր Բասրայից:

Իբն Կուտայբան ծնվել է Քուֆայում, 828 թ.: Նրա մանկության ու պատանեկության մասին քիչ բան է հայտնի: Նա ունեցել է նշանավոր ուսուցիչներ մահմեդական աստվածաբանության ու բանասիրության բնագավառում: Նրա աշխատություններն իրենց վրա են հրավիրում ժամանակի վեզիրի ուշադրությունը, որը հավանաբար նպաստում է, որ Իբն Կուտայբան դատավոր նշանակվի Դինավարում, մոտավորապես 851 թ.: 871 թվականից հետո Իբն Կուտայբան նվիրվում է իր իսկ երկերի ուսուցմանը Բաղդադի մի չրջանում, որտեղ նա ապրում է մինչև իր մահը՝ 889 թվականին:

Իբն Կուտայբան հեղինակ է մեծ թվով (չուրջ մեկուկես տասնյակ) բազմաժանր աշխատությունների, որոնց մեծ մասը հրատարակված է: Բայց ունի նաև երկու երկեր, որոնք դեռևս անտիպ են:

(Ibn Kutayba, G. Lecomte, EOI, CD-ROM, (III: 844b))

Տե՛ս նաև.

– Ibn Kutayba, Kitab al-Maarif, ed. Ukasha, Cairo, 1960

ԻԲՆ ԿՈՒՏԱՅԲԱ

ԳԻՐՔ ԻՄԱՑՈՒԹՅԱՆ
(ՔԻՏԱԲ ԱԼ-ՄԱԱՐԻՖ)

Լ 12

Նոյն այդ բանը կատարեց (կառուցեց տապանը) և Ալլահն ուղարկեց ջրհեղեղը երկրի վրա:

[Տապանը] մնաց ջրերի վրա հարյուր հիսուն օր:

Վեցերորդ ամսում կանգնեց Կարդա[1] լեռան վրա, իսկ տասներորդ ամսում երևացին լեռների գագաթները:

Իսկ Վահբն ասել է, թե մեզ պատմել են, որ տապանը (նավը) ճանապարհ ընկավ Ռաջաբ ամսի վերջից տասն օր մնացած (Ռաջաբի 20) և մնաց տապանի վրա հարյուր հիսուն օր, ապա մեկ ամիս կանգնեց Արարադ (Ջուդի)[2] լեռան վրա, որը լեռ է Ջազիրա երկրում և (մարդիկ) դուրս եկան Մուհառամ ամսի վերջից տաս օր մնացած (Մուհառամի 20):

Երբ դուրս եկան, կառուցեցին Կարդա գյուղը, որը կոչվեց Սամանին[3] (Թամանին, ութսուն), քանզի նրանում կար ութսուն տուն, յուրաքանչյուրը ամեն մեկի համար, որը նրա (Նոյի) հետ ազատվել էր: Մինչև օրս էլ կոչվում է Սամանինի չուկա:

ՆՎԱՃՈՒՄՆԵՐԸ

Խորասանը նվաճվեց Օսման խալիֆայի[4] օրոք հաշտության [պայմանով]: Ինչ վերաբերում է Թաբարիստանին, Վրկանին (Ջուրջան) ու Ռեյին, ապա վերջինս նվաճվել է Օսման իբն Աֆֆանի[5] խալիֆայության ժամանակ հաշտության [պայմանագրով] Աբու Մուսա ալ-Աշաարիի կողմից, իսկ Թաբարիստանը նվաճել է Սաադ իբն ալ-Ասը հաշտության [պայմանագրով] Օսմանի օրոք:

Քիրմանն ու Սիջիստանը նվաճել է Աբդալլահ իբն Ամիր իբն Քարիզը հաշտության [պայմանագրով], Ջարալն ամբողջովին նվաճվել է բռնի ուժով, իսկ Ահուազը, Ֆարսը նույնպես նվաճվել են բռնի ուժով:

Սավադն ամբողջովին բռնի ուժով է նվաճել Սաադը Օմարի խալի-

ֆայության ժամանակ, Ջազիրան հաշտության [պայմանագրով] նվաճել է Իյադ իբն Ղանմը: Ինչ վերաբերում է Ասորիքին (Շամ), ապա Աջնադինը նվաճեց հաշտության [պայմանագրով] Աբու Բաքրի խալիֆայության ժամանակ, իսկ Օմար իբն ալ-Խաթթաբը նվաճեց Սուրբ քաղաքը (Երուսաղեմ): Ասորիքի բոլոր քաղաքները նվաճվել են Օմարի օրոք[6] հաշտության [պայմանագրով], սակայն ոչ նրա հողային տիրույթները, որոնք բռնի ուժով են նվաճվել Յազիդ իբն Աբու Սուֆիանի, Շուրահբիլ իբն Հասանայի, Աբու Ուբայդայի ու Խալիդ իբն ալ-Վալիդի ձեռքով: Եգիպտոսը նվաճվել է հաշտության [պայմանագրով] Ամր իբն ալ-Ասի ձեռքով: Մաղրիբը, որն Իֆրիկիան է, նվաճվել է բռնի ուժով: Սահմանային ամրությունների գոտին (սուղուր) և Կեսարիան նվաճվել են Օմարի օրոք՝ բռնի ուժով:

Լ 199

Ապա Մամունը գնաց Տարսոն (Թարսուս) երկու հարյուր տասնհինգ թվականի Մուհառամ ամսին (28 փետրվար – 29 մարտ 830): Նա հարձակվեց հռոմեների վրա ու նվաճեց Կուռա[7], Խարսիանոն (Խարչանա)[8] և Սամալու[9] ամրոցները: Ապա վերադարձավ Դամասկոս, հետո գնաց Եգիպտոս ու կրկին վերադարձավ Դամասկոս:

Նա կրկին արշավեց հռոմեների դեմ երկու հարյուր տասնյոթ (7 փետրվար 832 – 26 հունվար 833) թվականին: Այդ տարի նվաճվեց Լուլուան[10] և նա հրամայեց կառուցել Տիանան (Թուանա)[11]: Վերջապես Մամունը վերադարձավ ու գնաց Ռակկա:

Ապա նա վերստին դիմեց դեպի հռոմեների երկիրը և մնաց Պոտանդոն (Բազանդուն) գետի[12] մոտ երկու հարյուր տասնյոթի թվականի Ռաջաբ ամսի տասնյոթին (7 օգոստոս 833): Նրա մարմինը փոխադրվեց Տարսոն և այնտեղ թաղվեց:

[Մուտասիմի օրոք] հռոմեները պաշարեցին Զապետրան (Զիբաթրա)[13]: Ապա Իսհակն արշավեց նրանց դեմ, ասպատակեց Ռումի երկիրը երկու հարյուր քսաներեք թվականի Ջումադա Ա ամսին (31 մարտ – 29 ապրիլ 838) և գրավեց Ամորիոնը (Ամմուրիյա)[14] նույն տարվա Ռամադան ամսին (27 հուլիս – 25 օգոստոս 838):

ԳԻՐՔ ԻՄԱՑՈՒԹՅԱՆ
(ԿԻՏԱԲ ԱԼ-ՄԱԱՐԻՖ)

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 *Կարդա լեռ – Տե՛ս Վակիդի, ծնթգր. 1:*

2 *Արարաղ (Զուդի) լեռ – Տե՛ս Վակիդի, ծնթգր. 3:*

3 *Կարդա գյուղ (Սամանին) – Կարդա է կոչվում չրջանը, որ գտնվում է Վերին Միջագետքում (Ջազիրա), որի չուրջ 200 բնակավայրերից (գյուղերից) գլխավորներն են ալ-Ջուդին և Սամանինը: (Karda and Bazabda (Ed.), EOI, CD-ROM, (IV: 639a)):*

4 *Օսման խալիֆա – Տե՛ս Աբու Յուսուֆ, ծնթգր. 34:*

5 *Օսման իբն Աֆֆան – Նույն Օսման խալիֆան է:*

6 *Ծմարի օրոք – Տե՛ս Աբու Յուսուֆ, ծնթգր. 1:*

7 *Կուռա – Կուռա կամ Կուրրա բերդը գտնվում էր Կապադովկիայի կողմերում: (Իբն ալ-Ասիր, էջ 378):*

8 *Խարսիանոն (Խարչանա) – Բյուզանդական բանակաթեմ Փոքր Հայքում (ըստ Ալպոյաճյանի՝ Կապադովկիայում) 9-10-րդ դարերում: Կենտրոնն էր Կեսարիան, մյուս նշանավոր քաղաքներն էին՝ Նյուսա, Թերմա, Հռեկեպոտանդոս (Հռեգեպոդանդոս): Մտնում էր հայկական բանակաթեմի մեջ: Բաղկացած էր առաջին Գայաթիա և առաջին Կապադովկիա քաղաքային վարչություններից: (ՀՀԾՏԲ, հ. 2, էջ 710):*

9 *Սամսոլու – ամրոց Փոքր Հայքում: Հնարավոր է, որ համապատասխանում է ուչ չրջանի Սամսիլ անունով բնակավայրին կամ միջնադարյան Ծամնդավ (Սամանդու) ամրոցին: (ՀՀԾՏԲ, հ. 2, էջ 840, հ. 4 էջ 484):*

10 *Լուլուա – Բերդ Լեռնային Կիլիկիայում, Լամբրոնի գավառում, Տարսոն տանող ճանապարհին, Գուզլակի լեռնանցքի հյուսիսային ծայրամասում: (ՀՀԾՏԲ, հ. 2, էջ 605):*

11 *Տիանա (Թուանա) – Քաղաք Կապադովկիայում:*

12 *Պոտանդոն (Բաղանդուն) գետ – Հավանաբար Սարոս գետի վտակներից է, որի վրա է գտնվում նաև Համանուն բնակավայրը Տավրոսյան լեռների հարավահայաց լանջին, Տարսոնի ճանապարհին:*

13 *Զապետրա (Զիբաթրա) — ամրոց Փոքր Հայքում, նրա հարավային կողմում, Սամոսատ – Մելիտինե ճանապարհին: (ՀՀԾՏԲ, հ. 2, էջ 269):*

14 *Ամորիոն (Ամմուրիյա) – Նշանավոր ամրոց Փոյուգիայում: Գտնվում է Բյուզանդիայի ռազմական մեծ ճանապարհի վրա Կոստանդնուպոլսից՝ Կիլիկիա: Տեղադրված է Դորիլեումից՝ հարավ-արևելք և Անկյուրայից՝ հարավ-արևմուտք (Ammuriya, M. Canard, EOI, CD-ROM, (I: 449a)):*

ԱԲՈՒ ՀԱՆԻՖԱ ԱԼ-ԴԻՆԱՎԱՐԻ
(մահ. 895)

Աբու Հանիֆա Ահմադ իբն Դաուդ ալ-Դինավարին իրանական ծագումով արաբագիր հեղինակ է: Թեև նրա երկը հետագայում բազմիցս հիչատակվում է այլ պատմիչների կողմից, սակայն Դինավարիի կյանքի վերաբերյալ քիչ բան է հայտնի:

Նրա պատմական երկը կոչվում է «Մատյան երկարապատում ավանդությունների» (Քիտաբ ալ-Ախբար ալ-Թիվալ): Դինավարին առաջին հերթին ծանոթ է որպես պատմիչ, բայց հեղինակ է նաև, իր տեսակի մեջ բավական լուրջ, աստղաբաչխական բովանդակությամբ մի աչխատության, որ կոչվել է «Քիթաբ ալ-Անուա» ինչպես նաև բուսանունների վերաբերյալ «Քիտաբ ալ-Նաբաթ» երկի:

Ներկա թարգմանությունը կատարված է հետևյալ հրատարակությունից. Abu Hanifa al-Dinawary, al-Akhbar al-Tiwal, Beyrouth, առանց թվականի:

(Крачковский, IV, стр. 118-119, *al-Dinawari, Abu Hanifa, B. Lewin, EOI, CD-ROM, (II: 300a)).*

Տե՛ս նաև.

- Abu Hanifa ad-Dinaweri, Kitab al-Akhbar at-Tiwal. Préface, variantes et index publiés par Ignace Krarchkovsky. Leide, 1912.

- Abu Hanifa ad-Dinaweri, Kitab al-Akhbar at-Tiwal, Publié par Vladimir Guirgass, Leide, 1888.

ԱԲՈՒ ՀԱՆԻՖԱ ԱԼ-ԴԻՆԱՎԱՐԻ

ՄԱՏՅԱՆ ԵՐԿԱՐԱՊԱՏՈՒՄ ԱՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (ԿԻՏԱԲ ԱԼ-ԱԽԲԱՐ ԱԼ-ԹԻՎԱԼ)

ԷՋ 1

Ապա Ալլահն ուղարկեց Նոյին իր զարի մարդկանց և նա բնակվեց Իրաքի երկրում: Սա՝ Նոյը որդի Ղամնքի, որդի Մաթուսաղայի, որին մարդիկ սուտ համարեցին, և Ալլահը նրանց խեղդեց, իսկ Նոյին ու տապանում նրա հետ եղածներին փրկեց: Տապանը նստեց Արարադ (Ջուդի) լեռան գագաթին, որը գտնվում է Կարդայում ու Բազաբդայում՝ Ջազիրայի հողում:

ԷՋ 3

Երբ նրանք դուրս եկան, Նոյի որդիները կամեցան դուրս գալ Բաբելոնից: Դուրս եկավ Խորասանը՝ որդին Ասամի, որդին Սեմի (Սամ) ու հաստատվեց Խորասանում և Ֆարիսը՝ որդին Ասուարի, որդին Սեմի և Ռումը՝ որդին ալ-Յաֆարի, որդին Սեմի և Իրմինը (Արմինը)՝ որդին Նաուրաջի, որդին Սեմի, որը Հայաստանի (Արմինիա, Իրմինիա) տերը դարձավ:

ԷՋ 66

Ապա Կավատը պատրաստվեց ու գնաց իր զորքով, արշավեց Ռումի երկիրը: Նա գրավեց Ամիդը և Նփրկերտը, գերեվարեց ժողովրդին: Նրա հրամանով կառուցվեց մի քաղաք, Ֆարսի ու Ահուազի միջև, որը բնակեցրեց նրանցով և անվանեց Իրկավատ (Իրկուրադ), որը Վերին Ռստանն է (Ռստան ալ-Ալա) և նրան չորս թասուջ հատկացրեց:

ԷՋ 67

Ապա Խոսրով Անուշիրուանը[1] իր թագավորությունը բաժանեց չորս մասերի և ամեն մի քառորդում իր վստահելիներից մեկին նշանակեց: Քառորդներից մեկն [ընդգրկում էր] Խորասանը, Սիջիստանը, Քիրմանը, երկրորդը՝ Սպահանը, Կումը, Ջաբալը, Ատրպատականը,

Հայաստանը, երրորդը՝ Ֆարսը, Ահուազը՝ մինչև Բահրայն, իսկ չորրորդը՝ Իրաքը մինչև Ռումի թագավորության սահմանները: Այս չորս մարդկանց ամեն մեկին բացառիկ պատիվ ու հարգանք ցուցաբերեց:

ԷՋ 78-82

Որմիզդը (Հուրմուզդ)[2] միշտ հաղթական էր, ինչի որ ձգտեր՝ ձեռք էր բերում, նրա զորքերը երբևք չէին պարտվել և միշտ բացակա էր Տիգրոնից (Մադաին)՝ ձմեռելով Սավադում (Ստորին Միջագետք), կամ ամառն անցկացնելով Մահում:

Սակայն նրա թագավորության տասնմեկերորդ տարում թշնամիներն ամեն կողմից չրջապատեցին նրան, ինչպես լարը փաթաթվում է աղեղի երկու ծայրերին: Արևելյան կողմից Թուրքաց Շահինշահը հարձակվեց մինչև Հերատ և վտարեց Որմզդի կառավարիչներին: Արևմտյան կողմից Ռումի (Բյուզանդիայի) թագավորը[3] եկավ ու հասավ Մծբին (Նասիբին), վերագրավելու Ամիդը, Նփրկերտը (Մայյաֆարիկին), Դարան և Մծրինը, իսկ Հայաստանի կողմից եկավ խաղարաց թագավորը[4] և ներխուժեց Ատրպատական և ասպատակ սփռեց:

Երբ այս լուրերը հասան Որմզդին, նախ դիմեց կայսրին (կայսար) ու վերադարձնելով նրան այն քաղաքները, որ իր հայրը խլել էր, հաշտություն ու բարեկամություն խնդրեց: Կայսրը նրան ընդառաջեց ու հեռացավ:

Ապա գրեց Հայաստանի ու Ատրպատականի իր կառավարիչներին, որոնք հավաքվեցին ու դեմ կանգնեցին խաղարաց տիրոջը, մինչև որ հեռացրին իրենց հողից: Երբ այս բոլորը վերջացավ, ուշադրությունը սևեռեց Թուրքաց տիրոջ վրա, որն ամենահզոր թշնամին էր և գրեց Սահմանային ամրություններ [հանդիսացող] Ատրպատականի ու Հայաստանի կառավարիչ Վահրամ Վչնասպի (Բահրամ Ջուչնաչ) որդի Վահրամին, որը կոչվում էր Վահրամ Ջուբին[5], հրամայելով նրան ժամանել, իսկ նա չուտափույթ եկավ: [Արքան] թույլ տվեց ու նա մտավ նրա մոտ և նրա աստիճանը բարձրացրեց, մեծ պատիվներ չնորհեց և առանձնանալով տեղեկացրեց գործի մասին, թե պետք է գնար Թուրքաց Շահինշահի դեմ: Վահրամը հայտնեց իր պատրաստակամությունն ու հնազանդությունը: Որմիզդը հրամայեց, որ Վահրամին տաննն գանձարաններն ու գինանոցները և տրամադրության տակ դնեն զորքի դիվանը, որպեսզի ընտրի՝ ում որ հավանի: եկավ Վահրամը զորքի դիվանը և հավաքեց մարզպաններին ու ազնվականներին (աշրաֆ), ընտրելով տասներկու հազար հեծյալների, միայն քառասունն անց մարդկանցից:

Վահրամը չարժվեց ու մտավ Ահուազի ճանապարհը, իսկ Թուրքաց Թագավորը լսեց իր դեմ պատերազմելու եկող զորքի գալստյան մասին: Սակայն Որմիզդ Թագավորը նախապես Թուրքաց Թագավորին ուղարկել էր իր մարզպաններից մեկին, որը կոչվում էր Հուրմուզդ Ջուրաբիզին, որը պարսիկների ամենախորամանկ ու նենգաբարո մարդկանցից էր. ու պատվիրեց նրան, որ հայտնի, թե ինքը Թագավորի (Որմզդի) դեսպանն է և ուղարկված է հաշտություն կնքելու և նրան գոհացնելու: Եկավ Հուրմուզդ Ջուրաբիզինը և նենգությունն բանեցնելով կարողացավ նրան ետ պահել Խորասանն ասպատակելուց: Երբ Որմիզդն իմացավ, որ Վահրամը մոտեցել է Հերատին, գիշերանց չարժվեց ու հասավ Վահրամին:

Երբ Թուրքաց Թագավորն իմացավ զորքի գալուստը, իր պահակների պետին հրամայեց՝ անմիջապես ինձ մոտ կրերես այդ խորամանկ պարսիկին: Սակայն փնտրեցին ու չգտան, քանզի գիշերանց փախել էր:

Խաքանը Հերատից դուրս եկավ Վահրամին հանդիպելու, իսկ նրա առաջապահ զորքը քառասուն հազար էր: Երբ իրար դեմ դուրս եկան՝ նա Վահրամին մարդ ուղարկեց առաջարկելով՝ միացիր ինձ և ես քեզ Իրանշահրի[6] Թագավոր կդարձնեմ և իմ ամենամերձավորը կհամարեմ: Վահրամը պատասխանեց՝ ինչպե՞ս ինձ կարող ես Իրանշահրի Թագավոր դարձնել, երբ նրա Թագավորությունը պատկանում է մի այնպիսի տոհմի, որից ոչ ոք կարող է խլել իշխանությունը, իսկ դու պատրաստվիր պատերազմի:

Զայրացավ Թուրքաց Թագավորն այս խոսքերից ու հրամայեց ռազմի չափորը հնչեցնել ու երկու զորքերն իրար դեմ գրոհեցին: Թուրքաց Թագավորը նստած էր ոսկե գահին, մի բլրի վերևում, որն իշխում էր երկու կողմերի վրա: Երբ կռիվը բորբոքվեց, Վահրամն իր զորքի քաջերից հարյուր ձիավորներով դիմեց բլուրը, իսկ Թուրքաց Թագավորին չրջապատող մարդիկ ցրվեցին: Երբ Թագավորն այս տեսավ, ուզեց իր ձին, սակայն Վահրամն այդ հասկանալով նետ արձակեց, որը կպավ նրան ու ընկավ մեռած և Թուրքերը փախուստի դիմեցին:

[Վահրամը] Որմիզդ Թագավորին ուղարկեց այն, ինչ Շահինշահի ճամբարում ավարել էր, ինչպես նաև ոսկե գահը և այս ամբողջը երեք հարյուր ուղտի բեռ էր: Երբ ավարը բերվեց Որմզդի մոտ, ցուցադրվեց նրան և նրա չուրջ կանգնած էին նրա վեզիրներն ու մեծամեծ մարզպանները: Այնժամ նրա մեծ վզուրկ (վեզիրների պետ) եզդան Վչնասպը (Յազդան Ջուչնաս) ասաց՝ ով արքա, արդյոք խնջույքի սեղանն ավելի մեծ չէր, քան այս պատառը: Այս խոսքերը կպան Որմզդի սրտին և սկսեց կասկածել Վահրամի հավատարմությանը ու կարծեց, որ իրոք այնպես է, ինչպես ասաց եզդան Վչնասպը, և ինչպիսի

աղետներ, պատերազմներ ու դժբախտություններ պատահեցին այս մեկ խոսքի պատճառով:

Որմիզդն այնպես զայրացավ ու կատաղեց Վահրամի դեմ, որ մոռացավ նրա բարի ծառայությունները և Վահրամին ուղարկեց մի չղթա, կանացի գոտի և մանելու ճախարակ: Նա գրեց թե՝ ես իմացա, որ դու այդ ավարից միայն փոքր մասն ես ուղարկել և հանցավորը ես եմ, որ քեզ պատիվներ եմ տվել: Քեզ ուղարկում եմ մի չղթա, որ վզիդ գցես, կանացի գոտի, որ մեջքիդ կապես և մանելու ճախարակ, որ ձեռքիդ պետք է, պահես, քանզի դավաճանությունը և ուխտազրժությունը կանացի բարքեր են:

Երբ այս բաներն ստացավ Վահրամը, սաստիկ վրդովվեց և հասկացավ, որ դա բանսարկություն է: Նա գրեց չղթան իր վզին, գոտին կապեց իր մեջքին, ձեռքը վերցրեց մանելու ճախարակը, ապա թույլ տվեց իր մեծամեծներին ու մերձավորներին, որ իր մոտ գան ու կարդաց նրանց Թագավորի նամակը: Երբ մերձավորները լսեցին, հիասթափվեցին Թագավորից և իմացան, որ նա երախտապարտ չի եղել իրենց ծառայությունների համար: Ասացին՝ մենք կաննենք այն, ինչ մեր հին ապստամբներն են ասել՝ ո՛չ Արտաշիրը Թագավոր է, ո՛չ էլ Յազդանը՝ վեզիր: Իսկ մենք կասենք՝ ո՛չ Որմիզդը Թագավոր է, ո՛չ էլ Յազդան Վչնասպը ՝ վեզիր: Իսկ հին ապստամբների պատմությունն այս է. Արտաշիր Պապականի[7] մոտ եկել էին քրիստոնյա քարոզիչներ և նա ընդառաջելով նրանց Քրիստոսի կրոնն ընդունեց և նրան հետևեց նաև վեզիրը՝ Յազդանը, իսկ պարսիկները զայրացան և ուզեցին գահընկեց անել Արտաշիրին, սակայն նա հրաժարվեց այդ մտքից և նրան թողեցին Թագավորության մեջ:

Վահրամի մերձավորներն ասացին նրան՝ եթե դու մեզ հետ համաձայնես Որմզդին գահընկեց անելու և նրա դեմ ապստամբելու՝ լավ է, ապա թե ոչ, մենք քեզ կհեռացնենք և ուրիշին հրամանատար կդարձնենք: Երբ նա տեսավ նրանց միաբանությունը, համաձայնեց մեծ ցավով, վշտով ու դժկամությամբ:

էջ 83

Ապա Վահրամը գնաց իր զորքով Իրաք, կռվելու Որմիզդ արքայի դեմ, մինչև որ հասավ Ռեյ ու մնաց այնտեղ: Նա դիրհեմներ կտրեց Թագավորի որդու՝ Խոսրով Պարուեզի[8] պատկերով, նկարով և անունով, և թողարկեց հազար դիրհեմ: Նա հրամայեց, որ դիրհեմները գան դտնի տանեն ու գցեն Տիզրոնում և այդպիսով մարդկանց մեջ տարածվեց:

Որմիզդը լսեց այդ մասին և կասկածեց, որ որդին՝ Խոսրովը, փորձում է գրավել Թագավորությունը և հենց ինքն է դիրհեմներ թողար-

կել: Ահա այդ էլ ուզում էր Վահրամը: Թագավորը վճռեց սպանել իր որդուն՝ Խոսրովին, որը գիշերանց փախավ Տիզրոնից Ատրպատական, ուր հասավ ու մնաց: Թագավորը կանչեց Բենդույին (Բինդավայհ) ու Գուստեհմին (Բիստամ), որոնք Խոսրովի քեռիներն էին, հայտնեց Խոսրովի մասին, իսկ նրանք ասացին՝ մենք չգիտենք: Նա կասկածեց ու հրամայեց երկուսին էլ բանտարկել:

էջ 84

Թագավորի դռանը (պալատում) մեծամեծներն ու ազնվականները և մարզպանները լսեցին Յազդան Վշնասպի սպանության մասին, իսկ նա բոլորի մեծն էր: Նրանք իրար մոտ նկան ու որոշեցին թագավորին հեռացնել և թագավորեցնել Խոսրովին: Այս բանին նրանց մղեցին ու համոզեցին Խոսրովի երկու քեռիները՝ Բենդույն ու Գուստեհմը, որոնք բանտարկված էին:

Ապա նկան ու Որմիզդ թագավորին տապալեցին գահից, վերցրին նրա թագն ու գոտին, սուրն ու պատմուճանը և ուղարկեցին Խոսրովին, որն Ատրպատականում էր:

էջ 86

Վահրամը Ռեյում էր, երբ լսեց կատարվածը: Նա սաստիկ զայրացավ Որմզդի համար ու բորբոքվեց, կատաղեց ու ոռնալով իր ատելությունը [արտահայտեց], եկավ իր զինվորների հետ՝ նպատակ ունենալով սպանել Խոսրովին ու նրա կողմնակիցներին և Որմզդին վերստին հանձնել թագավորությունը:

էջ 87

Խոսրովն արագ ընթանալով հասավ Տիզրոն (Մադային) ու մտավ իր հոր մոտ, սակայն չասաց, թե Վահրամը փորձում է թագավորությունն իրեն տալ, այլ ասաց՝ իմ բոլոր մերձավորները նրա կողմն անցան ու հարցրեց, թե ինչ կարծիք ունի: Ասաց՝ դու պետք է կայսրի մոտ գնաս և նա կարող է քեզ օգնել ու զորավիգ լինել և դու կկարողանաս քո թագավորությունը վերականգնել: Խոսրովը հոր ձեռքերն ու ոտքերը համբուրեց ու հրաժեշտ տվեց:

էջ 90

Վահրամն իր մոտ հավաքեց թագավորության երևելիներին և

ասաց՝ «արդեն իմացել եք, թե ինչ մեծ չարիք է գործել Խոսրովն սպանելով իր հորը և ապա փախել: Համաձա՞յն եք, որ այս թագավորության գործերը ես տնօրինեմ, մինչև Որմզդի որդի Շահրիարը հասունության հասնի և նրան հանձնեմ այն»: Մի խումբ համաձայնեց, սակայն մի ուրիշ խումբ հրաժարվեց: Հրաժարվողներից էր Հայազգի Մուշեղը[9] (Մուսիլ ալ-Արմանի), որը մեծ մարզպաններից էր և ասաց Վահրամին՝ «ով սպահպետ (իսբիհբադ) դու չպետք է այն աննս, քանզի Խոսրովը թագավորության տերն է և ողջերի մեջ նրա ժառանգորդը»: Ասաց Վահրամը՝ «ով համաձայն չէ, թող Տիզրոնից հեռանա և եթե երեք օր անց հանդիպեմ մեկին, որը համաձայն չլինելով մնացել է Տիզրոնում, գլուխը կտրելու եմ»: Հեռացավ Հայազգի Մուշեղն իր համախոհներով, որոնք մոտավորապես քսան հազար էին և գնացին Ատրպատական ու կանգ առան, սպասելով Խոսրովի գալստյանը Ռումի երկրից:

էջ 91

[Բենդույը] ծպտված փախավ, գիշերը քայլելով, իսկ ցերեկը թաքստոց մտնելով, մինչև որ հասավ Ատրպատական և մնաց Մուշեղի ու նրա զորքի հետ:

էջ 92

Ասաց կայսրը, միթե հնարավոր է, որ թագավորներից օգնություն խնդրեն և նրանք չաջակցեն: Նա Խոսրովին պայմանագրեր ու վավերագրեր տվեց, որպես բարեկամության նշան և նրան ամուսնացրեց իր Մարիամ դստեր հետ, ապա իր որդուն՝ Թեոդոսին իր քաջարի զինվորների հրամանատար նշանակեց, որոնց մեջ կային տաս [հազար] հոգի Հազարմարդին խմբից: Ապահովեց նրանց զրամով և սպառազինությամբ և հրամայեց նրա (Խոսրովի) հետ գնալ, իսկ ինքը՝ երեք օր ուղեկցեց նրանց:

Գնաց Խոսրովն այդ զորքով ու մտավ Հայաստան, ապա երբ հասավ Ատրպատական, նրան միացան իր քեռին՝ Բենդույը և Հայազգի Մուշեղը, ինչպես նաև իր մարզպաններն ու Ֆարսի մարզպանները:

Լսեց Վահրամ Զուբինը և եկավ Ատրպատական ու Խոսրովի ճամբարից մեկ փարասախ հեռավորության վրա բանակ դրեց: Ապա սկսեց կռիվը և Խոսրովի ու Թեոդոսի համար ոսկե գահ դրեցին մի բարձունքի վրա:

էջ 93

Զորրորդ օրը երկու զորքերը նորեն կռվի պատրաստվեցին ու պատերազմեցին և հաղթեց Խոսրովը, իսկ Վահրամը պարտված իր զինվորների հետ գնաց ճամբար:

էջ 127

Պարսիկները [Կադիսիայում][10] պարտվեցին ու մտան Տիգրոն և այնտեղ ամրացան: Մահմեդականները հարձակվեցին նրանց վրա Տիգրիսից այն կողմ: Այս տեսնելով Խուռազադը արևելյան դռնից գիշերով ելավ իր զինվորների հետ ու գնաց Ջալուլայի կողմը: Տիգրոնը դատարկվեց և մահմեդականները մտան ու մեծ ավար գտան այնտեղ:

Նրանք մեծ քանակությամբ քաֆուր[11] գտան ու կարծելով որ աղ է, հացի մեջ գցեցին, սակայն դառն համ ունեցավ:

Ասել է Միհնաֆ իբն Սուլայմը՝ այդ օրը լսել եմ, որ մի մարդ գոռում էր՝ ով կառնի կարմիր թևրթ (ոսկի) սպիտակ թևրթի (արծաթ) փոխարեն, մի ոսկե թևրթի համար, որը չգիտեր ինչ է:

էջ 154

[Ալին] Աչտարին նշանակեց Մոսուլի, Մծբինի, Դարայի, Սինջարի, Ամիդի, Նփրկերտի, Հիտի, Անատի և Ասորիքից նվաճած բոլոր հողերի կառավարիչ: Սա գնաց ու նրան հանդիպեց Դահհաք իբն Կայս ալ-Ֆիհրին, որը կառավարիչ էր նշանակված Մուավիա իբն Աբու Սուֆիանի կողմից: Նրանք Խաոանի ու Ռակկայի միջև պատերազմեցին, Մարջ[12] կոչված մի վայրում, մինչև երեկո: Լսելով այդ մասին, Մուավիան Դահհաքին օգնելու նպատակով մեծ հեծելազոր ուղարկեց Արդ ալ-Ռահման իբն Խալիդ իբն ալ-Վալիդի գլխավորությամբ: Այդ լուրն ստանալով Աչտարը հեռացավ Մոսուլ և այնտեղ դիմադրում էր Մուավիայի[13] ուղարկած զորքերին: Դրանից հետո տեղի ունեցավ Սիֆֆինի ճակատամարտը[14]:

էջ 281

Մեռավ Յազիդ իբն Մուավիա խալիֆան[15] և այդ ժամանակ Ուբայդալլահ իբն Զիյադը Բասրայի կառավարիչն էր և Հարիս իբն Աբբադ իբն Զիյադը մի բանաստեղծություն գրեց [Յազիդի մահվան մասին]:

Ուբայդալլահը հիացավ իր եղբորորդու խոսքերով, որոնք իմաստալից էին:

Ապա նա հրավիրեց [բանաստեղծության մասին կարծիք հարցնելու] իր Միհրան կոչված մաուլային, որն իր հնարամիտ խելքով, կրթությամբ ու մտքով համեմատում էր Ամր իբն ալ-Ասի մաուլա Վարդանի հետ:

էջ 296-297

Իբրահիմ իբն ալ-Աչտարը կանգ առավ Մաուսիլում և իր կառավարիչներին ուղարկեց Ջազիրայի քաղաքները. Իսմաիլ իբն Զուֆարին՝ Կիրկիսիայի վրա, Հաթիմ իբն Նուման ալ-Բահիլիին՝ Խառանի, Եղեսիայի, Սամոսատի վրա, Ումայր իբն Հուբար ալ-Սուլամիին՝ Քաֆր Տուսայի վրա, Սաֆֆահ իբն Քուրդուսին՝ Սինջարի վրա, Արդալլահ իբն Մուսլիմին՝ Նփրկերտի վրա, Մուսլիմ իբն Ռաբիա ալ-Ուկայլիին՝ Ամիդի վրա, իսկ ինքը գնաց Մծբին և այնտեղ կանգ առավ:

էջ 316

Արդ ալ-Մալիքը յոթանասունվեց (21 ապրիլ 695 – 9 ապրիլ 696) թվականին հրամայեց դիրհեմներ թողարկել, ապա հրամայեց դինարներ հատանել և նա առաջինն էր, որ իսլամի պատմության մեջ դրամներ է կտրել:

Իսկ մինչ այդ նաած դիրհեմներն ու դինարները պարսիկների (ազամ) թողարկածներն էին:

էջ 383

Աբու Ջաաֆարը[16] ցանկացավ իր անձի և իր զինվորների համար մի քաղաք կառուցել և այն դարձնել թագավորության մայրաքաղաք (դար ալ-մամլաքա):

Անձամբ գնաց տեղ փնտրելու, մինչև որ հասավ Բաղդադ, որն այդ ժամանակ մի գյուղ էր, ուր ամեն ամիս չուկա էր բացվում: Նա հավանեց այդ վայրը և իրեն, իր շքախմբի (հաշմ) ու մաուլաների, որդու և իր ընտանիքի համար մի քաղաք հատակագծեց՝ այն կոչելով Խաղաղության քաղաք: Իր ապարանքը նրա մեջտեղում կառուցեց, մեծ մզկիթի կողքին:

Ապա քաղաքի չորջը ծրագրով բնակեցրեց իր զինվորներին և Խորասանի ամեն մի կողմից նկածի համար մի հատուկ թաղամաս հատկացրեց: Մարդկանց հրամայեց կառուցումներ կատարել և ինքը մեծ գումարներ ծախսեց: Նրա հրամանով Եփրատից մի գետ

(Ջրանցք) բերվեց ութ փարսախի վրա, որի սկիզբը Դիմմիմայից էր: Այն հասցվեց մինչև Բաղդադ, որպեսզի նրա վրայով փոխադրվեն Ասորիքի ու Ջազիրայի ապրանքները, ինչպես Մոսուլի ու նրա հետ կապված [երկրների] ապրանքները Տիգրիսի վրայով [են փոխադրվում]: Այն կառուցվեց Հարյուր երեսունհինգ (756–757) թվականին:

էջ 390

[Ռաչիդն][17] այնտեղից (Ռակկա) դուրս եկավ արշավելու դեպի Ռումի երկիրը և գրավեց նրանց քաղաքներից մեկը, որը կոչվում է Մաասուփ, ապա վերադարձավ Ռակկա ու մինչև տարվա վերջը մնաց: Ուխտագնացության ժամանակ գնաց ուխտի և իր պարտքը կատարելուց հետո վերադարձավ Ռակկա ու մնաց այնտեղ: Նա Յազիդ իբն Մազիադին[18] Հայաստանի կառավարիչ նշանակեց, ապա նավ Ռակկայից հարյուր ութսունչորս (800) թվականին և հասավ Խաղաղության քաղաքը (Բաղդադ):

էջ 391

Հարյուր իննսուն (805–806) թվականին դուրս եկավ Ռումի դեմ արշավանքի, ներթափանցեց այդ երկիրը և հասավ Հերակլիա ու գրավեց:

[.....]

էջ 391–392

Հասավ հարյուր իննսուներկու (807–808) թվականը և այդ տարում Խուռամիները (խուռամիյա) առաջին անգամ հանդես եկան Ջաբալի հողում: Մուհամմադ ալ-Ամինը ուղարկեց Արդալլահ իբն Մալիք ալ-Խուզաիին, որը նրանց մեծ կոտորած տվեց և մնացածներին տարբեր կողմեր ցրեց:

էջ 401

Նա (Մամունը) եռանդուն էր, գործունյա, հպարտ, Աբբասի տան աստղն էր գիտության և իմաստության մեջ: Ամեն մի գիտությունից մի բան էր վերցրել և ամեն ինչի ընդունակ էր: Նա էր, որ Եվկլիդեսի գիրքը կարողացավ հռոմեների ձեռքից վերցնել և հրամայեց այն թարգմանել ու մանրամասնորեն մեկնել: Ժողով էր գումարում իր

խալիֆայության օրոք վիճելու համար կրոնների և ուսմունքների մասին: Այս բանում նրա ուսուցիչն էր Աբու-լ-Հուդայլ Մուհամմադ իբն Հուդայլ ալ-Ալլաֆը:

Նա մտավ Ջազիրա և Ասորիք ու երկար ժամանակ մնաց, ապա արշավեց Ռումի երկիրը, մեծ նվաճումներ կատարեց և հաջողության հասավ:

Մեռավ Պոտանդոն (Բաղանդուն) գետի մոտ, թաղվեց Տարսոնում չորեքշաբթի օրը, երկու հարյուր տասնութ թվականի Ռաջաբ ամսի ութին (31 Հունիս 833):

Նրա իշխանության տևողությունն էր քսան տարի հինգ ամիս տասներեք օր: Նա երեսունհինգ տարեկան էր:

Նա հավատարմության երդում (բայաա) էր վերցրել իր որդու Աբբաս իբն Մամունի համար, որպես իրենից հետո գահաժառանգի:

Երբ նա մեռավ Պոտանդոն գետի մոտ, նրա եղբայր Աբու Իսհակ Մուհամմադ իբն Հարուն ալ-Մուտասիմ Բիլլահն իր մոտ հավաքեց հայտնի զորավարներին ու զինվորներին և կոչ արեց իր համար հավատարմության երդում տալ և նրանք տվեցին:

Նա եկավ Տարսոնից ու հասավ Բաղդադ, մտավ քաղաքը, հեռացված հայտարարեց Մամունի որդուն՝ Աբբասին, հաղթեց նրան և մարդիկ նրան հավատարմության երդում տվեցին:

Նա Բաղդադ եկավ երկու հարյուր տասնութ թվականի Ռամադան ամսի սկզբին (20 սեպտեմբեր 833): Մնաց երկու տարի, ապա թուրքերի հետ հեռացավ Սամառա[19], կառուցեց այն և իր նստավայրն ու բնակատեղին դարձրեց:

էջ 402

Նրա (Մուտասիմի) խալիֆայության չրջանում այնպիսի նվաճումներ կատարվեցին, որոնց նմանը նախկինում ոչ մի խալիֆայի ժամանակ չէր եղել:

Դրանցից էր Բաբեկի[20] դեմ հաղթանակը, նրա գերի ընկնելը ու սպանվելն ու խաչվելը: Թաբարիստան ամրոցի տեր Մազիարը, որն ամրացել էր բերդերում ու լեռներում, այնքան կռվեց, մինչև որ բռնվեց, սպանվեց ու խաչվեց Բաբեկի կողքին: Ապա Ջաաֆար ալ-Քուրդին, որն ավերել էր երկիրն ու գերեվարել երեխաներին, ահա նրա դեմ հնձյալ գնդեր ուղարկվեցին և այնքան կռվեց մինչև բռնվեց, սպանվեց ու խաչվեց Բաբեկի ու Մազիարի կողքին: Դրանցից էր նաև Ամորիոնի գրավումը, որը փոքրիկ Կոստանդնուպոլիսն է:

Բաբեկի չարժումն սկսեց Մամունի վերջին օրերին: Մարդիկ տարակարծիք են նրա ծագման և ուսմունքի մասին: Առավել հավաստի և հիմնավոր կարող ենք համարել այն, որ նա ծագում էր Մութահհարից, որի մայրն էր Աբու Մուսլիմի դուստր Ֆաթիման, որի անունով էլ նրանք կոչվել են Ֆաթիմիներ Խուռամյաններ և ոչ թե (ծագում է) Ալլահի առաքյալի դուստր Ֆաթիմայից:

Բաբեկն աճեց անվերջ խառնաչփոթության ու դժվարությունների չրջանում: Իր գործունեությունն սկսեց կոտորելով նրանց՝ ովքեր Բադդի[21] չրջակայքում էին գտնվում, ավերեց չրջակա բնակավայրերն ու գյուղերը, որպեսզի տիրի երկրին և դժվարացնի իրեն հետապնդելը և իր մոտ հասնելը: Նրա զորությունն ավելացավ և չարժումը ծավալվեց:

Երբ Մամունը լսեց այդ մասին, ուղարկեց Արդալլահ իրն Թահիր իրն ալ-Հուսայնին մեծ զորքով: Սա եկավ ու ճանապարհին կանգ առավ Դինավարում, նրա չրջակայքում գտնվող մի բնակավայրում, որը մինչև օրս գնո հայտնի է Արդալլահ իրն Թահիրի բերդ անվամբ և բոլորին հայտնի խաղողի այգի է: Նա գնաց ու հասավ Բադդ, իսկ այդ ժամանակ Բաբեկի ուժն ավելացել էր և մարդիկ վախենում էին նրանից: Նրանք կռվեցին նրա (Բաբեկի) դեմ, սակայն չկարողացան հաջողություն ունենալ և նա ցրեց նրանց բազմությունն ու սպանեց նրանց քաջերին:

Հենց որ խալիֆա դարձավ Աբու Իսհակ ալ-Մուտասիմ Բիլլահը, ապա իր ամբողջ եռանդը գործադրեց այս նպատակին: Նա միջոցներ ու զորք պատրաստեց, կանչեց իր մասլա Աֆշին Հայդար իրն Քաուսին: Աֆշինը մեծ զորքով եկավ Բարզանդ և այնտեղ մնաց, մինչև որ վրա հասավ լավ եղանակը և ճանապարհներում ձյունը հալվեց:

Ապա իր տեղակալ Յուբարային (Բուզբարա) և Ջաաֆար իրն Դինարին, որը հայտնի էր Ջաաֆար ալ-Խայյաթ անվամբ, ձիավորների մեծ զորքով ուղարկեց այն վայրը, ուր կար [Բաբեկի] ճամբարը: Նա նրանց երկուսին էլ հրամայեց ամրացված խրամատ փորել: Նրանք գնացին, այնտեղ կանգ առան ու խրամատներ փորեցին:

Երբ խրամատն արդեն փորվել էր, Աֆշինն իր փոխարեն Բարգանդում թողեց Մուտասիմի մասլա Մարգուբանին մի խումբ զորավարների հետ և ինքը կանգ առավ խրամատի առջև: Նա Յուբարային ու Ջաաֆար ալ-Խայյաթին ուղարկեց մեծ զորքով մեծ գետի ակունքը և հրամայեց այնտեղ մի ուրիշ խրամատ փորել: Նրանք գնացին ու փորեցին:

Երբ վերջացրին՝ եկավ Աֆշինը, ապա իր փոխարեն թողնելով Մուհամմադ իրն Խալիդ Բուխարախուդահին, ինքը գնաց Դարուադ

հինգ հազար հեծյալներով, երկու հազար հետևակով ու հազար գործավորներով, մինչև որ իջավ Դարուադ և այնտեղ մեծ խրամատ փորել տվեց ու հսկա պարիսպ կառուցեց: Իսկ Բարեկն ու հետևորդները բարձրարերձ լեռների վրա կանգնած նայում էին [Աֆշինի] ճամբարին ու վայնասուն բարձրացնում:

Ապա Աֆշինը երեքշաբթի օրը, Շաաբան ամսի քսանվեցին (3 օգոստոս 837) հանդերձանքով ու քարանետ մեքենաներով (մանջանիկ) հարձակվեց: Բաբեկն Աղինին հրամայեց իր հետ վերցնել երեք հազար հոգու և ամրացնել մի բլուր, որն իչխում էր [Բադդ] քաղաքի վրա, իսկ նախապես նա չուրջը փոսեր էր փորել, որ [Թշնամու] հեծյալներին չթողնի իրեն մերձենալու:

Այդ օրն Աֆշինը վերադարձավ իր խրամատը: Հաջորդ օրը՝ ուրբաթ, Ռամադան ամսի մեկին (7 օգոստոս) Աֆշինը քարաչեն մեքենաներ ու պայթուցիկ նյութեր նետող մեքենաներ (առադատ) դրեց քաղաքի դեմ, իսկ զորավարներն ու պետերը ամեն կողմից չրջապատել էին:

Բաբեկն օգնության հասավ իր մարդկանց, դասավորեց նրանց, իսկ զորավարները սաստիկ կռիվ ունեցան նրանց հետ մինչև երեկո, ապա ցրվեցին՝ նրա մարդկանց մեծ վնաս հասցնելուց հետո:

Աֆշինն այսպես մնաց վեց օր, ապա հինգշաբթի օրը Ռամադանի քսաներեքին (29 օգոստոս) նրա դեմ կռվի դուրս եկավ: Բաբեկը նույնպես պատրաստվեց: Նա Բադդի վերևում տեղավորեց հսկայական սայլեր, որպեսզի գլորի Աֆշինի զորքի վրա:

Ապա Բաբեկն Աֆշինի մոտ ուղարկեց մի մարդու, որը կոչվում էր Մուսա ալ-Ակթա (կռնատ), խնդրելով, որ դուրս գա իր մոտ անձամբ բանակցելու և սրտում եղածն ասելու և եթե Աֆշինն իրեն գոհացնի՝ լավ, ապա թե ոչ, կռիվը կչարունակվի: Աֆշինն ընդառաջեց նրան և Բաբեկը դուրս գալով մոտեցավ Աֆշինին, մի վայրում, ուր գետի ձորը բաժանում էր իրենց: Տեսնելով Աֆշինին՝ անհավատ կոչեց նրան (հայհոյեց), սակայն Աֆշինը փորձեց համոզել նրան, որ միայն հնազանդությամբ կարող է փրկություն գտնել թե՛ այս կյանքում, թե՛ հանդերձյալում, իսկ նա՝ չընդունեց:

Նա գնաց իր տեղը և հրամայեց իր մարդկանց կռվել ու նրանք չտապեցին և գլորեցին այն սայլերը, որ պատրաստել էին: Դրանք ջարդվեցին ու Աֆշինի զորքը հետ քաչվեց ու բարձրացավ լեռան գագաթը:

Յուբարան և Ջաաֆար ալ-Խայյաթը կանգնած էին Բաբեկի եղրը՝ Արդալլահի դիմաց: Նրանք հարձակվեցին և ամեն կողմից զորավարները գրոհեցին և սաստիկ կոտորած սարքեցին: Բաբեկի մարդիկ փախուստի դիմեցին ու մտան քաղաք, իսկ սրանք մտան նեռից փախուստի դիմեցին ու մտան քաղաք, իսկ սրանք մտան նեռից հետապնդելով ու կռիվը բորբոքվեց քաղաքի կենտրոնում: Դա մի

պատերազմ էր, որի նմանը ոչ ոք չէր տեսել, կովում էին տներում ու պարտեզներում: Բաբեկի եղբայր Աբդալլահը փախավ:

Երբ Բաբեկը տեսավ, որ ինքը շրջապատված է զորքով, գտնվում է անելանելի վիճակում և որ իր կողմնակիցները կամ սպանվել են կամ փախել, ինքն էլ փախավ Հայաստան, անցնելով Արաքս գետը և ուղղվեց դեպի Ռում: Երբ նա անցավ Արաքս գետը նրա մոտ եկավ Նահանգի[22] կառավարիչ Սմբատի որդի Սահլը[23] (Սահլ իբն Սինբաթ):

Ափշինը գրեց մոտակա Նահանգների կառավարիչներին, Հայաստանի քրդերին ու պատրիկներին, որ նրանք Բաբեկի ճանապարհը փակեն: Նրա մոտ հայտնվեց Սահլը, իսկ Բաբեկը ծպտված էր, փոխել էր արտաքին տեսքը, ոտքերը կապել էր ցնցոտիներով ու ջորի էր նստել հասարակ թամբով:

Սմբատի որդի Սահլը նետվեց նրա վրա, գերի բռնեց ու ուղարկեց Ափշինին, որը նրան հսկողության տակ վերցրեց: Նա գրեց Մուտասիմին իր հաղթանակի մասին ու թույլտվություն խնդրեց ներկայանալու: [Խալիֆան] թույլ տվեց և նա եկավ նրա մոտ Բաբեկի ու նրա եղբոր հետ: Իսկ այն, որ Մուտասիմը հրամայեց պատժել Բաբեկին, կտրելով նրա ձեռքերն ու ոտքերը և խաչելով նրան, ապա դա հայտնի է:

ԱԲՈՒ ՀԱՆԻՖԱ ԱԼ-ԴԻՆԱՎԱՐԻ

ՄԱՏՅԱՆ ԵՐԿԱՐԱՊԱՏՈՒՄ ԱՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (ՔԻՏԱԲ ԱԼ-ԱԽԲԱՐ ԱԼ-ԹԻՎԱԼ)

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

[1] Խոսրով Անուշիրվան – Տե՛ս Արու Յուսուֆ, ծնթգր. 6:

[2] Որմիզդ (Հորմուզդ) - Հավանաբար խոսքը Սասանյան արքա Որմիզդ Դ-ի (579-590) մասին է, որը հաջորդեց իր հորը՝ Խոսրով Ա Անուշիրվանին (531-579):

[3] Ռումի թագավորը - Արար պատմագիրների մոտ «ռում» բառը, որը «Հռոմ» անունից է ծագում, բաղմաթիվ իմաստներով է օգտագործվում: Դա նշանակում է Բյուզանդիա (որը միշտ էլ կոչվել է Հռոմեական կայսրություն), Փոքր Ասիա, ինչպես նաև Հույներ: Այդ անունը տրվում է նաև Իկոնիայի սելջուկ սուլթանությանը, նույնիսկ օսմանյան ժամանակաշրջանում Փոքր Ասիան կոչվում էր Ռում: Երբ խոսքը բյուզանդական տիրապետության կամ Փոքր Ասիային է վերաբերում, մենք հայերենում պահպանել ենք Ռում արտահայտությունը, բայց երբ ժողովրդին է վերաբերում, ապա օգտագործել ենք հայ մատենագրության մեջ արմատացած «Հռոմ» բառը: (Իբն ալ-Ասիր, էջ 370):

[4] ... եկավ խազարաց թագավորը – Խազարների խաքանը:

[5] Վահրամ Ջուբին – Վահրամ Ջուբինը տաղանդավոր զորավար էր, որին մեծ փառք բերեց փայլուն հաղթանակը Սասանյանների վտանգավոր թշնամու թյուրքական խաքան Շավայի և նրա 300 հազարանոց բանակի հանդեպ 590 թվականին՝ Ամու Դարիա գետի մոտ: Վահրամի ձեռքն ընկավ հսկայական ավար, որը նա չէր պատրաստվում կիսել որևէ մեկի հետ, ավելին նա հավակնում էր Սասանյան գահին: Օգտվելով Վահրամ Ջուբինի ապստամբությունից, ավագանին գահընկեց արեց Հորմիզդ արքային և նրա փոխարեն գահ բարձրացրեց Խոսրովին, սակայն վերջինիս բանակը պարտվեց Վահրամ Ջուբինի զորքին և Խոսրովը ստիպված էր փախչել Բյուզանդական Միջագետք: Որոշ տարածքային զիջումների դիմաց (Հայաստանի որոշ մասերի), բյուզանդացիները հատկացրին օգնություն: Սկսվեց մի յարված պայքար Խոսրովի ու Վահրամի միջև Միջագետքին տիրելու համար: Միջագետքի քաղաքները աստիճանաբար անցան Խոսրովին, իսկ Վահրամի բանակը քայքայվեց: Խոսրովը վերադարձրեց գահը 591 թվականին ու նույն տարում երկարատև հաշտություն կնքեց Բյուզանդիայի հետ: Նա պատմության մեջ մտավ որպես Խոսրով Բ Փարվեզ (591-628) (История Ирана, стр. 67):

[6] Իրանշահր – կամ Երանշահր, այսպես էր կոչվում Սասանյան Իրանը:

[7] Արտաշիր Պապական – Գ դարի սկզբին, երբ Արշակունիների իշխանությունը Իրանում թուլացել էր, հանդես եկավ Արտաշիր Պապականը: Նրա պապը՝ Սասանը Անահիտ աստվածուհու տաճարի քուրմն էր, իսկ հայրը՝ Պապակը, հնարավոր նահանգի կառավարիչն էր: Նրանք ծագում էին Պարս նահանգից և հենց այնտեղից սկսվեց Արտաշիրի վերելքը: Նա իր տիրույթներին միացրեց Խուժաստանի շրջանն ու Քիրմանը և ի վերջո, ներխուժեց Խուզիստան: 224 թվականի ապրիլի 20-ին Որմիզդագան հովտում տեղի ունեցավ վճռական ճակատամարտը Արշակունի վերջին արքա Արտավան Ե-ի և Արտաշիր Պապականի բանակների միջև: Վերջինիս հաղթանակով վերջ դրվեց Արշակունյաց հարստությունը Իրանում: 226 թվականին Արտաշիր Պապականը հանդիսավորապես հռչակվեց արքայից արքա՝ հիմք դնելով Սասանյան դինաստիայի: (История Ирана, стр. 39):

[8] *Խոսրով Պարուեղ – կամ Խոսրով Բ Փարվեզ. Սասանյան արքա 591-628 թվականներին: Է դարի սկզբում Սասանյան տերության միացրեց Բյուզանդիայի արևելյան ու հարավային նահանգները: Է դարի 20-ական թվականներին Բյուզանդիան, խաղարների ու թյուրքերը դաշինքի մեջ մտնելով, յուրջ հակահարված տվեցին Սասանյաններին, իսկ Բյուզանդական Հերակլ կայսեր արշավանքից ու մայրաքաղաք Տիզրոնի գրավումից հետո, Խոսրով Պարուեղը ավազանու կողմից գահընկեց արվեց ու սպանվեց: (Сов. Ист. Энц., т. 15, стр. 645):*

[9] *Մուշեղ – Մուշեղ Մամիկոնյանը, որը Հայաստանի բյուզանդական մասի դուքսն էր Ջ դարի վերջին և Է դարի սկզբին: Երբ 589-ին Պարսկաստանում բռնկվեց Բահրամ (Վահրամ) Ջուբինի ապստամբությունը, վերջինս օգնություն խնդրեց Մուշեղ Մամիկոնյանից՝ խոստանալով հայկորության դեպքում վերականգնել Հայոց թագավորությունն ընդարձակ սահմաններում: Մուշեղ Մամիկոնյանը մերժեց և, բյուզանդական ու հայկական զորամասերի գլուխն անցած, ճնշեց ապստամբությունը, Խոսրով Բ-ին հաստատեց Սասանյանների գահին (591): Այնուհետև գլխավորեց Հայոց այրուձին ընդդեմ Թրակիա ներխուժած ավարների, մի քանի հաղթանակ տարավ, բայց զերվեց նրանց կողմից և սպանվեց: (Հայկ. սովետ. հանրագիտարան, հ. 8, էջ 81):*

[10] *Կաղիսիյա – Այս անունով Հայտնի են մի շարք վայրեր Իրաքում և Ջազիրայում: 637 թվականի նշանավոր ճակատամարտի վայրը գտնվում էր Հիրայից հարավ-արևմուտք և ապագա Քուֆայից հարավ: Այս ճակատամարտում արաբները կարևոր հաղթանակ տարան Սասանյանների նկատմամբ: Այն բացեց ճանապարհը դեպի Տիգրոն-Սելևկիա (al-Kadisiyya, L. Veccia Vaglerii, EOI, CD-ROM, (IV: 384a)):*

[11] *Քաֆուր – Կամֆորա*

[12] *Մարջ (Միջագետքի) – Գտնվում է Վերին Միջագետքում, Խաոանի և Ռակկայի միջև:*

[13] *Մուավիա – Մուավիա իբն Աբու Սուֆիանը հիմնադիրն է Օմայան խալիֆայության: Իշխեց 661-680 թվականներին: Նա հենց սկզբից Թշնամաբար էր տրամադրված Ալի խալիֆայի նկատմամբ և վերջինիս սպանությունից հետո անցավ իշխանության: (Muawiya I ibn Abi Sufyan, M. Hinds, EOI, CD-ROM, (VII: 263b)):*

[14] *Սիֆֆինի ճակատամարտ – Նշանավոր ճակատամարտ, որ տեղի ունեցավ 657 թվականին իրաքցիների (խալիֆա Ալի իբն Աբու Թալիբի գլխավորությամբ) և սիրիացիների (Սիրիայի կառավարիչ Մուավիայի գլխավորությամբ) միջև:*

Ճակատամարտի վայրը՝ Սիֆֆինը մի ավերված բյուզանդական գյուղ է, որ գտնվում է Ռակկայից ոչ հեռու՝ Եփրատ գետի աջ ափին: Երկու բանակները երկար ժամանակ կանգնած էին դեմ-դիմաց ոազմի դաշտում, չցանկանալով կրոնակցի արյուն թափել: Ավելին, երկու կողմերում կային նույն ցեղի և նույնիսկ նույն ընտանիքի անդամներ: Ի վերջո ճակատամարտը տեղի ունեցավ և դադարեցվեց 657 թ. հուլիսին, առանց կողմերից որևէ մեկի հաղթանակի: Որոշվեց, որ հաշտարար խորհուրդը պիտի վճռի խալիֆայության ճակատագիրը: Ալիի կողմնակիցների մի մասը դեմ էին հաշտության, պահանջելով կռվել մինչև կողմերից որևէ մեկի հաղթանակը, դրանք Խարիջիներն էին, որոնք առանձնացան: Սիֆֆինի ճակատամարտը գահի համար մղվող պայքարից բացի իր հիմքում ուներ մահմեդական համայնքի դեկավարի, կամ մարգարեի փոխանորդի դիրքին հասնելու երկու սկզբունքների – «ժառանգականության» և «ընտրելիության» սկզբունքների պայքարը: Պատահական չէ, որ հենց այդ ժամանակ ձևավորվեցին իսլամի երեք հիմնական ուղղություները, որոնց հետևորդները կոչվեցին սուննիներ (ուղղափառ մահմեդականներ), շիիներ (Ալիի կողմնակիցներ) և խարիջիներ (անջատվող, դուրս եկողներ, ապստամբներ): (Siffin, M. Lecker, EOI, CD-ROM, (IX: 552b)):

[15] *Յազիդ իբն Մուավիա – Տե՛ս Խալիֆա իբն Խայյաթ, ծնթգր. 49:*

[16] *Աբու Ջաաֆար – Տե՛ս Խալիֆա իբն Խայյաթ, ծնթգր. 70:*

[17] *Ռաշիդ – Հարուն ալ-Ռաշիդ: Տե՛ս Խալիֆա իբն Խայյաթ, ծնթգր. 77:*

[18] *Յազիդ իբն Մազիադ – կառավարել է 787-788 թվականներին, սակայն ոչ անմիջապես Խուզայմայից հետո, ինչպես նշում է պատմիչը: Նրանց միջև կարճ ժամանակով Արմինիայի կառավարիչ եղավ Յուսուֆ իբն Ռաշիդ ալ-Սուլամին (787), որը կազմակերպեց արաբական ցեղերի գաղթը հարավ-արևմտյան Հայաստան, Yaqubi, II, p. 426 (Տեր-Ղևոնդյան, Արմ. ոստիկանների ժամանակագրություններ):*

[19] *Սամառա – Քաղաք Տիգրիս գետի միջին հոսանքի արևելյան ափին, Բաղդադից 125 կմ դեպի հյուսիս: Արբասյան խալիֆայության մայրաքաղաքն էր 836-892 թվականներին: Այդ վայրում հնագույն ժամանակներից կար բնակավայր: 834-835 թվականներին Մուտասիմ խալիֆան փնտրում էր իր համար նոր մայրաքաղաք: Պատճառը միջինասիական թյուրքերից կազմված թիկնազորի ու Բաղդադի բնակչության միջև կոնֆլիկտն էր: Այսպես հիմնվեց նոր մայրաքաղաք, որը կոչվեց՝ Սուռռա ման ռաա (Ով տեսնում հիանում է), ապա կրճատվեց կոչվելով Սամառռա: Սակայն արաբերեն արտահայտություններ պարզապես հարմարեցված մի բան էր, քանի որ իրականում դա աքքադական և չումերական Sur-marrati անվան աղավաղումն էր: (Samarra, A. Northedge, EOI, CD-ROM, (VIII: 1039a)):*

[20] *Բաբեկ – Սա Խուռռամյան (Խուռռամի) աղանդի դեկավարն էր: Նրա անունը իրանական Պապակ անվան արաբացված ձևն է: Նրան նկատեց Խուռռամիների աղանդի դեկավար Ջավիդան իբն Սահլը և նրան ընդգրկեց իր համախոհների մեջ: Շատ չանցած նա վախճանվեց և Բաբեկը հայտարարեց, որ իբր Ջավիդանի հոգին մտել է իր մեջ: Նա նոր չունչ տվեց այդ չարժմանը իր կենտրոնը դարձնելով Ատրպատականի Բաղդ ամրոցը: Խուռռամյանների չարժումը մասամբ ծագում էր Մազդաքյան չարժումից: Մամուն խալիֆան այս չարժումը ճնշելու նպատակով մի չարք բանակներ ուղարկեց Բաբեկի դեմ, որոնք բոլորն էլ պարտություն կրեցին: Միայն 837 թվականին՝ Մուտասիմի օրոք, հնարավոր եղավ բռնել ու մահապատժի ենթարկել Բաբեկին: Խուռռամյան չարժումը Բաբեկի մահով վերջ չգտավ, այն իր հետնորդներն ուներ մինչև անգամ 11-րդ դարում: (Babak, D. Sourdel, EOI, CD-ROM, (I: 844a)):*

[21] *Բաղդ – Այս վայրը Բաբեկի կենտրոնն էր հանդիսանում: Գտնվում էր այժմյան Թալիչի Վիլաջ-չայ գետի վերին հոսանքում, այստեղ էր գտնվում պատմական Առոսրեճան գավառը, որի տեղադրությունը որոշվում է այժմյան Արոս գյուղով: (Հակոբ Նալբանդյան, Արաբական աղբյուրներ, էջ 145):*

[22] *Նահանգի – Հավանաբար նկատի ունի Արցախը:*

[23] *Սմբատի որդի Սահլ (Սահլ իբն Սինբաթ) – Սահլ իբն Սինբաթը, կամ Սունբաթը Հայ պատմիչների մոտ Հայտնի է որպես Սահլ Սմբատեան, իսկ արաբ պատմիչները չատ հաճախ նրա անվանը կցում են «ալ-արմանի»՝ Հայազգի բառը: Ն. Ադոնցը և ուրիշներ կարծում են,՝ որ նրա Հայրը՝ Սմբատը, Բագրատունի է: (Ադոնց, Պատմ. ուսումնասիրություններ, էջ 134-136. Minorsky, Sahl ibn Sunbat, XV/ 3, Բ. Ուլուբաբյան, Ապենի իշխանությունը, էջ 50-64(Տե՛ս Իրն ալ-Ասիր, էջ 379)):*

ԲԱԼԱԶՈՒՐԻ
(մահ. 892)

Ահմադ իբն Յահյա իբն Ջաբիր իբն Դաուդ ալ-Բալազուրին (մահ. 892) դասական շրջանի պատմիչներից է: Նրա ուսուցիչներն էին Իբն Սաադը, ալ-Մադաինին ու Մուսաբ ալ-Զուբայրին, որոնց ազդեցությունն է կրել: Նա ծնվել ու իր կյանքի մեծ մասն անց է կացրել Բաղդադում, կամ նրա շրջակայքում: Ուսման նպատակով եղել է Դամասկոսում, Հոմսում և Անտիոքում:

Բալազուրին Մուտավաքքիլ խալիֆայի պալատում նադիմի (սեղանակից ընկեր) պաշտոնն ուներ: Հետագայում ևս նա մուտք ուներ պալատ, սակայն մյուս խալիֆաների հետ չուներ այդքան սերտ հարաբերություններ: Բալազուրին հեղինակ է երկու մեծ պատմական երկերի՝ «Ֆուտուհ ալ-Բուլդան» և «Անսաբ ալ-Աշրաֆ»:

«Ֆուտուհ ալ-Բուլդանը», մի այլ, ավելի ընդարձակ աշխատանքի համառոտ տարբերակն է: Այն սկսվում է Մուհամմադի մղած պատերազմների ու «Ռիդդայի» մասին հաղորդումներով, ապա շարադրվում է Ասորիքի, Ջազիրայի, Հայաստանի, Եգիպտոսի ու Մաղրիբի նվաճումը, ինչպես նաև Իրաքի ու Իրանի գրավումը:

Կարևոր նշանակություն ունեն Բալազուրիի հաղորդումները պաշտոնական գրասենյակների լեզուն հունարենից ու պարսկերենից արաբերենի անցկացնելու և եգիպտոսից ուղարկված նամակների վրա մահմեդական ասույթներ գետեղելու չուրջ Բյուզանդիայի հետ վեճի մասին: Արժեքավոր են տեղեկությունները հարկերի, դրամների ու արաբական գրի վերաբերյալ:

Մյուս երկը՝ «Անսաբ ալ-Աշրաֆ» անունով ծագումնաբանական բնույթի ծավալուն աշխատություն է:

Ներկա թարգմանությունը կատարված է 1959 թվականին Եգիպտոսում հրատարակված ընագրից. Futuh al-Buldan, Imam Abu l-Hasan al-Baladzouri, կազմող՝ Ridwan Muhammad Ridwan, al-Qahira, 1959.

(al-Baladhuri, (C. H. Becker [F. Rosenthal]), EOI, CD-ROM, (I: 971b), Х. А. Р. Гибб, Арабская литература, Москва, 1960, стр. 128.

Տե՛ս նաև.

- *Liber expugnationis regionum auctore al-Beladsori. Ed. J. M. de Goeje. Lugduni Batavorum, 1866.*

ԲԱԼԱԶՈՒՐԻ

ԵՐԿՐՆԵՐԻ ՆՎԱՃՈՒՄ (ՖՈՒՏՈՒՀ ԱԼ-ԲՈՒԼԴԱՆ)

ԱՍՈՐԻՔԻ (ՇԱՄ) ՆՎԱՃՈՒՄԸ

էջ 115 – 116

Երբ Աբու Բաքրը[1] վերջացրեց հավատափոխների դեմ պայքարը, որոշեց զորք ուղարկել Ասորիք: Նա գրեց Մեքքայի, Թաիֆի[2], Եմենի ժողովրդին և Նաջդի[3] ու Հիջազի[4] բոլոր արաբ բնակիչներին հրավիրելով սրբազան պատերազմի (ջիհադ) ու ոգևորելով հոռոմներից ստանալիք ավարով:

Ամեն կողմից նկան մարդիկ՝ շահ տենչացողն էլ, երկնային վարձատրություն ակնկալողն էլ և հավաքվեցին Մադինայում[5]: Նա [հրամանատարության] երեք դրոշ հանձնեց երեք հոգու՝ Խալիդ իբն Սաիդ իբն Ասի իբն Ումայայի, Բանու Ջումահ ցեղի զաչնակից Շուրահբիլ իբն Հասանայի և Ամր իբն ալ-Աս իբն Վաիլ ալ-Սահմիի[6]: Այս դրոշները հանձնվեցին տասներեքերորդ տարվա (634-635) Սաֆար ամսի սկզբին (6 ապրիլ 634) հինգշաբթի օրը, այն բանից հետո, երբ զորքերը ճամբարում են եղել ամբողջ Մուհառամ ամիսը (7 մարտ – 5 ապրիլ) ժայռոտ վայրերում, ուր Աբու Ուբայդա իբն ալ-Ջառահը նրանց հետ աղոթում էր: [.....]

Աբու Բաքրը հրամայեց Ամր իբն ալ-Ասին ընթանալ Այլատի ճանապարհով՝ ուղղվելով դեպի Պաղեստին (Ֆիլաստին): Եզիդին հրամայեց Տաբուկի ճանապարհով գնալ, իսկ Շուրահբիլին՝ նույնպես նույն ճանապարհով: Ամեն մի ամիրի (հրամանատարի) սկզբում տվել էր երեք հազարական [զորք], սակայն չուտով Աբու Բաքրը նոր ուժեր ուղարկեց, մինչև որ ամեն մի ամիր ունեցավ յոթ հազար հինգ հարյուր, ապա նրանց ընդհանուր թիվը (գումարը) դարձավ քսաներս հազար:

Վակիդին վկայում է, որ Աբու Բաքրը Ամրին նշանակել էր Պաղեստինի, Շուրահբիլին՝ Հորդանանի (Ուրդուն), իսկ Եզիդին՝ Դամասկոսի կառավարիչներ: Նա նշել էր, որ եթե պատերազմ լինի, ապա ընդհանուր հրամանատարն է այն գավառի կառավարիչը, ուր այդ րոպեին գտնվում էին: Պատմել է նաև [Վակիդին], որ նա Ամրին հրամայել էր,

որ երբ բոլորը մի տեղում են լինում զինվորների հետ աղոթքը ինքը ղեկավարի, իսկ եթե [երեքը] տարբեր տեղերում են գտնվում, ամեն մեկի ամիրը թող աղոթի իր զինվորների հետ: Նա հրամայեց, որ ամեն մի ցեղն իր դրոշն ունենա:

Երբ Ամր իբն ալ-Ասը հասավ Պաղեստինի առաջին գավառը[7], գրեց Աբու Բաքրին հայտնելով Թշնամու թվի մեծությունը, լավ սպառազինությունը, հողերի ընդարձակությունը և ռազմիկների մարտունակությունը: Այն ժամանակ Աբու Բաքրը գրեց Խալիդ իբն ալ-Վալիդ իբն ալ-Մուղիրա ալ-Մախզումիին[8], որն Իրաքում էր, հրամայելով նրան գնալ Ասորիք: Ասում է, որ նա պատերազմի համար բոլոր ամիրների վրա ամիր (հրամանատար) էր նշանակվել, իսկ ուրիշներ գտնում են, որ Խալիդը ամիր էր միայն իր մարդկանց համար: Սակայն երբ մահմեդականները միասին պատերազմի մեջ էին լինում, պարտավոր էին նրան հրամանատար դարձնել իր քաջության, ռազմական հմտության և իմաստուն խորհուրդների համար:

Առաջին ընդհարումը մահմեդականների ու թշնամու միջև տեղի էր ունեցել Ղազզայի[9] գյուղերից մեկում, որը կոչվում էր Դասին և գտնվում էր նրանց (մահմեդականների) ու Ղազզայի պատրիկի միջև: Սաստիկ կռիվ տեղի ունեցավ, սակայն Ալլահը հաջողություն տվեց իր հավատարիմներին և թշնամիներին պարտության մատնեց, նրանց բազմությունը ցրեց և այս բոլորը կատարվեց նախքան Խալիդ իբն ալ-Վալիդի Ասորիք հասնելը: Եզիդ իբն Աբու Սուֆիանը գնաց այդ պատրիկին փնտրելու և երբ իմացավ, որ Պաղեստինի հոդում՝ Արաբայում հոռոմների մի ջոկատ կա, նրանց դեմ ուղարկեց Աբու Ումամա ալ-Սուդա իբն Աջլան ալ-Բահիլիին, որը ջարդեց նրանց, սպանեց նրանց պետին ու հետապնդեց:

Աբու Միխնաֆը պատմում է, որ Արաբայի կռվի օրը հոռոմների վեց զորավարներ նկել էին Արաբա երեք հազարով, իսկ Աբու Ումաման մի խումբ մահմեդական [ռազմիկների] հետ հարձակվեց ու հաղթեց, զորավարներից մեկին սպանեց, ապա մինչև ալ-Դուբբիյա հետապնդեց, ուր հաղթեց նրանց և մահմեդականները մեծ ավար վերցրեցին:

ՀՈՐԴԱՆԱՆԻ ՄԱՍԻՆ

էջ 124 – 125

Պատմել է Մուհամմադ իբն Սահմ ալ-Անթաքին (Անտիոքացի), լսելով ուրիշ ծերունիներից, թե քառասունհինգ թվականին (669) հոռոմները հարձակվեցին ծովափերի վրա: Այդ ժամանակ նավաշինարան (սինաա) կար միայն Եգիպտոսում, իսկ Մուավիա իբն Աբու Սու-

փիանը հրամայեց հավաքել արհեստավորներին, ատաղձագործներին և գործի դրեց ծովափերում: Նավաշինարանը Հորդանանի Ակրա[10] (Աքքա) քաղաքում էր: [.....]

Վակիդին պատմել է, որ նավաշինարանը մնաց Ակրայում մինչև որ Մարուանի որդիները իշխանության գլուխ անցան և այն տեղափոխեցին Տյուրոս (Սուր)[11] և այնտեղ մնում է մինչև օրս: Իսկ հավատացելոց իշխան Մուտավաքքիլ Ալալլահը երկու հարյուր քառասունյոթ (861-862) թվականին հրամայեց նավեր պատրաստել Ակրայում և բոլոր ծովափնյա վայրերում ու կայազորներ նշանակել:

ԴԱՄԱՍԿՈՍ ՔԱՂԱՔԻ ԵՎ ՆՐԱ ՀՈՂԵՐԻ ՆՎԱՃՈՒՄԸ

էջ 127 - 128

Ասում են, որ մահմեդականները ալ-Մարջի[12] մոտ իրենց դեմ հավաքվածների հետ կռիվը վերջացնելուց հետո, տասնհինգ օր սպասեցին: Ապա վերադարձան Դամասկոսի պարիսպների մոտ տասնչորսերորդ տարվա Մուհառամի տասնվեցին (13 մարտ 635): Նրանք կռվով գրավեցին ալ-Ղութան[13] և նրա եկեղեցիները, իսկ [Դամասկոսի] բնակիչներն ամրացան և դարպասները փակեցին: Խալիդ իբն ալ-Վալիդը կանգ առավ քաղաքի Բար ալ-Շարկիի (Արևելյան դուռ) առջև՝ հինգ հազար հոգով, որոնց ստացել էր Աբու Ուբայդայից: [.....]

Եպիսկոպոսը, որը ռազմական գործողությունների սկզբին Խալիդին մթերք էր տվել, հաճախ կանգնում էր պարսպի մոտ: Մի անգամ նրան Խալիդի մոտ կանչեցին և երբ վերջինս եկավ, Խալիդը ողջունեց նրան ու զրուցեց նրա հետ: Մի օր եպիսկոպոսն ասաց նրան՝ ով Աբու Սուլայման, ձեր հաղթանակը մոտենում է, իսկ դու ինձ խոստում էիր տվել, ուստի նկ պայմանագիր կնքիր ինձ հետ այս քաղաքի համար: Խալիդը պահանջեց թանաքաման և թուղթ ու գրեց.

Հանուն Ալլահի ամենագութ, ամենողորմ.

Սա տվել է Խալիդ իբն ալ-Վալիդը Դամասկոսի բնակիչներին, առ այն, որ երբ մտնի քաղաքը, կերաշխավորի նրանց կյանքը, ունեցվածքը: Եկեղեցիներն ու քաղաքի պարիսպները չեն քանդվի և ոչ ոք նրանց տներում չի ապրի (չի գրավի): Դրա համար ունեն Ալլահի անվամբ երաշխավորագիրը, մարգարեի, խալիֆաների ու հավատացյալների հովանավորությունը և նրանք միայն բարիք կգտնեն, եթե վճարեն ջիզիան (գլխահարկը):

էջ 130 - 131

Ինձ պատմել է Աբու Ուբայդը, լսելով Հիշամ իբն Ամմարից, որը լսել էր ալ-Վալիդ իբն Մուսլիմից, իսկ վերջինս ալ-Աուզաիից, թե սկզբնական շրջանում Ասորիքում գլխահարկը վերցվում էր ամեն մի անձից մեկ ջարիր[14] և մեկ դինար: Ապա Օմար իբն ալ-Խաթթաբը որոշեց ջիզիա վերցնել ոսկի դրամ օգտագործողներից՝ չորս դինար չափով, իսկ արծաթե դրամ օգտագործողներից՝ քառասուն դիրհեմ և դասերի բաժանեց ըստ հարուստի հարստության, աղքատի աղքատության և միջակի միջակության:

Հիշատն ասել է, որ լսել եմ, թե ինչպես մեր ծերունիներն ասել էին, որ հրեաները քրիստոնյաների նման զիմմի էին, նրանց հետ խարաջ էին վճարում՝ նրանց հետ ևնթարկվելով պայմանագրին:

Որոշ զրույցների հեղինակներ ասում են, որ Խալիդ իբն ալ-Վալիդը, երբ պայմանագիր կնքեց Դամասկոսի բնակիչների հետ, ի չարս այլ պայմանների պահանջեց, որ ամեն մեկը պարտավոր է մեկ դինար ջիզիա, մեկ ջարիր ցորեն, ինչպես նաև քացախ և ձեթ տալ մահմեդականների պարենավորման համար: [.....]

Ասվել է նաև, թե Օմարը գրեց բոլոր նահանգների ռազմական հրամանատարներին, հրամայելով ջիզիա սահմանել բոլոր հասունացած տղամարդկանց, արծաթե օգտագործողներից պահանջելով քառասուն դիրհեմ ամեն անձից, իսկ ոսկի օգտագործողներից՝ չորս դինար: Նրանք պարտավոր էին որպես պարեն, մահմեդականներին տալ ցորեն ու ձեթ, ընդ որում, երկու մոդ[15] ցորեն և երեք կիսթ[16] (բաժին) ձեթ տալ ամեն ամիս Ասորիքում (Շամ) ու Ջազիրայում ապրող ամեն մահմեդականի: Նա պարտավորեցրեց տալ նաև յուղ, մեղր, չգիտեմ ինչ քանակությամբ: Իսկ Եգիպտոսում պարտավորեցրեց, որ ամեն մարդ ամսական մեկ արդար[17] [ցորեն] ու հագուստ տա և երեք օր հյուրասիրի [մահմեդականի]:

էջ 136

Վերջացնելով իր գործը Դամասկոսում Աբու Ուբայդան գնաց Հիմս[18] և անցավ Բաալբեքի[19] մոտով: Նրա բնակիչները երաշխավորագիր խնդրեցին ու հաշտություն: Նա հաշտություն կնքեց նրանց հետ, երաշխավորելով նրանց կյանքը, ունեցվածքն ու եկեղեցիները: Նա գրեց.

«Հանուն Ալլահի ամենագութ, ամենողորմ.

Սա երաշխավորագիր է տրված այսինչի որդի այսինչին և Բաալբեքի բնակիչներին՝ հռոմեներին, պարսիկներին ու արաբներին, ապահովելով նրանց կյանքը, ունեցվածքը, եկեղեցիները և տները,

Թե՛ քաղաքից ներս, թե՛ քաղաքից դուրս և նրանց ջրադացները: Հռոմեներին թույլատրվում է անասուն արածացնել իրենց բնակավայրից տասնհինգ մղոն հեռավորության վրա, սակայն թույլ չի տրվում բնակվել ուրիշ բնակելի վայրերում (գյուղերում): Իսկ երբ անցնեն Ռաբի և Ջումադա Ա ամիսները, կարող են գնալ ուր կամենան: Նրանցից ով ընդունի մահմեդականությունը, նույն իրավունքներն ու պարտականությունները կունենա, ինչ որ մենք ունենք: Վաճառականներին թույլատրվում է գնալ ուր կամենան, այն վայրերում (քաղաքներում), որոնց հետ պայմանագրեր ենք կնքել: Իսկ ով կմնա [իր կրոնին]՝ կվճարի ջիզիա ու խարաջ: Վկա է Ալլահը և նրա վկայությունը բավական է»:

ՅԱՐՄՈՒՔԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԸ

էջ 140 - 141

Ասում են, որ Հերակլը անթիվ զորք հավաքեց, բաղկացած հռոմներից, սիրիացիներից (Ասորիքի ժողովրդից) և Ջազիրայի ու Հայաստանի ժողովրդից: Նրանց թիվը մոտավորապես երկու հարյուր հազար էր: Նրան հրամանատար նշանակեց իր մերձավորներից մեկին, իսկ առաջապահի հրամանատար դարձրեց Ղասան[20] ցեղից Ջաբալա իբն ալ-Այհամին, քրիստոնյա արաբների հետ, որոնք ապրում էին Ասորիքում և պատկանում էին Լախմ, Ջուզամ և այլ ցեղերի: Նա նպատակ ուներ կռվել մահմեդականների դեմ և եթե սրանք պարտվեին, ամեն ինչ լավ կլիներ, իսկ հակառակ դեպքում կհեռանար Ռումի երկիրը ու կմնար Կոստանդնուպոլսում:

Մահմեդականները հավաքվեցին և հռոմների զորքը նույնպես չարժվեց նրանց կողմը: Յարմուքի մոտ նրանք ամենադաժան ու կատաղի պատերազմն ունեցան, իսկ Յարմուքը գետ է: Այդ օրը մահմեդականների թիվը քսանչորս հազար էր: Հռոմները և նրանց հպատակները այդ օրը չղթայվեցին իրար, որպեսզի փախուստի մասին չմտածեն: Ալլահի օգնականությամբ նրանցից յոթանասուն հազար կոտորվեց, իսկ մնացորդները փախան ու պատսպարվեցին Պաղեստինում, Անտիոքում, Հալեբում, Ջազիրայում ու Հայաստանում:

էջ 141

Աբու Ուբայդան Հաբիբ իբն Մասլամա ալ-Ֆիհրիին նշանակեց Հեծելազորի հրամանատար, որն առաջ նետվեց ու թշնամուց կոտորեց՝ ում որ պատահեց:

էջ 142 - 143

Երբ Հերակլը լսեց Յարմուքի ճակատամարտի մասին և թե ինչպես մահմեդականները կատաղի կռիվ էին մղել իր զորքի հետ, Անտիոքից փախավ Կոստանդնուպոլիս և անցնելով լեռնանցքը ասաց՝ մնաս բարով Ասորիք և ինչ հրաշալի երկիր է սա մեր թշնամիների համար, ակնարկելով Ասորիքի հողն ու նրա բազմաթիվ արոտավայրերը: Յարմուքի ճակատամարտը տեղի ունեցավ տասնհինգ թվականի Ռաջաբ ամսին (9 օգոստոս – 7 սեպտեմբեր 636):

Ինձ պատմել է Աբու Հաֆս ալ-Դիմաշկին, լսելով Սաիդ իբն Աբդ ալ-Ազիզից, թե նրան հաղորդել են, որ երբ Հերակլը, նախքան Յարմուքը, հավաքել էր իր զորքը մահմեդականների դեմ և վերջիններս իմացան, որ հռոմները մոտենում են, ապա Եմեսայի բնակիչներին վերադարձրին այն հարկը (խարաջ), որ նրանցից վերցրել էին, ասելով՝ մենք այլևս ի վիճակի չենք ձեզ օգնել և պաշտպանել, ինքներդ ձեր մասին մտածեցեք: Ասացին Եմեսայի բնակիչները՝ ձեր իշխանությունը և արդարությունը մեզ ավելի դուր են գալիս, քան այն անարդարությունն ու վիրավորանքները, որին ենթարկվում էինք: Ձեր կառավարչի հետ մենք կարող ենք մեր քաղաքը պաշտպանել Հերակլի զորքերից: Հրեաներն ասացին՝ երդվում ենք Աստվածաշնչով (Թորա), որ Հերակլի կառավարիչը մեր քաղաք կմտնի միայն մեր պարտությունից ու ջախջախումից հետո: Եվ նրանք քաղաքի դարպասները փակեցին ու հսկողություն սահմանեցին:

Նույն ձևով վարվեցին նաև այլ քաղաքների քրիստոնյա ու հրեա բնակիչները, որոնք մահմեդականների հետ հաշտության պայմանագրեր էին կնքել: Նրանք ասում էին՝ եթե հռոմներն ու նրանց հետևորդները մահմեդականներին հաղթեն, մենք կվերադառնանք մեր նախկին վիճակին, իսկ հակառակ դեպքում մենք կմնանք մեր ներկա վիճակում, քանի դեռ մահմեդականները բազմամարդ են: Երբ Ալլահի օգնականությամբ անհավատները փախստյան մատնվեցին և հաղթանակ տարան մահմեդականները, այդ քաղաքների բնակիչները բացեցին իրենց քաղաքների [դարպասները], կանչեցին երաժիշտներին, որոնք դափ էին նվագում, սկսեցին զվարճանալ ու վճարեցին խարաջը: Ապա Աբու Ուբայդան գնաց Կիննասրինի ջունդը[21] ու Անտիոք և նվաճեց այն:

ԿԻՆՆԱՍՐԻՆԻ ՋՈՒՆԴԻ ՈՒ ԱՎԱՍԻՄ[22] ԿՈՉՎԱԾ ՔԱՂԱՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ԷՋ 150 - 151

Աբու Ուբայդա իրն ալ-Ջառահը Յարմուքի չրջակայքում գործերը դասավորելուց հետո չարժվեց դեպի Եմեսա և կարգավորեց գործերը, ապա եկավ Կիննասրին:

Հալեր քաղաքի մոտ կար մի բնակավայր, որը կոչվում էր Հալերի Հաղիր, ուր ապրում էին տարբեր մարդիկ՝ Տաննուխ ցեղի արաբներ և ուրիշներ: Աբու Ուբայդան նրանց պայմանագիր էր տվել գլխահարկ վճարելու պայմանով: Ապա նրանք իսլամ էին ընդունել և նրանք ու նրանց հետնորդներն ապրել էին մինչև հավատացելոց իչխան Ռաչիդի մահը: Այդ ժամանակ Հաղիրի բնակիչները պատերազմեցին Հալեբի բնակիչների հետ՝ կամենալով նրանց արտաքսել [քաղաքից]: Նրա բնակիչներից Հաչիմիները գրեցին իրենց չրջապատող արաբական ցեղերին՝ օգնություն խնդրելով: Առաջինը, որ օգնության հասավ, Աբբաս իրն Ջուֆար իրն Ասիմ ալ-Հիլալին էր:

Սակայն Հաղիրի բնակիչները չկարողացան դիմադրել Աբբասին ու նրա մարդկանց: Ուստի նրանք դուրս բերվեցին Հաղիրից և այն ավերվեց. և սա պատահեց Մուհամմադ իրն Ռաչիդի ապստամբության օրոք: Նրանք տեղափոխվեցին Կիննասրին և բնակիչները ուտելիք ու հագուստ հայթայթեցին նրանց: Սակայն երբ քաղաք մտան, կամեցան գրավել այն, ուստի նրանց արտաքսեցին և երկրում ցրվեցին: Ոմանք Տիբերիտում[23] հաստատվեցին և ես տեսել եմ նրանց, ոմանք էլ՝ Հայաստանում ու տարբեր երկրներում:

ՄԱՐԴԱՅԻՏՆԵՐԻ (ՋԱՐԱՋԻՄԱ)[24] ՄԱՍԻՆ

ԷՋ 163 - 167

Ինձ պատմել են Անտիոքի ծերունիները, թե մարդայիտները (Ջարաջիմա) Ամանոս (Լուքքամ)[25] լեռների վրա գտնվող մի քաղաքում էին ապրում, որն ընկած էր Մաադան ալ-Ջաջի (արջասպի հանք) մոտ, Բայասի ու Բուկայի միջև և կոչվում էր Ջարջումա:

Երբ Հոռոմները իչխում էին Ասորիքում և Անտիոքում նրանք (մարդայիտները) ենթակա էին Անտիոքի պատրիկին ու կառավարչին: Իսկ երբ Աբու Ուբայդան եկավ Անտիոք ու նվաճեց, սրանք փակված մնացին իրենց քաղաքում, սակայն վախենալով իրենց անձերի համար, կամեցան գնալ ու միանալ Հոռոմներին: Մահմեդականները նրանց ուչադրություն չդարձրին և նրանք էլ ուչադրություն չհրավիրեցին: Ապա Անտիոքի ժողովուրդը խախտեց պայմանն ու դավաճանեց և Աբու Ուբայդան [զորք] ուղարկեց այն կրկին նվաճելու, կառավարիչ նչանակելով Հաբիբ իրն Մասլամա ալ-Ֆիհրիին: Սա արչավեց Ջարջումա, սակայն բնակիչները չդիմադրեցին, այլ անմիջապես նրաչխավորագիր (աման) ու հաչտություն խնդրեցին: Նրանց հետ հաչտություն կնքվեց այն պայմանով, որ լինեն մահմեդականների օգնականներն ու նրանց լրտեսները և դառնան սահմանային կայազոր (մասալիհ) Ամանոս լեռներում: Ջիզիա չէին վճարելու և կարող էին իրենց պահել թչնամուց վերցված ավարը, եթե նրանց (մահմեդականների) հետ արչավանքների մասնակցեին: Այս պայմանագիրը վերաբերում էր նաև բոլոր նրանց քաղաքում ապրողներին՝ վաճառականներին, ծառայություն կատարողներին, հպատակներին, լինեն արամեացի (նաբթ), թե ոչ, ինչպես նաև գյուղացիներին: Սրանք կոչվեցին հետևորդներ, քանզի պայմանագրում նրանցից (մարդայիտներից) հետո էին հիչված, սակայն նրանցից չէին: Ասվում է նաև թե նրանք հետևեցին [մարդայիտներին], երբ գալիս էին մահմեդականների ճամբարը և այդ պատճառով կոչվեցին հետևորդներ:

Մարդայիտները մերթ հպատակ էին կառավարիչներին և մերթ ապստամբում էին ու նամակագրություն ունեին Հոռոմների հետ՝ համակրանք ցուցաբերելով նրանց: Իրն ալ-Զուբայրի ապստամբության օրերին, երբ Մարուան իրն ալ-Հաքամը մեռավ և Աբդ ալ-Մալիքը, որը նչանակված էր ժառանգորդ և ձգտում էր խալիֆա դառնալ, պատրաստվում էր չարժվել դեպի Իրաք Մուսաա իրն Զուբայրի դեմ պայքարելու, հենց այդ ժամանակ հեծյալները իրենց զորավարներից մեկի հրամանատարության տակ, հարձակվեցին Ամանոս լեռների կողմը, ապա հասան Լիբանան: Նրանց միացել էին մարդայիտների, արամեացիների և մահմեդականների մոտից փախած ստրուկների մեծ խմբեր: Աբդ ալ-Մալիքը ստիպված եղավ նրանց հետ հաչտություն կնքել չաբաթական հազար դինար վճարելու պայմանով: Նա հաչտություն կնքեց նաև Հոռոմների բռնապետի հետ որոչակի գումար վճարել պարտավորվելով, քանզի զբաղված լինելով ի վիճակի չէր պատերազմել նրա դեմ և վախենում էր, որ եթե նա հարձակվի Ասորիքի վրա, կհաղթի: Այսպիսով նա կրկնեց Մուավիային, որը նման պայմանագիր էր կնքել, երբ զբաղված էր Իրաքի մարդկանց դեմ պայքարելով: Նա համաձայնվել էր որոչ գումար վճարել և նրանցից պատանդներ վերցնելով տարել պահել էր Բալքաում: Սրան զուգադիպեց այն, որ Ամր իրն Սաիդ իրն Ալ-Ասիը խալիֆայությունը վերցնելու նպատակով փակել էր Դամասկոսի դռները, հենց որ Աբդ ալ-Մալիքը հեռացել էր և սա առավել ևս բարդացրել էր Աբդ ալ-Մալիքի վիճակը: Այս ամենը կատարվել էր յոթանասուն (25 Հունիս 689 – 14 Հունիս 690) թվականին:

Ապա Աբդ ալ-Մալիքը հոռոմի (զորավարի) դեմ ուղարկեց Սահիմ իբն ալ-Մուհաջիրին, որը ծպտված քաղցր խոսեց, սիրաշահեց ու մերձենալով նրան, բարեկամ ձևացավ ու սկսեց բամբասել Աբդ ալ-Մալիքին, հայհոյեց նրան և նրա վստահուԹյունը չահեց խաբելով, ապա հանկարծակի հարձակվեց Աբդ ալ-Մալիքի մաուլաներով ու դինվորներով, որոնց նախապատրաստել էր կռվի համար և պահել հարմար վայրում: Նա սպանեց նրան (զորավարին) և նրա մոտ եղած հոռոմներին: Ապա հայտարարեց, որ երաչխավորագիր էր տալու նրանց, ովքեր միացել էին հոռոմ զորավարին:

Այսպիսով մարդայիտները ցրվեցին Եմեսայի ու Դամասկոսի գյուղերում, իսկ մեծամասնուԹյունը վերադարձավ իրենց քաղաքը Ամանոս լեռներում, արամեացիք նկան իրենց գյուղերը, իսկ ստրուկները վերադարձան իրենց տերերի մոտ: Վերջիններից էր Մայմուն ալ-Ջուրջումանին, որը Մուավիա իբն Աբու Սուֆիանի քրոջ տոհմի (Սակի ցեղին պատկանող) հոռոմ ստրուկն էր և համարվել էր մարդայիտ նրանց հետ չփում ունենալու և Լիբանանի լեռներում միասին կռվելու պատճառով: Աբդ ալ-Մալիքը լսելով նրա քաջուԹյան ու կորովի մասին, նրա տերերից պահանջեց ազատ արձակել նրան և նրանք այդպես էլ արեցին ու նա բերվեց Անտիոք: Նա Մասլամա իբն Աբդ ալ-Մալիքի հետ, հազար անտիոքացի ռազմիկներով արշավեց Տիանա և քաջաբար կռվեց ու նահատակվեց: Աբդ ալ-Մալիքը նրա մահվան առԹիվ զայրացավ և մեծ զորք ուղարկեց Ռումի դեմ նրա վրեժը լուծելու նպատակով:

Ութսունինը (1 դեկտեմբեր 707–19 նոյեմբեր 708) Թվականին մարդայիտները հավաքվեցին իրենց քաղաքում, նրանց մոտ եկան նաև դինված հոռոմներ Ալեքսանդրեակից[26] ու Ռուսիսից[27]: Ապա Վալիդ իբն Աբդ ալ-Մալիք [խալիփան] ուղարկեց Մասլամա իբն Աբդ ալ-Մալիքին, որը հարձակվեց մեծ բազմուԹյամբ ու նվաճեց այն [քաղաքը] և պայման դրեց, որ կարող են Ասորիքում բնակվել ուր կամենան, նրանցից ամեն մեկն ստանալու էր ութ դինար, իսկ ամեն ընտանիք ստանալու էր ցորեն ու ձեթ, բնդ որում երկու մոդ ցորեն և երկու կիսԹ ձեթ: Նրանց, ինչպես նաև կանանց ու երեխաներին չէին ստիպելու քրիստոնեուԹյունից հրաժարվել, նրանք կարող էին մահմեդականի տարազ կրել, նրանցից, ինչպես նաև երեխաներից ու կանանցից ջիզիա չպետք է գանձեին: Սակայն նրանք պարտավոր էին մահմեդականների հետ մասնակցել արշավանքներին, Թշնամուց վերցրած ավարը կարող էին իրենց պահել, եԹե նրա հետ մենամարտել էին: Նրանց առևտրից, հարուստների ունեցվածքից պետք է վերցվեր նույն հարկը, որ վերցվում էր մահմեդականների ունեցվածքից:

Ապա [Մասլաման] կործանեց նրանց քաղաքը, իսկ նրանց իջևեցին

ու բնակեցրին Հիվար լեռան չուրջը, և Սունհ ալ-Լուլուն ու Ամկ Տիդին վայրերում: Ոմանք գնացին Եմեսա: Ջարջումա [քաղաքի] պատրիկը մի խումբ մարդկանց հետ գնաց Անտիոք, ապա փախավ հոռոմների երկիրը: Հարկահաններից մեկը Անտիոքի մարդայիտներին պարտադրել էր ջիզիա վճարել, իսկ նրանք այդ մասին բողոքեցին Վասիկ Բիլլահ խալիփային և նա հրամայեց այդ բանը չպահանջել:

Ինձ պատմել է մի վստահելի անձնավորուԹյուն, որը գրագիր է, Թե Մուտավաքքիլ Ալալլահ [խալիփան] ջիզիա էր վերցրել այդ մարդայիտներից, իսկ սահմանված կերակուրը պետք է տրվեր, քանի որ նրանք սահմանային կայազորի դեր էին կատարում: Աբու-լ-Խաթթաբ ալ-Ազդին գտնում է, Թե իրը մարդայիտները Աբդ ալ-Մալիքի օրոք ասպատակում էին Անտիոքի գյուղերը և Ամկը, իսկ երբ ամառային արշավանք էր լինում, նա մնացող ռազմիկների ճանապարհն էին կտրում, ինչպես նաև ում որ գտնեին զորքի Թիկունքում: Նրանք այնքան վնաս էին պատճառել մահմեդականներին, որ Աբդ ալ-Մալիքը հրամայել էր, որ Անտիոքի բնակիչների ու արամեացիների մի մասին ոռճիկ նշանակվի՝ զարձնելով նրանց կայազոր և ստիպելով, որ ամառային արշավանքի վերջապահ զորքի ետևից գնային: Այս պատճառով էլ նրանց կոչել էին հետևորդներ: Սակայն ստույգ է առաջին տեղեկուԹյունը:

Ինձ պատմել է Աբու Հաֆս ալ-Շամին, լսելով Մուհամմադ իբն Ռաշիդից, իսկ սա Մաքհուլից, Թե Մուավիան քառասունինը կամ հիսուն (29 հունվար 670 – 17 հունվար 671) Թվականին [միջերկրականի] ծովի ափերը տեղափոխեց Բասրայի ծաթերին (զութթ) և Սիյաբիջաներին[28], իսկ մի մասին՝ հաստատեց Անտիոքում: Ասել է Աբու Հաֆսը, և Անտիոքում կա մի թաղամաս, որը կոչվում է Զութթ: Վալիդ իբն Աբդ ալ-Մալիք [խալիփան] Անտիոք էր փոխադրել Սինդի ծաթերին, որոնց բերել էր Մուհամմադ իբն Կասիմը Հայջայի համար, իսկ վերջինս ուղարկել էր Ասորիք:

Ինձ պատմել է Մուհամմադ իբն Սաադը վերցնելով Վակիդիից, Թե Լիբանանի լեռներում մարդիկ ընդվզեցին Բաալբեքի հարկահանի (ամիլ խարաջ) դեմ: Սալիհ՝ իբն Ալի իբն Աբդալլահ իբն Աբբասը զորք ուղարկեց, որը կոտորեց նրանց ռազմիկներին, մնացածներին Թույլ տալով պահել իրենց կրոնը (քրիստոնեուԹյունը) ու վերադառնալ իրենց գյուղերը, իսկ Լիբանանի ժողովրդի մի մասին արտաքսեց:

Ինձ պատմել է Կասիմ իբն Սալամը, լսելով Մուհամմադ իբն Քաաբից, Թե Աուզային երկար նամակ է գրել Սալիհին, որից պահպանվել է հետևյալը. «Դու իմացել ես Լիբանանի լեռներից զիմմայի մարդկանց դուրս քշելու մասին, որոնք ապստամբներ չեն եղել, նրանց մի մասին կոտորել են, իսկ մնացածներին վերադարձրել են գյուղերը:

Ինչպե՞ս կարելի է առանձին մարդկանց հանցանքի պատճառով բոլորին դատապարտել, արտաքսել իրենց երկրից ու վերցնել ունեցվածքը: Չէ՞ որ Ալլահը դատել է. «Ոչ ոք ուրիշի համար չպետք է պատասխանատու լինի»: Սա է արդար լուծումը, որին պետք է հետևել: Պատգամը, որին պետք է հնազանդվես դա՝ մարգարեի պատգամն է. «Եթե մեկն անիրավություն գործի նրան, ով մեզ հետ պայմանագիր ունի և նրանից պահանջի կարողությունից ավելին, ես նրա հակառակորդն եմ»: Սրան ավելացրել էր նաև այլ մեջբերումներ:

Ինձ պատմել է Մուհամմադ իբն Սահմ ալ-Անթաքին, թե լսել է Մուավիա իբն Ամրից, իսկ սա Աբու Իսհակ ալ-Ֆազարիից, թե Օմայանները արշավում են Ռումի երկիրը Ասորիքից ու Ջազիրայից հավաքված զորքով՝ կատարելով ամառային ու ձմեռային գրոհներ Ասորիքի ու Ջազիրայի սահմանային ամրություններից այն կողմ: Նրանք նավեր էին կանգնեցնում արշավանքի ժամանակ ու հսկում էին ծովափերը և երբ իմանում էին, որ թշնամին հզոր ու զգաստ է, արշավանքից հրաժարվում էին կամ ուշացնում այն:

Երբ Աբու Ջաաֆարը դարձավ խալիֆա, ստուգեց ծովեզերյա բերդերը, քաղաքները, չենացրեց, ամրացրեց, վերակառուցեց ինչ որ նորոգման կարիք էր զգում: Նույնն արեց սահմանային ամրությունների (սուղուր) գոտու քաղաքներում: Երբ խալիֆա դարձավ Մահդին, ավարտեց մնացած քաղաքների ու բերդերի չինարարությունը և ուժեղացրեց կայազորները: Ասել է Մուավիա իբն Ամրը՝ տեսել ենք, թե ինչպես հավատացելոց իշխան Հարունը մեծ ջանասիրությամբ արշավանքներ կատարեց, առաջնորդեց սրբազան պայքարը (ջիհադ) և իրոք մեծ գործեր իրագործեց: Նավաշինարաններ պատրաստեց, որոնք նախկինում չկային, կալվածներ բաժանեց սահմանային ամրությունների գոտում և ծովեզերյա [վայրերում], ճնշեց հոռոմներին ու հաղթեց նրանց: Իսկ Մուտավաքքիլ Ալալլահը հրամայեց նավեր կանգնեցնել բոլոր ծովափերին և ռազմիկներով լցնել: Սա կատարվեց երկու հարյուր քառասունյոթ (17 մարտ 861 – 6 մարտ 862) թվականին:

ԱՍՈՐԻՔԻ (ՇԱՄ) ՍԱՀՄԱՆԱՑԻՆ ԱՄՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (ՍՈՒՂՈՒՐ) ՆՎԱՃՈՒՄԸ

էջ 168 – 176

Ինձ պատմել են Անտիոքի բնակիչներից ծերունիները և ուրիշներ, որ մահմեդական [պետության] Ասորիքի սահմանային ամրությունների չրջանն, Օմարի ու Օսմանի օրոք և դրանից հետո, բաղկացած է եղել Անտիոքից և այլ քաղաքներից, որոնց ամրողջությունը հետագայում Ռաչիդը անվանել է Ավասիմ: Մահմեդականներն արշավում էին դրանցից այն կողմ, ինչպես այժմ արշավում են Տարսոնից այն կողմ [գտնվող հողերը]: Ալեքսանդրեկի և Տարսոնի միջև եղել են հոռոմների բերդեր ու կայազորներ (մասալիհ), որոնցով այսօր [ազատ] անցնում են մահմեդականները, իսկ մի ժամանակ դրանց բնակչությունը վախից լքել ու հեռացել էր Ռումի երկիրը ու բերվել էին հոռոմ ռազմիկներ դրանք ամրացնելու: Հերակլը Անտիոքից հեռանալու ժամանակ այս քաղաքների բնակչությունն իր հետ է տարել, որպեսզի մահմեդականները չկարողանան չեն տարածության միջով անցնել Անտիոքից Ռումի երկիրը գնալիս:

Պատմել է Իբն Թուսուն ալ-Բաղրասին, լսելով որոշ ծերունիներից, թե ասել են՝ մեր իմացածն այն է, որ Հերակլը այդ բերդերի մարդկանց իր հետ տարավ ու [բերդերը] կործանեց և երբ մահմեդականներն արշավում էին, այնտեղ ոչ ոքի չէին գտնում: Երբեմն հոռոմ ռազմիկները զարան էին մտնում և հանկարծակի հարձակվում ետ մնացողների կամ հեռացողների վրա: Այդ պատճառով ձմեռային ու ամառային արշավանքների զորավարները երբ հարձակվում էին Ռումի երկիրը, մեծաթիվ զորք էին թողնում [որպեսզի հսկեն] մինչև իրենց վերադարձը:

Պատմողները տարակարծիք են այն մասին, թե ով առաջինը կտրեց անցավ լեռնանցքը (դարբ) այսինքն Բաղրասի լեռնանցքը[29]: Ոմանք ասում են, թե այն անցավ Մայսարա իբն Մասրուկ ալ-Աբսին, որին ուղարկել էր Աբու Ուբայդա իբն ալ-Ջառահը: Սա հանդիպեց հոռոմների մի զորամասի, որի հետ էին Ղասսան, Տաննուխ և Իյադ ցեղի քրիստոնյա արաբները և կամենում էին միանալ Հերակլին: Նա հաղթեց նրանց և մեծ կոտորած արեց: Ապա նրան օգնության հասավ Մալիք ալ-Աշտար ալ-Նախաին, որն ուղարկված էր Անտիոքում գտնվող Աբու Ուբայդայի կողմից:

Ոմանք էլ ասում են, թե առաջինն, որ լեռնանցքն անցավ Օմար իբն Սաադ ալ-Անսարին էր, երբ ուղարկվել էր Ջաբալա իբն ալ-Այհամի հարցով: Ասել է Աբու-լ-Խաթթաբ ալ-Ազդին՝ լսել եմ, թե Աբու Ուբայդան անձամբ ամառային արշավանք է կատարել, անցել Մամեստիան և Տարսոնը, որոնց ինչպես նաև մերձակա բերդերի բնակչությունը հեռացել էր, իսկ ինքը հարվածելով թշնամուն արշավել էր մինչև Զանդա: Մեկ ուրիշն ասել է, թե իրականում նա ուղարկել է Մայսարա իբն Մասրուկին, որը հասել է Զանդա:

Ինձ պատմել է Աբու Սալիհ ալ-Ֆառան, լսելով Դամասկոսի բնակիչներից մեկից, որը կոչվում է Աբդալլահ իբն ալ-Վալիդ իբն Հիշամ իբն ալ-Ղազ, որը նույնպես լսել է Ուբադա իբն Նասիից, որը համարվում է Իբն Սալիհը, թե երբ Մուավիան քանհինգ (28 հոկտեմբեր 645 – 16 հոկտեմբեր 646) թվականին արշավեց Ամորիոն, գտավ որ

Անտիոքի ու Տարսոնի միջև գտնվող բերդերը լքված են և այնտեղ Ասորիքի, Ջազիրայի ու Կիննասրինի մարդկանցից զորք տեղավորեց, մինչև արշավանքից վերադառնալը: Սրանից մեկ կամ երկու տարի հետո եղիդ (Յազիդ) իրն ալ-Հուռ ալ-Աբսիին ամառային արշավանքի ուղարկեց ու հրամայեց նույնը կրկնել և բոլոր կառավարիչները նույնը կրկնում էին: Նույն անձնավորությունն ասել է, թե «Մուավիայի արշավանքների գրքում» գտել եմ, որ գրված է թե երեսունմեկ թվին (24 օգոստոս 651 – 11 օգոստոս 652) Մուավիան արշավել է Մամեստիայի կողմից ու հասել Դորիլիում[30] (Դարաուլիյա) և վերադարձի ճանապարհին մինչև Անտիոք, ամեն մի բերդի կողքով անցնելիս քանդել է:

Ինձ պատմել է Մուհամմադ իրն Սաադը՝ վերցնելով Վակիդիից և ուրիշներից, թե ութսունչորս (24 հունվար 703 – 13 հունվար 704) թվականին ամառային արշավանքը գլխավորեց Աբդալլահ իրն Աբդ ալ-Մալիք իրն Մարուանը, որն անցավ Անտիոքի լեռնանցքից ու հասավ Մամեստիա, ուր վերակառուցեց բերդը հին հիմքերի վրա: Նա տեղավորեց զինվորների, որոնցից երեք հարյուր հոգու ինքն էր ընտրել իրև անվախ և քաջ [ռազմիկների]: Դրանից առաջ մահմեդականները երբեք այստեղ չէին ապրել: Նա մզկիթ կառուցեց Տալլ ալ-Հիանի (բերդի բլուր) վրա, ապա իր զորքով հարձակվեց Սինան բերդի վրա ու գրավեց: Նա ուղարկեց եղիդ իրն Հունայն ալ-Թաի ալ-Անթաքիին, որն արշավեց ու վերադարձավ նրա մոտ:

Ասել է Աբու-լ-Խաթթաբ ալ-Ազդին, թե մահմեդականության օրոք Աբդ ալ-Մալիք [խալիֆան] առաջինն էր, որն իր որդու՝ Աբդալլահ իրն Աբդ ալ-Մալիքի ձեռքով ութսունչորս թվականին կառուցել է Մամեստիայի բերդը հին հիմքերի վրա և կառուցումն ու մատակարարումն [գենքով ու մթերքով] ավարտել է ութսունհինգ (14 հունվար 704 – 1 հունվար 705) թվականին: Բերդում եղել է եկեղեցի, որը չտեմարանի է վերածվել: Անտիոքից դուրս եկող առաջապահ զորքերը ամեն տարի գալիս էին այստեղ, ձմեռում, ապա վերադառնում և նրանց թիվը լինում էր հազար հինգ հարյուրից երկու հազար:

Օմար իրն Արդ ալ-Ազիզ խալիֆան անձամբ եկավ և այցելեց Մամեստիայի չտեմարանը ու կամեցավ քանդել քաղաքը, ինչպես նաև նրա ու Անտիոքի միջև գտնվող բերդերը: Նա ասել է՝ չեմ սիրում, որ հռոմները պաշարում են նրա բնակիչներին: Սակայն մարդիկ նրան բացատրեցին, որ հենց դրա համար է կառուցված, որ դիմադրի հռոմներին Անտիոքի դեմ արշավանքի դեպքում և եթե դա քանդվի, թշնամին մինչև Անտիոք արգելքի չի հանդիպի: Նա թողեց ու բնակիչների համար մայր մզկիթ կառուցեց Քաֆարբրայայի կողմում: Այստեղ ջրապահեստ (տահրիջ) կառուցել տվեց, որի վրա նրա անունն էր գրված: Մզկիթը, որը կոչվում էր բերդի մզկիթ, Մուտասիմ

խալիֆայի օրոք արդեն քանդվել էր:

Ապա Հիշամ Արդ ալ-Մալիք [խալիֆան] կառուցեց նրա արվարձանը, իսկ Մարուան իրն Մուհամմադ [խալիֆան] կառուցեց փայտաշեն տներ Պիրամոսի (Ջայհան) արևելյան ափին և նրա չուրջը պարիսպ քաշեց, փայտե դարպաս չինեց ու խրամատ փորեց: Երբ Աբու-լ-Աբբասը խալիֆա դարձավ, Մամեստիայի կայազորի վրա հավելյալ չորս հարյուր հոգու համար ռոճիկ նշանակեց ու հողամասեր բաժանեց: Երբ Մանսուրը խալիֆա դարձավ, Մամեստիայում չորս հարյուր հոգու համար ռոճիկ նշանակեց, իսկ հարյուր երեսունինը (5 հունիս 756 – 24 մայիս 757) թվականին հրամայեց վերակառուցել Մամեստիա քաղաքը, որի պարիսպը երկրաշարժից քանդվել, քայքայվել էր և քաղաքի ներսում քիչ բնակիչներ էին մնացել:Նա քաղաքի պարիսպը վերակառուցեց, հարյուր քառասուն (25 մայիս 757 – 13 մայիս 758) թվականին մարդկանց բնակեցրեց և այն անվանեց ալ-Մամուրա (չլնացած), նրանում մայր մզկիթ կառուցեց հին մեհյանի տեղում և Օմարի մզկիթից մի քանի անգամ մեծ դարձրեց: Մամուն [խալիֆան], երբ Աբդալլահ իրն Թահիր իրն ալ-Հուսայնը Մաղրիբի կառավարիչ էր, այն (մզկիթը) ավելի մեծացրեց: Դեռ Մանսուրը հազար ռազմիկի համար ռոճիկ էր նշանակել, ապա փոխադրեց փայտե տների բնակիչներին՝ պարսիկներին, սլավոններին (սակալիբա) և քրիստոնյա նաբաթներին (արամեացիք), որոնց այնտեղ բնակեցրել էր Մարուանը, հողամասեր հատկացրեց քաղաքում նրանց հին տների փոխարեն, նույն չափով, իսկ հին տները քանդեց ու նորերը կառուցելու օգնեց: Այս զորականներին նա հատկացրեց հողամասեր ու բնակարաններ: Երբ խալիֆա դարձավ Մահդին, Մամեստիայում երկու հազար ռազմիկի համար ռոճիկ նշանակեց, սակայն հողային կալվածներ չտվեց, քանզի քաղաքն արդեն կանոնավոր զորքով ու կամավորներով ապահովված էր: Պարբերաբար եկող առաջապահ զորքերը չարունակեցին ամեն տարի գալ Անտիոքից մինչև Սալիմ ալ-Բարալլուսիի կառավարիչ դառնալը, որը հինգ հարյուր ռազմիկների համար ռոճիկ նշանակեց, որոշելով ամեն մեկին տալ տասական դինար: Այսպիսով քաղաքում եղածները (զորք ու բնակչություն) բազմացան և ուժեղացան: Այս դեպքերը կատարվեցին Մահդի խալիֆայի օրոք:

Ինձ պատմել է Մուհամմադ իրն Սահմը, լսելով սահմանային ամրությունների չրջանի ծերունիներից (չեյխերից), թե հռոմները ճնշում բանեցրին Մամեստիայի [մահմեդական] բնակիչների վրա, պահանջելով քաղաքից դուրս գալ և նրանք դուրս եկան: Սակայն Սալիհ իրն Ալին ուղարկեց Ջաբրիլ իրն Յահիա ալ-Բաջալիին, որը հարյուր քառասուն (25 մայիս 757 – 13 մայիս 758) թվականին վերաչինեց քաղաքը և մահմեդականների բնակեցրեց: Ռաշիդ [խալիֆան]

կառուցեց Քաֆարբայան, սակայն ասվում է, որ նրա շինությունն սկսվել է Մահդիի խալիֆայության օրոք, իսկ Ռաշիդը բարեփոխել է շինվածքը և ամրացրել խրամատով: Ապա Մամունին բողոք ներկայացվեց քաղաքի տների սղության մասին և նա վերացրեց [վարձը]: Նրանց տները իջևանատների, պանդոկների նման էին: Նա հրամայեց քաղաքի չուրջը պարիսպներ կառուցել և բարձրացնել, սակայն չկարողացավ ավարտել մահվան պատճառով: Մուտասիմ Բիլլահը հրամայեց ավարտել ու պատշաճ բարձրության հասցնել:

Մուսակկար բերդը ամրացրել է Հիշամ իբն Աբդ ալ-Մալիք [խալիֆան] հասան իբն Մաավայհ ալ-Անթաքիի ձեռքով: Երբ նկավ տեսավ, որ փորվող խրամատի մեջ մի սաստիկ երկար սրունքի ոսկոր է գտնվել, ուղարկել տվեց Հիշամին:

Հիշամը կառուցեց Կաթարղաչ բերդը Աբդ ալ-Ազիզ իբն Հայյան ալ-Անթաքիի ձեռքով: Հիշամը կառուցեց նաև Մաուրա բերդը Անտիոքից եկած մի մարդու միջոցով: Սրա կառուցման առիթն այն էր, որ հոռոմները նրա (Հիշամի) դեսպաններից մեկին խանգարեցին Ամանոսի լեռնանցքում ալ-Ակաբա ալ-Բայդայի (սպիտակ լեռնանցք) մոտ, ուստի նա քառասուն հոգու և մի խումբ մարդայիտների (ջարաջիմա) նշանակեց, իսկ Բաղրասում դրեց հիսուն հոգուց կայազոր և դրա համար մի բերդ կառուցեց: Հիշամը կառուցեց նաև Բուկա բերդը Անտիոքի գավառում, որը վերջերս վերանորոգվեց ու բարեկարգվեց: Մուտասիմ Բիլլահի խալիֆայության ժամանակ Մուհամմադ իբն Յուսուֆ ալ-Մարուազին, որը հայտնի է Աբու Սաիդ անվամբ, կառուցեց մի բերդ Անտիոքի ծովի ափին, հոռոմների այնտեղ կատարած հարձակումից հետո:

Ռակկայի[31] դատավոր Դաուդ իբն Աբդ ալ-Համիդը պատմել է լսելով իր հորից, իսկ վերջինս իր պապից, թե Օմար իբն Աբդ ալ-Ազիզը [խալիֆան] կամեցել է քանդել Մամեստիան ու բնակիչներին այնտեղից փոխադրել, քանզի հոռոմներից շատ էին նեղվում, սակայն նախքան իրագործելը մահացել է:

Անտիոքի և Բաղրասի բնակիչներից ոմանք ինձ պատմել են, թե Մասլամա իբն Աբդ ալ-Մալիքը, երբ արշավել էր Ամորիոն, իր հետ էր տարել իր կանանոցը ու նրա մարդիկ ևս իրենց հետ էին տարել իրենց կանանց: Օմայաններն այս բանն անում էին, որպեսզի իրենց կանանց պատվի համար [ռազմիկները] լավ կռվեն: Երբ Բաղրասի լեռնանցքը հասան այն նեղ ճանապարհի մոտ, որն իշխում է հովտին, ժանվարներից (գահավորակ) մեկի վրայից մի կին ընկավ ձորը և Մասլաման հրամայեց բոլոր կանանց, որ քայլեն և նրանք քայլեցին: Այդ լեռնանցքը կոչվեց Ակաբատ ալ-Նիսա (Կանանց լեռնանցք): Հետագայում Մուտասիմը այդ ճանապարհի եղրին քարե ցածր պատ էր կառուցել:

Ասել է Աբու-լ-Նուման ալ-Անթաքին, թե Անտիոքից Մամեստիա ընթացող ճանապարհին կար առյուծների որջ ուր առյուծները մարդկանց նեղում էին: Երբ Վալիդ իբն Աբդ ալ-Մալիքը խալիֆա դարձավ, այդ մասին նրան բողոքեցին և նա բաց թողեց չորս հազար որձ և էգ վայրի գոմեշ և դրանով ցանկալի արդյունքն ստացվեց Ալլահի հաճությամբ:

Բանն այն էր, որ Հայջաջ [փոխարքայի][32] նշանակած կառավարիչը Սինդում Մուհամմադ իբն ալ-Կասիմ ալ-Սակաֆին այնտեղից հազարավոր [վայրի] գոմեշներ էր ուղարկել նրան, իսկ Հայջաջը դրանցից ուղարկել էր Վալիդին, որից և վերջինս, ինչպես ասվեց, չորս հազարն այնտեղ ուղարկեց, իսկ մնացածը՝ Քասքարի խիտ անտառներում բաց թողեց: Երբ Յազիդ իբն ալ-Մուհալլաբը հանվեց ու սպանվեց և Յազիդ իբն Աբդ ալ-Մալիք խալիֆան Մուհալլաբ ցեղի ունեցվածքը բռնագրավեց, վերցրեց նաև չորս հազար գոմեշ ու բերեց Տիգրիսի և Քասքարի գավառները: Ահա սրանց ևս Յազիդ իբն Աբդ ալ-Մալիքը ուղարկեց Մամեստիա՝ ծաթների (զութի) հետ միասին: Ուստի գոմեշները Մամեստիայում դարձան ութ հազար և Անտիոքի ու Կիննասրինի ժողովուրդը նրանցից չատերին բնտելացրել և իրենց համար վերցրել էին, Մարուան իբն Մուհամմադ իբն Մարուան [խալիֆայի] օրոք տեղի ունեցած խռովության ժամանակ: Երբ Մանսուրը դարձավ խալիֆա, հրամայեց այդ բոլորին վերադարձնել Մամեստիա: Իսկ [ինչ վերաբերում է] Անտիոքում եղած գոմեշներին, ապա դրանք ծաթների կողմից բերվածներն էին, ինչպես նաև Բուկայի գոմեշները:

Աբու-լ-Խաթթաբն ասել է, թե Ադանայից Մամեստիա ընթացող ճանապարհի վրայի կամուրջը, որը Վալիդի կամուրջ (ջիսր ալ-Վալիդ) է կոչվում, և Մամեստիայից ինը մղոն հեռավորության վրա է, կառուցել է Վալիդ իբն Յազիդ իբն Աբդ ալ-Մալիքը [որն սպանվեց] հարյուր քսանհինգ թվականին (4 նոյեմբեր 742 – 24 հոկտեմբեր 743): Սակայն Աբու Նուման ալ-Անթաքին և ուրիշներ ասել են, թե Ադանան կառուցվել է հարյուր քառասունմեկ (14 մայիս 758 – 2 մայիս 759) կամ հարյուր քառասուներկու (4 մայիս 759 – 21 ապրիլ 760) թվականին, երբ այնտեղ ճամբար էր դրել Խորասանի զորքը Մասլամա իբն Յահիա ալ-Բաջալիի գլխավորությամբ, ինչպես նաև Ասորիքի զորքը Իբն Մալիք իբն Ադհամ ալ-Բահիլիի հրամանատարության տակ և այս երկուսն էլ ուղարկված էին Սալիհ իբն Ալիի կողմից:

Հարյուր վաթսունհինգ (26 օգոստոս 781 – 14 օգոստոս 782) թվականին Մահդի [խալիֆան] իր Հարուն ալ-Ռաշիդ որդուն արշավանքի ուղարկեց Ռումի երկիրը: Սա կանգ առավ Խալիջի (ծոց)[33] մոտ, ապա գնաց ու նորոգեց Մամեստիան ու նրա մզկիթը, կայազորն ավելացրեց ու բնակիչներին դինեց: Նա վերակառուցեց պալատը, որն Ադա-

նայի Սարոս (Սայհուն)[34] գետի վրա գտնվող կամուրջի մոտ էր: Նախապես Մանսուրը արշավանքի էր ուղարկել Սալիհ իբն Ալիին Ռումի երկիրը և սա հանձնարարել էր Հիլալ իբն Դայղամին Դամասկոսի, Հորդանանի (Ուրդուն) և այլ վայրերի մի խումբ ռազմիկների հետ այդ բերդը վերակառուցել: Սակայն կառուցվածքն ամուր չէր և Ռաշիդը քանդեց ու վերատին կառուցեց:

Հարյուր իննսունչորս (15 հոկտեմբեր 809 – 3 հոկտեմբեր 810) թվականին Աբու Սուլայմ Ֆարաջ ալ-Խադիմը (ներքինի) կառուցեց Ադանան, որը լավ կառուցապատեց և բերդով ամրացրեց և այնտեղ հաստատեց Խորասանից և այլ վայրերից բերված զորքը, ավելացնելով նաև ռոճիկը: Նա գործում էր Մուհամմադ իբն ալ-Ռաշիդի հրամանով: Նորոգեց նաև Կասր Սայհանը (Սարոսի պալատը): Երբ Ռաշիդը հարյուր իննսուներեքին (25 հոկտեմբեր 808 – 14 հոկտեմբեր 809) մեռավ սահմանային գոտում, նրա նչանակած տասանորդի վերակացուն էր Աբու Սուլայմը, որն այժմ վերահաստատվել էր Մուհամմադ [իբն Ռաշիդի] կողմից: Այս Աբու Սուլայմը Անտիոքի նստավայր պալատի տերն էր (սահիբ ալ-դար):

Ինձ պատմել է Մուհամմադ իբն Սաադը, վերցնելով Վակիդիից, թե Հասան իբն Կահթաբա ալ-Թաին Ռումի երկիրն արշավեց հարյուր վաթսուներկու (26 սեպտեմբեր 778 – 16 սեպտեմբեր 779) թվականին Խորասանի, Մոսուլի, Ասորիքի զորքերով, եմենի օգնական գնդերով և Իրաքի ու Հիջազի կամավորներով, հասնելով Տարսոնից այն կողմ: Նա Մահդի [խալիֆային] տեղեկացրեց, թե ինչպիսի նչանակություն ուներ վերջինիս (Տարսոն) վերակառուցումը, ամրացումը, և նրանում կայազորի հաստատումը, որը հնարավորություն կտար մահմեդական պետությանը մեծ անախորժություններից խուսափելու և ճնշելու թշնամուն, երբ վերջինս փորձում է հարձակվել ու դավեր նյութել: Հասանն այս արշավանքների ընթացքում մեծ քաջագործություններ էր կատարել և հռոմոց երկիրն այնպես էր ասպատակել, որ նրան կոչել էին սատանա (չայտան): Այս արշավանքների ժամանակ նրա հետ էին քուֆացի հաղիսագետ Մանդալ ալ-Անազին ու Մուտամիր իբն Սուլայման ալ-Բասրին:

Ինձ ասել է Մուհամմադ իբն Սաադը, որ լսել է Սաադ իբն ալ-Հասանից, թե երբ Հասանը (իբն Կահթաբա) վերադարձավ Ռումի երկրից, իջավ Տարսոնի դաշտը ու ձիով մոտեցավ քաղաքին, որն ավերակ վիճակում էր: Զննեց, բոլոր կողմերից շրջեց և մոտավորապես գնահատեց, որ կարող է հարյուր հազար բնակչություն տեղավորել: Երբ ներկայացավ Մահդի [խալիֆային], նկարագրեց քաղաքի վիճակը և թե ինչպիսի առավելություններ կունենան մահմեդական պետությունն ու նրա բնակիչները և ինչպիսի զայրույթ ու հուսախաբություն կունենա թշնամին, երբ քաղաքը վերականգնվի և կայազոր

ունենա: Նրան տեղեկացրեց նաև Հաղասի վիճակը, այնպիսի ձևով, որ համոզեց Հրաման տալ վերակառուցելու քաղաքը: Սա հրամայեց որ սկզբում վերակառուցվի Հաղասը, որն իրոք կատարվեց և ապա՝ Տարսոնը:

Հարյուր յոթանասունմեկին (22 հունիս 787 – 10 հունիս 788) Ռաշիդին լուր հասավ, թե հռոմեները իրենց մեջ համաձայնել են դուրս չիդին լուր հասավ, թե հռոմեները իրենց մեջ համաձայնել են դուրս գալ արշավանքի դեպի Տարսոն [այն] գրավելու, այնտեղ ամրանալու և ռազմիկներ տեղավորելու նպատակով: Նա այդ տարում արշավանքի ուղարկեց Հարսամա իբն Այանին, հրամայելով կառուցել Տարսոնը, բնակչություն հաստատել և ամրացված քաղաքի վերածել: Նա հրամաններ գործադրեց Ֆարաջ իբն Սուլայմ ալ-Խադիմի (ներքինի) միջոցով, Ռաշիդից թույլտվություն վերցնելուց հետո: Ֆարաջին հանձնարարվեց հսկել չինարարությանը, իսկ Աբու Սուլայմը գնաց Մադինատ ալ-Սալամ (Խաղաղության քաղաք, Բաղդադ) և ուղարկեց նատ ալ-Սալամ (Խաղաղության քաղաք, Բաղդադ) և ուղարկեց առաջին կայազորը, խորասանյան զորքից՝ երեք հազար հոգի, որը եկավ Տարսոն: Ապա ուղարկեց երկրորդ կայազորը՝ երկու հազար մարդ, որից հազարը Մամեստիայից էր, հազարը՝ Անտիոքից, ամեն մեկի ռոճիկի վրա ավելացնելով տաս դինար: Երկու կայազորները մադինատ դրեցին Մադաինում՝ Բաբ ալ-Ջիհադի (սրբազան պատերազմի դուռ) մոտ, Հարյուր յոթանասուներկու թվականի Մուհառամ ամսի սկզբին (11 հունիս 788), մինչև որ ավարտվեց Տարսոնի շինարարությունը, ամրացումն ու մզկիթի կառուցումը: Ֆարաջը չափեց երկու գետերի միջև եղած տարածությունը, որը կազմում էր չորս հազար բնակելի հողակտոր, ամեն մի հողակտորը քսան կանգուն քառակուսի: Այդ հողակտորները որպես կալված հատկացրեց Տարսոնի բնակիչներին (կայազորներին): Այսպիսով երկու կայազորները տեղավորվեցին քաղաքում Հարյուր յոթանասուներկու թվականի Ռաբի Բ ամսին (8 սեպտեմբեր – 6 հոկտեմբեր 788):

Աբդ ալ-Մալիք իբն Սալիհը Տարսոնի կառավարիչ նչանակել էր Յազիդ իբն Մուխալլադ ալ-Ֆազարիին, սակայն Խորասանի զորքը նրան քաղաքից վտարեց, վախենալով նրանից, քանզի Հուբայրիյա ցեղին էր պատկանում: Սա իր փոխարեն նչանակեց Աբու-լ-Ֆավարիսին և Աբդ ալ-Մալիք իբն Սալիհը հաստատեց նրան: Այս դեպքերը տեղի ունեցան Հարյուր յոթանասուներեք թվականին (31 մայիս 789 – 19 մայիս 790):

Ասել է Մուհամմադ իբն Սաադը, վերցնելով Վակիդիից, թե Սիսի[35] (Սիսիյա) ժողովուրդը դուրս եկավ իր տներից և Ռումի լեռնային հեռավոր շրջանները հասավ Հարյուր իննսունչորս (15 հոկտեմբեր 809 – 3 հոկտեմբեր 810) կամ Հարյուր իննսուներեք (25 հոկտեմբեր 808 – 14 հոկտեմբեր 809) թվականներին: Իսկ Սիս քաղաքը (կառուցված) է Անազարբայի[36] բրի (Տալ Այն Զարբա) վրա: Կառուցվել է

Մուտավաքքիլ Ալալլահի խալիֆայության օրոք, Այի իրն Յահիա ալ-Արմանիի[37] կողմից, Հետո Հոռոմներն ավերեցին այն:

Ասվել է, թե նա որ Ռումի երկրում վառել է Անտիոքը Արքաս իրն ալ-Վալիդ իրն Արդ ալ-Մալիքն է, որի պատճառով մահվան է դատապարտվել:

Իսկ Տալլ Ջուբայրն այսպես է կոչվել Անտիոքից մի պարսիկի անվամբ, որն այդ վայրում ընդհարում է ունեցել [Հոռոմների հետ]: Այս վայրը (բերդը) Տարսոնից տաս մղոն հեռավորության վրա է:

Ջու-լ-Քիլա անվամբ ծանոթ բերդը, պարզապես Ջու-լ-Կիլա (բերդեր ունեցող) է կոչվել, քանզի այնտեղ երեք բերդ (կալա) կա, սակայն աղավաղվել է: Նրա անունը Հունարեն (Հոռոմերեն) նշանակում է «աստղավոր բերդ»:

Քանիսատ ալ-Սուլհ (Հաշտության եկեղեցի) վայրի անունը մեկնաբանվում է նրանով, որ Հոռոմները, երբ եկել էին Ռաշիդ [խալիֆային] հաշտության առաջարկելու, այստեղ էին իջևանել:

Մարջ Հուսայն վայրն իր անունն ստացել է Հուսայն իրն Մուսլիմ ալ-Անթաքիից, որն այստեղ ընդհարում է ունեցել և հաղթել Թշնամուն:

Մահդին իր որդուն՝ Հարուն ալ-Ռաշիդին հարյուր վաթսուներեք (17 սեպտեմբեր 779 – 5 սեպտեմբեր 780) թվականին արշավանքի ուղարկեց և նա պաշարեց Դամալուն, որը հասարակ ժողովուրդը կոչում է Սամալու: Բնակիչները երաշխավորագիր խնդրեցին տաս նշանավոր տոհմի համար, որոնց մեջ էր նաև Կոմսը (կումիս), և նա ընդառաջեց: Պայմաններից մեկն այն էր, որ նրանք իրարից չանջատվեն, ուստի նրանց բոլորին տեղավորեցին Բաղդադի Բար ալ-Շամմասիյա դռան մոտ ու նրանց թաղը կոչեցին Սամալու, որն այսօր էլ հայտնի է: Ասվում է նաև, որ նրանք Մահդիին էին հանձնվել, որը նրանց կյանքը խնայեց և բերեց այս վայրը՝ հրամայելով, որ կոչվի Սամալու: Ռաշիդի հրամանով բերդում մնացածներին դուրս բերեցին ու հրապարակորեն վաճառեցին: Բոնել էին մի եթովպացու, որը հայհոյել էր Ռաշիդին ու մահմեդականներին և սրան աչտարակներից մեկի վրա խաչեցին:

Ինձ պատմել է Ահմադ իրն ալ-Հարիս ալ-Վասիթին, լսելով Մուհամմադ իրն Սաադից, իսկ վերջինս՝ Վակիդիից, թե հարյուր ութսուն (16 մարտ 796 – 4 մարտ 797) թվականին Ռաշիդը հրամայեց վերակառուցել Անազարբա քաղաքը, ամրացնել և այնտեղ նշանակել Խորասանից ու այլ վայրերից բերված կայազոր, նրանց բնակարաններ հատկացնելով որպես կալված: Ապա հարյուր ութսուներեքին (12 փետրվար 799 – 31 հունվար 800) հրամայեց կառուցել Հարունիյան[38], որն իրոք կառուցվեց ու կոչվեց նրա անունով: Այնտեղ հաստատվեց ռազմիկների կայազոր, ինչպես նաև եկան կամավորներ: Ասվում է

նաև, թե Ռաշիդը այն կառուցել է Մահդիի խալիֆայության օրոք, ապա ավարտել է իր խալիֆայության տարիներին:

Ալ-Քանիսատ ալ-Սաուդան[39] (սև եկեղեցի) կառուցվել է սև քարից և դա Հոռոմների կառուցածն է եղել: Ունեցել է հին բերդ, որը պատերազմների ընթացքին քանդվել է: Ռաշիդը հրամայեց վերակառուցել ալ-Քանիսատ ալ-Սաուդա քաղաքը, ամրացնել և նշանակել ռազմիկների կայազոր, բարձր ռոճիկով:

Սահմանային ամրությունների գոտու բնակիչներից Ազդուն իրն Սաադն ինձ տեղեկացրել է, թե Հոռոմները հարձակվել են այդ քաղաքի վրա, երբ Կասիմ իրն Ռաշիդը Դաբիկում էր: Նրանք բնակիչների հոտերը տարան և չատերին գերեվարեցին: Այստեղ չտապեցին Մամեստիայի զորքերն ու կամավորները և փրկեցին ամեն ինչ որ տարել էին, չատերին ազատեցին, իսկ մնացածները վերադարձան ջարդված, կոտորված: Կասիմը մարդ ուղարկեց ու ամրացվեց քաղաքը, նորոգվեց ու ավելացվեց կայազորը: Այստեղ տեղավորվեց նաև ծաթների այն մասը, որին Մուտասիմ Բիլլահ [խալիֆան] փոխադրել էր Անազարբա և նրա գավառները բերելով Բաթահիից (Ճահճուտ տափաստան), որը գտնվում է Վասիթի ու Բասրայի միջև:

Ինձ պատմել է Աբու Սալիհ ալ-Անթաքին, թե Աբու Իսհակ ալ-Ֆազարին ատում էր սահմանային ամրությունների չրջանում հողեր գնելը, ասելով՝ նրանք ովքեր սկզբում այդ հողերը խլել են Հոռոմների ձեռքից իրենց միջև չեն բաժանել այն և հետագայում ընկել են ուրիշների ձեռքը: Այս բանը մի տեսակ տարակուսանք է առաջացնում, ուստի իմաստուն մարդը պետք է խուսափի դրանից:

ՋԱՋԻՐԱՑԻ (ՎԵՐԻՆ ՄԻՋԱԳԵՏՔ) ՆՎԱՃՈՒՄԸ

էջ 176 – 185

Ինձ պատմել է Ռակկայի դատավոր Դաուդ իրն Արդ ալ-Համիդը, լսելով հորից, իսկ նա պապից ու սա էլ Մայմուն իրն Միհրանից, թե Ջազիրան ամբողջովին նվաճվել է Իյադ իրն Ղանմի կողմից Աբու Ուբայդայի մահվանից հետո: Օմար [խալիֆան] նրան նշանակել էր [Ջազիրայի] կառավարիչ: Աբու Ուբայդան [Իյադին] իրեն հաջորդ էր նշանակել Ասորիքում, սակայն Օմար իրն ալ-Խաթթաբը նշանակեց եզիդ իրն Աբու Սուֆիանին, ապա Մուավիային՝ Ասորիքի կառավարիչ, իսկ Իյադին՝ հրամայեց արշավել Ջազիրա:

Ինձ պատմել է Հուսայն իրն ալ-Ասուադը, լսելով Յահիա իրն Ադամից, որը լսել էր բազմաթիվ Ջազիրացիներից, իսկ սրանք Սուլայման իրն Աֆթա ալ-Կուրաչիից, թե Աբու Ուբայդան Իյադ իրն Ղանմին

ուղարկել էր Ջազիրա և երբ նա այնտեղ էր, Աբու Ուբայդան մահացել էր, իսկ Օմարը դրանից հետո էր նշանակել [Ղանմին] կառավարիչ [Ջազիրայի]:

Ինձ պատմել է Բաքր իբն ալ-Հայսամը լսելով Աբդալլահ իբն Մուհամմադ ալ-Նուֆայլիից և սա Սուլայման իբն Աթթաից, թե Իյադ իբն Ղանմը նվաճեց Եղեսիան (Ռուհա), ուր ուղարկել էր Աբու Ուբայդան, կանգնեց նրա դռան առջև աշխատ նժույգի վրա և նրանք (բնակիչները) հաշտություն կնքեցին նրա հետ առ այն, որ նրանց էր մնում տաճարը իր շրջակայքով, չսկսեր է նոր եկեղեցի կառուցելին բացի եղածից, պարտավոր էին մահմեդականներին օգնել Թչնամիների դեմ, իսկ եթե պայմաններից որևէ մեկն անտեսվեր, այլևս հովանավորություն չէին վայելի: Ջազիրայի բնակչությունն ընդունեց այս նույն պայմանները, որ ընդունել էին Եղեսիայի բնակիչները:

Մուհամմադ իբն Սաադն ասել է, թե Վակիդին հաստատում է այն, որ լսել էինք Իյադի մասին՝ թե Աբու Ուբայդան մահացել է Էմմաուսի ժանտախտի տարին 18 (639) թվականին՝ փոխանորդ թողնելով Իյադին: Այդ ժամանակ վերջինիս հասավ Օմար [խալիֆայի] նամակը, որով նա նշանակվում էր Եմեսայի, Կիննասրինի և Ջազիրայի կառավարիչ: Նա արշավեց Ջազիրա 18 թվականի Շաաբան ամսի կեսին (19 օգոստոս 639) հինգշաբթի օրը, հինգ հազարով, առաջապահ զորքի հրամանատար ունենալով Մայսարա իբն Մասրուկ ալ-Աբսիին, աջ թևին՝ Սաիդ իբն Ամիր իբն Հուզայմ ալ-Ջումահիին, իսկ ձախ թևին՝ Սաֆուան իբն ալ- Մուաթթալ ալ-Սուլամիին: [Կարծվում է, թե] Խալիդ իբն ալ-Վալիդն էր ձախ թևին, սակայն ասվում է, որ Խալիդը Աբու Ուբայդայից հետո ոչ ոքի զրոշի տակ չի ընթացել, այլ մնացել է Եմեսայում մինչև իր մահը 21 (641 – 642) թվականին: Նա Օմարին կտակարար էր նշանակել: Ոմանք պնդում են, որ նա Մադինայում է մահացել, սակայն Եմեսայում մեռած լինելն ստույգ է:

Իյադի առաջապահը հասավ Ռակկա (Կալինիկում) և հարձակվեց շրջակայքում գտնվող արաբական մի բնակավայրի ու գյուղացիների վրա և ավար վերցրեց: Ով փրկվեց փախավ ու մտավ Ռակկա քաղաքը:

Եկավ Իյադը իր զորքով և պատրաստությամբ կանգ առավ [Ռակկայի] Եղեսիայի դռան (Բաբ Ռուհա) մոտ, որը նրա դռներից մեկն էր: Մահմեդականներին մեկ ժամ նետահարում էին և ոմանք վիրավորվեցին: Նա ետ քաշվեց նրանցից որպեսզի քարերն ու նետերը իրենց չհասնեն: Նա ձիով շրջեց քաղաքի չուրջը և նրա դռների առջև հնծյալ գնդեր նշանակեց, ապա իր զորքի մոտ վերադարձավ: Նա ձիավոր ջոկատներ ցրեց, որպեսզի գերիներ և ուտեստեղեն բերեն: Հնձի ժամանակ էր, և երբ հինգ կամ վեց օր անցավ, ու նրանք այդ վիճակում էին, քաղաքի պատրիկը լուր ուղարկեց Իյադին երաշխավորագիր (աման)

խնդրելով: Իյադը հաշտության պայմանագիր կնքեց, խոստանալով երաշխավորել բնակիչների անձի, ընտանիքների, ունեցվածքի և քաղաքի ապահովությունը: Իյադն ասում էր՝ հողը մերն է և մենք նրա նվաճել: Նա թողեց այն (հողը) նրանց ձեռքում խարաջ վճարելու պայմանով: Նա վերցրեց այն հողերը, որ դիմմիները չէին կամենում մշակել և տվեց մահմեդականներին տասանորդ վճարելու պայմանով: Նա ջիզիա դրեց նրանց վրա և ամեն մեկին պարտավորեցրեց տարեկան մեկ դինար վճարել, ազատելով կանանց ու երեխաներին: Դինարից բացի պահանջեց նաև մի քանի կաֆիզ[40] ցորեն և որոշ չափով ձեթ, քացախ ու մեղր, սակայն երբ իշխանությանը տիրացավ Մուավիան, այս բոլորը հաշվեց որպես ջիզիա: Ապա նրանք բացեցին քաղաքի դռները և մահմեդականների համար չուկա սարքեցին եղեսիայի դռան մոտ: Իյադը գրեց նրանց.

«Հանուն Ալլահի ամենագութ և ամենողորմ,

Սա չնորհեց Իյադ իբն Ղանմը Ռակկայի բնակիչներին իր քաղաք մտած օրը: Երաշխավորագիր տվեց նրանց՝ անձերի, ունեցվածքի համար, նրանց եկեղեցիները չեն քանդվելու կամ բնակվելու, եթե վճարեն ջիզիան, որ նրանց վրա դրված է, կամ չդավաճանեն և կամ նոր եկեղեցիներ, տաճարներ չկառուցեն, [եկեղեցու] զանգը ուժեղ չհնչեցնեն, Զատկի երկուշաբթին բացահայտ չտոնեն, խաչը հրապարակորեն չցուցադրեն: Վկա է Ալլահը և նա բավական է իբրև վկա»:

Եվ Իյադը կնքեց իր կնիքով:

Ասվում է, որ Իյադը Ռակկայի ամեն մի հասունացած [տարիքի] բնակչից պահանջեց չորս դինար: Ճշմարտությունն այն է, որ Օմարը հետագայում գրել էր իր կառավարիչ Ումայր իբն Սաադին, որ ամեն մեկին պարտավորեցնի չորս դինար վճարել, ինչպես պարտավոր էր վճարել ոսկի օգտագործող բնակչությունը:

Ապա Իյադը եկավ Խառան[41] և իջավ Բաջուդդայում և իր առաջապահ զորքին ուղարկեց, սակայն Խառանի բնակիչները փակեցին դռները նրանց առջև և ետ մղեցին: Երբ [Իյադը] պաշարեց այն, բնակիչներից (հնթանոս) խառանցիք տեղեկացրին, որ քաղաքի մի մասն իրենց ձեռքում է գտնվում և թող [Իյադը] գնա Եղեսիա և ինչպիսի պայմանագիր որ կնքի նրանց հետ, իրենք համաձայն են այն ընդունել: Իսկ ինչ վերաբերում է [Խառանի] քրիստոնյաներին, ապա դրանց հետ թող վարվի ինչպես կամենա: Քրիստոնյաներն այդ լսելով [Իյադի] մոտ մարդ ուղարկեցին հայտնելով, որ իրենք համաձայն են [հնթանոս] խառանցիների առաջարկին և հնազանդվեցին:

Ապա նա եկավ Եղեսիա, որի բնակիչները նրա դեմ զորք հավաքեցին և մի ժամ նետահարում էին մահմեդականներին: Նրանց ռազմիկները քաղաքից դուրս եկան, իսկ մահմեդականները փախուստի մատնեցին նրանց, ստիպելով քաղաք ապաստանել: Սակայն չուտով

Հաչտութիւն ու երաչխավորագիր խնդրեցին և Իյադը համաձայնեց ու գրեց մի թուղթ որի պատճենն է.

«Ձանուն ամենագութ, ամենողորմ Ալլահի,

Սա է Իյադ իբն Ղանմի թուղթը եղեսիայի եպիսկոպոսին առ այն, որ եթե դուք իմ առջև բացեք քաղաքի դուռը, պարտավորվելով ամեն մի մարդու համար ինձ վճարել մեկ դինար, երկու մոդ ցորեն, ապա դուք կարող եք ապահով լինել ձեր անձերի, ունեցվածքի և ննթականների համար: Դուք պարտավոր եք մոլորյալին ճանապարհ ցույց տալ, կամուրջները, ճանապարհները նորոգել և խորհուրդներ տալ մահմեդականներին: Վկա է Ալլահը և նա բավական է իրրև վկա»:

Ինձ պատմել է Դաուդ իբն Աբդ ալ-Համիդը, լսելով իր Հորից, իսկ նա՝ իր պապից, թե Իյադի թուղթը եղեսիայի բնակիչներին հետևյալն է.

«Ձանուն ամենագութ, ամենողորմ Ալլահի.

Սա է Իյադ իբն Ղանմի ու նրա ընկերակից մահմեդականների թուղթը եղեսիայի բնակիչներին առ այն, որ ես երաչխավորում եմ նրանց արյունը (կյանքը), ունեցվածքը, դավակները, կանանց, քաղաքը և ջրաղացները, եթե կատարեն իրենց վրա դրված պարտավորությունները: Նրանք մեզ պարտավոր են կամուրջները նորոգել, մոլորյալներին առաջնորդել: Վկա են Ալլահը, նրա հրեշտակները և մահմեդականները»:

Ապա Իյադը եկավ Խառան և ուղարկեց Սաֆուան իբն Մուաթթալին ու Հարիբ իբն Մասլամա ալ-Ֆիհրիին Սամոսատ (Սումայսաթ)[42]: Իյադը հաչտութիւն կնքեց Խառանի բնակիչների հետ եղեսիայի հաչտութեան պայմաններով և նրանք դռները բացեցին: Սա այնտեղ կառավարիչ նշանակեց: Ապա գնաց Սամոսատ և գտավ Սաֆուան իբն Մուաթթալին ու Հարիբ իբն Մասլամային, որոնք չարունակում էին պաշարումը, նրա գյուղերից ու բերդերից որոշ մասը գրավելուց հետո: [Իյադը] նրա բնակիչների հետ հաչտութիւն կնքեց եղեսիայի բնակիչների հետ կնքվածի նման: Իյադը եղեսիայից արչավանքներ էր կատարում և ապա վերադառնում:

Ինձ պատմել է Մուհամմադ իբն Սաադը, վերցնելով Վակիդիից, իսկ նա Մուամմարից և վերջինս՝ Զուհրիից, թե Ջազիրայում չմնաց ոտք դնելու տեղ որ չնվաճվեր Օմար իբն ալ-Խաթթաբ [խալիֆայի] օրոք, Իյադ իբն Ղանմի ձեռքով նվաճվեցին Խառանը, եղեսիան, Ռակկան, Կարկիսիան[43], Մծբինն[44] (Նասիբին) ու Սինջարը[45]: Ինձ պատմել է Մուհամմադը, վերցնելով Վակիդիից, իսկ սա՝ Աբդ ալ-Ռահման իբն Մասլամայից, իսկ նա՝ Ֆուրատ իբն Սալմանից և նա էլ՝ Սաբիտ իբն ալ-Հաջջաջից, թե Իյադը նվաճել է Ռակկան, Խառանը, եղեսիան, Մծբինը, Նիրկերտը (Մայյաֆարիկինը)[46], Կարկիսիան և

եփրատի գյուղերն ու քաղաքները հաչտութեամբ, իսկ նրա հողերը՝ բռնի ուժով:

Պատմվում է, որ երբ Իյադը Ռակկայից Խառան եկավ, այն դատարկ գտավ, քանզի նրա բնակիչները տեղափոխվել էին եղեսիա: Երբ եղեսիան գրավեց, նկան իրենց քաղաքը և նրա համար հաչտութիւն կնքեցին, եղեսիայի հաչտութեան պայմաններով: Ինձ պատմել է Աբու Այյուբ ալ-Ռակկի ալ-Մուադդաբը, թե Հաջջաջ իբն Աբու Մանի ալ-Ռուսաֆին պատմել է՝ լսելով իր Հորից, նա էլ իր պապից, որ Իյադը նվաճեց Ռակկան, եղեսիան, Խառանը և Սամոսատը հաչտութեան նույն պայմաններով: Հետո եկավ Սարուջ[47], Ռասբայֆա[48], ալ-Արդ ալ-Բայդա[49] և հողերը նվաճեց, իսկ նրանց բերդերի մարդկանց հետ եղեսիայի հաչտութեան պայմաններով հաչտութիւն կնքեց: Ապա Սամոսատը դավաճանեց և երբ նա լսեց, նկավ պաչարեց մինչև որ գրավեց: Երբ լսեց, որ եղեսիայի ժողովուրդը խախտել է պայմանը, բանակ դրեց նրա առջև: Բացեցին քաղաքի դռները ու նա մտավ և նչանակեց կառավարիչ, զորագնդով հանդերձ:

Նա դիմեց եփրատի չրջակայքը ուր Ջիսր (կամուրջ) Մանբիջն է իր հարակից մասերով ու նվաճեց նույն պայմաններով: Եկավ Այն ալ-Վարդա, որը Ռաս ալ-Այնն[50] է, բայց երբ սա դիմադրեց, նա թողեց ու հեռացավ Տելլ Մաուզան[51] ու գրավեց եղեսիայի պայմաններով: Սա տեղի ունեցավ 19 (640) թվականին:

Իյադը Կարկիսիա ուղարկեց Հաբիբ իբն Մասլամա ալ-Ֆիհրիին, որը գրավեց և հաչտութիւն կնքեց Ռակկայի հաչտութեան պայմաններով: Իյադը առանց կռվի գրավեց Ամիդը եղեսիայի հաչտութեան պայմաններով: Գրավեց Նփրկերտը՝ նույն պայմաններով: Կռվով գրավեց Քաֆար Տուսա ամրոցը և Մծբինը, սակայն եղեսիայի պայմաններով: Նվաճեց Թուր Աբդինը, Մարդին ամրոցը[52] և Դարան[53], նույն ձևով, իսկ Կարդան[54] ու Բազաբդան[55], Մծբինի հաչտութեան պայմաններով:

Նրա մոտ եկավ Զավազանի (Անձևացյաց) պատրիկը[56] և նա հաչտութիւն կնքեց նրա հետ հողերի համար հարկ վճարելու պայմանով: Այս բոլորը կատարվեց 19 (640) թվականին և 20-ի Մուհառամ ամսի (31 դեկտեմբեր 640 – 20 Հունվար 641) որոշ օրերին: Ապա գնաց Արդն[57] ու նվաճեց այն Մծբինի պայմաններով, մտավ լեռնանցքը[58] ու հասավ Բաղնչ (Բաղլիս)[59], հետո անցավ Խլաթ (Խլաթ)[60] հաչտութիւն կնքեց նրա պատրիկի հետ և կանգ առավ ալ-Այն ալ-Համիդայի[61] առջև՝ Հայաստանում, որից այն կողմ չգնաց: Հետո վերադարձավ ու Բաղնչի տիրոջը պարտավորեցրեց երաչխավորել Խլաթի ու նրա գլխահարկի (ջիզիայի) վճարումը և նրա պատրիկի պարտավորությունները: Ապա Հեռացավ Ռակկա ու գնաց Եմեսա, որի կառավարիչն էր նրան նչանակել Օմարը և մնաց 20 (640–641) թվականին:

Օմարը [Ջազիրայի] կառավարիչ նշանակեց Սահդ իբն Ամիր իբն Հիզյամին, որը քիչ մնալուց հետո մեռավ և Օմարը նշանակեց Ումայր իբն Սաադ ալ-Անսարիին: Սա գրավեց Այն ալ-Վարդան սաստիկ կռվից հետո:

Ասում է Վակիդին, թե պատմել է մեկը, որը լսել է Իսհակ իբն Աբու Ֆարուայից, իսկ սա լսել է Աբու Վահբ ալ-Ջայշանի Դայլամ իբն Մուասայից, որ Օմար իբն ալ-Խաթթաբը գրել է Իյադին՝ հրամայելով Ումայր իբն Սաադին ուղարկել Այն ալ-Վարդա ու նա ուղարկեց նրան, իսկ սա առաջապահ զորքեր առաքեց, որոնք գյուղացիների մի մասի վրա հարձակվեցին և Թչնամու հոտերը քշեցին: Ապա քաղաքի բնակիչները [պարսպի] դռները փակեցին և քարանետ մեքենաներ դրեցին: Մահմեդականներից չատերն սպանվեցին քարերից ու նետերից, և դուրս եկավ նրանց պատրիկներից մեկը ու հայհոյեց աստված՝ մենք ձեր տեսածներից չենք: Այսուհանդերձ հետագայում քաղաքը գրավվեց հաշտության պայմանագրով:

Ինձ պատմել է Ամր իբն Մամունը, լսելով Հաջջաջ իբն Աբու Մանիից, իսկ սա իր հորից և պապից, թե Ռաս ալ-Այնը դիմադրեց Իյադ իբն Ղանմին և այն գրավեց Ումայր իբն Սաադը, որը Օմարի նշանակած կառավարիչն էր Ջազիրայում, մահմեդականների դեմ բնակիչների մղած կատաղի կռվից հետո և մահմեդականները բռնությամբ մտան քաղաքը: Ապա հաշտություն կնքեցին այն պայմանով, որ հողն իրենցը լինի և ըստ ջիզիա դրվի ամեն մի գլխին չորս դինար, սակայն նրանց կանանց ու երեխաներին չգերեվարեցին: Ասել է Հաջջաջը, լսելով Ռաս ալ-Այնի ծերունիներից, թե հիշում են, որ Ումայրը երբ մտել է [քաղաք] ասել է՝ լավ է լավ, [եկեք] դեպի ինձ, դեպի ինձ և սա նրանց համար երաշխավորագիր է համարվել: Հայտնի իրն Ադին գտնում է, որ Օմար իբն ալ-Խաթթաբը ուղարկել էր Աբու Մուսա ալ-Աշաարիին՝ Այն ալ-Վարդա, որի վրա նա հարձակվեց Ջազիրայի զորքով Իյադի մահվանից հետո: Ճշմարիտն այն է, որ Ումայրն է այն նվաճել սրով, սակայն չի գերեվարել և նրանց պարտավորեցրել է խարաջ ու ջիզիա վճարել: Այս բանը Հայսամից բացի ոչ ոք չի ասել: Հաջջաջ իբն Աբու Մանին ասել է, որ նա (Ումայրը) Ռաս ալ-Այնի բնակիչների մի մասին դուրս քշեց և նրանց հողերի վրա բնակեցրեց մահմեդականների, որոնց հողաբաժիններ (իկթա) բաշխեց:

Ինձ պատմել է Մուհամմադ իբն ալ-Մուֆադդալ ալ-Մաուսիլին, լսելով Սինջարի ծերուններից (շեյխերից), որոնք ասել էին, թե Սինջարը Հոռոմների ձեռքում էր, ապա Խոսրովը, որը ծանոթ է Պարուեղ (Աբարուիզ)[62] անվամբ, կամեցավ սպանել Հարյուր պարսիկներին, որոնց իր մոտ էին բերել ինչ որ խռովության և ըմբոստության պատճառով: Նրանց համար բարեխոսել էին և նա հրամայեց ուղարկել Սինջար, որը նա չէր կարողանում գրավել: Նրանցից երկուսը մահացել էին, իսկ իննսունութը հասան ու միանալով այնտեղ կռվող ռազմիկներին, գրավեցին քաղաքը և այնտեղ հաստատվելով սերնդագործեցին: Երբ Իյադը Խլաթից հեռացավ ու հասավ Ջազիրա, զորք ուղարկեց Սինջար, որը գրավեց այն հաշտության պայմանագրով և այնտեղ արաբների բնակեցրեց: Ջրուցաբաններից (ռավի)* գրով և այնտեղ արաբների բնակեցրեց: Ջրուցաբաններից (ռավի)* մեկը պատմել է, որ Իյադը գրավել է Մոսուլի[63] (Մաուսիլ) մոտ մի ամրոց, սակայն դա ճիշտ չէ: [.....]

Ասել է Վակիդին, թե ոմանք պատմել են, որ երբ Խալիդ իբն ալ-Վալիդը Օմար [Խալիֆայի] կողմից Ջազիրայի որոշ մասի կառավարիչ էր նշանակվել, մի օր Ամիդում թե այլուր բաղնիքում քսվել էր ինչ որ [օծանելիքի], որի մեջ գինի (սպիրտ) կար և երբ Օմարը լսեց, հեռացրեց նրան, սակայն դա ստույգ չէ:

Ամր իբն Նակիդը պատմել է լսելով Հաջջաջ իբն Մանիից, և սա իր հորից ու պապից, իսկ վերջինս՝ Մայմուն իբն Միհրանից, թե [Իյադը] սկզբում Ջազիրայի բնակիչներից, որպես մահմեդականների օգտին տրվող հարկ, որոշ ժամանակ վերցնում էր ձեթ, քացախ և կերակուր, ապա թեթևացրեց ու գոհացավ քառասունութ, քսանչորս և տասներկու դիրհեմով, ըստ մարդու վիճակի: Ամեն մի մարդ, բացի ջիզիայից վճարում էր նաև երկու մող ցորեն, երկու քսեստ (կիսթ) ձեթ և երկու քսեստ քացախ:

Ռակկայի բնակիչներից չատերն ինձ պատմել են, թե երբ Իյադը մեռավ և Ջազիրայի կառավարիչ դարձավ Սահդ իբն Ամիր իբն Հիզյամը, կառուցեց Ռակկայի ու Եղեսիայի մզկիթները, ապա նա մեռավ և Դիար Մուդարում[64] ու Դիար Ռաբիայում[65] մզկիթներ կառուցեց Ումայր իբն Սաադը: Հետո, երբ Մուավիան Ասորիքի և Ջազիրայի կառավարիչ նշանակվեց, Օսման իբն Աֆֆան [Խալիֆան] նրան հրամայեց, որ արաբներին տեղավորի քաղաքներից ու գյուղերից հեռու վայրերում և նրանց թույլ տա մշակել միայն այն հողը, որը ոչ ոքի չէր պատկանում: Սա տեղավորեց Տամիմ ցեղի մարդկանց Ռաբիայում, իսկ Մազհիհին և Մուդայրիր վայրերում տեղավորեց Կայս, Ասադ և այլ ցեղերից՝ խառն վիճակում: Այս բանն արեց Դիար Մուդարի տարբեր վայրերում, իսկ Ռաբիա ցեղին տեղավորեց նույն ձևով Դիար [Ռաբիայում]: Նա քաղաքների, գյուղերի ու սահմանային կայազորների վրա խնամակալներ նշանակեց, որոնք թոշակ էին ստանում որպեսզի պաշտպաններն նրանց և թողեց իր կառավարիչների հետ:

Ինձ պատմել է Աբու Հաֆս ալ-Շամին, լսելով Համմադ իբն Ամր ալ-Նասիբիից, թե Մծբինի կառավարիչը գրել էր Մուավիային, որը

* Ռավի – բանաստեղծությունների, ինչպես նաև մահմեդական խաբարների (ավանդապատում գրույցների) և հադիսների ասացող և փոխանցող:

Օսմանի կողմից Ասորիքի ու Ջազիրայի կառավարիչ էր, բողոքելով որ իր հետ եղած մահմեդականներից չատերը կարիճներից խայթվել են: Սա գրեց նրան, որ քաղաքի ամեն մի թաղի բնակիչներին պարտավորեցնի ամեն գիշեր թունավորված կարիճներ դնել: Այդպես էլ արեցին ու բերում էին կարիճները, որոնց նա հրամայում էր սատկեցնել:

Պատմել է ինձ Աբու Այյուբ ալ-Մուադդաբ ալ-Ռակկին, լսելով Աբու Աբդալլահ ալ-Կարկիսանիից, իսկ սա լսել էր ծերունիներից (շեյխերից). Թե Ումայր իրն Սաադը, Ռաս ալ-Այնը նվաճելուց հետո, քայլեց Խաբուր [գետի][66] երկայնքով. մինչև որ հասավ Կարկիսիա, որի բնակիչները խախտել էին [պայմանագիրը], իսկ նա նրանց հետ հաշտություն կնքեց նախկին պայմանագրի ձևով: Ապա եկավ Եփրատի բերդերը, մեկ առ մեկ նվաճեց և այս բոլորին տիրացավ Կարկիսիայի հաշտության պայմաններով: Այնտեղ նա մեծ դիմադրության չհանդիպեց, այլ բնակիչներից ոմանք երբեմն քարեր էին նետում: Երբ նվաճեց Տալբասը, Անատը, եկավ ալ-Նավիաա, Ալուսա և Հիտ ու տեսավ Ամմար իրն Յասիրին՝ Օմար իրն ալ-Խաթթաբի կողմից նշանակված Քուֆայի կառավարչին, որը Սաադ իրն Ամր իրն Հարամ ալ-Անսարիի հրամանատարությամբ, զորք էր ուղարկել՝ Անբարի վերևի կողմերը նվաճելու: Այդ բերդերի բնակիչները եկան նրաշխավորագիր (աման) խնդրելու և նա տվեց: Իսկ Հիտի բնակիչներից՝ եկեղեցու կեսը վերցնելուց հետո Ումայրը գնաց Ռակկա:

Որոշ գիտակ մարդիկ ինձ պատմել են, որ Հիտը և այն բերդերը, որոնք Քուֆայից այն կողմ են, նվաճել է Միղլաջ իրն Ամր ալ-Սուլամին՝ Աբդ Շամս ցեղի դաշնակիցը, մի ջոկատի հետ միասին: Նա նվաճեց այն և Եփրատի վրա կառուցեց ալ-Հադիսան[67]: Նրա որդիները մնացին Հիտում և նրանցից մեկը՝ Աբու Հարուն կոչված, դեռ հիշվում է այնտեղ: Ասել է նաև, թե Միղլաջը Սաադ իրն Ամր իրն Հարամի կողմից էր նշանակված, սակայն ճշմարտությունն Ալլահը գիտի:

Ասել են, որ Սախդ իրն Աբդ ալ-Մալիք իրն Մարուանի անվամբ կոչված (սա նա է, որը կոչվել է Սախդ ալ-Խայր (բարիք), քանզի խստակրոն էր) գետի մոտ մի թփուտ կար, ուր առյուծներ կային: Վալիդը այն պարգևել էր նրան և վերջինս գետ (ջրանցք) փորեց ու բարեկարգեց չրջակայքը: Ոմանք էլ գտնում են, թե Օմար իրն Աբդ ալ-Ազիզ [ալ-Խալիֆան] էր, որ այդ կալվածը պարգևեց նրան:

Գտնում են, որ Ռաֆիկան հին չէ, այլ կառուցվել է հավատացելոց իշխան Մանսուրի կողմից 155 (771-772) թվականին, ըստ իր [կառուցած] Բաղդադ քաղաքի հատակագծի և Խորասանից բերված զորք նշանակեց այնտեղ. Հետո անցավ Մահդիի ձևոքը, երբ գահաժառանգ էր, ապա [Հարուն] ալ-Ռաշիդը ամրոցներ կառուցեց: Ռակկայի ու Ռաֆիկայի միջև կային մշակված դատարկ տարածություններ և երբ

Ջազիրայի կառավարիչ դարձավ Ալի իրն Սուլայման իրն Ալին, Ռակկայի չուկաներն այնտեղ փոխադրեց: Անցյալում Ռակկայի մեծ չուկան Հայտնի էր Հիշամի հին չուկա անվամբ, ապա երբ Ռաշիդը նկավ Ռակկա, մեծացրեց չուկաների թիվը և մինչև հիմա այդ չուկաների վարձքը բռնագրավված հողերի հարկի հետ միասին հավաքվում է:

Իսկ ինչ վերաբերում է Հիշամի Ռուսաֆային, ապա Հիշամ իրն Աբդ ալ-Մալիք [խալիֆան] է այն հիմնել, և նախքան այդ նա իջևանում էր ալ-Ջայտունայում: [Հիշամը] փորեց ալ-Հանի և ալ-Սարիա ջրանցքները և այնտեղ հիմնեց Ռակկայի Վասիթ [քաղաքը]: Ապա այդ կալվածը [Աբբասյան] պետության սկզբնական շրջանում բռնագրավվեց, ապա տրվեց Ջաաֆար իրն ալ-Մանսուրի դուստր Ումմ Ջաաֆար Զուբայդային և սա այնտեղ բնակավայր հաստատեց, որը կոչվում է նրա անունով ու չենացրեց:

Կարկիսիայից ցածր գտնվող Ռահբան[68] այնքան էլ հին չէ: Այն կառուցել է Մալիք իրն Թաուկ իրն Ատտաբ ալ-Տաղլիբին՝ Մամունի խալիֆայության ժամանակ:

Ագրաման Դիար Ռաբիայի հին գյուղերից էր, և այն նվաճեց Հասան իրն Օմար իրն ալ-Խաթթաբ ալ-Տաղլիբին նրա տիրոջ ձևոքից: Սա կառուցեց մի բերդ ու ամրացրեց:

Քաֆր Տուսան հին բերդ էր: Այն վերցրին Աբու Ռիմսայի որդիները, բնակվեցին, քաղաք դարձրին ու ամրացրին:

Ինձ պատմել է Մուաֆա իրն Թաուսը, լսելով իր հորից, թե հարցրել եմ ծերունիներին Բալադի, Դիար Ռաբիայի և Բառիյայի հողերի տասանորդ [վճարելու] մասին: Ասվել է, թե դրանք տասանորդ վճարող հողեր են, քանի որ դրանց արաբ տերերը իսլամ են ընդունել, կամ անտեր, մեռյալ (խոպան) հողեր են, որ [մահմեդականները] մշակելի են դարձրել և կամ քրիստոնյաները լքել են հողերը և դարձել են անխնամ մեռյալ հողեր ու հատկացվել են արաբներին որպես կալված:

Աբու Աֆֆան ալ-Ռակկին ինձ պատմել է Ռակկայի տարեց քարտուղարներից և ուրիշներից լսելով, թե Այն ալ-Ռումիյան ու նրա ջրերը պատկանում էին Վալիդ իրն Ուկբա իրն Աբու Մուայթին, որը տվեց Աբու Ուբայդ ալ-Թաիին, ապա անցավ հավատացելոց իշխան Աբու-լ-Աբբասին և նա պարգևեց Մայմուն իրն Համզային՝ Ալի իրն Աբդալլահ իրն Աբբասի մաուլային: Ապա այն գնաց Ռաշիդը՝ նրա ժառանգորդներից և այժմ Ռակկայի հողերից է:

Ասում են, որ Իրն Հուբայրան [այսպես կոչված] Հուբայրայի անտառը վերցրել էր որպես տիրույթ, սակայն բռնագրավվեց ու տրվեց որպես տիրույթ Բիչր իրն Մայմունին՝ Բաղդադում Շամի դռան կողմերում գտնվող Թակատի (կամարակապ փողոցի) տիրոջը: Ապա այն գնաց Ռաշիդը և այժմ՝ Սարուջի հողերից է:

Հիշամ [Խալիֆան] իր աղջկանը՝ Այիշային, մի տիրույթ էր պարգևել Ռասթայֆայում, որը նրա անունով էր հայտնի, սակայն հարքունիս գրավվեց:

Արդ ալ-Մալիք և Հիշամ [Խալիֆաները] մի գյուղ ունեին Սալուս կոչված և Քաֆր Հաղդա կոչված գյուղի կամ՝ Եղևսիայի կողմերում:

Իսկ Խառանում Ղամր իբն Յազիդին էր պատկանում Տալլ Ղաֆբան, Տալլ Մազաբայի հողերը, ալ-Մուսալլայի (աղոթավայր) հողերը և Խառանի արվարձանում հարքունիս գրավված հողերն ու հասութաբեր (խանութներ, արհեստանոցներ) հաստատությունները:

Արդ ալ-Վահիդի մարզագետինը մահմեդականների համար արոտավայր էր նախքան Հաղասը[69] և Ջասլտրան[70] կառուցվելը, որից հետո այն լքվեց և ջրով ողողվեց, իսկ Հուսայն ալ-Խադիմը (ներքինին) այն միացրեց Ահուազին՝ Ռաշիդի խալիֆայության օրերին: Ապա որոշ մարդիկ ապօրինի կերպով գրավեցին նրա ագարակները, մինչև որ Աբդալլահ իբն Թահիրը նկավ Ասորիք, նորից դրանք դարձրեց [արքունի] կալվածներ: Աբու Այյուբ ալ-Ռակկին ասել է, որ լսել է, թե Արդ ալ-Վահիդը, որի անունով կոչվել է այս մարզագետինը, նույն Արդ ալ-Վահիդ իբն ալ-Հարիս իբն ալ-Հաքամ իբն Աբու-լ-Ասին է, որը Արդ ալ-Մալիք [Խալիֆայի] հորեղբորորդին էր: Մարզագետինը նրան էր պատկանում և նա այն դարձրեց միայն մահմեդականներին հատկացված արոտավայր: Նա է, որին Կութաման ներբողել է.

Եթե մահը խնայի Արդ ալ-Վահիդին,
Քաղաքի այլ բնակիչների մասին մի անհանգստացիր:

ՏԱՂԼԻԲ ԻԲՆ ՎԱԻԼ ՑԵՂԻ ՔՐԻՍՏՈՆՅԱՆԵՐԻ ՄԱՍԻՆ

էջ 185 – 187

Պատմել է Շայբան իբն Ֆառուխը, լսելով Աբու Ուվանայից, իսկ նա՝ ալ-Մուղիրայից և վերջինս՝ Սաֆֆահ ալ-Շայբանիից, թե Օմար իբն ալ-Խաթթաբը կամենում էր Տաղլիբ ցեղի քրիստոնյաներից ջիզիա վերցնել, սակայն նրանք վեր կացան ու փախան, մի մասը հեռավոր վայրեր հասավ: Ասում է նրան (Օմարին) Նուման իբն Զուրաան, կամ Զուրաա իբն Նումանը՝ խնդրում եմ քեզ Ալլահի անունով Տաղլիբ ցեղի համար, չէ՞ որ նրանք արաբներ են, որ խորչում են ջիզիայից: Նրանք ուժի տեր են, ուստի թշնամին չպետք է նրանց օգտագործի մեր դեմ: Օմարը փնտրեց ու նտ բերեց նրանց ու կրկնապատկեց սադական[71]:

Պատմել է Շայբանը, լսելով Աբդ ալ-Ազիզ իբն Մուսլիմից, իսկ սա՝ Լայսից, նա էլ՝ մի մարդուց, որը լսել էր Սաիդ իբն Զուբայրից, իսկ նա՝ իբն Աբբասից, թե Տաղլիբ ցեղի քրիստոնյաների մորթած զոհերը

չպետք է ուտել, նրանց կանանց հետ չպետք է ամուսնանալ, նրանք մեզանից չեն և ոչ էլ [սուրբ] Գրքի ժողովրդից են: Պատմել է Աբբաս իբն Հիշամը, լսելով հորից, իսկ սա Ուվանա իբն Հաբամից ու Աբու Միհնաֆից, թե Օմայր իբն Սաադը գրել էր Օմար իբն ալ-Խաթթաբին տեղեկացնելով, որ եկել է Եփրատի Ասորիքի կողմերի ափերը, գրավել Անատը և Եփրատի այլ բերդերը ու կամեցել է մահմեդականացնել Տաղլիբ ցեղից նրանց, ովքեր այնտեղ են, սակայն մերժել են և պատրաստվել անցնելու Ռումի երկիրը: Նույն բանն առաջարկել է նաև Եփրատի արևելյան ափին գտնվողներին, սակայն սրանք ևս մերժել են ու խնդրել, որ թույլատրվի հեռանալ: Նա հարցնում էր նրա (Օմարի) կարծիքը:

Օմարը գրեց նրան՝ հրամայելով կրկնապատկել նրանց համար սադական, որը մահմեդականներից է վերցվում ամեն անասունից ու հողից, իսկ եթե մերժեն, ապա կռվել նրանց դեմ, մինչև ոչնչացնելը, կամ ընդունեն իսլամը: Սրանք ընդունեցին կրկնակի սադական, ասելով՝ միայն թե չլինի այնպիսի ջիզիա, ինչպես օտար ռամիկից վերցված ջիզիան է, համաձայն ենք ու կպահպանենք մեր կրոնը:

Պատմել է Ամր ալ-Նակիդը, թե լսել է Աբու Մուավիայից, իսկ սա՝ ալ-Շայբանից և նա՝ ալ-Սաֆֆահից և նա էլ՝ Դաուդ իբն Քուրդուսից, թե Օմար իբն ալ-Խաթթաբը, երբ տեսել էր, որ Տաղլիբ ցեղը եփրատն անցել էր՝ կամենալով հասնել Ռումի երկիրը, հաշտություն կնքեց այն պայմանով, որ չմկրտեն իրենց երեխաներին, ոչ էլ ստիպեն իրենց կրոնն (քրիստոնեություն) ընդունել, իսկ սադական պետք է կրկնակի չափով վճարեին: Դաուդ իբն Քուրդուսն ասել էր, թե նրանք հովանավորություն (զիմմա) չէին վայելում, քանի որ նրանք իրենց կրոնով ներկել (օծել) էին, այսինքն նկատի ունի մկրտությունը:

Պատմել է ալ-Հուսայն իբն ալ-Աստաղը, լսելով Յահիա իբն Ադամից, իսկ սա՝ Իբն Մուբարաքից, սա էլ՝ Յունիս իբն Եզիդ ալ-Այլիից և նա ալ-Զուհրիից, թե [Սուրբ] Գրքի ժողովրդի անասուններից սադակա չի վերցվում, բացառությամբ Տաղլիբ ցեղի քրիստոնյաներից, կամ ընդհանրապես արաբ քրիստոնյաներից, որոնց ունեցվածքն հիմնականում անասուններից է բաղկացած, ուստի նրանք պարտավոր են մահմեդականների վճարածի կրկինը վճարել:

Պատմել է Սահլ իբն Սուլայման Սաադավայհը՝ լսելով Զուրաա իբն Նումանից, թե Օմար [Խալիֆան] Տաղլիբ ցեղի քրիստոնյաների մասին ասել է, նրանք արաբներ են, որ խորչում են ջիզիայից, սակայն նրանք մշակելի հողերի և անասունների տեր են: Օմարը կամենում էր նրանցից ջիզիա վերցնել, սակայն նրանք երկրով մեկ ցրվեցին ու նա նրանցից ջիզիա վերցնել, սակայն նրանք երկրով մեկ ցրվեցին ու նա հաշտություն կնքեց այն պայմանով, որ հողերի ու անասունների համար մահմեդականի վճարած սադակայի կրկինը վճարեն, միայն թե իրենց երեխաներին քրիստոնյա չդարձնեն:

Պատմել է Մուղիրան, թե Ալի [խալիֆան] ասել է, որ եթե կարողանայի զրաղվել Տաղլիբ ցեղով, կկոտորեի նրանց, կգերեվարեի նրանց զավակներին, քանի որ ուխտը խախտել են և այլևս չեն կարող հովանավորություն վայելել, քանզի նրանք քրիստոնյա են դարձրել իրենց զավակներին: Պատմել է Աբու Նասր ալ-Տամմարը, վերցնելով Զիյադ իբն Հուդայր ալ-Ասադիից, թե՝ ինձ ուղարկեց Օմարը Տաղլիբ ցեղի քրիստոնյաների մոտ, որպեսզի վերցնեմ նրանց ունեցվածքի տասանորդի կեսը, բայց արգելեց տասանորդ վերցնել մահմեդականից, կամ զիմմիից, որը խարաջ է վճարում:

Ինձ պատմել է Մուհամմադ իբն Սաադը, վերցնելով Վակիդիից և ուրիշներից, թե Օսման [խալիֆան] հրամայել էր, որ Տաղլիբ ցեղից ջիզիան գանձվի միայն ոսկով ու արծաթով, սակայն երբ ստուգեց, որ Օմարը սադակայի կրկնակին էր վերցրել, հրաժարվեց դրանից:

Ասել է Վակիդին, թե ասել են Սուֆիան ալ-Սաուրին, Աուզաին, Մալիք իբն Անասը, Իբն Աբու Լայլան, Իբն Աբու Զիբը, Աբու Հանիֆան, ինչպես նաև Աբու Յուսուֆը, թե Տաղլիբ ցեղի մարդը մահմեդականի վճարածի կրկինը պետք է վճարի իր հողի, անասունների և ունեցվածքի համար, սակայն ոչ երևիան ու տկարամիտը, ապա Իրաքի [իրավագետ] մարդիկ գտնում են, որ պետք է նրանց հողերից սադակայի կրկինը վերցնել, իսկ անասուններից ոչինչ չառնել: Հիջազի[72] [իրավագետ] մարդիկ գտնում են, որ այդ [հարկը] պետք է անասուններից ու հողից վերցնել: Սակայն բոլորը համաձայն են այն բանում, որ Տաղլիբ ցեղի ունեցվածքից վերցված [հարկը] խարաջային հարկի նման պետք է լինի, քանի որ փոխարինում է ջիզիային:

ՋԱԶԻՐԱՑԻ ՍԱՀՄԱՆԱՑԻՆ ԱՄՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԼՂ 187 - 189

Ասվում է, որ երբ Օսման իբն Աֆֆանը խալիֆա դարձավ, գրեց Մուավիային, նշանակելով նրան Ասորիքի կառավարիչ, իսկ Ումայր իբն Սաադ ալ-Անսարիին՝ Ջազիրայի կառավարիչ, Հնազրեց սրան ու Մուավիային հանձնեց Ասորիքը, Ջազիրան ու նրանց սահմանային ամրությունները: Հրամայեց նրան արշավել Շիմշաթ[73], որը Զորրորդ Հայաստանն է (Արմինիա)[74], կամ ուրիշին հանձնարարել այն: Սա ուղարկեց Հաբիբ իբն Մասլամա ալ-Ֆիհրիին և Սաֆուան իբն Մուաթթալ ալ-Սուլամիին: Նրանք, հասնելուց մի քանի օր անց, նվաճեցին Եղևսիայի Հաչտության նման պայմաններով: Սաֆուանը մնաց այնտեղ և վախճանվեց Մուավիայի խալիֆայության վերջում: Ասվել է նաև, թե արշավանքը կատարել է ինքը՝ Մուավիան, իսկ այս երկուսը նրա հետ են եղել, Սաֆուանին նշանակել է կառավարիչ և սա

տեղավորվել է ու այնտեղ էլ մահացել:

Պատմում են, որ Կոստանդին բռնակալը[75] Մալաթիան պաշարելուց հետո 133 (9 օգոստոս 750 – 29 հուլիս 751) թվականին հարձակվել է Շիմշաթի վրա, սակայն ոչինչ չի կարողացել գրավել և ապատակել է նրա շրջակայքն ու հեռացել:

Շիմշաթը մնաց խարաջային շրջան, մինչև որ Մուտավաքքիլ Ալալլահ [խալիֆան] այն դարձրեց տասանորդային այլ սահմանային ամրությունների նման:

Պատմվում է, որ Շիմշաթի նվաճումից հետո Հաբիբ իբն Մասլաման արշավեց Կամախ[76] (Քամխ) ամրոցի դեմ, սակայն չկարողացավ գրավել: Հարձակվեց նաև Սաֆուանը, սակայն չկարողացավ նվաճել: Ապա վերջինս կրկին արշավեց 59 (25 հոկտեմբեր 678 – 12 հոկտեմբեր 679) թվականին, որը նրա մահվան տարին է, իր հետ ունենալով Ումայր իբն Հուբար ալ-Սուլամիին: Ումայրը պարսպի վրա բարձրացավ և մենակ կռվեց, մինչև որ հռոմեները նահանջեցին և մահմեդականները բարձրացան և այսպիսով Ումայրը նվաճեց այն: Նա սրանով հպարտանում էր և նրան գովում էին:

Ապա հռոմեներն այն գրավեցին, իսկ Մասլամա իբն Աբդ ալ-Մալիքը վերագրավեց, և այդպես մնաց: Հետո հռոմեները կրկին գրավեցին: Եվ ահա 149 (16 փետրվար 766 – 5 փետրվար 767) թվականին Մանսուրն անձամբ եկավ Բաղդադից, իջևանեց Հաղիսատ ալ-Մաուսիլում[77] և այնտեղից արշավանքի ուղարկեց Հասան իբն Կահթաբային և նրանից հետո Մուհամմադ իբն Աչասին, որոնց հրամանատար կարգեց Աբբաս իբն Մուհամմադին և հրամայեց, որ նրանց հետ հարձակվի Կամախի վրա: Սակայն Մուհամմադ իբն ալ-Աչասը մեռավ Ամիդում և Աբբասն ու Հասանը չարժվեցին ու հասան Մալաթիա և այնտեղից պարեն վերցնելով գնացին ու պաշարեցին Կամախը: Աբբասը հրամայեց քարանետ մեքենաներ (մանջանիկ) դնել, իսկ նրանք (բերդում) գիհի փայտի տախտակներով ծածկեցին ամրոցը, որպեսզի քարանետ մեքենայի քարերը չվնասեն նրան: Նրանք մահմեդականների վրա քարեր գլորեցին ու երկու հարյուր մարդ կոտորեցին: Մահմեդականները փիլիկվան (խոյ) բերեցին և աստիճ կռիվ տեղի ունեցավ՝ մինչև որ գրավեցին այն: Այս արշավանքների ժամանակ Աբբաս իբն Մուհամմադի հետ էր Մաթար ալ-Վառակը:

Ապա հռոմեները կրկին գրավեցին ու փակվեցին Կամախում: Եվ ահա 177 (18 ապրիլ 793 – 6 ապրիլ 794) թվականին Մուհամմադ իբն Աբդալլահ իբն Աբդ ալ-Ռահման իբն Աբու Ամրա ալ-Անսարին, որը Աբդ ալ-Մալիք իբն Սալիհի կողմից Շիմշաթի կառավարիչ էր նշանակված, արշավեց ու գրավեց այն, նույն տարվա Ռաբի Բ ամսի տասնչորսին (30 հուլիս): Այն նվաճված մնաց մինչև Մուհամմադ իբն

Ռաշիդի խոռովությունը, երբ նրա բնակիչները փախան և հռոմները գրավեցին: Ասում է, որ Ուբայդալլահ իրն ալ-Ակթան այն հանձնեց հռոմներին, փրկելու համար իր որդուն, որը նրանց մոտ գերի էր:

Հետագայում Արդալլահ իրն Թահիրն այն գրավեց Մամունի խալիֆայության ժամանակ ու մնաց մահմեդականների ձեռքում, մինչև որ Շիմշաթի և Կարնո քաղաքի[78] (Կալիկալա) քրիստոնյաներից ոմանք և Մլաթի պատրիկ Բագարատը Աշոտի որդին (Բակրաթ իրն Աշոթ)[79] խորամանկորեն համոզեցին այն հանձնել հռոմներին և այսպիսով սիրաշահել նրանց, հանուն այն կալվածների [ապահովության], որ ունեին Շիմշաթի գավառում:

ՄԱԼԱԹԻԱՆ

էջ 189 – 196

Պատմում են, որ Իյադ իրն Ղանմը Շիմշաթից Մալաթիա ուղարկեց Հաբիբ իրն Մասլամա ալ-Ֆիհրիին, որը գրավեց այն, սակայն հետո մահմեդականների ձեռքից գնաց: Երբ Մուավիան Ասորիքի ու Ջազիրայի կառավարիչ դարձավ, ուղարկեց Հաբիբ իրն Մասլամային, որը բռնի ուժով գրավեց և այնտեղ մահմեդական հեծյալների կայազոր ու կառավարիչ նշանակեց: Երբ այնտեղ եկավ Մուավիան, հռոմների դեմ արշավանքի գնալիս, Ասորիքի, Ջազիրայի և այլ վայրերի զորքերին տեղում [որպես] կայազոր նշանակեց: Այս քաղաքը ամառային արշավանքների ճանապարհի առաջին կայանն էր:

Ապա նրա բնակիչներն այնտեղից տեղափոխվեցին Արդալլա իրն ալ-Զուբայրի [ապստամբության] օրերին, եկան հռոմները քանդեցին, հետո թողնեցին ու հեռացան: Այնտեղ եկան հաստատվեցին քրիստոնյաներ՝ հայեր ու նաբաթացիք (արամեացիք):

Ինձ պատմել է Մուհամմադ իրն Սաադը, վկայակոչելով Վակիդիին, թե մահմեդականները Արդալլահ իրն Արդ ալ-Մալիքի 83 (4 փետրվար 702 – 23 հունվար 703) թվականի արշավանքից հետո հաստատվել էին Տարենտոում (Թարանդա) և բնակարաններ կառուցել: Սա Մալաթիայից երեք օթեան (մարհալա)[80] հեռավորության վրա է գտնվում դեպի Ռումի երկիրը:

Այդ ժամանակ Մալաթիան ավերակ վիճակում էր, ուր ոչ ոք չէր ապրում, բացի դիմմի մարդկանցից, ինչպես՝ հայեր և ուրիշներ: Ամառները Ջազիրայից այստեղ էր գալիս մի զորամաս ու մնում, մինչև հասնում էր ձմեռը, ձյուն էր իջնում, և այդ ժամանակ հեռանում էին: Սակայն երբ Արդ ալ-Ազիզը խալիֆա դարձավ, Տարենտեի ժողովրդին բռնի տեղահանեց, քանզի վախենում էր, որ թշնամին հարձակումներ կգործի: Հեռանալիս նրանք ամեն ինչ մնջքի վրա

տարան, սակայն քացախի ու ձեթի կարասները ջարդեցին: Ապա նա տեղավորեց նրանց Մալաթիայում, իսկ Տարենտեն՝ կործանեց: Մալաթիայի կառավարիչ նշանակեց Ջաավանա իրն Հարիսին՝ Ամիր իրն Սաասաա ցեղից մեկին:

Ասում են, որ 123 (26 նոյեմբեր 740 – 14 նոյեմբեր 741) թվականին քսան հազար հռոմներ եկան ու պաշարեցին Մալաթիան: Բնակիչները դռները փակեցին և կանայք փաթթոցներով երեացին պարիսպների վրա ու կռվեցին: Մալաթիայի բնակիչների սուրհանդակը դուրս եկավ փոստի ձիով օգնություն խնդրելու և հասավ Հիշամ իրն Աբդ ալ-Մալիք [Խալիֆային] Ռուծափում (Ռուսաֆա)[81]: Հիշամը զորք պատրաստեց Մալաթիա ուղարկելու, սակայն լուր ստացավ, թե հռոմները հեռացել են և կանչեց սուրհանդակին, լուրը հայտնեց նրան ու նրա հետ ձիավորներ ուղարկեց, որպեսզի այնտեղ (Մալաթիայում) կայազոր դառնան: Ապա Հիշամն անձամբ արշավեց, կանգ առավ Մալաթիայում, բանակ դրեց ու վերակառուցեց այն: Նա անցել էր Ռակկայի միջով և այնտեղ մտել էր սուրը մնջքին, մի բան, որ մինչ այդ երբեք չէր արել:

Ասել է Վակիդին, թե 133 (9 օգոստոս 750 – 29 հուլիս 751) թվականին Կոստանդին բռնակալը եկավ դեպի Մալաթիա, իսկ Կամախն այդ ժամանակ մահմեդականների ձեռքում էր և նրա կառավարիչն էր Սուլայմ ցեղից մի անձնավորություն: Կամախի բնակիչները օգնության կոչ արեցին Մալաթիայի բնակիչներին և այնտեղից հռոմների դեմ դուրս եկավ ութ հարյուր ձիավոր: Սակայն հռոմների հեծելազորը հաղթեց նրանց, փախուստի մատնեց և եկավ Հռոմն (Կոստանդինը) ու կանգ առավ, պաշարեց Մալաթիան: Այդ ժամանակ Ջազիրան խռովության մեջ էր, իսկ նրա կառավարիչ Մուսա իրն Քաաբը Խառանում էր: Նրա մոտ [Մալաթիայից] սուրհանդակ ուղարկեցին, սակայն նա չկարողացավ օգնել: Լուրը հասավ Կոստանդինին, որն ասաց նրանց. Ով Մալաթիայի ժողովուրդ, ես եկել եմ տեղյակ լինելով ձեր վիճակի մասին և թե ինչպես ձեր իշխանությունները ի վիճակի չեն ձեզնով զրաղվելու. իջեք և երաշխավորագիր խնդրեցեք, դատարկելով քաղաքը, որը ես քանդելու եմ և այստեղից հեռանալու եմ: Սակայն նրանք մերժեցին և նա քարանետ մեքենաներ դրեց: Երբ տագնապը սաստկացավ և պաշարումն ուժեղացավ, խնդրեցին նրանից, որ իրենց խնայի: Ապա պատրաստվեցին հեռանալու, տանելով այն, ինչ հնարավոր էր, իսկ ինչ ծանր էր՝ նետեցին ջրհորներն ու թաքստոցները և դուրս եկան: Հռոմները նրանց համար քաղաքի դռնից մինչև որոշ տարածություն երկու շարք պատրաստեցին և ամեն կողմում կանգնողը իր սուրը մեկնելով դիպչում էր դիմացը կանգնողի սրի ծայրին, այնպես որ սրերով կամար էր կազմվել և դրա տակով անցկացրին ու տարան տեղ հասցրեցին: Նրանք գնացին

Ջազիրա ու տարբեր վայրեր հաստատվեցին, իսկ հոռոմները կործանեցին Մալաթիան և մնաց միայն մի չտեմարան, որի մի մասն էլ վնասված էր: Նրանք քանդեցին Կլավդին (Կալաուդիյա) ամրոցը[82]:

139 (5 Հունիս 756 – 24 մայիս 757) թվականին Մանսուր (խալիֆան) գրեց Սալիհ իբն Ալիին, հրամայելով վերակառուցել ու ամրացնել Մալաթիան: Ապա, որոշեց Աբդ ալ-Վահհաբ իբն Իբրահիմ ալ-Իմամին՝ որպես Ջազիրայի ու նրա սահմանային ամրությունների կառավարիչ: Սա նկավ 140 (25 մայիս 757 – 14 մայիս 758) թվականին իր հետ բերելով Հասան իբն Կահթաբային՝ Խորասանի գնդերով: Նա յոթանասուն հազար մարդ հավաքեց Ասորիքից ու Ջազիրայից և բերեց Մալաթիա: Նա տարբեր քաղաքներից գործավորներ էր հավաքել և սկսեց շինարարությունը: Բանն այն է, որ Հասան իբն Կահթաբան այնքան ուշադիր էր, որ նույնիսկ քար էր մատուցում որմնադիրներին: Նա կերակրում էր մարդկանց (գործավորներին), վարձատրում էր իր միջոցներից՝ իր խոհանոցները բացելով նրանց: Այս բանը զայրացրեց Աբդ ալ-Վահհաբին, որը գրեց Աբու Ջաաֆար [Մանսուրին], տեղեկացնելով, որ թեև ինքը [բավարար] կերակրում է մարդկանց, սակայն Հասանը մի քանի անգամ ավելի է կերակրում, որպեսզի այդպիսով փչացնի իր գործը. նա մեղադրում էր նրան չռայլության ու կեղծավորության մեջ և հայտնում, որ մունետիկներ ունի մարդկանց ճաշի հրավիրելու: Աբու Ջաաֆարը գրեց նրան. Ով երեխա, Հասանն իր փողով է կերակրում, իսկ դու իմ փողով ես կերակրում, դու պարզապես անխելք ես, անհասկացող ու վատ մտքերի տեր: Իսկ Հասանին էլ գրեց, թե չարունակիր կերակրել, միայն առանց մունետիկի:

Հասանը հայտարարում է, թե ով չուտ վերջացնի, կտանա այսքան և այսքան, իսկ մարդիկ ջանք էին թափում աշխատանքի մեջ, այնպես, որ վեց ամսում ավարտեցին Մալաթիայի ու նրա մզկիթի շինարարությունը: Եվ գինվորների ամեն տաս-տասնհինգ հոգիանոց խմբի համար կառուցեց երկու ներքին և երկու վերին տներ (սենյակներ) և մի ախոռ: Կառուցեց նաև մի սահմանային ամրոց երեսուն մղոն հեռավորության վրա և մի այլ ամրոց Կուրակիր գետի[83] վրա, որը եփրատ է թափվում: Մանսուրը Մալաթիայում բնակեցրեց չորս հազար ռազմիկ Ջազիրայի բնակիչներից, քանզի սա նրանց սահմանային ամրությունների [գոտին] էր, ավելացնելով ամեն մի մարդու ռոճիկին տաս դինար և, որպես նպաստ հարյուր դինար, բացի այն վարձատրությունից, որ ցեղերն իրենց միջև բաժանում էին: Նա այնտեղ զենքի պահեստ (կայազոր) դրեց, գինվորներին դաշտեր պարգևեց և վերակառուցեց Կլավդիա ամրոցը:

Կոստանդին բռնակալը հարյուր հազարից ավելի զորքով եկավ կանգ առավ Պիրամոս (Ջայհան) գետի մոտ, սակայն լսելով արաբների բազմամարդության մասին, ետ կանգնեց: Լսել եմ, որ ասել են, թե Աբդ ալ-Վահհաբի հետ արշավանքի ժամանակ եղել են Նասր իբն Մալիք ալ-Խուզաին և Նասր իբն Սաադ ալ-Քատիրը՝ Անսար ցեղի մասից, բանաստեղծն ասել է.

Քեզ չրջապատում են երկու Նասրները
Նասր իբն Մալիքը
Եվ Նասր իբն Սաադը
Թող քո հաղթանակը (Նասր) լինի իսկական:

141 (14 մայիս 758 – 3 մայիս 759) թվականին Մուհամմադ իբն Իբրահիմը Մալաթիայից արշավանքի ուղարկվեց Խորասանի գնդերով, իսկ նրա առաջապահ գնդի պետն էր Մուսայիբ իբն Զուհայրը: Սա այնտեղ ձիավոր զորք թողեց, որպեսզի թշնամին չփորձվի հանկարծակի հարձակում գործել: [Մալաթիայի] ողջ մնացած բնակիչներն այնտեղ վերադարձան: Ռաչիդի խալիֆայության օրոք հոռոմները հարձակվել էին Մալաթիայի վրա, բայց ապարդյուն: Նրանց վրա հարձակվեց Ռաչիդը և հաղթեց ու ճզմեց նրանց:

Պատմել են, որ երբ Աբու Ուբայդա իբն ալ-Ջառահը Մանբիջում[84] էր, Խալիդ իբն ալ-Վալիդին ուղարկեց Մարաշի նահանգը և սա գրավեց նրա բերդը այն պայմանով, որ բնակիչները դուրս գան ու հեռանան և ապա քանդեց: Երբ 30 (4 սեպտեմբեր 650 – 23 օգոստոս 651) թվականին Սուֆիան իբն Աուֆ ալ-Ղամիդին Ռումի երկիրն արշավեց, երթն սկսեց Մարաշից և մի չրջան կատարեց այդ երկրում: Մուավիան վերակառուցեց Մարաշ քաղաքը և գինվորների բնակեցրեց: Եզիդ իբն Մուավիա [խալիֆայի] մահվանից հետո հոռոմների հարձակումները հաճախակի դարձան և սրանք (գինվորները) հեռացան այնտեղից: Աբդ ալ-Մալիք [խալիֆան] իր հոր՝ Մարուան իբն ալ-Հաքամի մահվանից հետո, հաչտություն կնքեց հոռոմների հետ և որոչ գումար վճարելով՝ ապահովեց իր խալիֆայությունը: Սակայն 74 (13 մայիս 693 – 1 մայիս 694) թվականին Մուհամմադ իբն Մարուանը խախտեց պայմանագիրը և արշավեց հոռոմների դեմ: Իսկ 75 (2 մայիս 694 – 20 ապրիլ 695) թվականին Մուհամմադ իբն Մարուանը ամառային արշավանք կատարեց և հոռոմները Ջումադա Ա ամսին (28 օգոստոս – 26 սեպտեմբեր) առաջացան Մարաշի կողմերը դեպի Ամակ (փոսեր): Նրանց դեմ դուրս եկան մահմեդականները, որոնց գլխավորում էր Աբան իբն ալ-Վալիդ իբն Ուկբա իբն Աբու Մուայթը՝ իր հետ ունենալով Աբդ ալ-Մալիք իբն Մարուանի մաուլա Դինար իբն Դինարին՝ Կիննասրինի ու նրա գավառների կառավարչին: Նրանք իրար հետ բախվեցին Մարաշի Ամկի (փոս) մոտ և սաստիկ կռիվ տեղի ունեցավ, հոռոմները նահանջեցին և մահմեդականները հետապնդեցին՝ կոտորելով ու գերելով: Այդ տարում Դինարը հոռոմների մի խմբի էր հանդիպել Յաարայի կամուրջի մոտ, որը

Շիմշաթից մոտավորապես տաս մղոն հեռավորության վրա էր և հաղթել էր նրանց:

Հետագայում Աբբաս իբն ալ-Վալիդ իբն Աբդ ալ-Մալիքը գնաց Մարաշ, վերակառուցեց ու ամրացրեց, բնակիչներ բերեց, մայր մզկիթ կառուցեց և Կիննասրինի բնակչությանը պարտավորեցրեց ամեն տարի օգնական զորքեր ուղարկել Մարաշ:

Մարուան իբն Մուհամմադ [խալիֆայի] ժամանակ, երբ նա զբաղված էր Եմեսայի բնակիչների դեմ կռվելով, հոռոմները հարձակվեցին ու պաշարեցին Մարաշ քաղաքը, մինչև որ բնակիչները հաշտություն կնքեցին հեռանալու պայմանով: Նրանք իրենց ընտանիքներով գնացին Ջազիրայի կողմերը և Կիննասրինի դուռին, ապա [հոռոմները] քանդեցին այն: Այդ ժամանակ Մարուանի նշանակած կառավարիչն էր ալ-Քասասար իբն Ջուֆար իբն ալ-Հարիս ալ-Քիլաբին, իսկ [Ռումի] բռնակալն էր Կոստանդինը՝ Լևոնի որդին (Կուստանտինին իբն Ալիուն): Ապա երբ Մարուանը վերջացրեց Եմեսայի գործը և քանդեց նրա պարիսպը, զորք ուղարկեց Մարաշը վերակառուցելու և իրոք կառուցվեց ու քաղաք դարձավ, սակայն հոռոմները օգտվելով նրա դեմ ծագած խռովության առիթից, կրկին քանդեցին:

Աբու Ջաաֆար ալ-Մանսուրի խալիֆայության ժամանակ Սալիհ իբն Ալին վերակառուցեց, ամրացրեց և կայազորի համար մարդկանց հրավիրեց՝ խոստանալով բարձր վարձատրություն: Ապա, երբ խալիֆա դարձավ Մահդին, ավելացրեց նրա կայազորը և զինեց բնակչությանը: Պատմել է Մուհամմադ իբն Սաադը, վերցնելով Վակիդիից, թե Միքայելը Դարբ ալ-Հադասից[85] հարձակվեց ութսուն հազարով, եկավ Մարաշի Ամկը, մահմեդականներից մեծ բազմություն կոտորեց, վառեց ու գերեվարեց և կանգ առավ Մարաշի դռան առջև:

Այդ ժամանակ քաղաքի կառավարիչն էր Իսա իբն Ալին, որն այդ տարին արշավանք էր կատարել: Նրա (Միքայելի) դեմ ելան Իսայի մաուլանները, քաղաքի բնակչությունը և ռազմիկները ու խփեցին քարերով ու նետերով: Սա նահանջեց, բայց երբ քաղաքից հեռացել էին, հարձակվեց նրանց վրա և Իսայի մաուլաններից ութ հոգու սպանեց, իսկ մնացածները պատսպարվեցին քաղաքում և դռները փակեցին: Նա պաշարեց նրանց, ապա հեռացավ ու հասավ Պիրամոս գետը: Լուրը հասավ Սումամա իբն ալ-Վալիդ ալ-Աբսիին, որը Դաբիկում էր և 161 (9 հոկտեմբեր 777 – 27 սեպտեմբեր 778) թվականին ամառային արշավանք էր կատարել: Սա մեծ հեծելազորք ուղարկեց, որը սակայն կոտորվեց ու մի մասն ազատվեց: Մահդին զայրացավ և պատրաստություններ տեսավ, որ հաջորդ տարի՝ 162 (28 սեպտեմբեր 778 – 16 սեպտեմբեր 779) թվականին արշավանքի ուղարկի Հասան իբն Կահթաբային:

Պատմել են, որ Հադասի բերդը[86] Օմար [խալիֆայի] օրոք նվաճված բերդերից էր: Այն գրավել էր Հաբիբ իբն Մասլաման, որն ուղարկված էր Իյազի կողմից: Սրանից հետո Մուավիան վստահում էր նրան: Օմայանները Հադասի լեռնանցքը[87] կոչում էին ալ-Սալամա (ապահովություն), որպես չարագուշակ անուն, քանի որ մահմեդականներն այնտեղ պարտվել էին: Այլ մարդիկ ասում են, որ դա (Հադաս) պատահար իմաստով է օգտագործված: Իսկ ոմանք էլ ասում են, թե այդ լեռնանցքի վրա մի դեռատի (Հադաս) պատանի դիմադրել է մահմեդականներին ու կռվել իր ընկերների հետ և այդ պատճառով էլ կոչվել է դեռատի պատանու լեռնանցք (Դարբ ալ-Հադաս): Մարուան իբն Մուհամմադ [խալիֆայի] դեմ ծագած ապստամբության ժամանակ հոռոմները հարձակվեցին ու կործանեցին Հադաս քաղաքը, իսկ բնակիչներին դուրս բերեցին՝ ինչպես արել էին Մալաթիայում: Ապա 161 թվականին Միքայելը հարձակվեց Մարաշի Ամկի կողմերը, իսկ Մահդին ուղարկեց Հասան իբն Կահթաբային, որն ասպատակեց Ռումի երկիրն ու խիստ նեղեց նրա բնակչությանը, այնքան, որ նրա պատկերն էին դնում իրենց եկեղեցիներում: Երբ նա մտել էր Հադասի լեռնանցքից, տեսել էր նրա քաղաքի դիրքը: Իմանալով, որ Միքայելը նրանից (քաղաքից) հեռացել է, Հասանն ուսումնասիրել էր քաղաքի դիրքը և վերադարձին՝ Մահդիի հետ խոսել այս քաղաքի, ինչպես նաև Տարսոնի վերակառուցման մասին: Սա հրամայել էր սկսել նախ Հադաս քաղաքի վերակառուցմամբ:

Հասանի հետ այս արշավանքների մասնակիցներից էին Մանդալ ալ-Անազին՝ քուֆացի [մահմեդական] ավանդություններ հավաքողը (մուհադդիս) և Մուտամիր իբն Սուլայման ալ-Բասրին: [Հադասը] կառուցեց Ալի իբն Սուլայման իբն Ալին, որը Ջազիրայի ու Կիննասրինի կառավարիչն էր և այն կոչվեց Մուհամմադիյա: Մահդին մնաում նրա շինարարության ավարտի ժամանակ, ուստի կոչվում էր թե Մահդիյա, թե Մուհամմադիյա: Այն կառուցված է աղյուսով: Նրա (Մահդիի) մահը տեղի ունեցավ 169 (14 հուլիս 785 – 2 հուլիս 786) թվականին:

Նրան հաջորդեց որդին՝ Մուսա ալ-Հադին, որը հեռացրեց Ալի իբն Սուլայմանին և Ջազիրայի ու Կիննասրինի կառավարիչ նշանակեց Մուհամմադ իբն Իբրահիմ իբն Մուհամմադ իբն Ալիին: Ալի իբն Սուլայմանը նոր էր ավարտել Հադասի շինարարությունը և ահա Մուհամմադը այնտեղ հաստատեց Ասորիքի, Ջազիրայի ու Խորասանի զորքերին, ամեն զինվորի տալով քառասուն դինար ռոճիկ: Նա բնակավայրեր հատկացրեց նրանց՝ որպես ավատ (իկթա) և ամեն մի հոգու տվեց երեք հարյուր դիրհեմ: Շինարարությունն ավարտվեց 169 թվականին: Աբու-լ-Խաթթաբը պատմել է, որ Ալի իբն Սուլայմանը չորս հազար մարդու համար ռոճիկ սահմանեց ու նրանց

տեղավորեց, ինչպես նաև երկու հազար մարդ տեղափոխեց Մալաթիայից, Շիմշաթից, Սամոսատից, Քեսունից (Քայսում)[88], Տյուքից (Դուլուք)[89] ու Ռաաբանից[90]:

Պատմել է Վակիդին, թե երբ Հադաս քաղաքը կառուցվեց, վրա հասան ձմեռն ու ձյունը, հորդառատ անձրևներ տեղացին, իսկ շենքերը լավ չէին կառուցված, պաշտպանված չէին և պատերը ճաքճքեցին ու քայքայվեցին: Հոռոմները հարձակվեցին, իսկ այնտեղ գտնվող զինվորները և ուրիշները (ժողովուրդ) ցրվեցին: Լուրը հասավ Հադիին, որն օգնություն ուղարկեց Մուսայիբ իբն Զուհայրի հետ մի խումբ, Ռաուհ իբն Հատիմի հետ մի խումբ և մի խումբ էլ Համզա իբն Մալիքի հետ, սակայն ինքը մնաւ նախքան այդ գործի ավարտը:

Ապա խալիֆա դարձավ Ռաշիդը և հրամայեց վերակառուցել քաղաքը, ամրացնել, կայազոր նշանակել, և ռազմիկներին բնակավայրեր ու հողակտորներ հատկացնել: Վակիդիից բացի մեկ ուրիշն էլ պատմել է, որ հոռոմների մեծ պատրիկներից մեկը Հադաս քաղաքը պաշարել էր հենց կառուցման ժամանակ, իսկ սա կառուցված էր հում աղյուսով, իրար վրա դրված (առանց շաղախի) և ձյունից վնասվել էր ու նրա կառավարիչն ու բնակիչներն արդեն փախել էին: Թշնամին մտավ, հրկիզեց մզկիթը, ավերեց քաղաքը և տարավ բնակիչների ունեցվածքը: Իսկ երբ Ռաշիդը խալիֆա դարձավ, վերակառուցեց այն:

Մանբիջի բնակիչներից ոմանք պատմել են, որ Ռաշիդը գրել է Մուհամմադ իբն Իբրահիմին, հաստատելով նրան որպես կառավարիչ և ահա սա էր, որ Ռաշիդի օրոք վերակառուցեց Հադաս քաղաքը, սակայն հետո հեռացվեց:

Պատմում են, որ Մալիք իբն Աբդալլահ ալ-Խասաամին, որը կոչվում է «ամառային արշավանքների Մալիք» և Պաղեստինի բնակիչներից է, Ռումի երկիրն էր արշավել 46 (13 մարտ 666 – 2 մարտ 667) թվականին և վերադարձին չատ ավար բերել: Երբ Հադասի լեռնանցքից տասնհինգ մղոն հեռավորության վրա էր, մի վայրում, որը կոչվել է Ռահուա (բարձրադիր վայր), նա երեք օրում վաճառել էր ավարը՝ բաժանելով հասույթը: Այդ վայրը կոչվել է Ռահուատ Մալիք:

Ասվել է, թե Աբդ ալ-Վահիդի մարզագետինը մահմեդական հնձելազորին հատկացված արոտավայր էր եղել, սակայն երբ կառուցվեցին Հադասը և Զիբաթրան[91], լքվեց ու դարձավ վարելահող:

Ասել են, որ Զապետրան (Զիբաթրա) հոռոմների հին բերդերից էր: Այն նվաճել էր Հադասի հին բերդի հետ միասին Հաբիբ իբն Մասլամա ալ-Ֆիհրին: Սա (Զապետրան) կանգուն մնաց, մինչև որ Վալիդ իբն Եզիդի օրոք հոռոմները քանդեցին այն, ապա վերակառուցվեց ոչ ամուր ձևով և հոռոմները՝ Մարուան իբն Մուհամմադ [խալիֆայի]

դեմ ապստամբության ժամանակ պաշարեցին ու քանդեցին: Մանսուրը վերակառուցեց, ապա [հոռոմները] հարձակվեցին ու քանդեցին, սակայն Ռաշիդը Մուհամմադ իբն Իբրահիմի միջոցով վերակառուցեց ու կայազոր նշանակեց: Մամունի խալիֆայության ժամանակ գրոհեցին հոռոմներն ու քանդեցին, հարձակվեցին բնակիչների հոտերի վրա ու մի մասը քշեցին տարան: Մամունը հրամայեց նորոգել այն և ամրացնել: 210 (24 ապրիլ 825 – 12 ապրիլ 826) թվականին Ռումի բռնակալը պատվիրակություն ուղարկեց խաղաղություն խնդրելով, սակայն նա (Մամունը) չընդառաջեց ու գրեց սահմանային ամրությունների կառավարիչներին, որոնք ներխուժեցին Ռումի երկիրը, մեծ կոտորած սարքեցին, ավերեցին և փայլուն հաղթանակ տարան, սակայն Յակղան իբն Աբդ ալ-Ալա իբն Ահմադ իբն Եզիդ իբն Ուսայդ ալ-Սուլամին վիրավորվեց:

Ապա հոռոմները հարձակվեցին Զապետրայի վրա ալ-Մուտասիմ Բիլլահ Աբու Իսհակ իբն ալ-Ռաշիդ խալիֆայի օրոք, կոտորեցին տղամարդկանց, կանանց գերեվարեցին, իսկ քաղաքը կործանեցին: Այս բանը զայրացրեց ու կատաղեցրեց նրան (Մուտասիմին), որն արշավեց նրանց վրա՝ մինչև հասավ Ամորիոն (Ամմուրիյա)[92], ճանապարհին քանդելով չատ բերդեր: Նա պաշարեց այն, գրավեց, կոտորեց ռազմիկներին, գերեվարեց կանանց ու երեխաներին և ապա կործանեց: Հրամայեց վերակառուցել Զապետրան, ամրացնել և կայազոր նշանակել: Հոռոմները կրկին հարձակվեցին, սակայն հաջողություն չունեցան:

Ինձ պատմել են Աբու Ամր ալ-Բահիլին և ուրիշներ, թե Հիսն Մանսուրը[93] կոչվել է Մանսուր իբն Զաավանա իբն ալ-Հարիս ալ-Ամիրիի անվամբ, որը Կայս ցեղից էր: Նրան էր հանձնարարված դրա կառուցումն ու նորոգումը և այնտեղ էր հաստատվել Մարուան [խալիֆայի] օրոք, որպեսզի նա մղի Թշնամուն, իր ձեռքի տակ ունենալով Ասորիքի ու Ջազիրայի մարդկանցից բաղկացած մի հոծ բանակ: Այս Մանսուրը Եգևսիայի կառավարիչն էր, երբ [Աբբասյան] պետության սկզբնական շրջանում նրա ժողովուրդը ապստամբեց: Նրանց պաշարեց [Աբու Զաաֆար] ալ-Մանսուրը, որը Աբու-լ-Աբբաս [խալիֆայի] փոխարքան էր Ջազիրայի ու Հայաստանի (Արմինիա) վրա: Երբ գրավեց այն, Մանսուրը փախավ, ապա երաշխավորագիր (աման) ստացավ ու երևաց: Երբ Աբդալլահ իբն Ալին մերժեց ճանաչել Աբու Զաաֆար ալ-Մանսուրի [խալիֆայությունը], սրան (Մանսուր իբն Զաավանային) նշանակեց իր ոստիկանական պահազորքի հրամանատար: Սակայն երբ Աբդալլահը փախավ Բասրա, [Մանսուրը] թաքնվեց, բայց նրան մատնեցին 141 (14 մայիս 758 – 3 մայիս 759) թվականին: Մանսուր [խալիֆան] նրան բերել տվեց ու սպանեց Ռակկայում, երբ գալիս էր Երուսաղեմից: Ոմանք ասում են, որ նա (Մանսուր իբն Զաավանան)

երաշխավորագիր ստացավ և երևաց Իրն Ալիի փախուստից հետո, ապա նրա մոտ գտնվեցին Հոռոմներին ուղղված նամակներ, ըստ որոնց, նա իսլամին դավաճանում էր: Երբ Մանսուր [խալիֆան] երուսաղեմից Ռակկա եկավ 141 թվականին, բերել տվեց նրան և Ռակկայում գլխատեց, ապա ինքը գնաց Քուֆայի մոտ, ալ-Հաշիմիյա քաղաքը:

Ռաշիդը Հիան Մանսուրը կառուցել և այնտեղ կայազոր էր նշանակել դեռ Մահդիի խալիֆայության ժամանակ:

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿՆԵՐՈՒՄ ՀՈՒՆԱՐԵՆՆ [ԱՐԱԲԵՐԵՆՈՎ] ՓՈԽԱՐԻՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

էջ 196 – 197

Ասորիքի պետական գրասենյակներում լեզուն մնացել էր հունարենը մինչև Աբդ ալ-Մալիք իրն Մարուանի իշխանության գլուխ անցնելը, որը 81 (26 փետրվար 700 – 14 փետրվար 701) թվականին հրամայեց այն փոխարինել [արաբերենով]:

Բանն այն է, որ մի հոռոմ քարտուղար, կամեննալով ինչ որ բան գրել և ջուր չգտնելով, միզել էր թանաքամանի մեջ: Այդ մասին լսելով, Աբդ ալ-Մալիքը պատժել էր նրան և հրամայել Սուլայման իրն Սաադին պետական գրասենյակների (դիվան) լեզուն փոխել: Սա խնդրեց նրանից զիջել Հորդանանի խարաջը [որպես նպաստ] մեկ տարով: Նա այդ բանն արեց ու նրան նշանակեց Հորդանանի կառավարիչ: Տարին դեռ չէր լրացել, երբ լեզվի փոփոխությունը կատարվել էր և նա բերեց Աբդ ալ-Մալիքին [մատյանները]: Նա իր մոտ կանչեց իր քարտուղար Սարջունին (Սերգիոս) և ցույց տվեց նրան, իսկ նա տխրեց և մոայլ դուրս եկավ:Հանդիպելով մի խումբ հոռոմ քարտուղարների (գրագիր) ասաց նրանց. Այլ արհեստ փնտրեցեք ապրուստի համար, քանզի Ալլահն այս արհեստը ձեզանից վերցրել է:

Հորդանանի ամբողջ տարեկան հարկը, որը [Սուլայմանին] տրված էր որպես նպաստ, հարյուր ութսուն հազար դինար էր, Պաղեստինի տարեկան հարկը՝ երեք հարյուր հիսուն հազար դինար, Դամասկոսի տարեկան հարկը՝ չորս հարյուր հազար դինար, Եմեսայի, Կիննասրինի և այժմ Ավասիմ կոչված չրջանների հարկը՝ ութ հարյուր հազար դինար, սակայն ասվում է նաև, թե յոթ հարյուր հազար դինար էր:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆՎԱՃՈՒՄԸ

էջ 197 – 213

Ինձ պատմել են Մուհամմադ իրն Իսմաիլը Պարտավի (Բարդաա)[94] բնակիչներից և ուրիշներ, լսելով Աբու Բարա Անբասա իրն Բահր ալ-Արմանիից, ինչպես նաև պատմել են Մուհամմադ իրն Բիշր ալ-Կալին (Կարնեցի), լսելով նրա (Կարնո քաղաքի) ծերունիներից (չեյխերից) և Բարմաք իրն Արդալլահ ալ-Դաբիլին (Դվնեցի), Մուհամմադ իրն ալ-Մուխայիս ալ-Խիլաթին (Խլաթեցի) և ուրիշներ, Հայաստանի վիճակին լավատեղյակ մարդկանցից: Սրանց հետ զրուցել եմ և մաս-մաս իրար կցել նրանց խոսքերը:

Ասել են, թե Շիմշաթը, Կարնո քաղաքը (Կալիկալա), Խլաթը, Արճեշը (Արջիշ), Ապահունիսը (Բաջունայս) կոչվում էին Չորրորդ Հայաստան (Արմինիա)[95], Վասպուրականի նահանգը (Բասֆուրաջան), Դվինը (Դաբիլ)[96], Շիրակը (Սիրաջ), Տայքը (Թայր) և Բագրևանդը (Բաղրավանդ)[97] կոչվում էին Երրորդ Հայաստան (Արմինիա)[98], Վիրքը (Ջուրզան) կոչվում էր Երկրորդ Հայաստան (Արմինիա)[99], իսկ Սիսականը (Սիսաջան)[100], Աղվանքը (Առան)[101], Առաջին Հայաստան (Արմինիա)[102]: Ասում են նաև, թե միայն Շիմշաթն էր կոչվում Չորրորդ Հայաստան, Կարնո քաղաքը, Խլաթը, Արճեշը և Ապահունիսը կոչվում էին Երրորդ Հայաստան, Շիրակը, Տայքը, Բագրևանդը, Դվինն ու Վասպուրականը կոչվում էին Երկրորդ Հայաստան, Իսկ Սիսականն, Աղուանքն ու Տփղիսը (Տաֆլիս)՝ Առաջին Հայաստան:

Վիրքը և Աղուանքը խազարների ձեռքում էին, իսկ Հայաստանի մնացած մասերը՝ հոռոմների ձեռքում և կառավարում էր Արմանիակուսի տերը[103]: Խազարները սովորաբար ասպատակում էին, չատ հաճախ հասնելով Դինավար: Պերոզ արքայի որդի Կավատը ուղարկել էր իր մեծ զորավարներից մեկին տասներկու հազարով, որը եկավ Աղուանք երկիրը և նվաճեց Արաքս կոչված գետից մինչև Շաբուան[104]: Ապա Կավատը հասավ նրան և Աղուանքում կառուցեց Բայլական[105] քաղաքը, ինչպես նաև Պարտավ քաղաքը ամբողջ սահմանային ամրությունների համար, իսկ Կապաղակ (Կաբալա)[106] քաղաքը՝ խազարների դեմ: Ապա չինեց Հում աղյուսից պատնեշը Շաբուանի և Դրունք Ալանացի (Բաբ ալ-Լան)[107] միջև և աղյուսե պատնեշի վրա երեք հարյուր վաթսուն քաղաք կառուցեց, որոնք կործանվեցին Դարբանդի[108] կառուցումից հետո:

Կավատից հետո իշխեց որդին Խոսրով Անուշիրուանը[109] Կավատի որդին, որը կառուցեց Շապուրան (Շաբուրան), Մազբութք (Մասկաթ) քաղաքները, ապա չինեց Դարբանդը և սա կոչվեց Աբուար (դռներ), քանզի կառուցվել էր լեռան մեջ եղած ճանապարհի վրա: Այս

կառուցած վայրերում բնակեցրեց մի ժողովուրդ, որին կոչում էին ալ-Սիյասիջին[110]: Նա Աղուանից երկրում կառուցեց Շաքեի (Շաքան) դռները, Կամբեճանը (Կամբիզան) և Դիդոյից դռները (Դուդանիյա): Սա մի ժողովուրդ է, որն իր ծագումը վերագրում է Դուդան իրն Ասադ իբն Խուզայմայի ցեղին: Կառուցեց նաև Դուբձուկքը (Դուբզուկիյա), որը բաղկացած է տասներկու դռներից, որոնց ամեն մի դուռը քարե ամրոց է:

Վիրք (Ջուրզան) երկրում կառուցեց մի քաղաք, որը կոչվում է Սուղդաբիլ[111], ուր բնակեցրեց Սուղդից (Սոդդ) բերված մարդկանց ու պարսից որդիներին և այն դարձրեց ամրակուռ ավան: Վիրք երկրում, Ռումից այն կողմ մի ամրոց կառուցեց, որը կոչվում էր Պերոզապատի դուռ (Բաբ Ֆիրուզ Կուբադ) և մի այլ ամրոց, որը կոչվում էր Լազիկայի դուռ (Բաբ Լազիկա), ևս մի ամրոց, որը կոչվում էր Բարիկայի դուռ (Բաբ Բարիկա) և գտնվում էր Տրապիզոնի (Թարաբուզանդա, Սև) ծովի վրա: Նա կառուցեց Դրունք Ալանացը, Սամցխեի դուռը (Բաբ Սամսախի), չինեց Գարդմանը (Ջարդաման) և Սամչվիլդե (Սամչուլդա, Շամչուլդե) ամրոցները:

Անուշիրուանը Հայաստանից գրավեց այն ամենը, որ Հռոմոնների ձեռքում էր գտնվում: Շենացրեց ու ամրացրեց Դվին քաղաքը, կառուցեց Նախճավան (Նաչավա) քաղաքը, որը Վասպուրական նահանգի քաղաքն է: Շինեց Վայոց (Վայս) բերդը և ամրոցներ Սիսական հողում, ինչպես Շնող (Քիլար) և Շահապոնս (Շահարունս)[112] ամրոցները և այս բերդերում ու ամրոցներում բնակեցրեց քաջարի ու կորովի մարդկանց Սիասիջիյա (սիսականցիներ) կոչվածներից:

Ապա Անուշիրուանը գրեց թուրքաց (խազարաց) Թագավորին[113] խաղաղության ու հաշտության կոչ անելով և ասելով, որ ամեն ինչում պետք է միաբան լինեն: Ի նշան մտերմության նա խնդրեց նրա դստեր ձեռքը, ցանկություն հայտնելով դառնալ նրա փեսան: Նրա մոտ ուղարկեց մի աղախնի, որին իր կանանցից մեկը որդեգրել էր, ասելով որ դա իմ դուստրն է: Իսկ թուրքը՝ նրան ուղարկեց իր դստերը: Նրանք եկան իրար մոտ և հանդիպեցին Բարչալիյայում, որտեղ մի քանի օր խնջույք արեցին: Նրանք մտերմացան ու բարեկամացան: Անուշիրուանն իր հավատարիմ մերձավորներից մեկին հրամայեց, որ [իր մարդիկ] թուրքի ճամբարի մի ծայրից մուտենան ու կրակ գցեն, և այդպես էլ արեցին: Երբ եղավ առավոտ, սա Անուշիրուանին գանգատվեց, իսկ նա պատասխանեց, թե ոչ հրամայել է, ոչ էլ գիտի, թե անողը իր մարդկանցից է: Մի քանի գիշեր անց նույն մարդկանց հրամայեց կրկնել այն, ինչ առաջ արել էին, և նրանք կրկնեցին: Այդ արարքից թուրքն այնքան զայրացավ, որ Անուշիրուանն ստիպված սիրալիր ներողություն խնդրեց ու հանգստացրեց նրան: Ապա Անուշիրուանը հրամայեց կրակ գցել իր

ճամբարի մի կողմում, որտեղ միայն չոր խոտից ու թփերից չինված խրճիթներ կային: Երբ առավոտը լուսացավ, Անուշիրուանը գանգատվեց թուրքին ասելով՝ քո մարդիկ քիչ էր մնում իմ ճամբարը ոչնչացնեին, դու քո կասկածի պատճառով ինձանից վրեժ ես առնում: Սա երդվեց, թե ոչինչ չգիտի դրա պատճառի մասին: Ասաց Անուշիրուանը՝ Ով եղբայր իմ և քո դինվորները ատում են մեր խաղաղությունը, քանզի կտրվեց այն ավարը, որ նրանք ձեռք էին բերում մեր միջև պատահած արշավանքների ու պատերազմների ընթացքում: Ես վախենում եմ, որ նրանք այնպես կանեն, որ մեր սրտերը կոտրեն, այն բանից հետո, երբ միմյանց բարեկամություն և անկեղծություն ենք ցուցաբերել և վերադառնանք թշնամության՝ խնամախանալուց ու մտերմանալուց հետո: Ամենահիշատն այն կլինի, որ դու ինձ թույլ տաս մի պարիսպ կառուցել իմ ու քո միջև, նրա վրա դուռ կսարքեն և այլևս ոչ մեր կողմից ձեր կողմը կանցնեն, ոչ էլ ձեր կողմից՝ մեր կողմը, բացի այն դեպքից, երբ դու կամ ես թույլ տանք: Նա համաձայնեց ու գնաց իր երկիրը:

Անուշիրուանը ձեռնարկեց պարսպի շինության և կառուցեց այն ծովի կողմից՝ ժայռով ու արձիճով, լայնությունը դարձրեց երեք հարյուր կանգուն ու հասցրեց լեռների կատարը: Չհամայնեց նավերով քարեր փոխադրել, նետել ջրի մեջ այնպես, որ բարձրանա մինչև ջրի մակերեսը և նրա վրա չինեց պարիսպը, ծովի մեջ երեք մղոն ներս տանելով: Երբ կառուցումն ավարտվեց, պարսպի մուտքի մոտ երկաթե դռներ կախեց և այնտեղ հարյուր հեծյալ նշանակեց պահպանության համար, մինչդեռ նույն այդ տեղը պահպանելու համար [նախկինում] կարիք կար հիսուն հազար զորքի: Նրա վրա նաև խոյ (զաբբաբա) դրեց: Այն ժամանակ ասացին խաքանին, թե քեզ խաբել է, քեզ կնության է տվել ոչ իր դստերը և քեզանից պաշտպանվել է: Իսկ նա ոչ մի հնար չգտավ անելու:

Անուշիրուանը Թագավորներ նշանակեց ըստ կարգի և ամեն մեկին տվեց մի գավառի թագավորական իրավունքը (չահիյա): Այսպես՝ լեռան խաքանը, որը Սարիրի (Գահի) տերն էր ու կոչվում էր Վահրարզանչահ, ապա Ֆիլանի Թագավորը, որը Ֆիլանշահն է, Թաբարսարանշահը, Լեզգիների (Լաքս) Թագավորը, որը կոչվում է Ջարչանշահ, Մազքթաց (Մասկեթ) Թագավորը, որի իշխանությունն այժմ վերացած է, Լիրանի Թագավորը, որը կոչվում է Լիրանշահ, և Շարուանի Թագավորը, որը կոչվում է Շարուանշահ: Բուխխի տիրոջը Թագավորեցրեց Բուխխի վրա, իսկ Ջարիքիրանի տիրոջը[114]՝ նույն [գավառի] վրա: Կովկասի (Կարկ) լեռան Թագավորներին հաստատեց իրենց Թագավորություններում և հաշտություն կնքեց [տարեկան] հարկատվության պայմանով:

Հայաստանը պարսիկների ձեռքում մնաց մինչև մահմեդականու-

Թյան երևան գալը և այդ ժամանակ Սիասիջիներից (Սիսականցի) չատերը լքեցին իրենց բերդերն ու քաղաքները, այնպես որ կործանվեցին և ապա խազարներն ու Հոռոմները գրավեցին այն, ինչ նախապես նրանց ձեռքում էր:

Ասում են, թե Հոռոմների իշխանությունն ինչ որ ժամանակ բաժան-բաժան էր եղել և դարձել էին գավառական (ինքնագլուխ) թագավորների (մուլուք ալ-թավայիֆ) նման: Նրանցից Արմանիակուս անունով մի մարդ իշխեց և ապա մեռավ ու իշխեց նրա կինը, որի անունն էր Կալի: Նա կառուցեց Կալիկալա քաղաքը և այն կոչեց Կալի Կալա[115], որը նշանակում է Կալիի բարեգործությունը: Ասվում է, որ նա քաղաքի դռներից մեկի վրա քանդակված է և արաբներն արաբացնելով Կալի Կալան, դարձրեցին Կալիկալա (Կարնո քաղաք):

Պատմում են, որ երբ Օսման իբն Աֆֆանը խալիֆա դարձավ, գրեց Մուավիային, որը նրա կողմից կառավարիչ էր Ասորիքի, Ջազիրայի ու Սահմանային ամրությունների վրա, հրամայելով նրան Հաբիբ իբն Մասլամա ալ-Ֆիհրիին ուղարկել Հայաստան, իսկ Հաբիբն աչքի էր ընկել Ասորիքի նվաճման ու Հոռոմների դեմ արշավանքների ժամանակ, որի մասին գիտեին թե՛ Օմարը, թե՛ Օսմանը և թե՛ Հաջորդը: Ասվում է նաև, թե Օսմանը գրել է ուղղակի Հաբիբին՝ հրամայելով արշավել Հայաստան, սակայն նախորդ տեղեկությունն է հավաստի: Նա ճանապարհ ընկավ վեց հազարով, ասվում է նաև՝ ութ հազարով՝ Ասորիքի ու Ջազիրայի բնակիչներից բաղկացած [զորքով]: Նա հասավ Կարնո քաղաք (Կալիկալա) ու պաշարեց, իսկ բնակիչները դուրս եկան նրա դեմ և նա պատերազմեց ու ստիպեց նրանց քաղաք ապաստանել: Նրանք երաշխավորագիր խնդրեցին հնազանդվելու, կամ [մնալու դեպքում], ջիզիա վճարելու պայմանով: Շատերը գնացին, հասան մինչև Ռումի երկիրը: Հաբիբը յուրայիններով մի քանի ամիս մնաց, ապա լուր ստացավ, թե Արմանիակուսի պատրիկը մահմեդականների դեմ մեծ զորք է հավաքել և նրան օգնելու նպատակով միացել են նաև ալաննները, արխազները և խազարաց երկրում գտնվող Սամանդարի[116] մարդիկ: Նա գրեց Օսմանին՝ օգնություն խնդրելով, իսկ սա գրեց Մուավիային, որ նրան ուղարկի Ասորիքի ու Ջազիրայի բնակիչներից այնպիսի մարդկանց, որոնք ցանկություն ունեն հանուն հավատի և ավարի կռվելու: Մուավիան նրան (Հաբիբին) երկու հազար մարդ ուղարկեց, որոնց նա բնակեցրեց Կարնո քաղաքում և հողակտորներ տվեց ու հնձյալ կայազոր դարձրեց:

Երբ Օսմանը Հաբիբի նամակն ստացավ, գրեց Սախդ իբն Ասի իբն Սախդ իբն ալ-Ասի իբն Ումայային, որը նրա կառավարիչն էր Քուֆայում, հրամայելով օգնել [Հաբիբին] զորքով, որի հրամանատարը պետք է լիներ Սալման իբն Ռաբիա ալ-Բահիլին՝ Սալման ալ-Խայլ (Հնձյալների Սալման) կոչեցյալը: Սա առատաձեռն էր, առաքինի ու

մարտունակ: Սալման ալ-Խայլը գնաց նրա մոտ քուֆացիների վեց հազարանոց զորքով, իսկ Հոռոմները և նրանց ընկերացող [զորքերը] եկել ու կանգ էին առել Եփրատի ափին, նախքան Հաբիբին օգնություն հասնելը: Եվ ահա մահմեդականները գիշերով հարձակվեցին, կոտորեցին և սպանեցին նրանց մեծավորին: Հաբիբի կինը՝ Աբդալահի մայր (Ումմ Աբդալլահ), Յազիդի դուստրը, Քայլ ցեղից (Քայլիա), դիտմամբ ասաց [Հաբիբին]՝ որտեղ է մեր հանդիպման վայրը, ասաց՝ [Հոռոմ] բռնակալի վրանը, կամ գրախտը: Երբ [հաղթելուց հետո] նա (Հաբիբը) գնաց վրանները, նրան այնտեղ գտավ:

Բանն այն է, որ Սալմանը հասավ, երբ մահմեդականները [Հաբիբի գլխավորությամբ] արդեն գործը վերջացրել էին Թչնամիների հետ: Քուֆացիք պահանջեցին, որ իրենք ևս ավարից բաժին ստանան, սրանք հրաժարվեցին տալ, որի հետևանքով Հաբիբն ու Սալմանը իրար անարգեցին և մահմեդականներից ոմանք սպառնացին սպանել Սալմանին, բանաստեղծն ասաց.

Թե սպանեք Սալմանին, կսպանենք ձեր Հաբիբին.

Թե գնաք Իբն Աֆֆանի (Խալիֆայի) մոտ, մենք ևս կգնանք:

Երբ այդ մասին գրեցին Օսման [խալիֆային], նա պատասխանեց, թե դա վաստակած ավար է Ասորիքի զինվորների համար: Նա գրեց Սալմանին՝ հրամայելով արշավել Առան:

Ոմանք պատմում են նաև, թե Սալման իբն Ռաբիան Օսմանի օրոք գնաց Հայաստան, գերեվարեց, ավար վերցրեց և ապա 25 (28 Հոկտեմբեր 645 – 16 Հոկտեմբեր 646) թվականին հեռացավ ալ-Վալիդ իբն Ուկբայի մոտ, որը Հաղիասատ ալ-Մաուսիլում (Մոսուլի մոտ Հաղիաս) էր: Այստեղ ստացավ Օսմանի նամակը, որ հայտնում էր, թե Մուավիան գրել է հիշեցնելով, որ Հոռոմները մեծ բազմությամբ հարձակվել են մահմեդականների վրա և օգնություն է խնդրում: Նա հրամայում էր, որ ութ հազար մարդ ուղարկի և սա ուղարկեց՝ Սալման իբն Ռաբիա ալ-Բահիլիի հրամանատարության տակ: Մուավիան նրա հետ ուղարկեց Հաբիբ իբն Մասլամա ալ-Ֆիհրիին, նույնքան զորքով, և նրանք միասին բերդեր գրավեցին, գերեվարեցին, սակայն իրար հետ վիճեցին հրամանատարության հարցով: Ասորիքի մարդիկ կամենում էին սպանել Սալմանին և բանաստեղծը ասաց՝ Թե սպանեք [...] տողը: Սակայն առաջին տեղեկությունն է ստույգ, որն ինձ պատմել են Կարնո քաղաքի բնակիչ ծերունիներից (չեյխերից) չատեր և այդ մասին ինձ գրել է նրա դատավոր ալ-Աթթաֆ իբն Սուֆիան Աբու-լ-Ասբաղը:

Ինձ պատմել է Մուհամմադ իբն Սաադը, լսելով Վակիդիից, իսկ սա Աբդ ալ-Համիդ իբն Ջաաֆարից և սա իր հորից, թե Հաբիբ իբն Մասլաման պաշարեց Դվինի բնակիչներին և բանակ դրեց նրա չուրջը: Նրա դեմ դուրս եկավ Հոռոմ Մավրիանոսը (Մաուրիան ալ-

Ռումի)[117], սակայն [Հաբիբը] գիշերով հարձակվեց նրա վրա, կոտորեց ու կողոպտեց նրա ճամբարը: Ապա եկավ Սալմանն ու միացավ նրան, բայց ճշմարտությունն այն է, որ նրան միացավ (հանդիպեց) Կարնո քաղաքում:

Ինձ պատմել են Մուհամմադ իբն Բիշր ալ-Կալին ու Իբն Վարդ ալ-Կալին (կարնեցիներ), լսելով Կարնո քաղաքի բնակիչ ծերունիներից, թե Կարնո քաղաքը նվաճման օրից մնացել էր անառիկ ու պաշտպանված իր բնակիչներով հանդերձ, մինչև որ եկավ Բռնակալը 133 (9 օգոստոս 750 – 29 հուլիս 751) թվականին ու պաշարեց Մալաթիայի բնակիչներին, ավերեց նրա պարիսպը և այնտեղ բնակվող մահմեդականներին վտարեց Ջազիրա: Ապա կանգ առավ Մար ալ-Հասա կոչված վայրում և ուղարկեց հայազգի Գուսանին (Քուսան ալ-Արմանի)[118]: Նա եկավ պաշարեց Կարնո քաղաքը, որի բնակիչներն այդ ժամանակ փոքրաթիվ էին, իսկ կառավարիչն էր Արու Քարիման: Կարնո քաղաքի հայ բնակիչներից երկու եղբայրներ ծակելով նրա պարսպի մեջ եղած մի ճեղքվածք, դուրս եկան Գուսանի մոտ և նրան քաղաք մտցրեցին: Սա գրավեց քաղաքը, կոտորեց, գերեվարեց ու ավերեց և, ինչ որ կարող էր, տարավ Բռնակալի մոտ, իսկ ավարը բաժանեց իր ընկերակիցներին:

Պատմել է Վակիդին, որ 139 (5 հունիս 756 – 24 մայիս 757) թվականին Մանսուր [Խալիֆան] փրկագնով վերցրեց Կարնո քաղաքի բնակիչներից ողջ մնացած գերյալներին: Նա վերակառուցեց Կարնո քաղաքը, չենացրեց ու վերստին բնակեցրեց գերությունից փրկագնածներին: Այստեղ բերեց Ջազիրայից և այլ վայրերից զորքեր: Ռումի բռնակալը Մուտասիմ Բիլլահ Խալիֆայի օրոք հարձակվեց Կարնո քաղաքի վրա և սկսեց նրա պարիսպը քարերով հարվածել, այնպես որ քիչ էր մնացել փուլ գար: Ապա Մուտասիմ [Խալիֆան] նրա համար ծախսեց հինգ հարյուր հազար դիրհեմ ամրացնելու նպատակով:

Պատմում են, որ երբ Հաբիբը գրավեց Կարնո քաղաքը, առաջ խաղաց և բանակ դրեց Մարդաղիում (Մարբալա)[119] և ահա նրա մոտ եկավ Խլաթի պատրիկը Իյադ իբն Ղանմի գրությամբ: Իյադը նրան երաշխավորել էր անձի, ունեցվածքի ու երկրի համար և ճանաչել նրա տիրույթները Հարկի դիմաց: Հաբիբը հաստատեց այն: Ապա նա իջավ մի կայանում Հարքի (Հարաքի) ու Վարագա դաշտի (Մարջ ալ-Վարակի) միջև, ուր նրա մոտ եկավ Խլաթի պատրիկը, բերեց իր վրա դրված հարկերը և ընծաներ նվիրեց, որը նա (Հաբիբը) չընդունեց: Նա իջավ Խլաթ, ապա չարժվեց դեպի Սիփան (ալ-Սիբանա)[120], ուր նրան դիմավորեց Մոկսի (Մուքս) տերը, որը Վասպուրականի գավառներից է: [Հաբիբը] ճանաչեց նրա տիրույթները այդ երկրում (գավառում), նրա հետ մարդ ուղարկեց և նրա համար խաղաղության թուղթ և

երաշխավորագիր տվեց: Նա Արճեշի ու Ապահունիքի գյուղերը մարդկանց ուղարկեց նվաճելու և նրանց բնակչությունից՝ ըստ գլխի ջիզիա գանձելու համար: Նրա մոտ եկան նրանց մեծամեծները և նա ճանաչեց նրանց իրավունքները խարաջ վճարելու պայմանով: Իսկ Տառնիսի (Թիռիս) լճին[121] ձեռք չտվեց և այսպես ազատ մնաց, մինչև որ Մուհամմադ իբն Մարուան իբն ալ-Հաքամը Ջազիրայի ու Հայաստանի կառավարիչ դարձավ և իրեն վերապահեց ձկնորսության իրավունքն ու վաճառում էր ձգտելով չահագործել այն: Ապա անցավ Մարուան իբն Մուհամմադին, որից և վերցվեց [Աբբասյանների կողմից]:

Ապա Հաբիբն առաջ չարժվեց ու հասավ Արտաչատ (Արդիսաթ)[122], որը Որդան կարմրի գյուղն է (Կարիատ ալ-Կիրմիզ)[123], անցավ Աքրադ գետը[124], կանգ առավ Դվինա դաշտում ու հեծյալների ուղարկեց քաղաքի դեմ: Ապա հարձակվեց ու կանգ առավ նրա դռների առջև: Բնակիչները պաշտպանվեցին նետեր տեղացնելով, իսկ նա քարանետ մեքենաներ դրեց ու քարկոծեց նրանց, այնքան որ երաշխավորագիր ու հաշտություն խնդրեցին և նա տվեց: Նրա հեծյալները գնացին ու կանգ առան Գառնիի առջև և ապա հասան Աչոցք (Աչուչ), Ջատ ալ-Լուջում (սանձերի վայր)[125] լեռը և Ազատաց (Ահրար) հովիտը ու նվաճեցին Դվինի բոլոր գյուղերը: Նա մարդ ուղարկեց Շիրակ Տայք ու Բագրևանդ ու եկավ նրանց պատրիկը և նա հաշտություն կնքեց այդ [գավառների] համար, այն պայմանով, որ հարկ վճարեն, մահմեդականներին խորհուրդներ տան, հյուրընկալեն և օգնեն թշնամիների դեմ:

Դվինի հաշտության պայմանագիրն հետևյալն էր.

«Հանուն ամենագութ, ամենողորմ Ալլահի: Սա է Հաբիբ իբն Մասլամայի գիրը Դվինի քրիստոնյա բնակիչներին, գրաղաչտականներին, հրեաներին, նրանց ներկաներին ու բացականերին առ այն, որ երաշխավորում եմ ձեր անձերը, ունեցվածքը, եկեղեցիները, տաճարները և քաղաքի պարիսպները: Դուք ապահովության մեջ կլինեք և մենք պարտավոր ենք հավատարիմ մնալ այս ուխտին, ինչքան ժամանակ, որ դուք էլ հավատարիմ կլինեք՝ վճարելով ջիզիան ու խարաջը: Սրան վկա է Ալլահը և նա բավական է իբրև վկա»:

Կնքեց Հաբիբ իբն Մասլաման:

Ապա Հաբիբը եկավ Նախճավան գրավեց և Դվինի հաշտության պայմանագրի նմանը տվեց: Նրա մոտ եկավ Վասպուրականի պատրիկը և նա հաշտություն խնդրեց նրա ամբողջ երկրի համար և գոհացրեց նրա զինված ջոկատներին ու ընտիր ձիավորներին տարեկան հարկի դիմաց:

Հետո եկավ Սիսական, որի բնակիչները կռվեցին, սակայն նա հաղթեց նրանց ու գրավեց Վայքը և Սիսականի ամրոցի բնակիչների

Հետ հաշտության դաշինք կնքեց՝ խարաջ վճարելու պայմանով: Ապա գնաց Վիրք:

Ինձ պատմել են Դվինի բնակիչ ծերունիները, ինչպես Բարմաք իրն Աբդալլահը, թե Հարիք իրն Մասլաման առաջ խաղաց իր հետ եղած [զորքով] դեպի Վիրք: Երբ հասան Զատ ալ-Լուջում, իրենց անասուններն արձակեցին արածելու, իսկ սանձերը հավաքեցին: Հանկարծ հարձակվեցին անհավատ գեղջուկները ու չթողնելով, որ սանձերը վերցնեն, կովի բռնվեցին, իրենք վերցրեցին այդ սանձերը և անասուններից ինչ որ կարողացան տանել: Սակայն [արաբները] հարձակվեցին նրանց վրա, կոտորեցին ու վերադարձրին այն ինչ խլել էին: Ուստի այդ վայրը կոչվեց Զատ ալ-Լուջում (սանձերի վայր): Եվ Հարիքի մոտ նկավ Վիրքի պատրիկի ու բնակչության սուրհանդակը, բերելով նրանց նամակը և խնդրեց հաշտության թուղթ ու երաշխավորագիր: Հարիքը նրանց համար գրեց հետևյալը.

«Ձեր սուրհանդակ Նուկլան (Նիկողայոս) ինձ և իմ ընկերակից հավատացյալներին ներկայացավ և հայտնեց ձեր անունից, թե մենք մի ժողովուրդ ենք, որին Ալլահը պատվել ու գերադասել է: Այսպես է արել Ալլահը, մեծ փառք նրան և նրա օրհնությունը թող լինի իր մարգարե ու լավագույն արարած Մուհամմադի վրա, խաղաղություն նրան: Դուք նշում եք, թե ուզում եք մեզ հետ խաղաղություն հաստատել: Ես գնահատեցի ձեր ընծան և այն հաչվեցի ջիզիայի մեջ: Ձեզ համար գրեցի երաշխավորագիր, որի մեջ դրել եմ մի պայման եւ եթե ընդունեք ու հավատարիմ մնաք՝ լավ է, ապա թե ոչ «պատերազմ կհայտարարվի Ալլահի ու նրա առաքյալի կողմից» (Ղուրան, Բ, 279): Թող խաղաղություն լինի նրանց, որոնք ճշմարտության ուղիով են ընթանում»:

Ապա եկավ Տփղիս (Տաֆլիս) և նրա բնակիչներին հաշտության թուղթ գրեց.

«Հանուն ամենագութ ամենողորմ Ալլահի: Սա է, Հարիք իրն Մասլամայի գիրը Վիրքի (Ջուրզան ալ-Կիրմիզ, ալ-Հուրմուզ) Մանգլիս (Մանջալիս, Մանգլեաց) [գավառի] Տփղիսի բնակիչներին երաշխավորելու նրանց անձերը, տաճարները, վանքերը, ծիսակատարությունները և կրոնը, պայմանով, որ գիտակցեն (ընդունեն) նվաստ (հպատակ) վիճակը և ում վճարել ջիզիա ամեն մի տնից (ծխից) մեկ դինար: Դուք չպետք է ջիզիան թեթևացնելու նպատակով մի քանի տուն (ծուխ) միացնեք, իսկ մենք չպետք է նրանց բաժանենք առավել [հարկ] ստանալու նպատակով: Դուք մեզ տալու եք ձեր խորհուրդները և օժանդակությունը Ալլահի ու նրա մարգարեի թշնամիների դեմ, ինչքան որ կարող եք, պարտավոր եք մեկ գիշեր հյուրընկալել մահմեդականին կարիք ունեցող [Սուրբ] Գրքի ժողովրդի օրինավոր հարմարած կերակրից [տալով]: Եթե որևէ մահմեդական ճանապարհին

[ընկերներից] ետ մնալով ձեզ մոտ իջևանի, պարտավոր եք նրան հասցնել ամենամոտ տեղում գտնվող հավատացյալների մոտ, բացի այն պարագայի, երբ դա անկարելի է: Եթե դուք դարձի գաք և [մահմեդականի] աղոթք կատարեք՝ կրոնով մեր եղբայրներն եք, ապա թե ոչ, ջիզիան կծանրանա ձեզ վրա: Եթե որևէ պատճառով մահմեդականները չկարողանան օգնել և ձեր թշնամին նեղի ձեզ, ապա նրանք պատասխանատու չեն և այս պատճառով անվավեր չի համարվի ձեր [ունեցած] պայմանագիրը: Ահավասիկ ձեր իրավունքներն ու ձեր պարտավորությունները: Վկա են Ալլահն ու նրա հրեշտակները, իսկ Ալլահը բավական է իբրև վկա»:

Ջառահ իրն Աբդալլահ ալ-Հաքամին [նույնպես] տվել է գիր (թուղթ) Տփղիսի բնակիչներին, որի պատճենն է.

«Սա է Ջառահ իրն Աբդալլահի գիրը Վիրք նահանգի Մանգլիս գավառի Տփղիսի բնակիչներին, թե ինձ բերեցին Հարիք իրն Մասլամայի իրենց տված երաշխավորության գիրը առ այն, որ ընդունեն նվաստ (հպատակ) վիճակում վճարեն ջիզիան և որ նա հաշտություն էր կնքել նրանց հողերի, խաղողի այգիների և ջրաղացների համար, որոնք կոչվում են Վերա (Ավարի, Վերն) և Սաբինա Մանգլիս (Մանգլեաց փոր) գավառից և Դիդոմի (Թասամ) ու Դիդուբե (Դիդունա) Վիրք նահանգի Կսոնեթ (Կուհուիթ, Խվնեթ) գավառից այն պայմանով, որ այդ ջրաղացների ու խաղողի այգիների համար վճարեն տարեկան հարյուր դիրհեմ առանց կրկնության (մեկ անգամից): Հաստատեցի նրանց երաշխավորագիրը և հաշտության պայմանագիրը ու հրամայեցի, որ հարկը չավելացվի: Ով կարդա իմ գիրը, թող նրանցից ավելի [հարկ] չվերցվի: Կամոքն Ալլահի գրվեց»:

Հարիքը նվաճեց Քուստի Փառնես (Քուսփարնես)[126], Քիսալ[127], Հունարակերտ (Խունան)[128], Սամցխե (Սամասխե)[129], Գարդմանի (Ջարդաման)[130], Քուստի (Քուստաաջի)[131], Շավչեթի (Շաուչիտ)[132] և Բաղալեթի (Բազալիտ) [բնակավայրերը] հաշտության պայմանագրով, խնայելով բնակիչների արյունը (կյանքը) և հաստատելով, թե նրանց աղոթարաններն ու պարիսպները չեն քանդվի այն պայմանով, որ հարկ վճարեն իրենց հողերի ու գյուխների համար: Նա հաշտություն կնքեց Կղարջքի (Կալարջիտ)[133], Թռեղքի (Տարիալիտ)[134], Կախեթի (Խախեթ), Ջավախքի (Ջավախեթ)[135], Արտահանի (Արթահալ, Արտահան), Ալանաց դռան (Բար ալ-Լան)[136] բնակիչների հետ, ինչպես նաև Ծանարաց (Սաննարիյա)[137] և Դիդոյից (Դուգանիյա)[138] հետ հարկ վճարելու պայմանով:

Երբ Օսման [խալիֆան] Սալման իրն Ռաբիա ալ-Բահիլիին հրամայեց գնալ Առան, սա գրավեց Բայլական քաղաքը հաշտության պայմանագրով, երաշխավորելով նրանց (բնակիչների) արյունը (կյանքը), ունեցվածքը, քաղաքի պարիսպները և պայման դրեց վճա-

րել Ջիզիա ու խարաջ: Ապա Սալմանը եկավ Պարտավ, բանակ դրեց Տրտուի (Սարսուր)[139] ափին, որը մի գետ է նրանից մեկ փարասախից պակաս հեռավորության վրա: Բնակիչները [քաղաքի] դռները փակեցին նրա առջև, իսկ նա օրերով պաշարեց ու ասպատակեց նրա գյուղերը, որոնց ցանքերը հնձվելու էին, հասունացել էին: Նրանք հաշտություն կնքեցին Բայլականի հաշտության պայմաններով, բացին քաղաքի դռները, իսկ նա մտավ և այնտեղ կանգ առավ:

Նա հնծյալներ ուղարկելով նվաճեց Շակաչեն (Շակաչին)[140], Մեծ Կունկ (Միկուան)[141], Ուտի (Ուզ)[142], Մեծ Իրանք (Միսրիան)[143], Հարճլանք (Հարջալիան)[144] և Տրի (Տիար)[145] գավառները (ռասատիկ), ապա նվաճեց Առանի այլ մասերը: Կոչ արեց Բաղասականի (Բալասաջան)[146] քրդերին ընդունել մահմեդականությունը, իսկ նրանք կռվի դուրս եկան և նա հաղթեց նրանց, ոմանց պարտավորեցնելով ջիզիա վճարել, իսկ այլոց, որոնք փոքրաթիվ էին՝ սադակա:

Ինձ պատմել են Պարտավի մի խումբ բնակիչներ, թե Շամբորը (Շամբու)[147] հին քաղաք է: Սալման իրն Ռաբիա ալ-Բահիլին զորք ուղարկեց ու գրավեց այն: Այս քաղաքը բնակեցված ու չեն դրության մեջ մնաց, մինչև որ Սևորդիք (Սիսավարդիյա)[148] կոչված ցեղը կործանեց [այն]: Սրանք Յազիդ իրն Ուսայդի հեռանալուց հետո համախմբվեցին, վտանգավոր դարձան և շատ աղետներ պատճառեցին: Ապա ալ-Մուտասիմ Բիլլահ [խալիֆայի] մասլա Բուղան[149], որը Հայաստանի, Ատրպատականի ու Շիմշաթի կառավարիչն էր, 240 (2 հունիս 854 – 21 մայիս 855) թվականին չենացրեց այն և բնակեցրեց խազարների, որոնք ապաստանել էին նրա մոտ, ցանկանալով իսլամն ընդունել: Նա Պարտավից այստեղ փոխադրեց վաճառականների և այն անվանեց Մուտավաքքիլիյա:

Սալմանն առաջ խաղաց դեպի Արաքսի և Կուրի միախառնման վայրը՝ Բարդիջի[150] ետևում, անցավ Կուրը, նվաճեց Կապազակը (Կարալա), իսկ Շաքեի ու Կամբեճանի տերը նրա հետ հաշտություն կնքեց, հարկ վճարելու պայմանով:

Նրա հետ հաշտություն կնքեց Խայզանի[151] ժողովուրդը, Շաբուանի թագավորը և լեռների բոլոր թագավորները, ինչպես նաև Մազքթաց, և Շապրանի և Դարբանդ քաղաքի բնակիչները: Ապա նրա ետևից սրանք (Դարբանդի բնակիչները) դռները փակեցին:

Նրան հանդիպեց Խաքանը իր հնծյալներով՝ Բալանջար գետից[152] այն կողմ և նա չորս հազար մահմեդականների հետ սպանվեց: Օրհասական պահին լսելի էր նրանց «Ալլահ աքբար» կոչը[153]:

Սալման իրն Ռաբիան առաջինն էր, որ դատավոր էր նշանակվել Քուֆայում: Քառասուն օր մնացել էր, բայց ոչ մի դատ չէր եղել: Նա հադիսներ[154] (ավանդություններ) էր հավաքել ու գրի առել Օմար իրն ալ-Խաթթաբի մասին: Սալմանի ու Կուտայբա իրն Մուսլիմի մասին

Իրն Ջումանա ալ-Բահիլին ասել է.

Երկու գերեզման ունենք, մեկը Բալանջարում,

Մյուսը՝ Զինաստանում. ինչ գերեզմաններ...

Զինաստանինը՝ հաղթություններով է պսակված

Իսկ այս մեկն՝ առատ անձրևներ է տեղացնում*:

Սալմանի հետ Բալանջարում էր Կարդու իրն Քաաբ ալ-Անսարին, որը նրա մահվան գույժը բերեց Օսմանին:

Երբ Հաբիբն իր նվաճումներն ավարտեց Հայաստանի հողում, այդ մասին գրեց Օսման իրն Աֆֆանին, իսկ նրա նամակը հասավ Սալմանի մահվան գույժի հասնելուց հետո: Օսմանը նախ մտածեց նրան ամբողջ Հայաստանի (Արմինիա) կառավարիչ նշանակել, ապա որոշեց Ասորիքի ու Ջազիրայի սահմանային ամրությունների հավատի մարտիկ (զաղի) դարձնել, նկատի ունենալով նրա նոանդուն գործունեությունն այս ասպարեզում՝ բոլոր կողմերից: Ուստի Հայաստան (Արմինիա) սահմանային նահանգի կառավարիչ նշանակեց Հուզայֆա իրն ալ-Յաման ալ-Աբսիին: Սա նկավ Պարտավ և իր տեղական կառավարիչներն ուղարկեց նրա և Կարնո քաղաքի միջև բնկած գավառները, ինչպես նաև Խայզան: Սակայն ստացավ Օսմանի նամակը, որը հրամայում էր հեռանալ ու փոխանորդ նշանակել Սիլատ իրն Զուֆար ալ-Աբսիին, որը նրա մոտ էր: Այդպես էլ արեց:

Հաբիբը վերադարձավ Ասորիք և ասպատակ էր սփռում Ռումի երկրում: Նա հաստատվեց Եմեսայում, սակայն Մուավիան նրան փոխադրեց Դամասկոս, ուր նա մնաւ 42 (26 ապրիլ 662 – 14 ապրիլ 663) թվականին՝ 35 տարեկան հասակում: Մուավիան Հաբիբին զորքով ուղարկել էր Օսմանին օգնելու, երբ սա պաշարված էր, սակայն հասել էր Վադի ալ-Կուրա, լսելով Օսմանի մահը, վերադարձել էր:

Օսմանը Մուղիրա իրն Շուբային նշանակեց Ատրպատականի ու Հայաստանի կառավարիչ, ապա հեռացրեց նրան ու Հայաստանի կառավարիչ նշանակեց ալ-Կասիմ իրն Ռաբիա իրն Ումայա իրն Աբու Սալթ ալ-Սակաֆիին: Ուրիշներն ասում են, որ այնտեղ կառավարիչ նշանակվեց Ամր իրն Մուավիա իրն Մունտաֆիկ ալ-Ուկայլին, իսկ դեռ ուրիշներ ասում են, թե Մուղիրայից հետո 15 տարով կառավարիչ նշանակվեց Քիլաբ ցեղից մի մարդ և ապա՝ Ուկայլին:

Ալի իրն Աբու Թալիբի[155] ժամանակ Հայաստանի ու Ատրպատականի կառավարիչ նշանակվեց ալ-Աշաաս իրն Կայս, ապա Մուավիայի կողմից կառավարիչ դարձավ Աբդալլահ իրն Հատիմ իրն Նուման իրն Ամր ալ-Բահիլին, որն այնտեղ էլ մնաւ և կառավարիչ դարձավ նրա եղբայրը՝ Արդ ալ-Ազիզ իրն Հատիմ իրն Նուման: Սա կառուցեց Դվին քաղաքը, ամրացրեց, մզկիթը մեծացրեց, կառուցեց

* Այսինքն դրախտ գնացած մարդու գերեզման է:

Նախճավան քաղաքը, վերականգնեց Պարտավ քաղաքը: Ուրիշներ ասում են, թե նա վերակառուցեց այն և նրա չուրջ խրամատը խորացրեց: Նա վերակառուցեց Բայլական քաղաքը: Այս բոլոր քաղաքները քայքայված, ավերված վիճակում էին:

Ասվում է, որ Պարտավը վերանորոգողը Մուհամմադ իբն Մարուանն էր, Արդ ալ-Մալիք իբն Մարուանի օրոք: Վակիդին պատմել է, որ Արդ ալ-Մալիքը կառուցել է Պարտավ քաղաքը Հատիմ իբն Նուման ալ-Բահիլիի, կամ նրա որդու ձեռքով: Արդ ալ-Մալիքը Հայաստանի կառավարիչ էր նշանակել Օսման իբն Վալիդ իբն Ուկբա իբն Արու Մուայթին[156]:

Երբ Իբն ալ-Զուբայրի խռովությունն սկսեց, Հայաստանն ապստամբեց և նրա ազատներն (ահրար) ու նրանց հետևորդներն բմբոստացան: Երբ Մուհամմադ իբն Մարուանն իր եղբոր՝ Արդ ալ-Մալիքի կողմից Հայաստանի կառավարիչ նշանակվեց, նրանց դեմ կռվեց ու հաղթեց, կոտորեց, գերեվարեց և երկիրը հնազանդեցրեց: Ապա ողջ մնացած [ազատներին] խոստացավ պատիվներ տալ ու նրանք հավաքվեցին Խլաթ գավառի եկեղեցիներում և նա փակել տալով, դռներին պահապաններ նշանակեց ու վախեցրեց: Այս արշավանքների ժամանակ Սիսականից գերի տարվեց Յաղիդ իբն Ուսայդի մայրը, որը նրա պատրիկի դուստրն է:

Սուլայման իբն Արդ ալ-Մալիք [խալիփան] Հայաստանի կառավարիչ նշանակեց Ադի իբն Ադի իբն Ամիրա ալ-Քինդիին[157]: Այս Ադի իբն Ամիրան նրանցից էր, որ հաստատվել էին Ռակկայում, հեռանալով Ալի իբն [Աբու] Թալիբից: Ապա նա Հայաստանի կառավարիչ նշանակվեց Օմար իբն Արդ ալ-Ազիզ [խալիփայի] կողմից: Սա այն Ադին է, որի անունով կոչվել է Բայլականի Ադի գետը (նահր Ադի): Ըստ այլոց, Օմարի նշանակած կառավարիչը Հատիմ իբն ալ-Նումանն էր, սակայն սա ստույգ չէ: Յաղիդ իբն Արդ ալ-Մալիք [խալիփան] նշանակեց Միլակ իբն Սաֆֆար ալ-Բահրանիին, ապա հեռացրեց ու նշանակեց ալ-Հարիս իբն Ամր ալ-Թաիին, որն ալ-Լազի երկիրն ասպատակեց ու նվաճեց Հասմադան գավառը:

Ապա Հայաստանի կառավարիչ նշանակվեց ալ-Ջառահ իբն Արդալլահ ալ-Հաքամին[158] Մուզհիջ [ցեղից]: Սա կանգ առավ Պարտավում և նրան տեղեկացրին չափերի ու կշիռների տարբերությունների մասին: Նա արդարություն ու ճշգրտություն հաստատեց և ջառահի կոչված մի չափ մտցրեց, որով բնակիչները մինչև օրս առևտուր են անում: Հետո անցավ Կուրը և ճեղքեց այն գետը, որ Սամուր[159] է կոչվում ու դիմելով խազարների կողմը, մեծ կոտորած սարքեց, կռվեց Համզին երկրի բնակիչների հետ, ապա հաշտություն կնքեց այն պայմանով, որ նրանց տեղափոխի Խայզան գավառը և այնտեղ նրանց երկու գյուղ հատկացրեց: Հարձակվեց Ղումիք ժողովրդի վրա

ու գերեվարեց ու մնաց Շաքնում, իսկ իր զորքը ձմեռեց Պարտավում ու Բայլականում:

Խազարները հարձակվեցին, անցնելով Արաքսը և նա կռվեց նրանց հետ Վարդանակերտի (Վարսան)[160] դաշտում, ապա նրանք չուռ եկան դեպի Արդաբիլի նահանգը[161]: Ջառահը նրանց հետ երեք օր կռվեց Հայաստանի [սահմանից] չորս փարսախ հեռավորության վրա և նահատակվեց իր ընկերակիցների հետ միասին: Ուստի գետը կոչվեց Ջառահի գետ և նրա վրա եղած կամուրջն էլ նրա անունով կոչվեց:

Ապա Հիշամ իբն Արդ ալ-Մալիք [խալիփան] Հայաստանի կառավարիչ նշանակեց Մասլամա իբն Արդ ալ-Մալիքին, իսկ նա առաջավարիչ նշանակեց Մասլամա իբն Արդ ալ-Մալիքին, իսկ նա առաջապահ զորքի հրամանատար դարձրեց Սաիդ իբն Ամր իբն Աուսադ ալ-Հարաչիին, որի հետ էր նաև Խահակ իբն Մուսլիմ ալ-Ուկայլին եղբայրներով հանդերձ, ինչպես նաև Ջաուանա իբն ալ-Հարիս իբն Խալիդը՝ Բանու Ամիր իբն Ռաբիա իբն Սասասայից և Զուիֆաֆան ու Խալիդը՝ Ումայր իբն ալ-Հուբար ալ-Սուլամիի որդիները, ալ-Ֆուրատ իբն Սալման ալ-Բահիլին և Վալիդ իբն ալ-Կաակաա ալ-Աբսին: Նա (Սաիդը) ճակատեց խազարների հետ, որոնք Վարդանակերտն էին պաշարել, ետ մղեց նրանց ու փախուստի մատնեց: Սրանք եկան Մայմա, որն Ատրպատականի գավառներից է:

Երբ Սաիդը կռվի էր պատրաստվում, ստացավ Մասլամա իբն Արդ ալ-Մալիքի նամակը, որի մեջ նա մեղադրում էր նրան խազարների հետ կռվի և իր գալուստին չսպասելու համար և հայտնում էր, որ նրա փոխարեն զորքի հրամանատար էր նշանակել Արդ ալ-Մալիք իբն Մուսլիմ ալ-Ուկայլիին: Երբ զորքը [իր հաջորդին] հանձնեց, Մասլամայի սուրհանդակը ձերբակալեց նրան ու տարավ բանտարկեց Պարտավի բանտում: Խազարները հեռացան և Մասլաման հետապնդեց նրանց: Այս մասին նա գրեց Հիշամին, իսկ վերջինս պատասխանեց նրան.

Մինչև կթողնես նրանց Մայմադում, ուր չես կարող տեսնել նրանց
Հետո կփնտրես նրանց հողից այն կողմ (ավազների մեջ):
Եվ հրամայեց Հարաչիին բանտից հանել:

Մասլաման հաշտություն կնքեց Խայզանի բնակիչների հետ և հրամայեց [քաղաքի] բերդը քանդել: Իսկ իր համար կալվածներ վերցրեց, որոնք մինչև օրս կոչվում են Խայզանի կալվածներ: Նրա հետ հաշտություն կնքեցին լեռնական թագավորները. նրա մոտ եկան Շարուանշահը, Լիրանշահը, Թարարսարանշահը, Ֆիլանշահը և Ջարչանշահը: Նրան ներկայացավ նաև Մազքթաց տերը: Նա արշավեց [դեպի] Դարբանդ քաղաքը և նվաճեց, իսկ նրա միջնաբերդում կային հազար տուն խազարներ: Նա պաշարեց նրանց և հարվածեց՝ նախ քարերով, ապա քարաձև երկաթի կտորներով: Սակայն երբ այդ

էլ չօգնեց, նա դիմեց դեպի այն աղբյուրը, որից Անուշիվանը ջուր էր բերել նրանց՝ ջրամբարը և այնտեղ մորթեց կովեր, ոչխարներ և նրանց կեղտն ու գարշահոտ խեժը նետեց նրա մեջ: Մի գիշեր այդպես մնալուց հետո ջուրը որդնոտեց, նեխեց ու ապականվեց: Երբ գիշերը վրա հասավ, նրանք փախան ու լքեցին միջնաբերդը: Մասլամա իբն Աբդ ալ-Մալիքը Դարբանդ քաղաքում Ասորիքի ժողովրդից քսան-չորս հազար բերեց բնակեցրեց, նրանց ոռճիկ նշանակելով: Մինչ օրս էլ ոչ մի կառավարչի չեն թողնի իրենց քաղաքը մտնել, եթե իր հետ դրամ չբերի նրանց միջև բաժանելու: Նա (Մասլաման) չինեց ուտելիքի ու գարու չտեմարաններ, դինապահեստ, իսկ ջրամբարը հրամայեց հողով լցնել: Նա քաղաքը չննացրեց ու պարսպապատեց: Մարուան իբն Մուհամմադը Մասլամայի հետ էր և միասին պատերազմել էր խազարների դեմ ու կատաղի կռիվներում աչքի ընկել: Մասլամայից հետո Հիշամ [Խալիֆան] այս սահմանային գոտում (Արմինիա) նշանակեց Սաիդ ալ-Հարաչիին, որը մնաց երկու տարի:

Ապա սահմանային գոտում նշանակեց Մարուան իբն Մուհամմադին, որը կանգ առավ Քիսալում[162] և նա էր, որ այս քաղաքը կառուցեց, իսկ սա Պարտավից քառասուն փարսախ հեռավորության վրա է և Տիղիսից՝ քսան փարսախ:

Ապա Ալանաց դռնից այն կողմ մտավ խազարաց երկիր, իսկ Աբու Յազիդ Ուսայդ իբն Զաֆիր ալ-Սուլամիին լեռնական թագավորների հետ ուղարկեց, որ մտնեն Դարբանդի կողմից: Մարուանն արշավեց սլավոնների (սակալիբ) դեմ, որոնք ապրում էին խազարաց հողում և նրանցից քսան հազար ծուխ գերեվարեց ու բնակեցրեց Կախեթում, ապա նրանք սպանեցին իրենց իշխանին ու փախան, սակայն նա, հասնելով նրանց կոտորեց:

Երբ խազարաց տիրակալը լսեց Մարուանի իր երկիրը բերած զորքերի բազմության մասին և այն, թե ինչպես են սպառազինված, ինչպիսի զորություն ունեն, հուսալքվեց ու սարսափեց: Երբ [Մարուանը] մոտեցավ նրան, դեսպան (ռասուլ) ուղարկեց կոչ անելով ընդունել իսլամը, կամ պատերազմը: Նա ասաց՝ ընդունում եմ իսլամը, մարդ ուղարկիր, որ բացատրի ինձ: Այդպես էլ արեց և նա ընդունեց իսլամը: Մարուանը նրա հետ հաշտություն կնքեց, նրան հաստատեց թագավորության մեջ և խազարների մի մեծ բազմություն բերեց ու բնակեցրեց Սամուրի և Շապորանի միջև՝ ալ-Լաքզ երկրի տափաստաններում:

Ապա Մարուանը մտավ Սարիր երկիրը, կոտորեց բնակիչներին, գրավեց ամրոցներ, իսկ Սարիրի թագավորը հնազանդվեց ու հպատակվեց նրան: Նա հաշտություն կնքեց այն պայմանով, որ [թագավորը] պետք է տարեկան [ուղարկի] հազար գլուխ [ստրուկ], հինգ հարյուր դուլամ[163], հինգ հարյուր աղախին (հարճ) սև մազերով ու

հոնքերով և երկար թարթիչներով, ինչպես նաև հարյուր հազար մող [ցորեն] լցնի Դարբանդի չտեմարանները: Վերցրեց նա և պատանդներ: Մարուանը հաշտություն կնքեց Տումանի ժողովրդի հետ այն պայմանով, որ վճարի տարեկան հարյուր գլուխ [ստրուկ], հիսուն աղախին (հարճ), հիսուն դուլամ, ամեն մեկը հինգ տարեկան սև մազերով ու հոնքերով և երկար թարթիչներով, ինչպես նաև քսան հազար մող [ցորեն] չտեմարանների համար: Մտավ Ջիրիքիրան երկիրը և նրա թագավորը հաշտություն կնքեց այն պայմանով, որ տարեկան վճարի հիսուն գլուխ [ստրուկ] և տաս հազար մող [ցորեն] չտեմարանների համար: Ապա եկավ Համզին երկիրը, սակայն Համզինի [բնակիչները] մերժեցին հաշտություն կնքել նրա հետ: Մեկ ամիս պաշարելուց հետո նա գրավեց բերդը և վառեց ու ավերեց: Դաշինք կնքեց այն պայմանով, որ տարեկան ուղարկեն հինգ հարյուր գլուխ [ստրուկ] միայն մեկ անգամ և դրանից հետո ոչ մի նման պարտավորություն չեն ունենա, իսկ բացի այդ պարտավոր են տարեկան երեսուն հազար մող [ցորեն] ուղարկել Դարբանդի չտեմարանները:

Եկավ Սինդան[164] և այն գրավեց հաշտությամբ, պայմանով, որ նրա տերը միայն մեկ անգամ ուղարկի հարյուր գլուխ [ստրուկ] և դրանից հետո ոչ մի նման պարտավորություն չունենա, իսկ բացի դրանից տարեկան հինգ հազար մող [ցորեն] բերել Դարբանդի չտեմարանները: Նա պարտավորեցրեց Թաբարսարանի բնակիչներին տարեկան տաս հազար մող [ցորեն] տանել Դարբանդի չտեմարանները: Սակայն Ֆիլանշահի վրա ոչ մի պարտավորություն չդրեց նրա ռազմական հմտության, գործիմացության և հավատարմության համար: Ապա Մարուանը կանգ առավ Լաքզի ամրոցի առջև, որի տերը հրաժարվել էր որևէ պարտավորություն վերցնել: Սա դուրս եկավ կամենալով գնալ խազարաց տիրոջ մոտ, սակայն մի հովիվ նետով սպանեց նրան առանց ճանաչելու: Լաքզի ժողովուրդը նրա հետ հաշտություն կնքեց այն պայմանով, որ քսան հազար մող [ցորեն] տանի չտեմարանները:

Նրանց վրա կառավարիչ նշանակելով Խաչրամ ալ-Սուլամիին, Մարուանը գնաց Շարուանի տիրոջ ամրոցը, որը կոչվում էր Խիրս և գտնվում է ծովի ափին: Սա հպատակություն հայտնեց և պարտավորվեց տափարակ դաչտն իջնել: Նա նրա վրա տարեկան պարտավորություն դրեց տաս հազար մող [ցորեն]: Շարուանի տիրոջ պարտավորեցրեց լինել մահմեդական զորքի առաջապահում խազարների դեմ արշավանքի ժամանակ և թիկունքում՝ վերադարձի ժամանակ: Ֆիլանշահին պարտավորեցրեց միայն արշավանքներին մասնակցել, իսկ Թաբարսարանշահին՝ լինել թիկունքում արշավելիս, իսկ վերադարձին՝ լինել առաջապահում: Ապա Մարուանը գնաց Դիդոյք և հաղթեց նրանց:

Երբ նրան հասավ ալ-Վալիդ իբն Յազիդի սպանման լուրը, նրա դեմ ապստամբեց Սաբիտ իբն Նուայմ ալ-Ջուզամին: Սրա մոտ եկավ Մուսաֆիր ալ-Կասսաբը, որին Դահհաք խարիջին Դարրանդի կառավարիչ էր նշանակել և նրան (Սաբիտին) համամիտ գտնվեց, իսկ վերջինս Հայաստանի ու Ատրպատականի կառավարիչ նշանակեց նրան: [Սաբիտը] ծպտված եկավ Արդաբիլ և նրան միացան տեղի խարիջիները (չուրատ)[165]: Նրանք բոլորը եկան Բագարվան և այդտեղ գտան համակիր մարդկանց, որոնք միացան: Եկան Վարդանակերտ, որի բնակիչներից մի մեծ խումբ, որ համամիտ էր նրան (Սաբիտին) միացան, հետո եկան Բայլական, որտեղ նույնպես համակիրների մի մեծ խումբ միացավ: Վերջապես եկան Յունան[166]:

Մարուան իբն Մուհամմադը Իսհակ իբն Մուսլիմին[167] նշանակեց Հայաստանի կառավարիչ և սա երկար կռվեց Մուսաֆիրի դեմ, որը Սիսականի Շնհևը ամրոցում էր:

Հետագայում երբ եկավ օրհնյալ տերությունը (Աբբասյանները) և Աբու Ջաաֆար ալ-Մանսուրը՝ Աբու-լ-Աբբաս ալ-Սաֆֆահ [խալիֆայի] օրոք դարձավ Ջազիրայի ու Հայաստանի կառավարիչ, Մուսաֆիրի ու նրա կողմնակիցների դեմ ուղարկեց Խորասանի բնակիչներից մի զորավարի, որը կռվեց, մինչև որ հաղթեց ու սպանեց Մուսաֆիրին: Բայլականի ժողովուրդն ամրացել էր Շնհևը ամրոցում, ղեկավար ունենալով Կաղաղ իբն Ասֆար ալ-Բայլականիին, սակայն ստիպված եղավ ցած իջնել (ներում չնորհվեց) երաշխավորագիր առանալով:

Երբ Մանսուրը խալիֆա դարձավ, Յազիդ իբն Ուսայդ ալ-Սուլամիին[168] Հայաստանի կառավարիչ նշանակեց և սա նվաճեց Ալանաց դուռը և այնտեղ հաստատեց հնծյալ կայազոր (ռարիթա) արքունի զորքից (ահլ ալ-դիվան): Նա ճնշեց ծանաբներին (ալ-Սաննարիյա) մինչև որ ստիպեց խարաջ վճարել:

Մանսուրը գրեց նրան հրամայելով փնտրանալ խազարաց թագավորին: Այդպես էլ արվեց և նրա դուստրը մի տղա ծնեց, որը մնաց, իսկ նա (դուստրը) ծննդաբերության ժամանակ մեռավ:

Յազիդը մարդ ուղարկեց Շարուան երկրի նավթահանքերը և ադահանքերը, որպեսզի հարկ դրվի և վերակացու նշանակվի: Յազիդը կառուցեց Արջիլ ալ-Սուղրա (Փոքր) և Արջիլ ալ-Քուբրա (Մեծ) քաղաքները և այնտեղ բնակեցրեց Պաղեստինի ժողովրդից:

Ինձ պատմել է Մուհամմադ իբն Իսմաիլը, լսելով Պարտավի բնակիչ ծերունիներից, թե Շամախի քաղաքը, որը Շարուանի նահանգում է, կոչվել է Շարուանի թագավոր ալ-Շամմախ իբն Շուջայի անվամբ, սա՝ Իբն Սալմ ալ-Բահիլիի Հայաստանի կառավարիչ եղած շրջանում:

Ինձ պատմել է Մուհամմադ իբն Իսմաիլը, լսելով ծերունիներից, թե [Յազիդ] իբն Ուսայդ և Բաքբար իբն Մուսլիմ [կառավարիչների]

հանվելուց հետո Հայաստանի ժողովուրդն ապստամբեց Հասան իբն Կահթաբա ալ-Թաիի կառավարչության շրջանում: Նրանց պետն էր Հայազդի Մուչեղը (Մուչայիլ ալ-Արմանի)[169]: Մանսուրը նրան օգնական զորք ուղարկեց, որի հրամանատարն էր Ամիր իբն Իսմաիլը: Հասանը կռվեց Մուչեղի դեմ, որն սպանվեց ու նրա զորքը ցրվեց: Նրա (Հասանի) գործերը հաջող գնացին և նրա անունով էր որ կոչվեց Հասան գետը Բայլականում, այն այգին (բաղ), որը կոչվում է Հասանի այգի և Հասանիյա կոչված կալվածները Պարտավում:

Հասան իբն Կահթաբայից հետո կառավարիչ դարձան [հաջորդաբար] Օսման իբն Ումարա իբն Խուրայմը[170], Ռաուհ իբն Հատիմ ալ-Մուհալլիբին[171], Խուզայմա իբն Խազիմը[172], Յազիդ իբն Մազիադ ալ-Շայբանին[173], Ուբայդալլահ իբն ալ-Մահդին[174], ալ-Ֆադլ իբն Յահյան[175], Սաիդ իբն Սալիմը[176], Մուհամմադ իբն Յազիդ իբն Մազիադը[177]: Այս բոլորի մեջ ամենալսիտ կառավարիչը Խուզայման էր, որը Դվինում ու Նախճավանում հարկը ըստ տարածության (միահա) վճարելու [սկզբունքը] հաստատեց, ինչ որ նախկինում չկար:

Հայաստանի պատրիկները իշխում էին իրենց տիրույթներում (երկիրներ, աշխարհներ) և ամեն մեկը պաշտպանում էր իր գավառը: Երբ սահմանային ամրությունը գալիս էր որևէ կառավարիչ, չուրջը պատվում (ուսումնասիրում) էին. եթե նա նրանց հետ դուսպ էր, դաժան և ուժ ու սպառազինություն ուներ, վճարում էին խարաջը ու հնազանդվում, այլապես՝ հայհոյում էին ու արհամարհում:

Այսպես, Մամունի խալիֆայության շրջանում կառավարիչ դարձավ Խալիդ իբն Յազիդ իբն Մազիադը, որը նրանցից նվերներ էր ընդունում և նրանց հետ անձամբ բարեկամաբար չփվում էր, իսկ այս բանը փչացրեց նրանց և նրան հաջորդող Մամունի նշանակած մյուս կառավարիչների նկատմամբ հանդուգն դարձրեց: Ապա Մուտասիմ Բիլլահը սահմանային ամրությունների (Արմինիա) կառավարիչ նշանակեց ալ-Հասան իբն Ալի ալ-Բաղդիսիին[178], որը հայտնի էր Մամունի անվամբ: Սա անփույթ գտնվեց (ազատ թողնց) նրա պատրիկների և ազատների նկատմամբ, մեղմ վարվեց այնքան, որ առավել ևս անհնազանդ դարձան տիրակալի (սուլթան) հանդեպ և չարացան նրա նշանակած պաշտոնյաների դեմ: Օմայանների մասլա Իսհակ իբն Իսմաիլ իբն Շուայրը տեր դարձավ Վիրքին, իսկ Սմբատի որդի Սահլ (Սահլ իբն Սինբաթ)[179] պատրիկն ապստամբեց Հայդար իբն Քաուս ալ-Աֆշինի[180] նշանակած կառավարչի դեմ, սպանեց նրա քարտուղարին, իսկ ինքը հաղիվ հոգին ազատեց փախուստով: Ապա Հայաստանի կառավարիչ դարձան պաշտոնյաներ, որոնք բնակիչներից ընդունում էին «ողորմություն» և ինչքան խարաջ էին տալիս, այդքանով գոհանում էին:

Սակայն հավատացելոց իշխան ալ-Մուտավաքքիլ Ալալլահը, իր

խալիֆայությունից երկու տարի անցնելուց հետո Հայաստանի կառավարիչ նշանակեց Յուսուֆ իբն Մուհամմադ ալ-Մարուազիին[181]: Երբ Խլաթ հասավ, ձերբակալեց նրա պատրիկ Աչոտի որդի Բագարատին[182] (Բակրաթ, Բուկրաթ իբն Աչոթ) և տարավ Սամառա[183] (Սուռա ման ռաա): Պատրիկները, ազատները և բոնի տիրացողները[184] այս բանից զայրացան: Ապա նա իր մի պաշտոնյային, որը կոչվում էր ալ-Ալա իբն Ահմադ[185], ուղարկեց Սիսականում մի վանք, որը կոչվում էր Բաժակների (սկիհ) վանք (Դայր ալ-Ակդահ) և Հայաստանի քրիստոնյաներն այն չատ էին մեծարում ու պարգևներ ընծայում: Սա հափշտակեց ամբողջ ունեցվածքը և բռնություն գործադրեց նրա մարդկանց (վանականների) նկատմամբ: Պատրիկները զայրացան ու համբերությունից դուրս եկան և իրար միջև նամակագրությամբ միմյանց դրդեցին անհնազանդության ու ըմբոստության: Նրանք գաղտնի գրգռեցին խութեցիներին (ալ-Խուայսիյա), և Արթան անունով հայտնի անհավատ գեղջուկին, հարձակվելու Յուսուֆի վրա, քանզի նա գերել էր նրանց պատրիկ Բագարատին: Նրանցից, ինչպես նաև բռնի տիրացողներից ամեն մեկը ձիավորներ ու ռազմիկներ ուղարկեց այդ բանում նրանց օգնելու: Սրանք հարձակվեցին [Յուսուֆի] վրա Տարոնում (Թարուն)[186], իսկ նա իր մարդկանց ցրել էր գյուղերում: Սպանեցին նրան ու նրա ճամբարում եղած ամեն ինչը տարան:

Ապա հավատացելոց իշխան ալ-Մուտավաքքիլ Ալալլահը Հայաստան ուղարկեց Բուղա ալ-Քաբիրին (ավագ)[187], որը երբ Բաղնէ (Բաղդիս)[188] հասավ, ձերբակալեց Մուսա իբն Զուրարային[189], իսկ սա Յուսուֆի սպանությունը ցանկացողներից էր և այդ նպատակով օգնել էր, քանզի զայրացած էր Բագարատի ձերբակալման համար: Նա (Բուղան) պատերազմեց խութեցիների դեմ, ահռելի կոտորած արեց, մեծ բազմություն գերեվարեց, ապա արշավեց Վասպուրականի պատրիկ Գագիկի որդի Համազասպի որդի Աչոտին[190] (Աչոթ իբն Համզա իբն Ջաջիկ), որն Աղբակի (ալ-Բակ)[191] տերն էր, երաչխավորելով իջնցրեց իր ամրոցից և ուղարկեց Սամառա:

Ապա դիմեց Վիրք, հաղթեց Իսհակ իբն Իսմաիլին, ձերբակալեց և անմիջապես սպանեց, նվաճեց Վիրքը և Առանի ու Հայաստանի արտաքին (բարձրադիր) կողմերում՝ Սիսականում ապստամբած ու խռովարար քրիստոնյաներին ու այլոց տարավ իր հետ, մինչև որ այս սահմանային ամրությունների գոտին այնպես հանդարտվեց, որ նախկինում երբեք չէր եղել: Ապա եկավ Սամառա 241 (22 մայիս 855 – 9 մայիս 856) թվականին:

ԵԳԻՊՏՈՍԻ ՈՒ ՄԱՂՐԻԲԻ ՆՎԱՃՈՒՄԸ

էջ 218 - 219

Ամր իբն ալ-Աս[192] երբ նվաճեց Ֆուսթաթը[193], Արդալլահ իբն Հուդայֆա ալ-Սահմիին ուղարկեց Այն Շամս (Հելիոպոլիս)[194] և սա նվաճեց նրա հողերը ու դաշինք կնքեց Ֆուսթաթի հետ կնքվածի պայմաններով: [.....]

Եվ Ուկրա իբն Ամիր ալ-Ջահնիին, ասվում է նաև որ ոչ թե նրան, այլ իր մաուլա Վարդանին, որը Կահիրեի (Միսր) Վարդանի չուկայի (Սուկ Վարդան)[195] տերն էր, ուղարկեց երկրի ստորին մասերի բոլոր գյուղերը և սա էլ նույնն արեց: Այսպիսով, Ամր իբն ալ-Աս ամբողջացրեց Եգիպտոսի նվաճումը և նրա հողերը դարձան Հարկատու (արդ խարաջ): [.....]

Մուավիան գրել է Վարդանին՝ Ամրի մաուլային, թե ավելացրու հարկը ամեն մի դպտի մարդու վրա մի կիրաթ[196]: Սակայն նա պատասխանում է՝ ինչպես կարող եմ ավելացնել, չէ որ նրանք ունեն պայմանագիր առ այն, որ ավելին նրանցից չպետք է պահանջվի:

ԱԼԵՔՍԱՆԴՐԻԱՑԻ ՆՎԱՃՈՒՄԸ

էջ 222 – 223

Մուկաուկասը Ամրի հետ դաշինք կնքեց տասներեք հազար դինար վճարել պայմանավորվելով և այն պայմանով, որ ով ուզենա կարող է Ալեքսանդրիայից հեռանալ և ով կամենա, կմնա ու կրնակվի նրանում, ամեն մի չափահաս դպտի պարտավոր է երկու դինար վճարել և այս ձևով գրվեց պայմանագիրը: Ապա Ամր իբն ալ-Աս Ալեքսանդրիայում իրեն փոխանորդ թողեց Արդալլահ իբն Հուդայֆա ալ-Սահմիին մահմեդականների մի հեծյալ կայազորով, իսկ ինքը գնաց Ֆուսթաթ:

[Ալեքսանդրիայի] հռոմները գրեցին Հերակլի որդի Կոստանդինին[197], որն այդ ժամանակ նրանց թագավորն էր, տեղեկացնելով, թե մահմեդականները սակավաթիվ են իրենց մոտ և որ իրենք նվաստացած վիճակում են ջիզիա վճարելով: Իսկ նա (Կոստանդինը) իր մերձավորներից Մանուելին[198] ուղարկեց երեք հարյուր նավերով, ռազմիկներով լի և սա մտավ Ալեքսանդրիա, կոտորեց ամբողջ մահմեդական կայազորը ու միայն փախչողները փրկվեցին: Սա տեղի ունեցավ քսանհինգ (28 հոկտեմբեր 645 – 16 հոկտեմբեր 646) թվականին:

Երբ Ամրը այս լուրն իմացավ, տասնհինգ հազարով նավ ու

տեսավ, որ նրանց ռազմիկները դուրս գալով [քաղաքից] չարագործություններ էին անում եգիպտական գյուղերում Ալեքսանդրիայից այն կողմ: Մահմեդականները բախվեցին նրանց հետ և թեև մեկ ժամ նետերի տարափի տակ ընկան, իրենց վահաններով պաշտպանվեցին: Ապա համարձակ հարձակվեցին ու մեծ ճակատամարտ եղավ, անհավատները փախան և ոչ մի ելք չգտնելով ապաստանեցին՝ Ալեքսանդրիայում ու պաշտպանվեցին: Նրանք քարանետ մեքենաներ դրեցին և Ամրը կատաղի կռվեց նրանց դեմ և քարանետ մեքենաներ դնելով քանդեց նրա պարիսպները, համառ կռվով մտավ ու սրով նվաճեց: Սա կոտորեց ռազմիկներին, գերեվարեց նրանց երեխաներին: Նրա բնակիչ հռոմեների մի մասը փախավ Ռումի երկիրը, իսկ Ալլահի թշնամի Մանուելը սպանվեց:

Ամրը ու մահմեդականները քանդեցին Ալեքսանդրիայի պարիսպը, քանզի Ամրը երդվել էր, որ գրավելու պարագային այդպես էր վարվելու:

ՊԱՊԻՐՈՒՍԻ ԳԱԼԱՐՆԵՐԻ (ԿԱՐԱԹԻՍ) ՄԱՍԻՆ

էջ 241 - 242

Պապիրուսի գալարները ուղարկվում էին Հռոմոց երկիրը Եգիպտոսից, իսկ արաբները հռոմեներից ստանում էին դինարներ: Աբդ ալ-Մալիք իբն Մարուանն առաջինն էր, որ գալարների (թավամիր) գլխին սովորություն մտցրեց գրել՝ ասա նա է միակ Ալլահը, և այլ բաներ Ալլահի հիշատակությամբ:

Ռումի թագավորը գրեց նրան՝ դուք ձեր պապիրուսի գալարների վրա գրում եք այնպիսի բաներ, որ մենք ատում ենք, եթե դրանից հրաժարվեք՝ լավ, իսկ եթե ոչ, ապա դինարների վրա կգրենք այնպիսի բաներ ձեր մարգարեի մասին, որ դուք կսկսեք ատել:

Սա խիստ զայրացրեց Աբդ ալ-Մալիքին թեև չէր սիրում հրաժարվել մի լավ օրենքից, որը դրել էր, լուր ուղարկեց Խալիդ իբն Յազիդ իբն Մուավիային ասելով՝ ով Աբու Հաշիմ, փորձանք է պատահել և պատմեց եղելությունը: Ասաց նրան [Խալիդը]՝ մի վրդովվիր ով հավատացելոց իշխան, այլ արգելիր նրանց դինարների օգտագործումը և առևտուրը դրանցով ու հատանիր մարդկանց համար [նոր] դրամներ, որոնց վրա անհավատները կտեսնեն այն, ինչ ատում էին տեսնել մեր գալարների վրա: Ասաց նրան Աբդ ալ-Մալիքը՝ դու հանգստացրիր իմ միտքը, Թող Ալլահը քո միտքը հանգստացնի:

Ասել է Ավանա իբն ալ-Հաքամը, թե [նախկինում] գալարների գլխին պատիները հիշում էին Քրիստոսին և նրան վերագրում աստվածություն ու խաչ էին դնում «հանուն Ալլահի ամենագութ, ամենողորմ» խոսքերի փոխարեն:

Այսպիսով Ռումի թագավորը դժգոհ էր և զայրացած Աբդ ալ-Մալիքի փոփոխությունից:

Ասել է Մադաինին, որ Մասլամա իբն Մուհարիբը նչել է, թե Խալիդ իբն Յազիդը խորհուրդ է տվել Աբդ ալ-Մալիքին արգելել նրանց դինարները ու դրանցով առևտուր անելը և թույլ չտալ, որ Ռումի երկիրը պապիրուսի գալարներ (կարաթիս) ուղարկվեն:

Այսպիսով ոչ մի պապիրուսի գալար չուղարկվեց նրանց մոտ:

ՍԱՎԱԴԻ[199] ՆՎԱՃՈՒՄԸ ԱԲՈՒ ԲԱՔՐ ԱԼ-ՍԻԴԴԻԿԻ[200] ԽԱԼԻՖԱՑՈՒԹՅՈՒՆԸ

էջ 242

Մուսաննա իբն Հարիսա իբն Սալմա իբն Դամդամ ալ-Շայբանին իր մարդկանցով արշավանքներ էր կատարում Սավադ: Լսելով այդ մասին Աբու Բաքրը հարցուփորձ արեց նրա մասին և Կայս իբն Ասիմ իբն Սինան ալ-Մինկարիից իմացավ, որ նա համբավից գուրկ անձնավորություն չէ, ոչ էլ անհայտ ծագումով ու կամ անզոր, այլ դա Մուսաննա իբն Հարիսա ալ-Շայբանին է: Հետագայում Մուսաննան ներկայացավ Աբու Բաքրին և ասաց՝ ով Ալլահի մարգարեի խալիֆա ինձ դարձրու կառավարիչ իմ տոհմի այն մարդկանց վրա, որոնք ընդունել են իսլամը, որպեսզի կռվեմ այդ օտարների՝ պարսիկների դեմ: Աբու Բաքրը մի վավերագիր տվեց այդ մասին: Մուսաննան առաջ խաղաց մինչև որ հասավ Խաֆիֆան և նրա ժողովրդին կոչ արեց ընդունելու իսլամը և նրանք ընդունեցին:

Աբու Բաքրը գրեց Խալիդ իբն ալ-Վալիդ ալ-Մախզումիին հրամայելով գնալ Իրաքի դեմ, ասվում է, թե նա Մադինայից ուղարկեց նրան, իսկ Մուսաննա իբն Հարիսային գրեց, որ նրան ընդունի և հնազանդ լինի:

էջ 244

Ապա Խալիդը գնաց Մուջտամա ալ-Անհար (գետերի միախառնում), ուր հանդիպեց Ազաղրիհը՝ հրամանատարը Խոսրովի այն սահմանային ամրությունների (բերդերի), որոնք ընկած էին պարսիկների ու արաբների միջև: Մահմեդականները կռվեցին նրա դեմ ու հաղթեցին: Ապա եկավ Խալիդը ու կանգ առավ Խաֆիֆանում: Ուրիշներ ասում են, թե նա ուղիղ գնաց Հիրա[201], ուր հանդիպեց Աբդ ալ-Մասիհ (ծառա Քրիստոսի) իբն Ամր իբն Կայս իբն Հայյան իբն Բուկայլային, իսկ վերջինիս անունը Հարիս և Ազդ ցեղից էր, Հանի իբն

Կուբայսա (Կաբիսա) իրն Մասուդ ալ-Շայբանիին և Իյաս իրն Կարիսա ալ-Թաիին, որին ուրիչները ասում են Ֆարուա իրն Իյաս: Սա Խոսրով Պարվեզի կողմից Հիրայի կառավարիչ էր նշանակված Նուման իրն ալ-Մունզիրից հետո:

Սրանք պայմանագիր կնքեցին Խալիդի հետ այն պայմանով, որ տարեկան հարյուր հազար դիրհեմ վճարեն, իսկ ուրիչներ ասում են, թե ութսուն հազար դիրհեմ էր և պարտավորվում էին լրտեսություն անել մահմեդականների համար պարսիկների դեմ, իսկ Խալիդը չպետք է կործաններ նրանց ոչ մի եկեղեցին կամ ամրոցը:

էջ 245

Ինձ պատմել է Աբու Մասուդ ալ-Քուֆին, լսելով Իրն Մուջալիդից, իսկ սա՝ իր հորից, սա էլ՝ Շաաբիից, թե Խուրայմ իրն Աուս իրն Հաբիսա իրն Լամ ալ-Թաին ասել է մարգարեին՝ եթե Ալլահի օգնությամբ նվաճես Հիրան, ես քեզ խնդրում եմ, որ ինձ տաս Բուկայլայի դուստրը: Երբ Խալիդն ուզեց պայմանագիր կնքել Հիրայի բնակչության հետ, Խուրայմն ասաց՝ մարգարեն ինձ է տվել Բուկայլայի դստերը և նա չպետք է մտնի քո պայմանագրի մեջ: Այս բանը վկայեցին Բաշիր իրն Սաադը և Մուհամմադ իրն Մասլաման անսարներից[202], ուստի Խալիդը նրան (աղջկան) չհիշեց պայմանագրի մեջ, այլ հանձնեց Խուրայմին: Ապա Խուրայմը նրան վաճառեց հազար դիրհեմով, քանզի ինքը չատ ծեր էր նրա հետ ամուսնության համար: Մեկն ասաց Խուրայմին՝ նա չատ էժան վաճառվեց, նրա տոհմակիցները այդ գումարի մի քանի անգամ ավելին կտային: Իսկ նա պատասխանեց՝ ես երբեք չեմ իմացել, թե տաս հարյուրից (հազար) [մեծ] թիվ կա:

ԿԱԴԻՍԻՅԱՅԻ[203] ՃԱԿԱՏԱՄԱՐՏԸ

էջ 255 – 259

Մահմեդականները գրեցին Օմար իրն ալ-Խաթթաբին տեղեկացնելով, թե պարսիկները (ահլ Ֆարիս) մեծ բազմությամբ հավաքվել են և օգնություն խնդրեցին: Սա ուզեց անձամբ արշավել ու զորք հավաքեց, սակայն Աբբաս իրն Աբու Մութթալիբը և Ալլահի առաքյալի մերձավորներից մի խումբ ծերուններ նշեցին, որ նա պետք է մնա տեղում ու զորք ուղարկվի և այդպես էլ արեց: Ալի իրն Աբու Թալիբը նրան ուզեց համոզել, որ նա անձամբ գնա, սակայն Օմարն ասաց՝ ես որոշել եմ տեղում մնալ: Օմարն առաջարկեց Ալիին գնալ արշավանքի, իսկ սա մերժեց: Այդ ժամանակ Օմարը կամեցավ, որ

Սաադ իրն Ջայդ իրն Ամր իրն Նուֆայլ ալ-Ադավին գնա: Վերջապես որոշեց ուղարկել Սաադ իրն Աբու Վակկասին, ասելով, թե նա քաջ է և լավ նշանառու: Ուրիչներ ասում են, թե այդ ժամանակ Ջայդ իրն Ամրը Ասորիքում արշավանքով էր զբաղված:

Սաադը եկավ Իրաք և կանգ առավ Սաալաբիյայում երեք ամիս, որի ընթացքում բոլոր զորքերը հավաքվեցին: Ապա տասնհինգ (14 փետրվար 636 – 1 փետրվար 637) թվականին եկավ Ուզայբ: Այդ ժամանակ Մուսաննա իրն Հարիսան հիվանդ էր և խորհուրդ տվեց Սաադին թիկնամուն հանդիպել Կադիսիյայի և Ուզայբի միջև: Նրա վիճակը վատացավ, նրան տարան իր տոհմակիցների մոտ, ուր մեռավ: Սաադն ամուսնացավ նրա կնոջ հետ:

Ասել է վակիդին, թե Մուսաննան մեռավ Ռուստամի[204] գալուց առաջ: Եկավ Ռուստամը, որը ծագում է Ռեյից, սակայն ասվում է նաև թե Համադանի ժողովրդից է, ապրել է Բուրսում, ապա եկել ու հաստատվել է Հիրայի ու Սայլահինի միջև չորս ամիս: Այստեղ նա ոչ մի ռազմական գործողություն չձեռնարկեց մահմեդականների դեմ, իսկ սրանք ճամբար էին դրել Ուզայբի ու Կադիսիյայի միջև: Ռուստամը առաջ մղեց Ջու-լ-Հաջիբին, որը բանակ էր դրել Թիղնաբադում: Կռապաշտները մոտավորապես հարյուր քսան հազար էին, ունեին երեսուն փիղ և իրենց մեծ դրոշը, որը կոչվում է Քավեհի դրոշ (Դիրաֆշիքաբիան): Մահմեդականների զորքը ինը կամ տաս հազարի միջև էր և երբ անասնակերի և ուտելիքի կարիք էին զգում, ձիավորներ էին ուղարկում երկրի ներսը ու Եփրատի ստորին մասերն ասպատակում էին: Օմարը Մադինայից նրանց ուղարկում էր ոչխարներ, ուտեր մորթելու համար: [.....]

Կադիսիյայի ճակատամարտի օրը Օմարը գրեց Աբու Մուսային (Բասրայի կառավարիչ) հրամայելով օգնություն ուղարկել Սաադին և նա ուղարկեց Մուղիրային ութ հարյուր, ասում են նաև չորս հարյուր, ռազմիկներով:[.....]

Օմարը գրեց Սաադին, հրամայելով, որ պարսիկների մեծավորի մոտ պատվիրակություն ուղարկվի իսլամ առաջարկելու նպատակով [.....]

Ապա մահմեդականները ուղարկել էին մի խումբ ռազմիկների անասնակեր ճարելու համար, որը [պատահաբար] հանդիպեց պարսից հեծյալներին և սա ճակատամարտի պատճառը դարձավ: Պարսիկները կանչեցին իրենց հեծելազորին, իսկ մահմեդականներն՝ անասնակերի համար գնացողներին (հեռացածներին) և մի կատաղի մարտ սկսվեց նրանց միջև: Սա կատարվեց կեսօրից հետո:

Ամր իրն Մաադիքարիբ ալ-Զուբայդին գրոհեց և մի պարսիկ մեծավորի վզից բռնելով գրեց իր առջև թամբի վրա և ասաց՝ ես Աբու Սաուրն եմ, ինձ նման արեք: Ապա փղերից մեկին տապալեց և ասաց՝

ձեր սրերով դրանց կնճիթներին խփեցեք, նրա ամենախոցելի տեղը կնճիթն է:

[Աբու Միհջանը] նստելով Սաադի ձին, զրոհեց պարսիկների դեմ ճեղքելով նրանց չարքերը և իր սուրը խրելով սպիտակ փղի կնճիթի մեջ և նրան տապալեց:

Այդ օրը (ճակատամարտին) Թուլայհա իբն Խուայլադ ալ-Ասադին աչքի ընկավ և մի հարվածով կտրեց Գալենոսի (Ջալինուս) սաղավարտից ներքև, սակայն չկարողացավ գլուխը կտրել: Կայս իբն Մաքշուհը գոռաց մարդկանց՝ սպանվելն ազնվականների ճակատագիրն է, մի թողեք որ այս անթլփատները մեռնելու առավել նախանձախնդիր լինեն, քան մենք: Այս ասելով նա հարձակվեց ու կատաղի կռվեց: Ալլահի օգնությամբ Ռուստամն սպանվեց, իսկ մարմինը գտնվեց բազում հարվածներով ու խոցերով ծածկված, այնպես, որ Հայտնի չէր, թե ով է սպանել:[.....]

Կադիսիայի ճակատամարտը տեղի ունեցավ հինգշաբթի, ուրբաթ օրերը և շաբաթի գիշերը ու հետագայում կոչվեց «լայլատ ալ-հարիր» (հառաչանքի գիշեր):[.....]

Ըստ Վակիդիի մի խումբ պարսիկներ իրենց դրոշը ամուր խրելով գետին ասացին՝ մենք մեր դիրքերը չենք թողնի մինչև մեռնենք: Սալման իբն Ռաբիա ալ-Բահիլին հարձակվեց ու սպանեց նրանց, խլելով դրոշը:

ՏԻԶԲՈՆԻ (ՄԱԴԱՒՆ) ՆՎԱՃՈՒՄԸ

էջ 262 - 263

Կադիսիայից հետո մահմեդականները գնացին ու անցնելով Քաաբ վանքը հանդիպեցին Նախիր Խանին, որը Հայտնվեց Տիգրոնի ժողովրդից մեծ խմբի (ռազմիկների) հետ: Նրանք բախվեցին և Ջուհայր իբն Սուլայմ ալ-Ազդին Նախիր Խանին վզից բռնեց ու գետին տապալեց: Նա Նախիր Խանի մեջքից մի դաշույն վերցրեց, պատռեց որովայնը և սպանեց:

Սաադն ու մահմեդականներն առաջ խաղացին և հասան Սաբաթ, ապա հավաքվեցին Բահուրասիրի[205] մոտ, որը Շիկկ ալ-Քութփայի կողմն է (Տիգրիսի արևմտյան ափին): Այստեղ մնացին ինն ամիս, ասվում է նաև տասնութ ամիս, այնպես որ Թարմ արմավը երկու անգամ կերան: Քաղաքի բնակիչները կռվում էին, սակայն երբ նրանք Թուլացան [արաբները] մտան քաղաք: Երբ մահմեդականները քաղաքը նվաճեցին, Պարսից Թագավոր Հազկերտը[206], Շահրիարի որդին փախուստի դիմեց: Նա Տիգրոնի Աբյադ բերդի պարապից գամբյուղով կախվեց և արամնացիք այդ պատճառով նրան Բար

Ջաբիլա (գամբյուղի որդի) կոչեցին: Նա գնաց Հուլուան[207] իր հետ տանելով Հայտնի մեծամեծներին (հեծյալներին), ինչպես նաև պետական գանձարանը (բայտ ալ-մալ), Թեթև իրերը, անձնական գանձարանը, կանանց ու երեխաներին: Այն տարին, երբ նա փախավ, ամբողջ Պարսկաստանի համար դարձավ սովի ու ժանտախտի տարի: Ապա մահմեդականներն անցնելով մի ծանծաղուտ, գրավեցին [Տիգրոնի] արևելյան քաղաքը: [.....]

Կադիսիայում պարտվելուց հետո պարսիկների մնացորդները եկել էին Տիգրոն (Մադաին), որի ջրերն այնքան էին հորդել, որ երբեք չէր եղել: Պարսիկները նավերն ու լաստերը քշեցին դեպի արևելյան ափերը և վառեցին կամուրջը, իսկ Սաադը և մահմեդականները տխրեցին, քանզի անցնելու միջոց չունեին: Մահմեդականներն ուղարկեցին մի մարդու, որը ձիուն հեծած լողաց անցավ, նույն ձևով լողացին նաև մյուս մահմեդականները: Ապա նավերի տերերին ստիպեցին բեռներն անցկացնել: Ասացին պարսիկները՝ աստված վկա, մենք պարզապես դևերի (ջինն) հետ ենք կռվում և փախուստի դիմեցին: [.....]

Ինձ պատմել է Արդալլահ իբն Սալիհը, լսելով վստահելի մարդկանցից, Թե Մուջալիդ իբն Սաիդը, որը լսել է Շաաբիից, ասել է՝ Տիգրոնի գրավման օրը մահմեդականները խլեցին Խոսրովի հարճերից չատերին, որոնք երկրի տարբեր ծագերից էին բերվել և նրա համար չռայլորեն զարդարված էին. իմ մայրը դրանցից մեկն էր: Պատմել է, որ այդ օրը մահմեդականները քաֆուրը (կամֆորա) առնում գցում էին կերակուրի կաթսայի մեջ, կարծելով որ աղ է:

Ասել է Վակիդին, որ Սաադը Տիգրոնի ու Ջալուլայի[208] [նվաճումը] վերջացրել է 16 (2 փետրվար 637 – 22 հունվար 638) թվականին:

ՋԱԼՈՒԼԱՑԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԸ[209]

էջ 264

Տիգրոնում (Մադաին) մի քանի օր մնալուց հետո մահմեդականները լսեցին, Թե Հազկերտը մեծ զորք է հավաքել և ուղարկել է իրենց դեմ, իսկ նրանց հավաքավայրը Ջալուլան էր: Սաադ իբն Աբու Վակկասը նրանց դեմ ուղարկեց Հիշամ իբն Ութբա իբն Աբու Վակկասին տասներկու հազար զորքով: Մահմեդականները տեսան, որ պարսիկները խրամատներ էին փորել ու ամրացրել իրենց ընտանիքներին և ծանր բեռները Թողել էին Խանիկինում[210], որոշած լինելով երբեք չնահանջել: Նրանց օգնական զորքեր էին գալիս Հուլուանից և Ջիբալից[211]: Մահմեդականներն ասացին՝ պետք է ամապարել ու հարձակվել նախքան օգնական զորքերի չատանալը: Նրանք հարձակվեցին,

ընդ որում Հուջր իրն Ադի ալ-Քինդին աջ թևին էր հրամայում, Ամր իրն Մաադիքարիբը հրամայում էր Հեծելազորքին, իսկ Թուլայհա իրն Խուվայլիդը՝ հետևակին: Այս անգամ պարսիկների հրամանատարն էր Ռուստամի եղբայրը՝ Խուռազադը:

Սա ամենակատաղի կռիվն էր, որ տեղի էր ունեցել [այդ օրերին], աղեղներից նետեր էին արձակում, նիզակներով խոցում էին մինչև ջարդվելը, սրերով հարվածում էին մինչև ճկվելը: Ապա մահմեդականներն այնպիսի մեծ հարձակում գործեցին, որ պարսիկներին քշեցին իրենց դիրքերից ու փախուստի մատնեցին: Պարսիկները փախչում էին, իսկ մահմեդականները հետապնդում էին սաստիկ կոտորելով, մինչև որ գիշերը վրա հասավ և նրանք վերադարձան իրենց ճամբարը: Հաշիմ իրն Ութբան Ջալուլայում թողնելով Ջարիր իրն Աբդալլահին, մեծ հեծելազորքով առաջացավ, որպեսզի լինի Թչնամու և մահմեդականների միջև: Սակայն Հազկերտը թողեց Հուլուանը և հեռացավ: [.....]

Այսպիսով, Տիգրիսի Սավադում (Սավադ Դիջլա) չմնաց մի վայր, որ նվաճված չլիներ մահմեդականների կողմից:

էջ 265

Ջալուլայի ճակատամարտը տեղի ունեցավ տասնվեց (2 փետրվար 637 – 22 Հունվար 638) թվականին:

Իսլամն ընդունեցին Ջամիլ իրն Բուսբուհրան՝ Ֆալալիջի ու Նահրայնի դևհկանը, Բիսթամ իրն Նարսին (Ներսեհ) Բաբելոնի ու Խաթարնիյայի դևհկանը, Ռուֆայլը՝ ալ-Ալի դևհկանը, Ֆայրուզը Նահր ալ-Մալիքի (Թագավորի գետ) ու Քուսիի դևհկանը և այլ դևհկաններ: Օմար իրն ալ-Խաթթաբը ոչ մի բանի ձեռք չտվեց, այլ թողեց հողերը նրանց ձեռքում և ջիզիան նույնպես վերացրեց:

էջ 268

Պատմել է Ամր ալ-Նակիդը, լսելով ուրիշներից, թե Օմարը Սավադի ամեն մի ջարիբի[212] համար, լինի մշակված, թե անմշակ, ուր ջուր է հասնում, [սահմանեց որ] պետք է վճարել մեկ դիրհեմ և մեկ կաֆիզ[213] [ցորեն], ամեն մի ջարիբ արմավի համար՝ հինգ դիրհեմ ու հինգ կաֆիզ, ծառերի ամեն մի ջարիբի համար՝ տասը դիրհեմ ու տաս կաֆիզ, ընդ որում արմավենիները չեն հիշվում: Իսկ ամեն մի մարդուց քառասունութ, քսանչորս և կամ տասներկու դիրհեմ՝ [որպես ջիզիա]:

ԴԻՎԱՆԻ [ԼԵԶՈՒԻ] ՊԱՐՍԿԵՐԵՆԻՑ [ԱՐԱԲԵՐԵՆԻ] ՓՈԽՎԵԼԸ

էջ 298

Ինձ պատմել է ալ-Մադաինի Ալի իրն Մուհամմադ իրն Աբու Սայֆը, լսելով ծերունիներից (չեյխեր), թե Սավադի և ամբողջ Իրաքի խարաջի դիվանը (հարկամատյանը) գրվում էր պարսկերեն:

Երբ Հաջջաջը[214] դարձավ Իրաքի կառավարիչ՝ Զադան Ֆարուխ իրն Յաբրային դարձրեց քարտուղար, որին օգնում էր Սալիհ իրն Աբդ ալ-Ռահմանը՝ Տամիմ ցեղի մաուլան: Սա նրա մոտ գրում էր արաբերեն ու պարսկերեն, իսկ Սալիհի հայրը Սիջիստանից[215] գերևարվածներից էր: Սալիհը, Զադան Ֆարուխի միջոցով, ծանոթացել էր Հաջջաջին, որը նրան հավանել էր: Մի օր Սալիհը ասաց Զադանին՝ քո միջոցով ես ծանոթացա կառավարչին և զգում եմ, որ նա ինձ հավանեց: Ուստի ես չեմ զարմանա, եթե նա ինձ քեզանից նախընտրի և այդ պարագային դու կընկնես: Երբեք չհավատաս, Ասաց Զադանը, նա ինձ ավելի կարիք ունի քան ես նրան, քանզի բացի ինձանից ոչ ոք նրա հաշիվները չի կարող պահել: Ասաց Սալիհը՝ Ալլահը վկա, եթե կամենաս, որ հաշիվը արաբերենի վերածեմ՝ կանեմ: Ասաց նրանից մի մաս վերածիր, որ տեսնեմ և նա վերածեց: Ասաց Զադանը՝ հիվանդ ձևացիր և նա արեց, իսկ Հաջջաջն իր անձնական բժշկին ուղարկեց նրա մոտ և սա ոչ մի ախտ չգտավ նրա մոտ: Զադան Ֆարուխն այս բանը լսելով հրամայեց նրան իր մոտ գալ:

Հետագայում այս Զադան Ֆարուխը Աբդ ալ-Ռահման իրն Մուհամմադ իրն ալ-Աշաաս ալ-Քինդիի օրոք սպանվեց, երբ մեկի տնից դուրս գալով, գնում էր իր տունը, կամ ուրիշի տունը:

Հաջջաջը Սալիհին նշանակեց Զադանի փոխարեն քարտուղար և Սալիհը Հաջջաջին հայտնեց իր ու Զադան Ֆարուխի միջև դիվանի լեզուն փոխելու վերաբերյալ անցած դարձածի մասին:

Հաջջաջը որոշեց, որ դիվանի լեզուն պետք է լինի արաբերենը և այս գործը հանձնարարեց Սալիհին: Ասաց նրան Զադան Ֆարուխի որդի Մարդանշահը՝ ինչպե՞ս կգրես դևհվիյա (տասանորդ) և չևվիյա (վեցերորդ): Ասաց՝ կգրեմ ուչր[216] (տասանորդ) և նիսֆ ուչր[217] (կես տասանորդ): Ասաց՝ իսկ ի՞նչ կանես վիդի հետ: Ասաց՝ կգրեմ նույնպես, վիդը նայիֆն է (մի քիչ ավելի), իսկ ավելին ավելացվում է: Ասաց՝ Ալլահը քո արմատը կտրի աշխարհից ինչպես դու կտրեցիր պարսկերենի արմատը: Նա առաջարկեց նրան հարյուր հազար դիրհեմ, որ ձևացնի թե անկարելի է դիվանի լեզուն փոխելը և հրաժարվի, սակայն նա մերժեց ու փոխեց: Ասել է Մարուան իրն Մուհամմադի քարտուղար Աբդ ալ-Համիդ իրն Յահիան, թե՝ մեծ է

Սալիհը և մեծ է նրա կատարած գործը քարտուղարների համար:

Ինձ պատմել է Օմար իբն Շիբան, լսելով Աբու Ասիմ ալ-Նաբիլից, որ լսել է Սահլ իբն Աբու Սալթից, թե Հաջջաջը Սալիհ իբն Աբդ ալ-Ռահմանին որոշ ժամանակ է տվել, մինչև որ դիվանի լեզուն փոխեր:

ՆԵՀԱՎԵՆԴԻ[218] (ՆԻՀԱՎԱՆԴ) ՆՎԱՃՈՒՄԸ

էջ 300 - 303

Երբ Հազկերտը տասնինը (2 հունվար 640 – 20 դեկտեմբեր 640) թվականին Հուլուանից փախավ, պարսիկները (ընդհանրապես) և Ռեյի[219], Կումիսի[220], Սպահանի (Իսֆահանի), Համադանի և Մահինի ժողովուրդը իրար հետ նամակագրություն ունեցան ու քսան (21 դեկտեմբեր 640 – 9 դեկտեմբեր 641) թվականին միացան Հազկերտին: Նրանց հրամայում էր Մարդանշահ Զու-լ-Հաջիբը և դուրս բերեցին իրենց Քավևհի դրոշը (Դիրաֆշիքաբիան): Այդ ժամանակ կռապաշտների թիվը վաթսուն հազար էր, ասվում է նաև հարյուր հազար: Ամմար իբն Յասիրը գրել էր Օմար իբն ալ-Խաթթաբին հայտնելով այդ մասին: Նա (Օմարը) ուզեց նրանց դեմ անձամբ արշավել, սակայն վախեցավ, որ արաբ [բեդևինները] կտիրեն Նաջդին և այլ վայրերին: Նրան խորհուրդ տվեցին, որ արշավանքի ուղարկի Ասորիքի զորքերը հենց Ասորիքից և Եմենի զորքերը հենց Եմենից, սակայն վախեցավ, որ նման դեպքում հոռոմները կվերագրավեն այդ երկրները, իսկ Եթովպիան մնացած մասերը կկվաճի: Նա գրեց Քուֆայի զորքին, որ նրանց երկու երրորդը չարժվի, իսկ մեկ երրորդը մնա քաղաքն ու երկիրը պաշտպանելու համար: Բասրայի ժողովրդից նույնպես զորք ուղարկեց:

Օմարն ասաց՝ ես զորքի հրամանատար եմ նշանակելու այնպիսի մարդու, որն առաջինը նետվի նիզակի դեմ: Ուստի նա գրեց Նուման իբն Ամր իբն Մուկրան ալ-Մուզանիին, հայտնելով որ զորքի հրամանատար է նշանակում: [.....]

Մի օր Օմարը մտավ [Մադինայի] մզկիթը և տեսնելով Նուման իբն Մուկրանին, նստեց կողքին. աղոթքը վերջանալուց հետո ասաց՝ ես քեզ կառավարիչ եմ նշանակելու: Ասաց Նումանը՝ եթե հարկերը հավաքելու համար է՝ ոչ, իսկ եթե որպես զորի[221] ես արշավանքի ուղարկելու, համաձայն եմ: Ասաց՝ որպես զորի, և ուղարկեց նրան: Նա գրեց Քուֆայի բնակիչներին որ օգնական զորք ուղարկեն և նրանց տվեցին ու նրանց մեջ էր ալ-Մուղիրա իբն Շուբան:

Նուման Մուղիրային ուղարկեց պարսիկների դեկավար Զու-լ-Հաջիբի (Զու-լ-Հաջիբ Մարդանշահ) մոտ Նեհավենդ: Մուղիրան հասնելով սկսեց իր սրով կտրտել գորգը, մինչև որ ներկայացավ

Նրան և նստեց նրա գահին, սակայն վերջինիս հրամանով իջեցվեց գահից, ապա բողոքեց՝ ես դեսպան եմ: Մահմեդականները բախվեցին կռապաշտների հետ, որոնք տաս-տաս և հինգ-հինգ իրար շղթայված էին, որպեսզի չփախչեին: Նրանք նետեր արձակելով վիրավորեցին մի խումբ մահմեդականների և դա ճակատամարտից առաջ էր:

Նումանը չարժեց դրոշակը և չարժվեցին ըստ նրա պատվերի: Նրա գրահն իր համար ծանր էր, սակայն կռվեց և բոլորը կռվեցին: Նա առաջինն էր, որ մնռավ: Պարսիկը (Զու-լ-Հաջիբը) ընկավ իր ջորուց և նրա որովայնը պատռվեց:

Պատմողն ասել է՝ մոտեցա Նումանին, որը դեռ չունչը չէր փչել, գնմքը լվացի իմ մոտ եղած ամանի ջրով և ահա նա հարցրեց՝ ինչ վիճակում են մահմեդականները, ասացի՝ ուրախացիր, Ալլահը մեզ տվել է նվաճում ու հաղթանակ:

Ասել է Սայիբը՝ ես հավաքեցի ավարը ու բաժանեցի, սակայն եկավ լրտեսը և հայտնեց, թե Նախիր Խանի գանձը դղյակում է: Ես այնտեղ մագլցեցի ու գտա երկու սնդուկ գոհարեղեններով լի, որի նմանը չէի տեսել: Եկա ու հանդիպեցի Օմարին [Մադինայում], որը փողոցներում հարց ու փորձ էր անում, քանզի տեղյակ չէր: Ինձ տեսնելով գոչեց՝ ինչ նորություն: Պատմեցի ճակատամարտի, Նուման սպանության և երկու սնդուկների մասին: Ասաց՝ գնա վաճառիր ու գինը բաժանիր [ռազմիկ] մահմեդականների միջև:

Նեհավենդում կռվեցին չորեքշաբթի օրը, հինգշաբթի, ապա թուլացան ու կռվեցին նաև ուրբաթ օրը: [.....]

Երբ պարսիկների զորքը փախուստի դիմեց ու հաղթեցին մահմեդականները, Հուզայֆան այդ ժամանակ հրամանատար էր: Սա պաշարեց Նեհավենդը, որի բնակիչները դուրս էին գալիս ու կռվում, սակայն մահմեդականները նրանց հաղթեցին: Ապա Սիմաք իբն Ուբայդ ալ-Աբսին մի օր նրանցից մեկին հետապնդեց, որի հետ կային ութ հիավորներ: Նրանցից ով հայտնվեց, սպանվեց և մնացել էր միայն մեկ հոգի, որը հանձնվեց՝ իր զենքը նետելով ու գերի ընկավ: Նա խոսում էր պարսկերեն և Սիմաքը կանչեց մեկին, որը հասկանում էր նրա լեզուն ու թարգմանեց: Պարզվեց որ նա ասում էր՝ ուզում եմ գնալ ձեր ամիրի մոտ, որ հաշտություն կնքեմ այս հողերի համար ու ջիզիա վճարեմ և ինձ գերելու համար (ազատվելու համար) վճարեմ ինչ կամենաք, քանի որ խնայեցիք ու չսպանեցիք ինձ: Ասաց՝ ինչ է անունդ: Ասաց՝ Դինար: Նա չտապեց նրա հետ Հուզայֆայի մոտ և սա հաշտություն կնքեց խարաջ ու ջիզիա վճարելու պայմանով և նրաշխավորեց քաղաքի բնակչության ունեցվածքը, պարիսպները, տները: Նեհավենդը կոչվեց Մահ Դինար: Դրանից հետո Դինարը գաղթ էր Սինաքի մոտ և նրան ընծաներ տալիս ու իր հավատարմությունը հայտնում:

ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ ՆՎԱՃՈՒՄԸ

էջ 321 - 326

Ինձ պատմել է ալ-Հուսայն իբն Ամր ալ-Արդաբիլին լսելով Վակիդ ալ-Արդաբիլիից, իսկ սա ծերունիներից (չեյխերից), թե ալ-Մուղիրա իբն Շուբան եկավ Քուֆա կառավարիչ նշանակված լինելով Օմար իբն ալ-Խաթթաբի կողմից և իր հետ էր բերել մի նամակ Հուզայֆա իբն ալ-Յամանին, որով նա նշանակվում էր Ատրպատականի կառավարիչ: Այդ նամակը նա ուղարկեց նրան Նեհավենդ կամ մոտիկ մի վայր: Հուզայֆան [ստանալով] գնաց Արդաբիլ, որը Ատրպատականի [գլխավոր] քաղաքն էր, նրանում էր նստում մարզպանը և նրա մոտ էր հավաքվում խարաջի հասույթը: Մարզպանն իր մոտ ռազմիկներ էր հավաքել Բագարվանի, Մայմադի, Նարիրի, Սարատի[222], Շիզի[223], Միանիջի և այլ վայրերի բնակիչներից, որոնք մի քանի օր մահմեդականների դեմ խիստ պայքար մղեցին, ապա մարզպանը Հուզայֆայի հետ հաշտություն կնքեց Ատրպատականի ամբողջ ժողովրդի կողմից, պարտավորվելով ութ հազար դիրհեմ՝ ութ քաչով վճարել, այն պայմանով, որ ոչ ոք չսպանվի, կամ չգերեվարվի, ոչ մի կրակատուն չքանդվի, չնեղեն Բաղասականի (Բալասաջան)[224], Սաբալանի և Սատրուդանի քրդերին, հատկապես Շիզի ժողովրդին չարգելել պարել իրենց տոնակատարությունների ժամանակ ու ցուցադրել այն, ինչ ցուցադրում էին նախկինում:

Ապա նա (Հուզայֆան) արշավեց Մուղան (Մուկան)[225], Գեղան (Ջիլան), հաղթեց նրանց ու հարկադրության պայմանով հաշտություն կնքեց:

Հետագայում Օմարը հեռացրեց Հուզայֆային և Ատրպատականի կառավարիչ նշանակեց Ուտբա իբն Ֆարկադ ալ-Սուլամիին: Սա եկավ Մոսուլից, ուրիշներ ասում են, թե եկավ Շահրզուրից, այն հովտով, որն այժմ կոչվում է Մուավիա ալ-Աուդի: Երբ մտավ Արդաբիլ, տեսավ որ ժողովուրդը պահում է դաշինքը, սակայն այլ գավառներ ապստամբել էին և նա արշավեց, հաղթեց ու ավարի տվեց: Նրա հետ էր Ամր իբն Ուտբա ալ-Ջահիդը:

Վակիդին իր իսնադի[226] մեջ ասում է, որ Մուղիրա իբն Շուբան Քուֆայից Ատրպատական արշավեց քսաներկու (30 նոյեմբեր 642 – 18 նոյեմբեր 643) թվականին: Նա հասավ ու սրով նվաճեց, խարաջ նշանակելով: Պատմում է Իբն ալ-Քալբին, լսելով Աբու Միխնաֆից, թե Մուղիրան արշավեց Ատրպատական քսան (21 դեկտեմբեր 640 – 9 դեկտեմբեր 641) թվականին և նվաճեց, ապա բնակիչներն ապստամբեցին ու նրանց վրա հարձակվեց ալ-Աչաաս իբն Կայս ալ-

Քինդին: Նա գրավեց Բագարվան բերդը և հաշտություն կնքեց Մուղիրայի կնքած պայմաններով: Աչաասի կնքած պայմանագիրը մինչև օրս էլ մնում է:

Աբու Միխնաֆ Լութ իբն Յահիան պատմում էր, որ Օմարը կառավարիչ էր նշանակել Սաադին, ապա Ամմարին և հետո՝ Մուղիրային, ապա նորեն՝ Սաադին: Իր մահվան տարում նա գրեց նրան ու նահանգների կառավարիչներին, գալ իր մոտ Մադինա: Այս առթիվ Սաադը ներկա եղավ խորհրդակցությանը (շուրա) և հաջորդ խալիֆայից խնդրեց, որ նորից իրեն նշանակի այս նահանգում: Ուրիշներ ասում են, թե Օմարը մնաված, երբ Մուղիրան կառավարիչ էր Քուֆայում և կտակեց, որ Սաադը լինի Քուֆայի կառավարիչ, իսկ Մուղիրան՝ Բասրայի: Օսմանը նրանց նշանակեց այդ պաշտոններին, սակայն հետո հեռացրեց:

Ինձ պատմել է Մադաինին, լսելով Ալի իբն Մուջահիդից, սա էլ՝ Մուհամմադ իբն Իսհակից, իսկ նա էլ՝ ալ-Զուհրիից, թե երբ Ալլահը բազմաստվածյան [պարսիկներին] փախուստի մատնեց Նեհավենդում, մարդիկ վերադարձան իրենց երկրները, իսկ Քուֆայի զորքը մնաց Հուզայֆայի մոտ և նա արշավեց Ատրպատական ու հաշտություն կնքեց՝ հարյուր հազար [վճարելու պայմանով]:

Ինձ պատմել է ալ-Մադաինին, լսելով Ալի իբն Մուջահիդից, սա էլ չիլ Ասիմից, իսկ սա Աբու Օսման ալ-Նահդիից, թե Օմարը Ատրպատականից հեռացրեց Հուզայֆային և կառավարիչ նշանակեց Ուտբա իբն Ֆարկադ ալ-Սուլամիին: Սա մի օր [Օմարին] ուղարկեց քաղցրավենիք (խարիս) բամբակե բարակ կտորեղենի (քարաբիս) մեջ փաթաթված: Երբ նա ստացավ, ասաց՝ սա արծաթ դրամ է, ասացին՝ ոչ: Ասաց՝ իսկ ինչ բան է, ասացին՝ սա ընծա է, որ քեզ ուղարկել է Ուտբան: Երբ տեսավ, ասաց՝ վերադարձրեք նրան և անմիջապես գրեց՝ ով Ումմ Ուտբայի որդի, այն քաղցրավենիքը, որ դու ուտում ես, ոչ քո, ոչ էլ քո հոր վաստակն է: Ինքը Ուտբան պատմել է, որ երբ Ատրպատականից եկավ Օմարի մոտ, ապա նրա ձեռքում կար մի չոր մսի կտոր:

Ինձ պատմել է Մադաինին, լսելով Աբդալլահ իբն Կասիմից, սա էլ Ֆարուա իբն Լակիթից, թե երբ Օսման իբն Աֆֆանը զարձավ խալիֆա, Ատրպատականից հեռացնելով Ուտբային, կառավարիչ նշանակեց Վալիդ իբն Ուկբա իբն Աբու Մուայթին: Բնակիչներն ապստամբեցին և Վալիդը արշավեց նրանց դեմ քսանհինգ թվականին (28 հոկտեմբեր 645 – 16 հոկտեմբեր 646) իր առաջապահ զորքի հրամանատար ունենալով Աբդալլահ Շիբլ ալ-Ահմասին: Սա արշավեց Մուղանի[227], Բարարի ու Թայլասանի վրա, կողոպտեց ու գերեվարեց: Ատրպատականի ժողովուրդը հաշտություն խնդրեց և նա պայմանագիր տվեց Հուզայֆայի հաշտության պայմաններով:

Պատմել է Իբն ալ-Քալբին, թե Ալի իբն Աբու Թալիբը Ատրպատականի կառավարիչ էր նշանակել Սահդ իբն Սարիա Խուզաիին, ապա Աչասս իբն Լայս ալ-Քինդիին:

Պատմել է Արդալլահ իբն Մուադ ալ-Աբկարին, լսելով հորից, իսկ սա իր հերթին՝ Սաադ իբն ալ-Հաքամ իբն Ութբայից, սա էլ՝ Զայդ իբն Վահբից, թե երբ Ալլահը փախուստի մատնեց բազմաստվածյան [պարսիկներին] Նեհավենդում, Հիջազի զորքը վերադարձավ իր Հիջազը, Բասրայի զորքը՝ իր Բասրան, իսկ Հուզայֆան մնաց Նեհավենդում Քուֆայի զորքի հետ միասին և արշավեց Ատրպատական ու նրանք հաշտություն կնքեցին ութ հազար դիրհեմ վճարելու պայմանով: Օմար իբն ալ-Խաթթաբը գրեց, թե դուք ապրում եք մի երկրում, ուր բնակիչներն իրենց ուտելիքի ու հագուստի հարցերում գործ են ունենում մեռելոտու հետ, ուստի կերեք միայն օրինավոր ձևով մորթվածը և հագնվեցեք միայն մաքուր դգեստներ, այսինքն մուշտակե դգեստներ:

Ըստ Աբբաս իբն ալ-Վալիդ ալ-Նարսիի, որը լսել է Աբդ ալ-Վահիդ իբն Զիյադից, իսկ սա՝ չիլ Ասիմից և դա՝ Աբու Օսման ալ-Նահդիից, թե Ութբա իբն Ֆարկադի մոտ էի, երբ նվաճեց Ատրպատականը: Սա երկու դամբյուղ պատրաստել տվեց քաղցրավենիքով լի և ծածկելով կաշիով ու թաղիքով իր մաուլա Սուհայմի հետ ուղարկեց Օմարին: Երբ Սուհայմը հասավ Օմարի մոտ, սա ասաց նրան՝ ինչ ես բերել, ոսկի՞, թե արծա՞թ: Հրամայեց բաց անել և քաղցրավենիքի համը տեսնելով ասաց՝ սա լավ բան է, արդյոք բոլոր «գաղթողները» (մուհաջիրուն) սրանից կուշտ կերել են: Ասաց՝ ոչ, սա հատուկ քեզ համար է. նա գրեց նրան՝ «Հավատացելոց իշխան Արդալլահ (Աստուծո ծառա) Օմարից Ութբա իբն Ֆարկադին, այս քաղցրավենիքը ոչ քո, ոչ քո մոր, ոչ էլ քո հոր ջանքերով է պատրաստված: Մենք ուտում ենք միայն այն, որից մահմեդականները լիուլի ունեն իրենց տներում»:

Ինձ պատմել է Հուսայն իբն Ամրը և Ահմադ իբն Մուսլիհ ալ-Ազդին, լսելով Ատրպատականի ծերունիներից, թե Վալիդ իբն Ուկբան եկավ Ատրպատական իր հետ բերելով ալ-Աչասս իբն Կայսին: Երբ Վալիդը հեռացավ, նրան դարձրեց Ատրպատականի կառավարիչ, սակայն երկիրն ապստամբեց և նա գրեց [Վալիդին] օգնական ուժեր խնդրելով և սա Քուֆայի մարդկանցից մեծ զորք ուղարկեց: Աչասն առաջ խաղաց անցնելով մեկ պարտեզից (հան) մյուսը (Ատրպատականի ժողովրդի լեզվով հան նշանակում է պարտեզ) և գրավեց երկիրը հաշտություն կնքելով Հուզայֆայի և Ութբա իբն Ֆարկադի պայմաններով: Նա երկիրը բնակեցրեց արաբներով, որոնք ստանում էին պետական նպաստ և դիվանի օժանդակություն, հրամայելով նրանց խլամը տարածել (քարոզել) մարդկանց մեջ:

Ապա կառավարիչ դարձավ Սահդ իբն ալ-Ասին, որն արշավեց

Ատրպատականի ժողովրդի դեմ և հաղթեց Մուղանի ու Գեղանի (Ջիլան) ժողովրդին: Ուրմի ու Բալուանքահի կողմերում նրա դեմ բազմություն հավաքվեց հայերից ու Ատրպատականի բնակիչներից և նա ուղարկելով Ջարիր իբն Արդալլահ ալ-Բաջալիին, նրանց փախուստի մատնեց, բռնեց նրանց պետին ու խաչեց Բագարվանի ամրոցի վրա: Շամմախ իբն Դարար ալ-Սաալաբին այս արշավանքի ժամանակ Սահդ իբն ալ-Ասի հետ էր: Նրանց հետ էր նաև Բուքայր իբն Շադդադ իբն Ամիրը՝ Աթլալի հերոսը (հեծյալը), որի մասին Շամմախն ասել է.

Ես երգ եմ լսել Մուղանի ձիավորների մասին
Որոնք հնազանդվեցին Շադդախ ցեղից Բուքայրին՝ Աթլալի հեծյալին

Ինքը պատկանում էր Քինանա ցեղին և նա է, որ Օմարի խալիֆայության ժամանակ լսել էր մի հրեայի, որը երգում էր.

Ախ իսլամի պատճառով ինձ ուշադրություն չդարձրեց
Որ ամբողջ գիշերը նրա կնոջ հետ անցկացրի:
Ուստի նա սպանեց նրան:

Ապա Ալի իբն Աբու Թալիբը Աչասին նշանակեց Ատրպատականի կառավարիչ: Երբ սա եկավ, տեսավ որ բնակչության մեծ մասը մահմեդականացել է և կարդում է Ղուրան: Նա Արդաբիլում տեղավորեց արաբների, որոնք պետական նպաստ և Դիվանի օժանդակություն էին ստանում [Արդաբիլը], կենտրոնական քաղաքի վերածեց և կառուցեց նրա մզկիթը, որը սակայն հետագայում ընդարձակվեց:

Պատմել է Հուսայն իբն Ամրը, լսելով Վակիդիից, թե երբ արաբները տեղավորվեցին Ատրպատականում, ապա երկու մեծ քաղաքներից (միսրայն՝ Քուֆա և Բասրա) և Ասորիքից նրանց ցեղերն այնտեղ դիմեցին և ամեն մեկը խլեց ինչ որ կարող էր: Նրանցից ոմանք պարսիկներից հողեր գնեցին և նրանց հանձնարարեցին դրանց պահպանությունը: Այսպիսով բնակիչները զարձան նրանց հաշվին աշխատող մշակներ (մուզարի):

Պատմել է Հուսայնը, որ Վարդանակերտը[228] նույնպիսի կամարակապ կամուրջ էր (կանթարա), ինչպիսիք են Վահշի ու Արչակի կամուրջները, որոնք Հայտնի դարձան Բաբեկի ապստամբության[229] ժամանակ: Դրանք կառուցեց Մարուան իբն Մուհամմադ իբն Մարուան իբն ալ-Հաքամը, հողերը ծածկեցրեց ու ամրացրեց և այն զարձավ նրա անձնական կալվածքը (դայաա, դաստակերտ): Ավելի ուշ այն բռնագրավվեց Օմայանների բոլոր մյուս կալվածքների հետ միասին և տրվեց հավատացելոց իշխան Մանսուրի որդու՝ Ջաաֆարի դստերը՝ Ումմ Ջաաֆար Զուբայդային: Սակայն վերջինիս վերակացուները (վաքիլ) քանդեցին պարիսպը, ապա չուտով վերակառուցվեց ու նորոգվեց: Իսկ ալ-Վարաանին նրա մաուլաներից էր:

Բարզանդը[230] մի գյուղ է, ուր բանակ դրեց Հավատացելոց իշխան Մուտասիմ Բիլլահի նշանակած Ատրպատականի, Հայաստանի ու Ջաբալի կառավարիչ Հայդար իրն Քաուսը, այն օրերին, երբ կռվում էր Բաբակ ալ-Խուռամի անհավատի դեմ և ամրացրեց այն:

Մարաղան[231] կոչվում էր Ակրահուդ: Մուղանի ու Գեղանի արշավանքից վերադարձին՝ Հայաստանի ու Ատրպատականի կառավարիչ Մարուան իրն Մուհամմադը նրա մերձակայքում բանակ էր դրել, իսկ այնտեղ չատ գոմաղբ կար և նրա ու հետևորդների ձիերը սկսեցին դրա մեջ թավալվել (տամառաղա): Եվ ահա սկսեցին ասել՝ գնացեք Մարաղա (թավալման) գյուղը, ապա մարդիկ ջնջեցին գյուղ բառը և ասացին միայն Մարաղա: Նրա բնակիչներն այն դրեցին Մարուանի պաշտպանության տակ և նա կառուցապատեց, նրա վերակացուները չատ բարյացակամ էին ժողովրդին, ուստի չատեր նկան ու չենացրին: Հետագայում Օմայանների մյուս կալվածքների հետ սա էլ բռնագրավվեց ու տրվեց Հավատացելոց իշխան Ռաշիդի դստրերից մեկին:

Երբ սկսեց Վաջնա ալ-Ազդիի և Ազդի մաուլա Սադակա իրն Ալիի ապստամբությունը, որն ապականեց երկիրը, ապա Ռաշիդի խալիֆայության օրոք Հայաստանի ու Ատրպատականի կառավարիչ նշանակվեց Խուզայմա իրն Խազիմ իրն Խուզայման, որը կառուցեց նրա պարիսպը, ամրացրեց, մեծ քաղաք դարձրեց ու բազում գորք բերեց տեղավորեց: Սակայն երբ հայտնվեց Բաբաք ալ-Խուռամին, մարդիկ այնտեղ ապաստանեցին ու պաշտպանվեցին: Մամունի օրոք նրա պարիսպը նորոգեցին մի քանի կառավարիչներ, որոնցից էին Ահմադ իրն ալ-Ջունայդ իրն Ֆարզանդին և Ալի իրն Հիշամը: Ապա մարդիկ հաստատվեցին նրա արվարձանում և ամրոցում:

Ինչ վերաբերում է Մարանդին[232], ապա դա մի փոքրիկ գյուղ էր, ուր հաստատվեց Հալբաս Աբու ալ-Բախը, ապա որդին՝ Մուհամմադ իրն ալ-Բախը, որն այնտեղ բերդ կառուցեց: Նա հավատացելոց իշխան Մուտավաքքիլ Ալալլահի խալիֆայության օրոք ապստամբեց և հավատացելոց իշխանի մաուլա Բուղա Կրտսերը[233] նրա դեմ կռվեց, հաղթեց ու տարավ Սամառա: Ապա քանդեց Մարանդի պարիսպը և այն բերդը:

Ուրմիան[234] մի հին քաղաք է, զրադաչտականները (մաջուս) գտնում են, թե իրենց ուսուցիչը՝ Զրադաչտը (Զարադուշտ) այստեղից է ծագում: Սադակա իրն Ալի իրն Սադակա իրն Դինարը՝ Ազդ ցեղի մաուլան, կռվել է նրա բնակիչների դեմ և մտել ու նվաճել: Նա և իր եղբայրները բերդեր են կառուցել:

Իսկ Դավրեժը (Տաբրիզ)[235], ապա այնտեղ հաստատվել է Ռավվադ ալ-Ազդին, ապա Վաջնա իրն Ռավվադը և նա ու իր եղբայրներն այնտեղ չենքեր են կառուցել, պարսպով ամրացրել և մարդիկ եկել հաստատվել են:

Միանիջն ու Խալբասան համադանցիների բնակավայրեր էին: Աբդալլահ իրն Ջաֆար ալ-Համադանին Միանիջում իր թաղամասն է կառուցել, իսկ սուլթանը (խալիֆան) այնտեղ մինբար[236] է հաստատել:

Բարզա գավառը պատկանում է Առդ ցեղին, իսկ գլխավոր քաղաքը նրանցից մեկին է պատկանում, որը մարդկանց այնտեղ հրավիրեց և բերդ կառուցեց: Երկու հարյուր երեսունինը (12 Հունիս 853 – 1 Հունիս 854) թվականին այս Առդիի կամքին հակառակ այստեղ մինբար դրվեց:

Նարիղը[237] մի փոքրիկ գյուղ էր, ուներ մի հին քանդված բերդ, ուր հաստատվեց Մուռ իրն Ամր ալ-Մաուսիլի ալ-Թաին, վերակառուցեց այն և իր որդուն այնտեղ հաստատեց: Ապա նրանք բերդեր կառուցեցին ու քաղաքի վերածեցին, չինեցին Սուկ Ջաբարուանը ու մեծացրին: Սուլթանն (խալիֆան) այն դրեց նրանց տնօրինության տակ, այնպես որ նրանք ժառանգաբար կառավարում էին, Ատրպատականի կառավարիչներից անկախ:

Ինչ վերաբերում է Սարատին, ապա այնտեղ Քինդա ցեղից մարդիկ հաստատվեցին, որոնցից մեկն ինձ տեղեկացրեց, որ ինքը ալ-Աչաաս իրն Կայս ալ-Քինդիի հետ եղածներից մեկի որդիներից է:

ՄՈՍՈՒԼԻ (ՄԱՈՒՍԻԼ) ՆՎԱՃՈՒՄԸ

էջ 327 – 328

Օմար իրն ալ-Խաթթաբ [խալիֆան] Ուտբա իրն Ֆարկադ ալ-Սուլամիին Մոսուլի կառավարիչ նշանակեց քսան (21 դեկտեմբեր 640 – 9 դեկտեմբեր 640) թվականին: Նինվեի (Նինաուա) ժողովուրդը կռվեց, իսկ նա բռնի ուժով գրավեց նրանց բերդը, որն արևելյանն է և անցավ Տիգրիսը: Մյուս բերդի ժողովուրդը պայմանագիր կնքեց, ըստ որի պետք է ջիզիա վճարեին, բայց ցանկացողը կարող էր հեռանալ, ինչպես ոմանք հեռացել էին: Մոսուլում կային վանքեր, որոնց բնակիչները (վանականները) ջիզիա վճարելու պայմանով պայմանագիր ստացան: Ապա [Ուտբան] գրավեց Մարջը[238], իր գյուղերով, Հուդրայի հողը, Բաադրան, Հիբտունը, Հիյանան, Մաալլան, Դասիրը և քրդերի բոլոր բերդերը: Եկավ Բանաասա, որը Հազզայից է և նվաճեց, ապա Մոսուլի հնծյալ կայազորի պետ Սալիհ իրն Իթաթա ալ-Համադանին հարձակվեց Տելլ ալ-Շահարջայի և Սալակի (սա մի ցեղ է, որը հայտնի է Հաուին անվամբ) վրա և այս ամենը գրավեց ու կողոպտեց:

Մուաֆա իրն Թաուսը լսելով Մոսուլի ծերունիներից պատմել է, թե Ուրմիան Մոսուլի հետ է նվաճվել, այն գրավել է Ուտբա իրն

Ֆարկադը ու որոշ ժամանակ խարաջը Մոսուլին էր վճարում: Նույն ձևով նվաճվել են նաև Հուբը[239], Խոյը[240], Սալմաստը (Սալմաս)[241]: Ասել է Մուաֆան, թե լսել եմ, որ Ուտբան այն գրավել է Ատրպատականի կառավարիչ եղած ժամանակ, սակայն Ալլահն ավելի լավ գիտի:

Ինձ պատմել է Աբբաս իբն Հիշամ ալ-Քալբին, լսելով իր հորից, իսկ նա՝ պապից, թե առաջինը, որ Մոսուլի հատակագիծը հղացավ, բնակեցրեց արաբներով ու գլխավոր քաղաք դարձրեց՝ Հարսամա իբն Արփաջա ալ-Բարիկին էր:

Պատմել է Աբու Մուսա ալ-Հարավին, լսելով Աբու-լ-Ֆադլ ալ-Անսարիից, իսկ սա՝ Աբու-լ-Մուհարիբ ալ-Դաբբիից, թե Օմար իբն ալ-Խաթթաբը Ուտբային հանեց Մոսուլից և նշանակեց Հարսամա իբն Արփաջա ալ-Բարիկիին: Նրանում կային բերդը, քրիստոնյաների եկեղեցիները, փոքրաթիվ տները եկեղեցիների մոտ և հրեաների թաղամասը: Նա գլխավոր-քաղաք դարձրեց այն, արաբներին բնակեցրեց նրանց [հատկացված] բնակարաններում, հատակագիծ պատրաստեց և ապա մայր մզկիթ կառուցեց:

Ըստ Մուաֆա իբն Թաուսի, Մոսուլի քարե սալահատակը սարքել է Մուհամմադ իբն Մարուան իբն ալ-Հաքամի պահակազորի պետ Իբն Յալիղը, իսկ Մուհամմադը Մոսուլի, Ջազիրայի, Հայաստանի ու Ատրպատականի կառավարիչն էր: Ասել է Վակիդին, թե Աբդ ալ-Մալիք իբն Մարուանը իր որդուն՝ Սաիդ իբն Աբդ ալ-Մալիք իբն Մարուանին, որի անունով կոչվում էր Նահր (գետ) Սաիդը, նշանակեց Մոսուլի կառավարիչ, իսկ իր եղբորը՝ Մուհամմադին՝ Ջազիրայի ու Հայաստանի կառավարիչ: Սաիդը կառուցեց Մոսուլի պարիսպը և դա էր, որ Ռաչիդը քանդեց այնտեղից անցնելու ժամանակ, երբ բնակիչներն ապստամբել էին: Սաիդը քարե սալահատակ սարքեց:

Բաղաղիչի բնակիչներից ոմանք պատմել են, թե մահմեդականները առիթ էին փնտրում հանկարծակիի բերելու Դամիրից այն կողմ Ջարան կոչված տեղի բնակիչներին: Ուստի եկան նրանց տոնի օրը, երբ նրանք առանց զենքի էին և դիրք բռնելով նրանց ու բերդի միջև, հնարամտությամբ գրավեցին բերդը: Երբ Հարսաման սահմաններով բաժանում կատարեց Մոսուլում ու բնակեցրեց արաբներին, եկավ Հադիսա[242], որն այդ ժամանակ մի հին գյուղ էր և որտեղ երկու եկեղեցի ու քրիստոնյաների տներ կային, քաղաքի վերածեց և արաբների բնակեցրեց: Սա կոչվեց Հադիսա, որովհետև Մոսուլից հետո է կառուցվել: Այդ կողմերում մի բերդ կառուցեց: Ասվում է, որ Հարսաման նախ Հադիսայում հաստատվեց, քաղաքի վերածեց և սահմաններով բաժանում կատարեց և ապա Մոսուլ տեղափոխվեց, երբ նրանց կառավարիչը՝ Իբն ալ-Նուփայլը, Հաջջաջ իբն Յուսուֆի օրոք անիրավություն էր գործել: Դրանց մեջ կային Անբարի Հադիսայից մարդիկ, որոնք մզկիթ կառուցեցին և քաղաքը կոչեցին Հադիսա:

Ուտբա իբն Ֆարկադը նվաճեց Թիրհանը, Տաքրիտը և Տաքրիտի բերդի բնակիչներին երաշխավորագիր տվեց իրենց անձերի և ունեցվածքի համար, ապա մտավ Բաջարմա[243] գավառը և գնաց Շահրզուր:

Տաքրիտի բնակիչներից մի ծերունի (չեյխ) ինձ պատմել է, թե նրանք երաշխավորագիր ունեին, որը խախտեց ալ-Ջուրաչին, երբ ավերեց Մոսուլի գյուղերը՝ Նարսաբադը, Հաալան և նրանց չրջակայքը: Հայսամ իբն Ադին գտնում է, որ երբ Իյադ իբն Ղանմը գրավեց Բալադը, եկավ Մոսուլ ու գրավեց երկու բերդերից մեկը, սակայն Ալլահն ավելի լավ գիտի:

ԽԱՐԱՋԱՑԻՆ ՀՈՂԵՐԻ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

էջ 433 – 435

Ասել է Բիչը իբն Ղիյասը, վերցնելով Աբու Յուսուֆից, թե հողը երբ բռնի ուժով է նվաճված՝ ինչպես Սավադը, Ասորիքը և այլն, ապա եթե իմամը (խալիֆա) այն նվաճողների միջև բաժանի, տասանորդային երկիր կդառնա և նրա բնակիչները կլինեն ստրուկներ (ռակիկ), իսկ եթե իմամը չբաժանի և հանձնի ընդհանրապես մահմեդական [համայնքին], ինչպես արել է Օմարը Սավադում, ապա նրա բնակիչների վզին է գլխահարկը (ջիզիա), իսկ հողից վերցվում է [հողահարկը] և բնակիչները ստրուկներ չեն: Սա Աբու Հանիֆայի[244] կարծիքն է:

Նույնը պատմել է Վակիդին վերցնելով Սուֆիան ալ-Սաուրիից: Վակիդին ասել է, թե Մալիք իբն Անասն ու Իբն Աբու Զիբն ասել են՝ եթե բռնի ուժով նվաճված երկրի անհավատը մահմեդականանա, ապա հողը կմնա նրա ձեռքում, կմշակի ու կվճարի հողահարկը և այս պարագային տարբերություն չկա [նրա և մահմեդականի միջև]:

Ասել են Մալիքը, Իբն Աբու Զիբը, Սուֆիան ալ-Սաուրին և Իբն Աբու Լայլան, որ բռնի ուժով նվաճված երկրում եթե մարդը մահմեդականանա, պետք է հողից հողահարկ վճարի և բերքից՝ զաքատ: Սա Աուզաիի կարծիքն է: Սակայն Աբու Հանիֆան և նրա [դպրոցի] հետևորդները ասել են, թե միևնույն մարդը չպետք է հողահարկ ու զաքատ վճարի միաժամանակ:

Ասել են Մալիքը, Իբն Աբու Զիբը, Սուֆիանն ու Աբու Հանիֆան՝ եթե մարդն իր խարաջային հողը տարեկան մի քանի անգամ մշակի, ապա նրանից միայն մեկ հողահարկ պետք է գանձվի: Սակայն Իբն Լայլան ասել է, թե հողահարկը պետք է գանձվի ամեն մի բերքի ժամց: Սա նաև Իբն Աբու Սաբրայի ու Աբու Շիմրի կարծիքն է: Ասել են Աբու-լ-Զինադը, Մալիքը, Աբու Հանիֆան, Սուֆիանը, Յակուբը, Իբն Աբու Լայլան, Իբն Աբու Սաբրան, Զաֆրը, Մուհամմադ իբն ալ-

Հասանը և Բիչր իրն Ղիյասը՝ եթե մեկն իր հողը չմշակի, նրան կասվի՝ մշակիր ու հողահարկ վճարիր, ապա թե ոչ, ուրիշին հանձնիր, որ մշակի:

Իսկ տասանորդային հողը, ապա նրանից այս բանը չի կարելի պահանջել: Եթե ցանեց, նրանից կվերցնես սաղական, իսկ եթե չցանեց, դա նրա գործն է: Ասել են նաև՝ եթե մեկը իր հողը երկու տարի անմշակ թողնի՝ հետո չենացնի (մշակի), ապա պարտավոր է վճարել միայն մեկ տարվա հողահարկ: Իսկ Իբն Շիհրն ասում է՝ երկու տարվա համար հողահարկ պետք է վճարի:

Ասել են Աբու Հանիֆան, Սուֆիանը, Մալիքը, Իբն Աբու Զիբը և Աբու Ամր ալ-Աուզաին՝ եթե բերքին հիվանդություն պատահի (մի-ջատը փչացնի) կամ հեղեղը փչացնի, հողահարկ չի պահանջվի, իսկ եթե այդպիսի խարաջային հողը պատկանում է ստրուկի (արդ), դպրոցի, կամ կնոջ, ապա Աբու Հանիֆան գտնում է, որ միայն խարաջ պետք է վճարվի, իսկ Սուֆիանը, Իբն Աբու Զիբը ու Մալիքն ասել են, թե պետք է վճարեն հողահարկ և բերքի մնացորդից՝ տասանորդ:

Աբու Հանիֆան և Սաուրին ասել են՝ եթե խարաջային հողի վրա մահմեդականը, կամ դիմմին խանութներ (հավանիա) կառուցեն, կամ այլ բաներ, ապա ոչինչ պետք չէ գանձել, իսկ եթե պարտեզ (բուս-տան) դարձվի, ապա հողահարկը պարտադիր է: Մալիքն ու Աբու Զիբն ասել են, թե գտնում են, որ [առաջին դեպքում] ևս պետք է հողահարկ վճարի, քանզի չենքից օգտվելը նույնն է, ինչ որ մշակելուց օգտվելը: Ինչ վերաբերում է տասանորդային հողին, ապա Ալլահը գիտի, թե ինչ է դրանից վերցվում:

Ասել է Աբու Յուսուֆը՝ եթե մահմեդականը բռնի նվաճված երկրում մնած (խոպան) հողը մշակելի դարձնի, ապա դա նրանն է և խարաջային հող կհամարվի, եթե խարաջային [հողերի] ջրից օգտվի, սակայն եթե աղբյուր գտնի (ջրհոր փորի), կամ անձրևի ջրով ոռոգի, ապա տասանորդային հող կհամարվի: Ասել է Բիչրը՝ բոլոր դեպքե-րում դա տասանորդային հող է, թեկուզ խարաջային [հողի] ջրից օգտվի կամ այլ ջրից:

Ասել են Աբու Հանիֆան, Սաուրին ու նրանց դպրոցի հետևորդնե-րը, ինչպես նաև Մալիքը, Իբն Աբու Զիբը և Լայս իբն Սաադը, թե ոչ մի հողահարկ չի պահանջվի այնպիսի խարաջային համարված հողից, որը ոչ ոքի չի պատկանել և այնտեղ հաստատվել են մահմեդական-ներ ու դարձրել վաճառքի վայր ու չուկա:

Ասել է Աբու Յուսուֆը՝ եթե երկրի [որևէ մասում] կա հին օտար տոմար, որը մահմեդականության օրոք չի փոխվել և չի արգելվել, ապա եթե ժողովուրդը բողոքի իմամին (խալիֆային), թե իրեն վնաս է հասնում դրանից (փոխելուց), նա իրավունք չունի փոխելու: Սակայն Մալիքը, Շաֆիին ասել են՝ կարող է փոխել թեկուզ և

հնացած լինի, քանզի նա իրավասու է փոխելու որևէ սովորություն (սուննա, օրենք), որ դրել են մահմեդականները, նույն ձևով էլ կարող է փոխել անհավատների սահմանած սովորությունը:

ԿՆԻՔԻ ՄԱՍԻՆ

ԷՋ 447 - 451

Պատմել է Աֆֆան իրն Մուսլիմը, վերցնելով Շուբայից, իսկ նա՝ Կատադայից և սա՝ Անաս իրն Մալիքից, թե երբ Առաքյալը կամեցավ գրել հռոմեների թագավորին, ասացին նրան, որ [հռոմեները] չեն կարդում նամակը, եթե կնքված չէ: Ասաց՝ վերցրեց մի արծաթե մատանի, և կարծես տեսնում եմ նրա սպիտակությունը նրա ձեռքում, և վրան փորագրեց «Մուհամմադ՝ Ալլահի առաքյալ»:

Պատմել է Աբու-լ-Ռաբի Սուլայման իրն Դաուդ ալ-Ջուհրանին, վերցնելով Համմադ իրն Զայդից, իսկ սա՝ Այյուբից և Նաֆիից, իսկ վերջինս՝ Իբն Օմարից, թե Առաքյալը իր համար պատրաստել էր տվել մի արծաթե մատանի և նրա կնիքը պահել իր ձեռքի մեջ:

Ինձ պատմել է Մուհամմադ իրն Հայյան ալ-Հայյանին, վերցնելով Ջուհայրից, իսկ սա՝ Հումայդից և նա՝ Անաս իրն Մալիքից, թե Առաք-յալի մատանին ամբողջովին արծաթ էր, իսկ կնիքը՝ նույնպես ար-ծաթե: Պատմել է Եզիդ իրն Հարունը, վերցնելով Հումայդից, իսկ սա՝ Հասանից, թե Առաքյալի մատանին արծաթից էր, իսկ կնիքը՝ եթով-պական ակնաքար էր:

Պատմել է Հուդբա իրն Խալիդը, վերցնելով Համմամ իրն Յահիա-յից, իսկ սա՝ Աբդ ալ-Ազիզ իրն Սուհայբից, և նա՝ Անաս իրն Մալիքից, թե Մարգարեն ասել է՝ պատրաստել եմ մի մատանի և թող ոչ ոք չփորձվի ընդօրինակել փորագրվածը: Պատմել է նաև Բաքր իրն ալ-Հայսամը, վերցնելով Արդ ալ-Ռազզակից, իսկ սա՝ Մամարից և նա՝ ալ-Ջուհրիից, իսկ վերջինս՝ Կատադայից, թե՝ Առաքյալը պատրաս-տել էր տվել մի արծաթե մատանի և վրան փորագրել տվել «Մու-համմադ Ալլահի առաքյալ»: Դրանով կնքում էին Աբու Բաքրը, ապա Օմարը և Օսմանը: Երբ վերջինիս ձեռքում էր, ընկավ ջրհորի մեջ: Ջրհորը դատարկվեց, բայց հնարավոր չեղավ գտնել [մատանին]: Դա տեղի ունեցավ նրա խալիֆայության չորրորդ կեսերին: Նա պատրաս-տել տվեց մի ուրիշ մատանի ու փորագրել տվեց «Մուհամմադ՝ Ալլա-հի առաքյալ» երեք տողի վրա: Կատադան ավելացնում է՝ և մի ծակ:

Պատմել է Հանաղը, վերցնելով Աստւադ իրն Շայբանից, իսկ սա՝ Խալիդ իրն Սումայրից, թե մի մարդ Մասան իրն Զահդա անունով կեղծել է խալիֆայության կնիքը և Քուֆայի հարկերից մեծ գումարներ է յուրացրել Օմար [խալիֆայի] օրոք: Օմարը իմանալով

գրել է Մուղիրա իբն Շուբային, թե լսել եմ, որ Մաան իբն Զաիդա կոչված մի մարդ կեղծել է խալիֆայության կնիքը և Քուֆայի հարկերից մեծ գումարներ է յուրացրել. երբ նամակս ստանաս, ապա ինչ հրամայված է և հնազանդվիր իմ դեսպանին (սուրհանդակ): Երբ Մուղիրան երեկոյան աղոթքը կատարեց և մարդիկ հավաքվել էին, դուրս եկավ Օմարի դեսպանի հետ: Մարդիկ ուշադիր նայում էին նրան, իսկ նա ձերբակալեց Մաանին: Ապա նա ասաց դեսպանին՝ հավատացելոց իշխանը հրամայել է ինձ գործել ըստ քո վճռի, ուստի հրամայիր ինչ կամենում ես: Ասաց դեսպանը՝ տուր ինձ մի չղթա, որ նրա վզից կախեմ: Բերել տվեց մի չղթա և նրա վզից կախեց և ուժեղ սեղմեց: Ապա ասաց Մուղիրային՝ բանտարկիր նրան (Մաանին), մինչև որ հավատացելոց իշխանից հրաման ստանաս նրա մասին: Այդպես էլ արվեց: [.....]

Պատմել են Մուֆադդալ ալ-Յաչքարին ու Աբու-լ-Հասան ալ-Մադաինին, վերցնելով Ջաբանից, իսկ սա՝ Իբն ալ-Մուկաֆֆայից, թե Պարսից թագավորները, երբ որևէ հրաման էին տալիս, ստորագրող քարտուղարը (սահիբ ալ-տաուկի) նրա (թագավորի) ներկայությունը իր ստորագրությամբ հաստատում էր: Քարտուղարն ունենում էր մի ծառա, որը հաշվեմատյանում ամեն ամսվա համար ընդօրինակում էր [հրամանները]: Թագավորն իր կնիքով կնքում էր և դա պահվում էր:

Ապա ստորագրված հրամանի [բնագիրը] ուղարկվում էր գանձապետին (սահիբ ալ-դիմամ, քննիչ), որի պարտականությունն էր կնքել [փաստաթղթերը]. հետո ուղարկվում էր գործերի վերակացուին (սահիբ ալ-ամալ): Վերջինս մակագրում էր, թե «թագավորի կողմից է»: Սա ընդօրինակվում էր բնագրին հարազատ և ուղարկվում գանձապետին, որը ցույց էր տալիս թագավորին, իսկ նա համեմատում էր հաշվեմատյանում նախապես ընդօրինակված բովանդակության հետ: Վերջապես գանձապետը կնքում էր [հրամանը] թագավորի, կամ նրա վստահելի մտերիմներից մեկի ներկայությամբ:

Ինձ պատմել է Մադաինին, վերցնելով Մասլամա իբն Մուհարիբից, թե Զիյադ իբն Աբու Սուֆիանն առաջինն էր արաբների մեջ, որը պահում էր կանոնավոր հաշվեմատյան (դիվան դիմամ) և կնիք (խատիմ), ըստ պարսիկների սովորության:

Պատմել է Մուֆադդալ իբն ալ-Յաչքարին, վերցնելով Իբն Ջաբանից, իսկ սա Իբն ալ-Մուկաֆֆայից, թե պարսից թագավորներից մեկը ուներ գաղտնի կնիք, առաքումների (նամակների) կնիք և մի կնիք՝ կալվածների համար, որով կնքում էր հաշիվների արձանագրությունները (սիջիլլատ), հողային պարգևումների (իկթա) հրովարտակները և նման պաշտոնական փաստաթղթեր: Երբեմն թագավորի որևէ մտերիմի թույլատրվում էր ունենալ գաղտնի կնիք և առաքումների կնիք:

Ինձ պատմել է Աբու-լ-Հասան ալ-Մադաինին, վերցնելով Ջաբանից, իսկ սա Իբն ալ-Մուկաֆֆայից, թե դրամական հարկերի հաշվետվությունները սովորաբար կարդացվում էին թագավորներին և դրանք այն ժամանակ գրվում էին մագաղաթե սպիտակ թերթերի վրա: Հարկային դիվանի պետը (սահիբ ալ-խարաջ) ամեն տարի, երբ գալիս էր թագավորի մոտ, կից թղթեր էր կպցնում, որոնց վրա արձանագրում էր հարկերի գումարը, որ հավաքել էր և տարբեր նպատակների համար ծախսված գումարները, և թե ինչպիսին էր հաշվեկշիռը պետական գանձարանում (բայտ ալ-մալ): Թագավորը կնքում և հաստատում էր: Երբ Որմզդի որդի Խոսրովն իշխանության գլուխ անցավ, դժգոհեց այդ մագաղաթե թերթերի (սուհուֆ) հոտի համար և հրամայեց, որ հարկային դիվանի պետը իր զեկուցագրերը բերի ներկայացնի այնպիսի մագաղաթի վրա գրված, որը ներծծված լինի քրքումով (զաֆարան) և վարդաջրով և ընդհանրապես հարկերի մասին իր մոտ բերված թերթերը միշտ անուշահոտությամբ լինեն: Այս բանն արվեց:

Երբ [մահմեդական շրջանում] Սալիհ իբն Աբդ ալ-Ռահմանը՝ Իրաքի գլխավոր հարկահանը (հարկերի պետը) դարձավ, Իբն ալ-Մուկաֆֆան, որը նրա տեղակալն էր Տիգրիսի շրջանում (թեև ուրիշներն ասում են թե դա Բիհկուբադն էր), որոշ գումար բերեց իր հաշվետվությունը գրելով քրքումով ներծծված կաշու վրա, Սալիհը ծիծաղեց ու ասաց՝ չեմ ուզում, որ այսուհետև որևէ մեկը նման հաշվետվություն բերի: Այս բանն ասաց, քանի որ գիտեր պարսիկների սովորությունները:

Աբու-լ-Հասանն ասել է՝ որոշ գիտուն ծերունի (շեյխ) քարտուղարներ ինձ պատմել են, թե Ասորիքի արձանագրություններն, ինչպես նաև Օմայան թագավորներին տրված հարկերի հաշվետվությունները և այլ բաներ, սկզբում գրվում էին թղթերի (կարաթիս) վրա: Սակայն հավատացելոց իշխան Մանսուրը երբ իշխանության գլուխ անցավ, հրամայեց իր վեզիր Աբու Այյուբ ալ-Մուրիանիին դրամական հարկերի հաշիվները գրել մագաղաթե թերթերի վրա և դրանց վրա անուշահոտություն ցանել: Նրա հրամանը ըստ այնմ կատարվեց:

ԴՐԱՄԻ ՄԱՍԻՆ

էջ 451 - 456

Ինձ պատմել է ալ-Հուսայն իբն ալ-Ասուադը, որը լսել է Յահիա իբն Ադամից, իսկ սա՝ ալ-Հասան իբն Սալիհից, թե պարսիկների [հողարկած դիրհեմները տարբեր մեծությամբ էին: Նրանք դրամը կտրում էին մսխալով (միսկալ)[245], որը քսան կարատ (կիրաթ)[246] քաշ

ունի, լինում էր նաև տասներկու կարատով, ինչպես նաև տասը կարատով և այս բոլորը մսխալի տեսակներ են:

Երբ Ալլահը բերեց մահմեդականությունը և զաքատ [հարկը] վճարելու համար կարիք զգացվեց միջին գտնելու, վերցրեցին քսան կարատը, տասներկուսը և տասը ու գտան, որ գումարը քառասուն կարատ է, իսկ մեկ երրորդ քաչը վերցնելով ստացան տասնչորս կարատ: Այսպիսով արաբական դիրհեմի քաչը դարձավ տասնչորս կարատ, որը ոսկի դինարի կարատներից է: Ամեն տաս դիրհեմի քաչը յոթ մսխալ է, այսինքն՝ հարյուր քառասուն կարատ:

Հասան իբն Սալիհից բացի մի ուրիշն ասել է, թե պարսիկների դիրհեմներից մի մասի տաս հատի քաչը տաս մսխալ էր, մյուսի տաս հատի քաչը վեց մսխալ էր, իսկ երրորդի տաս հատի քաչը՝ հինգ մսխալ: Այս բոլորը գումարվեց ու ստացվեց քսանմեկ մսխալ, որի մեկ երրորդը ստացվեց յոթ մսխալ: Այսպիսով [խալիֆայության օրոք] կտրեցին այնպիսի դիրհեմներ, որոնց տասի քաչը յոթ մսխալ է: Վերոհիշյալ երկու տեղեկություններն էլ նույն բանն են հաստատում:

Ինձ պատմել է Մուհամմադ իբն Սաադը, լսելով Մուհամմադ իբն Օմար ալ-Ասլամիից, որը լսել է Օսման իբն Արդալլահ իբն Մաուհաբից, իսկ սա իր հորից, իսկ վերջինս Արդալլահ իբն Սաալաբա իբն Սուայրից, թե նախամահմեդական շրջանում Հերակլի դինարները օգտագործվում էին Մեքքայում, ինչպես օգտագործվում էին պարսկական Բաղլիյա դիրհեմները: Դրանցով առևտուր էին անում միայն որպես ձույլ ոսկի (քաչով, ոչ հաշվով): Մսխալը նրանց մոտ որոշակի քաչ ուներ, այսինքն քսաներկու կարատ էր, հանած ինչ որ կոտորակ: Տաս դիրհեմի քաչը յոթ մսխալ էր, մեկ լիտրը (ռաթլ)[247] տասներկու ունցիա (ուկիյա)[248] էր, իսկ ունցիան՝ քառասուն դիրհեմ: Մարգարեն այս բոլորը հաստատեց, ինչպես նաև Աբու Բաքրը, Օմարը, Օսմանը և Ալին: Մուավիան նույնպես հաստատեց այն:

Սակայն Մուսաբ իբն ալ-Զուբայրը Արդալլահ իբն ալ-Զուբայրի օրոք կտրել տվեց ավելի փոքր դիրհեմներ, որոնք հետագայում ջարդվեցին: Երբ Արդ ալ-Մալիք իբն Մարուանը իշխեց, հարցրեց և իմացավ դիրհեմների ու դինարների դրությունը: Նա գրեց Հաջջաջ իբն Յուսուֆին[249], որ դիրհեմներ թողարկի տասնհինգ կարատով (կիրաթ), դինարի կարատներով: Նա ինքը թողարկել տվեց Դամասկյան (դիմաշկիյա) դինարներ: Ասել է Օսմանը, լսելով իր հորից թե՝ եկա Մադինա, ուր Մարգարեի մերձավորներից (սահաբա)[250] ու հետևորդներից կային, որոնք այս բանը չմերժեցին: Ասել է Մուհամմադ իբն Սաադը՝ մեր դիրհեմներից մեկի քաչը տասնչորս կարատ է, հաշվելով մեր մսխալի կարատներով, որը քսան կարատ է և սա հավասար է տասնհինգ կարատի, այն մսխալից, որը պարունակում է քսանմեկ և երեք յոթերորդ կարատ:

Մուհամմադ իբն Սաադը, լսելով Մուհամմադ իբն Օմարից, որը լսել էր Իսհակ իբն Հազիմից, իսկ սա Մութթալիբ իբն ալ-Սաիբից և վերջինս՝ Աբու Ուիդաա ալ-Սահմիից, որն ասել է, թե ինձ ցույց են տվել մսխալի քաչը և ես կշռել ու գտել եմ, որ Արդ ալ-Մալիք իբն Մարուանի մսխալի քաչն է: Ասել է, որ դա կատարվել է Աբու Վիդաա իբն Դուբայրա ալ-Սահմիի ներկայությամբ, նախամահմեդական շրջանում (ջահիլիյա)[251]:

Ասել է Մուհամմադ իբն Սաադը, թե պատմել է ալ-Վակիդին, լսելով Սաիդ իբն Մուսլիմ իբն Բաբաքից, իսկ սա՝ Արդ ալ-Ռահման իբն Սաբիթ ալ-Ջումահիից, թե Կուբայշ [ցեղը] նախամահմեդական շրջանում ուներ կշիռներ և երբ նկավ մահմեդականությունը, հաստատեց: Կուբայշը արծաթը կշռում էր մի քաչով, որը կոչվում էր դիրհեմ, իսկ ոսկին մի քաչով, որը կոչվում էր դինար: Դիրհեմների ամեն տասի կշիռը հավասար էր դինարների յոթի կշռին: Նրանք ունեին նաև գարու հատիկի քաչը, որը դիրհեմի մեկ վաթսուներորդն էր: Նրանց ունցիան (ուկիյա) քառասուն դիրհեմ էր կշռում, իսկ նաչչը՝ քսան դիրհեմ: Ունեին նաև արմավի կորիզը, որը հինգ դիրհեմ էր կշռում: Նրանք առևտուր էին անում այդ չափերով կշռված ձույլ ոսկով (տիբր): Երբ Մարգարեն Մեքքա եկավ, այս բոլորը հաստատեց:

Ինձ պատմել է Մուհամմադ իբն Սաադը, լսելով Վակիդիից, որը լսել էր Ռաբիայից, իսկ սա էլ Օսմանից և վերջինս Վահբ իբն Քայսանից, թե տեսել եմ պարզ դինարներն ու դիրհեմները նախքան Արդ ալ-Մալիքի փորագրելը և դրանք ունեին նույն քաչը, որ ունեն Արդ ալ-Մալիքի թողարկած դինարները:

Ինձ պատմել է Մուհամմադ իբն Սաադը, լսելով Վակիդիից, որը լսել էր Օսման իբն Արդալլահ իբն Մաուհաբից, իսկ վերջինս՝ իր հորից, թե հարցրել է Սաիդ իբն ալ-Մուսայիբին՝ ո՞վ է առաջինը թողարկել փորագրված դինարներ, պատասխանել է՝ Արդ ալ-Մալիք իբն Մարուանը: Իսկ նախամահմեդական շրջանում դինարները ռումի (բյուզանդական)[252] էին և դիրհեմները խոսրովական (պարսկական)[253]:

Պատմել է Մուհամմադ իբն Սաադը, լսելով Սուֆիան իբն Ույայնայից, որը լսել էր իր հորից, որ առաջին անգամ յոթ [դինար] տաս դիրհեմի դիմաց քաչով թողարկողը ալ-Հարիս իբն Աբդալլահ իբն Ռաբիա ալ-Մախզումին էր, Իբն ալ-Զուբայրի օրոք:

Նույնը պատմել է լսելով Մուհամմադ իբն Օմարից, որը լսել էր Իբն Զինաղից, իսկ վերջինս՝ իր հորից, թե Արդ ալ-Մալիքն առաջինն էր, որ թողարկեց ոսկեդրամներ խաղաղեցման (ջամաա) տարում, այսինքն յոթանասունչորս (693-694) թվականին: Պատմել է Աբու-լ-Հասան ալ-Մադաինին, թե Հաջջաջը դիրհեմներ թողարկեց յոթանասունհինգ (694-695) թվականի վերջերին, ապա հրամայեց այն թո-

դարկել բոլոր նահանգներում յոթանասունվեց (695-696) թվականին:

Ինձ պատմել է դրամահատության վերակացու (նակիդ) Դաուդը, թե լսել եմ մեր ծերունիներից (չեյխեր), որոնք պատմում էին, թե Հիրայի քրիստոնյա (իրադ) ցեղերը[254] հարյուր քաչի դիմաց վեց էին տալիս, այսինքն՝ վաթսուն մսխալ դիրհեմներով: Իսկ հարյուր քաչի դիմաց ութ էին տալիս, այսինքն՝ ութսուն մսխալ դիրհեմներով: Ինչպես նաև հարյուր քաչին՝ հինգ, այսինքն հիսուն մսխալ դիրհեմներով: Կար նաև հարյուր քաչին հարյուր մսխալ:

Դրամահատության վերակացու Դաուդը ասել է նաև, թե մի դիրհեմ եմ տեսել, որի վրա գրված էր «Այս դիրհեմը թողարկված է Քուֆայում յոթանասուններեք թվականին», սակայն դրամահատության վերակացուները միաձայն ասացին, որ կեղծված է: Տեսել եմ նաև մի հաղվագյուտ դիրհեմ, որի նմանը չի եղել և վրան գրված էր «Ուբայդալլահ իբն Զիյադ», սա ևս կեղծված (մերժված) էր:

Պատմել է Մուհամմադ իբն Սաադը, լսելով ալ-Վակիդիից, որը լսել էր Յահիա իբն Նուման ալ-Ղիֆարիից, իսկ վերջինս՝ իր հորից, թե Մուսաբը դիրհեմներ էր թողարկել Աբդալլահ իբն ալ-Զուբայրի հրամանով յոթանասուն (689 – 690) թվականին խոսրովների (պարսիկների) թողարկածի ձևով, որի վրա կային «օրհնություն» և «Ալլահ» բառերը, իսկ երբ իշխանության գլուխ անցավ՝ փոխեց: Նա պատմել է լսելով Հիշամ իբն ալ-Քալբիից, թե Մուսաբը դիրհեմների հետ մեկտեղ թողարկել է նաև դինարներ:

Պատմել է դրամահատության վերակացու (նակիդ) Դաուդը, լսելով դրամահատության վերակացու Աբու-լ-Զուբայրից, թե Աբդ ալ-Մալիքը որոշ դինարներ է թողարկել յոթանասունչորս թվականին, ապա յոթանասունհինգ թվականին, իսկ հաջջաջը թողարկել է բազլիյա դիրհեմներ, վրան գրելով «Հանուն Ալլահի, հաջջաջ», իսկ մեկ տարի անց գրել է տվել «Մեկ է Ալլահը, հավիտյան է Ալլահը»: Այս բանի համար իրավագետները (ֆակիհ) մերժեցին այն և թողարկումը կոչվեց մերժված (մաքրուհա), իսկ պարսիկները մերժեցին թեթև կշիռ ունենալու պատճառով և կոչվեց մերժված: Դրանք սումայրի կոչվեցին առաջին անգամ այն թողարկողի՝ Սումայրի անունով:

Ինձ պատմել է Աբբաս իբն Հիշամ ալ-Քալբին, լսելով իր հորից, որը լսել էր Ավանա իբն ալ-Հաքամից, որ հաջջաջը հարցրել է, թե պարսիկները ինչպես էին թողարկում դիրհեմները և իմանալով՝ ինքն էլ փողերանոց (դար դարբ) էր հիմնել և հավաքել դրամ կտրողների (թաբբա): Նա դրամ էր թողարկում տիրակալի (սուլթան) անունով, ձույլ ոսկի մետաղից, որը նրա համար հավաքվում էր և այն լավ մետաղից, որն ստացվում էր կեղծված և նմանեցված դրամներից: Նա վաճառականներին և այլոց թույլատրել էր իրենց համար թողարկել արծաթե դրամներ, իսկ մնացածը՝ որպես չահույթ պահում էր, վճա-

րելու համար արհեստավորներին ու դրամ կտրողներին, իսկ կեղծ դրամ կտրողների ձեռքը խարանում էր: Երբ եղիդ իբն Աբդ ալ-Մալիքի օրոք Իրաքի կառավարիչ դարձավ Օմար իբն Հուբայրան, արծաթը առավել մաքրության հասցրեց, քան իր նախորդների ժամանակ էր, դիրհեմների որակը բարձրացրեց և խիստ գտնվեց դրամափոխանակության հարցում: Իսկ երբ Խալիդ իբն Աբդալլահ ալ-Բաջալին, որը կոչվում էր Կասրի, Հիշամ իբն Աբդ ալ-Մալիքի օրոք կառավարիչ դարձավ, առավել խիստ գտնվեց արծաթե դրամի [մաքրության] հարցում, քան Իբն Հուբայրան էր, մինչև որ այդ գործը կարգավորեց ավելի լավ, քան իր նախորդները: Ապա կառավարիչ դարձավ Յուսուֆ իբն Օմարը, որը խիստ վերաբերվեց դրամ կտրողների ու լումայափոխների (սեղանավոր) նկատմամբ, ձեռքերը կտրելով ու մաչկը խարանելով:

Այսպիսով Հուբայրիյա, Խալիդիյա, Յուսուֆիյա կոչվածները Օմայանների թողարկած ամենաընտիր դրամներն էին: Հետագայում Մանսուր Խալիֆան Օմայանների թողարկած դրամներից միայն այդ դրամներով էր ընդունում հարկը: Իսկ առաջին թողարկված դրամները կոչվել էին մերժվածներ (մաքրուհա):

Ինձ պատմել է Մուհամմադ իբն Սաադը, լսելով Վակիդիից, իսկ սա՝ Իբն Աբու Զինադից, որը լսել էր իր հորից, թե Աբդ ալ-Մալիք իբն Մարուանն առաջինն էր, որ ոսկե ու արծաթե դրամներ թողարկեց խաղաղեցման տարում: Ասել է Իբն Զինադը, թե հարցրեցի հորս՝ լսե՞լ ես, որ մարդիկ ասում են, թե Իբն Մասուդը հրամայել է ջարդել կեղծ դրամները: Պատասխանեց՝ այդ կեղծ դրամները, որ ջարդել են, պարսիկների կողմից էին կտրված ու նմանեցված:

Պատմել է Աբդ ալ-Ալա իբն Համմադ ալ-Տարսին, լսելով Համմադ իբն Սալամայից, որը լսել էր Դաուդ իբն Աբու Հինդից, իսկ սա ալ-Շաաբիից, որն իր հերթին՝ Ալկամա իբն Կայսից, թե Իբն Մասուդը մնացորդ ուներ պետական գանձարանում, որը ծախսել էր պակաս գնով: Օմար իբն ալ-Խաթթաբը արգելել էր նրան այդ բանն անելուց և նա դրանից հետո պարտքով էր տալիս:

Ինձ պատմել է Մուհամմադ իբն Սաադը, լսելով Վակիդիից, իսկ սա՝ Կուդամա իբն Մուսայից, թե Օմարը և Օսմանը կեղծ դրամներ էին գտնում պետական գանձարանում, հալեցնում ու դարձնում էին ձույլ արծաթի:

Ինձ պատմել է Վալիդ իբն Սալիհը, վերցնելով Վակիդիից, իսկ սա՝ Իբն Աբու Զինադից և նա՝ իր հորից, թե Օմար իբն Աբդ ալ-Ազիզի մոտ բերվեց մի մարդ, որը դրամ էր կտրել ոչ տիրակալի (սուլթան) արձանագրությամբ: Նա տանջեց նրան, բանտարկեց ու վերցնելով նրան երկաթե (դրամի կաղապարը) կրակը նետեց:

Պատմել է Մուհամմադ իբն Սաադը, վերցնելով Վակիդիից և սա՝

Քասիր իբն Զայդից, իսկ նա՝ ալ-Մութթալիբ իբն Արդալլահ իբն Հանթաբից, թե Արդ ալ-Մալիք իբն Մարուանը ձերբակալել էր մի մարդու, որը դրամ էր կտրում առանց պետական (մահմեդական) արձանագրության և ուղեց ձեռքը կտրել, ապա հրաժարվեց և միայն պատժեց տանջելով: Ասել է Մութթալիբը, թե Մադինայի ծերունիները հավանություն էին տվել այս արարքին ու գովել: Ասել է Վակիդին, թե մեր տերերը գտնում են, որ պետք է խստորեն պատժել ու խայտառակել նրանց, ովքեր խալիֆայության կնիքի փորագրություն կեղծում են, թեև խորհուրդ չեն տալիս [մեղավորների] ձեռքը կտրել: Սա Աբու Հանիֆայի ու Սաուրիի կարծիքն է:

Ասել են Մալիքը և Իբն Աբու Զիբն ու նրանց հետևորդները, թե համաձայն չենք, որ [կեղծված] դիրհեմը եթե առողջ է, երկու կտոր արվի և արգելում ենք, քանի որ պարզապես սխալ է: Ալ-Սաուրին, Աբու Հանիֆան ու նրանց հետևորդները ասել են՝ կարելի է կտրել, եթե դա չի վնասում մահմեդականության ու նրա ժողովրդին:

Ինձ պատմել է դրամահատության վերակացու Ամրը, վերցնելով Իսմաիլ իբն Իբրահիմից և սա՝ Իբն Աունից, իսկ նա՝ Իբն Սիրինից, թե Մարուան իբն ալ-Հաքամը բռնել էր մի մարդու, որը դիրհեմներ էր կտրել և ձեռքը հատել էր տվել: Այս լուրը հասել էր Զայդ իբն Սաբիտին, որն ասել էր՝ արժանի պատիժն է տվել: Ասել է Իսմաիլը, թե այստեղ խոսքը պարսկական դիրհեմներին է վերաբերում:

Ասել է Մուհամմադ իբն Սաադը, վերցնելով Վակիդիից, որն ասել է, թե Մադինայի կառավարիչ Աբբան իբն Օսմանը պատժել է դիրհեմ ջարդող կտրողներին երեսուն հարվածով և ցուցադրելով [քաղաքում]: Այդ պատիժը տրվում էր նրանց, որ ջարդում են դիրհեմը, ապա հալեցնում պակաս արժեք ունեցող մետաղի մեջ:

Պատմել է ինձ Մուհամմադը, վերցնելով Վակիդիից և սա Սալիհ իբն Զաաֆարից, իսկ նա Իբն Քաաբից այն բանաստեղծական տողի մասին «միթե մեր սեփականի հետ չենք կարող վարվել այնպես, ինչպես կամենանք»: Ակնարկում է դրամները ջարդելուն:

Մեզ պատմել է Մուհամմադ իբն Խալիդ իբն Արդալլահը, վերցնելով Եզիդ իբն Հարունից, իսկ սա՝ Յահիա իբն Սաիդից, թե Իբն Մուսայաբին պատմել են մի մարդու մասին, որ դիրհեմներ է ջարդել, իսկ Սաիդն ասել է՝ դա երկրի վրա ապականություն է:

Պատմել է դրամահատության վերակացու Ամրը, վերցնելով Իսմաիլ իբն Իբրահիմից և սա՝ Յունիս իբն Ուբայդից, իսկ նա՝ ալ-Հասանից, թե այլահավատ (անհավատ) մարդիկ գիտեին այս դիրհեմի արժեքը մարդկանց մոտ և լավացրին որակն ու մաքուր հալեցին, սակայն երբ ձեզ մոտ տարածվեց [մահմեդականությունը]՝ կեղծեցիք ու փչացրիք:

Օմար իբն ալ-Խաթթաբն ասել է մի անգամ, թե կուզենայի դիրհեմներ պատրաստել ուղտի կաշվից, սակայն մեկն ասել է, թե այդ պարագային չեն լինի ուղտի ձագեր և նա հրաժարվեց այդ մտքից:

ԳՐԻ ՄԱՍԻՆ

էջ 456 – 460

Ինձ պատմել է Աբբաս իբն Հիշամ իբն Մուհամմադ ալ-Սաիբ ալ-Քալբին, լսելով իր հորից, իսկ սա՝ իր պապից և նա՝ ալ-Շարկի իբն ալ-Կաթամիից, թե Թայյ ցեղից երեք հոգի հավաքվել են Մեքքայում՝ Մարամիր իբն Մուսա Ասամ իբն Սիդրա և Ամիր իբն Ջաղարա և արաբական գիրն ստեղծեցին ու արաբերենի այբուբենը (հիջա) չափեցին ասորերենի այբուբենի հետ:

Նրանցից սովորեցին Անբարի բնակիչներից ոմանք, իսկ վերջիններից սովորեցին Հիրայի բնակիչները: Բիշրը իբն Աբդ ալ-Մալիքը գալիս էր Հիրա ու մնում որոշ ժամանակ, իսկ ինքը քրիստոնյա էր: Բիշրը սովորեց արաբական գիրը Հիրայի բնակիչներից, ապա որոշ գործերով եկավ Մեքքա և տեսան Սուֆիան իբն Ումայա իբն Աբդ Շամսը և Աբու Կայս իբն Աբդ Մանաֆ իբն Զուհրա իբն Քիլաբը, որ նա գրում է ու խնդրեցին, որ իրենց սովորեցնի գիրը և նա սովորեցրեց այբուբենը, ապա ցույց տվեց գրելու ձևը ու նրանք գրեցին: Ապա Բիշրը, Սուֆիանը և Աբու Կայսը գնացին Թաիֆ առևտրական գործերով ու նրանց հետ մտերմացավ Ղայլան իբն Սալամա ալ-Սակաֆին, որը նրանցից սովորեց գիրը: Բիշրը նրանցից բաժանվելով եկավ Դիբար Մուդար և նրանից գիրը սովորեց Ամր իբն Զուրարա իբն Ուդասը, որը կոչվեց Ամր ալ-Քաթիբ (քարտուղար): Ապա Բիշրը եկավ Ասորիք և մարդիկ նրանից գիրը սովորեցին:

Ինձ պատմել են Վալիդ իբն Սալիհը և Մուհամմադ իբն Սաադը, վերցնելով Մուհամմադ իբն Օմար ալ-Վակիդիից, իսկ սա՝ Խալիդ իբն Իլիասից և վերջինս՝ Աբու Բաքր իբն Արդալլահ իբն Աբու Զահմ ալ-Ադավիից, թե նրբ մահմեդականությունը տարածվեց, Կուբայչ ցեղի մեջ տասնյոթ հոգի արդեն գրել գիտեին՝ Օմար իբն ալ-Խաթթաբը, Ալի իբն Աբու Թալիբը, Օսման իբն Աֆֆանը, Աբու Ուբայդա իբն ալ-Ջառահը, Թալհան, Եզիդ իբն Աբու Սուֆիանը [...] Աբու Սուֆիան իբն Հարբ իբն Ումայան, Մուավիա իբն Աբու Սուֆիանը [...]:

Ինձ պատմել են Վալիդը և Մուհամմադ իբն Սաադը, վերցնելով Վակիդիից, իսկ սա՝ իր ծերուններից (չեխերից), թե առաջինը, որ Առաքյալի համար գրագրություն է արել և նրանից առաջ գնացել էր Մադինա, Ուբայ իբն Քաաբ ալ-Անսարին էր, որը միաժամանակ առաջինն էր, որ գրքի վերջում գրում էր «գրել է այսինչը»: Երբ նա բացակայում էր, Առաքյալը կանչում էր Զայդ իբն Սաբիտ ալ-

Անսարիին[255] և սա նրա համար գրում էր: Ուբայը և Զայդը ընդհանրապես գրանցում էին ի վերուստ (երկնքից) իջեցված (հայտնված) խոսքերը նրա ներկայությամբ, ինչպես նաև գրում էին նրա նամակները, բոլոր նչումները և այլն:

Երբ հաղթանակի տարում Մուավիան ընդունեց մահմեդականությունը, նա ևս աշխատեց որպես [Մուհամմադի] քարտուղար: [.....]

Ասել է Վակիդին, թե արաբերեն գրողները Աուս և Խազրաջ ցեղերի մեջ քիչ էին, իսկ հրեաներից ոմանք սովորել էին արաբերեն գրերը և Մադինայում մանուկները վաղ չրջանում (նախքան մահմեդականությունը) սովորել էին այն: Երբ ի հայտ եկավ մահմեդականությունը, Աուս ու Խազրաջ ցեղերի մեջ չատերը գրել գիտեին: Զայդ իբն Սաբիտը գրում էր թե՛ արաբական, թե՛ եբրայական գրերով:

Վակիդին ավելացնում է սրանց (քարտուղարների) չարքին նաև քամիլներին (կատարյալներին): Քամիլ էր կոչվում նա, ով բացի գրելուց գիտեր նաև նետաձգություն և լող, ինչպես Ռաֆի իբն Մալիքը [...], որոնք Յասրիբի (Մադինա) բնակիչներ էին և նախամահմեդական չրջանում ունեին այս երեք կարողությունները:

Ինձ պատմել է Իսհակ իբն Աբու Իսրաիլը, վերցնելով Աբդ ալ-Ռահման իբն Աբու-լ-Զինադից, իսկ սա՝ իր հորից և վերջինս՝ Խարիջա իբն Զայդից, թե իր հայրը՝ Զայդ իբն Սաբիտը ասել է՝ Առաքյալն ինձ հրամայել էր, որ իբեն [օգնելու] համար եբրայերեն (հրեական) գիրը սովորեմ: Նա ասում էր՝ չեմ վստահում հրեաներին, որ ինձ համար գրեն: Կես ամիս չանցավ, որ ես այն (եբրայական գիրը) սովորեցի և նրա կողմից գրում էի հրեաներին և երբ նրան էին գրում, կարդում էի նրա համար:

ԲԱԼԱԶՈՒՐԻ

ԵՐԿՐՆԵՐԻ ՆՎԱՃՈՒՄԸ
(ՖՈՒՏՈՒՀ ԱԼ-ԲՈՒԼԴԱՆ)

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

[1] *Աբու Բաքր – Տե՛ս Աբու Յուսուֆ, ծնթգր. 33:*

[2] *Թաիֆ – Քաղաք է Արաբիայի Հիջազ երկրամասում, Մեքքայից հարավ-արևելք: Հայտնի էր դեռևս նախամահմեդական ժամանակներում: (al-Taif, M. Lecker EOI, CD-ROM, (X: 113b)):*

[3] *Նաջդ – Նաջդը Արաբիա թերակղզու երկրամասերից մեկն է, որը գտնվում է Արաբիայի կենտրոնական մասում. մի բարձրավանդակ է, որը կտրված է ծովերից՝ չրջապատված Արաբիայի այլ երկրամասերով մի կողմից՝ Տիհամա և Հիջազ, մյուս կողմից՝ Եմեն և Յամամա: (Nadjd, A. Grohmann, EOI, CD-ROM, (VII: 864a)):*

[4] *Հիջազ – Արաբական թերակղզու հյուսիս-արևմտյան մասը, որտեղ գտնվում են իսլամի սրբազան քաղաքները՝ Մեքքան ու Մադինան: Հիջազ բառին տարբեր իմաստներ են տրվում, բայց ընդունված իմաստը «պատնեչն» է: (al-Hidjaz, G. Rentz EOI, CD-ROM, (III: 362a)):*

[5] *Մադինա – Տե՛ս Աբու Յուսուֆ, ծնթգր. 3:*

[6] *Ամր իբն ալ-Աս իբն Վաիլ ալ-Սահմի – Ամր իբն ալ-Աս եգիպտոսը նվաճող զորավարն էր: Տե՛ս Վակիդի, ծնթգր. 16:*

[7] *Պաղեստինի առաջին գավառը – Խոսքը հավանաբար Ղազզայի գավառի մասին է (Վ. Տ.-Ղ.):*

[8] *Խալիդ իբն ալ-Վալիդ իբն ալ-Մուղիրա ալ-Մախզումի – Տե՛ս Աբու Յուսուֆ, ծնթգր. 32:*

[9] *Ղազզա – Մի քաղաք է Պաղեստինի հարավում, որը հնագույն ժամանակներից եղել է գյուղատնտեսական ու առևտրական կենտրոն, ծովից 4 կմ հեռավորության վրա, գտնվելով Արաբիայից Պաղեստին և Պաղեստինից Սիրիա տանող ճանապարհի վրա: Փղշտացիների նախկին Ազզա քաղաքը, Հելլենիստական չրջանում հունական ձևով կոչվեց Գազա, ապա անցավ Հռոմեական տիրապետության տակ: Բյուզանդական չրջանում մաս կազմեց Palestina Prima նահանգին և քրիստոնեացվելով դարձավ եպիսկոպոսանիստ քաղաք: Այն արաբների կողմից նվաճվեց Ամր իբն ալ-Աս զորավարի կողմից 634 թվականին Աբու Բաքր խալիֆայի օրոք: (Ghazza, D. Sourdel, EOI, CD-ROM, (II: 1056a)):*

[10] *Ակրա (Աքքա) – Հին կտակարանում հիշվում է որպես Աքքո, հունական տարբերակով՝ Պտողեմայիս, խաչակիրների Acre, քաղաք է Պաղեստինի ծովափին: Այս քաղաքը նշանակալից դեր է խաղացել թե՛ Խալիֆայության, թե՛ Եգիպտոսի Թուլունների, թե՛ խաչակիրների օրոք, ընդհուպ մինչև 19-րդ դարի վճռորոշ իրադարձությունները այդ տարածաշրջանում: (Akka, F. Buhl, EOI, CD-ROM, (I: 341a)):*

[11] *Տյուրոս (Սուր) – Լիբանանի հարավում գտնվող հնադարյան Տյուրոս քաղաքը, նավահանգիստը արաբներն անվանում են Սուր (Sur, M. Lavergne, EOI, CD-ROM, (IX: 883a)):*

[12] *Մարջ – Տե՛ս Դինավարի, ծնթգր. 12:*

[13] *Ղութա – Սիրիայում այսպիսի անուն է տրվում առատորեն ոռոգվող և ինտենսիվ կերպով մշակվող տարածքներին: Ինչպես օրինակ, Ջարուդի դութան, Նաբաքի*

դութան, Յարրուդի դութան և այլն: Տվյալ դեպքում խոսքը Դամասկոսի դութայի մասին է, որն իրենից ներկայացնում է Բարադա գետի ջրերով ոռոգվող պտղատու այգիների մի գոտի, որը եղերում է Ծմայանների մայրաքաղաքը: (Ghuta, N. Elisseeff, EOI, CD-ROM, (II: 1104b)):

[14] *Ջարիր – Տե՛ս Արու Յուսուֆ, ծնթգր. 26:*

[15] *Մող – Տե՛ս Արու Յուսուֆ, ծնթգր. 29:*

[16] *Կխեֆ – Մավալի միավոր է, որը Իրաքում վկայված է երկու տարբերակով՝ փոքր կխեֆ, որը համապատասխանում է երեք ռաթլ հեղուկին, այսինքն տեղավորում էր 1, 21875 լիտր, իսկ մեծ կխեֆը ութը երկու անգամ ավելին է, այսինքն 2, 4375 լիտր: Եգիպտոսում կխեֆը հավասար էր 2, 106 լիտրի: (Хинц, Меры и веса, стр. 53).*

[17] *Արդար – կամ իրդարբ. Մավալի չափման եգիպտական միավոր: Միջնադարում մեկ իրդարբը համապատասխանում էր մոտավորապես 69, 6 կգ ցորենի: (Хинц, Меры и веса стр. 47):*

[18] *Հիմս – Անտիկ Եմեսա քաղաքը, եվրոպական անվանումով Հոմս: Քաղաք Սիրիայում Որոնտես գետի արևելյան ափին: Այն գտնվում է Դամասկոս-Հալեբ ճանապարհի կեսին: (Hims, N. Elisseeff, EOI, CD-ROM, (III: 397a)):*

[19] *Բաալբեք – Քաղաք Լիբանանում՝ Բեկաայի հովտի եզրին: Քաղաքի անվանումը կապվում է սեմական Բաալ աստծո պաշտամունքի հետ: Հելլենիստական չրջանում նրան տրվել է Հելիոպոլիս անուն և այդ ժամանակներին են վերաբերում ներկայումս պահպանված տաճարների մնացորդները (Baalbakk, J. Sourdel-Thomine, EOI, CD-ROM, (I: 970b)):*

[20] *Ղասսան – Հարավարաբական ցեղերից մեկը, որը գաղթելով, ի վերջո, հաստատվեց Արևելահռոմեական կայսրության տարածքներում մոտավորապես 490 թ., ընդունելով քրիստոնեությունն ու հարկ վճարելով կայսրությանը: Ղասսան ցեղը համաձայնագիր ուներ բյուզանդացիների հետ և նրանց բանակին տրամադրում էր զորամիավորումներ պարսիկների դեմ պայքարում: Միաբնակ քրիստոնյաներ լինելով նրանք չէին կորցրել իրենց արաբական դիմագիծը: Ղասսանիները մեծ ներդրում ունեցան Սիրիայի քաղաքային կյանքի զարգացման մեջ 6-րդ դարում: Ղասսանիների հավատարմություն միարնակությանը երբեմն սրում էր նրանց հարաբերությունները Բյուզանդական կայսրերի հետ, մյուս կողմից նրանք հարվածներ էին ստանում Սասանյաններից: Բայց նրանք, վերագտնելով իրենց դիրքերը, կրկին ծառայության մտան Հերակլ կայսեր բանակում՝ 636 թվականի վճռորոշ ճակատամարտում հանդես գալով բյուզանդացիների կողմից: Արաբական նվաճումը ստիպեց Ղասսանիներին կամ գաղթել դեպի Բյուզանդիայի փոքրասիական նահանգները, կամ ընդունել իսլամը և ձուլվել արար մահմեդական համայնքի մեջ, մի փոքր մասն էլ մնաց քրիստոնյա՝ չարունակելով բնակվել Սիրիայում: (Ghassan, Irfan Shahid, EOI, CD-ROM, (II: 1020b)):*

[21] *Կիննասրինի ջունդ – Ջունդ բառը արաբները փոխ են առել պահլավերեն գունդից, որը ինչպես և հայերենում նշանակում է՝ զինվորական միավորում: Արաբական նվաճումից հետո այսպես կոչվեցին որոշակի նահանգները, կամ ռազմական գոտիները, որոնք կարող էին որոշակի քանակով զինվորներ տրամադրել պարբերաբար կազմակերպվող արշավանքների համար: Այսպես օրինակ ստեղծված էին չորս ջունդներ Սիրիայում՝ Հիմսի, Դամասկոսի, Հորդանանի և Պաղեստինի: Ավելի ուշ, արդեն Մուավիայի օրոք, ստեղծվեց Կիննասրինի ջունդը: Կիննասրինը Հալեբից հարավ գտնվող մի քաղաք է, որի անունը ծագում է արամեական Կեննեչրինից: Արրասյաննեբի օրոք Կիննասրինի ջունդն ընդարձակվեց դեպի հյուսիս իր մեջ ընդգրկելով Կուրուսը, Տիղինը, Դյուբը, Այնթարը և Հոմկյան, իսկ հարավում՝ Մաաոռա Միսրինը և Մաաոռա ալ-Նուման: Հարուն ալ-Ռաչիդի օրոք Կիննասրինի ջունդը փոքրացվեց: Այն զրկվեց Անտիոքից դեպի արևմուտք ընկած տարածքներից, ինչպես նաև Հյուսիսում՝*

Սուդուրից, որը պիտի կազմեր Ավասիմի չրջանը: (Djund, D. Sourdel, EOI, CD-ROM(II: 601a), Kinnasrin, N. Elisseeff, EOI, CD-ROM, (V: 124a)):

[22] *Ավասիմ – Բյուզանդական կայսրության և խալիֆայության միջև սահմանային գոտու մի մասին տրված անվանումը: Այն ընդգրկում էր Սիրիայի հյուսիսն ու հյուսիս-արևելքը: Այս գոտու առաջնային գիծը կոչվում է Սուդուր (սահմանային ամրությունների գոտի): Մինչդեռ ավելի խորքում տեղադրված ամրություններին տրվում էր Ավասիմ (եղ. ալ-ասիմա) անվանումը: Ավասիմը և Սուդուրը երբեմն մտնում էին մի ջունդի մեջ, իսկ երբեմն էլ առանձին վարչական միավորների մեջ էին մտնում: (al-Awasim, M. Canard, EOI, CD-ROM, (I: 761a)):*

[23] *Տիբրիա – կամ Տաբրիա. Քաղաք Իրաքում՝ Տիգրիսի աջ ափին, Սամառայից հյուսիս: (Takrit, J. H. Kramers – [C. E. Bosworth], EOI, CD-ROM, (X: 140a)):*

[24] *Մարդայիտներ (Ջարաջիմա) – Անհայտ ծագումով քրիստոնյա մի ժողովուրդ, որն ապրում էր Ամանոսյան լեռներում (արար. Լուքքամ): Ասորերեն կոչվում էին Գարգումայե, իսկ բյուզանդացի պատմիչների մոտ՝ մարդայիտներ: Կարծվում է, որ այս անունը կապ ունի հին դարերի Գուրգում տեղանվան հետ, որը մոտավորապես Մարաչի չրջակայքն էր ընդգրկում:*

Արաբական նվաճումներից հետո, նախ պայմանագիր կնքեցին խալիֆայության հետ, ապա նորից անցան Բյուզանդիայի կողմը: 666-ին գրավեցին Լիբանանի բարձունքները: Մուավիա խալիֆան պարտավորվեց տարեկան հարկ վճարել մարդայիտներին: Արդ ալ-Մալիք խալիֆայի օրոք 688/689 թվին, բյուզանդացիների հետ նորից ապստամբեցին Ասորիքը:

Վերջապես մարդայիտների մեծ մասը հաստատվեց Փոքր Ասիայի ներքին գավառներում: Կարծվում է, որ նրանց մի մասը ձուլվեց Լիբանանի մարոնիների հետ: (Hitti, History of the Arabs, p. 204-205 (Տե՛ս Իրն ալ-Ասիր, էջ 366-367)):

[25] *Ամանոս (Լուքքամ) լեռներ – Ջարալ ալ-Լուքքամ, Միջնադարյան արար մատենագիրները այսպես են կոչում Սիրիայի հյուսիսում գտնվող Ամանոսյան լեռնաչղթան: Այն երկար ժամանակ սահման էր հանդիսանում մահմեդականների և Բյուզանդիայի միջև: (al-Lukkam, Djabal, M. Streck, EOI, CD-ROM, (V: 810a)):*

[26] *Ալեքսանդրեկ – Արար. Իսկանդարուն, Ալեքսանդրետտա, Նավահանգիստ Միջերկրականի արևելյան ափին: Արաբաբյուզանդական հակամարտության ժամանակ բազմիցս ձեռքից ձեռք է անցել: (Iskandarun, Alexandretta, J. H. Mordtmann, EOI, CD-ROM, (IV: 137b)):*

[27] *Ռուսիս – Հավանաբար Ռուսիս, կամ Արսուս նավահանգիստն է Ալեքսանդրեկի ծոցի ափին՝ Ալեքսանդրեկ քաղաքից հարավ-արևմուտք:*

[28] *Սիյաբիջաներ – կամ Սայաբիջա – Այս անունը տրվում է ոչ արար գաղթական մի ժողովրդի, որը 7-8-րդ դարերում հավանաբար Հարավարևելյան Ասիայից գաղթել էին Պարսից ծոցի ափերն ու Բասրայի չրջանը: Սրանք երբեմն կապվում են ծաթների (զոթթ) հետ, որոնք տարբեր էթնիկ խումբ են գաղթած Հնդկաստանի հյուսիսարևմուտքից: Սրանք բոլորն էլ փաստորեն գնչուներ էին, որոնք բնդունել էին իսլամը և հիմնականում զինվորական ծառայություն էին կատարում խալիֆայության համար: Խալիֆաները ժամանակի ընթացքում նրանց մի մասին տեղափոխեցին Սիրիա և Միջերկրականի ափեր: Աբրասյանների վերջին չրջանում Սիյաբիջաները ձուլվեցին տեղի բնակչության մեջ: (Sayabidja, C. E. Bosworth, EOI, CD-ROM, (IX: 97b)):*

[29] *Բաղրասի լեռնանցք – Լեռնանցք Ամանոսյան լեռների միջով՝ Անտիոքից Ալեքսանդրեկ ճանապարհի վրա: Հետագայում կոչվում էր Բեյլանի լեռնանցք: Լեռնանցքի վրա հսկում էր Բաղրասի ամրոցը, որը կառուցել էին բյուզանդացիները: Հետագայում այն տարբեր ժամանակ պատկանում էր արաբներին, խաչակիրներին, կիլիկեցի հայերին: (Baghras, Cl. Cahen, EOI, CD-ROM, (I: 909b)):*

դոթան, Յաբրուդի դոթան և այլն: Տվյալ դեպքում խոսքը Դամասկոսի դոթայի մասին է, որն իրենից ներկայացնում է Բարադա գետի ջրերով ոռոգվող պտղատու այգիների մի գոտի, որը եղերում է Ծմայանների մայրաքաղաքը: (Ghuta, N. Elisseeff, EOI, CD-ROM, (II: 1104b)):

14 Ջարիր – Տե՛ս Արու Յուսուֆ, ծնթգր. 26:

15 Մոդ – Տե՛ս Արու Յուսուֆ, ծնթգր. 29:

16 Կիսթ – Միավոր է, որը Իրաքում վկայված է երկու տարբերակով՝ փոքր կիսթր, որը համապատասխանում է երեք ռաթլ հեղուկին, այսինքն տեղավորում էր 1, 21875 լիտր, իսկ մեծ կիսթր ուղիղ երկու անգամ ավելին է, այսինքն 2, 4375 լիտր: Եգիպտոսում կիսթր հավասար էր 2, 106 լիտրի: (Хинц, Меры и веса, стр. 53).

17 Արդար – կամ իրդարբ. Միավոր չափման եգիպտական միավոր: Միջնադարում մեկ իրդարբր համապատասխանում էր մոտավորապես 69, 6 կգ ցորենի: (Хинц, Меры и веса стр. 47):

18 Հիմս – Անտիկ Եմեսա քաղաքը, եվրոպական անվանումով Հոմս: Քաղաք Սիրիայում Որոնտես գետի արևելյան ափին: Այն գտնվում է Դամասկոս-Հալեր ճանապարհի կեսին: (Hims, N. Elisseeff, EOI, CD-ROM, (III: 397a)):

19 Բաալբեք – Քաղաք Լիբանանում՝ Բեկաայի հովտի եղրին: Քաղաքի անվանումը կապվում է սեմական Բաալ աստծո պաշտամունքի հետ: Հելլենիստական շրջանում նրան տրվել է Հելիոպոլիս անունը և այդ ժամանակներին են վերաբերում ներկայումս պահպանված տաճարների մնացորդները (Baalbakk, J. Sourdel-Thomine, EOI, CD-ROM, (I: 970b)):

20 Ղասսան – Հարավարարական ցեղերից մեկը, որը գաղթելով, ի վերջո, հաստատվեց Արևելահռոմեական կայսրության տարածքներում մոտավորապես 490 թ., ընդունելով քրիստոնեություն ու հարկ վճարելով կայսրությանը: Ղասսան ցեղը համաձայնագիր ուներ բյուզանդացիների հետ և նրանց բանակին տրամադրում էր զորամիավորումներ պարսիկների դեմ պայքարում: Միաբնակ քրիստոնյաներ լինելով նրանք չէին կորցրել իրենց արաբական դիմագիծը: Ղասսանիները մեծ ներդրում ունեցան Սիրիայի քաղաքային կյանքի զարգացման մեջ 6-րդ դարում: Ղասսանիների հավատարմություն միաբնակությանը երբեմն սրում էր նրանց հարաբերությունները բյուզանդական կայսրերի հետ, մյուս կողմից նրանք հարվածներ էին ստանում Ասասանյաններից: Բայց նրանք, վերագտնելով իրենց դիրքերը, կրկին ծառայության մտան Հերակլ կայսեր բանակում՝ 636 թվականի վճռորոշ ճակատամարտում հանդես գալով բյուզանդացիների կողմից: Արաբական նվաճումը ստիպեց Ղասսանիներին կամ գաղթել դեպի Բյուզանդիայի փոքրասիական նահանգները, կամ ընդունել իսլամը և ձուլվել արար մահմեդական համայնքի մեջ, մի փոքր մասն էլ մնաց քրիստոնյա՝ չարունակելով բնակվել Սիրիայում: (Ghassan, Irfan Shahid, EOI, CD-ROM, (II: 1020b)):

21 Կիննասրինի ջունդ – Ջունդ բառը արաբները փոխ են առել պահլավերեն գունդից, որը ինչպես և հայերենում նշանակում է՝ զինվորական միավորում: Արաբական նվաճումից հետո այսպես կոչվեցին որոշակի նահանգները, կամ ռազմական գոտիները, որոնք կարող էին որոշակի քանակով զինվորներ տրամադրել պարբերաբար կազմակերպվող արշավանքների համար: Այսպես օրինակ ստեղծված էին չորս ջունդեր Սիրիայում՝ Հիմսի, Դամասկոսի, Հորդանանի և Պաղեստինի: Ավելի ուշ, արդեն Մուավիայի օրոք, ստեղծվեց Կիննասրինի ջունդը: Կիննասրինը Հալերից հարավ գտնվող մի քաղաք է, որի անունը ծագում է արամեական կեննեդրինից: Արրասյանների օրոք Կիննասրինի ջունդն ընդարձակվեց դեպի Հյուսիս իր մեջ ընդգրկելով Կուրուսը, Տիղինը, Դյուբը, Այնթարը և Հոռմկլան, իսկ հարավում՝ Մաաոռա Միսրինը և Մաաոռա ալ-Նուաման: Հարուն ալ-Ռաշիդի օրոք Կիննասրինի ջունդը փոքրացվեց: Այն զրկվեց Անտիոքից դեպի արևմուտք ընկած տարածքներից, ինչպես նաև Հյուսիսում՝

Սուդուրից, որը պիտի կազմեր Ավասիմի չրջանը: (Djund, D. Sourdel, EOI, CD-ROM(II: 601a), Kinnasrin, N. Elisseeff, EOI, CD-ROM, (V: 124a)):

22 Ավասիմ – Բյուզանդական կայսրության և խալիֆայության միջև սահմանային գոտու մի մասին տրված անվանումը: Այն ընդգրկում էր Սիրիայի Հյուսիսն ու Հյուսիս-արևելքը: Այս գոտու առաջնային գիծը կոչվում է Սուդուր (սահմանային ամրությունների գոտի): Մինչդեռ ավելի խորքում տեղադրված ամրություններին տրվում էր Ավասիմ (եզ. ալ-ասիմա) անվանումը: Ավասիմը և Սուդուրը երբեմն մտնում էին մի ջունդի մեջ, իսկ երբեմն էլ առանձին վարչական միավորների մեջ էին մտնում: (al-Awasim, M. Canard, EOI, CD-ROM, (I: 761a)):

23 Տիքրիտ – կամ Տաքրիտ. Քաղաք Իրաքում՝ Տիգրիսի աջ ափին, Սամառայից հյուսիս: (Takrit, J. H. Kramers – [C. E. Bosworth], EOI, CD-ROM, (X: 140a)):

24 Մարդայիտներ (Ջարաջիմա) – Անհայտ ծագումով քրիստոնյա մի ժողովուրդ, որն ապրում էր Ամանոսյան լեռներում (արար. Լուքքամ): Ասորերեն կոչվում էին Գարգոմայե, իսկ բյուզանդացի պատմիչների մոտ՝ մարդայիտներ: Կարծվում է, որ այս անունը կապ ունի հին դարերի Գուրգում տեղանվան հետ, որը մոտավորապես Մարաչի չրջակայքն էր ընդգրկում:

Արաբական նվաճումներից հետո, նախ պայմանագիր կնքեցին խալիֆայության հետ, ապա նորից անցան Բյուզանդիայի կողմը: 666-ին գրավեցին Լիբանանի բարձունքները: Մուավիա խալիֆան պարտավորվեց տարեկան հարկ վճարել մարդայիտներին: Արդ ալ-Մալիք խալիֆայի օրոք 688/689 թվին, բյուզանդացիների հետ նորից ապստամբեցին Ասորիքը:

Վերջապես մարդայիտների մեծ մասը հաստատվեց Փոքր Ասիայի ներքին գավառներում: Կարծվում է, որ նրանց մի մասը ձուլվեց Լիբանանի մարոնիների հետ: (Hitti, History of the Arabs, p. 204-205 (Տե՛ս Իբն ալ-Ասիր, էջ 366-367)):

25 Ամանոս (Լուքքամ) լեռներ – Ջարալ ալ-Լուքքամ, Միջնադարյան արար մատենագիրները այսպես են կոչում Սիրիայի Հյուսիսում գտնվող Ամանոսյան լեռնաչղթան: Այն երկար ժամանակ սահման էր Հանդիսանում մահմեդականների և Բյուզանդիայի միջև: (al-Lukkam, Djabal, M. Streck, EOI, CD-ROM, (V: 810a)):

26 Ալեքսանդրեկ – Արար. Իսկանդարուն, Ալեքսանդրետտա, Նավահանգիստ Միջերկրականի արևելյան ափին: Արաբաբյուզանդական հակամարտության ժամանակ բաղմիցս ձեռքից ձեռք է անցել: (Iskandarun, Alexandretta, J. H. Mordtmann, EOI, CD-ROM, (IV: 137b)):

27 Ռուսիս – Հավանաբար Ռուսիս, կամ Արսուս նավահանգիստն է Ալեքսանդրեկի ծոցի ափին՝ Ալեքսանդրեկ քաղաքից հարավ-արևմուտք:

28 Սիյարիջներ – կամ Սայարիջա – Այս անունը տրվում է ոչ արար գաղթական մի ժողովրդի, որը 7-8-րդ դարերում հավանաբար Հարավարևելյան Ասիայից գաղթել էին Պարսից ծոցի ափերն ու Բասրայի չրջանը: Սրանք երբեմն կապվում են ծաթների (զոթիթ) հետ, որոնք տարբեր էթնիկ խումբ են գաղթած Հնդկաստանի Հյուսիսարևմուտքից: Սրանք բոլորն էլ փաստորեն գնչուներ էին, որոնք ընդունել էին իսլամը և հիմնականում դինվորական ծառայություն էին կատարում խալիֆայության համար: Խալիֆաները ժամանակի ընթացքում նրանց մի մասին տեղափոխեցին Սիրիա և Միջերկրականի ափեր: Արրասյանների վերջին չրջանում Սիյարիջները ձուլվեցին տեղի բնակչության մեջ: (Sayabidja, C. E. Bosworth, EOI, CD-ROM, (IX: 97b)):

29 Բաղրասի լեռնանցք – Լեռնանցք Ամանոսյան լեռների միջով՝ Անտիոքից Ալեքսանդրեկ ճանապարհի վրա: Հետագայում կոչվում էր Բեյլանի լեռնանցք: Լեռնանցքի վրա հակում էր Բաղրասի ամրոցը, որը կառուցել էին բյուզանդացիները: Հետագայում այն տարբեր ժամանակ պատկանում էր արաբներին, խաչակիրներին, կիլիկեցի հայերին: (Baghras, Cl. Cahen, EOI, CD-ROM, (I: 909b)):

30 Դորիլիում (Դարաուլիյա) – Քաղաք Փոքր Ասիայի արևմուտքում, հետագայի Էսքիշեհիրը:

31 Ռակկա - Միջագետքյան քաղաք Եփրատի միջին հոսանքի ձախ ափին: Խալիֆայության օրոք Ջազիրայի (Վերին Միջագետք) Դիար Մուդար նահանգի մայրաքաղաքն էր: (al-Rakka, M. Meinecke, EOI, CD-ROM, (VIII: 410a)):

32 Հաջջաջ [փոխարքա] – Հաջջաջ իրն Յուսուֆ Ումայանների ամենանշանավոր և կարող կառավարիչն էր: Աչքի ընկավ Արդ ալ-Մալիք խալիֆայի օրոք և նրան ծառայություններ մատուցեց ներքին խռովությունները ճնշելու հարցում: Խալիֆան նրան նշանակեց Հիջազի, Եմենի ու Յամամայի կառավարիչ: Հաջջաջը աչքի էր ընկնում մեծ դաժանությամբ, արյան մեջ խեղդելով ամենաչնչին ըմբոստությունն իսկ: Այստեղից Հաջջաջը տեղափոխվեց Իրաքի կառավարիչ, մի պաշտոն, որը բացառիկ նշանակություն ուներ խալիֆայության համար: Նա երկաթյա կարգ ու կանոն հաստատեց Իրաքի դինվորական միավորումներում: Նման խստությունները անհրաժեշտ էին մանավանդ հաջողությամբ պայքարելու համար Խարիջիների դեմ: Հետագայում Հաջջաջի լիազորությունները տարածվեցին նաև Խորասանի ու Սիջիստանի վրա: Այսպիսով նա դարձավ Արևելքի փոխարքա: Նպաստեց դինվորական կարգապահության ուժեղացմանն ու չինարարական աշխատանքներին: Արդ ալ-Մալիքի բոլոր բարեփոխումներում Հաջջաջը նրա աջ ձեռքն էր: Նա հավատարմորեն ծառայեց թե՛ Արդ ալ-Մալիք և թե՛ Վալիդ խալիֆաների օրոք: Հաջջաջը իր մահկանացուն կնքեց 714 թ-ին՝ Վալիդի վախճանից մի տարի առաջ: (al-Hadjdjadj ibn Yusuf, A. Dietrich, EOI, CD-ROM, (III: 39b)):

33 Խալիջ (ծոց) – Հավանաբար Իսոսի կամ Ալեքսանդրեկի (Իսկանդարուն) ծոցն է: (Վ. Տ-Ղ.)

34 Սարոս (Սայհուն) - Գետ Կիլիկիայում, Միջերկրական ծովի ավազանում, (ՀՀՇՏԲ, հ. 4, էջ 570):

35 Սիս (Սիսիյա) - Սիս քաղաքը Կիլիկիայում:

36 Անազարբա – կամ Այն Զարբա: Տե՛ս Խալիֆա իրն Խայյաթ, ծնթգր. 84:

37 Ալի իրն Յահիա ալ-Արմանի - Ալի իրն Յահիա ալ-Արմանին խալիֆայության պատմության մեջ դիրքի հասած բացառիկ հայ գործիչներից էր: Նշանավոր դարձավ Բյուզանդիայի դեմ մղած պայքարով: Ուներ կալվածներ Ադձնիքի կողմերում և հավանաբար այդ նահանգի հայ նախարարներից էր (մահմեդականացած): Եղել է նաև Արմինիայի ոստիկան: (Իրն ալ-Ասիր, էջ 382):

38 Հարունիյա – Հարունիա, բերդաքաղաք Կիլիկիայում. հետագայում՝ Ադանայի նահանգի Ջերել-Բերեքեթի գավառում (ՀՀՇՏԲ, հ. 3, էջ 393):

39 Քանիսատ ալ-Սաուդա - Տե՛ս Խալիֆա իրն Խայյաթ, ծնթգր. 85:

40 Կաֆիկ - կամ կաֆ. տես Արու Յուսուֆ, ծնթգր. 27:

41 Խառան – Քաղաք Վերին Միջագետքում (Ջազիրա):

42 Սամոսատ (Սումայսաթ) - Քաղաք Վերին Միջագետքում, Եփրատացիք գավառում, Եփրատ գետի աջ ափին: (ՀՀՇՏԲ, հ. 4, էջ 487):

43 Կարկիսիա - Քաղաք Վերին Միջագետքում, Խաբուր անունով երկու գետերի միախառնման վայրում:

44 Մծրին (Նասիբին) – Քաղաք Վերին Միջագետքում (ՀՀՇՏԲ, հ. 3 էջ 838-839):

45 Սինջար – Քաղաք Վերին Միջագետքում: Գտնվում է Սինջար լեռան հարավային ստորոտին, Մոսուլ քաղաքից արևմուտք (ՀՀՇՏԲ, հ. 4, էջ 610):

46 Նփրկերտ (Մայափարիկին) – Քաղաք Մեծ Հայքի Ադձնիք աշխարհում, Հնում Տիգրանակերտ (ՀՀՇՏԲ. հ. 5, էջ 675):

47 Սարուջ – կամ Սրուճ, գյուղաքաղաք Վերին Միջագետքում, հետագայում՝ Հալեպի (այդ բաժանմամբ Ուրֆայի) նահանգի Բիրեջիկի գավառում: (ՀՀՇՏԲ. հ. 4, էջ 547):

48 Ռասայիֆա - Ռասաֆիֆա. Վայր Վերին Միջագետքում, բնույթն անորոշ (ՀՀՇՏԲ. հ. 4, էջ 439):

49 Ալ-Արդ ալ-Բայդա - Բնակավայր հավանաբար Եփրատացվոց աշխարհում:

50 Ալ-Վարդա, Ռաս ալ-Այն – Քաղաք Վերին Միջագետքում, Եղեսիայի շրջանում: (ՀՀՇՏԲ, հ. 4, էջ 439):

51 Տելլ Մաուդան – Քաղաք Վերին Միջագետքում (Ջազիրա) Եղեսիայից արևելք և Ամիդից հարավ:

52 Մարդին ամրոց – Քաղաք Դիարբեքիրի նահանգի Մարդինի գավառում: Վերին Միջագետքի բնակավայրերից է և գտնվում է Եղեսիա ու Մծրին քաղաքների միջև: (ՀՀՇՏԲ, հ. 3, էջ 728):

53 Դարա – Քաղաք Վերին Միջագետքում, Մոսուլի շրջանում: (ՀՀՇՏԲ, հ. 2, էջ 48):

54 Կարդա (որպես բնակավայր) – Տե՛ս Իրն Կուտայբա, ծնթգր. 3:

55 Բաղարդա – Բաղարդան հաճախ հիշատակվում է Կարդայի հետ, Կարդան և Բաղարդան Վերին Միջագետքի (Ջազիրա) երկու հարևան շրջաններ են: (Karda and Bazabda) (Ed.), EOI, CD - ROM, (IV:639a)):

56 Ջավաղանի պատրիկ - Անձևացիք գավառի տերը (իշխանը): Արաբները Անձևացիք տեղանունը տալիս են Ջավաղան ձևով: Հիշյալ պատրիկը հավանաբար Սահուռ Անձևացին էր, որը արաբների՝ Տարոնի վրա հարձակման ժամանակ նրանց կողմն էր անցել: (Յովհան Մամիկոնեան, Պատմութիւն Տարօնոյ, Երևան, 1941, էջ 285-286: (Տե՛ս Իրն ալ-Ասիր, էջ 367)):

57 Արդն – Տե՛ս Խալիֆա իրն Խայյաթ, ծնթգր. 33:

58 Մտավ լեռնանցք – Նկատի ունի Զորա պահակ լեռնանցքը:

59 Բադեչ (Բաղիխ) - Ադձնիք նահանգում գտնվող Արդն և Բադեչ քաղաքները արաբների առաջին նվաճումներից էին: Բադեչը (ուշ միջնադարում Բիթլիս) գտնվում էր Զորա պահակ լեռնանցքից հարավ և ռազմագիտական մեծ նշանակություն ուներ: (Իրն ալ-Ասիր, էջ 368):

60 Խլաթ (Խիլաթ) - Տե՛ս Խալիֆա իրն Խայյաթ, ծնթգր. 81:

61 Այն ալ-Համիդա – Հայտնի չէ, թե որտեղ է Այն ալ-Համիդան, այսինքն «Ֆիճու ջուր» կոչված վայրը: Գուցե կարնո քաղաքի մոտ գտնվող Ջերմուկն է: Երեմյան, Աշխարհացույց, էջ 53: (Իրն ալ-Ասիր, էջ 368):

62 Պարուեդ (Աբարուիդ) - Խոսրով Պարուեդ: Տե՛ս Դինավարի, ծնթգր. 8:

63 Մոսուլ (Մաուսիլ) – Քաղաք Վերին Միջագետքում:

64 Դիար Մուդար – Ջազիրան բաժանվում է երեք մասի՝ Դիար Ռաբիա, Դիար Մուդար և Դիար Բաքր: «Դիար» նշանակում է տեղի բնակության վայր, իսկ «Ռաբիա», «Մուդար» և «Բաքր»՝ դրանք արաբական ցեղերի անվանումներ են, որոնք այստեղ բնակություն հաստատեցին նախքան արաբական նվաճումները և նվաճումներից հետո: Դիար Մուդարը Ջազիրայի արևմտյան մասն է: (al-Djazira, M. Canard, EOI, CD-ROM, (II: 523a)):

65 Դիար Ռաբիա - Ջազիրայի արևելյան մասն է: Իսկ Դիար Բաքրը՝ հյուսիսային: (al-Djazira, M. Canard, EOI, CD-ROM, (II: 523a)):

66 Խաբուր [գետ] - Գետ Տիգրիսի ավազանում, նաև՝ Խաբուր արևելյան (ՀՀՇՏԲ, հ. 2, էջ 613):

67 Հադիսա – Այս անունով, որ նշանակում է «նոր» կան մի չարք քաղաքներ: Տվյալ դեպքում խոսքը Հադիսաթ ալ-Ֆուրաթի մասին է, կառուցված Եփրատ գետի վրա: Բուն քաղաքը կառուցված է կղզու վրա: Բնակիչները քրիստոնյաներ էին: (Hadītha, E. Herzfeld, EOI, CD-ROM, (III: 29a)):

68 Ռահբա - կամ Ռահբաթ ալ-Շամ, քաղաք է Եփրատ գետի աջ ափին. ժամանակակից ալ-Միյադինը: (al-Rahba, E. Honigmann-[Th. Bianquis], EOI, CD-ROM, (VIII: 393b)).

69 Հադաս – Տե՛ս Խալիֆա իրն Խայյաթ, ծնթգր. 18:

70 Զապետրա – Տե՛ս Իրն Կուտայրա, ծնթգր. 13:

71 Սադակա – Տե՛ս Աբու Յուսուֆ, ծնթգր. 16:

72 Հիջազ – Տե՛ս Բալաղուրի, ծնթգր. 4:

73 Շիմշաթ – Շիմշատ Մուշից թագավորության մայրաքաղաքներից Արշամաշատն էր, որը միջնադարում մի ավան էր ու կոչվում էր Աչմուշատ (արար. Շիմշաթ): (Իրն ալ-Ասիր, էջ 383):

74 Ջորրորդ Արմինիա – Տե՛ս Խալիֆա իրն Խայյաթ, ծնթգր. 68:

75 Կոստանդին բռնակալ – Կոստանդին Ե Բյուզանդիայի կայսր (741-775):

76 Կամախ – Տե՛ս Խալիֆա իրն Խայյաթ, ծնթգր. 73

77 Հաղիսատ ալ-Մաուսիլ – Տե՛ս Բալաղուրի, ծնթգր. 67:

78 Կարնո քաղաք – Արաբները Կարնո քաղաքը (Թեոդոսուպոլիս) կոչում էին Կալիկալա : Այս տեղանունը ծագում է ասորերեն Կալին կայա ձևից (ն-ի անկումով): (Իրն ալ-Ասիր, էջ 368):

79 Բագարատ Աչոտի որդի (Բակրաթ իրն Աչոթ, Խլաթի պատրիկ) – Աչոտի որդի Բագարատը Հայոց իշխան (826-851) : Շուտով, Արբասյան խալիֆայից ստացավ իշխանաց իշխան (պատրիկների պատրիկ) տիտղոսը: Նրան ենթակա էր ամբողջ Արմինիա (Հայաստան, Վիրք, Աղվանք, Շիրվան, Դերբենդ) նահանգը: 851-ին խարեությամբ ձերբակալվեց ու տարվեց Սամառա: (Իրն ալ-Ասիր, էջ 381):

80 Օթևան (մարհալա) – Սովորաբար մարհալան մի տարածություն է, որ ճամփորդն ի վիճակի է անցնել մեկ օրում, հետևաբար սա երկարության ճշգրիտ միավոր չէր և կախում ուներ թե տվյալ ճանապարհահատվածը կտրել-անցնելը ինչպիսի դյուրություն, կամ դժվարություն ուներ: Որոշ աչխարհագրագետների մոտ մարհալան 6-7 փարսախ է (այսինքն 36-42 կմ) , այլ դեպքերում այն հասնում է միջինը 8, 6 փարսախի (50 կիլոմետր): (Marhala (Ed.), EOI, CD-ROM, (VI: 558b)):

81 Ռուծափ (Ռուսաֆա) – Այս անունով բազմաթիվ բնակավայրեր կային մահմեդական աչխարհում, սկսած Անդալուսից մինչև Իրան: Տվյալ դեպքում խոսքը վերաբերում է Ռուսաֆաթ Հիշամ, կամ Ռուսաֆաթ ալ-Շամ բնակավայրին, որը գտնվում էր Սիրիայում՝ Եփրատից 30 կմ դեպի հարավ, որն իր մեջ ընդգրկում է ուխտատեղի, որտեղ նահատակվել էր սուրբ Սերգիուս (Սարգիս), որի պատճառով բյուզանդական չրջանում քաղաքը կոչվում էր Սերգիուպոլիս: (al-Rusafa, Manuela Marin, EOI, CD-ROM, (VIII: 629b)):

82 Կլավդին (Կալաուդիյա) ամրոց – Կալաուդիյա բերդը գտնվել է Մալաթիայի մոտ: Նրա բուն անունը եղել է Կլավդիա: Honigmann, Die Astrenze, S. 88, n. 2 (Իրն ալ-Ասիր, էջ 375):

83 Կուրակիր գետ – կամ Քուրաքիր, Մեյաս գետը, ներկայիս Թուխմախ-սու (Հակոբ Նալբանդյան, Արաբական աղբյուրներ, էջ 190):

84 Մանբիջ – Քաղաք Վերին Միջագետքում (Ջազիրա)՝ Հալերի ու Եփրատի միջև: (ՀՀՇՏԲ, հ. 3, էջ 683):

85 Դարբ ալ-Հադաս – Հադասի լեռնանցք: Տե՛ս Խալիֆա իրն Խայյաթ, ծնթգր. 18:

86 Հադասի բերդ – Տե՛ս Խալիֆա իրն Խայյաթ, ծնթգր. 18:

87 Հադասի լեռնանցք – Տե՛ս Խալիֆա իրն Խայյաթ, ծնթգր. 18

88 Քեսուն (Քայսում) – Բերդ, ամրոց, բերդաքաղաք Վերին Միջագետքում (ՀՀՇՏԲ, հ. 5, էջ 358):

89 Տյուք (Դուլուք) – Տյուք քաղաքը գտնվում է Մարաչից հարավ-արևելք, Այնթարից ոչ հեռու:

90 Ռաաբան – Ռաբան, բերդ և քաղաք Վերին Միջագետքում, Եփրատի չրջանում

(ՀՀՇՏԲ, հ. 4, էջ 431):

91 Զիրաթրա – Զապետրա. Տե՛ս Իրն Կուտայրա, ծնթգր. 13:

92 Ամորիոն (Ամմուրիյա) – Տե՛ս Իրն Կուտայրա, ծնթգր. 14:

93 Հիան Մանսուր – Քաղաք Եփրատագիրում (ներկայում Ադիյաման): (Adiyaman, F. Taeschner, EOI, CD-ROM, (I: 199b)):

94 Պարտավ (Բարդաա) – Տե՛ս Խալիֆա իրն Խայյաթ, ծնթգր. 12:

95 Ջորրորդ Արմինիա – Տե՛ս Խալիֆա իրն Խայյաթ, ծնթգր. 68:

96 Դվին (Դարիկ) – Դվինի արաբական Դարիկ անունը ծագում է ասորական Աղարին ձևից: Բառասկզբի ա-ն ընկել է, իսկ վերջին «ն» տառը դարձել է «յ»: Դվինը Դ-ԺԳ դարերում Առաջավոր Ասիայի գլխավոր առևտրական հանգույցներից մեկն էր և Հայաստանի մայրաքաղաքը Դ-Ժ դարերում, մինչև որ իր տեղը դիջնց Անիին: (Իրն ալ-Ասիր, էջ 369):

97 Շիրակր, Տայքը և Բագրևանդը – Շիրակ և Տայք տեղանունները արաբ մատենագիրները չատ հաճախ են միասին հիչատակում, որպես մեկ տեղանուն: Գրվում է Սիրաջթայր, որը կետերի չփոխությամբ (հետևաբար նաև տառերի փոփոխությամբ) արդյունք է:

Այս չրջանները, ինչպես նաև Բագրևանդը (Բաղրավանդ) միասին են հիչատակվում հավանաբար իրրև (տարբեր ժամանակներում) Բագրատունիներին պատկանած կալվածներ (Իրն ալ-Ասիր, էջ 369):

98 Երրորդ Արմինիա – Արաբ պատմիչներն ու աչխարհագրագետները Արմինիա նահանգը կամ ոստիկանությունը բաժանում են չորս մասի: Առաջին Արմինիան հիմնականում ընդգրկում էր Աղվանքը, մերձկասպյան չրջանները (Շիրվան) և Դերբենտը, երկրորդ Արմինիան՝ Վիրքը, իսկ երրորդ և Ջորրորդ Արմինիաները ընդգրկում էին բուն Հայաստանը: Այս ամենով հանդերձ պատմական Մեծ Հայքի որոշ հարավային և արևմտյան չրջաններ դուրս էին մնում Արմինիա նահանգի սահմաններից, ընդգրկվելով Խալիֆայության այլ՝ Ջազիրա և Ատրպատական նահանգների, կամ Բյուզանդական կայսրության մեջ: Մի կարճ ժամանակահատված, 8-րդ դարի սկզբին, Արմինիայի վարչական ենթակայության տակ էր նաև Աբխազիան, բայց հետո այն անջատվեց Խալիֆայությունից: (Тер-Гевондян, Армения, стр. 156-157):

99 երկրորդ Արմինիա – Տ'ես ծնթգր. 98

100 Սիսական (Սիսաջան) – Արաբական աղբյուրները Սյունիք նահանգը միչտ գիտեն Սիսական (Սիսաջան) ձևով: (Իրն ալ-Ասիր, էջ 369):

101 Աղվանք (Առան) – Տե՛ս ծնթգր. 98:

102 Առաջին Արմինիա – Տե՛ս ծնթգր. 98:

103 Արմինիակուսի տեր – Արմինիակուսը կամ Արմինիակը համապատասխանում է բյուզանդական Արմենիակների բանակաթեմին: Ահա թե ինչ է նչում աչխարհագրագետ Յակուտը խոսելով Արմինիակի սահմանների մասին «Ռուս» հոդվածում. «Արմինիակ նահանգը, որի սահմաններն են, առաջին՝ Ափյաջունիան (Պափլագոնիա), երկրորդը՝ Բուքելարը, երրորդը՝ Խարչանան և չորրորդը՝ Ջալաղիա և Սև ծով: Մատատեգոսի բնակավայրն է Ամասիայի բերդը.. »: (Հակոբ Նալբանդյան, Արաբական աղբյուրներ, էջ 74):

104 Շարուան – Շիրվան:

105 Բալյական – Տե՛ս Խալիֆա իրն Խայյաթ, ծնթգր. 15:

106 Կապադակ (Կարայա) – Բուն Աղվանքի մայրաքաղաքը:

107 Դրունք Ալանաց (Բար ալ-Լան) – Տե՛ս Խալիֆա իրն Խայյաթ, ծնթգր. 55:

108 Դարբանդ – Տե՛ս Խալիֆա իրն Խայյաթ, ծնթգր. 34:

109 Խոսրով Անուչիրուան – Տե՛ս Աբու Յուսուֆ, ծնթգր. 6:

110 Ալ-Սիյասիջին – Սիսաջանի (Սիսականի, Սյունիքի) բնակիչ:

111 Սուղդաբիլ – Թիֆլիսի դիմաց Կուրի ձախ ափի վրա, հետագայում մոռացված վայր: Այդ քաղաքը հիշվում է վրացական աղբյուրներում (Քարթլիս-Ցխովրերա) Սուրու Գարիլ անվան տակ: Ներկայիս Հավլաբար թաղամասում է: (Հակոբ Նալբանդյան. Արաբական աղբյուրներ, էջ 133):

112 Շահապտնս (Շահաբունս) – Շահապնս, կամ Շահապոնք – Բերդ Մեծ Հայքի Սյունիք աշխարհի ձահուկ գավառում (ՀՀՇՏԲ, հ. 4, էջ 51):

113 Թուրքաց թագավոր – Խաղարների խաքանը:

114 Սարիր, Ֆիյան, Թարարսարան, Լաքս (Լեզգիներ), Մասքութք, Լիրան, Շաբուան, Բուխխ, Զարիքիրան – Սրանք բոլորը կովկասյան լեռների վրա և գրանցից հյուսիս (բացառությամբ Շաբուանի), կասպից ծովին հարող մասերում գտնվող ցեղերի, կամ ցեղախմբերի անվանումներ են, որոնք հիմնականում գրաղեցնում էին ներկայիս Դաղստանը և նրան հարող տարածքները: Իսկ հիշատակվող թագավորներն իրականում ցեղապետեր, կամ փեղոպներ էին (Վ. Տ. -Ղ.):

115 Կայի Կալա – Կարնո քաղաք: Տե՛ս Բալաղուրի, ծնթգր. 78 :

116 Սամանդար – Սամանդարը խազարների կարևոր քաղաքներից էր, մի ժամանակ նաև մայրաքաղաք: Գտնվում էր ներկայիս Ղրղյար քաղաքի տեղում: (Khazar, W. Barthold, P. B. Golden, EOI, CD-ROM, (IV: 1172a)):

117 Մավրիանոս (Մաուրիան ալ-Ռումի) – Մավրիանոս հույն զորավարը Հայաստան եկավ այն բանից հետո, երբ 640 թվականի արաբական արշավանքին դիմադրող Թեոդորոս Ռշտունին պաշտոնապես Հայոց իշխան ճանաչվեց: Նրա հարաբերությունները Հայոց իշխանի հետ խիստ տրված էին և, ի վերջո, նա զուրս քշվեց Հայաստանից: (Իբն ալ-Ասիր, էջ 368–369):

118 Գուսան (Քուսան ալ-Արմանի) – Տե՛ս Ալիֆա իբն Խայյաթ, ծնթգր. 67:

119 Մարդաղի (Մարբալա) – Մարբալան հավանաբար Մարդաղի տեղանվան աղավաղումն է:

120 Սիփան (Սիբանա) – Սա հավանաբար Սիփան սարն է, կամ նրա չրջակա գավառը: (Тер-Гевондян, Армения, стр. 41):

121 Տաոնխի (Թիոխիս) լիճ – Տաոնխի (Թիոխիս) լիճը Վանա լիճն է, որից հանվող տաոնես ձուկն արաբների մոտ չատ Հայտնի էր: Ծնայանները պետականացրին լիճը և նրա ձկների հասույթը: Արրասյանների օրոք տաոնխը մտնում էր Հայաստանի բնահարկի մեջ, ընդ որում տարեկան վերցվում էր 20 հազար տաոնես: Երեմյան, Աշխարհացույց, էջ 37 (Տե՛ս Իբն ալ-Ասիր, էջ 371):

122 Արտաչատ (Արդիսաթ) – Արդիսաթ, կամ Արդաչաթ, այսպես են արաբ պատմիչները հիշատակում Հայոց հին մայրաքաղաք Արտաչատը, որն այդ ժամանակ այնքան նվազ բնակիչ ուներ, որ կարող էր և գյուղ կոչվել:

123 Որդան կարմրի գյուղ (Կարիատ ալ-Կիրմիզ) – Կիրմիզի գյուղ: Կիրմիզ նշանակում է կարմիր: Պատմիչները նկատի ունեն որդան կարմիրը, իսկ Արտաչատը կոչվում էր Կիրմիզի գյուղ: (Իբն ալ-Ասիր, էջ 369):

124 Աբբաղ գետ – Արաբներն այսպես էին կոչում Արաքսի վտակ Մեծամոր գետը:

125 Ջատ ալ-Լուջում (սանձերի վայր) – Այս վայրի անվանման բացատրությունն է տալիս Իբն ալ-Ասիրը «Այսպես է կոչվել, որովհետև մահմեդականները հանել էին իրենց ձիերի սանձերը և [այդ ժամանակ] վրա էին հասել Հոռոմները, նախքան սրանք կհասցնեին սանձերը դնել: Այսուհանդերձ սրանք սանձերը դրել, պատերազմել ու հաղթել են նրանց»: (Իբն ալ-Ասիր, էջ 55):

126 Քուստի Փառնես (Քուսփարնիս) – Գավառ Մեծ Հայքի Արցախ աշխարհում: Ս. Երեմյանը Քուստի-ն համարում է առանձին գավառ և նույնացնում է ՀՄՍՀ Շամշադինի չրջանի հետ: Ուրիչները Քուստիփառնեսը նույնացնում են Ուտիքի Գարդմանաձոր գավառին: (ՀՀՇՏԲ, հ. 5, էջ 450):

127 Քիսալ – Բնակավայր Հավանաբար Արցախի հյուսիսում:

128 Հունարակերտ (Ունան) – Քաղաք Մեծ Հայքի Ուտիք աշխարհում, Կուրի աջ ափին: Արամի գետաբերանից ոչ հեռու (ՀՀՇՏԲ, հ. 3, էջ 464):

129 Սամցխե (Սամասխի) – Բերդ Մեծ Հայքի Գուգարք աշխարհում: (ՀՀՇՏԲ, հ. 4, էջ 490):

130 Գաբդման (Ջարդաման) – Գարդմանք, պատմական գավառ և ամրոց Ուտիք նահանգում:

131 Քուստի (Քուստասջի) – Քուստի, կամ Քուստաջի, գավառ Մեծ Հայքի Արցախ աշխարհում, Սևանա լճից արևելք: (ՀՀՇՏԲ, հ. 5, էջ 450):

132 Շավչեթ (Շաուչխա) – Գավառ, չրջան Մեծ Հայքի Գուգարք (կամ Տայք) աշխարհում: Տարածվում էր Ճորոխ գետի աջակողմյան՝ Իմերխևի վտակի վերին հոսանքի չրջանում (ՀՀՇՏԲ, հ. 4, էջ 81):

133 Կղարջք (Կայարջիտ) – Գավառ Մեծ Հայքի Գուգարք աշխարհում, Խաղտիքի սահմանների մոտ, Ճորոխ գետի աջ ափին: (ՀՀՇՏԲ, հ. 3, էջ 157):

134 Թռեղք (Տարիայիտ) – Գավառ Մեծ Հայքի Գուգարք աշխարհում, Կուր գետի վերին հոսանքի աջակողմյան չրջանում, Գուգարքի 9 գավառներից 5-րդը: (ՀՀՇՏԲ, հ. 2, էջ 485):

135 Ջավախք (Ջավախիթ) – Գավառ Մեծ Հայքի Գուգարք աշխարհում: Փռված է Ախալքալաք գետի ավազանում: (ՀՀՇՏԲ, հ. 4, էջ 389):

136 Ալանաց դուռ (Բար Ալլան, Բար ալ-Լան) – Տե՛ս Ալիֆա իբն Խայյաթ, ծնթգր. 55:

137 Մանարք (Սաննարիյա) – 8-րդ դարում Վիրքի մի մասը կազմող Կախեթիայում առաջացել էր ինքնուրույն իշխանություն, որն էթնիկական առումով բազմացեղ կազմ ուներ: Սրանցից հատկապես աչքի էին ընկնում ոազմատենչ լեռնական ժողովուրդ ծանարները, կամ ինչպես արաբ մատենագիրներն են կոչում «ալ-սաննարիյա»: Սրանք անդադար ապստամբում էին արաբական տիրապետության դեմ, ուստի խալիֆայության դիրքերը Կախեթիայում, մանավանդ Մանարքում, չատ թույլ էին: (Тер-Гевондян, Армения, стр. 131).

138 Դիդոյք (Դուդանիյա) – Դուդանիյան Կախեթիայից հյուսիս գտնվող ցեղերի անունն է: (Իբն ալ-Ասիր, էջ 374):

139 Տրտու (Սարսուր) գետ – Գետ Կուրի ավազանում, նրա աջ վտակը: Այժմ Թարթառ (ՀՀՇՏԲ, հ. 5, էջ 132):

140 Շակաշեն (Շակաշին) – Գավառ Մեծ Հայքի Ուտիք աշխարհում, երբեմն համարել են նաև նահանգ: Ընդգրկում է Կուր գետի միջին հոսանքի աջափնյակը Կուրակ և Շամխոր գետերի միջև ընկած տարածքը: (ՀՀՇՏԲ, հ. 4, էջ 49):

141 Մեծ Կուենք (Միակուան) – կամ Մեծկվենք – Գավառ Մեծ Հայքի Արցախ աշխարհում: Տեղադրվում է Թարթառ գետի վերին հոսանքի ավազանում, Մոսվ լեռան հարավային և հարավարևելյան կողմերում, Թարթառ գետի հովտում: (ՀՀՇՏԲ, հ. 3, էջ 772):

142 Ուտի (Ուդ) – Ուտի, կամ Ուտի առանձնակ, գավառ Մեծ Հայքի Ուտիք աշխարհում: Տարածվում էր Թարթառի հովտում, նրա ստորին հոսանքի չրջանում: (ՀՀՇՏԲ, հ. 5, էջ 206):

143 Մեծ Իրանք (Միսրիան) – կամ Մեծ Առանք – Գավառ Մեծ Հայքի Արցախ աշխարհում: (ՀՀՇՏԲ, հ. 3, էջ 771):

144 Հարճլանք (Հարջալիան) – Գավառ Մեծ Հայքի Արցախ աշխարհում, նրա հարավ-արևելյան սահմանի մոտ: (ՀՀՇՏԲ, հ. 3, էջ 389):

145 Տրի (Տիար) – Գավառ Մեծ Հայքի Ուտիք աշխարհում: (ՀՀՇՏԲ, հ. 5, էջ 130)

146 Բաղասական (Բալասաջան) – Գտնվում է Աղվանքում: Բառը պարսկերեն է և

հիշվում է «դաչտ ի Բայասական»: Այժմյան Մուղանի և Միլի դաշտերը, որտեղ գտնվել է Բայլական-Հին Փայտակարան քաղաքը: (Հակոբ Նալբանդյան, Արաբական աղբյուրները, էջ 171):

147 Շամքոր (Շամքու) – Բերդ Մեծ Հայքի Արցախ աշխարհի Փառիսոս գավառում, Շամխոր գետի ձախ ափին: (ՀՀՇՏԲ, հ. 4, էջ 75):

148 Սևորդիք (Սիավարդիյա) – Սևորդիք կոչված հայկական ցեղերը, որոնք ապրում էին Ուտիք նահանգում, արաբ մատենագիրների մոտ կոչվում են Սիյավարդիյա: Ըստ արաբ պատմիչների, Ը դարի վերջում նրանք կործանել են Շամքոր քաղաքը: Կոստանդին Միրանածնի «Արարողությանց մասին» գրքում հիշատակվում է, որ Ժ դարում Բյուզանդական արքունիքը նրանց հետ ևս (որպես Բագրատունյաց թագավորության մաս կազմող իշխանության) նամակագրություն ուներ: Տե՛ս Կոստանդին Միրանածին, էջ 151: (Իրն ալ-Ասիր, էջ.370):

149 Բուղա – Բուղա ալ-Քարիրը, կամ ավագ Բուղան թյուրք զորավար էր, որ ծառայում էր Աբբասյան խալիֆաներին: Նա հռչակվեց մի չարք արշավանքներում ընդդեմ ապստամբ նահանգների: 844–845-ին՝ դեպի Մադինա, 851-852-ին՝ Հայաստան և ընդդեմ Բյուզանդիայի՝ 857-ին: (Bugha al-Kabir, D. Sourdel, EOI, CD-ROM, (I: 1287a)).

150 Բայդիջ – Ըստ Հ. Նալբանդյանի՝ Բերդիկ, որի մասին 13-րդ դարի աշխարհագրագետ Յակուտը հաղորդում է հետևյալը «Քաղաք Ատրպատականի ծայրամասում, այստեղից մինչև Պարտավ 14 փարսախ է: Շրջապատված է մի գետի ջրով, որ իր կարևորությամբ մոտենում է Տիգրիսին և կոչվում է Կուր»: (Հակոբ Նալբանդյան, Արաբական աղբյուրները, էջ 35):

151 Խայդան – Ամրոց պատմական Հայաստանի հյուսիս-արևելյան սահմանագլխին, Կասպից ծովի արևմտյան ափամերձ շրջանում: (ՀՀՇՏԲ, հ. 2, էջ 638):

152 Բայանջար գետ – Տե՛ս Խալիֆա իբն Խայյաթ, ծնթգր. 14:

153 «Ալլահ աքբար» կոչը – Արար. նշանակում է «Ալլահն ամենամեծն է», կամ «Աստված մեծ է»:

154 Հադիս – Նշանակում է «նորություն», «լուր», «պատմություն»: Հադիսները ավանդություններ կամ պատմություններ են Մուհամմադ մարգարեի խոսքերի ու արարքների մասին, որոնք վերաբերում են մահմեդական համայնքի կյանքի կրոնա-իրավական տարբեր կողմերին: Հադիսները համարվում են, Ղուրանից հետո, մահմեդական իրավունքի երկրորդ աղբյուրը: (Ислам, энц. словарь, стр. 262-263):

155 Ալի իբն Աբու Թալիբ – Տե՛ս Աբու Յուսուֆ, ծնթգր. 22:

156 Օսման իբն Վալիդ իբն Ուկբա իբն Աբի Մուայթ – Սա կառավարիչ է եղել հավանաբար 704 թվականին: (Տեր-Ղևոնդյան, Արմ. ոստիկանների ժամանակագրություններ):

157 Ադի իբն Ադի իբն Ամիրա ալ-Քինդի – Տե՛ս Խալիֆա իբն Խայյաթ, ծնթգր. 47:

158 Ջառահ իբն Աբդալլահ ալ-Հաքամի – Տե՛ս Խալիֆա իբն Խայյաթ, ծնթգր. 48:

159 Սամուր գետ – Գետ, որը գտնվում է Դերբենդից հյուսիս, այժմյան Դաղստանի հարավում: (Հակոբ Նալբանդյան, Արաբական աղբյուրներ, էջ 183):

160 Վարդանակերտ (Վարսան) – Տե՛ս Խալիֆա իբն Խայյաթ, ծնթգր. 52:

161 Արդարիլի նահանգ – Տե՛ս Խալիֆա իբն Խայյաթ, ծնթգր. 60:

162 Քիսայ – Տե՛ս Բայադուրի, ծնթգր. 127:

163 Ղուլամ – Արական սեռի մանկահասակ ստրուկ:

164 Տուման և Սինդան – Կովկասյան ցեղերով բնակեցված երկրամասեր Կովկասյան լեռների և Սամուր գետի միջև:

165 Խարիջիները (չուրատ) – Խարիջիական չարժման առաջացման առիթը 657 թվականի հուլիսին տեղի ունեցած Սիֆֆինի ճակատամարտի ժամանակ (Տե՛ս Սիֆֆինի ճակատամարտ) Ալի իբն Աբու Թալիբի առաջարկն էր Օսման խալիֆայի սպա-

նության պատճառով ծագած վեճը լուծել հաշտարար դատավորների միջոցով, որոնք դատավճիռ պիտի տային Համաձայն Ղուրանի: Ալիի բանակի մեծամասնությունը ընդունեց այս տեսակետը, մինչդեռ կովողների մի խումբ՝ հիմնականում Թամիմ ցեղից, բմրոստացան առաջարկի դեմ, հայտարարելով, որ ինչպես կարող են մարդիկ դատել աստվածային խոսքի մասին: Նրանք պահանջում էին չարունակել կռիվը հայտարարելով, որ մարդու դատը Ալին գերադասեց Այլահի դատից: Նկատի ունեին այն, որ Այլահը հաղթանակը տվեց Ալիին, իսկ նա համաձայնվեց երկը դատավոր ընտրելու առաջարկին: Նրանք թողեցին Ալիի բանակն ու հեռացան: Այնուհետև սրանց միացան նաև ուրիշներ Ալիի բանակից, որտեղից էլ ծագեց «դուրս եկողներ» «անջատվողներ»՝ խարիջիներ բառը: (Kharidjites, G. Levi Della Vida EOI, CD-ROM, (IV: 1074b)):

166 Յունան – Տեղադրվում է այժմյան Ադդամի մոտերքում, իսկ 13-րդ դարի աշխարհագրագետ Յակուտը նշում է «Վայը Պարտավից յոթ փարսախ հեռավորության վրա: Այնտեղից մինչև Բայլական յոթ փարսախ հեռավորություն է» (Հակոբ Նալբանդյան, Արաբական աղբյուրները, էջ 121 և 120):

167 Իսհակ իբն Մուսլիմ – Արմինիայի կառավարիչ (745– 749/750) Իսհակ իբն Մուսլիմ ալ-Ուկայլի, ըստ Թաբարիի գտնվել է Հայաստանում մինչև 132Հ. թ. (749–750). Tabari, VII, 447: Հիշվում է Արմինիա մակագրությամբ անթվական մի դրամի վրա: Սրա օրոք ծագեց 747–750 թթ. ապստամբություններ Հայաստանում: (Տեր-Ղևոնդյան, Արմ. ոստիկանների ժամանակագրություններ):

168 Յադիդ իբն Ուսայդ ալ-Սուլամի – Հայաստանի կառավարիչ 752–754 թվականներին: Նշանակվեց 134 Հ. թ. (751–752). Yaqubi, II, 358, Tabari, VII, 465: Ղևոնդի մոտ կոչվում է Եղիդ որդի Ուսադի: Նրա մայրն էր Սիսականի պատրիկի դուստրը: Նա Հայոց իշխան նշանակեց Սահակ (Իսահակ) Բագրատունուն, Ղևոնդ, 128: (Տեր-Ղևոնդյան, Արմ. ոստիկանների ժամանակագրություններ):

169 Մուշեղ (Մուշայիլ ալ-Արմանի) – Մուշեղ Մամիկոնյան, 774–775թթ. ապստամբության դեկավարը:

170 Օսման իբն Ումարա իբն Խուրայմ – Արմինիայի կառավարիչ է եղել 783–785 թվականներին: Թեև պատմիչը նշում է, որ նա իշխեց Հասան իբն Կահթաբայից հետո, բայց նրանց կառավարման միջև 8 տարի կա, որի ընթացքում կառավարել են ուրիշներ: Օսման իբն Ումարա իբն Խուրայմը հիշվում է դրամների վրա: Նրա օրոք էր, որ Տաճատ Անձևացին դարձավ Հայոց իշխան. Ղևոնդ, 159: (Տեր-Ղևոնդյան, Արմ. ոստիկանների ժամանակագրություններ):

171 Ռաուհ իբն Հաթիմ ալ-Մուհալլիբի – Արմինիայի կառավարիչ (785–786). Հիշվում է դրամի վրա: Նրա նշանակումից անմիջապես հետո մեռավ Մահդի խալիֆան (4 օգոստոսի, 785), Ղևոնդ, 161: (Տեր-Ղևոնդյան, Արմ. ոստիկանների ժամանակագրություններ):

172 Խուզայմա իբն Խազիմ – Խուզայմա իբն Խազիմ ալ-Տամիմին (786–787) հիշվում է դրամների վրա: Նրան նշանակեց Հարուն Հենց որ դարձավ խալիֆա և սա իշխեց մեկ տարի երկու ամիս. Yaqubi, II, 426: Ըստ Ղևոնդի նա ոստիկան էր դեռ Մուսա ալ-Հադի խալիֆայի օրոք: Հավանաբար այդ ժամանակ Խուզայման տեղակալ էր: (Տեր-Ղևոնդյան, Արմ. ոստիկանների ժամանակագրություններ):

173 Յադիդ իբն Մադհաղ ալ-Շայբանի – Տե՛ս Դինավարի, ծնթգր. 18:

174 Ուրայդալլահ իբն ալ-Մահդի – Հյուսիսի փոխարքա 788–791 թվականներին: Հիշվում է դրամների վրա: Նշանակվեց 172 Հ. թ. Tabari, VIII, 236: Ղևոնդը հիշում է, որ Հարունի (Ահարոն) ովրեղբայր եղբայրն ստացավ «զԱտրպատական և զՀայս հանդերձ Վրօք և Ադուանիւք». Ղևոնդ, 166: (Տեր-Ղևոնդյան, Արմ. ոստիկանների ժամանակագրություններ):

175 Ֆադլ իբն Յահիա – ալ-Ֆադլ իբն Յահիա իբն Խալիդ ալ-Բարմաքին 792–795

թվականներին փոխարքա էր: Հիշվում է դրամների վրա: Ըստ Թաբարիի նշանակվեց Արմինիայի, Ատրպատականի, Ջիրայի, Թաբարիստանի և այլ նահանգների փոխարքա 176 հ. թ. (792-793). Tabari, VIII, 242: (Տեր-Ղևոնդյան, Արմ. ոստիկանների ժամանակագրություն):

176 Սաիդ իբն Սալիմ – Հավանաբար Սաիդ իբն Սալմ իբն Կուտայբա ալ-Բահիլին է, որը Արմինիայի կառավարիչ է եղել 798-799 թթ. (Տեր-Ղևոնդյան, Արմ. ոստիկանների ժամանակագրություն):

177 Մուհամմադ իբն Յազիդ իբն Մազիադ - Հավանաբար Մուհամմադ իբն Յազիդ իբն Մազիադ ալ-Շայբանին է, որը Արմինիայի կառավարիչ է եղել 802-803 թթ. (Տեր-Ղևոնդյան, Արմ. ոստիկանների ժամանակագրություն):

178 Հասան իբն Ալի ալ-Բաղդիսի - Արմինիայի կառավարիչ 833-835 թվականներին: Հիշվում է դրամի վրա: Ըստ Յակուբիի նրան նշանակեց Մամունը. Yaqubi, II, 464: (Տեր-Ղևոնդյան, Արմ. ոստիկանների ժամանակագրություն):

179 Սմբատի որդի Սահլ (Սահլ իբն Սինբաթ) - Տե՛ս Դինավարի, ծնթգր. 23:

180 Հայդար իբն Քաուս ալ-Աֆշին – Նշանակվեց Արմինիայի ու Ատրպատականի կառավարիչ 220 հ. թ. (835)Tabari, IX, 11: Պայքարեց ու հաղթեց Բաբեկին: Մնաց մինչև 225 հ. թ. (839-840). Tabari, IX, 104. (Տեր-Ղևոնդյան, Արմ. ոստիկանների ժամանակագրություն):

181 Յուսուֆ իբն Մուհամմադ ալ-Մարուազի - Արմինիայի կառավարիչ 851-852: Նշանակվել է 226 հ. թ. (850-851). Tabari, IX, 186: Գերեց իշխանաց իշխան Բագարատ Բագրատունուն և սպանվեց հայ ապստամբների ձեռքով Մուշում. Թովմա, 120: Ըստ Յակուբիի, սպանվեց 237 հ. թ. Yaqubi, II, 489: Թաբարին հիշում է սպանության ամիսը Ռամադան 237 հ. թ. (26 փետրվարի – 26 մարտի 852). Tabari, IX, 187: (Տեր-Ղևոնդյան, Արմ. ոստիկանների ժամանակագրություն):

182 Աչոտի որդի Բագարատ - Բագարատ Աչոտի որդի: Տե՛ս Բալազուրի, ծնթգր. 79:

183 Սամառա - Տե՛ս Դինավարի, ծնթգր. 19:

184 Բռնի տիրացողներ (մուտաղալլիբ) - Ապստամբ, բռնացող:

185 Ալ-Ալա իբն Ահմադ - Ալ- Ալա իբն Ահմադ ալ-Ազդին Արմինիայի կառավարիչ է եղել 865-866 թվականներին: (Տեր-Ղևոնդյան, Արմ. ոստիկանների ժամանակագրություն):

186 Տարոն (Թարուն) - Տարոնը այս շրջանում բացառիկ նշանակություն ստացավ, քանի որ Հայաստանի և ամբողջ Արմինիայի իշխանաց իշխանի գլխավոր տիրույթն էր և այստեղ էր նրա նստավայրը: (Իբն ալ-Ասիր, էջ 382):

187 Բուղա ալ-Քաբիր (ավագ) – Տե՛ս Բալազուրի, ծնթգր. 149:

188 Բաղեչ (Բազլիս) - Տե՛ս Բալազուրի, ծնթգր. 59:

189 Մուսա իբն Զուրարա - Մուսա իբն Զուրարան Արզնի և Բաղեչի արար ամիրն էր: 850-ին ընդհարվեց Բագարատ Բագրատունու և Աչոտ Արծրունու ուժերի հետ ու պարտվեց, իսկ 851-ին դգալով խալիֆայության կողմից գալիք վտանգը, միացավ հայ ապստամբներին: (Իբն ալ-Ասիր, էջ 381):

190 Գագիկի որդի Համազասպի որդի Աչոտ - Աչոտ որդի Համզայի, այսինքն Համազասպի: Սա Վասպուրականի իշխան Աչոտ Արծրունին է, որը Բագարատ Բագրատունու հետ 850-852 թվականների ապստամբության երկու գլխավոր դեկավարներից էր: Նկան ամրոցում համառ դիմադրությունից հետո, հանձնվեց արաբներին և տարվեց Սամառա: 859 –ին վերադարձավ Վասպուրական, վերստացավ իր հոդատիրական իրավունքները և իշխեց մինչև մահը (875): (Իբն ալ-Ասիր, էջ 382):

191 Աղրակ (ալ-Բակ) - Աղրակը Արծրունիների տոհմական ժառանգական ոստանն էր: Այստեղ էր նրանց Ադամակերտ (Հադամակերտ) կենտրոնը և տոհմական

գերեզմանոց Ս. Խաչ վանքը: (Իբն ալ-Ասիր, էջ 382):

192 Ամր իբն ալ-Աս – Տե՛ս Վակիդի, ծնթգր. 16:

193 Ֆուսթաթ – Արաբ նվաճողների կողմից Եգիպտոսում հիմնված առաջին քաղաքը: Այն հիմնվել է Նեղոս գետի արևելյան ափին Հունա-ղպտական Բաբելոն քաղաքի հարևանությամբ: Ֆուսթաթ բառի ծագումը հստակ չէ, հավանական իմաստներից մեկն է «վրան», քանի որ համարվում է, որ քաղաքը ստեղծվեց այն վայրում, որտեղ զորավար Ամր իբն ալ-Ասի վրանն էր խփված: Բացի այդ ինքը՝ Ֆուսթաթն էլ սկզբում բնդամենը ռազմական ճամբար էր և հետագայում վերածվեց ընդարձակ քաղաքի:

Ներկայում թե՛ Ֆուսթաթի և թե՛ Հին Բաբելոնի տարածքը մաս են կազմում Կահիրեի, որպես նրա մի թաղամասը: (al-Fustat, J. Jomier, EOI, CD-ROM, (II: 957b)):

194 Այն Շամս (Հելիոպոլիս) - Քաղաք է Եգիպտոսում: Հին եգիպտական անունը «Ոն» էր, որին հույները կոչեցին Հելիոպոլիս, քանի որ հայտնի էր Արևի տաճարով, վերջապես արաբները այն թարգմանաբար կոչեցին Այն Շամս (Արևի աչքը, կամ Արևի աղբյուրը): (Ayn Shams, C. H. Becker, EOI, CD-ROM, (I: 787b)):

195 Վարդանի չուկա (Սուկ Վարդան) - Հին Կահիրեում (Ֆուսթաթ) գտնվող չուկան, որ Վարդան Հայի անունով է կոչվում:

Արար պատմիչները Վարդան ալ-Ռումի (Հռոմի Վարդան) անունով են նրան կոչում, որովհետև նա Հայաստանի բյուզանդական մասից էր ու նախապես ծառայել էր բյուզանդական բանակների մեջ: Հայ պատմիչներն ու բյուզանդացի Հեղինակները նրա մասին չեն խոսում:

Եգիպտոսի աչխարհակալ Ամր իբն ալ-Ասի ազատագրյալ գերին էր Վարդանը: Նա ընկերացավ Ամրին Եգիպտոսի զրավման ժամանակ, որպես նրա դրոչակակիրը, և գնահատվեց իր ռազմական ու վարչական գործունեությամբ: Ամրի մահից հետո Մուավիայի կողմից կարգվեց Եգիպտոսի Հարկապետ, բայց չուտով պաչտոնազուրկ արվեց: Բալազուրին ավանդում է, թե Մուավիան հրամայեց նրան ծանրացնել դպտիների վրա դրված հարկը, բայց Վարդանը մերժեց, պատճառաբանելով, թե չի կարելի այդ անել առանց խախտելու փոխադարձ համաձայնությամբ ստորագրված հաչտության պայմանագիրը:

Իբն Աբու ալ-Հաքամը հաղորդում է, թե Ֆուսթաթ քաղաքի մեջ Ամրը, իբրև ավատ, Վարդանին տվեց մի հողամաս, որը արար պատմագրի նկարագրածով ընդարձակ մի կալված էր:

Երբ Ամրը սկսեց կառուցել Ֆուսթաթը, Վարդանն օժանդակեց նրան. նա չինեց մի չուկա, որը կոչվեց իր անունով: (Հակոբ Նալբանդյան, Արաբական աղբյուրները, էջ 177-178):

196 Կիրաթ – Այն եգիպտոսում հավասար էր 1/16-րդ դիրհեմի: (Хинц, Меры и веса, стр. 12):

197 Հերակլի որդի Կոստանդին – Տե՛ս նաև Կոստանդին բռնակալ (Բալազուրի, ծնթգր. 75):

198 Մանուել – Տե՛ս Խալիֆա իբն Խայյաթ, ծնթգր. 11:

199 Սավադ - Տե՛ս Աբու Յուսուֆ, ծնթգր. 11:

200 Աբու Բաքր ալ-Սիդդիկ – Տե՛ս Աբու Յուսուֆ, ծնթգր. 33:

201 Հիրա - Տե՛ս Աբու Յուսուֆ, ծնթգր. 19:

202 Անսարներ – Նշանակում է «աջակիցներ, օգնողներ». այսպես են կոչվում այն մարդիկ, որոնք աջակցել են Մուհամմադին և նրա հետևորդն են եղել դեռևս Մեքքայում ու նրա հետ միասին գաղթել Մադինա: Երբեմն ասում են «Անսար ալ-Նաբի» մարգարեի աջակիցներ: (al-Ansar, W. Montgomery Watt, EOI, CD-ROM, (I: 514a)).

203 Կադիսիյա - Տե՛ս Դինավարի, ծնթգր. 10:

204 Ռուստամ – Սասանյան բանակի հրամանատարը Կադիսիյայի ճակատամար-

տում: Ռուստամը մարտում սպանվեց:

205 Բահուրասիր - ալ-Մադաին, Տիգրոն:

206 Պարսից Թագավոր Հաղկերտը - Խոսրո Հաղկերտ Գ-ի (632-651) մասին է:

207 Հուլուան - Հնագույն քաղաք Միջագետքի և Իրանի միջև: Այն գտնվում էր Բաբելոնիայի և Մարաստանի սահմանին: Հաղկերտ Գ-ը Կադիսիայի Հայտնի ճակատամարտում արաբներից պարտվելուց և Տիգրոնից իր արքունիքը դուրս բերելուց հետո, մի կարճ ժամանակ ապաստան գտավ Հուլուանում, նախքան դեպի արևելք հեռանալը: (Hulwan, L. Lockhart, EOI, CD-ROM, (III: 571b)):

208 Ջալուլա - Քաղաք Իրաքում (Բաբելոնիա): Գտնվում է Տիգրիսից արևելք: Դեպի Խորասան տանող գլխավոր ճանապարհի վրա գտնվող կայաններից մեկն էր: (Djalula, M. Streck, EOI, CD-ROM, (II: 405b)).

209 Ջալուլայի ճակատամարտ - Ճակատամարտ 637 թվականի վերջին, որի ժամանակ արաբները պարտության մատնեցին Սասանյաններին: (Djalula, M. Streck EOI, CD-ROM, (II: 405b)):

210 Խանիկին - Քաղաք է Իրաքում: Խալիֆայության ժամանակ ոչ մեծ քաղաք էր և գտնվում էր Բաղդադից Խորասան ճանապարհի վրա: (Khanikin, P. Schwarz, EOI, CD-ROM, (IV: 1024b)):

211 Ջիրալ - կամ Ջարալ. Տե՛ս Վակիդի, ծնթգր. 13:

212 Ջարիր - Տե՛ս Աբու Յուսուֆ, ծնթգր. 26:

213 Կաֆիդ (ցորենի) - Տե՛ս Արու Յուսուֆ, ծնթգր. 27:

214 Հաջջաջ - Տե՛ս Բալազուրի, ծնթգր. 32:

215 Միջիատան - Տե՛ս Վակիդի, ծնթգր. 12:

216 Ուչր - Ուչրը, այսինքն տասանորդը. հողահարկի թեթև տեսակն էր: Ուչր էին վճարում մահմեդական հողատերերը և սահմանամերձ չրջանների բնակիչները, ինչպես օրինակ, արաբաբյուղանդական Սահմանային գոտում: A. Grohmann, Ushr, Shorter Enc. of Islam, p. 610-611. (Իրն ալ-Ասիր, էջ 383):

217 Նիսֆ ուչր - Կես ուչր:

218 Նեհավենդ - Քաղաք Արևմտյան Իրանում, Զագրոսի լեռներում: Մտնում էր Ջիբալ նահանգի մեջ: Այս բնակավայրի մոտ՝ 642 թվականին տեղի ունեցավ ճակատամարտ, որը վերջնականապես որոշեց Սասանյան Իրանի ճակատագիրը: (Nihawand, V. Minorsky, EOI, CD-ROM, (VIII: 23a)):

219 Ռեյ - Տե՛ս Վակիդի, ծնթգր. 10:

220 Կումիա - Փոքրիկ չրջան միջնադարյան Իրանում, որն ընկնում է Ալբուրս լեռնաչղթայից հարավ, այն գտնվում է Ռեյ-Խորասան ճանապարհի վրա: (Kumis C. E. Bosworth, EOI, CD-ROM, (V: 377a)):

221 Ղազի - Արաբերեն նշանակում է մարտիկ, դիվոր, կամ ձգտում ունեցող: Նկատի է առնվում «ռազդիայի» կամ «ղազվի», այսինքն «անհավատների դեմ արշավանքի» ակտիվ մասնակիցներին: Հետագայում այս բառը վերաճեց պատվավոր տիտղոսի: (Ghazi, I. Melikoff, EOI, CD-ROM, (II: 1043b)):

222 Սարատ - Սարահ կամ Սարատ չրանցքը թափվում էր Տիգրիս գետը և հենց այդ տեղում էր կառուցվել Բաղդադը (Իրն ալ-Ասիր, էջ 376): Հավանաբար տվյալ դեպքում խոսքը այդ գետի վրա եղած նույնանուն մի բնակավայրի մասին է: (Վ. Տ.-Ղ.):

223 Շիզ - Հին իրանական ատրուչանի և բնակավայրի անուն, որը գտնվում է Ուրմիա լճից հարավ-արևելք՝ Ատրպատականում, ենթադրաբար համարվում է Զրադաշտի ծննդավայրը: (Shiz, C. E. Bosworth, EOI, CD-ROM, J. Ruska, (IX: 490a)):

224 Բաղասական (Բալասաջան) - Տե՛ս Բալազուրի, ծնթգր. 146:

225 Մուղան (Մուկան) - Գավառ Մեծ Հայքի Արցախ աչխարհում: (ՀՀՇՏԲ, հ. 3, էջ 888):

226 Խնաղ - Որևէ վկայություն, կամ ավանդություն փոխանցելու համար վերջինիս իսկությունը փաստելու համար թվարկվող հեղինակությունների անվանաչարք: Հիջրայի առաջին դարում դրա անհրաժեչտությունը մեծ չէր, բայց հետագայում խնաղը ավելի ու ավելի կարևոր դարձավ: (Isnad, J. Robson, EOI, CD-ROM, (IV: 207a)):

227 Մուղան - Տե՛ս Բալազուրի, ծնթգր. 225:

228 Վարդանակերտ - Տե՛ս Խալիֆա իբն Խայյաթ, ծնթգր. 52:

229 Բարեկի ապստամբություն - Տե՛ս Դինավարի, ծնթգր. 20:

230 Բարզանդ - Մի գյուղաքաղաք է Արդաբիլի չրջանում: (Barzand, R. N. Frey, EOI, CD-ROM, (I: 1072a)):

231 Մարաղա - Ատրպատականի հին մայրաքաղաքը: Շնորհիվ առատ ջրամատակարարման ունի առատ բուսականություն: Գտնվում է Ուրմիա լճից 20 մղոն հեռավորության վրա: (Maragha, V. Minorsky, EOI, CD-ROM, (VI: 498a)):

232 Մարանդ - գյուղաքաղաք է Ատրպատականում, Թավրիզից 40 մղոն դեպի հյուսիս, Թավրիզից դեպի Արաքս գետը տանող ճանապարհի կեսին: (Marand, V. Minorsky, [C. E. Bosworth], EOI, CD-ROM, (VI: 504a)):

233 Բուղա Կրտսեր - Բուղա ալ-Սաղիր (Բուղա Կրտսեր) կամ Բուղա ալ-Շարաբի (Բուղա Բաժակակիր): Թյուրք զորավար, որին պետք չէ չփոթել նույն Բուղա անունով իրեն ժամանակակից զորավարի հետ, որը արշավեց Հայաստանի վրա: Բուղա Կրտսերը Մուտավաքքիլի հրամանով կռվեց Ատրպատականի ապստամբների դեմ, սակայն հետո մեղադրեց խալիֆային այն բանում, որ նա իրը փորձում էր սահմանափակել թյուրք պահակազորի ազդեցությունը և, ի վերջո, կազմակերպեց նրա սպանությունը: Դրանից հետո էլ արքունիքում ունենալով հզոր դաչնակիցներ, նա պահպանում էր իր հզորությունը, սակայն Մուտավաքքիլի որդին՝ ալ-Մուտազդ պահեստում էր 866 թվականին բազմելով գահին, մտադրվեց հաչվեհարդար տեսնել Բուղա Կրտսերի հետ: Նա զրկեց լիազորություններից ու առանձնաչնորհումներից իր հոր սպանողին, ապա 868 թ. կարողացավ թունավորել ու սպանել նրան: (Bugha al-Sharabi, D. Sourdel, EOI, CD-ROM, (I: 1287b)):

234 Ուրմիա - Քաղաք Պարսկահայաստանում, Ուրմիա լճի արևմտյան կողմում, լճափից 22 կմ արևմուտք, Շահեր գետի ձախ ափին: (ՀՀՇՏԲ, հ. 5, էջ 214):

235 Դավրեժ (Տաբրիզ) - Ուչ չրջանում Ատրպատականի մայրաքաղաքը: Արաբական տիրապետության չրջանում Տաբրիզը ոչ մեծ բնակավայր էր մինչև 9-րդ դարը, երբ ըստ Բալազուրիի և այլ պատմիչների, Ռավվադ ալ-Ազդին և ուրիշներ այստեղ կառուցապատումներ կատարեցին: (Tabriz, V. Minorsky - [C. E. Bosworth], (Sheila S. Blair) EOI, CD-ROM, (X: 41b)):

236 Մինբար - Գետնից բարձր ամբիոն, կամ հարթակ, որի վրա նստած վիճակում հանդիսավոր հայտարարություններ են արվում մահմեդական համայնքին և աղոթքներ են ասվում: Հետագայում դրանք դրվեցին մզկիթների ներսում: Դրանք կարող էին նաև չարժական լինել: (Minbar, G. S. P. Freeman-Greenville, EOI, CD-ROM, (VII: 73a)):

237 Նարիղ գյուղ - Յակուտը գրում է. «փոքր քաղաք է Ատրպատականում, Արդաբիլի մարզում»: (Տե՛ս Հակոբ Նալբանդյան, Արաբական աղբյուրները, էջ 117):

238 Մարջ - Տե՛ս Դինավարի, ծնթգր. 12:

239 Հուր - Հեր գավառը:

240 Խոյ - Քաղաք Պարսկահայաստանում, Ուրմիա լճից հյուսիս, Կոտուր գետի միջին հոսանքի ձախ կողմում: (ՀՀՇՏԲ, հ. 2, էջ 768):

241 Սալմաստ (Սալմաս) - Քաղաք Մեծ Հայքի Պարսկահայք աչխարհի Զարեհավան գավառում, Ուրմիա լճի հյուսիս-արևմտյան կողմում, Սալմաստ գետի բարերեր հովտում: (ՀՀՇՏԲ, հ. 4, էջ 471):

242 Հադիսա - Բալազուրի, ծնթգր. 67:

243 *Բաջարմա – Բաջարմա, կամ Բաջարմակ անունով գավառ Աբբասյան խալիֆայության օրոք գտնվում էր Տիգրիս գետից արևելք, Հյուսիսից Փոքր Զաբի և Հարավից Ջարալ Համրինի միջև: Միջնադարում այս գավառի գլխավոր քաղաքը Քիրքուքն էր: Բաջարմա անունը ծագում է արամեական Բեթ Գարմա և պահլավական Գարմական անվանումներից: (Badjarma, M. Streck, EOI, CD-ROM, (I: 864a)):*

244 *Արու Հանիֆա – Արու Հանիֆա ալ-Նուման կրոնական իրավագետ էր, ապրել է 699-767 թթ-ին: Նրա անունով է կոչվում մահմեդական իրավագիտության չորս ուղղություններից (մազհաբներից) մեկը՝ Հանիֆիական, կամ Հանաֆիական: (Abu Hanifa al-Numan, J. Schacht, EOI, CD-ROM, (I: 123a)): Տե՛ս նաև Արու Յուսուֆ, ծնթգր. 14:*

245 *Մսխալ (միսկալ) – Մսխալը ընդունված է համարել 4.464 գրամ, բայց սա բոլոր երկրի և դարաշրջանի փոփոխություններ է կրել (Хинц, Месы и веса, стр. 13):*

246 *Կարատ (կիրաթ) – Տե՛ս Բալաղուրի, ծնթգր. 196:*

247 *Լիտր (ռաթլ) - Վաղ մահմեդական շրջանում ռաթլը (լիտր) Մեքքայում հավասար էր 1, 5 կգ-ի: (Хинц, Меры и веса, стр. 34):*

248 *Ունցիա (ուկիյա) - Ուկիյան ռաթլի 1/12-րդ մասն է: (Хинц, Меры и веса, стр. 34):*

249 *Հայջաջ իրն Յուսուֆ – Տե՛ս Բալաղուրի, ծնթգր. 32 :*

250 *Մերձավորներ (Սահաբա) – Եզակի՝ սահաբի, հոգն. սահաբա, կամ ասհաբ: Սրանք Մուհամմադ մարգարեի մերձավորներն են, կամ ամենամոտ դինակիցները: Մարդիկ, որոնք վճռական դեր են խաղացել իսլամի պատմության մեջ: Նրանք նաև համարվում են Մուհամմադի արտահայտությունների, արարքների ու ցուցումների արժանահավատ փոխանցողներ: Հենց նրանց արարքներն ու խոսքերն էլ ընդօրինակման արժանի են համարվում, մանավանդ մահմեդական ծեսերի առումով: (Sahaba, M. Muranyi, EOI, CD-ROM, (VIII: 827b)):*

251 *Նախամահմեդական չրջան (ջահիլիյա) – Մի բառեղր, որը գրեթե բոլոր իր իմաստներով հակադրվում է իսլամ բառին: Այն նշանակում է Արաբիայի վիճակը նախքան իսլամը, նախքան Մուհամմադ մարգարեի առաքելությունը, հեթանոսական չրջանը: «Ջահիլ» բառին տրվում են տարբեր բացատրություններ, այդ թվում «հիմար», «տգետ», «անօրեն», «բարբարոս» և այլն: (Djahiliyya (Ed.), EOI, CD-ROM, (II: 383b)):*

252 *.... դինարները ոսկի էին – Այսինքն ոսկեդրամները բյուզանդական էին:*

253 *... դիրհեմները խոսրովական – Իսկ արծաթե դրամները պարսկական:*

254 *... Հիրայի քրիստոնյա (իրադ) ցեղերը – Տե՛ս Հիրա, Արու Յուսուֆ, ծնթգր. 19:*

255 *Զայդ իրն Սաբիտ ալ-Անսարի – Զայդ իրն Սաբիտը (մոտ. 615 – մոտ. 665) Մուհամմադի քարտուղար-գրագիրն էր, որը կազմեց Ղուրանը գրավոր տեքստով: Զարգացած, մի քանի լեզուների տիրապետող, անձնավորություն էր: Մուհամմադի մահվանից հետո Աբու Բաքր և Օմար խալիֆաները հանձնարարեցին նրան կազմել Ղուրանի ամբողջական տեքստը: Այս գործը իր օգնականների հետ Զայդ իրն Սաբիտը ավարտին հասցրեց արդեն հաջորդ խալիֆայի՝ Օսմանի օրոք, 650 թվականից հետո, և խալիֆան այն հայտարարեց որպես Ղուրանի միակ ճշգրիտ և բոլոր մահմեդականների համար պարտադիր օրինակ: (Ислам, энц. Словарь, стр. 72-73).*

ՅԱԿՈՒԲԻ
(մահ. 897)

Արու-լ-Աբբաս Ահմադ իրն Արու Յակուբ իրն Ջաաֆար իրն Վահբ իրն Վադիհ ալ-Քաթիբ ալ-Աբբասի ալ-Յակուբին պատկանում էր բարձրաստիճան պաչտոնյաների մի հին ընտանիքի: Նրա նախնիներից Վադիհը եղել է Աբբասյանների ազատագրյալ ստրուկ (մաուլա), որի պատճառով կոչվել է ալ-Աբբասի: Մանսուր խալիֆայի օրոք եղել է Հայաստանի (Արմինիա), ապա Եգիպտոսի կառավարիչ, սակայն իր չիայական գաղափարների համար կյանքից զրկվեց: Շիայական տրամադրությունները չարունակեցին հարատևել այս ընտանիքի մնչ մինչև մեր հեղինակը, որի հայրն ու պապը եղել են փոստային գերատեսչության բարձրաստիճան պաչտոնյաներ:

Յակուբին ծնվել է Բաղդադում, սակայն փոքր հասակին հեռացել է և երկար ժամանակ ապրել Հայաստանում, ապա Խորասանում, ուր ծառայել է Թահիրիների մոտ և նրանց անկումից (873) հետո եղել է Հնդկաստանում ու Պաղեստինում: Նա տեսել է Աբբասյանների թուլացումը 860-ական թվականներին, իսկ Թուլունիների օրոք (869-905) ապրել է Եգիպտոսում, ուր վայելել է իչխող տոհմի հովանավորությունը: Ապրել է նաև Մաղրիբում և այստեղ էլ մահացել ամենայն հավանականությամբ 897 թվականին:

Մեզ են հասել ալ-Յակուբիի երեք երկեր: Կարևորությամբ առաջինը «Պատմությունն» (Տարիխ) է, որն իր լայն ընդգրկումով գերազանցում է իր նախորդներին, ընդգրկելով մինչև անգամ հյուսիսի ժողովուրդներին ու չինացիներին, դրանով իսկ, այս երկը կարող է համարվել պատմական հանրագիտարան:

Ինչպես ինքը՝ հեղինակն է նկարագրում. նա «համառոտ» կերպով հաղորդում է աչխարհի ծագման ու պատմության, այդ թվում, իսրայելացիների, ասորեստանցիների, բաբելոնացիների, հնդիկների, հույների, հռոմեացիների, պարսիկների, չինացիների, եգիպտացիների, նմննցիների ու ասորիների մասին: Իսրայելացիներին անդրադառնալիս նա հաճախ մեջբերում է եբրայական ս. Գիրքը, որը հավանաբար կարդացել է արաբերեն՝ հունարեն ու ասորերեն միջնորդ թարգմանությունների միջոցով, իսկ երբ նկարագրում է Հիսուս Քրիստոսի կյանքը, մեջբերումներ է կատարում Նոր Կտակարանից: Նա ընդգծում է իր նկարագրած ժողովուրդների մչակութային նվաճումները: Յակուբիի «Պատմության» առաջին հատորն ավարտվում է նախա-

մահմեդական Արաբիայի կրոնական ու մշակութային կյանքին վերաբերող ակնարկով:

Երկրորդ հատորի գլալի մասը նվիրված է Մուհամմադ մարգարեի կյանքին, որից հետո տրվում է Իսլամի պատմությունը՝ ըստ առանձին խալիֆաների գահակալման: Այսպես, չարադրում է Աբու Բաքրի, Օմարի, Օսմանի գահակալման տարիները, հատուկ ուշադրություն հատկացնելով Ալի իրն Աբու Թալիբին ու նրա որդուն՝ Հասանին: Այնուհետև չարադրում է Մուավիայի և նրա հաջորդ Օմայանների, ապա՝ Աբբասյանների պատմությունը: Վերջին խալիֆան, որին նա անդրադառնում է ալ-Մուտամիդն է (մահ. 892):

Յակուբին իր պատումին տալիս է գեղարվեստական ոճ, մեջբերում է հատվածներ նամակներից, իր տեքստում ներառում է ճառեր ու ցանկեր:

Նա հայտնի է որպես առաջին խոշոր պատմիչներից մեկը, սակայն ունի նաև մի աշխարհագրական երկ, որը կոչվում է «Գիրք երկրների» (Քիտաբ ալ-Բուլդան): Սա մինչև օրս հայտնի է այն ձեռագրով, որը բերվել է Արևելքից Ս. Պետերբուրգի պրոֆեսոր Ա. Մուխլինսկու (1808-1877) ձեռքով և այժմ գտնվում է Մյունխենում: Երկրորդ օրինակը պատկանել է արևելագետ Ֆ. Քերնին (1874-1921) և ապա տրվել Պրուսիական պետական գրադարանին, սակայն ցայժմ չի ուսումնասիրված: Յակուբիի աշխարհագրությունը գրվել է մոտավորապես 891 թվականին Եգիպտոսում և մեզ է հասել ոչ ամբողջական վիճակում:

Յակուբիի աշխարհագրությունը Իբն Խորդադբեհի և Կուդամա իբն Ջաաֆարի աշխատությունների նման, վարչաաշխարհագրական տեղեկատու է: Սակայն տարբեր երկրներում կատարած դիտումները մեծ չափով նպաստեցին, որ նրա աշխատության մեջ ինքնուրույն դիտողությունները մեծ տեղ գրավեն: Դա մի գրական չատ արժեքավոր հուշարձան է:

Այս երկը հրատարակված է Հոլանդացի Դե Գույեի հայտնի մատենաշարում (Bibliotheca Geographorum Arabicorum) 1892-ին՝ նրա յոթերորդ հատորում: Ֆրանսիացի Գ. Վիետը այն թարգմանել է ֆրանսերեն, օժտել ծանոթագրություններով:

Նրանից օգտվել և մեջբերումներ են արել Իդրիսին, Յակուտը, Աբու-լ-Ֆիդան:

Ուստի Յակուբին թեև ունի պատմական չատ արժեքավոր երկ, այնուհանդերձ նա առաջին հերթին աշխարհագրագետ է համարվում:

Յակուբին իր երկը սկսում է Սավադի (Միջագետք) նկարագրությամբ, ինչպես իր նախորդ Իբն Խորդադբեհն է անում: Հակիրճ առաջաբանից հետո, նա սկսում է Բաղդադի մանրամասն նկարագրությամբ, որը բացառիկ նշանակություն ունի, քանի որ առաջին մանրամասն նկարագրությունն է Աբբասյանների նոր մայրաքաղաքի: Ապա նկարագրում է Աբբասյանների ժամանակավոր մայրաքաղաք (836-892) Սամառան:

Միջագետքի մասին խոսելուց հետո անցնում է պետության չորս բաժինների նկարագրությանը: Արևելքի բաժնում նկարագրում է իրանական նահանգները (Սպահան, Ռեյ, և այլն), Մավերաննահրը (Բուխարա, Սամարղանդ և այլն):

Հարավի նկարագրության մեջ ընդգրկված են Արաբիայի տարբեր մասերը (Մեքքա, Մադինա, Եմեն):

Յակուբիի ձեռագրում երրորդ քառորդի՝ Հյուսիսի բաժնում կա մի մեծ պակասող մաս, որի մեջ է եղել նաև Հայաստանը:

Պակասում է նաև չորրորդ քառորդի (արևմուտք) սկիզբը և մնում է Բյուզանդիայից մի քանի տող միայն, ինչպես նաև Ասորիքի, Նուբիայի, Բահրայնի և Հյուսիսային Աֆրիկայի (Մաղրիբ) մասին և Իսպանիային (Անդալուս) վերաբերող մասը: (Տե՛ս նաև աշխարհագրագետների բաժնում)

Ներկա թարգմանությունը կատարված է հետևյալ հրատարակությունից, Yaqubi, Tarikh, I-II, Beyrouth, 1960:

Արամ Տեր-Ղևոնդյան

(Крачковский, IV, стр. 151-154, Х. А. Р. Гибб, Арабская литература, Москва, 1960, стр. 129, *Yaqubi, Muhammad Qasim Zaman, Encyclopaedia of Islam v. XI, pp. 257-258,)*

Տե՛ս նաև.

- Ibn Wadhih qui dicitur al-Jaqubi Historiae, I-II, ed. M. Th. Houtsma, Lugd. Bat., 1883.
- Jakubi. Les pays. Traduction par G. Wiet. Le Caire, 1937.

ՅԱԿՈԻԲԻ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ (ՏԱՐԻՆԵՐ)

ՀԱՏՈՐ ԱՌԱՋԻՆ
ՆՈՑԸ

էջ 14

Եվ նավը երկրի չրջանը կատարեց, մինչև որ հասավ Մեքքա և Տան (սրբազան) չուրջը մեկ չարաթ պտտվեց: Ապա հինգ ամիս անց ջուրը քաչվեց: Այն (ջրհեղեղը) սկիզբ էր առել Այար (մայիս) ամսից տասնյոթ օր մնացած և տևել մինչև Տիշրին Բ (նոյեմբեր) ամսից տասներեք օր մնացած:

Պատմվել է, որ Նոյը (Նուհ) տապան նստեց Ռաջար ամսվա առաջին օրը և կանգ առավ Արարադ (Ջուդի) լեռան վրա Մուհառամ ամսին, որն առաջին ամիսը հաչվեց, սակայն [սուրբ] Գրքի ժողովուրդը այս բանում տարակարծիք է: Երբ Արարադի վրա կանգ առավ, որը Մոսուլի կողմերում մի լեռ է, բարձրյալն Ալլահը հրամայեց երկնքից իջած ջրերին ու դրանք վերադարձան այնտեղ, որտեղից եկել էին: Նա հրամայեց ու հողը կուլ տվեց ջրերը:

Նոյը տապանի կանգ առնելուց հետո չորս ամիս մնաց, ապա մի ագռավ ուղարկեց, որպեսզի ջրերի վիճակն իմանա և գտնելով որ դիակները ծփում են ջրերի երեսին, չչարժվեց: Ապա մի աղավնի ուղարկեց, որը բերեց ձիթենու տերև և նա իմացավ, որ ջրերն իջել են: Այար (մայիս) ամսի քսանյոթին նա իջավ և նրա տապան մտնելուց մինչև դուրս գալը տևել էր լրիվ մեկ տարի և տաս օր: Երբ նա և իր ընտանիքը իջան երկիր, կառուցեցին մի քաղաք, որը կոչվեց Սամանին (ութսուն):

էջ 15–16

Նոյի որդի Հաբեթը (Յաֆիս) կանգ առավ արևելքի ու արևմուտքի միջև: Նա ծնեց Գոմերին (Քաումար), Թոբելին (Տուբալ), Մադային (Մաչ), Մոսոքին (Մաշիջ) ու Մագոգին (Մաջուջ): Իսկ Գոմերը ծնեց սլավոններին (սակալիբա), Թոբելը ծնեց Բուրջանին (բուլղար), Մադան (Մաչը) ծնեց թուրքերին ու խազարներին և Մոսոքը իշբաններին (իսպանացիք): Մագոգը ծնեց Գոգին ու Մագոգին, որոնք երկրի արևելքում էին թուրքերի կողմերում: Սլավոնների (սակալիբա) ու Բուրջանի հաստատված երկիրն էր Ռումի (հռոմեների) երկիրը: Սրանք են Հաբեթի որդիները:

ՀՈՌՈՄՆԵՐԻ ՔՐԻՍՏՈՆԵԱՑԱԾ ԹԱԳԱՎՈՐՆԵՐԸ

էջ 153

Հռոմեների առաջին թագավորը, որ հունական գրույցներից (մակալա) անցավ քրիստոնեության, Կոստանդինն էր: Բանն այն է, որ երբ նա պատերազմի մեջ էր, երազում տեսավ որ նիզակներ են իջնում վրան խաչերով: Երբ առավոտը բացվեց, նա իր [զորքի] նիզակների վրա խաչեր դրեց և կռվեց ու հաղթեց: Սա եղավ նրա քրիստոնեացման պատճառը և ընդունելով քրիստոնեական կրոնը կառուցեց եկեղեցիներ ու եպիսկոպոսներ (ուսկուֆ) հավաքեց ամեն կողմերից որպեսզի հաստատեին քրիստոնական կրոնը: Սա նրանց առաջին ժողովն էր: Նիկիայում[1] հավաքվեցին երեք հարյուր տասնութ եպիսկոպոս և չորս պատրիարք (բաթրաք)՝ Ալեքսանդրիայի պատրիարքը, Հռոմի պատրիարքը, Անտիոքի պատրիարքը և Կոստանդնուպոլսի պատրիարքը:

էջ 154

Ապա իչխեց Թեոդոսիոս (Սիուղուսուս) Մեծը, որի օրոք տեղի ունեցավ քրիստոնյաների երկրորդ ժողովը[2]: Կոստանդնուպոլսում հավաքվեցին հարյուր հիսուն եպիսկոպոսներ ու երեք պատրիարքներ, իսկ Հռոմի պատրիարքը չեկավ: Նրանք հաստատեցին հավատո հանգանակը (սահիֆատ ալ-ամանա, Հավատարմության գիր), ճանաչեցին սուրբ Հոգին: Հավատո հանգանակը հետևյալն է. «Հաւատամք ի մի Աստուած, Հայր ամենակալ, յարարիչն երկնի և երկրի, երևելեաց և աներևույթից և ի Տէր Քրիստոս, որդի Աստուծոյ, ծնեալ (նախքան ժամանակը), լոյս ի լուսոյ, Աստուած ճշմարիտ, յԱստուծոյ ճշմարտէ, ծնունդ և ոչ արարած, նոյն բնութենէ Հօր, որով ամենայն ինչ եղև, որ յաղագս մեր մարդկան և վասն մերոյ փրկութեան իջեալ ի յերկինս մարմնացաւ, մարդացաւ ի Մարիամայ կուսէն՝ Հոգւոյն սրբով: Խաչեալ (մեզ համար, Պիղատոս Պոնտացու օրոք), չարչարեալ, թաղեալ և յերրորդ աւուր յարուցեալ (ինչպես գրքերում կա) նստաւ ընդ աջմէ Հօր, որոյ թագաւորութեանն ոչ գոյ վախճան: Հաւատամք ի սուրբ Հոգին (որը տէր է և Հորից ծագած), որ խօսեցաւ ի մարգարէս: Հաւատամք և ի մի միայն (աշակերտների) առաքելական (սուրբ) եկեղեցի, ի մի մկրտութիւն, ի թողութիւն մեղաց և ի յարութիւն մեռելոց»:

Ապա բանադրեցին նրան, ով դրանից հետո որևէ բան կավելացնի:

Նրանից հետո իշխեց եղբորորդին՝ Թեոդոս Փոքրը և ապա Վալենտիանոսը: Տեղի ունեցավ քրիստոնյաների երրորդ ժողովը[3], որը հավաքվեց Եփեսոսում (Աֆսուս): Ժամանեցին երկու հարյուր եպիսկոպոսներ, իսկ Նեստորը[4] բոլորին հակադրվելով ասաց՝ Քրիստոսը երկու էություն և երկու բնություն ունի: Նա կատարյալ Աստված է իր էությամբ ու բնությամբ: Հայրը ծնեց Աստծուն և ոչ մարդուն, իսկ մայրը ծնեց մարդուն և ոչ Աստծուն: Ասաց նրան Կյուրեղը (Կիրիլոս)[5]՝ եթե լիներ այնպես, ինչպես դու ասացիր, ապա ով պաչտում է Քրիստոսին, մեղք է գործում, քանի որ պաչտում է հինն ու նորաստեղծը: Իսկ ով թողնում է նրա պաչտամունքը, ապա մեղանչում է, քանզի թողնում է հնի պաչտամունքը նորաստեղծի հետ միասին: Իսկ ով պաչտում է Աստծուն առանց մարդու, ապա նա չի պաչտում Քրիստոսին, քանի որ չի կարելի նրան Քրիստոս կոչել միայն մի կողմով՝ առանց մյուս կողմի: Այս բանները նա պարտադրեց ներկաներին, իսկ Անտիոքի պատրիարքը հակառակվեց: Նեստորն ասաց՝ Անտիոքի պատրիարքն ինձ համաձայն է:

Նեստորը փախավ Իրաք և սկիզբ առավ նեստորականություն (Նասթուրիյա) Իրաքում: Նրանք իրենց պետը դարձրին պատրիարքի փոխարեն կաթողիկոսին (ջասլիկ) ու տարակարծություններ եղան այս հարցում: Թեոդոս Փոքրն իշխեց քսանյոթ տարի:

Ապա իշխեց Մարկիանոսը և նրա օրոք չորրորդ ժողովը[6] տեղի ունեցավ: Բանն այն է, որ Թարսիոսը[7] (Եվտիքես)՝ հակոբիկների[8] (Յաակուբիյա) պետն ասաց՝ Քրիստոսն ունի մեկ էություն ու մեկ բնություն: Քրիստոնյաները մերժեցին այն և Կոստանդնուպոլսում հավաքվեց վեց հարյուր երեսուն եպիսկոպոս[9]: Նրանք հակառակեցին Թարսիոսին և ասացին՝ եթե Քրիստոսը, ինչպես ննթադրում ես, ունի մեկ բնություն, ապա հին բնությունը նույն նորաստեղծ բնությունն է, իսկ եթե հինը նորաստեղծից (մուհադաս) է, ապա այն ինչ մնայուն է ինքը չեղածն է: Սակայն նա ետ չկանգնեց իր ուսմունքից, նրան բանադրեցին և նա գնաց Եգիպտոս՝ Ալեքսանդրիա: Նա բժիշկ էր և այնտեղ էլ հաստատվեց: Մարկիանոսն[10] իշխեց հինգ տարի:

Նրանից հետո իշխեցին Լևոնը (Ալյուն)[11]՝ տասնյոթ տարի, Զենոնը՝[12] տասնութ տարի, ապա Անաստասիոսը (Անասթասիուս)[13], որի օրոք տեղի ունեցավ քրիստոնյաների հինգերորդ ժողովը[14]:

Բանն այն է, որ քրիստոնյա պետերից ոմանք ասացին՝ Քրիստոսի մարմինը երևութական (խայալ) է և ոչ իրական: Այդ պատճառով նրանք հավաքվեցին և ասացին՝ եթե նրա մարմինը երևութական է, ապա նրա գործերը նույնպես պետք է լինեն երևութական, ոչ իրական: Սա ավելի նման է սոփեստների (սուֆասթիյա) խոսքերին, քան քրիստոնյաներին: Նրանք անիծեցին այսպես ասողներին և

քրիստոնյաներն աղատվեցին նրանցից: Անաստասիոսն իշխեց քսանյոթ տարի:

Ապա իշխեց Հուստինոս (Յուսթուս) երկրորդը[15] քսանհինգ տարի և նրա օրոք ծնվեց Մուհամմադը՝ Ալլահի առաքյալը: Ապա իշխեց Հուստինոս երրորդը[16] քսան տարի, Տիբերիոսը՝ չորս տարի, և Հերակլն[17] ու նրա որդի Կոստանդինը[18]: Նրա օրոք տեղի ունեցավ քրիստոնյաների վեցերորդ ժողովը[19]:

Բանն այն է, որ Կյուրոս (Կուրուս) Ալեքսանդրացին գտնում էր, թե Քրիստոսը մեկ կամք ունի և մեկ գործողություն, ասաց որ սա նման է հակոբիկների կարծիքին: Այս բանի համար հավաքվեցին ու գոհացրին Հռոմի պատրիարքին, որը նամակ (գիր) էր գրել և ներկա չէր: Դրանից հետո քրիստոնյաները ժողով չունեցան: Հերակլի ու Կոստանդինի իշխանությունը տևեց երեսուներկու տարի:

էջ 157

Նրանց թագավորությունը տարածվում էր Եփրատի սահմանից մինչև Ալեքսանդրիա, որն այժմ իսլամի հող է, բացի Ռումի երկրից և այն հողերից, որոնք նրանց ձեռքում են մինչև այժմ:

Նրանց մեծագույն քաղաքներից էին Եղեսիան Ջազիրայի հողում՝ Դիար Մուդարի մեջ, ապա Անտիոքը, ուր կա Պետրոսի աթոռը և Ջաքարիայի որդի Հովհաննեսի (Յահիա) աջը կուսիան նկեղեցում: Սա չորրորդ աթոռն է և ունի մեծ պատրիարք (բաթրաք):

Այն հողերը, որոնք Ռումի թագավորության մեջ էին, ու դարձան իսլամին [ենթակա], հետևյալներն են. Ջազիրա երկիրը, ինչպես Խառանը, Եղեսիան իր գավառներով, Բալիսը, Սամոսատը, Մալաթիան, Ադանան, Տարսոնը: Ապա Կիննասրինի ջունդը, Ավասիմը բոլոր գավառներով: Եմեսայի ջունդը, որի Եմեսա քաղաքը Ռումի թագավորության մեջ հիշատակելի քաղաքներից էր, իսկ Լաոդիկեն (Լադակիա) Եմեսային ենթակա էր: Դամասկոսի ջունդը, որտեղ Ռումի թագավորի նշանակած կառավարիչներ էին Ջաֆնա տոհմի մարդիկ Ղասսան ցեղից: Հորդանանի (Ուրդուն) ջունդը, որը նույնպես նրանցն (հռոմների) էր և կառավարիչներն էլ Ռումի թագավորի նշանակած Ջաֆնա տոհմի մարդիկ էին Ղասսան ցեղից: Ապա գալիս էր Պաղեստինի ջունդը: [Առանձին նահանգում էին] Տիննիսը, Դամիեթը և Ալեքսանդրիան:

Իսկ նեղուցից (դարբ) այն կողմ կան Սլավոնների, Ալանաց և Ֆրանկների (Իֆրինջ) երկրները: Ռումի երկրում հայտնի քաղաքներ են Հռոմը (Ռումիյա), Նիկիան, Կոստանդնուպոլիսը, Ամասիան, Խարսիանոնը (Խարչանա), Կուռան, Ամորիոնը, Սումալուն, Կալամման, Սալանդուն, Հերակլիան, Սիկիլիան, Ֆալաթինան, Հրկիզված Անտիո-

քը. Հիրնաթան, Մալուխյան, Սելևկիան, Ամր՞[...], Իկոնիան (Կոնիա), Ջաբ՞[...], Բալուսը, Բարա՞[...] և Թեսաղոնիկեն (Սալոնիկա):

ՊԱՐՍԻՑ (ՖԱՐՍ) ԹԱԳԱՎՈՐՆԵՐԸ

ԼՂ 158

Պարսիկներն իրենց թագավորներին շատ բաներ են վերագրել, որը սակայն ընդունելի չէ: Ինչպես օրինակ չափազանցում են նրանց մարմնի կառուցվածքը, այնպես որ նրանցից ոմանք մի քանի բերան ու մի քանի աչք ունեն, մեկ ուրիշը պղնձե երես ունի, իսկ մյուսի ուսերի վրա լինում են երկու օձեր, որոնք սնվում են մարդկանց ուղեղներով: Նչում են նաև կյանքի տևողությունը և մահվան բացառումը ու նման բաներ, որոնք տրամաբանական չեն և նման են ճշմարտությունից զուրկ զավեշտի: Սակայն պարսիկների խելոք ու բանիմաց մարդիկ, ազնվականների, թագավորների ու գեհկանների զավակները և լավատեղյակ ու կիրթ մարդիկ այս բաները չեն ընդունում, չեն հաստատում և նման բաներ չեն պատմում:

Գտել ենք, որ նրանք պարսից թագավորությունն սկսած են համարում Արտաչիր (Արդաշիր) Պապականից: Իսկ իրենց առաջին թագավորները, որոնք Արտաչիրից առաջ են թագավորել, հետևյալներն են. Քեյումարսը (Շիումարս) յոթանասուն տարի, Հուշանգ (Ուշհանգ) Փիշդադը՝ քառասուն տարի, Թահմուրասը՝ երեսուն տարի, Ջամշիդը (Ջամշադ)՝ յոթ հարյուր տարի, Զոհակը (Դահհաքը)՝ հազար տարի, Ֆերեյդունը (Աֆրիդուն)՝ հինգ հարյուր տարի, Մանուչիհրը (Մանուջիհր)՝ հարյուր քսան տարի, Աֆրասիաբը՝ Թուրքաց թագավորը՝ հարյուր քսան տարի, Զովը՝ Թահմասպի որդին (Զութահմասբ)՝ հինգ տարի, Քեյ Կորադը (Քայ Կուրադ)՝ հարյուր տարի, Քեյ Քաուսը՝ հարյուր քսան տարի, Քեյ Խոսրովը (Քայ Խուսրաու)՝ վաթսուն տարի, Լոհրասպը (Քայ Լուհրասբ)՝ հարյուր քսան տարի, Գոչթասպը (Քայ Բուչտասբ)՝ հարյուր տասներկու տարի, Արտաչիրը (Քայ Արդաշիր)՝ հարյուր տասներկու տարի, Հոմայը (Խումանի) դուստր Բահմանի (Ջահրազադ)՝ երեսուն տարի, Դարեհ (Դարահ) որդի Ջահրազադի՝ տասներկու տարի: Նրան սպանեց Ալեքսանդրը, որը կոչվում է երկկոտոշավոր (զու-լ-կարնայն) և պարսից թագավորությունը ցրվեց: Իշխեցին թագավորներ, որոնք կոչվում էին ցեղերի թագավորներ (մուլուք ալ-թավաիֆ) և սրանց թագավորության նստավայրը Բալխն էր:

ԱՐՏԱՇԻՐ ՊԱՊԱԿԱՆԻՑ ՍԿՍՈՂ ԵՐԿՐՈՐԴ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

ԼՂ 159

Եվ իշխեց Արտաչիրը, որը պարսից առաջին զրադաշտականացած թագավորն էր, իսկ նրա նստավայրը Խթախրն[20] էր: Նրան չհպատակվեցին Պարսից (Ֆարս) որոշ գավառներ և նա կռվեց ու նվաճեց: Ապա չարժվեց դեպի Սպահան (Իսֆահան), Ահուազ, Միսան, Հետո վերադարձավ Պարսք և կռվեց մի թագավորի դեմ, որը կոչվում էր Արտավան (Արդաուան)[21], սպանեց նրան ու կոչվեց Արտաչիր Շահանշահ: Նա կրակատուն կառուցեց Արտաչիր [.....] քաղաքում: Հարձակվեց Ջազիրայի, Հայաստանի ու Ատրպատականի վրա, Հետո գնաց Իրաքի Սավադը, որը բնակեցրեց: Դիմեց դեպի Խորասան ու նրա որոշ գավառներ գրավեց: Երբ երկիրը հպատակեցրեց, թագավորության ժառանգորդ նշանակեց իր որդուն՝ Շապուհին (Սաբուր)[22], նրան թագադրեց, թագավոր կոչեց: Մեռավ Արտաչիրը, իսկ նրա թագավորելու չրջանը տասնչորս տարի էր:

Իշխեց Արտաչիրի որդի Շապուհը և արչավեց Ռումի երկիրը, բազում քաղաքներ նվաճեց ու հռոմեներից մեծ բազմություն գերեց: Կառուցեց Ջունդիշապուր քաղաքը և այնտեղ բնակեցրեց գերեվարված հռոմեներին: Հռոմեների պետը նրա համար կերտեց Տուստար գետի վրա գտնվող կամուրջը, որի յայնությունը հազար կանգուն (դիրա) էր:

Արտաչիրի որդի Շապուհի օրոք երևան եկավ Մանի իրն Համմադ ալ-Զինդիկը (հերձվածող)[23] և Շապուհին երկվության (դուալիզմի) կոչ արեց, ծաղրելով նրա կրոնը, իսկ Շապուհը հակվեց նրա կողմը: Մանին ասում էր՝ աշխարհը տնօրինողները երկուսն են և դրանք հին են՝ լույսն ու խավարը: Կա երկու արարիչ՝ բարի արարիչը և չար արարիչը:

ԼՂ 177

Պարսից ամեն մի թագավոր կրում էր Քիսրա (Խոսրով) անունը: Նրան հիշելիս ասում էին Քիսրա Շահանշահ, այսինքն թագավորաց թագավոր (արքայից արքա): Վեզիրը կոչվում էր Բուզուրգմիհրամադար, այսինքն գործերը տնօրինող: Նրանց կրոնի սկզբունքների գիտունը կոչվում էր մոգպետաց մոգպետ (մուրիդան մուրիդ), այսինքն գիտունների գիտուն: Առաջինը, որին այսպես են կոչել Զրադաշտն (Զարադուշտ) էր: Նրանց կրակի վերակացուն էր Հրպետը (Հուրբադ), իսկ քարտուղարը՝ դպրապետ (դաբիրբադ): Նրանց մեծամեծը կոչվում էր սպահպետ (իսբահբադ), այսինքն [զորքի] պետ, իսկ նրանից ստորադասը՝ պատուպան (փադուսբան), այսինքն Թչնամիներին վա-

նող: Երկրամասի պետը կոչվում էր մարզպան (մարզբան), նահանգի պետը՝ չահրիկ (չահրիջ): Պատերազմների պետերը և բանակների զորավարները կոչվում էին ասավիրա, հանցագործությունների զբաղվող պետը՝ չահրիչտ, իսկ դիվանի պետը՝ մարզմաբաադ:

ՋԱՐԲԻ (ՀՑՈՒՍԻՍԱՑԻՆ) ԵՐԿՐՆԵՐԸ

ԼՂ 178–179

Երբ Նոյի որդի Սեմի որդի Արփաքսադի (Արփախշադ) որդի Երևրի (Աբիր) որդի Փաղնկը (Ֆալիղ) երկիրը բաժանեց Նոյի որդիների միջև, ապա Նոյի որդի Հարեթի (Յաֆիս) որդի Թորկլի որդի Ամուրի որդիները դուրս եկան Արևելքի կողմերը: Որոշ մարդկանց, որոնց մեջ էր Նաումի որդին, ժառանգական կալված տվեցին ալ-Ջարբի երկիրը հյուսիսային կողմերում:

Սրանք տարածվեցին երկրում և մի քանի թագավորություններ կազմեցին, որոնք են՝ Բուրջան, Դելումք, Տարար (Թարարիստան՞), Թայլասան, Գեղան, Ֆիլան, Ալանք, Խազարք, Դիդոյք, և Հայք (ալ-Արման): Խազարները տիրել էին Հայաստանի մեծ մասին, իսկ նրանց թագավորները կոչվում էին խաքան: Սա ուներ Ցազիդ Վաղարշ (Բալաչ) կոչված մի տեղակալ (խալիֆա), որն իշխում էր Առանի, Վիրքի, Վասպուրականի ու Սիսականի վրա: Այս երկրները Չորրորդ Հայաստան էին կոչվում և այն նվաճել էր Պարսից թագավոր Կավատը: Ապա տիրացավ Անուշիրուանը Հարյուր փարասախ չափ, մինչև Ալանաց դուռը ուր երեք հարյուր վաթսուն քաղաք կար:

Պարսից թագավորը նվաճեց Դարբանդը, Թարարսարանը, Բալանջարը և կառուցեց Կարնո քաղաքը ու բազում քաղաքներ, որ նա պարսիկների (ահլ փարսի) բնակեցրեց: Ապա խազարները նո խլեցին այն, ինչ Պարսկաստանը իրենցից նվաճել էր և որոշ ժամանակ այս բոլորը մնաց նրանց ձեռքում: Հետո հոռոմները հաղթեցին ու Չորրորդ Հայաստանի թագավոր նշանակեցին մեկին, որը կոչվում էր Մաուրիան: Նրանք (հայերը) տարբեր իշխանությունների բաժանվեցին, ընդ որում ամեն մի պետը (իշխան) մնում էր իր ամրոցում ու բերդում: Դրանք նրանց հայտնի թագավորություններն են:

Ամուրի որդիներից ոմանք ժառանգական կալվածներ ստացան Մավարաննահրում (գետից այն կողմ), ապա բաժան-բաժան եղան, դարձան տարբեր թագավորություններ ու բազում ազգեր: Նրանցից էին՝ ալ-Խատտալ, ալ-Կուաղիան, ալ-Ուչրուսանա, ալ-Սուղդ, ալ-Ֆարղանա, ալ-Շաչ, Թուրքեր, ալ-Խարլախիյա, ալ-Տաղազղուզ, Քիմաքիյա Թուրքեր և Տիբետ (Տուբբատ): Թուրքերի մեջ կան գյուղերի, քաղաքների ու բերդերի տեր մարդիկ, իսկ կան նաև լեռների կատարներին և անապատներում ապրողներ, հենց արար բեդևինների նման: Երբ արշավանքի են գնում, ամեն մի վրանից քսան ռազմիկ է դուրս գալիս, արձակում են ու չեն վրիպում: Նրանց բնակավայրերը Խորասան նահանգի սկզբից հասնում են մինչև Տիբետի ու Ջինաստանի լեռները:

Իսկ Տիբետը մի ընդարձակ երկիր է, ավելի մեծ, քան Ջինաստանը: Նրանց թագավորությունը հրաշալի է: Նրանք լավ պաշտպանված են, իմաստուն և չինացիների նման հմուտ են արհեստների մեջ: Նրանց երկրում կան եղնիկներ, որոնք մշկապորտ են: Կռապաշտ են և ունեն կրակատներ: Խիստ ուժեղ են և ոչ ոք չի կարող պատերազմել նրանց հետ:

ՀԱՏՈՐ ԵՐԿՐՈՐԴ
ԱԲՈՒ ԲԱՖՐԻ ՕՐԵՐԸ

ԼՂ 133–134

Աբու Բաքրը գրեց Խալիդ իբն ալ-Վալիդին որ չարժվի դեպի Ասորիք, իսկ Մուսաննա իբն Հարիսային փոխանորդ թողնի Իրաքում:

Խալիդը մտավ Դամասկոսի հովիտը (Ղութաթ Դիմաշկ), ապա զորքը երկու մասի բաժանեց և ինքը գնաց Հաուրան: Նա չարժվեց դեպի Բուսրա քաղաքը ու կռվեց նրա [բնակիչների] դեմ: Նրանք հաշտություն խնդրեցին, իսկ նա տվեց. գնաց Աջնադին, ուր Հոռոմների զորք կար և սաստիկ կռիվ տեղի ունեցավ ու անհավատները ջարդ կար և սաստիկ կռիվ տեղի ունեցավ չարաթ օրը ցրվեցին: Աջնադինի ճակատամարտը տեղի ունեցավ չարաթ օրը Ջումադա Ա ամսի 28-ին, 13 թվականին (30 Հունիս 635):

ՕՄԱՐ ԻԲՆ ԱԼ-ԽԱԹԹԱԲԻ ՕՐԵՐԸ

ԼՂ 140–141

Դամասկոսի պաշարումը տևեց լրիվ մեկ տարի ու մի քանի օր, ընդ որում Աբու Ուբայդան կանգնել էր Ջաբիայի դռան առջև, Խալիդն՝ Արևելյան դռան առջև, Ամր իբն ալ-Աս՝ Տումայի դռան առջև, իսկ Յազիդ իբն Աբու Սուֆիանը՝ Փոքր դռան առջև: Երբ Դամասկոսի տիրոջ դրությունը ծանրացավ, լուր ուղարկեց Աբու Ուբայդային հաշտություն առաջարկելով և նրան բացեց Ջաբիայի դուռը: Խալիդը երբ իմացավ, թե Աբու Ուբայդան որոշել է ժողովրդի հետ հաշտություն կնքել և ժողովուրդը նրա հաշտությանը վստահել է, Արևելյան դռան առջև համառ կռիվ մղեց, մինչև որ բռնությամբ նվաճեց: Խալիդն ասաց Աբու Ուբայդային՝ գերեվարիր ժողովրդին, չէ՞ որ նա

բռնությամբ եմ մտել: Նա ասաց՝ ոչ, ես նրանց երաշխավորագիր եմ տվել: Մահմեդականները մտան քաղաքը ու հաչտություն կայացավ 14 թվականի Ռաջար ամսին (21 օգոստոս – 19 սեպտեմբեր 635):

Իսկ Վակիդին պատմել է, որ Խալիդ իբն ալ-Վալիդն է, որ հաչտություն է կնքել և [քաղաքի] եպիսկոպոսին տվել է հաչտության պայմանագիր ու երաշխավորագիր, իսկ Աբու Ուբայդան ընդունել է:

Աբու Ուբայդան Ամր իբն Ասին ուղարկեց Հորդանան ու Պաղեստին, բնակիչները բանակ կազմեցին, որպեսզի ետ մղեն Ամրին և նրա ընկերներին: Աբու Ուբայդան Ամրի մոտ ուղարկեց Շուրահբիլ իբն Հասանային, իսկ Աբու Ուբայդան դիմեց Հռոմների զորքի դեմ: Հորդանանը բռնությամբ նվաճվեց, բացի Տիբերիայից, որի ժողովուրդը հաչտության պայմանագիր կնքեց իրենց տներին ու եկեղեցիներին ձեռք չտալու պայմանով: Այս գործի գլուխ (մուտավալլի) էր Շուրահբիլ իբն Հասանան:

Երբ Հռոմները լսեցին Աբու Ուբայդայի առաջխաղացման մասին, գնացին Ֆիհլ: Աբու Ուբայդան կազմակերպեց մահմեդականների զորքը, ընդ որում աջ թևը հանձնեց Մուադ իբն Ջաբալին, ձախ թևը՝ Հաշիմ իբն Ութբային, հետևակը՝ Սաադ իբն Զայդին, իսկ հեծելազորը՝ Խալիդ իբն ալ-Վալիդին: Հարձակվեցին Հռոմները և առաջինը նրանց դեմ ելավ Խալիդ իբն ալ-Վալիդը, Ալլահը պարտության մատնեց Հռոմներին, որոնք հաչտություն խնդրեցին ջիզիա վճարելու պայմանով: Աբու Ուբայդան համաձայնեց և ինքը հետացավ թողնելով Ամր իբն ալ-Ասին Հորդանանի մնացած մասի վրա: Նա Խալիդին ուղարկեց, առաջապահ զորքի հետ, Բաալբեկ ու Բեկաա և սա գրավեց ու գնաց Եմեսա: Նրան միացավ Աբու Ուբայդան և նրանք Եմեսան ուժեղ կերպով պաշարեցին: Ապա սրանք հաչտություն խնդրեցին ու կնքվեց այն ամրոզջ երկրի (նահանգի) համար այն պայմանով, որ հարյուր յոթանասուն հազար դինար խարաջ վճարեն: Մահմեդականները մտան քաղաքը և Աբու Ուբայդան իր պաշտոնյաները ուղարկեց Եմեսայի գավառը:

Ապա նա լսեց, որ Հռոմների բռնապետը բոլոր երկրներից զորքեր է հավաքել և իրենց (արաբների) դեմ է ուղարկել անթիվ բազմություն: Նա վերադարձավ Դամասկոս և այդ մասին գրեց Օմար իբն ալ-Խաթթաբին, իսկ Օմարը գրեց, որ ինքը դժգոհ է նրա Եմեսայից Դամասկոս վերադառնալուց: Աբու Ուբայդան հավաքեց մահմեդականներին և բանակ դրեց Յարմուքի ափին: Հռոմների զորքի առաջապահն էր Ջաբալա իբն ալ-Այհամ ալ-Ղասսանին իր ցեղակիցների գնդով: Իսկ Աբու Ուբայդան իր զորքի առաջապահ դարձրեց Խալիդ իբն ալ-Վալիդին, որը բազմաստվածյանների հետ կռվի բռնվեց, բախվեց Հռոմների տեր (հրամանատար) Վահանին և սաստիկ գոտեմարտ տեղի ունեցավ: Նրան օգնության հասան Աբու Ուբայդան

ու մահմեդականները: Սարսափելի արյունահեղությամբ ճակատամարտ էր, որի ընթացքում Հռոմների մեծ բազմություն կոտորվեց և Ալլահը հաղթանակը տվեց մահմեդականներին: Սա տեղի ունեցավ 15 (14 փետրվար 636 – 1 փետրվար 637) թվականին:

Աբու Ուբայդան վերադարձավ Եմեսա, իսկ Խալիդին ուղարկեց Հռոմների ետևից, մինչև որ հասավ Կիննասրին և ապա Հալեբ, որի ժողովուրդն ամրացավ (դիմադրեց): Եկավ Աբու Ուբայդան ու պաշարեց և նրանք հաչտություն ու երաշխավորագիր խնդրեցին: Աբու Ուբայդան ընդունեց ու գրեց երաշխավորագիր: Նա Մալիք իբն ալ-Աչտարին զորքով ուղարկեց Հռոմների դեմ, որոնք լեռնանցքը փակել էին. սա չատերին կոտորեց ու վերադարձավ:

Աբու Ուբայդան գնաց Հորդանան և պաշարեց Իլիայի ժողովրդին, որը Սուրբ քաղաքն է (Երուսաղեմ): Սրանք դիմադրեցին ու համաձայնեցին: Աբու Ուբայդան Ամր իբն ալ-Ասին ուղարկեց Կիննասրին և Հալեբի, Կիննասրինի ու Մանբիջի բնակչությունը հաչտություն խնդրեց: Նա խարաջ նչանակեց նույն ձևով որ Աբու Ուբայդան Եմեսայում նչանակել էր: Յարմուքի ավարը հավաքել էին Ջաբիայում: Նրանք գրեցին Օմարին և նա պատասխանեց՝ ոչ մի նոր բան մի ձեռնարկեք մինչև Սուրբ քաղաքի նվաճումը:

Երբ Հռոմները Յարմուքում[24] պարտվեցին, Ջաբալա իբն ալ-Այհամը իր գնդով գնաց իր երկիրը: Յաղիդ իբն Աբու Սուֆիանը լուր ուղարկեց նրան, թե՝ մնա քո հողի տերը վճարելով խարաջ ու ջիզիա: Ասաց՝ ջիզիան վճարում են օտար գնդջուկները, իսկ ես արաբ մարդ եմ:

Օմարը Աբու Ուբայդ իբն Մասուդ ալ-Սակաֆիին և Մուսաննա իբն Հարիսա ալ-Շայբանիին զորքով ուղարկել էր Իրաք: Խոսրովը վախճանվել էր ու թագավորում էր նրա դուստր Բուրանը, որը Ռուստամին ու Ֆիրուզանին էր վստահել իչխանությունը, իսկ սրանք թույլ ու անզոր էին: Աբու Ուբայդ ալ-Սակաֆին առաջ խաղաց ու պարսից կայազորներից մեկի հետ բախվեց, սաստիկ պատերազմ տեղի ունեցավ և Ալլահը հաղթանակ պարգևեց ու հզորացրեց մահմեդականներին:

Ռուստամը երբ իմացավ այդ մասին, ուղարկեց Ջալինուս անվամբ մեկին (զորավար) և նրանք իրար բախվեցին մի վայրում, որը կոչվում է Բարուսմա, պարսիկները պարտվեցին և Աբու Ուբայդը նվաճեց Բարուսման: Ապա Ռուստամն ուղարկեց Ջու Հաջիբին և նրա հետ՝ նաև փղեր: Սաստիկ կռիվ եղավ, իսկ մահմեդականների ձիերը խրտնում էին փղերից: Աբու Ուբայդ ալ-Սակաֆին սուրը քաչեց ու կտրեց փղի չրթները, փիղը ընկավ նրա վրա ու ճզմեց նրան, իսկ զորքի հրամանատար դարձավ Մուսաննա իբն Հարիսա ալ-Շայբանին:

Այս բոլորը կատարվեց 14 (25 փետրվար 635 – 13 փետրվար 636) Թվականին:

Էջ 143

Երբ պարսիկները տեսան, թե իրենք ինչքան թույլ են, իսկ մահմեդականները հաղթում են նրանց, պատրաստվեցին սպանելու Ռուստամին ու Ֆիրուզանին: Ապա ասացին՝ դա կցրի մեր ուժերը: Նրանք փնտրեցին Խոսրովի որդուն ու գտան Հազկերտին[25], որը քսան տարեկան էր ու նրան թագավոր դարձրին:

Երբ Օմարն այս բանը լսեց, կամեցավ արշավել Իրաք, ապա խորհրդակցեց ու նրան ցույց տվեցին Սաադ իբն Աբու Վակկասին: Նա ուղարկեց [Սաադին] ութ հազարով և սա եկավ կանգ առավ Կադիսիայում:

Էջ 145

Ռուստամը դուրս բերեց փղերը և երբ [արաբական] գնդերը (քատաիբ) տեսան նրանց, քիչ էր մնում ցրվեին: Սակայն մահմեդականները հարձակվեցին նրանց վրա, աչքերը փորեցին ու չրթները կտրատեցին:

Մահմեդականները գրոհեցին չորրորդ օրն առավոտյան և արդեն առավելություն ունեին, սպանվեց Ռուստամը:

Բոլոր պարսիկները ոչ մի բանի ուշադրություն չդարձնելով փախան Տիգրոն (Մադային), ուր Հազկերտն էր: Սաադը մահմեդականների զորքով հետապնդեց նրանց ու պաշարեց մեկուկես ամիս: Ապա պարսիկները դուրս եկան ու փախուստի դիմեցին, իսկ Տիգրոնը գրավվեց: Ասվում է, թե այն տևել է ունեցել 16 (2 փետրվար 637 – 22 հունվար 638) Թվականին:

Այդ տարում Օմարը գրություններ վրա Թվական դրեց: Նա կատեցավ Թվականն սկսել Ալլահի առաքյալի ծննդից, ապա ասաց՝ թող լինի նրա առաքելության (մարգաս) սկզբից: Սակայն Ալի իբն Աբու Թալիբը խորհուրդ տվեց սկսել գաղթից (հիջրա) և նա գրեց [Թվականը] հիջրայից[26]:

Էջ 146–147

Նորից խոսենք Աբու Ուբայդա իբն ալ-Ջառահի և Սուրբ քաղաքի (Երուսաղեմի) պաշարման մասին, քանզի ամեն ինչի մասին խոսում ենք իր տարում և իր ժամանակին:

Աբու Ուբայդան գրեց Օմարին՝ տեղեկացնելով Իլիայի (Երուսաղեմ) բնակչության դիմադրության ու համբերության մասին: Մեկն ասել է, թե Իլիայի բնակիչները խնդրել էին, որ իրենց հետ հաշտություն կնքողը խալիֆան լինի:

Նա (Օմարը) եկավ Ջաբիա, որը Դամասկոսի հողերից է, ապա գնաց Սուրբ քաղաքը, հաշտությամբ նվաճեց ու գրեց հետևյալ գրությունը.

«Սա է գիրը, որ գրել է Հանուն Ալլահի ամենագութ և ամենողորմ, Օմար իբն ալ-Խաթթաբը Սուրբ քաղաքի ժողովրդին: Երաշխավորում եմ ձեր կյանքը (արյունը) և ձեր ունեցվածքը, ձեր եկեղեցիները բնակելի չեն դառնա կամ չեն ավերվի, բացի այն դեպքի, երբ բացառիկ բան պատահի: Վկայում եմ»:

ՏԱՍՆՈՒԹ (12 հունվար 639 – 1 հունվար 640) ԹՎԱԿԱՆ

Էջ 150

Այս տարում Օմարը կոչվեց հավատացելոց իշխան (ամիր ալ-մումինին), մինչդեռ դրանից առաջ կոչվում էր Ալլահի առաքյալի հաջորդի հաջորդ (խալիֆատ խալիֆա):

Աբու Ուբայդա իբն ալ-Ջառահը Իյադ իբն Ղանմ ալ-Ֆիհրիին ուղարկեց Ջազիրա և նա պաշարեց նրանց [քաղաքները], ապա նվաճեց Ռակկան, Սարուջը, Եդեսիան, Մծբինը և Ջազիրայի այլ քաղաքները և այդ ամենը՝ հաշտության պայմանագրով: Խարաջ նշանակեց հողերի համար, իսկ մարդկանց վզին [ջիզիա] նշանակեց ամեն մեկին չորս, հինգ ու վեց դինար՝ տասնութ Թվականին: Ապա վերադարձավ Աբու Ուբայդայի մոտ:

Էջ 151–152

Օմարը Ալլահի առաքյալի մերձավորներին հարցրեց Քուֆայի Սավադի [հողերի ճակատագրի] մասին: Մեկն ասաց՝ բաժաննենք մեր միջև: Նա (Օմարը) հարցրեց Ալիին, որն ասաց՝ եթե այսօր բաժաննենք, մեզանից հետո եկող [սերունդներին] բան չի մնա, այլ թող մնա նրանց (բնիկների) ձեռքում ու թող մշակեն և այսպիսով կլինի մեզ ու մեզնից հետո եկողներին: Ասաց՝ Ալլահը քեզ հաջողություն տա, լավ կարծիք է: Եվ ուղարկեց Օսման իբն Հունայֆին ու Հուզայֆա իբն ալ-Յամանին, որոնք Սավադը չափագրեցին և հրամայեցին ոչ ոքի կարողությունից ավելի չծանրաբեռնել: Սավադի խարաջը հավաքվեց ութսուն միլիոն դիրհեմ: Նա Օսման իբն Հանիֆին պարտավորեցրեց [հարկ] նշանակել օրական հինգ դիրհեմ ու մեկ տոպրակ ալյուր: Հրա-

մայեց որ Հաշվառման չենթարկվի ոչ մի բյուր, անտառ կամ ճահիճ և ոչ էլ այն [հողերը], ուր ջուր չի հասնում:

Նա նրանց վրին հարկ դրեց՝ հարուստին քառասունութ, նրանից ցածրին՝ քսանչորս, իսկ չունևորին տասներկու դիրհեմ:

ՔՍԱՆ (21 դեկտեմբեր 640 – 9 դեկտեմբեր 641) ԹՎԱԿԱՆ

Էջ 154

Այս տարում Ամր իբն ալ-Ասը գրավեց Ալեքսանդրիան ու Եգիպտոսի բոլոր նահանգները և հարկ դրեց տասնչորս միլիոն դինար որպես ջիզիա, ընդ որում, ամեն մի գլխին մեկ դինար, իսկ բերքի վրա հարկ դրեց ամեն հարյուր իրդարից[27] երկու իրդար:

Էջ 155–156

Օմարը Խայբարի հրեաներին վտարեց Հիջազից երբ Մուզահհար իբն Ռաֆի ալ-Հարիսին սպանվեց: Նա ասաց՝ լսել եմ, որ Ալլահի առաքյալն ասել է, թե Արաբական կղզում (Թերակղզում) երկու կրոն չի կարող գոյություն ունենալ:

Նա (Օմարը) Մայսարա իբն Մասրուկ ալ-Աբսիին ուղարկեց Ռումի երկիրը և սա առաջին [արաբական] զորքն էր, որ այնտեղ է մտել և դա տեղի ունեցավ քսան Թվականին: Ապա արշավանքի ուղարկեց Հաբիբ իբն Մասլամա ալ-Ֆիհրիին և ժամկետ նշանակեց, իսկ սա ժամկետից ուշացավ: Օմարն անհանգստացավ մինչև նրա վերադարձը: Ասաց նրան՝ ինչը քեզ ուշացրեց նշանակված ժամկետից: Ասաց (Հաբիբը)՝ մահմեդականներից մեկը հիվանդացել էր և մենք սպասեցինք, մինչև Ալլահի կամքը կատարվեց:

Հաբիբից հետո Օմարն այլևս արշավանք չուղարկեց Ռումի երկիրը և երբ հիշում էին հռոմեներին, ասում էր՝ կուզենայի, որ լեռնանցքը (Բաղրաս) արգելք լինի մեր ու նրանց միջև, նրանից այս կողմը մերը լինի, իսկ այն կողմը՝ հռոմեներին, այնքան որ ատում էր նրանց հետ պատերազմը: Նա՝ Ալկամա իբն Մուջազզիզ ալ-Միդլաջիին քսան, կամ մոտավորապես այդքան, նավերով ուղարկեց [ծով], սակայն բոլորը խորտակվեցին և Օմարը երդվեց այլևս ծովի վրա ոչ ոքի չուղարկել:

Էջ 156–157

Ատրպատականը նվաճվեց քսաներկու (30 նոյեմբեր 642 – 18 նո-

յեմբեր 643) Թվականին: Զորքի հրամանատարն էր Մուղիրա իբն Շուբան: Ասվում է նաև, թե Հաշիմ իբն Ութբա իբն Աբու Վակկասն էր [հրամանատարը]: Աբու Մուսա ալ-Աշաթրին նվաճեց Ահուազը և Խթախրը քսաներեք (19 նոյեմբեր 643 –6 նոյեմբեր 644) Թվականին: Օմարը նրան գրեց, թե նշանակիր խարաջ՝ ինչպես ամրողջ Իրաքի վրա է դրված և նա արեց: Արդալլահ իբն Բադիլ իբն Վարկա ալ-Խուզաին գրավեց Համադանը և Սպահանը նույն տարում: Կարդա իբն Քաաբ ալ-Անսարին էլ գրավեց Ռեյ քաղաքը: Իսկ Մուավիա իբն Աբու Սուֆիանը նվաճեց Ասկալոնը:

Օմարը՝ Խալիդ իբն ալ-Վալիդին նշանակեց Եղեսիայի, Խառանի, Ռակկայի, Տելլ Մաուզինի և Ամիդի կառավարիչ: Սա մնաց մեկ տարի, ապա հրաժարական տվեց և նա (Օմարը) ընդունեց: Նա եկավ Մադինա, ուր մի քանի օր մնալուց հետո մահացավ:

Վակիդին պատմում է, թե Խալիդ իբն Վալիդը մահացել է Եմեսայում կտակարար կարգելով Օմարին: Երբ վերջինիս հասել էր մահվան լուրը, արտասվել են Հաֆսան ու Օմարի ընտանիքը սաստիկ ողբով: Այն ատեն Օմարն ասել է՝ իրավունք ունեն կանայք ողբալու Սուլեյմանի որդուն և ցավ է հայտնել:

Նա (Օմարը) Հաբիբ իբն Մասլամա ալ-Ֆիհրիին ուղարկեց Հայաստան, ապա օգնական ուղարկեց Սալման իբն Ռաբիային, սակայն վերջինս հասավ միայն Օմարի սպանությունից հետո:

ՕՍՄԱՆ ԻԲՆ ԱՖՖԱՆԻ ՕՐԵՐԸ

Էջ 163

Օսմանը Հաբիբ իբն Մասլամա ալ-Ֆիհրիին[28] Հայաստան էր ուղարկել, ապա նահից առաքել էր Սալման իբն Ռաբիա ալ-Բահիլիին, որպես օգնական: Սակայն երբ վերջինս հասավ, իրար հետ թշնամացան և դա չարունակվեց մինչև Օսմանի սպանությունը:

Հաբիբ իբն Մասլաման արդեն Հայաստանի մի մասը նվաճել էր, երբ Օսմանը գրեց Սալմանին՝ Հայաստանի կառավարիչ նշանակելով նրան: Սա եկավ Բայլական և բնակիչները դիմավորեցին ու հաշտություն կնքեցին: Ապա չարժվեց հասավ Պարտավ (Բարդաա), որի բնակիչները Հայտնի պայմաններով հաշտություն կնքեցին:

Հաբիբ իբն Մասլաման նվաճեց Վիրքը (Ջուրզան), ապա Սալմանին ուղարկեց Շարուան, որի թագավորը հաշտություն կնքեց: Ապա չարժվեց եկավ Մագքթաց (Մասկաթ) հողը և նրա բնակիչները հաշտություն կնքեցին: Նույնն արեցին Լաբզի թագավորը և Շապորանի ու Ֆիլանի ժողովուրդը:

Նրա դեմ զորքով դուրս եկավ խաղարաց թագավորը՝ խաքանը,

Բալանջար գնաց այն կողմ: Նա մեծ բազմությամբ հարձակվեց ու սպանեց Սալմանին ու նրա հետևորդներին, որոնք չորս հազար էին: Օսմանը նշանակեց Հուզայֆա իբն ալ-Յաման ալ-Արսիին, ապա հետացրեց ու նշանակեց Մուղիրա իբն Շուբային:

Այդ տարում մեռավ Արու Սուֆիան իբն Հարբը և դա երեսունմեկ (24 օգոստոս 651 – 11 օգոստոս 652) թվականն էր:

էջ 169

Օսմանը ամառային արշավանքի համար զորք ուղարկեց Մուավիայի հրամանատարության տակ երեսուներկու (12 օգոստոս 652 – 1 օգոստոս 653) թվականին: Զորքը հասավ Կոստանդնուպոլսի նեղուցը և մեծ նվաճումներ կատարեց: Օսմանը Մուավիային հանձնարարեց Ռումի (մայրաքաղաքի՞) դեմ հարձակումը և հրամայեց որ մի հարմար անձնավորության ամառային արշավանքի հրամանատար թողնի: Մուավիան այս նպատակի համար նշանակեց Սուֆիան իբն Աուֆ ալ-Ղամիդիին: Այսպես մնաց Օսմանի օրոք [...] մի վեճի պատճառով Օսմանի խալիֆայության ժամանակ:

էջ 170

Օսմանը Ղուրանի [մասերը] հավաքեց և մշակեց (միացրեց) ընդ որում երկար [սուրաները] երկարների հետ չարեց, իսկ կարճերը՝ կարճերի հետ: Նա գրեց ամեն կողմ ու հրամայեց նրա բոլոր օրինակները հավաքել, ապա տաք ջրի ու քացախի մեջ նետեց ու եռացրեց, ասվում է նաև, որ վառեց: Այս բանը կատարեց բոլոր օրինակների հետ:

Նա իր [կանոնական բնագրից] օրինակներ ուղարկեց բոլոր երկրները, մնկական մատյան (Ղուրան, Մուսհաֆ) առաքեց Քուֆա, Բասրա, Մաղինա, Մեքքա, Եգիպտոս, Ասորիք, Բահրայն, Եմեն, Ջազիրա և հրամայեց, որ մարդիկ մնկ օրինակից (նուսխա) կարդան:

ՀԱՎԱՏԱՑԵԼՈՑ ԻՇԽԱՆ ԱԼԻ ԻԲՆ ԱԲՈՒ ԹԱԼԻԲԻ ԽԱԼԻՖԱՑՈՒԹՅՈՒՆԸ

էջ 184–186

Ալին նկավ Բասրայից, չարժվելով դեպի Քուֆա, ուր հասավ երեսունվեց թվականի Ռաջաբ ամսին (24 դեկտեմբեր 656 – 22 հունվար 657): Այդ ժամանակ Համադանի կառավարիչն էր Ջարիր իբն

Աբդալլահը, որին Ալին պաշտոնանկ արեց: Իսկ նա ասաց Ալիին՝ ուղարկիր ինձ Մուավիայի դեմ և եթե իմ մարդիկ հաղթեն նրա զինվորներին, գուցե ես կարողանամ նրանց քեզ հնազանդեցնել:

Աչաարն ասաց՝ ով հավատացելոց իշխան (ամիր ալ-մումինին) մի ուղարկիր նրան, քանզի նրա և նրանց ուզածը նույնն է: Պատասխանեց Ալին՝ Թող գնա, եթե անկեղծ խրատ տա, իր հավատարմություններ ցուցաբերած կլինի, իսկ եթե խաբի, նրա վրա կգա այն մարդու պատիժը, որին վստահվում է, բայց նա դրժում է խոստումը, վայ այն մարդկանց, որոնք չեղվում են ուղիղ ճանապարհից և ինձ օգնության են կանչում: Աստված վկա նրանց չեմ ճանաչի, եթե արդարությունը չգործադրվի և ուրիշներն էլ նմաններին չեն ցանկանա:

Ջարիրը հասավ Մուավիայի մոտ, որը նստած էր ու մարդիկ չորս կողմը պատած: Նա մատուցեց Ալիի նամակը, որը [Մուավիան] կարդաց: Հետո ոտքի կանգնեց Ջարիրն ու ասաց՝ ով սիրիացիք (ահլ ալ-Շամ) քչով չի գոհանա, ով շատով չի գոհանում. Բասրայում եղավ մի պատերազմ, որի նման աղետ չէր եղել և որի ընթացքում մահմեդականները կոտորվեցին: Ուստի Աստվածից վախեցեք, ով սիրիացիներ և Ալիի ու Մուավիայի մասին լավ դատեցեք, նայեցեք ձեր անձերին և ուշադրություն դարձրեք երկուսին: Հետո լռեց, Մուավիան նույնպես լուռ մնաց ու չխոսեց: Վերջապես ասաց Մուավիան՝ Թուքս կուլ տվեցի, ով Ջարիր:

Նույն գիշեր Մուավիան լուր ուղարկեց Ամր իբն ալ-Աասին, որ իր մոտ գա ու գրեց՝ անչուշտ լսել ես Ալիի, Թալհայի, Զուբայրի ու Այիշայի մասին: Մարուանը մեզ մոտ եկավ իր բասրացի դասալիքների խմբով: Ինձ մոտ եկավ Ջարիր իբն Աբդալլահը, առաջարկելով Ալիին խալիֆա ճանաչել: Ես ինձ զսպում եմ մինչև որ գաս, ուստի հասիր ինձ, Աստված օրհնությամբ:

Երբ նամակը հասավ Ամրին, կանչեց իր երկու որդիներին՝ Աբդալլահին ու Մուհամմադին և խորհուրդ հարցրեց: Աբդալլահն ասաց՝ ով ծերունի, Աստված առաքյալն մեռավ քեզանից գոհ, նույնպես մեռան Աբու Բաքր և Օմար [խալիֆաները]: Եթե դու խիղճդ արատավորես այս ունայն աշխարհի համար, որը չհելու ես Մուավիայի հետ, ապա վաղը երկուսդ էլ կպառկեք կրակի մեջ: Հետո [Ամրը] հարցրեց Մուհամմադին՝ ինչ է կարծիքդ, իսկ նա պատասխանեց՝ անապարիր արա այս գործը, միայն թե գլուխ եղիր և պոչ չլինես: Եվ նա (Ամրը) սկսեց ոտանավոր հորինել:

Լսելով ոտանավորը, Աբդալլահն ասաց՝ ծերունին միզեց իր երկու որդիների վրա ու ծախեց իր կրոնը աշխարհի համար:

Առավոտյան [Ամրը] կանչեց իր մաուլա Վարդանին[29] ասելով նրան՝ Ճանապարհ ընկիր, ով Վարդան, Հետո ասաց՝ կանգնիր և նա մնաց և երեք անգամ ճանապարհ ելավ: Վարդանն ասաց՝ ով Աբու

Աբդալլահ ցնդում ես, եթե ուզում ես քեզ կպատմեմ թե ինչ է մտքովդ անցնում: Պատասխանեց [Ամրը]՝ դե ասա: Ասաց՝ մտքումդ պտտվում են աշխարհն ու հանդերձյալ կյանքը և ասում ես՝ Ալին ունի հանդերձյալ կյանքն առանց աշխարհի, իսկ Մուավիան ունի աշխարհն առանց հանդերձյալ կյանքի: Աշխարհում չկա մի բան, որ փոխարինի հանդերձյալ կյանքը և դու չգիտես ո՞րն ընտրես:

Պատասխանեց Ամրը՝ ինչ հրաշալի մարդ ես, անսխալ ասացիր թե ինչ կա իմ մտքում. հիմա ասա ինձ ի՞նչ է քո խորհուրդը, ով Վարդան: Ասաց՝ իմ խորհուրդն այն է, որ մնաս տանդ, եթե կրոնի վրա հենված մարդիկ քեզ հաղթեն, դու էլ կապրես ու նրանց հետ կվայելես կրոնի բարիքները, իսկ եթե աշխարհի մարդիկ հաղթեն, նրանք քեզնից չեն հրաժարվի: Ասաց Ամրը՝ այժմ որ համբավ ունեմ արաբների մոտ, Մուավիայի մոտ գնալով, ուստի ճանապարհ ընկիր, ով Վարդան և սկսեց հորինել.

Թող Ալլահն սպանի Վարդանին ու նրա իմաստությունը

Վարդանն Ամրին ցույց տվեց ինչ թաքուն էր նրա սրտում:

Ապա եկավ Մուավիայի մոտ, հիշեցրեց այս խնդիրը և ասաց՝ Ալլահը վկա, արաբները ոչ մի հարցում հավասարություն չեն դնի քո և նրա (Ալիի) միջև: Նա պատերազմի մեջ այնպիսի բախտ ունի, որ Կուրայշ ցեղին պատկանող ոչ ոք չի ունեցել և միայն նրան անհրաժեշտություն անելով կարող ես հաղթել: Մուավիան պատասխանեց՝ ճշմարիտն ասացիր, սակայն մենք նրա դեմ պիտի կռվենք մեր ձեռքում եղած ամեն միջոցներով, նրա վրա գցելով Օսմանի սպանության մեղքը: Ամրը ասաց՝ ով դժբախտություն, ես ու դու ավելի քան ուրիշները երբեք իրավունք չունենք հիշելու Օսմանին: Իսկ ինչու՞, վայ քեզ, հարցրեց Մուավիան: Իսկ նա ասաց՝ դու սիրիացիների հետ նրան լքեցիր, այն աստիճանի, որ ստիպվեց օգնության կանչել Յադիդ իբն Ասադ ալ-Բաջալիին, որը գնաց նրա մոտ, իսկ ես բացահայտ նրան թողեցի ու փախա Պաղեստին:

Պատասխանեց Մուավիան՝ թող այդ բաները, ձեռքդ մեկնիր և ինձ խալիֆա ճանաչիր: Ասաց Ամրը՝ ոչ, Ալլահը վկա, քեզ չեմ ծախի կրոնս, որ քեզանից աշխարհն ստանամ: Մուավիան ասաց՝ քեզ եգիպտոսը կտամ որպես կերակուր:

Այն ժամանակ բարկացավ Մարուան իբն ալ-Հաքամը թե՝ ինչու իմ խորհուրդը չես հարցնում: Պատասխանեց Մուավիան՝ լռիր քեզնից ով խորհուրդ կհարցնի:

Մուավիան ասաց Ամրին՝ ով Աբու Աբդալլահ, մնա մեզ մոտ այս գիշեր: Ամրը չկամեցավ իր դեմ հանել Մուավիայի մարդկանց և այդ գիշերը նրա մոտ անցկացրեց, ասելով [բանաստեղծություն].

Մուավիա, քեզ չեմ տա կրոնս, ստանալու քեզանից
Աշխարհը, ուստի նայիր, անելիքդ մտածիր [...]

Այն ժամանակ Մուավիան նրան տվեց եգիպտոսը, վկաները վկայեցին, կնքվեց պայմանագիր և Ամրը նրան խալիֆա ճանաչեց ու պայմանավորվեցին իրար հավատարիմ մնալ:

ԷՋ 200

Ալին գրեց իր կառավարիչներին, նրանց հորդորելով, որ իր մոտ գան: Գրեց Աշաաս իբն Կայսին, որ իր կառավարիչն էր Ատրպատականում, թե Ալլահի պարգևները քեզ դյութել են ու քեզ համարձակություն տվել, ուտում ես հարկերը ու չնվում Ալլահի պատգամներից, վայելում ես ունեցվածքը և բարիքները մինչև այսօր: Արդ, երբ պատգամաբերս քեզ հանձնի իմ այս նամակը՝ եկիր և քեզ հետ բեր այն ամեն ինչը, որ յուրացրել ես մահմեդականների ունեցվածքից, կամոքն Ալլահի:

Երբ Աշաասը կարդաց նամակը, գնաց նրա մոտ:

ՄՈՒԱՎԻԱ ԻԲՆ ԱԲՈՒ ՍՈՒՖԻԱՆԻ ՕՐԵՐԸ

ԷՋ 217

Մուավիան վերադարձավ Ասորիք քառասունմեկ (7 մայիս 661 – 25 ապրիլ 662) թվականին և լսեց, որ Հոռոմների բռնապետը մեծ բազմությամբ ու հսկայական զորքով հարձակվել է: Նա վախեցավ, որ այս բանն իրեն ետ կպահի այն գործերից, որ պետք է կարգադրեր և դիմելով նրան դաշինք կնքեց հարյուր հազար դինար [վճարելու] պայմանով: Մուավիան առաջինն էր, որ Հոռոմների հետ դաշինք կնքեց: Այս հաշտությունը կայացավ քառասուներկու (26 ապրիլ 662 – 14 ապրիլ 663) թվականի սկզբին:

Սակայն երբ Մուավիայի գործերը կարգավորվեցին Ասորիքի ամիրներին արշավանքի ուղարկեց և նրանք տարվետարի կողոպտում էին Ռումի երկիրը: Մենք նրանց անունները հիշել ենք իրենց տեղում: Ռումի թագավորը հաշտություն խնդրեց այն պայմանով, որ գումարը կրկնապատկվի, բայց նա չպատասխանեց:

ԷՋ 221

Եգիպտոսն ու Մաղրիբը որպես կերակուր տրված էին Ամր իբն ալ-Ասին: Նա պայման էր դրել [Մուավիային] այն օրը, երբ նրան խալիֆա էր ճանաչել: Ահա պայմանի պատճենը. «Այս է գիրը, որ տվել է Մուավիա իբն Աբու Սուֆիանը Ամր իբն ալ-Ասին: Նրան հանձնեց եգիպտոսը ու նրա բնակիչները, որ նրան պատկանի ցմահ,

պայմանով, որ չթևերանա հնազանդության մեջ»: Այն ատեն Վարդանն ասաց՝ այնտեղ մազ կա քո մարմնիցը: Ամրը չարունակեց կարդալ պայմանագիրը առանց կանգ առնելու այն կետի վրա, ուր Վարդանը կանգ էր առել: Երբ կնքվեց պայմանագիրը և վկաները վկայեցին, Վարդանն ասաց նրան՝ քանի տարի ևս ապրելու ծերունի, էշի ծարավ ունես: Ինչու պայմանագրում զավակներիդ չհիշատակեցիր:

Մեկնեց Մուավիան և նրան երբեք չտեղափոխեց: Ամրը եգիպտոսի հարկերից ոչինչ չէր ուղարկում նրան, այլ իր մարդկանց էր բաժանում ռոճիկները, իսկ մնացորդն իրեն էր պահում:

Ամր իբն ալ-Աս եգիպտոսը կառավարեց տաս տարի, ընդ որում չորս տարի Օմար իբն ալ-Խաթթաբի ժամանակ, չորս տարուց երկու ամիս պակաս՝ Օսման իբն Աֆֆանի օրոք և երկու տարի երեք ամիս՝ Մուավիայի օրոք: Մեռավ իննսունութ տարեկան: Նա արաբների տաղանդն էր իմաստությամբ, վճռականությամբ, խելքով ու ճարտար լեզվով:

էջ 233–234

Մուավիայի օրոք Իթաքի ու Պարսից թագավորությանը ենթակա հողերի խարաջը վեց հարյուր հիսունհինգ միլիոն դիրհեմ էր:

Սավադի խարաջը հարյուր քսան միլիոն դիրհեմ էր, Ֆարսի խարաջը՝ յոթանասուն միլիոն, Ահուազի ու Հարաքից մասերի խարաջը՝ քառասուն միլիոն, Յամամայի ու Բահրայնի խարաջը՝ տասնհինգ միլիոն դիրհեմ: Տիգրիսի գավառների (քուր Դիջլա) խարաջը՝ տաս միլիոն դիրհեմ, Նեհավանդի և Մահ ալ-Քուֆայի, այսինքն Դինավարի, Մահ ալ-Բասրայի, այսինքն Համադանի և ինչ որ ավելացված է Ջարբալի հողերից՝ քառասուն միլիոն դիրհեմ, Ռեյից ու Հարաքից մասերից երեսուն միլիոն դիրհեմ, Հուլուանից՝ քսան միլիոն դիրհեմ, Մոսուլից ու Հավեյալ, Հարաքից մասերից՝ քառասունհինգ միլիոն դիրհեմ: Ատրպատականի խարաջը՝ երեսուն միլիոն դիրհեմ: Այս բոլոր երկրներից Մուավիան առանձնացրել էր այն չեն կալվածներից, որոնք պարսից թագավորները իրենց համար ընտրել էին, և իրեն սեփականացրեց ու իր տան անդամներին հատկացրեց:

Իրաքի կառավարիչը (սահիբ) այս շրջաններում սավաֆի (անտեր) հողերի հասույթից (փողից) հարյուր միլիոն դիրհեմ էր ուղարկում, որից վերցնում էր ադոթքի ու ընծաների բաժինը: Մուավիայի ժամանակ եգիպտոսի խարաջը երեք միլիոն դինար էր, սակայն Ամր իբն ալ-Աս չնչին բան էր ուղարկում, քանզի նա իր մարդկանց ռոճիկներ էր վճարում և միայն մեկ միլիոն դինար էր ուղարկում, իսկ Ամրի մահվանից հետո ամբողջ հարկագումարը ուղարկվում էր Մուավիային: Պաղեստինի խարաջը որոշվեց չորս հարյուր հիսուն

հազար դինար, Հորդանանի խարաջը՝ հարյուր ութսուն հազար դինար, Դամասկոսի խարաջը՝ չորս հարյուր հիսուն հազար դինար, Եմեսայի ջունդի խարաջը երեք հարյուր հիսուն հազար դինար, Կինննասրինի և Ավասիմի խարաջը՝ չորս հարյուր հիսուն հազար դինար, Ջազիրայի, այսինքն Դիար Մուդարի ու Դիար Ռաբիայի խարաջը՝ հիսունհինգ միլիոն դիրհեմ, իսկ Եմենի խարաջը՝ մեկ միլիոն երկու հարյուր հազար դինար, սակայն ասվում է նաև ինը հարյուր հազար դինար:

Մուավիան Ասորիքում, Ջազիրայում ու Եմենում արեց այն ինչ արել էր Իրաքում, թագավորներին պատկանող կալվածները խլել էր և իրեն սեփականացրել, ապա հատկացրել էր իր տան անդամներին ու մերձավորներին:

Իրաք նահանգում (վիլայա) տասներկու տարի իշխեց Զիյադը: Սա խորամանկ էր, իշխող և ուժեղ: Նա առաջինն էր, որ դիվաններում արձանագրություններ կազմեց ու մատյանները գրի առավ: Նա արաբներից ու կրթված մաուլաներից հատուկ մարդկանց նշանակեց նամակների քարտուղարներ: Նա ասում էր՝ խարաջի քարտուղարները պետք է լինեն պարսիկների (աջամ) պետերից, քանզի նրանք գիտակ են խարաջի գործին:

էջ 239

Նրա (Մուավիայի) օրոք արշավանք տեղի ունեցավ 41 (7 մայիս 661 – 25 ապրիլ 662) թվականին: Ուղարկվեց Հաբիբ իբն Մասլամայի, որը դաչինք կնքեց Ռումի տիրոջ հետ:

43 (15 ապրիլ 663 – 3 ապրիլ 664) թվականին Բիսր իբն Աբու Արթաթը արշավեց Ռումի երկիր և այնտեղ ձմեռեց:

44 (4 ապրիլ 664 – 23 մարտ 665) թվականին Աբդ ալ-Ռահման իբն Խալիդ իբն ալ-Վալիդը արշավեց ու հասավ Կողոնիա (Կուլունիա):

45 (24 մարտ 665 – 12 մարտ 666) թվականին Աբդ ալ-Ռահման իբն Խալիդ իբն ալ-Վալիդը արշավեց ու ձմեռեց Ռումի երկրում:

46 (13 մարտ 666 – 2 մարտ 667) թվականին Մալիք իբն Աբդալլահ ալ-Խասաամին հասավ Անտիոք: Ասվում է որ դա Մալիք իբն Հուբայրա ալ-Սուքունին էր, որը ձմեռեց Ռումի երկրում:

47 (3 մարտ 667 – 19 փետրվար 668) թվականին Մալիք իբն Հուբայրա ալ-Սուքունին արշավեց ու ձմեռեց Ռումի երկրում:

48 (20 փետրվար 668 – 8 փետրվար 669) թվականին Աբդ ալ-Ռահման ալ-Ուտբին արշավեց ու հասավ Սև Անտիոք (Անթաքիա ալ-Սաուդա):

49 (9 փետրվար 669 – 28 հունվար 670) թվականին Ֆուդալլահ իբն Ուբայդան արշավեց և Ալլահը նրա ձեռքով նվաճումներ կա-

տարեց ու մեծ թվով գերեվարեց:

50 (29 հունվար 670 – 17 հունվար 671) թվականին արշավեց Բիշր իբն Արու Արթատը, իսկ ձմեռեց Սուֆիան իբն Աուֆը:

51 (18 հունվար 671 – 7 հունվար 672) թվականին արշավեց Մուհամմադ իբն Աբդ ալ-Ռահմանը, իսկ ձմեռեց Ֆուդալլահ իբն Ուբայդա ալ-Անսարին:

52 (8 հունվար 672 – 26 դեկտեմբեր 672) թվականին արշավեց Սուֆիան իբն Աուֆը, որը մահացավ ու նրան հաջորդեց Աբդալլահ իբն Մասաադա ալ-Ֆազարին:

53 (27 դեկտեմբեր 672 – 15 դեկտեմբեր 673) թվականին արշավեց Մուհամմադ իբն Մալիքը: Ասվում է, որ Տարսոնն այդ տարում նվաճվեց Ջունադա իբն Աբու Ումայա ալ-Ազդիի կողմից:

55 (6 դեկտեմբեր 674 – 24 նոյեմբեր 675) թվականին արշավեց Մալիք իբն Աբդալլահ ալ-Խասաամին ու ձմեռեց Ռումի երկրում:

56 (25 նոյեմբեր 675 – 13 նոյեմբեր 676) թվականին արշավեց Յազիդ իբն Մուավիան, հասավ Կոստանդնուպոլիս, իսկ Մասուդ իբն Արու Մասուդը ձմեռեց: Ցամաքի վրա Յազիդ իբն Շաջարան էր [հրամանատար], իսկ ծովի վրա՝ Խյադ իբն Ալ-Հարիսը: Այս ամենը սոսկ պատմվում է:

57 (14 նոյեմբեր 676 – 2 նոյեմբեր 677) թվականին արշավեց Աբդալլահ իբն Կայսը:

58 (3 նոյեմբեր 677 – 24 հոկտեմբեր 678) թվականին Մալիք իբն Աբդալլահ ալ-Խասաամին [արշավեց], սակայն ասվում է, որ դա Ամր իբն Յազիդ ալ-Ջահհին էր, իսկ Յազիդ իբն Շաջարան ծովի վրա էր:

59 (25 հոկտեմբեր 678 – 12 հոկտեմբեր 679) թվականին Ամր իբն Մուռա ալ-Ջահնին ցամաքի վրա [արշավեց], իսկ ծովի վրա այդ տարի արշավանք չեղավ:

ՄԱՐՈՒԱՆ ԻԲՆ ԱԼ-ՀԱԿԱՄԻ, ԱԲԴԱԼԼԱՀ ԻԲՆ ԱԼ-ՋՈՒԲԱՅՐԻ ՕՐԵՐԸ ԵՎ ՈՐՈՇ ՕՐԵՐ ԱԲԴ ԱԼ-ՄԱԼԻՔԻՑ

էջ 257-259

Մարուանն իշխեց ինն ամիս ու մնաւ 65 թվականի Ռամադան ամսին (11 ապրիլ – 10 մայիս 685):

Ասորիքի ժողովուրդը խալիֆա դարձրեց Աբդ ալ-Մալիքին և սա աճապարանոք եկավ Դամասկոս, վախենալով Ամր իբն Սաիդի ապստամբությունից: Մարդիկ հավաքվեցին նրա մոտ և նա ասաց՝ վախենում եմ որ ձեր սրտերում իմ մասին որևէ [վատ] բան լինի: Ելան Մարուանի մի խումբ կողմնակիցներ և ասացին՝ Ալլահը վկա, կամ բարձրացիր մինբար, կամ թե չէ վիզդ կկտրենք: Իսկ նա բարձրացավ մինբար ու նրան ձայն տվեցին:

Մուխտար իրն Աբու Ուբայդ ալ-Սակաֆին եկել էր մի խումբ դինյալ մարդկանցով, որոնք կամենում էին Հուսայն իրն Ալիի դատը պաշտպանել (արյան վրեժը լուծել): Ուբայդալլահ իրն Զիյադը նրան բռնեց ու բանտարկեց, երկաթեն գավազանով ծեծեց, մինչև որ աչքը պատռեց: Նրա մասին գրեց Աբդալլահ իրն Օմարը Յազիդ իրն Մուավիա [խալիֆային], իսկ վերջինս գրեց Ուբայդալլահին՝ թե բաց թող նրան: Սա բաց թողեց ու աքսորեց (հեռացրեց): Մուխտարը գնաց Հիջազ ու միացավ Իրն ալ-Զուբայրին, սակայն երբ տեսավ, որ Իրն ալ-Զուբայրն իրենն ոչ մի պաշտոն չի տալիս, գնաց Իրաք ու հասավ այն ժամանակ, երբ Սուլայման իրն Սարդ ալ-Խուզաին ապստամբել էր՝ Հուսայնի արյան վրեժը լուծելու: Երբ [Մուխտարը] եկավ Քուֆա, նրա մոտ հավաքվեցին չիները: Նա ասաց նրանց, թե Մուհամմադ իրն Ալի Աբու Թալիբը իրր իրեն ուղարկել է նրանց մոտ որպես կառավարիչ և հրամայել է սպանել բոլոր նրանց, ովքեր օրինավոր համարեցին Հուսայնի սպանությունը[30] ու նրա ընտանիքի անիրավված անդամների վրեժը լուծել: Ասաց, թե Ալլահը վկա, սպանել եմ Իրն Մարջանային և ուզում եմ վրեժ լուծել Ալլահի առաքյալի տոհմի համար, նրանցից ովքեր անիրավություն են արել: Շիիների[31] մի խումբ հավատացին և ասացին՝ գնանք Մուհամմադ իրն Ալիի մոտ հարցնելու: Գնացին նրա մոտ հարցնելու և նա ասաց՝ չկա ավելի ցանկալի բան ինձ համար, քան վրեժ լուծելը և թշնամիներին սպանելը և մեր իրավունքներին տիրանալը ու բոլորը գնացին Մուխտարի մոտ, նրան հավատարմության երդում տվեցին ու պայմանագիր կնքվեց և նրա չուրջը մեծ բազմություն հավաքվեց:

Այդ ժամանակ Իրն ալ-Զուբայրը Քուֆայի կառավարիչ նշանակեց Իրն Մութիին, իսկ սա սկսեց վախեցնել չիներին ու հալածել: Մուխտարը իր հետևորդների հետ պայմանավորվեց ու մայրամուտից հետո դուրս եկան Իբրահիմ իրն Մալիք իրն ալ-Հարիս ալ-Աշտարի հրամանատարության տակ, որը գոչեց՝ ով Հուսայն իրն Ալիի համար վրիժառուներ: Սա տեղի ունեցավ 66 (8 օգոստոս 685 – 27 հուլիս 686) թվականին: Կռիվը սաստկացավ նրանց միջև Աբդալլահ իրն Մութիի միջև: Դա ամենախիստ ու ամենադժվար ճակատամարտերից մեկն էր:

Ապա իրն Մութին գնաց պալատ և կանչեց մարդկանց, որ հնազանդության երդում անեն և նրանք ձայն տվեցին Ալլահի առաքյալի տոհմին: Մուխտարը իրն Մութիին վճարեց հարյուր հազար (դրամ) և ասաց՝ սրանով դիմացիր: Մուխտարն իր կառավարիչներին ուղարկեց տարբեր նահանգներ և նրանք, տեղում եղածներին հանելով, դարձան կառավարիչներ:

Մուխտարի կառավարիչը Մոսուլի վրա Աբդ ալ-Ռահման իրն

Սաիդ իբն Կայս ալ-Համադանին էր: Նրա վրա հարձակվեց Ուբայդալլահ իբն Զիյադը, Սուլայման իբն Սարդին սպանելուց հետո: Արդ ալ- Ռահմանը կովից նրա դեմ ու գրեց տեղեկացնելով Մուխտարին: Վերջինս ուղարկեց նրա մոտ Յաղիդ իբն Ունսին, ապա Իբրահիմ իբն Մալիք իբն ալ-Հարիս իբն ալ-Աշտարին, որը բախվեց Ուբայդալլահ իբն Զիյադին ու սպանեց նրան: Սպանեց նաև ալ-Հուսայն իբն Նումայր ալ-Սուքույնիին, Շուրահբիլ իբն Զու-լ-Քիլա ալ-Հիմյարիին ու երկուսի մարմիններն էլ կրակով վառեց: Նա դարձավ Մոսուլի, Հայաստանի ու Ատրպատականի կառավարիչ Մուխտարի կողմից նշանակված, ինչպես մինչ այդ Իրաքի կառավարիչն էր:

Նա Ուբայդալլահ իբն Զիյադի գլուխն ուղարկեց Ալի իբն ալ-Հուսայնին՝ Մադինա նրա տոհմից մի մարդու հետ: Ասաց նրան՝ կանգնիր Ալի իբն Հուսայնի դռան մոտ և եթե տեսնես, որ բաց է ու մարդիկ մտնում են, ապա այն ժամին, որ նա ճաշի է նստում՝ մտիր: Եկավ պատգամաբերն Ալի իբն Հուսայնի դուռը և երբ դուռը բացվեց ու մարդիկ մտան ճաշելու, նա ամենաբարձր ձայնով գոչեց՝ ով Մարգարեի տոհմի մարդիկ և առաքելության աղբյուր, հրեշտակների իջևան ու հայտնության բնակարան, ես Մուխտար իբն Աբու Ուբայդի սուրհանդակն եմ, ինձ հետ է Ուբայդալլահ իբն Զիյադի գլուխը: Հաչիմիների տան մեջ կին չմնաց, որ չրղավեր: Մտավ սուրհանդակը, հանեց գլուխը և երբ Ալի իբն Հուսայնը տեսավ, ասաց՝ Ալլահը հեռու տանի նրան մինչև կրակը:

Պատմել են, որ Ալի իբն Հուսայնին երբեք ծիծաղկոտ չեն տեսել հոր սպանությունից հետո, մինչև այդ օրը: Նա ուներ ուղտեր, որոնք Ասորիքից միրգ էին բերել: Երբ Ուբայդալլահ իբն Զիյադի գլուխը բերվեց, հրամայեց, որ միրգը Մադինայի ժողովրդի մեջ բաժանվի: Ալլահի առաքյալի տոհմի կանայք սանրվեցին ու հինայով չպարվեցին, իսկ մինչ այդ ոչ մի կին սանր, կամ հինա չէր օգտագործել, Հուսայն իբն Ալիի սպանության օրից:

Մուխտարը հետապնդեց Հուսայնին սպանողներին ու մեծ բազմություն կոտորեց, մինչև որ նրանցից մարդ չմնաց: Նա սպանեց Օմար իբն Սաադին և ուրիշներին, ապա կրակով վառեց ու տարբեր ձևերով տանջեց:

ԱԲԴ ԱԼ-ՄԱԼԻՔ ԻԲՆ ՄԱՐՈՒԱՆԻ ՕՐԵՐԸ

էջ 269

Հիշել ենք նրա ընտրվելը (բայաա) Իբն ալ- Զուբայրի օրոք, երբ երկրները խռովյալ վիճակում էին և ով կարողացավ տիրացավ մի երկրի. Սուլայման իբն Սարդ ալ-Խուզաիի և Իբրահիմ իբն Մալիք իբն ալ-Հարիս իբն ալ-Աշտարի պատմությունը, Ուբայդալլահ իբն Զիյադի և Հուսայն իբն Նումայրի սպանությունը և այլ դեպքեր, որոնք հիշված են Իբն ալ-Զուբայրի օրոք:

Ասորիքը հնազանդվեց Արդ ալ-Մալիքին, բացի Պաղեստինից, քանզի Նաիլ իբն Կայսը այնտեղ էր [ամրացել]: Երբ Արդ ալ-Մալիքն ուզեց հարձակվել, լուր ստացավ, որ հոռոմների բռնապետը հարձակվել է Մամնստիայի (Մասսիսա) վրա: Սակայն չկամենալով նրա հետ կռվով զբաղվել, երբ երկիրը խռովահույզ վիճակում էր, լուր ուղարկեց, հաչտություն կնքեց, չատ գումարներ տալով, մինչև որ վերջինս հեռացավ:

ՄՈՏԱՎՈՐԱՊԵՍ ՅՈԹԱՆԱՍՈՒՆԵՐԵՔ
(23 մայիս 692 – 12 մայիս 693) ԹՎԱԿԱՆ

էջ 272

Արդ ալ-Մալիքը Մուհալլաբ իբն Աբու Սաֆրային հրամանատար նշանակեց Քիրմանի խարիջիների[32] դեմ կռվում, իսկ սա եռանդուն կերպով պայքարեց նրանց դեմ, մինչև որ սպանեց նրանց ղեկավար Նաֆի իբն ալ-Ազրակին, որի անվամբ նրանք կոչվել են ազրակիներ: Նա մնաց Քիրմանում, ապա Արդ ալ-Մալիքը նրան Խորասանի կառավարիչ նշանակեց Ումայայի փոխարեն:

Արդ ալ- Մալիքը իր եղբորը՝ Արդ ալ-Ազիզին ևս ուղարկեց Եգիպտոս (Միսր) ու Մաղրիբ, իր [մյուս] եղբորը՝ Բիշրին Իրաքի կառավարիչ նշանակեց, իսկ Մուհամմադ եղբորը Մոսուլի կառավարիչ նշանակեց և նա այնտեղ փոխադրեց Ադղ ու Ռարիա ցեղերին Բասրայից, ապա արշավեց Հայաստան, որի ժողովուրդն ապստամբել էր[33]: Նա կոտորեց ու գերեվարեց և նամակ գրեց երկրի ազնվականներին (աշրաֆ), որոնք ազատներ են կոչվում, երաշխավորագիր տվեց ու խոստացավ պատվի բարձրացում: Ուստի նրանք հավաքվեցին Եկեղեցիներում, Խլաթի նահանգում, իսկ նա հրամայեց վառելափայտ հավաքել եկեղեցիների չուրջը, նրանց վրա փակել տվեց դռները և ամենքին վառեց[34]: Մուհամմադ իբն Մարուանը մնաց Հայաստանում մինչև իր մահը:

էջ 281

Արդ ալ-Մալիքի օրոք դիրհեմներն ու դինարները փորագրվեցին արաբերեն: Այս բանն արեց ալ-Հաջջաջ իբն Յուսուֆը:

Նրա (Արդ ալ-Մալիքի) օրոք 75 (2 մայիս 694 – 20 ապրիլ 695)

Թվականին Մուհամմադ իբն Մարուանը ամառային արշավանք կատարեց, հոռոմները հարձակվեցին Ամամակի կողմերը. նրանց կոտորեցին Աբան իբն Վալիդ իբն Ուկբա իբն Աբու Մուայթը և Դինար իբն Դինարը:

76 (21 ապրիլ 695 – 9 ապրիլ 696) Թվականին Յահիա իբն ալ-Հաքամը ամառային արշավանք կատարեց Մարջ ալ-Շահմ, որը Մալաթիայի ու Մամեստիայի միջև է:

77 (10 ապրիլ 696 – 29 մարտ 697) Թվականին Վալիդ իբն Աբդ ալ-Մալիքը արշավեց ցորենի ստորերկրյա չտեմարանները (աթմար), հարձակվելով Մալաթիայի կողմից: Ծովում արշավանք կատարեց Հասսան իբն Նումանը [...]

83 (4 փետրվար 702 – 23 հունվար 703) Թվականին Աբդալլահը կրկին արշավեց, նվաճեց Մամեստիան և այնտեղ փոքր բերդ կառուցեց:

ՎԱԼԻԴ ԻԲՆ ԱԲԴ ԱԼ-ՄԱԼԻՔԻ ՕՐԵՐԸ

ՈՒԹՍՈՒՆՎԵԾ (2 հունվար 705 – 22 դեկտեմբեր 705) ԹՎԱԿԱՆ

ԷՋ 283

Ապա իշխեց ալ-Վալիդ իբն Աբդ ալ-Մալիք իբն Մարուանը:

Նա հոռոմների դեմ արշավանքի հրամանատար նշանակեց իր եղբորը՝ Մասլամային, որը ճանապարհ ընկավ մեծաթիվ զորքով և տեսնելով, որ Անտիոքի Ջարաջիմա [ցեղերն] ապստամբել են, նրանց մեծ կոտորած սարքեց:

ԷՋ 284

Վակիդին պատմում է, որ Վալիդը Ռումի թագավորին լուր ուղարկեց տեղեկացնելով, որ Ալլահի առաքյալի մզկիթը [Մադինայում] քանդվել է և օգնություն խնդրեց: Սա ուղարկեց նրան հարյուր հազար մսխալ (միսկալ) ոսկի, հարյուր գործավոր, քառասուն հազար բեռ խճանկարի [մանր քարեր]: Վալիդն այս ամենը ուղարկեց [կառավարիչ] Օմարին, որը նորոգեց մզկիթը և այն ավարտեց 90 (20 նոյեմբեր 708 – 8 նոյեմբեր 709) Թվականին:

ՍՈՒԼԱՅՄԱՆ ԻԲՆ ԱԲԴ ԱԼ-ՄԱԼԻՔԻ ՕՐԵՐԸ

ԻՆՆՍՈՒՆՈՒԹ (25 օգոստոս 716 – 13 օգոստոս 717) ԹՎԱԿԱՆ (ՄՈՏԱՎՈՐԱՊԵՍ)

ԷՋ 299

Սուլայմանը դուրս նկավ Ջազիրայի կողմերը և կանգ առավ Դաբիկ կոչված վայրում, որը Կիննասրինի ջունդի մեջ էր: Նա արշավանքի ուղարկեց Մասլամա իբն Աբդ ալ-Մալիքին Ռումի երկիրը, հրամայելով հարձակվել Կոստանդնուպոլսի վրա ու պաշարել մինչև գրավումը:

Մասլաման առաջ շարժվեց մինչև որ հասավ Կոստանդնուպոլիս և այնքան ժամանակ պաշարեց, որ ցանեց ու կերավ իր ցանածից: Նա ներխուժեց ու գրավեց Սակալիբա (սլավոնների) քաղաքը: Մահմեդականներին նեղեցին կորուստները, սովը և ցուրտը:

Տեղեկանալով թե ինչպիսի վիճակում էին Մասլաման ու նրա ընկերակիցները, օգնական զորքով ուղարկեց Ամր իբն Կայսին ցամաքից, իսկ ծովով հարձակման ուղարկեց Օմար իբն Հուբայրա ալ-Ֆազարիին:

Սակայն հոռոմները հարձակվեցին Լաոդիկեի վրա, որը Եմեսայի ջունդից էր, այն հրկիզեցին, ամեն ինչ տարան, իսկ Օմար իբն Հուբայրան հասավ Կոստանդնուպոլսի ծոցը:

ԷՋ 300

Նրա օրոք 96 (16 սեպտեմբեր 714 – 4 սեպտեմբեր 715) Թվականին Մասլաման արշավանք էր կատարել, գրավել էր Հիսն ալ-Հադիդը և ձմեռել Ռումի կողմերում, իսկ Օմար իբն Հուբայրան ծովի վրա էր [կռվում]: Նրանք նավելով հեղքեցին մտան ծոցի ու Կոստանդնուպոլսի միջև և գրավեցին Սակալիբա քաղաքը: Սուլայմանը նրանց օգնական ուղարկեց Ամր իբն Կայս ալ-Քինդիին և Աբդալլահ իբն Օմար իբն ալ-Վալիդ իբն Ուկբային:

99 (14 օգոստոս 717 – 2 օգոստոս 718) Թվականին Սուլայման իբն Աբդ ալ-Մալիքը իր որդուն՝ Դաուդին ուղարկեց Ռումի երկիր, իսկ Մասլաման պաշարել էր Կոստանդնուպոլիսը: Դաուդը Մալաթիայի կողմերում գրավեց Հիսն ալ-Մարան:

ՕՄԱՐ ԻԲՆ ԱԲԴ ԱԼ-ԱԶԻԶԻ ՕՐԵՐԸ

Լ 302

Օմարը տեղեկացավ Թե ինչպիսի նեղության ու կարիքի մեջ էին Մասլամայի հետ եղած [ռազմիկները] ու Ամր իրն Կայսին ամառային արշավանքի ուղարկեց: Նրա հետ առաքեց հագուստեղեն, ուտեստեղեն ու նվերներ Մասլամայի մոտ եղած բոլոր մահմեդականներին:

Օմարը Աբդ ալ-Ազիզ իրն Հատիմ իրն Նուման ալ-Բահիլիին ուղարկեց [խազարների դեմ] և նա հաղթեց Թուրքերին ու նրանցից միայն փախչողները փրկվեցին: Նրանցից հետո հոգու նա Օմարի մոտ բերեց և մահմեդական գերիներից մեկի մասին Օմարին ասաց, Թե՝ տեսնեիր սրան, ով հավատացյալդ իչխան, Թե ինչպես էր մահմեդականներին կոտորում, մի ահավոր կոտորած կտեսնեիր: Ասաց՝ եկիր ու դրա վիզը կտրիր:

ՅԱԶԻԴ ԻԲՆ ԱԲԴ ԱԼ-ՄԱԼԻՔԻ ՕՐԵՐԸ

ՀԱՐՑՈՒՐ ՄԵԿ (24 հուլիս 719 – 11 հուլիս 720) ԹՎԱԿԱՆ

Լ 310

Եվ Յազիդը հեռացրեց Օմար իրն Աբդ ալ-Ազիզի նշանակած բոլոր կառավարիչներին:

Լ 313

Յազիդը Ջառահ իրն Աբդալլահ ալ-Հաքամիին արշավանքի ուղարկեց Թուրքերի դեմ: Սա արշավեց ու գրավեց Բալանջարը և մեծ բազմություն գերեվարեց 104 (21 հունիս 722 – 9 հունիս 723) Թվականին: Նա հասավ ալ-Ռուբաս գետը[35], ապա չարժվեց ու հասավ Ադուան (ալ-Ռան) գետը: Նա դեմ դուրս եկավ խազարաց տեր խաքանի որդուն, նրա հետ կռվեց ու փախուստի մատնեց: Ապա կոտորեց նրա ռազմիկներին ու շատերին գերեվարեց:

Երբ Բալանջարը գրավեց, առաջ չարժվեց ու սկսեց ամեն մի քաղաքում կանգ առնելով հետապնդել խազարաց Թագավոր խաքանին, մինչև որ հասավ Դաբիլի (Արդաբիլի) գետը[36], որը Ատրպատականի կազմում է: Այնտեղ կռվեցին ու սպանվեց Ջառահն ու բոլոր ընկերակիցները:

Յազիդը գրեց Օմար իրն Հուբայրային, որն Իրաքի կառավարիչն էր, հրամայելով Սավադի հողը չափել և նա չափեց 105 (10 հունիս 723 – 28 մայիս 724) Թվականին: Սավադը Օմար իրն ալ-Խաթթաբի օրոք

Օսման իրն Հանիֆի կողմից չափվելուց հետո չէր չափվել մինչև Օմար իրն Հուբայրայի կողմից չափվելը: Սա հարկ դրեց արմավենու և այլ ծառերի վրա, վնաս պատճառեց խարաջ վճարողներին, իսկ մնացածին հարկադրեց, վերականգնեց աշխատանքային պարհակը (սուխր, սուխրա) և նվերների սովորությունը, որը տրվում էր Նիրուզին ու միհրաջանին: Այս հողաչափումը (միսահա) կոչվում է Իրն Հուբայրայի հողաչափում:

Լ 314

Նրա օրոք 102 (12 հուլիս 720 – 30 հունիս 721) Թվականին Վալիդ իրն Հիշամը արշավեց Ռումի հողը և կանգ առավ Անտիոքի ծանծաղուտի մոտ: Օմար իրն Հուբայրան հոռոմներին հանդիպեց Զորրորդ Հայաստանում, հաղթեց նրանց և յոթ հարյուրի գերեվարեց:

103 (1 հուլիս 721 – 20 հունիս 722) Թվականին արշավեց ալ-Աբբաս իրն Վալիդը և մարդիկ վիրավորվեցին Սարայայում[37]:

Թուրքերն ասպատակեցին Ալանաց (ալ-Լան) երկիրը: Արշավեցին Աբդ ալ-Ռահման իրն Սուլայման ալ-Քալբին և Օսման իրն Հայան ալ-Մուռին, որոնք պաշարեցին մի բերդ ու գրավեցին:

104 (21 հունիս 722 – 9 հունիս 723) Թվականին Աբդ ալ-Ռահման իրն Սուլայման ալ-Քալբին ամառային աշ արշավանք կատարեց, իսկ Օսման իրն Հայան ալ-Մուռին՝ ամառային ձախ արշավանք [Ռումի երկիրը]:

105 (10 հունիս 723 – 28 մայիս 724) Թվականին արշավեց Սաիդ իրն Աբդ ալ-Մալիք իրն Մարուանը, որն ապա վերադարձավ և արշավեց Թուրքաց կողմերը և հասավ ալ-Կուֆին բերդը: Ջառահ իրն Աբդալլահ ալ-Հաքամին արշավեց Ալանաց դուռը և դուրս եկավ Դարբանդից:

ՀԻՇԱՄ ԻԲՆ ԱԲԴ ԱԼ-ՄԱԼԻՔ ԻԲՆ ՄԱՐՈՒԱՆԻ ՕՐԵՐԸ

Լ 317-318

Հիշամը Մասլամա իրն Աբդ ալ-Մալիքին[37] նշանակեց Հայաստանի և Ատրպատականի կառավարիչ 107 (19 մայիս 725 – 7 մայիս 726) Թվականին: Նրա զորքի առաջապահի հրամանատար նշանակեց Թվականին: Նրա զորքի առաջապահի հրամանատար նշանակեց Սաիդ իրն Ամր ալ-Հարաշիին, իսկ սա ընդհարվեց խազարների զորքի հետ, որոնց մոտ տասը հազար մահմեդական գերիներ կային: Նա կռվեց նրանց դեմ, փախուստի մատնեց, մեծ մասին կոտորեց ու գերիներին փրկեց: Այս բանն արեց մի քանի անգամ: Նա խաքանի որդուն սպանեց, բազմաթիվ քաղաքներ գրավեց, իսկ խաքանի որդու

գլուխը, առանց Մասլամայի համաձայնության, առաքեց Հիշամին: Այս բանը զայրացրեց [Մասլամային], որը գրեց նրան այսպիսով ու հեռացրեց նրան և փոխարինը նշանակեց Արդ ալ-Մալիք իբն Մուսլիմ ալ-Ուկայլիին, որին հրամայեց ձերբակալել Սաիդ իբն Ամր ալ-Հարաշիին ու բանտարկել Կապադակ (Կարալա) կոչված քաղաքում:

Մասլաման եկավ այդ քաղաքը, բերել տվեց Հարաշիին, կոպտեց նրան, ջարդեց նրա դրոշը, իսկ նրան ուղարկեց Պարտավի բերդը: Սակայն Հիշամը գրեց նրան (Մասլամային) մնղադրելով այդ բանի համար և, իր կողմից սուրհանդակներ (դեսպաններ) առաքելով, Սաիդ իբն ալ-Հարաշիին դուրս բերել տվեց բանտից ու տարավ իր մոտ:

Մասլաման առաջ խաղաց խազարաց երկրում, մինչև որ հասավ Վիրք: Նվաճեց այն ու կոտորեց ժողովրդին, ապա գնաց Շարուան, որի ժողովուրդը հպատակություն հայտնեց, եկավ Մադքութք (Մասկաթ), որի բնակչությունը նույնպես հաչտություն կնքեց: Նա իր հեծյալ գնդերն ուղղեց ալ-Լաքզ երկիրը, որի ժողովուրդը հաչտություն կնքեց, զորք ուղարկեց Թաբարսարան, որի բնակչությունն էլ հաչտություն կնքեց: Ապա առաջ խաղաց և ոչ ոքի չհանդիպելով հասավ Վարդանակերտի հողը: Այստեղ նրան հանդիպեց խազարաց թագավորը: Մասլամայի հետ կային նվաճված երկրների մի խումբ թագավորներ: Նա առաջապահ զորքի հրամանատար նշանակեց Մարուան իբն Մուհամմադին, որը բախվեց Թշնամուն և մի քանի օր մնաց կոտորելով նրանց ու կարծվեց թե կորել է: Ասել են Մասլամային՝ Մարուանն սպանվեց: Ասել է՝ միթե առանց խալիֆա դառնալու, երբեք: Եվ նա նվաճեց բոլոր երկրները:

Հիշամը հեռացրեց Մասլամային ու կառավարիչ նշանակեց Մարուան իբն Մուհամմադին, որը չարժվեց դեպի այն բերդը, ուր Սարիբի թագավորն էր: Սա մի ոսկե գահ (սարիր) է, որը պարսից թագավորներից մեկն էր առաքել: Ասվում է, որ Անուշիրուանն էր այն ուղարկել [թագավորին] և վերջինս այդ գահի (սարիր) անունով էլ կոչվել է: Նա հաչտություն կնքեց նրա հետ հազար հինգ հարյուր սևահեր դուլամ տալու պայմանով: Հետո գնաց Թումանչահ, որի թագավորը հաչտություն կնքեց, ապա մտավ Զարիքրան երկիրը, որի թագավորը նույնպես հաչտություն կնքեց. մտավ Համզին, կռվեց նրանց (բնակիչների) դեմ և մեծ բազմություն կոտորեց: Երկրի մեծ մասը նվաճեց, իսկ [ուտեստեղենի] պաչարը կուտակեց Դարբանդ քաղաքում, ուր և մնաց:

էջ 328–329

Հիշամը Օմայան տոհմի ամենավճռական ու խիստ [անդամներից] էր: Նա ժլատ էր, նախանձ, կոչտ, կոպիտ, անարդար, դաժան,

անգութ, երկարալեզու:

Նրա օրոք ժանտախտը տարածվեց և մարդկանց մեծ մասը զոհ գնաց, ինչպես նաև գրաստն ու տավարը:

Այդ ժամանակ գլխավոր դեմքն էր ալ-Արրաչ իբն ալ-Վալիդ ալ-Քալբին, զորքի պետ (սահիբ չուրթա) էր Քաար իբն Համիդ ալ-Աբսին, պահակազորքի (հարաս) պետ էր Ռաբի իբն Զիյադ իբն Սաբուրը, սենեկապետն (հաջիբ) էր իր մաուլա Հարիչը:

Նա հորինել էր տվել մետաքսե ռակմ (փայլուն) բանվածքներ, գունազարդ հայկական [կտորեղեն] և զգեստի տարբեր տեսակներ:

Իչխեց քսան տարուց հինգ ամիս պակաս և մեռավ չորեքշաբթի օրը, Ռաբի Ա ամսից ինն օր մնացած, 125 թվականին (21 հունվար 743), երբ հիսուներեք տարեկան էր:

Նրա օրոք արչավանք կատարեց 106 (29 մայիս 724 – 18 մայիս 725) թվականին Մուավիա իբն Հիշամը: Նա ուղարկեց Վադդահին՝ Վադդահիյայի տիրոջը, որը վառեց [հոռոմների] ցանքսերն ու գյուղերը, քանզի հոռոմները այրել էին իրենց արոտավայրերը: Ամառային ձախ արչավանք կատարեց Սաիդ իբն Արդ ալ-Մալիքը:

Ջառահ իբն Աբդալլահ ալ-Հաքամին արչավեց Ալանաց երկիրը:

107 (19 մայիս 725 – 7 մայիս 726) թվականին Մուավիան կրկին [արչավեց]:

108 (8 մայիս 726 – 27 ապրիլ 727) թվականին Մասլամա իբն Արդ ալ-Մալիքը գլխավորեց ամառային աջ արչավանքը, իսկ Ասիմ իբն Խալիդ ալ-Հիլալին՝ ամառային ձախ արչավանքը:

109 (28 ապրիլ 727 – 15 ապրիլ 728) թվականին արչավեց Մուավիա իբն Հիշամը և նրա հետ էր առաջապահ զորքի հրամանատար ալ-Բաթթալը: Նա գրավեց Խանջարան:

Մասլաման արչավեց Թուրքերի դեմ, գրավեց Ալանաց դուռը և բախվեց Խաքանի հետ:

111 (5 ապրիլ 729 – 25 մարտ 730) թվականին Մուավիա իբն Հիշամը ամառային ձախ արչավանք կատարեց, իսկ Սաիդ իբն Հիշամը՝ ամառային աջ արչավանք:

Թուրքերը հարձակվեցին Ատրպատականի վրա և նրանց դեմ դուրս եկավ Հարիս իբն Ամր ալ-Թաին ու փախուստի մատնեց նրանց:

112 (26 մարտ 730 – 14 մարտ 731) թվականին Թուրքերը մտան Արդաբիլի հողը, նրանց դեմ արչավեց Ջառահ իբն Աբդալլահ ալ-Հաքամին: Սա բախվեց Թուրքաց թագավորի հետ և սպանեց նրան:

Մուավիա իբն Հիշամը արչավեց Հոռոմների դեմ, սակայն չկարողացավ մտնել նրանց երկիրը: Նա բանակ դրեց Ամկ վայրում, Մարաչի կողմերում:

114 (3 մարտ 732 – 20 փետրվար 733) թվականին Մուավիա իբն Հիշամը և Մասլամա իբն Արդ ալ-Մալիքը [արչավեցին]:

115 (21 փետրվար 733 – 9 փետրվար 734) թվականին Հիշամի որդիները՝ Մուավիան ու Սուլայմանը [արշավեցին], իսկ առաջապահ զորքի հրամանատարն էր Արդալլահ իբն ալ-Բաթթալը: Նա կռվեց Կոստանդինի դեմ ու գերեց նրան, իսկ հռոմեներին փախուստի մատնեց:

116 (10 փետրվար 734 – 30 հունվար 735) թվականին Մուավիա իբն Հիշամը [արշավեց]:

117 (31 հունվար 735 – 19 հունվար 736) թվականին Հիշամի երկու որդիները՝ Մուավիան ու Սուլայմանը [արշավեցին]:

Մուհամմադ իբն Մարուանն արշավեց Թուրքաց երկիրը [...]

[...] Մարուան իբն Մուհամմադը:

121 (18 դեկտեմբեր 738 – 6 դեկտեմբեր 739) թվականին Մասլամա իբն Հիշամը հասավ Մալաթիա:

122 (7 դեկտեմբեր 739 – 25 նոյեմբեր 740) թվականին Մարուան իբն Մուհամմադը [արշավեց] Հայաստանի կողմերը, իսկ Սուլայման իբն Հիշամը՝ Մալաթիայի կողմերը:

123 (26 նոյեմբեր 740 – 14 նոյեմբեր 741) թվականին Սուլայման իբն Հիշամը ամառային արշավանք [կատարեց], իսկ Մարուան իբն Մուհամմադը [արշավեց] Գեղան (Ջիլան) ու Մուղան (Մուկան), որոնք Հայաստանի հողում են:

124 (15 նոյեմբեր 741 – 3 նոյեմբեր 742) թվականին Սուլայման իբն Հիշամը հանդիպեց Ռումի թագավոր Լևոնին ու Արթաբասին, սակայն հեռացավ ու նրանց միջև պատերազմ չեղավ:

125 (4 նոյեմբեր 742 – 24 հոկտեմբեր 743) թվականին Ղամր իբն Ցազիդ իբն Արդ ալ-Մալիքը [արշավեց]:

ՑԱԶԻԴ ԻԲՆ ԱԼ-ՎԱԼԻԴ ԻԲՆ ԱԲԴ ԱԼ-ՄԱԼԻՔԻ ՕՐԵՐԸ

էջ 336

Սաբիտ իբն Նուայմ ալ-Ջուզամին ըմբոստացավ Մարուանի դեմ, որը Հայաստանում [կառավարիչ] էր: Մարուանը հաղթեց նրան, սակայն չնորհք արեց: Մարուանը հեռացավ Հայաստանից, այնտեղ թողնելով Ասիմ իբն Արդալլահ իբն Ցազիդ ալ-Հիլալիին[38], իսկ Դարբանդի վրա՝ Իսհակ իբն Մուսլիմ ալ-Ուկայլիին: Ապա ամբողջ Հայաստանը (Արմինիա) տվեց Իսհակ իբն Մուսլիմ ալ-Ուկայլիին[39]:

ԻԲՐԱՀԻՄ ԻԲՆ ԱԼ-ՎԱԼԻԴԻ ՕՐԵՐԸ

էջ 337

Ապա իշխեց Իբրահիմ իբն ալ-Վալիդ իբն Արդ ալ-Մալիք իբն

Մարուանը, որի մայրը ստրկուհի (ումմ վալադ) էր Սուար անունով: Նա իշխանության գլուխ անցավ նույն օրը, երբ մեռավ Ցազիդ իբն Արդ ալ-Վալիդը:

Նա իշխեց չորս ամիս, սակայն Մարուան իբն Մուհամմադ իբն Մարուանը եկավ Հայաստանից չճանաչելով նրա իշխանությունը: Երբ հասավ Խառան, ինքն իրեն [խալիֆա] հռչակեց: Ջազիրայի բնակչությունը նրան թաքուն ճանաչեց (բայա տվեց): Նա Ջազիրայի զորքից մեծ բազմությամբ եկավ ու տեսավ, որ Վալիդ իբն Արդ ալ-Մալիքի երկու որդիները՝ Բաշիրն ու Մասրուրը բանակ են դրել Հալերում: Փախուստի մատնեց նրանց զորքն ու գերեց նրանց, ապա գնաց մինչև Եմեսա, ուր իշխում էր Արդ ալ-Ազիզը:

Իբրահիմը հենց որ լուր ստացավ, նրա դեմ ուղարկեց Սուլայման իբն Հիշամ իբն Արդ ալ-Մալիքին, որը հանդիպեց Մարուանին ու նրա հետ Ջազիրայից, Կիննասրինից ու Եմեսայից եկած զորքերին: Բախումը տեղի ունեցավ Այն ալ-Ջարի (Այնճար) մոտ, Դամասկոսի նահանգում: Պատերազմն սկսեց չորեքշաբթի օրը Սաֆար ամսի յոթին, 127 թվականին (19 նոյեմբեր 744), ապա իրարից բաժանվեցին: Հաջորդ օրը Սուլայման իբն Հիշամը ու նրա ընկերակիցները հաղթվեցին ու դիմեցին Իբրահիմին:

Եկավ Մարուանը մինչև հասավ Դայր ալ-Ալիյա (Ալեյ) և Դամասկոսի ժողովուրդը նրան ճանաչեց և նա մտավ քաղաք: Այն ժամանակ Իբրահիմը ինքն իրեն հանված ճանաչեց և ձայն տվեց Մարուանին երկուշաբթի օրը Սաֆար ամսի կեսին, 127 թվականին (27 նոյեմբեր 744): Նա չարունակեց մնալ Մարուանի հետ, մինչև որ խեղդվեց Զար գետում, Արդալլահ իբն Ալիի դեմ ճակատամարտի ընթացքում:

ՄԱՐՈՒԱՆ ԻԲՆ ՄՈՒՀԱՄՄԱԴ ԻԲՆ ՄԱՐՈՒԱՆԻ ՕՐԵՐԸ ԵՎ ԱԲԲԱՍՅԱՆ ՏՈՀՄԻ ԿՈՉԸ

127 թվականի Սաֆար ամսին (12 նոյեմբեր – 10 դեկտեմբեր 744) իշխեց Մարուան իբն Մուհամմադ իբն Մարուանը, որի մայրը ստրկուհի (ումմ վալադ) էր, անունը Ռայյա: Նրան ձայն տվեցին Դամասկոսում եղած բոլոր Օմայանները և ուրիշներ: Նա գրեց երկրների կառավարիչներին ու նրանցից ստացավ հնազանդություն, հպատակություն և ենթակայություն հայտնող գրություններ: Լսելով որ Եմեսայի (Հիմս) ժողովուրդն ապստամբել է, չարժվեց նրա դեմ, Դամասկոսում թողնելով Արդ ալ-Ազիզ իբն ալ-Հաջջաջ իբն Արդ ալ-Մալիքին: Նա պաշարեց, մինչև որ գրավեց քաղաքը:

Մարուանն ուզում էր վերադառնալ, սակայն լուր ստացավ, որ

Դահհաք իրն Կայս ալ-Հարուրին տիրացել է Իրաք նահանգին ու կռվել Արդալլահ իրն Օմար իրն Արդ ալ-Ազիզի դեմ Վասիթում, ապա գնացել է Ջազիրա, անցել Մոսուլը, հասել Մծբին, ուր Արդալլահ իրն Մարուանն էր ու պաշարել նրան: Իսկ Դարբանդում Իսհակ իրն Մուսլիմի կառավարիչն էր նշանակված մի մարդ Մուսաֆիր կոչված, որը համակիր էր խարիջիներին: Դահհաքը նրան գրություն էր ուղարկել ճանաչելով նրա իշխանությունը Հայաստանի վրա, որի ժողովուրդը սպանել էր Հայաստանի կառավարիչ Ասիմ իրն Արդալլահ իրն Յազիդ ալ-Հիլալիին[40] և սա (Մուսաֆիրը) եկավ այնտեղ (Հայաստան):

Մարուանը եկավ Խառան, որն իր նստավայրն էր դարձրել, մի վայրում, որը կոչվում էր Դարաբ այ-Բայն: Դահհաքն այդ մասին տեղեկանալով եկավ նրա կողմը, անցավ Մոսուլի կողքով, որը պաշարեց, բայց չկամենալով գործը երկարացնել դիմեց Մծբին և այն պաշարելուց հետո եկավ Խառան՝ պատերազմելու Մարուանի դեմ: Նա սաստիկ պատերազմեց նրա դեմ: Դահհաքը չատ անգամներ հաղթանակներ էր տարել նրա դեմ, հեռացրել գահից և ինքը նստել: Սակայն սպանվեց Դահհաքը 127 թվականին, իսկ խարիջիները ցիր ու ցան եղան:

ԷՋ 340-341

Եվ ուժեղացավ Քիրմանին Խորասանում ու պատերազմը նրա և Նասր իրն Սայարի միջև երկար տևեց: Քիրմանին գերակշռություն ձեռք բերեց Նասր իրն Սայարի նկատմամբ:

Սակայն Քիրմանին խոցվեց ու սպանվեց և Նասրը խաչեց նրան և նրա զորքին տիրեց Աբու Մուսլիմը[41], որը հաջողություն ունեցավ, զորքը ստվարացավ: Նասր իրն Սայարին նա նեղեց կովի մեջ և մի քանի անգամ փախստյան մատնեց: Նա Հաշիմիների (Աբբասյանների) տոհմի համար կոչ արեց և սա կատարվեց 129 թվականի Ռամադան ամսին (16 մայիս – 14 հունիս 746):

ԱԲՈՒ-Լ-ԱԲԲԱՍ ԱԼ-ՍԱՖՖԱՀ

ԷՋ 349

Արդալլահ իրն Մուհամմադ իրն Ալի իրն Արդալլահ իրն Աբբաս, որն իր որդու անունով (քունյա) կոչվում էր Աբու-լ-Աբբաս, իսկ մայրն էր Ռայթա բինտ (դուստր) Ուբայդալլահ ալ-Հարիսին, խալիֆա հռչակվեց ուրբաթ օրը Ռաբի Ա 13-ին 132 թվականին (30 հոկտեմբեր 749), ասվում է նաև չորեքշաբթի օրը Զու-լ-Հիջջայի 28-ին (7 օգոստոս 750),

որն օտար (աջամ) ամիսներից [համապատասխանում է] Տիշրին Բ-ին (նոյեմբեր):

ԷՋ 354-355

Իսհակ իրն Մուսլիմ ալ-Ուկայլին Սամոսատում պաշարված մնաց յոթը ամիս, իսկ Աբու Ջաաֆարը պաշարել էր նրան: Ասվում է, թե Աբու Ջաաֆարը չէր, որ պաշարել էր նրան, այլ Արդալլահ իրն Ալին: Իսհակն ասում էր՝ իմ վզի պարտքն է մի բայա, որից չեմ հրաժարվի մինչև չիմանամ, որ նրա տերը մահացել է կամ սպանվել: Աբու Ջաաֆարը լուր ուղարկեց, թե Մարուանն սպանվել է, իսկ սա ասաց, թե պետք է ստուգեմ: Երբ նա վստահ եղավ, որ սպանվել է, նրաշխավորագիր խնդրեց և այն տրվեց նրան: Նա գնաց Աբու Ջաաֆարի հետ, քանզի նրա մոտ մեծ հեղինակություն ուներ:

ԷՋ 357-358

Մոսուլի ժողովուրդն ապստամբեց իր կառավարչի դեմ, նրանից ամեն ինչ վերցրին ու դուրս քշեցին: Աբու Ջաաֆարն իր եղբորը՝ Յահիա իրն Մուհամմադ իրն Ալիին նշանակեց Մոսուլի կառավարիչ, տալով նրան չորս հազար հոգի Խորասանի զորքերից: Սա եկավ [Մոսուլ] 133 (9 օգոստոս 750 – 29 հուլիս 751) թվականին և բնակիչներին մեծ թվով կոտորեց: Ասվում է, որ մի ուրբաթ օր հավաքեց ժողովրդին և տասնութ հազար զտարյուն (սալիբ) արար կոտորեց, ապա սպանեց նաև նրանց ստրուկներին (արիդ) ու մաուլաներին, մինչև որ բնաջնջեց: Նրանց արյունից Տիգրիս գետը պղտորվեց: Մինչ այդ նման ապստամբություն չէր եղել Մոսուլում:

Աբու-լ-Աբբասը Մուհամմադ իրն Սուլին[42] Հայաստանի կառավարիչ նշանակեց: Սա եկավ մեծ զորքով, իսկ մինչ այդ երկրում բռնացել (մուտաղալլիբ) էր Մուսաֆիր իրն Քասիրը[43], որը Մարուան [խալիֆայի] նշանակած կառավարիչ Իսհակ իրն Մուսլիմ ալ-Ուկայլիի հաջորդն էր: Մուհամմադ իրն Սուլը կռվեց նրա դեմ, մինչև որ սպանեց նրան ու նվաճեց Հայաստանը: Նա Բայլականի ժողովրդին քշեց Քիլաբ (Շնհեր) ամրոցը, իսկ քաղաքը հանձնվեց: Նրա քաղաքապետը այդ ժամանակ Վարդ իրն Սաֆուան ալ-Սամին էր, Սամա իրն Լաուլի որդիներից: Բախտախնդիրների (սաալիք) և այլոց մի բազմություն հավաքվեց Քիլաբ ամրոցում: Մուհամմադ իրն Սուլը նրանց մոտ ուղարկեց Սալիհ իրն Սուբայհ ալ-Քինդիին, որը պաշարեց նրանց ու մեծ բազմություն կոտորեց:

Աբու-լ-Աբբասը Հիրայից փոխադրվեց Անբար, ուր կառուցեց մի քաղաք և կոչեց Հաշիմիյա[44] 134 (30 հուլիս 751 – 17 հուլիս 752) թվականին:

Աբու-լ-Աբբասն իր եղբորը՝ Աբու Ջաաֆարին նշանակեց Ջազիրայի, Մոսուլի, Սահմանային ամրություններ (Սուղուր), Հայաստանի և Ատրպատականի կառավարիչ: Սա գնաց ու հասավ Ռակկա, ապա Ռաֆիկա քաղաքի հիմքերը գցեց Եփրատի ափին, ըստ Ադհամ իբն Մուհրիզի կատարած չափումների: Նա Հասան իբն Կահթաբա ալ-Թաիին նշանակեց Ջազիրայի կառավարիչ, իսկ Յազիդ իբն Ուսայդ ալ-Սուլամիին՝ Հայաստանի կառավարիչ, ապա հանեց նրան ու նշանակեց Հասան իբն Կահթաբային[45], որը մնաց այդ պաշտոնում Աբու-լ-Աբբասի իշխանության բոլոր օրերին:

էջ 362

Նրա օրոք արշավանքներ կատարվեցին: 133 (750–751) թվականին նկավ հոռոմների բռնապետր Կոստանդինը, հարձակվեց ու պաշարեց Մալաթիան, սակայն նրա՝ հետ հաչտություն կնքվեց: Նրա դեմ հարձակվեց Մուսա իբն Քաաբ ալ-Տամիմին, սակայն նրանք հանդիպում չունեցան: Աբու-լ-Աբբասը գրեց Աբդալլահ իբն Ալիին տեղեկացնելով, որ թշնամին նրանից թաքուն գործում է և հրամայեց որ զորքերը չարժման մեջ դնի և նա իր զորքերը ափոեց Սահմանային ամրությունների տարբեր կողմերում, առաջ խաղաց ու լեռնանցքը փակեց և այսպես պատրաստություններ էր տեսնում, երբ Աբու-լ-Աբբասի մահվան լուրն ստացավ ու հետացավ:

ԱԲՈՒ ՋԱԱՖԱՐ ԱԼ-ՄԱՆՍՈՒՐԻ ՕՐԵՐԸ

էջ 364

Սա Աբդալլահ իբն Մուհամմադ իբն Ալին է, որի մայրն էր բերբերուհի Սալաման: Խալիֆա հռչակվեց այն օրը, երբ մեռավ Աբու-լ-Աբբասը՝ կիրակի Զու-լ-Հիջջայի 18-ին (9 հունիս 754), իսկ օտարների (աջամ) ամիսներից՝ Հազիրանին (հունիս), 136 թվականին:

էջ 371–372

Աբու Ջաաֆարը Հայաստանի կառավարիչ նշանակեց Յազիդ իբն Ուսայդ ալ-Սուլամիին[46], իսկ Ատրպատականում՝ Յազիդ իբն Հատիմ ալ-Մուհալլաբիին, որը նմննցի արաբներին Բասրայից այստեղ փոխադրեց և առաջինն էր, որ նրանց բերեց: Նա Ռավվադ իբն Մուսան նա ալ-Ազդիին տեղավորեց Դավրեժում (Տարրիզ) և մինչև Բադդ, Մուռ իբն Ալի ալ-Թաիին բնակեցրեց Նարիզում[...]Համադանիին՝ Միանիջում: Այսպիսով նա ցրեց նմննցի ցեղերին: Ատրպատականում

նիզարի ցեղերից ոչ մեկը չկար, բացի ալ-Սաֆար իբն ալ-Հայս ալ-Ուտրիից ու նրա հորեղբորորդի՝ ալ-Բահս իբն Հալբասից:

Ապա խազարները չարժվեցին Հայաստանի կողմերը ու հարձակվեցին Յազիդ իբն Ուսայդ ալ-Սուլամիի վրա: Վերջինս գրեց Աբու Ջաաֆարին, տեղեկացնելով, որ խազարաց թագավոր Ռաս Թարխանը հարձակվել է մեծ զորքով, իսկ իր տեղակալը (խալիֆա) պարտվել է: Աբու Ջաաֆարը նրան ուղարկեց Ջիբրիլ իբն Յահյա ալ-Բաջալիին, Ասորիքի, Ջազիրայի ու Մոսուլի զորքերից քսան հազարով: Սրանք կռվի նկան խազարների դեմ, սակայն մահմեդականները մեծ բազմությամբ կոտորեցին, Ջիբրիլն ու Յազիդը փախուստի դիմեցին, մինչև որ Հասան Խիրս:

Երբ Աբու Ջաաֆարը, լսեց թե ինչ է կատարվել և ինչպես խազարները հայտնվել ու մտել են իսլամի երկիրը, բանտերից յոթ հազար հոգու հանեց, ապա մարդ առաքեց ու տարբեր երկրներից մեծ զորք հավաքեց և ուղարկեց նրանց գործավորների ու որմնադիրների հետ: Եվ կառուցեցին Կամախ (Քամխ)[47], ալ-Մուհամմադիյա և Բաբ Վակ քաղաքները ու բազում քաղաքներ, որոնք մահմեդականների հենակետերը դարձան: Նա ռազմիկներ (կայազորներ) տեղավորեց, որոնք վերսկսեցին պատերազմը, նրանց [բնակիչները?] կռվեցին սրանց դեմ, իսկ մահմեդականները ուժեղացան այդ քաղաքներում և երկիրը հանդարտվեց:

Ապա Հայաստանում ըմբոստացան ծանարները (աննարիյա) և Աբու Ջաաֆարը Հասան իբն Կահթաբային որպես կառավարիչ առաքեց Հայաստան: Նա կռվեց, սակայն անզոր գտնվեց նրանց առջև և գրեց Աբու Ջաաֆարին նրանց կատարած գործերի ու բազմության մասին: Նա (Աբու Ջաաֆարը) ուղարկեց Ամիր իբն Իսմայիլ ալ-Հարիսիին, քսան հազար զորքով: Նրանք (արաբները) բախվեցին ծանարների հետ ու սաստիկ կռիվ տեղի ունեցավ, մի քանի օր կռվում էին իրար դեմ: Սակայն Ալլահը հաղթանակ պարգևեց նրանց (արաբներին) և մի օրում նրանցից (ծանարներից) տասնվեց հազար մարդ կոտորվեց: Ապա [Հասանը] նկավ Տիղիս (Տաֆլիս) ու կոտորեց իր մոտ եղած գերիներին և ծանարներին հետապնդեց ուր էլ որ լիներին:

Դրանից հետո Աբու Ջաաֆարը Հայաստանի կառավարիչ նշանակեց իր մուլա Վադիհին[48] և նա մնաց այս երկրի ու Ատրպատականի կառավարիչ Աբու Ջաաֆարի ամբողջ խալիֆայության ընթացքում:

Թարարիստանի բնակիչներն ապստամբեցին, ըմբոստություն ու անհնազանդություն ցուցաբերեցին և մեծ զորքով գրոհեցին: Մահդին նրանց դեմ ուղարկեց Խազիմ իբն Խուզայմա ալ-Տամիմին ու Ռաուհ իբն Հատիմ ալ-Մուհալլաբիին, որոնք փախուստի մատնեցին նրանց զորքերը և Թարարիստանը նվաճվեց 142 (4 մայիս 759 – 21 ապրիլ 760) թվականին:

էջ 371-374

Աբու Ջաաֆարը Բաղդադ փոխադրվեց 144 (11 ապրիլ 761 – 31 մարտ 762) թվականին: Նա ասում էր՝ սրանից ավելի հարմար տեղ չեմ գտել քաղաք կառուցելու համար, քանի որ գտնվում է Տիգրիսի ու Եփրատի, Բասրայի ճանապարհի, Ուբուլլայի, Ֆարսի ու չրջակայքի, Մոսուլի, Ջազիրայի, Ասորիքի, Եգիպտոսի, Մաղրիբի, Ջաբալի ճանապարհի ու Խորասանի միջև: Տիգրիսի արևմտյան ափին իր քաղաքի հիմքերը դրեց, որը հայտնի է Աբու Ջաաֆարի քաղաք անունով: Ջորս դուռ (դարպաս) դրեց, ընդ որում մի դուռը կոչեց Խորասանի դուռ (Բաբ Խուրասան), որը Տիգրիսի վրա էր, մի դուռը կոչեց Բասրայի դուռ, որը նայում էր ալ-Սարատի վրա, իսկ սա սկիզբ է առնում Եփրատից ու հասնում Տիգրիսին: Մի դուռն էլ կոչեց Քուֆայի դուռ, ու մյուսը՝ Ասորիքի դուռ (Բաբ ալ-Շամ): Այս դռներից ամեն մեկի վրա չինեց հավաքավայրեր (մաջալիս) ու ոսկեզօծ գմբեթներ, ուր ձիով բարձրանում էին:

Պարսպի լայնությունը ներքևում յոթանասուն կանգուն էր: Նա ամբողջ Բաղդադի չուրջը պարիսպ կառուցեց, ջանասիրությամբ չինեց, ճարտարապետներ (մուհանդիս), որմնադիրներ ու գործավորներ բերել տվեց ամեն քաղաքներից: Իր մաուլաներին ու զորավարներին հողամասեր հատկացրեց քաղաքի ներսում, որոնց անունով էլ կոչվեցին քաղաքի փողոցները ու նրանց չինարարություն կատարել տվեց: Ուրիշներին տեղ հատկացրեց քաղաքի դռների մոտ, զորականներին տվեց քաղաքի արվարձանները (արբատ), իր տոհմի անդամներին տվեց ծայրամասերը: Հողամասեր հատկացրեց իր որդուն Մահդիին և իր տոհմի մի չարք անդամներին, մաուլաներին ու զորավարներին:

Ուխտագնացությունից վերադարձին Աբու Ջաաֆարը գնաց Բաղդադ և կանգ առավ քաղաքի կենտրոնում Բաբ ալ-զահաբ (Ոսկե դուռ) կոչված պալատում 145 (1 ապրիլ 762 – 20 մարտ 763) թվականին: Շուկաները նախ քաղաքի ներսում էին, սակայն նա դուրս բերեց դեպի Քարխ:

էջ 387

Աբու Ջաաֆարը կառուցեց Մամեստիա (Մասսիսա) քաղաքը[49], որը նախապես փոքրիկ բերդ էր եղել: Ասվում է, որ այն կառուցել է Արդալլահ իբն Արդ ալ-Մալիք իբն Մարուանը: Հռոմեները ամեն ժամանակ հարձակվում էին և քանդում, փչացնում այս վայրը: Նա (Աբու Ջաաֆարը) չուրջը պարիսպ կառուցեց, այնտեղ բնակեցրեց ռազմիկների ու հավաքեց բանտերում եղածներին: Այս չինարարության գործակալներն էին ալ-Աբբաս իբն Մուհամմադը և Սալիհ իբն Ալին:

էջ 389

[Մանսուրը] մեռավ Զու-լ-հիջջայի 3-ին, 158 թվականին (5 հոկտեմբեր 775):

էջ 390

Նրա օրոք 138 (755-756) թվականին արշավանք կատարեցին Սալիհ իբն Ալին, որն Ասորիքի ջունդի կառավարիչն էր և Աբբաս իբն Մուհամմադ իբն Ալին, որը Խորասանի կառավարիչն էր: Ռումի երկիրը արշավանքներ չէին կատարվել Ղամր իբն Յազիդի 125 (742-743) թվականի արշավանքից հետո: Ասորիքի ու Սահմանային ամրությունների կառավարիչ Սալիհ իբն Ալին իր կողմից զորավարների էր ուղարկում Ռումի երկիրը արշավելու, որոնց հրամանատարներն էին իր որդին՝ Ֆադլ իբն Սալիհը և ուրիշներ:

Այսպես 142 (759-760) թվականին [արշավեց] Աբբաս իբն Մուհամմադը: 143 (760-761) թվականին՝ նույնը, 145 (762-763) թվականին՝ Հումայդ իբն Կահթաբան, 146 (763-764) թվականին՝ Մուհամմադ իբն Իբրահիմը, 147 (764-765) թվականին՝ ալ-Աբրիդ իբն Արդալլահ իբն ալ-Հարիսը, 148 (765-766) թվականին՝ Ֆադլ իբն Սալիհը, 149 (766-767) թվականին՝ Յազիդ իբն Ուսայդը, 155 (771-772) թվականին՝ նույնը, իսկ 157 (773-774) թվականին՝ Զուֆար իբն Ասիմ ալ-Հիլալին:

ՄԱՀԴԻԻ ՕՐԵՐԸ

էջ 392

Նա Մուհամմադ իբն Արդալլահ ալ-Մանսուրն է, որի մայրն էր Ումմ Մուսա բինտ (դուստր) Մանսուր ալ-Հիմյարին: Խալիֆա հռչակվեց Մանսուրի մահացած օրը: Նրա համար Ռաբին համաձայնության երդում (բայաա) վերցրեց Մենքայում ներկա հաշիմիներից (Աբբասյաններ) ու զորավարներից:

էջ 394

Նա հրամայեց բանտերից դուրս բերել պարտապաններին և այլ մարդկանց, ազատ արձակեց ու հրամայեց նրանց տալ ընծաներ,

նվերներ և դրամական միջոցներ: Ապա բոլոր մարդկանց արձակեց և ամեն մեկին հագցրեց ու տեղ հասցրեց ըստ հնարավորին:

էջ 395

Մահդին վերցրեց Իսա իբն Մուսայի գահաժառանգության իրավունքը, այդ բանը գնելով տաս միլիոն դիրհեմով: Նա իր որդու՝ Մուսայի համար համաձայնության երդում ապահովեց (բայաա) 159 (775 – 776) թվականին: Ապա նման երդում ապահովեց իր Հարուն որդու համար, որպես Մուսայից հետո երկրորդ ժառանգորդ:

էջ 396

Նա կառուցեց 163 (17 սեպտեմբեր 779 – 5 սեպտեմբեր 780) թվականին Հադաս կոչված սահմանային ամրոցները, որպեսզի դիմադրի թշնամուն և նա մղի:

Բանն այն է, որ հոռոմները արշավել էին Մարաշ, չատերին գերեվարել ու կոտորել, սակայն երբ Մահդին կառուցեց Հադասը, Սահմանային գոտու բնակիչներն իրենց ավելի ուժեղ զգացին: Նա իր Հարուն որդուն այդ տարի արշավանքի ուղարկեց, զորավարների ու զորքի հետ միասին և նրան ճանապարհ դրեց մինչև Պիրամոս (Ջայհան) գետը: Այդ արշավանքի ժամանակ Հարունը նվաճեց Սամալուն և բազմաթիվ բերդեր:

Ապա նա նրան արշավանքի ուղարկեց 164 (6 սեպտեմբեր 780 – 25 օգոստոս 781) թվականին և [Հարունը] հասավ Կոստանդնուպոլիս: Հոռոմները հաշտություն խնդրեցին ու նա հաշտություն կնքեց ու հեռացավ:

էջ 401

Մահդին Բաղդադից դուրս եկավ Մուհառամի 12-ին 169 թվականին (26 հուլիս 785) դեպի Ջաբար նահանգը և կանգ առավ Ռադդ կոչված գյուղում Մասաբադանի հողում: Դուրս եկավ որսի և ամբողջ օրը հետապնդեց [որսը]: Շները մի եղնիկ էին հալածում և նա կամեցավ հասնել նրան: Եղնիկն անցավ մի ձվերակի դռնից, անցան նաև շները, իսկ ձին սուրացնելով նրանց հետևից և նա (Մահդին) խփվեց դռանը ու նրան տարան վրանները: Մուհառամի 22-ին, 169 թվականին (6 օգոստոս 785) նա մահացավ քառասունութ տարեկան հասակում:

էջ 402

Նրա օրոք զորքը [Ռումի դեմ] արշավանքի տարան հետևյալները.

159 (775 – 776) թվականին հոռոմները եկան Սամոսատ, չատերին գերեվարեցին և նա (Մահդին) ուղարկեց իր մաուլա Սաղիրին, որը փրկեց մահմեդականներին: Ապա զորքն արշավանքի տարավ Աբրաս իբն Մուհամմադը և հասավ Անկիրիա (Անկիրա):

160 (776– 777) թվականին արշավեց Սումամա իբն ալ-Վալիդ ալ-Աբսին:

161 (777 – 778) թվականին արշավեց Իսա իբն Ալին, որին պատահեց հոռոմների զորքը և պաշարեց:

162 (778 – 779) թվականին Հասան իբն Կահթաբա ալ-Թաին:

163 (779 – 780) թվականին Մահդիի որդի Հարունը, որը գրավեց Սամալուն:

164 (780 – 781) թվականին դարձյալ արշավեց Հարունը և հասավ Կոստանդնուպոլսի ծոցը:

166 (782 – 783) թվականին Սումամա իբն ալ-Վալիդը:

167 (783 – 784) թվականին ալ-Ֆաղլ իբն Սալիհը:

168 (784 – 785) թվականին Մուհամմադ իբն Իբրահիմը:

ՀԱՐՈՒՆ ԱԼ-ՌԱՇԻԴԻ ՕՐԵՐԸ

էջ 407

Հարուն ալ-Ռաշիդ իբն Մուհամմադ ալ-Մահդին, որի մայրն էր ալ-Խայզուրանը, խալիֆա դարձավ իր եղբոր՝ Մուսա [ալ-Հադիի] մեռած օրը՝ Ռաբի Ա 14-ին 170 թվականին (14 սեպտեմբեր 786):

[Հարունը] Ֆաղլ իբն Յահիային նշանակեց Խորասանի կառավարիչ և նա երբ հասավ, տեսավ, որ Թալականի ժողովուրդն ապստամբել է: Նա գրավեց Թալականը: Հարձակվեց Թուրքաց տերը մեծ բազմությամբ և հանդիպեց Ֆաղլի զորքին ու նրանք ուժեղ ընդհարում ունեցան: Նա խփեց Թուրքաց տիրոջ դեմքին, որն ընկճվեց և Ֆաղլը ջարդեց նրա զորքն ու կողոպտեց ունեցվածքը:

էջ 410

Հարունը դուրս եկավ Ասորիք գնալու նպատակով, սակայն երբ լսեց Աբու-լ-Հայզամի սպանության լուրը, գնաց Սահմանային ամրոցները: Նա Հարսամա իբն Այանին արշավանքի ուղարկեց Ռումի երկիրը և հրամայեց կառուցել Տարսոնը 171 (787 – 788) թվականին: Նա ամուր կառուցեց, հինգ դուռ դրեց, իսկ չուրջը՝ ութսունյոթ աշտարակ:

[Տարսոնն] ունի մեծ գետ, որը մեջտեղից է նրան ճեղքում և վրան կամարակապ կամուրջներ կան: Շինարարությունն սկսել էր նրա (Հարունի) մաուլա Աբու Սուլայմանը:

էջ 415

Ռաշիդը իր [ավագ] որդուն՝ Մուհամմադ ալ-Ամինին գահաժառանգ դարձնելուց հետո, Մամուն որդուն ևս գահաժառանգության համար համաձայնության երդում (բայաա) ապահովեց 183 (799 - 800) թվականին: Նրան երդում տվեցին բոլոր մարդիկ, նույնիսկ չուկաներում: Այս երկու դնպքերի (երկու որդիների գահաժառանգ հռչակելու) միջև ութ տարի էր անցել: Նա Մամունին ու Մուհամմադին իրավագետների (ֆակիհ) ու հադիսագետների մոտ էր ուղարկում դասեր լսելու, ընտրելով նրանց համար կրոնագետների ու տրամաբանության հմուտ (ահլ ալ-նազար) գիտնականների: Մուհամմադը դանդաղ էր սովորում, իսկ Մամունն արագ էր յուրացնում:

Ռաշիդը բերել տվեց կառավարիչներին, բնակիչներին, զինվորականներին, կալվածատերերին, բերքը գնողներին և ընդունողներին, որոնց վրա կուտակված գումարներ կային: Նրանցից այն (պարտքերը) պահանջելու համար վերակացու նշանակեց Աբդալլահ իբն ալ-Հայսամ իբն Սամին, որը տարբեր ձևի տանջանքներով պահանջեց նրանցից: Այն տևեց ընդհատ 184 (800) թվականին:

էջ 422

Պատմել է Իսմայիլ իբն Սուբայհը, թե՝ Ռաշիդը մի օր Բաղդադում իր մոտ կանչեց ու մտա:

Ասաց՝ ուզում եմ քեզ մի գաղտնիք հայտնել, սակայն եթե լսեմ թե որևէ մեկին պատմել ես, վիզդ կկտրեմ: Ես ետ կանգնեցի և ասացի՝ ով հավատացյալոց իշխան, եթե որևէ մեկին ասել ես, կարիք չկա, որ ինձ էլ ասես: Ասաց՝ ոչ ոքի չեմ ասել ու չեմ ասի: Ես ուզում եմ կոտրել Բարմաքի տոհմը[50] այնպես, որ ոչ ոքի նման ձևով չեն սպանել և նրանց հավիտյան մեջտեղից վերացնեմ: Ասացի՝ Ալլահը հաջողություն տա հավատացյալոց իշխան և քեզ առաջնորդի:

Անցավ մեկ տարի, ապա երկու, երեք և չորրորդ տարվա սկզբին կոտորեց նրանց, ընդ որում Ջաաֆարի[51] սպանությունը կատարվեց Սաֆար ամսին 188 թվականին (19 հունվար – 16 փետրվար 804):

էջ 423

Ռաշիդն իր կասիմ որդուն արշավանքի ուղարկեց 188 (803-804) թվականին: Նրա հետ էր Աբդ ալ-Մալիք իբն Սալիհ ալ-Հաշիմին, իսկ հրամանատարն էր Իբրահիմ իբն Օսման իբն Նահիքը: Նա պաշարեց Հիսն Սինանը և Կուռան: Սակայն վրա հասան սաստիկ սովը, կարիքը և սղությունը և հոռոմները հաշտություն առաջարկեցին նրանք հարյուր քսան մահմեդական [գերիների] ազատ արձակելու պայմանով, իսկ նա ընդունեց ու հեռացավ:

էջ 426-428

ՀԱՐՑՈՒՐ ՈՒԹՍՈՒՆԻՆԸ
(8 դեկտեմբեր 804 – 26 նոյեմբեր 805) ԹՎԱԿԱՆ

Հայաստանը Մահդիից հետո ապստամբել էր և մնաց ապստամբած վիճակում նաև Մուսայի (Հադիի) օրոք: Երբ իշխանության գլուխ անցավ Ռաշիդը, Խուզայմա իբն Խազիմ ալ-Տամիմին նշանակեց Հայաստանի կառավարիչ, որը մնալով մեկ տարի երկու ամիս զսպեց ու երկրում կարգ հաստատեց և բնակիչները հնազանդվեցին:

Ապա Ռաշիդը նշանակեց Յուսուֆ իբն Ռաշիդ ալ-Սուլամիին Խուզայմա իբն Խազիմի փոխարեն: Սա Նիզարի [ցեղախմբի] մարդկանց տեղափոխեց այս երկիրը: Նախապես Հայաստանում գերիշխող էին Եմենի [ցեղախմբի] արաբները, իսկ Յուսուֆի օրոք բազմացան նիզարիները:

Հետո նշանակեց Յազիդ իբն Մազիադ իբն Զաիդա ալ-Շայբանիին, որն ամեն կողմից այստեղ փոխադրեց Ռաբիա [ցեղախմբի] մարդկանց, այնքան որ այսօր նրանք գերակշիռ թիվ ունեն: Նա ամենախիստ ձևով զսպեց երկիրը, այն աստիճանի, որ ոչ ոք չէր կարող չարժվել:

Նրանից հետո [Ռաշիդը] նշանակեց Աբդ ալ-Քարիր իբն Աբդ ալ-Համիդին՝ Զայդ իբն ալ-Խաթթաբի որդուն, որի կացարանը (մանզիլ) Խառանում էր: Նա եկավ [Հայաստան] Դիար Մուդար [ցեղախմբի] մի խումբ մարդկանց հետ, սակայն չորս ամիս մնալուց հետո հեռացավ:

Ապա նշանակեց ալ-Ֆադլ իբն Յահիա իբն Խալիդ ալ-Բարմաքիին, որն անձամբ եկավ, և հենց որ հասավ, ուղղվեց դեպի Դաբբանդ, արշավեց Համզին բերդը, սակայն Համզինի ժողովուրդը նրան փախուստի մատնեց: Ոչ մի բանի չնայելով, նա հեռացավ ու գնաց Իրաք, իր փոխարեն թողնելով Օմար իբն Այուբ ալ-Քինանիին:

Երբ Ֆադլը եկավ Իրաք, ուղարկեց Աբու-լ-Սաբահին, որպես Հայաստանի հարկերի [վերատեսուչ] և Սաիդ իբն Մուհամմադ ալ-Հառանի ալ-Լահբիին՝ որպես ռազմական գործերի [վերատեսուչ]:

Պարտավի բնակչությունն ապստամբեց Աբու Սաբահի դեմ ու սպանեց նրան: Հայաստանն ապստամբեց և հանդես եկավ Աբու Մուսլիմ ալ-Շարին (խարիջի): Ֆադլը Հայաստանի կառավարիչ նշանակեց Խալիդ իբն Յազիդ իբն Ուսայդ ալ-Սուլամիին[52], իսկ նա [օգնության] առաքեց Արդ ալ-Մալիք իբն Խալիֆա ալ-Հարաչիին հինգ հազարով: Նրանք Ռույանում բախվեցին Աբու Մուսլիմ ալ-Շարիի հետ, իսկ նա հաղթեց նրանց և ինքը՝ Աբու Մուսլիմը գնաց ու գրավեց ալ-Քիլար ամրոցը:

Ռաչիդը Հայաստանի կառավարիչ նշանակեց ալ-Աբբաս իբն Ջարիր իբն Յազիդ իբն Ջարիր իբն Աբդալլահ ալ-Բաջալիին[53], որը երբ հասավ Պարտավ, բայլականցիները ապստամբեցին, իսկ նա պաշտպանվեց նրանցից Պարտավի արվարձանում և Մաադան ալ-Հիմսիին վնց հազար զորքով ուղարկեց Աբու Մուսլիմի դեմ: Սրանք իրար բախվեցին ու սպանվեց Մաադան ալ-Հիմսին, իսկ Աբու Մուսլիմը գնաց Դվին, չորս ամիս պաշարելուց հետո հեռացավ, գնաց Բայլական և այնտեղ կանգ առավ:

Հայաստանի վիճակը բարդացավ և Ռաչիդն առաքեց Յահիա ալ-Հարաչիին, տասներկու հազար զորքով, իսկ Յազիդ իբն Մազիադ ալ-Շայբանիին՝ տաս հազարով: Նա հրամայեց Յազիդ իբն Մազիադին գնալ Հայաստան, իսկ Հարաչիին կարգադրեց հարձակվել Ատրպատականի վրա: Այդ ժամանակ Ատրպատականում բռնացել էր Մուհալհիլ ալ-Տամիմին, իսկ Հարաչին նրա հետ հանդիպեց, կռվեց ու փախուստի մատնեց և երկիրը կարգի բերեց: Ապա գնաց Հայաստան, որպեսզի Յազիդ իբն Մազիադի հետ կռվի դուրս գա Աբու Մուսլիմ ալ-Շարիի դեմ, սակայն երբ երկիր հասավ, վերջինս մահացել էր: Նրան հաջորդեց ալ-Սաբան իբն Մուսա ալ-Բայլականին [...] մասուլան, որի կացարանը (մանզիլ) Բայլականն էր: Երբ սա տեղեկացավ Յահիա ալ-Հարաչիի գալստյան մասին, նրա դեմ առաքեց ալ-Խալիլ իբն ալ-Սաբանին, իր լավագույն հեծյալներով: Հարաչին բախվեց նրա հետ, գերեց նրան ու դիմեց Բայլական: Երբ Սաբանն իմացավ այս լուրը, դուրս եկավ ու փախավ գնաց Քիլար (Շնհեր) ամրոցը: Բայլականի բնակիչները եկան Հարաչիի մոտ ու երաշխավորագիր խնդրեցին, իսկ նա մտցրեց նրանց քաղաք և երաշխավորագիր տվեց ժողովրդին, սակայն [քաղաքի] բերդը քանդեց:

Սաբանն ութ հազարով գնաց Յազիդ իբն Մազիադի մոտ երաշխավորագիր խնդրելով և նա տարավ նրան Ռաչիդի մոտ: Երբ երկիրը հանդարտվեց, Ռաչիդը Մուսա իբն Իսա ալ-Հաչիմիին կառավարիչ նշանակեց: Սա Հայաստանում մնաց մեկ տարի, սակայն նորեն սկսեց խռովություններ և տարբեր գավառներ ապստամբեցին: Այդ մասին գրեց Ռաչիդին, իսկ վերջինս ասաց՝ հարմար եմ գտնում միայն Հարաչիին ու հեռացնելով Մուսա իբն Իսային, Հարաչիին առաքեց

որպես կառավարիչ և նա սրակոտոր արեց նրանց ու վիճակը կարգավորվեց:

Ռաչիդը կառավարիչ նշանակեց Ահմադ իբն Յազիդ իբն Ուսայդ ալ-Սուլամիին, սակայն երբ նա եկավ, Հարաչիի հետ ու նրանից էլ առաջ այստեղ եկած խորասանցիները ապստամբեցին և կռվի բռնվեցին: Նրանք համառորեն ընդվզեցին և ասում էին՝ քեզ չենք լսի ու հպատակվի:

Ապա Ռաչիդը նշանակեց Սաիդ իբն Սալմ իբն Կուտայբա ալ-Բահիլիին[54]: Երբ երկիր հասավ, մարդիկ ամիսներ չարունակ թշնամական դիրք բռնեցին, իսկ նա նեղեց պատրիկներին: Նրա դեմ ըմբոստացավ Դարբանդի ժողովուրդը և հարձակվեց նրա նշանակած տեղական կառավարչի վրա: Դարբանդի տերն էր դարձել ալ-Նաջմ իբն Հաչիմը, որին Սաիդ իբն Սալմը սպանեց: Ապստամբեց նրա որդին, Հայան իբն Նաջմը, որն սպանեց Դարբանդում Սաիդի նշանակած կառավարչին ու նրա գլուխը ցուցադրելով ապստամբության կոչ արեց: Գրեց խաղարաց թագավոր խաքանին և նա մեծ զորքով հարձակվեց, ասպատակ սփռեց մահմեդականների դեմ, կոտորեց ու մեծ բազմություն գերեվարեց: Նա եկավ ու հասավ Կուր գետի կամուրջը և մահմեդականների մեծ բազմություն գերեվարեց, բոլորին կոտորեց, երկիրը վառեց, կոտորեց կանանց ու երեխաներին:

Երբ Ռաչիդն այս բանները լսեց, ուղարկեց ալ-[...]արին՝ հրամայելով նրան ձերբակալել Սաիդ իբն Սալմին և ցուցադրել մարդկանց առջև: Երբ տեղ հասավ, Սաիդը նրան փող տվեց և ալ-[...]արը համաձայնեց առնել փողը: Երբ Ռաչիդն այդ բանը լսեց, ուղարկեց Նասր իբն Հաբիբ ալ-Մուհալլաբիին որպես կառավարիչ, սակայն մի քիչ մնալուց հետո հանեց նրան ու կառավարիչ նշանակեց Ալի իբն Իսա իբն Մահանին: Երբ սա տեղ հասավ, վատ վերաբերմունք ցուցաբերեց և Շարուանի ժողովուրդն ապստամբեց և երկիրը խռովեց: Ռաչիդը նշանակեց Յազիդ իբն Մազիադ ալ-Շայբանիին[55], իսկ Ալիին՝ նետուղարկեց Խորասան: Նա Յազիդ իբն Մազիադին դարձրեց Հայաստանի ու Ատրպատականի կառավարիչ: Երբ սա եկավ, մարդիկ հնազանդվեցին, իսկ նա երկրի վիճակը կարգավորեց, հաչտեցրեց նիզակռների ու նմանների [արաբներին], գրեց թագավորների ու պատրիկների որդիներին, գոհացրեց նրանց ու երկիրը հանդարտվեց:

Հետո Ռաչիդը կառավարիչ նշանակեց Խուզայմա իբն Խազիմ ալ-Տամիմին, իսկ սա բռնեց պատրիկներին ու թագավորների որդիներին ու գլխատեց նրանց և ամենավատ վերաբերմունքը ցույց տվեց: Ապստամբեցին Վիրքը և ծանարները և նա զորք ուղարկեց, իսկ նրանք կոտորեցին նրան: Նա ուղարկեց Սաիդ իբն ալ-Հայսամ իբն Շուրա իբն Զուհայր ալ-Տամիմիին մեծ զորքով և նա կռվեց Վիրքի ժողովրդի ու ծանարների դեմ, մինչև որ նրանց երկրից

արտաքսեց, ապա գնաց Տփղիս:

Խուզայմա իբն Խազիմը մեկ տարուց պակաս մնաց, ապա Ռաշիդը հեռացրեց նրան և նշանակեց Սուլայման իբն Յազիդ իբն ալ-Ասամ ալ-Ամիրիին, որը միամիտ ու հիմար ծերուկի էր. այնքան թույլ էր, որ ոչինչ չէր կարող անել և քիչ էր մնում, որ երկիրը ձեռքից գնար:

Ռաշիդը նշանակեց ալ-Աբբաս իբն Ջուֆար ալ-Հիլալիին, որի դեմ ապստամբեցին ծանարները և նա կռվի նյավ նրանց դեմ, սակայն չկարողացավ հաղթել: Ռաշիդն ուղարկեց Մուհամմադ իբն Ջուհայր իբն ալ-Մուսայիբ ալ-Դաբբիին[56] և սա Ռաշիդի նշանակած վերջին կառավարիչն էր Հայաստանում:

Եղևսիայի ժողովուրդն ըմբոստացավ 190 (805–806) թվականին և ապստամբեց իր կառավարչի դեմ: Ռաշիդը նրանց կողմը գնաց և երբ հասավ Մանբիջ, նրանց պատվիրակությունը դիմավորեց նրան իրենց ձեռքով տալով [հարկը] և թողություն խնդրեցին, իսկ նա ներեց:

Ապա դիմեց Ռումի երկիրը, ամառային արշավանք կատարեց և նվաճեց Հերակլիան ու մաթամիրը (ցորենի չտեմարան):

էջ 431

Նրա օրոք արշավանքները ղեկավարեցին.

171 (787–788) թվականին Յազիդ իբն Անբասա ալ-Հարահին, որը Իսհակ իբն Սուլայմանի կողմից էր նշանակված:

172 (788–789) թվականին՝ Մուհամմադ իբն Իբրահիմը:

173 (789–790) թվականին՝ Իբրահիմ իբն Օսմանը:

174 (790–791) թվականին՝ Սուլայման իբն Աբու Ջաաֆարը:

175 (791–792) թվականին՝ Արդ ալ-Մալիք իբն Սալիհը, սակայն ասվում է, որ նա չի մտել Հոռոմոց երկիրը, այլ լեռնանցքը հասնելուց հետո՝ ուղարկեց Ֆադլ իբն Սալիհին:

176 (792–793) թվականին՝ Հաշիմ իբն ալ-Սալեմը:

177 (793–794) թվականին՝ Դաուդ իբն ալ-Նումանը, Արդ ալ-Մալիքի կողմից նշանակված:

178 (794–795) թվականին՝ Յազիդ իբն Ղազուանը:

179 (795–796) թվականին՝ Ֆադլ իբն Մուհամմադը:

180 (796–797) թվականին՝ Իբրահիմ իբն ալ-Կասիմը:

181 (797–798) թվականին՝ Հարուն ալ-Ռաշիդը, որը գրավեց Հիսն (բերդ) ալ-Սաֆսաֆը:

182 (798–799) թվականին՝ Իբրահիմ իբն ալ-Կասիմ, Իսա իբն Ջաաֆարի կողմից:

183 (799–800) թվականին՝ Ֆադլ իբն ալ-Աբբասը:

184 (800) թվականին՝ Մուհամմադ իբն Իբրահիմը:

185 (801) թվականին՝ Իբրահիմ իբն Օսմանը:

186 (802) թվականին՝ Իբրահիմ իբն Օսմանը կրկին:

187 (802–803) թվականին՝ Կասիմ իբն ալ-Ռաշիդը, Արդ ալ-Մալիք իբն Սալիհը, Իբրահիմ իբն Օսման իբն Նահիքը, և այդ անգամ սպանվեց ալ-Ռաշիդ Իբրահիմ իբն Օսմանը:

189 (804–805) թվականին՝ Ֆադլ իբն ալ-Աբբասը:

190 (805–806) թվականին՝ Ռաշիդը, որը նվաճեց Հերակլիան ու Մաթամիրը: Նա ծովի վրա արշավանքի ուղարկեց Համիդ իբն Մայուֆին: Կիպրոսի բնակիչները հաշտության պայմանագիրը խախտել էին, իսկ նա արշավեց, կոտորեց ու գերեվարեց:

191 (806–807) թվականին Ռաշիդը դուրս նկավ արշավանքի, սակայն երբ հասավ Հաղաս, զորքը արշավանքի ուղարկեց Հարսամա իբն Այանի հրամանատարության տակ և ինքը մնաց սահմանային ամրությունների գոտում, մինչև որ Հարսաման հեռացավ:

ՄՈՒՀԱՄՄԱԴ ԱԼ-ԱՄԻՆԻ ՕՐԵՐԸ

էջ 433

Երդում տրվեց Մուհամմադ ալ-Ամին իբն Հարուն ալ-Ռաշիդին, որի մայրը Զաաֆար իբն Մանսուրի դուստրն էր: Խալիֆանների շարքում հայրն ու մայրը Հաշիմի էին միայն Ալի իբն Աբու Թալիբը և Մուհամմադը (Ամին): Նրան երդում տվեցին Թուսում, նույն օրը, երբ մահացավ Ռաշիդը, այսինքն կիրակի օրը՝ Ջումադա Ա սկիզբը, 193 թվականին (20 փետրվար 809):

էջ 435

Նա Հայաստանի կառավարիչ նշանակեց Ասադ իբն Յազիդ իբն Մազիադին, որը գալով՝ տեսավ, որ երկրի մի մասին տիրացել են Յահիա իբն Սահիդ կոչեցյալ Քաուքաբ ալ-Սուբհ և Մարուան իբն Մուհամմադ իբն Մարուան [Խալիֆայի] մաուլա Իսմայիլ իբն Շուաբը: Նրանք Վիրքի կողմերում էին, իսկ նա խորամանկությամբ երկուսին էլ բռնեց, ապա ներեց ու արձակեց: Նա լավ բարքի տեր էր ու առատաձեռն:

Ապա Մուհամմադ [Ամինը] հեռացրեց նրան և Հայաստանի կառավարիչ նշանակեց Իսհակ իբն Սուլայման ալ-Հաշիմիին[57], որն իր փոխարեն առաքեց որդուն՝ Ֆադրին և սա մնաց [պաշտոնում] մինչև «Հեռացվածի» (մախլու) իշխանության վերջը:

Նա (Ամինը) Մուհամմադ իբն Սահլ իբն Սարհ ալ-Քինանիին նշանակեց Եմենի կառավարիչ, որը Պաղեստինի բնակիչներից էր: Սա

մնաց երեք տարի, ապա հեռացվեց ու փոխարենը նշանակվեց Ջարիր իբն Յազիդ ալ-Բաջալին: Սահլ իբն Սարհը Եմենից դուրս եկավ հսկայական ունեցվածքով և գալով Պաղեստին, ձեռք բերեց պալատներ ու կալվածներ:

ԼՂ 436

Որոշ մարդիկ Մուհամմադին (Ամին) լարեցին Մամունի դեմ և նրանց միջև վատ հարաբերություններ ստեղծվեցին: Հրահրողներն էին Ալի իբն Իսա իբն Մահանը և Ֆադլ իբն ալ-Ռաբիան: Նրան համոզեցին, որ պետք է երդում տրվի նրա որդուն իրրև իրենից հետո գահաժառանգի, իսկ Մամունի [թեկնածուները] պետք է հանել: Այդպես էլ արեց և երդում տրվեց նրա որդուն՝ Մուսային և դա կատարվեց Ռաբի Բ ամսի 4-ին, 194 թվականին (16 հունվար 810): Նա հավաքեց այն պայմանագրերը, որ գրել էր Ռաշիդը իրենց երկուսի [ժառանգության] մասին ու վառեց և նրանց երկուսի (նրբայրների) միջև թշնամություն սկսեց: Մուհամմադը (Ամին) գրեց Մամունին՝ հրամայելով գալ իր մոտ բոլոր զորավարներով հանդերձ: Սակայն նա պատասխանեց, որ ինքը պարտավոր չէ նրան լսել, կամ հնազանդվել: Նա (Ամինը) գրեց նաև Խորասանում գտնվող զորավարներին, որոնք նույն ձևով պատասխանեցին, թե՝ մենք քեզ հավատարիմ կլինենք, եթե դու քո նեղոր նկատմամբ ունեցած ուխտը պահես, սակայն դու խախտեցիր պայմանագիրը, կամայականորեն չարժվեցիր, արհամարհելով հավատը և ուխտերը:

ԼՂ 439-441

Արդ ալ-Մալիք իբն Սալիհը մնում Ռակկայում 196 (811-812) թվականին և նա Մուհամմադ իբն Հարունի կողմից կառավարիչ էր Ջազիրայի, Կիննասրինի Ջունդի, Ավասիմի ու Սահմանային ամրությունների վրա: Երկիրը խառնաչփոթ վիճակում էր նրա մահվանից հետո, ամեն մի պետ (ռաիս) մի մասի տիրացավ (բռնացավ): Գոյացավ երկու խմբավորում (հիզբ), մեկը կողմնակից էր Մուհամմադին, մյուսը՝ Մամունին: Ջմնաց մի երկիր, ուր իրար դեմ չկռվեին, չկար որևէ իշխանություն, որ արգելեր նրանց:

Թահիրը նկավ Վասիթ Ռաջաբի 3-ին (21 մարտ 812), երբ արդեն Մամունին երդում էին տվել Բասրայում, Քուֆայում, Մոսուլում, Եգիպտոսում, Ռակկայում:

Թահիրը նկավ Բաղդադ Ռաջաբի 8-ին 196 թվականին (24 մարտ 812): Նա Բաղդադում գտնվող զորքին կոչ արեց երդում տալ

Մամունին և նրանք ընդառաջեցին:

Մուհամմադը չորս հարյուր դրոշ տվեց զորավարներին, Ալի իբն Մուհամմադ իբն Իսա իբն Նահիքին հրամանատար նշանակեց ու հրամայեց գնալ Հարսամայի դեմ, որը Նահրավանում բանակ էր դրել: Նրանք հանդիպեցին Ռամադան (16 մայիս – 14 հունիս) ամսին: Նա հաղթեց նրանց, գերելով Ալի իբն Մուհամմադ իբն Իսա իբն Նահիքին և ուղարկեց նրան Մամունին:

Նա գրոհեց մինչև հասավ Նահրայն կոչված վայրը, Բաղդադից մեկ կամ երկու փարսախ հեռավորության վրա, իսկ Թահիրը կանգ առավ Սարսար գետի մոտ Բաղդադից չորս փարսախ հեռու: Այսպիսով, Թահիրը [քաղաքի] արևմտյան կողմում էր, իսկ Հարսաման արևելյան կողմում և կռիվը Բաղդադում գնում էր երկու կողմի վրա միաժամանակ: Բանն այն է, որ [նման պայմաններում] վաճառականներին չէին անհանգստացնում, չուկաները գործում էին և նույն վաճառականի մոտ թե՛ Մամունի մարդիկ էին գալիս, թե՛ Մուհամմադի (Ամինի) և ոչ մի վնաս չէր լինում:

Ըմբոստացան Մուհամմադի դեմ արևելքներ[58] ու զինվորականները և կոչ արեցին հօգուտ Մամունի, գրեցին Թահիրին, պատանդներ տվեցին նրան, իսկ Թահիրը մտավ Բաղդադ և ճեղքելով արևմտյան կողմը (ալ-Ջանիբ ալ-Ղարբի), հասավ Անբարի դուռը (Բաբ ալ-Անբար):

Բաղդադի արևելյան մասի ժողովուրդը նույնպես ապստամբեց և կոչ արեցին Մամունի համար:

Ջուհայր իբն Մուսայիբը մտավ Բաղդադ Քիլուադիի կողմից նավերով, որոնց վրա կային քարանետ մեքենաներ և քարընկեցներ: Մուհամմադը գնաց իր պալատը, որը հայտնի էր Խուլդ (անմահություն) անունով, Բաղդադի արևմուտքում ու այնտեղ ամրացավ, իսկ Ջուհայրը քարեր նետեց մեքենաներով:

Հարսաման մտավ Խորասանի դռնով Ասքար ալ-Մահդիի կողմից, որը Բաղդադի արևելյան կողմում է, իսկ Թահիրը իր ճամբարից մտավ Աբու Ջաաֆարի քաղաքը (կենտրոնը) և նրանք պաշարեցին Խուլդ պալատը, իսկ Մուհամմադը (Ամին) դուրս եկավ Խորասանի դռնից, ապա հասնելով Տիգրիս, ուզեց դիմել Հարսամային: Թահիրի մարդիկ տեղեկանալով ըմբոստացան Հարսամայի դեմ, որն իր մի հրաձակ նավում էր և ջրասույզ արեցին նրան ու մի ժամից դուրս բերեցին: Դուրս եկավ Մուհամմադը (Ամին) ծածկոցով ու չալվարով ու նստեց ափին, իսկ զինվորներն անցնում էին կողքով ու չէին ճանաչում, մինչև որ մի մաուլա ճանաչեց ու տարավ իր տունը:

Այս լուրը հասավ Թահիր իբն ալ-Հուսայնին, սակայն տարակարծիք եղան Թահիրը, Հարսաման և Ջուհայրը և Թահիրը հրամայեց իր մաուլա Կուրայշ ալ-Դինդանիին, որը նրա (Ամինի) գլուխը կտրեց, ցցի

վրա ամրացրեց և նա (Թահիրը) գնաց իր ճամբարը՝ Բուստանում: Ապա այն ուղարկեց Մամունին:

Է�ջ 442

Նրա խալիֆայության տևեց Ռաշիդի մեռնելու օրվանից մինչև իր սպանության՝ չորս տարի յոթ ամիս ու քսանմեկ օր, իսկ Հարունի (ալ-Ռաշիդ) մեռած օրից մինչև իր հանվելը (գահազուրկ լինելը)՝ երեք տարի: Սպանության օրը քսանյոթ տարեկան ու երեք ամսական էր: Երկու որդի ուներ՝ Մուսա և Աբդալլահ: Նրա օրոք հիմնական տնօրինողը (վալիը) Իսմաիլ իբն Սուբայհ ալ-Հառանին էր և Ֆադլ իբն ալ-Ռաբիան: Զորքի (չուրթա) պետն էր Մուհամմադ իբն ալ-Մուսայիբը, որին հանեց ու Հայաստանի կառավարիչ նշանակեց: Իսկ նրա փոխարեն կարգեց Մուհամմադ իբն Համզա իբն Մալիքին, հետո հետացրեց ու փոխարենը դրեց Աբդալլահ իբն Խազիմ ալ-Տամիմիին: Նրա պահակազորքի (հարաս) պետն էր Իսմատ իբն Աբու Իսմատը, իսկ սենեկապետն (հաջիբ) էր Ֆադլ իբն ալ-Ռաբիան, բայց նրան փոխարինում էր որդին:

ՄԱՄՈՒՆԻ ՕՐԵՐԸ

Է�ջ 444

195 (810-811) թվականին խալիֆա դարձավ Աբդալլահ ալ-Մամուն իբն Հարուն ալ-Ռաշիդը, որի մայրն ստրկուհի (ումմ վալադ) էր. Մարաջիլ ալ-Բադղիսիյա կոչված: 198 թվականի Մուհառամ ամսին (սեպտեմբեր 813), երբ սպանվել էր Մուհամմադը (Ամին), նրան (Մամունին) միացան բոլոր երկրների բնակիչները և չմնաց մեկը, որ նրան հնազանդություն չհայտներ:

Է�ջ 445

198 (813-814) թվականին Մամունն ալ-Հասան իբն Սահլին ուղարկեց Իրաք, որպես այդ և այլ երկրների կառավարիչ: Քուֆայում ապստամբել էր Ասֆարը, որը հայտնի էր Աբու-լ-Սարայա անվամբ, իսկ նրա անունն էր ալ-Սարիյ իբն Մանսուր ալ-Շայբանի, իր հետ ունենալով Մուհամմադ իբն Իբրահիմ ալ-Ալաուիին, որը հայտնի էր Իբն Թաբաթբա անվամբ: Ապա մեռավ Մուհամմադ իբն Իբրահիմը և Աբու-լ-Սարայան նրա փոխարեն նշանակեց Մուհամմադ իբն Մուհամմադ իբն Զայդին: Իսկ Բասրան գրավել էր ալ-Աբբաս իբն Մուհամմադ իբն Մուսա ալ-Ջաաֆարը:

Եկավ Զայդ իբն Մուսա իբն Ջաաֆար իբն Մուհամմադը Քուֆայից, ուր նա ապստամբել էր և գնաց Բասրա ալ-Աբբաս իբն Մուհամմադ ալ-Ջաաֆարի հետ: Վասիթը գրավեց Մուհամմադ իբն ալ-Հասանը, որը հայտնի էր Սալկ անվամբ: Եմենը գրավեց Իբրահիմ իբն Մուսա իբն Ջաաֆարը: Մծբինում և նրա շրջակայքում բռնացավ Ահմադ իբն Օմար իբն ալ-Խաթթաբ ալ-Ռաբիան, Մոսուլում՝ ալ-Սայիդ իբն Ունսը, Նփրկերտում՝ Մուսա իբն ալ-Մուբարաք ալ-Յաչքարին, Հայաստանում՝ Աբդ ալ-Մալիք իբն ալ-Ջահհաֆ ալ-Սուլամին[59] և Մուհամմադ իբն Ատտաբը, Ատրպատականում (Ադարբայջան)՝ Մուհամմադ իբն ալ-Ռավվադ ալ-Ազդին, Յազիդ իբն Բիլալ ալ-Յամանին, Մուհամմադ իբն Հումայդ ալ-Համադանին, Օսման իբն Ափքալը և Ալի իբն Մուռ ալ-Թաին, Ջաբալում՝ Աբու Դուլաֆ ալ-Իջլին, Մուռա իբն Աբու Ռադինին, Ալի իբն Բահլուլը, Մուհամմադ իբն Զահրան, Սինանը և Զադ իբն [...]: Սիսիլայում՝ Վահն Հասսասը, իսկ նրա գավառում՝ Բիսթամ իբն ալ-Սուլուս ալ-Ռաբիան, Քաբր Տուսայում և Ռաս Այնում՝ Հարիբ իբն ալ-Ջահմը, Քայսումում ու նրան հարող Դիար Մուդարի շրջաններում՝ Նասր իբն Շարաս ալ-Նասրին, որն ամենաուժեղ կովողներից էր և անպարտելի, Կուրտսում և Ավասիմի այլ գավառներում (քուրա)՝ ալ-Աբբաս իբն Ջուֆար ալ-Հիլալին, Հիյարում ու Կիննասրինի ու նրան հարող այլ գավառներում՝ Օսման իբն Սումամա ալ-Աբսին, իսկ Հալեբի մոտ գտնվող Հազիրում՝ Մանի ալ-Տանուխին:

ԷՋ 448

Մամունը Ռիդա Ալի իբն Մուսա իբն Ջաաֆարին բերեց Մադինայից Խորասան: Նա դևսպան էր ուղարկել Ռաջա իբն Աբու Դահհաքին՝ Ֆադլ իբն Սահլի ազգականին: Նա եկավ Բաղդադ, ապա նրան տարան Մահ ալ-Բասրայի ճանապարհով մինչև Մերվ: Մամունը նրան (Ալի Ռիդա) գահաժառանգ հռչակեց Ռամադանի 8-ին, 201 թվականին (30 մարտ 817): Նա (Մամունը) մարդկանց ստիպեց կանաչ հագնվել սևի փոխարեն և այդ մասին ամեն կողմ գրավոր հայտնեց: Ռիդայի համար համաձայնության երդում տվեցին, մզկիթների մինբարներից կոչ արեցին և դինարներ ու դիրհեմներ կտրեցին նրա անունով:

ԷՋ 453

Երբ [Մամունը] հասավ Թուս, մեռավ Ռիդա Ալի իբն Մուսա իբն Ջաաֆար իբն Մուհամմադը Նուկան կոչված գյուղում 203 (818-819)

Թվականի սկզբին: Միայն երեք օր հիվանդացավ և ասվում է, թե Ալի իրն Հիշամը թունավորված նուռ կերցրեց նրան, իսկ Մամունը սաստիկ ցավեց նրա համար:

ԼՂ 453-454

Մամունը եկավ Խաղաղության քաղաքը (Բաղդադ) Ռաբի Ա ամսին 204 թվականին (26 օգոստոս – 24 սեպտեմբեր 819): Նա, ինչպես նաև զորավարներն ու զինվորները ամենքը կանաչ էին հագել: Մի չաբաթ մնալուց հետո հանեց [կանաչը] ու վերստին սև զգեստներ կրեցին:

ԼՂ 459

Մամունը Բաղդադից գնաց Ֆում ալ-Սիլհ, որը Հասան իրն Սահլի կացարանն (մանզիլ) էր : Նա ամուսնացավ Հասան իրն Սահլի դստեր հետ և այնտեղ հարսանիք արեց: Այսպիսի հարսանիք երբեք տեսնված չէր: Մամունի այնտեղ գտնվելու օրերին Հասան իրն Սահլը մեծ ծախսեր կատարեց Մամունի և բոլոր նրա հետ գտնվողների՝ նրա տոհմի (տան) անդամների, քարտուղարների, մերձավորների ու զորքի բոլոր մարդկանց համար: Նա կալվածներ, գյուղեր, հարճեր, պատանի ծառաներ (վասիֆ), ձիեր ու գրաստ ընծայեց և այս բոլորի համար գրվում էր փոքրիկ թերթերի վրա, գրվում մչկահոտ խողովակաձև գալարների (բանաղիկ, բղեղ) մեջ և չաղ էին տալիս մարդկանց գլխին: Ամեն մեկը, որ վերցնում էր գալարը, նայում էր գրվածքին և վերակացուներից ստանում [ինչ որ գրված էր]: Ապա մարդկանց վրա չաղ էին տալիս դիրհեմներ, դինարներ, մչկամկներ (ֆար ալ-միսք) և սաթի (անբար) կտորներ: Մամունը քառասուն օր մնալուց հետո հեռացավ:

ԼՂ 465

Մամունը դուրս եկավ կովի 215 թվականի Մուհառամ ամսին (մարտ 830), դիմելով Ռումի երկիրը և ամառային արշավանք կատարեց, գրավեց Անկիրիոնը (Անկարա) մասամբ հաչտությամբ, մասամբ սրով ու ավերեց: Մանուել պատրիկը այնտեղից փախավ: Ապա գրավեց Սամալու բերդը և հեռացավ ու գնաց Դամասկոս:

Երբ լուր ստացավ, որ եգիպտոսի գավառներից Բիչրուդում բնակչությունն ապստամբել է, հրամայեց իր եղբորը՝ Աբու Իսհակին որ այնտեղ ուղարկի Աֆշին Հայդար իրն Քաուսին և նա ուղարկեց:

Ապա Մամունն արշավեց Ռումի երկիրը 216 (18 փետրվար 831 – 6 փետրվար 832) թվականին, գրավեց տասներկու բերդ և բազմաթիվ ստորգետնյա ամրություններ (մաթամիր): Լսելով, որ Ռումի բռնապետը հարձակվել է, նա իր որդուն՝ Աբբասին ուղարկեց, որը հանդիպեց նրան ու հաղթեց: Ալլահը հաղթանակը տվեց մահմեդականներին:

Ռումի թագավոր Թեոփիլոսը (Տուֆիլ)[60] իր օգնական եպիսկոպոսին ուղարկեց և տվել էր մի նամակ, որն իր անունով էր սկսում: Մամունն ասաց՝ չեմ կարդա նրա ուղարկած նամակը, որ նրա անունով է սկսում և նա ուղարկեց: Այնժամ Միքայելի որդի Թեոփիլոսը գրեց նրան՝ Արաբաց թագավոր, մարդկանցից ամենաազնիվ Արդալյահին՝ Ռումի թագավոր Միքայելի որդի Թեոփիլոսից [...] և խնդրեց, որ իրենից ընդունի հարյուր հազար դինար, իր մոտ եղած բոլոր գերիներին, որոնք յոթ հազար էին, այն պայմանով, որ նա (Մամունը) Թողնի հռոմներից գրաված բոլոր քաղաքներն ու բերդերը և հինգ տարի հրաժարվի պատերազմ անելուց: Սակայն նա չպատասխանեց ու գնաց Քայսում (Քեսուն), որը Դիար Մուդարում է՝ Ջազիրայի հողում:

Հաուֆի և Վերին Եգիպտոսում գտնվող Բիմայի ու Բաչրուդի ժողովրդի պայքարը Աֆշինի դեմ ուժեղացավ և Մամունն անձամբ գնաց Եգիպտոսի գավառները: Աֆշինը չարունակեց կռիվը Հաուֆի բնակիչների դեմ, սակայն ինքը (Մամունը) անձամբ գրոհեց նրանց դեմ, կոտորեց ու գերեվարեց Բիմայի բնակիչներին, որոնք Բաչրուդի դպրիններն են: Այդ մասին նա դատավճիռ (ֆատուա) պահանջեց Եգիպտոսի կրոնական իրավագետներից (ֆակիհ) մեկից, որը կոչվում էր Հարիս իրն Միսքին, մալիքի [մազհաբից][61]: Սա ասաց՝ եթե ապստամբում են իրենց կրած անիրավության պատճառով, չպետք է նրանց կյանքն ու ունեցվածքը վտանգի ենթարկվեն: Ասաց Մամունը՝ դու հիմար ես, իսկ Մալիքը քեզանից հիմար է, դրանք անհավատ զիմմիներ են, ուստի եթե նրանք անիրավության ենթարկվեն, պետք է իմամին (խալիֆային) բողոքեն և իրավունք չունեն դիմելու [ուժի] և մահմեդականների արյունը թափելու իրենց երկրում: Նա նրանց պետերին (մեծամեծներ) հավաքեց ու տարավ Բաղդադ:

Մամունը Եգիպտոսում մնաց քառասունյոթ օր. եկել էր Մուհառամի 10-ին (17 փետրվար 832) և հեռացել Սաֆարի 26-ին (5 ապրիլ) 217 թվականին: Եգիպտոսից դուրս գալով գնաց Դամասկոս, մի քանի օր մնաց, ապա դիմեց Սահմանային ամրություններ և բանակ դրեց Ադանայում:

էջ 467-468

Այդ նույն տարում Մամունն արշավեց Ռումի երկիրը և հասավ Հոռոմների բերդերից մեկը, որը կոչվում էր Լուլուա[62]: Նա որոշ ժամանակ նրա առջև կանգ առավ, սակայն չկարողացավ գրավել: Երկու բերդ կառուցեց նրա դիմաց, ուր տեղավորեց Աբու Իսհակին և զորքը: Ապա գնաց Սալաղուս կոչված գյուղը և իր բերդում հրամանատար թողնց Ահմադ իրն Բասթամին: Աբու Իսհակը նույնպես իր բերդի վրա փոխանորդ թողնց Մուհամմադ իրն ալ-Ֆարաջ իրն Աբուլ-Լայս իրն ալ-Ֆաղլին ու մեկ տարվա պաշար թողնց: Մամունն այս բոլորի վրա հրամանատար կարգեց Ուջայֆ իրն Անբասային:

Լուլուայի տեր հոռոմները Ուջայֆին խորամանկությամբ գերի բռնեցին և նա մի ամիս մնաց նրանց ձեռքում: Նրանք գրեցին իրենց թագավորին և նա եկավ, սակայն Ալլահն առանց կռվի պարտության մատնեց նրանց: Երկու բերդերի մահմեդականները գրավեցին նրա ճամբարը և ավարը տարան իրենց բերդերը:

Երբ Լուլուայի բնակիչներն այս բոլորը տեսան (և մանավանդ որ պաշարումը վնասում էր), նրանց պետը խորամանկություն մտածեց: Նա ասաց Ուջայֆին՝ քեզ ազատ կարձակեմ, եթե Մամունից ինձ համար երաշխավորագիր բերես: Սա խոստացավ նրան: Ապա [պետն] ասաց՝ ուզում եմ պատանդներ: Ասաց (Ուջայֆը)՝ քեզ կտամ իմ որդիներին: Նա իր տեղակալին լուր ուղարկեց, որ առաքի երկու քրիստոնյա [տղուկ] սպասավորների (փառաչ) գեղեցկացնելով նրանց և նրանց հետ մի խումբ քրիստոնյա ստրուկ տղաների (դուլամ)՝ մահմեդականի տարազով: Տեղակալը կատարեց հրամանը և Ուջայֆն այս բոլորին հանձնելով դուրս եկավ: Երբ իր ճամբարը հասավ, գրեց նրանց (հոռոմներին)՝ ձեր ձեռքում եղածները քրիստոնյաներ են և դուք կարող եք անել ինչ կամենաք: Նրանց պետը գրեց նրան՝ խոսքին հավատարիմ մնալը լավ է և դա ավելի լավ է քան ձեր կրոնը:

Ուջայֆը նրանց (հոռոմների) համար երաշխավորագիր բերեց և գրավելով բերդը (Լուլուան) մահմեդականների բնակեցրեց:

Մամունը 218 (833) թվականին գնաց Դամասկոս և քննեց մարդկանց արդարության հատկանիշի (ադլ) ու միակ Աստծո ճանաչման (տաուհիդ) հարցում: Նա գրեց, որ Իրաքից և այլ վայրերից բերվեն փակիհների ու նրանց քննեց Ղուրանի ստեղծված լինելու հարցում[63]: Նա անհավատ համարեց նրանց, ովքեր մերժեցին ասել, թե Ղուրանն ստեղծված է և գրեց [ամեն կողմ], որ հակառակ վկայությունն ընդունելի չլինի: Բոլորն այն բանն ասացին, բացի քչերից:

էջ 469

Մամունը 218 թվականին արշավեց Ռումի երկիրը: Նա պատրաստություններ էր տեսել պաշարելու Ամորիոնը: Ասում էր՝ մարդ եմ ուղարկելու արաբ [բեդևիների] բերելու անապատներից, նրանց բնակեցնելու ամեն մի քաղաքում որ նվաճելու եմ, մինչև որ հարձակվեմ Կոստանդնուպոլսի վրա: Եվ ահա նկավ հոռոմոց թագավորի դեսպանը առաջարկելով հաշտություն և գինադադար և պատրաստակամություն իր մոտ եղած գերիները հանձնելու: Սակայն նա (Մամունը) չընդունեց: Երբ Լուլուայի մոտ էր, առաջ խաղաց և մի քանի օր կանգ առավ, սակայն մահացավ Պոտանդոն (Բաղանդուն) կոչված վայրում, Լուլուայի ու Տարսոնի միջև: Նրա մահը տեղի ունեցավ հինգշաբթի օրը, Ռաջաբ ամսի 17-ին, 218 թվականին (8 օգոստոս 833): Նա քառասունութ տարեկան ու չորս ամսական էր: Նրա վրա աղոթեց եղբայրը՝ Աբու Իսհակը և թաղվեց Տարսոնում՝ ներքինի Խականի տանը:

Նրա իշխանության տևողությունը, հեռացվածի (Ամին) կենդանության օրոք նրա խալիֆայությունն ստանձնելու օրից մինչև մահվան օրը՝ քսաներկու տարի էր, իսկ հեռացվածի սպանության օրից՝ քսան տարի հինգ ամիս և քսանհինգ օր:

ՄՈՒՏԱՍԻՄ ԲԻԼԼԱՀԻ ՕՐԵՐԸ

էջ 471

Խալիֆա դարձավ Աբու Իսհակ Մուհամմադ իրն Ռաշիդը, որի մայրն ստրկուհի (ումմ վալադ) էր Մարդա անունով: Նրան երդում (բայաա) տվեցին զորավարներն ու զորքը, որոնք Մամունի հետ էին [Կիլիկիայում]: Նրան երդում տվեց Աբբաս իրն Մամունը՝ ուրբաթ օրը, Ռաջաբ ամսի 18 – ին, 218 թվականին (10 օգոստոս 833):

Մուհամմիրաները (խուռամյաններ)[64] ապստամբեցին Ջաբալում, ճանապարհ էին կտրում, վախեցնում ճանապարհորդներին, ապա հարձակվեցին Խորասանի ուխտավորների վրա, փախուստի մատնեցին ու մեծ բազմություն կոտորեցին: Մուտասիմն ուղարկեց Հաչիմ իրն Բատիջուրին, սակայն երբ նրանց միջև ընդհարում եղավ, Հաչիմը պարտվեց: Մուտասիմն առաքեց Իսհակ իրն Իսմայիլին՝ զորքով, իսկ Իսհակն իր եղբորը զորքի վրա փոխանորդ նշանակեց և ուղարկեց: Վերջինս կռվեց նրանց հետ ու մեծ բազմություն կոտորեց և մնաց մինչև որ կարգավորվեց երկրի վիճակը, այն բանից հետո, երբ նրանցից չատ էր տուժել:

ԼՂ 472-476

Մուտասիմը 220 թվականի Ջու-լ-Կաադայի կեսին (11 նոյեմբեր 835) դուրս եկավ Կաթուլ և հատակագծեց իր կառուցելիք քաղաքի վայրը, մարդկանց (մեծամեծներին) հողակտորներ պարգևեց և ջանասիրությամբ առաջ տարավ շինարարությունը, այնպես, որ մարդիկ պալատներ ու տներ կառուցեցին և չուկաներ առաջացան: Ապա Կաթուլից գնաց Սամառա և կանգ առավ այնտեղ, ուր [հետագայում] կառուցվեց Հասարակաց տունը (դար ալ-ամմա): Այնտեղ քրիստոնյա վանք կար և նա վանքի մարդկանցից (վանականներից) գնեց հողը ու հատակագծեց [ապագա քաղաքը] և հասավ այն վայրը, ուր [հետագայում] Ջաուսակ կոչված պալատը կառուցեց Տիգրիսի ափին: Նա բազում պալատներ կառուցեց զորավարների, քարտուղարների համար և նրանց անուններով կոչեց: Տիգրիսից արևելք գետեր (ջրանցքներ) փորեց և կառուցվածքներով չենացրեց: Գետերի (ջրանցքների) վրա ղրեց ոտոգման մեծ անիվներ (դավալիբ) և փոքր անիվներ (դավալի), ամեն երկրից բերեց արմավենիներ և տարբեր ծառերի տնկիներ: Այս ամենն սկսեց 221 թվականին (836): Նա կառուցեց ավաններ և ամեն մի քաղաքից բնակիչներ փոխադրեց և հրամայեց, որ իրենց քաղաքների նման կառուցեն: Եգիպտոսից մարդկանց բերեց, որպեսզի պապիրուսներ (կարաթիս) պատրաստեն, սակայն այդ նույն որակը չստվեց:

Բաբեկը հետզհետե զորացավ. նրա կողմնակիցն էր դարձել Մուհամմադ իրն ալ-Բուայսը, իսկ Մարանդի տեր Իսմատ ալ-Քուրդին հնազանդվել էր նրան: Մուտասիմը Իսհակ իրն Իբրահիմի եղբորը՝ Թահիր իրն Իբրահիմին առաքեց Երկրի (Ատրպատականի) կառավարիչ, հրամայելով պատերազմել Թեոնամու դեմ: Երբ նա Երկիր հասավ, Իրն ալ-Բուայսը գրեց Մուտասիմին հայտնելով իր հնազանդությունը և թե ինքը պատրաստվում է Բաբեկին, ընկերակիցներով հանդերձ, ծուղակը գցել: Նա խորամանկությամբ ամուսնացավ Մարանդի տեր Իսմատ ալ-Քուրդիի դստեր հետ: Գնաց նրա մոտ Մարանդ ու նրան [.....] հրավիրեց: Նրան ու ընկերակիցներին խմեցրեց և երբ հարբեցին, գիշերանց տարավ իր ամրոցը, որ կոչվում է Շահի, ապա ուղարկեց Մուտասիմին: Վերջինս վարձատրեց նրան, գնահատեց ու ոռճիկ սահմանեց: Բանն այն է, որ նա հայտնեց Թահիր իրն Իբրահիմին տեղի ունեցածի մասին ու խնդրեց, որ իրեն ուղարկի երկաթին (սրեր՞) ու ջորիները: Թահիրն այդ բանը արեց և նա այդ ամենն առաքեց Մուտասիմին ու նամակ գրեց՝ տեղեկացնելով կատարվածի մասին: Մուտասիմը զայրացավ Իսհակի վրա և ասաց՝ եղբորդ վրա ոչ մի լավ բան չեմ տեսնում, այլ առնականություն տեսնում եմ միայն Իրն ալ-Բուայսի մոտ:

Այն ատեն նա (Մուտասիմը) առաքեց Աֆշին Հայդար իրն Քաուս ալ-Աչրուսանիին, կառավարիչ նշանակելով այն բոլոր նահանգների վրա, որոնց միջով անցնելու էր: Նրա հետ ուղարկեց զրամ ու զինամթերք: Երբ Աֆշինը հասավ Ջաբալ, իր հետ վերցրեց այնտեղ գտնվող բոլոր ռամիկներին (սաալիք, խուժան) ու երևելիներին և տարավ: Նրա ու Բաբեկի միջև եղան ընդհարումներ. նրա զորքը կանգնած էր Բարզանդ կոչված վայրում, ապա գնաց Սադրասը (Հնշտադասար) կոչված մի վայր: Մի տարի մնաց ու պատերազմեց, մինչև որ ձյունը կուտակվեց, ապա վերադարձավ Բարզանդ, իսկ իր տեղակալին առաքեց Սադրասը: Նա խուժեց և ամեն գավառում [...]: Ապա գնաց Ռուդ ալ-Ռուդ, խրամատ փորեց, պարիսպ չինեց, դարանակալներ տեղավորեց, իսկ ինքը հարձակվեց Բադղի (Բազդ) վրա՝ հինգշաբթի օրը, Ռամադան ամսի 9-ին 222 թվականին (16 օգոստոս 837):

Բաբեկը մարդ ուղարկեց, որ բանակցի նրա հետ և նա համաձայնեց. նրանց միջև մի գետ կար: Աֆշինը նրան երաշխավորագիր առաջարկեց, իսկ նա մեկ օր ժամանակ խնդրեց: Սակայն [Աֆշինն] ասաց նրան՝ դու պարզապես ուզում ես քաղաքդ ամրացնել և եթե երաշխավորագիր ես կամենում, անցիր ձորը:

Նա հեռացավ ու պատերազմը սաստկացավ: Մահմեդականները մտան Բադղ քաղաքը, իսկ Բաբեկը վեց հոգու հետ փախավ: Բադղից յոթ հազար վեց հարյուր մահմեդական գերիներ ազատվեցին:

Բաբեկը ջորի հեծած, բրդե հագուստներով փախավ: Աֆշինը գրեց Հայաստանի ու Ատրպատականի պատրիկներին, որ հետապնդեն նրան: Ով կբերեր նրան խոստանում էր մեկ միլիոն դիրհեմ տալ և նրա երկիրը հարկազերծ դարձնել:

Բաբեկը հասավ մի պատրիկի մոտ, որը Սահլ որդի Սմբատի[65] (Սահլ իրն Սինբաթ, Սահլ Սմբատյան) էր կոչվում: Սա նրան բռնեց ու նրա մասին գրեց Աֆշինին: [Աֆշինը] մարդ ուղարկեց, ձերբակալեց նրան ու Հաղթանակի մասին գրեց [Մուտասիմին] հարցնելով, թե ինչ կարգադրություններ ունի: Հաղթանակի լուրը կարդացվեց և գրվեց բոլոր կողմերը թե [...], մինչև որ երկիրը խաղաղեցրեց ու հեռացավ տեղակալ թողնելով Մանքիջուր (Մանգիջաուր) ալ-Ֆարաղանիին՝ իր որդու քեռուն:

Նա եկավ Մուտասիմի մոտ, որը Սամառայում էր: Տարբեր օթևաններում նրան դիմավորեցին զորավարներն ու զորքը: Նա մտավ [քաղաք] Սաֆար ամսի երկուսին, 228 թվականին (4 հունվար 838), իսկ Բաբեկը նրա հետ էր գնում փղին հեծած, մինչև որ ներկայացան Մուտասիմին: Նա հրամայեց Բաբեկի երկու ձեռքն ու երկու ոտքը կտրել, ապա սպանել ու խաչել տվեց նրան Սամառայում: Նրա եղբորը՝ Աբդալլահին ուղարկեց Բաղդադ և Իսհակ իրն Իբրահիմը

սպանեց նրան ու խաչեց Բաղդադի արևելյան կողմում՝ կամուրջի գլխին:

Երբ Աֆշինը վերադարձավ Ատրպատական, Հայաստանի կառավարիչ նշանակեց Մուհամմադ իբն Սուլայման ալ-Ազդի ալ-Սամարկանդիին[66]: Սա եկավ և այդ ժամանակ Սմբատի որդի Սահլը ըմբոստացել էր Առանում ու բռնացել: Մտավ նրա երկիրը, սակայն Սահլը գիշերանց հարձակվեց ու փախուստի մատնեց նրան:

Վարդանակերտում ապստամբեց Մուհամմադ իբն Ուբայդալլահ ալ-Վարսանին: Աֆշինը նրա դեմ առաքեց Մանքիջուրին կռվելու նրա հետ: Սակայն նրա համար բարեխոսեց Ալի իբն Յահիա ալ-Արմանին և Մուտասիմը երաշխավորագիր տվեց նրան և այն բերեց Ալի իբն Յահիա ալ-Արմանին:

Ապա Աֆշինը Հայաստանի կառավարիչ նշանակեց Մուհամմադ իբն Խալիդ Բուխարախուդահին[67], որը, երբ եկավ, կռվեց ծանարների դեմ, գնաց Տփղիս: Իսհակ իբն Իսմայիլին ընդունեց նրան ու նվերներով ճանապարհ գցեց: Ապա Հայաստանի կառավարիչ նշանակեց Ալի իբն ալ-Հուսայն իբն Սիբա ալ-Կայսիին[68]: Երկրի ժողովուրդը նրան արհամարհեց այն աստիճանի, որ որը էր կոչում, իր թուլության ու ողորմելիության պատճառով:

Մուտասիմը Հայաստանի ու Դիար Ռաբիայի մի մասի կառավարիչ նշանակեց Խալիդ իբն Յազիդին, սակայն երբ նրա գալստյան մասին լսվեց Հայաստանում, ամեն մի պետ (իշխան) ամրացավ իր բերդում և նրանց վախը սաստկացավ ու պատրաստվեցին ապստամբության: Այդ մասին Հայաստանի փոստի վերակացուն (սահիբ բարիդ) Մանսուր իբն Իսա ալ-Սիրաին գրեց Մուտասիմին և նա Խալիդին հետադրեց ու հրամայեց վերահաստատել Ալի իբն ալ-Հուսայնին: Սակայն հազիվ մի քանի օր էր անցել նրա գալուց, երբ Պարտավում զորքը խռովություն բարձրացրեց, ոռճիկ պահանջելով: Նա ասաց՝ ես ոչինչ չունեմ, դրամը երկրի բնակիչների մոտ է: Ուստի պահանջեց երկրի բնակիչներից (նախարարներից), իսկ սրանք մերժեցին ու ամրացան իրենց բերդերում, ապա նամակագրություն ունեցան միմյանց հետ և հավաքվեցին ու պաշարեցին նրան Պարտավում: Ապա Մուտասիմն այդ երկիրն ուղարկեց Համդույա իբն Ալի իբն Ֆադլին, որը եկավ Նախճավան ու նրան ընդառաջ եկավ Յազիդ իբն Հիանը, երաշխավորագիր խնդրելով [...]: Նա խիստ չէր վարվում նրանց հետ վախենալով, որ կապստամբվեն:

Հոռոմները մտան Զապետրա 223 թվականին (837 – 838), կոտորեցին, գերեցին բոլոր բնակիչներին ու արտաքսեցին նրանց: Երբ լուրը հասավ Մուտասիմին հանկարծակի վեր կացավ իր ժողովից՝ այլայլված, հավաքեց մարդկանց բաց դաշտում և զորքին հրամայեց կռվի դուրս գալ, գումարներ բաժանեց [զինվորներին]: Նույն օրը

բանակ դրեց Տիգրիսի արևմտյան կողմում, այն վայրում, որը Հայտնի է ալ-Ույուն անվամբ: Նա Աչինաս (Իչնաս) ալ-Տուրքիին առաջապահ զորքի հրամանատար նշանակեց և դուրս եկավ հինգշաբթի օրը, Ջումադա Ա ամսի վեցին (6 ապրիլ 838): Մտավ Ռումի երկիրը և դիմեց Ամորիոն, որը նրանց մեծագույն քաղաքներից էր ու մեծ ռազմական հանդերձանքով ու զորքով խիստ կերպով պաշարեց:

Ռումի բռնապետը տեղեկանալով, մեծ բազմությամբ գրոհեց, և երբ մոտեցավ, Մուտասիմը նրա դեմ մեծ զորքով ուղարկեց Աֆշինին, որը հանդիպեց բռնապետին, հաղթեց, փախուստի մատնեց ու նրա ռազմիկներին մեծ ջարդ տվեց: Ռումի բռնապետն իր կողմից պատվիրակություն ուղարկեց Մուտասիմին ասելով՝ նրանք, ովքեր Զապետրայում արեցին այն, ինչ արեցին, իմ կամքին հակառակ էր: Ես այն (Զապետրան) կկառուցեմ իմ ծախսով ու մարդկանցով, կվերադարձնեմ գերեվարված ժողովրդին, ազատ կարձակեմ Ռումի հողի վրա եղած բոլոր [մահմեդական] գերիներին, իսկ Զապետրայում պատրիկների հանցանքով այդ գործերը կատարողներին քեզ կառաքեմ:

Ամորիոնը նվաճվեց երեքշաբթի օրը, Ռամազան ամսի տասնյոթին, 223 թվականին (13 օգոստոս 838): Նա (Մուտասիմը) կոտորեց, գերեվարեց բոլոր բնակիչներին ու գերեց Ռումի թագավորի մորեղբայր Ցաֆիխին, կործանեց ու վառեց ամեն ինչ իր անցած վայրերում, ապա հեռացավ: Երբ հասավ Ադանա, բանտարկել տվեց ալ-Աբբաս իբն ալ-Մամունին, քանզի լսել էր, որ իր չուրջը հավաքելով այլ զորավարների՝ ապստամբելու ու ըմբոստանալու տրամադրություն է ունեցել: Նրա մոտ գտավ հարյուր տասնվեց հազար դինար ու հրամայեց բաժանել զինվորներին:

էջ 477

Աֆշինի բանտարկության առաջին պատճառն այն էր, որ Մանքիջուր ալ-Ֆարաղանին՝ Աֆշինի որդու մորեղբայրն ու նրա տեղակալը Ատրպատականում, ապստամբեց, իր չուրջը հավաքելով Բաբեկի կողմնակիցներին: Նա չարժվեց դեպի Վարդանակերտ և սպանեց Մուհամմադ իբն Ուբայդալլահ ալ-Վարսանիին ու մի խումբ տիրակալին (սուլթան, խալիֆա) հավատարիմ մարդկանց: Աֆշինը մեծ զորքով ուղարկեց Աբու-լ-Սաջին, որը կոչվում էր Դիվդադ:

Սակայն Մուտասիմն իմացավ, որ Մանքիջուրն ապստամբել է Աֆշինի հրամանով և Աբու-լ-Սաջին ուղարկվել է որպես օգնական: Նա (Մուտասիմը) առաքեց Մուհամմադ իբն Համմադին, որպես փոստի կառավարիչ, իսկ Բուղա ալ-Տուրքիին՝ պայքարելու Մանքիջուրի դեմ:

Երբ վերջինս կռվում հաջողություն ունեցավ, Մանքինջուրը նրա շքախմբագիր խնդրեց և նա տվեց ու բերեց նրան Սամառա:

Ափշինը բանտարկվել էր 226 (840–841) թվականին և մեռավ բանտում: Նա ցերեկը մեկ ժամ մերկ խաչված [մնաց] Սամառայի Հասարակաց դռան (Բաբ ալ-Ամմա) մոտ, ապա իջեցնելով նրան վառեցին:

ՀԱՐՈՒՆ ԱԼ-ՎԱՍԻԿ ԲԻԼԼԱՀԻ ՕՐԵՐԸ

ԷՋ 479

Մուտասիմի մեռած օրը խալիֆա դարձավ Հարուն ալ-Վասիկ Բիլլահ իբն Արու Իսհակը, որի մայրն ստրկուհի էր Կարաթիս անունով: Դա տեղի ունեցավ Հինգշաբթի օրը, Ռաբի Ա ամսի տասնինն՝ 227 թվականին (7 հունվար 842), իսկ օտար (աջամ) [ամիսներով] Քանուն Բ (հունվար) ամսին:

ԵՐԿՈՒ ՀԱՐՅՈՒՐ ԵՐԵՍՈՒՆ ԹՎԱԿԱՆ

(18 սեպտեմբեր 844 – 6 սեպտեմբեր 845)

ԷՋ 481–482

Հայաստանն ապստամբեց և այնտեղի արաբները, պատրիկներն ու բռնացողները սկսեցին չարժվել, իսկ լեռների ու Դարբանդի թագավորները բռնացան իրենց շրջակա գավառներին: Խալիֆայի իշխանությունը թուլացավ և Վասիկը [Հայաստանում] նշանակեց Խալիդ իբն Յազիդ իբն Մազիադին ու հրամայեց մեկնել: Նրա իշխանությանն էր կցել նաև Դիար Ռաբիայի որոշ գավառներ:

Նա նկավ մեծ զորքով և երբ այդ երկրի բռնացողները լսեցին, վախեցան և մեծ մասը գրեց, թե մնում է հնազանդ և նվերներ ուղարկեց: Ասաց [Խալիդը]՝ կընդունեմ միայն անձամբ եկողների նվերները: Սա առավել ևս անհանգստացրեց նրանց: Նա գրեց Իսհակ իբն Իսմաիլին հրամայելով, որ իր մոտ գա, բայց նա չեկավ: Այնժամ նա հարձակվեց ու քիչ մնաց որ Իսհակը իր ձեռքն ընկներ:

Սակայն Խալիդը հիվանդացավ ու մի քանի օրից մեռավ: Նրան դագաղով տարան Դվին և այնտեղ թաղվեց, իսկ նրա ընկերակիցները ցրվեցին և երկիրն ամենավատթար վիճակի մեջ մնաց: Վասիկը նշանակեց Մուհամմադ իբն Խալիդին՝ հոր փոխարեն: Մուհամմադը գրեց [խալիֆային] հիշեցնելով, որ իր հոր ընկերակիցները ցրվել են ու խնդրեց որ նրանց վերադարձնի: Նա ուղարկեց Ահմադ իբն Բիսթամին Մծբին և նա հարվածեց, բանտարկեց և տները վառեց: Մուհամմադի չորքը հավաքվեցին հոր բարեկամներն ու մաուլաները և նա պայքարեց ծանարների ու Իսհակի դեմ, մինչև որ հալածեց

նրանց, իսկ նրանց (ծանարներին) փախուստի մատնեց և այդպիսով երկիրը զսպեց:

ԷՋ 482

Ռումի բռնապետը գրեց [Վասիկին] հիշեցնելով, որ իր ձեռքում շատ են մահմեդական գերիները և առաջարկեց գերիների փոխանակում կատարել: Վասիկը համաձայնեց և ուղարկեց ներքինի (խադիմ) Մականին, [...] որը կոչվում էր Արու Ռամլա, ինչպես նաև Ջաաֆար իբն Ահմադ ալ-Հազդային (Հադդա), որը զորքի հրամանատարն էր: Նա Սահմանային ամրությունների կառավարիչ նշանակեց Ահմադ իբն Սաիդ իբն Սալմ ալ-Բահիլիին:

Եկան այն վայրը, որը կոչվում էր Լամիս գետի անվամբ՝ Տարսոն քաղաքից երկու օթևան հեռավորության վրա: Այս փոխանակությանը մասնակցեցին յոթանասուն հազար նիզակավորներ, բացի առանց նիզակի [ռազմիկներից]:

Արու Ռամլան ու Ջաաֆար ալ-Հազդան կանգնած էին գետի կամուրջին և հենց որ մի գերի անցնում էր, հարց էին տալիս Ղուրանի մասին և ով կասեր, թե ստեղծված է կփոխանակվեր և կտաներ երկու դինար ու երկու ձեռք զգեստ:

Այսպես փոխանակվեցին հինգ հարյուր այրմարդ ու յոթ հարյուր կին: Սա տեղի ունեցավ 231 թվականի Մուհառամ ամսին (7 սեպտեմբեր – 6 հոկտեմբեր 845):

ՋԱԱՖԱՐ ԱԼ-ՄՈՒՏԱՎԱԿԿԻԼԻ ՕՐԵՐԸ

ԷՋ 484

Ջաաֆար իբն ալ-Մուտասիմը, որի մայրն ստրկուհի էր Շուջա անունով, երդում ստացավ (բայաա) չորեքշաբթի օրը, Զու-լ-հիջջա ամսի քսանչորսին՝ 232 թվականին (8 օգոստոս 847): Առաջին երդում տվողը եղավ Սիմա ալ-Տուրքին Դիմաշկի կոչված, ինչպես նաև Վասիֆ ալ-Տուրքին:

ԷՋ 484–485

Մուտավաքքիլն արգիլեց մարդկանց խոսել (վիճել) Ղուրանի մասին: Արձակեց [այդ պատճառով] բանտարկվածներին, տարբեր երկրներում և նրանց ովքեր բռնվել էին Վասիկի խալիֆայության ժամանակ: Այսպիսով ամենքին արձակեց ու հագցրեց: Ամեն կողմ գրեց արգելելով վիճաբանությունն ու բանակռիվը և մարդկանց զսպեց:

Մուհամմադ իրն ալ-Բուայսը բռնացել էր Ատրպատականի մի գավառի, որը կոչվում է Մարանդ: Նրա դեմ դուրս եկավ Ատրպատականի կառավարիչ Համդավայհ իրն Ալին, ապա [...] ու տարավ նրան խալիֆայի դուռը:

Երբ եկավ՝ ձեռք բարձրացրեց Համդավայհ իրն Ալիի վրա ու խփեց նրան, իսկ Իրն ալ Բուայսին՝ ազատ արձակեց: Նա մի քանի ամիս մնալուց հետո փախավ Սամառայից Մարանդ և իր չուրջը հավաքելով ռամիկներին (սաալիք) ապստամբեց ու ըմբոստացավ: Այնժամ Համդավայհ իրն Ալին բանտից հանվեց ու երկրի կառավարիչ նշանակվեց: Նա եկավ կռվեց ու սպանեց նրան (Համդավայհ իրն Ալիին):

Իրն ալ-Բուայսի դիրքն ամրացավ և նրա դեմ ուղարկվեց Ջիրաք ալ-Տուրքին, որի դեմ նա կռվեց: Ապա ուղարկվեց Ատտաբ իրն Ատտաբը: Երկիրն այդ ժամանակ Կրտսեր Բուղայի (ալ-Սաղիր) ձեռքում էր, որն ամիսներ կռվեց նրա դեմ, ապա երաշխավորագիր ստացավ: Երբ եկավ նրա մոտ վերցրեց ու տարավ խալիֆայի դուռը: Նա բանտարկվեց Իսհակի հսկողության տակ: Դա տեղի ունեցավ 235 թվականին (849-850): Կարճ ժամանակ բանտում մնալուց հետո մեռավ: Տարվեց նաև Յահիա իրն Ռավվադը, որին տրվեց անուն ու հրամանատարություն:

Այդ տարում Մուտավաքքիլը հրամայեց զիմմայի ժողովրդին հագնվել միայն մեղրագույն պատմուճաններ, հեծնել միայն ջորի և ավանակ, փայտե ասպանդակներով ու մեջը փոս թամբերով: Նրանք չպետք է հեծնեին նժույգ կամ ձի, իսկ իրենց դռների վրա պետք է կախեին տախտակներ սատանայի պատկերով:

Մուտավաքքիլը գահաժառանգություններ տվեց նախ իր Մուհամմադ որդուն, ապա իր մյուս որդիներին՝ Աբու Աբդալլահ ալ-Մուտազզ Բիլլահին և Իբրահիմ ալ-Մուայադ Բիլլահին: Ամեն մի երկրից երևելիներին բերել տվեց Սամառա և [իր որդիներին] համաձայնություն երդում (բայաա) տալու դիմաց նրանց ընծաներ պարգևեց, իսկ զինվորներին տասն ամսական [ռոճիկ նվիրեց] և քարոզիչներ (խաթիբ) առաքեց, որ այդ մասին քարոզեն:

[...] ամեն մի գահաժառանգի երկրի մի կողմը տվեց: [Մուհամմադ] ալ-Մուտանսիրին տվեց Եգիպտոսը և Մաղրիբը, իսկ նրա քարտուղարն էր Ահմադ իրն Խասիբը, Աբու Աբդալլահ ալ-Մուտազզ Բիլլահին՝ Խորասանն ու Ջաբալը, իսկ նրա քարտուղարն էր Ահմադ իրն Իսրայիլը: Իբրահիմ ալ-Մուայադին[69] տվեց Ասորիքի մասերը (Շամատ), Հայաստանն ու Ատրպատականը և նրա քարտուղարն էր Հայտնի Մուհամմադ իրն Ալին:

Այդ ժամանակ Մուտավաքքիլը հրամայեց, որ արքունի գործերում

ոչ մի զիմմի պաշտոն չտանա, նորակառույց նկեղեցիները, [հրեական] սինագոգները քանդվեն, արգելվեց նորերը կառուցել և այդ մասին գրեց ամեն կողմ:

ԵՐԿՈՒ ՀԱՐՅՈՒՐ ԵՐԵՍՈՒՆՅՈՒՐ (251-252) ԹՎԱԿԱՆ

էջ 488

Եգիպտոսի կառավարչությունը տրվեց Անբասա իրն Իսհակ ալ-Դաբբիին Մուստանսիրի կողմից: Հազիվ մի քանիս ամիս էր անցել, երբ հոռոմները հարձակվեցին Դամիեթի վրա ութսունհինգ նավերով: Հոռոմները կոտորեցին մեծ բազմությամբ մահմեդականների, հրկիզեցին հազար չորս հարյուր տուն: Նրանց գլխավորը կոչվում էր [...]:

Նրանք գերեվարեցին հազար ութ հարյուր քսան մահմեդական կանանց, հազար դպտի կանանց և հարյուր հրեա կանանց: Նրանք վերցրեցին Դամիեթում եղած զենքերն ու ապրանքները: Մարդիկ փախուստի դիմեցին և մոտավորապես երկու հազար հոգի ծովում խեղդվեց: Հոռոմները երկու օր ու գիշեր մնացին ու հեռացան:

էջ 489-490

Մուտավաքքիլը դուրս եկավ դեպի Խաղադության քաղաքը (Բաղդադ) 238 (23 Հունիս 852 – 11 Հունիս 853) թվականին, վրաններ խփեց Շամմասիյա [արվարձանում], ապա մտավ Բաղդադ, ճեղքեց անցավ ու գնաց Տիգրոն (Մադաին) գրոսանքի:

Հայաստանն ապստամբեց, այնտեղ ոտքի կանգնեցին մի խումբ պատրիկներ և ուրիշներ ու բռնացան իրենց գավառներում[70]:

Մուտավաքքիլը կառավարիչ նշանակեց Աբու Սաիդ Մուհամմադ իրն Յուսուֆին[71], որը պատրաստվեց գնալու այդ երկիրը: Նա բերել տվեց իր զգեստներն ու հագնվեց, վերցրեց իր հողաթափերից մեկն ու հագնվեց և հանկարծ ընկավ մեռած վիճակում, առանց որևէ պատճառի (հիվանդության):

Ապա Մուտավաքքիլը կառավարիչ նշանակեց նրա որդուն՝ Յուսուֆին[72], որը եկավ երկիրը, գրեց պատրիկներին և ոմանք պատասխանեցին նրան: Նրա մոտ եկավ Բագարատը՝ Աշոտի որդին (Բակրաթ իրն Աշոտ) երաշխավորագիր խնդրելու, իսկ նա տարավ նրան Մուտավաքքիլի մոտ և [...]: Նրա դեմ կռվեց Յունան իրն Տուրնիկը (Հովնան որդի Թոռնիկի) ու սպանեց նրան:

Երկրում խռովություն սկսեց և Մուտավաքքիլն ուղարկեց ավազ (Քաբիր) Բուղային[73]: Երբ նա հասավ Արղն, նրան ընդառաջ եկավ

Մուսա իբն Զուրարան[74], որը բռնացել էր Բաղնչում (Բաղիս) և երաշխավորագիր խնդրեց: Նա ձերբակալեց նրան և առաքեց Մուտավաքքիլի մոտ: Ապա գնաց մի վայր, որը կոչվում է Ադրակ (ալ-Բակ)[75] ուր Համադասպի որդի Աշոտն (Աշոթ իբն Համզա)[76] էր, որին պաշարեց, հետո երաշխավորագիր տվեց և ուղարկեց Սամառա: Նրա (Մուսա իբն Զուրարայի՞) գլուխը կտրվեց Հասարակաց դռան (Բաբ ալ-Ամմա) մոտ և խաչվեց:

Նա գրեց Տփղիսի բռնացող Իսհակ իբն Իսմաիլին, որ գա իր մոտ: Նա պատասխանեց, որ Երբեք խալիֆայի հնազանդությունից դուրս չի եկել, իսկ եթե դրամ է ուզում, ապա ինքը կտա, կամ եթե մարդիկ է ուզում՝ կուղարկի, սակայն գալ չի կարող:

Նա (Բուղան) հարձակվեց, կռվեց ու հաղթեց նրան, ապա գլուխը կտրեց և ուղարկեց խալիֆային: Ապա հարձակվեց ծանարների (սաննարիյա) վրա, կռվեց, սակայն նրանք հաղթեցին ու նետ մղեցին և նա փախստական նահանջեց:

Այն ժամանակ սկսեց հայածել այն մարդկանց, որոնց երաշխավորագիր էր տվել ու ձերբակալեց: Նրանց մի մասը փախավ ու նամակներ գրեց Ռումի տիրոջը (Բյուզանդիայի կայսեր), խազարաց տիրոջը և սլավոնների (սակալիբա) տիրոջը և մեծ բազմությամբ հավաքվեցին: Նա (Բուղան) այդ մասին գրեց Մուտավաքքիլին որը կառավարիչ նշանակեց Մուհամմադ իբն Խալիդ իբն Յազիդ իբն Մազիադ ալ-Շայբանիին[77], որը երբ եկավ, ապստամբները հանդարտվեցին և նա նորեն երաշխավորագիր տվեց նրանց:

ԼՂ 490

Հոռոմոց բռնապետը պատգամավորներ ու նվերներ ուղարկեց, որոնք քիչ էին և նա (Մուտավաքքիլը) մի քանի անգամ ավելին առաքեց: Նա ուղարկեց Շունայֆ Ներքինիին (խադիմ), որն իր վստահելիներից առաջինն էր ու նրան հանձնարարեց ղեկավարել գերիների փոխանակման գործը: Սա եկավ Տարսոն 241 (22 մայիս 855 – 9 մայիս 856) թվականին, իսկ Սահմանային ամրությունների կառավարիչն էր Ահմադ իբն Յահիա ալ-Արմանին (Հայազգի):

Նա (Շունայֆը) դուրս եկավ Լամիս գետի կամուրջի մոտ ու կանչեց գերյալներին: Իր երկրի բոլոր կողմերից նա բերել էր տվել հոռոմ գերիներին ու փրկագնեց քրիստոնյաների մոտ եղած ստրուկներին (գերիներին):

ԼՂ 492

Մուտավաքքիլը փոխադրվեց Սահուզա կոչված վայրը, Սամառայի պալատից երեք փարսախ հեռավորության վրա և այնտեղ կառուցեց քաղաք, որը կոչեց Ջաաֆարիյա: Կաթուլից ջրանցք (գետ) անցկացրեց և այնտեղ փոխադրեց քարտուղարներին, դիվանները և ընդհանրապես բոլոր մարդկանց: Կառուցեց մի պալատ, որի նմանի մասին չի լսված: Սա կատարվեց 246 թվականի Մուհառամ ամսին (23 մարտ – 27 ապրիլ 860):

Մուտավաքքիլը կոպիտ կերպով վիրավորել էր իր որդուն՝ Մուհամմադ ալ-Մուտանսիրին և մարդիկ նրան գրգռեցին [հոր] դեմ ու կազմակերպեցին հարձակում նրա վրա: Երեքշաբթի օրը, Շավվալ ամսի երեքին, 247 թվականին (11 դեկտեմբեր 861) ներխուժեց թուրքերի մի խումբ, որոնցից էին՝ կրտսեր Բուղան, Մուտանսիրի մերձավոր Ուտամիշը, Բաղիրը, Բաղուն և ուրիշներ: Մուտավաքքիլը մերձավոր Ուտամիշը, Բաղիրը, Բաղուն և ուրիշներ: Մուտավաքքիլը մենակ նստած էր դահլիճում, և նրանք հարձակվելով նրա վրա, սրերով սպանեցին:

ՄՈՒՀԱՄՄԱԴ ԱԼ-ՄՈՒՆՏԱՍԻՐԻ ՕՐԵՐԸ

ԼՂ 493

Մուհամմադ ալ-Մունտասիր իբն Ջաաֆար ալ-Մուտավաքքիլը, որի մայրը ստրկուհի էր Հարաչիյա (Եթովպուհի), Ռումիյա (Հույն) կոչված, երդում ստացավ նույն գիշեր, երբ Հայրն սպանվեց՝ չորեքշաբթի գիշերը, Շավվալ ամսի չորսին 247 թվականին (12 դեկտեմբեր 861):

Նա Ջաաֆարիյայից հեռացավ Սամառա, հրամայեց քանդել [հոր կառուցած] պալատները, մարդկանց այնտեղից տեղափոխեց, քաղաքն անբնակելի դարձրեց, այնպես որ ավերակների վերածվեց ու մարդիկ վերադարձան Սամառայի իրենց տները:

Նրա խալիֆայությունը վեց ամիս տևեց ու մեռավ չարաթ օրը Ռաբի Բ ամսի չորսին 248 թվականին (7 հունիս 862), երբ քսանհինգ տարեկան վեց ամսական էր:

ԱՀՄԱԴ ԱԼ-ՄՈՒՍՏԱԻՆԻ[78] ՕՐԵՐԸ

ԼՂ 494

Նա խալիֆայության երդում ստացավ այն օրը, երբ մեռավ ալ-Մունտասիրը:

Նա հարմար չէր խալիֆա դառնալու, սակայն երբ մնաւ Մունտասիրը, թուրքերը չկամեցան որ խալիֆա դառնա Մուտավաքքիլի որդին՝ վախենալով դրա վատ հետևանքներից: Ահմադ իբն Խասիրը առաջարկեց Ահմադ իբն Մուհամմադ ալ-Մուտասիմին, որին երդում տվեցին: Որոշ զորավարներ մերժեցին երդում տալ և սկսեց վնճը թուրքերի և արևանների միջև. երեք օր կռվում էին, արևանների դիրքը թուլացավ, իսկ Մուտասիմը դրամ բաժանեց մարդկանց և ամեն ինչ կարգավորվեց:

էջ 496

Մուտասիմն ուղարկեց Ջաաֆար ալ-Խայյաթին, որպեսզի ամառային արշավանք կատարի 249 (863–864) թվականին: Նրա հետ էր Մալաթիայի կառավարիչ Օմար իբն Աբդալլահ ալ-Ակթան: Երբ նա մտավ Ռումի երկիրը, Օմարը թույլտվություն խնդրեց ավելի խորը ներթափանցելու: Նրա մոտ ութ հազար [դինարոր] կար: Թշնամին չրջապատեց նրան և նա իր հետևորդների հետ միասին պարտություն կրեց 249 թվականի Ռաջաբ ամսին (20 օգոստոս – 18 սեպտեմբեր 863):

Այդ տարում Մուտասիմ [խալիֆան] Ալի իբն Յահիա ալ-Արմանիին նշանակեց Հայաստանի (Արմինիա) կառավարիչ, ուր վիճակը տագնապալի էր: Նա եկավ Նփրկերտ: Հոռոմները արշավել էին և մահմեդականների երկրի սրտում էին: Այդ երկրի ժողովրդից մի խումբ հավաքվեց ու գնաց գտնելու Ալի իբն Յահիա ալ-Արմանիին և համոզեցին նրան դուրս գալ հոռոմների դեմ ու մղեցին նրան [նրանց դեմ]: Նա գնաց նրանց հետ ու հանդիպեց հոռոմների զորքին. մի կատաղի ճակատամարտ տեղի ունեցավ և նա սպանվեց: Հոռոմները նրա դիակը վերցրին և այդ բանը մեծ հաղթանակ համարեցին, քանզի նա նրանց շատ նեղություն էր պատճառել:

էջ 499

[...] գները Թանկացան Բաղդադում ու Սամառայում, այնպես որ մեկ կաֆիզ [ցորենը] հարյուր դիրհեմով էր վաճառվում: Կռիվը չարունակվեց, պարենը կտրվեց, ղրամը պակասեց և սուրհանդակներ էին գնում նրանց միջև 252 (866) թվականին: Ապա Մուտասիմը հաշտություն առաջարկեց, համաձայն լինելով հրաժարվել խալիֆայությունից և իշխանությունը հանձնել Մուտազզին[79] ու գնալ մի քաղաք ապահով ապրելու իր որդու հետ, սակայն պահանջում էր որոշակի գումար և կալվածներ՝ ըստ իր ցանկության: Նրան համաձայնություն տվեցին, և ինքը հրաժարվեց: Մուտասիմը գրավոր հրաժարական

տվեց ու վկայեց այդ մասին, հետևանալով Վասիթ՝ իր մոր, որդու և ամբողջ ընտանիքի հետ և այնտեղ նստավայր ընտրեց:

ԱԼ-ՄՈՒՏԱԶԶ ԲԻԼԼԱՀԻ ՕՐԵՐԸ

էջ 500

Սամառայում խալիֆա դարձավ (երդում ստացավ) Աբու Աբդալլահ ալ-Մուտազզ Բիլլահ իբն Մուտավաքքիլը, որի մայրը ստրկուհի էր Կաբիհա (տգեղ) կոչված: Դա կատարվեց հինգշաբթի օրը, Մուհառամ ամսի յոթին 252 թվականին (29 հունվար 866):

Նա գրեց բոլոր կառավարիչներին, հիշեցնելով [իր հոր՝ Մուտավաքքիլի] պայմանագրում (իր եղբոր) Իբրահիմ ալ-Մուայադի ժառանգական իրավունքի մասին ու հրամայեց իրենից հետո նրան ճանաչել: Երկրի բոլոր կառավարիչները նրան երդում տվեցին երբ իմացան, որ Մուհամմադ իբն Արդալլահ իբն Թահիրը և ովքեր եղել են Բաղդադում, նրան երդում են տվել: Սակայն Շիմշաթի կառավարիչ Իբն Մուջահիդը, Իսա իբն ալ-Շայխը Պաղեստինում, Յաղիդ իբն Արդալլահը Եգիպտոսում և Ումրան իբն Միհրանը Սպահանում հրաժարվել են: Մուտազզն ուղարկեց Հատիմ իբն Ջուրայքին Շիմշաթ, որը հաղթեց իբն Մուջահիդին ու նրա մարդկանց և նրան ու մի խումբ մեծամեծների տանելով Ամիդ, գլխատեց:

էջ 501

[Մուտազզը] Մուզահիմ իբն Խականին ուղարկեց Մալաթիա, քանզի այնտեղ հոռոմները մի քանի անգամ երևացել էին:

էջ 503

Երբ Մուտազզը վախեցավ թուրքերի ապստամբությունից[80], Սամառայում գտնվող Հաչիմի տան բոլոր անդամներին՝ խալիֆաների որդիներին և այլոց ուղարկեց Բաղդադ, որպեսզի թուրքերը նրանցից որևէ մեկին չառևանգեն:

ՄՈՒՀԱՄՄԱԴ ԱԼ-ՄՈՒՀՏԱԴԻ ԻԲՆ ՀԱՐՈՒՆ ԱԼ-ՎԱԱՍԻԿԻ ՕՐԵՐԸ

էջ 505

Զորավարներն այն եզրակացության էին եկել, որ խալիֆաների որդիների մեջ չկա առավել չնորհալի ու խելացի մեկը, քան

Նա հարմար չէր խալիֆա դառնալու, սակայն երբ մեռավ Մունտասիրը, թուրքերը չկամեցան որ խալիֆա դառնա Մուտավաքքիլի որդին՝ վախենալով դրա վատ հետևանքներից: Ահմադ իբն Խասիրը առաջարկեց Ահմադ իբն Մուհամմադ ալ-Մուստաինին, որին երդում տվեցին: Որոշ զորավարներ մերժեցին երդում տալ և սկսեց վեճը թուրքերի և արևմտյանների միջև. երեք օր կռվում էին, արևմտյանների դիրքը թուլացավ, իսկ Մուստաինը դրամ բաժանեց մարդկանց և ամեն ինչ կարգավորվեց:

էջ 496

Մուստաինն ուղարկեց Ջաաֆար ալ-Խայյաթին, որպեսզի ամառային արշավանք կատարի 249 (863-864) թվականին: Նրա հետ էր Մալաթիայի կառավարիչ Օմար իբն Աբդալլահ ալ-Ակթան: Երբ նա մտավ Ռումի երկիրը, Օմարը թույլտվություն խնդրեց ավելի խորը ներթափանցելու: Նրա մոտ ութ հազար [դինարոր] կար: Թչնամին չրջապատեց նրան և նա իր հետևորդների հետ միասին պարտություն կրեց 249 թվականի Ռաջաբ ամսին (20 օգոստոս – 18 սեպտեմբեր 863):

Այդ տարում Մուստաին [խալիֆան] Ալի իբն Յահիա ալ-Արմանիին նշանակեց Հայաստանի (Արմինիա) կառավարիչ, ուր վիճակը տագնապալի էր: Նա եկավ Նփրկերտ: Հոռոմները արշավել էին և մահմեդականների երկրի սրտում էին: Այդ երկրի ժողովրդից մի խումբ հավաքվեց ու գնաց գտնելու Ալի իբն Յահիա ալ-Արմանիին և համոզեցին նրան դուրս գալ հոռոմների դեմ ու մղեցին նրան [նրանց դեմ]: Նա գնաց նրանց հետ ու հանդիպեց հոռոմների զորքին. մի կատաղի ճակատամարտ տեղի ունեցավ և նա սպանվեց: Հոռոմները նրա դիակը վերցրին և այդ բանը մեծ հաղթանակ համարեցին, քանզի նա նրանց չատ նեղություն էր պատճառել:

էջ 499

[...] գները թանկացան Բաղդադում ու Սամառայում, այնպես որ մեկ կաֆիզ [ցորենը] հարյուր դիրհեմով էր վաճառվում: Կռիվը չարունակվեց, պարենը կտրվեց, զրամը պակասեց և սուրհանդակներ էին գնում նրանց միջև 252 (866) թվականին: Ապա Մուստաինը հաշտություն առաջարկեց, համաձայն լինելով հրաժարվել խալիֆայությունից և իշխանությունը հանձնել Մուտազզին[79] ու գնալ մի քաղաք ապահով ապրելու իր որդու հետ, սակայն պահանջում էր որոշակի գումար և կալվածներ՝ ըստ իր ցանկության: Նրան համաձայնություն տվեցին, և ինքը հրաժարվեց: Մուստաինը գրավոր հրաժարական

տվեց ու վկայեց այդ մասին, հեռանալով Վասիթ՝ իր մոր, որդու և ամբողջ ընտանիքի հետ և այնտեղ նստավայր ընտրեց:

ԱԼ-ՄՈՒՏԱԶԶ ԲԻԼԼԱՀԻ ՕՐԵՐԸ

էջ 500

Սամառայում խալիֆա դարձավ (երդում ստացավ) Աբու Աբդալլահ ալ-Մուտազզ Բիլլահ իբն Մուտավաքքիլը, որի մայրը ստրկուհի էր Կաբիհա (տգեղ) կոչված: Դա կատարվեց Հինգչաբթի օրը, Մուհառամ ամսի յոթին 252 թվականին (29 Հունվար 866):

Նա գրեց բոլոր կառավարիչներին, հիշեցնելով [իր Հոր՝ Մուտավաքքիլի] պայմանագրում (իր եղբոր) Իբրահիմ ալ-Մուայադի ժառանգական իրավունքի մասին ու հրամայեց իրենից հետո նրան ճանաչել: Երկրի բոլոր կառավարիչները նրան երդում տվեցին երբ իմացան, որ Մուհամմադ իբն Արդալլահ իբն Թահիրը և ովքեր եղել են Բաղդադում, նրան երդում են տվել: Սակայն Շիմշաթի կառավարիչ Իբն Մուջահիդը, Իսա իբն ալ-Շայխը Պաղեստինում, Յազիդ իբն Աբդալլահը Եգիպտոսում և Ումրան իբն Միհրանը Սպահանում հրաժարվել են: Մուտազզն ուղարկեց Հատիմ իբն Ջուրայջին Շիմշաթ, որը հաղթեց իբն Մուջահիդին ու նրա մարդկանց և նրան ու մի խումբ մեծամեծների տանելով Ամիդ, գլխատեց:

էջ 501

[Մուտազզը] Մուզահիմ իբն Խականին ուղարկեց Մալաթիա, քանզի այնտեղ հոռոմները մի քանի անգամ երևացել էին:

էջ 503

Երբ Մուտազզը վախեցավ թուրքերի ապստամբությունից[80], Սամառայում գտնվող Հաչիմի տան բոլոր անդամներին՝ խալիֆաների որդիներին և այլոց ուղարկեց Բաղդադ, որպեսզի թուրքերը նրանցից որևէ մեկին չառևանգեն:

ՄՈՒՀԱՄՄԱԴ ԱԼ-ՄՈՒՀՏԱԴԻ ԻԲՆ ՀԱՐՈՒՆ ԱԼ-ՎԱՍԻԿԻ ՕՐԵՐԸ

էջ 505

Զորավարներն այն եզրակացության էին եկել, որ խալիֆաների որդիների մեջ չկա առավել չնորհալի ու խելացի մեկը, քան

Մուհամմադ իբն ալ-Վասիկը[81], որի մայրն ստրկուհի էր Կիրը կոչված: Նրան նրդում տվեցին երեքշաբթի օրը, Ռաջաբ ամսի քսանյոթին, 255 թվականին (12 Հուլիս 869):

էջ 506

Մուհտադին թուրքերից խիստ դժգոհ էր ու որոշեց արնաներին առաջ քաշել: Երբ այս իմացան [թուրքերը], նրա դեմ ըմբոստացան ու դեմ դուրս եկան: Նրանցից մի խումբ նա ձերբակալեց ու գլխատել տվեց, որոնց մեջ էր նաև նրանց պետ Բաբիքբաքը: Սակայն թուրքերը հավաքվեցին ու ապստամբեցին: Մուհտադին նրանց դեմ ելավ զինված ու Ղուրանը վզից կախված, նրան միացավ ժողովուրդը և նրանց (թուրքերին) կոտորեցին, ունեցվածքը խլեցին, տները կողոպտեցին: Թուրքերը մեծ թվով հավաքվեցին, իսկ ժողովուրդը լքեց նրան (խալիֆային) այնպես, որ մեն մենակ մնաց ու մի քանի տեղից վիրավորվեց. նա մտավ մի զորավարի տունը, որը կոչվում էր Ահմադ իբն Ջամիլ: Սակայն նրանք հասան, բռնեցին նրան ու տարան ձիու վրա, իսկ նրա վերքերից արյունը հոսում էր: Նրան ուզեցին ստիպել, որ հրաժարվի իշխանությունից, բայց նա մերժեց ու երկու օր անց մեռավ, երեքշաբթի օրը, Ռաջաբ ամսի տասնվեցին 256 թվականին (20 Հունիս 870): Նրա խալիֆայության տևողությունն էր մեկ տարուց տասնմեկ օր պակաս:

ԱՀՄԱԴ ԱԼ-ՄՈՒՏԱՄԻԴ ԱԼԱԼԼԱՀԻ ՕՐԵՐԸ

էջ 507-508

Ահմադ ալ-Մուտամիդ Ալալլահ[82] իբն Ջաաֆար իբն ալ-Մուտավաքքիլին երդում տրվեց այն օրը, երբ սպանվեց Մուհտադին:

Բասրայում ապստամբած Ալի իբն Մուհամմադը, որը հավակնում էր թե Աբու Թալիբի ցեղից է, գրոհեց Ուբուլլա, որն ավերեց, կործաննց ու հրկիզեց: Նրա վրա հարձակվեց Սաիդ իբն Սալիհը և Աբու-լ-Ասիր գետի մոտ հաղթեց նրան:

Մուտամիդ [խալիֆան] ուղարկեց ներքինի Հուսայնին, որը կոչվում էր Մահվան քրտինք, Իսա իբն ալ-Շայխի* մոտ, իսկ նա տիրել էր Պաղեստինին, նրան հանձնելու նրաշխավորագիր նրա անձի, ունեցվածքի և զավակների համար, ներում խոստանալով բոլոր արարքներին և նրան նշանակում էր Հայաստանի կառավարիչ: [Իսա

* Ադձնիքում հաստատված արար Շայբանի ցեղից էր: 865-ից եղել է Պաղեստինի կառավարիչ: 870 կամ 871 թ-ին նշանակվել է Արմինիայի, Դիար Բաքրի և Ատրպատականի կառավարիչ:

[իբն ալ-Շայխը] այդ երկրից դուրս եկավ 257-ի Ջումադա Բ ամսին (26 ապրիլ – 24 մայիս 871), իր ձեռքում եղածը հանձնելով Ամաջուր Թուրքին, սակայն եղած դրամներից ոչ մի դիրհեմ չվերադարձրեց:

ԵՐԿՈՒ ՀԱՐՅՈՒՐ ՀԻՍՈՒՆՈՒԹ (871-872) ԹՎԱԿԱՆ

էջ 510

Այդ տարում ժանտախտի համաճարակ եղավ Իրաքում, մեծ թվով մարդիկ մեռան: Մարդը դուրս էր գալիս տնից ու տեղ չհասած մեռնում: Ասվում է, որ Բաղդադում մեկ օրում տասներկու հազար մարդ մեռավ:

Այդ տարում ամառային արշավանք կատարեց Մուհամմադ իբն Ալի իբն Յահիա ալ-Արմանին*: Այդ ժամանակ եկավ Մուտավաքքիլի մաուլա Շունայֆ ներքինին (խաղիմ) գերիների փոխանակման համար: Նրանք հավաքվեցին Լամիա գետի մոտ, ուր գերիների փոխանակում եղավ, իսկ հռոմեների հետ չորս ամսվա զինադադարի համար պայմանավորվեցին: Այս բոլորը կատարվեց 258 թվականի Ռամադան ամսին (11 Հուլիս – 9 օգոստոս 872):

* Սա Ալի իբն Յահիա ալ-Արմանիի որդին էր:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

[1] *Նիկիա – Նկատի ունի եկեղեցու տիեզերական առաջին ժողովը, որ տեղի ունեցավ Նիկիայում՝ 325 թվականին: Նիկիայի ժողովը հրավիրեց Կոնստանտին Ա կայսրը: Այս ժողովի ժամանակ դատապարտվեց «արիոսականություն», որը համարվեց աղանդ և մշակվեց բոլոր քրիստոնյաների համար պարտադիր հավատի խորհրդանիշը:* (Сов. Ист. Энц., т. 10, стр. 209):

[2] *... քրիստոնյաների երկրորդ ժողովը – Սա եկեղեցու տիեզերական երկրորդ ժողովն է, որ տեղի ունեցավ 381 թվականին Բյուզանդիոնում (Կոստանդնուպոլսում): Այն նպատակ ուներ ամրապնդել եկեղեցու կենտրոնացվածությունը և առավել հստակ ձևակերպել ուղղափառ վարդապետությունը:* (Сов. Ист. Энц., т. 7, стр. 821):

[3] *... քրիստոնյաների երրորդ ժողովը – Սա 431 թվականին Եփեսոսում գումարված Տիեզերական ժողովն է: Թեոդոսիոս Բ կայսեր կողմից հրավիրված այս ժողովի նպատակն էր որոշել եկեղեցու վերաբերմունքը նեստորականության հանդեպ: Ժողովի ընթացքում եպիսկոպոսները բաժանվեցին երկու խմբի, մեկը՝ Կյուրեղ Ալեքսանդրիացու և Եփեսոսի եպիսկոպոս Մեմնոնի գլխավորությամբ, պաշտպանում էր ուղղափառ ուղղությունը, իսկ մյուս խումբը՝ Կոստանդնուպոլսի Նեստոր պատրիարքի և Անտիոքի պատրիարք Հովհանի գլխավորությամբ, պաշտպանում էր նեստորականներին: Հռոմի պապ Կելեստինոս Ա-ը իր ներկայացուցիչների միջոցով ևս աջակցում էր հականեստորականներին: Երկու խմբերի միջև խիստ վեճ տեղի ունեցավ, փոխադարձաբար բանադրեցին միմյանց: Ի վերջո, մեծ դժվարությամբ, Կյուրեղը հասավ նրան, որ Նեստորը գահընկեց արվեց: Ժողովը, ի վերջո, դատապարտեց նեստորականությունը: Սակայն դրանից հետո էլ պայքարը վերջիններիս և ուղղափառ եկեղեցու միջև չդադարեցվեց և միայն 435 թվականին էր, որ կայսերական որոշումով նեստորականությունը հռչակվեց որպես աղանդ:* (Сов. Ист. Энц., т. 16, стр. 677):

[4] *Նեստորը – Կոստանդնուպոլսի պատրիարքն էր (մահ. մոտ. 451 թ.), որի ուսմունքը տարբերվում էր ուղղափառ քրիստոնեությունից: Նեստորը գտնում էր, որ Հիսուսը պարզապես մարդ է, որը սուրբ Հոգու ներշնչմամբ դարձել է մեսիա (Քրիստոս): 431 թվականի Եփեսոսի տիեզերական ժողովից հետո Նեստորը գահընկեց արվեց ու աքսորվեց, իսկ նեստորականները հետագնդվելով Բյուզանդիայում անցան Միջագետք, Իրան, Միջին Ասիա, հետագայում նրանց մի մասը հասավ Հեռավոր Չինաստան:* (Сов. Ист. Энц., т. 10, стр. 141):

[5] *Կյուրեղը (Կիրիլոս) – Կյուրեղ Ալեքսանդրիացին (ծնվ. Դ դ. 70-ական թթ. – մահ. 444) 412 թվականին դարձավ Ալեքսանդրիայի պատրիարք, նշանավոր աստվածաբան էր ու պերճախոս քարոզիչ: Կյուրեղ Ալեքսանդրիացին համառ պայքար մղեց ուղղափառ քրիստոնեությունից չեղումների և հատկապես նեստորականության դեմ: Միաժամանակ նա ամեն կերպ փորձում էր պահպանել եկեղեցու միասնականությունը: Նա վճռորոշ դեր խաղաց Եփեսոսի տիեզերական ժողովում:*

[6] *... չորրորդ ժողովը – Նկատի ունի այն տիեզերական ժողովը, որը հրավիրվեց 449 թվականին՝ Եփեսոսում: Ինչպես և նախորդը, այս ժողովը ևս հրավիրեց Թեոդոսիոս Բ-ը: Այս անգամ խնդիրը եկեղեցու դիրքորոշումն էր միաբնակների (մոնոֆիզիտներ) հանդեպ: Միաբնակության հիմնադիր էր համարվում եվտիքես վանահայրը Կոստանդնուպոլսից: Այս ժողովում պայքար ծավալվեց Կոստանդնուպոլսի և Ալեքսանդրիայի աթոռների միջև: Վերջիններս պաշտպանում էին Եվտիքեսի տեսակետները և, հենվելով կայսեր աջակցության վրա, հաղթանակ տարան: Սա Եվտիքեսյան միաբնակության հաղթանակն էր, որը սակայն ժամանակավոր բնույթ էր կրում: 449-ի ժողովը թվով չորրորդն էր (ինչպես իրավացիորեն նշում է Յակուբին) սակայն, քանի որ այդ ժողովը հետագայում մերժվեց եկեղեցու կողմից, ներկայում չորրորդ է համարվում հաջորդ Քաղկեդոնի ժողովը:* (Сов. Ист. Энц., т. 16, стр. 677):

[7] *Թարսիոսը – (Հուն. նչ. Տարսոնցի) – Հավանաբար նկատի ունի Կոստանդնուպոլսի վանահայր Եվտիքեսին՝ միաբնակության հիմնադրին: 431-ի տիեզերական ժողովից հետո Եվտիքեսը միաբնակության ակզբունքը հասցրեց ծայրահեղության (Քրիստոսի մեջ մարդկային բնություններ կլանված է աստվածայինով): Եվտիքեսյան միաբնակները 451-ի Քաղկեդոնի տիեզերական ժողովում քննադատվեցին, և հաստատվեց երկաբնակությունը: Ալեքսանդրիայի, Եփեսոսի, Ասորիքի, Պաղեստինի եկեղեցիները չընդունեցին Քաղկեդոնի որոշումները: Հայաստանյայց եկեղեցին 506-ի Դվինի եկեղեցական ժողովում դատապարտեց թե՛ եվտիքեսյաններին, թե՛ քաղկեդոնականներին՝ հավատարիմ մնալով 431-ի Եփեսոսի տիեզերական ժողովի վարդապետություններ, քան որի Հիսուս Քրիստոսի մեջ աստվածայինն ու մարդկայինը միավորված են անխառն ու անբաժանելի կերպով:* (Հայկ. սովետ. Հանրագիտարան, հ. 7, էջ 522):

[8] *Հակորիկները (Յաակուբիյա) – Հակորիկյան եկեղեցին ասորիների միաբնակ եկեղեցու ավանդապահ թևի անվանումն է: Առաջացել է 560-570-ական թթ., երբ Ասորիների միաբնակ եկեղեցին, ներքին երկպառակությունների հետևանքով, երկփեղկվել էր: Առաջին մասը, Անտիոքի Պողոս պատրիարքի անունով, կոչվել է՝ Պողոսյան եկեղեցի, երկրորդը՝ Եդեսիայի եպիսկոպոս Հակոբ Բարադեոսի (490-578) անունով՝ Հակորիկյան եկեղեցի: Հակորիկյան եկեղեցին ունեցել է իր ինքնուրույն պատրիարքը, որի նստավայրը սկզբնական շրջանում Անտիոքն էր: Հետագայում, թեպետ նստավայրը հաճախ է փոխվել, բայց Հակորիկյան եկեղեցու գլուխը չարունակել է կոչվել Անտիոքի պատրիարք: Այստեղ Յակուբին անչուշտ նկատի ունի ընդհանրապես բոլոր միաբնակներին: Անչուշտ նշված դեպքերի ժամանակ Հակորիկյան (Յաակուբիյա) անունով եկեղեցի գոյություն չուներ, բայց պատմիչը օգտագործում է իր ապրած ժամանակվա անվանումը:* (Հայկ. սովետ. Հանրագիտարան, հ. 6, էջ 70):

[9] *... Կոստանդնուպոլսում հավաքվեց վեց հարյուր երեսուն եպիսկոպոս – Նկատի ունի չորրորդ (փաստացի հինգերորդ) տիեզերական ժողովը, որ տեղի ունեցավ 451 թվականին՝ Քաղկեդոնում: Այն հրավիրեց Արևելյահռոմեական (Բյուզանդիա) կայսր Մարկիանոսը (450-457): Ժողովը դատապարտեց միաբնակությունը և ամրողջովին մերժեց նախորդ՝ Եփեսոսի (449) ժողովի որոշումները: Սա փաստորեն եկեղեցու առաջին մեծ խզումն էր, որից հետո քրիստոնյաները բաժանվեցին քաղկեդոնականների ու հակաքաղկեդոնականների: Այս հարցում Կոստանդնուպոլսի ու Հռոմի աթոռները միասնական դիրք գրավեցին, կայսրը ևս, Ալեքսանդրիայի աթոռի անջատողական միտումներից վախեցած, աջակցեց նրանց: Քաղկեդոնի որոշումները չընդունեցին Սիրիայի ու Եգիպտոսի եկեղեցիները: 506-ի Դվինի ժողովում նույնպիսի դիրքորոշում արտահայտեց նաև Հայաստանյայց առաքելական եկեղեցին:* (Сов. Ист. Энц., т. 15, стр. 498):

[10] *Մարկիանոս – Բյուզանդիայի կայսր (450-457):*

[11] *Լևոնը (Ալյուն) – Բյուզանդիայի Լևոն Ա կայսր (457-474):*

[12] *Զենոնը – Բյուզանդիայի կայսր նախ՝ 474-475 ապա նաև՝ 476-491 թթ. : Զենոնի երկու գահակալությունների միջև իշխել է Վասիլիսկոսը (475-476):*

[13] *Անաստասիոսը (Անաստասիուս) – Բյուզանդիայի կայսր (491-518):*

[14] *.... քրիստոնյաների հինգերորդ ժողովը – եկեղեցու տիեզերական հինգերորդ ժո-*

ժողո տեղի է ունեցել Կոստանդնուպոլսում՝ 533 թվականին:

15 Հուստինոս (Յուսթուս) Երկրորդը – Հուստինոս Բ կայսր(565-578): Այստեղ պատմիչը չի հիշատակում նախորդ երկու կայսրերին՝ Հուստինոս Ա (518-527) և Հուստինիանոս Ա (527-565):

16 Հուստինոս Երրորդը – Բյուզանդիայի կայսր Հուստինոս Գ (565-578):

17 Հերակլ – Տե՛ս Խալիֆա իրն Խայյաթ, ծնթգր. 3:

18 Կոստանդիներ – Տե՛ս Բալաղուրի, ծնթգր. 75:

19 ... քրիստոնյաների վեցերորդ ժողովը - Այս տիեզերական ժողովը ևս կայացել է Կոստանդնուպոլսում 680-681 թվականներին:

20 Իսթախր – Տե՛ս Խալիֆա իրն Խայյաթ, ծնթգր. 13 :

21 Արտավան (Արդաուան) – Վերջին պարթև Արշակունի արքա Արտավան Ե (209-224):

22 Շապուհ (Սաբուր) – Սասանյան արքա Շապուհ Ա (241/243 - 272):

23 Մանի իրն Համմադ ալ-Ջինդիկ (հերձվածող) – Խոսքը Գ դարում Մերձավոր Արևելքում տարածում գտած կրոնական ուսմունքի՝ մանիքեության հիմնադրի մասին է: Մանիքեությունը ուղղված էր Սասանյան Իրանի պաշտոնական կրոնի՝ զրադաշտականության դեմ: Այս ուսմունքն իր մեջ ներառում էր տարբեր տարբեր կրոններից: Հիմնական գաղափարը դուալիստական էր՝ լույսի (բարու) և խավարի (չարի) նախասկիզբը աչխարհում: Մանին ուսուցանում էր, որ չարը որպես նախասկիզբ, նույնքան ինքնակա է, որքան բարին: Մանիքեության դեմ պայքար ծավալեցին ոչ միայն զրադաշտականները, այլև քրիստոնեական եկեղեցին: Հետագայում՝ 8-9-րդ դարերում մահմեդականները ևս հալածեցին մանիքեականներին: (Հայկ. սովետ. հանրագիտարան, հ. 7, էջ 224):

24 Յարմուք – Տե՛ս Խալիֆա իրն Խայյաթ, ծնթգր. 1:

25 Հազկերտ – Սասանյան վերջին արքա Հազկերտ Գ (632-651):

26 ... գրեց [թվականը] հիջրայից – Մուհամմադ մարգարեի գաղթը Մեքքայից Մադինա 622 թվականի սեպտեմբերին: «Հիջրա» բառը հաճախ թարգմանվում է որպես «գաղթ», բայց ավելի ճշգրիտ «հաջարա» բայը նշանակում է կտրել մեկին ընկերակցությունից, ընկերական հարաբերությունների խզում և այլն:

Մեքքայի վերնախավի հետապնդումներից փախչելով Մուհամմադը իր ամենամոտ դինակիցների հետ, նախապես պայմանավորված լինելով Մադինայի բոլոր գլխավոր տոհմերի հետ, գաղտնի դուրս եկավ Մեքքայից ու 622 թ. սեպտեմբերի 24-ին հասավ Մադինա: Հենց այս իրադարձությունից էլ հաշվվում է հիջրայի թվականը: (Hidjra, W. Montgomery Watt, EOI, CD-ROM, (III: 366a)).

27 Իրդար – կամ արդար: Տե՛ս Բալաղուրի, ծնթգր. 17:

28 Հարիր իրն Մասլամա ալ-Ֆիհրի – Տե՛ս Խալիֆա իրն Խայյաթ, ծնթգր. 10:

29 Մառուա Վարդան – Տե՛ս Վարդանի չուկա, Բալաղուրի, ծնթգր. 195:

30 Հուսայնի սպանությունը – Հուսայն իրն Ալի Արու Արդալլահ ալ-Շահիդը (626 – 680) Ալի իրն Արու Թալիբ խալիֆայի կրտսեր որդին էր: Նրա մայրն էր Ֆաթիման՝ Մուհամմադ մարգարեի դուստրը: Ավագ եղբոր՝ Հասանի մահից հետո՝ 669-ին Հուսայնը դարձավ ալիական տոհմի դեկավար: Նա հայտնի դարձավ նրանով, որ ապստամբություն բարձրացրեց Օմայանների դեմ (որոնց իշխանությունը համարում էր անօրինական): Հուսայնը գլխավորեց եղիդ խալիֆայի դեմ ապստամբությունը: 680 թ. հոկտ. 10-ին Հուսայնի փոքրաթիվ ջոկատը հարձակման ենթարկվեց խալիֆայական 4000-անոց զորքի կողմից: Հուսայնն ու իր բոլոր ընկերները նահատակվեցին: Դա տեղի ունեցավ մի վայրում, որից ոչ հեռու հետագայում գոյացավ Քարբալա քաղաքը: Հուսայնի մահվան օրը բոլոր շիայականների կողմից նշվում է որպես սգո օր: (Husayn ibn Ali ibn Abi Talib, L. Veccia Vaglieri, EOI, CD-ROM, (III: 607a), Ислам, энц. словарь, стр. 285):

31 Շիիներ – իսլամի մեջ այն չարժումը, որը պաչտպանում է Մարգարեի ընտանիքի առանձնաչնորհյալ դիրքը մահմեդական համայնքի քաղաքական ու կրոնական կառավարման հարցում: Անունը ծագում է «Շիաթ Ալի» - Ալիի կողմնակիցներ արտահայտությունից, որը հակադրվում էր «Շիաթ Օսման» արտահայտությանը: Վերջինս ներս սպանված Օսման խալիֆայի կողմնակիցներն էին: Մուհամմադի մահվան պահից սկսած հակասություններ ժառանգականության ու ընտրելիության կողմնակիցների միջև արդեն գոյություն ուներ: Այն սրվեց Օսման խալիֆայի օրոք, իսկ Ալիի կարճ գահակալության օրոք՝ հասավ իր գագաթնակետին: Ալին Մուհամմադի հորեղբորորդին էր ու նրա աղջկա՝ Ֆաթիմայի ամուսինը, ուստի նա մարգարեին ամենամոտ անձն էր: Ըստ շիիների Ալին ու նրա ժառանգները միայն կարող էին լինել օրինական խալիֆաներ: (Shia, W. Madelung, EOI, CD-ROM, (IX: 420a)).

32 Խարիջիներ – Տե՛ս Բալաղուրի, ծնթգր. 165:

33 ... արչավեց Հայաստան որի ժողովուրդն ապստամբել էր – Խոսքը 703-ի ապստամբության և հաջորդող երկու տարիների մասին է:

34 ... և ամենքին վառեց – Խոսքը 705 թվականի Խրամի ու Նախճավանի դեպքերի մասին է:

35 Ալ-Ռուրաս գետը – Գետ Դարբանդից հարավ, որ թափվում է Կասպից ծով:

36 Դարբիլի (Արդաբիլի) գետը – Այստեղ հավանաբար չփոթություն կա, պատմիչը օգտագործում է Դարբիլի գետ արտահայտությունը, մինչդեռ հավանաբար պետք է լիներ Արդարբիլի գետ: (Վ. Տ.-Ղ.)

37 Մասլամա իրն Արդ ալ-Մալիք – Հայաստանի և Ատրպատականի կառավարիչ 725-729 թվականներին:

38 Ասիմ իրն Արդալլահ իրն Յազիդ ալ-Հիլալի – Տե՛ս Խալիֆա իրն Խայյաթ, ծնթգր. 64:

39 Խահակ իրն Մուսլիմ ալ-Ուկայլի – Տե՛ս Բալաղուրի, ծնթգր. 167:

40 ... Հայաստանի կառավարիչ Ասիմ իրն Արդալլահ իրն Յազիդ ալ-Հիլալիին – Տե՛ս Խալիֆա իրն Խայյաթ, ծնթգր. 64:

41 Արու Մուսլիմ – Աբբասյանների ապստամբական չարժման դեկավար Խորասանում: Նա ծագումով պարսիկ էր: Արու Մուսլիմը կապեր ստեղծեց շիայականների հետ և 737 թվականին նրանց հետևորդների մեջ էր: 741-742 թ. նա Մեքքայի բանտում էր, որտեղից նրան կարողացան ազատել Աբբասյանների ներկայացուցիչները: Արու Մուսլիմին բերեցին Իմամ Իբրահիմ իրն Մուհամմադի մոտ, որը նրան համապատասխան հանձնարարություններով ուղարկեց Խորասան 745-746 թ-ին: Այստեղ իր կողմը գրավելով տեղական ուժերին՝ 747 թվականին Արու Մուսլիմը Հզոր ապստամբություն բարձրացրեց: Գրավեց Մերվը և աստիճանաբար նաև Հարևան տարածքները՝ չարժվելով դեպի արևմուտք: Ի վերջո այս ապստամբությունը պատճառներից մեկը դարձավ Օմայան խալիֆայության անկման (750): Այն բանից հետո, երբ առաջին Աբբասյան խալիֆա Արու-լ-Աբբաս ալ-Սաֆֆահը անցավ իշխանության, Արու Մուսլիմը մնաց որպես Խորասանի կառավարիչ: Սակայն նրա հարաբերությունները Աբբասյանների հետ (որոնք նաև նրան էին պարտական իշխանության գալու համար) բավական լարված էին: Մանավանդ Արու Ջաաֆար ալ-Մանսուրի օրոք այդ հարաբերությունները էլ ավելի լարվեցին: Ըստ երևույթին Արու Մուսլիմի մեծ հեղինակությունը հանգիստ չէր տալիս խալիֆային: Վերջապես, երբ Մանսուրը նրան հրավիրեց արքունիք, Արու Մուսլիմը, կասկածելով , բայց և այնպես գնաց մայրաքաղաք, որտեղ էլ դավադրաբար սպանվեց: (Abu Muslim, S. Moscati, EOI, CD-ROM, (I: 141a)):

42 Մուհամմադ իրն Սուլ - եղել է Հայաստանի կառավարիչ 750 թվականին: Նչանակել է առաջին Աբբասյան խալիֆա Արու-լ-Աբբաս 133 հ. թ. (750-751): Նա հաղթեց

դովը տեղի է ունեցել Կոստանդնուպոլսում՝ 533 թվականին:

15 Հուստինոս (Յուստուս) երկրորդը – Հուստինոս Բ կայսր (565–578): Այստեղ պատմիչը չի հիշատակում նախորդ երկու կայսրերին՝ Հուստինոս Ա (518–527) և Հուստինիանոս Ա (527–565):

16 Հուստինոս Երրորդը – Բյուզանդիայի կայսր Հուստինոս Գ (565–578):

17 Հերակլ – Տե՛ս Խալիֆա իբն Խայյաթ, ծնթգր. 3:

18 Կոստանդիներ – Տե՛ս Բալաղուրի, ծնթգր. 75:

19 ... քրիստոնյաների վեցերորդ ժողովը – Այս տիեզերական ժողովը ևս կայացել է Կոստանդնուպոլսում 680–681 թվականներին:

20 Խթաթար – Տե՛ս Խալիֆա իբն Խայյաթ, ծնթգր. 13 :

21 Արտավան (Արդաուան) – Վերջին պարթև Արշակունի արքա Արտավան Ե (209–224):

22 Շապուհ (Սապուր) – Սասանյան արքա Շապուհ Ա (241/243 - 272):

23 Մանի իբն Համմադ ալ-Զինդիկ (Հերձվածող) – Խոսքը Գ դարում Մերձավոր Արևելքում տարածում գտած կրոնական ուսմունքի՝ մանիքեության հիմնադրի մասին է: Մանիքեությունը ուղղված էր Սասանյան Իրանի պաշտոնական կրոնի՝ զրադաշտականության դեմ: Այս ուսմունքն իր մեջ ներառում էր տարբեր տարրեր կրոններից: Հիմնական գաղափարը դուալիստական էր՝ լույսի (բարու) և խավարի (չարի) նախասկիզբ աշխարհում: Մանին ուսուցանում էր, որ չարը որպես նախասկիզբ, նույնքան ինքնակա է, որքան բարին: Մանիքեության դեմ պայքար ծավալեցին ոչ միայն զրադաշտականները, այլև քրիստոնեական եկեղեցին: Հետագայում՝ 8–9-րդ դարերում մահմեդականները ևս հալածեցին մանիքեականներին: (Հայկ. սովետ. հանրագիտարան, հ. 7, էջ 224):

24 Յարմուք – Տե՛ս Խալիֆա իբն Խայյաթ, ծնթգր. 1:

25 Հաղկերտ – Սասանյան վերջին արքա Հաղկերտ Գ (632–651):

26 ... գրեց [թվականը] հիջրայից – Մուհամմադ մարգարեի գաղթը Մեքքայից Մադինա 622 թվականի սեպտեմբերին: «Հիջրա» բառը հաճախ թարգմանվում է որպես «գաղթ», բայց ավելի ճշգրիտ «հաջարա» բայը նշանակում է կտրել մեկին ընկերակցությունից, ընկերական հարաբերությունների խզում և այլն:

Մեքքայի վերնախավի հետապնդումներից փախչելով Մուհամմադը իր ամենամոտ դինակիցների հետ, նախապես պայմանավորված լինելով Մադինայի բոլոր գլխավոր տոհմերի հետ, գաղտնի դուրս եկավ Մեքքայից ու 622 թ. սեպտեմբերի 24-ին հասավ Մադինա: Հենց այս իրադարձությունից էլ հաշվվում է հիջրայի թվականը: (Hidjra, W. Montgomery Watt, EOI, CD-ROM, (III: 366a)).

27 Իրդար – կամ արդար: Տե՛ս Բալաղուրի, ծնթգր. 17:

28 Հաբիր իբն Մասլամա ալ-Ֆիհրի – Տե՛ս Խալիֆա իբն Խայյաթ, ծնթգր. 10:

29 Մաուլա Վարդան – Տե՛ս Վարդանի չուկա, Բալաղուրի, ծնթգր. 195:

30 Հուսայնի սպանությունը – Հուսայն իբն Ալի Աբու Արդայլահ ալ-Շահիդը (626 – 680) Ալի իբն Աբու Թալիբ խալիֆայի կրտսեր որդին էր: Նրա մայրն էր Ֆաթիման՝ Մուհամմադ մարգարեի դուստրը: Ավագ եղբոր՝ Հասանի մահից հետո՝ 669-ին Հուսայնը դարձավ ալիական տոհմի դեկավար: Նա հայտնի դարձավ նրանով, որ ապստամբություն բարձրացրեց Օմայանների դեմ (որոնց իշխանությունը համարում էր անօրինական): Հուսայնը գլխավորեց Եզիդ խալիֆայի դեմ ապստամբությունը: 680 թ. հոկտ. 10-ին Հուսայնի փոքրաթիվ ջոկատը հարձակման ենթարկվեց խալիֆայական 4000-անոց զորքի կողմից: Հուսայնն ու իր բոլոր ընկերները նահատակվեցին: Դա տեղի ունեցավ մի վայրում, որից ոչ հեռու հետագայում գոյացավ Քարբալա քաղաքը: Հուսայնի մահվան օրը բոլոր շիաականների կողմից նշվում է որպես սգո օր: (Husayn ibn Ali ibn Abi Talib, L. Veccia Vaglieri, EOI, CD-ROM, (III: 607a), Ислам, энц. словарь, стр. 285):

31 Շիիներ – իսլամի մեջ այն չարժումը, որը պաշտպանում է Մարգարեի ընտանիքի առանձնաշնորհյալ դիրքը մահմեդական համայնքի քաղաքական ու կրոնական դեկավարման հարցում: Անունը ծագում է «Շիաթ Ալի» – Ալիի կողմնակիցներ արտահայտությունից, որը հակադրվում էր «Շիաթ Օսման» արտահայտությանը: Վերջիններս սպանված Օսման խալիֆայի կողմնակիցներն էին: Մուհամմադի մահվան պահից սկսած հակասություններ ժառանգականության ու ընտրելիության կողմնակիցների միջև արդեն գոյություն ուներ: Այն սրվեց Օսման խալիֆայի օրոք, իսկ Ալիի կարճ գահակալության օրոք՝ հասավ իր գագաթնակետին: Ալին Մուհամմադի հորեղբորորդին էր ու նրա աղջկա՝ Ֆաթիմայի ամուսինը, ուստի նա մարգարեին ամենամոտ անձն էր: Ըստ շիիների Ալին ու նրա ժառանգները միայն կարող էին լինել օրինական խալիֆաներ: (Shia, W. Madelung, EOI, CD-ROM, (IX: 420a)).

32 Խարիջիներ – Տե՛ս Բալաղուրի, ծնթգր. 165:

33 ... արշավեց Հայաստան որի ժողովուրդն ապստամբել էր – Խոսքը 703-ի ապստամբության և հաջորդող երկու տարիների մասին է:

34 ... և ամննքին վառեց – Խոսքը 705 թվականի Ութամ ու Նախճավանի դեպքերի մասին է:

35 Ալ-Ռուբաս գետը – Գետ Դարբանդից հարավ, որ թափվում է Կասպից ծով:

36 Դարիլի (Արդարիլի) գետը – Այստեղ հավանարար չփոթություն կա. պատմիչը օգտագործում է Դարիլի գետ արտահայտությունը, մինչդեռ հավանարար պետք է լիներ Արդարիլի գետ: (Վ. Տ.-Ղ.)

37 Մասլամա իբն Աբդ ալ-Մալիք – Հայաստանի և Ատրպատականի կառավարիչ 725–729 թվականներին:

38 Ասիմ իբն Աբդալլահ իբն Յազիդ ալ-Հիլալի – Տե՛ս Խալիֆա իբն Խայյաթ, ծնթգր. 64:

39 Իսհակ իբն Մուսլիմ ալ-Ուկայլի – Տե՛ս Բալաղուրի, ծնթգր. 167:

40 ... Հայաստանի կառավարիչ Ասիմ իբն Աբդալլահ իբն Յազիդ ալ-Հիլալիին – Տե՛ս Խալիֆա իբն Խայյաթ, ծնթգր. 64:

41 Աբու Մուսլիմ – Աբբասյանների ապստամբական չարժման դեկավար Խորասանում: Նա ծագումով պարսիկ էր: Աբու Մուսլիմը կապեր ստեղծեց շիայականների հետ և 737 թվականին նրանց հետևորդների մեջ էր: 741–742 թ. նա Մեքքայի բանտում էր, որտեղից նրան կարողացան աղատել Աբբասյանների ներկայացուցիչները: Աբու Մուսլիմին բերեցին Իմամ Իբրահիմ իբն Մուհամմադի մոտ, որը նրան համապատասխան հանձնարարություններով ուղարկեց Խորասան 745–746 թ-ին: Այստեղ իր կողմը գրավելով տեղական ուժերին՝ 747 թվականին Աբու Մուսլիմը հզոր ապստամբություն բարձրացրեց: Գրավեց Մերվը և աստիճանաբար նաև հարևան տարածքները՝ չարժվելով դեպի արևմուտք: Ի վերջո այս ապստամբությունը պատճառներից մեկը դարձավ Օմայան խալիֆայության անկման (750): Այն բանից հետո, երբ առաջին Աբբասյան խալիֆա Աբու-լ-Աբբաս ալ-Սաֆֆահը անցավ իշխանության, Աբու Մուսլիմը մնաց որպես Խորասանի կառավարիչ: Սակայն նրա հարաբերությունները Աբբասյանների հետ (որոնք նաև նրան էին պարտական իշխանության գալու համար) բավական լարված էին: Մանավանդ Աբու Ջաաֆար ալ-Մանսուրի օրոք այդ հարաբերությունները էլ ավելի լարվեցին: Ըստ երևույթին Աբու Մուսլիմի մեծ հեղինակությունը հանգիստ չէր տալիս խալիֆային: Վերջապես, երբ Մանսուրը նրան հրավիրեց արքունիք, Աբու Մուսլիմը, կասկածելով , բայց և այնպես գնաց մայրաքաղաք, որտեղ էլ դավադրաբար սպանվեց: (Abu Muslim, S. Moscati, EOI, CD-ROM, (I: 141a)):

42 Մուհամմադ իբն Սուլ - եղել է Հայաստանի կառավարիչ 750 թվականին: Նշանակել է առաջին Աբբասյան խալիֆա Աբու-լ-Աբբասը 133 հ. թ. (750–751): Նա հաղթեց

Մուսաֆիրին (նախորդ կառավարչին, որ գրավել էր իշխանությունը) ու սպանեց նրան: (Տեր-Ղևոնդյան, Արմ. ոստիկանների ժամանակագրությունը):

43 Մուսաֆիր իրն Քասիր – Կառավարել է 745–750 թթ.-ին: Սա գրավեց իշխանությունը և 747–750 թթ. ապստամբության ժամանակ կռվում էր Խահակի դեմ: Նրան սպանեց Մուհամմադ իրն Սուլը 133 հ. թ. (750–751): (Տեր-Ղևոնդյան, Արմ. ոստիկանների ժամանակագրությունը):

44 Հաշիմիյա – Աբբասյանների մայրաքաղաքի անվանումը նախքան Բաղդադի կառուցումը: Այս անվանումը վերաբերում է ոչ թե կոնկրետ մի վայրի, այլ այն տրվում էր ամեն մի նոր բնակավայրի, որը խալիֆան ընտրում էր որպես նստավայր: Դինաստիայի հիմնադիր ալ-Սաֆֆահը Քուֆայից դուրս գալով հաստատվեց Կասր իրն Հուբայրայի դիմաց, որտեղ նա կառուցեց մի քաղաք այն կոչելով՝ Հաշիմիյա (Քուֆայի և Բաղդադի միջև ճանապարհի կեսին): 752 թ. ալ-Սաֆֆահը մեկ անգամ ևս տեղափոխվեց և հաստատեց իր մայրաքաղաքը ալ-Անբարի մոտ (նախկին Ֆիրուզ Սաբուր պարսկական քաղաքը), որը ևս կոչեց Հաշիմիյա, բայց չհասցրեց ավարտել, մահացավ 754-ին: (al-Hashimiyya, J. Lassner, EOI, CD-ROM, (III: 265b)):

45 Հասան իրն Կահթաբա – Տե՛ս Խալիֆա իրն Խայյաթ, ծնթգր. 72:

46 Յազիդ իրն Ուսայդ ալ-Սուլամի – Տե՛ս Բալազուրի, ծնթգր. 168:

47 Կամախ (Քամխ) – Տե՛ս Խալիֆա իրն Խայյաթ, ծնթգր. 73:

48 Մաուլա Վադիհ – Վադիհ ալ-Աբբասի (775): Մանսուր խալիֆայի օրոք նշանակված վերջին ոստիկանն էր և չատ կարճ ժամանակ իշխեց: Սա Յակուբի պատմիչի պապն էր: (Տեր-Ղևոնդյան, Արմ. ոստիկանների ժամանակագրությունը):

49 Արու Ջաաֆարը կառուցեց Մամեստիա(Մասսիա) քաղաքը – Արու Ջաաֆար ալ-Մանսուր Աբբասյան խալիֆան վերականգնել է, բայց չի կառուցել Մամեստիա (Մասսիա) քաղաքը:

50 Բարմաքի տոհմը – Պարսիկ Բարմաքյան ընտանիքը, որոնք Աբբասյան խալիֆաների քարտուղարներ ու վեզիրներ էին: Նրանք ծագում էին դրադաչտական մոգերի ընտանիքից, որոնք եղել էին Բալխի մոտ գտնվող Նաուբահարի ատրուչանի քուրմերը: Նրանք նաև հայտնի էին, որպես հմուտ բժիշկներ: Բարմաք բառը ծագում է սանսկրիտ «Պարմակ» բառից, որը «դևկավար, առաջնորդ» իմաստն ունի: Այս ընտանիքից առաջինը Խալիդ իրն Բարմաքն էր, որն ընդունեց իսլամը: Առաջին Աբբասյան խալիֆա ալ-Սաֆֆահը նրան վստահեց բանակի և հողահարկի գանձման դիվանների քարտուղարությունը: Ալ-Մանսուրի օրոք Խալիդը չարունակեց կարևոր դեր խաղալ արքունիքում: Ապա չուրջ 7 տարի վարեց Թաբարիստանի կառավարչի պաշտոնը և լավ անուն վաստակեց: Հաջորդ խալիֆայի՝ Մահդիի օրոք, Խալիդը պաշտոնավարեց Ֆարսում, բայց չատ չանցած մահացավ 75 տարեկան հասակում: Որդին՝ Յահյան երկար տարիների պետական ծառայության փորձ ուներ, երբ արդեն հաջորդ խալիֆան՝ Հարուն ալ-Ռաշիդը նրան նշանակեց վեզիր: Նրան օգնում էին իր երկու որդիները՝ ալ-Ֆադլը և Ջաաֆարը: Տասնյոթ տարի Յահյան և իր որդիները իմաստուն կերպով վարեցին խալիֆայության տնտեսությունը: Նրանք այնպիսի իշխանություն ու հեղինակություն ունեին, որ որոշ հեղինակներ այդ տարիները (786–803) կոչում են Բարմաքյանների իշխանություն: Սակայն Հարուն ալ-Ռաշիդը որոշեց ոչնչացնել այս ընտանիքը նրանց մեջ վտանգ տեսնելով, կամ պարզապես նախանձելով: Մի գիշերվա մեջ (803 թ. Հունվարի 9) Բարմաքյանները կոտորվեցին, իսկ նրանց առասպելական հարստությունը գրավվեց հարքունիս: (al-Baramika, D. Sourdel, EOI, CD-ROM, (I: 1033a)):

51 Ջաաֆար – Տե՛ս Յակուբի (պ.) ծնթգր. 50:

52 Խալիդ իրն Յազիդ իրն Ուսայդ ալ-Սուլամի – Կառավարիչ (794): Հիշվում է դրամի վրա. Առան 177 (793–794): Նրան նշանակել է Ֆադլը. (Տեր-Ղևոնդյան, Արմ. ոստիկանների ժամանակագրությունը):

53 ... նշանակեց ալ-Աբբաս իրն Ջաբիր իրն Յազիդ իրն Ջաբիր իրն Արդայահ ալ-Բաջալիին – Հայաստանի կառավարիչ: Նրան նշանակեց Ռաշիդը (խալիֆա) Խալիդից հետո: (Տեր-Ղևոնդյան, Արմ. ոստիկանների ժամանակագրությունը):

54 ... նշանակեց Սահդ իրն Սալմ իրն Կուտայբա ալ-Բահիլիին – Տե՛ս Բալազուրի, ծնթգր. 176:

55 Յազիդ իրն Մազիադ ալ-Շայբանի – Տե՛ս Դինավարի, ծնթգր. 18:

56 ... ուղարկեց Մուհամմադ իրն Ջուհայր իրն ալ-Մուսայիբ ալ-Դաբբիին – Հարուն ալ-Ռաշիդի նշանակած վերջին ոստիկանն էր. (Տեր-Ղևոնդյան, Արմ. ոստիկանների ժամանակագրությունը):

57 Խահակ իրն Սուլայման ալ-Հաշիմի – Արմինիայի կառավարիչ 811–813 թթ.-ին: Հիշվում է դրամի վրա. Առան 196 (811–812): Նա իր փոխարեն Հայաստան ուղարկեց որդուն՝ Յազիդին. (Տեր-Ղևոնդյան, Արմ. ոստիկանների ժամանակագրությունը):

58 Արնաներ – Տվյալ դեպքում «արնա», կամ «արնա ալ-դաուլա» բառերը վերաբերում է խորասանցիներին և այլ ուժերի, որոնք աջակցելով Աբբասյաններին դարձել էին այդ տոհմի «որդեգրված» անդամները, նպաստել նրանց իշխանության գալուն և դրանից հետո էլ մնացել որպես ազդեցիկ քաղաքական ուժ, մինչև որ 9-րդ դարում այդ դերը ստանձնեցին թյուրք և այլ ծագումով դինվորականները: (al-Abna, B. Lewis, EOI, CD-ROM, (I: 102a)).

59 Արդ ալ-Մալիք իրն Ջահհաֆ ալ-Սուլամի – Արդ ալ-Մալիք իրն ալ-Ջահհաֆր հիշվում է դրամի վրա. Մադան Բաջնաայա 196 հ. թ. (811–812): Հավանաբար կարճ ժամանակ է իշխել որպես բռնացող (մուտաղալլիբ). (Տեր-Ղևոնդյան, Արմ. ոստիկանների ժամանակագրությունը):

60 Թեոփիլոսը (Տուֆիլ) – Բյուզանդիայի Թեոֆիլ (Թեոփիլոս) կայսրը (829–842) (Իբն ալ-Ասիր, էջ 378):

61 Մալիքի [մազհաբից] – Մահմեդական կրոնական իրավագիտության չորս ուղղություններից (մազհաբներից) մեկը: Դրա հիմքում է դրված Իմամ Մալիք իրն Անասի ուսմունքը, որը մահացել է Մադինայում 795 թ.: (Malikiyya, N. Cottart, EOI, CD-ROM, (VI: 278a)):

62 Լուլուա – Տե՛ս Իրն Կուտայբա, ծնթգր. 10:

63 .... Ղուրանի ստեղծված լինելու հարցում – Մամուն խալիֆայի օրոք դարկ տրվեց այլ լեզուներից (մանավանդ հունարենից) թարգմանություններին, որոնք վերաբերում էին գիտությունների ամենատարբեր ճյուղերին: Դրանք իրենց հերթին խթանեցին գիտությունների զարգացմանը խալիֆայության մեջ: Այդ նույն ժամանակ առաջացավ Մուտազիլիների հոսանքը, որոնք ռացիոնալիստական, ոչ դոգմատիկ մոտեցումներ էին ցուցաբերում կրոնա-փիլիսոփայական չատ հարցերի նկատմամբ: Այդ ժամանակ քննարկվող կարևորագույն հարցերից մեկն այն էր, թե արդյոք Ղուրանը ստեղծված մի բան է, թե դա միչտ գոյություն է ունեցել: Մուտազիլիները գտնում էին, որ այն ստեղծված է և ընդհանրապես միայն Աստված չի ստեղծված և հավերժական է: Մամուն խալիֆան ինքը ջերմորեն պաչտպանում էր այս տեսակետը և նույնիսկ ուժով ստիպում ընդունել այն: (al-Mamun, M. Rekaya, EOI, CD-ROM, (VI: 331a)):

64 Մուհամմիրաները (խուռամյաններ) – կամ մուհամմարաները: Տե՛ս Խալիֆա իրն Խայյաթ, ծնթգր. 76:

65 Սահլ որդի Սմբատի – Սմբատի որդի Սահլը (Սահլ Սմբատեան): Տե՛ս Դինավարի, ծնթգր. 23:

66 Մուհամմադ իրն Սուլայման ալ-Ազդի ալ-Սամարկանդի – Արմինիայի կառավարիչ 835–837 թթ.: Աֆչինը, որն ղրաղված էր Ատրպատականում, սրան նշանակեց Արմինիայի կառավարիչ: Սրա դեմ ապստամբեցին Սահլ Սմբատյանը և ուրիշները. (Տեր-Ղևոնդյան, Արմ. ոստիկանների ժամանակագրությունը):

[67] *Մուհամմադ իրն Խալիդ Բուխաթախուդահ – Արմինիայի կառավարիչ 838–839 ԹԹ. ին: Ապչինր նրան նշանակեց 223 հ. թ. (837–838), որպեսզի հանդարտեցնի երկիրը և նա կռվեց ծանարների դեմ: (Տեր-Ղևոնդյան, Արմ. ոստիկանների ժամանակագրություններ):*

[68] *Ալի իրն ալ-Հուսայն իրն Սիրա ալ-Կայսի – Արմինիայի կառավարիչ 840-ին: Թույլ անձնավորություն լինելու պատճառով նրան կոչում էին յատիմ(որր). (Տեր-Ղևոնդյան, Արմ. ոստիկանների ժամանակագրություններ):*

[69] *Իբրահիմ ալ-Մուայադ – Գուցե սա այն Իբրահիմն է, որի մասին հաղորդում է Թովմա Արծրունին և որը կառավարիչ է նշանակվել 856-ին: (Տեր-Ղևոնդյան, Արմ. ոստիկանների ժամանակագրություններ):*

[70] *... ուրբի կանգնեցին մի խումբ պատրիկներ և ուրիչներ ու բոնացան իրենց գավառներում – Խոսքը 850–855 թվականների ապստամբության մասին է:*

[71] *Աբու Սաիդ Մուհամմադ իրն Յուսուֆ – Աբու Սաիդ Մուհամմադ իրն Յուսուֆ ալ-Մարուադին (850–851) կառավարիչ նշանակվելով այդպես էլ չիշխեց: Հայ պատմիչների հիշած Ապուսեթն է, որը եկավ հարկերը ծանրացնելու, բայց հայ նախարարները նրան սահմանից ետ ուղարկեցին. Թովմա, 107–108: Նշանակվել էր Մուտավաքքիլ խալիֆայի կողմից և մեկ տարի անց 236 հ. թ. Շավվալ 22-ին (28 ապրիլի 851) մահացել. Tabari, IX, 185: Հարկերի գծով նրա տեղակալն էր Մուսա իրն Զուրարան, Թովմա, 111: (Տեր-Ղևոնդյան, Արմ. ոստիկանների ժամանակագրություններ):*

[72] *... նշանակեց նրա որդուն՝ Յուսուֆին – Յուսուֆ իրն Մուհամմադ ալ-Մարուադի (851–852): Տե՛ս Բալաղուրի, ծնթգր. 181:*

[73] *... ավազ (Քարիր) Բուղային – Տե՛ս Բուղա ալ-Քարիր, Բալաղուրի, ծնթգր. 149:*

[74] *Մուսա իրն Զուրարա – Տե՛ս Բալաղուրի, ծնթգր. 189:*

[75] *Ագրակ (ալ-Բակ) – Տե՛ս Բալաղուրի, ծնթգր. 191:*

[76] *Համադասպի որդի Աչոտ (Աչոթ իրն Համզա) – Աչոտ Համադասպի որդի. Տե՛ս Բալաղուրի, ծնթգր. 190:*

[77] *Մուհամմադ իրն Խալիդ իրն Յազիդ իրն Մազիադ ալ-Շայբանի – Բուղայից հետո Մուտավաքքիլի կողմից նշանակվեց Արմինիայի ոստիկան 857 թ.: Սրանից հետո մի քանի տարվա անորոշություն կա և հայտնի չէ թե ով էր Արմինիայի կառավարիչը: (Տեր-Ղևոնդյան, Արմ. ոստիկանների ժամանակագրություններ):*

[78] *Ահմադ ալ-Մուստաին – Աբբասյան խալիֆա (862–866):*

[79] *Մուտազզ – Աբբասյան խալիֆա (866–869):*

[80] *... թուրքերի ապստամբությունից – Խոսքը թյուրքերից կազմված խալիֆայական թիկնազորի ապստամբելու մասին է:*

[81] *Մուհամմադ իրն ալ-Վասիկ – Աբբասյան խալիֆա (842–847):*

[82] *Ահմադ ալ-Մուտամիդ Ալալլահ – Աբբասյան խալիֆա, Մուտավաքքիլի որդին: Նա ընտրվեց խալիֆա 870 թվականին՝ այն բանից հետո, երբ մահացավ ալ-Մուհտադի խալիֆան: Ալ-Մուտամիդը իշխեց 870–892 թվականներին, բայց նրա իշխանությունը չատ թույլ էր: Խալիֆայությունը մեծ թափով տրոհվում ու քայքայվում էր: (al-Mutamid, H. Kennedy, EOI, CD-ROM, (VII: 765b)):*

Թ ԴԱՐԻ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԳԵՏՆԵՐ

ԽՈՐԵԶՄԻ (780 – 847)

Արաբական աշխարհագրության և հատկապես մաթեմատիկական աշխարհագրության առաջին մեծ դեմքը՝ Մուհամմադ իբն Մուսա ալ-Խորեզմին (Խուրիզմի, Խուարիզմի), ծնվել է մոտավորապես 780 թվականին և մահացել 847-ից քիչ անց:

Գործել է Մամուն (813–833) խալիֆայի օրոք. եղել է նրա արքունի աստղաբաշխներից: Սերտորեն կապված էր իմաստության տան (բայտ ալ-Հիքմա) հետ: Հավանաբար մասնակցել է միջօրեականի աստիճանի չափման աշխատանքներին: Ըստ Թաբարիի, նա այն աստղաբաշխների մեջ էր, որոնց Վասիկ խալիֆան մահվան անկողնում հրավիրել էր, որ գուշակեն, թե ինչ վախճան է իրեն սպասում: Թեև Խորեզմին երկար կյանք էր գուշակել նրան, այսուհանդերձ Վասիկը չուտով մահացավ (847):

Խորեզմին համաշխարհային գիտության պատմության մեջ առավել հռչակ ունի իր մաթեմատիկական աշխատություններով, քան իր աշխարհագրական երկով: Նրա թվաբանական աշխատությունը, որի բնագիրը չի պահպանվել, հայտնի է միայն լատինական թարգմանությամբ: Այստեղ Խորեզմիի անունը վերածված է հասարակ անվան՝ "Algorithmus" ձևով, որից ծագում է լոգարիթմ բառը: Նրա մյուս աշխատությունը՝ «Հիսաբ ալ-Ջաբր ու ալ-Մուկաբալա» (վերականգնման և հակադրման հաշիվ) ԺԲ դարում Ժերար Կրեմոնացու կողմից թարգմանվել է լատիներենի և մինչև ԺՋ դարը եղել է հանրահաշվի (ալ-Ջաբր, ալգեբրա) ձեռնարկ:

Նրա աշխարհագրական երկը՝ «Քիտաբ Սուրատ ալ-Արդ» (Գիրք երկրի պատկերի) մեծ դեր կատարեց արաբական աշխարհագրության սկզբնավորման գործում: Վերջին դարերում, երկար ժամանակ անհայտ մնալուց հետո, այս մատյանի միակ ձեռագիրը (ընդօրինակված 1037-ին) Կահիրեում ձեռք էր բերել արաբագետ Վ. Սպիտտան, որի մահվանից (1883) հետո, այն տարվեց Ստրասբուրգ: Նրա մասին գրվեցին ուսումնասիրություններ, որոնցից հիշատակելի է Կ. Նալլինոյի աշխատությունը: Հ. Մժիկը 1926-ին լուսատիպ վերարտադրությամբ (ֆաքսիմիլե) լույս ընծայեց արաբերեն բնագիրը:

Թեև Խորեզմին օգտվել է Ֆազարիի մշակած «Սինդհինդից», սակայն նրա աշխատության հիմքում ընկած են Պտղոմեոսի աշխարհագրական տեղեկությունները, բայց ոչ թարգմանված, այլ վերածված աստղաբաշխական աղյուսակների (զիջ): Համենայն դեպս Պտղոմեոսի և Խորեզմիի երկերի չարադրանքի մեջ կան տարբերու-

թյուններ: Եթե Պտղոմեոսը աշխարհը բաժանում է 21 գոտիների, ապա Խորեզմին բաժանում է 7 իկլիմի (մեծ երկրամաս): Պտղոմեոսը ամբողջ նյութը տալիս է ըստ գոտիների, իսկ Խորեզմին՝ ընդհակառակը, իր նյութը բաժանում է ըստ քաղաքների, լեռների, ծովերի և այլն, և ապա, ամեն մեկի ներսում, տեղեկությունները դասավորում է ըստ իկլիմների: ՝

Թեև Խորեզմիի այս երկը լատիներենի չի թարգմանվել, այսուհանդերձ ԺԱ դարում Ջարկալիի խմբագրած «Տոլեդյան աղյուսակներ» կոչված աշխատության մեջ կան նրա տեղեկությունները երկրության և լայնության մասին: Այս գիրքը ԺԲ դարում թարգմանվել է լատիներենի և մեծ տարածում է ունեցել:

Խորեզմին մաթեմատիկական աշխարհագրության մեջ հետևորդներ ունեցավ: Դրանցից կարելի է հիշել ալ-Քինդիին (մեռ. 874), սաբի (Խառանի աստղապաշտ հեթանոսներ) ալ-Բաատտանիին (852-929), որի «ալ-Զիջ ալ-Սաբի» (սաբիական աստղաբաշխական աղյուսակներ) աշխատությունը եվրոպայում հայտնի էր լատիներեն թարգմանության: Սակայն ամենից ավելի նրա ազդեցության տակ է գտնվել Ժ դարի աշխարհագրագետ Սուհրաբը (սխալմամբ կոչված Իբն Սերապիոն):

Խորեզմիի «Գիրք երկրի պատկերի» երկը բաղկացած է հինգ բաժիններից: Առաջինը՝ քաղաքների անունները, երկրորդը՝ լեռները, ընդ որում ամեն մեկի նյութը դասավորված է ըստ յոթ իկլիմների, իսկ վերջում հիշվում են այս յոթից այն կողմ գտնվող քաղաքներն ու լեռները: Երրորդ բաժինը վերաբերում է երկրագնդի բնակելի մասի վրա գտնվող ծովերին և նյութը ներկայացված է ըստ ծովերի՝ Ատլանտյան, Միջերկրական, Սև, Կասպից, Հնդկաց, ինչպես նաև Պարսից ծոցը: Չորրորդ բաժնում կղզիները խմբավորված են ըստ ծովերի: Բաժնի վերջում կա մի ենթագլուխ՝ «Այն վայրերը, որտեղ (քարտեզի վրա) նշված են երկրների սահմանները», որն առնչվում է Խորեզմիի կորած մեծ քարտեզին: Հինգերորդ բաժնում բերված ջրի ակունքները (գետերը), նախ հիշատակելով հասարակածից այն կողմ ընկած գետերը, ապա՝ ըստ յոթ իկլիմների, և վերջում՝ յոթերորդ իկլիմից այն կողմ ընկած գետերը:

Բոլոր հիշված տեղանունների համար (քաղաքներ, լեռներ, ծովեր, կղզիներ, գետեր) Խորեզմին նշում է երկարության ու լայնության աստիճանները:

Խորեզմիի ձեռագրում կան չորս քարտեզներ. առաջինը ցամաքային գծերի ցուցադրման ուրվագիծ է, երկրորդը՝ Գոհարեղենների կղզիները (Ջազիրատ ալ-Ջաուհար), երրորդը՝ Նեղոսը ակունքներից մինչև Միջերկրական թափվելը, իսկ չորրորդը՝ Մեոտիսի (Ազովի) ծովը: Ինչպես ընդհանրապես արաբական միջնադարյան

քարտեզագրության մեջ, այստեղ ևս հյուսիսը ներքևում է, հարավը՝ վերևում:

Ներկա թարգմանությունը կատարված է հետևյալ հրատարակությունից. Hans von Mzik. Das Kitab Surat al-ard des Abu Gafar Muhammad ibn Musa al-Huwarizmi, Vienna, 1926.

Արամ Տեր-Ղևոնդյան

(al-Khwarazmi, J. Vernet EOI, CD-ROM, (IV: 1069b))

Տե՛ս նաև.

- C. Nallino, Al-Khuwarizmi et son remaniement de la Géographie de Ptolemée. Bull. de la Société Khediviale de Géographie, IV serie, n. 8, Cairo, 1896, p. 525-543.

ԱԼ-ԽՈՐԵԶՄԻ
ԳԻՐՔ ԵՐԿՐԻ ՊԱՏԿԵՐԻ
(ՔԻՏԱԲ ՍՈՒՐԱՏ ԱԼ-ԱՐԴ)

ԲՆԱԿԵԼԻ ԵՐԿՐԱԳՆԴԻ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ ՔԱՂԱՔՆԵՐԸ

Չորրորդ իկլիմը, լայնությունը 36 00*
Չորրորդ իկլիմում գտնվող քաղաքները

ԼՂ 15–23

[քաղաքների] անունները		երկարություն	լայնություն
(274) (182)	Անտիոք	61 35	34 10
(275)	Մամնատիան, ծովի մոտ	19 40	36 00
(276) (326)	Տարսոնը, ծովի մոտ	13 00	36 15
(285) (298)	Նփրկերտ (Մայաֆարիկին)	64 40	37 15
(293) (301)	Խառան (Հառան)	65 00	36 40
(294) (302)	Եդեսիա (Ռուհա)	64 00	36 40
(295) (227)	Մոսուլ	69 00	35 30
(296) (256)	Ռաս ալ-Այն	68 00	3 00
(297)	Կիրկիսիա[1]	66 50	35 20
(298) (260)	Մծբին (Նասիբին)	6 50	36 00

* Իկլիմ (կլիմա) բառը արաբ մատենագիրների մոտ տարբեր իմաստներ ունի: Ըստ Համատեքստի այն կարող է նշանակել երկրների խումբ, երկրամաս, գոտի, կլիմայական գոտի, նահանգ և այլն:

Հինգերորդ իկլիմը, լայնությունը 41 00
Հինգերորդ իկլիմում գտնվող քաղաքները

ԼՂ 23–28

(360) (321)	Ծովային Լաոդիկե քաղաքը	52 40	38 50
(361) (328)	Ամորիոն	53 00	38 00
(365) (329)	Սոզոպետրա (Զիրաթբրա)	19 20	39 00
(366) (330)	Մալաթիա	61 00	39 00
(367) (331)	Հանձիթ (Հանզիթ)[2]	61 40	39 45
(368) (335)	Շիմշաթ	62 40	38 45
(369) (336)	Սամոսատ (Սումայսաթ)	62 35	36 20
(370) (337)	Կարնո քաղաք (Կալիկալա)	68 25	38 00
(371) (299)	Խլաթ	64 50	39 50
(372) (300)	Արզն	66 00	39 00
(373)	Բալադ	68 45	36 20
(374) (303)	Արճեչ (Արջիչ)	68 50	40 35
(375) (304)	Շահրզուր	70 20	37 45
(376) (305)	Ապահունիս (Բաջունայս)	70 30	40 10
(377) (307)	Ատրպատական	73 00	40 00
(378) (308)	Դեյլմիկք (Դայլամ)	76 00	38 10

Վեցերորդ իկլիմը, լայնությունը 45
Վեցերորդ իկլիմում գտնվող քաղաքները

ԼՂ 28–33

(451) (397)	Կոստանդնուպոլիս, ծոցի վրա	49 50	45 00
(461) (420)	Վիրք (Ջուրզան)	71 00	44 00
(462) (422)	Սիսական (Սիսաջան)	71 00	41 25
(463) (428)	Նախճավան (Նաչավա)	74 00	41 35
(464) (426)	Քաղաք լեռան մոտ, երկու դռների (բար) միջև	72 40	44 50
(465) (390)	Պարտավ (Բարդաա)	78 00	48 00

ԲՆԱԿԵԼԻ ԵՐԿՐԱԳՆԴԻ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ ԼԵՌՆԵՐԸ

Զորրորդ իկլիմը, լայնությունը 36
Զորրորդ իկլիմում գտնվող լեռները

էջ 50–53

սկզբնական և վերջնական սահմանների թվերը	անունները
(745–746) (1235–1236)	Ամանոսի (Լուքքամ) լեռներ

Հինգերորդ իկլիմը, լայնությունը 41
Հինգերորդ իկլիմում գտնվող լեռները

էջ 53–56

(803–804) (1293–1294)	Մեծ Մասիս և Փոքր Մասիս (Հարիս և Հուայրաս) լեռները
(805–806) (1295–1296)	լեռ Մոսուլի և Շահրզուրի միջև
(807–808) (1297–1298)	լեռ կապված այս լեռան, Համադանի, Մեծ Մասիսի, Փոքր Մասիսի հետ մինչև կպչելը Կազուինի լեռան

Վեցերորդ իկլիմը, լայնությունը 45
Վեցերորդ իկլիմում գտնվող լեռները

էջ 56–60

(859–860) (1347–1348)	Բար ալ-Աբուաբի (Դարբանդ) լեռ
(861–862) (1349–1350)	լեռ երկու ծովերի միջև, որի վրա է Բար ալ-Աբուաբը (Դարբանդ) և Ալանաց դուռը
(863–864) (1351–1352)	Խազարաց դռան (Բաբ) և Ալանաց լեռ

նախնական սահման		վերջնական սահման		գույնը	գագաթների ուղղություն
60 50	35 10	62 20	3 00	վարդագույն	հյուսիս
69 00	41 00	69 30	39 40	գորշ	հյուսիս
69 30	39 40	69 45	39 00	մուգ դեղին	արևելյան
69 30	39 40	72 30	36 00	մուգ կարմիր	հյուսիս
70 45	41 15	72 10	41 15	երկնագույն (լազուր)	հարավ
71 00	47 00	76 00	42 30	դեղին	հյուսիս
74 00	44 00	72 30	45 20	գունավոր	հյուսիս

ԱՑՆ ՏԵՂԵՐԸ [ՔԱՐՏԵԶԻ ՎՐԱ], ՈՒՐ ԳՐՎԱԾ ԵՆ ԵՐԿՐՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ

էջ 101–105

Մոսուլ երկիրը[3], նրա անունն ընկնում է երկարության 68 50 և լայնության 38 00 վրա (1572) (521):

Ասիա երկիրը[4] նրա անունն ընկնում է երկարության 52 30 և լայնության 43 30 վրա (1581) (630): Գաղատիա (Ղալաթիա) երկիրը[5], նրա անունն ընկնում է երկարության 56 30 և լայնության 48 00 վրա (1582) (531): Կապադովկիա երկիրը, նրա անունն ընկնում է երկարության 56 և լայնության 00 վրա (1583) (532): Ատրպատական երկիրը, նրա անունն ընկնում է երկարության 3 40 և լայնության 41 30 վրա (1584) (533): Շաչ և Թարբանդ (Դարբանդ) երկիրը, նրա անունն ընկնում է երկարության 98 00 և լայնության 42 00 վրա (1585) (534):

ԲՆԱԿԵԼԻ ԵՐԿՐԱԳՆԴԻ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ ԱԿՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ԳԵՏԵՐԸ

Հինգերորդ իկլիմն ու նրանում գտնվող ակունքներն ու գետերը

էջ 126–135

Տիգրիս գետն սկիզբ է առնում մի ակունքից, որը գտնվում է երկարության 64 40 և լայնության 39 00 վրա (1959) (1433), անցնում է երկու լեռների միջով, որոնք գտնվում են երկարության 64 45 և լայնության 37 45 վրա (1960) (1484) և լեռան հետ չուռ է գալիս մինչև

երկարության 68 00 և լայնության 38 00 վրա (1961) (1485), ապա անցնում է Ամիդ Բալադ, Հոսելով Բալադի ու Շահրզուրի միջև, անցնում է Մոսուլի ու լեռան արանքով, հոսում է Տիքրիտ, Սուրա ման ռաա (Սամառա) քաղաքներով և մտնում Բաղդադ, Հետո դուրս գալով անցնում է Մադաինով և Հուլուանի կողմից Վասիթով և վերջապես թափվում Բաթաիհ (ճահճուտ):

Մեծ և Փոքր Մասիսներից (Հարիս և Հուայրաս) բխում է մի աղբյուր, որը չի հոսում և գտնվում է երկարության 69 10 և լայնության 40 20 վրա (1973) (1959): Աղբյուրի (ակունքի) [տրամագծի] մեծությունը քառորդ աստիճան է:

ՎԵՑԵՐՈՐԴ ԻԿԼԻՄԸ ԵՎ ՆՐԱՆՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱԿՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ԳԵՏԵՐԸ

էջ 135-141

Կուր (Թուր) գետն սկսում է մի ակունքից, որի երկարությունը 68 00 և լայնությունը 44 40 (2119) (2048), անցնում է ծովի ու Վիրք քաղաքի միջև, ինչպես նաև Պարտավի ու Բասթայի միջև և թափվում է ծովը, ուր երկարությունն է 74 40 և լայնությունը 42 15 (2120) (2049):

Եփրատ գետը բխում է Աֆարդախս (Աֆրդխս)[6] լեռան մի ակունքից, երկարության 68 30 և լայնության 41 20 վրա (2121) (1487): Անցնում է Մաանբա լեռան կողմը, որը գտնվում է երկարության 60 20 և լայնության 42 20 (2122) (1488): Հոսում է Մալաթիայի և Հանձիթ քաղաքի արանքով, ապա Ամանոս լեռների և Շիմշաթ քաղաքի ու Սամոսատ քաղաքի միջև, վերջինիս կողքով: Անցնում է [...] լեռան և Մանբիջ քաղաքի արանքով, Մանբիջի կամուրջով, ապա Բալիխի, Ռակկայի, Ռաֆիկայի միջով անցնելուց հետո չրջապատում է Անան, Հադիսան, Ալուսան, Նաուսան, հոսում է Հիտի, Անբարի միջով: Նրա մի մասն անցնում է Ֆուֆայով և հասնում մի վայր, որը գտնվում է երկարության 71 00 և լայնության 31 00 վրա (2123) (1489): Նա թափվում է Բաթաիհ չրջանը:

Եփրատ է թափվում մի գետ, որը բխում է երկարության 62 20 և լայնության 41 00 (2128) (1492) վրա գտնվող լեռից, անցնում է Հանձիթ քաղաքով և թափվում Եփրատ այն վայրում, ուր երկարությունն է 61 30 և լայնությունը 39 20 (2129) (1493):

Կա մի գետ, որը բխում է սարից և նրա սկիզբը գտնվում է երկարության 71 45 և լայնության 41 30 վրա (2130) (2050), անցնում է դեպի մի վայր, երկարության 71 50 և լայնության 48 00 (2131) (2051), ապա անցնում է Պարտավի ու Նախճավան քաղաքի արանքով և թափվում է ծովը, այնտեղ, ուր երկարությունն է 75 50 և լայնությունը 41 45 (2132) (2052):

ԽՈՐԵԶՄԻ

ԳԻՐՔ ԵՐԿՐԻ ՊԱՏԿԵՐԻ (ՔԻՏԱԲ ՍՈՒՐԱՏ ԱԼ-ԱՐԴ)

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

[1] Կիրկիսիա - Կամ Կարկիսիա: Տե՛ս Բալազուրի, ծնթգր. 43:

[2] Հանձիթ (Հանզիթ) - Գավառ Ջորջոր Հայքում: Խեթական արձանագրությունների Anzitu երկիրն է, որի ժողովուրդը Alzi, կամ Anzi էր կոչվում: Հայասայի և Իսուվայի թագավորությունների հետ այդ թագավորությունը ներկայանում է որպես պատմական Հայաստանի տարածքում ծանոթ ամենահին պետություններից մեկը (1400-1200 մ. թ. ա.): Մենուայի արձանագրության մեջ՝ Al-zi-nini: Այդ անվան իրանական ձևն է Արզունեն, իսկ հայկականը՝ Աղձնիք: Պտղոմեոսի մոտ՝ Անդիտինի, ասորական գրությունների մեջ՝ Հանաձեթ: Փավստոսի և Խորենացու մոտ Անձիտ և այլն: (Հակոբ Նալբանդյան, Արաբական աղբյուրները, էջ 210):

[3] Մոսուլ երկիրը – Հավանաբար նկատի ունի Վերին Միջագետքը (Ջազիրա): Տե՛ս նաև Մոսուլ, Բալազուրի, ծնթգր. 63:

[4] Ասիա երկիրը – Տվյալ դեպքում «Ասիա» բառը օգտագործված է որպես Փոքր Ասիայի արևմուտքում գտնվող երկրամասի, կամ Նահանգի անվանում:

[5] Գաղատիա (Ղալաթիա) - Երկրամաս և նահանգ Փոքր Ասիայի կենտրոնական մասում:

[6] Աֆարդախս (Աֆրդխս) լեռ - Եփրատի ակունքը գտնվում է Մաղկավետ լեռների (այժմ՝ Դումլուդաղ) հարավային լանջերում:

ՋԱՀԻԶ
(մահ. 869)

Արու Օսման Ամր իրն Բահր ալ-Ֆուկայմի ալ-Բասրի իրն Բահր ալ-Ջահիզը 9 –րդ դարի լայն մտահորիզոնով գիտնականներից է, որի աշխարհագրական երկերը ընթերցվում են մեծ հետաքրքրությամբ:

Ծնվել է Բասրայում մոտ. 776-ին մի համեստ ընտանիքում, որը հավանաբար հարեչական ծագում ուներ: Մանուկ հասակից նա ուսման հանդեպ մեծ ձգտում է ցուցաբերում հետևելով բանասիրության, քերականության ու պոեզիայի բնագավառում ժամանակի նշանավոր դեմքերին: Ալ-Ջահիզը չուտով դարձավ արաբերենի և ավանդական մշակույթի գիտակ, իր ժամանակի ամենազարգացած ու առաջադեմ անձերից մեկը:

Նա հեղինակ է մեծաղիր մի հատորի, որը կոչվում է «Գիրք կենդանիների մասին» (Քիթաբ ալ-Հայավան), որտեղ նա հաղորդում է կենդանաբանական, մարդաբանական ու ազգագրական բնույթի տեղեկություններ:

Ալ-Ջահիզի հիմնական աշխարհագրական երկն է՝ «Գիրք մեծ քաղաքների ու երկրների հրաշքների մասին» (Քիթաբ ալ-Ամսար ուա Աջաիբ ալ-Բուլդան), որից սակայն պահպանվել են պատառիկներ, թեև ժամանակին նրանից օգտվել են այլ աշխարհագրագետներ (Իբն ալ-Ֆակիհ և այլք):

Համեմատաբար ավելի ուշ հայտնաբերվեց ու չրջանառության մեջ դրվեց ալ-Ջահիզի մի ուրիշ աշխատություն՝ «Հայացք վաճառականության վրա» (Ալ-Տաբասսուր բի-լ-Տիջարա), որը կարելի է համարել տնտեսական աշխարհագրության ստեղծման մի յուրահատուկ փորձ: Այս երկի ձեռագիրը հայտնաբերվեց Թունիսում արաբ գիտնական Հասան Հուսնի իբն ալ-Վահհաբի կողմից և հենց նա էլ հրատարակեց Դամասկոսի գիտությունների ակադեմիայի պարբերականում: (Abd al-Wahhab, RAAD, XII)

Ներկա թարգմանությունը կատարված է հետևյալ հրատարակությունից. Djahiz, at-Tabassur bi-l-Tidjara, Damas, 1932.

(Крачковский, IV, стр. 123-126, al-Djahiz, *Ch. Pellat EOI, CD-ROM, (II: 385a))*

ՋԱՀԻԶ

ՀԱՅՑԱԾՔ ՎԱՃԱՌԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎՐԱ (ԱԼ-ՏԱԲԱՍՍՈՒՐ ԲԻ-Լ-ՏԻՋԱՐԱ)

Գրել է Արու Օսման Ամր իբն Բահր ալ-Ջահիզ ալ-Բասրին:

Հարցրել ես, – Ալլահը քեզ պատվի, – այն մասին, թե տարբեր երկրներում ինչն է առավել գնահատվում՝ չքեղ ապրանքներից, արժեքավոր առարկաներից, թանկարժեք բարձրորակ գոհարներից, որպեսզի [իմ աշխատությունը] հարստացնի նրանց գիտելիքները, որոնք արդեն փորձ ունեն և օժանդակ լինի նրանց, որ տարբեր արհեստներով և միջոցներով չահույթ են ձեռք բերում:

Այն կոչեցի «Հայացք վաճառականության վրա», իսկ Ալլահը թող ինձ հաջողություն տա:

Որոշ հին փորձված մարդիկ ասել են, թե ամեն ինչ որ գոյություն ունի, էժան է երբ կա, և թանկ է, երբ կորչում է ու նրա կարիքն ունեն:

Հոռոմներն ասել են. «եթե մարդ մի երկրում չահ չգտնի, թող այլ երկիր փոխադրվի»:

Հնդիկներն ասել են. «չկա մի բան, որ չատանալուց չէժանանա բացի խելքից, որն ինչքան շատ է, այնքան թանկ»:

Պարսիկներն ասել են. «եթե մի գործից (առևտրից) չահ չունեք, ապա մեկ ուրիշին անցեք և եթե ձեզանից մեկը մի երկրում չահ չգտնի, թող մեկ ուրիշով փոխարինի»:

Դարձյալ պարսիկներն ասել են. «ամեն մի չուկայում իսկապես չահելու համար պետք է վաճառել այն, ինչ հնչտ է ծախվում»:

Արաբներն ասել են. «եթե տեսնում եք, որ բախտը մեկին ժպտում է, կպեք նրան, քանզի ավելի քան ուրիշները չահույթ կբերի»:

Մի հարուստի ասել են. «ինչով չատացավ քո ունեցվածքը»: «Երբեք ապառիկ չեմ վաճառել, – ասել է, – ոչ էլ չահը մերժել եմ, թեկուզ չնչին լինի, և չի պատահել, որ մի դիրհեմ ձեռք բերեմ և այն չօգտագործեմ այլ [գործարքի] համար»:

Ասվել է. «մի գնեք այն ինչի կարիք չունեք, քանզի ստիպված կլինեք վաճառելու այն, ինչից չեք կարող հրաժարվել»:

Մի իմաստուն ասել է, որ պարսկական ժառանգության կտակի մեջ գտել է, թե գրված է. «ով մարդ, չկա որևէ կապ քո և քո գտնված երկրի միջև, լավագույնն այն երկիրն է, ուր քեզ հարմար է, այն ժամանակը՝ որ քեզ նպաստավոր է, լավագույնն այն մարդն է, որ քեզ օգտակար է, այն ջուրը՝ որ քո ծարավն է հագեցնում, այն կենդանին՝ որ քեզ տանում է, լավագույնն այն զգեստն է, որ քեզ ծածկում է, այն առևտուրը, որ քեզ չահ է բերում, այն գիտությունը՝ որ քեզ առաջնորդում է և այն գեղեցկությունը՝ որ քեզ հաճելի է, թեկուզ տգեղ լինի»: Ասել են. «լավագույն արհեստը մետաքսի (խազզ) [գործն] է և լավագույն առևտուրը՝ բամբակե գործվածքեղենինն (բազզ) է»:

ԳԼՈՒԽ ՈՍԿՈՒ ԵՎ ԱՐԾԱԹԻ ՁԱՆԱՁՄԱՆ ՈՒ ՍՏՈՒԳՄԱՆ ՄԱՍԻՆ

Ասել է իմաստունը. «ցանկալի է, որ ոսկին լինի ձույլ կտոր, թե ոչ, նման կլինի առանց բոցի կրակի, ճառագայթի խուրձի և պայծառ ծծմբի»: Նա դիմացկուն է, քանզի նրան չի կպել զարբնի փուքսը և ոչ էլ ժամանակն այլայլել է: Ասվում է, որ ոսկին առավել արժեքավոր է, եթե չի փոփոխվում և շատ է փայլում ու գեղեցկանում հնանալով: Ամեն ինչ պակասում (մաշվում) է չոչափելով ու թաղելով բացի ոսկուց, որը երբեք չի պակասում:

Լավագույն դինարները հնացածներն են՝ կարմրավուն կանաչ: Հները գտնում էին, որ դինարն ստուգվում է նրանով, որ կպչում է մազին, մորուքին և դժվարությամբ է մնում դրանց մեջ, իսկ կեղծ դինարը (նարհարաջ) ճանաչվում է ըստ թեթևության ու ծանրության:

Կարծվում է, որ լավագույն ոսկին բնական ոսկին (իկյան) է, իսկ լավագույն արծաթը՝ հում (կույս) արծաթն է: Մաքուր արծաթի համը քաղցր է, իսկ կեղծվածի համը՝ դառն, ժանգոտած: Կեղծված դիրհեմը աղի է ու զանգակի նման ղնգում է, իսկ զուտ արծաթը մաքուր ղնգոց ունի, որին խառնված չէ ոչ մի խուլ աղմուկ և կտրում է ծարավը, եթե բերանի մեջ պահվի:

ԳԼՈՒԽ ԳՈՀԱՐՆԵՐԻ ԱՐԺԵՔԸ ՁԱՆԱՁԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Կարծվում է, որ մարգարիտ (լուլու) գոհարը ճանաչելու համար պետք է երկու ձևով համը նայել, ընդ որում քաղցր համ ունեցողը Օմանի մարգարիտն է, աղի համ ունեցողը՝ Կարմիր ծովի (Կուլզում): Երկուսն էլ ջրի մեջ սուզվում են, իսկ արհեստականը դառն է, ճարպի համ ունի, թեթև է և ծփում է ջրի երեսին:

Ասվում է, որ եթե մարգարտի ներսում որդ կա, ապա կտեսնես, որ չոչափելուց կամ չրթունները կպցնելուց տաքություն ես զգում և դա հոգու (ներքին) հիվանդություն է, իսկ եթե որդ չկա, չոչափելուց կամ չրթունները կպցնելուց սառնություն ես զգում: Ահա այս ձևով է ստուգվում:

Ըստ ծովայինների կարծիքի, եթե փայլփլուն խոշոր մարգարիտը փաթաթվի ոչխարի թարմ գմակի մեջ, դրվի խմորի ներսում և այս ամբողջը փուռը դրվի և ուժեղ տաքացվի, ապա կփայլի ու կլավանա

ՋԱՀԻԶ

ՀԱՅՑԱԾՔ ՎԱՃԱՌԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎՐԱ (ԱԼ-ՏԱԲԱՍՍՈՒՐ ԲԻ-Լ-ՏԻՋԱՐԱ)

Գրել է Աբու Օսման Ամր իրն Բահր ալ-Ջահիզ ալ-Բասրին:

Հարցրել ես, – Ալլահը քեզ պատվի, – այն մասին, թե տարբեր երկրներում ինչն է առավել գնահատվում՝ չքեղ ապրանքներից, արժեքավոր առարկաներից, թանկարժեք բարձրորակ գոհարներից, որպեսզի [իմ աշխատությունը] հարստացնի նրանց գիտելիքները, որոնք արդեն փորձ ունեն և օժանդակ լինի նրանց, որ տարբեր արհեստներով և միջոցներով չահույթ են ձեռք բերում:

Այն կոչեցի «Հայացք վաճառականության վրա», իսկ Ալլահը թող ինձ հաջողություն տա:

Որոշ հին փորձված մարդիկ ասել են, թե ամեն ինչ որ գոյություն ունի, էժան է երբ կա, և թանկ է, երբ կորչում է ու նրա կարիքն ունեն:

Հոռոմներն ասել են. «եթե մարդ մի երկրում չահ չգտնի, թող այլ երկիր փոխադրվի»:

Հնդիկներն ասել են. «չկա մի բան, որ չատանալուց չէժանանա բացի խելքից, որն ինչքան չատ է, այնքան թանկ»:

Պարսիկներն ասել են. «եթե մի գործից (առևտրից) չահ չունեք, ապա մեկ ուրիշին անցեք և եթե ձեզանից մեկը մի երկրում չահ չգտնի, թող մեկ ուրիշով փոխարինի»:

Դարձյալ պարսիկներն ասել են. «ամեն մի չուկայում իսկապես չահելու համար պետք է վաճառել այն, ինչ հետ է ծախվում»:

Արաբներն ասել են. «եթե տեսնում եք, որ բախտը մեկին ժպտում է, կպեք նրան, քանզի ավելի քան ուրիշները չահույթ կբերի»:

Մի հարուստի ասել են. «ինչով չատացավ քո ունեցվածքը»: «Երբեք ապառիկ չեմ վաճառել, – ասել է, – ոչ էլ չահը մերժել եմ, թեկուզ չնչին լինի, և չի պատահել, որ մի դիրհեմ ձեռք բերեմ և այն չօգտագործեմ այլ [գործարքի] համար»:

Ասվել է. «մի գնեք այն ինչի կարիք չունեք, քանզի ստիպված կլինեք վաճառելու այն, ինչից չեք կարող հրաժարվել»:

Մի իմաստուն ասել է, որ պարսկական ժառանգության կտակի մեջ գտել է, թե գրված է. «ով մարդ, չկա որևէ կապ քո և քո գտնված երկրի միջև, լավագույնն այն երկիրն է, ուր քեզ հարմար է, այն ժամանակը՝ որ քեզ նպաստավոր է, լավագույնն այն մարդն է, որ քեզ օգտակար է, այն ջուրը՝ որ քո ծարավն է հագեցնում, այն կենդանին՝ որ քեզ տանում է, լավագույնն այն գնեստն է, որ քեզ ծածկում է, այն

առևտուրը, որ քեզ չահ է բերում, այն գիտությունը՝ որ քեզ առաջնորդում է և այն գեղեցկությունը՝ որ քեզ հաճելի է, թեկուզ տգեղ լինի»: Ասել են. «լավագույն արհեստը մետաքսի (խազզ) [գործն] է և լավագույն առևտուրը՝ բամբակե գործվածքեղենինն (բազզ) է»:

ԳԼՈՒԽ ՈՍԿՈՒ ԵՎ ԱՐԾԱԹԻ ՃԱՆԱՉՄԱՆ ՈՒ ՍՏՈՒԳՄԱՆ ՄԱՍԻՆ

Ասել է իմաստունը. «ցանկալի է, որ ոսկին լինի ձույլ կտոր, թե ոչ, նման կլինի առանց բոցի կրակի, ճառագայթի խուրձի և պայծառ ծծմբի»: Նա դիմացկուն է, քանզի նրան չի կպել զարբնի փուքսը և ոչ էլ ժամանակն այլայլել է: Ասվում է, որ ոսկին առավել արժեքավոր է, եթե չի փոփոխվում և չատ է փայլում ու գեղեցկանում հնանալով: Ամեն ինչ պակասում (մաշվում) է չոչափելով ու թաղելով բացի ոսկուց, որը երբեք չի պակասում:

Լավագույն դինարները հնացածներն են՝ կարմրավուն կանաչ: Հները գտնում էին, որ դինարն ստուգվում է նրանով, որ կպչում է մագին, մորուքին և դժվարությամբ է մնում դրանց մեջ, իսկ կեղծ դինարը (նարհարաջ) ճանաչվում է ըստ թեթևության ու ծանրության:

Կարծվում է, որ լավագույն ոսկին բնական ոսկին (իկյան) է, իսկ լավագույն արծաթը՝ հում (կույս) արծաթն է: Մաքուր արծաթի համը քաղցր է, իսկ կեղծվածի համը՝ դառն, ժանգոտած: Կեղծված դիրհեմը աղի է ու զանգակի նման զնգում է, իսկ զուտ արծաթը մաքուր զնգոց ունի, որին խառնված չէ ոչ մի խուլ աղմուկ և կտրում է ծարավը, եթե բերանի մեջ պահվի:

ԳԼՈՒԽ ԳՈՀԱՐՆԵՐԻ ԱՐԺԵՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Կարծվում է, որ մարգարիտ (լուլու) գոհարը ճանաչելու համար պետք է երկու ձևով համը նայել, ընդ որում քաղցր համ ունեցողը Օմանի մարգարիտն է, աղի համ ունեցողը՝ Կարմիր ծովի (Կուլզում): Երկուսն էլ ջրի մեջ սուզվում են, իսկ արհեստականը դառն է, ճարպի համ ունի, թեթև է և ծփում է ջրի երեսին:

Ասվում է, որ եթե մարգարտի ներսում որդ կա, ապա կտեսնես, որ չոչափելուց կամ չրթները կպցնելուց տաքություն ես զգում և դա հոգու (ներքին) հիվանդություն է, իսկ եթե որդ չկա, չոչափելուց կամ չրթները կպցնելուց սառնություն ես զգում: Ահա այս ձևով է ստուգվում:

Ըստ ծովայինների կարծիքի, եթե փայլփլուն խոշոր մարգարիտը փաթաթվի ոչխարի թարմ դմակի մեջ, դրվի խմորի ներսում և այս ամբողջը փուռը դրվի և ուժեղ տաքացվի, ապա կփայլի ու կլավանա

և ջրային մասը կվերստանա, իսկ եթե քափուրով (քամֆոր) գոլորշիանա, նույնը կստացվի և եթե ոսկորի ծուծով ու ձմերուկի ջրով մշակվի, պայծառ կմնա:

Հիմնական մսով (լահմի ջաուհարի) մարգարիտը տարբերվում է սադափե ոսկրային մարգարիտից նրանով, որ հիմնականը հարթ, կանոնավոր երևսով և ողորկ է լինում, իսկ ոսկրայինը կոշտ և ոչ կանոնավոր կառուցվածք ունի:

Լավագույն մարգարիտը Օմանի պայծառ մարգարիտն է կանոնավոր մարմնով, կլորացված ու հարթ և եթե երկու մարգարիտներ հատիկների ձևով հավասար, պատկերով, գույնով ու կշռով նույնը լինեն, սա (Օմանինը) միշտ ավելի գին է ունենում: Օմանի մարգարիտը ավելի թանկ է և պատվական, քան Կարմիր ծովինը, քանզի Օմանի մարգարիտը քաղցրահամ է, մաքուր, պայծառ, իսկ Կարմիր ծովինը աղիություն և այլ թերություններ ունի:

Եթե հատիկը կես մսխալ[1] է կշռում, կոչվում է մարգարտահատ (դուռա). կլորացված, հարթված կանոնավոր հատիկը, որը կես մսխալ է, նրա գինը հասնում է ոսկով հազար մսխալի[2], իսկ ձվաձևը պակաս գին ունի. գինը բարձրանում է ըստ կշռի և կլորության: Եթե կշիռը հասնի երկու մսխալի[3], կարող ես գինը բարձրացնել տասը հազար դինարի և նույնիսկ հարյուր հազար դինարի, իսկ կլորն այս նույն կշռով ու հատկանիշներով՝ անգին է ու եզակի (ֆարիդա): Մարգարիտն ինչքան մաքուր ու անբիծ է, գինն այնքան բարձր է և թանկ: Ալ-Դուռա ալ-յատիման (հազվագյուտ մարգարտահատը) կարմիր ծովից է հանվում և կարծվում է, որ կշիռը երեք մսխալ[4] է: Փոքրիկ մարգարիտը կոչվում է բուստ (մարջանա):

Լավագույն հակինթը (յակուտ) կարմիրն է (բահրամանի), ապա վարդագույն կարմիրը, դեղինը, երկնագույնը (ասմանգանի), իսկ վերջում՝ սպիտակը: Հակինթը բերվում է Հնդկաստանի Ջաբալ Սարանդիբից (Ցեյլոն): Իսկական հակինթները կեղծվածից տարբերվում են երեք հատկանիշներով՝ կշռի մեջ ծանրությամբ, բևեռում դնելու դեպքում սառնությամբ և խարտոցի ներգործությամբ, քանզի հակինթը ծանր կշռող քար է, սառն է բևեռում, իսկ խարտոցը թույլ է ազդում նրա վրա: Իսկ կեղծվածը լինում է թեթև կշռով, ծծելիս տաք է և խարտոցն արագ է հղկում նրան: Լավագույն հակինթն այն է, որ անբիծ է, մաքուր, լուսավոր, ինչ գույն էլ ուննենա: Նրա գինը բարձրանում է ըստ մեծության և [իջնում] ըստ փոքրության: Կարմիր անբիծ հակինթը եթե կես մսխալ կշռի, կարող է գինը հինգ հազարի հասնել: Այն մատանու ակը (ֆասս), որը հայտնի է Ջաբալ (Լեռ) անվամբ, կշռել է երկու մսխալ և արժեցել հարյուր հազար դինար՝ գնել է Աբու Ջաաֆար ալ-Մանսուր [խալիֆան] քառասուն հազար դինարով: Երկնագույն հակինթի մի ակը հաճախ վաճառվել է երկու հարյուր դինարով:

Լավագույն տպազիոնը (զաբաջադ) լինում է խիստ մուգ կանաչ, մաքուր էմերյամբ: Գերազանց (փաիկ) տպազիոնը զանազանվում է արհեստականից (մասմուլի) նույն ձևով, ինչ հակինթները՝ ծանրությամբ, համի սառնությամբ և խարտելու դժվարությամբ: Արհեստականը փխրուն է, թեթև, տաք համով և խարտոցը արագ է ներգործում վրան: Կարծվում է, որ լավագույն տպազիոնը պայծառ, մաքուր և հատակ է: Եթե նրա մի կտորը կշռի կես մսխալ, ապա կարժի երկու հազար մսխալ ոսկով, իսկ նրա գնի տատանումները կախված են մեծությունից ու փոքրությունից: Այն մատանու ակը, որը կոչվել է Բահր (Ծով) և կշռել է երեք մսխալ, գնել է Աբու Ջաաֆար ալ-Մանսուրը, երեսուն հազար դինարի և այժմ խալիֆաներից մեկի գանձարանում է:

Լավագույն փերուզակը (ֆիրուզաջ) կաթի գույնն (չիրքամ) ունի, լինում է կանաչ կապտավուն (ասմանգանի), հին և անբիծ: Փերուզակը մի քար է, որի վրա խարտոցը չի ներգործում և չի փոխվում կրակի ու տաք ջրի մեջ: Փերուզակի ակի ամենաբարձր գինը, եթե կես մսխալ է կշռում, քսան դինար է:

Լավագույն սարդիոնը (ակիկ) Եմենից է, խիստ մուգ կարմիր, որի երեսին ինչ որ գծեր են երևում, սակայն ինչքան անբիծ է և լուսավոր, այնքան ավելի գին ունի:

Լավագույն նռնաքարը (բիջադի) այն է, որ խիստ մուգ կարմիր է, կրակի նման բոցավառ գույնով և ինչքան կարծր է ու խոշոր, այնքան արժեքավոր է ու թանկ: Նրա արհեստականը փխրուն է: Որակավոր լինելն ստուգելու համար պետք է փետուրի մոտեցնել և սա վերցնում է նրան և ինչքան լավ վերցնի փետուրը, այնքան որակավոր է համարվում [քարը]: Ընտիր նռնաքարի ակի ամենաբարձր գինը, եթե կես մսխալ է կշռում, երեսուն հազար դինար է: Արժեքավոր գոհարը գին չունի այն բանի չնորհիվ, որ գիչերը լայնորեն չուրջը լուսավորում է ու ճառագայթում:

Վանակն բյուրեղը (բիլլաուր) ընտրվում է ըստ իր ջինջ մաքրության ու մեծության. լավագույն բյուրեղը սպիտակ մաքուր տեսակն է և ընտիր փարավոնյանը (ֆիրաունի):

Լավագույն բյուրեղ ադամանդը ջինջ մաքուր սպիտակն է, ապա՝ կարմիրը և եթե կես մսխալ է, կշռի գինը հարյուր դինարի կհասնի: Ինչքան մեծ է և խոշոր, այնքան բարձր է գինը:

ԳԼՈՒԽ ՕԾԱՆԵԼԻՔՆԵՐԻ, ԾԱՂԿԱՀՅՈՒԹԵՐԻ ԵՎ ԱՆՈՒՇԱՀՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Կարծվում է, որ լավագույնը Հնդկական Մանդալի հալուեն է (ուդ), որը խարդախված չէ և ինչքան պինդ է, այնքան ընտիր: Նրա որակն

ստուգվում է սուր բուրմունքով և ուժեղ հոտով: Գտնում են նաև, որ լավագույն հնդկական հալուեն ծանր կշիռ ունեցողն է, որը սուզվում է ջրի մեջ, իսկ պակաս արժեքավոր է այն, որը թեթև է կշռում և ծխում է ջրի երեսին: Մասնագետների գնահատությամբ թեթևը մեռած է և նրանում հոգի չկա ու թույլ բուրմունք ունի, իսկ ծանր կշիռ ունեցողը թափանցող և սուր բուրմունք ունի:

Լավագույն մուշկը (միսք) Տիբեթինն է, որը չոր հոտավետություն ունի, ավելի սովորականը բուդդի է կոչվում: Մուշկը կարելի է խարդախել խառնելով անագ, կղրիկ (կաստորիում), չավաչարյուն (վիշապարյուն) և սիրիական ընկույզ (սիյահ դարու): Ինչքան թեթև է և բուրումնավետ, այնքան ընտիր է:

Կարծվում է, որ լավագույն սաթը (անբար) գորշ զաբաջին է, ապա կապույտը, դեղինը, իսկ պակաս որակով է [.....]:

ԳԼՈՒԽ ՋԳԵՍՏՆԵՐԻ ՃԱՆԱՉՄԱՆ ԵՎ ՆՐԱՆՑ ԱՐԺԵՔԱՎՈՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

[...] Գունագեղ [զգեստներից] լավագույնները կոչվում են սաբիրի, քուֆի (Քուֆայից) և իբրիսամ (մետաքսային), ոսկեզօծ (մուզահհար), գունագեղ իսքանդարանի (Ալեքսանդրիայի), որը զուտ քթանից է, ոսկեթել հյուսվածքը, գունագեղ զազալի, այն, որի մեջ ոչ մետաքս կա, ոչ ոսկի թել, նմանի, որն այս տեսակետից ավելի լավ է քան զազալին: Իբրիսամի քթանը չունի այն գինը, որ ունի նմանինը, քանզի զազալի զգեստը կարող է հազար դինար արժենալ:

Լավագույն սինջար մուշտակը կզաքիսից (կուկիմ) է պատրաստվում, ապա նրա մեջքի մասը և ապա կասպիական (խազարի) մուշտակը, խորեզմին և վերջապես այն ամենը ինչը խարդախված չէ նապաստակի մորթով:

Լավագույն աղվեսը սև կասպիականն (խազարի) է, հաստ մազով, որը ներկելով չի խարդախված, ապա սպիտակը, ներկած կարմիրը, կասպիականի կարմիրը և գորչը:

Լավագույն կզաքիսը խոշոր հաստ պոչով է լինում, իսկ լավագույն սամույրը՝ չինականն է, ապա կասպիականը՝ չնչված սպիտակությամբ կամ ուժեղ սևությամբ և երկարամազ:

Լավագույն կահավորանքը (ֆարչ) ամենաթանկն ու ամենաչքեղը միրիզզա կարմիր (կիրմիզ) հայկական կարմիր փայլուն կահավորանքն է, ապա մետաքսե (խազզ) գծավոր, զարդարունը (ռակմ), գունագեղ մետաքսը, բյուզանդական կայսերական (խուսրավանի) ոճով սարքած նուրբ մետաքսը (դիբաջ), մայանի ոճով զարդարուն (մուդաբբաջ) մետաքսը և բարակ մետաքսը (բուզյուն): Այս բոլոր տեսակների արժեքն ու գինը բարձրանում է ըստ այնմ, թե ինչքան ոսկու

հյուսվածք են պարունակում: Նրանք բոլորը լինում են ոսկով հյուսված, բացի միրիզզա (այծեմազե գործվածք) հայկականից, մայաննիից (աստղափայլ) և բարակ մետաքսից (բուզյուն):

Լավագույն բարակ մետաքսը միսքի նուրբ բանվածքն է, ապա գծավորը (մուխաթթաթ), կլոր զարդերովը (մուֆայլաս), պարզը, չնանկյուն զարդերովը (մուայյան), կետավորը (մունակկաթ): Մշկագույն չղարչը (դիֆարա միսքիյա) եթե նուրբ մաքուր կատարված լինի, հավանաբար գինը կհասնի հիսուն դինարի:

Աբու Կալամունը (բազմափայլ) բյուզանդական կայսերական (խուսրավանի ոումի) գորգ (զիլլիյա) է, կարմրագույն (կիրմիզի) մանիչակագույն գծերով՝ կարմրի ու կանաչի վրա: Գտնում են, որ նա տարբեր գույներ է ստանում ըստ օրվա ժամի և արևի փայլի: Նրա գինը չատ բարձր է:

Լավագույն բրդե զգեստները եգիպտական են, ապա գալիս են Խուզիստանի (խուզի) պարսկականները, ապա այծեմազե գործվածքը (միրիզզա) Շիրազի պարսկական այծեմազե գործվածքի հետ, Սպահանինը, Ֆասա (Ֆեսի՞) մետաքսի հետ բանված այծեմազե գործվածքը, Թաբարիստանյանը, վերջապես բուրդը բրդի հետ գործվածը:

Լավագույն գլխի քողերը (թայլասան) Ռույանում[5] ու Թաբարիստանում են պատրաստված, ապա Ամուլում[6], Եգիպտոսում և Կումիսում[7] գործվածները:

Լավագույն թաղիքը (լաբուդ) չինականն է, ապա Մաղրիբի կարմիրը, Թալիկանի սպիտակը, հայկականը և խորասանյանը:

Հովազի լավագույն մորթիները բերբերականներն (բարբարի) են, զարդարված խիտ սպիտակի վրա չնչված սևով և երկար բծերով, որոնք տարմահավի (սաբանի) փետուրներ են հիշեցնում: Ամենահաճելին այն հովազի մորթիներն են, ուր սևի վրա մեջտեղում սև փոքրիկ չնչված կետ կա: Եթե սև մասերն իրար հետ կապված են թեթև սև գծով, ապա դա առավել հաճելի է: Իսկ եթե մորթու վրա լինի կարմրություն փայլուն սպիտակի և մուգ սևության հետ, չատ գեղեցիկ և թանկ կլինի: Բերբերների հովազների մորթիները փոքր են և ամեն մեկը հազիվ մի թամբ ծածկի և նրա ամենաբարձր գինը հիսուն դինար է: Ինչ վերաբերում է մաղրիբյան ու հնդկական հովազների մորթիներին, ապա դրանք ավելի լայն և մեծ, սակայն ավելի թանկ կամ արժեքավոր չեն: Հովազի լավագույն մորթիները երփներանգ են:

Լավագույն բամբակն սպիտակն է, փափուկ փոքր հատիկներով [...] նուրբ և մաքուր սպիտակությամբ:

[Մասնագետը] կարծում է, թե կարմիր կիրմիզը մի խոտ է, որի արմատի վրա լինում է կարմիր որդ և երկրի երեք վայրերում է աճում՝ Մաղրիբի կողմերը՝ Անդալուսի (Իսպանիա) հողում, Տարիմ կոչված

գավառում և Ֆարսի Հողում: Այս խոտի մասին և նրա աճած վայրերը գիտեն միայն մի խումբ հրեաներ, որոնք ամեն տարի քաղում են փետրվար (մահ իսֆանդարմուզ) ամսում: Որդը չորացնում են ու նրանով ներկում մետաքսը (իբրիսամ), բուրդը և այլ բաներ: Այն վայրը, ուր լավագույն ձևով ներկում են, Վասիքեն է:

Կարծվում է, որ բալասանը (բալսան) Եգիպտոսում աճող մի ծառ է, որի չուրջը փորում են գարնան օրերին և նրանից բալասանի յուղ (սպեղանի) է դուրս գալիս, որը վերցվում է: Բացի Եգիպտոսից այլ վայրերում չկա:

Նշի հատիկը աճում է Շահրազուրի Հողում և կարծվում է, որ տոփանք է առաջացնում:

Կիրմազը մի ծառ է, որը պարսկերեն կոչվում է Բանջաքուչտ (փենջ անգուշտ, հինգ մատ): Ոչ մի տեղում չի աճում, այլ միայն դափնեվարդի (դիֆլա) մոտ: Սա մի բույս է, որն իր կողքին աճող դափնեվարդին է ձգտում և կոչվում է փազահր (փազահր, Թույն չեզոքացնող). այդ պատճառով նրա հետ է տնկվում: Ասվում է, որ այս երկուսը Հոռոմների երկրից են բերվել և ունեն երկար պատմություն:

ԳԼՈՒԽ ԴՐՍԻ ԵՐԿՐՆԵՐԻՑ ԲԵՐՎԱԾ ՋԱՐՄԱՆԱԼԻ ՀՐԱՇԱՊՐԱՆՔՆԵՐԻ, ՊԻՏՈՒՅՔՆԵՐԻ, ՀԱՐՃԵՐԻ, ՔԱՐԵՐԻ ԵՎ ԱՅԼ ԲԱՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հնդկաստանից բերվում են՝ վագրեր, հովազներ, փղեր, հովազի մորթի, կարմիր հակինթ, սպիտակ ճանդալ (սանդալ), երենոս փայտ, Հնդկընկույզ:

Չինաստանից բերվում են՝ համեմունքներ (փիրինդ), մետաքսեղեն, սեղանասպասք, թուղթ (քաղիդ), թանաք, սիրամարգ, աչխույժ նժույգներ, թամբեր, թաղիք, դարսենի (դարչին), ռումի (բյուզանդական) անխառն ռավանդիսենի (ռավանդ):

[Հոռոմների երկրից] բերվում են արծաթե ու ոսկե անոթներ և անխառն մաքուր ոսկուց (կայսարանի) դինարներ, բուժախոտեր (ակակիր), զգեստներ, գործվածքեղեն, մետաքս (դիբաջ), աչխույժ նժույգներ, հարճեր, կարմիր պղնձից հագվագյուտ անոթներ, ամուր կողպեքներ, քնարներ, ջրային ճարտարապետներ, հողագործության ու հերկման գիտակներ, մարմարի չինարարներ ու ներքինիներ:

Արաբների երկրից՝ արաբական նժույգներ, ջայլամ, ցեղային ուղտեր, կան ծառի փայտ և մչակված կաչի:

Բերբերների երկրից և Մաղրիբի կողմերից՝ հովազներ, կաչի մչակելու տերևներ (կարագ), թաղիքներ, սև բաղեներ:

Եմենից՝ թիկնոցներ, մչակված մորթի, ընձուղտներ, զրահ, սարդիոն, խունկ (քունդուր), լեղակ, դեղին կոճ:

Եգիպտոսից՝ արագընթաց ավանակներ (հիմլաջ), նուրբ զգեստներ, պապիրուս (կիրթաս), բալասան (սպեղանի), իսկ հանքային հանածոներից՝ ընտիր տպաղիոն (զաբարջադ):

Խազարների երկրից՝ ստրուկներ, ստրկուհիներ, օղազրահ, սաղավարտներ, պաշտպանության սաղավարտ:

Խորեզմ երկրից՝ մչկայծյամ (միսք), կղաքիս (կակիմ), սամույր, սկյուռ, աղվես, քաղցր չաքարեղեգ:

Սամարկանդից՝ թուղթ:

Բալխից ու չրջակայքից՝ քաղցր խաղող, սունկ:

Բուչանջից՝ մչակված կապար:

Մերվից՝ բարբուտ նվագողներ, ընտիր բարբուտներ, գորգեր (թինֆիսա), Մերվի զգեստներ:

Վրկանից (Ջուրջան)՝ հունապ, փասիան, նուռն ընտիր հատիկներ, փափուկ բուրդ, ընտիր անոլոր մետաքս:

Ամիդից՝ հյուսված զգեստներ, թաչկինակներ, նուրբ վարագույրներ, բրդե քող (չղարչ):

Դմավանդից (Դարավանդ)՝ նիզակների ծայրեր:

Ռեյից՝ դեղձ, սնդիկ, բրդե թիկնոցներ, զենքեր, նուրբ գործվածքներ, սաներ, արքայական գլխանոցներ (կալանիս մալաքիյա), կասսի կոչված քթանե գործվածքեղեն, նուռ:

Սպահանից՝ խորխսամեղր (չահղ), մեղր, սերկևիլ, չինական տանձ, խնձոր, աղ, զափրան, կալաքար (ուշնան), սպիտակագեղ (իսֆիդաջ), ծաղրաքար (քուհլ), բազմահարկ մահճակալներ, ընտիր զգեստներ, մրգի օշարակ:

Կումիսից՝ կացիններ, թամբի թաղիքներ, հովանոցներ, բրդե չղարչներ:

Քիրմանից՝ լեղակ և քսմոն:

Գորից (Ջուր)[8]՝ քաղցրախյուս, լվախոտ:

Պարտավից՝ արագավազ ջորիներ:

Մծբինից՝ կապար:

Ֆարսից՝ քթանե Տավվազի և Սաբիրի կոչված զգեստներ, վարդաջուր, նունուֆարի յուղ, հասմիկի յուղ, օշարակներ:

Ֆասայից՝ պիստակ, չոր մրգեղենի տեսակներ, զարմանահրաշ պտուղներ, ապակեղեն:

Օմանից ու ծովափից՝ մարգարիտներ:

Միսանից՝ բարձեր, հենարաններ:

Ահուազից ու գավառներից՝ չաքար, մետաքսե դիպակ:

[...] և բամբիրներով պարուհիներ, պարուհիներ [...] արմավի տարբեր տեսակներ, խաղողի ռուփ, չաքարեղեգի չաքար:

Սուսից (Շուշ)՝ կիտրոն, մանուշակի յուղ, չահոբրամ, ձիու ծածկոցներ, թամբեր:

Մոսուլից՝ վարագույրներ, սփռոցներ, անտառակաքավ, լորամարգի:

Հուլուանից[9]՝ նուռ, թուզ, քացախ:

Հայաստանից ու Ատրպատականից՝ թաղիքներ [...], թամբեր, գորգեր, նուրբ փսխածներ, գոտիներ, բուրդ:

ԳԼՈՒԽ ԲԱԶԵՆԵՐԻ (ԲԱԶ), ԿԵՐԲԱԶԵՆԵՐԻ (ՇԱՀԻՆ), ՇԱՀԵՆՆԵՐԻ (ԲԱՎԱՇԻԿ), ՍԱԿՈՒ ԲԱԶԵՆԵՐԻ (ՍԱԿՐ) ԵՎ ԱՅԼ ԳԻՇԱՏԻՉ ԹՌՉՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿԱԼԻ ՏԵՍԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Լավագույն բազեները սպիտակներն են, որոնք գտնվում են Թուրքաց կողմերում մինչև Գեղան (Ջիլան), ապա սև ագռավայինները, որոնք սևամորթների (Ջինջ) կողմերում, Հնդկաստանում ու Եմենում են: Ապա գալիս են պայծառ կարմիրները և պղտոր մոխրագույնը:

Լավագույն կերբազները (շահին) ծովային ագռավային սև գույն ունեցողներն են և Վրկանի (Ջուրջան) սպիտակները:

Շահեններից ցանկալի են ծովային ագռավային սևերը, ապա Հնդկաստանի ձևրմակները, կարմիր ծովային գույն ունեցողները, որոնց փորը կարմիր է, կուրծքը՝ սպիտակ բծավոր, փայլուն, գլուխը մեծ, աչքերը խորն ընկած, բայց ոչ նիհար, մեծ ռունգերով, լայն բարձր կրծքով, փափուկ աղվամազով, երկար պոչով, կանաչ թաթերով, ոտքը բազկապանին մոտիկ: Դրանք պետք է ծանր լինեն և երբ 130 դիրհեմ քաշ ունենան, կատարյալ են:

Կարծվում է, որ սթափահավը սակր բազեի արուն է, ածխի կոչվածը շահեն արուն է, իսկ բազեի արուն փոքրիկ սթափահավն է:

Պարսիկներն ասում են. «չատ հազվադեպ է, որ ձին ու բազեն, լինելով գեղեցիկ, թաքուն արժանիքներ չունենան և ոչ էլ ունենալով բարձր արժանիքներ չունենան գեղեցիկ կերպարանք: Երբ թաքուն և բացահայտ հատկանիշները ի մի են գալիս, նրանք գերազանց են դառնում»:

ԵՎՍ ՄԻ ԳԼՈՒԽ

Ամեն մի գործվածքեղեն, որ զգեստի կամ գորգի (սենյակի կահավորանք) համար է, ինչքան ճկուն է, փափուկ ու փայլուն, այնքան արժեքավոր է: Ամեն մի թանկարժեք իր՝ գոհարեղեն կամ քարեր, ինչքան մաքուր ու լուսավոր է, այնքան արժեք ունի: Ամեն կենդանի՝ վայրի թե ընտանի, ինչքան խոշոր է և հնազանդ, այնքան նախընտրելի է ու գերազանց: Ամեն մարդ՝ ազնվական կամ ռամիկ, եթե խելացի է ու չրջապատին հարմարվող՝ գեղեցիկ է և ամեն կին

ազատ թե աղախին, ինչքան հանդարտ է, գեղեցիկ ու երախտագետ, այնքան առաքինի է: Կենդանի [թռչունը] լինի դաշտային թե լեռնային, ինչքան ընտանի է, այնքան արժեքավոր: Ամեն ինչ՝ լինի ձեռք բերած թե ժառանգած, ինչքան օրինավոր է ու հարգելի, այնքան երջանկաբեր է: Ամեն թչնամի՝ փոքր թե մեծ, ինչքան նոանդուն է, այնքան թչնամական ու քինախնդիր: Եթե որևէ մեկի օթևանը հայտնի չէ, լավ է նրան չմերձենալ:

Բախտը հեղհեղուկ է և ունեցվածքը կարող է բաժան-բաժան լինել, ջանասեր եղեք բախտ որոնելու, ողորմեցեք աղքատին, խղճացեք տկարին և հատուցում կստանաք: Լավագույն նինջն այն է, որ հոգնությունն ու ծուլությունը հաղթահարում է:

Հինգ զգայարաններով կարելի է ճանաչել իրերը՝ տեսողությամբ, եթե այն գեղեցիկ է ու հաճելի, քթով՝ եթե բուրումնավետ է ու հոտավետ, համտեսելով՝ եթե քաղցր է ու անուշ, լսողությամբ՝ եթե հստակ ձայն է, շոշափելով՝ եթե նուրբ ու փափուկ է:

Պարսիկներն (աջամները) ասում էին՝ սիրտը և տեսողությունը երկու ընկեր են, համտեսելն ու շոշափելը՝ երկու կցորդներ, միտքը և հիշողությունը՝ բարեկամներ, լսողությունն ու խոսքը՝ երկու դաշնակիցներ:

Մարդկանցից լավագույնը նա է, որ ճկուն է (չրջապատին հարմարվող), քաղցրաբարո և համեստ: Մարդու հոռի բնավորությունը երևում է դեմքի արտահայտությունից, գունատ դեմքից ու չհիվանդացած թառամելուց, փոփոխամիտ լինելուց, հաճույքներից խորշելուց և այն վատ բան համարելուց ու զրույցի ժամանակ կոշտ խոսակցությունից:

Արժանավոր մարդուն ճանաչում են թեթև բնավորությունից, քաղցրությունից, հաճելի տեսքից, սիրալիր խոսքից, պայծառ ճակատից, առանց կնճիռների, ոչ գրգռվող, ոչ էլ կռվարար վարվելակերպից, հաճոյակատար լինելուց, մարդկանց մասին լավ խոսելուց, խոսքի քաղցրությունից և համեստությունից:

Շապուհ (Սաբուր) արքան[10] գտնում էր, որ խելացի մարդուն բավական է, որ հայացքով ճանաչի յոթ դասի մարդկանց՝ հարբեցողին, չողոքորթին, խեղկատակին, հիվանդին, գուշակողին, բանսարկուին և մոռացկոտին:

ՋԱՀԻԶ

ՀԱՑԱՑՔ ՎԱՃԱՌԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎՐԱ (ԱԼ-ՏԱԲԱՍՍՈՒՐ ԲԻ-Լ-ՏԻՋԱՐԱ)

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

[1] *Կես մսխալ – Քանի որ Իրաքում մեկ մսխալը հավասար էր 4, 46 գրամի, հետևաբար խոսքը 2, 23 գրամանոց մարգարտի մասին է: Սակայն տարբեր երկրներում մսխալը մի փոքր տարբեր է: (*Хинц, Меры и веса, стр. 15*).*

[2] *Հաղար մսխալ – 4 կիլոգրամ 460 գրամ:*

[3] *Երկու մսխալ – 8, 92 գրամ:*

[4] *Երեք մսխալ – 13, 36 գրամ:*

[5] *Ռույան – Իրանի կասպիական ծովափը և Մազանդարանի արևմտյան մասը ընդգրկող մի չրջան: (Ruyan, V. Minorsky, EOI, CD-ROM, (VIII: 650b)):*

[6] *Ամոլ – երկու քաղաք կա այս նույն անունով. մեկը գտնվում է Մազանդարանի հարավ-արևմտյան անկյունում, կասպից ծովից 12 մղոն հարավ: Իսկ մյուսը գտնվում է Միջին Ասիայում, Ամու Դարիա գետի ձախ ափից երեք մղոն հեռավորության վրա (ներկայիս Թուրքմենստան): Հավանաբար այստեղ խոսքը առաջին Ամոլի մասին է: (Amul, L. Lockhart, M. Streck, EOI, CD-ROM, (I: 459a)):*

[7] *Կումիս – Տե՛ս Բալադուրի, ծնթգր. 220:*

[8] *Գոր (Ջուր) – Գորը, կամ Ջուրը, հետագայի Ֆիրուզաբադն է, որ նշանակում է Հաղթանակի քաղաք: Ըստ ավանդության, այն կառուցել է Արտաշիր Պապականը ի նշան իր հաղթանակի՝ Արտավանի դեմ: Գորը գտնվում է Իրանի Ֆարս նահանգում: (Firuzabad, L. Lockhart, EOI, CD-ROM, (II: 925b)):*

[9] *Հուլուան – Տե՛ս Բալադուրի, ծնթգր. 207:*

[10] *Շապուհ (Սաբուր) արքան – Տե՛ս Յակուբի (պ.), ծնթգր. 23:*

ԻԲՆ ԽՈՐԴԱԴԲԵՀ (820–912)

Աբու լ-Կասիմ Ուբայդալլահ Իբն Աբդալլահը, որը ծանոթ է Իբն Խորդադբեհ (կամ Իբն Խուրդադբեհ) անունով, պատկանում էր մահմեդականություն ընդունած մի պարսիկ ընտանիքի: Սկզբնապես նա զրադաչտական էր, ապա ընդունել էր իսլամը: Նրա հայրը՝ Մամուն խալիֆայի օրոք եղել էր Թաբարիստանի կառավարիչը: Ինքը՝ Իբն Խորդադբեհը հավանաբար ծնվել է Խորասանում: Ենթադրվում է, որ նա ծնվել է 820–825 թ-ի միջև:

Նա զարձել էր Ջիբալ նահանգի փոստի պետը, ապա Բաղդադի, կամ Սամառայի փոստի ծառայության ընդհանուր տնօրենը: Նույն ժամանակ Իբն Խորդադբեհը հեղինակել էր մի չարք աշխատություններ նվիրված երաժշտությանը, գրականությանն ու պատմությանը: Շնորհիվ այն բարձր դիրքի, որ ուներ Իբն Խորդադբեհը ալ-Մուտամիդ խալիֆայի (870–892) մոտ, նա հնարավորություն ստացավ օգտվելու արխիվներից, որոնք էլ նրան առատ նյութ տվեցին ստեղծելու իր աշխարհագրական նշանավոր երկը՝ «Գիրք ճանապարհների ու թագավորությունների մասին» (Քիտաբ ալ-Մասալիք ուա ալ-Մամալիք), որը նա ձեռնարկեց 846-ին ու չարունակեց հավանաբար մինչև 885-ը:

Իբն Խորդադբեհը ապրեց չատ երկար ու մահացավ հավանաբար 912 թվականին: Հետագա աշխարհագրագետները ոչ միայն օգտվեցին նրա աշխատությունից, այլև նրա օրինակով, իրենց երկերն անվանեցին նույն ձևով՝ «Քիտաբ ալ-Մասալիք ուա ալ-Մամալիք»:

Նրա աշխատությունը բաժանվում է յոթ մասի: Առաջինը պարունակում է տիեզերագիտական տեսություններ ամենայն հավանականությամբ քաղված Պտղոմեոսից, երկրորդը՝ ներկայացնում է հարավային Միջագետքը, կամ Սավադը, որպես աշխարհի կենտրոն, երրորդ, չորրորդ, հինգերորդ ու վեցերորդ մասերում հաջորդաբար ներկայացվում են երթուղիները դեպի Արևելք (Պարսկաստան, Հնդկաստան և Ջինաստան), Արևմուտք (Ասորիք, Եգիպտոս, Մաղրիբ, Վերին Միջագետք, Բյուզանդիա), Հյուսիս (Հայաստան, Կասպիականի ավազան) և Արաբիա: Վերջապես յոթերորդ բաժնում խոսվում է աշխարհի բաժանումների ու հրաչքների մասին, որը տարբերվում է նախորդ մասերից և բացառված չէ, որ հետո է ավելացվել:

Իբն Խորդադբեհի երկի լեզուն չոր է, այն գրված է ոչ թե լայն հասարակության, այլ որոշակի նեղ չրջանակի համար:

Ներկա թարգմանությունը կատարված է հետևյալ հրատարակությունից. Bibliotheca Geographorum Arabicorum, edidit M. J. de Goeje, VI, Lugduni Batavorum, 1967

(Крачковский, IV, стр. 147-150, *R. Blachère et H. Darmaun, Extraits des Principaux Géographes Arabes du Moyen Age, Paris, 1957, p. 21-22, Ibn Khurradadhbih, M. Hadj – Sadok, EOI, CD-ROM, (III: 839a)).*

Տե՛ս նաև.

- Ibn Khordadbeh, Kitab ul-masalik u al-mamalik, Leiden, 1306 (1928)

- Barbier de Meynard C., Le Livre des routes et des provinces, par Ibn-Khordadbeh, publié, traduit et annoté par C. Barbier de Meynard. JA, 6 serie, V, 1865, p. 5-127.

ԻԲՆ ԽՈՐԴԱԴԲԵՀ

ԳԻՐՔ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՈՒ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ (ՔԻՏԱԲ ԱԼ-ՄԱՍԱԼԻՔ ՈՒԱ ԱԼ-ՄԱՄԱԼԻՔ)

[ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ]

էջ 3 - 5

Թող Ալլահը քո կյանքը երկարեցնի, ով որդիդ ազնվական տերերի և առաքինի տիրակալների, որոնք կրոնի փարոսներ և բոլոր արաբածների մեջ Ալլահի ընտրյալներ են եղել: Թող Ալլահը քո երջանկությունը տևական դարձնի և բարիքները քեզ համար բազմացնի. թող օգնի քեզ քայլելու բարեգործության ուղիով, քեզ դասելով այնպիսիների մեջ, որոնց գործերին հավանություն է տալիս և նրանց կյանքը զարդարում է:

Հասկացա թե ինչ ես հարցնում. թող Ալլահը քեզ հասկանալի դարձնի բոլոր լավ արարքները, երջանկացնի քեզ մինչև մահվան օրը, գործերիդ հաջողություն և քեզ լավ բաժին տա թե այս աշխարհում, թե հանդերձյալ կյանքում:

Կամենում ես, որ տամ հստակ նկարագրությունը երկրի ճանապարհների ու թագավորությունների, հեռավորությունը և մերձավորությունը, չեն հողերը և անապատները, ցույց տամ երկարությունները, ճանապարհները, հարկերը, սահմանները, ինչպես ցույց են տվել հները:

Գտել եմ, որ Պտղոմեոսը բացահայտել է [երկրի] սահմանները և ապացույցներով պարզաբանել նկարագրությունը օտար լեզվով և ես նրա լեզվից թարգմանեցի ճիշտ (արաբերեն) լեզվի, որպեսզի վերահասու լինես: Ապա ես ինքս եմ հորինել, կատարելու համար քո ցանկություններն ու կամքը և հուսով եմ, որ համապատասխանելու է քո պահանջին, գոհացնելու է քո նպատակները, այնպես որ դու հնարավորություն ունենաս ճանաչելու թե՛ մերձավորը, թե՛ հեռավորը, սեփական աչքով տեսածի նման:

Գրել եմ մի գիրք և սկսում եմ փառաբանելով Ալլահին, որն ամենատեսն է և ամենայն բարիքների աղբյուրը, ստեղծել է մարդկանց իր կամքով և ցույց է տվել ծառաներին ճշմարտության ուղին և որի արարչագործության մեջ ոչ սխալ կարծիքներն են դեր կատարել, ոչ

Էլ երևութական դատողություններ:

Այս գրքում կա երկրի նկարագրությունը և նրա վրա ապրող արարածների վիճակը, ամեն մի երկրի կիբլան[1], թագավորություններն ու ճանապարհները մինչև աշխարհի տարբեր ծայրերը, որի հեղինակն է Աբու-լ-Կասիմ Ուբայդալլահ իբն Աբդալլահ իբն Խորդադբեհը (Խուրդադբահ), հավատացելոց իշխանի[2] (խալիֆա) մասուլան:

Ասել է Աբու-լ-Կասիմը, որ երկրի ձևը կլոր է գնդի նման, գրված է տիեզերքի մեջ՝ ինչպես դեղնուցը ձվի մեջ: Օդը պատում է երկիրը և ձգում է նրան ամեն կողմից դեպի տիեզերքը (երկինքը): Արարածները երկրի վրա կայուն վիճակում են, քանզի օդը ձգում է նրանց մարմիններում եղած թեթև մասերը, իսկ երկիրը ձգում է դեպի իր կենտրոնը նրանց ծանր մասերը: Երկիրը նման է [մագնիսական] քարին, որը ձգում է երկիրը:

Երկիրը երկու մասերից է բաղկացած, որոնց միջև հասարակած գիծն է և երկարում է արևելքից արևմուտք և սա երկրի երկարությունն է: Ամենամեծ գիծն է երկրագնդի վրա, ինչպես որ կենդանակերպ (զոդիակ) գիծը տիեզերքի ամենամեծ գիծն է: Երկրի լայնությունը ձգվում է հարավային բևեռից, ուր նրա չուրջը պտտվում է Ողնուց (Կանոպոս, Սուհայլ) համաստեղությունը[3], մինչև հյուսիսային բևեռը, որի չուրջը պտտվում է Մեծ արջի (բանատ նաչ) համաստեղությունը:

Երկրի չրջանակը հասարակածում երեք հարյուր վաթսուն աստիճան է, մեկ աստիճանը հինգ փարսախ է, փարսախը տասներկու հազար կանգուն[4] (գիրա, արմնկաչափ) է, կանգունը քսան մատնաչափ է, մատնաչափը գարու վեց հատիկ (հաբբա) է, չարված ամեն մեկը մյուսի կողքին ըստ հաստության: [Երկրի] չրջագիծը ինը հազար փարսախ է:

Հասարակածի և ամեն մի բևեռի միջև իննսուն աստղագիտական աստիճան կա, իսկ լայնության չրջանակը երկարության նման է, միայն թե երկրի վրա բնակելի է հասարակածից մինչև քսանչորս աստիճանը, որից հետո մնացածը ողողել է Մեծ ծովը[5]:

Այսպիսով մենք ապրում ենք երկրի հյուսիսային քառորդում, իսկ հարավային քառորդը ավերակ (անապատ) է չոգի սաստկության պատճառով, իսկ երկրի մեր տակի կեսն անբնակ է: Թե՛ հյուսիսի, թե՛ հարավի ամեն մի քառորդը յոթ կլիմաներից (գոտիներից) է բաղկացած: Պտղոմեոսն իր գրքում հիշել է, որ իր ժամանակ երկրի քաղաքները չորս հազար երկու հարյուր էին:

ԱՄԵՆ ՄԻ ԵՐԿՐԻ ԺՈՂՈՎՐԴԻ ԿԻԲԼԱՆ

էջ 5

Հայաստանի, Ատրպատականի, Բաղդադի, Վասիթի, Քուֆայի, Մադաինի (Տիգրոն), Բասրայի, Հուլուանի, Դինավարի, Նեհավենդի, Համադանի, Իսֆահանի, Ռեյի, Թաբարիստանի, ամբողջ Խորասանի, Խազարաց երկրի, Քաշմիրի և Հնդկաստանի ժողովուրդների կիբլան Քաաբայի[6] այն պատի կողմն է, որի վրա է նրա դուռը: Սա հյուսիսային բևեռի ձախ կողմում է մինչև արևելքի կենտրոնը:

Իսկ Տիբեթը (Տուբբատ), Թուրքաց երկիրը, Չինաստանը և ալ-Մանսուրան[7], այսինքն այն երկրները, որոնք արևելքի կենտրոնից ութ աստիճան այն կողմ են, ապա [նրանց կիբլան] չատ մոտ է սև քարին[8]:

Ինչ վերաբերում է Եմենի ժողովրդի կիբլային, ապա նրա [ժողովուրդը] աղոթքի ժամանակ ուղղվում է [Քաաբայի] Եմենյան (Յամանի՝ հարավային) կոչված անկյունին: Աղոթքի ժամանակ նրանց դեմքերը նայում են Հայաստանի բնակիչների դեմքին:

Մաղրիբի (հյուսիսային Աֆրիկա), Աֆրիկայի (Իֆրիկիա նահանգ), Եգիպտոսի (Միսր), Ասորիքի (Շամ), Ջազիրայի ժողովրդի կիբլան արևմուտքի (մաղրիբի) մեջտեղում է: [Այս ժողովուրդները] ուղղվում են Շամի (Ասորիքյան) կոչված անկյան կողմը, իսկ իրենց երեսներն աղոթքի ժամանակ ուղղում են դեպի Մանսուրա:

Ահա այն ամենն ինչ պետք է իմանալ մարդկանց կիբլայի և տարբեր կողմերի մասին աղոթքի ժամանակ:

ՍԱՎԱԴԸ (ՍՏՈՐԻՆ ՄԻՋԱԳԵՏՔ)

էջ 5 – 6

Կսկսեմ Սավադի հիչատակումով, քանզի Պարսից արքաները այն կոչում էին Դելե Իրանչահր, այսինքն Իրանի սիրտը:

Սավադը տասներկու նահանգ (քուրա) ունի, ամեն նահանգ կազմում է մի աստան (ոստան, չրջան) և վաթսուն թասուջ ունի: Աստան թարգմանվում է երկրամաս (իհազա), իսկ թասուջ թարգմանվում է գավառ (նահիա): Աստան Շաղ Ֆիրուզ նահանգը, որն այժմ Հուլուանն է, ունի հինգ թասուջ՝ Ֆիրուզ Կուբադը, ալ-Ջաբալը, Տամաոանը, Արբելան (Իրբիլ) և Խանիկինը:

ՍԱՎԱԴԻ ՀԱՐԿԵՐԻ ԳՈՒՄԱՐԸ

ԼՂ 14-15

Սավադի հարկերի գումարը Հնում Պերոզի որդի Կավադի (Կուբադի իրն Ֆայրուզ) օրոք Հարյուր հիսուն միլիոն (հազար հազար) դիրհեմ միակալ էր (քաչով): Օմար իրն ալ-Խաթթաբ [Խալիֆան] հրամայեց չափագրել Սավադը, որի երկարությունը Ալսից ու Ջարրիից (Հյուսիսային երկրամաս) մինչև Աբբադան Հարյուր քսանհինգ փարսախ է, իսկ լայնությունը Հուլուանի կիրճից մինչև Ուդայբ ութսուն փարսախ է: Նրա ջարիբները հասնում էին երեսունվեց միլիոն ջարիբի: Նա ցորենի ամեն մի ջարիբի համար պահանջեց չորս դիրհեմ, գարու ջարիբի համար՝ երկու դիրհեմ, արմավենու ջարիբի համար՝ ութ դիրհեմ, որթատունկի ջարիբի համար՝ վեց դիրհեմ, առվույտի ջարիբի համար՝ վեց դիրհեմ: Եվ ջիզիա (գլխահարկ) որոշվեց հինգ հարյուր հազար մարդու համար, ըստ աստիճանների (դասերի, թաբակատ):

Այսպիսով, Օմար իրն ալ-Խաթթաբը Սավադի վրա հարկը դրեց հարյուր քսանութ միլիոն դիրհեմ, Օմար իրն Աբդ ալ-Ազիզ [խալիֆան] հարկ դրեց հարյուր քսանչորս միլիոն դիրհեմ: Հաջջաջ իրն Յուսուֆ [փոխարքան] հազիվ տասնութ միլիոն դիրհեմ կարողացավ ստանալ, այսինքն հարյուր միլիոնից ավելիով պակաս քան նախորդների օրոք, իր դաժանության, հիմարության և անիրավության հետևանքով: Նա թեթևացրեց հարկերը երկու միլիոն դիրհեմով և հավաքվեց միայն տասնվեց միլիոն դիրհեմ: Սավադի բնակչությանը արգելեց կով մորթելը, որպեսզի հողամշակությունն ու երկրագործությունը զարգանան:

Բանաստեղծն ասել է այդ մասին.

Բողոքեցինք նրան Սավադի ավերման համար,
Իսկ նա, տգիտությամբ, կովի միսն արգելեց:

Խոսրով Պարուզի թագավորության ժամանակ ստացված հարկը, նրա թագավորության տասնութերորդ տարում, չորս հարյուր քսան միլիոն միակալ էր, որի քաչն է այժմյան հաշվով յոթ տասներորդական միակալ, այսինքն վեց հարյուր միլիոն դիրհեմ: Դրանից հետո նրա թագավորության հարկատվությունը հասավ վեց հարյուր միլիոն միակալի:

ԵՐԿՐԻ ԹԱԳԱՎՈՐՆԵՐԻ ՏԻՏՂՈՍՆԵՐԸ

ԼՂ 16-17

Իրաքի թագավորին ընդհանրապես կոչում են Քիսրա (Խոսրով), որը չահանշահն է, Ռումի (արևելահռոմեական կայսրության)

թագավորին ընդհանրապես կոչում են կայսր (կայսար) և նա բասիլն (վասիլևս) է: Թուրքերի ու Տիբետի (Տուբբատ) և Խազարաց թագավորները բոլորը կոչվում են խաքան, բացի [Թուրքաց ցեղ] Խարլուխի թագավորից[9], որին կոչում են Ջարղույե: Չինաստանի թագավորին [կոչում են] Բաղբուր: Սրանք Աֆրիդունի որդիներն են: Հնդկաստանի մեծ թագավորին՝ Բալհարա, այսինքն թագավորաց թագավոր: Հնդկաստանի թագավորներից են Ջաբան, Թաֆինի թագավորը, Ջուրզի Ղաբայի, Ռահմայի թագավորները, Կամիրունի թագավորը: Ջարիջի թագավորին [կոչում են] Պատիջար (Ֆատիջաբ, Ջավայի իշխան), Նուբիայի թագավորին՝ Քարիլ, Հարևչստանի (Եթովպիայի) թագավորին՝ Նեգուս (ալ-Նաջաշի), Արևելյան ծովի կղզիների թագավորին՝ ալ-Միհրաջ, սլավոնների (Սակալիբ) թագավորին՝ Կինազ (Կնյազ):

ԹԱԳԱՎՈՐՆԵՐ, ՈՐՈՆՑ ՏԻՏՂՈՍՆԵՐ ԷՐ ՏՎԵԼ ԱՐԴԱՇԻՐ ԱՐՔԱՆ (ՇԱՀԻՆ)

ԼՂ 17-18

Բուզուրգ Քուչան չահ, Քիլան չահ, Բուդ Արդաշիրան չահ, այսինքն Մոսուլի (Մաուսիլ), Մայսան չահ, Բուզուրգ Արմանիան չահ (արքա Հայոց Մեծաց), Ադարբադգան չահ, Սիջիստան չահ, Մերվ չահ, Քիրման (Քարման) չահ, Բադղաչվարգարչահ, Յաման չահ, Տաղիան (արաբաց) չահ, Քադիչ չահ, Բուրջան չահ, Ամուքան չահ, Սաբրիան չահ, Մուչքիդղան չահ (Խորասանում), ալ-Լան չահ (Մուղանում), Բարաչքան չահ (Ատրպատականում), Կուֆս չահ (Քիրմանում), Մուքրան չահ (Սինդում), Տուրան (Թուրան) չահ (Թուրքաց երկրում), Հինդուան չահ, Քաբուլան չահ, Շիբիան չահ (Ատրպատականում), Ռայհան չահ (Հնդկաստանում), Կիկան չահ (Սինդում), Բաղասական (Բալաչջան) չահ, Դաուարան չահ (Դաուար երկրում), Նախչաբան չահ, Կաշմիրան չահ, Բաբարղան չահ և Գուզաֆտ (Քուզաֆտ) չահ: Սրանք են թագավորների տիտղոսները (անունները):

ԱՐԵՎԵԼՔԻ (ՄԱՇՐԻԿ) ՄԱՍԻՆ

ԼՂ 18

Սկսենք Արևելքով, որը [Պարսից] թագավորության քառորդն էր: Հիշենք նախ Խորասանը, որը գտնվում էր սպահպետ պատգոսպանի (իսբահրադ բադուսբան) ձեռքի տակ: Կային չորս մարզպաններ, ամեն մի մարզպանին [ենթակա էր] Խորասանի քառորդը: Ուստի մի

քառորդը Մերվ (Մարվ) Շահիջանի և գավառների մարզպանին, մի քառորդը՝ Բալխի ու Թոխարիստանի մարզպանին, մի քառորդը՝ Հերատի, Բուչանջի, Բաղդիսի և Սիջիստանի մարզպանին:

Ասել է Իրն Մուֆարրիղը [Հերատի մասին]

Հերատի օրը մունետիկը կանչեց, որ լսես,

Նա կանչում էր աջ, բայց դու գնացիր ձախ:

Իսկ չորրորդ քառորդն էլ՝ Մավերաննահրի[10] (Մա վարա ալ-նահր) մարզպանին:

ԱՐԵՎՄՈՒՏՔԻ (ՄԱՂՐԻԲ) ՄԱՍԻՆ

էջ 72-73

Արևմուտքը (Մաղրիբը) թագավորության մեկ քառորդն էր: Նրա սպահպետը (իսբահբադ), պարսիկների մոտ ընդունված ձևով կոչվում էր Խուրբարան սպահպետ:

ՃԱՆԱՊԱՐՀԸ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԻՑ (ԲԱՂԴԱԴ) ԴԵՊԻ ԱՐԵՎՄՈՒՏՔ

Բաղդադից Սայլահին չորս փարսախ է, ապա մինչև Անբար ութ փարսախ, ապա ալ-Ռաբբ յոթ փարսախ, ապա Հիտ՝ տասներկու փարսախ:

Ասել է Աբու-լ-Ամայսալը [Հիտի մասին].

Ինչո՞ւ նա կանգ չառավ Հիտում այդ գիշեր

Կամ էլ նախորդ գիշերը՝ Անբարում:

Ապա դեպի Նաուսա՝ յոթ փարսախ, ապա Ալուսա՝ յոթ փարսախ, ապա Ֆուհայմա՝ վեց փարսախ, ապա Նահիա՝ տասներկու փարսախ ցամաքում, ապա ալ-Դաղկի՝ վեց փարսախ, ապա ալ-Ֆարդա՝ վեց փարսախ, ապա Վադի ալ-Սիբա (առյուծների հովիտ)՝ վեց փարսախ, ապա խալիջ (ծոց) Բանի Ջումայ՝ հինգ փարսախ, ապա ալ-Ֆաչ Կիրկիսիայի դիմաց՝ յոթ փարսախ, ապա Նահր (գետ) Սաիդ՝ ութ փարսախ, ապա Ջարդան՝ տասնչորս փարսախ, ապա ալ-Մուբարաք՝ տասնմեկ փարսախ, ապա Ռակկա՝ ութ փարսախ, որը հունարեն կոչվում է Կալանիկուս (Կալինիկոս), իսկ Ռակկան գլխավոր քաղաքն է Դիար Մուդարի, որի մեջ են ալ-Ռաֆիկան, Խառանը, որը հունարեն կոչվել է Հելլենոպոլիս: Ասել է Սուդայֆը.

Կարծում էի, որ պիտի եմ, սակայն ինձ թուլացրեց

Հավատի պաշտպանի գերեզմանը Խառանում:

[Դիար Մուդարի մեջ են նաև] Եղեսիան, Սամոսատը, Սարուջը, Ռաս Քայֆան, ալ-Արդ ալ-Բայդան (Սպիտակ հող), Տալլ Մաուզանը, ալ-Ռավաբին, ալ-Մազջինը և ալ-Մուդայբիրը:

Դիար Մուդարի հարկը (խարաջ) հինգ միլիոն վեց հարյուր հազար դիրհեմ է, իսկ Ռուծափի (Ռուսաֆա), Զայթունայի, Քաֆր Հաջարի և Ջազիրայի գնահատված [հարկը] չորս հազար դինար է:

ԿԻՆՆԱՍՐԻՆԻ ԳԱՎԱՌՆԵՐԸ (ՔՈՒՐԱ)

էջ 75

Մաառատ Մասրայն գավառ, Մարտահուան, Սարմայն և Հիյար Բանի ալ-Կակա, Տլուք (Դուլուք), Ռաբան և Հալեբ:

Ավասիմ [գավառն ունի] Կիրոս (Կուրուս) գավառը, ալ-Ջուման, Մանբիջը, Անտիոքը, Տիզինը, Բուկան, Բալիսը, Հիչամի Ռուսաֆան:

Կիննասրինի և Ավասիմի հարկը (խարաջ) չորս հարյուր հազար դինար է:

Կիննասրինից ճանապարհը գնում է Շայզար, ապա Եպիփանիա (Համա), Եմեսա (Հիմս):

ԴԻԱՐ ՌԱԲԻԱՑԻ ԳԱՎԱՌՆԵՐԸ (ՔՈՒՐԱ)

էջ 95

Մծբին, Արզն, Ամիդ, Ռաս Այն և Նփրկերտ. Ասել է բանաստեղծը.

Մի անգամ Ամիդում, Ռաս Այնում

Եվ նրբեմն Նփրկերտում:

[Դիար Բաքրում են նաև] Մարդինը, Բաարբայան, Բալաղը, Սինջարը, Կարդան և Բազաբդան. Ասել է բանաստեղծը.

Կարդան ու Բազաբդան ամառանոց ու գարնանային կայան են

Ջուրը քաղցր է և [դրախտի] Սալսաբիլի նման է սառնությամբ:

Նրանում է նաև Թուր Աբդինը, որի մասին բանաստեղծն ասել է.

Տիրել է Հաղրային ու Եփրատի ոռոգած հողերին

Իսկ արևելքում Տիգրիսի ոռոգած հողերը և Թուր Աբդինը:

Դիար Ռաբիայի հարկը (խարաջ) յոթ միլիոն յոթ հարյուր հազար դիրհեմ է:

Մծբինից Դարա հինգ փարսախ է, ապա մինչև Քաֆարտուսա յոթ փարսախ է, ապա Ռաս Այն յոթ փարսախ է, ապա ալ-Ջարուդ հինգ փարսախ է, ապա Հիան (բևրդ) Մասլամա վեց փարսախ է, ապա Բաջարուան յոթ փարսախ է, ապա Ռակկա երեք փարսախ է. Ասել է բանաստեղծը.

Ալլահը թող ջրի Բալիխը և Տալլ Բահրան

Եվ Բաջարուանը մեծ ճանապարհի վրա:

ԱՋԱԿՈՂՄՅԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԸ ՄՏԲԻՆԻՑ ԱՐՋՆ

էջ 95 - 96

Մծբինից Դարա հինգ փարսախ է, ապա Քաֆարտուսա յոթ փարսախ է, ապա Կասր Բանի Նազի վեց փարսախ է, ապա Ամիդ, որը Տիգրիսի վրա է յոթ փարսախ է, ապա Նփրկերտ հինգ փարսախ է, ապա Արզն յոթ փարսախ է:

ՋԱԽԱԿՈՂՄՅԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԸ ԱՄԻԴԻՑ ՌԱԿԿԱ

էջ 96

Ամիդից Շիմշաթ յոթ փարսախ է, ապա Տալլ Ջաֆր՝ հինգ փարսախ է, ապա Ջաբնան՝ վեց փարսախ է, ապա Բամակդա՝ հինգ փարսախ է, ապա Ջուլլաբ՝ յոթ փարսախ է, ապա Եղևսիա՝ չորս փարսախ է, ապա Խառան՝ չորս փարսախ է, ապա Տալլ Մահրա՝ չորս փարսախ է, ապա Բաջարուան՝ յոթ փարսախ է, ապա Ռակկա՝ երեք փարսախ է:

ՃԱՆԱՊԱՐՀԸ ՌԱԿԿԱՑԻՑ ՄԻՋԱԳԵՏՔԻ ՍԱՀՄԱՆԱՑԻՆ ՇՐՋԱՆԸ (ԱԼ-ՍՈՒՂՈՒՐ ԱԼ-ՋԱԶԱՐԻՑԱ)

էջ 97

Դրա ուղղությունն է Սալղուս, Քայսում, Շիմշաթ, Մալաթիա, Զապետրա, Հադաս, Մարաշ, այս վերջինների միջև երեսուն մղոն կա և Կամախ, Հիսն Մանսուր և Կիրոս, Տյուք (Դուլուք) և Ռաբան:

Ռակկայից Այն ալ-Ռումիյա վեց փարսախ է, ապա Տալլ Արդա՝ յոթ փարսախ, ապա Սարուջ՝ յոթ փարսախ, ապա ալ-Մուզանիյա՝ վեց փարսախ, ապա Սամոսատ՝ յոթ փարսախ, ապա Հիսն Մանսուր՝ վեց փարսախ, ապա Մալաթիա՝ տաս փարսախ, ապա Զապետրա՝ հինգ փարսախ, ապա Հադաս՝ չորս փարսախ, ապա Մարաշ՝ հինգ փարսախ, ապա Ամկ Մարաշ, իսկ Ամկ է կոչվում լեռներով շրջապատված ամեն մի դաշտ:

Մալաթիայից Կամախ չորս փարսախ է:

ՋԻԵՐԻ ԿԱՅԱՆՆԵՐԸ (ՍԻՖԱՖ) ՀԱԼԵԲԻՑ ԱՍՈՐԻՔԻ ՍԱՀՄԱՆԱՑԻՆ ՇՐՋԱՆԸ (ԱԼ-ՍՈՒՂՈՒՐ ԱԼ-ՇԱՄԻՑԱ)

էջ 99-101

Հալեբից Կիննասրին յոթ ձիերի կայան է, ապա Անտիոք չորս կայան է, ապա Ալեքսանդրեկ (Իսքանդարիյա) չորս կայան, ապա

Մամեստիա յոթ կայան, իսկ Պիրամոս (Ջայհան) գետը ձեղքում է Մամեստիան, որի անունն է Մարսուբաստիա (Մոպսուեստիա): Մամեստիայից Ադանա երեք կայան է, իսկ Ադանայի անունն է Ադանում և գտնվում է Սայհանի վրա. Ասել է բանաստեղծը.

Ով դու որ ինձանից բաժանված ես Ռումի լեռներով և
Ջառիթափերով և Սարոսի (Սայհան) ծանծաղուտներով
Ճանապարհը կտրող լեռնանցքով, Տիանայի ծերպերով
Հերակլիայով և Հիսն Սինան բերդով:

Ապա Ադանայից Տարսոն հինգ կայան է, իսկ Տարսոն անունը հունարեն Տարսում է. Ասել է Աբու Սախրը.

Թողել են նրան իրենց ետևում, թաղված Տարսոնի պատնեշներում
Ինչպես թողեցին մի ժամանակ նրա հորը Թուսում:
Ասել է Ֆարաջ իբն Օսման ալ-Միկսամին.
Երանի թե ուղտերն իմնեին Տարսոնի դաշտը
Մանոթ գետի ափերը
Ուղտերը տանում են գեղանի պարմանուհիներին
Գեղեցիկ են ու սիգամետ
Ու սրտերն են նվաճում:

ՍԱՀՄԱՆԱՑԻՆ ԳՈՏՈՒՑ ՆԵՐՍ ԸՆԿԱԾ ԱՍՈՐԻՔԻ ԱՄՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Անազարբան (Այն Զարբա), Հարունիյան, Քանիսատ ալ-Սաուդան և Տալլ Ջուբայրը [գտնվում են] Տարսոնից ութ մղոնի վրա:

ԴԱՐԲ ԱԼ-ՍԱԼԱՄԱՆ (ԴՐՈՒՆՔ ԿԻԼԻԿԻՈ) ԵՎ ՃԱՆԱՊԱՐՀԸ ԴԵՊԻ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ ԾՈՑԸ

Տարսոնից Ուլլայկ տասներկու մղոն է, ապա Ռահուա և ալ-Ջաուզատ տասներկու մղոն է, ապա ալ-Ջարդակուբ՝ յոթ մղոն, ապա մինչև Պոտանդոն (Բաղանդուն) յոթ մղոն է: Ասել է Մուհամմադ իբն Արդ ալ-Մալիքը [դիմելով Մուտասիմ խալիֆային].

Բաղանդունի օրը [ամրապնդեցիր քո խալիֆայությունը]
Ինչպես որ ստացել էիր [այդ պատիվը] Բաղանդունի մի այլ օրում:

Ապա մինչև Մուսաքար ալ-մալիք (Թագավորի ճամբարը) Լուլուայի ջերմուկի (Հիմմա) վրա և Սաֆսաֆ տաս մղոն է և կհասնես Մուսաքար ալ-մալիք, լեռնանցքն անցնելուց և դաշտ դուրս գալուց հետո: Մուսաքարից մինչև վադի (Հովիտ) Թարկա տասներկու մղոն է, ապա Մանի քսան մղոն է, ապա Հերակլիայի գետը՝ տաս մղոն: Ասել է ալ-Աբբաս իբն ալ-Ահնաֆը.

ԱՋԱԿՈՂՄՑԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԸ ՄՄԲԻՆԻՑ ԱՐՋՆ

ԿՋ 95 – 96

Մծբինից Դարա հինգ փարսախ է, ապա Քաֆարտուսա յոթ փարսախ է, ապա Կասր Բանի Նազի վեց փարսախ է, ապա Ամիդ, որը Տիգրիսի վրա է յոթ փարսախ է, ապա Նփրկերտ հինգ փարսախ է, ապա Արզն յոթ փարսախ է:

ՋԱԽԱԿՈՂՄՑԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԸ ԱՄԻԴԻՑ ՌԱԿԿԱ

ԿՋ 96

Ամիդից Շիմշաթ յոթ փարսախ է, ապա Տալլ Ջաֆր՝ հինգ փարսախ է, ապա Ջաբնան՝ վեց փարսախ է, ապա Բամակդա՝ հինգ փարսախ է, ապա Ջուլլաբ՝ յոթ փարսախ է, ապա Եղևսիա՝ չորս փարսախ է, ապա Խառան՝ չորս փարսախ է, ապա Տալլ Մահրա՝ չորս փարսախ է, ապա Բաջարուան՝ յոթ փարսախ է, ապա Ռակկա՝ երեք փարսախ է:

ՃԱՆԱՊԱՐՀԸ ՌԱԿԿԱՑԻՑ ՄԻՋԱԳԵՏՔԻ ՍԱՀՄԱՆԱՑԻՆ ՇՐՋԱՆԸ (ԱԼ-ՍՈՒՂՈՒՐ ԱԼ-ՋԱԶԱՐԻՑԱ)

ԿՋ 97

Դրա ուղղությունն է Սալղուս, Քայսում, Շիմշաթ, Մալաթիա, Զապետրա, Հադաս, Մարաշ, այս վերջինների միջև երեսուն մղոն կա և Կամախ, Հին Մանսուր և Կիրոս, Տյուք (Դուլուք) և Ռաբան:

Ռակկայից Այն ալ-Ռումիյյա վեց փարսախ է, ապա Տալլ Աբդա՝ յոթ փարսախ, ապա Սարուջ՝ յոթ փարսախ, ապա ալ-Մուգանիյա՝ վեց փարսախ, ապա Սամոսատ՝ յոթ փարսախ, ապա Հին Մանսուր՝ վեց փարսախ, ապա Մալաթիա՝ տաս փարսախ, ապա Զապետրա՝ հինգ փարսախ, ապա Հադաս՝ չորս փարսախ, ապա Մարաշ՝ հինգ փարսախ, ապա Ամկ Մարաշ, իսկ Ամկ է կոչվում լեռներով շրջապատված ամեն մի դաշտ:

Մալաթիայից Կամախ չորս փարսախ է:

ՋԻԵՐԻ ԿԱՑԱՆՆԵՐԸ (ՍԻՔԱՔ) ՀԱԼԵԲԻՑ ԱՍՈՐԻՔԻ ՍԱՀՄԱՆԱՑԻՆ ՇՐՋԱՆԸ (ԱԼ-ՍՈՒՂՈՒՐ ԱԼ-ՇԱՄԻՑԱ)

ԿՋ 99–101

Հալեբից Կիննասրին յոթ ձիերի կայան է, ապա Անտիոք չորս կայան է, ապա Ալեքսանդրեկ (Իսքանդարիյա) չորս կայան, ապա

Մամեստիա յոթ կայան, իսկ Պիրամոս (Ջայհան) գետը ճեղքում է Մամեստիան, որի անունն է Մարսուբաստիա (Մոպսուեստիա): Մամեստիայից Ադանա երեք կայան է, իսկ Ադանայի անունն է Ադանում և գտնվում է Սայհանի վրա. Ասել է բանաստեղծը.

Ով դու որ ինձանից բաժանված ես Ռումի լեռներով և
Ջառիթափերով և Սարոսի (Սայհան) ծանծաղուտներով
Ճանապարհը կտրող լեռնանցքով, Տիանայի ծերպերով
Հերակլիայով և Հին Սինան բերդով:

Ապա Ադանայից Տարսոն հինգ կայան է, իսկ Տարսոն անունը հունարեն Տարսում է. Ասել է Արու Սաիդը.

Թողել են նրան իրենց ետևում, թաղված Տարսոնի պատնեշներում
Ինչպես թողեցին մի ժամանակ նրա հորը Թուսում:
Ասել է Ֆարաջ իրն Օսման ալ-Միկսամին.
Երանի թե ուղտերն իմ նեին Տարսոնի դաշտը
Մանոթ գետի ափերը
Ուղտերը տանում են գեղանի պարմանուհիներին
Գեղեցիկ են ու սիգամետ
Ու սրտերն են նվաճում:

ՍԱՀՄԱՆԱՑԻՆ ԳՈՏՈՒՑ ՆԵՐՍ ԸՆԿԱԾ ԱՍՈՐԻՔԻ ԱՄՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Անազարբան (Այն Զարբա), Հարունիյան, Քանիսատ ալ-Սաուդան և Տալլ Ջուբայրը [գտնվում են] Տարսոնից ութ մղոնի վրա:

ԴԱՐԲ ԱԼ-ՍԱԼԱՄԱՆ (ԴՐՈՒՆՔ ԿԻԼԻԿԻՈ) ԵՎ ՃԱՆԱՊԱՐՀԸ ԴԵՊԻ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ ԾՈՑԸ

Տարսոնից Ուլլայկ տասներկու մղոն է, ապա Ռահուա և ալ-Ջաուզատ տասներկու մղոն է, ապա ալ-Ջարդակուբ՝ յոթ մղոն, ապա մինչև Պոտանդոն (Բաղանդուն) յոթ մղոն է: Ասել է Մուհամմադ իբն Աբդ ալ-Մալիքը [դիմելով Մուտասիմ խալիֆային].

Բաղանդունի օրը [ամրապնդեցիր քո խալիֆայությունը]

Ինչպես որ ստացել էիր [այդ պատիվը] Բաղանդունի մի այլ օրում:

Ապա մինչև Մուասքար ալ-մալիք (Թագավորի ճամբարը) Լուլուայի ջերմուկի (Հիմմա) վրա և Սաֆսաֆ տաս մղոն է և կհասնես Մուասքար ալ-մալիք, լեռնանցքն անցնելուց և դաշտ դուրս գալուց հետո: Մուասքարից մինչև վադի (հովիտ) Թարկա տասներկու մղոն է, ապա Մանի քսան մղոն է, ապա Հերակլիայի գետը՝ տաս մղոն: Ասել է ալ-Աբբաս իբն ալ-Ահնաֆը.

Հերակլիան անձնատուր եղավ, երբ զարմացած տեսավ Մանր մեքենաները, որոնք բոցավառ նավթ էին նետում:

Ապա մինչև ալ-Լաբն քաղաքը ութ մղոն է, ապա Ռաս ալ-Ղարա (անտառի գլուխ)՝ տասնհինգ մղոն, ապա Մասքանայն՝ տասնվեց մղոն, ապա Այն Բուրդուս՝ տասներկու մղոն, ապա Ահսա գետը՝ տասնութ մղոն, ապա Կոնիայի արվարձանը՝ տասնութ մղոն, ապա Ալամայն՝ տասնհինգ մղոն, ապա Աբրումիամանա՝ քսան մղոն, ապա Վադի ալ-Ջաուզ (Ընկույզի հովիտ)՝ տասներկու մղոն, ապա Ամորիոն՝ տասներկու մղոն:

ՄԻ ԱՅԼ ՃԱՆԱՊԱՐՀ

ԷՋ 102–103

Պոտանդոնից ալ-Քարմ (որթատունկ), ապա ալ-Նուբա, ապա Քաուքաբից աջ գտնվող եկեղեցիները, ապա Վաֆրա, ապա Բալիսա, ապա Մարջ ալ-Ուսկուֆ (եպիսկոպոսի դաշտ), ապա Ֆալուղրի, ապա Կուռքերի (ասնամ) գյուղը, ապա Վադի (հովիտ) ալ-Ռիհ, ապա Նիմիրթի, ապա ալ-Սայդ, ապա Այնու, ապա Մուդուխ, ապա Մախադա (ծանծաղուտ), Ջաուզ (ընկույզ) գյուղը, ապա Ղաթթասին (սուզվողներ), ապա Պատրիկի գյուղը, ապա Նակուլիայի դաշտը, ապա Դանուս, ապա ճանապարհը դեպի Դարաուլիյա (Դորիլիում) և մի ուրիշ ճանապարհ դեպի ձախ՝ Հիսն Բալումին, ապա Կութայա և դեպի ձախ՝ Ռունդակ, ապա Արիդոս նեղուցի վրա, ապա Կոստանդնուպոլսի ծոցը և դա Պոնտոս կոչված ծովն է և գալիս է Խազարաց ծովից:

ԷՋ 105–106

[Կոստանդնուպոլսի] ծոցից այս կողմ տասնմեկ նահանգ (ամալ) կա: Նախ Պափլագոնիա (Աֆլաջունիա) նահանգը, ուր հինգ բերդ կա, ապա՝ Օպտիմատոն (Ուֆթի Մաթի), որը բացատրվում է ականջ ու աչք, ուր երեք բերդ կա և Նիկոմիդիա քաղաքը, որն այսօր ավերակ է: Ապա Օպսիկիոն (Աբսիկ) նահանգը, որի մեջ է Նիկիա քաղաքը և ունի տաս բերդ, իսկ ծովը Նիկիայից ութ մղոնի վրա է: Ունի քաղցր ջրով լիճ, որի երկարությունը տասներկու մղոն է: Լճի մեջ երեք լեռ կա, իսկ քաղաքից մինչև լիճը փոքր դուռ կա և եթե սպառնալիքի տակ լինեն, իրենց երեխաներին հանում են բերդից, նավերով դեպի լիճը տանում, հասցնում են այն լեռները, որ լճում են:

Թրակիա (Տարկասիս) նահանգը, որի մեջ եղած բերդերից է Եփեսոսը (Աֆսիս) Ավասիմ գավառում (ռուստակ) և սա Քաբայրի մարդկանց քաղաքն է, ինչպես նաև՝ չորս բերդեր: Նրանց մեկ[illegible]

արաբերեն գիրք էր կարդացվել, երբ Մասլաման մտել էր Ռումի երկիրը:

Իսկ ալ-Ռակիմի մարդիկ [Քարայրի] գավառի մի փոսի մեջ են Ամորիոնի և Նիկիայի միջև [.....]

ԷՋ 107 – 108

Անատոլիկոն (Նաթլուս) նահանգը, որը նշանակում է արևելյան կողմեր, Ռումի մեծագույն նահանգն է, որի մեջ է Ամորիոն քաղաքը: Սրա աչտարակները քառասունչորս հատ են: [Անատոլիկոնի] բերդերից են ալ-Ալամայնը, Մարջ ալ-Շահմը, Բուդուսը և ալ-Մասքանայնը և երեսուն բերդ, [ինչպես նաև] ալ-Բասնը և ալ-Մասբաթլինը:

Խարսիանոն (Խարսիուն) նահանգը Մալաթիայի լեռնանցքից այն կողմն է, նրանում եղած բերդերն են Խարչանան և չորս այլ բերդեր:

Բուկելլարների (Բուկուլլար) նահանգում կա Անկարա (Անկիրա) քաղաքը, Սամալուն և տասներեք բերդեր:

Նրան հաջորդում է Արմենիակոն (Արմինիակ) նահանգը[11], որի բերդերից են Կողոնիան (Կուլունիյա)[12] և տասնվեց բերդեր:

Ապա Խաղտիք (Խալղիյա)[13] նահանգը, որը սահմանակից է Հայաստանին և նրանում վեց բերդ կա:

Սելևկիա (Սալուկիյա) նահանգը Ասորիքի ծովի կողմից է և [հասնում է] մինչև Տարսոն ալ-Լամիս գետը: Այն կառավարում է լեռնանցքների կառավարիչը և նրանում եղած բերդերից է Սելևկիան և կան այլ տասը բերդեր:

Կապադովկիան սահմանափակվում է Տարսոնի, Ադանայի և Մամեստիայի լեռներով: Նրա ամրացված վայրերից են Կուբրան, Հասինը, Անթիդուն, ալ-Աջրաբը և Ջու-լ-Քիլաան: Այս վերջինը մի վայր է շրջապատված ամրոցներով: Արաբները սրան տվել էին Ջու-լ-Կիլաա (Ամրոցների տիրուհի), որը գրվում էր կ (կաֆ)-ով, իսկ հետո վերածվեց ք (քաֆ)-ի, մինչդեռ իրական անունն է Ջուսաթարուն, որի իմաստն է «աստղերին մոտեցող»: Կան ևս տասնչորս ամրացված վայրեր, որոնցից են Մաթամիրը, Մաջիդան, Բալանսան, Մալանդասան, Կունեհան, Մալակուբիան, Բադալան, Բարնաուան և Սալամունը: Մալակուբիա անունը նշանակում է ջրաղացաքարերի հանք, քանի որ այդ քարերը նետում են նրա լեռներից:

ՌՈՒՄԻ ՊԱՏՐԻԿՆԵՐԻ (ԲԱԹԱՐԻԿԱ) ՄԱՍԻՆ

ԷՋ 109

Ռումի պատրիկները միշտ տասներկուսն են, որոնցից վեցը Կոստանդնուպոլսում են, իսկ մյուսները՝ նահանգներում: Այս վեց պատ-

րիկներն են Ամորիոնի պատրիկը, Անկարայի պատրիկը, Արմինիակուսի (Արմինյակ) պատրիկը, Տարակիայի (Թրակիա) պատրիկը և սա մի նահանգ է, որ գտնվում է Կոստանդնուպոլսի ետևում Բուրջանի (Բուլղարիա) կողմից, Սիկիլիայի (Սիկիլիկիա) պատրիկը, և սա մի մեծ կղզի է և ընդարձակ թագավորություն Իֆրիկիայի դիմացը:

Կուսթանթինիայան (Կոստանդնուպոլիս) Ռումի մայրաքաղաքն է և միաժամանակ նրա ամենամեծ բնակավայրը, որը կոչվում է Հիպպոդրոմ (Բադրում): Թագավորը հոռոմների համար ամենամեծն է և ամենահզորը: Թագավորությունը ժառանգական չէ, ոչ էլ պարտադիր որևէ գիրք (կանոն) ունեն, այլ պարզապես ով հաղթում՝ [իշխում է]: Նրանց մեջ իշխել են տղամարդիկ, կանայք: Թագավորը կոչվում է բասիլի (բասիլևս), նրա զգեստն է ծիրանին (փուրփուր, պորփյուր), որը մետաքսի մի տեսակն է և նրա փայլը մի քիչ սևին է տալիս: Միրանին հագնում է և կարմիր մուճակը կրում միայն թագավորը, իսկ ով փորձի այն կրել, կսպանվի: Ով թագավոր է հայտարարվում, կրում է մի կարմիր մուճակ (հոզաթափ) և մի սև մուճակ:

Այս Հիպպոդրոմ (Բադրում) քաղաքում չորս հարյուր մարդ կա, որ հագնում է կանաչ թիկնոց (թայալիսա), ոսկով հյուսված, և նրանք թագավորի հետ խորհրդակցում են նրա և պատրիկների գործերի չուրջը: Նրանցից մեկը դառնում է Կոստանդնուպոլսի կառավարիչ, մյուսը թագավորի սեննեկապետությունն (հիջաբա) է վերցնում: Սրանք սուր են գործածում Իսմայիլի որդիների (արաբների) դեմ և կոտորում: Հաճախ գերիներին կացիններով կամ քարերով խփել են տալիս և փոի մեջ են նետում, ուր վառված կրակ կա:

Հեծելազորը, որն արքունի դռան է կցված, բաղկացած է չորս հազար ձիավորից և չորս հազար հետևակից:

Թագավորի ճամբարի վրա, թեկուզ նա տեղում լինի, թե հեռացած, չորս դրոշ է լինում և չորս պատրիկներ ձիավոր գնդերով, ամեն մեկի մեջ լինում է տասներկու հազար [ձիավոր], որից վեց հազարը կանոնավոր զորք է, իսկ վեց հազարը՝ ծառաներ (չաջիրդ):

Երբ թագավորը [արշավանքի] է ելնում արաբաց երկրի դեմ, ճամբար է դնում Դորիկիումում (Դարաուլիյա), Կոստանդնուպոլսից չորս օր հեռավորության վրա: Սա արաբների ու հոռոմների հավաքավայրն է, մի կանաչ, բուրումնավետ դաշտ, ուր հոսում է մի վճիտ գետ, լայնությունը մոտավորապես երեսուն կանգուն (զիրա), բխում է ակունքներից և թափվում Սակարիա (Սաղարի) գետը[14], իսկ Սակարիան թափվում է Մեծ ծովը, Կոստանդնուպոլսի ետևի կողմում:

էջ 111

Ռումի հարկը (խարաջ) միահա (ըստ տարածության) է, ամեն մի

մոդի ցորենին՝ տարեկան երեք դինար: Ամեն մի մոդի երեք մաքքուք (ցորենի չափ) է: Բերքի մեկ տասանորդը վերցվում է և տարվում չեմմարաններ զորքի համար:

Հրեաներից ու զրադաշտականներից տարեկան մեկ դինար է վերցվում: Ամեն մի տնից, ուր կրակ է վառվում տարեկան վեց դիրհեմ է վերցվում: Հոռոմների երկրի պտուղները դաշտերում, թե լեռների վրա հասնում են Այլուլ (սեպտեմբեր) ամսին:

[Ռազմական] դիվանում գրանցված է հարյուր քսան հազար մարդ, որից ամեն տաս հազարի վրա դրված է մի պատրիկ, ամեն մի պատրիկի հետ մի տուրմարխ[15] (Թուրմախան), ամեն տուրմարխ հինգ հազար մարդու վրա է: Տուրմարխի հետ կա հինգ դրունգար[16] (Թուրունջարին), ամեն մի դրունգար հազար հոգու վրա է: Դրունգարի հետ կան հինգ կոմսեր (կամամիսա), իսկ ամեն մի կոմս երկու հարյուրի վրա է: Կոմսի հետ լինում է հինգ հեկատոնտարքոս (կունթարխին), իսկ ամեն հեկատոնտարքոսի հետ՝ չորս դեկարքոս (դակարխ), ամեն դեկարքոս չորս հոգու վրա է:

Ռոճիկը (աթա) տարբեր չափերի է լինում, մեծ մասամբ քառասուն լիտր (ռաթլ) ոսկի, կամ երեսունվեց լիտր, կամ քսանչորս լիտր, կամ տասներկու, կամ վեց, կամ մեկ լիտր: Ռազմիկների (զորքի) ռոճիկը տասներկու և տասներկու դինարի միջև է և դա սահմանված է ամեն տասնութ և տասներկու դինարի միջև է և դա սահմանված է ամեն տարվա համար: Սակայն նրանց տրվում է ամեն երեք տարին մեկ անգամ, նույնիսկ չորս տարին, կամ հինգ և նույնիսկ վեց տարին մեկ միանվագ ռոճիկ:

Պատրիկներից ամենամեծը թագավորի փոխանորդն (խալիֆա) է նրա վեզիրը, ապա լոգոթետը[17] (լուգուսիթ)՝ հարկային դիվանի (դիվան ալ-խարաջ) պետը, գրագրությունների առաքման պետը, սեննեկապետը (հաջիբ) և փոստի (բարիդ) դիվանի պետը, ապա դատավորը, պահակազորքի պետը և [պալատի] վերահսկողը (մուրակկիբ):

ՀՅՈՒՍԻՍԻ (ՋԱՐԲԻ) ՄԱՍԻՆ

էջ 118–125

Ջարբին հյուսիսային երկիրն է և թագավորության մեկ քաոորդը: Պարսից [թագավորության] ժամանակ Հյուսիսի սպահպետը կոչվում էր Ատրպատականի (Ադարբադգան) սպահպետ: Այս երկրամասում են Հայաստանը, Ատրպատականը, Ռեյը, Դմբավանդը (Դիմավանդ), Շալանբան. Ասել է Վահրամ Գոռը (Բահրամ Ջուր).

Ես Շալանբայի առյուծն եմ
Վագրն եմ, որ խոյանում է [կռվի]:

Նրանում (Ջարբիում) են նաև Թաբարիստանը, Ռույանը, Ամոլը,

Սարիան, Շալուչը, ալ-Լարիզան, ալ-Շիրզը, Թամիսը, Դիհիստանը, ալ-Քալաբը, Գեղանը (Ջիլան), Բաղաչվարջարը, իսկ Թաբարիստանի, Ջիլանի և Բաղաչվարջարի թագավորը կոչվում է Խորասանի Ջիլ Ջիլանը: Ասել է Մուհամմադ իբն Արդ ալ-Մալիքը.

Պճնել են փղին գույներով, ըստ սովորականի
Խորասանի Ջիլ Ջիլանին տանելու:
Փղի անդամները ներկում են միայն
Նշանավոր մարդկանց տանելու:

Այս երկրամասում են [նաև] ալ-Բաբրը, ալ-Թայլասանը, ալ-Խազարը, ալ-Լանը և ալ-Սակալիբը:

ՃԱՆԱՊԱՐՀԸ ԴԵՊԻ ԱՏՐՊԱՏԱԿԱՆ ՈՒ ՀԱՑԱՍՏԱՆ

Խորասանի ճանապարհից պետք է թևքվել Սինն Սումայրայի մոտ: Սինն Սումայրայից մինչև Դինավար հինգ փարսախ (երկու սիքքա՝ ձիերի կայան), Դինավարից Զինջան (Զանջան)՝ քսանինը ձիերի կայան (սիքքա), ապա Մարաղա՝ տասնմեկ կայան, ապա Միանիջ (Մայանիջ)՝ երկու կայան, ապա Արդաբիլ՝ տասնմեկ, ապա Վարդանակերտ (Վարսան), որը Ատրպատականի վերջին գավառն է՝ տասնմեկ կայան:

ԱՏՐՊԱՏԱԿԱՆ ՆԱՀԱՆԳԻ ՔԱՂԱՔՆԵՐՆ ՈՒ ԳԱՎԱՌՆԵՐԸ

Մարաղան, Միանիջը, Արդաբիլը, Վարդանակերտը, Սիսարը, Բարգանը, Սաբուրխաստը և Դավրևժը (Տարրիզ) պատկանում են Մուհամմադ իբն Ռավվադ ալ-Ազդիին, Մարանդը՝ Իբն ալ-Բախին, Խոյը, Քուլսարան, Մուղանը՝ Շաքլային, Բարդանդը, Գանձակը (Ջանզա), որը Պարվեզի (Արարուիզ) քաղաքն է և Ջարրավանը ու Նարիզը Ալի իբն Մուռային են պատկանում: Ուրմիան Զրադաչտի (Զարադուշտ), ինչպես նաև Սալմաստն ու Շիզը: Այնտեղ կա Ատրվշնասպի (Ադարգուշնաս) կրակատունը, որը մեծ հարգանք է վայելում զրադաչտականների (մաջուս) մոտ: Ամեն մի նոր թագավոր Տիզբոնից ոտքով նրան այցելության էր գնում: [Ատրպատականում են նաև] Բաջարուանը, Սալակ գավառը, Սինդաբայա գավառը, ալ-Բադդը, Ուրմի գավառը, Բալուանքիրջը, Սարատի և Դասքիավարի գավառը և Մայանհիրջ գավառը:

ՃԱՆԱՊԱՐՀԸ ԴԻՆԱՎԱՐԻՑ ԲԱՐԶԱՆԴ

Դինավարից Խաբարջան՝ յոթ փարսախ, ապա Տալլ Վան՝ վեց փարսախ, ապա Սիսար՝ յոթ փարսախ, ապա Անդարաբ՝ չորս փարսախ, ապա Փայտակարան (Բայլական)՝ հինգ փարսախ, ապա Բարզա՝ վեց փարսախ, ապա Սաբուրխաստ՝ ութ փարսախ, ապա Մարաղա՝ յոթ փարսախ, ապա Դախաուական՝ տասնմեկ փարսախ, ապա Դավրեժ՝ ինը փարսախ, ապա Մարանդ՝ տաս փարսախ, ապա ալ-Խան՝ չորս փարսախ, ապա Խոյ՝ վեց փարսախ:

Մարաղայից Քուրսարա՝ տաս փարսախ, ապա Սարատ՝ տաս փարսախ, ապա ալ-Սիր՝ հինգ փարսախ, ապա Արդաբիլ՝ հինգ փարսախ, ապա Մուղան՝ տաս փարսախ:

Արդաբիլից Խուչչ՝ ութ փարսախ, ապա Բարզանդ՝ վեց փարսախ: Բարզանդն ավերակ էր և Աֆշինը վերակառուցեց որպես քաղաք և այնտեղ հաստատվեց: Բարզանդից Սաղրասպ, ուր Աֆշինի առաջին խրամատը կա՝ երկու փարսախ, ապա Զահրքաչ ուր նրա երկրորդ խրամատը կա՝ երկու փարսախ, ապա Դիվ Ռուդ, ուր նրա երրորդ խրամատը կա՝ երկու փարսախ, ապա Բաբելի քաղաք Բադդ[18] մեկ փարսախ. Ասել է Հուսայն իբն ալ-Դահհաքը.

Բադդի բնակիչներից չճողեց ոչ ոքի
Բացի Իրամի նմանութեամբ նկարներից:

Եվ ճանապարհը Բարզանդից Բաղասականի և Վարդանակերտի դաշտը, որն Ատրպատականի վերջին չրջանն է՝ տասներկու փարսախ:

Մարաղայից Գանձակ՝ վեց փարսախ է, ապա Մուսա արաղ՝ հինգ փարսախ, ապա Բարզա՝ չորս փարսախ, ապա Ջաբրավան՝ ութ փարսախ, ապա Նարիզ՝ չորս փարսախ, ապա Ուրմիա՝ տասնչորս փարսախ, ապա Սալմաստ ցամաքով և Ուրմիա լճով՝ վեց փարսախ:

Ատրպատականի հարկը (խարաջ) երկու միլիոն դիրհեմ է:

ՃԱՆԱՊԱՐՀԸ, ՈՐՈՎ ԸՆԹԱՑԵԼ Է ՄՈՒՀԱՄՄԱԴ ԻԲՆ ՀՈՒՄԱՑԴԸ

Գնաց ցամաքով, երբ հավաքել էր իր զորքի հրամանատարներին, ձիերով Մարաղայից ընթացավ Բարզա, ապա Սիսար, ապա Շիզ, որը չորս փարսախ հեռավորության ունի Դինավարից, ապա՝ դեպի Դինավար:

ՃԱՆԱՊԱՐՀԸ ԴԵՊԻ ՀԱՑԱՍՏԱՆ

Վարդանակերտից Պարտավ ութ ձիերի կայան (սիքքա) է, ապա դեպի Հայաստանի Մանսուրան չորս կայան է: Պարտավից Տիղիս՝ տաս կայան, Պարտավից Դարբանդ՝ տասնհինգ կայան, Պարտավից Դվին՝ յոթ կայան:

Մարանդից Վադի[19] տաս փարսախ է, ապա Նախճավան՝ տաս

փարսախ, ապա Դվին՝ քսան փարսախ:

Վարդանակերտից Դիրման երեք փարսախ է, ապա Փայտակարան՝ ինը փարսախ, ապա Պարտավ՝ տասնչորս փարսախ և Պարտավից ալ-Բադդ՝ երեսուն փարսախ:

Առաջին Հայաստանն (Արմինիա) է՝ ալ-Սիսաջան (Սիսական), Առան, Տփղիս, Պարտավ, Փայտակարան (Բայլական), Կապաղակ և Շարուան:

Երկրորդ Հայաստանն է՝ Վիրք, Սուղդաբիլ, Պերոզապատ (Ֆիրուզ Կուբադ) և ալ-Լազք (լեզգիներ):

Երրորդ Հայաստանն է՝ Վասպուրական, Դվին, Շիրակ Տայք (Սիրաջ Թայր), Բագրևանդ և Նախճավան:

Չորրորդ Հայաստանն է՝ Շիմշաթ, Խլաթ, Կարնո քաղաքը (Կալիկալա), Արճեշ և Ապահունիք (Բահունայս, Բաջունայս):

Առան, Վիրք և Սիսական նահանգները խազարաց թագավորության մեջ էին, իսկ Դվին, Նախճավան, Շիրակ, Բագրևանդ, Խլաթ և Ապահունիս նահանգները՝ Հոռոմոց թագավորության մեջ և պարսիկները նվաճեցին այն մինչև Շարուանի հողը, որտեղ կա Մովսեսի ժայռը և նրա մեջ Այն (ակունք) ալ-Հայուան:

Շիմշաթում կա Սաֆուան իբն Մուաթթալ ալ-Սուլամիի՝ Ալլահի առաքյալի բարեկամի գերեզմանը: Նրա (Շիմշաթի) և Հիսն Զիյադի (Խարբերդ) միջև փոքր հեռավորություն կա: Նրա վրա կա մի ծառ, որի էությունը ոչ ոք չգիտի: Նրա պտուղը նշի նման է և կեղևով է ուտվում ու մեղրից քաղցր է:

Կավադը (Կուբադ) կառուցեց Փայտակարան (Բայլական), Պարտավ և Կապաղակ քաղաքները, ինչպես նաև Սուղդ ալ-Լաբինը (աղյուսե պատնեշ): Անուշիրուանը կառուցեց Շապորան (Շարուրան), Քարքարա և Դարբանդ քաղաքները, Իսկ Դարբանդը բաղկացած է պալատներից (ամրոցներ), որոնք լեռնային ճանապարհի վրա են կառուցված և երեք հարյուր վաթսուն հատ են: Նա կառուցեց Բալանջարը և Սամանդարը: Վրաց երկրում կառուցեց Սուղդարիլ քաղաքը և այնտեղ ևս իր պալատը կառուցեց ու կոչեց Պերոզապատի դուռ (Բաբ Ֆիրուզ Կուբադ):

Հայաստանում են նաև Խոյը, Մանարքը (Սաննարիյա), Աղրակը (ալ-Բակ), Քիսալը և Աբխազը, Գարդման (Ջարդաման) բերդը, Խայդանը, Շաքեն (Շաքի) և Բար քաղաքը:

ԱԲՈՒԱԲԸ (ԴԱՐԲԱՆԴ)

Սա բաղկացած է Կովկաս (Կաբկ) լեռներում [եղած] կիրճերի անցքերից: Նրանում (Կովկասում) կան բերդեր, ինչպես Սուլի դուռը (բար), Ալանաց (ալ-Լան) դուռը, Շապորպանի դուռը, Լազիկայի դուռը, Բաբիկայի դուռը, Սամցխեի (Սամսախի) դուռը, Սարիրի (գահի) տիրոջ դուռը, Ֆիլան շահի դուռը, Քարունանի դուռը, Թաբարսարան-շահի դուռը, Լիրանշահի դուռը, Լիրանշահի դուռը, Անուշիրուանի դուռը: Սամանդար քաղաքը Դարբանդից այն կողմ է, իսկ ինչ նրանից հետո է գալիս, խազարների ձեռքում է: Մովսեսի (Մարգարեի) գրույցներում ասվում է. «Հիշում ես, որ ապաստան գտանք ժայռերում, իսկ ես մոռացել էի մեծ ձուկը, որը կենդանացել էր»: Ժայռը Շարուանի ժայռն է, ծովը Գեղանի (Գիլան) ծովն է, իսկ Գյուղը՝ Բաջարուանն է: [Ասված է նաև]. «մինչև որ նրանք պատահել էին մի տղայի (դուլամ) և սպանել նրան Խայզան գյուղում» (Ղուրան, ԺԸ, 62):

Հայաստանի (Արմինիա) հարկը չորս միլիոն դիրհեմ է:

ՃԱՆԱՊԱՐՀԸ ՎՐԿԱՆԻ (ՋՈՒՐՋԱՆ) ԵՎ ԽԱԶԱՐՆԵՐԻ ՔԱՂԱՔ ԽԱՄԼԻՋԻ ՄԻՋԵՎ

Սա հյուսիսային [քաղաք] է, ուստի նրան հիշեցի այս տեղում: Վրկանից [ճանապարհը] գնում է Խամլիջ[20], որը գտնվում է սլավոնների երկրից եկող գետի ծայրին և սա թափվում է Վրկանա ծովը, եթե քամին բարեհաջող է՝ ութ օրում: Խազարների քաղաքներն են Խամլիջը, Բալանջարը և ալ-Բայդան (սպիտակ): Ասել է Բուհտուրին.

Ազնվականների տիտղոսների վրա, որ Իրաքում էր ստացել

Ավելացրեց այն, որ ստացել էր Խամլիջում կամ Բալանջարում:

Բաբից (Դարբանդ) դուրս գտնվում են Սուրի թագավորը, Լազքի թագավորը, Ալանաց թագավորը, Ֆիլանի թագավորը, Մասքթաց (Մասկաթ) թագավորը, Սարիրի տերը և Սամանդար քաղաքը:

Վերջացավ Ջարրիի մասին խոսքը, որը Հյուսիսային երկիրն է:

ՀԱՐԱՎԸ (ՏԱՅՄԱՆ)

էջ 125

Տայմանը հարավային երկրներն է և կազմում է թագավորության մեկ քառորդը: Սպահպետը, որն իր ժամանակին կառավարում էր, կրում էր Պերոզ սպահպետ (Ֆիրուզ խարահբադ) տիտղոսը:

Գլխահարկը, որ վճարում էին ոչ մահմեդականները բաղդադում, հասնում էր հարյուր երեսուն հազար դիրհեմի, իսկ չուկաների արտադրանքի, ջրաղացների և փողերանոցների [հարկը] հասնում էր մեկ միլիոն հինգ հարյուր հազարի:

[.....]

ԼՂ 153

Վերջացավ Հարավի (Տայման) նկարագրությունը:

ՓՈՍՏԻ ՁԻԵՐԻ ԿԱՑԱՆՆԵՐԸ (ՍԻՓԱՓ) ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Կա ինը հարյուր երևսուն փոստի ձիերի կայան (սիքքա), իսկ անասունների ծախսը, նրանց գները և փոստի կայանների պետերի ու սուրհանդակների վարձատրությունը տարեկան հարյուր հիսունինը հազար հարյուր դինար է:

ՌԱԴԱՆԻՅԱ ՀՐԵԱ ՎԱՃԱՌԱԿԱՆՆԵՐԻ ՃԱՆԱՊԱՐՀԸ

ԼՂ 153–155

Սրանք խոսում են արաբերեն, պարսկերեն, հունարեն (հռոմերեն), ֆրանսերեն (ֆրանկերեն), անդալուսերեն և սլավոներեն: Ճանապարհորդում են արևելյան կողմերից արևմտյան կողմերը և արևմուտքից՝ արևելք [Ին՝ ցամաքով, [Ին՝ ծովի վրա: Արևմուտքից (Մաղրիբ) բերում են ծառաներ (ստրուկներ), աղախիններ, տղաներ (դուլամ), մետաքսե դիպակ (դիբաջ), նապաստակի մորթի, մուշտակ, սամույր (սամմուր) և սրեր: Նավ են նստում Ֆրանկստանից (Ֆիրանջա)՝ Արևմտյան ծովի վրա, իջնում են Ֆարմայում[21] և իրենց ապրանքները [անասունների] մեջքի վրա բեռցրած փոխադրում են [Կարմիր ծովի] նավահանգիստը՝ [Կուլզում][22], իսկ այս երկուսի միջև քսան փարսախ է: Ապա նավարկում են Կուլզումից Արևելյան ծովի վրա՝ դեպի Ջար[23] և Ջիդդա (Ջուդդա), հետո ընթանում են դեպի Սինդ, Հնդկաստան և Չինաստան:*

Իսկ Չինաստանից բերում են մուշկ (միսք), հալվե (ուդ, ալոյն), քաֆուր (քամֆորա), դարսենի (դարչին) և այլ բաներ, որ ընդհանրապես այնտեղից են բերվում, վերադառնում են Կուլզում, ապա կրում տանում են Ֆարմա և նավարկում Արևմտյան ծովի վրա: Երբեմն չուռ են գալիս դեպի Կոստանդնուպոլիս և իրենց ապրանքները վաճառում հռոմեներին, կամ էլ գնում Ֆրանկների թագավորությունը և այնտեղ վաճառում: Իսկ երբ կամենում են, նորից այլ ապրանքներ Ֆրանկստանից տանում են Արևմտյան ծովի վրա նավարկելով և իջնում Անտիոք, ապա ցամաքով երեք կայան (մարհալա)[24] անցնում և հասնում Ջաբիա, ապա Եփրատի վրա նավարկում են մինչև Բաղդադ, հետո Տիգրիսի վրա մինչև Ուբուլլա և ապա այնտեղից գնում

* *Խոսքը վերաբերում է Իբերական թերակղզում խոսված ժողովրդական լատիներենին, որից հետագայում առաջացավ իսպաներենը:*

Օման, Սինդ, Հնդկաստան ու Չինաստան: Այս բոլորը իրար հետ չաղկապված է:

ՌՈՒՍ ՎԱՃԱՌԱԿԱՆՆԵՐԻ ՈՒՂԻՆ

Սրանք սլավոնների մի ցեղ են: Նրանք տանում են նապաստակի մորթի, սև աղվեսի մորթի և սրեր Սլավոնների երկրի հեռավոր ծայրերից մինչև Ռումի (Հռոմոց) ծովը: Ռումի (Բյուզանդիայի) տերը նրանցից տասանորդ է վերցնում: Երբ գնում են Տանիսի (Տանախ, Դոն)՝ սլավոնների գետի վրայով, անցնում են Խամլիջով, որը խազարաց քաղաքն է, սրա տերը նույնպես տասանորդ է վերցնում: Ապա գնում են Վրկանա ծով և իրենց ցանկացած ափը դուրս են գալիս: Այս ծովի տրամագիծը հինգ հարյուր փարսախ է: Երբեմն իրենց ապրանքները Վրկանից ուղտերին բարձած տանում են Բաղդադ: Նրանց համար թարգմանում են սլավոն ծառաները և քրիստոնյա ձևանալով գլխահարկ են վճարում:

[ՀՐԵԱՆԵՐԻ] ՑԱՄԱՔԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀԸ

Նրանք, երբ ճանապարհ են ընկնում, սկսում են Իսպանիայից և կամ Ֆրանկստանից (Ֆրանսիայից), ապա անցնում [Մարոկկոյի] Հեռավոր Սուսը և հասնում Տանժեր (Թանջա), ապա Իֆրիկիա (Թունիս), Եգիպտոս, Ռամլա, Դամասկոս, Քուֆա, Բաղդադ, Բասրա, Ահուազ, Ֆարս, Քիրման, Սինդ, Հնդկաստան, ապա Չինաստան: Երբեմն վերցնում են Հռոմից (Ռումիյա) վերևի ճանապարհը դեպի սլավոնների երկիրը, ապա հասնում խազարաց քաղաք Խամլիջ, հետո Վրկանա ծովով գալիս են Բալխ և Մավարաննահր, ապա Տուղուզղուրի յուրթը (Ուրուտ) և Չինաստան:

ԲՆԱԿԵԼԻ (ՇԵՆ) ԵՐԿԻՐԸ ԲԱԺԱՆՎԱԾ Է ՉՈՐՍ ՄԱՍԻ

Նախ՝ Եվրոպա (Արուֆա), որի մեջ են Իսպանիան (Անդալուս), Սլավոնները (Սակալիբ), Հռոմները (Ռում), Ֆրանկները (Ֆիրանջա) և Տանժերից (Թանջա) մինչև Եգիպտոսի սահմանները:

Ապա Լիբիա (Լուբիա), որի մեջ են Եգիպտոսը (Միսր), Կուլզումը, Հաբեշստանը (Հաբաշա), բերբերները և նրանցից այն կողմ ու Հարավային ծովը: Այս երկրներում չկա ցամաքային խոզ, եղնիկ, ավանակ և այծ:

Եթովպիա (Խուրուֆիա), որի մեջ են Տիհաման, Եմենը (Յաման), Սինդը, Հնդկաստանը (Հինդ) և Չինաստանը (Սին):

Եվ Սկիթիա (Ասկուտիա), որի մեջ են Հայաստանը, Խորասանը, Թուրքերը և խազարները:

ԳՈԳԻ (ՅԱՋՈՒՋ) ԵՎ ՄԱԳՈԳԻ (ՄԱՋՈՒՋ) ԱՄԲԱՐՏԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Ինձ պատմել է Թարգման Սալլամը, թե Վասիկ Բիլլահ [խալիֆան] երբ երազում տեսավ, որ երկկոտոշավորի (Ալեքսանդր Մակեդոնացու), մեր և Գոգի ու Մագոգի միջև կառուցած ամբարտակը փլվել է, պահանջեց մեկին, որպեսզի այնտեղ ուղարկի ստույգ լուրեր բերելու: Ասել է Աչնասը [խալիֆային], այստեղ ուրիշ հարմար անձ չկա, բացի Թարգման Սալլամից, որը երեսուն լեզվով է խոսում: Պատմել է [Թարգմանը], ինձ կանչեց Վասիկը և ասաց՝ կամենում եմ, որ գնաս ամբարտակի մոտ և ստուգես ու ինձ լուրեր բերես: Նա ինձ կցեց հիսուն հոգու, երիտասարդ և ուժեղ, հատկացրեց հինգ հազար դինար և ինձ, որպես հատուցում, տվեց տաս հազար դիրհեմ, իսկ հիսուն մարդուց ամեն մեկին հրամայեց տալ հազար դիրհեմ և մեկ տարվա ապրուստ: Մարդկանց համար պատրաստել տվեց թաղիքե գլխարկներ կաշիով ծածկված: Նրանց (ձիերի) համար պատրաստվեցին մուշտակե լանջափոկեր (թամբի փոկեր) և փայտե ասպանդակներ: Ինձ տվեց երկու հարյուր ջորի՝ կրելու համար ուտեստեղենը և ջուրը:

Սամառայից դուրս եկանք ու Վասիկի նամակով ներկայացանք Հայաստանի տեր Իսհակ իբն Իսմաիլին[25], որը Տփղիսում էր: Իսհակը մեր մասին գրեց Սարիրի տիրոջը, իսկ Սարիրի տերը գրեց Ալանաց թագավորին, Ալանաց թագավորը գրեց Ֆիլան չահին, իսկ Ֆիլան չահը գրեց Խազարաց թագավոր Թարխանին: Խազարաց թագավորի մոտ մնացինք մեկ օր և մեկ գիշեր: Նա մեզ հետ ուղարկեց հինգ ուղեցույցների:

Նրանից բաժանվելուց հետո քսանվեց օր գնացինք, մինչև որ հասանք մի սև հողի՝ լի գարշահոտությամբ: Սակայն մենք նախապես քացախ էին պատրաստել, որպեսզի գարշելի հոտը չառնելու համար հոտոտենք: Այսպես քայլեցինք տաս օր: Ապա հասանք ավերակ քաղաքներ և քսան օր քայլելուց հետո հարցրեցինք այդ քաղաքների վիճակի մասին: Մեզ տեղեկացրին, որ դրանք այն քաղաքներն են, ուր Գոգն ու Մագոգը մտել ու կործանել էին:

Ապա գնացինք բերդերը, այն լեռան մոտ, որի կիրճերից մեկում կար ամբարտակը: Այդ բերդերում ապրում էին մարդիկ, որ խոսում էին արաբերեն ու պարսկերեն, մահմեդականներ էին, որոնք կարդում էին Ղուրանը, ունեին դպրոցներ ու մզկիթներ: Հարցրեցին մեզ, թե որտեղից ենք: Հայտնեցինք թե հավատացելոց իշխանի դեսպաններն ենք: Սկսեցին զարմանալ ու ասել՝ հավատացելոց իշխա՞ն: Ասացինք՝

այո: Հարցրեցին՝ ձե՞ր է, թե երիտասարդ: Ասացինք՝ երիտասարդ և նրանք զարմանալով հարցրեցին՝ որտե՞ղ է լինում: Ասացինք՝ Իրաքում, այն քաղաքում, որը կոչվում է Սամառա: Ասացին՝ բոլորովին չենք լսել: [.....]:

Վերադարձանք Սամառա և նս մտա Վասիկ [խալիֆայի] մոտ ու տեղեկացրի պատմությունը [թե կանգուն է ամբարտակը] և ցույց տվեցի այն երկաթի կտորը, որ պոկել էի [բերդի] դռնից: Նա փառք տվեց Ալլահին, հրամայեց նվերներ տալ և բաշխեց ամեն մարդու հազար դինար: Ամբարտակը հասել էինք տասնվեց ամսում և այնտեղից վերադարձել տասներկու ամսից ու մի քանի օրից:

ԼԵՌՆԵՐԻ ՀՐԱՇԱԼԻՔՆԵՐԻՑ

էջ 172-173

Մեքքայի ու Մադինայի միջև գտնվող Արջ լեռը (լեռնաշղթան) հասնում է Ասորիք, մինչև որ կցվում է Լիբանանին Եմեսայի կողմից, իսկ Սանիրին՝ Դամասկոսի կողմից: Ապա անցնում է և միանում Անտիոքին ու Մամեստիայի լեռներին, որոնք կոչվում են ալ-Լուքքամ, հետո կցվում է Մալաթիայի, Շիմշաթի ու Կարնո քաղաքի լեռներին՝ մինչև Խազարաց ծովը, որի վրա է Բաբ ալ-Աբուաբը (Դարբանդ) և այստեղ կոչվում է Կովկաս (Կարկ):

ԳԼՈՒԽ ԳԵՏԵՐԻ ԱԿՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

էջ 173-175

Եփրատի ակունքը Կարնո քաղաքի մոտից է[26], անցնում է Ռումի երկրով և սնվում է չատ աղբյուրներից: Նրա մեջ է թափվում Արածանին (Արսանաս)՝ Շիմշաթի գետը: Նա հասնում է Կամախ և Մալաթիայից երկու մղոն հեռավորության վրա հոսելով հասնում է Ջաբալատա և ապա՝ Սամոսատ: Այստեղից տանում է նավերը և լաստերը ու հասնում Սավադ (Ստորին Միջագետք): Նրանից գետեր են ճյուղավորվում Բաղդադի Սավադում (սևահողում) և թափվում Տիգրիս: Նրա մի մասն անցնում է դեպի Քուֆա, ճեղքում է Սավադը, ապա թափվում Տիգրիս Մադաինից (Տիզրոն) ներքև:

Տիգրիսի ակունքը Ամիդի լեռներից է և անցնում է Սալսալայի լեռներից[27] և սնվում Հայաստանի կողմերից եկող բազում աղբյուրներից: Ապա անցնում է Բալադ և այնտեղից տանում բեռնավորված նավերն ու լաստերը: Մնվում է երկու Զաբերից, Նահրավանից և երկու Սարատներից և թափվում Բաթահիի (ճահճուտ) մեջ, ապա

թափվում է Ուրուլլայի Տիգրիսը և վերջապես Արևելյան ծովը[28]:

Հայաստանի գետ Արաքսի (ալ-Ռաս) ակունքը Կարնո քաղաքում է, անցնում է Առանով և նրա մեջ թափվում է Առան գետը[29], ապա անցնում է Վարդանակերտով, մինչև որ հասնում է երկու ջրերի (ծովերի)՝ [Արաքսի ու Կուրի] միախառնման վայրին, որը հիշել է Ալլահը: Այստեղ միանում են այն (Արաքսը) և Կուրը և երկուսի միջև Փայտակարան (Բայլական) քաղաքը կա, ապա միացած անցնում են, մինչև որ թափվեն Վրկանա ծովը:

Երկու Զաբերի ակունքները Հայաստանի լեռներում են և թափվում են Տիգրիսի մեջ: Մեծ Զաբը թափվում է Հադիսայի մոտ, իսկ Փոքրը՝ Սինի մոտ: Ասել է Իրն Մուֆարրիղը.

Նա, որ ապրել էր իր խղճին դավաճանելով
Մեռավ Ալլահից սպանված ստրուկի նման Զաբում:

Նահրաբանի[30] ակունքը Հայաստանի լեռներում է, անցնում է Բաբ Սալվայի մոտով և այնտեղ կոչվում է Տամառա, անվում է Կավաթիլից և երբ հասնում է Բաջիսրա, կոչվում է ալ-Նահրավան: Տիգրիս է թափվում Զարրուլից ներքև:

էջ 178

Սարախսի գետերի ջրերի աղբյուրը ակունքներից է և Նիչապուրի, Ռեյի ու Իրաքի գետերը, մինչև անապատի սահմանը (Կաղիսիյայից այն կողմ մեկ կայան) հոսում են արևմուտքից արևելք, ինչպես Հուլուանի գետը, Արդաբիլի գետը, Դվինի գետը[31] և Նահրավան գետը, Տիգրիսն ու Եփրատը և բոլոր նրանց վտակները:

ԳԻՐՔ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՈՒ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ (ՔԻՏԱԲ ԱԼ-ՄԱՍԱԼԻՔ ՈՒԱ ԱԼ-ՄԱՄԱԼԻՔ)

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

[1] ... Կիբլա – Կիբլան այն ուղղությունն է, դեպի ուր դեմքով պիտի ուղղվի հավատացյալ մահմեդականը աղոթքի, կամ արարողությունների ժամանակ: Որտեղ էլ որ նա գտնվի պետք է ուղղվի դեպի Մեքքան, ավելի ճիշտ՝ դեպի Քաաբան: (Kibla, A. J. Wensinck, D. A. King, EOI, CD-ROM, (V: 81b)):

[2] Հավատացելոց իչխան – Իչխան հավատացելոց, տե՛ս Աբու Յուսուֆ, ծնթգր. 7:

[3] Ղոնուց (Կանոպուս համաստեղություն, Սուհայլ) – երկնքի երկրորդ (Սիրիուսից հետո) պայծառ աստղը (-0, 75 աստղային մեծության): Լուսատվությամբ Արեգակին գերազանցում է 7800 անգամ: Արեգակից գտնվում է 160 պարսեկ հեռավորության վրա: (Հայկ. սովետ. հանրագիտարան, հ. 5, էջ 241):

[4] Տասներկու հաղար կանգուն – Կանգունը երկարության չափ է, որի միջին չափը հավասար է 54, 04 սմ-ի, թեև ըստ երկրամասի ու դարաշրջանի այն կարող էր լինել և ավելի պակաս: Հիմք ընդունելով վերոհիշյալ չափը փարսախը կկազմի չուրջ 6 կմ: (Хинц, Меры и веса, стр. 64-65):

[5] Մեծ ծովը – Թերևս նկատի ունի Համաշխարհային օվկիանոսը:

[6] Քաաբա – «Քաաբա» բառը նշանակում է խորանարդ: Այսպես է կոչվում իսլամի գլխավոր սրբավայրը, դեպի որն ուղղվում են մահմեդականները աղոթքի ժամանակ (կիբլա): Մահմեդականի հիմնական պարտականություններից է ամենամյա ուխտագնացությունը դեպի Քաաբա: Քաաբան գտնվում է Մեքքայի գլխավոր մզկիթի կենտրոնում և քարե մի չինություն է, որն ունի 15 մ բարձրություն և 12x10 մ-ի վրա հիմք: Այս չինության արևելյան անկյունում, գետնից 1, 5 մ բարձրության վրա արծաթե չրջանակի մեջ գետեղված է հիմնական պաշտամունքի առարկան՝ «սև քարը», որը համարվում է որ Ալլահը ուղարկել է մարդկանց: Ենթադրվում է, որ այս քարը մետեորիտ է: (Ислам, энц. словарь, стр. 123):

[7] Ալ-Մանսուրա – Խալիֆայության կազմում գտնվող Սինդ նահանգի գլխավոր քաղաքը, որը հիմնադրեց Ամր իբն Մուհամմադ իրն ալ-Կասիմը 738 թվականին: Այն գտնվում էր ժամանակակից Հայդարարադ քաղաքից 47 մղոն դեպի հյուսիս-արևելք: (al-Mansura, Y. Friedmann, EOI, CD-ROM, (VI: 439b)):

[8] Սև քարին – Նկատի ունի նույն Քաաբան: Տե՛ս ծնթգր. 5:

[9] Խարլուխի թագավոր – Խարլուխը, կամ Կաղլուկը թյուրքական ցեղերի խումբ էր, որ բնակվում էր Միջին Ասիայում: Սրանց մասին առաջինը հիշատակում են չինական աղբյուրները, հաղորդելով 640-650-ական թթ. մասին: Այդ ժամանակ նրանք բնակվում էին Իրտիշ գետի վերին հոսանքներում: Այնուհետև՝ 8-րդ դարի սկզբին, նրանք տեղաչարժվեցին դեպի արևմուտք, դեպի Միջին Ասիա: Այդ ժամանակվանից հետո է, որ նրանց մասին հաղորդում են արաբ պատմիչները: (Karluk, C. E. Bosworth EOI, CD-ROM, (IV: 658a)):

[10] Մավերաննահր – Մա վարա ալ-նահր, կամ Անդրգետյան նահանգ, այսինքն Ամու Դարիա (Ջայհան, Oxus) գետից այն կողմ գտնվող միջինասիական նահանգները (Transoxiana): Խորասանից մտնելով այս չրջանները, արաբները աստիճանաբար (մինչև Ը դարի կեսերը), նվաճեցին իրանական ժողովուրդներով բնակեցված այս

երկիրը: Այստեղ, առաջին հերթին պետք է նչել Սուղդը (Սոգդիանա) իր Բուխարա և Սամարկանդ քաղաքներով և Խորեզմը:

Սակայն մահմեդականության տարածումը և մանավանդ օղուզ (թուրքմեն) ցեղերի ներխուժումը կերպարանափոխեց Մավարաննահրը, որը հենարան դարձավ հիշյալ ցեղերի՝ դեպի Իրան և Առաջավոր Ասիա կատարած ավերիչ արշավանքների համար: Սուղդի և Խորեզմի իրանական բնիկ ժողովուրդները թույլ գտնվեցին ներխուժող բարբարոս տարրի առջև և Մավերաննահրի դգալի մասը ժամանակի ընթացքում թուրքացավ: (Իրն ալ-Ասիր, էջ 391):

11 Արմենիակոն (Արմինիակ) նահանգ – Տե՛ս Արմինիակուսի տեր (սահիր), Բալազուրի, ծնթգր. 103:

12 Կողոնիա (Կուլունիյա) – Քաղաք-ամրոց Փոքր Հայքում, Գայլ գետի ափին: (ՀՀԵՏԲ, հ. 3, էջ 198–199):

13 Խաղտիք (Խալդիյա) – Երկիր (նահանգ) Փոքր Ասիայում, հին և միջին դարերում: Գտնվում էր Սև ծովի հարավ-արևելյան առափնյայում, ծովի և Ճորոխի միջև, Հայաստանի սահմաններից մինչև Տրապիզոն: (ՀՀԵՏԲ, հ. 2, էջ 632):

14 Սակարիա (Սաղարի) գետ – Գետ Փոքր Ասիայի արևմուտքում, որը թափվում է Սև ծովը:

15 Տուրմարխ – Տուրմարխը իր հրամանի տակ ուներ 500 նետաձիգ, 300 վահանակիր և 100 նիզակակիր: (Կոստանդին Միրանածին, էջ 233):

16 Դրունգար – Որոշ հրամանատարական պաշտոնների անվանում Բյուզանդիայում՝ Զ-Ը դարերում: Դրունգարի պաշտոն կար նավատորմում, որը կայսերական նավատորմիղի հրամանատարն էր: Այս նույն անունով կային նաև այլ պաշտոններ: (Сов. Ист. Энц., т. 5, стр. 388).

17 Կոմս, հեկատոնտարքոս, դեկարքոս, լոգոթետ – Տարբեր հրամանատարական պաշտոններ Բյուզանդիայում:

18 Բադղ – Տե՛ս Դինավարի, ծնթգր. 21:

19 Վադի – Ենթադրաբար՝ Վադի ալ Քուրդ, վայր Հայաստանում, Ուրմիա լճի մոտակայքում: Բնույթը անորոշ: Հիշատակում է արաբ աշխարհագիր Յակուտը: (ՀՀԵՏԲ, հ. 4, էջ 731)

20 Խամլիջ – Ենթադրաբար Խազարների Իթիլ մայրաքաղաքի երկու հիմնական թաղամասերից մեկի աղավաղված անվանումն է: (Артамонов, История хазар, стр. 395).

21 Ֆարմա – Եգիպտոսի նավահանգիստներից մեկը Միջերկրական ծովի ափին, որը ամենամոտ կետն էր ցամաքով բեռները մինչև Կարմիր ծովի նավահանգիստներ հասցնելու համար: (Milaha, S. Soucek, G. Oman, EOI, CD-ROM, (VII: 40b)):

22 Կուլզում – Հին քաղաք և նավահանգիստ Կարմիր ծովի ափին: Բառը ծագում է հունական Կլիսմա, կամ Կլեյսմա անվանումից: Այն գտնվում է Նեղոսից մինչև Կարմիր ծով հասնող ջրանցքի գետաբերանում: (al-Kulzum, E. Honigman, [R. Y. Ebied]), EOI, CD-ROM, (V: 367b)):

23 Ջար – Արաբական նավահանգիստ Կարմիր ծովի ափին: Գրեթե ողջ միջնադարի ընթացքում ալ-Ջարը մատակարարողի դեր էր կատարում Մադինայի համար, որից գտնվում էր մի օրվա հեռավորության վրա: Այն կառուցված էր կիսով չափ ցամաքի և կիսով չափ ափամերձ կղզու վրա: Ջարը կարևորագույն տարանցիկ կայան էր Եգիպտոսի, Եթովպիայի, Հնդկաստանի ու Զինաստանի համար: (al-Djar, A. Dietrich, EOI, CD-ROM, (II: 454b)):

24 Երեք կայան (մարհալա) – Տե՛ս Բալազուրի, ծնթգր. 80:

25 Իսհակ իբն Իսմաիլ – Այստեղ հավանաբար պետք է լինի ոչ թե Հայաստանի (Արմինիայի) տեր, այլ երկրորդ Արմինիայի տեր, որը հենց համապատասխանում է

Վիրքին՝ Տփղիս մայրաքաղաքով: (Վ. Տ.-Ղ.)

26 Կարնո քաղաքի մոտից է – Եփրատի ակունքը կարինից հյուսիս գտնվող Մաղկավետ լեռների հարավային լանջերին է:

27 Մալասայի լեռներ – Մալասլա անունով բնակավայր կա Նփրկերտից ոչ հեռու: Հավանաբար նույն անունն է տրվում նաև մոտակա լեռներին: (Վ. Տ.-Ղ.)

28 Արևելյան ծովը – Կարող է լինել ինչպես Պարսից ծոցը, այնպես էլ Արաբական ծովը:

29 Առան գետ – Հավանաբար նկատի ունի Կուր գետը: Տե՛ս նաև Աղուան (ալ-Ռան) գետ, Յակուբի (պ.), ծնթգր. 38:

30 Նահրարան – Տիգրիսի վտակներից:

31 Դվին գետ – այսպես են անվանում միջնադարի արար հեղինակներից ոմանք Արաքսը (ՀՀԵՏԲ, հ. 2, էջ 148):

ՅԱԿՈՒԲԻ (մահ. 897)

Կենսագրությունը տե՛ս պատմիչների բաժնում, էջ 329:

Ներկա թարգմանությունը կատարված է հետևյալ հրատարակությունից. Bibliotheca Geographorum Arabicorum, VII, 1892:

ՅԱԿՈՒԲԻ

ԳԻՐՔ ԵՐԿՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ (ՔԻՏԱԲ ԱԼ-ԲՈՒԼԴԱՆ)

էջ 232-233

Իմ երիտասարդության ծաղկուն չրջանում, զորեղ հասակում և մտային առողջ վիճակում ես ջանացել եմ գիտենալ երկրների տեղեկությունները և մի երկրի ու մյուսի միջև հեռավորությունը, քանզի սկսել եմ ճանապարհորդել երիտասարդ հասակում և իմ ճանապարհորդություններն իրար հաջորդեցին ու երկար ժամանակ պանդխտության մեջ մնացի: Լինում էր, որ այլ երկրներից եկած որևէ մեկին հանդիպելով հարցնում էի նրա հայրենիքի ու մայրաքաղաքի մասին: Երբ նա ինձ խոսում էր իր բնակավայրի մասին, հարցնում էի, թե ինչպիսին է այդ երկիրը [.....], այնտեղ ինչ ցանքսեր կան, ովքեր են բնակիչները՝ արաբներ, թե ոչ արաբներ [.....], ինչ են խմում բնակիչները: Հարցնում էի նույնիսկ նրանց հագուստի մասին [.....], նրանց կրոնի, ուսմունքների, տիրակալների [.....], ինչ տարածություն ուներ այդ երկիրը, որ երկրները նրան մոտիկ էին [.....] ինչպիսի ճանապարհներ ուներ [.....]: Ապա ամեն ինչ, որ այդ մարդն ինձ պատմում էր, գրի էի առնում, քանի որ հավատում էի նրա ճշմարտախոսությանը: Ես օգտվում էի հարցաքննելով մարդկանց իրար ետևից, այնպես որ չատերին հարցեր տվեցի, մարդկանց մի ամբողջ աշխարհ, տոն օրերին, թե ոչ տոն օրերին, թե Արևելքի բնակիչներին, թե Արևմուտքի: Ես գրի էի առնում նրանց տեղեկությունները և հավաքում պատմվածքները: Նչում էի, թե որ խալիֆան, կամ ամիրը մի երկիրը մյուսի ետևից նվաճել են, ով է կառուցել ռազմական ճամբարները, իրար ետևից տարբեր քաղաքներում, կամ հարկի (խարաջ) չափերը և թե ինչպիսի ընդհանուր գումար էր ստացվում:

Ես անդադար գրի էի առնում այդ տեղեկությունները և այս գիրքը կազմում էի երկար ժամանակ: Ամեն ինչ, որ պատմում էին, դասավորում էի ըստ երկրների և ինչ որ լսում էի տարբեր քաղաքների արժանահավատ բնակիչներից, միացնում էի իմ նախասպես իմացածին: Ես համոզվեցի, որ մարդկային արարածը չի կարող հասնել նպատակին և մարդը չի կարող անսահմանորեն ընդգրկել [.....]:

Ուստի մենք այս գիրքը դարձրինք երկրի մասին համառոտ տեղեկությունների համառոտ չարադրանք: Գուցե ինչ որ մեկը գտնի երկրի մասին որևէ տեղեկություն, որը մեր գրքում չկա, քանի որ մենք չենք ձգտել ամեն ինչ ընդգրկել: Իմաստունն արդեն ասել է. «Ես փնտրում եմ գիտություն ոչ թե ձգտելով հասնել ամենահեռավորին և կամ ձեռք բերել վերջին սահմանը, այլ պարզապես իմանալու համար, թե ինչը չի կարելի չիմանալ և որի հակառակ վիճակը անվայել է մարդուն»:

Ես հիշել եմ մայրաքաղաքների անունները, ռազմական չրջաններն ու նահանգները, թե մի երկրում ինչքան քաղաքներ, իկլիմներ (նահանգ) ու գավառներ կան, ով է այնտեղ ապրում, իչխում, կառավարում արաբ ցեղերից, կամ ոչ արաբ տոհմերից, երկրների միջև եղած տարածությունները, մայրաքաղաքների իրարից ունեցած հեռավորությունները, մահմեդական զորքի հրամանատարներից որն է այն նվաճել և որն է դրա թվականը, ըստ տարվա ու ժամանակի, նրա հարկերի (խարաջ) չափը, հովիտներն ու լեռները, ցամաքներն ու գետերը, եղանակը չոգի ու ցրտի երկու ծայրահեղ սահմաններով, ջրերն ու աղբյուրները:

ԲԱՂԴԱԴ

էջ 233

[Իմ չարադրանքն] սկսեցի Իրաքով, քանզի այն աչխարհի կենտրոնն է ու երկրի սիրտը և հիշեցի Բաղդադը, որովհետև Իրաքի կենտրոնն է ու մեծ քաղաքը, որի նմանը չկա Արևելքում ու Արևմուտքում:

էջ 235

Հին ժամանակներում Բաղդադը քաղաք չէր, այսինքն խոսրովների (Սասանյանների) ու պարսիկների օրոք, այլ Բաղուրայի Թասուջի գյուղերից մեկն էր: Բանն այն է, որ խոսրովների քաղաքը, որը նախընտրել էին Իրաքի այլ քաղաքներից, դա Տիգրոնն (Մադաին) էր, Բաղդադից յոթ փարսախ հեռավորության վրա, ուր կա Խոսրով Անուչիրուանի իյուանը (դահլիճ, պալատ):

Բաղդադում եղել է միայն մի վանք Սարատ գետի Տիգրիսի մեջ թափվելու վայրում, որը կոչվում է Կարն ալ-Սարատ: Այս վանքը կոչվում է ալ-Դայր ալ-Ատիկ (Հին վանք) և մինչև օրս կանգուն է: Այնտեղ հաստատվել է քրիստոնյա նեստորականների պետը՝ կաթողիկոսը (ջասիլիկ):

Բաղդադը արաբների օրոք էլ, իսլամի երևան գալուց հետո քաղաք չէր, քանզի արաբները հիմնադրել էին Բասրան ու Քուֆան:

Լ 236

Նա (Բաղդադը) Ասորիքի նման վատառողջ օդ չունի, ոչ էլ Եգիպտոսի նման փոփոխական եղանակ, լի հիվանդություններով, ոչ էլ Հայաստանի նման հեռավոր (մեկուսի), ցուրտ սառնամանիքի մեջ, տխուր ու թշնամիներով չրջապատված:

Լ 237–242

Երբ [Աբբասյաններն] իմացան, որ սա (Քուֆան) լավագույն քաղաքն է, այնտեղ հաստատվեցին այն նախընտրելով: Հավատացելոց իշխան Աբու-լ-Աբբասը նախ հաստատվեց Քուֆայում, ապա փոխադրվեց Անբար ու Եփրատի ափին կառուցեց մի քաղաք, որը կոչեց Հաշիմիյա: Աբու-լ-Աբբասը մեռավ նախքան քաղաքն ավարտելը: Երբ Աբու Ջաաֆար ալ-Մանսուրը դարձավ խալիֆա, մի քաղաք չինեց Քուֆայի ու Հիրայի միջև և այն ևս կոչեց Հաշիմիյա: Որոշ ժամանակ մնալուց հետո իր որդուն՝ Մուհամմադ ալ-Մահդիին ուղարկեց սլավոնների դեմ արշավելու Հարյուր քառասուն (757–758) թվականին:

[Մանսուրը] եկավ Բաղդադ, կանգնեց ու ասաց՝ ինչ է այս վայրի անունը. ասացին՝ Բաղդադ: Ասաց՝ Ալլահը վկա Հորս՝ Աբու Մուհամմադ իրն Ալիի ասածը, թե պետք է կառուցեմ մի քաղաք և ինքս ապրեմ նրանում և ինձանից հետո որդիս ապրի, հենց սա է: Թե՛ նախամահմեդական շրջանում, թե՛ մահմեդականության ժամանակ թագավորներն այն չեն նկատել, որպեսզի Ալլահի որոշածն ու վճռածը ես կատարեմ և իրականանան զրույցներն ու հայտնությունները: Չէ՞ որ Բաղդադը գտնվում է Տիգրիսի ու Եփրատի միջև, Տիգրիսն՝ արևելքում, Եփրատն՝ արևմուտքում և կարելի է ուղարկել ամբողջ աշխարհին այն, ինչ բերվում է Տիգրիսի վրայով Վասիթից, Բասրայից, Ուբուլլայից, Ահուազից, Ֆարսից, Օմանից, Յամամայից, Բահրայնից և այլ հարակից շրջաններից: Այստեղ խարիսխ կգցեն Տիգրիսի վրա նկող նավերը Մոսուլից, Դիար Ռաբիայից, Ատրպատականից, Հայաստանից բերված [ապրանքներով], ինչպես նաև Եփրատի վրա նկող նավերը Դիար Մուդարից, Ռակկայից, Ասորիքից, Սահմանային ամրություններից, Եգիպտոսից, Մաղրիբից այստեղ կկուտակվեն ու կիջնեցվեն [ապրանքները]: Այստեղ կհասնեն նաև Ջաբալից, Սպահանից, Խորասանի գավառներից նկող ճանապարհները: Փառք Ալլահին, որ այս բոլորն ինձ է վերապահված և ինձանից առաջ նղածները չեն տեսել: Կառուցելու և ապրելու եմ ես, ու որդիս ինձանից հետո, և կլինի աշխարհի ամենաչեն քաղաքը: Դրանից հետո կկառուցեմ չորս քաղաք, որից ոչ մեկը չի կործանվի:

Եվ իրոք, կառուցեց, դրանք են Ռաֆիկան, որին նոր անուն չտվեց,

կառուցեց նաև Մալաթիան և Մամեստիան, ինչպես նաև Մանսուրան Սինդում:

Ապա բերել տվեց ճարտարապետների (մուհանդիս) և չինարարության, չափերի, տարածության և հողերի բաժանման գիտակների, և հատակագծեց իր քաղաքը, որը կոչվեց Աբու Ջաաֆարի քաղաք: Բերել տվեց չինարարների, գործավորների և արհեստավորների, ինչպես՝ հյուսների, դարբինների ու փորագրողների (հաֆֆար): Երբ բավարար քանակությամբ հավաքվեցին, նշանակեց նրանց ռոճիկը և վարձքը: Հրամայեց (գրեց) ամեն մի քաղաքից բերել նրան, ով որևէ բան հասկանում է չինարարությունից: Այսպիսով նրա մոտ հավաքվեց հարյուր հազար հոգի տարբեր արհեստներից ու ձեռարվեստներից: Այս մասին պատմել են ծերունիները, թե Աբու Ջաաֆար Մանսուրը չսկսեց չինարարությունը, մինչև որ հարյուր հազար գործավորներ ու արհեստի տեր մարդիկ չհավաքվեցին:

Ապա հատակագծեց այն (Բաղդադը) Ռաբի Ա ամսին, հարյուր քառասունմեկ թվականին (12 հուլիս – 10 օգոստոս 758) և այն կլորաձև դարձրեց: Աչխարհի ոչ մի երկրում չկա ուրիշ կլորաձև քաղաք: Քաղաքի հիմքը դրեց այն ժամանակ, որն ընտրել էին Նաուբախտ աստղարաշխը (մունաջջիմ, աստղագուշակ) ու Մաշաալլահ իրն Սարիան: Նախքան հիմքը դնելը խոշոր հում աղյուսներ պատրաստեց: Ամբողջական քառակուսի հում աղյուսը (լիբնա) մեկ կանգունով մեկ կանգուն էր, քաչը՝ երկու հարյուր ռաթլ, իսկ կես աղյուսը մեկ կանգունով կես կանգուն էր և քաչը՝ հարյուր ռաթլ: Ջրհորներ փորվեցին ջրի համար և ջրանցք փորվեց Քարխայա գետից դուրս նկող, որը Եփրատի վտակն է: Ջրանցքը բարեկարգվեց և մտցվեց քաղաքից ներս՝ խմելու, աղյուսը պատրաստելու և ցեխը թրջելու համար:

Նա քաղաքին չորս դարպասներ դրեց: Մեկը կոչեց Քուֆայի դուռ, մյուսը՝ Բասրայի դուռ, երրորդը՝ Խորասանի դուռ, իսկ չորրորդը՝ Ասորիքի դուռ: Ամեն մի դռնից մյուսը հինգ հազար սև կանգուն էր, խրամատի դրսի կողմից հաչված: Ամեն մի դարպասի վրա երկաթե երկու հսկայական փառավոր դուռ կա, որոնցից ամեն մեկը կարելի է փակել, կամ բացել միայն մի քանի հոգով: Այդ դռներից ձիավորը դրոչով, կամ նիզակակիրը երկար նիզակով կարող էին մտնել առանց դրոչը թեքելու, կամ նիզակը իջեցնելու:

Պարիսպը կառուցված է խոշոր հում աղյուսներով, որի նմանը, ինչպես նկարագրեցինք, տեսնված չէ, և ցեխով: Պարսպի հիմքի լայնությունը իննսուն սև կանգուն է, սակայն աստիճանաբար պակասում է և վերևում քսանհինգ կանգուն է դառնում: Բարձրությունը վաթսուն կանգուն է, պատչգամբներով (չուրֆա) մեկտեղ: Պարսպի չուրջը կա մի հսկայական (հաստ) փառավոր կիսապարիսպ (ֆասիլ,

նախապարիսպ), ընդ որում պարսպի պատի ու կիսապարսպի միջև հարյուր սև կանգուն է: Կիսապարիսպն (նախապարիսպ) ունի հակայական աշտարակներ (բուրջ) և նրա վրա կան նաև կլոր պատչգամբներ: Կիսապարսպից դուրս պատրաստեց պատնէշ (մուսաննատ) Թրծված աղյուսից (աջուռ) ու կրից (սարուջ) պինդ, ամուր ու բարձր, իսկ պատնէշից հետո ընկած խրամատը (խանդակ) լցրեց այն ջրանցքի ջրով, որը Քարխայա գետից էր գալիս, խրամատից այն կողմ լայն փողոցներ (չարի) կան:

Քաղաքի [չորս] դռների մեջ չորս մեծ միջանցքներ (դահլիզ) կառուցեց, կամարակապ (ազաջ), ամեն մի միջանցքի երկարությունը ութսուն կանգուն, ամբողջովին ծածկված Թրծած աղյուսով և գիպսով (ջիս): Այնպես, որ երբ մեկը կիսապարսպի վրա գտնվող միջանցքից գա, կհասնի մի բակ (ռահբա) [պինդ] քարով սալահատակված, ապա կմտնի միջանցք՝ մեծ պարսպի մեջ: Դրա վրա կան երկու փառավոր հսկայական երկաթե դռներ, որոնք կարող են փակվել ու բացվել միայն մի խումբ մարդկանց օգնությամբ: Չորս դռները սրա (մեծ պարսպի) վրա են: Եթե մեկը մտնի մեծ պարսպի միջանցքից, անցնի բակի միջով, կհասնի Թրծած աղյուսե և գիպսե պատրաստված կամարների (Թակատ) [անցքը]: Դրանցում (կամարակապ անցքերում) կան ռումի (բյուզանդական) լուսամուտներ (քիվա), որոնց միջով Թափանցում են արևն ու լույսը, սակայն անձրևը չի մտնում: Այստեղ կան դուլամների բնակարանները: Չորս դարպասներից ամեն մեկն ունի իր կամարակապ անցքը (Թակատ):

Մեծ պարսպի դարպասներից ամեն մեկի վրա կա ընդարձակ կամարակապ գմբեթ, ոսկեզօծ և չուրջը հավաքավայրեր (մաջալիս) ու հարակից մասեր, ուր նստելով կարելի է ամեն ինչի հսկել: Այս գմբեթները կարելի է բարձրանալ կամարների վրայով, որոնց մի մասը Թրծված աղյուսից ու գիպսից է պատրաստված, մի մասը՝ խոշոր հում աղյուսից: Սրանք կամարների նման են՝ մեկը մյուսից բարձր: Կամարակապից ներս կայազորի ու պահակազորքի [բնակության] համար է: Այստեղից կան աստիճաններ (միսաադ) և անասուններով բարձրանում են դռների վերևում գտնվող գմբեթները: Աստիճանների վրա կան դռներ, որոնք կողպվում են:

Երբ մեկը դուրս է գալիս կամարակապ անցքերից (Թակատ), հասնում է մի բակ, ապա Թրծված աղյուսից ու գիպսից պատրաստված կամարակապ միջանցք, որի վրա կա երկաթե դուռ [ներքին պարսպի վրա] և այդ դռնից դուրս կգա մեծ բակը: Չորս [դարպասների] կամարակապ անցքերը միանման են:

[Մեծ] բակի մեջտեղում կա պալատը, որի դուռը կոչվում է Բաբ ալ-Ջահաբ (Ոսկե դուռ), պալատի կողքին մայր մզկիթն է: Պալատի չուրջը չկան կառուցվածքներ, տներ, բնակարաններ, բացի Ասորիքի

դռան կողմը գտնվող պահակների տնից և մի մեծ տաղավարից (սակիֆա), կառուցված Թրծած աղյուսից ու գիպսից՝ սյուների վրա. մեկի մեջ ապրում է պահակազորքի պետը (սահիբ ալ-չուրթա), մյուսի մեջ՝ պահակների (հարաս) պետը: Այժմ նրանցում մարդիկ ազոթում են:

[Մեծ] բակի չուրջը կան Մանսուրի փոքր տղաների և նրա հավատարիմ ծառաների տները: Կան նաև Գանձարանը (բայտ ալ-մալ), Զենքի պահեստը (խիզանատ ալ-սիլահ), նամակագրությունների (ռասաիլ) դիվանը, հարկերի (խարաջ) դիվանը, կնիքների (խատիմ) դիվանը, զորքի (ջունդ) դիվանը, տարբեր կարիքների (հավաիջ) դիվանը, ծառաների (ահչամ) դիվանը, ապա ընդհանուրի խոհանոցը (մաթբախ ալ-ամմա) և ծախսերի (նաֆակատ) դիվանը:

Կամարակապ անցքերի միջև կան փողոցներ (սիքքա) և նրբանցքներ (դարբ): Փողոցները կոչվում են զորավարների, մաուլաների և փողոցի բնակիչների անուններով:

Այսպես, Բասրայի դարպասից մինչև Քուֆայի դարպասը կան՝ Շուրաթի փողոցը (սիքքատ ալ-Շուրաթի), Հայսամ փողոցը, Մաթբակ փողոցը, որտեղ մեծ բանտն է, որը կոչվում է Մաթբակ (գնդան), պինդ կառուցվածք է ամուր պարսպով: Նիսա (կանանց) փողոցը, Սարջիս (Սարգիս) փողոցը, Հուսայն փողոցը, Աթիյա փողոցը, Մուջահիդ փողոցը, Աբբաս փողոցը, Ղազուան փողոցը, Աբու Հանիֆա փողոցը և Դայիկա (Նեղ) փողոցը:

Բասրայի դարպասից մինչև Խորասանի դարպասը կան՝ Հարաս (պահակազորքի) փողոցը, Նուայմիյա փողոցը, Սուլայման փողոցը, Ռաբի փողոցը, Մուհալհիլ փողոցը, Շայխ իբն Ումայրա փողոցը, Մարուանուդիյա փողոցը, Վադիհ փողոցը, Սակկաին (ջրկիրների) փողոցը, Իբն Բուրայհա իբն Իսա իբն Մանսուր փողոցը, Աբու Ահմադ փողոցը և Դայիկ (Նեղ) նրբանցքը:

Քուֆայի դարպասից մինչև Ասորիքի դարպասը կան՝ Աքքի փողոցը, Աբու Կուռա փողոցը, Աբդավայհ փողոցը, Սամայդա փողոցը, Ալա փողոցը, Նաֆի փողոցը, Ասլամ փողոցը և Մանարա փողոցը:

Ասորիքի դարպասից Խորասանի դարպասը կան՝ Մուազզինների փողոցը, Դարիմ փողոցը, Իսրաիլի փողոցը, մի փողոց, որն այժմ կոչվում է Կավարիրի, իսկ նրա տիրոջ անունը մոռացել եմ, Հաքամ իբն Յուսուֆ փողոցը, Սամասայի փողոցը, Սահդի, որը Աբու Ջաաֆարի մաուլան է, փողոցը, մի փողոց, որն այժմ Զիյադի է կոչվում, իսկ նրա տիրոջ անունը մոռացել եմ և Ղազուան փողոցը:

Այս փողոցները (սիքքա) կամարակապ անցքերի միջև են տեղադրված, քաղաքի ներսում, մեծ պարսպից ներս: Փողոցներից ամեն մեկում ապրում են երևելի ու վստահելի զորավարներ, կամ նրանց հայտնի մաուլաներ և կարևոր պաշտոններ վարողներ: Ամեն մի

փողոցի երկու ծայրերին կան հուսալի դռներ: Ոչ մի փողոց չի միանում բակի պարսպին, որի ներսում կա խալիֆայական ապարանքը (դար ալ-խիլաֆա), իսկ բակի պարսպի չուրջը պտտվում է մի ճանապարհ:

Նրա (Բաղդադի) ճարտարապետներն են եղել Արդալլահ իբն Մուհրիզը, Հաջջաջ իբն Յուսուֆը, Ումրան իբն ալ-Վադդահը և Շիհաբ իբն Քասիրը, իսկ ներկա են եղել աստղաբաշխներ (մունաջջիմ) ու թվաբաններ (ահսաբ ալ-հիսաբ) Նաուբախտը, Իբրահիմ իբն Մուհամմադ ալ-Ֆազարին և Թաբարին:

Արվարձանները նույնպես [Մանսուրը] չորս քառորդ մասերի բաժանեց և ամեն մի քառորդի չինարարության վրա հսկելու համար մի ճարտարապետ (մուհանդիս) նշանակեց և ամեն մի քառորդի տիրոջը (վերակացու) որոշակի գումար տվեց, որպեսզի տրամադրվի ամեն մի հողակտորի (կաթիա) տիրոջը, որպես օժանդակություն և գումարներ հատկացվեն տարբեր արվարձաններում չուկաներ կառուցելու համար:

Այսպես, Քուֆայի դռան և Բասրայի դռան միջև ընկած քառորդի, Մուհուալի դռան և Քարխի ու հարակից բոլոր մասերի վրա [վերակացու] նշանակեց ալ-Մուսայիբ իբն Զուհայրին, իր մաուլա Ռաբիին և ճարտարապետ Ումրան իբն ալ-Վադդահին:

Քուֆայի դռան և Ասորիքի դռան միջև ընկած քառորդի, Անբարի ճանապարհի վրա, մինչև արվարձանի սահմանը, նշանակեց Հարբ իբն Արդալլահին, Սուլայման իբն Մուջալիդին, իր մաուլա Վադիհին և ճարտարապետ Արդալլահ իբն Մուհրիզին:

Ասորիքի դռնից մինչև Հարբի արվարձանը ընկած քառորդի, Ասորիքի դռան փողոցի և հարակից մասերի վրա, մինչև կամուրջը և Տիգրիսը, նշանակեց Հարբ իբն Արդալլահին, իր մաուլա Ղազուանին և ճարտարապետ Հաջջաջ իբն Յուսուֆին:

Խորասանի դռնից մինչև Տիգրիսի կամուրջը, Տիգրիսի մերձափնյա փողոցը մինչև Բուղդին և Կաթրաբբուլի դուռը [ընկած քառորդի վրա] նշանակեց Հիշամ իբն Ամր ալ-Տաղլիբիին, Ումարա իբն Համզային և ճարտարապետ Շիհաբ իբն Քասիրին:

Նա (Մանսուրը) կարգադրեց ամեն մի քառորդի տերերին (վերակացուներին), որ գումարներ հանձնեն իրենց օգնականներին խանութներ, չուկաներ կառուցելու բոլոր արվարձաններում: Հրամայեց խանութները բազմացնել այնպես, որ ամեն մի արվարձանում լիներ ընդհանուր չուկա առևտրի բոլոր ճյուղերով: Կարգադրեց, որ բոլոր արվարձաններում լինեն փողոցներ, նրբանցքներ (դուրուբ)՝ թե՛ բաց, թե՛ փակուղի, որոնց վրա համաչափ կառուցվեն տները: Ամեն մի նրբանցքը կոչել այնտեղ ապրող զորավարի կամ նրևելի (պատվավոր) մարդու անունով, կամ այն տեղի մարդկանց անունով, որտեղից

նկել են: Որոշեց, որ փողոցների (չարի) լայնությունը լինի հինգ կանգուն, իսկ նրբանցքները՝ տասնվեց կանգուն, որ արվարձաններում, չուկաներում և նրբանցքներում կառուցեն բավարար քանակությամբ մզկիթներ ու բաղնիքներ: Հրամայեց ամենքին, որ զորավարներին ու զորականներին չնորհված հողակտորներից (կաթիա) որոշ բան տրվի վաճառականներին, որ կառուցեն ու ապրեն, ինչպես նաև ռամիկ մարդկանց և գեղջուկներին (նրկրի մարդկանց):

Եվ առաջինը, որ քաղաքից դուրս հողակտոր վերցրեց, նրա (Մանսուրի) տանը պատկանող՝ Արդ ալ-Վահհաբ իբն Իբրահիմ իբն Մուհամմադ իբն Ալի իբն Արդալլահ իբն ալ-Աբբասն էր, որը հաստատվեց Քուֆայի դռան մոտ, Ստորին Սարատ գետակի վրա, որը Եփրատից է գալիս [.....]:

Էջ 245-246

[.....] Ապա Ռաբավա ալ-Քիրմանիի և նրա բարեկամների հողակտորը, որը հասնում է մինչև քաղաքի այն դուռը, որ հայտնի է որպես Բասրայի դուռ: Սա իշխում է Սարատի և Տիգրիսի վրա, նրա կողքին է Նոր կամուրջը, որը կառուցված կամուրջներից վերջինն է: Նրանում կա մեծ չուկա, ուր բոլոր տեսակի վաճառատներ կան կողք-կողքի տարածված:

Ապա գալիս է հավատացելոց իշխանի (խալիֆա) մաուլա Վադդահի արվարձանը, որը հայտնի է Վադդահի պալատ անվամբ, իսկ նա զենքի պահեստի պետն է: Այնտեղ շատ չուկաներ կան և այժմ այնտեղ ամենից ավելի կան թղթավաճառներ և գրավաճառներ: Կան հարյուրից ավելի գրավաճառի խանութներ:

Ապա այս չորս վերոհիշյալ ճանապարհներից դուրս կգաս դեպի Քարխի դռան փողոցը, որն սկիզբ է առնում Ստրկավաճառների (նախասասին) դռնից, որտեղ Մանսուր [խալիֆայի] մաուլա Սուայդի հողակտորն է: Սուայդի ընդարձակ բակը Ստրկավաճառների դռան ետևի կողմում է: Փողոցի երկու կողմերում ձգվում են չուկաները: Քարխի դռնից թեքվելով դեպի աջ, հասնում ես հավատացելոց իշխանի մաուլա Ռաբիի հողակտորը, որտեղ վաճառականներն են ապրում, ինչպես Խորասանի վաճառականները, որոնք կերպասավաճառներ (բազզազ) են, [վաճառվում են] նաև Խորասանից բերված հագուստեղենի տեսակներ, որոնց մեջ ոչինչ չի խառնված:

Այստեղ է այն գետը, որն սկսում է Քարախայա գետից և նրա վրա կան վաճառականների տներ: Սա կոչվում է Հավի գետ, քանզի նրա վրա այն ժամանակներում հավ էին վաճառել: Ռաբիի հողակտորի ետևում կան վաճառականների և ամեն նրկրի մարդկանց տներ: Ամեն մի նրբանցք այնտեղ ապրող ժողովրդի անունով է կոչվում: Քարխը

ամենամեծ չուկան է, որը ձգվում է Վաղդահի պալատից մինչև Երեքչաբթիի չուկան, ունենալով երկարությունն՝ երկու փարասախ և լայնությունն՝ մեկ փարասախ Ռաբիի հողակտորից մինչև Տիգրիս:

Ամեն մի վաճառական և վաճառականության ճյուղ ունի իր հատուկ փողոցը և փողոցներում՝ հատուկ չարքեր, խանութներ (հավանիտ) և հրապարակներ (իրաս): Ոչ մի խումբ (մարդկանց) մյուսին չի խառնվում և կամ վաճառականության մի ճյուղ՝ մյուսին, որևէ ապրանքի տեսակ՝ մյուսի հետ չի վաճառվում, ինչպես նաև տարբեր արհեստների (սինաատ) արհեստավորները (ասհաբ ալ-միհան) չեն խառնվում: Ամեն մի չուկա առանձին է և վաճառականների մի տեսակը մյուսին չի միանում և արհեստավորների մի տեսակը մյուսի դասին (թաբակա) չի խառնվում:

Այս արվարձաններում և հողակտորներում, որ նկարագրել ենք, բնակվում են տարբեր մարդիկ՝ արաբներ, դինվորներ, հողատերեր (դահակին), վաճառականներ և այլ խառն մարդիկ, որոնց անուններով կոչվում են նրբանցքներն ու փողոցները (սիքքա):

Սա Բաղդադի քաոորդներից մեկն է և ամենահինն է. նրա [չինարարությունը] հանձնարարված էր Մուսայիբ իբն Զուհայրին, հավատացելոց իշխանի մաուլա Ռաբիին և ճարտարապետ Ումրան իբն ալ-Վադդահին: Սրանից մեծ ու հաճելի քաորդ չկա Բաղդադում:

Քուֆայի դռնից մինչև Ասորիքի դուռը ընկած է Սուլայման իբն Մուջալիդի անունը կրող արվարձանը, քանզի նրան էր հանձնարարված [Բաղդադի] այս քաորդի չինարարությունը և նրա անունով էլ կոչվեց: Նրանում կան Վադիհի հողակտորը, Ամիր իբն Իսմայիլ ալ-Մուսլիմի հողակտորը[.....]:

էջ 248–249

[.....] Սա [Բաղդադի] այն քաորդն է, որի [չինարարությունը] հանձնարարվել էր Սուլայման իբն Մուջալիդին, հավատացելոց իշխանի մաուլա Վադիհին և ճարտարապետ Արդալլահ իբն Մուհրիզին (բնագրում՝ Ումրան իբն ալ-Վադդահին):

Ասորիքի դռնից ձգվող [Բաղդադի] քաորդի սկիզբը Ֆադլ իբն Սուլայման ալ-Թուսիի հողակտորն է: Սրա կողքին կան բանտը, որը հայտնի է Ասորիքի դռան բանտ անվամբ և նույն անունը կրող չուկաները: Սրանք խոշոր չուկաներ են, որտեղ կան բոլոր խանութները և ապրանքները. սրանք տարածված են դեպի աջ և ձախ կողմերը, ունեն բնակեցված և չեն փողոցներ, նրբանցքներ, հրապարակներ և մի լայն փողոց, որի վրա կան լայն նրբանցքներ, որոնցից ամեն մեկը կոչվում է այն երկրի անունով, որի ժողովուրդը իջևանել է նրա երկու կողմերում, մինչև որ հասնում է Հարբ իբն Արդալլահ ալ-Բալխիի

արվարձանը: Այսօր Բաղդադում չկա սրանից ավելի ընդարձակ, մեծ, կամ ավելի նրբանցքներ ու չուկաներ ունեցող արվարձան (Հարբիյա): Նրանում ապրում են Բալխի մարդիկ, Մերվի, Խուտտալի, Բուխարայի, Ասբիշաբի (Աֆիշքար), Իշտախանջի (Իշտիխան), Քաբուլ շահի, Խորեզմի (Խուարիզմ) մարդիկ: Ամեն մի թաղամասի (բալադ) ժողովուրդ ունի իր առաջնորդը (կաիդ, զորավար) և պետը (ռաիս):

Ապա գալիս է Նիզակների (Հիրաբ) պետ ալ-Հաքամ իբն Յուսուֆ ալ-Բալխիի հողակտորը (կաթիա), որը պահակազորքի (չուրթա) հրամանատարն էր եղել:

Ասորիքի դռնից նկող մեծ փողոցի, որը ձգվում է մինչև Տիգրիսի կամուրջը, աջ և ձախ կողմերում կա մի չուկա, իսկ դեպի ձախ կա մի արվարձան, որը կոչվում է Ստրուկների տուն (դար ալ-ռակիկ), ուր Աբու Զաաֆար [Խալիֆայի] ամեն կողմից բերված ստրուկներն էին վաճառվում և դա հանձնարարված էր նրա մաուլա Ռաբիին:

Ահա սա այն [երրորդ] քաորդն էր, որի [չինարարությունը] հանձնարարված էր հավատացելոց իշխանի մաուլա Հարբ իբն Աբդալլահին և ճարտարապետ Հաջջաջ իբն Յուսուֆին:

Իսկ [չորրորդ] քաորդը, որը Խորասանի դռնից մինչև Տիգրիսի կամուրջն ու նրանից այն կողմ է տարածվում, ապա նրա դիմաց կա Խուլդ [պալատը]: Նրանում կային ախոռներ, զորքի կայան և մի պալատ, որը Տիգրիսին էր նայում, ուր հաճախ ապրում էր Աբու Զաաֆարը, իսկ Մահդի [Խալիֆան] այստեղ էր ապրում նախքան Ռուսաֆայի պալատը փոխադրվելը, որը Տիգրիսի ձախ կողմում է:

Երբ այս բոլորն անցնես, ապա [այս քաորդի] հողակտորներից առաջինը՝ Սուլայման իբն Աբու Զաաֆարի հողակտորն է մեծ փողոցի վրա, Տիգրիսի ափին [.....]:

էջ 250

[.....] Եվ ապա Աբդ ալ-Ջաբբար իբն Աբդ ալ-Ռահման ալ-Ազդիի հողակտորը, որը պահակազորքի պետն էր, ապա [Մանսուրը] հանեց նրան և նշանակեց Խորասանի կառավարիչ: Սակայն այնտեղ նա ապստամբեց և [Խալիֆան] Մահդիին զորքով ուղարկեց նրա դեմ, և [Մահդին] պատերազմեց ու հաղթելով նրան բերեց Աբու Զաաֆար [Խալիֆայի] մոտ: Սա գլխատել ու խաչել տվեց նրան:

[Բաղդադի] արվարձանների և հողակտորների բոլորի անունները չենք կարող հիշատակել, քանզի բոլոր մարդիկ էլ հողակտորներում և այլ հողամասերում կառուցումներ են կատարել և ապա այլոց ժառանգել:

Հաշվել են, որ [Բաղդադում] վեց հազար նրբանցքներ և փողոցներ կան, երեսուն հազար մզկիթներ, բացի հետո ավելացվածներից, տաս

հազար բաղնիքներ, բացի հետագայում կառուցվածներից:

Նրանք (Բաղդադի բնակիչները) ունեն Մեծ Իսա գետը (Նահր Իսա ալ-Ազիմ), որն սկիզբ է առնում հիմնականում Եփրատից: Նրա մեջ են մտնում հսկա նավերը, որոնք գալիս են Ռակկայից, բերելով այլուր և ապրանքներ, Ասորիքից ու Եգիպտոսից և կանգ առնում մի նավահանգստում (ֆարդա), որտեղ կան չուկաներ ու վաճառականների խանութներ:

Այս գետի ջուրը երբեք չի կտրվում: Նրանք ունեն նաև ջրհորներ, ուր ջուրը ներծծվում է այդ (Տիգրիսի ու Եփրատի միջև գտնվող) ջրանցքներից և նրանց ջուրը քաղցր է ու բոլոր մարդիկ խմում են: Այս ջրանցքներն անհրաժեշտ են, քանզի քաղաքը մեծ է և ընդարձակ: Գտնվելով Տիգրիսի ու Եփրատի միջև, ամեն կողմից ջրերը հոսում են նրանց մեջ: Սրա շնորհիվ նրանք (բնակիչները) Բասրայից բերված արմավենիներ են տնկել և Բաղդադում, այժմ ավելի շատ [արմավենիներ] կան, քան Բասրայում, Քուֆայում և ամբողջ Սավադում: Նրանք ծառեր են տնկել, որոնք զարմանալի պտուղներ են տալիս: Բաղդադի արվարձաններում, ամեն կողմ պարտեզներ ու ծառաստաններ կան, ջրի առատության և լավորակ լինելու հետևանքով: Այստեղ արտադրվում է այն ամենը, որ տարբեր քաղաքներում պատրաստվում է, քանզի այստեղ են եկել տարբեր արհեստների ճարտար մասնագետներ, բոլոր քաղաքներից, տարբեր կողմերից (հորիզոններից), մոտիկ ու հեռավոր վայրերից:

Ահա սա է Բաղդադի արևմտյան կողմը, որն ընդգրկում է բուն քաղաքը, Քարխ [թաղամասը], արվարձանների կողմերը և նրա ամեն կողմերում կան գերեզմանոցներ, հարակից գյուղեր և տարածված կառուցվածքներ:

Ինչ վերաբերում է Բաղդադի արևելյան կողմին, ապա այստեղ [առաջին անգամ] հաստատվեց ալ-Մահդի իրն ալ-Մանսուրը, երբ հոր գահաժառանգն էր և սկսեց նրա կառուցումը հարյուր քառասուներեք հիջրի (760–761) թվականին: Մահդին իր պալատը հատակագծեց (կառուցեց) Ռուսաֆայում մայր մզկիթի կողքին: Նա մի գետ (ջրանցք) փորել տվեց, որն սկսվում է Նահրավանից, հոսում է արևելյան կողմում և այն անվանեց Մահդիի գետ:

Արևմտյան կողմում բուն քաղաքի չուրջը հողակտորներ պարգևելուց հետո Մանսուրն իր եղբայրներին ու զորավարներին, այս (արևելյան) կողմում ևս հողակտորներ տվեց և այս կողմերը ծանոթ են Մահդիի ճամբար անվամբ: Մարդիկ մրցում էին, որ Մահդիի [պալատի] մոտերքում հաստատվեն, քանզի սիրում էին նրան, իսկ նա առատաձեռնորեն բաշխում էր դրամներ, ընծաներ: Բանն այն է, որ այս (արևելյան) կողմն ավելի ընդարձակ հողեր ուներ: Մարդիկ սկզբում հաստատվել էին արևմտյան կողմում, որը կղզու նման է՝

Տիգրիսի ու Եփրատի գետերի միջև, և այն չլցրին, այնտեղ կառուցվածքներ ու վաճառատներ: Սակայն երբ սկսվեց [աշխույժ] վերին չուկաներ ու վաճառատներ: Սակայն երբ սկսվեց [աշխույժ] չինարարությունը արևելյան կողմում, արգելվեց ընդարձակ կառուցումներ կատարել:

[Արևելյան կողմում] առաջին հողակտորը կամրջի գլխին (ռաս ալ-ջիսր) պատկանել է Խուզայմա իրն Խազիմ ալ-Տամիմիին, որը Մահդիի օրոք պահակազորքի պետն էր: Ապա Իսմայիլ իրն Ալի իրն Արդալլահ իրն Աբբաս իրն Արդ ալ-Մութթալիբի հողակտորը [.....]:

էջ 252

... Ապա Արդալլահ իրն Զիյադ իրն Աբու Լայլա ալ-Խասասամիի հողակտորը, որը Հիջազի, Մոսուլի, Ջազիրայի, Հայաստանի ու Ատրպատականի [Հարկային] դիվանի քարտուղարն էր:

էջ 253

[Արվարձանային] հողակտորների միջև կան դինվորների, բնակիչներից որոշ մարդկանց, վաճառականների և այլոց տները, ամեն մի թաղամասում (մահալլա), արվարձանում: Այս մեծ կողմի (քաղաքի) չուկայում բերվում են տարբեր ապրանքներ, վաճառքի իրեր և արհեստագործական արտադրանք. կամրջի գլխի մոտ, նրանից դեպի արևելք՝ աջ և ձախ [բերվում են] տեսակ-տեսակ ապրանքներ և արհեստագործական արտադրանք:

Արևելյան կողմի, այսինքն Մահդիի ճամբարի ճանապարհները հինգ ճյուղի են բաժանվում: Կա մի ուղիղ ճանապարհ դեպի Ռուսաֆա, որտեղ են Մահդիի պալատը և մայր մզկիթը. մեկ այլ ճանապարհ ուղղվում է դեպի այն չուկան, որը կոչվում է Սուկ Խուզայր (բանջարեղենի՞), որը չինական հրաչալիքների կենտրոնավայրն է և դուրս է գալիս հրապարակը (մայդան) և Ֆադլ իրն Ռաբիայի բնակարանը: Կա նաև մի [երրորդ] ճանապարհ դեպի ձախ՝ Բարաղանի դռան (բար Բարաղան) կողմը, որտեղ Խալիդ իրն Բարմաքի ու որդիների տները կան: Կամուրջի ճանապարհը ուղղվում է Խուզայմայի տնից մինչև Յահիա իրն ալ-Վալիդի անվամբ հայտնի չուկան և այն վայրը, որը կոչվում է ալ-Դուր և ապա դեպի Բաղդադի այն դուռը, որը հայտնի է Շամմասիյա անվամբ: Այստեղից դուրս է գալիս ով կամենում է գնալ Սուռա Ման ռաա (Սամառա): Կա նաև [հինգերորդ] ճանապարհը առաջին կամուրջի մոտից, որի վրայով անցնում է ով գալիս է արևմտյան կողմից և Տիգրիսի ափով գնում է Մուկայիր դուռը (բար Մուկայիր) և Մուխառիմ ու նրան հարակից վայրերը:

Սա (արևելյանը) երկու կողմերից ամենարնդարձակն է, քանի որ

արևմտյան կողմում չուկաներն ու վաճառատները խիտ չատ են, ինչպես նկարագրել ենք:

Այստեղ հաստատվել են Մահդին, իր գահաժառանգության և խալիֆայության չրջաններում, նաև Մուսա ալ-Հադին, Հարուն ալ-Ռաշիդը, ապա Մամունը և Մուտասիմը:

Նրանում (արևելյան կողմում) կա չորս հազար նրբանցք ու փողոց, տասնհինգ հազար մզկիթ, բացի մարդկանց կատարած նոր կառուցումներից և հինգ հազար բաղնիք, բացի նոր ավելացվածներից:

Բաղդադի երկու կողմերում (արևմտյան և արևելյան) միասին, չուկայի վարձքերը Ռիհա ալ-Բաթրիկի ու հարակից մասերի հետ հասնում են տասներկու միլիոն դիրհեմի:

Բաղդադում ապրել են յոթ խալիֆաներ՝ Մանսուրը, Մահդին, Մուսա ալ-Հադին, Հարուն ալ-Ռաշիդը, Մուհամմադ ալ-Ամինը, Աբդալլահ ալ-Մամունը և Մուտասիմը: Սակայն այնտեղ մահացել է միայն Մուհամմադ ալ-Ամին իրն Հարուն ալ-Ռաշիդը, որն սպանվեց Անբարի դռնից դուրս, Թահիրի այգու մոտ:

Այս հողակտորները, մեծ փողոցները, նրբանցքները և նեղ փողոցները թվել եմ ըստ Մանսուր [խալիֆայի] օրոք և քաղաքի սկզբնավորման ժամանակ եղած գծագրման, սակայն ժամանակի ընթացքում փոփոխվել են, հին տերերը մահացել են և տարբեր մարդիկ ու տարբեր սերունդներ հաջորդաբար տիրել են, որոշ վայրերում շինարարությունն ավելացել է, որոշ մարդիկ այլոց տներին են տիրել: Մեծամեծները, տերերը, զորավարները և երևելիները Մուտասիմի հետ փոխադրվել են Սամառա երկու հարյուր քսաներեք հիջրի (837-838) թվականին: Ապա այնտեղ նստավայր են ունեցել Վասիկ և Մուտավաքքիլ [խալիֆաները]: Սակայն Բաղդադում ոչինչ չի քանդվել և չուկաները չեն պակասել (աղքատացել), քանզի նրան փոխարինող չկար և եղել են շինություններ ու կառուցումներ Բաղդադի ու Սամառայի միջև, ցամաքի ու ծովի (գետի), այսինքն Տիգրիսի և նրա երկու ափերի միջոցով:

ՍՈՒՐԱ ՄԱՆ ՌԱԱ (ՍԱՄԱՌԱ)

էջ 268

Մենք պատմեցինք Բաղդադի և Սամառայի մասին և [մեր չարադրանքը] նրանցով սկսեցինք, քանզի նրանք թագավորության երկու քաղաքներն են և խալիֆայության նստավայրերը, ընդ որում նրանցից ամեն մեկի սկզբնավորման մասին պատմեցինք:

Սկսենք այժմ պատմել մյուս երկրների մասին, ամեն մի երկրի ու մյուսի և ամեն մի քաղաքի ու մյուսի միջև եղած հեռավորության մասին, [տալով բաժանումը] չորս մասերի[1], ըստ երկրի նահանգների բաժանման՝ նախ Արևելքի (Մաշրիկ) և Արևմուտքի (Մաղրիբ), ապա հարավային քամու աղբյուրի, որը [Մնքքայի] կիբլան է ու Կանոպի (Սուհայլ) ծագելը, որն աստղաբաչխները կոչում են Տայման (Հարավ) և վերջապես հյուսիսային քամու աղբյուրի, որը Մեծ Արջ համաստեղությունն է, (Բանատ Նաշ) և աստղաբաչխներն այն կոչում են Ջարրի (Հյուսիս): Ուստի կնկարագրենք ամեն մի քառորդին պատկանող երկրներն՝ ըստ հաջորդականության:

ԱՌԱՋԻՆ ՔԱՌՈՐԴԸ, ՈՐՆ ԱՐԵՎԵԼՔԻ (ՄԱՇՐԻԿ) ՔԱՌՈՐԴՆ Է

էջ 271-272

ԱՏՐՊԱՏԱԿԱՆ[2]

Ով կամենում է գնալ Ատրպատական, դուրս է գալիս Զինջանից և չորս օրվա ճանապարհ անցնելով հասնում է Արդաբիլ քաղաքը, իսկ դա Ատրպատականի առաջին քաղաքն է, որին կհանդիպի:

Արդաբիլից Բարզանդ [ընկած հողերը] Ատրպատականի գավառներից են և հեռավորությունը երկք օրվա քայլելու ճանապարհ է: Բարզանդից մինչև Վարդանակերտ (Վարսան) ընկած հողերը նույնպես Ատրպատականի գավառներից են, ապա [ճանապարհը] գնում է Վարդանակերտից Փայտակարան (Բայլական) և Փայտակարանից՝ Մարաղա քաղաքը, որն Ատրպատականի գլխավոր քաղաքն է:

Ատրպատականի գավառներն են՝ Արդաբիլը, Բարզանդը, Վարդանակերտը, Պարտավը (Բարդաա), Շիզը, Սիրատը, Մարանդը, Դավրեժը (Տաբրիզ), Միանաջը, Ուրմիան, Խոյը և Սալմաստը (Սալմաս):

Ատրպատականի քաղաքների ու գավառների բնակիչները ազերի պարսիկների[3] (ալ-աջամ ալ-ազարիյա) և հին ջավիդանների[4] (ջավիդանիյա) խառնուրդ է: Վերջիններս Բադղ քաղաքի տերերն էին, որտեղ կար Բաբեկը:

Նրա (Ատրպատականի) նվաճումից հետո այնտեղ հաստատվեցին արաբները: Նվաճվեց քսաներկու թվականին (642-643), ալ-Մուղիրա իրն Շուբայի ձեռքով, Օսման իրն Աֆֆանի խալիֆայության ժամանակ:

Նրա խարաջը չորս միլիոն դիրհեմ է, ըստ որում մի տարի ավելանում է, մի տարի՝ իջնում[5]:

ԵՐԲՈՐԴ ՔԱՌՈՐԴԸ՝ ՋԱՐԲԻՆ, ՈՐԸ ՀՅՈՒՍԻՍԻ ՔԱՌՈՐԴՆ Է

ԼՂ 320–328

Արդեն հիշել ենք Հարավը (տայման), որը [Մեքքայի] կիրլայի քառորդն է: Այժմ հիշենք Ջարբիի քառորդը՝ հյուսիսի քառորդը, նրանում գտնվող քաղաքներով ու գավառներով:

Ով կամենա գնալ Բաղդադից Տիգրոն և շրջակա վայրերը, այսինքն այն քաղաքներն ու թաստուջները, որոնք Տիգրիսի երկու ափերին են, ինչպես Բասրա, Ուբուլլա և ապա Յամամա, Բահրայն, Օման, Սինդ ու Հնդկաստան (Հինդ), պետք է դուրս գա Բաղդադից և ընթանա Տիգրիսի այն ափով, որ դուր կգա՝ արևելյան կամ արևմտյան, անցնի մեծ գյուղերի միջով, ուր պարսիկների բնակավայրերն են, մինչև որ հասնի Տիգրոն, որը Բաղդադից յոթ փարսախ հեռավորության վրա է: Տիգրոնը Պարսից արքաների նստավայրն է եղել: Առաջինը, որ այնտեղ հաստատվել է, Անուշիրուանն[6] է: Դա բաղկացած է Տիգրիսի երկու ափերին գտնվող քաղաքներից: Արևելյան ափին կա այն քաղաքը, որ կոչվում է Հին քաղաք և այստեղ կա Հին սպիտակ պալատը, որը չգիտեն թե ով է կառուցել: Նրանում կա մայր մզկիթ, որը մահմեդականներն են կառուցել նվաճելուց հետո:

Արևելյան կողմում, որում կա մեծ Խոսրովի պալատը (Իուան Քիսրա), գտնվում է նաև այն քաղաքը, որ կոչվում է Ասբանաբտ: Նրա նմանը պարսիկների մոտ չկա և պատի բարձրությունն է ութսուն կանգուն (գիրա):

Երկու քաղաքների միջև մեկ մղոն հեռավորություն կա: Այս վերջին քաղաքում էր, որ իջևանում էր Սալման ալ-Ֆարիսին[7] և Հուզայֆա իբն ալ-Յամանը[8], որոնց գերեզմաններն այնտեղ են:

Այս երկու քաղաքներից բացի կա նաև մի քաղաք, որը կոչվում է Ռումիյա[9] (Հռոմոց քաղաք), որի մասին ասվում է, թե հռոմները կառուցել են պարսից թագավորին հաղթելուց հետո: Այստեղ էր հավատացնող իշխան Մանսուրը, երբ սպանվեց Աբու Մուսլիմը:

Վասիթը երկու քաղաքներից է բաղկացած Տիգրիսի երկու ափերին: Հին քաղաքն արևելյան կողմում է, իսկ Հաջջաջը քաղաք է կառուցել արևմտյան կողմում և երկուսի միջև նավերից կազմված կամուրջ է պատրաստել: Այս արևմտյան քաղաքում Հաջջաջն իր պալատն է կառուցել և կանաչ գմբեթը, որը կոչվում է Վասիթի Խադրան (կանաչ), ինչպես նաև մայր մզկիթը և նրա (քաղաքի) պարիսպները: Հաջջաջից հետո այլ կառավարիչներ են այստեղ ապրել, ինչպես՝ Եզիդ (Յազիդ) իբն Օմար իբն Հուբայրա ալ-Ֆազարին, երբ պարտվելով Կահթաբայի զորքից այստեղ էր ամրացել, մինչև երաշխավորագիր ստանալը:

Այս երկու քաղաքների բնակչությունը արաբների ու պարսիկների (աջամ) խառնուրդ է, իսկ դևհկանները բնակվում էին արևելյան քաղաքում, որը Քասքար քաղաքն է:

Նրա խարաջը մտնում է Սավադի թաստուջների խարաջի մեջ: Կոչվել է Վասիթ, քանզի նրանից մինչև Բասրա հիսուն փարսախ է, մինչև Քուֆա նույնպես հիսուն է, ինչպես նաև մինչև Ահուազ ու Բաղդադ հիսուն է: Ահա այս պատճառով կոչվել է Վասիթ (միջին):

Նրան հաջորդում է Նահրարանը, ուր պատրաստում են այն բանվածքի հննքը, որից հայկական (արմանի)[10] կոչված տեսակներն են արտադրում: Այն տանում են Հայաստան, ուր մանվում և հյուսվում (գործվում) է:

Վասիթից Բասրա ճանապարհն անցնում է ճահճուտ տափաստանով (Բաթաիհ): Այսպես է կոչվում, որովհետև բազում ջրեր այստեղ են կուտակվում, ապա այստեղից թափվում են Աուրա (չիլ) Տիգրիսը, ապա հոսում դեպի Բասրա և թափվում Իրն Օմար գետը:

ԲԱՍՐԱ

*Բասրան եղել է երկրի [կարևորագույն] քաղաքը և վաճառականության ու հարստության կենտրոնը: Սա մի երկարավուն քաղաք է և նրա տարածությունն, ըստ Օմար իբն ալ-Խաթթաբ [խալիֆայի] օրոք տասնյոթ (638) թվականին, նվաճման ժամանակ պատրաստված հատակագծի երկու փարսախով մեկ փարսախ էր: Նրա ներքին մասը, որը ձգվում է դեպի հյուսիս, երկու գետի վրա է [կառուցված], մեկը կոչվում է Իրն Օմարի գետ, իսկ մյուսը[11] [.....]**

*[Տիգրիսը մի քաղաք է Հայաստանում, նրա և Կարնո քաղաքի միջև հեռավորությունը երեսուն փարսախ է: Կարնո քաղաքից սկիզբ են առնում մեծ գետեր, որոնցից առաջինը Եփրատն** (Արաքս) է: Սա հոսում է բխելով Կարնո քաղաքից երկու փարսախ հեռավորության վրա, ապա շարունակում է ուղղվելով դեպի Դվին, ապա Վարդանակերտ և թափվում է Խաղարաց ծովը: Երկրորդ մեծ գետը (Կուր) բխում է Կարնո քաղաքից, ապա անցնում Տփղիս և դեպի արևելք մինչև Պարտավի հողը: Ապա մոտենում է Խաղարաց ծովին, միանում Արաքսին դառնալով մեկ գետ: Ասվում է, որ Արաքսի ետևը երեք հարյուր ավերակ քաղաք կար: Այս մասին է հիշել Ալլահը խոսելով Արաքսի (ալ-Ռաս) մարդկանց մասին (Ղուրան, Իե, 40): Սրանց մոտ էր ուղարկված Հանզալա իբն Սաֆուանը, որին սպանեցին: Արաքսի մարդկանց մասին նաև այլ բաներ են պատմում:*

* *Այստեղ ձեռագիրը մի մեծ պակասող հատված ունի:*
** *Ըստ չարագրանքի խոսքը վերաբերում է Արաքսին և ոչ թե Եփրատին:*

Հայաստանը բաժանվում է երեք մասի[12]. առաջին մասը Դվին քաղաքն է, Կարնո քաղաքը, Խլաթը, Շիմշաթը և Սավաղը:

Երկրորդ մասը Պարտավ (Բարդաա), Փայտակարան (Բայլական), Կապաղակ (Կաբալա) և Բար ալ-Արուար (Դարբանդ) քաղաքներն են:

Երրորդը Վիրք (Ջուրգան) քաղաքն է, Տփղիս քաղաքը և այն, որ Հայտնի է Երկկոտոչավորի (Ալեքսանդր) մղկիթ անունով:

Հայաստանը նվաճվել է Օսմանի խալիֆայության օրոք: Այն նվաճել է Սուլայման (Սալման) իբն Ռաբիան, քսաներորս տարում (644–645)]:*

[Ասել է Ահմադ իբն Աբու Յակուբը թե Հայաստանը երեք մասից է բաղկացած: Առաջին մասն ընդգրկում է Կարնո քաղաքը, Խլաթ, Շիմշաթ քաղաքները և սրանց միջև ընկած հողերը: Երկրորդը՝ Վիրքը, Տփղիսը և Դարբանդ քաղաքը և Ալանքը (ալ-Լան) և սրանց միջև ընկած հողերը: Երրորդ մասն ընդգրկում է Պարտավը, որն Առանի (գլխավոր) քաղաքն է, Փայտակարաներ և Դարբանդը]:

[.....] Խարսիանոնը (Խարչանան)՝ հինգ հարյուր ձիավոր, Սելևկիան (Սալուկիյա)՝ հինգ հարյուր ձիավոր, Թրակիան (Տարակիա)՝ հինգ հազար ձիավոր, Մակեդոնիան՝ երեք հազար ձիավոր: Իսկ Ռումի երկրի ամբողջ բանակը, որը բաղկացած է գավառներում ու գյուղերում, որպես կայազոր դրված զորքից, քառասուն հազար ձիավոր է: Նրանք չունեն կանոնավոր զորք, այլ պատերազմի ժամանակ ամեն մի գավառից հավաքվում են ռազմիկներ, որոնք իրենց պատրիկի գլխավորությամբ կռվի են դուրս գալիս:

Ռումի երկրի, նրա զորքերի, քաղաքների, բերդերի, նավահանգիստների, լեռների, կիրճերի, հովիտների, լճերի և [արաբների կողմից] հարձակման ենթարկվող վայրերի մասին խոսել ենք մյուս գրքում, իսկ հիմա հիշել ենք ճանապարհները դեպի Սահմանային ամրություններ և հարակից շրջանները:

* *Յակուբիի երկի այս պակասող հատվածում խոսվել է նաև Հայաստանի մասին: Բարեբախտաբար արաբ պատմիչներ Շարիշին ու Աբու-լ-Ֆիդան պահպանել են Յակուբիից քաղված տեղեկությունները Հայաստանի մասին, որը տալիս ենք քառակուսի փակագծերի մեջ:*

ՅԱԿՈՒԲԻ

ԳԻՐՔ ԵՐԿՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ (ԿԻՏԱԲ ԱԼ-ԲՈՒԼԴԱՆ)

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

[1] *Յակուբին չարունակում է իր նկարագրած երկրները չորս մասի բաժանելու սկզբունքը, որ գտնում ենք Իբն Խորդադբեհի մոտ, այսինքն Մաշրիկ (Արևելք), Մաղրիբ (Արևմուտք), Ջարբի (Հյուսիս) և Տայման (Հարավ):*

[2] *Ջարմանալի է Ատրպատականը Արևելք (Մաշրիկ) համարելու պարագան, քանդի արաբ մատենագիրները միշտ իրանական այս նահանգը համարել են Հյուսիսի (Ջարբ) մի մասը:*

[3] *Ջափաղանց արժեքավոր է այս տեղեկությունը, ուր պարզ կերպով ասվում է, որ Ատրպատականում ապրել են ադերի պարսիկներ (աջամ, ազարիյա) և իրոք այդ ազգաբնակչությունը ոչ միայն իրանական էր, այլև գրեթե պարսիկ: Նույնպիսի իրանական բնակչություն է ունեցել նաև Շարուանը:*

[4] *Այստեղ թվում է թե ջավիդանները մի ինքնուրույն իրանական ցեղ, կամ ցեղախումբ էին ներկայացնում, որը հավանաբար ամբողջովին ընդունեց խուռամյան ուսմունքը և նրա քարոզիչի անունով էլ կոչվեց Ջավիդանիյա:*

[5] *Այս արտահայտությունը տիրող իրական վիճակն է բացահայտում: Իրոք, խալիֆայության նահանգների տարեկան հարկի քանակը երբեք կայուն չի եղել, ոչ միայն մեկ խալիֆայից մյուսին անցնելու հետևանքով, այլև նույն խալիֆայի օրոք:*

[6] *Ջարմանալի է այս տեղեկությունը, քանի որ Տիգրոնը, դեռ նույնիսկ Արշակունիների օրոք, մայրաքաղաք է եղել:*

[7] *Սալման ալ-Ֆարիսին (պարսիկ) ապրել է Արաբիայում, մոտիկ է եղել Մուհամմադին և օգնել է նրան:*

[8] *Հուդայֆա իբն ալ-Յամանը Ասորիքում և Իրաքում արաբական արշավանքների մասնակից զորավարներից էր:*

[9] *Ռումիյան Տիգրոնի քրիստոնեական թաղամասն է, որը կոչվել է Հոռոմների (քրիստոնյա բյուզանդացիների) անունով: Հետագայում ևս Բաղդադում նեստորական կաթողիկոսի նստավայր վանքի (Դայր ալ-Ռում) չուրջը կազմավորված քրիստոնեական թաղամասը կոչվում էր Հոռոմների Տուն բնակավայր (Դար ալ-Ռում):*

[10] *Հետաքրքրական է, որ այդ գործվածքեղենի տեսակները, որոնք ընդհանուր անունով հայկական (արմանի) են կոչվել գոյություն են ունեցել դեռ Ը–Թ դարերում, որի մասին եղակի տեղեկություն է Յակուբիի վկայությունը: Ինչ վերաբերում է հետագայում՝ Բագրատունյաց ժամանակաշրջանում գոյություն ունեցող այդպիսի արտադրությանը, ապա այդ մասին կան հարուստ վկայություններ Ժ դարի արաբ աշխարհագրագետների մոտ:*

[11] *Յակուբիի թե՛ պատմության, թե՛ աշխարհագրության ձեռագրերը պակասավոր են և երկուսն էլ գտնվել են մեկական ձեռագրով: Այստեղ պակասող մասը պետք է վերաբերի հենց Հայաստանին և եթե նկատի ունենանք, որ Յակուբին Հայաստանի մասին լավատեղյակ է, քանի որ այնտեղ ապրել է, ուստի պետք է ենթադրել որ նա չատ մանրամասն և կարևոր տեղեկություններ պետք է հաղորդեր: Նրանից երկու փոքր հատված պահպանվել է Իսպանիայում ապրած արաբ մատենագիր Շարիշիի (մեռ. 1222) մոտ (Крачковский, т. IV, стр. 306), ինչպես նաև պատմիչ-աշխարհագրագետ Աբու-լ-Ֆիդայի (1273–1333) աշխարհագրական երկում, որը և քառակուսի*

փակագծերի մեջ դետեղում ենք, որպես լրացուցիչ նյութ:

12 Այս տեղեկությունը, թե Արմինիան երեք մասի էր բաժանվում, մեծ նշանակություն ունեցող վկայություն է, որը մի մեծ թյուրիմացությունից է փրկում Հայաստանի արաբական չրջանի մասնագետներին: Գրեթե բոլոր արաբ աշխարհագրագետներն ու պատմիչները Արմինիան բուն նախկին ժամանակաշրջանի (2-է դարեր) բաժանում են 4 մասի՝ Առան (Ա Հայաստան), Վիրք (Բ Հայաստան), արևելյան Հայաստան (Գ Հայաստան) և արևմտյան Հայաստան (Դ Հայաստան): Այս քառակի բաժանումը արաբական չրջանի համար ոչ մի վարչական, կամ ազգային հիմք չունի, իսկ Արմինիա նահանգի եռակի բաժանումը արդեն որոչ չափով ավելի մոտ է իրականությանը, քանի որ Հայաստանը հանդես է գալիս, որպես մեկ միավոր և իրոք նա Արմինիայի կազմում առանձին վարչական ազգային միավոր էր, որը կառավարում էր Հայոց իչխանը (բաթրիկ), իսկ մյուս երկու միավորներից առաջինը ընդգրկում է Հայոց արևելից կողմանք (Արցախ և Ուտիք նահանգները) և Աղվանքը, Շիրվանը և Դարբանդը: Երրորդ միավորը Վիրքն է (Ջուրջան):

13 Բյուգանդիային վերաբերող այս հատվածով վերջանում է Յակուբիի աչխարհագրական երկում Հյուսիսի (Ջարբ) մասին հատվածը: Հեղինակը հիչում է, որ իր մյուս գրքում («Պատմություն») նա հիչել է Սահմանային ամրությունների (Սուղուր) մասին: Արու-լ-Ֆիդայի մոտ փոխվում է հաջորդականությունը: Հիչվում է Հայաստանը, ապա Վիրքը, որին թյուրիմացաբար միացվում է Դարբանդը: Միավորում է նաև Ալանաց երկիրը, երրորդ տեղում հիչվում է Առանը, որին դարձյալ միացվում է Դարբանդը:

Ծանոթագրությունները՝ Արամ Տեր-Ղևոնդյանի

ԻԲՆ ԱԼ-ՖԱԿԻՀ
(մահ. 903-ից հետո)

Պարսիկ արաբագիր աչխարհագրագետ Աբու Բաքր Ահմադ իբն Մուհամմադ Իբն ալ-Ֆակիհը ծնվել է Իրանի Համադան քաղաքում, գրագետ ընտանիքում: Նրա կյանքի վերաբերյալ չատ բան հայտնի չէ: Ըստ երևույթին հեղինակ է երկու աչխատության: Դրանցից մեկը, որ ժամանակակից բանաստեղծների գործերի մի ծաղկաքաղ է եղել մեզ չի հասել, իսկ մյուսը՝ «Գիրք երկրների մասին» (Քիտաբ ալ-Բուլդան), որը գրել է չուրջ 903-ին, աչխարհագրական բնույթի է և կազմել է հինգ հատոր, բայց մեզ հասել է միայն դրանց հիման վրա կազմված սեղմ չարադրանքը, իրականացված ավելի քան հարյուր տարի անց՝ 1022-ին Ալի իբն Ջաաֆար ալ-Շայզարիի կողմից:

Այն գրված է գրական գեղեցիկ լեզվով և պարունակում է ոչ միայն դուտ աչխարհագրական տեղեկություններ, այլև ավանդություններ, առասպելներ, զրույցներ և այլ հետաքրքրական տեղեկություններ:

Հետագայում այս երկից մեջբերումներ է անում 13-րդ դարի մատենագիր Յակուտը: Իր երկում Իբն ալ-Ֆակիհը նկարագրում է մի ամբողջ չարք երկրներ, որոնք, ըստ նրանց հատկացված տեղի ու կարևորության, կարելի է դասավորել հետևյալ կերպ. Իրան, Արաբիա, Իրաք, Սիրիա, Եգիպտոս, Ռում, Ջազիրա, Նուբիա, Հաբեչստան. համառոտ ամփոփում է տրված Մաղրիբին, Անդալուսին և Սուդանին:

Ներկա թարգմանությունը կատարված է հետևյալ հրատարակությունից. Bibliotheca Geographorum Arabicorum, edidit M. J. De Goeje, Pars Quinta. Compendium libri Kitab al-Boldan, auctore Ibn al-Fakih al-Hamadhani, Lugduni-Batavorum, apud E. J. Brill, 1885.

(R. Blachère et H. Darmaun, Extraits des Principaux Géographes Arabes du Moyen Age, Paris, 1957, p. 70 , Ibn al-Fakih, H. Masse, EOI, CD-ROM, (III: 760b), Крачковский, IV, стр. 156*)*

Տե՛ս նաև.

1)Валидов А. З. Мешхедская рукопись Ибну-ль-Факиха. ИРАН, 1924, стр. 237-248.

2) Ибн ал-Факих, Ахбар ал-Булдан (Известия о странах) Введение, перевод с арабского, издание текста и комментарии А. С. Жамкочяна, Ереван, 1979.

ԻԲՆ ԱԼ-ՖԱԿԻՀ

ԳԻՐՔ ԵՐԿՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ
(ՔԻՏԱԲ ԱԼ-ԲՈՒԼԴԱՆ)

ԽՈՍՔ ԵՐԿՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՄԱՍԻՆ

ԷՋ 4–7

Ասել է Մուհամմադ իրն Մուսա ալ-Խորեզմին, թե երկրի չրջանակի երկարությունն է ինը հազար փարսախ: Այս բոլորի միայն մեկ տասներկուերորդն է բնակելի, մնացած տարածության մեջ չկան կենդանիներ ու բուսականություն: Մովերը բնակելի մասի մեջ են, ինչպես նաև անապատները, որոնք գտնվում են բնակված մասերի միջև:

Դորոտեոսը (Դուրիտուսս) գտնում է, որ երկրի յոթ իկլիմները համապատասխանում են երկնքի մեծ աստղերին: Երկու քաղաք կա Սատուրնի (Զուհալ) իկլիմում, երկու քաղաք՝ Յուպիտերի (Մուշտարի) իկլիմում, երկու քաղաք՝ Մարսի (Միրրիխ) իկլիմում, մեկ քաղաք՝ արևի իկլիմում, երկու քաղաք՝ Վեներայի (Զուհրա) իկլիմում, երկու քաղաք՝ Մերկուրիի (Ութարիդ) իկլիմում և մի քաղաք՝ լուսնի իկլիմում:

Ասում են, թե այս յոթ իկլիմներից մեկը գտնվում է արաբների ձեռքում, մի իկլիմը՝ Հռոմների ձեռքում, մի իկլիմ՝ եթովպիացիների (Հաբաշ) ձեռքում, մի իկլիմ՝ Հնդիկների ձեռքում, մի իկլիմ՝ Թուրքերի ձեռքում, մի իկլիմ՝ չինացիների ձեռքում և մնկն էլ՝ Գոգի (Յաջուջ) և Մագոգի (Մաջուջ) ձեռքում: Մի իկլիմի բնակիչները չեն մտնում մյուսի հողերը:

Յոթ իկլիմների երկարությունը, ըստ առաջին իկլիմի վրա կատարված հաշվումների, երեսունութ հազար հինգ հարյուր փարսախ է, իսկ լայնությունը՝ հազար ինը հարյուր իննսունհինգ փարսախ է:

Բնակելի աշխարհը բաժանվում է չորս մասի՝ Եվրոպա (Արուֆա), որի մեջ են Անդալուսը, սլավոնները, Հռոմները, ֆրանկները և Տանժերը մինչև եգիպտոսի սահմանները:

[Երկրորդ մասում է] Լիբիան (Լուբիա)[1], որի մեջ են եգիպտոսը, Կուզումը[2] (Կարմիր ծովի ափին), եթովպիան (Հաբաշա), բերբերները, նրանց հարակից մասերը և Հարավային ծովը[3]: Այդ երկրներում չկա ոչ վարազ, ոչ նղկերու, ոչ նոխազ, ոչ այծ:

[Երրորդ մասում կան] Տիհաման[4], եմենը, Սինդը[5], Հնդկաստանը:

Սկիթիայի մեջ են Հայաստանը, Խորասանը, Թուրքերը և խազարները:

Հերմեսը (Հիրմիս)[6] գտնում է, որ ամեն մի իկլիմի երկարությունը հարյուր փարսախ է, ինչպես նաև լայնությունը:

ՄԱԴԻՆԱՅԻ ՄԱՍԻՆ
[.....]

ԷՋ 25

Նրա հրաչալիքներից է Արջ լեռը[7], որն ընկած է Մադինայի ու Մեքքայի միջև: [Լեռնաշղթան] ձգվում է մինչև Ասորիք և միանում Լիբանանի [լեռներին] եմեսայի կողմից: Ապա ձգվում է մինչև Անտիոքի և Մամեստիայի լեռները, որոնք կոչվում են Լուքքամ (Ամանոս), միանում է Մալաթիայի, Շիմշաթի ու Կարնո քաղաքի լեռներին և վերջապես հասնում Խաղարաց ծովը ուր Բար ալ-Աբուաբն է (Դարբանդ):

Այստեղ [լեռնաշղթան] կոչվում է Կովկաս, որի վրա յոթանասուն լեզու է [խոսվում] և մի լեզուն խոսողը մյուսի լեզուն չի հասկանում առանց թարգմանչի:

ԳԼՈՒԽ ՊԱՆԴՈՒԽՏՆԵՐԻ ՈՒ ՊԱՆԴՈՒՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ԷՋ 50–51

*Ասել է, և եթե չլիներ պանդուխտների (ճանապարհորդների) պանդխտությունը, չէին իմանա այն բոլորի մասին, որ Անդալուսի ու Չինաստանի միջև գոյություն ունի ու ոչ էլ Ալեքսանդրը[8] կկառուցեր պարիսպը[9], նվաճած կլիներ երկրները, ոչ չենացրած կլիներ քաղաքները, հպատակված կլիներին թագավորները, ոչ էլ սպանված կլիներ Դարեհի որդի Դարեհը[10], կամ գերված կլիներին հեծյալները և ոչ էլ թագավորները հավաքած կլիներին նմանական սրերի չեղբերը, հնդկական մկունդները, բելուջական նիզակները, խազարական զենքի ծայրերը, Հերատի սյուները, Ուչրուսանայի հատու սրերը, սողդիական դաչույնները, չինական թամբերը, Սաբուրի (Իրան) զրահները, պարսկական զրահները, Շաչի աղեղները, թուրքական լարերը, նաուխական նետերը, սիջիստանյան կապարճները, մաղրիբյան կաչվե վահանները, տիբեթյան վահանները, զինջի (աֆրիկյան) կաչիները, բերբերական վագրերը, Խանաբադի սանձերը, Մերվի ասպանդակները, չինական վարագույրները, խազարական ձիերը, Կումի աթոռները, Բուխարայի ձիերը, հայկական ջորիները, Մարիսի (Վերին Եգիպտոսում) ավանակները, (Անտիոքի) Սելևկիայի չները, Հռոմների բա-

զնները, Նիհավանդի մականները, Ռեյի լուսավոր զգեստները, Ղազվինի պատմուճանները, Սաիդի[11] զգեստները, նմենական զգեստները, եգիպտական թիկնոցները, խորասանյան մետաքսե զգեստները, Թահիրի (Բաղդադի մոտ) զգեստները, անդալուսյան գործվածքները, Օմանի մարգարիտը, Ցեյլոնի (Սարանդիբ) հակինթը, չինական մետաքսը, Տուստարի դիպակը, Հոռոմների մետաքսը (բազիուն), եգիպտական քթանը, Քուֆայի գույները (Ուաչչ), Սպահանի (Իսֆահան) [.....]:

ԽՈՍՔ ԴԱՄԱՍԿՈՍԻ ՄԱՍԻՆ

ԷՋ 125

Արու Խահակը հիշել է, որ Սանաա (Եմեն) քաղաքում տեսել է խաղողի մի տեսակ, որը կոչվում է Մուխատտամ (օղակավոր), որի մեկ հատիկը կշռել է և գտել, որ չորս աստարից[12] ավելի է, իսկ աստարը չորս դիրհեմ է: Ռաչիդ [խալիֆայի] կառավարիչներից մեկը Եմենում, ուխտագնացություններից մեկի ժամանակ, նրա մոտ բերեց [այդ խաղողից] երկու ողկույզ՝ ուղտերի վրա բարձած [սապատի], երկու կողմերում:

Հայաստանի ու Ատրպատականի լեռներից տանում են [վաճառքի] որթատունկի փայտից հսկայական սեղաններ, որոնց չրջանակը երբեմն լինում է քսան թիզ:

ԽՈՍՔ ՋԱԶԻՐԱՑԻ ՄԱՍԻՆ

ԷՋ 128–136

Հարցրել են Շաաբիին Ջազիրայի, այսինքն արաբաց Ջազիրայի (կղզի, Թերակղզի) մասին և նա ասել է, որ դա գտնվում է Ուդդայրի ու Հաղրամաուտի միջև:

[Ճիշտն այն է, որ] ասվել է, թե Ջազիրան (կղզին) Տիգրիսի ու Եփրատի միջև է, իսկ Մոսուլը, ինչպես նաև Ռակկան ու Ռաֆիկան, Ջազիրայի մեջ են: Ասել է Մուհամմադ իբն Հասանը՝ Արաբաց երկիրը նրանց երկիրն է, որոնցից գլխահարկ (ջիզիա) չի վերցվում և նրանցից պահանջվում է միայն ընդունել մահմեդականությունը, կամ սուրը (պատերազմը): Ուդդայրից մինչև Աբյան Ադեն, ահա սա է [արաբական] Ջազիրան[13] (կղզին):

Մոսուլը (Մաուսիլ) այսպես է կոչվել, որովհետև միացնում է Ջազիրան ու Ասորիքը: Ջազիրան երկարում է Սամոսատից մինչև Բալաղ ու Մոսուլից մինչև Հորդանան: Ասվել է նաև, թե կոչվել է Մոսուլ

(Մաուսիլ՝ միացնող), քանզի միացնում է Եփրատը Տիգրիսին: Մոսուլ քաղաքը կառուցել է Մուհամմադ իբն Մարուանը, իսկ Մոսուլի Ռավանդը կառուցել է Ռավանդ իբն Բիուարասֆը (Բիւրասպ):

Օմար իբն ալ-Խաթթաբ [խալիֆան] Մոսուլի կառավարիչ էր նշանակել Ութբա իբն Ֆարկադ Սուլամիին 20 (640–641) թվականին: Նրա դեմ կռվեցին բերդի բնակիչները, իսկ նա գրավեց նրա արևելյան բերդը բռնի ուժով, ապա անցավ Տիգրիսը և նրա հետ հաչտություն կնքեց մյուս բերդի ժողովուրդը պայմանով, որ գլխահարկ վճարեն և ով կամենա, իրավունք ունենա հեռանալու: Ապա նվաճեց Մարջն[14] ու նրա գյուղերը, Բանուհադրայի հողն ու Դասինը և քրդերի բոլոր անառիկ բերդերը:

Առաջինը, որ Մոսուլի հատակագիծ պատրաստեց, արաբներով բնակեցրեց ու քաղաքի վերածեց այն, Հարսամա իբն Արֆաջա ալ-Բարիկին էր: Օմարը Ութբային հեռացրել էր Մոսուլից և կառավարիչ նշանակել Հարսամային: Նրանում (Մոսուլում) կային բերդը, քրիստոնյաների եկեղեցիները, տները, հրեաների թաղամասերը: Հարսաման քաղաք դարձրեց այն և կառուցեց մայր մզկիթը: Ապա կառուցեց Հաղիսան, որը հին գյուղ էր և այնտեղ կար երկու եկեղեցի: Սա ևս քաղաք դարձրեց և արաբների բնակեցրեց և սա կոչվեց Հաղիսա (նոր), քանի որ ավելի նոր է քան Մոսուլը: Ութբա իբն Ֆարկադը նվաճեց Թիրհանը, Տիքրիտը և Տիքրիտի բերդի բնակիչներին նրաչխավորագիր տվեց նրանց անձերի, ունեցվածքի համար և Բաջարմակ[15] գավառը մինչև Հասավ Շահրազուր:

Տիքրիտը Մոսուլի գավառներից է և նրա դիմաց անապատում կա Հադրա քաղաքը, Սինջարի[16] անապատում: Հեռավորությունը նրա և Տիգրիսի միջև տասնհինգ փարսախ է, իսկ նրա և Եփրատի միջև նույնպես տասնհինգ փարսախ է: Սպիտակ քարով են կառուցված թե՛ տները, թե՛ կուռքերը և դռները: Գտնվում է բլրի վրա, ունի վաթսուն մեծ աչտարակ, իսկ մի աչտարակի ու մյուսի միջև կա ինը փոքր աչտարակ, ամեն մի աչտարակի գլխին կա ամրոց և ներքևում՝ բաղնիք: Նա գտնվում է Սարսար գետի վրա, որը ճեղքում է քաղաքը և մյուս կողմից դուրս գալիս, իսկ նրա երկու ափերին կան գյուղեր պարտեզներ: Սարսարը դուրս է գալիս Սինջարից ու թափվում է Եփրատը և այն նավարկելի գետ է:

Մոսուլի [նահանգում] են նաև Թիրհանը, Սիննը, Հադիսան, Մարջ-Հայնան, Նինվեն (Նինեաւա), Բաջլին, Մարջը, Բանուհադրան, Բաադրան, Հիբտունը, Բանակլին, Հազղան, Բանասը, Մալան, Ռամինը, Հանայան, Բաջարման, Բաբաղիչը, Դասինը, Քաֆարիզղան:

Մոսուլի խարաջը չորս միլիոն դիրհեմ է:

Մոսուլում կա մի լեռ, որը ծառաչատ լինելու պատճառով կոչվում է Շարան, իսկ ծառը կոչվում է Շարա (մազոտ): Ասվում է նաև, թե

այդ լեռը Բաջարմայում է գտնվում և կոչվում է Կանդիլ, իսկ պարսկերեն՝ Բալատ Շիրույեհ: Սա ամենաչեն լեռներից է, նրա վրա կա տանձ, խաղող, թռչունների տեսակներ և հսկա ծառեր, որոնք կտրում են և տանում Իրաք: Ձմեռ և ամառ ձյունը միշտ մնում է: Երբ Դակուկայից դուրս են գալիս նրա մի երեսը երևում է Փոքր Զաբի կողմից:

Ասել է Ջուհրին՝ Վերին Միջագետքում (Ջազիրա), Օմար իբն ալ-Խաթթաբ [խալիֆայի] ոտք դնելու տեղ չէր մնացել, որ չնվաճվեր Իյադ իբն Ղանմի կողմից: Սա նվաճեց Խառանը, Ռակկան, Կիրկիսիան, Մծբինը, Սինջարը, Ամիդը, Նփրկերտը, Քաֆրտուսան, Թուր Աբդինը, Մարդինի բերդը, Դարան և Արզնը:

Ռակկան Դիար Մուդարի կենտրոնն է, իսկ Ռաֆիկան աննշան վայր է եղել և այն չենացրել է Մանսուր [խալիֆան] 155 (771-772) թվին, Բաղդադի կառուցման ժամանակ և այնտեղ կայազոր է նշանակել Խորասանի զորքերից:

Նրա (Դիար Մուդարի) քաղաքներից են Եղեսիան, Սամոսատը, Սարուջը, Ռաս Քայֆան, ալ-Արդ ալ-Բայդան (սպիտակ հող), Տելլ Մաուզանը, Ռավաբին, Մազջինը, Մուդայբիրը, Սերգիոպոլիսը (Ռուսաֆա), Քաֆր Հաջարը և Ջազիրան:

Դիար Մուդարի խարաջը մեկ միլիոն վեց հարյուր հազար դիրհեմ է:

Դիար Ռաբիայի գավառներից են Մծբինը, Արզնը, Ամիդը, Ռաս Այնը, Նփրկերտը:

Մոսուլից Բալադ յոթ փարսախ է, Մծբինից Արզն, աջ ընթացքով երեսունյոթ փարսախ է, Ամիդից Ռակկա հիսունչորս փարսախ է:

Դիար Ռաբիայի խարաջը յոթ միլիոն յոթ հարյուր հազար դիրհեմ է:

Ջազիրայի հրաչալիքներից է Եղեսիայի եկեղեցին: Հոռոմներն ասում են, թե չկա Եղեսիայի եկեղեցուց ավելի գեղեցիկ քարաշեն չենք, իսկ Մանբիջի եկեղեցուց ավելի գեղեցիկ փայտաշեն կառուցվածք չկա: Ասվում է, որ Եղեսիայի չուրջը երեք հարյուր վաթսուն վանք կա: Եղեսիայում կար մի կնոջ պատկեր, որը կոչվում էր Հեղինե (Հայլանա), նստած աթոռին և չկար նրա մարմնի ու դեմքի նման գեղեցկություն: Մի մարդ (պատանի) սիրահարվել էր նրան ու հիվանդացել սիրուց: Սակայն եկել էր հայրը, կտրել սրա գլուխը և երբ պատանին նայել էր նրան, հանգստացել էր:

Ջազիրայի ու Դիար Ռաբիայի խարաջը ինը միլիոն յոթ հարյուր տասնհինգ հազար ութ հարյուր դիրհեմ է:

Արզնի [հարկը] մեկ միլիոն հիսունվեց հազար է:

Ամիդի [հարկը] մեկ միլիոն հարյուր հիսուն հազար է:

Դիար Ռաբիայում [գտնվող] Նփրկերտի [հարկը] ութ հարյուր հիսունվեց հազար է, նույնպես և այլ քաղաքներինը, ինչպես Մարդին,

Դարա, Բալադ, Սինջար, Կարդա, Բազարդա, Թուր Աբդին և Ռաս Այն, որոնց ընդհանուր հարկը հիշվեց:

Դիար Մուդարում Խառանի [հարկը] յոթ հարյուր քառասուն հազար է:

Եղեսիայի [հարկը] մեկ միլիոն երեք հարյուր հազար դիրհեմ է:

Սամոսատի [հարկը] մեկ միլիոն դիրհեմ է:

Սարուջի [հարկը] վեց հարյուր հազար դիրհեմ է:

Եփրատի գյուղերի [հարկը] վաթսուն հազար դիրհեմ է:

Ռաս Քաֆրայի [հարկը] երեք հարյուր հիսուն հազար դիրհեմ է:

Արդ ալ-Բայդայի [հարկը] հարյուր հիսուն հազար դիրհեմ է:

Ռակկայի [հարկը] հարյուր վաթսուն հազար դիրհեմ է:

Ռաֆիկայի, Ռավաբիի [հարկը] հիսունյոթ հազար դիրհեմ է:

Մազջինի, Մուդայբիրի [հարկը] հարյուր ութսունհինգ հազար դիրհեմ է:

ԽՈՍՔ ՌՈՒՄԻ ՄԱՍԻՆ

էջ 136-139

Ռումը (Հոռոմների երկիրը) հիշեցինք այս տեղում, որովհետև հարևան է Ասորիքին ու Վերին Միջագետքին (Ջազիրա):

Ասել է Յահիա իբն Խալիդ ալ-Բարմաքին, թե թագավորները հինգն են՝ կահ կարասու թագավորը, գրաստի (ձիու) թագավորը, ունեցվածքի (դրամի) թագավորը, փղերի թագավորը և բուժըմպելիքի (էլիքսիր) թագավորը: Կահ կարասիի թագավորը Չինաստանի թագավորն է, գրաստի (ձիու) թագավորը Թուրքաց թագավորն է, ունեցվածքի (դրամի) թագավորը արաբաց թագավորն է, փղերի թագավորը Հնդկաստանի թագավորն է, իսկ բուժըմպելիքի թագավորը (էլիքսիր) հոռոմոց թագավորն է:

Ռումի երկիրը արևմուտքում է, արևմտյան քամու (դաբբարու) կողմը: Տարածվում է Անտիոքից (Անթաքիա) մինչև Սիկիլիա և Կոստանդնուպոլսից մինչև Տուլիա: [Բնակիչները] մեծ մասամբ Հոռոմ ու սլավոն են: Անդալուսում բնակվում են սլավոնները (սակալիբա)[17]: Հոռոմները բոլորն էլ մելքիտ[18] (մալքանիա) քրիստոնյա են, Ավետարանը (Ինջիլ) կարդում են:

Նրանք ունեն կովեր, ձիեր, ոչխարներ: Կառավարվում են Աստվածաշնչի (Տաուրատ) կանոններով: Ունեն արհեստներ, փիլիսոփայություն և բժշկություն:

Նրանք ամենահմուտ ազգն են նկարչության մեջ: Նրանց նկարիչը մարդուն այնպես է նկարում, որ ոչինչ չի վրիպում, ապա եթե չի հավանում (փոխում է) և մարդուն երիտասարդացնում է, կամ զարձ-

նում է Հասուն տարիքի և կամ՝ ծեր: Եթե նորեն չի հավանում, գեղեցկացնում է ու հաճելի է դարձնում, ինչպես նաև ծիծաղկոտ, կամ արտասվող: Ապա տարբերություն է դնում չարախինդ ծիծաղի ու ամաչկոտ ծիծաղի, մտահոգվածի ու ժպտադեմի, ուրախության ու անհոգության միջև: Նա նույնիսկ պատկերը պատկերի մեջ է մտցնում:

Երբ Կավատ [արքան][19] և Ռումի թագավոր կայսրը հաչտություն էին կնքել, կայսրը նրան բազում ընծաներ էր տվել և նվերների մեջ աղջկա (ջարիա, հարճ) ոսկե արձան, որը գիշեր ժամանակ երգում էր ու քնեցնում լսողին: Տվել էր նաև մի հսկայական վրան (փուսթաթ) և մի զամբյուղ գոհարեղեն:

Խալիֆաներից մեկը Ումարա իրեն Համզային ուղարկել է հոռոմոց թագավորի մոտ և գրել էր նրան սպառնալով իր հնծյալներով ու հնտիոտն զորքով:

Պատմել է Ումարան՝ հասա մի վայր, ուր մարդը չի երևում տարածության երկար լինելու պատճառով: Նստեցի, մինչև որ արտոնություն ստացա ու գնացի մի ուրիշ տեղ ու նորից նստեցի, մինչև որ երեք անգամ արտոնություն ստացա, ապա վերջապես հասա նրա (թագավորի) ապարանքը: Ինձ մտցրեցին մի ապարանք, ուր իմ ճանապարհի երկու կողմերում կար երկու առյուծ, իսկ ես պետք է անպայման նրանց միջով անցնեի: Մտածեցի թե մեռնելու եմ, սակայն պետք չէ ընկճված մեռնեմ և իմ ուժերը հավաքելով առաջ գնացի, երբ նրանց մոտ հասա, երկուսն էլ հանդարտվեցին, և ես անցա: Եթե նրանց միջով ճանճն անցներ, կտոր-կտոր կանեին: Մտածեցի՝ նա, որ երկու առյուծների միջով ինձ ապահով անցկացրեց, կանցկացնի նաև այս սրերից: Օգնության կանչեցի Ալլահին ու գնացի առաջ և երբ նրանց մոտ հասա, անշարժացան և ես անցա ու մտա երրորդ չենքը (ապարանքը), որի մեջն էր թագավորը:

Երբ մտա, տեսա որ նա ընդարձակ դահլիճում է, սակայն գրեթե չէի տեսնում նրան, քանի որ իմ ու նրա միջև մեծ հեռավորություն կար: Քայլեցի մինչև որ մեկ երրորդն անցա, և ահա ինձ պատեց մի կարմիր ամպ և ոչինչ չէի տեսնում: Տեղումս մեկ ժամ նստեցի, ապա չուրջս պարզվեց: Ելա ու քայլեցի և երբ երկու երրորդն էի հասել, մի կանաչ ամպ ինձ պատեց և իմ տեսողությունը ծածկվեց: Նստեցի, մինչև որ չուրջս պարզվեց և վեր կացա, քայլեցի ու հասա թագավորին, ողջունեցի նրան, իսկ թարգմանն իմ և նրա միջև էր, ապա հանձնեցի նամակը [խալիֆայի]: Հրամայեց նստել ու հարցրեց խալիֆայի ու տարբեր նահանգների մասին: Ապա կարգադրեց ինձ համար ապահովել կացարան և ինչ որ հարկավոր էր: Իսկ ինձ հրամայեց գնալ ու մյուս օրը ներկայանալ:

Հաջորդ օրը եկա և նա բարեկամաբար խոսեց: Մի օր նրա հետ ձի-

ով գնացինք ու հասանք մի պատի, որի վրա դուռ կար և պահապաններ: Մտանք ու տեսանք, որ կան մոչենու տեսակներ: Հարցրեց՝ գիտես այս ծառը, ասացի՝ ոչ: Ասաց՝ սա մի ծառ է, որի ծուխը բուժում է ուռուցքը և համեցնում ճաշը: Մտքումս ասացի՝ թե իմանայիր, որ սա մեր երկրում արհամարհված փայտի տեսակ է: Ապա գնաց ուրիշ պատի մոտ, որի վրա դուռ կար և պահապաններ: Մտավ և մենք ևս մտանք նրա հետ և տեսանք մեկ կաֆիզ (144 կանգուն) տարածությամբ հողամաս, որտեղ կար կապարի (քաբար) բույս: Հարցրեց՝ գիտե՞ս սա ինչ է, ասացի՝ ոչ և մտածեցի նույնը որ մտածել էի: Ասաց՝ սա մի բույս է, որը կոչվում է [.....], բուժում է պատռվածքը և դասվում է վիրաբույժների դեղերի չարքը: Մտքումս ասացի՝ թե իմանար որ սա մեզ մոտ լինում է միայն ավերակ վայրերում ու անապատներում և բոլորին մատչելի է:

Երբ նրա հետ մտերմացա ասացի՝ ով թագավոր, ուզում եմ մի բան հարցնել, ասաց՝ հարցրու ինչ կամենաս: Ասացի՝ տեսա երկու առյուծ, երկու սուր ու երկու ամպ և այսպես այսպես պատահեց, սակայն չգիտեմ պատճառը: Ասաց՝ երկու առյուծներն ու երկու սրերը հնարամտություններ են մեզ մոտ եկած դևսպաններին վախեցնելու համար: Սակայն, ինչպես տեսար, երբ մարդը մոտենում է, նրանք հանդարտվում են: Իսկ երկու ամպերի մասին կուզենայի քեզ բացատրել: Նա ձեռքով խփեց թախտի եզրին ու դուրս բերեց մի կարմիր հակինթի կտոր պայտի ձևով և ահա ամպն իր լույսով մեր չուրջը պատեց: Ապա նա տեղը դրեց ու դուրս բերեց նրա քույրը՝ կանաչ զմրուխտը և մեզ պատեց կանաչ ամպը:

Երբ իմ մեկնման ժամանակը եկավ, [թագավորը] տվեց իմ բերած նամակի պատասխանը և ասաց՝ գնանք իմ պալատը: Դուրս եկանք ու հասանք մի պալատ, որի առջև պահակներ կային և դռները կնքված էին: Մի դռան առջև նա հրամայեց և դուռը բացվեց: Ներսում չուրջանակի չարված էին սպիտակ տոպրակներ: Ասաց՝ որը ցանկանում ես մատնանշիր: Ցույց տվեցի մի տոպրակ և նա հրամայեց բերել մի կավե աման, որից լցրեցին [տոպրակի մեջ], ապա հրամայեց կնքել: Հետո հրամայեց բացել մի ուրիշ դուռ առաջինի նման և ահա տեսանք կարմիր տոպրակներ: Ասաց՝ մատնանշիր որը կամենաս և ես մի տոպրակ ցույց տվեցի, որը նույնպես լցվեց կավե ամանից ու կնքվեց:

Գնացինք պալատ և նա հրամայեց բերել դարբնի մորթի ու դարբնի փուքս, մի ռաթել պղինձ ու մի ռաթել կապար, ապա հրամայեց վերջինը հալեցնել և հալեցվեց: Հրամայեց վրան թափել սպիտակ դեղը (տոպրակի) բթամատի եղունգի չափով, ապա լրիվ դատարկվեց և ստացվեց սպիտակ արծաթ: Հետո պղինձը հալեցրին և վրան [կարմիր տոպրակի դեղ] թափեցին նույն ձևով և ստացվեց կարմիր ոսկի:

Ասաց [թագավորը]՝ քո տիրոջը հայտնիր, որ այսպիսին է իմ հարստությունը, իսկ իմ հեծելազորքը և հետիոտն զորքը գիտի որ [ձերից] ավելի մեծաթիվ է և հզոր:

Ասել է Ամարան՝ Մանսուր [խալիֆային] հաղորդեցի այս գրույցը և դա էր, որ նրան մղեց պահանջելու որ [զարգացնեն] քիմիան:

Ասել է նաև՝ նրա (Հոռոմների թագավորի) հավաքույթների ժամանակ իմ տեսած ամենազարմանալի բանն այն էր, որ երբ նա ուզում էր որևէ մեկին դուրս ուղարկել, վերջինիս ետևում պատից մի թաթ էր դուրս գալիս և հրում նրան և սա իմանում էր, որ [թագավորը] հրամայել է վեր կենալ:

էջ 145–148

Ռումի ծովը [ձգվում է] Անտիոքից Կոստանդնուպոլիս, ապա չրջվում է, գալով արևմտյան քամու կողմից, մինչև որ դուրս է գալիս Դարբանդ խազարների կողմից, իսկ [մյուս կողմից] հասնում է Իֆրիկիայի Կայրուան [քաղաքը] և Իֆրիկայի Տրիպոլիսը, մինչև որ հասնում է Անդալուս և Հեռավոր Սուս, մինչև Երջանկության կղզիները:

Ռումի երկիրը արևմտյան կողմում է և տարածվում է Անտիոքից Սիկիլիա և Կոստանդնուպոլսից՝ Տուլիա: Նրա բնակչության մեծամասնությունը Հոռոմ, սլավոն և անդալուսցի է:

Թագավորական Կոստանդնուպոլիսը և Անտիոքը ծովի ափին են և այնտեղ են հավաքվում պատրիկները: Տարսոնից Կոստանդնուպոլսի ծոցը հարյուր մղոն է: Այստեղ (Կոստանդնուպոլսում) կա Կոստանդնուպոլիսը պաշարող Մասլամա իբն Աբդ ալ-Մալիքի կառուցած մզկիթը: Ապա [ճանապարհն] անցնում է Կոստանդնուպոլսի ծոցով, մինչև որ հասնում է Ասորիքի ծովը: Արիդոսում ծոցի լայնությունը մեկ նետընկեց է: Այստեղ կա մի մեծ ժայռ, վրան աշտարակ, նրանից կախված է մի չղթա, որը խանգարում է մահմեդականների նավերի ծոցը մտնելուն:

Ամորիոնը ծոցից այս կողմ է, նրա և Կոստանդնուպոլսի միջև [տարածությունը] վաթսուն մղոն է: Ասվում է, որ Հոռոմների պատրիկները, որոնք թագավորի մոտ են Կոստանդնուպոլսում, տասներկուսն են: Նրանց հեծելազորը չորս հազար է, հետիոտնը նույնպես չորս հազար է:

Նրանց հողահարկը միասհա է, ամեն երկու մողից երեք դինար (ոսկեդրամ) տարեկան: Բերքի մեկ տասներորդը (տասանորդ) վերցվում է ու տարվում չտնմարանները զորքի կարիքների համար: Հրեաներից ու զրադաչտականներից (մաջուս) ամեն մարդուց վերցվում է տարեկան մեկ դինար և ամեն մի տնից, ուր լույս է վառվում՝ տարեկան մեկ դիրհեմ (արծաթ):

Հոռոմներն ունեն կովեր, ձիեր, ոչխարներ, ունեն զարմանալի մետաքս և ռումի դիպակ: Անուշահոտություններից ունեն՝ ստիրաքսը և մաստաքը (մաստաքի խեժը): Հայտնի են նաև հարճերն ու ծառանները (ներքինի): Նրանց ծովի հատակին բուսնում է բուստը (բուսսադ, մարջան):

ՔՈՒՖԱՅԻ ՄԱՍԻՆ

[.....]

էջ 175

Եփրատի ակունքը Կարնո քաղաքից (Կալիկալա) է և պտտվում է այդ լեռներով, մինչև մտնում է Ռումի Հողը ու հասնում Կամախ և Մալաթիա, հետո գնում հասնում է Սամոսատ, որտեղից արդեն նավեր է տանում: Ապա նրա մեջ փոքր գետեր են թափվում:

ԽՈՍՔ ԲԱՍՐԱՅԻ ՄԱՍԻՆ

էջ 192–193

[Ապա հետևում է] խոսքը Ֆարսի, Քիրմանի, Մուքրանի, Սիջիստանի, Դավարի երկրի մասին, ապա խոսքը Ջաբալի ու նրա քաղաքների, ինչպես Կիրմասինի, Համադանի ու հատկապես Սպահանի մասին, ինչպես նաև Ռեյի, Կազուինի, Աբհարի, Զինջանի, Ատրպատականի ու նրա քաղաքների, Հայաստանի ու նրա գավառների ու խազարների մասին, Գոզի ու Մադոզի, պարսպի, նրա կառուցողի (Ալեքսանդրի), Դարբանդի, նրա հիմնադրի մասին, վերջապես Խորասանի, Թարաբիստանի, Ռույանի, Թուրքերի, նրանց դեպքերի, ցեղերի, թագավորների ու քաղաքների մասին:

ԽՈՍՔ ՖԱՐՍԻ ՄԱՍԻՆ

էջ 197

Ասել է Արդաշիրը, որ երկիրը բաժանվում է չորս մասի: Դրանցից մեկը Թուրքաց երկիրն է, որը գտնվում է Հնդկաստանի արևմտյան մասերի ու Ռումի արևելյան կողմերի միջև: Երկրորդ մասն է Մաղրիբի (արևմտյան) երկիրը, որն ընկած է Ռումի արևմտյան մասերի և դպտիների ու բերբերների միջև: Երրորդ մասը տարածվում է մինչև Սավադ (Ստորին Միջագետք), որը գտնվում է բերբերների ու Հնդկաստանի միջև: Չորրորդ մասն այն երկիրն է, որ վերագրվում է Ֆարսին (Պարսք) և գտնվում է Բալխ գետի, Ատրպատականի ու

Պարսկական Հայաստանի միջև մինչև Եփրատ: Ապա գալիս է Արաբաց Հողը մինչև Օման, Մուքրան, Քաբուլ ու Թոխարիստան:

ԽՈՍՔ ԿԻՐՄԱՍԻՆԻ ՄԱՍԻՆ

էջ 209-210

Ասել է Աբու Մունզիր Հիշամ իրն ալ-Սաիբ ալ-Քալբին, թե երբ Կուտայբա իրն Մուսլիմ զորավարը հաղթեց Հազկերտ արքայի (Խոսրովի) որդի Պերոզին (Ֆիրուզ իրն Քիսրա Յազդաջիրդ) և նվաճեց Խորասանը, բռնեց նրա աղջկանը և նրա հետ եղած զամբյուղով հաջջաջ իրն Յուսուֆին, իսկ վերջինս նրան (աղջկան) ուղարկեց Վալիդ իրն Արդ ալ-Մալիք [Խալիֆային] և սա (աղջիկը) նրա համար ծնեց Եզիդ (Յազիդ) Պակասավորին (նակիս): Հաջջաջը երբ թափ տվեց զամբյուղը, տեսավ որ նրանում կա մի պարկերեն մատյան և կանչելով Զադան Ֆառուխ իրն Փիրի ալ-Քասքարիին, թարգմանել տվեց.

«Հանուն արարչի՝ աստուծո, Պերոզի որդի Կավատը (Կուբադ իրն Ֆիրուզ) կարգավորեց իր երկիրը, չափեց ջրերն ու հողերը, որպեսզի իր համար մի քաղաք կառուցի և այնտեղ հաստատվի: Նա գտավ, որ իր երկրի ամենաբարեկարգ նահանգները, սկսած Իրաքից, որը երկրի սիրտն է, տասներեքն են՝ Տիգրոն, Սուս, Ջունդիշապուր [.....]: Ամենագուրտ վայրերը վեցն են՝ Կարնո քաղաք (Կալիկալա), Արդաբիլ, Համադան [.....]: Ամենաչատ հիվանդություններ ունեցող վայրերը վեցն են՝ Սինդբիջան [.....] Պարտավ (Բարդաա), Զինջան: Ամենաչոր վայրերը ութն են՝ Միսան, Դաստ Միսան, Քարտանիյա, Բադարայա, Բաքուսայա, Մասաբդան, Ռեյ, Սպահան: Ամենաժլատ բնակչություն ունեցող վայրերն իննն են՝ Խորասան, Սպահան, Արդաբիլ, Մասաբդան, Բադարայա, Բաքուսայա, Իսթախր, Շիրազ, Ֆասա: Ամենաբարեբեր նահանգները տասն են՝ Հայաստան, Ատրպատական, Ջուր, Մուքրան, Քիրման [.....]: Երկրի ամենակատարյալ վայրերը տասն են՝ Հիրա, Մադաին (Տիգրոն), Քալուադի, Շապուր, Իսթախր, Ջանաբա, Ռեյ, Սպահան, Ղում, Նախճավան: Ամենախելացի մարդիկ ունեցող վայրերը յոթն են՝ Ուքբարա, Կաթրաբբուլ, Ակարքուֆ, Ռեյ, Սպահան, Մասաբդան, Միհրաջանկադակ:

Ջնեքի լավագույն գիտակ մարդիկ ապրում են չորս վայրերում՝ Համադան, Հուլուան, Սպահան, Շահրզուր: Երկրի ամենաթեթև (ամենաարագ) ջրերը տաս վայրերում են՝ Տիգրիս, Եփրատ [...]: Ամենախորամանկ բնակչություն ունեցող վայրերը տասնմեկն են՝ Խորասան, Սպահան, Ռեյ, Համադան, Հայաստան, Ատրպատական [...]: Ամենապատվական պտուղները յոթ վայրերում են՝ Մադաին, Շապուր, Արջան, Ռեյ, Նիհավանդ, Մասբդան, Ջարալի Հուլուան: Երկրի

ամենից անհեռատես ժողովուրդն ապրում է ութ վայրերում՝ Բանդանիջան, Մասաբդան, Միհրաջանկադակ, Արդաշիրխուռա, Ռամհուրմուզ, Հայաստան, Ատրպատական [...]»:

ՀԱՄԱԴԱՆԻ ՈՒ ԻՐԱՔԻ ԳՈՎՔԻ ՈՒ ԲԱՄԲԱՍԱՆՔԻ ՄԱՍԻՆ

էջ 229

Ասվում է, որ երկրի ամենացուրտ տեղերն են Համադանը, Կարնո քաղաքը և Խորեզմը:

ԲԱՀՐԱՄ ԳՈՒՌԻ ՊԱՀԱՏԸ ԵՎ ՎԻՊԻ ՇԻՐԻՄԸ

էջ 257

[...] Վերցնելով Քաբից, որն ասել է՝ գրքերում գտնում ենք, թե գրված է, որ ամբողջ աշխարհը պետք է կործանվի, նախքան Ասորիքը քառասուն տարով: Մնքքան կկործանեն Եթովպիացիք, Մաղինան կկործանվի սովից, Բասրան կկործանվի ջրհեղեղից, Քուֆան կկործանեն Թուրքերը, Ջիբալը կկործանվի չանթերով ու աղետներով, Խորասանը՝ զանազան տանջանքներով: Ռեյը կնվաճեն դեյմիկները և Թաբարիստանցիները: Իսկ Հայաստանն ու Ատրպատականը կկործանվեն ձիերի սմբակների տակ, չանթերով, աղետներով և այնպիսի հարստահարության կհանդիպեն, որի նմանն ուրիշները չեն տեսել:

ԽՈՍՔ ՌԵՑԻ ՈՒ ԴՄԱՎԱՆԴԻ (ԴԱՆԲԱՎԱՆԴ) ՄԱՍԻՆ

էջ 270

Ոմանք պատմել են, որ Աստվածաչնչում (Տաուրատ) գրված է, թե Ռեյը երկրի դռներից մեկն է և այնտեղ է [կենտրոնանում] մարդկանց առևտուրը: Ասել է Մուհամմադ իրն Իսհակը, թե Ռեյը լավ օդ ունի, հրաչալի կառույցներ, վաճառականների դուռն է և ճանապարհների հանգուցակետը: Դա երկրի հարթն է, աշխարհի [գլխավոր] ճանապարհը և միջին կենտրոնը Խորասանի, Վրկանի (Ջուրջան), Իրաքի ու Թաբարիստանի միջև: Միաժամանակ երկրի լավագույն հողն է, բարերեր ու հուռթի:

Այստեղ է գալիս Հայաստանի ու Ատրպատականի, Խորասանի, խազարների ու Բուրջանի[20] երկրի առևտուրը: Քանդի ծովի վաճառականները ճանապարհորդում են արևելքից արևմուտք և արևմուտքից արևելք, տանելով դիպակ (մետաքս), ընտիր մետաքս (խազզ), ֆրանկների երկրից մինչև Ֆարմա[21]: Նրանք ծովի վրա կուզումից[22]

(Սուեզ) նավարկում են, այս ապրանքները տանելով Չինաստան, ապա բերում են դարչինը, մամիրան և Չինաստանի բոլոր ապրանքները հասցնելով Կուլզում, հետո թևքվում են դեպի Ֆարմա:

Սրանք հրեա վաճառականներ են, որոնք կոչվում են Ռահդանիյա և խոսում են պարսկերեն, հունարեն (ռումիյա), արաբերեն, ֆրանկերեն (իֆրանջիյա): Դուրս են գալիս Ֆարմայից և ֆրանկների թագավորին վաճառում են մուշկ, հալվե (ալոե) և իրենց ամբողջ ունեցած [ապրանքը], ապա գալիս են Անտիոք ու հասնում Բաղդադ և Ուրուլա[23]:

ԽՈՍՔ ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ ՄԱՍԻՆ

էջ 284–285

Ասել է Իբն ալ-Մուկաֆֆան, թե Ատրպատական անունը [ծագում է] Ատրպատ (Ադարբադ) իբն Իրան իբն ալ-Ասուադ իբն Սամ (Սեմ) իբն Նուհից (Նոյ): Ասվում է նաև, թե Ատրպատ իբն Բյուրասպից (Բյուրասֆ) է:

Այն նվաճել է Մուղիրա իբն Շուբան 22 (642–643) թվականին և հարկ (խարաջ) է նշանակել:

Վակիդն ինձ պատմել է, թե արաբները երբ մտան Ատրպատական, այնտեղ տարան իրենց ցեղերին՝ եգիպտացիներից ու Ասորիքի բնակիչներից և ամեն մի ցեղ իր համար չրջան նվաճեց, այնպես, որ տեղական բնակիչներն սկսեցին նրանց համար հողը մշակել:

Վարդանակերտը (Վարսան)[24] բերդ էր և այն կառուցեց (չէնացրեց) Մարուան իբն Մուհամմադ իբն Մարուան իբն ալ-Հաքամը, նրա հողը բարեկարգեց ու ամրացրեց և սա դարձավ դաստակերտ (դայա): Սակայն հետո Օմայանների ձեռքից խլվեց ու տրվեց Ջաաֆար իբն Մանսուրի դուստր Ումմ Ջաաֆար Զուբայդային, իսկ Վարսանին (Վարդանակերտցի) սրա մաուլաներից էր:

Բարգանդը[25] մի գյուղ էր, ուր բանակ դրեց Աֆշինը Բաբեկի դեմ կռվի օրերին, ամրացրեց ու չէնացրեց:

Մարաղան[26] կոչվում էր Աֆրահարուդ և Հայաստանի կառավարիչ Մարուան իբն Մուհամմադի ու նրա ընկերակիցների ձիերի թավալվելու (տամառաղա) վայրն էր, ուստի և կոչեցին Մարաղայի (Թավալման) գյուղ, ապա մարդիկ գյուղ բառը ջնջեցին և ասացին [պարզապես] Մարաղա: Նրա բնակիչներն այն դարձրել էին Մարուանի տիրույթը, սակայն Օմայանների այլ կալվածների հետ խլվեց ու տրվեց Ռաշիդ [խալիֆայի] դուստրերից մեկին: Սակայն երբ Վաջնա ալ-Ազդին և Ազդ ցեղի մաուլա Սաղակա իբն Ալին ապստամբեցին ու ապականեցին, [դրանից հետո]՝ Ռաշիդի խալիֆայության ժամանակ,

Հայաստանի ու Ատրպատականի կառավարիչ նշանակվեց Խուզայմա իբն Խազիմը, որը կառուցեց նրա պարիսպները, ամրացրեց, քաղաքի վերածեց և մեծաթիվ զորք նշանակեց:

Երբ Հայաստանում հայտնվեց Բաբեկը[27], [չրջակայքի] ժողովուրդն այստեղ (Մարաղա) ապաստանեց, բնակվեց և նրանում պաշտպանվեց:

Մարանդը փոքրիկ գյուղ էր, որն ամրացրեց Աբու-լ-Բախը, ապա ամրացրեց Բախը, իսկ հետո որդին՝ Մուհամմադը, որը պալատ կառուցեց:

Իսկ Ուրմիան հին քաղաք է և զրադաշտականները պնդում են, թե իրենց տեր (կրոնապետ) Զրադաշտը այստեղից է: Ադդ ցեղի մաուլա Սաղակա իբն Ալին գրավել է այն և նրանում պալատներ (ամրոցներ) կառուցել:

Դավրեժում (Տաբրիզ) առաջինը հաստատվել է Ռավվադ ալ-Ազդին, ապա Վաջնա իբն Ռավվադը, որոնք կառուցումներ կատարեցին, պարսպով ամրացրին և նրանց հետ չատերը հաստատվեցին:

Մայանիջը և Ջիլբայան Համդանիների բնակավայրերն են: Բարզա գավառը պատկանում էր Ավդիների տոհմին, իսկ Նարիզ գյուղը, որն ուներ հին, քայքայված բերդ, նստավայր դարձրեց Մուռ իբն Ամր ալ-Մաուսիլի ալ-Թաին, չէնացրեց, նրանում ապրեցին նա և իր որդին: Նրանք իշխում էին Ատրպատականի կառավարչին ենթակա վիճակում: Սարատում ապրում են Քինդա ցեղից մարդիկ, որոնք Աշաաս իբն Կայսի հետ եղածների սերնդից են:

Պատմել է Մաքհուդ ալ-Շամին, թե երկրի վրա ամենաչուտ ավերվողը լինելու է Հայաստանը: Հարցնում են՝ ինչն է ավերելու: Ասում է՝ ձիերի սմբակները և կարծես տեսնում եմ Կայս [ցեղի արաբների] կանանց ոտքերի ապարանջանները (խալխալ), որ ցնցվում են և ձիավորները նրանց չուրջ պտտվում:

Ատրպատականի սահմանն է Պարտավից մինչև Զանջան: Նրա քաղաքներից են Բերկրին, Սալմաստը, Մուղանը, Խոյը, Վարդանակերտը, Փայտակարանը, Մարաղան, Նարիզը[28], Դավրեժը (Տաբրիզ): Նրա մյուս սահմանը, արևելյան կողմից հասնում է դելմիկների (դայլամ) երկիրը, Թարոմը (Թարմ), Գեղանը (Ջիլան): Նրա քաղաքներից են նաև Բարզան, Սաբուրաստը, Խունաջը, Մայանիջը, Մարանդը, Խոյը, Քուլսարան:

Իսկ Բարզանդը ավերակ էր և այն քաղաք դարձրեց Աֆշինը և այնտեղ հաստատվեց: Ճանապարհը Բարզանդից Վարդանակերտ, որն Ատրպատականի վերջին գավառն է, 12 փարսախ է:

Նրանում (Ատրպատականում) են նաև Գանձակը[29], Ջաբրավանը, Զրադաշտի քաղաք Ուրմիան, Շիզը[30], ուր կա Ատրվչնասպի (Ադարգուշնասպ) կրակը, որը զրադաշտականների մոտ չատ հարգված է,

ապա Սալակը, Սինգարայա ու Բադդ, և Մայինհարաջ, Ուրմ գավառները:

Ատրպատականի հարկը (խարաջ) երկու միլիոն դիրհեմ է, իսկ Վարդանակերտը Ատրպատականի վերջին գավառն է այս կողմից:

ԽՈՍՔ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ

էջ 286–301

Ասել է Արու-լ-Մունզիր Հիշամ իբն Մուհամմադ իբն ալ-Սաիբ ալ-Քալբին, Թե Հայաստանը (Արմինիա) կոչվել է Արմինի իբն Լանթայի անունով, որը Հաբեթի (Յաֆիս) որդի Յունանի որդին է:

Հայաստանի սահմանն է Պարտավից մինչև Դարբանդ և մյուս կողմից մինչև Հոռոմոց (Ռում) երկիրը և մինչև Կովկաս լեռը, Սարիրի թագավորությունն ու Լաքզի թագավորությունը: Ատրպատականի վերջին գավառից, որը Վարդանակերտն (Վարսան) է, մինչև Հայաստանի առաջին գավառը 8 ֆիլերի կայան (սիքքա) է, իսկ Պարտավից մինչև Տփղիս 10 ֆիլերի կայան է:

Առաջին Հայաստանը (Արմինիա) Սիսականն է, Առանը, Տփղիսը և այն նվաճել է Հաբիբ իբն Մասլաման: Նրանում է Պարտավը, որը կառուցել է ավագ Կավատը[31]: Նա կառուցել է նաև ալ-Բար ու-ալ-Աբուաբը (Դարբանդ), որն ամրոցներից է բաղկացած: Սա Աբուաբ (դռներ) է կոչվել, քանզի կառուցվել է լեռան ճանապարհների (կիրճերի) վրա: Դրանք երեք հարյուր վաթսուն ամրոցներ են՝ մինչև Ալանաց դուռը, որոնցից հարյուր տաս ամրոց գտնվում է մահմեդականների ձեռքում, մինչև Թաբարսարանի հողը, իսկ մնացած ամրոցները Ֆիլանի հողում և Սարիրի տիրոջ ձեռքում են մինչև Ալանաց դուռը:

Թուրքերը (խազարները) հաստատվել էին ալ-Բար քաղաքում և Սալման իբն Ռաբիան կռվեց նրանց դեմ, սակայն նա և ընկերակիցները, որոնք չորս հազար էին, նահատակվեցին: Ասել է Արդ ալ-Ռահման ալ-Բահիլին, հիշելով Սալման իբն Ռաբիային ու նրա գերեզմանը Բալանջար գետից այն կողմ, Բար ալ-Աբուաբում.

Երկու գերեզման ունենք՝ Բալանջարի գերեզմանը
Եվ մի գերեզման Զինաստանում.
Այն, որ Զինաստանում է, նվաճումներ է կատարում,
Իսկ այստեղինի միջով ջրվում է հողը անձրևի կաթիլներով:

Առաջին Հայաստանում են Փայտակարանը, Կապաղակը, Շիրվանը:

Երկրորդ Հայաստանում են Վասպուրականը, Դվինը, Շիրակը, Տայքը, Բագրևանդը, Նախճավանը:

Երրորդ Հայաստանում են Վիրքը, Սուղդաբիլը, Պերոզ Կավատի

դուռը (Բաբ Ֆիրուզ Կուբադ), Լաքզը:

Չորրորդ Հայաստանում կա Ալլահի առաքյալի գործակից Սաֆուան իբն Մուաթթալ ալ-Սուլամիի գերեզմանը, նրա և Հիսն (բերդ) Զիյադի (Խարբերդ) միջև: Սրա վրա կա մի ծառ, որի պտուղը չգիտեն ինչ է, նման է նշի և համը մեղրից քաղցր է: [Չորրորդ Հայաստանում] են Շիմշաթը, Խլաթը, Կարնո քաղաքը, Արճեշը և Ապահունիքը:

Առանն ու Սիսականը խազարաց թագավորության մեջ էին եղել:

Մովսեսի (Մուսա) պատմվածքի մեջ ասված է՝ հիշում ես, որ կանգ առանք ժայռի մոտ: Ժայռը Շիրվանի ժայռն է, ծովը Գեղանի (Ջիլան) ծովն է, իսկ գյուղը Բաջարուանն է:

Կավատը կառուցել էր Փայտակարան քաղաքը, նույնպես և Պարտավ ու Կապաղակ քաղաքները, Սուղդ ալ-լաբինը (հում աղյուսե պարիսպ) և սրա երկայնքով կառուցեց վաթսուն քաղաք, որոնք կործանվեցին ալ-Բար ու-ալ-Աբուարի կառուցումից հետո:

Ապա նրանից հետո իշխեց որդին՝ Խոսրով (Քիսրա) Անուշիրուանը, որը կառուցեց Շապուրան, Մազքութք և Քարքարա քաղաքները: Հետո կառուցեց ալ-Բար ու-ալ-Աբուաբը: Սա կոչվեց Աբուաբ (դռներ), որովհետև կառուցված էր լեռնային ճանապարհների (կիրճերի) վրա: Առան երկրում նա կառուցեց Շաքիի դռները և Դիդոյից (Դուդանիյա) դռները: Վերջինս մի ցեղ է, որը գտնում է, թե ծագում է Դուդան իբն Ասադ իբն Խուզայմայից: Նա (Անուշիրուանը) կառուցեց Դուրբուկքը (Դուրզուկիյա), որը տասներկու դուռ ունի, ամեն մի դռան վրա՝ քարե ամրոց: Վրաց երկրում կառուցեց մի քաղաք, որը կոչվում է Սուղդաբիլ, ուր բնակեցրեց ցեղեր Սոդդի մարդկանցից ու Պարսից (Ֆարս) երկրի որդիներից և այն դարձրեց սահմանային գիհանանոց: Կառուցեց նաև Ալանաց դուռը և Սամցխեի (Սամսախի) դուռը, Գարդման ամրոցը և Սամչվիլդե (Սամչուլդա) ամրոցը: Կառուցեց Բալանջարը, Սամանդարը, Խազարանը և Շաքեն:

Նա գրավեց ամբողջ երկիրը, որ գտնվում էր Հոռոմների ձեռքում, չենացրեց Դվին քաղաքը, ամրացրեց, կառուցեց Նախճավան քաղաքը, որը Վասպուրականի նահանգի քաղաքներից է: Նա կառուցեց Վայոց (Վայս) բերդը և ամրոցներ Սիսականի հողում, որոնցից է Քիլաբ բերդը[32] և Շահապոնքը և այնտեղ բնակեցրեց իր քաջ և կորովի սիսականցիներից (սիսսիջիյա):

Նա կառուցեց պարիսպ իր և խազարների միջև, ժայռից ու կապարից, լայնությունը երեք հարյուր կանգուն (զիրա)[33], մինչև որ հասցրեց լեռների կատարը, ապա ծովի մեջ առավ-տարավ և այնտեղ երկաթե դռներ դրեց: Այնտեղ հսկում էր հարյուր մարդ, մինչդեռ [նախապես] կարիք էր լինում հիսուն հազար մարդու:

Պարսից գրույցներում պատմվում է, որ Անուշիրուանը, երբ վերջացրեց Բալանջար սահմանային ամրության պարսպի կառուցումը,

իսկ ծովում ծովապատնէշ (մեծ լեռ) պատրաստեց ու ամրացրեց, այնքան ուրախացավ, որ Հրամայեց ծովապատնէշի վրա ոսկե գահ (սարիր) դնել, ապա այնտեղ բարձրացավ, փառք տվեց աստծուն և գոհացավ: Ասաց՝ ով տեր տերանց, որ ինձ ներչնչեցիր կառուցել այս սահմանային ամրությունը և ճնշել Թշնամուն, փառք քեզ, ապա առաջնորդիր ինձ և պանդխտությունից Հայրենիք վերադարձրու: Հետո ծնկի եկավ, երկրպագեց և նետվեց իր գորգին ու ննջեց:

Եվ ահա ծովից մի ինչ որ բան (ուրվական) բարձրացավ և իր երկարությամբ Հորիզոնը ծածկեց և ամպ բարձրացավ, որը լույսը ծածկեց և քայլեց դեպի ծովապատնէշը: Հեծելազորքը պատրաստեց աղեղները, իսկ Թագավորը զարհուրած սթափվեց և ասաց՝ ինչ է պատահել ձեզ և նրանք պատմեցին: Ասաց՝ Թողնք ձեր զննքերը, չի կարող պատահել, որ Աստված ինձ ներչնչեր հեռանալ իմ Հայրենիքից տասներկու տարի, որ կառուցեմ սահմանային ամրություն, որպես ապաստան իր ծառաների և որպես ապահովություն իր երկրի ժողովրդի և ապա ինձ վրա ուղարկեր ծովի հրեշներից մեկը: Հեծյալները ետ քաշվեցին և ինչ որ բանը (ուրվական) մոտեցավ ծովապատնէշի գագաթին ու ասաց՝ ով արքա, ես այս ծովի բնակիչներից եմ և այս սահմանը ամրացված եմ տեսել յոթ անգամ և յոթ անգամ էլ կրկին ավերված եմ տեսել: Աստված մեզ՝ ծովի բնակիչներիս ներչնչել է, որ մի Թագավոր, որն ապրելու է քո ժամանակաշրջանում և ունի քո պատկերը, ուղարկվելու է, որպեսզի ամրացնի սահմանը, այդ ամրությունը մնալու է հավիտյան և դու ես այդ Թագավորը: Աստված Թող քեզ առաջնորդի, բարին տա, քո իշխանությունը երկարեցնի և ահեղ դատաստանի օրը մեղմացնի քո երկյուղը: Ասաց ու սուզվեց ջրի մեջ:

Նա կառուցել է նաև Շիրվան քաղաքը[34], իսկ խազարաց երկրի ներսում գտնվող Բալանջարը կառուցել է Բալանջար իրն Յաֆիսը:

Երբ Անուշիրուանը ծովում վերջացրեց ծովապատնէշի գործը, հարցրեց այդ ծովի մասին և ասացին՝ ով արքա, այս ծովը կոչվում է Քարդաբիլ[35] և նա երեք հարյուր փարսախ է երկու կողմերով (երկարությամբ ու լայնությամբ): Մեր և խազարների Բայդա[36] [քաղաքի] միջև չորս ամսվա ճանապարհ է ափի երկարությամբ: Խազարների Բայդայից մինչև այն պարիսպը, որ Ասֆանդիարն է կառուցել երկաթով, երկու ամսվա ճանապարհ է:

Ասաց Անուշիրուանը՝ պետք է [այս կողմերը] տեսնել, ասացին՝ չկա այնտեղ գնալու ճանապարհ, և կա մի վայր, որը կոչվում է Դահան Շիր, ուր Հորձանուտ (ջրապտույտ) կա, որն անանցանելի է և ոչ մի նավ նրանից չի ազատվել: Ասաց՝ պետք է անպայման նավով գնալ ու զննել այդ Հորձանուտը և տեսնել այդ պարիսպը: Ասացին՝ ով արքա, վախեցիր աստծուց քեզ և քո ընկերակիցների համար: Սակայն

նա չհամաձայնեց ու ասաց՝ նա, որ ինձ փրկեց ծովից հարձակվող հրեշից, կարող է ազատել նաև Հորձանուտից: Այդ նպատակով նավեր պատրաստեցին և նրա հետ նավ մտան բարեպաշտ ու աստվածավախ մարդիկ: Օրերով ծովի վրա համառորեն նավեցին, մինչև որ հասան Հորձանուտը, սակայն զարմացան, որ չկար ոչ մի լեռնաշղթա, որ փարոսի դեր կատարեր, ոչ էլ որևէ լեռ, որն ընդունելին որպես նշան իրենց վերադարձի ժամանակ: Նրանք դիմեցին Թագավորին մեղադրելով նրան: Ասաց Անուշիրուանը՝ մաքուր սրտով պաղատեցեք, խնդրեցեք բարձրյալն Աստուծո: Անուշիրուանն ուխտ արեց, որ եթե աստված փրկի, ապա իր Թագավորության աղքատ ժողովրդին յոթ տարի հարկերից կազատի: Այդ ժամանակ վերև բարձրացավ մի կղզի, որից վերև էին բարձրանում ալիքները, իսկ կղզու վրա լեռան մեծությամբ առյուծի արձան կար, որի հետսակողմը մտնում էր ջուրը և ապա երախից իջնում դեպի Հորձանուտը: Այդ ընթացքում բարձրյալն Աստված ջրի երեսին ուղարկեց մի չնաձուկ՝ կետ ձկից մեծ, որը ցատկեց առյուծի բերանը և Հորձանուտը հանդարտվեց, իսկ նավերն անցան և նա (Անուշիրուանը) հասավ իր նպատակին: Ապա հեռացավ դեպի Վրկան (Ջուրջան) և իր ուխտը կատարեց:

Ահմադ իբն Վադիհ ալ-Իսբահանին հիշել է, որ ինքը երկար ժամանակ ապրել է Հայաստան երկրում և քարտուղարություն է արել նրա Թագավորների ու կառավարիչների մոտ և որ նրանից ավելի բարիքներով լի ու կենդանիներով հարուստ երկիր չի տեսել:

Նա հիշել է, որ նրա (Հայաստանի) Թագավորությունների (տիրույթների) Թիվը հարյուր տասներեք է: Դրանցից է Սարիրի Թագավորությունը, որը գտնվում է ալանների ու Բաբ ալ-Աբուաբի (Դարբանդ) միջև: Այնտեղ գնալու համար միայն երկու ճանապարհ կա՝ մի ճանապարհ դեպի խազարաց երկիրը և մի ճանապարհ դեպի Հայաստան: Նրանում (Հայաստանում) կա տասնութ հազար գյուղ: Առանը նրա առաջին Թագավորությունն է և նրանում կա չորս հազար գյուղ, որի մեծամասնությունը Սարիրի տիրոջն է պատկանում:

Ասվում է, որ Բաբ ալ-Աբուաբը մի պարիսպ է, որը կառուցել է Անուշիրուանը: Սրա մի ծայրը ծովի մեջ է, իսկ մյուս ծայրը ծովի մեջ այնքան է հեռացել, որ ոչ մի հնարամտություն չի կարելի գործադրել [անցնելու]: Դեռ յոթ փարսախ էլ երկարացրել է մինչև խիտ անտառները և մի քարքարոտ լեռ, որի վրայով անցնելը դժվար է: [Պարիսպը] կառուցված է կոփած քառակուսի քարով, ամեն մի քարը հազիվ հիսուն մարդ կարող էր բարձրացնել: Այդ քարերը դրվեցին ու իրար միացվեցին գամերով: Այդ յոթ փարսախի վրա յոթ անցք (մասալիք) սարքեց: Այդ յոթ անցքերից ամեն մեկի վրա մի քաղաք կառուցեց, որոնց վրա պարսիկ ռազմիկների խմբեր նշանակեց, որոնք կոչվում էին ալ-Սիսիքին (սիսականցիք): Հիշվել է, որ Հայաստանի բնակիչնե-

րից պաշտոնյաներ (վաղափֆ) են նշանակվել այդ պարիսպը և դռները (արուար) պահպանելու համար: Ամեն մի անցքի վրա մի դուռ է կախված: Պարսպի լայնությունը վերևում այնպիսին է, որ քսան ձիավոր առանց նեղվելու կարող են [մի շարքով] անցնել:

Բաբ (Դարբանդ) քաղաքում սրբազան պատերազմի դռան (բար ալ-ջիհադ) վրա, պարսպի վերևում երկու քարե սյուն կա, ամեն մի սյան վրա երկու առյուծի պատկեր՝ սպիտակ քարից, իսկ նրանից ներքև՝ երկու քար, որոնց վրա երկու գաղան կա: Դռան մոտ կա մարդկային պատկեր քարի վրա [քանդակված]: Նրա երկու ոտքերի միջև կա աղվեսի պատկեր՝ բերանում խաղողի ողկույզ պահած:

Քաղաքի մոտ կա ջրամբար (սահրիջ), որը կոչվում է Մարուֆի ջրամբար. ունի մի աստիճան (սանդուղք), որով իջնում են ջրամբարի մեջ, երբ ջուրը պակասում է: Այս սանդուղքի երկու կողմերում կան քարե առյուծներ, որոնցից մեկի վրա կա մարդու քարե պատկեր: Կառավարչի պալատի (իմարա) վրա նույնպես կա երկու առյուծի պատկեր՝ պարսպից դուրս ընկած, որոնց մասին Բաբի ժողովուրդն ասում է, որ պարսպի երկու թալիսմաններն են:

Կալիկալան մի կին է, որը կառուցել է Կարնո քաղաքը (Կալիկալա) և նրա անունով էլ կոչվել է: Այս բառի իմաստն է Կալիի բարեգործությունը:

Ինչ վերաբերում է Տառնեի լճին[37], ապա միչտ էլ նրանում թույլատրված է եղել [ձկնորսությունը], մինչև որ Մուհամմադ իրն Մարուան իրն ալ-Հաքամը, դառնալով Ջազիրայի ու Հայաստանի կառավարիչ, արգելեց ձկնորսությունը, ապա [լիճն] անցավ Մարուան իրն Մուհամմադին, իսկ նրանից էլ՝ բռնագրավվեց:

Հաբիբ իրն Մասլաման Օսման իրն Աֆֆան [խալիֆայի] կողմից նվաճեց Հայաստանի չատ քաղաքներ և Արդալլահ իրն Հատիմ իրն Նուման ալ-Բահիլին Մուավիայի կողմից կառավարիչ նշանակվեց: Հետագայում [Հայաստանի] կառավարիչ դարձավ սրա (Բահիլիի) որդին՝ Աբդ ալ-Ազիզը, որը կառուցեց Դվին քաղաքը, Պարտավը և բազում քաղաքներ:

Օսման իրն Աֆֆան [խալիֆայի] օրոք Հաբիբ իրն Մասլաման Հայաստանում նվաճեց Ջավախքը (Ջուրախ), Քուստի Փառնեսը (Քասֆար)[38], Քասալը[39] (Քիսալ, Ղազախ), Հունարակերտը (Խունան)[40], Սամցխեն (Սամսախի), Գարդմանը, Քուստին (Քուսթի բիս)[41], Շավշեթը (Շաուշիթ), Բազալեթը (Բազալիթ) հաշտությամբ՝ այն պայմանով, որ հարկ վճարեն իրենց գլուխների (գլխահարկ) և հողերի (հողահարկ) համար: Նա դաչինք կնքեց ծանարների (սաննարիյա)[42], Կղարջքի[43] ու Դիդոյից հետ հարկ [տանալու] պայմանով:

Շամքորը հին քաղաք էր: Սալման իրն Ռաբիան այնտեղ [գորք] ուղարկեց, որը նվաճեց [քաղաքը]: Այն մնացել էր չեն վիճակում մինչև

որ ավերեցին Սևորդիք[44] (Սիյավարդիյա, Սավարդիյա), մարդիկ որոնք համախմբվել էին Եզիդ (Յազիդ) իրն Ուսայդ [ոստիկանի] Հայաստանից հեռանալու օրերին, նրանց ուժն ավելացել էր և չարիքները՝ չատացել: Ապա Մուտասիմ Բիլլահ [խալիֆայի] մասլա Բուղան չեննացրեց, ամրացրեց, այնտեղ վաճառականների հավաքեց և [քաղաքը] կոչեց Մուտավաքքիլիյա:

Սալման իրն Ռաբիան հաշտությամբ նվաճեց Փայտակարան (Բայլական) քաղաքը: Նա իր հեծյալներին ուղարկեց ու նվաճեց Շակաչենը (Սիսար)[45], Մեծ Կունեքը (ալ-Միսկուան)[46], Ուտիքը (Ուդ), Մեծ Առանքը (Միսրիան)[47], Հարճլանքը (Մահրաջալիան)[48], որոնք չեն գավառներ էին և այլ վայրեր Առանում: Նա կոչ արեց Բաղասականի (Բալասջան) քրդերին ընդունելու մահմեդականությունը, սակայն նրանք կռվեցին նրա հետ, իսկ նա հաղթեց նրանց և [քրդերի] մի մասը [մնալով հնթանում] ընդունեց գլխահարկ (ջիզիա) վճարել, մի մասն էլ [ընդունելով մահմեդականությունը] վճարեց սադակա:

Ապա Սալմանը գնաց Կուրի և Արաքսի միախառնման վայրը Բարդիջի[49] ետևում: Անցավ Կուրը, նվաճեց Կապաղակը և նրա հետ հաշտություն կնքեցին Շաքեն, Կամբեճանը, Խայդանը, Շիրվանի Թագավորը, լեռների այլ թագավորներ, Մաղքեաց ու Շապորանի ժողովուրդը և Բաբ քաղաքը, որը հետո բաժանվեց: [Խազարաց] խաքանը Բալանջար գետից այն կողմ իր ձիավորներով հանդիպեց նրան և նա (Սալմանը) չորս հազար մահմեդականների հետ սպանվեց: Այս Սալմանն առաջինն էր դատավոր նշանակվել Քուֆայում, մնացել էր քառասուն օր, սակայն ոչ մի բողոքավոր չէր եկել: Նա [հաղիսներ] էր պատմել Օմար իրն ալ-Խաթթաբ [խալիֆայի] մասին:

Ասվել է, որ երբ Հաբիբը Հայաստանի հողերի նվաճումը վերջացրեց, այդ մասին գրեց Օսման [խալիֆային], որն ստանալով Սալմանի մահվան գույժը, կամեցավ Հաբիբին [Հայաստանի] կառավարիչ նշանակել, ապա որոշեց նրան հավատի ռազմիկ (գազի) դարձնել Ասորիքի ու Ջազիրայի սահմանային գոտիներում: Սահմանային գոտի [համարված] Հայաստանում (Արմինիա) նա կառավարիչ նշանակեց Հուզայֆա իրն ալ-Յաման ալ-Արսիին[50], ապա հանեց նրան: Իսկ Հաբիբը վերադարձավ Ասորիք և արշավանքներ էր կատարում Հոռոմոց երկիրը: Նա հաստատվեց Եմեսայում, սակայն Մուավիան նրա փոխարեն դրեց Դամասկոս, ուր և մեռավ:

[Օսմանը] Հայաստանի կառավարիչ նշանակեց ալ-Մուղիրա իրն Շուբային, ապա հետացրեց նրան, կարգեց ալ-Կասիմ իրն Ռաբիա ալ-Սակաֆիին, իսկ Ալիի օրոք Հայաստանի ու Ատրպատականի կառավարիչ նշանակվեց ալ-Աշաաս իրն Կայս[51], ապա մեկից ավելի [կառավարիչներ], մինչև որ նշանակվեց Մարուան իրն Մուհամմադը, որը նվաճեց խազարաց երկիրը և խորքը ներթափանցեց:

Ապա նկավ Աբբասյան տերությունը և Աբու Ջաաֆարը իր եղբոր՝ Աբու-լ-Աբբասի խալիֆայության օրոք Ջազիրայի ու Հայաստանի կառավարիչ դարձավ: Երբ ինքը խալիֆա դարձավ, [Հայաստանի] կառավարիչ նշանակեց Եզիդ (Յազիդ) իբն Ուսայդ ալ-Սուլամիին[52], որն Ալանաց դուռը գրավեց և դիվանում գրանցված մարդկանցից մի կայազոր նշանակեց: Նա ճնշեց ծանարներին (սաննարիյա), մինչև որ նրանք համաձայնեցին հարկ (խարաջ) վճարել:

Հայաստանի ժողովուրդն ապստամբեց Հասան իբն Կահթաբա ալ-Թաիի կառավարչության ժամանակ[53]: Եզիդ իբն Ուսայդի հանվելուց հետո Մանսուր [խալիֆան] օգնական զորք ուղարկեց Ամիր իբն Իսմաիլի հրամանատարությամբ: Հասանը հաղթեց Մուշեղին (Մուշայխ), որը նրանց (հայերի) գլխավորն էր, ցրեց նրա զորքը և դրությունն իր օգտին կարգավորեց: Սրա անունով է Փայտակարանում (Բայլական) Հասանի գետը և Հասանի այգին (բաղ)՝ Պարտավում, ինչպես նաև Հասանիյա կոչված կալվածները:

Հասանից հետո կառավարիչներ նշանակվեցին Օսման իբն Ումարան[54], Ռաուհ իբն Հատիմ ալ-Մուհալլաբին[55], Խուզայմա իբն Խազիմը[56], Եզիդ իբն Մազիադ ալ-Շայբանին[57], Ուբայդալլահ իբն ալ-Մահդին[58], Ֆադլ իբն Յահյան[59], Սաիդ իբն Սալմը[60] և Մուհամմադ իբն Եզիդ իբն Մազիադը[61]: Սրանցից ամենախիստ ձևով իշխողը Խուզայման էր, որը Դվինում ու Նախճավանում [հողերի] հաչվառում կատարեց, իսկ դա նախապես չէր եղել: Մամուն [խալիֆայի] իշխանության օրոք կառավարիչ դարձավ Խալիդ իբն Եզիդ իբն Մազիադը: Մուտասիմ Բիլլահ [խալիֆան] կառավարիչ նշանակեց Հասան իբն Ալի ալ-Բազղիսիին[62], որը հայտնի է Մամունի անվամբ: Սա բարեկամություն հաստատեց Հայաստանի պատրիկների (բաթարիկա) հետ, մեղմ վերաբերվեց, այնքան որ ապստամբեցին նրա դեմ: Ապա Հայաստանում պաշտոն ստացան կառավարիչներ, որոնք գոհանում էին բնակիչներից թեթև [հարկ] վերցնելով, մինչև որ Մուտավաքքիլը դառնալով խալիֆա այնտեղ (Հայաստան) ուղարկեց Յուսուֆ իբն Մուհամմադ իբն Յուսուֆ ալ-Մարուազիին[63], իր իշխանության գլուխ անցնելուց երկու տարի անց:

Հայաստանի խոշորագույն կենդանիներն են՝ ոչխարները, ցուլերը և շները, իսկ ձիերը փոքր են, փոքր են նաև ուղտերը, որոնց որովայնը համարյա գետնին է հասնում և նման են թուրքերի ուղտերին:

Կովկաս լեռան վրա յոթանասուներկու լեզու կա, ամեն մի լեզվով խոսողը մյուսի լեզուն առանց թարգմանի չի հասկանում: [Լեռների] երկարությունը հինգ հարյուր փարսախ է, կպած է Հոռոմոց երկրին և [մյուս կողմից] հասնում է մինչև Խազարաց ու Ալանաց երկրի սահմանները: Կպած է նաև Սլավոնների (սակալիբա) երկրին: Նրանում կա սլավոնների մի ցեղ, իսկ մնացածը հայեր են:

Ասել են, թե [Հայաստանի] հրաչալիքներից է Կարնո քաղաքի քրիստոնյա եկեղեցիներից մեկում՝ մի տուն: Երբ ծաղկազարդի գիշերն է գալիս՝ այս տան ինչ որ տեղից սպիտակ փոշի է դուրս գալիս մինչև առավոտ: Առավոտյան այս բանը դադարում է մինչև հաջորդ տարին: Վանականները (եկեղեցականներ) այն հավաքում են և բաժանում մարդկանց, իսկ դրա հատկանիշն այն է, որ հակազդում է թույներին, կարիճի ու օձի խայթոցին: Դրանից մեկ դանգ[64] կշռով ածվում է ջրի մեջ և կծվածը կամ խայթվածը խմում է ու անմիջապես հանգստանում:

Կա նաև մեկ ուրիշ հրաշք, և դա այն է, որ այդ փոշին եթե վաճառվի, կամ փոխարենը որևէ աշխարհիկ բարիք վերցվի, ապա գործածողը չի օգտվի և իր ցավից չի ամոքվի:

Հայաստանի զարմանալիքներից է Խլաթի (Վանա) լիճը[65], քանզի նրանում տաս ամիս ոչ մի գորտ, խեցգետին, կամ ձուկ չի լինում, ապա երկու ամսով հայտնվում է ձուկը[66] և նա ամբողջովին թմրած է լինում:

Ասել է Աբու Մունզիրը, որ թալիսմանները պատրաստել են Նոյի որդի Քամի (Համ) որդի Քուշը, երկվիչապ Դահհաքը, Երկկոտոչավորը[67] (Ալեքսանդր), Հակոբի որդի Հովսեփը, Իմրանի որդի Մովսեսը (Մուսա), Հուլուան Ամաղեկացին (ամլիկի), Ապոլոնիոս (Բալինաս) Հոռոմը (ռում) և Կամբիզը (Կանբուս):

Ատրպատականը հասնում է մինչև Արաքս և Կուր գետերը Հայաստանում: Արաքսը բխում է Կարնո քաղաքից, անցնում է Առանով, նրա մեջ թափվում է Առան գետը[68], ապա անցնում է Վարդանակերտով (Վարսան), հոսում է միախառնման վայրով ուր նա և Կուրը միանում են ու նրանց միջև մնում է Բայլական քաղաքը: Նրանք միասին անցնում են ու թափվում Վրկանա ծովը[69]:

Արաքսը մի զարմանալի [գետի] ձոր է, որտեղ կան ձկան տեսակներ: Նրանում լինում է չուրմահին[70] և միայն այս գետում է լինում: Հայտնվում է ամեն տարի՝ որոշակի ժամանակ, ինչպես ծովի կետերի տեսակները և ձկների վտառները, որոնք որոշակի չրջաններում են երևան գալիս, ինչպես թառափը (աստուր), ծովատառեխը (ջիրաֆ), պերկեսը (բարաստուջ): Այս տեսակները Բասրա են գալիս հեռավոր ծովերից, այդ չրջանի ջուրը հաճելի գտնելով: Այն, որ պերկեսը գալիս է այստեղ Զինջիների (սևամորթների) երկրից համտեսելու Բասրայի մոտ Տիգրիսի քաղցրահամ ջուրը, ապա դա հայտնի է բոլոր ծովային-ներին:

Վերջիններս պնդում են, որ Բասրայի ու Օմանի միջև հեռավորությունն ավելի է, քան Բասրայի ու [Չինաստանի] Զինջիների երկրի միջև: Սակայն սխալվում են, կարծելով, որ Չինաստանն ավելի հեռու է, քանի որ Զինջիների ծովը[71] մի ընդարձակ ու խորը գոգավորություն

է, նրա ալիքները հզոր են և այդ ծովում քամի կա, որն ուժեղ է փչում:

Օմանից Զինջիների երկիրը երկու ամսվա ճանապարհ է: Երբ ծովը լինում է խորը, քամին՝ ուժեղ, իսկ ալիքները՝ հզոր և բարիքները քիչ են լինում Զինջիների երկրում, ապա պատահում է, որ առագաստները գործի չեն դրվում են ծովագնացների ճանապարհն ընթանում է լարի նման ուղիղ և ոչ աղեղնաձև:

Պերկևսը կտրում է ծովի ալիքները և լողում է Զինջիների երկրից դեպի Բասրա, իսկ այն մասը որ մնում է, մարդկանց արած որսից հետո, վերադառնում է իր երկիրը: Օրհնյալ լինի Ալլահը՝ արարիչներից լավագույնը:

Այս գետում (Արաքս) այլ ձկների չարքում հատկապես հայտնի է չուրմահին, հաճելի համի, առատ ճարպի և մսի հյութեղ լինելու շնորհիվ:

[Հայաստանի բնակիչներն] ասում են, մենք չատ մանանա (մանն) ունենք, որը տարանջարին է: Ունենք որդան կարմիրը (կիրմիզ), որի նմանը ոչ ոք չունի: Սա մի կարմիր որդ է, որը հայտնվում է գարնանային օրերին և նրան հավաքում են, եփում, ապա նրանով ներկում են բուրդը:

Իսկ աչակը մի կենդանի է, (գրաստ), որը լինում է Հայաստանում և նման է կատվին (սիննաուր), ճկուն հոդերով, մազոտ մաչկով, որի մի քանի կտորն իրար կարելով դառնում է հագուստ: Նրա ժանիքները լավ են համարվում սիրո համար: Նրա ժանիքներն ու ճանկերը եթե վերցնես, չորացնես և տաս՝ ում որ սիրում ես, ապա նա ուժեղ կերպով կսիրի քեզ:

[Ասում են] թե ունենք տորոն բույսը:

Նրանում (Հայաստանում) կա սնդիկի հանք, պղնձարջասպ, պղինձ և կապար:

Նրանք ունեն հայկական ցուլեր: Ունեն առատ չագանակենի (չահբալութ) և կեչի (խալանջ), որից հրաշալիքներ են սարքում: Կեչին կտրում են Պարտավի կողմերում, անտառի թավուտից, որը ծառաչատ է և առատ բուսականությամբ: Սա կից է խազարներին, որից այն կողմ անցնում են դեպի Խորեզմի կողմերը: Կոչվում է ալ-Ռահմանի անտառի թավուտը:

Հայաստանի (Արմինիա) տարեկան հարկը երկու միլիոն երեսունեք հազար ինր հարյուր ութսունհինգ դիրհեմ է:

Բարից (Դարբանդ) այն կողմ կա Սուրի (Սուլ) և Լաքզի թագավորը, Ալանաց թագավորը, Ֆիլանի թագավորը, Մագքթաց թագավորը, Սարիրի ու Սամանդար քաղաքի տերը:

Վրկանից մինչև Խազարաց ծովը, նպաստավոր քամու դեպքում, ութ օրվա [ճանապարհ] է: Խազարները բոլորը հրեա են[72], սակայն վերջերս են հրեացել: Խազարաց երկրից մինչև պարսպի վայրը երկու

ամիա է: Ասել է Ալլահը Քարայրի (քահֆ) սուրայում.

«Եվ նրանք քեզ կհարցնեն Երկկոտոշավորի (Զու-լ-Կարնայն) մասին: Ասա՝ ես նրա մասին ձեզ մի բան պատմեմ: Մենք նրա համար երկրի վրա տերություն հաստատեցինք, նրան ամեն բանի հնարավորություն տվեցինք և նա գործադրում էր այդ միջոցները: Մինչև որ գնաց հասավ արեգակը մայր մտնելու տեղը և տեսավ, որ մայր էր մտնում մի ճահճոտ ջրհորի մեջ»: Նաև այն խոսքը, թե «Գոգն ու Մագոգը ապականում են երկիրը»: Նրանք գարնան օրերին դուրս էին գալիս իրենց հոդերը և ամեն ինչ, որ կանաչ է, ուտում էին, և ամեն ինչ, որ չոր է, տանում էին:

Ասել է. «ինչ բանի մեջ, որ Տերն ինձ ուժեղացրեց, լավ է: Ուստի ինձ զորությամբ օգնեցեք և ես ձեր ու նրանց միջև մի պարիսպ կկառուցեմ»:

Ասել են [Ալեքսանդրին]՝ ի՞նչ ես կամենում, ասել է՝ երկաթե գեբաններ, այսինքն երկաթե կտորներ: Ապա հրամայեց դրանից խոշոր աղյուս պատրաստել: Պղինձը հալեցրին, հալած վիճակում աղյուսի համար չաղախ դարձրին և դրանով փակեցին կիրճը և հավասարեցրին լեռան երկու գագաթները: Երբ վերջացրեց, [Ալեքսանդրը] հրամայեց ձուլել պղինձը և վերևից թափեց նրա վրա և այն դարձավ ամբողջական զանգված: Այս ավարտելուց հետո գնաց այդ երկրից և հեռացավ չորս ամսում:

Զրույցներում հիշվում է, որ երբ նա եկել էր [առաջին անգամ] այդ պարսպի վայրը, մարդիկ մեծ բազմությամբ հավաքվել էին նրա մոտ և ասել՝ ով հաղթական թագավոր այս լեռներից այն կողմ կան ցեղեր, որոնց թիվը միայն Աստված գիտի: Նրանք ավերել են մեր երկիրը և [փչացրել] մեր ցանքսերը: Ասաց՝ ի՞նչ տեսք ունեն, ասացին՝ կարճահասակ են, ճաղատ, լայն դեմքով: Ասաց՝ քանի տեսակ են, ասացին՝ չատ ցեղեր են և միայն Ալլահը գիտի նրանց հաչիվը: Հարցրեց՝ ինչպե՞ս է նրանց անունները, ասացին՝ նրանցից վեցը մեզ մոտեցել են և դրանք են՝ Գոգ, Մագոգ, Տավիլ, Տարիս, Մանսաք, Քումարա: Դրանք բոլորն էլ աշխարհի այլ ժողովուրդների նման են, իսկ նրանք որ հետու են մեզանից, ապա այդ ցեղերին չգիտենք: Նրանք մեզ վրա հարձակվում են միայն այս կողմից, այսինքն կիրճից, արդյոք քեզ հարկ վճարենք, որ դու պարսպով փակես և մեզ նրանցից ազատես: Ասաց՝ իսկ ինչ է նրանց կերածը, ասացին՝ ամեն տարի ծովը երկու ձուկ է դուրս նետում, ամեն մի ձուկը տաս օրվա ճանապարհի երկարություն ունի:

Ահա այսպիսով էր, որ նա կառուցել էր պարիսպը:

Զրույցում պատմվում է, որ պարիսպը բաղկացած է պղնձե մի կարմիր չերտից և երկաթե սև չերտից: Գոգն ու Մագոգը քսանչորս ցեղերից են բաղկացած: Դրանցից մեկը [այդ ժամանակ] արշավանքի

էր դուրս եկել և դա թուրքերն են: Այսպիսով երկկոտոշավորը (ալեքսանդր) պարսպից այն կողմ քսաներեք ցեղերի է փակել:

Պատմել է Մուկատիլ իբն Սուլայմանը, որ նրանք կոչվել են թուրքեր, որովհետև թողնվել (արաբ.՝ տարաքա-թողնել) են պարսպից այն կողմ:

Ասվել է, որ երբ կգա Հիսուսը (Իսա) և կսպանի անիծյալ Նեռին (ղաջջալ, հակաքրիստոս), Գոգն ու Մագոգը նորից երևան են գալու: Հիսուսը մահմեդականներին կքարոզի, փառավորելով Աստծուն (Ալլահին) և աղերսելով՝ ով Աստված, հաղթանակ պարգևիր քեզ հնազանդներին, որոնք փոքրամասնություն են ի հեճուկս մեծամասնության, որն անհնազանդ է քեզ, և Աստված հավատացյալներին հաղթանակ կպարգևի նրանց դեմ:

Վահբ իբն Մունաբբիհը պատմել է, թե նրանք (Գոգն ու Մագոգը) բարձրահասակ են, սովորական մարդու մեկուկես անգամը: Մեր ձեռքերի եղունգների փոխարեն ունեն ճիրաններ, նաև ատամներ ու ժանիքներ առյուծների նման, խոշոր ականջներ, որոնցից մեկի վրա պառկում են, իսկ մյուսով ծածկվում են: Ջուկ արու, կամ էգ, որը չիմանա իր վախճանի ժամը: Էգը չի մեռնում, մինչև արգանդից չծնվի հազար երեխա: Նրանք գարնանը ծնում են վիշապներ, որոնցից անձրև են հայցում ինչպես ամպից: Իրար կանչում են աղավնիների նման, գայլերի նման ոռնում են և իրար հանդիպելիս զուգավորվում են անասունների նման:

Ասել է Իբն Աբբասը, թե երկիրը վեց մասից է բաղկացած, ընդ որում Գոգն ու Մագոգը հինգ մասերն են զբաղեցնում, իսկ մնացած արարածները մեկ մասի վրա են:

Պատմել էր Սալլամ ալ-Տարջումանը, թե Վասիկ Բիլլահ [խալիֆայի] օրոք դուրս եկանք Սամառայից, նրա (Վասիկի) մոտից և ապա դուրս գալուց քսանութ ամիս անց վերադարձանք նրա մոտ:

ԽՈՍՔ ԹԱԲԱՐԻՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ

[.....]

ԼՂ 305

Նրանում կա մի ժողովուրդ, որն ունի իր հավատը, կառուցել է մզկիթներ և Շալուսի ժողովուրդը խնամիացել է նրա հետ: Նրանից այն կողմ գտնվում են դևմիկները, որոնք երբեք ոչ ոքի չեն հնազանդվել: Նրանց գյուղերն ու լեռները հասնում են Հայաստանի ու Բաբ ալ-Արուաբի լեռներին:

ԻԲՆ ԱԼ-ՖԱԿԻՀ ԳԻՐՔ ԵՐԿՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

(ՔԻՏԱԲ ԱԼ-ԲՈՒԼԴԱՆ)

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

[1] Լիբիա (Լուբիա) – Արաբ հեղինակները փոխառնելով անտիկ աշխարհի տեղանունները Լիբիա կամ Լուբիա ասելով նկատի ունեն Աֆրիկա մայրցամաքը: Սակայն զուգահեռաբար մատենագիրները հիշատակում են Լիբիա անվանումը որպես մի նահանգ, կամ վայր արևմտյան եզիպտոսում: Ուշ միջնադարում Լիբիա անվանումը գործածությունից դուրս է գալիս: 19-րդ դարի վերջից սկսած, այն կրկին սկսում է օգտագործվել, բայց եվրոպական ազդեցությամբ և արդեն միայն «երկրամաս» իմաստով: Միայն 1934 թ. էր, որ Իտալիայի կողմից նվաճված ու գաղութացված նախկին օսմանյան երկու երկրամասերին (Կիրենաիկա և Տրիպոլիտանիա) միասնաբար տրվեց Լիբիա (արաբ. Լիբիյա) անվանումը, որը չարունակեց կրել նաև հետագայում անկախություն ձեռք բերած պետություն: (Libiya, (Ed.), EOI, CD-ROM, (V: 753b)):

[2] Կուլզում – Տե՛ս Իբն Խորդադբեհ, ծնթգր. 22:

[3] Հարավային ծով – Թերևս Կարմիր ծովի մասին է խոսքը:

[4] Տիհամա – Արաբական թերակղզու այն նեղ չերտը, որը ձգվում է Կարմիր ծովի ափի ողջ երկայնքով՝ Աքաբայից մինչև Բար ալ-Մանդար: (Tihama, G. R. Smith, EOI, CD-ROM, (X: 481a)).

[5] Սինդ – Այս անվանումը ծագում է հին հնդկական Սինդհու անունից: Այն վերաբերում է Ինդոս գետի ստորին հոսանքի շրջանին: Ներկայումս ընդգրկված է Պակիստանի տարածքում: Սինդը նվաճվեց արաբների կողմից 8-րդ դարի սկզբին, հիմնականում Վալիդ խալիֆայի օրոք և մաս կազմեց Խալիֆայության: (Sind, Yolande Crowe, EOI, CD-ROM, (IX: 632a)):

[6] Հերմես (Հիրմիս) – Հերմեսը, կամ Հիրմիսը, հին եգիպտական Թոթ աստծու հունական անվանումից է ծագում, սակայն արաբական ավանդության մեջ այս տարօրինակ աստվածը մարդացած ձևով է հանդես գալիս, որպես հին ժամանակների հերոսներից մեկը: Ընդ որում, նա մարմնավորվում է երեք տարբեր անձերի մեջ. «առաջին Հերմեսը» նույնացվում է Ենովքի և Իդրիսի հետ: Նա, ըստ ավանդության, ապրել է եգիպտոսում՝ նախքան ջրհեղեղը: Նա կառուցել է բուրգերը և այլ սրբատեղիներ, որոնց պատերի վրա արձանագրել է հին մարդկանց գիտական նվաճումները, որպեսզի դրանք պահպանվեն ջրհեղեղից հետո: «Երկրորդ Հերմեսը» ապրել է ջրհեղեղից հետո՝ Բաբելոնում, վերածնելով գիտությունները, վերջապես՝ երրորդը ապրել է եգիպտոսում, նույնպես ջրհեղեղից հետո և գրել է տարբեր գիտությունների ու արհեստների մասին: (Hirmis, M. Plessner, EOI, CD-ROM, (III: 463b)).

[7] Արջ լեռը – Իբն ալ-ֆակիհի այս միտքը, որ Կովկասյան լեռները չարունակությունն են կազմում Ջաբալ (լեռ) ալ-Արջի, որը հիջազից երկարում է մինչև Սիրիա, մինչև Ամանոսյան լեռներ, ապա միանում Հայկական լեռնաչխարհի լեռներին, կրկնում է նաև 13-րդ դարի աշխարհագրագետ Յակուտը իր «Բառգրքի» «Կարկ» (Կովկաս) հոդվածում: (Հակոբ Նալբանդյան, Արաբական աղբյուրները, էջ 98-99):

[8] Այեքսանդր – Տե՛ս Վահբ, ծնթգր. 2:

[9] Կկառուցեր պարիսպ – Նկատի ունի Այեքսանդր Մակեդոնացու կառուցած պարիսպը առասպելական Գոգ ու Մագոգից պաշտպանվելու նպատակով:

[10] Դարեհի որդի Դարեհը – Նկատի ունի Պարսկաստանի Դարեհ Գ կոդոման ար-

քային, որը իշխել է Ք. ա. 336-330 թվականներին: 335 թվականին նա վերանվաճեց Եգիպտոսը, իսկ 333 թվականին Իսոսի մոտ պարտություն կրեց Ալեքսանդր Մակեդոնացուց: 331 թվականին Գավգամելայի ճակատամարտում, նրա բանակը վերջնականապես ջախջախվեց և Դարեհ Գ-ր փախավ Արևելյան Իրան, որտեղ նրան սպանեց իր սատրապներից մեկը: (Сов. Ист. Энц., т. 4, стр. 1011):

11 Սախլ - Բնակավայր Հարավային Եգիպտոսում:

12 Աստար – Կամ իստար: Մագում է հունական statera-ից, կշռի միավոր որ հավասար է 20 գրամի: (Хинц, Меры и веса, стр. 21).

13 Ջաղիրա - Տե՛ս Վակիդի, ծնթգր. 4:

14 Մարջ - Տե՛ս Դինավարի, ծնթգր. 12:

15 Բաջարմակ գավառ - կամ Բաջարմա: Տե՛ս Բալաղուրի, ծնթգր. 243:

16 Սինջար – Տե՛ս Բալաղուրի, ծնթգր. 45:

17 Սլավոնները (Սակալիբա) - Տե՛ս Խալիֆա իբն Խայյաթ, ծնթգր. 42:

18 Մելքիտ – Տվյալ դեպքում նկատի ունի ոչ թե ասորի մելքիտ եկեղեցին, այլ այն, որ հույները ինչպես և մելքիտները երկաբնակներ են:

19 Կավատ արքա - Տե՛ս Վահր, ծնթգր. 7:

20 Բուրջան - Դանուբյան բուլղարների երկիր: Տե՛ս Խալիֆա իբն Խայյաթ, ծնթգր. 43:

21 Ֆարմա - Իբն Խորդադբեհ, ծնթգր. 21:

22 Կուլզում – Տե՛ս Իբն Խորդադբեհ, ծնթգր. 22:

23 Ուբուլլա - Միջնադարյան քաղաք Իրաքում Եփրատ-Տիգրիսի դելտայում, Պարսից ծոցի մոտ, որը նշանավոր էր որպես վերջնակայան, որտեղից ապրանքները տարվում էին դեպի Հնդկաստան և ավելի Հեռու՝ դեպի արևելք: (al-Ubulla, J. H. Kramers, EOI, CD-ROM, (X: 765b)):

24 Վարդանակերտը (Վարսան) – Տե՛ս Խալիֆա իբն Խայյաթ, ծնթգր. 52:

25 Բարդանդ - Տե՛ս Բալաղուրի, ծնթգր. 230:

26 Մարաղա - Տե՛ս Բալաղուրի, ծնթգր. 231:

27 Բարեկ – Տե՛ս Դինավարի, ծնթգր. 20:

28 Նարիդ - Տե՛ս Բալաղուրի, ծնթգր. 237:

29 Գանձակ- Միջին դարերում Ատրպատականի մայրաքաղաքն էր: Գտնվում է Ուրմիա լճից հարավ-արևելք: Չշփոթել Ուտիքի Գանձակ քաղաքի հետ:

30 Շիդ - Տե՛ս Բալաղուրի, ծնթգր. 223:

31 Ավագ Կավատը – Տե՛ս Վահր, ծնթգր. 7:

32 Քիյար բերդը - Գտնվել է Սիսականում, այսինքն Սյունիքում: Հայկական անվանումը Շնհեր:

33 ..... երեք հարյուր կանգուն (զիրա)- Կանգունը տարբեր է եղել: Օրինակ պարսկական կանգունը հավասար էր 49, 875 սմ-ի, իսկ արաբական «արբասյան» կանգունը հավասար էր 54, 04 սմ-ի: Հետևաբար, հիշատակվող պարսպի հաստությունը, ըստ մատենագրի, հասնում էր գրեթե 150 մետրի: Տե՛ս նաև Իբն Խորդադբեհ, ծնթգր. 4:

34 Շիրվան քաղաքը - Տե՛ս նաև Խալիֆա իբն Խայյաթ, ծնթգր. 36:

35 Քարդարիյ ծով – Կասպից ծով:

36 Բայդա - Քաղաք Խազարների երկրում: Բացառված չէ որ սա նաև Սամանդար քաղաքի այլ անվանումն է:

37 Տառնխի լիճ - Կամ Թխոխիի լիճ (Վանա լիճ), տե՛ս Բալաղուրի, ծնթգր. 121:

38 Քուստի Փառնես – Տե՛ս Բալաղուրի, ծնթգր. 126:

39 Քասայ – (ըստ Ա. Տ-Ղ-ի Ղաղախ) Ղազախ - քաղաք ներկայիս Ադրբեջանի Ղազախի չրջանում: Կուրի աջակողմյան վտակ Աղստև գետի ստորին հոսանքի աջ կողմում, Հարթավայրում: (ՀՀԵՏԲ, հ. 3, էջ 494):

40 Հունարակերտ (Խունան) – Տե՛ս Խունան, Բալաղուրի, ծնթգր. 128:

41 Քուստի – Տե՛ս Բալաղուրի, ծնթգր. 131:

42 Մանարներ (սաննարիյա) – Տե՛ս Բալաղուրի, ծնթգր. 137:

43 Կղարջք – Կամ Կալարջիտ: Տե՛ս Բալաղուրի, ծնթգր. 133:

44 Սևորդիք – Տե՛ս Բալաղուրի, ծնթգր. 148:

45 Շակաչեն (Սիսար) – Տե՛ս Բալաղուրի, ծնթգր. 140:

46 Մեծ Կուենք (ալ-Միակուան) – Տե՛ս Բալաղուրի, ծնթգր. 141:

47 Մեծ Առանք (Միսրխան) - Տե՛ս նաև Մեծ Իրանք, Բալաղուրի, ծնթգր. 143:

48 Հարճլանք (Մահրաջալիան) – Տե՛ս Բալաղուրի, ծնթգր. 144:

49 Բարդիջ – Տե՛ս Բալաղուրի, ծնթգր. 150:

50 Հուզայֆա իբն ալ-Յաման ալ-Արսի – Տե՛ս Յակուբի (աչխ.), ծնթգր. 8:

51 Ալ-Մուղիրա իբն Շուբա, ալ-Կասիմ իբն Ռաբիա ալ-Սակաֆի, ալ-Աչաաս իբն Կայս - Բոլոր այս երեք անձանց նչանակումը իբրև Արմինիայի կառավարիչներ կրել է ձևական բնույթ, քանի որ մինչև 701 թվականը Հայաստանը վերջնականապես նվաճված չէր: (Վ. Տ.-Ղ.):

52 Եզիդ (Յազիդ) իբն Ուսայդ ալ-Սուլամի – Տե՛ս Բալաղուրի, ծնթգր. 168:

53 Հասան իբն Կահթաբա ալ-Թաի – Տե՛ս Խալիֆա իբն Խայյաթ, ծնթգր. 72:

54 Օսման իբն Ումարա - Տե՛ս Բալաղուրի, ծնթգր. 170:

55 Ռաուհ իբն Հաթիմ ալ-Մուհալլաբի – Տե՛ս Բալաղուրի, ծնթգր. 171:

56 Խուզայմա իբն Խազիմ – Տե՛ս Բալաղուրի, ծնթգր. 172:

57 Եզիդ (Յազիդ) իբն Մազիաղ ալ-Շայբանի – Տե՛ս Դինավարի, ծնթգր. 18:

58 Ուբայդալլահ իբն ալ-Մահդի – Տե՛ս Բալաղուրի, ծնթգր. 174:

59 Ֆազլ իբն Յահյա - Տե՛ս Բալաղուրի, ծնթգր. 175:

60 Սախլ իբն Սալմ – Տե՛ս Բալաղուրի, ծնթգր. 176:

61 Մուհամմադ իբն Եզիդ իբն Մազիաղ - Տե՛ս Բալաղուրի, ծնթգր. 177:

62 Հասան իբն Ալի ալ-Բազդիսի – Տե՛ս Բալաղուրի, ծնթգր. 178:

63 Յուսուֆ ալ-Մարուազի – Տե՛ս Բալաղուրի, ծնթգր. 181:

64 Դանգ - Կամ դանիկ օգտագործվում է թե՛ որպես կշռի և թե՛ որպես դրամական միավոր: Հավասար է դիրհեմի 1/6-րդին, կամ դինար-մսխալի 1/6-րդին: (Хинц, Меры и веса, стр. 20).

65 Խլաթի (Վանա) լիճը – Տե՛ս Թխոխիի լիճ, Բալաղուրի, ծնթգր. 121:

66 ... երկու ամսով հայտնվում է ձուկը – Նկատի ունի տառեխ ձուկը:

67 Երկկոտոչավորը - Երկկոտոչավոր էր կոչվում Ալեքսանդր Մակեդոնացին: (Իբն ալ-Ասիր, էջ 373): Տե՛ս նաև Վահր, ծնթգր. 2:

68 Առան գետը – կամ Ադուան (ալ-Ռան):

69 Վրկանա ծովը – Կասպից ծովը:

70 Շումահի – Ձկան տեսակ Հայաստանի գետերում:

71 Ջինջիների ծովը – Հավանաբար նկատի ունի Հնդկական օվկիանոսը:

72 Խազարները բոլորը հրեա են – Նկատի ունի որ ընդունել են մովսիսականություն (Հրեական կրոնը): Թեև այն ընդունել էր նրանց վերնախավը, բայց ոչ ժողովուրդը:

ԻԲՆ ՌՈՒՍՏԱ (մահ. 913-ից հետո)

Աբու Ալի Ահմադ իբն Օմար Իբն Ռուստան, ծագումով պարսիկ, ծնվել է Իսֆահանում և իր կյանքի մեծ մասն անցկացրել այնտեղ, ապրել է Հիջազում հավանաբար 903-ին: Նրա «Ալ-Ալակ ալ-Նաֆիսա» (Գիրք թանկագին արժեքների) մեծ հանրագիտարանից պահպանվել է միայն 7-րդ հատորը նվիրված աստղաբաշխությանն ու աշխարհագրությանը: Այս գործը ամենայն հավանականությամբ ստեղծվել է 903-913 թվականների միջև: Նա իր երկը սկսում է տիեզերագիտական չատ լուրջ մի ակնարկով, այնուհետև մանրամասնորեն նկարագրում է Մեքքայի ու Մադինայի սրբավայրերը, ապա ընդհանուր տեղեկություններ է փոխանցում ծովերի, գետերի, կլիմաների, մեծ քաղաքների մասին, նկարագրում է Կոստանդնուպոլիսը, խազարներին, բուլղարներին, սլավոններին, ռուսներին և այլ ժողովուրդների: Հատորն ավարտում է երթուղիների մի ցանկով: Ընդհանրապես սա մի գիրք է, որտեղ կարելի է գտնել ինչպես իսլամի տիրապետության տակ գտնվող, այնպես էլ նրանից դուրս գտնվող երկրների ու ժողովուրդների մասին մանրամասն տեղեկություններ: Իր աշխատանքում Իբն Ռուստան հավանաբար օգտվել է ալ-Ջայհանիի և Իբն Խորդադբեհի երկերից:

Ներկա թարգմանությունը կատարված է Bibliotheca Geographorum Arabicorum, edidit M. J. de Goeje, VII, Lugduni Batavorum, 1967.

(Крачковский, IV, стр. 159-160, R. Blachère et H. Darmaun, Extraits des Principaux Géographes Arabes du Moyen Age, Paris, 1957, p. 32-33, Ibn Rusta, S. Maqbul Ahmad, EOI, CD-ROM, (III: 920a)).

Տե՛ս նաև.

- Bibliotheca Geographorum Arabicorum, VII, 1892.
- G. Wiet, Les Atours Precieux , Caire, 1955, Vol. 1

ԻԲՆ ՌՈՒՍՏԱ

ԳԻՐՔ ԹԱՆԿԱԳԻՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ
(ՔԻՏԱԲ ԱԼ-ԱԼԱԿ ԱԼ-ՆԱՖԻՍԱ)

ԾՈՎԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ԼՂ 83-86

Բնակելի աշխարհի հայտնի ծովերից մեծերը հինգն են՝ Հնդկաց, Պարսից ու Ջինաց ծովը[1], Ռումի, Իֆրիկիայի ու Ասորիքի ծովը[2], Օվկիանոս ծովը, որը Մաղրիբի ծովն է[3], Պոնտոսի ծովը[4] և Թաբարիստանի ու Վրկանա (Ջուրջան) ծովը[5]:

Հնդկաց ծովի երկարությունը արևմուտքից արևելք, այսինքն Եթովպիայի հեռավոր ծայրից մինչև Հնդկաստանի ծայրը ութ հազար մղոն է, երկու հազար յոթ հարյուր մղոն [յայնությամբ]:

Ռումի, Իֆրիկիայի ու Եգիպտոսի ծովի[6] երկարությունը Մաղրիբի ծովից դուրս եկող ծոցից մինչև արևելք, այսինքն՝ Տյուրոս ու Սիդոն հինգ հազար մղոն է, իսկ լայնությունը՝ մի տեղում վեց հարյուր մղոն է, մի այլ տեղում ութ հարյուր մղոն: Նրանից բաժանվում է մի ծոց, դեպի հյուսիս՝ Հռոմին մոտիկ, հինգ հարյուր մղոն երկարությամբ և կոչվում է Ադրիական (Ադրիաս)[7], իսկ մի ուրիշ ծոց[8] էլ նրանից ձգվում է դեպի Նարբոն (Նարբոնա) երկու հարյուր մղոն երկարությամբ: Այս ծովում կա հարյուր վաթսուներկու չեն կղզի, որից հինգը խոշոր կղզիներ են: Ամենափոքրը Կորսիկան (Կուրնիս) է, որի շրջագիծը երկու հարյուր մղոն է, ապա Սարդինիան (Սարդանիա), որի շրջագիծը երեք հարյուր մղոն է, Սիկիլիան, որի շրջագիծը հինգ հարյուր մղոն է, Կրետեն (Իկրիթիա), որի շրջագիծը երեք հազար մղոն է և Կիպրոսը (Կուբրուս), որի շրջագիծը երեք հարյուր մղոն է:

Օվկիանոս ծովը, դա Մաղրիբի ծովն է, Կանադ ծովը[9]: Նրանից հայտնի է միայն այն տարածությունը որը արևմուտքից ու հյուսիսից այն կողմն է և երկարում է Եթովպիայի ծայրից մինչև Բրիտանիա (Բարաթանիա): Սա մի ծով է, ուր նավեր չեն գնում, այնտեղ կա վեց կղզի Եթովպիայի դիմաց, որոնք կոչվում են Հավերժության (Խալիդատ) կղզիներ և մի այլ կղզի, որ կոչվում է Ղադիրա (Գադիրա) Անդալուսի դիմաց՝ ծոցի մոտ: Այս ծոցը (Նեղուցը) Մաղրիբի ծովից է դուրս գալիս, լայնությունը յոթ մղոն է և գտնվում է Անդալուսի և Թանժերի միջև ու կոչվում է Շաբթա[10] (Սաբթա) ու մտնում է Ռումի

ծովը: Այս (Մաղրիբի) ծովի հյուսիսային կողմում տասներկու կղզի կա կոչված Բրիտանական կղզիներ, որից այն կողմը չեն վայրերից հեռու է գտնվում և ոչ ոք չգիտի ինչպիսին է:

Պոնտոսի ծովը գտնվում է Լաղիկայից մինչև Կոստանդնուպոլսի նեղը: Երկարությունն է հազար երեք հարյուր մղոն, լայնություն՝ երեք հարյուր մղոն: Նրա մեջ է թափվում Տանախա[11] (Թանխա) գետը, որը հոսում է հյուսիսից, այն լճից, որ կոչվում է Մեոտիս[12] (Մաութիչ) և սա մեծ ծով է, թեև լիճ (ծովակ) է կոչվում: Երկարությունն է արևմուտքից արևելք երեք հարյուր մղոն, լայնություն՝ հարյուր մղոն: Կոստանդնուպոլսի մոտ նրանից (Պոնտոսից) դուրս է գալիս մի ծոց[13], որ գետի նման հոսում է ու թափվում եգիպտոսի ծովը (Միջերկրական): Սրա լայնությունը Կոստանդնուպոլսի մոտ գրեթե երեք մղոն է և նրա վրա է կառուցված Կոստանդնուպոլիսը:

Թաբարիստանի ու Վրկանի (Ջուրջանի) ծովը, Բաբի (Դարբանդի) ծովն է և ունի երկարություն արևմուտքից արևելք հազար ութ հարյուր մղոն, լայնությունը՝ վեց հարյուր մղոն: Նրանում, Թաբարիստանից այն կողմ երկու կղզի կա, որ անցյալում չեն են եղել:

ԼՂ 88

Իսկ Հայկական ծովը[14] (ալ-բահր ալ-Արմանի), ապա նրա հեռավորությունը Խեզգետնի արևադարձից (մադար ալ-սարաթան) քսանմեկ մաս է: Նրանում ուժեղանում են քամիները, փոթորիկները, խավարն այնքան է սաստկանում, որ մարդիկ չեն նավարկում:

Իսկ Ասորիքի ծովում երբ արեգակը Կարիճի համաստեղության սկզբից հասնում է Ձկների համաստեղության սկիզբը, ապա այդ չորս ամիսներում մարդիկ չեն կարող նավարկել այն պատճառով, որ արեգակը հեռանում է նրանից և կատաղի քամիներ են փչում նրա հյուսիսային մասում:

ԳԵՏԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ԼՂ 89-93

Բնակելի աշխարհում կան մեծ նշանավոր գետեր, որոնց մի մասը գիտենք ու տեղյակ ենք նրանց մասին: Նրանցից է Գանգես (Քանք) գետը, որ հոսում է Հնդկաստանի վերին կողմերում: Բխում է Ներքին կաչմիրի վերևից, հոսում է հարավ, մինչև թափվում է Հնդկաց ծովը: Միհրան գետը[15] Սինդ գետն է, բխում է Շինկան լեռներից[16] և սա Մանսուրա գետն[17] է, որ թափվում է ծովը:

Արաքս գետը Հայաստանի գետն է, բխում է Կարնո քաղաքից (Կալիկալա), անցնում Աղասի (Ղա՞րս) կողմերում մի մեծաքակա ավա-

նով (ռուստակ), ապա անցնում Դվինով, Մադաինով (Առան)։ Նրա մեջ Հայաստանի և Մադաինի (Առան) լեռներից գետեր են թափվում, ապա անցնում Վարդանակերտով (Վարսան) մինչև Բարգանջ[18], հետո միանում է Կուր գետին և թափվում Թաբարիստանի ծովը։

Արաքս գետը բխում է Կարնո քաղաքից, անցնում է Առանով, նրա մեջ թափվում է Առան գետը, անցնում է Վարդանակերտով, ապա հասնում միախառնման վայրը և միանում Կուրին։ Նրանց միջև Փայտակարան (Բայլական)[19] քաղաքն է գտնվում։ Նրանք միասին թափվում են Վրկանա (Ջուրջան) ծովը։

Կուր գետը բխում է Ալանաց երկրից[20], անցնում է Տիղիսով, Պարտավով ու թափվում Թաբարիստանի ծովը։

Իսֆիդ Ռուդի ակունքը Սիսարի[21] դռնից է, անցնում է Ատրպատականի հողով, ապա մտնում է դելմիկների երկիրը (Դայլամ) և թափվում Թաբարիստանի ծովը։

Շահ Ռուդի ակունքը Ռեյի Թալականից է և նա միախառնվելով Իսֆիդ Ռուդին թափվում է Թաբարիստանի ծովը։

Երկու Զաբերի[22] ակունքը Հայաստանի լեռներում է։ Մեծ Զաբը թափվում է Տիգրիսի մեջ Հադիսայի[23] մոտ, իսկ Փոքրը՝ Սիննի մոտ։ Նահրաուան գետը[24] բխում է Հայաստանի լեռներից, անցնում է Բար Սալուայով և այնտեղից սկսած կոչվում է Տամառա։

Ադանայի և Մամեստիայի գետ Սարոսը (Սայհան)[25] բխում է Ռումի երկրից և թափվում է Ասորիքի ծովը։ Պիրամոս (Ջայհան)[26] գետը բխում է Ռումի երկրից և անցնելով Մամեստիայի ու Քաֆարբայայի արանքով թափվում է Ասորիքի ծովը։

Եփրատ գետը բխում է Ռումի երկրում մի վայրից վերև, որը կոչվում է Տևրիկ (Աբրիկ)[27]։ Գալիս է հյուսիսից, անցնում Ջաղիրայով, Ռակկայով, ապա իջնում Քուֆա, իր արևմուտքում թողնելով Ասորիքը, իսկ արևելքում՝ Ջաղիրան և վերջապես թափվում է ալ-Բաթահ[28] [.....]։

ՅՈԹ ԻԿԼԻՄՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ՆՇԱՆԱՎՈՐ ՔԱՂԱՔՆԵՐԻ ԱՆՈՒՆՆԵՐԸ

էջ 96–98

Առաջին իկլիմն սկսում է արևելքից՝ Զինաց երկրի հեռավոր ծայրերից, անցնում է Զինաստանի միջով, ապա Սինդի հարավում՝ ծովի ափերով։

Երկրորդ իկլիմն սկսում է արևելքից, անցնում Զինաստանով, ապա Հնդկաստանով [...]։

Երրորդ իկլիմն սկսում է արևելքից, անցնում Զինաստանի հյուսիսով, Հնդկաստանով։ Նրանում է Կանդահար քաղաքը, ապա անցնում է Սինդի հյուսիսով, Քարուլով, Քիրմանով, Սիջիստանով, Ջիրուֆտով[29], Սիրաջանով[30] և Բասրայի ծովի ափերով։ Նրանում կան հետևյալ քաղաքները՝ Խեմախրը, Ջուրը[31], Ֆասան, Սաբուրը, Շիրազը, Սիրաֆը, Ջաննաբան, Մահիրուբանը։ Ապա [այս իկլիմն] անցնում է Ահուազ Նահանգով, Իրաքով, որի մեջ են Բասրան, Վասիթը, Բաղդադը, Քուֆան, Անբարը, Հիտը, հետո անցնում է Ասորիքի երկրով, որի մեջ են՝ Հիյարը, Սալամիան, Եմեսան, Դամասկոսը, Տյուրոսը (Սուր), Ակրան (Աքքա), Տիբերիադը (Թաբարիա), Կեսարիան, Ռասուֆը, Սուրբ քաղաքը (Երուսաղեմ), Ռամլան, Ասկալոնը, Ղազզան, Մադիանը, Կուլզումը։ Ապա իջնում է Եգիպտոսի (Միսր) հողի ստորին մասը, որի մեջ են Ֆարման, Տիննիսը, Դամիեթը, Ֆուսթաթը, Եգիպտոսը, Ֆայյումը, Ալեքսանդրիան, հետո անցնում է Բարկա, Իֆրիկիա երկիրը, որի մեջ է Կայրուանը և վերջանում Մաղրիբի ծովով։

Չորրորդ իկլիմն սկսում է արևելքից Տիբեթում (Տուրբատ), անցնում Խորասանով, որի մեջ են Ֆարղանա, Խուջանդա, Ուշրուսանա, Սամարկանդ, Բուխարա, Բալխ, Մարվ ալ-Ռուդ, Մարվ, Սարախս, Թուս, Նիչապուր, Վրկան (Ջուրջան), Կումիս, Թաբարիստան, Դմավանդ, Կազուին, Դելմիկք, Ռեյ, Սպահան, Կում, Համադան, Նահավանդ, Դինավար, Հուլուան, Շահրազուր, Սամառա, Մոսուլ, Բալադ, Մծբին, Ամիդ, Ռաս Այն, Կարնո, Շիմշաթ, Խառան և Կարկիսիա քաղաքները։ Ապա անցնում է Ասորիքի հյուսիսով, որի մեջ են Բալիս, Մանբիջ, Սամոսատ, Մալաթիա, Զապլետրա, Հալեբ, Կիննասրին, Անտիոք, Տրիպոլիս, Մամեստիա, ալ-Քանիսա ալ-Սաուդա, Ադանա, Տարսոն, Ամորիոն, Լաոդիկե քաղաքները։ Հետո անցնում է Ասորիքի ծովով Կիպրոս կղզի, Հոռոս, ապա Մաղրիբ երկիրը՝ Թանժեր քաղաքով և վերջանում Մաղրիբի ծովով։

Հինգերորդ իկլիմն սկսում է արևելքից՝ Գոգի (Յաջուջ) երկրից, ապա անցնում է Խորասանի հյուսիսը, ուր կան Թառազ վաճառականների քաղաքը, Նաուիքատը, Ասբիջաբը, Շաշը, Թուբարաբանդը, Խորեզմը, Ատրպատականը և Հայաստանի գավառները՝ Պարտավը, Նախճավան, Սիսական, Արզնը և Խլաթը։ Ապա անցնում է Ռումի երկրով, Խարսիանոնի (Խարչանա), Կուռայի և Մեծ Հռոմի (Ռումիա ալ-Քուբրա) վրայով, Ասորիքի ծովի ափերի հյուսիսային կողմով, Անդալուս երկրով և վերջանում Մաղրիբի ծովով։

Վեցերորդ իկլիմն սկսում է արևելքից, անցնում Մագոգ (Մաջուջ) երկիրը, մտնում Խազարաց երկիրը, կտրում Թաբարիստանի ծովը դեպի Ռումի երկիրը, անցնելով Վիրքի, Ամասիայի, Հերակլիայի, Քաղկեդոնի, Կոստանդնուպոլսի, Բուրջան երկրի վրայով և վերջանում Մաղրիբի ծովով։

Յոթերորդ իկլիմն սկսում է արևելքից, Գոգի հյուսիսից, անցնում

Թուրքաց երկրով, Թաբարիստանի ծովի ափերով, դնպի հյուսիս, կտրում Ռումի ծովը, անցնում Բուրջան երկիրը, սլավոնների երկիրը և վերջանում Մաղրիբի ծովով:

ԻՐԱՆՇԱՀՐԻ ԵՎ ՍԱՎԱԴԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

էջ 103-104

Իրանշահրը բաժանված է եղել մասերի: Մի մասն ընդգրկում էր ամենաերկար ցերեկվա արևածագից մինչև ամենակարճ ցերեկվա արևածագը ընկած տարածությունը և կոչվում է Խորասան: Մի մասն ամենաերկար ցերեկվա մայրամուտից մինչև ամենակարճ ցերեկվա մայրամուտը և կոչվում է Խուրբարան, որի իմաստն է արեգակի մայրամուտը: Մի ուրիշ մասն ընդգրկում է ամենակարճ ցերեկվա արևածագից մինչև ամենակարճ ցերեկվա մայրամուտը ընկած տարածությունը և կոչվում է Նիմրուզ, որը նշանակում է հարավ, իսկ մի ուրիշ մասն էլ ընդգրկում է ամենաերկար ցերեկվա արևածագից մինչև ամենաերկար ցերեկվա մայրամուտը և կոչվում է Բախտար, որը նշանակում է հյուսիս: Կա նաև այս մասերի միջինը, որը կոչվում է Սուրաստան և դա Սավադն է:

ԻՐԱՆՇԱՀՐԻ ՄԱՍԵՐԸ

էջ 105 -107

[Իրանշահրն] ընդգրկում է որոշակի երկրներ, որոնցից ամեն մեկը մի քանի նահանգներ (քուրա) ունի: Դրանք են՝ Խորասանը, Սիջիստանը, Քիրմանը, Պարսքը (Ֆարս), Ահուազը, Ջաբալը, Ատրպատականը, Հայաստանը, Մոսուլը, Ջազիրան, Ասորիքը և Սուրաստանը, որն այդ երկրների կենտրոնում է:

Խորասանի նահանգներն են՝ Թարսայնը, Կուհիստանը, Նիչապուրը, Հերատը, Ֆուչանգը, Բաղղիսը, Թուսը, Նասան, Սարախսը, Աբիվարդը, Մարվ ալ-Ռուդը, Թալականը, Ֆարիաբը, Ջուզջանը, Բալխը, Թուխխրիստանը, Տիրմիդը, Բուխարան, Սամարկանդը, Քիշը, Նասաֆը, Շաշը, Ֆիրղանան և Ուշրուսանան:

Սիջիստանի նահանգներն են Զարանջը, Բուստը և Ռուխխադը:

Քիրմանի նահանգներն են՝ Բարդասիրը, Սիրաջանը, Նարմաշիրը, Բամմը, Ջիրուֆտը և Հուրմուզը:

Պարսից (Ֆարս) նահանգներն են՝ Շապուրը (Սաբուր), Խթախրը, Արդաշիրխուռան, Դարաբաջիրդը, Ֆասան, Արջանն ու Շիրազը:

Ահուազի նահանգներն են՝ Սուկ (չուկա) Ահուազը, Ջունդիշապուրը (Ջունդայսաբուրը), Ռամահուրմուզը, Սուռակը, Բայդակը, Տուստարը և Շուշը (Սուս):

Ջաբալի նահանգներն են՝ Մասաբդանը, Միհրաջան Կազակը, Մահ ալ-Քուֆան, Մահ ալ-Բասրան, Համադանը: Կումը Իրաքի նահանգներից է: Իսկ այն, ինչ վերագրվում է Ջաբալին, սակայն [իրականում] նրա մեջ չէ, ոչ էլ Խորասանում է, ապա հետևյալն է՝ Ռեյը, Կումիսը, Սպահանը, Շահրզուրը, Սամղանը, Դարաբազը, Կազուինը, Զինջանը, Ջուրջանը, Թաբարիստանն ու Դաբավանդը:

Ատրպատականի նահանգներն են՝ Արդաբիլը, Մարանդը, Բաջարուանը, Վարդանակերտը (Վարսան)[32] և Մարաղան:

Հայաստանի նահանգներն են՝ Առանը, Վիրքը (Ջուրզան), Նախճավանը (Նաչավա), Խլաթը, Դվինը (Դաբիլ), Շիրակը (Սիրաջ), Սուղդաբիլը[33], Ապահունիքը (Բաջունայս), Արճեշը (Արջիշ), Սիսականը (Սիսաջան) և ալ-Բաբ վ-ալ-Աբուաբ (Դարբանդ) քաղաքը:

Մոսուլի նահանգներն են՝ Մոսուլը, Տաքրիտը, Թիրհանը, Սիննը, Հադիսան, Մարջը, Սիսաջարը, Բաջալին ու Բաջարման:

Ջազիրայի նահանգներն են՝ Արզնը, Նփրկերտը, Ամիդը, Սամոսատը, Կարդան, Բազաբդան, Բալադը, Մծբինը, Դարան, Ռաս Այնը, Կարկիսիան, Ռակկան, Սարուջը, Խառանը, Եղևսիան (Ռուհա), Ռաս Քայֆան ու Շիմշաթը: Ջազիրայի նահանգներից են այն [չրջանները], որոնք կոչվում են Սահմանային ամրություններ (Սուղուր), այսինքն՝ Շիմշաթը, Մալաթիան, Զապնտրան (Զիրաթրա), Մարաչը, Հադասը, Սամոսատը, Հին Մանսուրը: Ջազիրայի նահանգները երկու մասին են բաժանվում՝ մեկը կոչվում է Դիար Ռաբիա, մյուսը՝ Դիար Մուդար:

Ասորիքի նահանգներն են՝ Հալեբը, Կինննասրինը, Անտիոքը (Անթաքիա), Շայզարը, Եպիփանիան (Համա), Եմեսան (Հիմս), Ապամեան (Ֆամիա), Հելիոպոլիսը (Բաալբեկ), Դամասկոսը (Դիմաշկ), Տիբերիականը (Թաբարիա), Ռամլան և Իլյան: Ասորիքում կան նահանգներ, որոնք Ասորիքի սահմանային ամրություններ են կոչվում (ալ-սուղուր ալ-շամիյա) և դրանք են՝ Ադանան, Մամեստիան (Մասսիսա), Տարսոնը (Թարսուս), Անազարբան (Այն Զարբա), Հարունիան, ալ-Քանիսա ալ-Սաուդան (Սև եկեղեցի), Ավասիմը, Անտիոքը, Տիգինը, Կուրուսը, Մանբիջը, Տլուքը (Դուլուք) և Ռաաբանը:

Օմար իբն ալ-Խաթթաբի օրոք նրա մոտ էին հավաքվում եմենի և այլ վայրերի արաբ պատվիրակությունները, իսկ նա կառավարիչներ էր նշանակում և ուղարկում Ասորիք: Օմարը Ասորիքը չորս դինվորական գոտիների (աջնադ) էր բաժանել ու հանձնել իր կառավարիչներին, որոնք էին՝ Արու Ուբայդա իբն ալ-Ջառահը, Խալիդ իբն ալ-Վալիդը, Եզիդ (Յազիդ) իբն Արու Սուֆիանը և Ամր իբն ալ-Ասը: Ասորիքը մնաց այս դինվորական բաժանումներով, մինչև որ Եզիդ իբն

Մուավիա [Խալիֆան] ավելացրեց Կիննասրինը, որը Ջազիրայի հողերից էր և այսպիսով Ասորիքի դինվորական գոտիները չորսը դարձան՝ Հորդանանի (Ուրդուն) ջունդը, որը Տիբերիականին է, Պաղեստինի ջունդը, որը Ռամլայինն է, Դամասկոսի ջունդը և Կիննասրինի ջունդը:

Սավադը տասներկու նահանգ (քուրա) ունի և ամեն մի նահանգ ոստան (իստան)[34] է և նրա թասուջները[35] վաթսունն են:

ԲԱՂԴԱԴՆ ՈՒ ՆՐԱ ՀԱԿԻՐՃ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

էջ 108-109

Այս նահանգի (Սավադ) մայրաքաղաքը (միսր) Խաղաղության քաղաքն է (Մադինատ ալ-Սալամ), որը կոչվում է Բաղդադ: Բաղդադը վայրի նախկին անունն է, ուր ասվում է թե հին դարերում կուռքերի վայր է եղել: Սա Բաբելոնի (Բաբիլ) հողն է, իսկ Բաբելոնը այս կողմերում հնագույն բնակավայր է: Հին թագավորներն այստեղ են հաստատվել և ասվում է, որ Նոյի որդիներն այստեղից են բաժանվել:

Երբ Օմայանների (Բանու Ումայյա) թագավորությունը վերացավ, Աբու-լ-Աբբաս [Խալիֆան] իր իշխանության օրերին հաստատվեց Անբարում[36], մինչև կյանքին հրաժեշտ տալը: Որպես խալիֆա նրան հաջորդեց Աբու Ջաաֆար ալ-Մանսուրը, որը փոխադրվեց Բաղդադ և կառուցեց Խաղաղության քաղաքը: Տիգրիս գետը հոսում է այս քաղաքի միջով և գալիս է Ջազիրայի ու Հայաստանի լեռներից: Բաղդադի բուն շինությունները, որոնք կոչվում են Խաղաղության քաղաք գտնվում են Տիգրիսի արևմտյան ափին և կառուցված են Մանսուրի կողմից:

Սա ամրակուռ քաղաք է, ունի կրկնակի պարիսպներ, իսկ երկու պարիսպների միջև կառուցված է ցածր նախապարիսպ (փասիլ), պարսպից դուրս կա խրամատ, որի եզերքները ծեփով (գիպս) ու աղյուսով են պատած: Քաղաքն ունի չորս դռներ, ամեն մի դռան վրա կանաչ գմբեթ կա, ամեն մի գմբեթի տակ՝ գավիթ (հավաքավայր, մաշլիս), կաղնու փայտե սյուների վրա և նայում է դեպի Բաղդադ: Նրա դռներից մեկը կոչվում է Խորասանի դուռ, երկրորդը՝ Բասրայի դուռ, երրորդը՝ Քուֆայի դուռ, չորրորդը՝ Ասորիքի դուռ:

Քաղաքի մեջտեղում է Աբու Ջաաֆար [Խալիֆայի] կառուցած պալատը, որը կոչվում է Ոսկե դուռ (բար ալ-զահաբ): Ամեն մի դռնից դուրս է գալիս մի մեծ լայն փողոց, իսկ փողոցների վրա կամարներ կան ծեփով (գիպս) ու աղյուսով պատրաստված: Արտաքին պարսպի վրա չորս երկաթե դուռ կա: Առաջին դռնից մտնողը հանդիպում է ցածր նախապարսպին, հետո պետք է պտույտ կատարի քաղաքի

չուրջը, որպեսզի հանդիպի մի ուրիշ երկաթե դուռ, որի վրա գմբեթ կա: Քաղաքում կա մայր մզկիթ, կառուցված ծեփից ու աղյուսից, կաղնու փայտե սյուներով, իսկ առաստաղը պատած է կաղնու փայտով և լաջվարդով զարդարված:

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ՆՐԱՆՈՒՄ ԵՂԱԾՆԵՐԻ ՈՒ ՀՈՌՈՄՆԵՐԻ (ՌՈՒՄ) ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

էջ 119-123

Հարուն իբն Յահիան պատմել է, որ ինքը գերի ընկնելով տարվել է ծովի ճանապարհով Ասկալոնից Կոստանդնուպոլիս: Երեք օր ճանապարհորդելուց հետո հասել են մի քաղաք, որը կոչվում է Ատտալիա (Անթալիա)[37] և գտնվում է Միջերկրական (Ռում) ծովի ափին: Այստեղից տարել են փոստային ձիերի միջոցով և երեք օր լեռների, հովիտների ու մշակված հողերի միջով ճանապարհորդելուց հետո հասել են մի քաղաք, որը կոչվում է Նիկիա[38], մի մեծ ու մարդաշատ քաղաք: Երեք օր հետո հասել են Սանկարա[39] կոչված քաղաքը, մի փոքրիկ քաղաք տեղավորված մերկ դաշտի մեջ:

«Ապա, – ասում է Հարունը, – մենք ոտքով գնացինք, ապա դաշտում քայլելով, ձախ և աջ կողմերում տեսնելով հռոմների գյուղեր, երկու օրվա ընթացքում հասանք ծովը, նավ նստեցինք ու մեկ օրում հասանք Կոստանդնուպոլիս»:

Սա մի մեծ քաղաք է, որի [տարածությունը] տասներկու փարսախով տասներկու փարսախ է, իսկ նրանց փարսախը, ինչպես ասում են, մեկուկես մղոն է: Նա արևելյան կողմից ծովով է շրջապատված, իսկ արևմտյան կողմում տարածված է այն դաշտը, որի միջով անցնում է Հռոմի (Ռումիա) ճանապարհը: Ունի ամրակուռ պարիսպ (բերդ): Այն դուռը, որից անցնում են Հռոմի ճանապարհը դուրս գալու համար, ոսկուց է, նրա մոտ կանգնած են պահապաններ և այն կոչվում է Ոսկե դուռ (բաբ ալ-զահաբ): Դռան վրա կան հինգ արձաններ, որոնք ներկայացնում են փղեր և մեկ ուրիշ [արձան], որը կանգնած մարդ է և փղերի սանձն է բռնել: Նա ունի մի ուրիշ դուռ ևս թեբակղղու կողմից, որը կոչվում է Բիգաս (Բիղաս) և այստեղ թագավորը (կայսրը) գալիս է զբոսնելու: Սա երկաթե դուռ է:

Քաղաքի կենտրոնում գտնվող եկեղեցու կողքին կա արքունի պալատը (բալաթի), որը մի ամրոց է: Նրա կողքին կա մի վայր, որը կոչվում է Հիպպոդրոմ (ալ-բուդրուն), որը նման է ասպարեզի (մայդան), ուր գալիս ու հավաքվում են պատրիկները: Քաղաքի կենտրոնում գտնվող իր պալատից թագավորը տեսնում (հսկում) է նրանց: Պալատում կան բրոնզից (սուֆր) ձուլված կուռքեր, որոնք ձիերի, մարդ-

կանց, վայրի կենդանիների, առյուծների և այլ կերպարանքներ ունեն:

Հիպպոդրոմի արևմուտքում, Ոսկե դռան կողմը երկու դուռ կա, որոնց մոտ բերում են ութ ձի: Այնտեղ լինում է երկու ոսկե կառք, որից ամեն մեկին չորս ձի են լծում: Կառքերի վրա բարձրանում են երկու մարդ, որոնք հագել են ոսկեթել գործվածքեղենից զգեստներ: Ապա թողնում են կառքերին լծված ձիերին, որ վազեն և նրանք անցնում են վերոհիշյալ դռներից ու երեք անգամ պտտվում են կուռքերի չուրջը: Ով ընկերոջից առաջ հասնի, արքունի տնից նրան նետում են ոսկե մանյակ ու մեկ ոսկի: Կոստանդնուպոլսի ամբողջ բնակչությունը ներկա է լինում այս մրցումներին ու դիտում:

Արքունի պալատի չուրջը կա մի պարիսպ, որը չրջապատում է ամբողջ ապարանքը և ունի մեկ փարսախ չրջագիծ: Նրա կողմերից մեկը ձգվում է դեպի արևմուտք՝ հասնելով ծովին: Այս պարիսպն ունի երկաթե երեք դուռ, որոնցից մեկը կոչվում է Հիպպոդրոմի (բիդրուն) դուռ, մյուսը՝ ալ-Մանքանայի դուռ, իսկ երրորդը՝ Ծովի դուռ:

Հիպպոդրոմի դռնից կարելի է մտնել մի դահլիճ, որը հարյուր քայլ (խաթուա) երկարություն ու հիսուն քայլ լայնություն ունի: Դահլիճի երկու կողմից կան ճանապարհներ, որոնք ծածկված են դիպակե գորգերով, ներքնակներով ու բարձերով և դրանց վրա կանգնում են քրիստոնեացած սևամորթներ, իրենց ձեռքին կրելով ոսկեզօծ վահաններ ու ոսկեզօծ նիզակներ:

Ալ-Մաքանա դռնով կարելի է մտնել մի դահլիճ, որն ունի երկու հարյուր քայլ երկարություն և հիսուն քայլ լայնություն: Հատակը ծածկված է մարմարով ու նրա երկու կողմերում կան ճանապարհներ, որոնց վրա կանգնած են աղեղը ձեռքին բռնած խազարներ: Դահլիճում կա չորս բանտ՝ մեկը մահմեդականների, մյուսը՝ Տարսոնի մարդկանց, մեկ ուրիշը՝ ժողովրդի համար, իսկ չորրորդը գտնվում է պահակազորքի պետի տրամադրության տակ:

Ծովի դռնով կարելի է մտնել մի դահլիճ, որն ունի երեք հարյուր քայլ երկարություն և հիսուն քայլ լայնություն: Հատակը ծածկված է կարմիր աղյուսե սալերով: Դահլիճի աջ և ձախ կողմերում կան ճանապարհներ գորգով ծածկված, որոնց վրա կանգնած են թուրքեր, ձեռքներին բռնած աղեղներ ու վահաններ: Դահլիճն անցնելուց հետո մտնում են մի բակ, երեք հարյուր քայլ [մեծությամբ], որի դիմացը կախված է մի վարագույր այն դռան վրա, որը տանում է արքունի տունը (դար):

Ներս մտնողի ձախ կողմում գտնվում է արքունի եկեղեցին, որն ունի տաս դուռ, չորսը՝ ոսկուց և վեցն՝ արծաթից:

[Եկեղեցու] օթյակում, ուր թագավորն է կանգնում, կա մի [հատուկ] տեղ չորսով չորս կանգուն, ընդելուզված (ագուցված) մարգարիտներով (դուրր) և կարմիր հակինթներով (յակութ): Արմնկակալը,

որին հենվում է, նույնպես ընդելուզված է մարգարիտներով ու հակինթներով: Խորանի (զոհասեղան) դուռն ունի չորս մարմարե միակտուր քանդակված սյուներ: Խորանը, որի վրա քահանան ադոթք է կատարում, ունի հինգ թիզ (չիբր) երկարություն և վեց թիզ լայնություն, պատրաստված է հալվի փայտից, ընդելուզված մարգարիտներով ու հակինթներով: Թագավորի քահանան նրա դիմացն է կանգնում: Եկեղեցու բոլոր առաստաղները կամարակապ են և [ծածկված] ոսկով ու արծաթով: Այս եկեղեցում չորս բակ կա, ամեն մեկը երկու հարյուր քայլ երկարությամբ և հարյուր քայլ լայնությամբ: Արևելյան բակում մարմարի մեջ փորված մի ավազան կա, որն ունի տաս կանգուն երկարություն և տաս կանգուն լայնություն: Նրա գլխին մի մարմարե սյուն կա, որը գետնից չորս կանգուն բարձր է: Վերևում կառուցված է մի կապարե գմբեթ, որից վերև կա մի ուրիշ գմբեթ արծաթից, նստած տասներկու սյուների վրա, ամեն մեկը՝ չորս կանգուն: Սյուներից ամեն մեկի գլխին կենդանիների արձաններ կան, ընդ որում առաջինի վրա կա բազե, երկրորդի վրա՝ գառնուկ, երրորդի վրա՝ ցուլ, չորրորդի վրա՝ աքաղաղ, հինգերորդի վրա՝ առյուծ, վեցերորդի վրա՝ էգ առյուծ, յոթերորդի վրա՝ գայլ, ութերորդի վրա՝ կաքավ, իններորդի վրա՝ սիրամարգ, տասներորդի վրա՝ ձի, տասնմեկերորդի վրա՝ փիղ, տասներկուերորդի վրա՝ հրեշտակ:

Գմբեթի մոտ, այդ բակում երկու հարյուր քայլի վրա, մի ջրամբար կա, որտեղից ջուր է բերվում արձանների համար, որոնք սյուների գլխին են: Տոնական օրերին այդ ջրամբարը լցնում են տաս հազար անոթ գինի, ապա նրա մեջ թափում են տաս հազար անոթ սպիտակ մեղր: Գինուն բուրմունք են տալիս լցնելով մի ուղտի բեռ անուշահոտ նարդոս, մևլակ, կինամոն (դարսինի): Ջրամբարն այնպես է փակվում, որ այնտեղ ոչինչ չի կարելի տեսնել: Երբ թագավորը եկեղեցի մտնելու համար պալատից դուրս է գալիս, աչքն ընկնում է արձաններին ու գինուն, որը հոսում է նրանց բերաններից ու ականջներից, թափվելով ու լցնելով ավազանը: Թագավորի չրջապատի անձնավորությունները, որոնք եկել են նրա հետ տոնակատարությանը ներկա լինելու, այդ գինուց մեկական անգամ խմում են:

Երբ վարագույրը բացվում է և մտնում են պալատ, անցնում են մի մեծ դահլիճ, որը չորս հարյուր քայլ երկարություն ու լայնություն ունի, սալահատակված կանաչ մարմարով, իսկ պատերը զարդարված են խճանկարներով և ամեն տեսակ չքեղություններով: Հենց մեկը մտնում է պալատ, իր աջ կողմում տեսնում է արքունի գանձարանը, ուր ներսում գտնվում է կանգնած ձիու արձան, վրան ձիավոր, իսկ աչքերը երկու կարմիր հակինթներ են: Իսկ ձախ կողմում տեսնում է մի դահլիճ, երկու հարյուր քայլ երկարությամբ և հիսուն քայլ լայնությամբ: Նրանում կա մի սեղան կեչու (խալանջ) փայտից պատրաստ-

ված, մի ուրիշը՝ փղոսկրից, մի երրորդը՝ ոսկուց, որը դրված է խորքում:

Երբ տոնակատարությունը վերջանում է, թագավորը դուրս է գալիս եկեղեցուց, մտնում է այդ դահլիճը, նստում խորքում ոսկե սեղանի առջև: Դա լինում է [Քրիստոսի] ծննդյան օրը: Թագավորը հրամայում է բերել մահմեդական գերիներին ու նստեցնել այդ սեղաններին:

Երբ թագավորը նստած է լինում խորքում, բերում են չորս ձիակառքի վրա դրված չորս ոսկե սեղաններ, որոնք, ինչպես ասում են, առաջինը պատկանել է Դավթի որդի Սողոմոնին և ընդելուզված է (ագուցված) մարգարիտներով ու հակինթներով: Երկրորդը՝ Դավթինն է, նույնպես ընդելուզված, երրորդը Կարունի սեղանն է, իսկ չորրորդը Կոստանդին թագավորի (կայսեր) սեղանն է: Այդ սեղաններըր նրա առջևում են դնում, բայց վրան չեն ուտում: Դրանք այնտեղ թողնում են այնքան ժամանակ, որ թագավորը նստած է սեղանի առջև, սակայն երբ վեր է կենում, նրանք տանում են սեղաններըր:

Ահա այս ժամանակ է, որ բերում են մահմեդական գերիներին: Սեղանների վրա լինում են մեծ քանակությամբ տաք և սառը կերակուրներ: Թագավորի մունետիկը (մունադի) ազդարարում է հետևյալ խոսքերը. «[Երդվում եմ] թագավորի գլխով, որ այս կերակուրներից ոչ մեկի մեջ չկա խոզի միս»: Այդ կերակուրները նրանց բերում են ոսկե ու արծաթե պնակների մեջ:

Վերջապես բերում են մի գործիք, որը կոչվում է երգեհոն (ալ-ուրկանա): Սա մի քառակուսի փայտե [գործիք] է, ճնչիչ մամուլի ձևով, ծածկված հաստ կաշիով: Այդ գործիքի մեջ դրված է բրոնզե վաթսուն խողովակ: Այդ խողովակների գլուխները, մինչև նրանց երկարության կեսը, գործիքից դուրս են ցցված: Խողովակները պղնձի վրա ոսկով են ծածկված և ամեն մեկի փոքր մասն է երևում, համեմատած իրենց երկարությանը, քանզի մեկը մյուսից մեծ է: Այս քառակուսի գործիքի կողքին կա մի ծակ, որի մեջ միացված է մի փուքս դարբինի մոտ եղածի նման: Երեք խաչ են բերում, որից երկուսը երգեհոնի երկու ծայրերին են դնում, իսկ մեկը՝ մեջտեղում: [Երգեհոնահար] վարպետը (ուստադ) գործի է դնում այդ խողովակները, ամեն մի խողովակ հատուկ ձայն է հանում, ըստ վարպետի գործողության, և դա [կատարվում է] թագավորի պատվին, մինչդեռ բոլոր հրավիրյալները նստած են լինում իրենց սեղաններին: Այդ ժամանակ մտնում է քսան մարդ, որոնց ձեռքին կան հուլբակներ, այսինքն ծնծղաներ և նվագում են ինչքան ժամանակ, որ ճաշը տևում է: Խնջույքը չարունակվում է տասներկու օր:

Վերջին օրն ամեն մի մահմեդական գերի ստանում է երկու դինար, երեք դիրհեմ: Ապա թագավորը վեր է կենում և դուրս գալիս հիպոդրոմի (բիդրուն) դռնից:

ԹԱԳԱՎՈՐԻ (ԿԱՅՍՐԻ) ԵՐԹԸ ՄԵԾ ԵԿԵՂԵՑԻ, ՈՐԸ ԺՈՂՈՎՐԴԻ ՀԱՎԱՔԱՎԱՅՐՆ Է

էջ 123 –127

[Թագավորը] հրամայում է, որ պալատի դռնից մինչև քաղաքի կենտրոնում գտնվող ժողովրդի հավաքավայր եկեղեցին, իր անցած ճանապարհը ծածկված լինի գորգերով և որ ճանապարհին չաղ տան մրտենու [ճյուղեր] և կանաչ տերևներ, ինչպես նաև աջ ու ձախ կողմերում պատերը զարդարված լինեն դիպակով:

Երբ նա դուրս է գալիս, նրա առջևից գնում են տաս հազար ծերունիներ, կարմիր դիպակ հագած, մազերն ուսերին թափած և առանց գլխանոցի: Նրանց հետևում են տաս հազար երիտասարդներ, հագած սպիտակ դիպակ: Ամենքը հետիոտն են: Ապա գալիս են տաս հազար մանկլավիկներ (դուլամ, տղա)՝ կանաչ դիպակ հագած, հետո տաս հազար ծառաներ՝ հագած երկնագույն դիպակ, իսկ ձեռքներին ոսկեզօծ տապարներ: Գալիս են հինգ հազար միջին տարիքի ներքինիներ հագած խորասանյան մուշհամ (կես մետաքս), ձեռքներին ոսկե խաչեր: Սրանց հետևում են տաս հազար թուրք և խազար մանկլավիկներ գույնզգույն զոլավոր բաճկոններով, ձեռքներին նիզակներ ու ոսկով զարդարուն վահաններ:

Նրանցից հետո գալիս են հարյուր պատրիկներ՝ մեծամեծներից, հագած ամեն գույնի դիպակ, ձեռքներին ոսկե բուրվառներ, որոնց մեջ վառվում է [Ջավայի] հալվե (հալվախունկ): Հետևում են տասներկու պատրիկ, ամենաբարձր կարգի, հագած ոսկեթել զգեստներ և ամեն մեկը ձեռքին ունի ոսկե գավազան: Նրանցից հետո գալիս են հարյուր մանկլավիկներ, արժեքավոր զգեստներով, գունավոր երիզով, մարգարիտներով զարդարված, կրելով մի ոսկե սնդուկ, որի մեջ կա թագավորի այն զգեստը, որն աղոթքի ժամանակ պետք է կրի: Ապա [թագավորի] հենց առջևից գնում է մի մարդ, որ կոչվում է ալ-ռահում (արքո՞ն), որը լռություն է պահանջում մարդկանցից ասելով՝ լռություն, ինչպես նաև մի ծերունի՝ ձեռքին մի կոնք և ոսկե սափոր ընդելուզված մարգարիտներով ու հակինթներով:

Վերջապես գալիս է թագավորը թանկարժեք զգեստներով, կոչված ալլաքսիմա (ալ-աքսիմոն), որը մետաքսի մեջ գործված գոհարեղեններից է պատրաստված: Գլխին ունի թագ, ոտքին՝ երկու մուճակներ՝ մեկը սև, մյուսը՝ կարմիր: Ետևից գալիս է վեզիրը: Թագավորն իր ձեռքին բռնում է մի ոսկե տուփ, որի մեջ հող կա: Նա ոտքով քայլում է և հենց որ երկու քայլ է անում, վեզիրը հունարեն ասում է [...], որը նշանակում է՝ հիշեցեք մահը: Երբ նա ասում է, թագավորը կանգ է առնում, բացում տուփը, նայում հողին, համբուրում ու արտասվում: Այսպես քայլում է մինչև հասնում է եկեղեցու դուռը:

Այդ ժամանակ մարդը (ծերունին) բերում է կոնքը և սափորը, թագավորը ձեռքերը լվանում է և ասում՝ ես անմեղ եմ բոլոր մարդկանց արյունից: Աստված ինձանից չի պահանջելու նրանց արյունը, քանզի ես վրայիցս գցում եմ քո վզին[40]: Ապա հանում է վրայի զգեստներն ու տալիս վեզիրին: Նա վերցնում է Պիղատոսի գրութիւնը, այսինքն այն մարդու, որն իրեն անմեղ է հայտարարել Քրիստոսի արյան համար և այն դնում է վեզիրի վզին ասելով՝ կառավարիր արդարութեամբ, ինչպես Պիղատոսը կառավարել է արդարութեամբ: Վեզիրն այս ամենն իր հետ չրջում է Կոստանդնուպոլսի չուկաներում և նրան գոչում են՝ կառավարիր արդարութեամբ, ինչպես թագավորը քեզ հանձնարարել է կառավարել ժողովրդին:

Ապա թագավորը հրամայում է եկեղեցի մտցնել մահմեդական գերիներին, որոնք նայում են զարդերին ու թագավորին և երեք անգամ գոչում են՝ Աստված թող երկարացնի թագավորի կյանքը բազում տարիներ: Իսկ թագավորը հրամայում է նրանց պատվո զգեստներ տալ:

Թագավորի ետևից բերում են երեք գորշ ձիեր, ոսկե թամբերով, ընդելուզված մարգարիտներով ու հակինթներով և ծածկված դիպակն ծածկոցներով, որոնք նույնպես մարգարիտներով ու հակինթներով են զարդարված: Նրանց վրա հեծյալներ չկան և մտցնում են եկեղեցի, ուր նրանց սանձերը կախված են: Հենց որ կենդանիներից մեկը սանձը բերնով վերցնի, ասում են՝ մենք հաղթել ենք իսլամի երկրին: Իսկ, ընդհակառակը, եթե կենդանին հոտոտի սանձը և ետ դառնա, առանց մերձենալու սանձին, ասում են՝ այս կենդանին ծագում է նրանից, որը պատկանել է Ավսթաթին: Ապա թագավորը թողնում է եկեղեցին ու վերադառնում իր պալատը:

Եկեղեցու արևմտյան կողմում տաս քայլի վրա կա հարյուր կանգուն բարձրութեամբ մի սյուն, որը բաղկացած է իրար կպած բազում սյուներից և չրջապատված է արծաթե չղթաների ցանցով: Սյան գագաթին կա մարմարե քառակուսի սեղան, չորսով չորս կանգուն, որի վրա գտնվում է մարմարե դամբարան, միջին այդ եկեղեցին կառուցող Հուստինիանոսի (Աստիկիանուս) [մարմինը]: Դամբարանի վրա կանգնած է ձիու բրոնզե արձան, իսկ ձիու մեջքին Հուստինիանոսն է նստած, գլխին ոսկե թագ՝ մարգարիտներով ու հակինթներով ընդելուզված: Ասվում է, որ դա հենց նրա թագն է: Նա աջ ձեռքը բարձրացրել է, կարծես ժողովրդին կանչում է Կոստանդնուպոլիս:

Եկեղեցու արևմտյան դռան վերևում կա ժողովատեղի (մաջլիս), որը քսանչորս դուռ ունի, ըստ ցերեկվա ու գիշերվա ժամերի, ամեն մեկը՝ մյուսից մի թիզ հեռու: Հենց որ մի ժամ լրանա, դռներից մեկն ինքնաբերաբար բացվում է և ապա, փակվելու ղեպքում դարձյալ ինքնաբերաբար է փակվում: Ասվում է, որ այդ ժամացույցը

սարքել է Ապոլոնիոսը (Բուլունիուս):

Հոռոմների ձիերը լավ են մարզված: Նրանք ոչ հեռանում են, ոչ էլ բռնվելու կարիք ունեն, երբ զորականները ձիուց իջնում են: Նրանք չեն վրնջում ու չեն չարժվում: Բավական է նրանց ասել՝ ստա (չթա, կանգնիր) և նրանք կանգնած մնում են մինչև որ նրանց տերը թագավորի մոտից դուրս գա: Որոշ մարդկանց հարցրել եմ այդ մասին: Նրանք ինձ տարել են ձիու երեք բրոնզե արձանների մոտ, որոնք մարզվել են արքունի դռանը և պատրաստված են եղել Ապոլոնիոս իմաստունի ձեռքով որպես հմայիլ (թալիսման) ձիերին արգելելու, որ չվրնջան, կամ մեկը մյուսին չնեղացնի:

Արքունի դռանը կան նաև չորս բրոնզե օձեր, որոնք իրենց պոչերն են կծում: Դա հմայիլ է օձերի դեմ, որ չարիք չգործեն: Որևէ երևիա կարող է մոտենալ օձին և բռնել, իսկ սա չի վնասի նրան:

Քաղաքի Ոսկե դռան կողմը կարելի է տեսնել մի կամար կառուցված քաղաքի ֆորումի (սուկ, չուկա) մեջտեղը, որի տակ երկու կուռք կա, մեկը նչան է անում և թվում է թե ասում է՝ եկ, մյուսը նույնպես նչան է անում և կարծես ասում է՝ սպասիր մի պահ: Դրանք երկու հմայիլներ են: Այնտեղ բերում են, որոնց պետք է ազատեն և կանգնեցնում երկու կուռքերի միջև: Միաժամանակ մի սուրհանդակ գնում է թագավորին զեկուցելու: Եթե սուրհանդակը վերադառնալու ժամանակ գերիներին գտնի նույն տեղում կանգնած, նրանց վերստին տանում է բանտ: Եթե ընդհակառակը՝ սուրհանդակը նրանց գտնի երկու կուռքերից այն կողմ, նրանք մահապատժի են ենթարկվում և ոչ ոքի չեն խնայում:

Կոստանդնուպոլիսն ունի մի ջրանցք (գետ), որը գալիս է Բուլղար կոչված երկրից: Այս գետը հոսում է քսան օրվա քայլելու ճանապարհ անցնելով և քաղաք մտնելուց հետո բաժանվում է երեք ճյուղի: Մեկը գնում է թագավորի պալատի կողմը, մյուսը՝ մահմեդականների բանտի կողմը, իսկ երրորդը՝ պատրիկների և ընդհանրապես բնակիչների բաղնիքների կողմը: Բանն այն է, որ նրանք խմում են մի ջուր, որը կիսով չափ աղի և կիսով չափ քաղցր է:

Բուլղարները պատերազմում են հոռոմների դեմ, իսկ հոռոմները նրանց դեմ:

Հարունն ասում է, որ Կոստանդնուպոլսի չրջակայքում կան վանականների մենաստաններ: Կոստանդնուպոլսի դռան մոտ կա մի վանք, որը կոչվում է Փրկչի վանք (Դայր Սաթիրա, Հուն.), ուր ապրում են հինգ հարյուր վանականներ: Գետը, որ մտնում է քաղաք և երեք մասի բաժանվում, անցնում է այս վանքի միջով:

Քաղաքի հյուսիսային կողմում, մեկ փարսախ հեռավորութեան վրա կա մի վանք կոչված Մունիա, ուր ապրում է հազար վանական: Իսկ քաղաքի արևելյան կողմը, չորս փարսախի վրա, մի վայրում չորս

վանք կա տասներկու հազար վանականներով: Մեկը կոչվում է Մունիա, մյուսը՝ Ֆուսադիր, երրորդը՝ Կուկիյայ, իսկ չորրորդը՝ Մարիամի վանք: Քաղաքի արևմուտքում կա նաև երկու վանք՝ վեց հազար վանականներով:

ՀՆԴԿԱՑ ԵՐԿՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

էջ 132

Աբու Արդալլահ Մուհամմադ իրն Իսհակը հիշել է՝ թե Հնդկաց արքաներն ընդհանրապես չնուիյունը (զինա) թույլատրելի են համարել, բացի Կումարի թագավորից, որի քաղաքը մտել եմ, նրա մոտ երկու տարի մնացել և չեմ տեսել մի թագավոր, որ խմիչքը [արգելելու] հարցում նրանից ավելի խիստ և հետևողական լինի: Նա մահվամբ էր պատժում չնուիյունը և խմելը:

[.....]

Ապա հաջորդում է Հայոց երկիրը (բիլադ ալ-Արման): Սրանք (հայերը) գեղեցիկ են և իրենց արու զավակներին փոքր հասակում ամուսնացնում են, գտնելով որ դա ավելի լավ է և ճիշտ, քան չնուիյունը:

ԽԱԶԱՐՆԵՐԸ

էջ 139

Պածինակների (պեչենեգների)[41] երկրի ու Խազարաց միջև տաս օրվա քայլելու ճանապարհ է տափաստանների ու անտառների միջով: Այս երկու երկրների միջև չկան ուղիներ և ուղիղ ճանապարհներ, այլ հասնում են Խազարաց երկիրը, ինչպես ասվեց, անտառների ու թավուտների միջով:

Խազարական հողն ընդարձակ է, հասնելով մեծ լեռներին (Կովկաս), որոնց հեռավոր ծայրերում ապրում են Թուլասը և Լուդարը և ապա ձգվում է մինչև Տիղիսի (Տաֆլիս) լեռները:

Նրանց թագավորը կոչվում է Իշա, իսկ մեծ թագավորը Խազարաց խաքանն[42] է: Վերջինս միայն անվամբ է իշխում, իսկ իրական իշխանությունը պատկանում է Իշային, քանի որ կառավարման և զորքի ղեկավարման մեջ այնպիսի մեծ հեղինակություն ունի, որ ոչ ոքի հաշիվ չի տալիս, թեկուզ ձևականորեն իրենից բարձրին:

Նրանց մեծ տիրակալը, ինչպես նաև Իշան ու նրա մոտ եղած զորավարները, մեծամեծները դավանում են հրեական կրոնը[43]: Մնացած խազարները դավանում են մի կրոն, որը մոտ է թուրքերի կրոնին:

Նրանց գլխավոր քաղաքը Սար Աշինն է, կա նաև մի այլ քաղաք, որը կոչվում է Հաբ Նիլա կամ Հաբնիլա[44]: Ձմռանը խազարներն ապրում են այդ երկու քաղաքներում, իսկ երբ գարուն է սկսվում, նրանք դուրս են գալիս տափաստանները և չեն հեռանում մինչև ձմռան գալը: Այդ երկու քաղաքներում կան մահմեդականներ և նրանք ունեն իրենց մզկիթները, իմամները, հավատացիրները (մուեզզին) և դպրոցները (քատատիբ):

Նրանց թագավորը՝ Իշան, ազդեցիկ անձանց ու բարեկեցիկներին պարտավորեցրել է ձիավորներ հայթայթել, ըստ իրենց կարողության և ապրուստի հնարավորությունների: Խազարներն ամեն տարի արշավում են պածինակների դեմ:

Իշան անձամբ գլխավորում է արշավանքները և իր զորքերով դուրս է գալիս կռվի: Նրանց [ռազմիկները] շատ գեղեցիկ են: Երբ այդ զորքերը հարձակվում են որևէ մեկի վրա, լրիվ սպառազինությամբ են գնում, հարուստ զարդարանքով, դրոշներով և պինդ զրահներով: [Իշայի] հեծելազորքը բաղկացած է տաս հազար ձիավորից, որոնց մեջ կան թե պարտադիր ծառայությամբ թագավորից ռոճիկ ստացող ռազմիկներ, թե հարուստների միջոցներով զինվող [ձիավորներ]: Երբ Իշան որևէ տեղ է գնում, նրա առջևից տարվում է մի տեսակ հովանոց դափի ձևով, որը կրում է մի ձիավոր: Ապա գալիս է Իշան, իսկ ետևից զորքերը՝ երբեք աչքերը չհեռացնելով այս հովանոցի փայլից: Եթե հաղթում ու ավար են վերցնում, հավաքում են ճամբարում և Իշան ընտրում ու վերցնում է իր ցանկացածը, իսկ մնացած ավարը բաժանվում է զորքի մեջ:

ՍԱՐԻՐԸ

էջ 147–149

Խազարաց [երկրից] մինչև Սարիր տասներկու օրվա քայլելու ճանապարհ է տափաստանի միջով, իսկ հետո երեք օրվա ճանապարհ անցնում է բարձրաբերձ լեռների ու հովիտների միջով, մինչև հասնում է թագավորի ամրոցը, որը լեռան գլխին է, չորսով չորս փարսախ [մեծությամբ] և շրջապատված քարե պարսպով:

Թագավորն ունի ոսկե գահ (սարիր) և արծաթե գահ: Ամրոցի բնակիչներն ամենքը քրիստոնյա են, իսկ թագավորության մնացած բնակիչները բոլորն անհավատ (քաֆիր) են: Թագավորի իշխանության տակ քսան հազար կիրճ կա, որտեղ տարբեր ցեղեր են ապրում և ունեն կալվածներ ու գյուղեր: Նրանք երկրպագում են չոր գլխին:

Երբ նրանց մոտ որևէ մեկը մեռնում է, [հանգուցյալին] դնում են պատգարակի վրա, դուրս բերում հրապարակ և այնպես թողնում են

երեք օր՝ պատգարակի վրա: Ապա քաղաքի բնակիչները զենք ու զրահով, ձի հեծած, գնում են հրապարակ, նիզակները ցցում են հանգուցյալի դեմ, պտտվում պատգարակի չուրջը, նիզակներով սպառնում են, սակայն չեն խփում:

Հարցրեցի այդ արարքի մասին և նրանք պատասխանեցին, թե մեղ մոտ մի մարդ կար, որը մեռավ ու թաղվեց, սակայն երեք օր անց գերեզմանից ձայն լսվեց: Ուստի հանգուցյալին երեք օր թողնում ենք և չորրորդ օրը վախեցնում ենք զենքով, որ եթե հոգին դուրս եկած լինի, վերադառնա մարմինը: Այս սովորությունն արդեն երեք հարյուր տարի է գոյություն ունի:

Նրանց թագավորը կոչվում է Ավար: Նրա ամրոցի աջ կողմից ձգվում է մի ճանապարհ հսկա լեռների ու խիտ անտառների մեջ, որը տասներկու օր քայլելուց հետո հասնում է Խայզան[45] կոչված քաղաքը: Նրանք ունեն Ատրներսեհ (Ադարնարսի) կոչված մի թագավոր, որը երեք կրոն է դավանում: Ուրբաթ օրը աղոթում է մահմեդականների հետ, շաբաթ օրը՝ հրեաների հետ, իսկ կիրակի օրը՝ քրիստոնյաների հետ: Ամեն մի թագավոր, երբ իշխանության գլուխ է անցնում, մտածում է, թե՝ ամեն մի կրոնի հետևող հավատում է իր կրոնին և թե իրն է ճշմարիտը ու իր կրոնից բացի բոլորը սուտ է, իսկ ես բոլոր կրոններն ունեմ, այնպես որ բոլոր կրոնների ճշմարտությանը հաղորդակից եմ:

Նրա քաղաքից տաս փարսախ հեռավորության վրա կա Ռանհիս կոչված քաղաքը, ուր մի հսկայական ծառ կա, որը ոչ մի պտուղ չի տալիս: Քաղաքի բնակիչներն ամեն չորեքշաբթի նրա վրա տեսակ-տեսակ պտուղներ են կախում, երկրպագում են, զոհեր մատուցում:

Սարիրի թագավորն ունի մի ամրոց, կոչված Ալալ, կամ Ղումիկ: Սա անմատչելի է և այնտեղ կա թագավորի գանձարանը: Այդ բերդը նրան տվել է Անուշիրուանը:

ԱԼԱՆՔ

Սարիրի թագավորությունից դեպի ձախ դուրս գալով, երեք օր քայլելով կգնաս լեռներով ու մարգագետիններով, մինչև հասնես Ալանաց թագավորին[46]: Ալանաց թագավորն ինքը քրիստոնյա է, սակայն նրա թագավորության ժողովուրդը ընդհանրապես անհավատ է, կռապաշտ:

Ապա տաս օրվա քայլելու ճանապարհ կկտրես գետերի ու ծառերի մեջ, մինչև որ հասնես մի ամրոց, որը կոչվում է Դրունք Ալանաց[47] (Բար ալ-Ան), որը լեռան գլխին է: Լեռան ստորոտում կա մի ճանապարհ, իսկ չուրջը հսկա լեռներ են: Այս ամրոցի պարիսպը պահպանում է ամեն օր հազար մարդ նրա բնակիչներից, նշանակված լինելով որպես կայազոր գիշեր ու ցերեկ [հսկելու]:

Ալանները չորս ցեղից են բաղկացած: Պատիվն ու իշխանությունը պատկանում է այն ցեղին, որը կոչվում է Դահսաս: Ալանաց թագավորը կոչվում է Բաղաիր և այս անունը տրվում է նրանց ամեն մի թագավորի:

Ալ-Բաբ վ-ալ-Աբուաբ (Դարբանդ) քաղաքը Կովկաս լեռների գագաթներից ձգվում է մինչև Խազարաց ծովը և երեք մղոն խրվում ծովի մեջ:

ԳԻՐՔ ԹԱՆԿԱԳԻՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ (ՔԻՏԱԲ ԱԼ-ԱԼԱԿ ԱԼ-ՆԱՖԻՍԱ)

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 Հնդկաց, Պարսից ու Զինաց ծովը – Հավանաբար նկատի ունի Հնդկական օվկիանոսը:

2 Ռումի, Իֆրիկիայի ու Ասորիքի ծովը – Միջերկրական ծով:

3 Օվկիանոս ծովը, որը Մադրիբի ծովն է – Ատլանտյան օվկիանոս:

4 Պոնտոսի ծովը – Սև ծով: (Վ. Տ.-Ղ.):

5 Թարաբիստանի ու Վրկանա (Ջուրջանի) ծովը – Կասպից ծով:

6 Ռումի, Իֆրիկիայի ու Եգիպտոսի ծով – Միջերկրական ծով:

7 Ադրիական (Ադրիաս) - Ադրիական, կամ Ադրիատիկ ծովը:

8 ... մի ուրիշ ծոց – Թերևս նկատի ունի Տիրենեյան և Լիգուրիական ծովերը միասին:

9 Կանաղ ծով – Կրկին նկատի ունի Ատլանտյան օվկիանոսը:

10 Շարթա – Հավանաբար խոսքը Այլորան ծովի մասին է, որը մաս է կազմում Միջերկրականի:

11 Տանախս – Այսպես էին հին հույներն անվանում Դոն գետը:

12 Մեոտիս – Հին հույներն ու հռոմեացիք Ազովի ծովը կոչում էին Մեոտիս, տեղի Մեոտ ցեղերի անունով: Բայց իհարկե Դոն գետը ոչ թե դուրս է գալիս, այլ ընդհակառակը՝ թափվում է Ազովի ծովը:

13 Դուրս է գալիս մի ծոց – Մարմարա ծով, որը միացած է Սև ծովին և ոչ թե Ազովի, ինչպես գրում է մատենագիրը:

14 Հայկական ծովը – Ենթադրաբար սա Վանա լիճն է: Թեև արար մատենագիրների մոտ այս լիճը սովորաբար ունի երեք այլ անուն՝ Թիոխիի (Տառեխի), Իխլաթի (Խլաթի), կամ Արջիշի(Արճեշի) լիճ:

15 Միհրան գետը – Ինդոս գետն է Հնդկաստանում (ներկայում Պակիստան), որը նաև Արաբական խալիֆայության սահմանն էր արևելքում:

16 Շինկան լեռներից – Ինդոս գետը սկիզբ է առնում Տիբեթի Կայլաս լեռնաշղթայի լանջերից: (Հայկ. սովետ. հանրագիտարան, հ. 4, էջ 340):

17 Մանսուրա գետ – Ինդոս գետը:

18 Բարղանջ - գուցե Բարղանդ, տե՛ս Բալաղուրի, ծնթգր. 230:

19 Փայտակարան (Բայլական) – Տե՛ս Խալիֆա իբն Խայյաթ, ծնթգր. 15:

20 Ալ-Լան - Ալանաց երկիր, տե՛ս Խալիֆա իբն Խայյաթ, ծնթգր. 53:

21 Սիսար – Քաղաք Իրանում, որը շրջապատված է Համադան, Դինավար քաղաքներով և Ատրպատականով: Արար մատենագիրները այն տեղադրում են Դինավար-Մարաղա ճանապարհի վրա՝ Դինավարից 20-22 փարսախ հյուսիս: (Sisar, V. Minorsky, EOI, CD-ROM, (IX: 680a)):

22 Երկու Զաբերի – Մեծ և փոքր Զաբ գետերը, որոնք Տիգրիսի վտակներն են:

23 Հաղիաա – Տե՛ս Բալաղուրի, ծնթգր. 67:

24 Նահրաուան գետը – Բառարանը գետ չի հիշատակում, բայց նշում է նույնանուն գյուղի մասին: «– Նահրևան - Գյուղ Արևմտյան Հայաստանում, Բիթլիսի նահանգի Սղերդի գավառում, Ջուղի լեռան (Արարադ) մոտ»: (ՀՀՇՏԲ, հ. 3, էջ 959):

25 Սարոս (Սայհան) - Տե՛ս Բալաղուրի, ծնթգր. 34:

26 Պիրամոս (Ջայհան) - Տե՛ս Խալիֆա իբն Խայյաթ, ծնթգր. 75:

27 Տևրիկ (Արրիկ) - Քաղաք, բերդաքաղաք, Ճանապարհային կայան Փոքր Հայքում, Սերաստիայի գավառում, նրա արևելյան սահմանի մոտ, Տևրիկի գավառակում, Եփրատի աջակողմյան Տևրիկ վտակի ափին, Մեծ Հայքի սահմանի մոտ: Տևրիկի գավառակի կենտրոնն էր: (ՀՀՇՏԲ, հ. 5, էջ 80):

28 Ալ-Բաթահ – Բառացի նշանակում է ճահիճներ (եզ. բաթիհա), սակայն օգտագործվում է մարգագետին, կամ պարբերաբար հեղեղվող հողի իմաստով: Այսպես է կոչվում Եփրատի ու Տիգրիսի ստորին հոսանքի շրջանը, որը գտնվում է Քուֆա, Վասիթ և Բասրա քաղաքների միջև: (al-Batiha, M. Streck [Saleh El-Ali], EOI, CD-ROM, (I: 1039b)):

29 Ջիրուֆտ – Քիրման նահանգի մի գավառ, որը բարձրադիր է և բարերար և, որի մեջ մտնում է նույնանուն մի քաղաք: (Djiruft, R. N. Frye, EOI, CD-ROM, (II: 553b)):

30 Սիրաջան – Քիրման նահանգի գլխավոր քաղաքներից մեկը, նրա մայրաքաղաքը մինչև 10-րդ դարը: (al-Siradjan , C. E. Bosworth, EOI, CD-ROM, (IX: 667a)):

31 Ջուր – Գոր, տես Ջահիղ, ծնթգր. 8:

32 Վարդանակերտ (Վարսան) – Տե՛ս Խալիֆա իբն Խայյաթ, ծնթգր. 52:

33 Սուղդարիկ – Տե՛ս Բալաղուրի, ծնթգր. 111:

34 Ոստան (իստան) - կամ ուստան, այսպես են արտասանում արարները սասանյան վարչական օստան (հայ. ոստան) բառերը, որը գոյատևեց նաև խալիֆայության օրոք: Այս անունով մի քաղաք կար Մեծ Հայքի Վասպուրական աշխարհի Ռշտունիք գավառում, Վանա լճի հարավային ափից մոտ մեկ կիլոմետր հարավ, Աղթամար կղզու դիմաց, Արտոս լեռան հյուսիս-արևմտյան լանջերին: (Ustan, C. E. Bosworth, EOI, CD-ROM, (X: 927a), ՀՀՇՏԲ, հ. 4, էջ 177):

35 Թասուջ - Գավառ:

36 Անբար – Քաղաք Միջագետքում:

37 Ատտալիա (Անթալիա) – Քաղաք Փոքր Ասիայի հարավում՝Միջերկրականի ափին:

38 Նիկիա - Տե՛ս Յակուբի (պ.), ծնթգր. 1:

39 Սանկարա - Իրաքի մի գյուղ ստորին Եփրատի մոտ, ալ-Սամաուայի և ալ-Նասիրիյայի միջև: (Senkere, M. J. E. Richardson, EOI, CD-ROM, (IX: 148)):

40 Աստվածաշունչ, Մատթ. 37, 24 Ղևտ. 16:

41 Պաձինակներ (պեչենեգներ) – Թյուրքական ցեղերի միություն Ը-Թ դարերում: Բացի թյուրքական ցեղերից, այդ միության մեջ էին մտնում նաև որոչ սարմատական և ուգրո-ֆիննական ցեղեր: Մինչև Թ դարը պեչենեգները վայրկատուն կյանքով էին ապրում Արալյան ծովի ու Վոլգա գետի միջև ընկած տարածքներում: Թ դարում խազարների ու օղուզների ճնշման տակ, պեչենեգները անցան Վոլգա գետը, դուրս մղեցին Վոլգայի և Դոնի միջև գտնվող մադյարներին(ուգր) և գրաղեցրին հյուսիսային մերձսևծովյան տարածքները՝ ընդհուպ մինչև Դանուբ գետը: Պեչենեգները հաճախ հարձակումներ էին գործում Բյուզանդիայի, Հունգարիայի և հատկապես Ռուսիայի վրա: ԺԱ դարի կեսերից նրանք թուլացան, զիջեցին իրենց տարածքները պոլովցիներին, իսկ իրենք բաժանվեցին մի քանի մասի: Մի մասը անցավ Կարպատներ և Դանուբի ավազան, մյուսները հաստատվեցին Հունգարիայում, իսկ մյուսներն էլ՝ Ռուսիայի սահմանների վրա: Պեչենեգները աստիճանաբար ձուլվեցին իրենց հաստատված երկրների բնակչության մեջ: (Сов. Ист. Энц., т. 11, стр. 124-125):

42 Խազարաց խաքան – Տե՛ս խազարներ, Խալիֆա իբն Խայյաթ, ծնթգր. 44:

43 ... դավանում են հրեական կրոնը – Խազարների հրեական կրոն ընդունելու ճշգրիտ թվականը հայտնի չէ: Պատմիչների տեղեկությունների համադրումը թույլ է տալիս այն թվագրել Ը դարի վերջին քառորդով: Նախքան այդ, Խազարիայում բնակ-

վող հիմնականում թյուրքական ցեղերը, հեթանոս էին: Միաստվածային կրոններից հատկապես մովսիսականությունն ընտրելը բացատրվում է նրանով, որ Վոլգայի ավազանը գտնվում էր հրեա առևտրականների հանապարհի վրա, որոնք մեծ թվով համայնքներ էին հաստատել Խազարիայում, փախչելով հալածանքներից և գաղթելով Բյուզանդիայից, Իրաքից ու Իրան-Միջին Ասիայից: Բայց, ինչպես որ նշում է Իբն Ռուստան, հրեական կրոնն ընդունել էին միայն խաքանը, իր դորավարներն ու ավագանին, իսկ ժողովուրդը մնում էր հեթանոս: (Новосельцев, Хазарское государство, стр. 144-154):

44 Սար Աչին, Հարնիյա – Ըստ Արտամոնովի, որն իր հերթին հիմնվում է այլ ուսումնասիրողների տեսակետների վրա, այս երկու տեղանունները Սար Աչին (կամ Սարաչեն) և Հարնիյա (կամ Հարնեյա) Խազարների պետության Իթիլ մայրաքաղաքի երկու թաղամասերի անվանումներն են, որոնք գտնվում էին Իթիլ (Վոլգա) գետի երկու ափերին: Նույն հեղինակը նշում է, որ Իբն Խորդադբեհի հիշատակած Խամլիջը (Տե՛ս Իբն Խորդադբեհ, ծնթգր. 20) այդ նույն Հարնիյա թաղամասի խիստ աղավաղված տարբերակն է: (Артамонов, История хазар, стр. 394).

45 Խայդան – Տե՛ս Բալաղուրի, ծնթգր. 151:

46 Այանաց թագավորին – Տե՛ս նաև Խալիֆա իբն Խայյաթ, ծնթգր. 53:

47 Դրունք Այանաց – Տե՛ս Խալիֆա իբն Խայյաթ, ծնթգր. 55:

ՖԱՐՂԱՆԻ (Թ դար)

Նրա լրիվ անունն է Աբու-լ-Աբբաս Ահմադ իբն Մուհամմադ իբն Քասիր ալ-Ֆարղանի: Դատելով անունից ծնվել է Ֆարղանայում՝ Միջին Ասիայի Սոդդ երկրում, որն իրանական բնակչություն ուներ:

Մանոթ է իբրև աստղաբաշխ և աշխարհագրագետ: Ըստ մատենագրական տվյալների ապրել է Մամունի (813-833) օրոք և դեռ կենդանի է եղել Մուտավաքքիլ խալիֆայի մահվան (861) տարում, քանզի Աբու-լ-Մահասին իրն Տաղրիբիրդին (Ժե դ.) վկայում է, որ այդ տարում Մուտավաքքիլը Ահմադ իրն Քասիր ալ-Ֆարղանիին ուղարկեց Ֆուսթաթ (Եգիպտոս)՝ հսկելու նեղոսաչափի (նիլոմետր) կառուցման աշխատանքներին:

Նրա մեծ աշխատությունը, որի ձեռագրի օրինակները գտնվում են Օքսֆորդում, Փարիզում, Կահիրեում, ինչպես նաև Պրինստոնի (ԱՄՆ) համալսարանի գրադարանում, տարբեր վերնագրեր ունեն՝ «Ջավամի Իլմ ալ-Նուջում ու ալ-Հարաքատ ալ-Սամավիյա» (Ժողովածու աստղաբաշխության և երկնային չարժումների), «Ուսուլ Իլմ ալ-Նուջում» (Աստղաբաշխության օրենքներ), «ալ-Մուդխալ Իլա Իլմ Հայատ ալ-Աֆլաք» (Ներածություն մոլորակների կառուցվածքի գիտության) և «Քիտաբ ալ-Ֆուսուլ ալ-Սալասին» (Երեսուն գլուխների գիրք):

Այս աստղագիտական երկը միջնադարում (ԺԲ դ.) թարգմանվել է լատիներեն Հովհան Իսպալենսիսի և Ժերար Կրեմոնացու կողմից: Թարգմանվել է նաև եբրայերեն: Լատիներեն թարգմանությունը հրատարակվել է Ֆերրարայում՝ 1493-ին, Նյուրենբերգում՝ 1537-ին և Փարիզում՝ 1546-ին: Յակոբ Քրիսմանը այն եբրայերենից թարգմանել է լատիներենի, որը տպագրվել է Ֆրանկֆուրտում՝ 1590-ին: Յակոբոս Գոլիուսը հրատարակել է արաբերեն բնագիրը, լատիներեն թարգմանությամբ և ծանոթագրություններով 1669-ին Ամստերդամում:

Բացի այս գլխավոր երկից, որը եվրոպացի աստղաբաշխ Ռեգիոմոնտանոսից առաջ, բոլոր արաբ աստղաբաշխների գործերից ամենահայտնին էր եվրոպայում, Ֆարղանին գրել է նաև երկու գիրք աստրոլաբների (աստղաբաշխական գործիք) մասին, գրել է նաև երկու գիրք՝ «ալ-Քամիլ ֆի-լ-Ասթուրլաբ» (Լիակատար տեղեկություններ աստրոլաբի մասին) և «Ֆի Սանաատ ալ-Ասթուրլաբ» (Աստրոլաբների պատրաստման արվեստը), որոնցից ձեռագրեր կան Բևոլինում և Փարիզում:

Ֆարղանիի աստղաբաշխական երկը բաղկացած է երեսուն գլուխ-

ներից (փասլ): Թարգմանել ենք առաջին և իններորդ գլուխները, իսկ մնացած գլուխները աստղարաշխության են վերաբերում՝ մոլորակների, աստղերի, լուսնի և արևի խավարման, մոլորակների երկրից ունեցած հեռավորության և այլ հարցերի մասին:

Արամ Տեր-Ղևոնդյան

(al-Farghani, H. Suter [J. Vernet], EOI, CD-ROM, (II: 793a))

Տե՛ս.

Muhammedis fil. Ketiri Ferganensis, qui vulgo Alfraganus dicitur, Elementa astronomica, Arabice et Latine. Ed. Jacob Golius, Amsterdam, 1669.

ՖԱՐՂԱՆԻ

ԳԻՐՔ ԵՐԿՆԱՑԻՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԵՎ ԱՍՏՂԱԲԱՇԽՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎԱԾՈՒ (ՔԻՏԱԲ ԱԼ-ՀԱՐԱՔԱՏ ԱԼ-ՍԱՄԱՎԻՑԱ ՎԱ ԻԼՄ ԱԼ-ՆՈՒՋՈՒՄ)

ՄՈՒՀԱՄՄԱԴ ԻԲՆ ՔԱՍԻՐ ԱԼ-ՖԱՐՂԱՆԻԻ ՄԱՏՅԱՆԻ ՍԿԻԶԲԸ ԱՍՏՂԵՐԻ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ
ԱՐԱԲՆԵՐԻ, ՕՏԱՐՆԵՐԻ (ԱՋԱՄ) ՏԱՐԻՆԵՐԻ, ՆՐԱՆՑ ԱՄԻՍՆԵՐԻ, ՕՐԵՐԻ ԱՆՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԻՐԱՐԻՑ ՈՒՆԵՑԱԾ ՏԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Էջ 1-6

Գիտեցիր, որ արաբների և օտարների տարվա ամիսները տասներկուսն են: Արաբների ամիսներն են՝ Մուհառամ, Սաֆար, Ռաբի Ա ամիսը, Ռաբի Բ ամիսը, Ջումադա Ա, Ջումադա Բ, Ռաջաբ, Շաաբան, Ռամադան ամիսը, Շավվալ, Զու-լ-Կաադա, Զու-լ-Հիջջա: Կան երեսուն օր և քսանինն օր ունեցող ամիսներ: Ուստի տարվա մեջ վեց լրիվ ամիս կա, վեց՝ պակասավոր. տարին երեք հարյուր հիսունչորս օր ունի, բացարձակ հաշվով, որն ամբողջություն է: Սակայն եթե ստույգ հաշվենք, ապա արաբների տարվա օրերը, ամեն երեսուն տարին մեկ տասնմեկ օրով ավելանում են, այնպես որ ամեն տարվան ընկնում է օրվա մեկ հինգերորդը, կամ վեցերորդը: Այսպիսով, տարվա օրերը իրականում դառնում են երեք հարյուր հիսունչորս օր և մեկ հինգերորդ, կամ մեկ վեցերորդ օր:

Ասորիների (սուրիանի) ամիսներն են՝ Տիշրին Ա, որը երեսունմեկ օր է, Տիշրին Բ՝ երեսուն օր, Քանուն Ա՝ երեսունմեկ օր, Քանուն Բ՝ երեսունմեկ օր: Շուբաթ ամիսը, որը երեք տարին է լինում քսանութ օր, իսկ չորրորդ տարում՝ քսանինն օր և այդ տարին կոչվում է նահանջ տարի (քարիսա), այդ մեկ օրվա ավելանալու պատճառով: Ապա Ազար՝ երեսունմեկ օր, Նիսան՝ երեսուն օր, Այյար՝ երեսունմեկ օր, Հարան՝ երեսուն օր, Տամմուզ՝ երեսունմեկ օր, Աբ՝ երեսունմեկ օր, Այլուլ՝ երեսուն օր: Այսպիսով ամբողջ տարին լինում է երեք հարյուր վաթսունհինգ և քառորդ օր: Ամեն չորս տարին մեկ օր ավելանալով իրականում դառնում է երեք հարյուր վաթսունվեց օր:

Հոռոմների ամիսները օրերով համապատասխանում են ասորիների ամիսներին: Նրանց մոտ տարվա առաջին ամիսը Հունվարն (Յանուարիուս) է, որը Քանուն Բ-ն է, Շուբաթը փետրվարն (Ֆիբրավարիուս) է, Ադարը՝ մարտը (մարթիուս), Նիսանը՝ ապրիլը (իբրիլիուս), Այյարը՝ մայիսը (մայուս), Հազիրանը՝ հունիսը (յունիուս), Տամմուզը՝ հուլիսը (յուլիուս), Աբը՝ օգոստոսը (աղուսթուս), Այլուլը՝ սեպտեմբերը (սիբթեմբիր), Տիշրին Ա-ն՝ հոկտեմբերը (ուկտուբիր), Տիշրին Բ-ն՝ նոյեմբերը (նուեմբիր), Քանուն Ա-ն՝ դեկտեմբերը (դիկեմբիր):

Պարսից ամիսներն են Ֆարվարդին մահ, որի առաջին օրն է նովրուզը, Արդիբահիշտ մահ, Խորդադ մահ, Տիր մահ, Մորդան մահ, Շահրիար Մահ, Միհր մահ, որի տասնվեցերորդ օրը միհրականն է: Աբան մահ, որի քսանվեցերորդ օրը այն տասնօրյակի առաջին օրն է, որը կոչվում է ֆարվարդիջան, որից հինգ օրը Աբան մահից է համարվում և հինգ օրն էլ որևէ ամսի մեջ չեն հաշվում և կոչվում է Անդարջահատ: Ադար մահը, որի առաջին օրը Թրաձուկ (քաուսաջ) նստելու օրն է: Ապա՝ Դայ մահը, Բահաման մահը և Խոփանդարմադ մահը: Ամեն մի ամիսն ունի երեսուն օր և Աբան մահի ու Ադար մահի միջև կա հինգ օր, որը որևէ ամսի մեջ չեն հաշվում: Այսպիսով տարին ունի երեք հարյուր վաթսունհինգ օր:

Պարսիկները ամսվա օրերն այս անուններով են կոչում՝ Հուրմուզ (Որմիզդ), բահման, արդիբահիշտ, շահրիար, իսֆանդարմադ, խուրդադ, մարդադ, դիբադար, ատար, աբան, խուր, մահ, տիր, գուշ, դիբմնհեր, միհր, սարուշ, ռաշ, ֆերվարդին, բահրամ, ռամ, բադ, դիբդին, դին, արդ, աշտադ, ասման, զամիադ, մարասֆանդ, անիրարան: Անդարջահատի օրերն են՝ ահանդ ջահ (գահ), աշանդ ջահ, ասֆանդման ջահ, ախշիտար ջահ և հիշտ վիշտ ջահ:

Ղպտիների ամիսներն են՝ Տուտ (Թոթ), Ֆաոաֆի, Հատուր, Քիվաֆի, Թուբիմախիր, Ֆամինուտ, Ֆարմուտ, Բախուն, Բաունի, Իֆիուֆի, Մասուրի, որից հետո հինգ ավելորդ օրեր կան, որոնք կոչվում են Ավելյաց և ղպտերեն կոչվում են Արուգամնա և մի քանի օր: Ամեն ամիս երեսուն օր ունի և այսպիսով տարին ունի երեք հարյուր վաթսունհինգ օր, պարսիկների տարվա օրերի չափ:

Անցյալում այս ամիսների առաջին օրերը համապատասխանում էին պարսից ամիսների առաջին օրերին: Այսպես, Տուտի (Թոթ) առաջին օրը Դայ մահի առաջին օրն էր և այսպես ամեն ամիս համապատասխանորեն, մինչև որ ղպտիների տարվա վերջին օրը համընկնում էր Ադար մահի վերջին: Այսպես է նաև զիջերի (աստղաբաշխական աղյուսակների) մեջ, ուր կատարվել է հաշվարկը մինչև մեր օրերը: Սակայն ղպտական ամիսները, որ Եգիպտոսի ժողովուրդը այժմ օգտագործում է, տարբերվում է սրանից, քանզի տարվա օրերի մեջ ավելացել են չորս օր, ըստ Հոռոմների և ասորիների սովորության և

այսպիսով նրանց ամիսները տարբերվեցին պարսից ամիսներից և համապատասխանեցին ասորիների և Հոռոմների ամիսներին, տարվա օրերի գումարի հարցում: Նրանց մոտ տարվա առաջին օրը Աբ (օգոստոս) ամսի քսաններորդ օրն է:

ԹՎԱԿԱՆՆԵՐԸ

էջ 6-7

Արաբական թվականը մարգարեի Մեքքայից Մադինա գաղթի տարվա սկզբից են հաշվում, որի առաջին օրը հինգշաբթի էր:

Պարսից թվականը Խոսրովի (Քիսրա)[1] որդի Շահրիարի որդի Հազկերտի (Յազդաջիրդ)[2] թագավորության առաջին տարուց են հաշվում և դրա առաջին օրը երեքշաբթի էր:

Հոռոմների և ասորիների թվականը Ալեքսանդրի իշխանության առաջին տարվանից են հաշվում և դրա առաջին օրը երկուշաբթի էր: Ալեքսանդրը՝ երկկոտոչավորն է (Զու-լ-կարնայն)[3]:

Ղպտիների թվականը, ինչպես գրված է (Պտղոմեոսի) Ալմագեստում (Մաջիսթի) Նաբուգոդոնոսորի (Բուխտունեսար)[4] թագավորության առաջին տարվանից է սկսում և նրա առաջին օրը չորեքշաբթի էր: Ղպտիների թվականը ըստ Պտղոմեոսի զիջի (աստղաբաշխական աղյուսակ) Ֆիլիֆուսի (Փիլիպպոս)[5] առաջին տարվանից էր, որն ընկնում է կիրակի օրը:

Նաբուգոդոնոսորի և Հազկերտի թվականների միջև հազար երեք հարյուր յոթանասունինը պարսկական տարի և երեք ամիս կա:

Փիլիպպոսի և Հազկերտի թվականների միջև ինը հարյուր հիսունհինգ տարի և երեք ամիս կա:

Ալեքսանդրի և Հազկերտի թվականների միջև ինը հարյուր քառասուներկու տարի կա Հոռոմների տարիներով և երկու հարյուր հիսունինն օր:

Հիջրայի և Հազկերտի թվականների միջև, օրերով հաշված, երեք հազար վեց հարյուր քսաներորս օր կա:

Այսպիսով, թվականներից առաջինը Նաբուգոդոնոսորի թվականն է, ապա Փիլիպպոսի թվականը, Ալեքսանդրի թվականը[6], հիջրայի թվականը[7] և Հազկերտի թվականը[8]:

ԳԼՈՒԽ ԻՆՆԵՐՈՐԴ
ԱՇԽԱՐՀԻ ՀԱՅՏՆԻ ԵՐԿՐՆԵՐԻ ՈՒ ՔԱՂԱՔՆԵՐԻ ԱՆՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԱՄԵՆ ՄԻ ԻԿԼԻՄՈՒՄ ԵՂԱԾՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ԿՂ 35-39

Այստեղ հիշենք հայտնի երկրների ու քաղաքների անունները ամեն մի իկլիմում:

Սկսենք արևելքից և նախ բացատրենք, թե ինչ է երկրների երկարությունն ու լայնությունը: Ամեն մի քաղաքի երկարությունը դա նրա հեռավորությունն է բնակելի քառորդի (ալ-ռուբը ալ-մասքուն) սկզբից, դեպի արևելք կամ դեպի արևմուտք: Դա այն չափն է, որը գտնվում է քաղաքի միջօրեականի ու բնակելի քառորդի միջև: Իսկ լայնությունը դա այն հեռավորությունն է, որ կա հասարակածից դեպի վեր հեռանալով հորիզոնից մինչև բևեռը:

Առաջին իկլիմը սկսում է արևելքից՝ Չինաստանի հեռավոր ծայրերից, անցնում է Չինաստանի (Սին) վրայով, հարավային կողմերով: Այստեղ կա Չինաստանի Աչտաֆիրա քաղաքը, որը նրա նավահանգիստն է, ապա անցնում է Հնդկաստանի (Հինդ) հարավում գտնվող ծովի[9] ափերով, Սինդով[10] և Քարալ կղզով, ճեղքում է ծովը, հասնելով Արաբիայի թերակղզին, Եմենը: Նրանում հայտնի քաղաքներն են՝ Զաֆարը[11], Օմանը[12], Հադրամաուտը[13], Ադենը (Ադան)[14], Սանաան[15], ալ-Կայնը[16], Մարան, Տաբալան, Ջարաշը[17], Մահարը[18], և Սաբան[19]: Ապա կլիման ճեղքում է Կարմիր (Կուլզում) ծովը, անցնում Եթովպիա (Հաբաշա) երկիրը, Եգիպտոսի (Միսր) Նեղոսը, հետո այնտեղ կա Եթովպիական թագավորության քաղաքը, որ կոչվում է Ջարմա[20], իսկ Դունկուլան[21] Նուբիայի քաղաքն է: Ապա իկլիմն անցնում է Մաղրիբի հողով, բերբերների երկրի հարավով, մինչև որ հասնում է Մաղրիբի ծովը[22]:

Երկրորդ իկլիմը սկսում է արևելքից, անցնում Չինաց երկիրը, Սինդ երկիրը, ուր կա Մանսուրա քաղաքը[23], ալ-Բիրուն և Դայբուլը[24], ապա ճեղքում է Կանաչ ծովի[25] ու Բասրայի ծովի[26] հանդիպման վայրը, անցնում է Արաբիայի թերակղզին Նաջդի[27] ու Տիհամայի[28] վրայով: Սրա քաղաքներից են Յամաման[29], Բահրայնը[30], Հաջարը, Յասրիբ[31] քաղաքը, Հիջազը[32], Մեքքան[33] (Մաքքա), Թաիֆը[34] և Ջիդդան[35]: Ապա ճեղքում է Կարմիր ծովը, անցնում Եգիպտոսի Սաիդը (Հարավ), Նեղոսը: Նրա քաղաքներն են Կումիա[36], Իսմիմ, Իսնայ, Անսինա և Աուսան[37], ապա անցնում է Մաղրիբի Հողը, Իֆրիկիա երկրի[38] միջին մասը, բերբերների երկիրը և վերջանում Մաղրիբի ծովի վրա:

Երրորդ իկլիմը սկսվում է արևելքից, անցնում է Չինաստանի հյուսիսը, ապա Հնդկաստանը: Նրանում է Կանդահար[39] քաղաքը: Հետո

անցնում է Սինդի հյուսիսը, Քաբուլ[40], Քիրման[41], Այևքսանդրիա[42], Սիջիստան[43], Մուհամմադիյա, Ջիրաֆտ[44], Սիրջան[45] երկրները, ապա Բասրայի ծովի ափերը: Այնտեղ կան քաղաքներ՝ Խաթախարը[46], Ջուրը[47], Ֆասան[48], Սաբուրը[49], Շիրազը, Սիրաֆը, Սիսրիզը, Ջաննաբան, Մահրուբանը, ապա անցնում է Ահուազի գավառը[50] (քուր), Իրաքը, որի քաղաքներն են՝ Բասրան, Վասիթը, Բաղդադը, Քուֆան, Անբարը[51], Հիտը, Հետո մտնում է Ասորիք, որի քաղաքներն են՝ Հիյարը, Սալամիան, Եմեսան (Հիմս), Դամասկոսը (Դիմաշկ), Տյուրոսը (Սուր), Ակրան (Աքքա), Տիբերիադը (Թաբարիյա), Կեսարիան (Կայսարիյա), Արսուֆը, Երուսաղեմը (Բայտ ալ-մակդիս), Ռամլան, Ասկալոնը (Ասկալան), Ջազան, Մաղյանը, Կուլզումը[52]: Ապա կտրում է Ստորին Եգիպտոսը, ուր կան Ֆարաման[53], Տիննիսը, Դամիեթը (Դիմիաթ), Եգիպտոսի Ֆուսթաթը, Ֆայումը[54] և Այևքսանդրիան, անցնում է Բարկա երկիրը[55], Իֆրիկիան, ուր կան Կայրուան քաղաքը և վերջանում է Մաղրիբի ծովի վրա:

Չորրորդ իկլիմը սկսում է արևելքից, անցնում Տիբեթը, ապա Խորասանը. նրա քաղաքներն են Խուջանդան, Ուշրուսանան, Ֆարղանան, Սամարկանդը, Բահլը (Բալխ), Բուխարան, Հերատը, Ամմույան, Մարվռուդը, Մերվը, Սարախսը, Թուսը, Նիշապուրը, Վրկանը (Ջուրջան), Կումիսը[56], Թաբարիստանը[57], Դմավանդը (Դունբավանդ), Կազուինը, Դեյլմիկքը[58] (Դայլամ), Ռեյը, Սպահանը (Իսֆահան), Կումը, Եկրատանը (Համադան), Նիհավանդը, Դինավարը, Հուլուանը, Շահրազուրը, Սամառան, Մոսուլը (Մաուսիլ), Բալադը, Մծբինը (Նասիբին), Ամիդը, Ռաս ալ-Այնը[59], Կարնո քաղաքը[60] (Կալիկալա), Շիմշաթը[61], Խառանը[62] (Հառան), Ռակկան[63], Կարկիսիան[64]: Ապա անցնում է Ասորիքի հյուսիսը, ուր կան Բալիս, Մարրոզ (Մանբիջ), Սամոսատ[65], Մալաթիա[66], Զապատրա[67], Հալեբ, Կինննասրին[68], Անտիոք, Տրիպոլիս, Մամեստիա[69] (Մասսիսա), Սիդոն (Սայդա), ալ-Քանիսատ ալ-Սաուդա[70], Ադանա[71], Տարսոն (Թարսուս), Ամորիոն[72] և Լաոդիկե (Լաոդիկիա) քաղաքները: Հետո անցնում է Կիպրոս, Հռոդոս կղզիները և Մաղրիբն ու Տանժերը, վերջանալով Մաղրիբի ծովի վրա:

Հինգերորդ իկլիմը սկսում է արևելքից՝ Գոգի (Յաջուջ) երկրից, անցնում Հյուսիսային Խորասանը, ուր կան վաճառականների քաղաք Ութրարը, Նավաքիսը, Խորեզմը, Ասֆիջանը, Շաշը, Տրապիզոնը, Ատրպատականը (Ադրաբիջան), Հայաստանի (Արմինիա, Իրմինիա) գավառները, Պարտավը (Բարդաա), Նախճավանը, Սիսականը, Արզնը, Խլաթը, ապա անցնում է Հոռոմների երկիրը, Խարսիանոն[73], Կուռա[74], Մեծ Հռոմ (Ռումիա ալ-քուբրա) և Ասորիքի ծովի ափերը[75], Իսպանիայի հյուսիսային կողմերը, մինչև որ հասնում է Մաղրիբի ծովը:

Վեցերորդ իկլիմը սկսում է արևելքից, անցնում Գոգի երկիրը, Խազարաց երկիրը, Վրկանա (Ջուրջան) ծովը[76] մնջտեղից ճեղքում դեպի

Ռումի երկիրը, անցնում է Վիրքը (Ջուրզան, Խազարան), Ամասիան, Հերակլիան, Քաղկեդոնը (Խալկիդունա) ու Կոստանդնուպոլիսը, Բուրջանը[77] մինչև Մաղրիբի ծովը:

Յոթերորդ իկլիմը սկսում է արևելքից՝ Գոգի երկրի հյուսիսից, անցնում է Թուրքաց երկիրը[78], Վրկանա ծովի հյուսիսային ափերը, հետո ճեղքում է Ռումի ծովը[79], անցնում Բուրջանը և սլավոնների երկիրը, մինչև հասնում է Մաղրիբի ծովը:

Այս իկլիմներից այն կողմ՝ մինչև հենց բնակելի վայրերը, որին ծանոթացանք, ապա դա սկսում է արևելքից հասնելով մինչև Գոգի երկիրը, անցնում է Տաղազղուզ երկիրը, Թուրքաց Հողը, ապա Ալանաց[80] (ալ-Լան) երկիրը և Թաթարները, Բուրջանը[81], սլավոնները[82], հասնելով մինչև Մաղրիբի ծովը:

ՖԱՐՂԱՆԻ

ԳԻՐՔ ԵՐԿՆԱՅԻՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԵՎ ԱՍՏՂԱԲԱՇԽՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎԱԾՈՒ (ՔԻՏԱԲ ԱԼ-ՀԱՐԱՔԱՏ ԱԼ-ՍԱՄԱՎԻՅԱ ՎԱ ԻԼՄ ԱԼ-ՆՈՒՋՈՒՄ)

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 *Խոսրովի (Քիսրա) – Տե՛ս Արու Յուսուֆ, ծնթգր. 6:*

2 *Հաղկերտ (Յազդաջիրդ) – Տե՛ս Յակուբի (պ.), ծնթգր. 25:*

3 *Երկկոտոշավոր (Զու-լ-կարնայն) – Տե՛ս Վահր. ծնթգր. 2:*

4 *Նարուգողոնոսոր (Բուխտանուսար) – Նարուգողոնոսոր Բ. Բաբելոնի թագավոր Ք. ա. 604–562 թվականներին: Թեև իրականում պետք է հաշվվի Նարոնասարի դարաշրջանից, որն ավելի վաղ է և սկսվում է Ք. ա. 747 թ. փետրվարի 26-ից: (Сов. Ист. Энц., т. 6, стр. 844):*

5 *Ֆիլիփուս (Փիլիպպոս) –Հավանաբար նկատի ունի Ալեքսանդր Մակեդոնացու ժամանակ գործածության մեջ դրված Փիլիպպոսի թվականությունը, որը հաշվվում է Ք. ա. 324 թ. նոյեմբերի 12-ից: (Сов. Ист. Энц, т. 6, стр. 845):*

6 *Ալեքսանդրի թվականը – Նկատի ունի Ալեքսանդր Մակեդոնացու ներմուծած Սելևկյան թվականը (Ք. ա. 312 թ. հոկտեմբեր 1-ից) (Сов. Ист. Энц, т. 6, стр. 845):*

7 *Հիջրայի թվականը – 622 թ. հուլիսի 16-ից, որը Մուհամմադ մարգարեի և իր կողմնակիցների Մեքքայից Մադինա գաղթի, կամ փախուստի օրն է: (Сов. Ист. Энц, т. 6, стр. 845):*

8 *Հաղկերտի թվականը – Սասանյան վերջին արքա Հաղկերտ Գ-ի գահակալության սկզբից (632) հաշվվում է Հաղկերտի թվականը: (Сов. Ист. Энц, т. 6, стр. 727):*

9 *... Հնդկաստանի հարավում գտնվող ծովի... – Հնդկական օվկիանոս*

10 *Սինդ – Տե՛ս Իրն ալ-Ֆակիհ, ծնթգր. 5:*

11 *Ջաֆարը – Ջաֆար է կոչվում Օմանի հարավային մասը, հիմնականում սունիների բնակչությամբ: (Uman, C. E. Bosworth, G. R. Smith, C. Holes, EOI, CD-ROM, (X: 814b)).*

12 *Օման – Արաբիա թերակղզու հարավ-արևելյան անկյունը: (Uman, C. E. Bosworth, G. R. Smith, C. Holes, EOI, CD-ROM, (X: 814b)):*

13 *Հադրամաուտ – Հադրամաուտը Արաբիա թերակղզու հարավային ափագծին զուգահեռ չերտն է: (Hadramawt, A. F. L. Beeston, EOI, CD-ROM, (III: 51b)):*

14 *Ադեն – Քաղաք և նավահանգիստ Եմենի հարավում:*

15 *Սանաա – Տե՛ս Արու Յուսուֆ, ծնթգր. 2:*

16 *Ալ-Կայն – Մեկ կամ մի քանի արաբական ցեղերի անվանում: (al-Kayn W. Montgomery Watt, EOI, CD-ROM, (IV: 819b)):*

17 *Ջարաշ – Հավանաբար նկատի ունի Պետրան:*

18 *Մահար – Ցեղի անվանում է, եղակին Մահրա, հոգն. Մահարա, կամ Մահարաթ: Սրանց բնակության վայրն էր Արաբիա թերակղզու հարավ-արևելքը, Հնդկական ծովի ափերին, Հադրամաուտի և Օմանի միջև: (Mahra, W. W. Muller, EOI, CD-ROM, (VI: 80a)):*

19 *Սաբա – Եմենի հնագույն ցեղային միության ու պետության անվանումը, որը գոյացել է Ք. ա. Ը դարում: Թեև Ֆարղանին թվարկված տեղանունների համար ասում է քաղաքներ, բայց դրանց մի մասը երկրներ ու երկրամասեր են:*

20 *Ջարմա – Քաղաք Եթովպիայում (Հարեչստան):*

21 *Դունկուլա – Դունկուլա կամ Դոնգոլա անունով երկու քաղաք կա Նուբիայում*

(ներկայիս Սուդանում): (Dongola, P. M. Holt, EOI, CD-ROM, (II: 615a)):

22 Մադրիրի ծով – Տե՛ս Իրն Ռուստա, ծնթգր. 3:

23 Մանսուրա քաղաքը – Տե՛ս Իրն Խորդադրեհ, ծնթգր. 7:

24 Դայրուլ – Սինդ նահանգի նավահանգիստը: Մադկուն քաղաք էր, ծովային առևտրի կենտրոն: Բուն անվանումը Դեվալ, կամ Դեբալ, որը արաբները աղավաղելով դարձրին Դայրուլ (Daybul, A. S. Bazmee Ansari, EOI, CD-ROM, (II: 188a)):

25 Կանաչ ծով – Հավանաբար Օմանի ծոցը:

26 Բասրայի ծով – Հավանաբար՝ Պարսից ծոց:

27 Նաջդ – Տե՛ս Բալադուրի, ծնթգր. 3:

28 Տիհամա – Տե՛ս Իրն ալ-Ֆակիհ, ծնթգր. 4:

29 Յամամա – Երկրամաս Արաբիայի կենտրոնական մասում:

30 Բահրայն – Այսօր Բահրայն կոչվում է այն կղզեխումբը և պետությունը, որ գտնվում է Պարսից ծոցում՝ Արաբիա թերակղզու հարևանությամբ: Սակայն միջնադարում այս անունն ավելի շատ տրվում էր Արաբիա թերակղզու Բահրայն կղզուն մոտակա «մայրցամաքային» մասին:

31 Յասրիր – Տե՛ս Մադինա, Արու Յուսուֆ, ծնթգր. 3:

32 Հիջազ – Տե՛ս Բալադուրի, ծնթգր. 4:

33 Մեքքա – Գտնվում է Արաբիայի Հիջազ երկրամասում: Մադինայի հետ միասին համարվում է Արաբիայի և ողջ մահմեդական աշխարհի երկու սրբազան քաղաքներից մեկը, այստեղ է գտնվում Քաաբան, որը հանդիսանում է ուխտագնացության վայր բոլոր մահմեդականների համար:

34 Թաիֆ – Տե՛ս Բալադուրի, ծնթգր. 2:

35 Ջիդդա – Քաղաք- նավահանգիստ Արաբիայում՝ Կարմիր ծովի ափին:

36 Կումիս – Տե՛ս Բալադուրի, ծնթգր. 220:

37 Ասուան – Քաղաք Եգիպտոսում, Նեղոս գետի աջ ափին:

38 Իֆրիկիա երկրի – Տե՛ս Վակիդի, ծնթգր. 18:

39 Կանդահար – Խոշոր քաղաք Աֆղանստանի հարավում:

40 Քաբուլ – Աֆղանստանի մայրաքաղաքը:

41 Քիրման – Տե՛ս Վակիդի, ծնթգր. 11:

42 Ալեքսանդրիա – Սա պետք է որ լինի Իրանի ծայր արևելքում, Միջին Ասիայում, կամ Հյուսիս-արևմտյան Հնդկաստանում Ալեքսանդր Մակեդոնացու հիմնած քաղաքներից որևէ մեկը՝ Հավանական է խոսքը Ալեքսանդրիա-Օքսիանայի մասին է:

43 Սիջիստան – Տե՛ս Վակիդի, ծնթգր. 12:

44 Ջիրաֆտ – Ջիրուֆտ, տես Իրն Ռուստա, ծնթգր. 29:

45 Սիրջան – Տե՛ս Սիրաջան, Իրն Ռուստա, ծնթգր. 30:

46 Խաթախր – Տե՛ս Խալիֆա իրն Խայյաթ, ծնթգր. 13:

47 Ջուր – Կամ Գոր, տե՛ս Ջահիդ, ծնթգր. 8:

48 Ֆասա – Նախկինում Պասա, գտնվում է Շիրազից 164 կմ հեռավորության վրա: Շրջանը, որի մեջ է մտնում Ֆասա քաղաքը մաս է կազմում Ֆարսի: Ֆասան հայտնի էր իր գորգերով և վարդաջրով: (Fasa, L. Lockhart, EOI, CD-ROM, (II: 823b)):

49 Սարուր – Տե՛ս Շապուհ, Յակուբի (պ.), ծնթգր. 23:

50 Ահուազի գավառ – Տե՛ս Վակիդի, ծնթգր. 14:

51 Անբար – Տե՛ս Իրն Ռուստա, ծնթգր. 36:

52 Կուլզում – Տե՛ս Իրն Խորդադրեհ, ծնթգր. 22:

53 Ֆարամա – Տե՛ս Ֆարմա, Իրն Խորդադրեհ, ծնթգր. 21:

54 Տիննիս, Դամիեթ, Ֆայում – Քաղաքներ Հյուսիսային Եգիպտոսում:

55 Բարկա երկիրը – Տե՛ս Խալիֆա իրն Խայյաթ, ծնթգր. 9:

56 Կումիս – Տե՛ս Բալադուրի, ծնթգր. 220:

57 Թարարիստան – Տե՛ս Վակիդի, ծնթգր. 8:

58 Դեյմիկը – Տե՛ս Դայլամ, Խալիֆա իրն Խայյաթ, ծնթգր. 40:

59 Ռաս ալ-Այն – Տե՛ս Խալիֆա իրն Խայյաթ, ծնթգր. 79:

60 Կարնո քաղաք – Տե՛ս Բալադուրի, ծնթգր. 78:

61 Շիմշաթ – Շիմշատ, տե՛ս Բալադուրի, ծնթգր. 73:

62 Խաոան – Տե՛ս Բալադուրի, ծնթգր. 41:

63 Ռակկա – Տե՛ս Բալադուրի, ծնթգր. 31:

64 Կարկիսիա – Տե՛ս Բալադուրի, ծնթգր. 43:

65 Սամոսատ – Տե՛ս Բալադուրի, ծնթգր. 42:

66 Մալաթիա – Տե՛ս Խալիֆա իրն Խայյաթ, ծնթգր. 20:

67 Ջապետրա – Տե՛ս Իրն Կուտայբա, ծնթգր. 13:

68 Կիննասրին – Տե՛ս նաև Բալադուրի, ծնթգր. 21:

69 Մամեստիա – Տե՛ս Մասսիսա, Խալիֆա իրն Խայյաթ, ծնթգր. 19:

70 Քանիսատ ալ-Սաուդա – Տե՛ս Խալիֆա իրն Խայյաթ, ծնթգր. 85:

71 Ազանա – Տե՛ս Խալիֆա իրն Խայյաթ, ծնթգր. 71:

72 Ամորիոն – Տե՛ս Իրն Կուտայբա, ծնթգր. 14:

73 Խարսիանոն – Տե՛ս Իրն Կուտայբա, ծնթգր. 8:

74 Կուռա – Տե՛ս Իրն Կուտայբա, ծնթգր. 7:

75 Ասորիքի ծովի ափերը – Միջերկրականի ափերը:

76 Ջուրջան ծովը – Տե՛ս Իրն Ռուստա, ծնթգր. 5:

77 Բուրջան – Տե՛ս Խալիֆա իրն Խայյաթ, ծնթգր. 43:

78 Թուրքաց երկիրը – Հավանաբար նկատի ունի Խազարական պետությունը, իսկ գուցե և նրանից արևելք ընկած տարածքները. որտեղ նույնպես տարբեր թյուրքական ցեղեր էին բնակվում:

79 Ռումի ծովը – Տվյալ դեպքում թերևս նկատի ունի Սև ծովը:

80 Ալանաց երկիրը – Տե՛ս Խալիֆա իրն Խայյաթ, ծնթգր. 53:

81 Բուրջանը – Տե՛ս Խալիֆա իրն Խայյաթ, ծնթգր. 43:

82 Սլավոնները – Սակալիբա: Տե՛ս Խալիֆա իրն Խայյաթ, ծնթգր. 42:

ԿՈՒԴԱՄԱ ԻԲՆ ՋԱԱՖԱՐ
(մահ. 932-ից հետո)

Աբու լ-Ֆարաջ Կուդամա իրն Ջաաֆար ալ-Քաթիբ ալ-Բաղդադի անունով բանասերն ու պատմիչը արամեացի (ասորի) էր և ծագում էր Բասրայում ապրող աստիճանավորների քրիստոնյա ընտանիքից:

Կուդաման առաջիններից էր, որ ներմուծեց հունտորական բանադարձումների (դարձվածների) պարբերական ուսումնասիրումը արաբական գրականության մեջ: Նրա ծննդյան տարեթիվն անհայտ է, բայց ենթադրաբար դա հիջրայի 260 (873/874) թվականն է: Նա ստացավ թե՛ գրական և թե՛ գիտական (ճշգրիտ գիտ.) կրթություն: Սկզբում Կուդաման աշխատեց Բաղդադի հարկային ծառայությունում: Արքունիքին մոտ լինելով, այդ ժամանակվա խալիֆա ալ-Մուկտաֆիի (902–908) պնդումով, ընդունեց մահմեդականություն: Դա նրա համար ճանապարհ բացեց դեպի բարձր պաշտոններ ու կյանքի վերջում Կուդաման վարում էր փոստի պետի պաշտոնը:

Կուդաման բազմաժանր հեղինակ է. գրել է թե՛ բանասիրական, թե՛ պատմական, թե՛ աշխարհագրական բնույթի գործեր, որոնցից մեզ է հասել միայն մեկը: Նրա «Հարկամատյան և արվեստ քարտուղարության» (Քիտաբ ալ-Խարաջ ուա Սինաատ ալ-Քիտաբա) երկը ըստ էության ոչ թե զուտ աշխարհագրական աշխատություն է, այլ ուղեցույց պետական պաշտոնյաների համար: Այն գրվել է հավանաբար 928-ի շուրջ և կազմված էր ութ մասից, որոնցից միայն չորսը, այսինքն երկի երկրորդ մասն է, որ հասել է մեզ, իսկ սրանից էլ հրատարակված է միայն այն մասը, որ վերաբերում է հարկամատյանին:

Ներկա թարգմանությունը կատարված է հետևյալ հրատարակությունից. Bibliotheca Geographorum Arabicorum, edidit M. J. de Goeje, VI, Lugduni Batavorum, 1889:

(Крачковский, IV, стр. 160-161, ***R. Blachère et H. Darmaun, Extraits des Principaux Géographes Arabes du Moyen Age, Paris, 1957, p. 53-54, Kudama, S. A. Bonebakker, EOI, CD-ROM, (V: 318b)***):

ԿՈՒԴԱՄԱ ԻԲՆ ՋԱԱՖԱՐ

ՀԱՐԿԱՄԱՏՅԱՆ ԵՎ ԱՐՎԵՍՏ ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅԱՆ (ՔԻՏԱԲ ԱԼ-ԽԱՐԱՋ ՈՒԱ ՍԻՆԱԱՏ ԱԼ-ՔԻՏԱԲԱ)

ՀԱՏՎԱԾ ԱԲՈՒ-Լ-ՖԱՐԱՋԻ՝ ԿՈՒԴԱՄԱ ԻԲՆ ՋԱԱՖԱՐ ԲԱՂԴԱԴՑԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ «ՀԱՐԿԱՄԱՏՅԱՆ ԵՎ ԱՐՎԵՍՏ ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅԱՆ» ԳՐՔԻՑ

ԳԼՈՒԽ ՏԱՍՆՄԵԿԵՐՈՐԴ (ՀԻՆԳԵՐՈՐԴ ԳՐՔԻ), ՈՐԸ ՎԵՐԱԲԵՐՈՒՄ Է ՓՈՍՏԻՆ (ԴԻՎԱՆ ԱԼ-ԲԱՐԻԴ), ՋԻԵՐԻ ԿԱՑԱՆՆԵՐԻՆ (ՍԻՔԱՔ) ԵՎ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻՆ [ՄԱՅՐԱՔԱՂԱՔԻՑ] ԴԵՊԻ ԱՐԵՎԵԼՔ ՈՒ ԱՐԵՎՄՈՒՏՔ

էջ 184–185

Ասում է Արու-լ-Ֆարաջը. փոստին անհրաժեշտ է հատուկ գրասենյակ (դիվան), որը լինի առանձին և նրա պետին պետք է հասնեն ամեն կողմից առաքված նամակները, որպեսզի նա ամեն մեկն իր տեղը ուղարկի, ուր որ հասցեագրված է: Նա պետք է խալիֆային գնկուցի փոստի [տեղական] պետերի և տեղեկություններ բերող գործակալների նամակների մասին և կամ մաներամասն հաշվետվություն ներկայացնի: Նա պարտավոր է հսկել ճանապարհների վրա նշանակված սուրհանդակների պետերի և կնիք դնողների գործերին, հետևել, որ նրանք ստանան օրապահիկ (մթերարաժին) և ներկայացուցիչներ նշանակել բոլոր քաղաքներում:

Այս գրասենյակի պետից [հիմնականում] պահանջվում է, որ լինի վստահության արժանի ինքն իր էությամբ և խալիֆայի մոտ, քանզի այդ գրասենյակում չկան այնպիսի գործեր, որոնց համար անհրաժեշտ լիներ տաղանդավոր մարդկանց, այլ հարկավոր են վստահություն վայելող ու գուսպ մարդիկ:

Այս գրասենյակի գործունեության վերաբերող կանոնները մոտավորապես նույնն են, ինչ որ մենք արդեն այլոց վերաբերյալ պատմել ենք գործերի կառավարման հարցում: Ինչ վերաբերում է այլ բաներին, ինչպես օրինակ ճանապարհների գործերը, ճանապարհների դիրքը և անցումներն ամբողջ նահանգում, ապա այդ մասին մենք

չենք հիշել: Գրասենյակի պետին անհրաժեշտ է, որ լավատեղյակ լինի ամեն ինչի, որպեսզի կարիք չունենա ուրիշներին դիմել, եթե խալիֆան հարցնի նրան երբ անհրաժեշտ լինի որևէ տեղ գնալ, կամ ըստ կարիքի, զորք ուղարկել և կամ այլ դեպքերում, որոնց համար անհրաժեշտ է, որ լավ իմանա ճանապարհները, բոլոր տվյալները նրա մոտ պատրաստ լինեն, ճչգրիտ գրանցված և նա ստիպված չլինի միայն վերջին պահին գործը հետապնդել և հարցուփորձ անել:

Դրա համար այժմ մեզ անհրաժեշտ է պատմել այդ բոլորի մասին, թվարկել վայրերի անունները, հիշատակել կայանները (մանազիլ)[1], մղոնների, փարասախների[2] քանակը և նկարագրել կայանների վիճակը, ջրի դրությունը, ճանապարհների դժվար, կամ հեշտ լինելը, բնակկլի լինելը և այլ հատկանիշներ:

Կսկսենք [նկարագրելով] այն ճանապարհը, որով ընթանում են Խաղաղության քաղաքից (Մադինատ ալ-սալամ, Բաղդադ) Մեքքա, քանզի դա ուխտագնացության կարևորագույն վայրն է և Ալլահի հնագույն տունը: Ավարտելուց հետո կսկսենք պատմել հետագա ճանապարհի մասին դեպի Եմեն, ապա՝ բոլոր մերձավորագույն կողմերը, հիշելով անունները:

էջ 212 – 216

Քանի որ հիշեցինք ճանապարհներն ու ուղիները դեպի Մեքքա և հարակից շրջանները, ինչպես Եմեն և այլն, ապա շարունակենք հիշելով ուղիները դեպի հյուսիսի նահանգները և հարակից շրջանները:

Առաջինը Ատրպատական գնացող ճանապարհն է: Սինն Սումայրայից մինչև Դինավար[3] հինգ փարասախ է, Դինավարից Խուրջան՝ ինը փարասախ, Խուրջանից Տալլ Վան՝ վեց փարասախ, Տալլ Վանից Սայսար՝ յոթ փարասախ: Սայսարից երկու ճանապարհի է բաժանվում, մեկը դեպի Փայտակարան (Բայլական)[4] տաս փարասախ է, Փայտակարանից Բարզա՝ ութ փարասախ, իսկ ձմեռվա ճանապարհը, ապա Սայսարից Անդարաբ[5] չորս փարասախ է: Արդաբիլից Փայտակարան հինգ փարասախ է, Փայտակարանից Բարզա՝ վեց փարասախ, Բարզայից Սաբուրխաստ՝ ութ փարասախ: Սաբուրխաստից Մարաղա[6] յոթ փարասախ է, Մարաղայից Դահխաականի[7]՝ տասնմեկ փարասախ, [Դահ] Խաականից Դավրեժ (Տաբրիզ)[8]՝ ինը փարասախ, Դավրեժից Մարանդ[9] քաղաքը՝ տաս փարասախ, Մարաղայից Քուլսարա՝ տաս փարասախ, Քուլսարայից Սարատ՝[10] տաս փարասախ, Սարատից ալ-Նիր[11]՝ հինգ փարասախ, ալ-Նիրից Արդաբիլ՝ հինգ փարասախ, Արդաբիլից Խան Բաբաք՝ ութ փարասախ, Խան Բաբաքից Բարզանդ՝ վեց փարասախ, Բարզանդից Բիհլար՝ տասներկու փարասախ, Արդաբիլից Մուղան[12]՝ չորս փարասախ:

Եթե մեկը կամենում է Նարիզից գնալ Բարզա և ապա Տփղիս, երկու փարասախ է. Տփղիսից Ջաբարուան[13], վեց փարսախ, Ջաբարուանից Նարիզ՝ չորս փարսախ, Նարիզից Ուրմիա՝ չորս փարսախ, Ուրմիայից Սալմաստ՝ վեց փարսախ, Մարանդից ալ-Ջուբ՝ չորս փարսախ, Ջուբից Խոյ՝ վեց փարսախ:

Իսկ ով կամենա հասնել Հայաստան այս ճանապարհով, ապա Մարանդից ալ-Սուրա Վադիի (Հովտի)[14] վրայով տաս փարսախ է, Վադիից Նախճավան (Նաչաուա)՝ տաս փարսախ, Նախճավանից Դվին (Դաբիլ)՝ քսան փարսախ:

Ով կամենա Վարդանակերտից (Վարսան) հասնել Պարտավ (Բարդաա), ապա Պարտավից Կումամ երեք փարսախ է, ապա մինչև Փայտակարան՝ յոթ փարսախ, հետո Պարտավ՝ երեք փարսախ:

Այժմ ցույց տանք ճանապարհը Խաղաղության քաղաքից (Բաղդադ) մինչև Մադրիբ և նրա նահանգները: Սկսենք հյուսիսից՝ մեր թողած տեղից, որպեսզի լրացնենք արևելքից հյուսիս գնացող ճանապարհների (ցուցակը) . [....]:

Մոսուլից Բալադ քաղաքը յոթ փարսախ է, Բալադից Բահնասա՝ յոթ փարսախ, Բահնասայից Բարկահիդ՝ վեց փարսախ, Բարկահիդից Ադարմա՝ վեց փարսախ, Ադարմայից Տալլ Ֆարուղա՝ երեք փարսախ, Տալլ Ֆարուղայից Մծբին՝ չորս փարսախ: Մծբինից երկու ճանապարհ է բաժանվում, մեկը աջակողմյան է՝ դեպի հյուսիս և անցնում է մեր վերոհիշյալ ճանապարհների մոտով, իսկ մյուսը՝ հասնում է Մադրիբի կողմերը:

Վերցնենք աջակողմյան ճանապարհը. Մծբինից մինչև Դարա[15] հինգ փարսախ է, Դարայից Քաֆարտուսա՝ յոթ փարսախ, Քաֆարտուսայից Կասր Բանի Նազի՝ յոթ փարսախ, Կասր Բանի Նազիից Ամիդ՝ յոթ փարսախ, Ամիդից Նփրկերտ (Մայափարիկին) աջ կողմում՝ հինգ փարսախ, Նփրկերտից Արզն, որը նույնպես Հայաստանին սահմանակից քաղաք է՝ յոթ փարսախ:

Ամիդից Ռակկա դեպի ձախ (հյուսիս) մինչև Շիմշաթ, Ռումի սահմանային ամրությունների մոտ, յոթ փարսախ է, Շիմշաթից Տալլ Ջաուֆար հինգ փարսախ է, Տալլ Ջաուֆարից Ջուրնան, որը չնչին գյուղ է բազմաթիվ չուկաներով՝ վեց փարսախ: Ջուրնանից Բամակդա, որն ունի չուկա, սակայն բնակիչները քիչ են՝ հինգ փարսախ, Բամակդայից Ջուլլաբ, որը բարգավաճ գյուղ է մի գետի վրա՝ յոթ փարսախ, Ջուլլաբից Եղեսիա (Ռուհա), որը հոռոմների քաղաք է մի լեռան ստորոտում՝ չորս փարսախ, Եղեսիայից Խառան քաղաքը՝ չորս փարսախ, Խառանից Տալլ Մահրա՝ չորս փարսախ, Տալլ Մահրայից Բաջարուան՝ յոթ փարսախ, Բաջարուանից Ռակկա՝ երեք փարսախ:

Ինչ վերաբերում է Ռակկայից Սահմանային գոտի (Սուղուր) ընթացող ճանապարհին, ապա Ռակկայից Այն ալ-Ռումիյա վեց փարսախ է, Այն ալ-Ռումիյայից Տալլ Աբդա՝ յոթ փարսախ, Տալլ Աբդայից Սարուջ՝ յոթ փարսախ, Սարուջից ալ-Մագնիյա՝ վեց փարսախ, Մագնիյայից Սամոսատ (Սումայսաթ), որը Եփրատի վրա է Ասորիքի կողմը՝ վեց փարսախ, Սամոսատից Հիան Մանսուր[16], որը սահմանային ամրություն է քարե պարսպով՝ վեց փարսախ, Հիան Մանսուրից դժվարանցանելի կիրճերով մինչև Մալաթիա, որը նույնպես սահմանային ամրություն է՝ տաս փարսախ, Մալաթիայից Կամախ (Քամախ) կոչված քաղաքը, որը նույնպես սահմանային ամրություն է, սակայն թշնամին տիրացել է նրան՝ չորս փարսախ: Դեպի ձախ ճանապարհն ընթանում է դեպի Զապետրա[17], որը նույնպես թշնամին նվաճել է՝ տաս փարսախ, Զապետրայից Հաղաս[18], նույնպես սահմանային ամրություն թշնամու դիմաց՝ չորս փարսախ, Հաղասից Մարաչ սահմանային ամրությունը, որից այն կողմ կան միայն թշնամու կառուցվածքներ:

էջ 227

Արևելքի ճանապարհների կայանները Ջաբալից այն կողմ.

[.....] Զինջանից Մարաղա [Ադերբի] տասնմեկ կայան (սիքքա), Մարաղայից Միանաջ՝ երկու կայան, Միանաջից Արդաբիլ՝ տասնմեկ կայան, Արդաբիլից Վարդանակերտ, որն Ատրպատական նահանգի վերջին կայանն է՝ տասնմեկ կայան, Վարդանակերտից մինչև Պարտավ քաղաքը՝ ութ կայան, Պարտավից Մանսուրա՝[19] չորս կայան, Պարտավից Մուտավաքքիլիյա[20] քաղաքը՝ վեց կայան, Մուտավաքքիլիյա քաղաքից Տփղիս՝ տաս կայան, Պարտավից Դարբանդ՝ տասնհինգ կայան, Պարտավից Դվին՝ ինը կայան:

էջ 228 - 229

Ճանապարհը Մծբինից Արզն[21] և Խլաթ[22].

Մծբինից Արզն քաղաքը [Ադերբի] տասնմեկ կայան է, Բաղնչից[23] Խլաթ՝ չորս կայան:

Ճանապարհը Քաֆարտուսայից մինչև Շիմշաթ. Քաֆարտուսայից Ամիդ յոթ կայան է, Ամիդից Տալլ Ջաուֆար՝ երկու կայան, Տալլ Ջաուֆարից Շիմշաթ՝ վեց կայան, Շիմշաթից Կարնո քաղաք՝ երկու կայան:

Հիան [Մասլամայից] մինչև միջագետքյան սահմանային ամրություններ (ալ-սուղուր ալ-ջազարիյա) Խառանի ու Եղեսիայի վրայով. Հիանից Խառան երեք կայան է, Խառանից Եղեսիա՝ երկու կայան, Եղեսիայից Սամոսատ՝ երկու կայան:

Մանբիջից Ասորիքի սահմանային ամրությունները (ալ-սուղուր ալ-շամիյա) ընթացող ճանապարհի [փերի] կայանները. Հալերից Կիննասրին՝ ինը կայան, Կիննասրինից Անտիոք՝ չորս կայան, Անտիոքից Ալեքսանդրեկ՝ չորս կայան, Ալեքսանդրեկից Մամեստիա՝ յոթ կայան, Ադանայից Տարսոն՝ հինգ կայան, Մամեստիայից Անազարբա՝ երկու կայան:

ՎԵՑԵՐՈՐԴ ՄԱՍ (ՄԱՆՋԻԼԱ)

ԵՐԿՐՈՐԴ ԳԼԽԻՑ [ՀԱՏՎԱԾ]
ԲՆԱԿԵԼԻ ԵՐԿՐԻ ՄԱՍԵՐԸ

էջ 230

[...] Մի մասը վերագրվում է Պարսից (Ֆարս) երկրին և կոչվում է Բալադ ալ-Ջամիայն, որը գտնվում է Բալխ գետի[24] և Ատրպատականի ու Հայաստանի հեռավոր մասերի միջև, մինչև Եփրատ ու Կադիսիյա[25]:*

Այս առաջին իկլիմը կոչվում է Մերոյն (Մարայիս), որը Եթովպիայի քաղաքն է: Իսկ երկրորդ իկլիմը [...], որը կոչվում է Ասուան[26], գտնվում է Բաջա երկրի սահմանի վրա, Եգիպտոսի հողում, երրորդ իկլիմը [...], որը կոչվում է Եգիպտոսի իկլիմ, չորրորդ իկլիմը [...], որը կոչվում է Անթարսուս, հինգերորդ իկլիմը, որը կոչվում է Հոռոմոս (Ռուդիչ), վեցերորդ իկլիմը, որը կոչվում է Պոնտոս (Բունթուս), քանզի նրա գիծը Պոնտոսի ծովի մնջտեղն է ընկնում[27]:

ՉՈՐՐՈՐԴ ԳԼԽԻՑ [ՀԱՏՎԱԾ]
ԼԵՌՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Իսկ հինգերորդ իկլիմում կա քսանինը լեռ, որոնցից են Մեծ Մասիսը (ալ-Հարիս) և Փոքր Մասիսը (ալ-Հուայրաս): Նրանց երկարությունն է երեսուներեք մղոն: Ապա Մոսուլի ու Շահրզուրի միջև ընկած լեռը, որի երկարությունն է երկու հարյուր քառասունհինգ մղոն, ինչպես նաև այս լեռան ու Մեծ Մասիսի և Փոքր Մասիսի հետ կապված լեռը, մինչև այն տեղը, ուր առնչվում է Կազուինի հետ, մոտենում է Ռույանին[28] և երկարությունն է երկու հարյուր մղոն:

* *Այս հատվածում բաղմակետերը ձեռագրում պակասող տեղերն են ցույց տալիս:*

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԳԼԽԻՑ [ՀԱՏՎԱԾ]
ԳԵՏԵՐԻ ԱԿՈՒՆՔՆԵՐԻ ՈՒ ՃԱՀՃԱՀՈՒՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հինգերորդ իկլիմում քսանհինգ գետ կա, որոնցից է Տիգրիսը (Դիջլա), սկսում է երկարության վաթսուն աստիճան և մեկ մասնիկից ու լայնության երեսունյոթ աստիճանից, հոսում է դեպի հարավ [...]

Իսկ վեցերորդ իկլիմում քսանվեց գետ կա, որոնցից է Եփրատը: Նա բխում է Ռումի երկրում մի ակունքից, անցնում է Մասֆինա կոչված լեռան հենց կողքով, ապա թեքվում է և անցնում մոտավորապես չորս հարյուր հիսուն մղոն, հոսում դեպի հարավ և մտնում Իսլամի երկիրը Սղերդի (Սիիրդ)[29], Մալաթիայի և Շիմշաթի արանքով: Անցնում է Հանձիթ (Հանզիթ) քաղաքով, ապա հոսում է արևմուտք հասնելով Սամոսատ քաղաքը, նրա միջնաբերդի կողքով գնում է արևմուտք, մինչև հասնում Ջիսր Մանբիջ [...]

ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ
ՄԱՀՄԵԴԱԿԱՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ, ՆՐԱ ՆԱՀԱՆԳՆԵՐԻ ՈՒ ՀԱՐԿԵՐԻ ՄԱՍԻՆ

էջ 234

Երբ ասում ենք արևելք կամ արևմուտք, հյուսիս կամ հարավ, ապա այս ամեն անվանումները հարաբերական են, ինչպես օրինակ եգիպտոսը, որ մենք համարում են արևմուտք, Անդալուսում (Իսպանիա) գտնվող մարդկանց համար արևելք է: Նույն ձևով Խորասանը մեզ համար արևելք է, իսկ Չինաստանի համար արևմուտք:

Ուստի պետք է նկատի ունենք մեկ կենտրոն, որպեսզի որոշենք երկրների դիրքը այդ կետի նկատմամբ: Իսլամի թագավորության համար այդ կենտրոնը Իրաքն է, որն այդպիսին է ոչ միայն այսօր, այլև պարսիկներն էլ այդպես էին համարում և այն կոչել էին Դիլ Իրանշահր (Իրանի սիրտը):

էջ 236

Սկսենք հաշվելով Սավադի[30] հարկը, ըստ այն դրության, որ նա ունի մեր ժամանակ, նկատի առնելով 204 հիջրի (819–820) թվականը, այսինքն հնագույնը, որի համար գոյություն ունեն հաշիվներ մայրաքաղաքի դիվաններում, քանզի դիվանները վառվեցին խռովության ժամանակ Ամինի օրոք, որը հայտնի է Իբն Ջուբայդա անվամբ և դա 183 հիջրի թվականն է:

էջ 242

Քանի որ նկարագրեցինք Սավադի վիճակը և նրա նահանգների, ապա չարունակենք դեպի Ահուազ[31], որն արևելքից հաջորդում է Սավադին[...]

էջ 244

Ատրպատականի (Ադարբայջան) գավառներն են Արդաբիլը, Մարանդը, Ջաբարուանը, Վարդանակերտը և նրա մայրաքաղաքն է Պարտավ քաղաքը: Ատրպատականի միջին հարկն է չորս միլիոն հինգ հարյուր հազար դիրհեմ:

էջ 245 - 246

Քանի որ վերահասու եղանք Արևելքի (Մաշրիկ) նահանգների վիճակին, ապա վերադառնանք Արևմուտքի (Մաղրիբ) նահանգները: Նրանցից առաջինը Եփրատի կողմից Տիքրիտն է ու Թիրհանը, Սինն ու Բավազիջը և նրանց հարկը միջին հաշվով յոթ միլիոն դիրհեմ է: Ապա հաջորդում են Մոսուլն ու նրա գավառները՝ Շահրզուրը, Սամղանն ու Դարաբաղը Մոսուլի գավառներից էին նախքան բաժանվելը և նրանց տարեկան հարկն է երկու միլիոն յոթ հարյուր հիսուն հազար դիրհեմ: Ինչ վերաբերում է բուն Մոսուլի գավառներին, որոնք են արևմտյան կողմից Ջազիրա[32], Նինվե, Մարջ[33] գավառները, Բաադրա նահանգը, իսկ արևելյան կողմից՝ Հադիաան[34], Հազ Բահադրան, Մուղիլլան, Ջիբտունը, Հինայան, ալ-Սա [...], Դայբուրը և Դասինը, ապա այս բոլոր գավառների տարեկան հարկը վեց միլիոն երեք հարյուր հազար դիրհեմ է:

Մոսուլի չրջաններին հաջորդում են հյուսիսում Կարդան և Բազաբդան, որում կա Արարադ (Ջուդի) լեռը, որի վրա կանգ է առել Նոյյան տապանը: Նրա երկու կենտրոններն (կասաբա) են Ջազիրան, որը հայտնի է Իբն Օմար անվամբ և Բասուրինը, ուր մշակվում է և մակույկներով Իրաք փոխադրվում աղը: Նրա հարկերի միջինն է երեք միլիոն երկու հարյուր հազար դիրհեմ:

Սրան հաջորդում է Դիար Ռաբիան իր գավառներով՝ Բալադ, Բաարբայա, Մծբին[35], Դարա[36], Մարդին[37], Քաֆրտուսա և մի բլուր, որը կոչվում է Սինջար[38], Ռաս ալ-Այն[39] և Խաբուր[40]: Այս բոլորի հարկը, հաշվելով նաև չուկայի հարկը (իհտիսաբատ) չորս միլիոն վեց հարյուր երեսունհինգ հազար դիրհեմ է:

Դիար Ռաբիային հաջորդում են հյուսիսից Արզն[41] և Նփրկերտ[42] (Մայափարիկին) գավառները, իսկ նրանց հարկի միջինը չորս միլիոն

հարյուր հազար է: Ապա հաջորդում է Տարոն[43] (Թարուն) գավառը Հայաստանի չրջաններից և նրա տիրոջ հարկն է տարեկան հարյուր հազար դիրհեմ:

Սրա ետևից դեպի հյուսիս գտնվում է Հայաստան երկիրը, որի գավառներն են Վիրքը (Ջուրզան), Դվինը (Դարիկ), Բարգանդը[44], Շիրակ Տայքը (Սիրաջ Թայրը), Ապահունիքը (Բաջունայս), Արձնը, Խլաթը, Սիսականը, Առանը, Կարնո քաղաքը, Վասպուրականը (Բաֆուռաջան), իսկ նրա մայրաքաղաքն է Նախճավանը: Նրա միջին հարկն է դրամով չորս միլիոն դիրհեմ:

Ապա Դիար Մուդարի արևմտյան գավառները՝ Եղևսիան (Ռուհա), Խառանը, Սարուջը, Մուղայբարը, Բալիխը, Տալլ Մաուզանը, Ռաբիատ Բանի Տամիմը, Կարիատ ալ-Ֆուրատը (Եփրատի գյուղերը), Շաթթի ալ-Ֆուրատը (Եփրատի ափը), Մազիհ Օմար, իսկ Եփրատի արևմտյան կողմում՝ Հանին և ալ-Մարին: Դիար Մուդարի միջին հարկը վեց միլիոն դիրհեմ է:

էջ 249 - 252

Ահա այն նահանգները, որոնք Իսլամի տիրակալության տակ են:

Այն հարկային գումարները, որոնք ցույց տվեցինք, դրանց միջինն են: Մենք նկատի չենք առել մեր օրերում տարբեր չրջաններում տեղի ունեցած բարձրացումներն ու իջեցումները, քանզի դրանք կառավարիչների թուլության ու անփութության հետևանք են: Այսպես է ամենուրեք, ուր մերժում են հարկը վճարել:

Հարկերի ընդհանուր քանակը, որ մենք գումարելով ենք ստանում, ընթերցողին հասկանալի դարձնելու համար, հետևյալն է. ոսկով չորս միլիոն ինը հարյուր քսան հազար դինար, որը լինում է արծաթով, եթե դինարը տասնհինգ դիրհեմ հաշվենք՝ յոթանասուներեք միլիոն ութ հարյուր հազար դիրհեմ:

Ահա բոլոր հարկերի ցուցակը ոսկով ու արծաթով.

Սավադ	հարյուր երեսուն միլիոն երկու հարյուր հազար դիրհեմ,
Ահուազ	քսաներեք միլիոն դիրհեմ,
Ֆարս	քսանչորս միլիոն դիրհեմ,
Քիրման	վեց միլիոն դիրհեմ,
Մուքրան	մեկ միլիոն դիրհեմ,
Սպահան	տասը միլիոն հինգ հարյուր հազար դիրհեմ,
Սիջիստան	մեկ միլիոն դիրհեմ,
Խորասան	երեսունյոթ միլիոն դիրհեմ,
Հուլուան	ինը հարյուր միլիոն դիրհեմ
Մահ ալ-Քուֆա	հինգ միլիոն դիրհեմ,

Մահ ալ-Բասրա	չորս միլիոն ութ հարյուր հազար դիրհեմ,
Համադան	մեկ միլիոն յոթ հարյուր հազար դիրհեմ,
Մասաբդան	մեկ միլիոն երկու հարյուր հազար դիրհեմ,
Միհրիջան Կադակ	մեկ միլիոն հարյուր հազար դիրհեմ,
Իղարին	երեք միլիոն ութ հարյուր հազար դիրհեմ,
Կում և Կասան	երեք միլիոն դիրհեմ,
Ատրպատական	չորս միլիոն հինգ հարյուր հազար դիրհեմ,
Ռեյ և Դիմավանդ	քսան միլիոն ութսուն հազար դիրհեմ,
Կումիս	մեկ միլիոն հարյուր հիսուն հազար դիրհեմ,
Վրկան (Ջուրջան)	չորս միլիոն դիրհեմ,
Թաբարիստան	չորս միլիոն երկու հարյուր ութսուն հազար յոթ հարյուր դիրհեմ,
Տիբրիտ, Թիրհան	
Սինն և Բավազիջ	ինը հարյուր հազար դիրհեմ,
Շահրզուր և Սամղան	երկու միլիոն յոթ հարյուր հիսուն հազար դիրհեմ,
Մոսուլի նահանգ	վեց միլիոն երեք հարյուր հազար դիրհեմ,
Կարդա և Բազարդա	երեք միլիոն երկու հարյուր հազար դիրհեմ,
Դիար Ռաբիա	ինը միլիոն վեց հարյուր երեսունհինգ հազար դիրհեմ,
Արզն և Նփրկերտ (Մայափարիկին)	չորս միլիոն երկու հարյուր հազար դիրհեմ,
Տարոն նահանգ	հարյուր հազար դիրհեմ,
Հայաստան	չորս միլիոն դիրհեմ,
Ամիդ	երկու միլիոն դիրհեմ,
Դիար Մուդար	վեց միլիոն դիրհեմ,
Եփրատի ճանապարհի (Թարիկ ալ-Ֆուրատ) գավառները	երկու միլիոն ինը հարյուր հազար դիրհեմ,
Կիննասրին և Ավասիմ	երեք հարյուր վաթսուն հազար դինար,
Եմեսայի (Հիմս) ջունդը	երկու հարյուր տասնութ հազար դինար,
Դամասկոսի ջունդը	հարյուր տաս հազար դինար,
Հորդանանի ջունդը	հարյուր ինը հազար դինար
Պաղեստինի ջունդը	երկու հարյուր հիսունինը հազար դինար,
Եգիպտոս և Ալեքսանդրիա	երկու միլիոն հինգ հարյուր հազար դինար,
Երկու սուրբ քաղաքները (Մեքքա և Մադինա)	հարյուր հազար դինար

Եմեն	վեց հարյուր հազար դինար,
Յամամա և Բահրայն	հինգ հարյուր տաս հազար դինար,
Օման	երեք հարյուր հազար դինար:

Ինչպես նաև մայրաքաղաք՝ Խաղաղության քաղաքի (Բաղդադի) դիմմի մարդկանց վճարած գլխահարկը (ջիզիա), որը երկու հարյուր հազար դիրհեմ է:

Ասվել է, որ Խոսրով Պարվեզը հաշվել է իր թագավորության եկամուտը, իր իշխանության տասնութ տարում և գտել, որ կանխիկ յոթ հարյուր քսան հազար միակալ ոսկի է, այսինքն արծաթ դրամով վեց հարյուր միլիոն դիրհեմ, այն դեպքում, երբ նրա ձեռքում կար այն [երկրները], որոնք հիշեցինք ու անվանեցինք՝ Սավաղը, տարբեր շրջանները, առանց Մաղրիբի գավառների, քանզի նրա սահմանն էր մինչև Հիտ, իսկ Մաղրիբի վերոհիշյալ գավառները գտնվում էին հոռոմների ձեռքում:

Ասել է Կուդաման՝ ես հիշել եմ նահանգներն այն ձևով, ինչպես նրանք եղել են այդ ժամանակ: Դրանց հողերը չեն ավերվել, իսկ բնակիչները չեն վերացել, սակայն նրանց գործերի վերակացուները պետք է ունենան նախ և առաջ աստվածավախություն, լավատեղյակություն, արդարամտություն, բարեպաշտություն, որպեսզի գործերը կանոնավոր ընթանան, կարգապահություն լինի և միայն այս դեպքում եկամուտն այնքան բարձր կլինի, որ բոլորին կգոհացնի:

ԳԼՈՒԽ ՅՈԹԵՐՈՐԴ
ՄԱՀՄԵԴԱԿԱՆ [ՊԵՏՈՒԹՅԱՆ] ՍԱՀՄԱՆԱՑԻՆ ԱՄՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (ՍՈՒՂՈՒՀ) ԵՎ ՆՐԱՆ ՇՐՋԱՊԱՏՈՂ ԱԶԳԵՐԻ ՈՒ ՑԵՂԵՐԻ ՄԱՍԻՆ

էջ 252 – 266

Ազգերն ու ցեղերը, որոնք մահմեդական [պետության] հակառակ են, շրջապատում են նրա բոլոր կողմերը և ծայրամասային նահանգները: Նրանցից ոմանք մոտիկ են [խալիֆայական] իշխանության նստավայրին, իսկ ուրիշները հեռու են նրանից:

[Իրանի] ցեղային թագավորները (մուլուք ալ-թավաիֆ, Արշակունիներ), որոնց թագավորեցրել էր Երկկոտոչավորը (Ալեքսանդրը), հինգ հարյուր տասնմեկ տարի հարկ էին վճարում Ռումի (Հռոմի) թագավորին, մինչև որ Պապակի (Բաբաք) որդի Արտաշիրը (Արդաշիր) դաժան և երկար պայքարից հետո ամրապնդեց իր թագավորության ուժերը և մերժեց վճարել այն հարկը, որ պարսիկները տալիս էին հոռոմներին:

Ուստի մահմեդականները պետք է առավել զգույշ լինեն հոռոմնե-

րից, քան բազմատեսակ այլ թշնամիներից: Այս մասին եղել են [Ղուրանի] վկայություններ (այատ), որոնք իմ ասածի ճշմարտացիությունն են ապացուցում, քանզի Ալլահը բարի գործերին զորավիգ է իր զորությամբ:

Իսկ քանի որ հոռոմներն այդպիսին են ինչպես ասացի, ապա սահմանային ամրությունների (սուղուր) մասին խոսելիս նախ նրանց երկրի դիմաց ընկած ամրությունների մասին պատմենք:

Այս սահմանային ամրությունների մի մասը ցամաքային է և թշնամու վրա հարձակվում են ցամաքի կողմից, մի մասն էլ ծովային է, ուստի թշնամու վրա հարձակվում են ծովից: Իսկ կան նաև այնպիսիք, ուր այս երկու պայմանները միասին են և թշնամու դեմ արշավանքները կատարվում են ցամաքի ու ծովի վրա:

Ծովային ամրությունները հիմնականում Ասորիքի (Շամ) ու Եգիպտոսի (Միսր) բոլոր ծովափերն են և այդ կողմից միաժամանակ թե՛ ցամաքի, թե՛ ծովի վրա են արշավանքներ կատարվում:

Սկսենք սիրիական (Ասորիքի) կոչված սահմանային ամրությունների հիշատակմամբ: Դրանք են՝ Տարսոնը (Թարսուս), Ադանան, Մամեստիան (Մասսիսա), Անազարբան (Այն Զարբա), ալ-Քանիսան, ալ-Հարունիյան, Բայասը[45], Նիկոպոլիսը[46] (Նիկուբուլիս): Սրա եկամուտը մոտավորապես հարյուր հազար դինար է, որն [ամրողջովին] ծախսվում է նրա բարեկարգման և տարբեր կարիքների, ինչպես դիտաբանների, պահակակետերի, լրտեսների, սուրհանդակների և կիրճերի, ծանծաղուտների (անցահուն), բերդերի և այլ նման բաների վերահսկողների համար: Վերոհիշյալ վայրերին որպես կայազոր անհրաժեշտ են թե՛ կանոնավոր զորքեր (ջունդ), թե՛ անկանոն զորքեր, որոնց, ինչպես նաև ծովի ու ցամաքի վրա, ամառային ու ձմեռային արշավանքների ծախսերի գումարը տարեկան մոտավորապես երկու հարյուր հազար դինար է, իսկ երբեմն հասնում է երեք հարյուր հազար դինարի:

Թշնամու երկրի այն նահանգները, որոնք սահմանների դիմաց են և ցամաքից սահմանակից, հետևյալներն են՝ Կապադովկիան (Կապադոկիկ) և նրա մոտ՝ Անատոլիկոնը[47] (Նաթլիկ), իսկ ծովի կողմից՝ Սելևկիան[48] (Սալուկիյա):

Այս սահմանային ամրությունների գոտու ետևում կա Ավասիմ նահանգը և մահմեդական պետության նրան հարող այլ շրջաններ: Կոչվում է Ավասիմ[49], քանզի նրա ամեն մի մասը զորավիգ (ասիմ, հոգն. ավասիմ) է և օժանդակում ու օգնում է սահմանային ամրություններին զորահավաքի ժամանակ, քանի որ այստեղ են հավաքվում Անտիոքի, Ջումայի և Կուրեսի[50] ռազմիկները:

Այս (Ասորիքի) սահմանային ամրություններից դեպի հյուսիս գտնվում են միջագետքյան ամրությունները (ալ-սուղուր ալ-ջազա-

րիյա)[51] և այստեղ առաջինը որ սահմանակից է Ասորիքի ամրությունների գոտուն, Մարաչն է, ապա Հադաս ամրությունը (սաղր): Նախկինում Զապետրան (Զիրաթրա) է եղել սահմանային ամենամոտիկ ամրությունը, սակայն Մուտասիմ [Խալիֆայի] օրոք կործանվել է [հոռոմների ձեռքով]: Վերջինս (Մուտասիմը) թշնամու երկրում հաղթանակ տանելուց և նշանավոր Ամորիոնը (Ամմուրիյա)[52] նվաճելուց հետո, վերադարձին Զապետրայի և նրան մոտիկ տեղում կառուցեց մի քանի բերդեր, որպեսզի փոխարինեն: Դրանք են Թաբարջի կոչված բերդը, Հուսայնիյա կոչվածը, Բանի-լ-Մումինը, Իրն Ռահուան կոչվածը: Ապա այս բերդերին հաջորդում են Քեսուն (Քայսում)[53], Հիսն Մանսուր, Շիմշաթ և Մալաթիա ամրությունները: Վերջինս թշնամու դեմ հարձակման համար ամենահարմար բերդն է, քանզի մյուսներից ամեն մեկն իր և թշնամու միջև ունի որևէ կիրճ կամ արգելք, իսկ Մալաթիան, որպես ամրություն թշնամու դիմացն է նույն հողում:

Այս ամրությունների դիմաց գտնվում են Ռումի կողմից Խարսիանոն, (Խարչանա)[54] և Խաղտիք[55] (Խալդիա) նահանգները:

Այդ ժամանակ դրանց (Սահմանային ամրությունների) և Հայազգի Մլեհին (Մալիհ ալ-Արմանի)[56] ենթակա հոռոմների ու հայերի միջև գտնվող մի քաղաքում ապրում էին մարդիկ, որոնք կոչվում էին Բայալիկա (պավլիկյաններ)[57]: Սրանք հոռոմ էին, սակայն կրոնական չատ հարցերում նրանցից (հոռոմներից) տարբերվում էին: Սրանք մահմեդականների հետ էին և օգնում էին նրանց արշավանքների ժամանակ և մահմեդականները մեծ օժանդակություն էին ստանում: Սակայն հանկարծ հեռացան այդ վայրերից, Սահմանային ամրությունների գոտու մարդկանց (զորքի) վատ վերաբերմունքի և նրանց նկատմամբ [պետության] հոգատարության (ուշադրության) պակասի պատճառով: Նրանք գրվնցին երկրում և նրանց տեղում բնակություն հաստատեցին վերոհիշյալ հայերը, որոնք անառիկ ամրոցներ կառուցեցին: Սրանց թիվն ավելանում է և նրանք մեզ մեծ չարիք ու վնաս են պատճառում:

Այս ամրությունների (Միջագետքի) և Մալաթիայի հասույթը յոթանասուն հազար դինար է, որից տեղական կարիքների համար ծախսվում է քառասուն հազար դինար, իսկ մնացորդը լինում է երեսուն հազար դինար: Սակայն կառավարիչների ու անկանոն զորքի համար կարիք է լինում տալ առնվազն հարյուր քսան հազար դինար ևս, որն ավելացվում է վերոհիշյալ մնացորդին, երբեմն նույնիսկ հարյուր յոթանասուն հազար դինար և այսպիսով գումարը դառնում է երկու հարյուր հազար դինար, բացի արշավանքների հատուկ ծախսերից, որոնք ժամանակին են կատարվում ըստ զորքի թվի:

Այս սահմանային ամրությունները միջին են կոչվում և այստեղից

էին դուրս գալիս արշավանքները և հենց որ արշավանքի կարիք էր զգացվում, ապա ծախսերը տրվում էին ըստ մասնակիցների թվի: Այս ամրոցություններին օժանդակող չրջաններն են Տյուքը (Դուլուք)[58], Ռաաբանը[59] և Մանբիջը:

Այս ամրոցությունների աջ կողմում դեպի հյուսիս հաջորդում են Բաքրյան (Դիարբաքրյան) կոչված ամրոցությունները, որոնք են Սամոսատը (Սումայսաթ), Հանին, Մալքինը և բերդերը ինչպես Ջամահը, Հաուրանը, Քիլիսը[60] և ուրիշներ: Ապա հյուսիսում գտնվում է նաև Կարնո քաղաք (Կալիկալա) սահմանային ամրոցությունը, որը կից է սահմանային ամրոցությունների գոտուն, սակայն մնկուսի է, քանզի նրա և այդ գոտու միջև մեծ հեռավորություն կա:

Այս սահմանային ամրոցությունների դիմաց ընկած Ռումի նահանգներն են Արմենիակոնը (Արմինիակ)[61] և Խաղտիքի[62] մի մասը: Մոտիկ է նաև Պափլագոնիան (Աֆլաղունիա)[63], որը ձգվում է մինչև Խազարաց երկիրը:

Այս սահմանային ամրոցությունների տարեկան հասույթը մեկ միլիոն երեք հարյուր հազար դիրհեմ է, սակայն բերդերի բարեկարգման, զորքի վարձատրման և այլ նպատակների համար ավելացվում է տարեկան մեկ միլիոն յոթ հարյուր հազար դիրհեմ և այսպիսով ընդհանուր գումարը լինում է երեք միլիոն դիրհեմ:

Ինչ վերաբերում է ծովային սահմանային ամրոցություններին, ապա դրանք են Եմեսայի ջունդի ծովափնյա [քաղաքները]՝ Անթարթուս, Բալինիաս, Լաոդիկե[64], Ջաբալա և Հիրյադա, Դամասկոսի ջունդից են Արաական, Տրիպոլին[65], Բիբլոսը (Ջուբայլ), Բեյրութը, Սիդոնը (Սայդա), Հիսն Սարփանդը և Աղնունը: Հորդանանի ջունդի ափերին են Տյուրոսը (Սուր)[66], Ակրան (Աքքա)[67], ընդ որում Տյուրոսում կա նավաշինարան: Պաղեստինի (Ֆիլաստին) ջունդի ափերին են Կեսարիան, Արսուֆը, Հոբբեն (Յաֆա), Ասկալոնը և Գազան (Ղազզա)[68], իսկ Եգիպտոսի ափերին են Ռաֆհը, Ֆարման[69] և Արիշը:

Ասորիքի սահմանային ամրոցությունների գոտուց, ինչպես նաև Ասորիքից ու Եգիպտոսից արշավի ելնող նավերի թիվը ութսունից հարյուր է: Երբ արշավանքի որոշումը տրվում է, գրվում է Եգիպտոսի ու Ասորիքի տերերին (կառավարիչ), որ զործի լծվեն: Պատրաստություններ են տեսնվում Կիպրոս (Կուբրուս) կղզում և հավաքված նավերի ամբողջությունը կոչվում է նավատորմիղ (ուսթուլ), ինչպես ցամաքում հավաքված զորքը կոչվում է բանակ (մուասքար, ճամբար): Ասորիքի ու Եգիպտոսի բոլոր նավերի հրամանատարն է Ասորիքի սահմանային ամրոցությունների գոտու տերը (կառավարիչ), իսկ Եգիպտոսից ու Ասորիքից արշավող նավերի ծախսերի գումարը մոտավորապես հարյուր հազար դինար է:

Քանի որ հիշեցինք Ռումի [դիմաց գտնվող] սահմանային ամրոցությունները և նրանց պարագաները, ապա նպատակահարմար է, որ նկարագրենք Ռումի թագավորության դրությունը, ինչքան որ հարկավոր է իմանալ: Նախ և առաջ հիշենք նրանց զորքի դասավորումը: Պատրիկը նրանց մոտ տաս հազարի պետ է, ամեն պատրիկի հետ կա երկու տուրմարք, ամեն մեկը հինգ հազարի վրա է: Ամեն տուրմարքի հետ հինգ դրունգար (Թուրունջար) կա: Դրունգարը հազարի վրա է, ամեն մի դրունգարի հետ հինգ կոմես կա: Կոմեսը երկու հարյուրի վրա է և ամեն կոմեսի հետ հինգ կոմտարք կա: Կոմտարքը քառասունի վրա է, իսկ ամեն կոմտարքի հետ չորս դեկարքոս (դեկուրիոն) կա: Դեկարքոսը տաս հոգու վրա է:

Ինչ վերաբերում է նրանց զորքի թվին, ապա Կոստանդնուպոլսում, որը թագավորի մայրաքաղաքն է, քսանչորս հազար զորք կա, որից տասնվեց հազարը հեծելազորքն է, իսկ ութ հազարը հետիոտն զորքը: Հեծյալները չորս մասի են բաժանվում, առաջինը՝ Սքոլարներն են, որոնց տերն է մեծ Դոմեստիկոսը, որը միաժամանակ ամբողջ զորքի հրամանատարն է և զորաժողովների պետն է, և նրանց թիվը չորս հազար է: Երկրորդ տեսակը Տաքսիներն են, որոնք նույնպես չորս հազար ձիավորներ են: Երրորդ տեսակը էքսկուբիտներն են, որոնք պահակազորքն են, նրանց հրամանատարը դրունգար է և թիվը չորս հազար է: Չորրորդ տեսակը Սկուտարյաններ են, որոնք թագավորին ընկերակցում են ճանապարհորդության ժամանակ և նրանց թիվը նույնպես չորս հազար է:

Հետիոտն զորքը երկու մասի է բաժանվում, առաջինը կոչվում է Օպտիմատներ [.....] և նրանց թիվը չորս հազար է, իսկ մնացածները կոչվում են Նումերա [...] և որոնց թիվը նույնպես չորս հազար է:

Նահանգների թիվը տասնչորս է, որոնցից երեքը ծոցից այն կողմ են գտնվում, այն ծոցից, որը կտրում է Ռումի երկիրը [երկու մասի] և հոսում է դեպի Ասորիք և նրա մասին խոսվել է:

Այդ նահանգներից առաջինն է Թաբլան (Թաֆլա), այն երկրամասը, որի մեջ է Կոստանդնուպոլիսը: Նրա սահմաններն են արևելքից՝ վերոհիշյալ ծոցը, հարավից՝ Ասորիքի ծովը, հյուսիսից՝ Խազարաց ծովը, իսկ արևմուտքում կա մի երկարաձիգ պարիսպ Ասորիքի ծովից մինչև Խազարաց ծովը, և երկարությունը չորս օրվա քայլելու ճանապարհ է, իսկ Կոստանդնուպոլսից՝ երկու օրվա քայլելու ճանապարհ:

Հաջորդ նահանգը կոչվում է Թրակիա (Տարակիա), որի սահմաններն են արևելքից՝ վերոհիշյալ պարիսպը, հարավից՝ Մակեդոնիա նահանգը, արևմուտքից՝ Բուրջանը (բուլղար), իսկ հյուսիսից՝ Խազարաց ծովը: Սրա երկարությունն է տասնմեկ օրվա քայլելու ճանապարհ, իսկ լայնությունը Խազարաց ծովից մինչև Մակեդոնիա, երեք օրվա քայլելու ճանապարհ է: Նրա կառավարիչը կոչվում է ստրատեգոս (իսթիրթիկուս) և նրա զորքի թիվը հինգ հազար է:

[Ապա հաջորդում է Մակեդոնիան]

Մոցից այս կողմ տասնմեկ նահանգ կա: Նախ Պափլագոնիան է, որի զորքը տաս հազար հոգուց է բաղկացած:

Դեպի արևմուտք գտնվում է Օպտիմատոնը և այս բառի արաբերեն մեկնությունը ականջ ու աչք է, քանզի այս նահանգը Ռումի երկրի կենտրոնն է, իսկ ժողովուրդը կովի վարժ չէ, քանի որ մահմեդականների ու այլոց արշավանքները նրանց չեն հասնում: Սրա արևմտյան սահմանն է ծոցը, հյուսիսայինը՝ Խազարաց ծովը, արևելյանը՝ Պափլագոնիա նահանգը, հարավայինը՝ Օպսիկիոնը (Աբսիկ): Նրա զորքը չորս հազար հոգուց է բաղկացած:

Օպտիմատոնին հաջորդում է Օպսիկիոնը, որի արևմտյան սահմանն է ծոցը, հյուսիսայինը՝ Օպտիմատոնը, հարավայինը՝ Թրակեսիոնը: Նրա զորքի թիվն է վեց հազար մարդ:

Օպսիկիոնից հետո գալիս է Թրակեսիոնը (Թարկասիս), որի սահմաններն են արևմտյան կողմից՝ ծոցը, հյուսիսային կողմից՝ Օպսիկիոնը, արևելյան կողմից՝ Անատոլիկոնը, հարավային կողմից՝ Ասորիքի ծովը: Նրա զորքի թիվն է վեց հազար մարդ:

Սրան հաջորդում է Անատոլիկոնը և այս բառի իմաստն է արևելյան: Ռումի ամենամեծ նահանգն է: Նրա սահմաններն են արևմուտքից՝ Օպսիկիոնը, հարավային կողմից՝ Սելևկիան, Ասորիքի ծովի մոտ, արևելքից՝ Կապադովկիան, իսկ հյուսիսից՝ Բուկելլարները (Բուկուլլար): Նրա զորքի թիվն է տասնհինգ հազար մարդ: Նրանում է Ամորիոնը, որը նվաճել է Մուտասիմը:

Ապա հաջորդում է Սելևկիա նահանգը, Ասորիքի ափին, որը նրա հարավային սահմանն է: Նրա սահմաններն են արևմուտքից՝ Անատոլիկոնը, հարավից՝ ծովը, հյուսիսից՝ Թրակեսիոնը, արևելքից՝ Տարսոնի մի կիրճ Կալամիայի ու Լամիսի կողմերում: Նրա զորքի թիվն է հինգ հազար մարդ:

Նրանից հետո Կապադովկիան է, որի սահմանն են կազմում հարավից Տարսոնի, Ադանայի ու Մամեստիայի լճները, արևմուտքից՝ Սելևկիայի գավառները, հյուսիսից՝ Անատոլիկոնը, իսկ արևելքից՝ Խարսիանոնի գավառները: Նրա զորքի թիվն է չորս հազար մարդ:

Ապա հաջորդում է Խարսիանոնը (Խարչանա), որի սահմանը հարավից Կապադովկիան է, մյուս սահմանը՝ արևելյան Մալաթիայի կիրճերն են: Մի այլ կողմից սահմանակից է Արմենիակների նահանգին, որը հյուսիսում է գտնվում, մի ուրիշ կողմից էլ դրացի է Բուկելլարների նահանգին, որն արևմուտքում է: Նրա զորքի թիվը չորս հազար մարդ է:

Հետո Բուկելլարների նահանգն է, որի սահմանը կից է Անատոլիկոնին ու Օպտիմատոնին, երկրորդը՝ Կապադովկիային, երրորդը՝ Խարսիանոնին, չորրորդը՝ Արմենիակներին: Նրա զորքի թիվը ութ

հազար մարդ է:

Իսկ Արմենիակների նահանգը, ապա նրա մի սահմանը կից է Պափլագոնիային, երկրորդը՝ Բուկելլարների նահանգին, երրորդը՝ Խարսիանոնին և չորրորդը՝ Խաղտիք նահանգին ու Խազարաց ծովին: Նրա զորքի թիվը չորս հազար է:

Վերջապես Խաղտիք (Խալդիա) նահանգը, որի մի կողմը Հայաստան երկիրն է, երկրորդ կողմը՝ Խազարաց ծովը, երրորդ կողմը՝ Արմենիակները, և չորրորդ կողմը՝ նույնպես Արմենիակների նահանգը: Նրա զորքը չորս հազար է:

Այսպիսով մեր նշած տասնմեկ նահանգների ամբողջ զորքը յոթանասուն հազար հոգուց է բաղկացած, նկատի ունենալով նրանց, որ գինվորագրված են հեծյալ ու հետևակ գնդերում, առանց հաշվելու անկանոն զորքը:

Սրանից հետո կուզենայինք նկարագրել արշավանքի օրերից մի օրինակ, որպեսզի ընթերցողը ճիշտ գաղափար կազմի այդ մասին: Կասենք որ փորձություններից ամենադժվարը, որ սահմանային բուերության գոտու փորձառու բնակիչները (սաղրիյուն) գիտեն, դա գարնանային [արշավանքն] է, որը տեղի է ունենում Այար (մայիս) ամսից տաս օր անցած (մայիս 11): Այդ ժամանակ մարդիկ ձիերը գարնան արածացրած են լինում և ձիերը լավ վիճակում են գտնվում: [Ռազմիկները] երեսուն օրով են գնում և դա Այար ամսի մնացած օրերն են ու Հազիրանի (հունիս) առաջին տաս օրերը: Նրանք Ռումի երկրում առատ արոտավայրեր են գտնում, ուստի նրանց ձիերը երկրորդ գարունն են անցկացնում:

Ապա վերադառնալով նրանք քսանհինգ օր մնում են, որը Հազիրանի մնացած օրերն են ու Տամմուզի (հուլիս) առաջին հինգ օրերը, մինչև որ անասուններն ուժեղանան ու պարարտանան: Հետո ռազմիկները հավաքվում են ամառային արշավանքի և դուրս են գալիս Տամմուզից տաս օր անց (հուլիս 11) և մինչև իրենց վերադարձը մնում են վաթսուն օր:

Ինչ վերաբերում է ձմեռային արշավանքներին, ապա փորձված մարդկանցից լսել եմ, որ դա թեկուզ անհրաժեշտ է, սակայն չպետք է շատ առաջ գնալ ու խորանալ և միայն քսան գիշեր ընթանալ, այնպես որ ամեն գինվոր կարողանա իր ձին անհրաժեշտ մթերքով բեռնավորել: Դա պետք է տեղի ունենա Սուբաթի (փետրվար) վերջում և ռազմիկները կարող են մնալ Ադար (մարտ) ամսից որոշ օրեր, քանզի այդ ժամանակ Թշնամին ու նրա անասունները (գրաստը) գտնվում են առավել թույլ վիճակում, իսկ նրանց արջառը ավելի շատ է լինում: Ապա մեր [գնդերը] վերադառնում են, որպեսզի ձիերը գարնանն արածացնեն:

Արդ, սկսենք նկարագրել [մահմեդական] պետության այն սահմա-

նային ամրոցությունները, որոնք ձգվում են դեպի աջ, հյուսիսային կողմերում, ապա վերջում հասնենք Ռումի մյուս սահմանները, որ գտնվում են արևմտյան կողմերում:

Կպատմենք Խազարաց սահմանների մասին, որոնք Հայաստանի կողմից են, մինչև որ հասնենք Խորեզմի սահմաններին՝ Խորասանի կողմից: Կավատի որդի Անուշիրուանը, երբ թագավոր դարձավ, Հայաստանում կառուցեց Շապորան, Մաղքութք և Դարբանդ (ալ-Բաբ ու-ալ-Աբուաբ) քաղաքները: Վերջինս կոչվել է Աբուաբ (Դռներ), քանզի կառուցված է լեռան կիրճերի վրա և [Անուշիրուանն] այնտեղ բնակեցրեց իր զորքերից մարդկանց, որոնց կոչեց Սիսականցիներ: Բայց քանի որ վախենում էր խազարների հարձակումներից, գրեց նրանց թագավորին խնդրելով խաղաղություն ու հաշտություն և որպեսզի իրար միանան, առաջարկեց իր դստերը հարս տալ բարեկամանալու ու խնամիանալու համար: Նա ուղարկեց նրան իր կանանցից մեկի որդեգրած մի դստերը, ասելով նրան թե իր դուստրն է: Խազարացին էլ ուղարկեց նրան իր դստերը: Ապա նրանք հանդիպեցին մի վայրում, որ կոչվում է Բարչալիա և օրերով զբաղվեցին գինարբուքով, ամեն մեկը մյուսին մտերմացավ, ցուցաբերելով իր բարյացակամություն ու հյուրասիրություն:

Սակայն Անուշիրուանն իր վստահելիներից ու մերձավորներից ոմանց պատվիրեց որ խազարացու ճամբարի մի կողմից հարձակում գործեն ու կրակ գցեն: Առավոտյան վերջինս բողոքեց Անուշիրուանին, իսկ սա երդվեց թե անտեղյակ է: Մի քանի գիշեր անց Անուշիրուանն իր մերձավորներին հրամայեց նույնը կրկնել: Այս անգամ զայրացավ խազարացին, սակայն Անուշիրուանը մեղմ խոսեց, ներողություն խնդրեց և սա լռեց: Ապա Անուշիրուանը հրամայեց կրակ գցել իր ճամբարի մի կողմը, որի հետևանքով վառվեցին խոտից ու ծառի ոստերից կառուցված հյուղակները: Առավոտյան Անուշիրուանը բողոքեց խազարացուն թե՝ քո մարդիկ քիչ էր մնում ամբողջ ճամբարս ոչնչացնեին, դու ինձանից վրեժ լուծեցիր: Սա երդվեց թե տեղյակ չէ: Այն ժամանակ Անուշիրուանն ասաց՝ ով եղբայր, իմ և քո գինվորները դժգոհ են մեր կնքած հաշտությունից, քանզի զրկվեցին մեր իրար դեմ կատարած արշավանքների ժամանակ ձեռք բերած (ավարից): Ես վստահ չեմ, որ նրանք չեն կատարի այնպիսի բան, որ մեր սրտերը պղտորի, բարեկամանալուց ու հարազատանալուց հետո և մենք նորեն թշնամանանք խնամիանալուց ու մտերմանալուց հետո: Ճիշտն այն է, որ ինձ թույլ տաս մի պարիսպ կառուցել իմ և քո միջև, որի վրա դուռ կսարքենք և քեզ մոտ գտնվողներն ինձ մոտ չեն մտնի, եթե չկամենանք: Խազարացին համաձայնեց ու վերադարձավ:

Անուշիրուանն սկսեց պարսպի շինարարությունը և այն կառուցեց ծովի կողմից ժայռով ու արճիճով: Լայնությունը դարձրեց երեք հար-

յուր կանգուն և բերեց կպցրեց լեռանը: Ապա հրամայեց նավերով տանել քարերը և նետել ծովը, այնպես որ ջրի մակերեսին հասնելով պարիսպը չարունակվի երեք մղոն հեռավորությամբ:

Երբ շինարարությունը վերջացրեց, մուտքի տեղում երկաթե դռներ հաստատեց և հարյուր հեծյալ պահակ կարգեց տեղում, մինչդեռ նախապես կարիք ուներ հիսուն հազար զինվորի և [պարսպի] վրան էլ մի պաշտպանական մեքենա (դարբաբա) դրեց:

Այն ժամանակ ասացին խազարացուն՝ նա քեզ խաբեց, ամուսնացրեց ոչ իր դստերը և պաշտպանվեց քեզանից: Սա ոչ մի հնար չգտավ և այսպիսով վերջ գտան խազարների Հայաստան կատարած արշավանքները, այն բանից հետո, երբ ավերել էին [երկիրը]:

Այստեղից դեպի աջ կան Դելմկաց (Դայլամ), Գեղանի (Ջիլան), Բաբրի ու Թայլասանի սահմանային ամրոցությունները: Կազուինի բերդը պարսկերեն կոչվում էր Քաշուին, որը նշանակում է երևացող սահման: Նրա և Դելումքի (Դայլամ) միջև կա մի լեռ, ուր Պարսից [թագավորությունը] ուներ ձիավոր ռազմիկների ջոկատ, որն այնտեղ ամրացված էր որպես կայազոր և ետ էր մղում դելմիկներին, երբ իրենց միջև պայմանագիր չէր լինում: Նրանք այդ վայրը պաշտպանում էին նրանց (դելմիկների) ավազակությունից:

[Դաշտարին] բաժանված է եղել Ռեյի ու Համադանի միջև, ուստի մի մասը կոչվել է Ռազի (Ռեյի) և մյուս մասը՝ Համադանի: Իսլամի նվաճման սկզբնական շրջանում մահմեդականների հարձակումներն սկսում էին Դաշտարիից ու Արհարից: Վերջինս մի բերդ է, որի մասին ասել են, թե Խոսրովներից (արքաներից) մեկն է կառուցել, մի վայրում, ուր բազում ակունքներ կան: Դելմիկների դրությունը մնում է անկայուն, քանզի ոչ կանոնավոր օրենք (չարիատ) ունեն, ոչ կայուն իշխանություն: Նվաճումից հետո չատ անգամ խախտել են հպատակության [պայմանը] և անհավատ դարձել: Մեր օրերում ունեն զգվելի բարքեր՝ երեխաներին սպանում են, մզկիթներում կանանց հետ անառակություն գործում, հրաժարվում աղոթքից և մահմեդական կրոնական պարտականություններից:

Մեծ սահմանային ամրոցություններից (սուղուր) է Թուրքաց [դեմ] սահմանային ամրոցությունը: Վրկանա երկրից այն կողմ նրանք ունեն մի անապատ, որից դուրս են գալիս հարձակման: Տեղի բնակիչները աղյուսե պարիսպ էին կառուցել նրանց ասպատակություններից պաշտպանվելու համար, սակայն Թուրքերը հաղթեցին և այդ հողը նվաճեց նրանց թագավորը, որը կոչվում է Սուլ: Ապա եկան նվաճեցին մահմեդականները (արաբները):

Թուրքերի մեծ մասն ապրում է այն սահմանային ամրոցությունների գոտում (սուղուր), որը Խորասանում է և կոչվում է Նուշջան և գտնվում է Սամարկանդի հետևում, նրա արևելյան կողմում, մոտավորա-

պես վաթսուն փարսախ (ֆարսախ) դեպի Շաչ ու Ֆարղանա: Սա մահմեդականների առաջին ամրություններից (մասալիհ) է Խարլախների (խարլախիյա) դեմ Քայմաքի կողմերում: Այս սահմանային ամրությունից մինչև Տաղազղուր քաղաքը քառասունհինգ օրվա քայլելու ճանապարհ է անապատներում, ուր կան աղբյուրներ, ապա քսան օրվա ճանապարհ՝ արոտավայրեր, ապա քսանհինգ օր՝ գյուղեր: Այդ գյուղերի բնակչության մեծամասնությունը զրադաչտական է, կան նաև հերձվածողներ (զանադիկա): Տաղազղուր քաղաքի մոտ կա մի լիճ, չուրջը գյուղերով ու չեն տարածությամբ: Ունի տասներկու երկաթե դուռ և բոլորը պահպանում են թուրքերը, որոնց մոտ տիրապետող է հերձվածությունը (զանդակա): Վերին Նուշաջանի ու Շաչ քաղաքի միջև քառասուն օրվա ճանապարհ է կարավանների համար, իսկ արագ ընթացողի համար՝ երեսուն օրվա: Վերին Նուշաջանը բաղկացած է չորս մեծ և հինգ փոքր քաղաքներից: Նուշաջանի ռազմիկները տեղավորված են մեկ քաղաքում, լճի ափին և նրանք քսան հազար ռազմիկ են դիվանով հաստատված: Թուրքերի մեջ չկան նրանցից ավելի զորեղները և նրանք տան են խարլախների հարյուրի նկատմամբ: Լիճը, որի վրա գտնվում է Տաղազղուր քաղաքը, հեռվից չրջապատված է լեռներով:

Սամարկանդից այն կողմ, և ինչպես ասվեց, նրանից վաթսունհինգ փարսախ հեռավորության վրա գտնվող Ստորին Նուշաջանի գլխավոր քաղաք Թարազից դեպի ձախ գտնվում է Քայմաք երկիրը: Նրա և Թարազի միջև ութսուն օրվա ճանապարհ է ընդարձակ անապատներում ու տափաստաններում, որտեղ արոտավայրեր ու աղբյուրներ կան: Մահմեդականները քիչ են արչավում թուրքերի դեմ մարգարեի այն խոսքի պատճառով, թե՝ թողնեք թուրքերին, եթե ձեզ հանգիստ են թողնում: Սակայն մենք հիշատակեցինք նրանց երկիրը և նրա վիճակը, քանի որ նախապես խոստացել էինք հիշատակել մահմեդական [թագավորությունը] չրջապատող ու նրան թշնամի ազգերին (ցեղերին):

Ինչ վերաբերում է Տիրեթին, ապա դա գտնվում է Տաղազղուր երկրից աջ դեպի հարավ: Երկկոտոչավորը (Ալեքսանդր) երբ հաղթեց Հնդկաստանի թագավոր Պորոսին (Ֆուր) ու սպանեց նրան, Հնդկաց երկրում մնաց յոթ ամիս և այնտեղից զորքեր ուղարկեց Տիրետ ու Ջինաստան: Ուղարկվածներից ոմանք վերադարձան ու հայտնեցին, որ արևելքի բոլոր թագավորները համաձայն են հպատակվել նրան ու հարկ վճարել, քանզի իմացել են նրա հաղթանակը Դարեհ (Դարա) ու Պորոսի՝ Պարսից ու Հնդկաց երկու թագավորների դեմ և նրա արդարությունն ու բարի վարքը: Նա իր վստահելիներից մեկին թողեց Հնդկաստանում երեսուն հազար զորքով, իսկ ինքը գնաց, մինչև հասավ Տիբեթ երկիրը: Ընդառաջ ելավ թագավորը իր թարգմաններով հանձնվելու նրան [.....]:

Ալեքսանդրը մնաց նրա (Ջինաց թագավորի) երկրում և կառուցեց մի քաղաք, որը կոչեց քարե աչտարակ (բուրջ ալ-հիջարա) և այնտեղ նչանակեց հինգ հազար պարսիկ ռազմիկներից կայազոր, որի գլխավորը նչանակեց իր ընկերներից մեկին կոչված Նեոկլիդես (Նաուքլիդես) [.....]

Ապա գնաց տափաստանային թուրքերի մոտ, նվաճեց ու ճնշեց նրանց: Լսեց որ այդ թուրքերից մի խումբ, որը մեծ բազմություն ուներ հյուսիս արևելյան կողմերում, ապականում է երկիրը: Նա հարցրեց Ջինաց տիրոջը նրանց մասին և սա հայտնեց, որ այնտեղ արջառից ու երկաթից բացի, այլ ավար չի կարելի գտնել և նրանց հյուսիսից պատում է Կանաչ ծովը, որն անանցանելի է, իսկ արևմուտքից ու հարավից երկինք ալացող լեռները նույնպես անմատչելի ու անանցանելի են: Այդ թուրքերը ոչ մի անցքի ճանապարհ չունեն, բացի մի նեղ կիրճից, պարանի նման և նրանք երկրի այնպիսի անկյունում են գտնվում, որ եթե այդ անցքը փակվի, կմնան ներսում և մարդիկ կազատվեն նրանց չարիքից և երկրից կվերանա նրանց ապականությունը: Ալեքսանդրը համոզվեց Ջինաց տիրոջ ցուցմունքների իրավացիությամբ և փակեց այդ կիրճը և ահա սա այն պարիսպն է, որը նկարագրել է Ալլահը և պատմել Ղուրանում:

Ապա երկկոտոչավորը վերադարձավ քաղաքների տեր կռապաշտ թուրքերի երկիրը և չարունակելով հասավ Սուղդ երկիրը: Այստեղ կառուցեց Սամարկանդը և Դաբբուսիյա կոչված քաղաքը և Հնոավոր Ալեքսանդրիան, ապա հասավ Բուխարայի հողը և կառուցեց Բուխարա քաղաքը, գնաց Մերվի հողը և կառուցեց համանուն քաղաքը, ինչպես նաև Հերատ և Զարնաջ քաղաքները: Դուրս եկավ Վրկան (Ջուրջան) և հրամայեց կառուցել Ռեյը, Սպահանը (Իսբահան), Համադանը, մինչև որ վերադարձավ Բաբելոնի (Բաբիլ) հողը և մնաց տարիներ:

Քանի որ հիշեցինք արևելքի սահմանային ամրությունները, ապա դառնանք դեպի հարավ ու պատմենք Բաջայի ու Նուբիայի (Նուբա) սահմանային ամրության (սաղր) մասին: Նրա բնակիչները հաչտության դաչինք ունեն բակթ կոչված հարկի վճարման պայմանով: Նրանց և մահմեդականների միջև պատերազմ չկա, իսկ նրանց հաչտության (դաչինքի) մասին կպատմենք յոթերորդ մասում (մանղիլա), որը կհաջորդի այս (վեցերորդ) մասին:

Այժմ հիշենք արևմուտքի (մաղրիբ) սահմանային ամրությունները (սուղուր), որոնց առաջինը Իֆրիկիան է, որի [մայրաքաղաքը] կոչվում է Կայրուան: Հենց նվաճումից հետո նա կառավարվել է Մրվանյանների[70] (Ումայանների) ձեռքով և ապա Իրաքի [Աբբասյան] թագավորի կողմից, մինչև որ նրան տիրացավ մեր օրերում Մաղրիբի [Ֆա-

Թիմյան] տերը ու անցավ, նվաճեց Բարկան և նրա տերը ևս դարձավ:

Իֆրիկիայից այն կողմ կա Թահիրթ երկիրը, որի և Իֆրիկիայի միջև հեռավորությունը երեսուն օրվա ճանապարհ է և գտնվում է Իբադիների[71] պետի ձեռքում, որոնք խարիջիների[72] մի տեսակն են:

Թահիրթից այն կողմ, քսանչորս օրվա ճանապարհ հեռավորության վրա, կա մուտազիլիների երկիրը, ուր իշխում է մի արդար պետ, որի [տոհմի] արդարությունը հորդառատ է և վարքը գովելի և նրանց տիրույթներն են Թանժեն ու նրա գավառները: Մեր օրերում նրա տիրակալը որդին է՝ Մուհամմադ իբն Իդրիս իբն Աբդալլահ իբն Հասան իբն Հասանի[73]: Մուհամմադը հաստատվել է Վորուբիլիս (Վալլիլա) վայրում, որը Թանժերի [նահանգի] վերջին քաղաքն է և այնտեղ էլ մեռավ: Նրա որդին տեղափոխվեց Ֆես և նրանք մինչև օրս այնտեղ են:

Սրանից այն կողմ Անդալուս երկիրն է, որի տիրակալն է Օմայան [խալիֆան] և նրա նստավայրը Կորդովան[74] (Կուրթուբա) է: Անդալուսը Արևմուտքում (Մաղրիբ) է և նրան չրջապատում են երկու ծովերը, որոնց նկարագրությունը տվել ենք:

Վերջացավ Հարկերի ու քարտուղարության մատյանի վեցերորդ մասը (մանղիլա):

ԿՈՒԴԱՄԱ ԻԲՆ ՋԱԱՖԱՐ

ՀԱՐԿԱՄԱՏՅԱՆ ԵՎ ԱՐՎԵՍՏ ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅԱՆ (ՔԻՏԱԲ ԱԼ-ԽԱՐԱՋ ՈՒԱ ՍԻՆԱԱՏ ԱԼ-ՔԻՏԱԲԱ)

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

[1] *Մանաղիլ – Մանղիլ (կայան) բառը սովորաբար օգտագործվում է հոգնակի՝ մանաղիլ ձևով և նշանակում է այն կայանները, որոնց հասնում է ճանապարհորդը մեկ օրվա ճանապարհ (մարհալա, հոգն. մարահիլ) գնալուց հետո: Նախկինում՝ մանղիլը քարավանների ճանապարհներին հանգստանալու վրաններ էին, իսկ հետագայում արդեն գիտակցվում էր որպես մայրուղիների վրա կառուցված տուն, որտեղ իջևանում էին ճանապարհորդները: (Manzil, P. A. Andrews, EOI, CD-ROM, (VI: 454b)): Մղոնը հավասար է չորջ երկու կիլոմետրի:*

[2] *Փարսախներ – Փարսախը հավասար է երեք մղոնի, այսինքն չորջ 6 կիլոմետրի: Տե՛ս Խալիֆա իբն Խայյաթ, ծնթգր. 5:*

[3] *Դինավար – Իրանի Ջիբալ նահանգի ամենակարևոր քաղաքներից մեկը: Դինավարը հիմնվել է դեռևս Սելևկյան դարաշրջանում: Նեհավենդի ճակատամարտում Սասանյանների վերջնական պարտությունից հետո, քաղաքը հանձնվել է արաբներին: Օմայան և Աբբասյան(Հզորության չրջանում) դարաշրջանում Դինավարը ծաղկուն քաղաք էր: Հետագայում, Ժ դարից հետո, անկում ապրեց, իսկ Լենգ Թիմուրի ժամանակ վերջնականապես կործանվեց (Dinawar, L. Lockhart, EOI, CD-ROM, (II: 299a)):*

[4] *Փայտակարան – (Բայլական) – Տե՛ս նաև Խալիֆա իբն Խայյաթ, ծնթգր. 15:*

[5] *Անդարաբ – Իրանական երկրներում հաճախ հանդիպող տեղանուն, որը նշանակում է «ջրերի միջև», «միջգետք»: Այստեղ հավանաբար խոսքը մի բնակավայրի մասին է Արդաբիլ գետի վրա, Ատրպատականում: (Andarab, V. Minorsky, EOI, CD-ROM, (I: 504a)):*

[6] *Մարաղա – Տե՛ս Բալաղուրի, ծնթգր. 231:*

[7] *Դահխաուական – Կամ Դահնախիրջան. Նիխորական գյուղ, կամ որ նույնն է Դեհխարգան ավանը Թավրիզից դեպի հարավ-արևմուտք. այժմ Աղերչահր: (Հակոբ Նալբանդյան, Արաբական աղբյուրները, էջ 170):*

[8] *Դավրեժ (Տաբրիզ) – Տե՛ս Բալաղուրի, ծնթգր. 235:*

[9] *Մարանդ – Տե՛ս Բալաղուրի, ծնթգր. 232:*

[10] *Սարատ – Տե՛ս Բալաղուրի, ծնթգր. 222:*

[11] *Նիր – կամ Նիրուհ: 13-րդ դարի աչխարհագրագետ Յակուտը իր Աչխարհագրական բառգրքի «ալ-Զավագան» (Անձևացիք) հոդվածում գրում է «Իսկ Մուսուլի տերերին են պատկանում Ակկի, Արվախ, Բախավիա, Բարխու, Քինքուր, Նիրուհ և Խավչար վայրերը»: (Հակոբ Նալբանդյան, Արաբական աղբյուրները, էջ 76-77):*

[12] *Մուղան – Կամ Մուկան: Տե՛ս Բալաղուրի, ծնթգր. 225:*

[13] *Ջարարուան – կամ Ջարբվանի բերդ, գտնվում է Ատրպատականում:*

[14] *Վադի – Հավանաբար Վադի ալ-Քուրդ բնակավայրն է: Տե՛ս Իբն Խորդադբեհ, ծնթգր. 19:*

[15] *Դարա – Քաղաք Միջագետքում, Եփրատ գետի մոտ:*

[16] *Հիան Մանսուր – Տե՛ս Բալաղուրի, ծնթգր. 93:*

[17] *Ջապետրա – Տե՛ս Իբն Կուտայբա, ծնթգր. 13:*

[18] *Հաղաս – Տե՛ս Խալիֆա իբն Խայյաթ, ծնթգր. 18:*

[19] *Մանսուրա – Տե՛ս Իբն Խորդադբեհ, ծնթգր. 7:*

[20] *Մուտավաքքիլիյա – Շամխոր քաղաքի այլ անվանումը: Իրն ալ-Ասիր պատմիչը գրում է «Սա (Շամխորը) մի հին քաղաք էր և չեն մնաց մինչև որ այն կործանեցին սևորդիք (Սիյավարդիյա) կոչվածները: [...] Բուղան այն վերականգնեց երկու հարյուր քառասուն թվականին (854/855) և այն կոչեց Մուտավաքքիլիյա Մուտավաքքիլ [խալիֆայի] անունով»: (Իրն ալ-Ասիր, էջ 56):*

[21] *Արդն – կամ Արդան, տե՛ս Խալիֆա իրն Խայյաթ, ծնթգր. 33:*

[22] *Խլաթ – Տե՛ս Խալիֆա իրն Խայյաթ, ծնթգր. 81:*

[23] *Բաղեչ – կամ Բաղիխ, տե՛ս Բալաղուրի, ծնթգր. 59:*

[24] *Բալխ գետ – կամ Բալիխ գետը (գետակը) եփրատի մեջ է թափվում նրա միջին հոսանքներում: (Վ. Տ.-Ղ.)*

[25] *Կաղխիյա – Տե՛ս Դինավարի, ծնթգր. 10:*

[26] *Աասան – Տե՛ս Ֆարղանի, ծնթգր. 37:*

[27] *Այս հատվածում բաղմակետերը ձեռագրում պակասող տեղերն են ցույց տալիս:*

[28] *Ռույան – Տե՛ս Ջահիզ, ծնթգր. 5:*

[29] *Սղերդ (Սիիրդ) – քաղաք Արևմտյան Հայաստանում, Բիթլիսի նահանգի Սղերդի գավառում, Բիթլիս քաղաքից 50–52 կմ հարավ-արևմուտք, Սղերդի գետի ափին, Սղերդ գավառի կենտրոնը: (ՀՀՇՏԲ, հ. 4, էջ 632):*

[30] *Սավադ – Տե՛ս Արու Յուսուֆ, ծնթգր. 11:*

[31] *Ահուազ – Տե՛ս Վակիդի, ծնթգր. 14:*

[32] *Ջադիրա – Տե՛ս Վակիդի, ծնթգր. 4:*

[33] *Մարջ – Տե՛ս Դինավարի, ծնթգր. 12:*

[34] *Հաղիսա – Տե՛ս Բալաղուրի, ծնթգր. 67:*

[35] *Մծրին – Տե՛ս Նասիբին, Բալաղուրի, ծնթգր. 44:*

[36] *Դարա – Տե՛ս Բալաղուրի, ծնթգր. 53:*

[37] *Մարդին – Տե՛ս Բալաղուրի, ծնթգր. 52:*

[38] *Սինջար – Տե՛ս Բալաղուրի, ծնթգր. 45:*

[39] *Ռաս ալ-Այն – Տե՛ս Խալիֆա իրն Խայյաթ, ծնթգր. 79:*

[40] *Խարուբ – Տե՛ս նաև Բալաղուրի , ծնթգր. 66:*

[41] *Արդն – կամ Արզան, տե՛ս Խալիֆա իրն Խայյաթ, ծնթգր. 33:*

[42] *Նփրկերտ – Մայափարիկին, տե՛ս Բալաղուրի, ծնթգր. 46:*

[43] *Տարոն – Տե՛ս Բալաղուրի, ծնթգր. 186:*

[44] *Բարղանդ – Տե՛ս Բալաղուրի, ծնթգր. 230:*

[45] *Բայաս – Կիլիկիայի նավահանգիստ, Այասի հիւսո դիմացը, Հայոց ծոցի արևելյան ծովափի վրա: Կոչվում է նաև Փայաս, Պայաս, Հռոմայեցիների կողմից Baiae: Ռուբինյանների ժամանակ ձկեր գավառի մասն էր կազմում: Առաջին խաչակիրներից հիշվում է «Կույսերի բերդ» անունով: Նրա հարավակողմը, Այեքսանդրետի ճանապարհի վրա գտնվում է Կիլիկյան Ասորոց դուռը, Pylae Syriae Ciliciae, իսկ 30 կիլոմետր դեպի հյուսիս-արևմուտք գտնվում է Իսոսը, որտեղ Այեքսանդր Մակեդոնացին վճռական հաղթանակ տարավ Պարսից թագավոր Դարեհ փոքրի դեմ: (Հակոբ Նալբանդյան, Արաբական աղբյուրներ, էջ 147), իսկ Յակուտը «Բայաս» հոդվածում գրում է «Փոքր քաղաք է Անտիոքի արևելակողմում և Մսիսի արևմտակողմում, ծովեզերքի մոտ: Նրա և Այեքսանդրետի միջև երկու փարասախ հեռավորություն է»: (Հակոբ Նալբանդյան, Արաբական աղբյուրներ, էջ 39):*

[46] *Նիկոպոլիս – քաղաք Կիլիկիայում: Հույները այդպես սկսեցին անվանել Իսոս քաղաքը 333 թ. այստեղ Այեքսանդր Մակեդոնացու պարսիկների դեմ տարած հաղթանակի առթիվ: Նիկոպոլիս հունարեն նշանակում է հաղթանակի քաղաք: (ՀՀՇՏԲ, հ. 3, էջ 988):*

[47] *Անատոլիկոն – Բյուզանդական բանակաթեմ Փոքր Ասիայի կենտրոնական մասում՝ Կապադովկիայից արևմուտք:*

[48] *Սելևկիա – Քաղաք Կիլիկիայում, Հին Պամփյուլիայում, Միջերկրական ծովի ափին, Սելևկիա (Իսավրիա) երկրամասի կենտրոնը: Զչփոթել սրանից արևելք, ղարձայ ծովափին, Կալիկադնոսի գետաբերանի մոտ գտնվող Սելևկիայի հետ: (ՀՀՇՏԲ, հ. 4, էջ 562):*

[49] *Ավասիմ – Տե՛ս Բալաղուրի, ծնթգր. 22:*

[50] *Կուրուս – Կյուրիս, բերդաքաղաք Հյուսիսային Ասորիքում, Կիլիկիայի սահմանի մոտ, համանուն երկրամասում: Անտիոքի ստորին կոմսություններից մեկի կենտրոնն էր: Հավանաբար մտնում էր Տյուքի գավառի մեջ: (ՀՀՇՏԲ, հ. 3, էջ 177)*

[51] *Միջագետքյան ամրությունները (ալ-սուղուր ալ-ջազարիյա) – Տե՛ս Արու Յուսուֆ, ծնթգր. 5:*

[52] *Ամորիոն (Ամմուրիյա) – Տե՛ս Իրն Կուտայբա, ծնթգր. 14:*

[53] *Քեսուն (Քայսում) – Տե՛ս Բալաղուրի, ծնթգր. 88:*

[54] *Խարսիանոն (Խարչանա) – Տե՛ս Իրն Կուտայբա, ծնթգր. 8:*

[55] *Խաղտիք – Տե՛ս Իրն Խորդադբեհ, ծնթգր. 13:*

[56] *Հայազգի Մլեհ (Մալիհ ալ-Արմանի) – Մլեհ մեծր կամ Հայազգի Մլեհը (Մալիհ ալ-Արմանի) Բյուզանդիայի Ռոմանոս Ա Լեկապենոս կայսեր հայազգի զորավարն էր, որն արաբների դեմ կռվում մեծ քաջություններ գործեց Կիլիկիայում և այլուր, եղել է Լիկանդյան բանակաթեմի ստրատեգ: (Իրն ալ-Ասիր, էջ 385):*

[57] *Բայալիկա (պավլիկյաններ) – Միջնադարյան աղանդավորական չարժում, որը ծագել է Հայաստանում, ապա տարածվել Բյուզանդական կայսրության փոքրասիական չրջաններում: Ենթադրվում է, որ պավլիկյան չարժումն առաջացել է 6 դարի վերջին: Հատկապես ուժեղ է եղել է–Թ դարերում: Պավլիկյան չարժման դեմ դաժան պայքար է մղել Բյուզանդական կայսրությունը: Թ դարի 70-ական թվականներից հետո աստիճանաբար թուլացել է: Բայց պավլիկյանների գաղափարները դեռ երկար ժամանակ պահպանվել են նպաստելով Հայաստանում Թոնդրակյան չարժման առաջացմանը, իսկ բոնի գաղթեցված պավլիկյանների միջոցով իր ազդեցությունն է ունեցել Եվրոպայում բոգոմիլների, կաթարների, այբիգոյցիների չարժումների առաջացման վրա: (Հայկ. սովետ. հանրագիտարան, հ. 9, էջ 140–141):*

[58] *Տյուք (Դուլուք) – Տե՛ս Բալաղուրի, ծնթգր. 89:*

[59] *Ռաաբան – Տե՛ս Բալաղուրի, ծնթգր. 90:*

[60] *Քիլիս – քաղաք Կիլիկիայում, Ադանայի նահանգի Ադանայի գավառում, Քիլիսի գավառակում, նրա կենտրոնը: (ՀՀՇՏԲ, հ. 5, էջ 369):*

[61] *Արմենիակոն (Արմինիակ) – Տե՛ս Բալաղուրի, ծնթգր. 103:*

[62] *Խաղտիք – Տե՛ս Իրն Խորդադբեհ, ծնթգր. 13:*

[63] *Պափլագոնիա (Աֆլաջունիա) – Տե՛ս Խալիֆա իրն Խայյաթ, ծնթգր. 62:*

[64] *Լաոդիկե – Լաղակիա, կամ Լաղակիյա – Ներկայում Սիրիայի խոչորագույն նավահանգիստը: Հայտնի էր դեռ փյունիկյան չրջանից: Հունարեն և լատիներեն կոչվում էր Լաոդիկեա: Արաբները այս անունը ձևափոխեցին Լաղակիյա, կամ Լադիկիյա: (al-Ladhikiyya, N. Elisseeff, EOI, CD-ROM, (V: 589b)):*

[65] *Տրիպոլի – կամ Տրիպոլիս: Ասորիքի նչանավոր քաղաք-նավահանգիստ: Արաբական աղբյուրներում կոչվել է Թարաբուլուս ալ-Շամ (Սիրիայի), տարբերելու համար Թարաբուլուս ալ-Ղարբից (արևմտյան), այսինքն Լիբիայի Տրիպոլիից: Կարևոր քաղաք էր թե՛ անտիկ չրջանում և թե՛ Արաբական խալիֆայության օրոք: Խաչակրաց արշավանքների ժամանակ դարձավ Տրիպոլիի կոմսության կենտրոնը: Ներկայում Լիբանանի հանրապետության մեծությամբ երկրորդ քաղաքն է: (Tarabulus al-Sham, F. Buhl-[C. E. Bosworth], EOI, CD-ROM, (X: 214a)):*

[66] *Տյուրոս (Սուր) – Տե՛ս Բալաղուրի, ծնթգր. 11:*

67 Ակրա (Աքքա) – Տե՛ս Բալաղուրի, ծնթգր. 10:

68 Գադա (Ղադդա) – Տե՛ս Բալաղուրի, ծնթգր. 9:

69 Ֆարմա – Տե՛ս Իբն Խորդադբեհ, ծնթգր. 21:

70 Մրվանյաններ – Տվյալ դեպքում խոսքը ոչ միայն Մրվանյան ընտանիքի անդամ խալիֆաների, այլև ընդհանրապես Օմայան դինաստիայի մասին է:

71 Իբադիներ – Խարիջիների հիմնական ճյուղերից մեկը: Ներկայումս դրա ներկայացուցիչներ կան Օմանում, Արևելյան Աֆրիկայում, Տրիպոլիտանիայում և Հարավային Ալժիրում: Աղանդի անվանումը ծագում է հիմնադիրներից մեկի անունից Աբդ Ալլահ իբն Իբադ ալ-Մուռրի ալ-Տամիմի: Արաբ մատենագիրները օգտագործում են և Իբադիյա և Արադիյա ձևը: Իբադիները հանդես եկան 684 – 685 թվականին, բայց այս ուղղությունն անկասկած առաջացել էր ավելի վաղ: (al-Ibadiyya, T. Lewicki, EOI, CD-ROM, (III: 648a)):

72 Խարիջիներ – Տե՛ս Բալաղուրի, ծնթգր. 165:

73 Մուհամմադ իբն Իդրիս իբն Աբդալլահ իբն Հասան իբն Հասան – Խոսքը Իդրիսիների պետության ներկայացուցիչ Մուհամմադի (828–836) մասին է: Համարվում է որ այս տոհմը ծագում է Ալի իբն Աբու Թալիբից ու Ֆաթիմայից: Դինաստիայի հիմնադիրն է Իդրիս Ա-ը, որը 788–789-ին հաստատվելով Մաղրիբի Սեուտա քաղաքում հիմնեց մի նոր պետություն իշխելով մինչև 792 թվականը: Նրան հաջորդեց իր որդին՝ Իդրիս Բ-ը (792–828): Նրա օրոք, դեռ իր հոր ժամանակ հիմնադրված Ֆես քաղաքը դարձավ Իդրիսիների պետության մայրաքաղաքը: Իդրիս Բ-ի մահից հետո, սկսվեց այս պետության քայքայումը: Իդրիս Բ-ը ուներ 12 որդի, որոնցից ավագը՝ Մուհամմադը, հաջորդեց իր հորը և իր տատի՝ Քանզայի առաջարկով պետությունը բաժանեց իր եղբայրներից առավել ավագների միջև, իրեն պահելով կենտրոնական մասը՝ Ֆես քաղաքով: Բաժանմանը հաջորդեց ներքին երկպառակություններ: Մուհամմադից սկսած Ֆեսի տիրակալները թեև համարվում էին ավագը մյուսների մեջ, սակայն Իդրիսիների պետությունն այլևս չմիավորվեց: Այն տրոհված վիճակով գոյատևեց մինչև 917 թվականը, երբ Ֆեսի վերջին տիրակալ Յահյա Դ-ը պարտություն կրելով Ֆաթիմյաններից, ստիպված էր ճանաչել վերջիններիս տիրապետությունը: (Idrisids (Adarisa), D. Eustache, EOI, CD-ROM, (III: 1035a)):

74 Կորդովա – Արաբ. ձևով Կուրտուբա, քաղաք հարավային Իսպանիայում, Մահմեդական Իսպանիայի կամ Անդալուսի մայրաքաղաքը: Կորդովան գտնվում էր Գվադալկվիվիր գետի (արաբ. ալ-Ուադի ալ-Քաբիր «մեծ հովիտ» կամ «մեծ գետ») միջին հոսանքի աջ ափին: Անդալուսի արաբական նվաճումից չատ չանցած 716–719 թվականներին, մայրաքաղաքը տեղափոխվեց Կորդովա, որից հետո այն դարեր շարունակ թե՛ Խալիֆայության կազմում, թե՛ որպես անկախ ամիրություն և թե՛ որպես Կորդովայի Օմայան խալիֆայություն, մնաց որպես մահմեդական Իսպանիայի մայրաքաղաք: (Kurtuba, C. F. Seybold [M. Ocana Jimenez], EOI, CD-ROM, (V: 509b)):

Ժ ԴԱՐԻ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԳԵՏՆԵՐ

ԻՍԹԱԽՐԻ (մահ. 951-ից հետո)

Արու Իսհակ Իբրահիմ իրն Մուհամմադ ալ-Ֆարիսին, հավանաբար ծագում էր Իրանի Իսթախր նահանգից (Ֆարս) և հենց այդ անունով էլ հայտնի դարձավ՝ ալ-Իսթախրի: Նա հանդիսանում է արաբական աշխարհագրական գիտության 10-րդ դարի դպրոցի առաջին և ամենակարևոր ներկայացուցիչներից մեկը:

Հավանաբար կյանքի ինչ որ մի շրջանում ալ-Իսթախրին հաստատվել է Իրաքում, գուցե Բաղդադում:

Նրա մասին հայտնի է միայն այն, որ իր կյանքի ընթացքում շատ է ճանապարհորդել մահմեդական աշխարհում (Մավերաննահր, Իրան, Արաբիա, Սիրիա և Եգիպտոս) ու մահացել է 951 թվականից հետո: Ալ-Իսթախրիից մեզ է հասել «Գիրք թագավորությունների ճանապարհների մասին» (Քիտաբ Մասալիք ալ-Մամալիք) երկը, որը մանրամասն նկարագրությունն է այն բոլոր երկրների, որ նա համարել է մահմեդական աշխարհի մաս կազմող: Այն առաջին խմբագրությամբ կազմվել է հավանաբար 930-933 թվականներին, բայց Արևելքում տարածվել է շուրջ 950-ին:

Ներկա թարգմանությունը կատարված է Bibliotheca Geographorum Arabicorum, M. J. de Goeje, v. I, Leiden, 1967 գրքից:

(R. Blachère et H. Darmaun, Extraits des Principaux Géographes Arabes du Moyen Age, Paris, 1957, p. 135, Крачковский, IV, стр. 196-197, al-Istakhri, A. Miquel, EOI, CD-ROM, (IV: 222b)):

ԻՍԹԱԽՐԻ

ԳԻՐՔ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՄԱՍԻՆ (ԿԻՏԱԲ ՄԱՍԱԼԻՔ ԱԼ-ՄԱՄԱԼԻՔ)

ՀԱՅԱՍՏԱՆ, ԱՌԱՆ, ԱՏՐՊԱՏԱԿԱՆ

ԼՂ 180–194

Ինչ վերաբերում է Հայաստանին, Առանին ու Ատրպատականին (Ադարբայջան), ապա մենք նրանց մեկ քարտեզի մեջ վերցրեցինք ու մեկ երկրամաս (իկլիմ) համարեցինք: Նրանց չրջապատում են արևելյան կողմից Ջիբալը, Դայլամը (Դեյլումք), և Խազարաց ծովի[1] արևմտյան ափը, իսկ արևմտյան կողմից նրանց չրջապատում են Հայոց (Արմաո) երկրի սահմանները, Ալանքը (ալ-Լան) և Ջազիրայի սահմանի մի մասը: Հյուսիսից նրան չրջապատում են Ալանքը և Կովկաս (Կարկ) լեռները, իսկ հարավից՝ Իրաքի սահմանն ու Ջազիրայի մի մասը:

Ատրպատականի ամենամեծ քաղաքը Արդաբիլն է, ուր կա զորակայանը (մուասքար) և կառավարչի նստավայրը (դար ալ-իմարա): Այս քաղաքը երկու երրորդ փարսախ երկարություն և այդքան էլ լայնություն ունի: Շրջապատված է պարսպով և ունի երեք դարպասներ (դռներ): Նրա չենքերի մեծ մասը կավից (թին) է կառուցված: Սա մի հարուստ քաղաք է էժան գներով: Ունի երկրագործական արվարձաններ (ռուստակ) և գավառներ (քուրա): Նրան մոտիկ կա մի լեռ, երկու փարսախ հեռավորության վրա, որը կոչվում է Սաբալան, մեծ և բարձր, որի վրա ձյունն անպակաս է, ձմեռ թե ամառ և այնտեղ ոչ ոք չի ապրում:

Արդաբիլից հետո մեծությամբ երկրորդը Մարաղան է, որը հնում եղել է զորակայան ու կառավարչի նստավայր: Մարաղան շատ բարեկարգ է, բարեբեր հողով, բազում այգիներով, երկրագործական արվարձաններով, ցանքատարածություններով: Նրա չուրջը եղել է պարիսպ, որը քանդել է Իբն Արու-լ-Սաջը[2]:

Մարաղայից հետո մեծությամբ հաջորդում է Ուրմիան, որը բարեկարգ քաղաք է, առատ բարիքներով, էժան գներով և գտնվում է Ուրմիա լճի վրա:

Մայանիջը, Խունաջը[3], Ուջանը, Դախաոականը[4], Խոյը[5] (Խուայ), Սալմաստը[6], Մարանդը[7], Տաբրիզը[8], Բարդանդը[9], Վարդանակերտը[10]

Մուղանը[11], Ջաբրավանը[12] և Ուչնուն փոքր և մեծությամբ իրար նման քաղաքներ են, իսկ Ջաբրավանը, Տարրիզը և Ուչնու ալ-Ադարբիյան, ապա այդ քաղաքները իրենց չրջակայքով կոչվում են ալ-Ռուդայնի:

Պարտավը շատ մեծ քաղաք է, կլինի փարսախով փարսախ: Սա բարեկարգ է, բարեբեր, բազում ցանքատարածություններով, առատ մրգերով: Իրաքի ու Խորասանի միջև ընկած տարածության մեջ, բացի Ռեյից ու Սպահանից, չկա ավելի մեծ կամ բարեբեր, լավ դիրքով ու հարմարություններով քաղաք, քան Պարտավը: Նրանից մեկ փարսախից պակաս հեռավորության վրա կա Անդարաբ կոչված վայրը, որը գտնվում է Քարնայի Լասուրի և Յակթանի միջև, մեկ օրվա ճանապարհից ավելի հեռավորությամբ: Այնտեղ կան խիտ ծառաստաններ, մրգաստաններ (բաղ)՝ ամրողջովին լի պտուղներով: Կա նաև ընտիր կաղին, ավելի լավ քան Սամարղանդինը, ինչպես նաև չագանակ (չահրալութ), ավելի լավ, քան Ասորիքի (Շամ) չագանակը: Կա մի պտուղ, որը կոչվում է Ռուկալ, սնձենու մրգի մեծությամբ. սա ունի մի կորիզ, որը քաղցրահամ է, երբ պտուղը հասուն է, սակայն դառն է, երբ չի հասունացած: Իսկ չագանակը սև ընկույզի կեսի չափ է և նրա համը կաղինի ու արմավի նման է: Պարտավում կա թուզ, որը Լասուրից է բերվում և թզի այլ տեսակներից գերազանց է: Այնտեղից շատ մետաքսե թել է բերվում և դա աճում է Թեթենու վրա, որը հանրային է, չունի սեփականատեր: Սա [մետաքսաթելը] մեծ քանակությամբ արտահանվում է Ֆարս ու Խուզիստան:

Պարտավից մեկ երրորդ փարսախ հեռավորության վրա է Կուր գետը, որի մեջ կա սուրմահի (չուրմահի) ձուկը և դա աղած վիճակում ամեն կողմ արտահանվում է: Կուրից հանվում է նաև զարակին կոչված ձուկը և աչուբան: Այս երկու ձկները ամեն տեսակի այլ ձկներից նախընտրելի են այդ կողմերում:

Պարտավի դռան մոտ, որը կոչվում է Բաբ ալ-Աբրաղ (քրդերի դուռ), կա մի չուկա, որը կոչվում է ալ-Քուրքի (կիրակի), և տարածությունը փարսախով փարսախ է: Մարդիկ այստեղ հավաքվում են ամեն կիրակի և գալիս են ամեն կողմերից, նույնիսկ Իրաքից: Սա ավելի մեծ է, քան Քուլսարայի չուկան: Քուրքի (քուրաքի) անունը արդեն դարձել է այդ օրվա անունը. նույնիսկ նրանցից շատերը, երբ չաբաթվա օրերն են հաչվում, ասում են՝ ալ-սաբտ (չաբաթ), ալ-քուրքի (կիրակի), ալ-իանայն (երկուչաբթի) և ալ-սուլասա (երեքչաբթի) և այսպես մինչև չաբաթվա վերջը:

Նրանց արքունի գանձարանը (բայտ ալ-մալ) գտնվում է մայր մզկիթում, ինչպես որ Ասորիքում, ուր գանձարանները մզկիթներում են գտնվում: Այս գանձարանը կապարով երեսապատված տանիք ունի, երկաթե դուռ և կանգնած է ինը սյուների վրա: Կառավարչի

նստավայրը քաղաքի մայր մզկիթի կողքին է, իսկ չուկաները արվարձանում են:

Դարբանդը (Բար ալ-Աբուաբ) մի քաղաք է ծովի ափին ու նրա կենտրոնում կա նավահանգիստ: Այս նավահանգստի ու ծովի միջև երկու ափերի վրա կառուցվել են երկու ամրարտակներ, այնպես, որ նեղացել է նավերի մուտքը և դա ոլորապտույտ է ու նրա բերնի վրա կա մի չղթա: Առանց հրամանի ոչ մի նավ չի կարող դուրս գալ, կամ մտնել: Այս երկու ամրարտակները ժայռից ու կապարից են:

Դարբանդը Թարարիստանի (Կասպից) ծովի վրա է և Արդաբիլից ավելի մեծ քաղաք է: Ունի ընդարձակ ցանքատարածություններ, սակայն պտուղները քիչ են, բացի այլևայլ նահանգներից բերվածից: Սա մի քաղաք է, որի չուրջը քարե, աղյուսե ու կավե պարիսպ կա: Խազարաց (Կասպից) ծովի նավահանգիստն (փարդա) է Սարիրի և անհավատների այլ երկրների համար, միաժամանակ նավահանգիստն է Վրկանի (Ջուրջան), Թարարիստանի ու Դայլամի: Նրանում պատրաստում են քթանե զգեստներ և մեյն Առանում, Հայաստանում ու Ատրպատականում է, որ քթանե զգեստներ են արտադրում: Այստեղ կա քրքում (դաաֆարան) և այստեղ բերվում են ստրուկներ անհավատների տարբեր երկրներից:

Տփղիսը Դարբանդից փոքր քաղաք է և ունի երկու կավե պարիսպ ու երեք դարպաս (դուռ): Շատ բարերեր է, առատ մրգերով ու ցանքսերով: Սահմանային ամրություն է: Նրանում կան բաղնիքներ, Տիբերիադայի բաղնիքների նման և դրանց ջուրը տաք է առանց կրակ [վառելու]: Առանում չկան քաղաքներ ավելի մեծ քան Պարտավը, Դարբանդը և Տփղիսը:

Իսկ Բայլականը, Վարդանակերտը, Բարդիջը, Բարզանդը, Շամախին, Շիրուանը, Աբխազը (ալ-Լայիջան), Շապորանը, Կապաղակը, Շաքեն, Գանձակը, Շամխորը և Խունանը, ապա բոլորն էլ իրար նման փոքր քաղաքներ են, բարերեր և լայն հարմարություններով:

Դվինը (Դաբիլ) Արդաբիլից մեծ քաղաք է և Հայաստանի մայրաքաղաքն է. նրանում է կառավարչի նստավայրը (դար ալ-իմարա), ինչպես Առանի կառավարչի նստավայրը Պարտավում է, իսկ Ատրպատականի կառավարչի նստավայրը՝ Արդաբիլում: Ունի պարիսպ և քրիստոնյաները նրանում մեծաթիվ են: Մայր մզկիթը նկեղեցու կողքին է: Նրանում արտադրում են բրդե գործվածքներ, ինչպես՝ գորգ, երեսի բարձեր (վասայիդ), հենաբարձեր (մակաիդ), գոտիներ (տիքքա) և այլ հայկական տեսակի (ասնաֆ ալ-արմանի) ապրանքներ: Ունեն մի ներկ, որը կոչվում է կարմիր (կիրմիզ), որով ներկում են բուրդը: Ինձ պատմել են, որ դա մի որդ է, որ ինքն իր վրա հյուսվում է, ինչպես մետաքսի որդը. պատմել են նաև, որ այնտեղից արտահանվում է մեծ քանակությամբ դիպակ (բաղյուն):

Սա Հայաստանի մայրաքաղաքն է, որտեղ կար Սմբատը Աշոտի որդին[13] (Սանբաթ իբն Աշոթ): Նա (Հայաստանը) գտնվում էր նրանց, քրիստոնյա մեծամեծների ձեռքում, և նրանք (հայերն) են, որ գերակշռում են Հայաստանի բնակչության մեջ: Սա Հայոց թագավորության (մամլաքատ ալ-Արման) է, որը սահմանակից է Հոռոմներին (Ռում). նրանց մի սահմանը հասնում է Պարտավ, մյուս սահմանը՝ Ջազիրա, իսկ մի սահմանը՝ Ատրպատական և Հայաստանից դեպի Հոռոմների կողմերը առաջին սահմանային ամրություններ կարնո քաղաքն (Կալիկալա) է, որի վրայով Ատրպատականի, Ջիբալի ու Ռեյի և այլ նահանգների ժողովուրդը արշավանքներ է կատարում [Բյուզանդիա]:

Նրանք Հոռոմների երկիրը մտնելու համար ունեն մի նավահանգիստ, որը հայտնի է Տրապիզոն անվամբ, ուր հավաքվում են վաճառականները և մտնում Հոռոմների երկիրը վաճառականության համար: Ինչքան բյուզանդական մետաքս, դիպակ և զգեստներ են բերվում այդ կողմերը, ապա Տրապիզոնի վրայով է [հասնում]:

Նախճավան, Բերկրի, Խլաթ, Մանազկերտ[14], Բաղնէ[15], Կարնո քաղաք, Արզն, Նփրկերտ և Շիրակ քաղաքները բոլորն էլ փոքր են, մեծությամբ իրար նման: Բոլորն էլ բարերեր հող ունեն և շեն են, լի բազում բարիքներով: Ոմանք Նփրկերտը Ջազիրայի մեջ են համարում, սակայն դա Տիգրիսից այս կողմ է, իսկ Ջազիրայի սահմանը Տիգրիսի ետևում է (այն կողմում է), ինչպես քարտեզում այն դրել ենք Տիգրիսի ու Եփրատի միջև, այդ պատճառով Հայաստանի մեջ ենք համարել:

Իսկ այս երկրների գետերը, որոնց վրա նավեր են գնում, հետևյալներն են՝ Կուրը (Քուռ), Արաքսը (ալ-Ռասս), իսկ Սաբիդուղը (Սաբիդ ռուդ), որն Արդաբիլի ու Զանջանի միջև է, մի գետ է, որի վրա նավեր չեն գնում նրա փոքր լինելու պատճառով: Կուրը քաղցր ջուր ունեցող գետ է, առողջարար ու թեթև: Բխում է լեռների կողմերից, հոսում է Գանձակի ու Շամխորի միջով հասնելով Տփղիսի մոտ, ապա անհավատների երկրներն է մտնում:

Արաքսը քաղցր ջուր ունեցող հաճելի գետ է: Բխում է Հայաստանից, հասնում Վարդանակերտի դուռը, ապա Մուղանի ետևի կողմով և Կուրի ելքի ետևով թափվում ծովը:

Ինչ վերաբերում է նրա ծովերին (լճերին), ապա Ատրպատականում կա մի լիճ Ուրմիա կոչված, աղի ջրով, ուր կան ձկներ, ինչպես նաև մի կենդանի, որը կոչվում է ջրաշուն: Սա ընդարձակ է և ամբողջ չրջակայքը շեն է գյուղերով, գյուղատնտեսական չրջաններով (ռաստաք): Լճի և Մարաղայի միջև երեք փարսախ է, նրա և Ուրմիայի միջև՝ երկու փարսախ, Դալսառականի և լճի ափի (չաթթ) միջև՝ չորս փարսախ: Նրա երկարությունը մոտավորապես չորս օրվա անասու-

նի երթի ճանապարհ է, իսկ նպաստավոր քամու պարագային, գուցե մեկ գիշերում գնան [նավերը]:

Հայաստանում կա մի լիճ, որը կոչվում է Արճեշի (Վանի) լիճ[16], որտեղից հանվում է տառեխ (թիոխիս) ձուկը, որն արտահանվում է բոլոր երկրները:

Նրանք ունեն Թաբարիստանի (Կասպից) ծովը, որի վրա կա Դարբանդը (Բաբ ալ-Աբուաբ) և Բաքուն (Բաքուհ), ուր նավթ (նաֆթ) կա:

Իսկ Տիգրիսը, ապա նրա մի փոքր մասը հոսում է Հայաստանում: Մենք Տիգրիսը ներկայացրել ենք Ջազիրայի ու Իրաքի քարտեզում: Պարտավի կողմերում բուծում են ջորիներ, որոնք ամեն կողմ արտահանվում են: Ստանում են նաև տորոնը, որը տարվում է Հնդկաստան և այլ շատ երկրներ:

Առանի սահմանները ձգվում են Դարբանդից մինչև Տփղիս: Արաքս գետի մոտ մի վայր կա, որը կոչվում է Հաջիրան: Ատրպատականի սահմանն է լեռը (ջաբալ) մինչև հասնում է Թարոմի ետևի կողմերը, մինչև Զանջանի սահմանը, Դինավարի ետևի կողմը, ապա պտտվում է Հուլուանի ու Շահրազուրի ետևի կողմը և հասնում Տիգրիսի մոտերքը, ապա անցնում Հայաստանի սահմանի երկայնքով, իսկ Հայաստանի սահմանները մենք արդեն ցույց ենք տվել:

Այս քաղաքներում գների էժանություն կա, այնպես որ որոշ վայրերում ոչխարը երկու դիրհեմ արժի, երբեմն որոշ գավառներում մեղրի երկու, նույնիսկ երեք մանները մեկ դիրհեմ է: Նրանում այնպիսի առատություն կա, որ եթե աչքով չտեսած մարդուն պատմես, չի հավատա, այնքան որ առատ է:

Այստեղ տարբեր կողմերում կան թագավորներ (մալիք), որոնց տիրույթները թագավորությունների նման են, ունեն ընդարձակ թագավորություն և հարստություն: Այդպիսիք են Շիրուանի (Շարուան) թագավորը, որը կոչվում է Շիրուանշահ և Արխազների (ալ-Լայիջան)* թագավորը՝ կոչված Արխազշահ (Լայիջանշահ):

Ատրպատականի, Հայաստանի և Առանի մեծ մասը լեռնոտ է: Դվինում կա մի հսկա լեռ, որը կոչվում է Մասիս (Հարիս) և նրա գագաթը կարելի չէ բարձրանալ, քանզի շատ բարձր է ու դժվար են բարձրանալու ճանապարհները: Ձյունը միշտ մնում է նրա վրա: Նրանից ցածր կա մի փոքր լեռ, որը կոչվում է Փոքր Մասիս (Հուայրաս): Մասիսից են գալիս նրանց ջրերը, նրանց փայտ հայթայթելու վայրն է և որսավայրը: Ասվում է, որ այս քաղաքներում նրանից ավելի բարձր լեռ չկա:

Արդաբիլի մանները[17] հազար քառասուն դիրհեմ է, ինչպես Շիրազի

* Բնագրում թեև կա Արխազ բառը, բայց այն անհավանական է: Ձեռագրական տարբերություններում կա Լայիջան բառը, որը շատ ավելի համոզիչ է:

մաննան, սակայն Շիրազում կոչվում է մաննա, իսկ Արդաբիլում ռաթլ[18]:

Ատրպատականի, Հայաստանի ու Առանի լեզուն պարսկերենն է ու արաբերենը: Սակայն Դվինում և շրջակա գավառներում բնակչությունը խոսում է հայերեն (արմանիյա, արմինիյա), իսկ Պարտավի շրջանում բնակչության լեզուն առաներենն (առանիյա) է: Ունեն լեռներ, որ կոչվում են Կովկաս (Կաբկ): Նրա չուրջը կան անհավատ [ժողովուրդներ], որոնք բազմաթիվ ու բազմազան լեզուներ են խոսում: Ատրպատականի, Հայաստանի և Առանի դրամը ոսկին (դինար) է և արծաթը (դիրհեմ) բոլոր տեսակներով:

Ճանապարհների երկարությունները այս նահանգներում.

Ճանապարհը Պարտավից Արդաբիլ: Պարտավից Յունան[19] յոթ փարսախ է, Յունանից Բայլական՝ յոթ փարսախ, Բայլականից Վարդանակերտ՝ յոթ փարսախ, Վարդանակերտից Բալխաբ՝ յոթ փարսախ, Բալխաբից Բարզանդ՝ յոթ փարսախ, իսկ Բարզանդից Արդաբիլ՝ տասնհինգ փարսախ:

Ճանապարհը Պարտավից Դարբանդ (Բաբ ալ-Աբուաբ): Պարտավից Բարզանդ տասնութ փարսախ է, Բարզանդից Կուրի ծանծաղուտը (անցահուն) դեպի Շամախի՝ տասնչորս փարսախ, Շամախիից Շիրուան՝ երեք օրվա ճանապարհ, Շիրուանից Աբխազ (Լայիջան)՝ երկու օրվա ճանապարհ, Աբխազից (Լայիջան) Սամուրի կամուրջը՝ տասներկու փարսախ, Սամուրի կամրջից Դարբանդ՝ քսան փարսախ:

Ճանապարհը Պարտավից Տփղիս: Պարտավից Գանձակ քաղաքը ինը փարսախ է, Գանձակից Շամխոր՝ տաս փարսախ, Շամխորից Խունան[20] քաղաքը՝ քսանմեկ փարսախ, Խունանից Կալաատ (բերդ) իրն Քանդաման բերդը՝ տաս փարսախ և Կալաատից Տփղիս՝ տասներկու փարսախ:

Ճանապարհը Պարտավից Դվին: Պարտավից Կաղանկատույս[21] (Կալկաթուս) ինը փարսախ է, Կաղանկատույսից Հաթերս[22] (Մատրիս, Հատրիս)՝ տասներեք փարսախ, Հաթերսից Զավդիս[23] (Դաուտիս, Դաուտիս)՝ տասներկու փարսախ, Զավդիսից Գեղարքունի[24] (Քիլ Քույ, Քիլքուն)՝ տասնվեց փարսախ, Գեղարքունիից Սիսական՝ տասնվեց փարսախ, Սիսականից Դվին՝ տասնվեց փարսախ: Ճանապարհը Պարտավից Դվին անցնում է Հայոց երկրի միջով և այս բոլոր գյուղերը Սմբատի՝ Աշոտի որդու թագավորության մեջ են:

Ճանապարհը Արդաբիլից Զանջան: Արդաբիլից մինչև Սաբիդ Ռուդի կամուրջը երկու օթևան (մարհալա) է, կամուրջից (Կանթարա) Սարաատ՝ մեկ օրվա ճանապարհ, Սարաատից Նույ՝ մեկ օր, Նույից Զանջան՝ մեկ օր:

Ճանապարհը Արդաբիլից Մարաղա: Արդաբիլից Մայանիջ քսան

փարասախ է, Մայանիջից Խունաջ քաղաքը՝ յոթ փարասախ, Խունաջից Քուլսարա, որը գյուղատնտեսական գավառ է և մեծ չուկա, բայց չունի [մզկիթի] բեմ (մինբար)՝ երեք փարասախ, Քուլսարայից Մարաղա՝ տաս փարասախ:

Ճանապարհը Արզաբիլից Ամիդ: Արդարիլից Մարաղա քառասուն փարասախ է, Մարաղայից Դախաուական, ուր կա [մզկիթի] բեմ, երկու օթևան է, նրանից մինչև Ուրմիա քաղաքը երկու օթևան է, Ուրմիայից Սալմաստ՝ երկու օթևան, Սալմաստից Խոյ՝ յոթ փարասախ, Խոյից Բևրկրի՝ երեսուն փարասախ, Բևրկրիից Արճեշ՝ մեկ օր, Արճեշից Խլաթ՝ երեք օր, Խլաթից Բաղեշ՝ մեկ օր, Բաղեշից Նեփրկերտ՝ երեք օր, Նեփրկերտից Ամիդ՝ երկու օր:

Ճանապարհը Մարաղայից Դվին: Մարաղայից Ուրմիա երեսուն փարասախ է, Ուրմիայից Սալմաստ՝ տասնչորս փարասախ, Սալմաստից Խոյ՝ յոթ փարասախ, Խոյից Նախճավան՝ երեք օր, Նախճավանից Դվին՝ չորս օթևան, Մարաղայից Դինավար՝ վաթսուն փարասախ և այնտեղ չկան [մզկիթի] բեմեր:

ԳԻՐՔ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՔԻՏԱԲ ՄԱՍԱԼԻՔ ԱԼ-ՄԱՄԱԼԻՔ

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

[1] Խաղարաց ծով – Կասպից ծով: Տե՛ս Խալիֆա իբն Խայյաթ, ծնթգր. 74:

[2] Իբն Արու-յ-Սաջը – Հավանաբար նկատի ունի Յուսուֆ իբն Արու-լ Սաջին: Սաջիները կամ Սաջյաններն զորավարների մի տոհմ է, որը կառավարում էր խալիֆայության հյուսիս-արևմտյան նահանգները. Ատրպատականը, ինչպես նաև Ադմանքն ու Հայաստանը 9-րդ դարի վերջին և 10-րդ դարի սկզբին Արքասյան խալիֆաների անունից: Սաջիները ծագում էին արևելյան Իրանից ու Միջին Ասիայից և ծառայել էին Արքասյան խալիֆաների բանակներում: Սրանք Միջին Ասիայի Ուշրուսանա քաղաքից ծագող պարսիկ իշխանական ընտանիք էր, որոշ չափով արաբացած: Նրանք կրում էին Աֆշին պատվանուն: Արքասյաններին տարբեր դիվանական ծառայություններ մատուցելով Սաջյանները բարձր դիրքեր գրավեցին և, ի վերջո, 889/890 թվականին սրանցից Մուհամմադը նշանակվեց Ատրպատականի կառավարիչ: Շատ չանցած սա պատերազմի մեջ մտավ Հայոց Թագավոր Սմբատ Բագրատունու դեմ: Սաջյանները չատ հետաքրքիր վիճակ ունեին, երբեմն նրանք հանդես էին գալիս իրրև խալիֆայության ենթականեր, երբեմն դեմ էին դուրս գալիս նույնինքն խալիֆային: Մուհամմադը մահացավ 901 թ-ին: Նրան փոխարինեց որդին Դեուդադը, բայց չանցած նա դուրս մղվեց իր հորեղբոր Արու-լ-Կասիմ Յուսուֆի կողմից, որը մայրաքաղաքը տեղափոխեց Մարաղայից Արդարիլ, կարգավորեց հարաբերությունները խալիֆայի հետ և հարձակման անցավ Հայաստանի դեմ: Յուսուֆը դոհվեց Քուֆայի մոտ կարմատների դեմ պայքարում, որտեղ նրան ուղարկել էր խալիֆան: Դրանից հետո Սաջյաններն աստիճանաբար թուլացան: (Sadjids, C. E. Bosworth, EOI, CD-ROM, (8: 745a)).

[3] Խունաջ – Ներկայում այս քաղաքը կոչվում է Քադաղ Քոնան և գտնվում է Իրանական Ադրբեջանի Հաչտաոուդի չրջանում: (Հակոբ Նալբանդյան, Արաբական աղբյուրներ, էջ 162): Իսկ Յակուտը իր «Խունա» հոդվածում գրում է «Ճիչտ անունը Խունաջ է, քաղաք է Ատրպատականի երկրում, Մարաղայի և Զանջանի միջև Ռեյի ճանապարհի վրա, և որ Ատրպատականի վերջին նահանգն է: Ներկայիս կոչվում է Քադեղ Քոնան, այսինքն թղթագործ արհեստավորներ: Այդ քաղաքի բնակիչները խորչում են իրենց քաղաքը Խունա կոչելուց (նշանակում է ամուսնուն անհավատարիմ կին, Հ. Ն.), այդ բառի պիղծ իմաստի պատճառով»: (Հակոբ Նալբանդյան, Արաբական աղբյուրներ, էջ 61)

[4] Դախաուական – Կամ Դահխաուական, տե՛ս Կուդամա, ծնթգր. 7:

[5] Խոյ – Տե՛ս Բալաղուրի, ծնթգր. 240:

[6] Սալմաստ – Տե՛ս Բալաղուրի, ծնթգր. 241:

[7] Մարանդ – Տե՛ս Բալաղուրի, ծնթգր. 232:

[8] Տարրիզ – Տե՛ս Բալաղուրի, ծնթգր. 235:

[9] Բարդանդ – Տե՛ս Բալաղուրի, ծնթգր. 230:

[10] Վարդանակերտ – Տե՛ս Խալիֆա իբն Խայյաթ, ծնթգր. 52:

[11] Մուղան – Տե՛ս Բալաղուրի, ծնթգր. 225:

[12] Ջարրաման – Գուցե Ջաբարուան, տե՛ս Կուդամա, ծնթգր. 13:

[13] Սմբատ Աչոտի որդի – Սմբատ Ա Բագրատունի՝ Թագավոր Հայոց 890-914 թվականներին: Սմբատ Ա-ր Հաջորդեց իր Հորր՝ Բագրատունյաց տոհմի առաջին անկախ

գահակալ Աչոտ Ա-ին: Սմբատ Ա-ի թագավորությունը ճանաչել են թե՛ Արաբական խալիֆայությունը և թե՛ Բյուզանդական կայսրությունը: Սմբատ Ա-ը վարել է կենտրոնացված ուժեղ պետություն հաստատելու քաղաքականություն: Նրա օրոք Բագրատունյաց թագավորությունն ընդգրկել է Հայաստանի մեծագույն մասը: Սմբատ Ա-ի օրոք սկսվեց ծանր պայքարը Աղրպատականի Սաջյանների հետ, որոնց խալիֆան չէր հրաժարվել Հայաստանում հարկեր հավաքելու իրավունք և ոստիկանի պաշտոն: 890-ական թվականներին Սմբատ Ա-ը փոփոխակի հաջողությամբ դիմադրում էր Սաջիներին բանակի ներխուժմանը Աֆշինի գլխավորությամբ: Պայքարն էլ ավելի դժվարացավ նրա հաջորդի՝ Յուսուֆի օրոք, մանավանդ այն բանից հետո, երբ խախտվեց երկրի ներքին միասնությունը (908-ին Յուսուֆը Սմբատ Ա-ի դեմ հանելու նպատակով Վասպուրականի իշխան Գագիկ Արծրունուն հռչակեց «Թագավոր Հայոց»): Ի վերջո, Սմբատ Ա-ի կյանքը ողբերգական ավարտ ունեցավ, 914 թվականին, նա ճարահատյալ, հանձնվեց Յուսուֆին: Վերջինս, դրժելով անձի անվտանգության պահպանման իր երդումը, Հայոց արքային չղթայակապ տարավ Դվին ու մահապատժի ենթարկեց: (Հայկ. սովետ. հանրագիտարան, հ. 10, էջ 451-452):

14 Մանազկերտ – Քաղաք Մեծ Հայքի Տուրուբերան աշխարհի Ապահունիք գավառում, Վանա լճից հյուսիս: Անունը ենթադրաբար կապվում է ուրարտական թագավոր Մենուայի հետ: (ՀՀՇՏԲ, հ. 3, էջ 679):

15 Բաղեշ (Բալլիս) - Տե՛ս Բալաղուրի, ծնթգր. 59:

16 Արճեշի լիճ - Տե՛ս Թիռիխի (Վանա) լիճ, Բալաղուրի, ծնթգր. 121:

17 Մանն –Ինչպես նշում է Խթախարին, Արդարիլի մեկ մաննը հավասար է 1040 դիրհեմի: Եթե նկատի ունենանք, որ մեկ դիրհեմը 3, 2 գրամ է, ուրեմն մեկ մաննը հավասար է 3, 328 կիլոգրամի: (Хинц, Меры и веса, стр. 27):

18 Ռաթլ - Իրանում հաճախ ռաթլը (լիտր) օգտագործվում էր մանի փոխարեն, թեև դրանք կշռի տարբեր միավորներ են: Օրինակ Իրաքում, մեկ մաններ հավասար էր երկու ռաթլի: (Хинц, Меры и веса, стр. 26):

19 Յունան – Տե՛ս Բալաղուրի, ծնթգր. 166:

20 Ռունան – կամ Հունարակերտ, տե՛ս Բալաղուրի, ծնթգր. 128:

21 Կաղանկատույց – Կաղանկատույք, գյուղաքաղաք Մեծ Հայքի Ուտիք աշխարհի Առանձնակ Ուտիք գավառում, Տրտու (Թարթառ) գետի ձախ կողմում, Պարտավ քաղաքից արևմուտք: Եղել է Դվին – Պարտավ ճանապարհի կարևոր կայաններից: (ՀՀՇՏԲ, հ. 2, էջ 907):

22 Հաթերս – Հաթերք-Դղյակ. Բերդ Մեծ Հայքի Արցախ աշխարհում, Խաչեն գավառում: Այժմ Հաթերք գյուղ ԼՂ Մարզակերտի շրջանում: (ՀՀՇՏԲ, հ. 3, էջ 304):

23 Ջավդիս – Ջավդեք: Սա գուցե Սոթքն (Ջող) է Մեծ Հայքի Սյունիք աշխարհում Սևանա լճի հարավ-արևելքում: (Վ. Տ.-Ղ): (ՀՀՇՏԲ, հ. 4, էջ 651):

24 Գեղարքունի - Գավառ և բնակավայր Մեծ Հայքի Սյունիք աշխարհում, Սևանա լճի արևմտյան ափին:

ԻԲՆ ՀԱՈՒԿԱԼ (մահ. 977-ից հետո)

Արու լ-Կասիմ Մուհամմադ Իբն Հաուկալը համարվում է աշխարհագրության մեջ ալ-Իսթախրիի գործի չարունակողը, նա ներկայացնում է իր դարաշրջանի այն գործչի կերպարը, որն իր մեջ միախառնում է արկածախնդիր վաճառականին ու գիտնականին:

Իբն Հաուկալը ծնվել է Մծբինում (Նիսիբին), Վերին Միջագետքում (Ջազիրա): Հավանաբար նրա մանկությունն անցել է իր ծննդավայրում:

Նա, որպես վաճառական, սկսում է ճանապարհորդել սկսած 943-ից, դուրս գալով Բաղդադից ու այցելելով բազմաթիվ երկրներ Հնդկաստանից մինչև Ատլանտյան օվկիանոս: Մասնավորապես այցելում է Հյուսիսային Աֆրիկա, Իսպանիա (Անդալուս) և Սահարայի հարավային գոտին (947-951), ապա Եգիպտոս, Հայաստան և Ատրպատական (955), Ջազիրա, Իրաք, Խուզիստան և Ֆարս (961-969), Խորեզմ և Տրանսօքսիանա (969) և վերջապես Սիկիլիա (973), որից հետո արդեն նրա անցած ուղին հայտնի չէ:

Ըստ իր աշխատանքի, նա չատ լավ ծանոթ է հատկապես Իսպանիային (Անդալուս) ու Արևմուտքի երկրներին: 951-ին երկարատև ճանապարհորդությունից վերադառնալով Բաղդադ, Իբն Հաուկալը հանդիպում է իր ավագ ժամանակակից ալ-Իսթախրիին, որը նրան խնդրում է խմբագրել ու ամբողջացնել իր աշխատանքը: Իբն Հաուկալը համաձայնվում է, բայց ի վերջո, որոշում է գրել իր ինքնուրույն աշխատանքը հենվելով իր նախորդի երկի վրա, ավելացնելով իր անձնական տեղեկություններն ու անվանելով այն արդեն ավանդական դարձած՝ «Քիտաբ ալ-Մասալիք ուա լ-Մամալիք» կամ «Սուրատ ալ-Արդ» (Երկրի պատկերը): Այս երկը հավանաբար գրվել է 967-ին և նվիրված է նշանավոր Համդանի ամիր Սայֆ ալ-Դաուլային, իսկ երկրորդ խմբագրությամբ չուրջ 977-ին: Եվ վերջապես աշխատանքի վերջնական տարբերակը ստեղծվել է հավանաբար 988 թվականին:

Դե Գույեն Իբն Հաուկալի բնագիրը հրատարակել էր ըստ Լեյդենի և Օքսֆորդի ձեռագրերի: Առաջին աշխարհամարտից հետո Հոլանդացի արաբագետ Յ. Կրամերսը Կոստանդնուպոլսում հայտնաբերեց մի նոր խմբագրություն, որը տարբերվում է նախորդներից: Իր նոր հրատարակության մեջ Կրամերսը Դե Գույեի հրատարակածի վրա ավելացրել է նորահայտ ձեռագրի և Փարիզի ձեռագրի (պարունա-

կում է հավելումներ 1139-1184 թթ.) հավելումները քառակուսի փակագծերի մեջ:

Ներկա թարգմանությունը կատարված է հետևյալ հրատարակությունից. Opus Geographicum auctore Ibn Haukal, ed. J. H. Kramers, Bibliotheca Geographorum Arabicorum, v. II, Leiden, 1967.

(R. Blachère et H. Darmaun, Extraits des Principaux Géographes Arabes du Moyen Age, Paris, 1957, p. 135-136, Крачковский, IV, стр. 199, *Ibn Hawkal, A. Miquel, EOI, CD-ROM, (III: 786b)).*

Տե՛ս նաև

- Opus Geographicum auctore Ibn Haukal, J. H. Kramers, Lugduni Batavorum, 1938.

- Bibliotheca Geographorum Arabicorum, M. J. de Goeje, v. II, Leiden, *1878.*

ԻԲՆ ՀԱՈՒԿԱԼ

ԵՐԿՐԻ ՊԱՏԿԵՐԸ (ՍՈՒՐԱՏ ԱԼ-ԱՐԴ)

էջ 5

Ես համառոտ կերպով չարադրել եմ երկարությունները և տվել եմ քաղաքների համապատասխան նկարագրությունը, նշելով անհրաժեշտ տվյալները: Երկրի ամբողջության համար, որը չրջապատված է անանցանելի Օվկիանոս (մուհիթ) ծովով, պատրաստել եմ մի քարտեզ, որը մասամբ նման է Կավադիանի քարտեզին, բայց որից չատ կետերում տարբերվում է: Ես հստակ կերպով տվել եմ ամեն մի նահանգի տեղանունը, ցույց տալով միացման գծերը մասերի միջև, ցույց եմ տվել ամեն մի նահանգի տարածությունը, իր արտաքին ձևով, թե նրա երկարությունը, լայնությունը, ձևերը, կլորությունը, քառանկյուն կամ եռանկյուն լինելը և այլ երկրաչափական կողմերը, որը նրա ձևը ներկայացնում է: Ճչտել եմ նահանգները, ամեն մի քաղաքի տեղադրումը, նշելով իր մերձավոր քաղաքի հետ ունեցած հարաբերությունը, նշելով նրա դիրքը հիմնական կետի նկատմամբ, լինի հյուսիս թե հարավ, կամ արևելք թե արևմուտք:

Ուստի ով այս քարտեզին դիմի, հստակ գաղափար կկազմի նրա տեղանքի մասին, ամեն մի չրջանի դիրքի, տեղագրության, ինչպես նաև այն մանրակրկիտ աշխատանքի մասին, որ ես կատարել եմ նրա դիրքի և արտաքին ձևի վերաբերյալ, պրպտումներս նրա պայմանների մասին և իմ տեղեկությունները, որ հավաքել եմ: Գուցե որոչ մարդիկ կասկած հայտնեն այն կարծիքի նկատմամբ, որ ես հայտնել եմ երկրի տարածության, մեծության և դիրքի մասին: Գուցե կարծվի թե այս գործը չի կարելի համեմատել Ջայհանիի[1] երկի հետ և չի համապատասխանում Իբն Խորդադբեհի տվյալներին: Մնում է ընթերցողին, Ալլահն առաջնորդի նրան, որ ուշադիր գննի այն փաստերը, որոնք տարակուսանք են առաջացնում և մտածի այն մարդու նման, որ ճչմարտության է փնտրում, ազատվելով պատմողների չափազանցություններից և ճանապարհորդների ստերից, որոնք չեն ձգտում ճչմարտության հասնել: Թող ընթերցողները լավ իմանան, որ այն պատճառները, որոնք ինձ մղեցին այս գիրքը գրել մի բարեխիղճ աշխատանք կատարելու հաճույքն է, ամեն մի երկրի նկարագրությունը հաջողությամբ գլուխ բերելու փափագն է, ինչպես նաև մտահոգու-

թյունը մտավորական մարդկանց մոտ լավ ընդունելություն գտնելու, նրանց ամեն մի հավաքույթի ժամանակ:

ԵՐԿՐԻ ԿԵՐՊԱՐԱՆՔԸ
Աբու-լ-Կասիմ իբն Հաուկալ Մծբնեցու (Նասիբի)

Նրա ձևերի նկարագրությունը, տարածությունը, երկարությունն ու լայնությունը, երկրների նահանգները (իկլիմները), տարբերությունը բնակելի և անբնակ երկրների միջև, վերցնելով իսլամական բոլոր երկրները, քաղաքների նկարագրությունը, բաժանելով ընդհանուր երևույթները, որոնք նրանց իրարից տարբերակում են:*

էջ 5-9

2. Իսլամի երկիրը բաժանել եմ ըստ նահանգների (իկլիմների), երկրամասերի ու գավառների: Սկսեցի Արաբաց երկրով և այն մեկ նահանգ համարեցի, քանզի նրանում է Քաաբան և քաղաքամայր Մեքքան: Դա ինձ համար բոլոր երկրների (իկլիմների) կենտրոնն է:

Արաբաց երկրից հետո, ցույց տալով նրանում եղած լեռները, ավազները, ճանապարհները և Պարսից ծովը (ծոցը) թափվող գետերը, մնջբերեցի Պարսից ծովը, քանզի նա չատ երկրների հետ կապված է: Ես պատկերեցի նրա ոլորանը. Պարսից ծովը Մասկաթ կղզուց հետո թեքվում է դեպի արևմուտք Մեքքայի և Կարմիր (Կուլզում) ծովի կողմը, Օմանից հիսուն փարսախ հեռավորության վրա և այդ վայրը կոչվում է Ռաս ալ-Ջումջումա (Գանգի հրվանդան)[2]:

Ապա հիշեցի Մաղրիբը և այն նկարեցի երկու պատկերով. նախ տվեցի Եգիպտոսի հողից մինչև Մահդիյա ու Կայրուան տարածությունը և նրա անապատում եղած քաղաքները, թեկուզ և թվով քիչ են, ապա տվեցի քարտեսի մեկ այլ մասը Կայրուանից ու Մահդիյայից մինչև Տանժեր (Թանջա) և Ազիլա: Նրա ծովի ափին նկարեցի քաղաքները, ամեն կողմ ընթացող ճանապարհները, դեպի արևմուտք և դեպի արևելք:

Հետո նկարեցի Եգիպտոսը (Միսր), նույնպես երկու պատկերով, Մաղրիբի նման: Երկար աշխատելով հիշեցի նրա քաղաքները և նրանց դիրքը հոսող ջրերի նկամամբ և նրանց հեռավորությունը նրանցից, ըստ քարտեզի: Գծագրեցի լեռներն ու ջրերն իրենց ծովածոցերով ու լեռնանցքներով և իրար հետ միացումներով ու անջա-

* *Իկլիմ (կլիմա) բառը արաբ մատենագիրների մոտ տարբեր իմաստներ ունի: Ըստ Համատեքստի այն կարող է նշանակել երկրների խումբ, երկրամաս, գոտի, կլիմայական գոտի, նահանգ և այլն:*

տումներով, նրանց թափվելը դեպի ծով, այնպես ինչպես Ֆայյումի ջուրը թափվում է Ակնա լիճը և Տանհամատը:

Նկարեցի Ասորիքը (Շամ) և նրա գլխավորական գոտիները (ջունդեր), լեռները, ջրերը՝ գետային ու ծովային, ծովափնյա քաղաքները, Տիբերիական (Թաբարիա) լիճը, Ջուղար լիճը (Մեռյալ ծով) և Իսրայելի որդիների անապատը ու նրա դիրքը Ասորիքի կողմից:

Ապա Ռումի (Միջերկրական) ծովը, նրա հատկանիշներն ու ձևերը, նրա արևելքում հոռոմներին պատկանող քաղաքները և Մաղրիբ նահանգի գավառները, Կալաբրիայում[3] (Կալաուրիա) եղած հոռոմների քաղաքները, Լոմբարդիան[4] (Անբուբարդա) և Զանկան (Նեղ ուղին), որը կոչվում է Պելոպոնես (Բալբունաս)[5]: Ռումի ծովից դուրս եկած նեղուցը, որը չրջապատում է Կոստանդնուպոլիսը (Կուսթանթինիա), Ռումի երկրի ջրերը, մեծ գետերը և քաղաքները: Անդալուսի քարտեզը մտցրեցի Մաղրիբի պատկերների մեջ, ուստի կրկին չեմ հիշելու: Այս ծովի մեջ նկարել եմ բնակեցված նշանավոր կղզիները, այնքան ինչքան անհրաժեշտ է հիշատակել, եթե չեն ու նշանավոր են:

Հետո հիշեցի նշանավոր Ջազիրան (Վերին Միջագետքը), որը հայտնի է Դիար Ռաբիա, Դիար Մուդար և Դիար Բաքր անունով, ինչպես նաև Տիգրիս (Դիջլա) ու Եփրատ (ալ-Ֆուրատ) գետերը, որոնք նրա սահմաններն են կազմում, նրա լեռները, բոլոր ճանապարհները և վիճակը:

Դրանից հետո բերել եմ Իրաքի քարտեզը (սուրատ), նրա ջրերը, ճահիճները (բաթայիհ), ջրերի ծովը թափվելը և թե ինչպես ջրանցքները ճյուղավորվելով նրանց (գետերի) մեջ են թափվում:

Հիշել եմ Խուզիստանի սահմանները, գետերը և ինչ որ պահանջում է նրա քարտեզը և նրա վիճակը: Նրանում տեղադրեցի նաև Ֆարսի քարտեզը, որ նկարագրում բոլոր գետերը, լճերը, քաղաքների դիրքը և ծովի կերպարանքը մերձափնյա քաղաքներով:

Հաջորդը Քիրմանի քարտեզն է, նրա ցամաքային մասը, ծովը, տափաստանները, լեռներն ու ճանապարհները:

Նկարել եմ Սինդը[6], նրա քաղաքները, ճանապարհները, ուղիները, նրա ծովը և այն քաղաքները, որոնք նրա ափին են: Նշանակել եմ Միհրան գետը[7], թե ինչպես է թափվում Մուլտանի[8] մոտ և նրան հարակից Հնդկաստանի (Հինդ) և մահմեդականների նահանգները:

Ապա դրել եմ Ատրպատականի, [Հայաստանի ու Առանի] քարտեզը, նշանակելով նրանում եղած լեռները, ճանապարհները, քաղցր գետերը, ինչպես Արաքսը (ալ-Ռաս) և Կուրը: Նկարել եմ նաև Խլաթի (Խիլաթ) լիճը և Կապուտան (Քաբուդան) լիճը, որոնք չեն միացած որևէ ծովի և ճշտել եմ Կովկաս (Կարկ) լեռը:

Տվել եմ Ջիրալի քարտեզը՝ նահանգներով, քաղաքների վայրերով, ցույց տալով թե ինչպես նրանք փոխվում են մերձենալով

Խորասանի ու Ֆարսի անապատին:

Ապա գետեղել եմ Ջիլի, Դայլամի ու Թաբարիստանի քարտեզը, ինչպես նաև Հարակից Խազարաց ծովը և մի քանի ճանապարհներ եմ հիշել, քանզի նրա մասին լավատեղյակ չեմ:

Հաջորդը Թաբարիստանի (Կասպից) լճի քարտեզն է, իր երկու կղզիներով և նրանում թափվող գետերով-ու շրջակա լեռներով, և թե ինչքանն է պատկանում իսլամին և ինչքանն՝ ուրիշներին:

Ցույց եմ տվել Ֆարսի ու Խորասանի միջև գտնվող անապատը և դեպի շրջակա և հարակից երկրներն ընթացող ճանապարհները:

Նրան հաջորդում է Սիջիստանը[9], իր հարևան Ղուր երկրով, լեռներով ու Զարահ լիճը[10] հոսող ջրերով:

Տվել եմ Խորասանի պատկերը և նրա կազմում եղած Թուխայրիստանը[11], Բամիանի լեռները, Թուսը և Կուհիստանը, իր բոլոր հոսող ջրերով, նշանավոր լեռներով, ավազներով ու հայտնի ճանապարհներով:

Վերջապես պատկերել եմ Ջայհուն գետը և նրանից այն կողմ գտնվող Բուխարայի, Սամարկանդի, Ուշրուսանայի, Ասբիջաբի, Շաշի ու Խորեզմի նահանգները, ինչպես նաև նրանց ջրերը և ուղիներն ու ճանապարհները:

3. Եվ ահա այս թերթի վրա կա ամբողջ Երկրի քարտեզը.

(Երկրի քարտեզի վրա եղած անուններն ու գրվածքները)

Քարտեզի վերևի կողմը գրված է՝ Հարավ, իսկ նրա տակը՝ աջ ու ձախ՝ Ամբողջ երկրի քարտեզը: Ներքևում գրված է՝ Հյուսիս, աջ կողմում՝ Մաղրիբ (արևմուտք), իսկ ձախ կողմում՝ Մաշրիկ (արևելք):

Երկիրը երկու մասի է բաժանված՝ հարավային ցամաքամասի և հյուսիսային ցամաքամասի: Հարավային ցամաքամասում նկարված է Նեղոսը (Նիլ), հարավում՝ Նուբիա (Նուբա), Դունկուլա[12] և Ուլուա, իսկ հյուսիսում՝ Վերին Սահդ[13], ապա՝ եգիպտոսի նահանգները: Այս ցամաքամասի ափին, Նեղոսի գետաբերանի աջ կողմում՝ Մաղրիբ երկիրը: Ապա նույն ցամաքամասի ներսում նշված է՝ Բարկան[14] և նրա նահանգները, ապա բարձրանալով դեպի աջ՝ Սուրտի և Աջդաբիայի նահանգները, Տրիպոլիսի (Թարաբուլուս)[15] նահանգը և գավառները, Իֆրիկիա նահանգը[16] և նրա գավառները: Ապա ցամաքամասի աննկյունում, Օվկիանոս ծովի ափին կա՝ Տանժեր (Թանջա) քաղաքը և նրա գավառները: Հետո ցամաքի երկարությամբ գրված է՝ Աուդաղաստը՝ մահմեդականներին պատկանող, Գանան (Ղանա) անհավատներին պատկանող, Քուղան անհավատներին պատկանող, Սաման՝ անհավատներին պատկանող, Ղարիուն՝ անհավատներին պատկանող և Քազմը՝ անհավատներին պատկանող: Այս անունների ետևում գրված է՝ Օվկիանոս ծովի վրա գտնվող թագավորություններ: Իսկ ափին՝ Հարավի անապատները (բարարի): Ցամաքամասի այն

անկյունում սկսում է՝ Պարսից ծովը, որի ափին՝ Սևամորթների (Զինջ) երկիրը, ապա՝ Տափաստան՝ սևամորթների և Եթովպիայի (Հարաչա) միջև, Եթովպիա երկիրը, որի և Նեղոսի միջև՝ Բաջայի տափաստանը և անապատները: Նեղոսի այն կողմում՝ Օագիններն ու նրանց գավառները: Ետևում կարդացվում է՝ Ջալուտի (Գողիաթ) որդու երկիրը, ապա՝ Սիջիլմասայի, Սուսի և Ադմաթի նահանգները:

Քարտեզի աջ կողմում, հյուսիսային ցամաքամասից դուրս նկած մի կտոր կոչվում է՝ Կոստանդնուպոլսի նեղուց, այս տեղում կարդացվում է՝ Ռումի երկիր, թեև երկիր բառի առաջին մասն ընկած է ցամաքի այն կողմում: Մոցի փոքր մասի ափի մեջտեղում կա՝ Կոստանդնուպոլիսը, որի ափի երկայնքով հետևում է՝ Մակեդոնիա (Մաջդունիա), ապա՝ Քասմիլի, Պելոպոնես (Բալբունաս), Բադրանտ, Վենետիկի ծոցը (Ջուն ալ-Բանադիկ), Օտրանտ (Ադրանտ), Կալաբրիա (Կալաուրիա), Լոմբարդիա (Անքուբարդա) նահանգը, Ֆրանկների երկիրը և Գալիցիա (Ջալիկիա), իսկ անկյունում՝ Անդալուս և Օվկիանոս ծովի ներքևի կողմը՝ Հյուսիսի (բևեռի) անապատներ:

Այս հյուսիս բառը ծոցի ձախ կողմում է, հյուսիսային ցամաքամասի այլ մասում: Հյուսիս բառի ետևում կարդացվում է՝ Գոգ (Յաջուջ) ու Մագոգ (Մաջուջ)[17]: Դեպի վեր՝ Սլավոններ[18] (Սակալիբա), ցամաքամասի փոքր հատվածում: Դրանից վեր արևելյան կողմում՝ բուլղարներ (Վոլգայի)[19], ռուսներ: Մոցի վրա կա՝ Տրապիզոն (Աթրաբուզանդա): Բուլղարների ու ռուսների կողքին գտնվող գետի վերևից կան՝ Բաշկիրդ[20], Բուրթաս[21], Խազարներ[22], պածինակներ[23] (բաջանաքիյա, պեչենեգներ), կրկին բուլղարներ (Դանուբի)[24], ապա՝ Սարիր երկիրը:

Դրանից վեր Հայաստան երկիրն է՝ Ներքին և Արտաքին, իսկ ձախ կողմը՝ Ատրպատական ու Առան (ալ-Ռան): Հայաստանի աջից՝ Տիգրիս գետը և Եփրատը, որոնց միջև՝ Ջազիրա (կղզի), իսկ Եփրատի ու [Միջերկրական] ծովի միջև կարդացվում է՝ Ասորիք (Շամ): Երկու գետերի գետաբերանի մոտ գրված է՝ Իրաք, իսկ դեպի վեր՝ Արաբաց երկիր:

Ապա Իրաքից ձախ ընկած ծովի վրա կարդացվում է Խուզիստան, Ֆարս, Քիրման, Սինդ, իսկ ետևում՝ Ջիբալ, Ֆարսի անապատ, Սիջիստան և ետևում՝ Դայլամ, Թաբարիստան, Խորեզմ, Ղուզդիյա, Խորասան: Խորասանի կողքին՝ Ջայհուն գետը (Ամու Դարիա), որի ետևում է Անդրգետյան (Մա վարա ան-նահր կամ Մավերաննահր) երկիրը: Ապա կարդացվում է՝ Ջինաստան (Սին), Հնդկաստան (Հինդ), ուր կա Միհրան գետը: Դրանից հետո Խարլուխիյա[25], Տիբեթ (Տուբբատ), իսկ Օվկիանոս ծովի վրա՝ Խրխիզ, Տաղուզղուզ և Ջինաց երկիր:

4. Ահա ամբողջ երկիրը բնակելի (չեն) և անբնակ մասերով: Նա բաժանված է թագավորությունների (պետությունների): Երկրի թա-

գավորությունների հենարանները չորան են՝ ամենախիտ բնակչությունը, ամենալավ քաղաքական կարգերը, ամենաչեն ու բարեկարգ վիճակը և ամենից ավելի հասույթ (հարկեր) բերելը: Այդպիսին է Իրանչահրը, որի կենտրոնն է Բաբելոնիան: Դա Պարսից թագավորությունն է:

Այս պետության սահմանները պարսիկների [թագավորների] օրոք հայտնի են, սակայն երբ երևան եկավ իսլամը, ամեն մի թագավորությունից մի մաս նվաճեց: Ռումից վերցրեց Ասորիքը, Եգիպտոսը, Մաղրիբը և Անդալուսը, Չինաստանի թագավորությունից՝ Մավերաննահրը և այն միացրեց իր ընդարձակ թագավորությանը:

Ռումի թագավորությունը ձգվում է մինչև սլավոնների սահմանները և մինչև հարևան ռուսները, Սարիրի երկիրը, ալանները (ալ-Լան), հայերը (ալ-Արման) և բոլոր նրանց, ովքեր քրիստոնեություն են դավանում:

Չինաց թագավորության մեջ մտնում են Թուրքերի երկիրը ու Տիբեթի մի մասը և նրանք, ովքեր կռապաշտության կրոնն են դավանում: Իսկ Հնդկաց երկրի մեջ մտնում են Սինդն ու Կաշմիրը և Տիբեթից մի մաս և նրանք, ովքեր նրանց կրոնն են դավանում:

Ես չեմ հիշում Սևերի (Սուդան) երկիրը[26] Արևմուտքում (Մաղրիբ) և Բաջան ու գինջերի (սևամորթ) երկիրը ու նրանց միջև գտնվող տարբեր ազգերին: Քանզի թագավորությունների կարգերի հիմքը կազմում են կրոնները, դպրությունը, իմաստությունն ու չեն վայրերի ամրացումը ուժեղ իշխանությամբ, իսկ վերջիններիս մոտ այդ հատկանիշները պակասում են և դրանից ոչինչ չունեն, այնպես որ նրանց թագավորությունները արժանի չեն առանձին հիշվելու, ինչպես մյուս թագավորությունները: Սակայն սևերից ոմանք, որ վերոհիշյալ հայտնի թագավորություններին մերձավոր են, ունեն կրոններ, սովորություններ ու իմաստություն և այդ երկրներին բնակությամբ մերձավոր են, ինչպես Նուբիան և Եթովպիան (Հաբաշա), որոնք քրիստոնյա են և հոռոմների ուսմունքին են հետևում: Իսլամի երևան գալուց առաջ նրանք հարակից էին Ռումի (Բյուզանդիայի) թագավորությանը, լինելով նրան հարևան, քանզի Նուբիան եգիպտոսին սահմանակից է, իսկ Եթովպիան Կարմիր (Կուլզում) ծովի վրա է և նրանց ու եգիպտոսի միջև կան բնակելի անապատներ, ուր ոսկու հանքեր կան և եգիպտոսի ու Ասորիքի հետ հարաբերության մեջ են Կարմիր ծովի ճանապարհով:

Ահա սրանք էին ծանոթ թագավորությունները (երկրները), երբ իսլամի թագավորությունը առաջացավ իր մոտ հավաքելով այդ թագավորությունների արժեքավոր կողմերը, ձեռք բերելով պատիվ ու հզորություն:

Երկիրը բաժանվում է հարավային ու հյուսիսային մասերի: Եվ եթե

սկսենք արևելքից՝ այն ծոցից, որը Չինաց երկրի Օվկիանոս ծովից է ծագում, մինչև այն Օվկիանոս ծովից դուրս եկող ծոցը (խալիջ), որը Մաղրիբի երկրների, Անդալուսի և Տանժերի միջև է, ապա երկիրը կարելի է երկու մասի բաժանել և բաժանման գիծը սկսելով Չինաց ծովից ճեղքում է Հնդկաց երկիրը և իսլամի երկրի մեջտեղով անցնում է Եգիպտոս և հասնում Մաղրիբ:

Ինչ վերաբերում է այս երկու մասերից հյուսիսայինին, ապա նրա բնակչությունը սպիտակ է, և ինչքան դեպի հյուսիս հեռանան, առավել ևս սպիտակ են դառնում, ու դրանք ցուրտ երկրներ են:

Իսկ այն երկու մասերից հարավայինը, ապա նրա բնակիչները սև են և ինչքան հեռանան դեպի հարավ, առավել սև են դառնում:

Այդ երկրների (թագավորությունների) մեջ ամենաչափավորները գտնվում են այն ուղիղ գծի վրա և նրա մերձակայքում:

էջ 10

6. Ամեն մի նահանգը հիշատակելու եմ ըստ իր սահմանակցի հետ ունեցած մերձավորության ու դիրքի: Իսլամի թագավորության սահմաններն են՝ արևելքում Հնդկաստանը և Պարսից ծովը, արևմուտքում՝ Սուդանի (սնամորթների) թագավորությունը, որի ժողովուրդն ապրում է Օվկիանոս ծովի վրա Աուդաղաստի տափաստաններին և անապատներին կից Աուլիլի կողմը: Նրա հյուսիսում գտնվում է Ռումի երկիրը և նրան հարակից Հայոց [երկիրը], Ալանաց [երկիրը], Առանը, Սարիրը, խազարները, ռուսները, բուլղարները, սլավոնները և Թուրքերի մի խումբ: Հյուսիսում են նաև Չինաց թագավորության մի մասը և սահմանակից Թուրքերը, իսկ հարավում Պարսից ծովն է:

Ռումի թագավորության սահմանը արևելքում իսլամի երկիրն է, արևմուտքում ու հարավում՝ Օվկիանոս ծովը, հյուսիսում՝ Չինաստանի մի մասը, քանզի ես սլավոններին, որոնք Թուրքերի ու Ռումի մեջ են ապրում, ինչպես նաև Ռումին հարող երկրները, Ռումին եմ կցում:

Չինաց թագավորության սահմանը հյուսիսում և արևելքում Օվկիանոս ծովն է, հարավում՝ Իսլամի երկիրը և Հնդկաստանը, արևմուտքում նույնպես Օվկիանոս ծովն է, քանզի Գոգ ու Մագոգը և նմանները, որոնք Օվկիանոս ծովի ափին են ապրում, Չինաց թագավորության մեջ են:

Հնդկաց երկիրն արևելքում ունի Պարսից ծովը, արևմուտքում ու հարավում՝ Խորասանը, հյուսիսում՝ Չինաստանը: Ահա այս են այն թագավորությունների սահմանները, որոնց հիշեցի:

Իսկ ծովերի ամենանշանավորները և ամենամեծերը երկուսն են՝ Պարսից ծովը և Ռումի ծովը, որոնք իրար հանդիպող ծովեր են և

բխում են Օվկիանոս ծովից: Նրանցից երկարությամբ ու լայնությամբ ամենաընդարձակը Պարսից ծովն[27] է: Եթե ցամաքից մոտենանք Պարսից ծովին, ապա Զինաստանի սահմանից մինչև Կարմիր (Կուլզում) ծովը, եթե ուղիղ գծով կտրես, ապա այդ հեռավորությունը երկու հարյուր օթևան կլինի:

էջ 11-12

7. Ռումի ծովը (Միջերկրական) սկսվում է Օվկիանոս ծովից՝ այն նեղուցից, որ Մաղրիբի ու Անդալուսի միջև կա[28] և երկարում է մինչև հասնում սահմանային այն ամրությունները, որոնք Ասորիքի անունով էին հիշվում: Այս ամբողջ երկարությունը անցնում են չորս ամսում: Նա ավելի լավ վիճակում է և նավարկելի, քան Պարսից ծովը, քանզի եթե վերոհիշյալ նեղուցից սկսես նավարկել, ապա միևնույն քամին քեզ ծովի մեծ մասով կտանի: Կարմիր ծովի, որը Պարսից ծովի մի լեզուն (ճյուղն) է և Ռումի ծովի միջև Ֆարամայի ուղղությամբ հեռավորությունը երեք օթևան է: Ռումի ծովը Ֆարամայից հետո ավելի քան քսան օթևան է երկարում, որի մասին ասված է Մաղրիբի բաժնում և կարիք չկա կրկնելու: Եգիպտոսից մինչև Մաղրիբի ծայրը հարյուր ութսուն օթևան է: Այսպիսով, երկրի հեռավոր արևմուտքից մինչև հեռավոր արևելքը (Զինաստան), մոտավորապես չորս հարյուր օթևան է (մարհալա):

էջ 13

9. Խազարաց (Կասպից) ծովը ոչինչ չի ստանում այդ երկու ծովերից: Այս ծովի մասին շատ բաներ են պատմել մեծ հեղինակները: Կարդացել եմ մի քանի աշխարհագրական մատյաններում, որ նա իբր Ռումի ծովից ջուր է ստանում ըստ Պտղոմեոսի վկայության: Սակայն քավ լիցի, որ այդպիսի բան ասած լինի Պտղոմեոսը, անհնարին է, որ նա անհավատալի բան պատմեր:

Խազարաց ծովը ցածր վայրում է և սնվում է քաղցր ջրով: Նրա մեջ թափվող գետերն են՝ Իթիլը (Ատել)[29], որը նրա ամենամեծ սնուցողն է, դա ռուսաց գետն է: Ապա թափվում են Կուր ու Արաքս, գետերը, ինչպես նաև Գեղանի (Ջիլ), Դելմիկների (Դայլամ), Թաբարիստանի և Ղուզղիյայի ջրերը, որոնք բոլորը քաղցր ջրեր են:

Մեր օրերում ու ժամանակներում Իսլամի թագավորությունը (երկիրը) իր երկարությամբ ձգվում է Ֆարղանայի սահմանից կտրելով Խորասանը, Ջիբալը, Իրաքը և Արաբաց երկիրը, մինչև Եմենի ափերը և դա հինգ ամսվա [ճանապարհ] է: Իսկ լայնությամբ Ռումի (Բյուզանդիայի) երկրից գալիս կտրում է Ասորիքը, Ջազիրան, Իրաքը, Ֆարսը, Քիրմանը մինչև Մանսուրայի հողը Պարսից ծովի (ծոցի) ափին և դա չորս ամսվա [ճանապարհ] է:

Իսլամի երկրի (Թագավորության) երկարությունը հիշելիս բաց Թողեցի Մաղրիբի սահմանները մինչև Անդալուս, որը նման է գգեստի մեջ թեզանիքի: Մաղրիբից արևելք ու նրանից արևմուտք չկա իսլամ, քանզի եթե անցնես եգիպտոսը գնալով դեպի Մաղրիբ, ապա Մաղրիբի հարավում Սուդան երկիրն է, իսկ նրանից հյուսիս Ռումի (Միջերկրական) ծովը և ապա Ռումի երկիրը: Եվ եթե հարմար լիներ իսլամի երկիրը հաշվել Ֆարղանայից մինչև Մաղրիբ և Անդալուս, ապա դա կլիներ երեք հարյուր օթևան (մարհալա) ճանապարհ:

ԱՐԱԲԱՑ ԵՐԿԻՐԸ

[.....]

էջ 25

9. Բահրայնի քաղաքներն են Հաջարը, Ահսան, Կաթիֆը, Ակիրը, Բիչան, Խարջը և Ավալը: Սա մի կղզու վրա է, որը պատկանել է Աբու Սաիդ ալ-Հասան իբն Բահրամին և նրա որդուն՝ Սուլայմանին, որոնք շատ բարձր հարկեր (դարիբա) են գանձում այստեղ խարխես նետած նավերից: Մինչև այսօր այդ իրավունքը պատկանում է նրա հետնորդներին ու ժառանգորդներին, որոնք այժմ չորս հարյուր հոգի են՝ կանայք ու երեխաներ: Բահրայնը տարբեր հասույթի աղբյուրներ ունի՝ տասանորդներ, կողմնակի հարկեր, հողային հարկեր, մաքսեր, տարանցիկ առևտրի տուրքեր այն ամենից ինչ գալիս է Բասրայի ու Քուֆայի տափաստաններից ու Մեքքայի ճանապարհից:

էջ 31 - 32

17. Ալ-Ջաբը Մադինայի նավահանգիստն է, նրանից երեք օթևան հեռավորության վրա [Կարմիր] ծովի ափին, սակայն ավելի փոքր է քան Ջուդդան (Ջիդդա): Ջուդդան Մեքքայի բնակիչների նավահանգիստն է, նրանից երկու օթևան հեռավորության վրա, [Կարմիր] ծովի ափին: Նախկինում Ջուդդան չեն է եղել, աչքսւյժ առևտրով, փարթամությամբ: Հիջազում Մեքքայից հետո չի եղել մի քաղաք, որն այսքան հարստություն ու ապրանքներ ունենար: Այս քաղաքի առևտուրը պարսիկների միջոցով էր կատարվում, բայց այն բանից հետո, երբ Իբն Ջաաֆար ալ-Հասանին այստեղ հաստատվեց, քաղաքի մեծամեծները ցրվեցին և նրա դրությունը վատացավ:

ԷՋ 36-37

27. Ամբողջ Եմենում չկա ավելի մեծ և հանգստավետ քաղաք, քան Սանաան է: Քաղաքը գտնվում է հասարակածի վրա: Ջափավոր կլիմա ունեցող քաղաք է, այնպես որ մարդը, ձմեռ կամ ամառ, տեղից տեղ փոխադրվելու կարիք չունի: Նրանում գիշերվա ու ցերեկվա ժամերը հավասար են, քանզի արևի առանցքը նրանում չափավոր է: Բռոտությունը տարածված է արևի թույլ լինելու և մարդկանց մարմինների վրա թույլ ազդեցություն ունենալու պատճառով:

Այստեղ էր Հին ժամանակներում Եմենի թագավորների նստավայրը: Կա մի հսկայական շինության ավերակները և դա մի մեծ բլուր է, որը կոչվում է Ղամդան: Սա Եմենի թագավորների ապարանքն է եղել և Եմենում նրանից ավելի բարձր շենք չկա, թեև ավերակ վիճակում է:

ԷՋ 37

30. Ադենը (Ադան) փոքր քաղաք է, սակայն հայտնի իր ծովային նավահանգստով, ուր իջնում են ծովում նավարկողները: Եմենում կան ավելի մեծ քաղաքներ, սակայն նրա հռչակը չունեն:

ԷՋ 38

32. Օմանը (Ուման) մի երկիր է անկախ գավառներով, ընդարձակ: Առատ արմավենիներ ունի և տաք երկրների պտուղներ, ինչպես բանանը, նուռը և լոտուսը (նարկ) ու այլ նման բաներ: Նրա մայրաքաղաքն է Սուհարը, որը ծովի ափին է: Վաճառականներն ու ապրանքներն այնտեղ անհամար են իրենց շատությամբ: Սա Օմանի ամենաշեն ու ամենահարուստ քաղաքն է: Ամբողջ Պարսից ծոցի իսլամական երկրներում չկա ավելի շեն ու հարուստ քաղաք, քան Սուհարը: Նրան ենթակա են շատ քաղաքներ և ասվում է, որ նրա չրջակա գավառները երեք հարյուր փարասախի վրա են տարածվում:

ԷՋ 39

33. Եմենի Սաբա երկրամասում Հիմյարի ցեղերն են տարածված, ինչպես նաև Հադրամաուտում: Համդան, Աշաար, Քինդա և Խաուլան ցեղերի տիրույթները տարածված են Եմենի տարբեր կողմերում և իրարից բաժանված են բերդերով ու ցանքատարածություններով:

ՊԱՐՍԻՑ ԾՈՎԸ (ԾՈՑԸ)

[.....]

ԷՋ 53

Իսկ Կուլզումը (Սուեզ, Կլիզմա) քաղաք է ծովի ափին մի հողի վրա, ուր ծովը վերջանում է: Նա տեղադրված է ծովի մի կորության վրա, լեզվակի վերջում: Նրանում չկան մշակելի հողեր, ծառեր ու ջրի աղբյուրներ: Ջուրը նրանց մոտ բերվում է հեռավոր ջրհորներից ու ջրի հեռավոր վայրերից: Քաղաքը լրիվ չեն է և դա նավահանգիստն է Եգիպտոսի ու Ասորիքի և նրա վրայով են տարվում Ասորիքի ու Եգիպտոսի ապրանքները դեպի Հիջազ, Եմեն ու նրա ափերը: Նրա (Կուլզումի) ու Եգիպտոսի մայրաքաղաքի (Կահիրե) միջև ճանապարհը երկու օթևան (մարհալա) է:

Ցամաքի վրա ընթանալով ոչ մի գյուղի կամ քաղաքի չենք հանդիպի, բացի այնպիսի վայրերից, ուր մարդիկ ծովում ձկնորսություն են անում և կան արմավենիներ: Ապա ճանապարհը գնում հասնում է Տարան ու Ջարիլան և [Սինայի] անապատի [թուր] լեռան երկարությամբ հասնում ենք Այլատ:

Այլատը մի փոքրիկ չեն քաղաք է, քիչ հողամշակությամբ և այնտեղ ապրում են հրեաներ, որոնց Աստված արգելեց չաբաթ օրը ձուկ որսալ:

ԷՋ 54

Ապա [Պարսից ծոցի ափը] հասնում է Սիրաֆ, որը Ֆարսի մեծագույն նավահանգիստն է և կարևոր քաղաք է: Նրա չենքերը կառուցված են հնդկական կաղնու (սաջ) փայտից և հասնում ու կպչում են դեպի ծովը նայող մի լեռան: Լավ ջուր չունի, կամ մշակելի հողեր կամ անասուններ, սակայն Ֆարսի ամենահարուստ քաղաքն է:

ՄԱՂՐԻԲԸ

ԷՋ 71

Մահդիյան փոքր քաղաք է, որը վերջերս կառուցել է Մաղրիբի տեր Մահդին և այն կոչել է այս անվամբ: Սա ծովի ափին է և այնտեղ է փոխադրվել երեք հարյուր ութսուն թվականին (920) Ռակկադայից, որը Կայրուանի մոտ է: Նա Կայրուանից երկու օթևան (մարհալա) հեռավորության վրա է, երկրի բոլոր կողմերի նավահանգիստն է և ունի աչքսույժ առևտուր, չրջապատված է լավ պարսպով, որն ամուր կառուցվածք ունի: Քաղաքի քարե պարսպի վրա կան երկու դռներ,

որոնց նմանը չկա որևէ երկրում, բացի Աֆրիկայի պարսպի երկու դռներից, որոնց նմանությամբ է սա կառուցվել և նույն ոճն ունի: Քաղաքում կան բազում պալատներ, մաքուր բնակարաններ ու տներ, բարեկարգ բաղնիքներ, իջևանատներ (խան), առատ ու ընտիր մրգեր ու բերքեր: Քաղաքի ներսը հաճելի է, իսկ դրսից գեղեցիկ է: Այնտեղ այցելել եմ [ներկ հարյուր] երեսունվեցին (947). նրա իշխանները զինված էին, դորքերը քաջարի պաշտպաններ էին, իսկ վաճառականները՝ աշխույժ: Սակայն [հետագայում] նրա վիճակը վատացավ, նրա մարդիկ այնտեղից տեղափոխվեցին, նրը նրանց իշխանները փոխադրվեցին ու հեռացան:

Մարդիկ հեռացան նրը [Ֆաթիմյան խալիֆա] Մանսուրը[30] նրանից տեղափոխվեց և ապրեց Մանսուրիյայում, որը Կայրուանի ետևում է:

էջ 73–74

Եվ այնտեղ է Թունիս քաղաքը, որը շատ հին է և շատ քիչ հոսող ջրեր ունի: Այս քաղաքից շատ հասույթ են ստանում և տերերին մեծ չահույթ է բերում: Նրա չրջակայքը շատ բարերեր է առատ բերքերով: Նրանում պատրաստում են լավորակ բազմերանգ ամանեղեն (սպասք) և բարձրորակ խեցեղեն՝ նույնքան գեղեցիկ, ինչքան Իրաքից ներմուծվածը:

Հնում նրա անունը եղել է Տուրշիշ, սակայն երբ մահմեդականները կառուցումներ են կատարել և այգիներ ու պարիսպներ են պատրաստել, կոչվել է Թունիս: Նա կից է Կարթագենին:

Նա հայտնի է իր պտուղներով, որոնք առատ են ու լավորակ, ընտիր մրգատու ծառերով, առողջարար կլիմայով և առատ երկրագործական արտադրանքով, ինչպես բամբակը, որը տարվում է Կայրուան հույժ չահավետ պայմաններով, ապա կանեփը, քնմունը (չաման), ասփուրը (գաթայի ծաղիկ), մեղրը, յուղը, հացահատիկները և առատ արջառը:

էջ 76

Ալժիրը (Ջազայիր Բանի Մազղաննայ) չրջապատված է պարսպով ու ծովի ափին է: Շատ չուկաներ ունի ու վճիտ աղբյուրներ, որոնցից խմում են: Նրա չրջակայքում կան ընդարձակ անապատներ (բադիա), լեռներ, ուր բերրերներն են ապրում: Նրանց հարստությունը բաղկացած է կովերի մեծ նախիրներից ու ոչխարների մեծ հոտերից, որոնք լեռներում արածում են: Նրանց մեղրը, յուղը, արմավն այնքան առատ է, որ վաճառքի է տարվում Կայրուան և այլուր: Քաղաքի դիմաց մեկ նետընկեց հեռավորության վրա կա մի կղզի, ուր քաղաքի բնակիչ-

ներն ապաստանում են թշնամու հարձակման պարագային և պաշտպանվում իրենց սպառնացողներից:

էջ 90–91

Ֆեսը (Ֆաս) կարևոր քաղաք է, որի միջով մի գետ է անցնում նրան երկու կողմերի բաժանելով, որտեղ տարբեր ամիրներն են իշխում և երկու կողմերի միջև անվերջ են խռովություններն ու սպանությունները: Այդ գետը մեծ է, ջրառատ ու վրան չատ ջրաղացներ կան:

Դա մի հարուստ քաղաք է և սալահատակված: Այն կառուցել է Իդրիս իբն Իդրիսը[31]: Ամռանը ամեն օր նրա չուկաները գետի ջրով լվացվում են և սալաքարերը թարմանում են: Նրա պտուղները, բերքերը, ուտելիքները, խմիչքները (մաչարիբ), ապրանքները, տարբեր հարկերից հասույթը և իջևանատները (խան) գերազանցում են բոլոր մոտավոր ու հեռավոր չրջակա բնակավայրերը:

Նրա մեծ կարևորությունն ակներև է հենց այդ առատության չնորհիվ, նրա հասույթների չատության համար, որոնք անընդհատ աճում են:

էջ 96

Կայրուանը Մաղրիբի խոչորագույն քաղաքն էր եղել, ամենավաճառաչահը և ամենահարուստը: Նրանում էր ամբողջ Մաղրիբի դիվանը և այնտեղ էին բերում հարկերը: Այստեղ էր կառավարչի նստավայրը: Նրանից դուրս Ռակկադա կոչված վայրն է, որն Աղլաբիների[32] նստավայրն էր:

էջ 97

Մաղրիբից արևելք (մաչրիկ) տարվում են գեղեցիկ ու ակնահաճո խառնածին (մուվալլադ) կանայք, որոնց սիրում էին Աբբասյանները և նրանց մեծամեծները: Ապա տարվում են հռոմ (եվրոպացի) գեղեցիկ տղա ստրուկները (ղուլամ), սաթը (անբար), մետաքսը, չատ նուրբ կամ հասարակ բրդե զգեստները, բրդե պատմուճանները և այդ կտորից այլ բաները, կաչվե կարպետները (անթաա), երկաթը, կապարը, սնդիկը, սևամորթների (Սուդան) երկրից բերված ներքինիները, սլավոնների (սակալիբա) երկրից Անդալուսի վրայով բերված ներքինիները, թանկարժեք ֆերը, նժույգները, ճկուն ջորիները, ուղտերը, ոչխարները, կովերը և այլ կենդանիներ, որոնք լավ են վաճառվում:

էջ 100

Ինչ վերաբերում է բերբերներին, որոնցից բաղկացած է Մաղրիբի բնակչությունը, ապա նրանք ցեղեր են, որոնց թիվը հնարավոր չէ հաշվել, քանզի բազմաթիվ են նրանց ցեղերը և ճյուղավորումները և ցրված են դաշտերում և տարածված անապատներում: Նրանք բոլորը սերում են Գողիաթից, բացի չատ փոքր մասից: Նրանք ունեն ցեղերի թագավորներ (մալիք), պետեր և առաջնորդներ (մուկադդամ), որոնց հնազանդվում են անառարկելիորեն ու նրանց հրամաններին անվերապահորեն ենթարկվում են: Նրանց հարստությունը բաղկացած է ոչխարների հոտերից, որը մեծ քանակությամբ ունեն: Նրանցից անապատի խորքերում է ապրում Աուղաղաստի Սինհաջա [ցեղը]:

ԻՍՊԱՆԻԱՆ (ԱՆԴԱԼՈՒՍ)

[.....]

էջ 109

Այս կղզու (Թներակղզու) արևմտյան կողմը սկսում է այն նեղուցից, որի ջրերը թափվում են Օվկիանոս ծովը դեպի Նիերլա (Լիրլա) և Ջիբրալկոն (Ջաբալ ալ-Ույուն) ձգվելով դեպի Լեպե (Լաբ) և Սիլվե (Շալաբ), մինչև որ հասնում է Սինտրա (Շինտրա) և այն գետը, որը բխում է Սամորայից, (Սամուրա)՝ Գալիսիայի (Ջալիկիա) գլխավոր քաղաքից, և որը թափվում է Օվկիանոս ծովը: Նրա հյուսիսային սահմանը Սինտրայից անցնում է Սամորա (Սամուրա) Լիոն, Յունա՝ Գալիսիայի չրջանում, մինչև Գալիսիայի հեռավոր սահմանը: Արևելքում նրա սահմանը սկսում է Գալիսիայի արևելքից մինչև արևմտյան նեղուցը (ծոցը) դեպի Սարագոսայի (Սարակուսա) կողմերը, Հուեսկայի (Ուիշկա) և Տորտոզայի (Թուրթուշա) հողերը և ամբողջ Ֆրանկաց երկիրը ցամաքի կողմից: Նրա հարավային սահմանն է հիշյալ նեղուցը, սկսած Պեչինայից (Բաջանա) մինչև Սիկիլիա կղզու կողմը, այսպիսով տարածվելով դեպի Վալենսիա (Բալանսիա), Մուրսիա, Ալմերիա և Մալագա (Մալկա) և Ալխեսիրաս (ալ-Ջազիրա) մինչև Օվկիանոս ծովի կազմած անկյունը:

էջ 110

Անդալուսում գործվածքեղենի (զգեստների) արտադրության (թիրազ) մի քանի տեսակ կա, որը տարվում է Եգիպտոս, երբեմն նույնիսկ տարվում է մինչև Խորասանի հեռավոր վայրերը: Նրանց արտահանման մեջ հայտնի է ստրուկների [վաճառքը] ինչպես հարճերը (ջավարի), գեղանի տղաները (ղուլամ), որոնք գերեվարվում են

ֆրանկների երկրում, Գալիսիայում և սլավոն ներքինիները: Բոլոր սլավոն ներքինիները, որոնք աշխարհի երեսին կան, Անդալուսից են տարված, որոնք մերձակա վայրերում ամորձատվում են: Այս բանը կատարում են հրեա վաճառականները:

էջ 110–111

Անդալուսի կարևոր գավառներից է Ռեգիոն (Ռայու), որի գլխավոր քաղաքն է Արքիդոնան: Այստեղից էր Օմար իբն Հաֆսունը, որն ապստամբեց Օմայանների դեմ: Լոս Պեդրոքեսը (Ֆահս ալ-բալլութ) սահմանակից է Օմար իբն Հաֆսունի տիրույթներին: Ռեգիոն մի ընդարձակ ու բարեբեր գավառ է:

Ուսֆուկան նույնպես զեղեցիկ գավառ է, որի գլխավոր քաղաքը Ղաֆիկն է: Իսպանիայում կան բազմաթիվ կալվածներ, ուր կան հազարավոր գյուղացիներ, լրիվ անտեղյակ քաղաքային կյանքից, որոնք հռոմների քրիստոնեական հավատն են դավանում: Նրանք հաճախ ապստամբում են և մի ամուր բերդում ապաստան գտնում: Նրանց հնազանդեցնելը երկարատև գործ է, քանզի նրանք խրոխտ են ու համառ: Երբ նրանք հնազանդության լուծը թոթափում են, չափազանց դժվար է նրանց հպատակեցնել և դա կարելի է միայն մինչև վերջին մարդը կոտորելով, իսկ դա դժվար ու երկարատև գործ է:

էջ 111–113

Անդալուսի ամենամեծ քաղաքը Կորդովան (Կուրթուբա) է և ամբողջ Մաղրիբում, ոչ էլ Ջազիրայում, Ասորիքում ու Եգիպտոսում չկա նմանը, որը համեմատվեր նրա հետ բնակչության չատությամբ, տարածությամբ, մաքրությամբ, մզկիթների ճարտարապետությամբ, բաղնիքների ու իջևանատների (փունդուկ) առատությամբ: Այստեղից գնացած ճանապարհորդները, որոնք այցելել են Խաղաղության քաղաքը (Բաղդադ), վկայում են, որ նա Բաղդադի երկու կողմերից մեկի նման է: Նրա տերը Աբդ ալ-Ռահման իբն Մուհամմադ [Նասիփան][83] նրա արևմտյան կողմում, Բաթնալ լեռան ստորոտում, հարթ վայրում կառուցեց մի քաղաք ու կոչեց Զահրա: Նա հատակագծեց չուկաները, կառուցեց բաղնիքներ, իջևանատներ (խան), պալատներ և զրոսավայրեր: Նա հրավիրեց ժողովրդին այնտեղ բնակվելու և հրամայեց որ իր մունետիկները Անդալուսի բոլոր երկրամասերում հայտարարեն՝ ով կամենա տուն կառուցել, կամ բնակարան տիրակալի (սուլթան) կողքին, ապա նպաստ կտանա չորս հարյուր դիրհեմ: Մարդիկ աճապարեցին չինարարություն կատարել, շենքերը խտացան, ցանկությունն ավելացավ և շենքերը գրեթե միացրին Կորդո-

վան Ջահրայինն: Նա այնտեղ (Ջահրա) փոխադրեց իր արքունի գանձարանը (բայտ ալ-մալ), դիվանները, բանտը, պահեստներն ու մթերումները: Սակայն այս բոլորը կրկին վերադարձվեց Կորդովա, քանզի Օմայանները անհիմն կասկածներ ունեին այդ քաղաքի (Ջահրա) նկատմամբ և հոռետես էին այն բանի համար, որ մարդիկ այնտեղ մնում էին և կողոպտել էին իրենց բոլոր պարենավորումները:

Կորդովան թեև Բաղդադի երկու կողմերից մեկին հավասար չէ, սակայն դրան մոտիկ է և նման: Սա քարե պարիսպ ունեցող քաղաք է, գեղեցիկ թաղամասերով, ընդարձակ բացատաններով (հրապարակներ): Վաղուց է որ նրա տիրակալը իշխում է այս քաղաքում, նրա պալատը պարսպից ներս է, որը չրջապատում է նրան: Նրա պալատի դռների մեծամասնությունը պարսպի ներսում են բացվում տարբեր կողմերից:

Նա (Կորդովան) երկու դուռ ունի քաղաքի պարսպի վրա դեպի Ռուսաֆայից գնտը տանող ճանապարհի վրա: Ռուսաֆան քաղաքի բարձրադիր արվարձանն է, որի չենքերը հարում են ներքին արվարձանին. վերջինիս խառնիխուռն չենքերը տարածված են քաղաքի չուրջը արևելքից, հյուսիսից ու արևմուտքից, իսկ հարավային մասը նայում է դեպի գնտը, որի երկայնքով անցնում է Ռասիֆ կոչված ճանապարհը: Նրա արվարձանում են վաճառատները, իջևանատները (խան), բաղնիքները (համմամ) և ռամիկների բնակարանները: Նրա մայր մզկիթը գեղեցիկ է ու ընդարձակ, քաղաքի մեջտեղում, իսկ բանտը նրա կողքին է:

Կորդովան առանձնացած է և կպած չէ իր արվարձանների բնակարաններին: Քաղաքը հրաչալի դիրք ունի: Մի քանի անգամ նրա չուրջը չրջել եմ մեկ ժամով: Նա չրջանաձև է, ամրակուռ պարսպով, որը քարաչեն է: Ջահրան երբեք ավարտված պարիսպ չի ունեցել: Այնտեղ կա գեղեցիկ մայր մզկիթ, հատուկ հմայք ունեցող, սակայն քաղաքի մայր մզկիթին զիջում է կառուցվածքով, հզորությամբ ու մեծությամբ:

Կորդովան յոթ երկաթե դռներ ունի: Սա մի փառավոր և ընդարձակ քաղաք է, հաճելի հատակագծով: Այստեղ չատ հարստություն ու չքեղություն կա այլևայլ ձևերով արտահայտված՝ արժեքավոր զգեստներով, փափուկ քթանով (վուշ), կոշտ և նուրբ մետաքսով, թեթև հարդարանքով և տարբեր տեսակի ուտելիքներով ու խմիչքներով:

էջ 114

Անդալուսում կա անդիկ, երկաթ և կապար: Այստեղ պատրաստում

են բրդե կտորներ, որոնք լավագույն հայկական (արմանի) թավշակերպ (մահֆուր) [արտադրանքի] նման են, որը բարձր գին ունի, դեռ չհաչված թամբի գորգերը (նամաթ), որոնք այնտեղ են պատրաստվում: Ներկված բրդի և այլ կտորեղենի, որոնք ներկվում են, կան հրաչալիքներ և դա ստացվում է Անդալուսին հատուկ խոտերի միջոցով: Սրանով ներկում են մաղրիբյան բարձրարժեք թաղիքները (լաբուդ) ու մետաքսը տարբեր գույներով, որ նախընտրում են կոշտ (խազդ) և անլվա (կազդ) մետաքսի համար: Նրանք արտահանում են դիպակ (դիբաջ):

Նրանց պատրաստած թաղիքների նմանը չկա ամբողջ երկրի վրա: Հաճախ տիրակալների համար պատրաստում են «ներևտնանոց» թաղիքներ, որոնցից ամեն մեկն արժի հիսունից վաթսուն դինար և յայնությունը հինգից վեց թիղ է: Սա չատ գեղեցիկ գորգ (փարչ) է: Պատրաստում են նաև [զգեստ?] նուրբ և կոշտ մետաքսից (խազդ), որը նախատեսված է տիրակալի համար և գերազանցում է Իրաքում պատրաստվածը: Լինում են նաև մոմած տեսակներ, որոնք թույլ չեն տալիս, որ անձրևը թրջի հագնողին:

Ինչ վերաբերում է գներին, ապա [Անդալուսը] նման է այն երկրներին, ուր էժանություն կա, բարիքների առատություն, դյուրին կյանք: Պտուղները որոնք միջին որակի են, մատչելի են ամենքին, առանց մեծ վճարի:

Երկրի տարբեր մասերում պատրաստում են քթանե հագուստեղեն, որը տարբեր կողմ է արտահանվում և գուցե նույնիսկ մինչև Եգիպտոս: Պելինայում (Բիջանա) պատրաստված վերարկուները ուղարկվում են Եգիպտոս, Մեքքա և Եմեն ու այլուր: Այստեղ հասարակ ժողովրդի և տիրակալի (արքունիքի) համար քթանե զգեստներ են պատրաստում, որոնք ոչ մի բանով չեն զիջում [եգիպտական] Դաբիկի [արտադրանքին]: Դրանք բավական հաստ են, սակայն փափկություն և նրբություն ունեն և նրանք ցանկալի են նրանց, ովքեր Շարը կոչված չղարչն են օգտագործում: Նրանց որակը մոտենում է լավագույն Շաթավի կոչված [եգիպտական] տեսակին:

Մարդիկ ընդհանրապես չուկա են գնում միայն հնծյալ վիճակում: Ոտքով են գնում միայն հասարակ զբաղմունքներ ունեցող մարդիկ: Ջարքաչ ջորիների բուծումն այս երկրի մասնագիտությունն է, նրանով հպարտանում են ու հիանում: Ջորիների բուծումն իր նմանը չունի այլուր, նույնիսկ այն երկրներում, որոնք հայտնի են որպես ջորիներ բուծանող, ինչպես Հայաստանը, Առանը, Դարբանդը (Բար ալ-Աբուաբ), Տփղիսը և Շիրուանը: Նրանց անասուններն ըստ էության ճարպոտ են, լավ կազմով ու ցեղային: Այն անասունները, որոնք գեղեցիկ արտաքին ունեն, բարձրահասակ են ու բարձր գնով են վաճառվում, բերվում են Մայորկա կղզուց, որը պատկանում է Արդ ալ-

Ռահման իրն Մուհամմադին և բնակեցված է մահմեդականներով: Այս կղզին, որը ցամաքից հեռու է, ֆրանկների երկրի (Ֆրանսիայի) դիմաց է:

էջ 116

Հիշյալ բոլոր քաղաքները հայտնի են իրենց բերքերով, առևտրի ապրանքներով, խաղողի այգեստաններով, չենքերով, չուկաներով, վաճառատներով, բաղնիքներով, իջևանատներով:

Քաղաքներն իրար հետ մրցում են իրենց դիրքով, հարկերով, կառավարիչներով, դատավորներով, և այն պաշտոնյաներով, որոնք լրտեսություն են անում և կոչվում են մուխալլիֆ: Չկա մի քաղաք, որ չեն չլինի, չունենա ընդարձակ գավառներ, կամ մի նահանգ՝ լի կալվածներով և հողամշակներով, բարեկեցիկ դրությամբ չլինի [...]:

ՍԻԿԻԼԻԱՆ

[.....]

էջ 118 – 120

Նրանում է այն մեծ քաղաքը (մայրաքաղաք), որը կոչվում է Պալերմո (Բալարմ) և բարձր, հսկայական ու անառիկ պարիսպ ունի: Այստեղ ապրում են վաճառականներ ու նրանում կա մայր մզկիթը, որը [արաբական] նվաճումից առաջ հռոմեների եկեղեցի էր եղել: Կա մի հսկայական տաճար (սրբավայր), որի մասին իմաստուն տրամախոսն (մանթիկի) ասել է, թե հույների (յունան) փիլիսոփան, այսինքն Արիստոտելը (Արիսթաթալիս) տախտակե դագաղի մեջ կախված է այս տաճարում, որը մահմեդականները մզկիթի են վերածել: Քրիստոնյաները նրա գերեզմանը մեծարում էին և նրա միջոցով բուժվում, իմանալով որ հին հույները նրան մեծարում ու հարգում էին: Ասվում է, որ նրա երկնքի ու երկրի միջև կախված լինելու պատճառն այն էր, որ մարդիկ նրանից հայցում էին անձրև, կամ բուժում, կամ կարևոր հարցերի լուծում, որի համար նրանք ապավինում էին Աստծուն ու նրան մերձենում արհավիրքների կամ ներքին կռիվների ժամանակ: Ես տեսել եմ մի տախտակե արկղ, որը հավանաբար այդ գերեզմանն է:

Սրա դիմաց կա մի ուրիշ քաղաք, որ կոչվում է Խալիսա և ունի քարե պարիսպ: Սակայն Պալերմոյի պարսպի նման չէ, ուր տիրակալն (սուլթան) է ապրում ու նրա հպատակները: Նրանում կա երկու բաղնիք, բայց չուկաներ ու իջևանատներ (ֆանադիկ) չկան: Կա մի փոքրիկ մայր մզկիթ, տիրակալի զորակայան, նավաշինարան (դար ալ-սինաա) ու վարչական դիվաններ: Ունի չորս դռներ՝ Հյուսիսային, Հարավային ու Արևմտյան, իսկ արևելյան կողմում ծովն է և մի պարիսպ կա, որը դուռ չունի:

Այն թաղամասը, որ կոչվում է Սլավոնների թաղամաս (Հարատ ալ-սակալիբա), ավելի շեն է ու գեղեցիկ, քան վերոհիշյալ երկու քաղաքները (Պալերմո և Խալիսա): Նրանում է նավահանգիստը, կան հոսող ջրեր, որոնք նրա ու Սիկիլիայի [մայրաքաղաքի] միջև սահմանի դեր են կատարում:

Կա նաև մի թաղամաս, որը կոչվում է Մզկիթի թաղամաս (Հարա), որն այսպես է կոչվում Իրն Սակլաբ մզկիթի անվամբ, որը նույպես մեծ է: Նրանում չկան աղբյուրի վազող ջրեր և բնակիչները ջրհորներից են խմում: Նրա ծայրին կա այն գետը, որը կոչվում է Վադի Արբաա, որը մեծ, լայն գետ է և նրա վրա շատ ջրաղացներ ունեն. նրա ափին կան այգիներ ու պարտեզներ, որոնցից բնակիչները քիչ օգուտ են ստանում:

Նոր թաղամասը (ալ-Հարատ ալ-Ջադիդա) ընդարձակ է և Մզկիթի թաղամասի կողքին, որից ոչ մի սահմանով չի բաժանվում: Այս երկու թաղամասերի, ինչպես նաև Սլավոնների թաղամասի չուրջը պարիսպ չկա:

Շուկաների մեծ մասը Իրն Սակլաբի մզկիթի ու Նոր թաղամասի միջև է գտնվում, ինչպես բոլոր ձեթ վաճառողների (զայյատ), ցորեն վաճառողների (դակկակ), լումայափոխների (սառաֆ), դեղագործների (սայադինա), դարբինների (Հադդադ), սուր փայլեցնողների (սայակկիա) չուկաները, ապա ցորենավաճառների, ասեղնագործների (Թառազ), ձկնավաճառների (սամմաք), հացահատիկների վաճառականների (աբզարի) չուկաները, մսավաճառների (կասսաբ) ընկերությունը (Թայիֆա), բանջարավաճառները, մրգավաճառները, հոտավետ բույսեր վաճառողները (ռայհանի), կարաս վաճառողները (Ջառար), հացթուխները (խաբբազ), պարանագործները (Ջադդալ), դեղագործների (աթթար) ընկերությունը (Թայիֆա), մսագործները (Ջազզար), կոշկակարները (իսքաֆի), կաշեգործները (դարբաղ), հյուսները (նաջջար), բրուտները (դադայիրի), փայտ վաճառողները (խաչչաբ) քաղաքից դուրս են տեղավորված:

Հենց Պալերմոյում կան մսավաճառների (կասսաբ) ընկերություն (Թայիֆա), կարաս վաճառողներ (Ջառար), կոշկակարներ (իսքաֆի), իսկ մսավաճառները (կասսաբ) երկու հարյուրից մի քիչ պակաս խանութներ (Հանուտ) ունեն միս վաճառելու համար, սակայն նրանք քիչ են քաղաքի ներսում, մեծ փողոցի (սիմաթ) գլխին: Նրանց կողքին կան բամբակավաճառներ (կաթթան), գզրարներ (Հալլաջ), հնակարկատներ (Հազզա): Կան նաև մեկից ավելի կարևոր չուկաներ:

Նրանց ճոխության ու բնակչության չատության մասին կարող է գաղափար տալ Պալերմոյի մայր մզկիթի բազմությունը: Ես ինքս մի

օր ներկա եմ եղել ու տեսել, որ բազմությամբ լի էր և կար յոթ հազար մարդուց ավելի, այնտեղ աղոթողների երեսունվեց չարք կար, ամեն մի չարքում մոտավորապես երկու հարյուր մարդ:

ԵԳԻՊՏՈՍԸ (ՄԻՍՐ)

[.....]

ԷՋ 145–146

Նրա (Եգիպտոսի) քաղաքների ու շրջանների նկարագրությունը: Նրա ամենամեծ քաղաքն է Ֆուսթաթը[34], որը Նեղոսի հյուսիսային մասում է, քանզի նա այս վայրում հոսում է հարավ-արևելքից: Սա բարեկարգ քաղաք է, որի մոտ Նեղոսը երկու ճյուղի է բաժանվում: Ֆուսթաթից անցնում ենք առաջին ափը, ուր կան գեղեցիկ շենքեր և բարեկարգ բնակարաններ և այդ վայրում Ջազիրա (Գազիրա, կղզի) է կոչվում: Այն կողմը կամրջով են անցնում, որը բաղկացած է մոտավորապես երեսուն նավերից: Այս կղզուց մի ուրիշ կամրջով, որը առաջինի նման է, անցնում ենք մյուս՝ երրորդ ափը, որը կոչվում է Գիզա, ուր կան ուշագրավ կառուցվածքներ ու բնակարաններ:

Ֆուսթաթը մեծ քաղաք է, մոտավորապես Բաղդադի մեկ երրորդ մեծությամբ և մոտավորապես մեկ մղոն երկարությամբ. չեն է, բարբեր ու հաճելի: Այս քաղաքն ունի մեծ բացատաններ, ընդարձակ չուկաներ, չքեղ վաճառատներ, ընդարձակ անձնական կալվածներ, հրաշալի արտաքին տեսք, հաճելի մթնոլորտ, ծաղկած պարտեզներ ու միշտ կանաչ զբոսավայրեր:

Ֆուսթաթում արաբներն ունեցել են ցեղային խմբավորումներ և ամեն մի թաղամաս կոչել նրանց անուններով՝ քուֆացիների, բասրացիների [թաղեր], թեև նրանք մեր օրերում փոքրաթիվ են: Մեծ մասն անհետացել է, բացի Եմենի Մաաֆիր ցեղից: [Ֆուսթաթի] վայրը աղային է ու հողը մաքուր չէ: Շենքերը լինում են յոթ, վեց, հինգ հարկանի և ամեն մի տան մեջ կարող է ապրել երկու հարյուր մարդ: Ֆուսթաթում կա մի տուն, որը կոչվում է Աբդ ալ-Ազիզ իբն Մարուանի օթևանը, որն այնտեղ ապրել է և ամեն օր բերել է չորս հարյուր տիկ ջուր՝ վարձակալների համար: Նրանում եղել է հինգ մղկիթ, երկու բաղնիք և մի քանի փուռ՝ նրա բնակիչների հացը եփելու համար:

Նրանց (Ֆուսթաթում) շենքերի մեծ մասը հում աղյուսով (թուր) է կառուցված և նկուղները չեն բնակեցված: Կան երկու ուրբաթ օրվա աղոթքի մղկիթներ: Մեկը կառուցել է Ամր իբն ալ-Աս[35] չուկաների մեջտեղում, մյուսը Մաուկիֆի գագաթին կառուցել է Աբու-լ-Աբբաս Ահմադ իբն Թուլունը[36]: Քաղաքից դուրս կային շենքեր, որոնք կառուցել էր Ահմադ իբն Թուլունը, մեկ մղոն քառակուսի տարածության

վրա, ուր նրա զորքն էր ապրում և դա կոչվում էր Կաթայի: Այն կարելի է համեմատել Ռակկադայի հետ, որը Աղլաբիները կառուցել էին Կայրուանից դուրս: Այս բոլորը հիմա ավերակ վիճակում են: Ռակկադան եղել է ավելի ուժեղ հենակետ և ավելի լավ կազմակերպված:

Մաղրիբցիները (Ֆաթիմյանները) Ֆուսթաթից դուրս կառուցեցին մի քաղաք, որը կոչեցին Կահիրե (ալ-Կահիրա): Այն հատակագծել է Ջաուհարը, մաղրիբցիների (Ֆաթիմյանների) զորավարը[37], երբ նվաճել է Եգիպտոսը՝ իր զորքի, պարենավորման ու չքախմբի համար: Սրա մեջ կան թաղամասեր, չուկաներ և վայրեր անասունների խնամքի համար, հարմարանքներ, ինչպես բաղնիքներ, իջևանատներ (ֆանադիկ), նաև բարեկարգ ապարանքներ ու օգտակար հարմարություններ: [Ջաուհարը] նրա չուրջը կառուցեց մի անառիկ ու բարձր պարիսպ, երեք անգամ ավելի ընդարձակ, քան կառուցված տարածությունը: Դա դատարկություն է, որը հավանաբար թողնվել է, որպեսզի վտանգի ժամանակ անասուններն այնտեղ հավաքվեն:

Նրանում (Կահիրեում) են Եգիպտոսի վարչական դիվանները, գեղեցիկ մայր մզկիթը, բազմաթիվ սպասարկողներով ու մուեզզիններով (հավատաղիր): Մաղրիբի իշխանուհիներից մեկը մի ուրիշ մզկիթ է կառուցել Կահիրեից դուրս՝ Կարաֆայում, ուր ապրում են Եմենից ցեղեր և նրանք, ովքեր նվաճման ժամանակ հաստատվել էին: Սա այն մզկիթներից է, որոնք աչքի են ընկնում ընդարձակ բակով, գեղեցիկ ճարտարապետությամբ, զարդարված առաստաղներով և հաճելի արտաքինով: Գազիրայում ու Գիզայում ևս կան երկու այլ մայր մզկիթներ, որոնք սակայն զիջում են Կարաֆայի մզկիթին չքեղության ու գեղեցկության հարցում:

ԷՋ 150–152

Եգիպտոսի հռչակավոր քաղաքներից ու զարմանալի հնություններից է Ալեքսանդրիան, որը մի քաղաք է Ռումի (Միջերկրական) ծովի պարանոցի վրա: Նրա ավերակները և նրա ժողովրդի թողած հուշարձանները պարզ երևում են և վկայում թագավորական իշխանության ու հզորության մասին, ցույց են տալիս նրանց տիրապետությունը և գերազանցությունը, ունեն վեհ խորհուրդ և մեծ իմաստ: Կառուցված են հսկայական քարերով, փառավոր շինությամբ, մեծ սյուներով, որոնք մարմարի տարբեր տեսակներից են և դրանցից ամեն մեկը հազար մարդու կողմից հազիվ կարելի է տանել: Կախված են երկնքի ու երկրի միջև, հարյուր կանգուն բարձրությամբ, այնպես որ քարը նստում է ամեն մի սյունի խոյակի վրա: Այս սյուները տասնհինգից քսան կանգուն են, իսկ նրանց վրա նստած քարերը տասը կանգուն խորանարդ են: Այս ամբողջը զարդարված է զար-

մանալի գույներով ու երանգներով.

Եթե հարցնես նրանց ժողովրդին, ապա կտեսնես, որ նրանք
Տալավորիչ պատմություններ կպատմեն այդ մասին:

Քաղաքի ճանապարհները տեսակ-տեսակ մարմարներով են պատած և գունավոր քարերով: Նրանց եկեղեցիներում գտնում ենք սյուներ, որոնք թվում է, թե պատրաստված են կանաչ զմրուխտից և դեղին ու կարմիր եղնգաքարից: Նրանց ամենակարևոր չենքերը կառուցված են սյուների վրա, որոնք ամրացված են պղնձե ձողերով ու քիմիական նյութերով, որպեսզի ժամանակը չփչացնի: Ամեն մի սյունի ստորոտում կան երեք կամ չորս պղնձե խեչափառներ: Սյունի վերին մասը ծածկված է տարբեր պատկերներով, հայտնի և անհայտ:

Նրանում կա նշանավոր փարոսը, քարով կառուցված և կապարով ամրացված: Ամբողջ աշխարհում չկա այսպիսի փարոս, որի նմանը լինի, կամ մոտիկ նմանությամբ, ձևերով, կառուցվածքով ու հրաշալիքներով: Նրանում կա մի խորհուրդ, որը մեզ մտածել է տալիս թե գոյություն է ունեցել մի հզոր թագավորություն, ղեկավարված մեծ հնդինակություն ունեցող թագավորի կողմից: Դա այն նշանավոր փարոսն է, որը հայտնի է ամբողջ աշխարհում և բոլոր հասարակ մարդիկ ու մասնագետ գիտնականներ համաձայն են, որ դրա ստեղծողը այն հնարել է աստղաբաշխական դիտարկումներ կատարելու համար:

Նրա բարձրությունը եղել է երեք հարյուր կանգունից ավելի և նրա մեծ գմբեթն ընկել է, որը փարոսի գլուխն է եղել երկար ժամանակ: Հակառակ պատմահայրերի հիմար ենթադրությունների և անհիմն եղրակացությունների, [ես գտնում եմ], որ այս գմբեթը չի կառուցվել այն բանի համար, որ այնտեղ լինի մի հայելի, որի մեջ երևա ամեն ինչ, որ կմտնի Ռումի (Միջերկրական) ծովը, լինի զորքեր փոխադրող նավ, կամ ռազմանավ:

Կան մարդիկ, որ կարծում են, թե նրա կառուցողը եղել է նույն բուրգերը կառուցող թագավորը, իսկ ուրիշներ այլ բան են պատմում:

Ֆուսթաթից այն կողմ, Նեղոսի արևմտյան ափին կան հսկայական կառույցներ, որոնք մեծ թվով տարածված են ամբողջ հարավային Եգիպտոսում (Սաիդ) և կոչվում են բուրգեր (ահրամ): Սակայն ոչ մեկը նման չէ այն երկու բուրգերին, որոնք Ֆուսթաթի դիմաց են, երկու փարսախ հեռավորության վրա: Ամեն մեկի բարձրությունը չորս հարյուր կանգուն է և լայնությունը նույնքան է: Կառուցված է կրաքարով (քազգան), որի հաստությունը, երկարությունն ու լայնությունը տասից ութ կանգուն է:

Նրանց պատերը հունարեն արձանագրություններով են ծածկված: Նրանցից ամեն մեկի մեջ կա ճանապարհ, որով մարդիկ վերև էին բարձրանում: Այս երկու բուրգերի միջև կա ստորերկրյա ճանա-

պարհ՝ մեկից մյուսին անցնելու: Ոմանք ասում են, թե սրանք գերեզմաններ են, սակայն այդպես չէ, այլ կառուցողը նախատեսել է, որ կլինի ջրհեղեղ, որն ամեն ինչ կտանի երկրի վրա, բացի այն կառույցներից, որոնք բուրգերի նման են կառուցված: Նա իր գանձերը և ունեցվածքը այնտեղ էր թաքցրել: Իրոք եղել է ջրհեղեղ և չորանալուց հետո, նրանում եղածը անցել է Բայսար իրն Նուհին: Մի թագավոր այստեղ երկու բուրգերում ցորեն է ամբարել:

Նրա (Եգիպտոսի) կարևոր քաղաքներից են Տիննիան[38] ու Դիմիաթը, որոնք հայտնի են իրենց մասնագիտացմամբ: Դրանք գտնվում են երկու կղզիների վրա, ազի և քաղցր ջրի մեջ, սակայն տարվա մեծագույն մասում Նեղոսի հոսանքի մեջ են: Նրանց վրա չկա ոչ հողամշակություն, ոչ անասնապահություն:

Նրանցում պատրաստում են նուրբ քթանե գործվածքեղեն և ոսկով հյուսված զգեստներ և Դարիկի կոչված տեսակներ և ներկված տիննիսյան կոչված պատմուճաններ (հուլլա), որոնց նմանը չկա ամբողջ երկրագնդի վրա, իրենց թանկ գնով, գեղեցկությամբ, փարթամությամբ, փափկությամբ, նրբությամբ: Երբեմն մեկ պատմուճանը երկու հարյուր դինար արժի, եթե նրա մեջ ոսկեթել հյուսվածք լինի, իսկ եթե ոսկով հյուսված չէ, կարժի հարյուր դինար, ավելի կամ պակաս:

Ընդհանրապես, նրանցում պատրաստված քթանե գործվածքեղենի մեկ միսկալ մանած թելը մի քանի դինար արժի: Թևե Շաթա, Դաբիկ (Դաբկու), Դամիրա, Տունա վայրերում և մերձավոր կղզիներում այս տեսակների (աջնաս) նուրբ [գործվածքեղեն] են պատրաստում, այնուամենայնիվ դա նման չէ Տիննիսի (տիննիսական), Դիմիաթի (դիմիաթական) և Շաթավի (շաթայական) արտադրանքին, որի մեկ հակը (համլ) արժի քսան հազար դինարից երեսուն հազար դինար, նկատի ունենալով, որ դա արտահանվում է Իրաք:

Սակայն այս արտադրությունը ընդհատվեց մաղրիբցիների (Ֆաթիմյանների) գալով [Եգիպտոս] և հատկապես Ազիզ [Նասիֆայի][39] վեզիր անիծյալ Աբուլ-լ-Ֆարաջ իբն Քիլլիսի պատճառով, որը կործանեց այս արտադրությունը իր չարաղետ միջոցառումներով, հարկեր դնելով, պարտադիր աշխատանք նշանակելով և կոռ նշանակելով արհեստավորների վրա: Նա նույնիսկ գլխահարկ (ջիզիա) էր պահանջում Տիննիս մտնողներից ու դուրս եկողներից:

Եգիպտոսում կան բազմաթիվ ընտիր գործվածքեղենի արհեստանոցներ (թիրազ), որոնց մասին կխոսեմ:

էջ 159

Ֆայում [Նահանգում] կան մեծ ու կարևոր քաղաքներ, գործված-

քեղենի արհեստանոցներ (թիրազ) և գավառներ, որոնք պետության [տիրակալին] և անհատներին են պատկանում:

Նրանում պատրաստում են արտահանման համար ապրանքներ, որոնց հոչակն այնպիսին է, որ կարիք չկա նշելու: Բիհնասայում պատրաստում են վարագույրներ, հատակի գորգեր (սրահակներ), ոսկեհյուս մետաքսեղեն, նավերի առագաստներ, վրաններ, պատմուճաններ, ծածկոցներ, գորգեր, տաղավարներ և ընդարձակ վրաններ, բրդից ու քթանից, անպայպայ գույներով (ներկով) և այնպիսի նրբերանգներով, որոնք ամեն տեսակ պատկերներ են ներկայացնում՝ միջատից մինչև փիղը: Այս գործվածքեղենի արհեստանոցների վերակացուները պետության ծառայության մեջ են և պատվերներ են ստանում խալիֆաներից, մեծամեծ պաշտոնյաներից, ինչպես նաև աշխարհի ամեն կողմից եկած վաճառականներից, որոնք այստեղ պատրաստել են տալիս երկար հատակի գորգեր, որոնց համար թանկ են վճարում: Ամեն մի կտորը երեսուն կանգուն երկարություն ունի, առավել կամ պակաս, իսկ մեկ զույգի գինը երեք հարյուր դինար է, առավել կամ պակաս: Թահա քաղաքում ևս կան մեկից ավելի գործվածքեղենի արհեստանոցներ:

էջ 161

Նրա (եգիպտոսի) ժողովուրդը դպտի (կիբթ) քրիստոնյաներ են: Ունեն բազմաթիվ հարուստ, ընդարձակ եկեղեցիներ (բայաա), սակայն չատերն ավերված են: Նրանք հազվադեպ են չարաճում, բայց միայն [գայրանում են] կառավարիչների ու հարկահանների դեմ: Նրանք ունեցել են հարուստ, գանձերի տեր, մեծ ունեցվածքի տեր մարդիկ, որոնք բարեգործություն ու ողորմություն են արել: Ես նկատել եմ, նրանց առատաձեռնությունը և լավ տրամադրությունը մահմեդականների նկատմամբ, որը կարիք չկա երկար բացատրելու:

ԱՍՈՐԻՔԸ (ՇԱՄ)

էջ 165–170

Իսկ Ասորիքը իր արևմտյան կողմում ունի Ռումի ծովը, արևելքում՝ անապատը Այլաթից մինչև Եփրատ, ապա Եփրատից մինչև Ռումի սահմանը: Նրա հյուսիսում Ռումի երկիրն է, հարավում՝ եգիպտոսը (Միսր) և Իսրայելի որդիների անապատը: Եգիպտոսի կողմից նրա սահմանն է Ռաֆհը, իսկ Ռումի կողմից՝ Սահմանային ամրություններ գոտին (Սուղուր): Հնում նրանում էին Ջազիրայի սահմանային ամ-

րությունները, որոնք են՝ Մալաթիան, Հադասը, Մարաշը, Հարունիյան, Քանիսան, Անազարբան (Այն Զարբա), Մամեստիան (Մասսիսա), Ադանան, Տարսոնը (Թարսուս): [Սա հին ժամանակներում է եղել, իսկ մեր օրերում նրանից հյուսիս գտնվող Տրապիզոնի կողմերը և խաղաբաց երկիրը նվաճվել են մահմեդականների կողմից, հինգ հարյուր ութսուն (1184–1185) թվականին: Ասորիքի արևելյան և արևմտյան կողմերում գտնվող վայրերն արդեն հիշել եմ և կարիք չկա կրկնելու][40]:

Այս էջի ներքևում գտնվում է Ասորիքի քարտեզը (սուրատ):

[Ասորիքի քարտեզում եղած անունների ու նշանների բացատրությունը. Քարտեզի աջ կեսում, Ռումի ծովի ափերին նշված քաղաքները վերևից ներքև՝ Պելուզիում (Ֆարամա), Միմաս, Տայդա, Ասկալոն (Ասկալան), Մահուզ, Հորբե (Յաֆա), Կեսարիա (Կայսարիյա), Ակրա (Աքքա), Ալեքսանդրիա (Իսքանդարիյա), Տյուրոս (Սուր), Ադնուն, Սարաֆանդա, Սիդոն (Սայդա), Ջիհր, Նահմա, Բեյրութ (Բայրուտ), Ջունիա, Մահուզ, Բիբլոս (Ջուբայլ), Բատրուն, Անֆա, Կալամուն, Տրիպոլիս (Աթրարուլուս), Անթարթուս (Թարթուս), Մարակիա, Բանիաս (Բալինիաս), Ջաբալա, Լաոդիկե, Ֆասիրա, Սվետիա (Սուայդիյա)[41], Սախրա, Ալեքսանդրեկ (Իսքանդարունա), Բայաս: Քարտեզի ներքևում ծով են թափվում երեք գետեր, որոնց վրա կան հետևյալ քաղաքները՝ Քաֆարրայա, Մամեստիա, Անազարբա, Ադանա, Տարսոն: Ծովի ափին նշված են երեք քաղաքներ՝ Քանիսա[42], Արսուֆ, Նասդին: Ցամաքի վրա ձախից՝ Կեսարիա, Ակրա, «որոնց միջև կա Հայֆան ու Հայֆային ննթակա բերդերը»: Ափին զուգահեռ կա լեռնաշղթա և նրա ու ծովի միջև գրված է «Եգիպտոսի կողմերը», «Ասորիքի արևմուտքը» և «Պաղեստին երկիրը»: Այս մասում կա երկու քաղաք՝ Ռամլա և Քաֆր Սաբա: Ապա ընթանում է նրանցից դեպի ցածր միանալով լեռներին՝ Բանիասը, Ակզարը, Արաբան, Հիսն Բարզավայհը, Բաղրասը, Հարունիյան, Քանիսան: Հիսն Բարզավայհի և Սախրայի միջև մի գետ կա: Այս մասի ներքևում գրված է՝ «Ասորիքի կողմերը»:

Լեռնից ձախ կողմում, վերևում գրված է՝ «Սինայի լեռ (Թուր Սինա)», իսկ նրանից ձախ՝ «Իսրայելի որդվոց անապատը»: Նրանից ևս ձախ կա Կուլզում (Կլիզմա) քաղաքը և Կուլզում (Կարմիր) ծովը, իսկ նրա տակը գրված է «Ասորիքի հարավը»: Լեռան վերին մասի երկու կողմերում գրված է «Պաղեստին»: Այնտեղ կան երկու քաղաքներ՝ Բայտ Իբրահիմ (Աբրահամի տուն) և Բայտ ալ-Մակդիս (Սուրբ քաղաք, Երուսաղեմ), իսկ ներքևում՝ Նաբուլուս: Ապա գալիս է Տիբերիական (Թարարիյա) լիճը և Հորդանան գետը, որը հոսում է Զուղար լիճը (Մեռյալ ծովը) և որի վրա կա Զուղար քաղաքը: Իսկ լեռան մոտ, Բանիասին զուգահեռ գրված է «Լեռնային Լիբանան (Ջաբալ Լուբ-

նան)» և ցամաքում, նրա դիմաց կա Դամասկոս քաղաքը: Դամասկոսի ու Զուղարի միջև կան Բալկա, Ռակամ ու Ռուսա քաղաքները:

Լեռան միջին մասում գրված է Բահրա լեռը: Այստեղ է Եմեսա քաղաքը և Եմեսայի ու Դամասկոսի միջև կա ճանապարհ, որի վրա են՝ Զուսիա ալ-Լաուա, Բաալբաք[43], ալ-Զաբադանի քաղաքները: Եմեսայից ներքև կա Ապամեա (Ֆամիա) քաղաքը: Ապա լեռան երկրորդ մասի մոտ գրված է Սիմակ լեռ[44]: Սրա մոտ է Անտիոք քաղաքը, որից մի ճանապարհ է ընթանում Հալեբ, ապա դեպի Բալիս, որը Եփրատ գետի վրա է: Հալեբից Եմեսա ճանապարհի վրա կան՝ Կիննասրին, Քաֆր Թաբ, Շայզար, Եպիփանիա (Համա) քաղաքները: Իսկ Շայզարի ու Անտիոքի միջև կան Մաառատ ալ-Նուման և Մաառատ Միսրայն քաղաքները: Բալիսից Կուլզում ձգվող երկար գծի վրա գրված է «Ասորիքի սահմանը» և այդ գծի վրա կան՝ Ռուսափ (Ռուսաֆա)[45], Խանասիրա, Պալմիրա (Տադմոր), Սալամիա, Մաան քաղաքները: Գծի տակ գրված է. «Սա Ասորիքի պատկերն (քարտեզն) է», որը քարտեզի անվանումն է: Դրանից ձախ կա «Արաբաց երկրի չրջաններն են ու անապատը»:

Եփրատ գետի վրա, ձախ կողմում կան՝ Ռաֆիկա, Կալինիկում (Ռակկա)[46], Ջիսր, Ջարաբլուս: Դրա նեևում գրված է «Ասորիքի արևելքը»: Հալեբի ու Ջարաբլուսի միջև կա Մաբբոգ (Մանբիջ) քաղաքը և ապա Եփրատի ափին այս կողմում կան՝ Սամոսատը, Մալաթիան, որոնց աջից կա Շիմշաթը, որտեղից դուրս է գալիս ճանապարհը դեպի Ջարալ և դրա վրա են Տլուբը (Դուլուք), Ռաաբանը, Մարաշը, Բուկան և Բուկայից ցածր Հադասը: Այս մասում լեռան անունն է Ամանոս (Լուքքամ): Քարտեզի ներքևում գրված է «Ռումի երկրի կողմերը»]:

Ես բոլոր Սահմանային ամրությունները միավորեցի Ասորիքի մեջ: Թեև դրանց մի մասը կոչվել է Ասորիքի Սահմանային ամրություններ (Սուղուր ալ-Շամ), իսկ մյուս մասը կոչվել է Ջազիրայի Սահմանային ամրություններ (Սուղուր ալ-Ջազիրա), սակայն բոլորն էլ Ասորիքի մեջ են: Բանն այն է, որ Եփրատից այն կողմ գտնվող բոլոր վայրերը թեև Ասորիքի մեջ էին, սակայն Մալաթիայից մինչև Մարաշ կոչվել են Ջազիրայի Սահմանային ամրություններ (Սուղուր ալ-Ջազիրա), քանզի Ջազիրայի ժողովուրդն էր, որ զորք էր տրամադրում և արշավանքներ կատարում: Ահա այս էր պատճառը Ջազիրային վերագրվելուն և ոչ թե այն, որ Ջազիրային մաս էին կազմում:

Ասորիքի գավառները դրանք Պաղեստինի, Հորդանանի, Դամասկոսի, Եմեսայի (Հիմս), Կիննասրինի ջունդերն (զինվորական գոտիներն) էին և Ավասիմն ու Սահմանային ամրությունների գոտին (Սուղուր): Ասորիքի ու Ջազիրայի Սահմանային ամրությունների գոտիների միջև կա Ամանոս (Լուքքամ) լեռը, որ նրանց բաժանում է:

Ամանոս լեռը մտնում էր Ռումի երկրի մեջ և կապված էր Ռումի երկրի բոլոր լեռների հետ: Ասվում է, որ երկու հարյուր փարսախ երկարություն ունի: Իսլամի երկրում նա երևում է Մարաշի և Հարունիյայի ու Անազարբայի միջև: Սա Ամանոս է կոչվում մինչև Լաոդիկեն անցնելը, ապա կոչվում է Բահրա լեռ և Տաննուխ, մինչև եմեսա հասնելը, ապա կոչվում է Լիբանանի լեռ և ձգվում է Ասորիքով, մինչև հասնում է Կարմիր (Կուլզում) ծովը մի կողմից և մյուս կողմից [Եգիպտոսի] Մուկաթթամին է կպչում:

Սա մի լեռ (լեռնաշղթա) է երկրագնդի վրա, որն սկիզբ է առնում Չինաստանից [...]: [Ինչ հասնելուց հետո] միանում է Ջիլի (Գեղան) դելմիկների (Դայլամ) և Ատրպատականի լեռներին, ապա Կովկասին (Կարկ), Ալանաց (ալ-Լան) ու Ռումի լեռներին: Հարավում նա միանում է Սպահանի (Իսֆահան) և Շիրազի լեռներին, մինչև որ հասնում է Պարսից (Ֆարս) ծովը: Ինչից չարունակվում է [նաև] դեպի Իրաք և աջ կողմում դեպի Հուլուան, Եկբատանի (Համադան), Կարմիսինի և Հուլուանի վրայով Իրաքի առաջին սահմանը: Այս լեռը (լեռնաշղթան) թեքվում է մի փարսախի վրա Հուլուանից Իրաքի ճանապարհով դեպի արևմուտքից հյուսիս, ուղղվում է Սահրաավարդ և Շահրազուր, մինչև որ հասնում է Տիգրիս, Տիգրիտի կողմերում: Այստեղ կա Բարամմա լեռը, Տիգրիսի արևելյան կողմում և Շուկուկ լեռը՝ Տիգրիսի արևմտյան կողմում: Բարամմայի կողմերից (լեռնաշղթան) բարձրանում է և գոյանում են Զինա և Զամիր լեռները, որոնք Նոր (Հադիսատ) Մոսուլից արևելք են: Տիգրիսի երկայնքով բարձրանում է մոտենալով ու հեռանալով և հասնում Ֆիչաբուր, Սամանին (Թմանին) լեռներով դեպի Արարաղ (Ջուդի), անցնելով Ամիդի կողմերը: Այստեղ բաժանվում են Դասին լեռները և Արտաքին Հայաստանի լեռները (Արմինիա ալ-խարիջա), որոնք կապված են Ներքին Հայաստանի[47] (Արմինիա ալ-դախիլա) լեռներին և սրանք ևս միացած են Ատրպատականի ու Թարարիստանի լեռներին: Այս լեռները կապված են Կովկաս (Կարկ) լեռներին, որոնք սկսում են Խազարաց ծովի հյուսիսում գտնվող Դարբանդից (Բաբ ալ-Աբուաբ) ու հասնում Գոգն ու Մագոգը (Յաջուջ ու Մաջուջ):

Այս լեռնաշղթան Ամիդի (Նփրկերտի) կողմերում չարունակում է ձգվել Տիգրիսի ու Եփրատի կողմերով և հասնում Սամոսատ (Սումայսաթ), առնչվում Մարաշի սահմաններին, որի մասին հիշել ենք և ապա անցնում Լիբանանի լեռների վրայով, հասնում է Սուրբ քաղաքը (Երուսաղեմ): Ապա Ռամլայից Ֆուսթաթի ընթացող ճանապարհի ձախ կողմով հասնում է [Եգիպտոսի] Մուկաթթամ լեռը և չարունակելով մինչև Հարավային Եգիպտոս (Սաիդ), միանում է Նուբիայի լեռներին, Նեղոսի երկու կողմերով[...]:

Ապա այս լեռները որոշ տեղերում երևում են քարացած ձևով, իսկ

այլ վայրերում փչրված ավազի լեռների կերպարանքով, մինչև Սիջիստասա և մերձվում անապատների մեջ, ինչպես վկայում են անցորդները, մինչև Աուդաղաստ և Օվկիանոս ծովը (Ատլանտյան):

էջ 170–171

Ինչ վերաբերում է Պաղեստին ջունդին (ռազմական գոտի), ապա Ասորիքի ջունդերից առաջինն է արևմուտքից մոտենալու դեպքում: [Սահմանային] Ռաֆհից մինչև Հադդ ալ-Լուջուն երկու օրվա ճանապարհ է հեծյալի համար: Իսկ լայնությունը Հորբեից (Յաֆա) մինչև Ռիհա, երկու օրվա ճանապարհ է ոտքով [...]:

Պաղեստինը Ասորիքի ամենահրաչալի մասն է և նրա (Պաղեստինի) մեծագույն քաղաքը Ռամլան է, իսկ Սուրբ քաղաքը (Երուսաղեմ) նրանից հետո երկրորդն է մեծությամբ: Սա գտնվում է լեռների վրա, ուր բարձրանում են Պաղեստինի ամեն կողմերից եկած մարդիկ: Սուրբ քաղաքում կա մի մզկիթ, որից ավելի մեծը չկա Իսլամի աշխարհում:

Իսկ Հորդանանի մեծագույն քաղաքը Տիբերիան է, որը քաղցրահամ ջուր ունեցող լճի վրա է, որի երկարությունը տասներկու փարսախ է, լայնությունը երկու, կամ երեք փարսախ: Ունի տաք հոսող ջրերի ակեր, որոնց աղբյուրը քաղաքից երկու փարսախ հեռավորության վրա է[...]:

էջ 174–175

Դամասկոսի ջունդի (ռազմական գոտու) մայրաքաղաքը (կասաբա) Դամասկոսն է, հարթ տարածության վրա կառուցված, ընկած է լեռների մեջ և առատ ջրեր ունի, ծառեր, ցանքսեր, որոնք նրան շրջապատում են: Այդ վայրը կոչվում է Ղութա[48]: Նրա լայնությունը մեկ օթևան (մարհալա) է երկու օթևան [երկարությամբ]:

Նա ունի մի մզկիթ, որից գեղեցիկը և չքեղը չկա Իսլամի երկրում: Նրա պատերը և գմբեթը, որը միհրաբի վրա է բարձրանում, մակուրայի մոտ կառուցել են սաբիները[49] և դա նրանց աղոթավայրն է եղել: Ապա անցել է [Հեթանոս] հույների (յունան) ձեռքը ու նրանք իրենց կրոնական պաշտամունքն էին կատարում: Հետո անցավ հրեաների և կռապաշտ ու հեթանոս թագավորների ձեռքը: Այդ ժամանակ սպանվեց Հովհաննես (Մկրտիչ) Զաքարիայի որդին և նրա գլուխը դրվեց այս մզկիթի դռան վերևում, որը կոչվում է Բաբ Ջայրուն: Ապա քրիստոնյաները տեր դարձան չենքին ու նրանց եկեղեցին դարձավ և այստեղ իրենց կրոնական պաշտամունքն էին կատարում:

Վերջապես եկավ Իսլամը և այն անցավ մահմեդականներին, որոնք այն մզկիթի վերածեցին: Բաբ Ջայրանի վրա դրվեց նաև Հուսայն իբն Ալիի[50] գլուխը, այն տեղում, ուր Հովհաննեսի Զաքարիայի որդու գլուխը կար:

Վալիդ իբն Արդ ալ-Մալիք [Սալիփան] չենացրեց և հատակը մարմար փռեց: Նրա ներքին պատերը երփներանգ մարմարով պատեց և նրա սյուները բծավոր մարմարով ծածկեց, իսկ սյուների խոյակները ոսկով պատեց: Միհրաբը ոսկեզօծեց ու գոհարներով զարդարեց, իսկ առաստաղը ոսկով պատեց և արձանագրություններ դրոշմեց, ինչպես նաև պատերի վրա: Ասվում է, որ միայն այս չենքի վրա ամբողջ Ասորիքի մի քանի տարվա հարկերը ծախսեց: Նրա կտուրը կապարով ծածկեց և, երբ կամենում էին լվանալ, ջուր էին թափում և ջուրը մզկիթի ամեն կողմերից կանոնավորապես ծորում էր:

Ասորիքի հարկաքանակը Մրվանյանների (Օմայանների) օրոք մեկ միլիոն ութ հարյուր հազարից ավելի էր:

Դամասկոսի սահմանների մեջ է Բաալբեկը, որը լեռան վրա կառուցված քաղաք է: Նրա բոլոր կառուցվածքները քարից են, նրանում կան պալատներ՝ հակայական սյուների վրա կառուցված[51]: Ասորիքի հողում չկան սրանից ավելի հրաշալի կամ մեծ քարե կառույցներ:

Սա մի հարուստ քաղաք է, առատ ընտիր բերքով ու մրգով, առատ ու էժան: Նա մոտ է Բեյրութ քաղաքին, որը Ռումի (Միջերկրական) ծովի ափին է և նրա նավահանգիստն է: Այստեղ է Ասորիքի ու նրա բոլոր ջունդերի զորակայանը և այստեղ են հավաքվում զորակոչի ժամանակ:

Բեյրութը Աուզաիի (իրավագետ) նստավայրն է եղել: Նրանում կան արմավենիներ, չաքարեղեգ և առատ բերքեր: Նա ծովային առևտրի կենտրոն է ներմուծման և արտահանման համար: Լավ ամրացված քաղաք է, ամուր պարսպով. բնակչությունը ունի լավ հատկանիշներ, պաշտպանվում է թշնամիներից ու նրա վարքը գովելի է ամեն տեսակետից:

էջ 176

10. Եմեսայի ջունդի (ռազմական գոտի) գլխավոր քաղաքը Եմեսան է, որը նույնպես հարթ և բարերեր դաշտում է: Նրա չեն վիճակում գտնվելու ժամանակ առողջարար օդ ուներ և իսլամի ամենալավ հողերից էր: Նրա ժողովուրդը ուներ թերություններ ու հաջողակություն և ահա հոռոմները մի քանի անգամ ներխուժեցին ու տակնուվրա արեցին: Նրանում չկան կարիճներ և օձեր ու եթե բերվեն, կատկեն: Ունի ջրեր, ծառաստաններ, առատ ցանքսեր և անասուններ և նրա շրջակա գավառները (ռասատիկ) առանց ոռոգման (անձրևով)

էին ջրվում: Այստեղ կա մի եկեղեցի, որի մի մասը մայր մզկիթ է, իսկ մյուս մասը քրիստոնյաներին է պատկանում և նրանք ունեն իրենց «զոհասեղանը» (հայքալ) և խորանը ու նրանց եկեղեցին Ասորիքի ամենամեծ եկեղեցիներից մեկն է:

Մեր օրերում հոռոմները ներխուժեցին ու նրա դաշտերը ապականեցին ու ավերեցին [ամեն ինչ]: Եմեսայի բոլոր ճանապարհները թե՛ չուկաներում, թե՛ փողոցներում քարով սալահատակված են: Սակայն նրանում անիշխանությունն ուժեղացավ, երբ հոռոմները ներխուժեցին և նրա տիրակալը հեռացավ, ապա որոշ մարդիկ, որոնք հոռոմների ձեռքից ազատվել էին, նորից հաստատվեցին: Անապատի [բնդևիները] ասպատակեցին թե՛ արվարձանները, թե՛ շրջակա գավառները: Կարծում եմ, որ հոռոմները կենդանի չունչ չեն թողել:

Տորտոսը (Տարտուս, Անթարթուս) բերդ է ծովի ափին և Ասորիքի բնակչության համար սահմանային ամրություն է: Նրանում կա Օսման իբն Աֆֆան [խալիֆայի] Ղուրանը (մուսհաֆ): Նրա չուրջը կա պարիսպ, որը նրան պաշտպանում է անապատի [բնդևիներից]: Նրանք մի քանի անգամ համառ դիմադրեցին հոռոմներին հուսահատական վիճակում գտնվելու պատճառով: Այս է պատճառը, որ Նիկեփոր [կայսրը] չատ չհամառեց [գրավելու]:

Շայզարը և Եպիփանիան (Համա) երկու փոքրիկ քաղաքներ են բարեկարգ, առատ ջրերով, ծառաստաններով, ցանքսերով, պտուղներով, բանջարեղենով և բավարար չափով ամրակուռ են պաշտպանվելու համար:

էջ 177

11. Կիննասրին Ջունդի (ռազմական գոտու) գլխավոր քաղաքը Հալեբն է, որը չեն էր, խիտ բնակչությամբ, լի հարստությամբ, ընկած էր Իրաքից եկող ճանապարհի վրա, որն ընթանում է դեպի Սահմանային ամրությունների գոտին և Ասորիքի մյուս Ջունդերը: Հոռոմները գրավեցին այն (Հոռոմները գրավեցին երեք Հարյուր յոթանասունից (980–981) հետո): Նա ունի քարաշեն ամուր պարիսպ, որը սակայն չպաշտպանեց նրանց Թշնամուց, Սայֆ ալ-Դաուլայի[52] վատ կառավարման և նրա [որոշ մասերում] քայքայված լինելու պատճառով: [Հոռոմները] մայր մզկիթը կործանեցին, ժողովրդին գերեվարեցին ու վաճառեցին այն (քաղաքը): Ունի փոքր միջնաբերդ, որը մեր օրերում է վերականգնվել, ուր որոշ մարդիկ ապաստանեցին Հալեբի գրավման ժամանակ և փրկվեցին: Սակայն Հալեբի գրավման ժամանակ թե՛ օտարների, թե՛ քաղաքի ժողովրդի ապրանքները և պիտույքները փչացան, չատերը կոտորվեցին ու հասարակ ժողովրդից մեծ չափով կոտորվեցին և այդ մասին ստույգ տեղեկությունները կարող են

մարդկանց տառապանք պատճառել և վհատեցնել իսլամը և մահմեդականներին:

Նա (Հալեբը) ունեցել է գեղեցիկ չուկաներ, բաղնիքներ և մեծ իջևանատներ (ֆանադիկ), բացաստաններ, տեսային լայն բակեր, չեյխեր և ընտիր բնակչություն: [Մեր ժամանակներում, այսինքն հիջրայի հինգ հարյուր յոթանասուն (1174–1175) թվականից հետո, ավելի լավ վիճակում է քան եղել է և առավել չեն է, լի բնակչությամբ, կան բազմաթիվ չեյխեր, բարձր խավի մարդիկ, իսկ նրա բերդը անառիկ է, չատ ամուր և անհնար է գրավել]:

Այժմ նրա (քաղաքի) ամիրի ստորության և ազահության հետևանքով երկու կողմից ճնշված է. մի կողմից նա հոռոմների ձեռքում է և ամեն մի մարդ իր տան ու խանութի համար գլխահարկ է վճարում, իսկ մյուս կողմից ամիրը որևէ էժան կամ թանկ ապրանք, որ բերվում է, գնում ու չնչին գնով վաճառում է բնակիչներին, ամենայլայնդակ ու անարգ ձևով:

էջ 178

Կիննասրինը մի քաղաք է, որի անվամբ կոչվել է այս գավառը (քուրա): Այս կողմերի ամենաքիչ չինություններ ունեցող [քաղաքներից էր], թեև հաճելի արտաքին է ունեցել և մատակարարության կենտրոն է եղել իր [մթերքների էժանությամբ, առատությամբ և առատ ջրերով: Հոռոմները կործանեցին և կարծես երբեք գոյություն չի ունեցել, բացի որոշ ավերակներից և ինչպիսի՞ ավերակներից]:

էջ 179

12. Ավասիմը (ապաստան)[53] գավառի անունն է և ոչ թե քաղաքի: Նրա մայրաքաղաքն (կասաբա) է Անտիոքը, որը Դամասկոսից հետո Ասորիքի ամենաբարեկարգ քաղաքն է: Մինչև օրս նրա չուրջը կա ժայռ քարե պարիսպ, իսկ նրա վրա իշխում է մի լեռ: Ունի դաշտեր, արոտավայրեր, ծառաստաններ, ջրաղացներ և այլ միջոցներ, որոնք բավարարում են բնակչությանը: Ասվում է, որ ձիավորը նրա պարսպի չուրջը մեկ օրում կարող է պտտվել: Ունեն առուներ, որոնք հոսում են նրանց չուկաների, տների, փողոցների ու մայր մզկիթի միջով: Նա (Անտիոքը) ունեցել է կալվածքներ, գյուղեր ու բարեբեր հողեր: Սակայն Թշնամին գրավեց ու տիրեց նրան: Թեև նախօրեին, երբ ղեռ մահմեդականների ձեռքում էր, արդեն վիճակը վատացել էր, ապա այժմ էլ ավելի խանգարվեց: Հոռոմներն այն նվաճեցին [երեք հարյուր] հիսունինը (969–970) թվականի սկզբին: Ոչ ոք նեղություն չքաշեց հոռոմների մի մաղին դիպչել, ոչ մի փորձ չկատարվեց քաղաքը փրկելու:

էջ 180-181

13. Բալիսը փոքրիկ քաղաք է Եփրատի արևմտյան ափին: Իրաքի կողմից Ասորիքի առաջին քաղաքն է: Այնտեղ գնացող ճանապարհը բանուկ էր. նրանից մինչև Եգիպտոս և այլ վայրեր գնացող հարթ ճանապարհ կա: Սա Ասորիքի ժողովրդի նավահանգիստն էր Եփրատի ափին, սակայն Սայֆ ալ-Դաուլայից հետո նրա շենքերը անչքացան, կարավաններն ու վաճառականներն անհետացան: Քաղաքն ունի շատ հին պարիսպ: Նրա և Եփրատի միջև պարտեզներ կան: Ամենակարևոր բերքերը ցորենն ու գարին են: Այնտեղ պատրաստում են շատ առատ օճառ:

Բալիսի (Բարբալիսոս) մոտ կա Մամբուկ (Մանբիջ) քաղաքը, որը բերքառատ և ամրացված քաղաք է, բազում հին չուկաներով, ունի բազմաթիվ բյուզանդական (ռումիյա) հնություններ: Այնտեղ պատրաստում են չամչից ծամելու քաղցրեղեն (գաբիր նաթիֆ), որը պատրաստում են ընկույզով, պիստակով, քնջութով, որի նմանը տեսել եմ միայն Բուխարայում, որը նրանից քաղցր էր: Բուխարացիները նրան բուրումնավետ նյութեր են ավելացնում: Ունի որթատունկ, որը չոռոգված հողի վրա է աճում, շատ առատ է և նրա չամիչը տարվում է Հալեբ և այլ վայրեր: Այս քաղաքը գտնվում է անապատային դաշտում, բայց ունի խոնավ հող, որը կարմիր է կամ դեղին քրքմագույն. նրա հողերի մեծ մասը արհեստական ոռոգում չունի: Շատ հին պարիսպ ունի:

Նրան մոտ է Սանջա քաղաքը, որը փոքրիկ է և կողքին ունի քարե կամուրջ, որը կոչվում է Սանջայի կամուրջ: Իսլամի երկրում չկա ավելի հրաշալի կամ ավելի մեծ կամուրջ և այն օրինակ են բերում, ասելով աշխարհի հրաշալիքներն են եղեսիայի (Ռուհա) նկեղեցին ու Սանջայի կամուրջը:

Սամոսատ քաղաքը նույն Եփրատի ափին է և մոտիկ է Ջիսր Մանբիջ կոչված քաղաքին: Սրանք երկու փոքր ամրացված քաղաքներ են և նրանց դաշտերը լավ ջրված են իրենց ջրերով, սակայն մշակելի դաշտերը չեն ոռոգվում և նրանց ջուրը գալիս է Եփրատից:

էջ 181

14. Մալաթիան մի մեծ քաղաք էր և Սահմանային ամրությունների գոտում (Սուղուր) ամենաֆառավորն էր, ամենալավ զինվածը և քաջարի զորք ուներ: Այս շրջանը (Միջագետքի սահմանային ամրությունների գոտին) տարածվում է Ամանոսի (Լուքքամ) լեռներից մինչև Ջազիրայից այն կողմ (Հյուսիս) ընկած մասերը: Նրանում կան բազմաթիվ լեռներ, որոնց վրա առկա են բոլորին մատչելի բնական-

նիներ, նշենիներ, որթատունկեր, նռենիներ և այլ ձմեռային և ամառային մրգերի ծառեր, որոնք ոչ մի տիրոջ չեն պատկանում: Այժմ նա Հռոմների երկրում (Ռում) ամենահզոր քաղաքներից է: Այնտեղ ապրում են հայեր: Նա [Հռոմների կողմից] նվաճվել է երեք հարյուր տասներեք (931) թվականին և դա իսլամի երկրների համար առաջին մեծ աղետն էր Սահմանային ամրությունների գոտում: Դրանից հետո Սահմանային ամրությունների գոտու բնակիչների վրա աղետները չատացան, նրանց անձերի, ունեցվածքի, կալվածների ու նրանց տիրակալների նկատմամբ, սակայն այս բոլորը մոռացվել է:

Հիսն Մանսուր կոչված քաղաքը մի փոքրիկ ամրացված վայր էր, որն ուներ մզկիթ, չրջակա գավառներ, գյուղեր, որոնք ոռոգում չունեին, սակայն ճակատագիրը որոշել էր նրանց կորստյան մատնել Համդանիների ու Հռոմների ձեռքով:

Հաղասն ու Մարաչը երկու փոքր քաղաքներ էին, որ նվաճեցին Հռոմները դրանից առաջ, սակայն Սայֆ ալ-Դաուլա Ալի իրն Աբդալլահը վերանվաճեց, իսկ Հռոմները նորից եկան ու գրավեցին մահմեդականների ձեռքից: [Սակայն մահմեդականները նվաճեցին այն Ռումի տեր Մասուդ իրն Կիլիջ Արսլան ալ-Սալջուկիի[54] ձեռքով հինգ հարյուր քառասունհինգ (1150-1151) թվականին և այժմ մնում են մահմեդականների ձեռքում]: Նրանք ունեին ցանքսեր, ծառաստաններ, մրգատու ծառեր և երկուսն էլ սահմանային ամրություններ էին, որտեղ մահմեդականները կայազորներ էին պահում, սրբազան պայքար մղում և ավար վերցնում: Սակայն այս մարտունակությունը թուլացավ, գավառներն անտեր մնացին, բարիքները վերացան, տիրակալները (իշխողները) դարձան չահամոյ, իսկ ժողովուրդը՝ խռովարար, և այսպիսով բարեպաշտ մարդիկ մնուան, երկիրը ավերվեց, սրբազան պայքարը (ջիհադ) վերացավ և իրականացավ Բարձրյալի հայտնությունը. «եթե կամենաք մի քաղաք կործանել, մեր պատվիրներն առաքենք մեծահարուստներին»:

Հարունիյան Ամանոս (Լուքքամ) լեռներից արևմուտք գտնվող կիրճերից մեկում կառուցված մի փոքրիկ բերդ էր, որը չինել էր Հարուն ալ-Ռաշիդը: Ես այն տեսել եմ, երբ բարեկարգ վիճակում էր. նրա բնակչությունը մեծ համառությամբ ու քաջությամբ սրբազան պատերազմ (ջիհադ) էր մղում, արշավում էր Ռումի երկիրը, հանկարծակի ներխուժում և ավար էր բերում: Սակայն Հռոմները նվաճեցին այն:

Ալեքսանդրեկը (Իսքանդարուն) նույնպես մի բերդ էր Ռումի (Միջերկրական) ծովի ափին: Այստեղ կային արմավենիներ, մշակված դաշտեր, բերք ու առատություն: Սակայն մտավ թշնամին, նվաճեց ու ավերակեց:

Նույնպես և Տինատը մի բերդ էր ծովի ափին, ուր սոճիներից փայտ

էին կտրում և ապա անսահման քանակությամբ տանում Ասորիք, Եգիպտոս ու Սահմանային ամրություններ գոտին: Այստեղ կային ուժեղ ռազմիկներ, որոնք լավ գիտեին Հռոմեների երկրի թույլ կողմերը և նրանց ծանծաղուտներն ու վտանգավոր տեղերը:

Քանիսան ևս մի բերդ էր, ուր կար մզկիթ և սահմանային ամրություն, որը մեկուսացած էր ծովի ափից և մոտ էր Մուսակկար բերդին, որը հիմնել էր Օմար իբն Աբդ ալ-Ազիզը ու չենացրել: Այստեղ նա ուներ մզկիթ, ուր կար իր ձեռքով գրված Ղուրան (մուսհաֆ): Նրա բնակիչները ազնիվ ցեղի մարդիկ էին, Արդ Շամսի տոհմից, աչխարհից հրաժարված ու շահ չփնտրող և ապրում էին բարեգործական նպաստ ստանալով: Նրանք ամենքը ոչնչացան:

Անազարբան մի քաղաք էր Ղաուրի քաղաքների նման: Այնտեղ աճում էր արմավենի, հողը բարեբեր էր, հարուստ մրգերով ու ցանքսերով: Սա այն քաղաքն է, որտեղ Վասիֆ Ներքինին (խադիմ) կամենում էր մտնել Ռումի երկիրը և Մուտադիդ [խալիֆան] հասավ նրան: Նա ներսից ու դրսից բարեկարգ էր: Պարսպից ներս լավ վիճակում էր և ամեն ինչում հաճելի:

էջ 183–184

15. Մամեստիան բաղկացած է երկու քաղաքներից, որոնցից մեկը կոչվում է Մամեստիա, իսկ մյուսը՝ Քաֆարբայա, որոնք Պիրամոս (Ջայհան) գետի երկու ափերին էին: Նրանց միացնում էր մի քարե կամուրջ և երկուսն էլ ամրակուռ են, բարձունքի վրա տեղավորված: Նրա մայր մզկիթում նստած մարդը կարող էր հայացքով ընդգրկել ծովի կողմից չորս փարասախ հեռավորությամբ մի զաչտ, որը իր առջև սփռված կլինի մի կանաչ ու ծաղկուն ծածկոցի նման: Նա (Մամեստիան) ունի հոծ բնակչություն, մեծ կարողություն, բազում չուկաներ և բարեկարգ վիճակ: Պիրամոսը մի գետ է, որ բխում է Ռումի երկրից ու հասնում մինչև Մամեստիա և նրա շրջակա գավառը, որը կոչվում է Մալուան, ապա թափվում է Ռումի (Միջերկրական) ծովը: Նրա վրա եղել են բազում գյուղեր ու կալվածներ, հոտեր, անասուններ: Այժմ նրա բնակիչներից մի կենդանի չունչ չի մնացել:

Ադանան նույնպես մի քաղաք էր Մամեստիայի երկու կողմերից մեկի նման, Սարոս (Սայհան) գետի վրա, նրա արևմտյան ափին: Սարոսը Պիրամոսից փոքր է, նրա վրա կա մի չատ զարմանահրաչ կամուրջ: Այս գետը ևս բխում է Ռումի երկրից: Այս քաղաքը ևս հոծ բնակչություն ուներ և ամեն տեսակետից բարեկարգ էր ու գտնվում էր Տարսոնի ճանապարհի վրա:

Իսկ Տարսոնը այնպիսի հայտնի քաղաք է, որ ավելորդ է նրա հռչակավոր լինելը չնչտել: Սա մեծ քաղաք էր և այն հիմնել (վերա-

կանգնել) է Մամուն իրն Ռաչիդ [խալիֆան], քաղաքի վերածել ու կրկնակի քարե պարիսպներ է կառուցել: Այստեղ եղել են ձիավորների ու հետևակ ռազմիկների ջոկատներ, ռազմամթերք, ռազմական գործիքներ, անասուններ, զենքեր, չինություններ, իսկ հողը բարեբեր էր, առատ բերքով և քաղաքը՝ հարուստ ու ամեն ինչով ապահովված: Ըստ ամենայնի, այնպիսի վիճակում է եղել, որ ոչ անհավատները, ոչ էլ մահմեդականները չունեին այսպիսի սահմանային ամրություն: Մահմեդական բոլոր կառավարիչները միայն լիակատար հաղթանակ ու փառք են ձեռք բերել: Թե ցամաքում, թե ծովի վրա արշավանքները միայն հաղթանակով, ավարով ու զերեվարությամբ են վերջացել, որը հազիվ կարելի է խոսքերով պատմել կամ ստուգել: Նրա (Տարսոնի) ու Ռումի երկրի միջև կային անմատչելի ճյուղավորված լեռներ, որոնք սկսում են Ամանոսի լեռներից ու պատնեչ են կազմում երկուսի միջև: Լսել եմ բազում խելացի, տրամաբանող, գիտուն, խորաթափանց և քաղաքագետ մարդկանցից, թե այստեղ (Տարսոնում) և նրա շրջանում եղել է հարյուր հազար ձիավոր իմ այցելությունից քիչ ժամանակ առաջ: Բանն այն է, որ Սիջիստանի, Քիրմանի, Ֆարսի, Խուզիստանի, Ռեյի, Սպահանի (Խաֆահան), ամբողջ Ջիբալի, Թաբարիստանի, Ջազիրայի, Ատրպատականի, Իրաքի, Հիջազի, Եմենի, Ասորիքի բոլոր մասերի, Եգիպտոսի, Մաղրիբի ամեն մի մեծ քաղաքի բնակիչները այստեղ ունեին տներ (դար) և հոգևորական ռազմիկների մենաստաններ (ռիբաթ) ու կարող են այդ երկրների զաղիները (հավատի ռազմիկներ) իջևանել ու հսկել: Նրանց հատկացվում էին հասույթներ, օժանդակության նպաստներ, քանդի տիրակալները և մեծահարուստները կամավոր օգնում էին հանուն բարեգործության և չկար մի պաշտոնյա կամ կարևոր անձնավորություն, որ այնտեղ վակֆ արած չլիներ կալվածներ՝ հողամշակներով, երկրագործներով ու բերքերով, ծածկած չուկաներով (մուսակկաֆ), պանդոկներով (ֆանադիկ), տներով, բաղնիքներով, իջևանատներով (խան), բացի կտակներից՝ ոսկով, արծաթով ու անասուններով:

Այս բոլորը կործանվեց ու նրանք (բնակիչները) ևս վերացան. կարծես այնտեղ չէին ապրել և չէին բնակվել ու եղավ այնպես, ինչպես Բարձրյալն ասել էր. «արդյոք զգու՞մ ես նրանց ներկայությունը կամ լսո՞ւմ ես որևէ մրմունջ»:

Աուլասը ծովի ափին մի բերդ էր, ուր բարեպաշտ մարդիկ ամրացրել էին: Նրանք Ալլահի ծառայությանը նվիրված էին: Դա Ռումի (Միջերկրական) ծովի վրա չեն վայրն էր և դրանով էր սկսում թչնամին իր հարձակումները:

Բաղրասը մի բերդ էր, ուր մզկիթ կար և գտնվում էր Սահմանային ամրությունների (Սուղուր) ճանապարհին: Նրանում կար հյուրատուն (դար դիաֆա), որը հիմնել էր Զուբայդան և Ասորիքում մահմե-

դականների ունեցած միակ հյուրատունն էր:

էջ 184

16. Մեոյալ ծովը մաս է կազմում Ղաուրին, Ասորիքի մուտքի մոտ և Զուղարին մոտիկ: Մեոյալ է կոչվել, քանզի նրանում կենդանի արարածի ոչ մի նշան չկա [...]:

էջ 185–186

17. Ինչ վերաբերում է Ասորիքի ճանապարհներին, ապա դա երկարությամբ ընթանում է Մալաթիայից մինչև Ռաֆհ (եգիպտոսի սահմանը):

Ճանապարհը Մալաթիայից Մանբիջ չորս օր է, Մանբիջից Հալեր՝ երկու օր, Հալեբից Եմեսա (Հիմս)՝ հինգ օր, Եմեսայից Դամասկոս՝ հինգ օր, Դամասկոսից Տիբերիա՝ չորս օր, Տիբերիայից Ռամլա՝ երեք օր, Ռամլայից Ռաֆհ՝ երկու օր: Ընդամենը քսանհինգ օր:

Իսկ լայնությամբ ընթացող ճանապարհը որոշ տեղերում ավելի է, քան այլ վայրերում: Նրա առավելագույնը գտնվում է երկու ծայրերում:

Նրա մի ծայրն սկսում է Եփրատից Ջիսր Մանբիջի վրայով Մանբիջ, ապա Կուրուս, որը Կիննասրինում է, ապա Ավասիմ Անտիոքի՝ սահմանի վրա, անցնում է Ամանոս (Լուքքամ) լեռնաշղթան դեպի Բայաս ու հասնում Տինատ, հետո Մուսակկար, Մամեստիա, Ադանա, Տարսոն: Այս բոլորը տասը օթևան (մարհալա) է:

Իսկ մյուս ծայրն սկսվում է Պաղեստինից: Նախ Հորբնից (Յաֆա), որը ծովի ափին է, ճանապարհը հասնում է Ռամլա, ապա Սուրբ քաղաքը (Երուսաղեմ), Երիքով (Ռիհա, Արիհա), Զուղար, Ջիբալ (լեռներ) Շուրաթ, մինչև որ հասնում է Մաան: Նրա արձանագրված չափը վեց օթևան է:

Այս երկու ճանապարհների միջև Ասորիքը չատ նեղ է և Հորդանանի, Դամասկոսի ու Եմեսայի [ջունդերը] երեք օթևանից ավելի չեն: Դամասկոսից Բեյրութ, որը Ռումի (Միջերկրական) ծովի վրա է, երկու օրվա ճանապարհ է [ոտքով] դեպի արևմուտք: Դամասկոսից մինչև Ղութայի հեռավոր ծայրը, որը արևելքում հասնում է անապատ՝ մեկ օր է: Եմեսայից Տորտոսա (Անթարթուս), որը Ռումի ծովի վրա է՝ երկու օր է ոտքով դեպի արևմուտք, Եմեսայից Սալամիա, որն անապատի վրա է դեպի արևելք՝ մեկ օր, Տիբերիայից Տյուրոս (Սուր), որն արևմուտքում ծովի վրա է՝ մեկ օթևան (մարհալա): Նրանից հետո անցնելով Ֆիկը դեպի Բանու Ֆազարայի հողերը արևելք՝ մեկ օթևանից պակաս:

Ահա Ասորիքի երկարության ու լայնության ճանապարհները:

էջ 186–187

18. Միջանկյալ տարածությունների համար սկսենք Պաղեստինով, քանզի նա Ասորիքի առաջին ջունդն (ռազմական գոտի) է արևմուտքի (մաղրիբ) կողմից: Նրա գլխավոր քաղաքը (կասաբա) Ռամլան է: Նրանից Հորբն (Յաֆա) մեկ օթևան է, Ռամլայից Ասկալոն (Ասկալան)՝ մեկ օթևան, այնտեղից Ղազզա՝ մեկ օթևանից պակաս, Ռամլայից Սուրբ քաղաք (Երուսաղեմ)՝ մեկ օր, Սուրբ քաղաքից Մասջիդ (մզկիթ) Իբրահիմ՝ մեկ օր, Սուրբ քաղաքից Երիքով (Ռիհա, Արիհա)՝ մեկ օթևան, Սուրբ քաղաքից Բալկա՝ երկու օթևան, Ռամլայից Կեսարիա՝ մեկ օթևան, Ռամլայից Նաբուլուս՝ մեկ օթևան, Երիքովից Զուղար՝ մեկ օթևան, Զուղարից Ջիբալ ալ-Շարատ՝ մեկ օթևան, Ջիբալ Շարատից դեպի ալ-Շարատի վերջը՝ մեկ օթևան:

Հորդանանի գլխավոր քաղաք (կասաբա) Տիբերիայից Տյուրոս (Սուր) մեկ օր է, այնտեղից Ակաբատ Ֆիկ՝ մեկ օթևան, սրանից Բիսան՝ երկու թեթև օթևան, իսկ սրանից Ակրա (Աքքա)՝ մեկ օր: Հորդանանը Ասորիքի ամենափոքր ջունդն է, ամենակարճ ճանապարհներով և արդեն երկար տարիներ է, որ կառավարվում է Աբու Մանսուր Ահմադ իրն ալ-Աբբասի ձեռքով ավելի չատ ազատ կառավարմամբ քան պայմանագրով, երկու հարյուր հազար դինար [հարկերի] դիմաց:

Դամասկոսի ջունդի գլխավոր քաղաքը Դամասկոսն է և նրանից Բաալբեկ երկու օր է, սրանից Բեյրութ՝ երկու օր, Բեյրութից Տրիպոլիս՝ երկու օր, Բեյրութից Սիդոն՝ երկու օր, Դամասկոսից Ազրիատ՝ չորս օր և մինչև Ղութայի վերին մասը՝ մեկ օր և դեպի Հաուրան ու Բասնիյա՝ երկու օր:

Կիննասրինի ջունդի մեծ քաղաքը Կիննասրինն է, սակայն կառավարչությունը (իմարա), չուկաները, հիմնական բնակչությունը և որոշ վարչական ծառայություններ փոխադրվել են Հալեր: Հալերից Բալիս երկու օր է, Հալերից Կիննասրին՝ մեկ օր, Հալերից Ասարիբ՝ մեկ օր, Հալերից Կուրուս՝ մեկ օր, Հալեպից Մանբիջ՝ երկու օր, Հալերից Խունասիրա՝ երկու օր:

էջ 187–188

19. Արդեն հիշել ենք, Ավասիմի մասին պատմելիս, թե ի՞նչ էր կատարվել նրա հետ, ընկնելով հոռոմների ձեռքը, ուստի ավելորդ է կրկնել: Ավասիմի գլխավոր քաղաքն (կասաբա) է Անտիոքը, որտեղից մինչև Ադանա երեք օթևան (մարհալա) է, նրանից Բաղրաս՝ մեկ օր,

նրանից Ասարիր՝ երկու օր, նրանից մինչև Եմեսա՝ չորս օթևան, նրանից Մարաշ՝ երկու օր, նրանից Հադաս՝ երեք օթևան:

Սահմանային ամրությունների գոտին չունի [ընդհանուր] գլխավոր քաղաք (կասաբա) և ամեն քաղաք ինքնուրույն է: Մանբիջը Սահմանային ամրություններին մոտիկ է և նրանից մինչև Եփրատ մի թեթև օթևան է: Մանբիջից մինչև Կուրուս երկու օթևան է, նրանից մինչև Մալաթիա՝ չորս օր, մինչև Սամոսատ՝ երկու օր, մինչև Հադաս՝ երկու օր: Սամոսատից մինչև Շիմշաթ՝ երկու օթևան, Շիմշաթից Հիսն Մանսուր՝ մեկ օր, Հիսն Մանսուրից Մալաթիա՝ երկու օր, Հիսն Մանսուրից Զապևտրա (Զիրաթրա)՝ մեկ օր, մինչև Հադաս՝ մեկ օր. Մալաթիայից Մարաշ՝ երեք մեծ օթևան, իսկ Մարաշից Հադաս՝ մեկ օր:

Սրանք են Ջազիրայի (Վերին Միջագետքի) Սահմանային ամրությունների ճանապարհները:

Ինչ վերաբերում է Ասորիքի Սահմանային ամրությունների գոտուն, ապա Ալեքսանդրեևկից մինչև Բայաս մեկ թեթև օթևան է, Բայասից Մամեստիա՝ երկու օթևան, Մամեստիայից Անարզաբա՝ մեկ օթևան, Մամեստիայից Ադանա՝ երկու օթևան, Ադանայից Տարսոն՝ մեկ օթևան, Տարսոնից Աուլաս, որը Ռումի (Միջերկրական) ծովի ափին է՝ երկու օր, Տարսոնից Ջաուզատ՝ երկու օթևան, Տարսոնից Բայաս, որը Ռումի ծովի ափին է՝ երկու փարսախ, Բայասից Քանիսա և Հարունիյա՝ մեկ օրից պակաս, Հարունիյայից Մարաշ, որը Ջազիրայի սահմանային ամրություններից է՝ մեկ օթևան:

Սրանք են Սահմանային ամրությունների գոտու բոլոր ճանապարհները:

էջ 188–189

20. Արդեն վերջացրել եմ այն, ինչ ուզում էի ասել Ասորիքի մասին, այն բանից հետո, երբ խոսել էի Մաղրիբի, Եգիպտոսի (Միսր) և Ասորիքի մասին, որպես Ռումի (Միջերկրական) ծովի վրա ընկած երկրների և վերջացրի նաև այս նկարագրությունը:

Հնարավորություն չկա հիշելու այն [հողերի] հարկերը, որոնք արդեն Ասորիքի ժողովրդի ձեռքում չեն, իսկ Ասորիքի մնացածը, որը մահմեդականների ձեռքին է, որի վրա նրանց տիրապետությունը իրական է և հրամանը գործադրվում է, ապա դա այն է, որ գտնվում է Ռումի (Միջերկրական) ծովի ափին Տրիպոլիսից և Անաֆայից մինչև Հոբբևի (Յաֆա) և Ասկալոնի կողմերը, քանզի Լաոդիկեն և ինչ որ նրան է պատկանում ու նրա դիմաց է գտնվում, նրանց հարկատվության (գլխահարկի վճարման) և տիրապետության տակ է: Ահա այս մնացածը Հոռոմների ձեռքին է և նրանց իշխանության ու բռնակալության տակ է, որը սրով են նվաճել և նրանց իշխանության տակ: Նրա (Ասորիքի) բնակիչներից չատերը համակերպվել են գլխահարկ վճարել, սակայն կարծում եմ, որ նրանք ի վերջո քրիստոնյա կդառնան, ազատվելու գլխահարկի նվաստացումից և կամենալով բարեկարգ ու հանգիստ կյանք վարել:

Մնացածների (Ասորիքում) հարկերի քանակը չեմ կարող հիշատակել, քանզի երկար տարիներից ի վեր ոչ մի իսկական օրենք (կանուն) չի եղել կամ պատշաճ ու արդարադատ ձևով ոչինչ չի արվել: Բանն այն է, որ [երեք հարյուր] քառասուն (951–952) թվականից ի վեր ամեն մարդ մյուսի վրա ձեռք է գցում, ամեն մեկն ուզում է մի բան ձեռք բերել, ինչ էլ որ այդ օրը հնարավոր է. ոչ ոք չի ուզում մտածել չենացման մասին և ոչ էլ դրան ուշադրություն է դարձնում:

Հնում նրա հարկերի քանակը, այն բանից հետո, երբ նրանից հանվում էին կառավարիչների կարիքները, զորքերի ռոճիկը, պաշտոնյաների, քարտուղարների, վարչական ապարեզի աշխատողների վարձքերը, երեսունինը միլիոն հինգ հարյուր հազար դիրհեմ էր լինում:

Ես պրպտել եմ Ասորիքի հասույթի հաշիվները, որոնք պարունակում են գավառների ու ջունդների (ռազմական գոտիներ) հարկերը և ինչպես տեղեկացել եմ Ալի իբն Իսայի ու Մուհամմադ իբն Սուլայմանի պաշտոնյաներից երկու հարյուր իննսունվեց (908–909) և երեք հարյուր վեց (918–919) տարիների համար ամեն ինչով, ներառյալ արքունի գանձարանի (բայտ ալ-մալ) իրավունքը, ավելորդ հարկերը և առանց հաշվելու պաշտոնյաների վարձքը, գումարը դառնում էր երեսունինը միլիոն դիրհեմ:

ՀԱՅԱՍՏԱՆ, ԱՏՐՊԱՏԱԿԱՆ ԵՎ ԱՌԱՆ

էջ 331 – 355

Այժմ դառնանք արևմուտք դեպի Հոռոմների երկիրը և նկարագրենք նրա արևելյան սահմանների վրա ընկած իսլամի վերջին [մասերը]: Այն որից կսկսեմ, Հայաստանն է, Առանն ու Ատրպատականը (Ադարբայջան): Այս ամենը մի երկրամաս (իկլիմ) համարեցինք այն պատճառով, որ դա, ինչքան ես տեսել եմ, իմ ամբողջ կյանքում և ինձանից առաջ եղածները հաղորդել են, մի մարդու թագավորություն

* *Այս տողերը գրելու ժամանակ Թեև Բագրատունյաց Հայաստանը լրիվ անկախ պետություն էր, այսուհանդերձ արաբ մատենագիրները այն տեսականորեն համարում էին իսլամի (խալիֆայության) երկրների մեջ և հենց այդ հիման վրա Հայաստանը միացնում էին մահմեդական աշխարհին:*

է*, ինչպես Իրն Աբու-լ-Սաջի[55], նրա ծառա (դուլամ) Մուֆլիհի, Դայսամ իրն Շազալավայհի և ալ-Մարզուբան իրն Մուհամմադի** օրոք, որը հայտնի է որպես ալ-Սալլար, մոտիկ ժամանակներում ու հին ժամանակներում, ինչպես Ֆադլ իրն Յահիան և Աբդալլահ իրն Մալիք ալ-Խուզաին և ուրիշներ:

Նրան չրջապատում են արևելքից Ջիբալը, Դայլամը և Խազարաց (Կասպից) ծովը, իսկ արևմտյան կողմից նրան սահմանակից է Հայոց երկիրը (բիլադ ալ-Արման)*** և Ջազիրայի մի մասը: Հյուսիսային կողմից նրան սահմանակից է Ալանաց երկիրը (ալ-Լան) և Կովկասի (Կարկ) լեռները, իսկ հարավից՝ Իրաքի սահմանները և Ջազիրայի մի մասը:

Իսկ սա Հայաստանի, Ատրպատականի և Առանի քարտեզն (սուրատ) է:

[Հայաստանի], Ատրպատականի և Առանի քարտեզի վրա գտնվող քաղաքների ու գրվածքների բացատրությունը.

Քարտեզի վերևում գրված է՝ Հայաստանի, Ատրպատականի և Առանի քարտեզ, իսկ դրանից ձախ, անկյունում՝ Հյուսիս:

Աջ կողմի վերևում նկարված է ծովը, որի ափին կա Դարբանդը (Բաբ) և Շապորան (Շաբուրան): Դարբանդի մոտից սկսում է մի լեռնաշղթա, որն այստեղից ուղղվում է ձախ և նրան զուգահեռ գրված է՝ Ալանաց կողմերը, Կովկաս լեռները, Սարիրը և Հարևան ազգերը: Ներքևի մասում կան հետևյալ քաղաքները՝ ալ-Լայիջան, Կաբխի, Շաքքի (Շաքե), Կապաղակ (Կաբալա): Դրա ներքևում կա Կուր (Քուռ) գետը, որը թափվում է ծովը: Այս գետի վրա են և Լեռների հետ կապված են՝ Տիղիս (Տաֆլիս, Տիֆլիս) քաղաքը և Բարդաջը[56]: Ապա Շապորանից մի ճանապարհ անցնելով Շիրվան (Շաբուան) ու Շամախի (Շամախիյա) քաղաքներով հասնում է Բարդաջ, ապա Պարտավ (Բարդաա): Պարտավից մի ճանապարհ գնում է Տիղիս և այդ ճանապարհի վրա են Գանձակը (Ջանզա), Շամխորը, Հունարակերտը[57] (Խունան) և ալ-Կալաան: Այստեղ բաց տեղում գրված է Առան (ալ-Ռան):

---

* 10-րդ դարի արաբ աշխարհագրագետները համարում են, որ Հայաստանը (և Առանը) Ատրպատականին ենթակա երկրներ են եղել: Առանն իրոք ենթակա է եղել, իսկ Հայաստանի պարագային թե՛ Սաջյանները, թե՛ Սալարյանները նկրտումներ ունեին Հայաստանի հանդեպ, որը պատմիչների մոտ արտահայտվել է որպես տիրապետություն:

** Մարդուբանը հիմնադիրն է Ատրպատականում Սալարյանների (941-983) ամիրության:

*** Հայոց երկիր (բիլադ ալ-Արման) արտահայտությունը արաբ պատմիչների մոտ տարբեր իմաստներով է օգտագործված: Այս պարագային նշանակում է Արևմտյան (բյուզանդական) Հայաստանը (Փոքր Հայք, Բարձր Հայք և այլն):

Առան գավառի (նահիա) սահմանը հարավից Արաքսն (ալ-Ռաս) է, որի վրա է Վարդանակերտը (Վարսան), իսկ Վարդանակերտից աջ, գետի մոտ կա Բարզանդը: Ճանապարհը Պարտավից Բարզանդ շարունակվում է դեպի Արդաբիլ, Մայանիջ, Խունաջ[58], մինչև Զանջան: Բաց տեղում, Արաքս գետի վերևում գրված է Ատրպատական (Ադարբայջան), իսկ ցամաքից մի մասի վրա, որը մտնում է ծովի մեջ, այս գրության վերջում կա՝ Մուղան (Մուկան): Այս գրվածքից ցածր, ներքև թեքվող գրով, ծովի ու լեռների միջև, տարածության վրա կա ալ-Ջիլ (Ջիլան), իսկ ներքևում՝ Դայլամ: Դրանից ներքև լեռանը կպած է Դինավարը: Արդաբիլից ձախ կա մի լեռ, որի վրա գրված է Սավալան (Սաբուլան) լեռ: Արդաբիլից ձախ գնում է մի ճանապարհ դեպի Մայմադ, Ահար և Վարզական, ապա դեպի Դվին (Դաբիլ): Իսկ Դվինը կպած է մի լեռան, որի վրա գրված է Մեծ Մասիս (Հարիս) և Փոքր Մասիս (Հուայրաս) լեռները: Այս լեռանը աջից կպած է Նախճավան (Նաչավա) քաղաքը: Լեռից աջ տարածության վրա գրված է Հայաստան (Արմինիա):

Արդաբիլից մի ճանապարհ գնում է Բաղնչ (Բաղլիս) քաղաքը, որը լեռների ներքևի հետ է կապված: Այս ճանապարհի վրա կան՝ Սարահ, Մարաղա, Դախսաուական, Դավրիժ (Տաբրիզ), Սալմաստ, Խոյ (Խուվայ), Բևրկրի (Բարքարի), Արճնչ (Արջիչ), Խլաթ (Խիլաթ): Մարաղայի ու Վարզականի միջև կա Մարանդ քաղաքը: Մարաղայի կողքին, ոչ գրչի ձեռագրով գրված է՝ Հուլաղուի[59] (Հուլաքու) աստղադիտարանը, որը կառուցել է վեց հարյուր հիսունյոթ (1258-1259) թվականին*: Դրանից ցածր նկարված է Կապուտան (Քաբուդան) լիճը, որից ցածր Ուրմիա քաղաքը, նրանից ցածր՝ Ուշնու (Ուշնուհ), իսկ նրանից ձախ մի քաղաք, ի նշան որի անուն չկա: Լճից աջ, նրա ու Միանաջի միջև կա Ջաբարուան քաղաքը: Խունաջից ցածր Դավրիժ (Տաբրիզ) քաղաքն է:

Բաղնչից աջ, նրա և լեռնաշղթայի միջև նկարված է Խլաթի լիճը, իսկ տակին գրված է՝ Վանի ու Ոստանի[60] (Վասթան) կողմերը: Դրանից ձախ, լեռան վրա կա Արզն (Արզան) քաղաքը, իսկ նրանից ձախ լեռներից դուրս կա Նփրկերտը (Մայափարիկին): Նրանից ցածր անկյունում գրված է՝ արևմուտք:

Քարտեզի ներքևում լեռն են ճեղքում երկու գետեր՝ Մեծ Զաբը և Փոքր Զաբը, իսկ Փոքր Զաբից աջ կան երկու քաղաքներ՝ Սուհրավարդ և Շահրազուր: Քարտեզի աջ անկյունում գրված է՝ հարավ:

Այս կողմերի ամենահարուստ երկիրը (նահանդը) Ատրպատականն է, որի ամենամեծ և ամենալավ քաղաքն Արդաբիլն է, թեև մեր օրերում նրա վիճակը վատացել է: Նրանում է գորքի կայանը (մուսա-

---

* Ըստ երևույթին Իրն Հաուկալի բնագրում հավելումներ են եղել ոչ միայն ԺԲ, այլև ԺԳ դարում:

քար) և կառավարչի նստավայրը (դար ալ-իմարա) ու դիվանները և սա մի քաղաք է, որի գավառները տարածվում են երեսունով երեսուն փարսախ: Նրա չենքերի մեծամասնությունը կառուցված է կավով (թին) և աղյուսով (աջուռ):

Նրա չուրջը անառիկ պարիսպ կար, որը Մարզուբան իբն Մուհամմադ իբն Մուսաֆիր ալ-Սալլարը կործանեց, երբ վրեժ լուծեց Նրա ժողովրդից այն բանի համար, որ ապաստան էին տվել Դայսամ իբն Շաղլավայհին [երեք հարյուր] երեսունմեկ (942-943) թվականին: Եվ քանի որ նրանց հետ կնքած պայմանագրի մեջ խոստացել էր, որ պարիսպը չպետք է քանդի, ապա այն քանդեց նրա վաճառականների և մեծամեծների (արբաբ) ձեռքով:

Եվ ահա պատվական, բարեկեցիկ մարդը գալիս էր իր ընտիր զգեստներով, որով մետաքսեղեն (բազդ) կամ անուշահոտություն և կամ այլ բան էր վաճառում և առնելով բրիչը (քլունգ) քանդում էր պարիսպը և նրա նման վաճառականը սրա քանդած հողը և քարերը վերցնում էր իր պատմուճանի, թիկնոցի կամ վերարկուի մեջ և տանում էր [թափում]: Նրանց թույլատրված էր այդ աշխատանքը կատարել միայն այդպիսի զգեստներով, որոնցով նրանք զարդարվում և փայլում էին: Նրանց հագուստեղենը բաղկացած էր Մերվի թանկարժեք գործվածքեղենից ու փայլուն կտորներից: [Պարիսպը] ամբողջովին քանդվեց ու անհետ դարձավ: Բնակիչները ազատացան, նրանց ունեցվածքը վերցվեց, բռնագրավվեց: Նրանք ցրվեցին տարբեր երկրներում, լեռներում և անապատներում: Դարձան անգործ թափառականներ, խռովարարներ, ոչ մի իշխանության չէին ենթարկվում, ապավինելով սատանային և ձգտելով միայն վնասարարության և ըմբոստության: Օտարականների փողերը վերցնում էին, ունեցվածքը կողոպտում և արյունը անպատիժ կերպով թափում էին: Մի քանի հոգի ինձ պատմել են, թե մեկը մսագործին խնդրել է տալ ոչխարի այն մասը, որն ինքը նախընտրում է և նա հաճախորդի թիկնոցից կտրել է մի կտոր ու մսի հետ դրել է կշեռքի նժարին, կամ մեկ ուրիշը կտրել է հաճախորդի հագուստի թեզանիքը, իսկ մեկ ուրիշը կտրել է թաշկինակը, որպես Ալլահի դեմ խռովարարության, անիրավության և հանդգնության նշան:

Սակայն Ալլահը խղճաց [քաղաքին] այն բանից հետո, երբ ճնշեց նրանց և կարեկցեց: Մեր օրերում նա հիվանդի նման է, համեմատելով այն ժամանակվա հետ, երբ կար շենություն և կարավաններն աչխույժ առևտուր էին կատարում:

Սա մի բարեբեր քաղաք է, էժան գներով և ունի բարեկարգ արվարձաններ և գավառներ: Ունի մի լեռ, ուր բարձրանալն ու վայրէջքը երեք փարսախ է, և կոչվում է Սաբալան, որը մեծ է, բարձր և արևմտյան կողմից նրա (քաղաքի) վրա է նայում. նրա վրայից ձյունը

երբեք չի վերանում՝ ամառ թե ձմեռ: Քաղաքն ունի վազող գետեր, իսկ ջրհորների ջուրը քաղցր է: Հաճախ նրանում հացը թվով է ծախվում, ընդ որում հիսուն նկանակը՝ մեկ դիրհեմ:Նրա միսը մաննով է վաճառվում մեկուկես մաննը՝ մեկ դիրհեմ: Մեղրը, յուղը, ընկույզը, չամիչը (զաբիբ) և ամեն ուտելիքներն էժան են, ձրի լինելու աստիճան: Բոլոր այն վայրերից, որոնք հռչակված են իրենց էժանությամբ, նրա հետ չեն կարող համեմատվել, քանզի նրանում կյանքը հեշտ է և ամեն ինչ առատ:

Արդաբիլին իր մեծությամբ հաջորդում է Մարաղան, որը հին ժամանակներում Նահանգի (Նահիա) ռազմական կայանն (մուաքար) էր եղել, կառավարչի նստավայրը (դար ալ-իմարա) և դիվանների գանձատունը: Աբու-լ-Կասիմ Յուսուֆ իբն ալ-Դաուդաղ իբն ալ-Դաուդաչը[61] այս ամենը փոխադրեց Արդաբիլ, որպես երկրում միջին տեղ գրավող վայր: Թեև Մարաղան [գերազանց է] իր առողջ կլիմայով, բազմաթիվ պարտեզներով, գետերով, ջրերով, լավորակ պտուղներով, բարիքներով և ամեն տեսակ բերքերով հարուստ քաղաք է. միաժամանակ ունի բազմաթիվ գավառներ (ռուստակ), ցանքատարածություններ, բարեկեցիկ վիճակ և այն ամենը, ինչ որ այլ երկրներ ունեն, դրա վրա ավելացրած նրա կառավարողների խոհականությունը, կալվածատերերի ու հոգևոր պետերի բազմությունը:

Նրա գյուղերից մեկում, որը կոչվում է Արդահար, կա ձմերուկի [տեսակ], որը նրա անվամբ կոչվում է ալ-Արդահարի, երկար ձևով, տգեղ տեսքով, սակայն ծայր աստիճան քաղցրությամբ ու համեղությամբ, որով նմանվում է Խորասանի հայտնի ձմերուկին:

Մարաղան ուներ պարիսպ, որը քանդեց Յուսուֆ իբն Աբու-լ-Սաջը[62], այնպես ինչպես Սալլարը քանդեց Արդաբիլի պարիսպը:

[Դավրեժը (Տաբրիզ) գեղեցիկ, շեն քաղաք է, հոծ բնակչությամբ, լի բարիքներով, բազում չուկաներով, առ ու վաճառքով: Այսօր Ատրպատականի գլխավոր քաղաքն (կասաբա) է և ամենից շենը:

Խոյը միջին մեծության քաղաք է, սակայն շեն է, լի բնակչությամբ, առատ բարիքներով, պտուղներով ու պարտեզներով: Աղյուսից պարիսպ ունի և նրա բնակիչները բնավորությամբ ավելի հաճելի են քան Դավրեժինը:

Սալմաստը նույնպես մեծ քաղաք չէ, սակայն շեն է, բազմամարդ, մրգառատ և բարաշեն ամուր պարիսպ ունի]*:

Մարաղայից հետո, ըստ մեծության, գալիս է Ուրմիան, որն առողջարար քաղաք է: Բազում խաղողի որթատունկեր ու հոսող ջրեր կան քաղաքում, կալվածքներում ու գավառներում: Հարուստ է իր առևտրով, բերքերով: Նրա և Մարաղայի միջև կա Կապուտան լիճը, ընդ

* Այստեղ և հետագայում քառակուսի փակագծերի մեջ այն հատվածներն են, որոնք հետագայում են ավելացվել Իբն Հաուկալի չարաղրանքի մեջ:

որում Մարաղան լճից արևելք է, իսկ Ուրմիան՝ արևմուտք: Ունի ընդարձակ արվարձաններ ու բարևրեր գավառներ:

Ուրմիայի կազմում և նրա գավառում է Ուշնու քաղաքը, որը նույնպես ունի բազում ծառաստաններ, բանջարևղեն, բարիքներ, պտուղներ, բերքեր, խաղողի այգիներ ու հոսող ջրեր, առատ կերպով ունենալով նույնը, ինչ ունեն Ուրմիան ու Մարաղան: Դա Հադրանիյա քրդերի չնորհիվ է, որոնք այնտեղ ամառն են անցկացնում և օգտագործում չրջակայքի արոտավայրերը: Այնտեղ է նրանց ամբողջ ունեցվածքը և նրանց պաշարները: Նրանում կան վաճառականների չուկաներ, տարվա որոշ ժամանակներում գալիս են մեծ չահույթների համար և թեև վաճառքը դժվար է, չահույթը մեծ է: Նրանից և նրա սևահողից (սավաղ) բերում են հոտեր, արջառ, մեղր, նուչ, ընկույզ, մոմ և նման վաճառքի ապրանքներ, մինչև Մոսուլ քաղաքը և Ջազիրայի նահանգները, ինչպես Հազիաս և այլուր:

Մայանիջը, Խունաջը, Դախաուականը, Խոյը, Սալմաստը, Մարանդը, Դավրեժը, Բարզանդը, Վարդանակերտը, Մուղանը, Բայլականը, Ջաբրավանը մանր քաղաքներ են, մոտավորապես նույն մեծությամբ ու տարածությամբ: Նույնն են նաև Աբու-լ-Հայջա իբն ալ-Ռավվադի գավառները՝ Ահարը և Վարզականը, որոնք բոլորը ծառաչատ են, լի բարիքներով ու մրգերով: Ոչ մի այլ վայր այսքան հարուստ չէ գետերով, պարտեղներով, մրգերով, ջրաղացներով: Մշակությունը զարգացած է, քանզի չատ են հողի մշակները և չինականները: Այս չրջանները լի են բարիքներով, օրհնությամբ, նրանց պտուղները թափված են, ուտելիքը՝ ձրի:

Դախաուականը, Դավրեժը մինչև Ուշնու ալ-Ազարիյա իրենց չրջակայքով ընդհանրապես կոչվում են Բանու Ռուդայնի և այդ բոլորը նրանց կալվածներն էին: Դրանք չնորհիվ իշխանությունների բարյացակամության, միչտ ապահով են եղել ավարառությունից, սակայն երբ ժամանակը փոխվեց, իշխանությունը քայքայվեց, հարևանները ձևոք գցեցին և դրանք պատկանեցին ամենահզորին: Ռուդայնիների[63] տոհմը արաբներ էին և ճակատագիրը նրանց հարվածեց և ժամանակը նրանց աննպաստ էր և նրանք քայքայվեցին: Նրանց հետքը կորավ և նրանց հիչատակներից քիչ բան մնաց:

Իսկ Դուինը (Դաուին)* մի մեծ քաղաք է հարուստ բարիքներով, պարտեզներով, մրգատու ծառերով, ցանքատարածություններով և ունի կավե պարիսպ: Նրանում կան ջրի աղբյուրներ և հոսող ջրեր: Հիմնականում ցանում են բրինձ ու բամբակ: Նրա բնակիչների (մահմեդականների) վիճակը վատացավ այս ժամանակներում վրացիների հարևան լինելու պատճառով, քանզի վերջիններս կողոպտեցին քաղաքը, հրկիզեցին և ամեն առթիվ արչավանքներ են կատարում: Այժմ քաղաքի կենտրոնում վերակառուցված է մայր մզկիթը և չրջապատված այլ պարսպով և նրա չուրջը խրամատ կա: Նրա մզկիթի մեջտեղում կա ջրի աղբյուր: Այնտեղ են ապաստանում, երբ վրաց զորքերը* հարձակվում են: Նրա և Արաքսի միջև երկու փարսախ է:

Պարտավ քաղաքը Առանի մայրաքաղաքն է և այդ երկրի ամենակարևոր քաղաքը. հնագույն ղարերից մեծ քաղաք է եղել: Երկարությունը կլինի մեկ փարսախ, իսկ լայնությունը փարսախից պակաս: Առողջարար կլիմա ունի, բերքառատ է մրգերով, ծառերով ու գետերով և առաջնակարգ ու բացառիկ դիրք է գրավում: Իրաքում ու Թաբարիստանում Ռեյից ու Սպահանից բացի չկա ավելի մեծ ու բարեբեր քաղաք և ոչ էլ ավելի լավ դիրքով, հարմարություններով, չուկաներով, պանդոկներով (փունդուկ), իջևանատներով (խան), բնակարաններով, բաղնիքներով, ունեցվածքով և ապրանքներով:

[Սակայն նրա վիճակը վատթարացավ վրացիների հարևանության պատճառով]:

Նրանում ևս մյուսների նման, տիրակալները ագահության, ապիկար քարտուղարների միջամտության պատճառով բռնագրավվեց ժողովրդի ունեցվածքը, կալվածատերերը (արբար) նեղեցին ապօրինի բռնագրավումներով և պահանջկոտությամբ, գործադրելով ամենաչատ միջոցները հարկահավաքության գործում: Ափսոս այդ քաղաքին ու նրա բնակիչներին: Լսել եմ, որ մեր ժամանակներում վատ վիճակում է և անդորրությունը խանգարված է այն աստիճանի, որ նրանում միայն հինգ հացթուխ է մնացել, մինչդեռ նախկինում հազար երկու հարյուրից ավելի էին:

Նրանից մեկ փարսախից պակաս հեռավորության վրա կար մի վայր, որը կոչվում էր Անդարաբ[64] Քանգայի ու Տաուրի միջև, որն իմ տեսած վայրերից ամենահաճելին է: Նրա երկարությունը և լայնությունը մեկ օրվա քայլելու ճանապարհ է: Մրգաստաններն ու չինությունները իրար են միահյուսված, զրոսավայրերով ու հաճելի պարտեզներով: Ունի առատ միրգ և հարուստ բերք, բազում ապրանքներ, որոնք մեծ չահույթ և օգուտ են բերում: Երբ ես տեսա, ծաղկեփնջի պես գեղեցիկ էր, այգիներում կային կաղին, չագանակ, հազվագյուտ պտուղներ, այլատեսակ ուտելիքներ: Կար մի տեսակ միրգ՝ ռուկալ կոչված, որը խոչոր անձնու չափ էր և ուներ քաղցրահամ միջուկ եթե հասուն էր, սակայն դառն էր, երբ խակ վիճակում էր քաղված: Պարտավում կա թուզ, որը Տաուրից էր բերվում և բոլոր թզերից գերազանց էր:

* Այստեղ Դվինը ոչ թե Դարիլ, այլ Դուին է կոչվում:

* Նկատի ունի Վրաց Բագրատունիների թագավորությունը, որի վրաց-հայկական բանակը մեծ նվաճումներ կատարեց ԺԲ դ. վերջին և ԺԴ դարի սկզբին:

Այնտեղ շատ մեծ քանակությամբ մետաքսաթել է արտադրվում: Բանն այն է, որ թթենիները որոշակի տեր չունեն և մատչելի են բոլորին, ոչ վաճառվում են, ոչ էլ գնվում: Բնակիչների մեծամասնությունը մետաքսի որդն է աճեցնում և ստանում հում մետաքս, որը մեծ քանակությամբ արտահանվում է Ֆարս և Խուզիստան և շատ շահավետ է:

Պարտավը Կուր գետից երեք փարսախ հեռավորության վրա է: Կուր գետում կա Սուրմահի կոչված ձուկը, որը կա նաև Արաքս գետում Վարդանակերտի մոտ և այլ վայրերում: Սա տարվում է Արդաբիլ, Ռեյ և Իրաք նրա հաճելի և համեղ լինելու շնորհիվ: Բնակիչները և վաճառականները այն նվեր են տալիս: Կուրի և Արաքսի մեջ կա նաև մի ձուկ, որը կոչվում է դարակին և այն քչերն են մարսում հաստ ճարպի պատճառով: Նրանց մեջ կա նաև մի ձուկ Կուչուբա կոչված, որը բոլորովին այլ տեսակ է և համեղ:

Պարտավի դռներից մեկն է Բար ալ-Աքրադը (քրդերի դուռ), որի ետևում կա մի չուկա Սուկ ալ-Քուրքի (կիրակիի չուկա) կոչված և տարածությունը մեկ փարսախ է: Ամեն կիրակի մարդիկ հավաքվում են և գալիս ամեն կողմերից: Հավաքվում են գյուղերի բնակիչներն այնքան, որ Քուբաթայի չուկային է նմանվում: Շուկայի անունը (Քուրքի) իչխել է օրվա անվան վրա, չարունակ հիշվելու հետևանքով և ասում են քուրքի (կիրակի) օրը: Այնպես որ շատերը, երբ չաբաթ-վա օրերն են հաչվում, ասում են՝ ուրբաթ (ջումա), չաբաթ (սաբտ), քուրքի (կիրակի), երկուչաբթի (իսնայն): Քուրքի ասելով հասկանում են կիրակի (ահադ):

Պարտավն ունի գեղեցիկ, ընդարձակ մայր մզկիթ, ուր գտնվում է նահանգի պետական գանձարանը (բայտ ալ-մալ), ճիշտ այնպես, ինչպես Օմայանները Եգիպտոսում և այլուր ունեցել էին: Այն կառուցվել է տեղացիների կողմից:

Պարտավի չուկաները նրա արվարձանում էին: Այնտեղ խճողում էր լինում և իրար էին հրում: Շուկաների ներսում կային պանդոկներ (ֆունդուկ), իջևանատներ (խան), բաղնիքներ և այս բոլորը միշտ բազմամարդ էին, իսկ ոուսների մտնելուց հետո շատ կանոնավոր էին:

[Սակայն նրա վիճակը վատացավ վրացիների (քուրջ) հարևանության պատճառով: Գանձակը մի գեղեցիկ քաղաք է, լի բարիքներով, չեն և բազմամարդ: Նրա բնակիչները քաջ են և լավ բարքի տեր, մարդկանց գոհացնող, օտարների և գիտության մարդկանց նկատմամբ սիրալիր]:

Դարբանդ (Բար ալ-Աբուաբ) քաղաքը գտնվում է Խազարաց ծովի վրա: Նրա կենտրոնում նավահանգիստ կա: Նավահանգստում ծովից դուրս է գալիս մի չինություն, որն ամրարտակի նման է նավա-

հանգստի ջրերի վրա իչխող և գտնվում է երկու լեռների միջև, իսկ նրա ջրերը Խազարաց ծովից են: Այս ամբարտակի վրա կա մի կողպած դուռ, որը փակված է ծովի կողմից, նրա հիմքը ամրացված է մի կամարով, որը ջրի վրա է:

Նավերն ունեն դռան կողմից մի մուտք, իսկ նավահանգստի մուտքի բերնին ձգված է մի չղթա, այնպես ինչպես Ասորիքի Տյուրոսում (Սուր) և Բեյրութում, ինչպես նաև Կոստանդնուպոլսի նեղուցում: Նրա վրա կողպեք կա, որի տերը ծովի վրա հսկում է և ոչ մի նավ դուրս գալ չի կարող առանց կողպեքի տիրոջ հրամանի: Այս ամբարտակը ժայռից ու կապարից է: Խազարաց ծովը Թաբարիստանի ծովն է:

Դարբանդ քաղաքը Արդաբիլից ավելի բերք ունի, սակայն պտուղները քիչ են և այլ նահանգներից են բերում: Քաղաքն ունի քարե ամուր պարիսպ քարից, աղյուսից ու կավից: Սա Խազարաց ծովի, Սարիրի, ալանների, Թաբարիստանի ու Վրկանի (Ջուրջան) տարբեր կողմերի, անհավատների երկրի և Դայլամի նավահանգիստն է: Նրանից քթանե (վուշ) զգեստներ են բերում Թիկնոցի հասակով: Առան, Հայաստան, Ատրպատական երկրամասի միակ քաղաքն է, ուր քթանե զգեստներ են պատրաստում: Այնտեղ կա առատ քրքում (զաֆարան) և սահմանակից անհավատների երկրներից բազմաթիվ ստրուկներ (ռակիկ) են այստեղ բերվում:

Տփղիսն ավելի փոքր քաղաք է, քան Դարբանդը: Ունի կավից երկու պարիսպ և երեք դուռ: Սա մի ամրացված քաղաք է, հողը բարեբեր է, լի բարիքներով, գներն էժան են, ավելի առատ է քան բոլոր այն երկրները, որոնք հայտնի են էժանությամբ և հեշտ ապրուստով: Մեկը, որ այնտեղ մի օր մեղր էր գնել քսան ռաթլը մեկ դիրհեմով:

Դա մի կարևոր սահմանային ամրություն (սաղր) է, ամեն կողմից թշնամիներով շրջապատված: Ունի բաղնիքներ, Տիբերիայի բաղնիքների նման, ուր ջուրը տաքացվում է առանց կրակի: Նա Կուր գետի վրա է և ունի ջրաղացներ, ուր ցորեն են աղում, ինչպես անում են Մոսուլում ու Ռակկայում՝ Տիգրիսի ու Եփրատի վրա:

[Այժմ [Տփղիսը] վրացիների (քուրջ) ձեռքում է, որոնք գրավեցին հինգ հարյուրական թվականների (1106–1107-ից) առաջին տասնամյակում: Վրաց Թագավորը* թեև անհավատ է, սակայն հոգատար է ժողովրդի նկատմամբ և արգելում է վնաս հասցնել. իսլամի կոչը (ողջույնի նչանը՞) մնում է այնպես, ինչպես եղել էր: Մայր մզկիթը զերծ է ամեն պղծումից, ինքը՝ Թագավորը մոմ և կանթեղ է վառում և ինչ որ պետք է անում է: Բոլոր մզկիթներում ազանը (կոչը մինարեթից) ազատ կերպով հնչում է և ոչ ոք վնաս չի հասցնում և այժմ մահմեդականն ու վրացին խառնվել են]:

* Հավանաբար նկատի ունի Վրաց Դավիթ Շինարար Թագավորին (1089–1125):

Նրա [մահմեդական] բնակչությունը խաղաղասեր բնավորություն ունի, օտարներին սիրալիր է ընդունում, ցանկանում է, որ օտարականները գան իրենց մոտ: Նրանք բարյացակամ են այնպիսիների նկատմամբ, որոնք թեկուզ քիչ զարգացում ունեն և կամ որոշ զարգացումով են: Նրանք մահմեդական սուննայիին կապված մարդիկ են, ըստ հին ծեսերի, ամեն ինչից վեր դասելով հադիսների գիտությունը և պատվում են նրա գիտակներին [.....]

Առանի ամենամեծ քաղաքներն են Պարտավը, Դարբանդը, Տփղիսը, իսկ Բայլականը, Վարդանակերտը, Բարդիջը, Շամախին, Շիրվանը, Լայիջանը, Շապորանը, Կապաղակը, Շաքեն, Գանձակը, Շամխորը և Խունանը փոքր տիրույթներ (մամալիք) են, հաճելի քաղաքներ, մեծությամբ իրար նման, բարեբեր հող ունեն և առատ միջոցներ (աղբյուրներ):

Ինչ վերաբերում է Դվինին ու Նախճավանին, ապա Դվինն ավելի մեծ քաղաք է քան Արդաբիլը և Ներքին Հայաստանի (Արմինիա ալ-դախիլա) ամենակարևոր նահանգն ու քաղաքն է: Դա Հայաստանի մայրաքաղաքն (կասաբա) է, ուր կառավարչի նստավայրը (դար ալ-իմարա) կա, որին ենթակա են Հայաստանի բոլոր նահանգները (նահիա), ինչպես Առանում Պարտավի կառավարչի նստավայրը և Ատրպատականում՝ Արդաբիլինը: Դվինը շրջապատված է պարսպով: Քրիստոնյաներն այնտեղ բազմամարդ են: Մայր մզկիթը [քրիստոնեական] տաճարի կողքին է, ինչպես Եմեսայի մզկիթը, որը տաճարին կից է ու կպած:

Դվինից արտահանում են այծի նուրբ բրդից (միրիզդա) և բրդից գործվածքեղեն, ինչպես գորգեր (բուստի), բարձեր (վասադիդ), նստելու բարձեր (մակադիդ), ծածկելու (թամբի) գորգեր (անմաթ), չալվարի գոտիներ (տիքաք) և այլ հայկական արտադրանքի (ասնաֆ ալ-արմանի) տեսակներ, որոնք ներկվում են որդան կարմրով (կիրմիզ): Սա մի կարմիր ներկ է, որով ներկվում են այծի նուրբ բուրդն ու բուրդը, և ստացվում է մի որդից, որն իր վրա է հյուսում, ինչպես չերամը իր վրա մետաքսի բոժոժ է հյուսում:

Այստեղ արտադրում են նաև մեծաքանակ մետաքսեղեն (բազյուն): Նրանց մետաքսն իր նմանը չատ ունի Հռոմների երկրում, թեպետ սա բերվում է [Հայաստանից]: Իսկ հայկական (արմանի) անվամբ հայտնի նրանց արտադրանքը, ինչպես հաստ գործվածքեղենը (բուստուտ), նստելու բարձերը, գորգերը, վարագույրները (սուտուր), երկար գորգերը (անխախ), կաչվե հենաբարձերը (մասավիր), բարձերը, ծածկելու (թամբի) գորգերը (անմաթ), ոչ մի տեսակետից իր նմանը չունի աշխարհի որևէ մասում:

Անցյալում [քաղաքը] պատկանում էր բոլոր հայերի (Հայոց) թագավոր (մալիք ալ-Արման) Սմբատին (Սինբաթ) Աշոտի (Աշոթ) որդուն ու նրա պապերին: Սա մնաց նրանց (տոհմի) մեծամեծների ձեռքում, մինչև որ այն նրանցից վերցրեց Աբու-լ-Կասիմ Յուսուֆ իբն Աբու-լ-Սաջը և խլեց նրանց ձեռքից: Նրանց ձեռքում հին ժամանակներից կային նրանց գոյավիճակը հաստատող ու նրանցից վերցված գլխահարկը (ջիզիա) ըստ պայմանավորվածության որոշող պայմանագրեր (ահդ): Օմայաններն ու Աբբասյանները հաստատել էին նրանց գոյավիճակը իրենց նստավայրերում (սուքնատ) տարբեր հարկեր վճարելու պայմանով: Իսկ սա (Յուսուֆը) նեղեց նրանց ու հարձակվեց: Այդ օրվանից նրանք հաջողություն չունեցան և նրանց դրոշը չբարձրացավ մինչև օրս:

Հայաստանում տիրապետողը քրիստոնեությունն (նասրանիյա) է և նրանք (հայերը) ամեն տարի տիրակալին (խալիֆա) տալիս են հոդահարկ (խարաջ), այժմ նախկինի նման ուխտ ունեն [խալիֆայության հետ], սակայն ըստ էության դա իրական չէ: Հարևան տիրակալները (ամիրները) հարձակվում են նրանց վրա, գերեվարում, վնասներ հասցնում և արհամարհում նրանց հովանավորյալի (զիմմի) իրավունքները: Նախկինում նրանց ստրուկները (ռակիկ) բաղդադում չէին վաճառվում: Ես գիտեմ որ նրանք այդ վիճակում էին մինչև երեք հարյուր քսանհինգ (936–937)* թվականը: Ոչ ոք իրավունք չուներ այդ բանն անելու, քանզի նրանք որոշակի հովանավորության (զիմմա) տակ էին [խալիֆայության կողմից] և ունեին մեկից ավելի պայմանագրեր**:

Երկու Հայաստան կա, մեկը հայտնի է որպես Ներքին, իսկ մյուսը՝ Արտաքին (խարիջա)[65]: Արտաքինի որոշ մասերում կան մահմեդականներին պատկանող քաղաքներ և այժմ էլ մնում են նրանց ձեռքում: Հին ժամանակներում դրանք հայերի իշխանության տակ են եղել հարկ վճարելու պայմանով: Այժմ մահմեդական իշխողների ձեռքում են[66], ինչպես Արձեչը, Մանազկերտը և Խլաթը:

Նրա (Հայաստանի) սահմանները հստակորեն հայտնի են: Մի սահմանն արևելքից մինչև Պարտավ, իսկ արևմուտքից մինչև Ջազիրա, Հարավից մինչև Ատրպատական, իսկ հյուսիսից մինչև Հռոմների երկիրը (Բյուզանդիա) Կարնո քաղաքի կողմից: Կարնո քաղաքը Հռոմների երկրի մեջ (զիմաց) մի կարևոր սահմանային ամրություն էր Ատրպատականի, Ջիբալի և Ռեյի ու հարակից նահանգների բնակչության համար և Ներքին Հայաստանի գլխավոր քաղաքն է:

* Հայտնի չէ, թե ինչ փոփոխություն է կատարվել այդ թվականին: Գիտենք միայն, որ 937-ին Ատրպատականից բախտախնդիր Լաչքարին ներխուժեց Հայաստան, հասնելով Անձևացյաց գավառ և այնտեղ խիստ ջարդ կրեց:

** Հայ նախարարները, Հայոց իշխանները և հայ եկեղեցին թե՛ Օմայան, թե՛ Աբբասյան խալիֆաների և նրանց ներկայացուցիչների հետ պայմանագրեր էին կնքել նախարարների հողատիրական իրավունքների, եկեղեցական իրավունքների և այլ հարցերի մասին:

Նախապես ասվեց, որ երկու Հայաստաններ կան, Ներքինը՝ Դվինը, Նախճավանը և Կարնո քաղաքը հյուսիսում, իրենց հարակից նահանգներով, և Արտաքինը՝ Բերկրին, Խլաթը, Արճեշը, Ոստանը (Վասթան), Անձևացիքը (ալ-Ջավազան) ու սրանց միջև ընկած տիրույթները, ամրոցները, գավառներն ու նահանգները:

Նրանք մի դուռ (մուտք) ունեն դեպի Հոռոմների երկիրը, որը Հայտնի է Տրապիզոն անվամբ: Սա մի քաղաք է, ուր հավաքվում են վաճառականները իսլամի երկրից և այնտեղից մտնում Հոռոմների երկիրը առևտուր կատարելու համար և ապա այնտեղից են դուրս գալիս: Այս նավահանգիստը գտնվում է Կոստանդնուպոլսի ծոցից եկող ջրերի վրա, որոնք [մյուս կողմից] հասնում են մինչև Օվկիանոս: Մեր ժամանակներում Հոռոմների տերը (կայսրը) Տրապիզոնի կառավարչից դրամական մեծ գումարներ է վերցնում և մեծ հարկեր է դրել նրա վրա, որն առաջ չատ ավելի քիչ է եղել: Այս մասին նախապես խոսել ենք Հոռոմների երկրի (Բյուզանդիայի) մասին պատմելիս: Իսլամի երկիրը և քաղաքները արտահանվող դիպակի (դիբաջ), մետաքսի (բաղյուն), բյուզանդական (ռումի) վուչն (քթան) գործվածքների, բրդե գործվածքեղենի ու բյուզանդական պատմուճանների (աքսիա) մեծամասնությունը Տրապիզոնից է [ստացվում]:

Նախճավանի, Բերկրիի, Խլաթի, Մանազկերտի, Բաղեշի, Կարնո քաղաքի, Արզնի, Նփրկերտի և Սարույջի միջև մեծ տարբերություն չկա, քանզի նրանք մեծությամբ իրար նման են:

[Սակայն Խլաթը ծավալվելով քաղաքից դուրս, մի քանի անգամ կրկնապատկվել է: Նրա բնակիչները հարստության և բարօրության մեջ են և այժմ այնտեղ կան վաճառատներ (մատաջիր), հրաշալի չուկաներ և վաճառականների հավաքավայրեր: Նրա բնակիչների բարքերի մեջ տիրապետողը կոպտությունն է և օտարի հանդեպ թշնամանքը]

Դրանցից ոչ մեկը նման չէ Դվինին, իր մեծությամբ ու ընդարձակությամբ, թեև բոլորն էլ բարևբեր են, չեն և լի բարիքներով: Այլ երկրների նման նրանց էլ հասան ժամանակի ավերածությունները, իշխանության խախուտ վիճակի ու ժամանակի մարդկանց բնավքերի փոխվելու հետևանքով:

Երկրների սահմաններին իրազեկ գիտնականների մեծամասնությունը գտնում է, որ Նփրկերտը (Մայափարիկին) մաս է կազմում Հայաստանին, իսկ ոմանք էլ այն համարում են Ջազիրայի նահանգներից: Նա Տիգրիսի արևելյան կողմում է և երկու օթևան հեռավորության վրա է և այս պատճառով է, որ Հայաստանում է համարվում:

Այս քաղաքներում ու նրանց գավառներում արտադրվում են ապրանքներ (տիջարատ) արտահանման համար և անհրաժեշտ չատ բաներ, ինչպես արջառ ու ոչխար և գործվածքեղեն, որոնք ամեն կողմ

ուղարկվում են, հայկական կոչված ընտիր կահավորանքի (ֆարչ), չալվարի գոտիներ (տիքաք), որոնք Սալմաստում արտադրվածի նման են և վաճառվում են ամեն մեկը մի դինարից մինչև տասը դինար և աշխարհի ոչ մի մասում նմանը չկա. նաև հայկական (արմանի) թավշակերպ (մահֆուր) նստելու բարձեր (մակաիդ) Մարանդից ու Դավրեժից, երկար գորգեր (անխաս), որոնք նմանը չունեն իրենց քանակով ու որակով, ինչպես կանացի քողեր (սաբանիյատ), վարագույրի բրդե կտորներ (մակարիմ), գլխի թաչկինակներ (մանադիլ), որոնք պատրաստվում են Նփրկերտում և Հայաստանի այլ մասերում:

Իսկ այս երկրամասի գետերը, որոնք նավարկելի են հետևյալներն են. Կուրը մի մեծ գետ է և կլինի Փոքր Զաբի չափ, որը Տիգրիս է թափվում և կամ Պիրամոսի (Ջայհուն) ու Բարղանի մեծությամբ, որոնք սահմանային ամրությունների երկրում (Կիլիկիա) են: Ապա գալիս է Արաքս գետը: Այս երկուսը ջրի առատությամբ իրար նման են: Իսկ Սաֆիդռուդն գետը, որը Արղաբիլի ու Զանջանի միջև է, իր փոքրության պատճառով նավարկելի չէ:

Կուրը քաղցր ջրով, հաճելի, թեթև գետ է: Բխում է Կովկաս լեռան կողմից, Գանձակի ու Շամխորի սահմաններում, գալով Տփղիսի կողմերից և նախքան այդ քաղաքը հասնելը, անցնում է անհավատների երկրների չատ բերդերի մոտով ու թափվում է Խազարաց լիճը Պարտավի կողմերում:

Արաքսը նույնպես քաղցր ջուր ունի, թեթև ու հաճելի գետ է: Բխում է Ներքին Հայաստանի կողմերից ու հասնում մինչև Վարդանակերտի դուռ (Բաբ ալ-Վարսան), ապա անցնում է և մի մասով թափվում է Կուր, իսկ մյուս մասով՝ Թաբարիստանի լիճը (Կասպից ծով): Սա Արաքսն է, որի մասին բարձրյալն Աղլահը հիշել է, թե ի՞նչ է կատարվել նրա ժողովրդի հետ[67]: Նրա հոսանքն ի վեր բարձրացողը եթե ուշադիր նայի և անցնի նրա ափերով Վարդանակերտ քաղաքից վերև ու ներքև, կտեսնի չուռ եկած ու ավերված քաղաքներ, մի քանիսը կործանված ու գլխիվայր չուռ եկած:

Ատրպատականի լիճը, որը կոչվում է Կապուտան (Քաբուդան), աղի ջուր ունի և նրանում ոչ կենդանիներ կան, ոչ էլ ձուկ: Այստեղ շատ նավեր կան, որ զբաղվում են ապրանքների փոխադրությամբ տարբեր քաղաքների միջև՝ Դավրեժի ու Դախառականի գավառներում ու նրանց շրջակայքում և տարբեր ուղղություններով: Լիճը ամեն կողմից չեն է, գյուղերով շրջապատված ու երկրագործական շրջաններով: Ուրմիայի ու նրա միջև երկու փարսախ է արևմտյան կողմից և նրա ու Մարաղայի միջև հինգ փարսախ է արևելյան կողմից, իսկ Դախառականի մատույցների և այս լճի ափի միջև չորս փարսախ է:

Նրա (լճի) երկարությունը անասունի քայլվածքով չորս օթևան է

հյուսիսից մինչև հարավ, իսկ լայնությունը այնքան է, ինչքան Մարադայի և Ուրմիայի միջև՝ մոտավորապես քառասուն փարսախ: Ջմռանը այնտեղ լինում են հսկայական ալիքներ և մեծ դժբախտություններ են պատահում: Նրա մեջտեղում կան բնակչություն ունեցող լեռներ, որը անվում է քաղցր ջրով և աղքատիկ կյանք են վարում: Նրա բնակիչները նավակների տերեր ու նավաստիներ են, որոնք մեկ ափից մյուսը ապրանքներ և ուղևորներ են տանում: Նրանք ունեն այծեր, որոնք մի կերպ նրանց գոյությունն են ապահովում և բացի դրսից բերվածից, իրենց մոտ ոչինչ չունեն:

Բերկրիի, Ալաթի և Արճեշի հարավում կա մի լիճ, որը ձգվում է արևելքից արևմուտք և երկարությունը կլինի ինչ որ մի քանի տասնյակ փարսախ: Նրանից թզաչափ փոքրիկ ձկներ են բռնում, որը հայտնի է տառեխ (թիռիխ) անվամբ և աղում ու տանում են բազում երկրներ, ինչպես Մոսուլ, Ջազիրայի, Իրաքի կողմերը և Ասորիքի գավառները: [Այս լճի մեջ մի կղզի կա, որը կոչվում է Ախթամար]: Նրա ափին կա բորակ աղը, որը նույնպես արտահանվում է Իրաք և այլ տեղեր, հացթուխների համար: Լճին մոտիկ, ավելի ճիշտ նրանից հարավ մի լեռան վրա կա մկնդեղի (գիրնիխ) հանքեր, որը տարվում է աշխարհի տարբեր կողմերը: Սա մկնդեղի բուն աղն է և լինում է կարմիր ու դեղին:

Կապուտան (լճի) ափերից ևս հանում են ոսկերչական բորակը, որն օգտագործվում է արծաթի ու ոսկու զոդման համար: Սա, ըստ էության, ստացվում է նրանից, որ նրա ջրերի որոշ մասերը նպաստում են ինչ որ բանների քարացմանը և այսպիսով գոյանում է այս բորակը, որը տարվում է երկրի հովիտներն ու խոր ձորերը և դաշտերն ու լեռները: Վաճառականները նրանից առատ չահույթ են ձեռք բերում:

Իսկ Անձևացյաց և Հայաստանի ու Առանի որոշ մասերից Իրաք, Ասորիք, Խորասան և այլ վայրեր են ուղարկվում ընտիր ջորիներ, որոնք հայտնի են առողջությամբ, տոկունությամբ, ճկունությամբ ու համբերությամբ, ինչպես նաև այլ բաներ, որոնց հոչակն ավելորդ է դարձնում նկարագրել, կամ հատուկ ընդգծել այն: Անձևացիքը մի գավառ է, որն ունի բերդեր և տիրույթներ և այնտեղ տիրապետողը լեռներն են: Բուծում են հրաշալի ձիեր (չահարի), որոնց հատուկ է գեղեցկությունն ու արագաչարժությունը ու կարելի է համեմատել Թաբարիստանի ձիերի հետ և գուցե նրանցից էլ գերազանց են, ինչպես նաև Ջուրջանի ձիերից:

Նրանց լեռները Մեծ Մասիսի և Փոքր Մասիսի կողմից կապված են Ահրի ու Վարզկանի լեռներին: Նրանք հյուսիսում անցնում են դեպի Տփղիս և այնտեղ միանում են Կովկաս լեռանը, Սիահ Քուհի դիմաց: Սա մի հսկա լեռնաշղթա է, որի վրա, ասվում է թե երեք հարյուր և ավելի տարբեր լեզուներ կան: Ես չէի հավատում, մինչև որ այցելեցի

Արդաբիլի Սաբալան լեռը, ուր տեսա մեկից ավելի գյուղեր, որոնցից ամեն մեկը իր լեզվով էր խոսում, որը տարբեր էր պարսկերենից (ֆարիսիյա) և ատրբերենից (ազարիյա): Կովկասի լեռները կպչում են Սիահ Քուհի (Քուայհ) լեռանը, որը Խազարաց երկրից այն կողմում է, օղուզների (Ղուզղիյա) կողմերը և այնտեղից վերադառնում է արևելք Խորեզմի լճի ետևից միանալու Խորեզմի ու Ֆերղանայի լեռներին: Բանն այն է, որ, ինչպես հիշել եմ, բոլոր լեռները դասավորված ու ճյուղավորված են Չինաստանից դուրս եկող լեռներից, ուղիղ գծով ընթանալով դեպի Օվկիանոս ծովը, Մաղրիբում գտնվող Սուդանի վրայով:

Վարդանակերտի ու Պարտավի կողմերում և Խազարաց լճի մեջտեղում գտնվող Դարբանդի երկու կղզիներում կա չափազանց առատ և բարձր որակի տորոն (ֆուվվա), որը Խազարաց ծովի վրայով ուղարկվում է Վրկան (Ջուրջան) և ցամաքի ճանապարհով՝ Հնդկաստան (Հինդ): Այս տորոնը գտնվում է ամբողջ Առանի երկրում՝ Դարբանդից մինչև Տփղիս ու Արաքս գետի մոտերքը և Վիրքի (Ջուրզան) կողմերը:

Այս ամբողջ նահանգը մի իշխանություն է, որը գտնվում է Ատրպատականի տիրոջ ձեռքի տակ և տեղավորված է լեռներում, որոնք կապվում են Թարոմի լեռներին, Խազարաց ծովի արևմուտքի կողմում կպչում են Ռեյի, Թաբարիստանի ու Վրկանի լեռներին, մինչև Նիշապուր:

Այս բոլոր լեռների լանջերին կան թագավորներ (մուլուք) ու տերեր (ասհար), որոնք հսկայական հարստություն ունեն, տիրույթներ, հզոր ամրոցներ, ձիավորներ ու խոշոր անասուններ, ինչպես նաև իրենց նստավայր քաղաքները, բարեբեր գյուղական շրջանները (ռուստակ), շեն գավառները (ակալիմ), որպես սեփականություն (միլք), որից ստանում են հարուստ բերք ու մեծ հասույթ: Այս բոլոր լեռներում, նահանգներում (նահիա), քաղաքներում ու դաշտավայրերում կա էժանություն, բերքառատություն, արոտավայրեր՝ լի ոչխարների հոտերով ու արջառով, գյուղատնտեսական բարիքներ, հարստություն, ծառաստաններ, գետեր, թարմ ու չոր պտուղներ, ամեն տեսակ փայտեր, ինչպես խալանջը, որթատունկի ու ընկուզենու փայտը և հնարավոր չէ այս ամենը իմանալ ու հաշվել:

Այստեղի թագավորները հարուստ են, վայելում են կյանքի բարիքները ու հաճույքները, սիրում են օծանելիքներ, չքեղ զգեստներ, գեղեցիկ ներքինիներ (խադամ), նժույգներ և ջորիներ, ոսկե ու արծաթե ասպանդակներով, գեոատի գեղեցիկ հարճեր (ջավարի), որոնք երգչուհիներ, նվագածուներ ու խոհարարուհիներ են: Նրանց հասույթները առատ են, անհատնում, ունեն ոսկե ու արծաթե առարկաներ, ծաղրակշիռ սեղանասպասք, դրոշմված սև զարդանկարներով, ինչ-

պես սկուտեղներ, ափսեներ, չչեր, թասեր (թուստ), ջրամաններ (իբրիկ), ջրանոթներ, գարմանալի արվեստով, արծաթե (լուջայն) ու ոսկե (ասջադ), հաստ ապակիով (զուջաջ), ժայռի մշակված բյուրեղապակիով (բալլուր), թանկարժեք քարերով, ինչպես հատիկը (հաբբ) և հակինթը (յակուտ):

Այս թագավորների մեծամասնությունը մշտական հարկեր էր վճարում և հավելյալ հարկեր, որոնք ամեն տարի տարվում էին Ատրպատականի թագավորներին (մուլուք): Այս հարկերը չէին դադարում կամ ոչ մի խանգարում չէր լինում: Բոլորը հպատակվում էին նրան, ով տիրում էր և կառավարում նահանգը:

Իրն Աբու-լ-Սաջը հաճախ գոհանում էր նրանցից ստանալով փոքր գումարներ, որն ստանում էր ընծաների ձևով: Սակայն երբ իշխանությունն (մամլաքա) անցավ Մարզուբան իրն Մուհամմադ իրն Մուսաֆիրին, որը հայտնի է Սալլար անվամբ, ապա նա նշանակեց հարկերի հաշվառման գրասենյակներ (դիվան), օրենքներ (կավանին) և հավելյալ հարկեր (լավազիմ), հարկի տակ դրեց հարակից տնտեսությունները (մարաֆիկ) և մնացորդների (բակայա) համար պայմանավորվեց:

Այժմ նրանց ամենահայտնի թագավորներն են՝ Շիրուան շահ Մուհամմադ իրն Ահմադ ալ-Ազդին, ապա Լայիջանի թագավորը (մալիք), որի թագավորությունը (տիրույթները) կազմ է Կովկասի լեռների որոշ մասերին և նրա նահանգները կոչվում են Լայիջան շահի [երկրներ]: Նրա կողքին է նաև ծանարցին (Սանարի), որը հայտնի է Սեննեքերիմ (Սինհարիբ) անվամբ և կրոնով քրիստոնյա է, ինչպես Դեբանիկի (Դայրանի, Դիրանի) որդին՝ Անձևացյաց (ալ-Զավազան), Վանի ու Ոստանի (Վասթան) տերը[68]:

Սրանցից ամեն մեկին ես հիշելու եմ, թե ինչպիսի պարտավորություններ ունի վճարելու, ինչպես դրամ (մալ, ունեցվածք), հարկեր և ընծաներ, երբ հիշատակեմ այս նահանգի հարկերը, ճանապարհները թվարկելուց հետո:

Ատրպատականի բնակչության և Հայաստանի բնակչության մեծամասնության լեզուն պարսկերենն է, որն ընդհանուր լեզու է, սակայն արաբերենը ևս օգտագործվում է նրանց միջև: Շատ հազվադեպ է այն, որ պարսկերեն խոսողը չհասկանա արաբերեն, մի լեզու, որը ճարտարորեն խոսում են վաճառականները և հողատերերը (կալվածատերեր, ասհաբ ալ-դիաա): Հայաստանի ծայրամասային սահմաններում (աթրաֆ) և նման շրջաններում կան համայնքներ (մարդկանց խմբեր, թավաիֆ), որոնք խոսում են այլ լեզուներ, ինչպես հայերենը (ալ-արմանիյա) Դվինի ու Նախճավանի և նրանց շրջակա նահանգների բնակիչների համար, իսկ Պարտավի բնակչությունը խոսում է առաններեն (առանիյա):

Այստեղ է Կովկաս (ալ-Կաբկ) կոչված նշանավոր և հայտնի լեռը, որի չուրջն ապրում են անհավատներ, որոնք խոսում են տարբեր ու բազմաթիվ լեզուներ, ինչպես արդեն ասվեց: Սակայն նրանցից շատերը մի ընդհանուր լեզվով են խոսում:

Ատրպատականի, Առանի ու Հայաստանի դրամը ոսկին է ու արծաթը:

Նրանց մեծամասնությունը քաջասրտ է և ազնվաբարո. հակում ունի բարիք գործելու ու հարգելու պարկեշտ մարդկանց, ապրուստի միջոցները լավ են և զսպվածություն են ցուցաբերում իրենց վրա հասած դժբախտությունների ու փորձանքների հանդեպ:

Այժմ նրանց (մահմեդականների) մեջ կան իսլամական ավանդությունների (հադիս) և [Ալլահի] մարդակերպության (հաչվ) կողմնակիցներ, ինչպես նաև Բակլիյա (կարմատյան) Բաթինիներ (իսմայիլականներ)[69]: Ամբողջ Ատրպատականում, Հայաստանում և երկու Առաններում չկան աստվածաբանության (քալամ) գիտակներ, կամ աստվածախոսության (նազար) ջերմեռանդ հետևորդներ:

Նրանց մոտ կան չնորհալի բժիշկներ, որոնց այցելել եմ. բժշկական հարուստ փորձ ունեն և բժշկության կիրառությամբ (սինաաթ ալ-թիբբ) հարստացել են, կալվածների, հարստության և անասունների տեր են դարձել:

Նրանք համոզված են, որ տրամաբանությունը (մանթիկ) անհավատություն (քուֆր) է և աստվածաբանական հայեցողությունը (սանաատ ալ-նազար) ուշադրությունը չեղում է կարևոր բաներից ու խանգարում է կյանքի վարվեցողության տարբեր միջոցներն ըմբռնելու:

Այս երկրամասի ճանապարհների ու երկարությունների նկարագրությունը:

<u>Պարտավից Արդաբիլ ճանապարհը:</u> Պարտավից Մույան գյուղը յոթ փարսախ է, Մույանից Բայլական քաղաքը՝ յոթ փարսախ: Բայլականը մի հաճելի քաղաք է, առատ ջրերով, պարտեզներով (աջինա), ծառերով ու գետերի վրա գործող ջրաղացներով: Բայլականից Վարդանակերտ (Վարսան) յոթ փարսախ է: Վարդանակերտը Բայլականից մեծ քաղաք է, առավել ընդարձակ և ավելի բնակչությամբ և չուկաներով ու ապրանքներով: Նա մեծ քաղաքների նման շատ ննթակա վայրեր ու իջևանատներ (ֆանադիկ) ունի: Նրա չուրջը պարիսպ կա և ունի արվարձան չուկաներով: Վարդանակերտից Բայլսաբ յոթ փարսախ է: Սա բնակչությամբ չեն գյուղ է, ունի հյուրատներ (ռիբաթ) և իջևանատներ ճանապարհորդների համար, ուր կանգ են առնում կարավանները (սայարա): Բայլսաբից Բարդանդ յոթ փարսախ է: Սա Բայլականին հավասար կարևորություն ունեցող քաղաք է: Բարդանդից Արդաբիլ տասնհինգ փարսախ է, որի ճանապարհն անցնում է գյուղերի և աջ ու ձախ տների միջով, որոնք

չեն վերջանում և չարունակ երևում են:

Ճանապարհը Պարտավից Դարբանդ (Բաբ ալ-Աբուաբ): Պարտավից Բարդիջ տասնութ փարսախ է: Սա մի բարգավաճ քաղաք է Կուր գետի վրա, ուր կան տեղական ու դրսից բերված (մաջալիբ) ապրանքներ (մատաջիբ): Բարդիջից Շամախի (Շամմախիյա) Կուրն անցնելուց հետո տասնչորս փարսախ է, Շամախիից Շիրվան երեք օրվա ճանապարհ է, Շիրվանից Լայիջան՝ երկու օրվա, Լայիջանից Սամուրի կամուրջը տասներկու փարսախ է, Սամուրի կամուրջից Դարբանդ՝ քսան փարսախ: Այս ամենը դառնում է մոտավորապես իննսուն փարսախ:

Ճանապարհը Պարտավից Տփղիս: Պարտավից Գանձակ ինը փարսախ է: Սա բարգավաճ քաղաք է: Գանձակից Շամխոր տասը փարսախ է, Շամխորից Խունան քաղաքը՝ քսանմեկ փարսախ, Խունանից Կալաստ (բերդ) իրն Քանդաման՝ տասը փարսախ, Կալաստից Տփղիս՝ տասներկու փարսախ: Այս ամենը վաթսուներկու փարսախ է:

Ճանապարհը Պարտավից Դվին: Պարտավից մինչև Կաղանկատույք (Կալկաթուս) ինը փարսախ է, Կաղանկատույքից Հաթերք (Հատրիս, Մատրիս)՝ տասներեք փարսախ, նրանից Զավդեք (Զաուտեք, Դաումիս)՝ տասներկու փարսախ, Զավդեքից Գեղարքունիք (Քայլաքուին)՝ տասնվեց փարսախ, Գեղարքունիքից Սիսական՝ տասնվեց փարսախ: Սա հաճելի, միջին մեծության քաղաք է: Սիսականից Դվին տասնվեց փարսախ է:

Այս ճանապարհը Պարտավից Դվին՝ անցնում է Հայաստան (Հայոց) երկրի (ալ-Արման) միջով և այս բոլոր գյուղերն ու քաղաքները հայազգի Սմբատի՝ Աչոտի որդու (Սինբաթ իբն Աչոթ ալ-Արմանի) թագավորության (մամլաքա) մեջ էին: Սակայն Յուսուֆ իբն Աբու-լ-Սաջը նրանից խլեց դավաճանությամբ ու բռնությամբ և հակառակ Ալլահի ու նրա առաքյալի կամքի, քանզի ասել է [Ալլահը]. «Ես ամենքից ավելի իրավասու եմ պահանջելու, որ հովանավորության (զիմմա) պայմանները հարգվեն: Եթե իմամը կամ իմամին ենթակա որևէ մեկը իրեն թույլ տա, վնասելու նպատակով, կամ կրոնական մոլեռանդությամբ, ավելացնել հովանավորյալների (զիմմի, ահլ ալ-Զիմմա) հարկերը (ասսար), պետք է պատժվի և սաստվի»: Իսկ ասել է, խաղաղություն նրան, [մարգարեն] թե. «Մահմեդականները իրար հավասար են իրենց արյան արժեքով, նրանցից նույնիսկ ամենափոքրը պետք է պահպանի [զիմմիների] պայմանագրային պարտավորությունները, սակայն այլոց հետ նրանք (մահմեդականները) պատերազմական (հարբ) դրության մեջ են: Ուստի եթե որևէ մահմեդական ընտրվի նրանց ինչ որ խմբի կողմից, որոնք ապրում են սահմանային ամրություններում, ընտրվի որպես կառավարիչ և նրան փորձելուց հետո գտնեն, որ նա իմաստուն ու արդար է և այնպես է իշ-

խում, որ հոգում է նրանց կարիքները, ինչպես նաև այն մահմեդականների, որոնք նրանցից այն կողմ են ապրում, ապա նման պայմաններում նա պետք է արդարացի լինի նաև այդ նահանգի ոչ մահմեդականների հանդեպ: Ոչ ոքի չի կարելի թույլատրել, որ խախտի այդ պայմանները, խորամանկությամբ ու ամբարշտությամբ և վայրենությամբ մարդուն անվայել արարքներ գործելով: Առավել ևս երբ այն վերաբերում է հին ժամանակաչրջանին (ալ-սաղր ալ-կադիմ) և արդար ու առատաձեռն վեհանձն իմամին, խաղաղություն նրա հետ, որն ինքը կնքել է մի պայմանագիր (իկդ) և առաջարկել է մի կարծիք, որը մահմեդականների օգտին է և ի պատվի է մնալու մինչև վերջին դատաստանի օրը (յաում ալ-դին): Ինչպես կարելի է գլխահարկ վերցնել մի հզոր թագավորից (մալիք ազիմ) և օգտագործել նրա մարդկանց ու նրա զորքերին այն պարտականության մեջ, որոնք կարող են վնասել մահմեդականներին, այս կամ այն պայմաններում: Այսպիսի դեպքը ըմբռոստություն է կատարված մի ամբարիշտի կողմից, որն իր պատասխանատվությանը վերաբերում է այնպես, ինչպես գինով հարբածը, տգետ հիմարի աչքերով, համարձակվում է խախտել [պայմանագրերը], գիտակցաբար հարատևելով իր ապստամբ ընթացքը և մահմեդականներին հասցնելով այն վիճակին, որի մեջ գտնվում են: Երանի թե մնանք այնտեղ, առանց մեղքի ծանրացման»:

Ճանապարհը Արդաբիլից Զանջան: Արդաբիլից մինչև Սաբիդոուղի կամուրջը մեկ օթևան է (մարհալա), Սաբիդոուղից Սարահ՝ մեկ օթևան, Սարահից Տավա՝ մեկ օր, Տավայից Զանջան՝ երկու օթևան:

Ճանապարհը Արդաբիլից Մարաղա: Արդաբիլից գնում է Քուրսաբա: Սա մի ամրոց է հզոր կևրպով ամրացված, որին ենթակա է մի ընդարձակ նահանգ (իկլիմ) ու մի կարևոր ու ընդարձակ գավառ (ռուստակ): Ամեն ամիս լինում են չուկաներ ու տոնավաճառներ տարվա ամեն ամսվա սկզբին: Ես վաղուց եմ ճանաչել ու այցելել այս ամրոցը երիտասարդ ժամանակ: Մեծ բազմություն էր հավաքվել չուկայի օրը, իր հետ ունենալով տարբեր առարկաներ, վաճառքի ապրանքներ, ինչպես քթանն ղգեստ (բազդ), համեմունք (սակաթ), հնդկական համեմունք (բարբահար), անուշահոտություն (իթր) և կահավորանքի (ֆարչ) լավ պաստառ, թամբագործների (սառաջ) համար հում նյութ, թամբագործության տարբեր տեսակներ՝ թամբեր, սրեր, գոտիներ, թամբի ծածկոցներ, Մարաղայի փոկեր և ամեն տեսակ զենքեր: Այնտեղ կարելի էր գտնել պղնձե ամանեղեն Իրաքից բերված, այլ ամանեղեն ձուլված ոսկուց ու արծաթից, ձիեր, ջորիներ, ավանակներ, կովեր ու ոչխարներ:

Եթե որևէ մեկն ասեր, թե այս հողը (չուկան) չատ ավելի ընդարձակ է [Արաբիայի] Մավկիֆի հողից, իր ցածր հովիտներով, լեռներով,

բլուրներով, բնակիչներով և Մավկիփից ավելի բազմամարդ է այն ազգերով (աջնաս), որոնց նկարագրել եմ, ապա ես առանց հաստատման և ստուգման չէի ընդունի, թեև Մավկիփի հողը իր լեռներով Արաքսատից երեք փարսախ հեռավորության վրա է, ուր կանգ են առնում տարբեր ազգեր (ուման)՝ եմենի, եգիպտոսի, Իրաքի, Մաղրիբի, Ասորիքի, Խորասանի ժողովուրդները, ինչպես նաև նրանք ովքեր հարևան երկրներից միանում են:

Այնտեղ (այդ չուկան) այցելողներից էր Աբու Ահմադ իբն Արդ ալ-Ռահման ալ-Շիղի ալ-Մարաղին՝ Ատրպատականի վաճառականների պետը և նրա հաճախորդներից: Նրա քարտուղար Աբու-լ-Ֆատհ իբն Մահդին ասել էր նրան, թե Աբու Իսհակ ալ-Մաջարդանին իր անասունները ծախել է ու հեռացել և մեր նրան հանձնած անասունները մեզ չի վերադարձրել: Հարցրել է Աբու Ահմադը, թե ինչքան է վաճառել: Ասել է՝ հարյուր հազար գլուխ: Ես այս բանը մի քանի անգամ ստուգեցի Աբու Ահմադի մոտ և նա ասաց՝ հասկացա՞ր, նա հեռացել է Ալլահի ողորմածությամբ այդ վայրից, ուր չկա չուկա, մեկ միլիոն ոչխարներով: Ես կրկին հարցրեցի և նա ասաց՝ այո, և Շուայբ իբն Միհրանը ևս նույնքան [ոչխարներով] հեռացել է:

Ապա ես այս չուկայի և այդ վայրի մասին նրանից շատ պատմություններ լսեցի Յուսուֆ իբն Աբու-լ-Սաջի օրոք կատարված դեպքերի վերաբերյալ, որոնք անհարմար է հիշել այս գրքում: Ինչ որ արդեն հիշել եմ, լրիվ բավական է պատկերացում կազմելու այս չուկայի վիճակի մասին, եթե ընթերցողը հավատա:

Արդաբիլից Քուրսարա տասներկու փարսախ է, Քուրսարայից Մարաղա՝ տասներկու փարսախ:

Սարատ քաղաքը, որը Քուրսարայի ու Արդաբիլի՝ միջև է, հաճելի է, բազում երկրագործական բարիքներով, լի ամբարներով, այգիներով, ջրերով, պտուղներով, մշակելի հողերով ու ջրաղացներով: Ունի բարեկարգ չուկաներ ու մաքուր իջևանատներ (ֆանադիկ): Այնտեղ եղել են մեծ հողատերեր, ինչպես Զանբուռ տոհմը և ուրիշներ, որոնք բոլորն էլ մեռած են կամ անհայտացած: Ես ծանոթացել եմ նրանց հներին (ծերերին, մաշայիխ), երբ քաջությունը նրանց մոտ հատկանշական էր և երբ հարաբերությունները Սալլարի հետ մտերմական էին:

Արդաբիլից Միյանիջ քսան փարսախ է: Սա մի բարեկարգ քաղաք է, ինքն իր մեջ ամփոփված, հարուստ բնակչությամբ և ընկերական բնավորությամբ մարդկանցով, էժանությամբ ու բարիքներով: Միյանիջից Խունաջ, որը նույնպես քաղաք է, կա մաքսային կայան (մարսադ), ուր մաքս են վերցնում Ատրպատականից Ռեյ տարվող ապրանքներից, հարկեր (լավազիմ) ստրուկներից (ռակիկ) և գրաստից և ամեն տեսակ վաճառքի առարկաներից, ինչպես ոչխարներից ու կովերից: Այս մաքսատան եկամուտը (մուկաթաա) միշտ տարեկան

հարյուր հազար դինար է եղել և երբեմն բարձրացել է մոտավորապես մեկ միլիոն դիրհեմի, ապա եղել են պակաս եկամուտով տարիներ: Նրանում և նրան հարակից մասերում եղած չրջանառության նմանը չկա այլ երկրներում:

<u>Ճանապարհը Արդաբիլից Ամիդ և Միջագետքի Սահմանային ամրությունների գոտու չրջանները</u>: Արդաբիլից Մարաղա մոտավորապես քառասուն փարսախ է, Մարաղայից Ուրմիա, ցամաքով ու ծովով, մոտավորապես երեսուն փարսախ է, Ուրմիայից Սալմաստ՝ երկու օթևան, Սալմաստից Խոյ՝ ինը փարսախ, Խոյից Բերկրի՝ երեսուն փարսախ, Բերկրիից Արճեշ՝ երկու օր, Արճեշից Խլաթ՝ երեք օր, Լաթից Բաղեշ՝ երեք օր, Բաղեշից Արզն, Նփրկերտ (Մայափարիկին)՝ չորս օր, Նփրկերտից Ամիդ՝ երկու օր, Ամիդից Խառան զազիների (հավատի ռազմիկներ) ու կամավորների ճանապարհով Շիմշաթ և Սամոսատի վրայով Մալաթիա՝ մոտավորապես հինգ օր:

<u>Ճանապարհը Մարաղայից Դվին Ուրմիայի ու Սալմաստի վրայով</u>: Խոյ են հասնում հիսուներեք փարսախ գնալուց հետո, Խոյից Նախճավան (Նաչավա) հինգ օր է, Նախճավանից Դվին՝ չորս օթևան (մարհալա):

Մարաղայից Դինավար վաթսուն փարսախ է, առանց որևէ մինբարի (մզկիթի) հանդիպելու:

Ահա այս է երկրամասի ճանապարհների ամրողջությունը և ճանապարհների նկարագրությունն ու վիճակը:

Իսկ այդ [երկրամասի] վիճակը, ինչքան կարող եմ հավաստել, ապա նրա տուրքերը (ջիբայատ) և հարկերը (դարայիբ), որ դրված են նրա սահմանամերձ թագավորների (մուլուք ալ-աթրաֆ) վրա, բացահայտում են նրա վիճակը և վկայում նրա նկարագրության ճշմարտացիության մասին: Թեև երբեմն [հարկերը] բարձրանում կամ իջնում են: Հավաքված հարկի միջինը և ամենաբարձր չափը, որ ստացվել էր երեք հարյուր քառասունչորս (955-956) տարում, ըստ այն պայմանավորվածության (մուվակաֆատ), որ կայացրել էր Աբու-լ-Կասիմ Ալի իբն Ջաաֆարը՝ Աբու-լ-Կասիմ Յուսուֆ իբն Աբու-լ-Սաջի տնտեսական կառավարիչը (սահիբ դիմամ) և հետագայում Մարզուբան իբն Մուհամմադի վեզիրը.

Նա (Մարզուբանը) պայմանավորվեց Մուհամմադ իբն Ահմադ ալ-Ադդիի՝ Շիրուանշահի տիրոջ ու թագավորի հետ մեկ միլիոն դիրհեմ վճարով:

Շաքեի (Շաքքի) տեր Իչխանիկի* հետ, որը հայտնի է Աբու Արդ ալ-Մալիք անվամբ, որոշ պայմանավորվածության եկավ:

Ռաբի տեր Սեննեքերիմի (Սանհարիբ)** հետ, որը հայտնի է Իբն

* Շաքե - Կամրեճանի տեր Իչխանիկն է Սահլ Սմբատյանի տոհմից:
** Փառիսոսի թագավոր Հովհաննես Սեննեքերիմն է, որդի Սևադայի:

Սավադա անվամբ, պայմանավորվեց երեք հարյուր հազար դիրհեմով ու հավելյալ ընծաներով (ալթաֆ):

Ջուբդի (Խազա՞ր) տեր Վաչագան (Վաչական)* իրն Մուսայի (որդի Մովսեսի) հետ՝ երկու հարյուր հազար դիրհեմով:

Վայոց Ձորի (Վայգուր) տեր Աբու-լ-Կասիմ Վայգուրիի** (Վայոցձորեցի) հետ պայմանավորվեց հիսուն հազար դինարով և ընծաներով:

Աբու-լ-Հայջա իրն Ռավվադից, նրան պատկանող Ահր և Վարդուկան գավառներից՝ հիսուն հազար դինար և ընծաներ:

Աբու-լ-Կասիմ ալ-Ջիդանիից, նրան պատկանող գավառներից ու մնացորդներից (բակայա), որ պարտական էր՝ չորս հարյուր հազար դիրհեմ: Սակայն նա փորձեց պակասեցնել, բայց անհաջող եղավ իր խնդրանքի մեջ (ձանձրացրեց իր խնդրանքով) և որպես իր արարքի համար պատիժ, պայմանավորվածի վրա ավելացվեց երեք հարյուր հազար դիրհեմ և հարյուր կտոր ռումի (բյուզանդական) դիպակ (դիբաջ):

Նա (Մարզուբանը) պարտավորեցրել էր Դևրանիկի որդիներին (բանու ալ-Դայրանի)*** ըստ նախկին պայմանավորվածության տարեկան հարյուր հազար դիրհեմ վճարել: Սակայն նրանց չորս տարով վճարումից ազատեց ի վարձատրություն այն բանի, որ նրանք Դայսամ իրն Շաղուլայինին իրենն էին հանձնել, որը նրանց մոտ պաշտպանություն էր խնդրել, սակայն հետո հանձնել ու դավաճանել էին:

Սմբատի որդիների (բանու Սինբաթ)[70] հետ համաձայնել էր, որ Ներքին Հայաստանի (Արմինիա ալ-դախիլա) իրենց նահանգներից երկու միլիոն դիրհեմ վճարեն, սակայն հետագայում զեղչել էր հարյուր հազար դիրհեմ:

Խաչենի (Խաջին) տեր Սենեքերիմի (Սանհարիբ)[71] հետ համաձայնել էր հարյուր հազար դիրհեմ և ընծաներ ու ձիեր, հիսուն հազար արժեքով:

Այսպիսով հարկերը (մուակաֆա) ոսկով ու արծաթով, հավելվածներով և ընծաներով, ինչպես ջորիներ, ձիեր ու զարդարանքներ, հասնում էին տասը միլիոն դիրհեմի:

Իսկ խարաջը ամբողջ Ատրպատականի, Հայաստանի և երկու Առանների իրենց չրջակայքով և հարակից (հավելյալ) հարկերով և ընծաներով, հասնում էր հինգ հարյուր հազար դինարի:

Սա է այն ամեն ինչը, որ իմացել եմ նրա (այդ երկրամասի) դրության մասին, ըստ իմ ձեռքի տակ եղած տեղեկությունների ու մանրամասնությունների և իմ կարողությունների ու հնարավորությունների:

---

* Ջուբդի կամ Ջուրզդի տերը հավանաբար Գոռոզի բերդի տեր պիտի կարդալ, որը Վաչագանն է, որդի Մովսեսի, որդի Եսայի Աբու Մուսեի:

** Աբու-լ-Կասիմ Վայգուրին հավանաբար Վայոց Ձորի իշխան Սմբատի որդի Վասակն է:

*** Դևրենիկի որդիները Արծրունիներն են:

ԻԲՆ ՀԱՈՒԿԱԼ

ԵՐԿՐԻ ՊԱՏԿԵՐԸ (ՍՈՒՐԱՏ ԱԼ-ԱՐԴ)

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

[1] Ջայհանի - Աբու Աբդալլահ Մուհամմադ իրն Ահմադ իրն Նասր ալ-Ջայհանին ժ դարի մատենագիր է: Նա եղել է Սամանիների պետության (Բուխարա կենտրոնով) վեզիրը: Գրել է աշխարհագրական երկ, որն ըստ երևույթին ավանդական ձևով կոչվել է «Քիտաբ ալ-Մասալիք ուա ալ-Մամալիք», որտեղ մեծապես օգտվել է Իբն Խորդադբեհի երկից: Ջայհանիի այս երկը, որը ստեղծվել է հավանաբար մինչև 922 թվականը և որից հաջորդ դարերում օգտվել են բազմաթիվ մատենագիրներ, ցավոք մեզ չի հասել: (Крачковский, т. 4, стр. 219-226):

[2] Ռաս ալ-Ջումջումա (Գանգի Հրվանդան) - Գուցե այժմ «ալ-Հադ» կոչված Հրվանդանն է:

[3] Կալաբրիա - Պատմական երկրամաս Իտալիայի Հարավում:

[4] Լոմբարդիա - Պատմական երկրամաս Իտալիայի Հյուսիսում: Հնում կոչվում էր Ինսուբրիա: 6 դարում այն գրավեցին Լանգոբարդները, որտեղից էլ առաջացավ Լոմբարդիա անվանումը: (Сов. Ист. Энц., т. 8, стр. 765):

[5] Հավանաբար նկատի ունի Հունաստանի Պելոպոնես թերակղզին:

[6] Սինդ - Տե՛ս Իրն ալ-Ֆակիհ, ծնթգր. 5:

[7] Միհրան գետ - Տե՛ս Իրն Ռուստա, ծնթգր. 15:

[8] Մուլտան - Արաբներն այսպես են կոչել Փենջաբի հին քաղաքներից մեկը՝ Մուլտանհանան: Արաբական նվաճումից հետո Մուլտանը դարձավ կարևոր առևտրական քաղաք: (Multan, Y. Friedmann, EOI, CD-ROM, (VII: 548b)):

[9] Սիջիստան - Տե՛ս Վակիդի, ծնթգր. 12:

[10] Ջարահ լիճ - Կասպից ծովի ևս մեկ անվանում: Յակուտը իր Աշխարհագրական բառգրքում «Բահր ալ- ազար» հոդվածում գրում է «Նույնն է, որ կոչվում է նաև Բահր Թաբարիստան, Բահր Ջուրջան և Բահր Աբասքուն: Շատ ընդարձակ մի ծով է, որն ուրիչ ծովի միացած չէ: Կոչվում է նաև Խորասանի ծով, Ջիլի ծով, ոմանք էլ կոչում են Խորասանի ավազարլուր: Համդան ասում է, թե նրա պարակերեն անունն է Ջարահ Աքֆուղա, կոչվում է նաև Աքֆուղա-Դարիու, իսկ Արիստոտելը կոչում է Հիրքանիա»: (Հակոբ Նալբանդյան, Արաբական աղբյուրներ, էջ 30)

[11] Թուխարիստան - Թոխարիստան, տե՛ս Խալիֆա իրն Խայյաթ, ծնթգր. 57:

[12] Դունկուլա - Տե՛ս Ֆարղանի, ծնթգր. 21:

[13] Վերին Սահղ - Տե՛ս նաև Սահղ, Իրն ալ-Ֆակիհ, ծնթգր. 11:

[14] Բարկա - Տե՛ս Խալիֆա իրն Խայյաթ, ծնթգր. 9:

[15] Տրիպոլիս (Թարաբուլուս) - Աֆրիկայի Տրիպոլիսի մասին է:

[16] Իֆրիկիա նահանգ - Տե՛ս Վակիդի, ծնթգր. 18:

[17] Գոգ ու Մագոգ - Արար. Աջուջ-Մաջուջ (Յաջուջ Մաջուջ)- Խոսքը երկու բարբարոս ցեղախմբերի մասին է, որոնք, ըստ մուսուլմանական ավանդության, սերված են Նոյի երրորդ որդուց՝ Հաբեթից: Ըստ ոմանց, նրանք հսկաներ են, ըստ ուրիշների՝ անծանոթ բարբարոսներ, որոնք բնակվում են աշխարհի ծայրում: Նույնն են ինչ եղեկիէլի գրքի և Հովհաննու Հայտնության Գոգ և Մագոգը: (Հակոբ Նալբանդյան, Արաբական աղբյուրներ, էջ 160):

[18] Սլավոններ (սակալիբա) - Տե՛ս Խալիֆա իրն Խայյաթ, ծնթգր. 42:

[19] Բուլղարներ (Վոլգայի) - Չշփոթել Բուրջանի հետ, Խալիֆա իբն Խայյաթ, ծնթգր. 43:

[20] Բաչկիրդ - Կամ Բաչկուրտ անվանումը Ժ-ԺԴ դարերի արաբ մատենագիրները տալիս են երկու տարբեր երկրների՝ մեկը Հարավային Ուրալում, որտեղ բնակվում էին ներկայիս բաչկիրների (բաչկորտ) նախնիները, իսկ մյուսը՝ Հունգարիան էր: Այս երկուսը ծագումով ցեղակից էին: (Новосельцев, Хазарское государство, стр. 96):

[21] Բուրթաս – Սրանք բնակվում էին Պովոլժիեի հյուսիսում, որտեղ, հավանաբար, չէր հասնում Խազարական պետության ազդեցությունը: Բուրթասները ուգրո-ֆիննական ծագում ունեին և հանդիսանում են ներկայիս մորդվաների ու սրանց ցեղակից ժողովուրդների նախնիները: (Новосельцев, Хазарское государство, стр. 197):

[22] Խազարներ – Տե՛ս Խալիֆա իբն Խայյաթ, ծնթգր. 44:

[23] Պածինակներ – Տե՛ս Իբն Ռուստա, ծնթգր. 41:

[24] Բուլղարներ (Դանուբի)- Տե՛ս բուրջան, Խալիֆա իբն Խայյաթ, ծնթգր. 43:

[25] Խարլուխիա - Տե՛ս Իբն Հորդադբհ, ծնթգր. 9:

[26] Սևերի (Սուդան) երկիրը – Սուդան երկրի անվանումը ծագում է արաբերեն Բիլադ ալ-սուդան՝ «Սևերի երկիր» արտահայտությունից:

[27] ...ամենաարդարակը Պարսից ծովն է - Սովորաբար արաբագիր մատենագիրները այսպես էին կոչում Պարսից ծոցը, բայց տվյալ դեպքում աչխարհագրագետը հավանաբար նկատի ունի Արաբական ծովը, կամ գուցե Հնդկական օվկիանոսը:

[28] .. այն նեղուցից, որ Մաղրիբի ու Անդալուսի միջև կա - Ալբորան ծովը:

[29] Իթիլ (Ատուլ) - Վոլգա գետը:

[30] [Ֆաթիմյան խալիֆա] Մանսուրը – Ֆաթիմյան խալիֆա Մանսուրը իշխել է 946-953 թվականներին: (Fatimides, M. Canard, EOI, CD-ROM, (II: 850a)).

[31] Իդրիս իբն Իդրիսը – կամ Իդրիս Բ-ը Իդրիսիների դինաստիայի տիրակալներից էր: 803 թվականին 11 տարեկան հասակում հռչակվեց իմամ: Նա մահացավ 828 թվականին պատահարի հետևանքով, 38 տարեկան հասակում: (Idris II, D. Eustache, EOI, CD-ROM, (III: 1031b)):

[32] Աղլաբիների - Աղլաբիներ (կամ Բանու լ-Աղլաբ) մահմեդական դինաստիա էր, որը ողջ 9-րդ դարի ընթացքում իր ձեռքում էր պահում Իֆրիկիա նահանգը Աբբասյանների անունից: Դինաստիայի հիմնադիրը էր համարվում Իբրահիմ իբն ալ-Աղլաբը, որին Հարուն ալ-Ռաշիդ խալիֆան 800 թվականին նշանակեց Զաբի կառավարիչ: Շահրունակելով համարվել Աբբասյանների վասալներ, միաժամանակ Աղլաբիները ձեռք բերեցին ժառանգական իրավունքներ և իշխեցին Իֆրիկիայում: Ավելի քան հարյուր տարի իշխելուց հետո Աղլաբիների ստեղծած պետական միավորը 10-րդ դարի սկզբին (909) անցավ հզորացող Ֆաթիմյան խալիֆայության տիրապետության տակ: (Aghlabides, G. Marcais Aast, EOI, CD-ROM, (I: 247b)):

[33] Արդ ալ-Ռահման իբն Մուհամմադ [խալիֆան] - Մահմեդական Իսպանիայի խոշորագույն տիրակալներից մեկը և այնտեղ իշխած Օմայան տոհմի առաջին խալիֆան: Արդ ալ-Ռահման իբն Մուհամմադը, կամ Արդ ալ-Ռահման Գ-ը, իշխեց բավական երկար՝ 912-961, որով նշանավորվեց ամենափառավոր գահակալությունը Մահմեդական Իսպանիայի պատմության մեջ: (Abd al-Rahman, E. Levi-Provencal, EOI, CD-ROM, (I: 81b)):

[34] Ֆուսթաթ – Տե՛ս Բալաղուրի, ծնթգր. 193:

[35] Ամր իբն ալ-Աս – Տե՛ս Վակիդի, ծնթգր. 16:

[36] Արու-լ-Աբբաս Ահմադ իբն Թուլուն – Թուլունների դինաստիայի հիմնադիրը: Սա Թյուրք ստրուկների մի դինաստիա էր: Նրանք դեռևս Հարուն ալ-Ռաշիդի ժամանակներից ծառայելով որպես դինվորականներ, աստիճանաբար բարձրացան և դարձան Եգիպտոսի կառավարիչներ: Ահմադը Եգիպտոսում բարձր դիրքեր գրավեց 868 թվականին և աստիճանաբար դարձավ փաստացի ինքնուրույն տիրակալ՝ Եգիպտոսին

միացնելով նաև Սիրիան և իշխեց մինչև 884 թվականը: (Ahmad ibn Tulun, Zaky M. Hassan, EOI, CD-ROM, (I: 278a)):

[37] ...Ջաուհարը, մաղրիբցիների զորավարը – Ֆաթիմյան խալիֆայության զորավար և պետական գործիչ: Նրա ամբողջական անունն էր Ջաուհար իբն Արդ Ալլահ, որի վրա ավելացվում էր ալ-Սակլաբի (սլավոն) և ալ-Սիկիլլի (սիկիլիացի): Նրա հայրը, բստ երևույթին, սլավոն կամ այլ եվրոպական ծագումով ստրուկ էր: Բայց Ջաուհարը հենց սկզբից հիչատակվում է որպես ազատ մարդ: Ջաուհարն արդեն իրեն դրսևորել էր որպես տաղանդավոր դինվորական, երբ Ֆաթիմյան խալիֆա ալ-Մուիզդը որոշեց ուժով տիրանալ ողջ Հյուսիսային Աֆրիկային ու Եգիպտոսին և հենց Ջաուհարին վստահեց արշավանքը ղեկավարելու պատիվը: Մի չարք այլ հաղթանակներից հետո, ալ-Մուիզդը Ջաուհարին ուղարկեց նվաճելու Եգիպտոսը: 969 թվականի հուլիսի 1-ին Ջաուհարը իր զորքով արդեն Ֆուսթաթում էր և տիրում էր ամբողջ Եգիպտոսին: Հաջորդ իսկ օրը Ջաուհարը հիմքը դրեց մի նոր քաղաքի՝ Կահիրեի, Ֆուսթաթից ոչ հեռու, որը մի քանի տարի անց դարձավ Ֆաթիմյան հսկայածավալ տերության մայրաքաղաք և այդ ժամանակից ի վեր անփոփոխ մնաց իրրև Եգիպտոսի մայրաքաղաք: (Djawhar al-Sikilli, H. Mones, EOI, CD-ROM, (II: 494b)):

[38] Տիննիս – Տե՛ս Ֆարղանի, ծնթգր. 54:

[39] Ազիզ [խալիֆա] - ալ-Ազիզ Բիլլահը Ֆաթիմյան հինգերորդ խալիֆան էր և առաջինը որ հենց սկզբից իշխում էր Կահիրեից: Նա հաջորդեց իր հորը՝ Մուիզդին: Հռչակվեց խալիֆա 976 թվականին: Նրա հարկային գործերը վարում էր Յակուբ իբն Քիլլիսը, որին տրվեց վեզիրի կոչում: Թեև այստեղ Իբն Հաուկալը բացասաբար է խոսում վեզիրի մասին, սակայն համարվում է, որ նա կարգավորել է հարկահանության Ֆաթիմյան պետության մեջ: (al-Aziz Billah, M. Canard, EOI, CD-ROM, (I: 823a)):

[40] Այստեղ և հետագայում քառակուսի փակագծերով տրվում են այն հատվածները, որոնք Խաթախբիի բնագրում ավելացվել են հետագայում, հավանաբար 12-րդ դարում:

[41] Սվետիա (Սուայդիյա) - Գտնվում է Անտիոքից 26 կմ դեպի հարավ-արևմուտք, Միջերկրականի ափին մոտ, Որոնտես գետից 5 կմ հյուսիս: Միջնադարում այն առաջին անգամ հիչատակվում է նկատի ունենալով նույնանուն նավահանգիստը գետաբերանում: Հայտնի էր նրանով, որ ոչ հեռու գտնվում են սուրբ Սիմեոն Սյունակյացի վանքի ավերակները: Սուայդիյան նոր ժամանակներում մտնում էր Սիրիայի Ալեքսանդրեթի գավառի մեջ և միայն 1939 թ. փոխանցվեց Թուրքիային: (al-Suwaydiyya, E. Honigmann [D. W. Morray], EOI, CD-ROM, (IX: 910a)).

[42] Քանիսա - Քանիսատ ալ-Սաուդա: Տե՛ս Խալիֆա իբն Խայյաթ, ծնթգր. 85:

[43] Բաալբակ – կամ Բաալբեք, տես Բալաղուրի, ծնթգր. 19:

[44] Սիմակի լեռ – Սիմակի լեռ: Լեռ Հայկական լեռնաշխարհում: Հիչատակվում է սեպագիր արձանագրություններում: Տեղադրվում է Ուրմիա լճի մոտակայքում: (ՀՀՇՏԲ, հ. 4, էջ 603):

[45] Ռուսափ (Ռուսաֆա) - Տե՛ս Բալաղուրի, ծնթգր. 81:

[46] Կալինիկում (Ռակկա) - Տե՛ս Ռակկա, Բալաղուրի, ծնթգր. 31:

[47] Արտաքին Հայաստան (Արմինիա ալ-խարիջա) և Ներքին Հայաստան (Արմինիա ալ-դախիլա) – Հայաստանի նման բաժանումը վերաբերում էր Բուն Հայաստանին (Ոչ թե Արմինիա ոստիկանությանը) և ընդգրկում էր՝ Արտաքին Հայաստան հասկացության մեջ մոտավորապես Հարավ-արևմուտքը (Բերկրի, Խլաթ, Ոստան և Արձեչ), իսկ Ներքին Հայաստանի մեջ Հյուսիս-արևելքը (Դվին, Նախճավան, Կարին և այլն) (Տե՛ս Հակոբ Նալբանդյան, Արաբական աղբյուրներ, էջ 133): Ինչ վերաբերում է լեռներին, ապա նույն այդ տրամաբանությամբ Հայաստանի այս երկու մասերն իրարից բաժանում են, Հիմնականում, Հայկական Պարն ու Վասպուրականի լեռները, որոնք էլ իրենց հերթին, մի կողմից միանում են Եփրատի ու Տիգրիսի ավազանի լեռներին, մյուս կող-

մից գնում-միանում Ատրպատականի լեռներին: (Վ. Տ.-Ղ.):

48 Ղութա – Տե՛ս Բալադուրի, ծնթգր. 13:

49 Սարիները – Տե՛ս Աբու Յուսուֆ, ծնթգր. 17:

50 Հուսայն իրն Ալի – Տե՛ս Յակուբի (պ.), ծնթգր. 30:

51 Հսկայական սյուների վրա կառուցված – Հավանաբար նկատի ունի Բասլրեկի (Հելիոպոլիս) Յուպիտերի տաճարի հսկա սյուները, որոնք մինչև այսօր էլ կանգուն են:

52 Սայֆ ալ-Դաուլա – Աբու լ-Հասան Ալի իրն Աբու լ-Հայջա Աբդ Ալլահ իրն Համդան իրն Համդուն իրն ալ-Հարիս Սայֆ ալ-Դաուլա ալ-Տաղլիբին Հայերի, Հյուսիսային Սիրիայի, ինչպես նաև Մայաֆարիկինի և արևմտյան Ջազիրայի տիրակալն էր 945-967 թվականներին: Նա հռչակ է ձեռք բերել արաբական պատմության մեջ որպես Բյուզանդիայի դեմ ջիհադի քաջարի առաջնորդ: Նա առատաձեռն մարդ էր և մեծ գումարներ էր ծախսում գերիներին ազատելու համար: Սայֆ ալ-Դաուլան պատմության մեջ է մտել նաև որպես լուսավորյալ մարդ, որն իր արքունիքը վերածել էր բանաստեղծների ու գիտնականների հավաքատեղիի: Միևնույն ժամանակ, միշտ չէ որ նա հաջողակ էր, այդ թվում և արտաքին թշնամիների դեմ պայքարում: Ամեն դեպքում նա պատմության մեջ մնացել է որպես ասպետական մի կերպար: Մինչդեռ Իսթախրին նկարագրում է նրան միայն բացասական գույներով: Հայտնի է, որ Սայֆ ալ-Դաուլան մեծ համակրանքով էր վերաբերվում չիաներին (գուցե դա է պատճառը մատենագրի նման գնահատականի): (Sayf al-Dawla, Th. Bianquis, EOI, CD-ROM, (IX:103a)):

53 Ավասիմ (ապաստան) – Տե՛ս Բալադուրի, ծնթգր. 22:

54 Ռումի տեր Մասուդ իրն Կիլիջ Արսլան ալ-Սալջուկի – Խոսքը Իկոնիայի (Ռումի) սելջուկյան սուլթան Ռուքն ալ-Դին Մասուդ իրն Կիլիջ Արսլանի մասին է: Տե՛ս նաև Արամ Տեր-Ղևոնդյանի հետևյալ ծանոթագրությունը «Իկոնիայի պետությունը արար պատմիչների մոտ կոչվում է Ռումի (Բյուզանդիային տրվող Ռում հոռոմ բառից) սուլթանություն: Առաջացավ ԺԱ դ. վերջում սելջուկյան պետության քայքայմանը զուգընթաց: Աստիճանաբար ծավալվեց, նախ 1157-ին գրավելով Դանիշմանդյանների որոշ հողեր (Փոքր Հայքում), 1207-ին Անթալիան և այլն: Այս ալ-Դին Քայ Կուբադի օրոք (1219-1236) հզորության գագաթնակետին հասավ: Նրա քաղաքներն էին Իկոնիան, Կեսարիան, Սեբաստիան և այլն: Մոնղոլական արշավանքներից (1243) հետո դարձավ Իրանի Հուլաղյան իլխանության ենթակա, իսկ 1307-ին մանր միավորների տրոհվեց»: (Իբն ալ-Ասիր, էջ 399-400):

55 Իրն Աբու-լ-Սաջ – Տե՛ս Իսթախրի, ծնթգր. 2:

56 Բարդաջ – կամ Բարդիջ, Տե՛ս Բալազուրի, ծնթգր. 150:

57 Հունարակերտ – Խունան, Տե՛ս Բալադուրի, ծնթգր. 128:

58 Խունաջ – Տե՛ս Իսթախրի, ծնթգր. 3:

59 Հուլաղու – Խոսքը Ջինգիզ խանի թոռ Հուլաղուի (1217-1265) մասին է, որը 1256-1258 թթ. մոնղոլական բանակով նվաճեց Իրանն ու Իրաքը: 1258-ին վերացրեց Աբբասյան խալիֆայությունն ու մահապատժի ենթարկեց վերջին խալիֆա Մուստասիմին: Ստեղծեց մոնղոլական ինքնուրույն պետություն՝ Հուլաղյան իլխանությունը, որի մայրաքաղաքը դարձավ Մարաղան: Հենց այստեղ էլ, Հուլաղուի օրոք, նասրեդդին Թուսիի ղեկավարությամբ կառուցվեց Մարաղայի աստղադիտարանը: (Сов. Ист. Энц., т. 15, стр. 685, Հայկ. սովետ. Հանրագիտարան, հ. 7, էջ 296-297):

60 Ռստան (Վասթան) – Տե՛ս Իրն Ռուստա, ծնթգր. 34:

61 Աբու-լ-Կասիմ Յուսուֆ իրն ալ-Դաուղաղ իրն ալ-Դաուղաչտ – Աբու-լ- Կասիմ Յուսուֆը Սաջյան տոհմից, որը մայրաքաղաքը Մարաղայից տեղափոխեց Արդաբիլ: Տե՛ս նաև Իսթախրի, ծնթգր. 2:

62 Յուսուֆ իրն Աբու-լ-Սաջ – Տե՛ս Իսթախրի, ծնթգր. 2:

63 Ռուդայնիներ – Սա արաբական մի տոհմ էր, որ խալիֆայության կողմից Ատրպատականի նվաճումից հետո, հաստատվեցին այստեղ: Ուրմիայից դեպի Մարագա տանող ճանապարհի վրա նրանք հիմնեցին Նիրիզա քաղաքը: Իսկ հետագայում՝ Թ դարում, Ռուդայնիների ներկայացուցիչներից ոմանք խալիֆայի կողմից նշանակվեցին Ատրպատականի կառավարիչներ: (Niriza, V. Minorsky, EOI, CD-ROM, (VIII: 526)):

64 Անդարաբ – Տե՛ս Կուդամա, ծնթգր. 5:

65 Ներքին և Արտաքին Հայաստան – Ըստ երևույթին Ներքին Հայաստան ասելով հեղինակը նկատի ունի այն տիրույթները, որոնք Հայոց Բագրատունի թագավորների անմիջական իրավասության տակ էին Հյուսիսային Հայաստանում, իսկ Արտաքին Հայաստանը ընդգրկում էր Վասպուրականի թագավորությունը, արաբական ամիրությունները և այլն (Ա. Տ.-Ղ.):

66 ... այժմ մահմեդական իշխողների ձեռքում են – Հավանաբար նկատի ունի արաբական (մահմեդական) ամիրություններին:

67 ...Թե ինչ է կատարվել նրա ժողովրդի հետ – Սա մի ավանդություն է, որի մասին խոսում են տարբեր արար մատենագիրներ վկայակոչելով՝ Ղուրանի մի տողը, ուր ասում է. «Եվ Ավոտը և Թեմոտը և Ռասի բնակիչները և ուրիշ ազգեր» (Ղուրան, XXV, 40): Օրինակ այդ մասին խոսում է Յակուտին, իսկ Յակուտը իր Աչխարհագրական բառգրքի «Ար-Ռաս» (Արաքս) հոդվածում գրում է «Ատրպատականի (Ադրբեջան) հովիտը ար-Ռաս գետի այն կողմի ափի վրա է տարածվում: Պատմում են, Թե Առանում, Ար-Ռասի չուրջը հաղար քաղաք գոյություն ուներ: Ալլահը նրանց ուղարկեց Մովսես կոչված մի մարգարե, որը տարրեր է Ամրանի որդի Մովսեսից: Սա հրավիրեց նրանց աստծո հավատքին, բայց նրանք չհավատացին նրան, ուրացան և դեմ գնացին նրա հրամաններին: Այն ժամանակ մարգարեն անիծեց նրանց և Ալլահը Մեծ ու Փոքր Մասիսները փոխադրեց Թաիֆից (Հիջազի- Հ. Ն.) դեպի Առան և նրանց տակ թաղվեցին ար-Ռասի բնակիչները: (Հակոբ Նալբանդյան, Արաբական աղբյուրներ, էջ 69) (Տե՛ս նաև չատ ավելի մանրամասն. Ա. Տեր-Ղևոնդյան, Մասիս լեռան մասին արաբական գրույցը, Հոդվածների ժողովածու, էջ 222-229):

68 Դերանիկի որդին Անձևացյաց, Վանի ու Ոստանի տերը – Խոսքը հավանաբար Դերենիկ Արծրունու մասին է:

69 Բակլիյա (կարմատյան) Բաթինիներ (իսմայիլականներ) – Իսլամի երեք հիմնական ուղղություններից (սուննա, չիա, խարիջի) ամենամեծ թվով ճյուղեր ու ենթաճյուղեր ունի չիա ուղղությունը: Այդ ուղղություններից ամենախոշոր ու կարևորներից է Իսմաիլական ճյուղը, որը անցյալում կոչվում էր նաև «Բաթինիյա»: Իր հերթին Իսմաիլական ճյուղի մի թևն են կարմաթները, որոնք Ժ-ԺԱ դարերում ստեղծեցին ուժեղ և ագրեսիվ մի պետություն Իրաքի հարավում և Արաբիայի մի մասում: Ահա սրանց մի մասը կոչվում էր «Բակլիյա»: Վերջիններս բնակվում էին Սավադում (Հարավային Իրաք) և կապված էին Կարմաթների հետ: Սրանց ղեկավարներից էր Աբու Հատիմը՝ Ժ դարի սկզբին: «Բակլիյա»ի հետևորդները գլուխ բարձրացրին Քուայում և Վասիթում: Նրանց ղեկավարներն էին Մասուդ իրն Հուրայսը և Իսա իրն Մուսան: Սկզբնական որոշ հաջողություններից հետո սակայն, նրանք ձնչվեցին Մուկտադիր խալիֆայի զորավար Հարուն իրն Ղարիբի կողմից: (Bakliyya, M. G. S. Hodgson, EOI, CD-ROM, (I: 962b), Batiniyya, M. G. S. Hodgson, EOI, CD-ROM, (I: 1098b)):

70 Սմբատի որդիների (բանու Սինբաթ) – Խոսքը Բագրատունիների մասին է: Սմբատի որդիներ ասելով մատենագիրը նկատի ունի Սմբատ Ա-ին ու նրա հաջորդներին:

71 Խաչենի տեր Սենեքերիմ – Ժ-ԺԱ դարերում Խաչենը և հարևան գավառներն ընդգրկում հայկական մի իշխանություն, որը նաև կոչվում էր Փառիսոսի իշխանություն: Ժ դարի կեսին Սահակ Սևադայի որդի Սենեքերիմը (Հովհաննես-Սենեքերիմ) իրեն հռչակեց թագավոր: Հայոց Բագրատունյաց կենտրոնական թագավորության թուլացմամբ չհագեցված Բյուզանդական կայսրությունը ճանաչեց այս թագավորությունը՝ Սենեքերիմին ուղարկելով արքայական թագ և ծիրանի: Փառիսոսի թագավորությունն իր գոյությունը պահպանեց մինչև ԺԱ դարի կեսերը: (Հայկ. սովետ. Հանրագիտարան, հ. 12, էջ 311):

ՄՈՒԿԱԴԴԱՍԻ
(946/947 – 1000)

Շամս ալ-Դին Աբու Աբդալլահ ալ-Մուկադդասին ծնվել է Երուսաղեմում (դրանից էլ նրա Երուսաղեմացի՝ Մուկադդասի մականունը) 946/947-ին: Ճանապարհորդել է գրեթե բոլոր մահմեդական երկրներում: Իր «Ահսան ալ-Տակասիմ ֆի Մաարիֆատ ալ-Ակալիմ» (Լավագույն բաժանումները երկրամասերի (կլիմաների) ճանաչման համար) աշխարհագրական երկը չարադրել է 10-րդ դարի ութսունական թվականներին: Մահացել է մոտավորապես 1000 թվականին:

Նա, ինչպես դասական դպրոցի բոլոր աշխարհագրագետները, նկարագրել է միայն մահմեդական աշխարհը, որը նա երկու հստակ մասերի է բաժանել՝ արաբական երկրների և ոչ-արաբական (աջամ) երկրների: Երկրորդ խմբի մեջ է նաև Հայաստանը, որն «Ընդարձակ հովիտների երկրամաս» հասկացության մեջ միացվել է Առանին ու Ատրպատականին:

Թարգմանությունը կատարվել է Դե Գուեի մատենաշարի երկրորդ հրատարակությունից: Descriptio imperii Moslemici autore Al-Mokaddasi, Bibliotheca Geographorum Arabicorum, v. III, Lugduni Batavorum, 1967.

(Տե՛ս **Крачковский,** *т. IV, стр 210-218,* **A. Miquel**, *al-Mukaddasi, (VII:492b), EOI, CD-ROM)*

ՄՈՒԿԱԴԴԱՍԻ

ԼԱՎԱԳՈՒՅՆ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ ԵՐԿՐԱՄԱՍԵՐԻ ՃԱՆԱՉՄԱՆ ՀԱՄԱՐ (ԱՀՍԱՆ ԱԼ-ՏԱԿԱՍԻՄ ՖԻ ՄԱԱՐԻՖԱՏ ԱԼ-ԱԿԱԼԻՄ)

ԸՆԴԱՐՁԱԿ ՀՈՎԻՏՆԵՐԻ ԵՐԿՐԱՄԱՍԸ (ԻԿԼԻՄ ԱԼ-ՌԻՀԱԲ)

Նկատի ունենալով, որ երկրամասը (իկլիմ) կարևոր է, ունի շատ առավելություններ, նրանում առատ են մրգերը, խաղողի որթերը, նրա քաղաքները Իրաքի նման հաճելի են, ինչպես Մուղանը, Խլաթը, Տաբրիզը, նրանում գնները ցածր են, ծառերը խիտ, նրա միջով գետեր են հոսում, լեռների վրա մեղր կա, իսկ դաշտերում արհեստանոցներ, տափաստանները լի են ոչխարների հոտերով, իսկ մենք նրա բոլոր գավառների համար մի ընդհանուր անուն չգտնելով, այն կոչեցինք Ընդարձակ Հովիտների երկրամաս (Իկլիմ ալ-Ռիհաբ): Այս երկրամասը Իսլամի [թագավորության] համար մի գեղեցկություն է, [թեև] մահմեդականներն այնտեղ պաշարման են ենթարկվում հոռոմների կողմից, երկրամաս, որը բրդե գործվածքներ է արտադրում և զարմանահրաշ գոտիներ, ուր որդերը կարմիր (կիրմիզ) ներկ են տալիս[1]:

Հնարավոր չէ տալ նրա նկարագրությունը: Մեկ ոչխարի գինը երկու դիրհեմ է, հացի երկու նկանակը մեկ դանկ է, իսկ պտուղները ոչ հաշվում են, ոչ կշռում: Միաժամանակ սա մի կարևոր սահմանային ամրություն է (սաղր) և աղնիվ երկիր: Նրանում են Արաքսի [եղերաբնակ] մարդիկ (ասհաբ ալ-Ռաս), որոնք Մեծ Մասիս (Հարիս) և Փոքր Մասիս (Հուվայրաս) լեռների տակ են մնացել[2]: Նրանում կա Թաիֆի [լեռների] մի մասը և դրախտի հետ նմանություն ունի: Սա իսլամի պարծանքն է և զազիների (հավատի ոռգմիկների) հանգստավայրը: Ունի օգտակար ապրանքներ, հին գավառներ, հորդառատ գետեր, արժեքավոր պտուղներ, հրաշալի առանձնահատկություններ ու հյութեղ մրգեր:

Նրա [մահմեդական] բնակիչները սուննայի գիտակ են, ճարտասան և պատկառելի: Այնտեղ կան մանանա, տորոն, չուչան (գանբակ), աչուբա՞ (կասբույա) ձուկը, ծով և լճեր, Դարբանդը (ալ-Բաբ), մահմեդական մենաստաններ (ռիբաթ), կրոնական հավատ ու բարեգործություններ: Սակայն ամեն մեկն իր հավատալիքների (մազհաբ) մեջ

ջերմեռանդ է: Միաժամանակ նրանք ծանր են, նրանց լեզվի մեջ կա գորով և պարծենկոտություն ունեն: Այնտեղ հասնելու ճանապարհները դժվար են, և քրիստոնյաները նրանում մեծամանություն են կազմում: Ահա այս է երկրամասի ձևն ու պատկերը:

Այս երկրամասը մենք բաժանել ենք երեք նահանգների: Առաջինը, որը լճից (Կասպից ծովից) է սկսում, Առանն է, հետո Հայաստանը և ապա Ատրպատականը:

Ինչ վերաբերում է Առանին, ապա դա երկրամասի մեկ երրորդն է և նման է կղզու՝ լճի (Կասպից ծովի) ու Արաքս գետի միջև: Նահր ալ-Մալիքը (Սամուր) նրան ճեղքում է երկարությամբ: Նրա մայրաքաղաքն է Պարտավը: Նրա քաղաքներից է Տփղիսը, ալ-Կալաան (Կալաատ իբն Քանդաման), Շամխորը, Խունանը, Գանձակը (Ջանզա), Բարդիջը, Շամախին, Շիրուանը, Բաքուն, Շապորանը, Դարբանդը (Բաբ ալ-Աբուաբ), ալ-Աբխազը (ալ-Լայիջան), Կապաղակը (Կաբալա), Շաքեն (Շաքքի), Մանազկերտը[3] և Տարլան[4]:

Իսկ Հայաստանը մի մեծ նահանգ է, որը հիմնել է Նոյի որդի Հաբեթի որդի Թորգոմի որդի Արմինին (Արմինի Իբն Լանթա իբն Յաֆիթ իբն Նուհ): Այստեղ արտադրվում են վարագույրներ, բրդե բարձրարժեք գորգեր (զալալի): Նա ունի բազում հատուկ արտադրանքներ: Նրա մայրաքաղաքն է Դվինը (Դաբիլ) և նրա քաղաքներն են Բաղնչը, Խլաթը, Արճեշը, Բերկրին, Խոյը, Սալմաստը, Ուրմիան, Դախառականը, Մարաղան, Ահրուն, Մարանդը, Սինջանը, Կարնո քաղաքը, Կանդարիյան, Կալաատ Յունիսը և Նուրինը:

Ատրպատականը մի նահանգ է, որի տարածությունը սահմանագծել է Ատրպետը (Ադարբադ) որդի Բյուրասպի (Բայվարասֆ) որդի Ասուադի, որդի Սեմի որդի Նոյի: Նրա մայրաքաղաքը Արդաբիլն է, որն ամբողջ երկրամասի կենտրոնն է: Նրանում կա մի լեռ, որի երկարությունը հարյուր քառասուն փարսախ է և ամբողջովին ծածկված է պտուղներով ու մշակված դաշտերով: Ասվում է, որ այնտեղ կան յոթանասուն լեզուներ: Այս լեռից է գալիս Արդաբիլի բարիքների առատությունը: Նրանց տները մեծ մասամբ գետնի տակ են: Նրանց քաղաքներն են Ռասբան, Տաբրիզը, Ջաբրավանը, Խունաջը, Մայանիջը, Սարատը, Բարուան, Վարդանակերտը (Վարսան), Մուղանը, Միմադը և Բարզանդը:

Եթե որևէ մեկը ենթադրի, որ Բաղնչը (Բաղլիս) Ակուր (Ջազիրա) նահանգում է, ապացույց բերելով այն, թե Համդանիների տոհմի (Բանու Համդան) տիրույթներից էր եղել, ես կպատասխանեմ, որ նկատի ունենալով, թե երկու նահանգների (վիլայատ) ժողովուրդն էլ այդ բանը ենթադրել է, ապա մենք այս երկրամասում դրեցինք, քանզի մենք նրան մի համանման անուն ենք գտել, որը Տաֆլիսն (Տփղիս) է: Ինչ վերաբերում է որևէ մեկի տիրույթը լինելուն, ապա դա չի կա-

բելի ապացույց համարել: Զի, որ Սայֆ ալ-Դաուլայինն էին նաև Կիննասրինն ու Ռակկան և ոչ ոք չի ասել, Թե Ռակկան Ասորիքի մեջ է գտնվում:

Պարտավը մի մեծ մայրաքաղաք է, քառակուսի ձևով, դաշտի մեջ: Ունի ընդարձակ բերդ (միջնաբերդ). նրա չուկանները ամբողջովին ստվերի տակ են: Շուկայի ետևում է մայր մզկիթը: Սա (Պարտավը) այս երկրամասի Բաղդադն է: Տները գեղեցիկ են, կառուցված աղյուսով ու գաջով (ջասս): Նա հաճելի է և սիրուն: Մրգերն առատ են: Մզկիթի որոշ սյուներ աղյուսից են և որոշ սյուներ՝ փայտից: Ունի մի գետ, որը միջով է անցնում, իսկ Կուր գետը երկու փարսախ հեռավորության վրա է: Գետակները նրան մոտիկ են և օգտակար նրա համար, սակայն նրանց ափերն ավեր վիճակում են, բնակիչներից դատարկված և նրա բերդն ավերված է:

Տփղիսն ամրացված քաղաք է, լեռների մոտ: Նրա միջով անցնում է Կուր գետը: Նա կառուցված է երկու ափերի վրա, որոնք կամուրջով միանում են: Նրա պատերը (պարիսպները) քարաչեն են, փայտով ծածկված:

Կալաան մի քաղաք է առանց բերդի (միջնաբերդի) կառուցված դաշտում, Լաքզան լեռան մոտ:

Շամախին մի լեռան ստորոտին է: Կառուցված է քարով ու գաջով, ունի հոսող ջրեր, պարտեզներ ու զբոսավայրեր:

Շիրուանը (Շարուան) մեծ է, կառուցված դաշտում, քարաչեն և մզկիթը չուկաների մեջ է: Նրա միջով մի գետ է անցնում:

Մուղանը այս երկրամասի սահմանի ծայրին է: Եղել է մարդաշատ, սակայն նրա բնակիչները պակասել են: Նա մեծ ճանապարհի վրա է:

Բաքուն (Բաքուհ) լճի (Կասպից ծովի) վրա է և այս երկրամասի նավահանգիստներից մեկը:

Շապորանը (Շաբարան) բերդ չունի: Քրիստոնյաներն այնտեղ մեծամասնություն են: Սա ևս երկրամասի սահմանի ծայրին է:

Կապաղակը (Կաբալա) ամրացված քաղաք է, գետը քաղաքից դուրս է, իսկ մզկիթը հեռու է, մի բլրի վրա:

Շաքեն (Շաքքի) դաշտում է կառուցված: Քրիստոնյաները այնտեղ մեծամասնություն են: Մայր մզկիթը մահմեդականների չուկայում է:

Վարդանակերտը (Վարսան) դաշտում է, նրա չուկան հաճախ են այցելում: Նրա ետևում կա մի գետակ ու մայր մզկիթ, որոնք իրարից հեռու են:

Բայլականը փոքրիկ քաղաք է, նրա բնակիչները հրաչալի մարդիկ են: Այստեղ կա մի նշանավոր օշարակ (նաթիֆ):

Մանազկերտը (Մալազքիրդ) մի ամրացված քաղաք է: Ունի մի քանի աղոթքի բեմեր (մինբար) և բազմաթիվ պարտեզներ: Մայր մզկիթը չուկայի եզրին է:

Տարյան (Տայյա, Թելավ) մի [քաղաք] է, ուր մահմեդականները հինգ հարյուր ընտանիք (տուն) ունեն, սակայն բնակչության մեծամասնությունը քրիստոնյաներ են: Սա հաճելի [քաղաք] է:

Արխազը (Արխան, Լայիջան) հաճելի [գավառ] է: Այդպիսին են նաև այս գավառի քաղաքները:

Յունիա գյուղը (կարիատ Յունիա) Դերանիկի (Դայրանի, Դիրանի) քաղաքն (բալադ) է, ուր կան մահմեդականներ:

Դարբանդը (Բաբ ալ-Աբուաբ) Խազարաց (Կասպից) ծովի վրա է, ամրացված պարսպով, որը խազարների կողմն է: Ունի երեք դռներ (դարպասներ)՝ Մեծ դուռը, Փոքր դուռը և մի ուրիշ դուռ ծովի կողմը, որը կողպած է և չի բացվում: Կան մի քանի դռներ ծովի և խալամի երկրների կողմը: Պարիսպն սկիզբ է առել (ձգվել) լեռնից մինչև լճի (ծովի) մեջտեղը և վրան եղել են աշտարակներ: Նրանում կան մզկիթներ և պահապան զորք (հուռաս): Մայր մզկիթը չուկաների մեջտեղում է, ուր կա ջրի աղբյուր: Շենքերը քարից կառուցված, տները գեղեցիկ և հոսող ջրեր ունեն:

Դվինը կարևոր քաղաք է, ունի անառիկ բերդ (միջնաբերդ): Նրանում շատ են բարիքները, անունը հռչակված է, բուրդը նշանավոր է, գետը հորդառատ: Սակայն այժմ նրա պարտեզները չորացել են: Ունի հինավուրց արվարձան և ամրակուռ բերդ: Նրա չուկաները խաչաձև են ու նրա գյուղական մերձակա հողերը (սավադ) հրաչալի: Մայր մզկիթը բարձր բլրի վրա է և նրա կողքին է եկեղեցին: Նրան (քաղաքը) պահպանում են քրդերը: Ունի միջնաբերդ: Նրանց շենքերը կավից ու քարից են: Բազմաթիվ դռներ ունի, որոնցից են Քայդարի (Քինդար) դուռը, Տփղիսի դուռը և Անիի դուռը: Սակայն նրա [բնակչության] մեծամասնությունը կազմում են քրիստոնյաները և նրանց ազնվականները: Բայց նրա բնակչությունը պակասել է և նրա բերդն ավերվել:

Բաղեչը մի խորունկ հովտի մեջ է, ուր երկու գետ է հոսում, որոնք քաղաքում իրար են խառնվում: Ունի երկու կողմեր (թաղամասեր): Նրանում կա քարաչեն միջնաբերդ երկու ցուլերի նմանողությամբ:

Խլաթը մի քաղաք է դաշտում կառուցված և ունի գեղեցիկ պարտեզներ: Նրա չուրջը կավե պարիսպ կա: Մզկիթը չուկաների մեջ է: Նրանում մի գետ կա:

Սալմաստը հաճելի [քաղաք] է: Ունի կավից ու քարից կառուցված բերդ և նրանում կա մի հորդառատ գետ: Նրա մայր մզկիթը չուկայի կողմի վրա է: Նա շրջապատված է քրդերով:

Ուրմիան գեղեցիկ [քաղաք] է բարեկարգ միջնաբերդով: Նրա մայր մզկիթը գտնվում է կերպասավաճառների (բազզազ) չուկայում: Ունի բերդ ու մի գետ:

Մարաղան հրաչալի է, ունի բերդ (հիսն) ու միջնաբերդ (կալաա) և

արվարձան: Նրա բերդերը կավից են:

Մարանդը ամրակուռ քաղաք է, շրջապատված պարիսպներով: Ունի չեն արվարձան, իսկ մայր մզկիթը չուկայի մեջ է:

Կանդարիյան մի քաղաք է հիմնադրված քրդերի կողմից և նրանում կա վայելչագեղ մայր մզկիթ:

Նուրինը ամրակուռ քաղաք է, ունի միջնաբերդ և մայր մզկիթի դռանը կա ջրի աղբյուր, ինչպես նաև բազմաթիվ պարտեզներ և հաճելի է:

Կալաատ Յունիսը (Յունիսի ամրոցը) Դևրանիկի (Դիրանի) քաղաքն է և նրանում կան մահմեդականներ:

Արդաբիլը Ատրպատականի մայրաքաղաքն է և երկրամասի գլխավոր քաղաքը: Նրանում կա անառիկ բերդ: Նա Դվինից փոքր է, նրա չուկաները խաչաձև են և չորս փողոցների (դարբ) ուղղությամբ են ձգվում, իսկ մայր մզկիթն այս խաչմերուկում է. մի բարձունքի վրա, բերդի ետևում կա մի բազմամարդ արվարձան: Նրա շենքերի մեծամասնությունը կավից է, բազմաթիվ լուսամուտներով: Ունի առատ պտուղներ և շատ փողոցի աղբ: Կան հոսող ջրեր ու մշտական կայազոր (ասքար), բազում բարիքներ և հրաշալի բաղնիքներ: Սակայն բնակիչները ժլատ են, ծանրաչարժ, նրանց մոտ քիչ են գիտուն մարդիկ: Սա մի հակակրելի քաղաք է, գարշահոտ, աչխարհի զուգարաններից (քանաֆ) մեկը: Բնակիչները նենգ են, անտարբեր, անհետաքրքիր և անձնական կարիք ունեցողներին կարևորություն չեն տալիս: Նրանց մոտ չկա ոչ մի հիշատակելի իրավագետ (ֆակիհ), ոչ աչքի ընկնող պետ, ոչ զարգացած մարդ, ոչ էլ հմուտ բժիշկ:

Տաբրիզը, ինչ հաճելի քաղաք է Տաբրիզը: Դա մաքուր ոսկի է, հազվագյուտ քիմիա, ընտիր քաղաք, կարելի է գերադասել Խաղաղության քաղաքից (Բաղդադ), որով իսլամի ժողովուրդը հպարտանում է: Նրա միջով գետեր են անցնում և նրա շրջակա հողերի վրա (սավադ) ծառերը խիտ չատ են, կարիք չկա հարցնելու նրա էժան գների, մրգերի առատության մասին: Մայր մզկիթը քաղաքի կենտրոնում է, իսկ նրա (քաղաքի) հմայքը անսահման է:

Մուղանը մի քաղաք է շրջապատված երկու գետերով և չուրջը գեղեցիկ այգիներով, կարծես ամեն կողմ պարտեզներ են: Տաբրիզի հետ երկու ծաղկանոցներ են և ընդարձակ հովիտների երկրամասի (Ռիհաբ) երկու հպարտություններն են: Նա գտնվում է Արդաբիլի ու Ջիլանի (Գեղան) միջև: Նրանից մինչև Պարտավ ութ (օթիևան) է: Սա հաճելի քաղաք է, բազմաթիվ դաչտավայրերով: Այնտեղ երկու գետ է հոսում: Նրա երևելիները մարգարտի ու բուստի (մարջան) նման են, առատաձեռն ու ազնիվ:

Բարգանդը փոքր քաղաք է: Սա հայերի չուկան է և նահանգի առևտրական կենտրոնը, հրաշալի է և օգտաչատ:

Միանան փոքր քաղաք է դաչտավայրում, առատ բարիքներով:

Ջանջանը այս երկրամասի ծայրին է. մի գետ նրան բաժանում է մասերի: Այնտեղից անցնում է մի մեծ ճանապարհ:

Այս երկրամասի բոլոր քաղաքները հաճելի են, լի բարիքներով, էժան արտադրանքի աղբյուր (հանք) են, մրգերով, մսով ու հաճելի բարիքներով:

ԵՐԿՐԱՄԱՍԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՆՐԱԳՈՒՄԱՐԸ

Սա ցուրտ երկրամաս է, առատ ձյունով ու անձրևներով: Բնակիչները որոշ ծանր նկարագիր ունեն, սառն են և դանդաղաչարժ, ունեն երկար մորուքներ: Նրանց լեզուն գեղեցիկ չէ: Հայաստանում խոսում են հայերեն, Առանում՝ առաներեն (առանիյա), իսկ նրանց խոսած պարսկերենը (ֆարսիյա) հասկանալի է ու մոտիկ Խորասանի [բարբառին], իր ձայներով (տառերով):

Նրանք [մահմեդականների] իրավագիտական (մազհար) հարցերում ուղղահավատ են, սակայն հադիսի մասնագետները հանբալիներ[5] են: Դվինում գերիշխող է Աբու Հանիֆայի մազհարը[6] (կրոնա-իրավագիտական դպրոցը), որի հետևորդները գտնվում են որոշ քաղաքներում, սակայն մեծամասնություն չեն:

Մի օր ներկա էի Աբու Ամր ալ-Խուայիի հավաքույթին (մաջլիս) և նա լսում էր [մահմեդական] ավանդություններ (հադիս): Ասաց՝ հարցեր տվեք: Ինձ հետ մի ընկեր կար և մենք հարց տվեցինք «Հրապարակային պարգև» [գլխից]. սկզբում այն քննարկեցինք, ապա մենք տկարացանք [վեճի մեջ] և ահա մի երիտասարդ, որ այնտեղ էր, սկսեց հիանալի դատողություններ անել և երբ խոսքը վերջացրեց ես ասացի նրան՝ Աստված իմ, ինչ արտակարգ դատողություններ ես անում, և ավելացրի, որ հաճախ գալու եմ նրա մոտ ուսանելու: Ասաց՝ ես ձեր բարեկամներին հավասար չեմ: Ես ասացի՝ այդ ինչպե՞ս, չէ՞ որ իմ բարեկամները ավելին չեն ասում ինչ որ դուք եք ասել, բայց այս հարցը դժվարին է: Ասաց՝ այն ինչ ասացի, լսել եմ Խորասանի վերատեսուչ (նազդար) Հաքիմ Աբու Նասր իբն Սալհից, որի հետ հաճախ եմ զրուցել այսպիսի հարցերի չուրջ:

Իսկ ինչ վերաբերում է աստվածաբանությանը, ապա այդ մասին չեն խոսում և չիմներ[7] չեն:

Դվինում կար մի մեննատան (խանակահ), ուր սուֆիզմի[8] մասին հարուստ տեղեկություններ ունեին, սակայն աղքատ կյանք էին վարում: Մի օր ներկա եղա Աբու [...] ալ-Արդաբիլիի հավաքույթին և նրա մոտ մեծ բազմություն էր կուտակվել, կանգնած և նստած ու տարբեր նյութերի չուրջ հարցեր էին տալիս: Ասացի՝ ի՞նչ կասես, Այլահը քեզ ողորմի, այն մարդու մասին, որն ուներ սիրտ չատ մտերիմ, սակայն

կորցրեց այն, ուր կարող է այն փնտրել:

Ասաց՝ Թող նորից վերադառնա նույն միջոցին (եղանակին), որի օգնությամբ նախկինում այն ձեռք էր բերել և նրանով Թող զորանա:

Ասացի՝ նա արդեն կորցրել է այդ միջոցից օգտվելու կարողությունը:

Նա պատասխանեց՝ Թող նա այդ միջոցի տիրոջը խնդրի, որ այն նորից իրեն տրամադրի:

Ասացի՝ նա արդեն չի արժանանում այդ միջոցի տիրոջ նվազագույն ուշադրությանը, որպեսզի նրանից խնդրի:

Ասաց՝ Թող դուռը ծեծի, մինչև որ բացվի և Թող գիշերային խավարի մեջ աղաղակի, մինչև որ նա ողորմի:

Գետերը, որոնք հիշված են այս երկրամասում, երեքն են՝ Արաքս գետը, Մալիք գետը[9] և Կուրը: Վերջինս նրանցից ամենաթեթևն է. բխում է լեռան կողմից Գանձակի ու Շամխորի սահմաններում մինչև Տիղիսի[*]-մոտերքը, ապա ընկնում է անհավատների երկիրը: Ապա քաղցրությամբ ու թեթևությամբ նրան հաջորդում է Արաքս գետը, որը ձգվում է Առանի սահմանների երկայնքով, բխելով Հայաստանից ու վերջապես հասնում է Վարդանակերտ, ապա ուղղվում Մուղանի ետևի կողմը և թափվում [Կասպից] ծովը: Իսկ Մալիք (Թագավոր) գետը բխում է Հոռոմների երկրից, որի ետևում կա Առան նահանգը և թափվում է ծովը:

Այս երկրամասի հետ կապված է միայն Խազարաց (Կասպից) ծովը: Կան երկու լճեր, մեկն Ուրմիայի մոտ, երկարությունը մոտավորապես չորս օր է անասունի քայլվածքով, սակայն կարելի է [լիճն] անցնել առագաստանավով մեկ օր ու գիշերում: Հայաստանում կա մի ուրիշը, որ կոչվում է Արճեշի (Վանա) լիճ:

Ապրանքներ, որոնք այստեղ արտադրվում են: Պարտավից արտահանվում է մեծ քանակությամբ մետաքս: Դարբանդից վուշե (քթան) զգեստներ, ստրուկներ, քրքում (զաաֆարան) և ընտիր ջորիներ: Դվինից արտահանում են բրդե զգեստներ, գորգեր, երեսի բարձեր, թամբի կարպետներ (անմաթ), գոտիներ: Պարտավից՝ վարագույրներ: Պարտավում կիրակի օրը լինում է մի չուկա, որը կոչվում է քուրքիյ (կիրակի), ուր ամբողջ նահանգի ու այլ շրջանների ժողովուրդն է հավաքվում, այնքան, որ [այս չուկայի անունով] մարդիկ ասում են՝ ալ-սաբտ (չաբաթ), քուրքիյ*, ալ-իհնայն (երկուշաբթի): Այստեղ վաճառվում է մետաքս և գործվածքեղեն:

Նրանց գոտիների, թավշապատ գործվածքների, որդան կարմիր ներկի (կիրմիզ), թամբի կարպետների, ներկերի, զուկալ (ռուկալ) կոչված պղտի, կասբույա ձկան, տառեխ (թիռիխ) կոչված ձկան նմանը

* Հեղինակը չիմանալով հայերեն չի կռահում, որ դա կիրակի օր է նշանակում հայերենով: (Ա. Տ.-Ղ.):

չկա: Ունեն թուզ և չագանակ, որոնք շատ ընտիր են:

Այս երկրի հրաշալիքները: Դրանցից է Դարբանդը, որը մի բերդ է Տյուրոսի (Սուր) և Ակրայի (Աքքա) բերդերի նման, որոնց հիշել ենք: Սա չղթայով փակված է, կառուցված ժայռից ու նրա չաղախը կապարն է: Տիղիսում կան բաղնիքներ, որոնք տաքացվում են առանց վառելիքի Տիբերիայի մասին խոսելիս (նմաՆ): Մասիս լեռն իսլամի երկրի բոլոր լեռներից բարձր է և ոչ ոք կարող է վերև բարձրանալ: Ասվում է, որ Փոքր Մասիսի հետ միասին Թարիճի լեռներից է: Ասվում է, որ Արաքս գետի վրա եղել են հազար քաղաքներ, որոնք այժմ այս երկու լեռների տակ են:

Արդաբիլի մայր մզկիթում կա մի հսկա քար, որին եթե մուրճով հարվածեն, ոչ մի հետք չի մնա: Սա երկնքից է ընկել քաղաքից որոշ հեռավորության վրա, ապա տարվել է մայր մզկիթ: Լսել եմ ներքինի Զարիճից, թե երբ մենք Արդաբիլի մոտ քայլում էինք, տեսանք որ երկնքից մի բան է իջնում, մի հսկա վահանի նման, որն ընկավ երկիր և մենք նկատեցինք, որ քար է: Հավանաբար սա է այն քարը: Այս քարը ներկարարների (սաբբաղ) [գործածած] փայլեցնողի նման է, որը երկու ծայրում բարակում է:

Մուղանից երկու օթևան այն կողմ կա մի հսկա ամրոց, որը կոչվում է ալ-Հասրա, որի վերևում կան տներ, պալատներ, ուր մեծ քանակությամբ կան ոսկի, թռչուններ և վայրի գազանների պատկերներ: Մի քանի թագավորներ հնարքներ են մտածել այդ բանները ձեռք բերելու, սակայն չեն կարողացել բարձրանալ:

Դվինից երեք փարասախ հեռավորության վրա կա մի սպիտակ վանք, կառուցված կոփված (քանդակված) քարով և նման է երկար գլխանոցի (կալանսուա): Նրա ներսում կա Մարիամ [Աստվածածնի] պատկերը: [Շենքը] նստած է ութ սյուների (մույթերի) վրա, որոնց միջև գտնվում են դռներ: Որ դռնից էլ մտնես, կտեսնես Մարիամի պատկերը:

Նրա մոտ կա մի սև ժայռ, որից յուղ է ծորում, որով բուժվում են: Նրա (ժայռի) մոտ լինում է որդան կարմիր (կիրմիզ): Սա մի որդ է, որը երկրի վրա երևում է, և կանայք գնալով նրա մոտ, քաղում են պղնձե [ասեղով], որն իրենց հետ է լինում, ապա դնում են փոխ մեջ:

Արդաբիլի հողագործական շրջաններում (ռուստակ) հերկում են ութ եզներով և չորս առջևից ընթացող [ձիերով], ամեն երկու եզան առջևից ընթանում է մեկը: Ես հարցրեցի, թե արդյոք հողի կարծրության պատճառո՞վ է դա: Նրանք պատասխանեցին՝ չէ, այլ սառույցների պատճառով է:

Արդաբիլի մաննը հազար երկու հարյուր [դիրհեմ] է, Խոյի ռաթլը երեք հարյուր [դիրհեմ] է, իսկ նրանց մաննը՝ վեց հարյուր [դիրհեմ]: Այսպես է նաև Ուրմիայում: Ապա գալիս են մյուս բազմազան ռաթլ-

ները: Մարաղայի կաֆիզը և մուդդը հավասար են տասը մաննի, իսկ քայլաջան հավասար է մեկ վեցերորդ կաֆիզի:

Տարրիզում պետական պաշտոնյաները (ասհար ալ-սուլթան) սովորույթ ունեն կնքելու ոսկե կնիքով:

Ուրմիո ծովում (լճում) կան բնակելի լեռներ: Այնտեղ երևխաների ոտքերը կապում են չղթաներով ու պարաններով, որպեսզի լճի մեջ չգլորվեն:

Ուրմիայում կա մի զառիվեր, Մոսուլի ճանապարհին, ուր մարդիկ իրար ուսին են նստում, կենդանի հնծնելու պես, վերելքը դժվար լինելու պատճառով:

Ճանապարհների երկարությունները: Ուր էլ գնաս, Պարտավից Յունան կամ Բարդիջ (Բարդանջ) կամ Գանձակ և կամ Կաղանկատույս, ամեն մի քաղաքից մյուսը մեկ օթևան է:

Կարող ես գնալ Յունանից Բայլական՝ մեկ օթևան, ապա մինչև Վարդանակերտ՝ մեկ օթևան, ապա Տալխար (Բալխար)՝ մեկ օթևան, հետո Բարզանդ՝ մեկ օթևան, ապա Արդաբիլ՝ երկու օթևան:

Կարելի է գնալ Բարդիջից Շամախի՝ երկու օթևան, ապա Շիրուան (Շարուան)՝ երեք օթևան, ապա Արխազ (Լայիջան)՝ երկու օթևան, հետո Ջիար Սամուր (Սամուրի կամուրջ)՝ երկու օթևան, ապա Դարբանդ (Բաբ ալ-Աբուաբ)՝ երեք օթևան:

Կարելի է գնալ Գանձակից Շամխոր մեկ օթևան, հետո Խունան երեք օթևան, ապա Կալաատ իբն Քանդաման մեկ օթևան, ապա Տփղիս երկու օթևան:

Կարելի է գնալ Կաղանկատույսից Հաթերս՝ երկու օթևան, ապա Ջավդիս՝ երկու օթևան, ապա Գեղարքունի՝ երկու օթևան, հետո կրնկնես Հայոց երկիրը մինչև Դվին: Դվինից Նախճավան՝ չորս օթևան, ապա Խոյ՝ երեք օր, հետո Սալմաստ՝ երկու օթևան, ապա Ուրմիա՝ մեկ օթևան, ապա Խառական՝ երկու օթևան, հետո Մարաղա՝ նույնքան, ապա Արդաբիլ՝ քառասուն փարսախ:

Կարելի է Մարաղայից գնալ Կանդարիյա՝ երկու օթևան, ապա Կարյա՝ երեք օթևան, հետո Կալաատ ալ-Հասան իբն Ալի՝ մեկ օթևան, ապա Շահրազուր՝ երեսուն փարսախ:

Կարելի է Մարաղայից գնալ Նուրին՝ մեկ օթևան, ապա Մարանդ [...]

Կարելի է Խոյից գնալ Կալաատ Յունիս՝ վեց օթևան, ապա Ասբրիյատ գյուղը՝ մեկ օթևան, ապա [...], հետո Տփղիս՝ մեկ օթևան, ապա Տարյա, ապա Շաքե, ապա Լաքզան՝ երկու օթևան, ապա Դարբանդ՝ երեք օթևան:

Կարելի է Մարաղայից գնալ Խառական՝ երկու օթևան, ապա Տարրիզ՝ մեկ օթևան, հետո Մարանդ՝ մեկ օթևան:

Կարելի է Արդաբիլից գնալ Նիր՝ մեկ օթևան, ապա Սարատ՝ մեկ

օթևան, հետո Քուլսարա՝ մեկ օթևան, ապա Մարաղա՝ նույնքան:

Կարելի է Մարաղայից գնալ Խարահ Ռուդ՝ մեկ օթևան, ապա Մուսա Արաղ՝ մեկ օթևան, հետո Բարզա՝ երկու փոստի կայան (բարիդ), ապա Տփղիս՝ մեկ փոստի կայան, հետո Ջաբրավան՝ մեկ օթևան, ապա Նարիդ՝ երկու փոստի կայան, ապա Ուրմիա՝ մեկ օթևան:

Կարելի է Մարանդից գնալ Նախճավան՝ երկու երկար օթևան, ապա Դվին՝ երկու երկար օթևան:

Կարելի է Մարաղայից գնալ Սարուրխաստ՝ մեկ օթևան, ապա Բարզա՝ մեկ օթևան, ապա Բայլական՝ մեկ օթևան, ապա Սիսար՝ մեկ օթևան, հետո Տալլ Վան (Վանի բլուր)՝ մեկ օթևան, ապա Խարաջան՝ մեկ օթևան, ապա Դինավար՝ մեկ օթևան:

Կարելի է Արդաբիլից գնալ Մայանիջ՝ երկու օթևան, ապա Սաբիդ Ռուդի կամուրջը՝ մեկ օթևան, հետո կամուրջից Սարատ՝ մեկ օթևան, ապա Նուա՝ մեկ օթևան, ապա Զինջան՝ մեկ օթևան:

Կարելի է Մայանիջից գնալ Խունաջ՝ մեկ օթևան, ապա Քուլսարա՝ մեկ օթևան, հետո Մարաղա՝ մեկ օթևան և Մարաղայից Խառական կամ Ուրմիա՝ երկու օթևան ամեն մեկի համար, ապա Սալմաստ՝ նույնքան, հետո Խոյ՝ մեկ օթևան, ապա Բևրկրի՝ հինգ օթևան, ապա Արճեշ՝ երկու օթևան, ապա Խլաթ կամ Բաղեշ՝ երեքական օթևան, Բաղեշից Ամիդ, կամ Նփրկերտ՝ չորսական օթևան:

Մարաղայից Դինավար վաթսուն փարսախ է, Արդաբիլից Տարրիզ [...], ապա մինչև Բառկավա [...], ապա մինչև Մանազկերտ երեք օր է, ապա Արգն՝ վեց օր, ապա մինչև Ամիդ՝ չորս օր:

ՄՈՒԿԱԴԴԱՍԻ

ԼԱՎԱԳՈՒՅՆ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ ԵՐԿՐԱՄԱՍԵՐԻ ՃԱՆԱՊՀԱՆ ՀԱՄԱՐ (ԱՀՍԱՆ ԱԼ-ՏԱԿԱՍԻՄ ՖԻ ՄԱԱՐԻՖԱՏ ԱԼ-ԱԿԱԼԻՄ)

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

[1] *... ուր որդերը կարմիր (կիրմիզ) ներկ են տալիս – Նկատի ունի որդան կարմիր ներկը:*

[2] *.... որոնք Մեծ Մասիս և Փոքր Մասիս լեռների տակ են մնացել – Տե՛ս Իրն Հաուկալ, ծնթգր. 67:*

[3] *Մանազկերտ – Տե՛ս Իսթախրի, ծնթգր. 14:*

[4] *Այստեղ մի փոքր տաբօրինակ է թվում այն քաղաքների ցանկը, որոնք Իսթախրին համարում է Առանի (Աղվանք) մեջ: Բանն այն է, որ այստեղ բացի Բուն Աղվանքի, մերձկասպյան շրջանների, ինչպես նաև Արցախ-Ուտիքի քաղաքներից, կան նաև այնպիսիք, որոնք Աղվանք հասկացության մեջ երբեք չեն մտել, ինչպես օրինակ Տփղիսը, Մանազկերտը, մինչև անգամ Հեռավոր Արխազիան: (Վ. Տ.-Ղ.):*

[5] *Հանրայիներ են – Մահմեդական կրոնա-իրավագիտական չորս դպրոցներից (մազհար) մեկը: Ահմադ իբն Հանբալ (մահ. 855-ին) կրոնագիտության, իրավունքի և բարոյագիտության դպրոցի հետևորդները: Համարվում է բավականաչափ դոգմատիկ և անդիմում ուղղություն: Թչնամաբար էին տրամադրված այլ ուղղությունների, օրինակ սուֆիզմի նկատմամբ: (Hanabila, H. Laoust, EOI, CD-ROM, (III: 158a)):*

[6] *Դվինում գերակշռում է Աբու Հանիֆայի մազհարը – Տե՛ս Աբու Յուսուֆ, ծնթգր. 14:*

[7] *Շիիներ – Տե՛ս Յակուբի(պ.), ծնթգր. 31:*

[8] *Սուֆիզմ – Սուֆիզմ, կամ Թասավվուֆ հասկացությունը Իսլամի ներսում գոյություն ունեցած միստիցիզմի անվանումն է: (Tasawwuf, J. O. Hunwick, EOI, CD-ROM, (X: 313a)):*

[9] *Մալիք գետը – Կամ Նահր ալ-Մալիք (Սամուր) - Գետ Կովկասյան լեռներից հյուսիս, որը թափվում է Կասպից ծովը:*

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ադոնց, Պատմ. ուսումնասիրություններ - Ն. Ադոնց, Պատմական ուսումնասիրություններ, Փարիզ, 1946:

Ասողիկ – Ստեփաննոսի Տարօնեցւոյ Ասողկան Պատմութիւն Տիեզերական, Ս. Պետերբուրգ, 1885:

Երեմյան, Աշխարհացույց – Ս. Տ. Երեմյան, Հայաստանը ըստ աշխարհացույցի, Երևան, 1963:

Թեոփանես Խոստովանող - Թեոփանես Խոստովանող, Բյուզանդական աղբյուրներ, Դ, թարգմ. Հ. Բարթիկյանի, Երևան, 1983:

Թովմա - Թովմայի վարդապետի Արծրունւոյ Պատմութիւն Տանն Արծրունեաց, Ս. Պետերբուրգ, 1887:

Իբն ալ-Ասիր - Իբն ալ-Ասիր, Արաբական աղբյուրներ, Բ, թարգմ. Ա. Տեր-Ղևոնդյանի, Երևան, 1981:

Կոստանդին Ծիրանածին - Կոստանդին Ծիրանածին, Բյուզանդական աղբյուրներ, Բ, թարգմ. Հ. Բարթիկյանի, Երևան, 1970:

ՀՀՇՏԲ - Թ. Հակոբյան, Ստ. Մելիք-Բախշյան, Հ. Բարսեղյան - Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հինգ հատորով, հ. 1, Երևան 1986, հ. 2, 1988, հ. 3, 1991, հ. 4, 1998, հ. 5, 2001:

Հայկ. սովետ. հանրագիտարան – Հայկական սովետական հանրագիտարան, 1-12 և «Սովետական Հայաստան» հատորներ, Երևան, 1974-1987:

Ղևոնդ - Պատմութիւն Ղևոնդեայ մեծի վարդապետի Հայոց, Ս. Պետերբուրգ, 1887:

Մովսես Կաղանկատվացի – Մովսեսի Կաղանկատուացւոյ Պատմութիւն Աղուանից աշխարհի, Մոսկվա, 1860:

Նալբանդյան, Արաբական աղբյուրներ - Հ. Նալբանդյան, Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին, Երևան, 1965:

Տեր-Ղևոնդյան, Արաբ. սահմ. ամր. գոտին - Արամ Տեր-Ղևոնդյան, Արաբական սահմանային ամրությունների գոտին (Սուղուր), Պատմաբանասիրական հանդես, 1981, 2, էջ 134-149: Տե՛ս նաև Արամ Տեր-Ղևոնդյան, Հոդվածների ժողովածու, Երևան, 2003, էջ 471-486:

Տեր-Ղևոնդյան, Արմ. ոստիկանների ժամանակագրությունը - Արամ Տեր-Ղևոնդյան - Արմինիայի ոստիկանների ժամանակագրությունը, Պատմաբանասիրական հանդես, 1977, 1, էջ 117-128: Տե՛ս նաև Արամ Տեր-Ղևոնդյան, Հոդվածների ժողովածու, Երևան, 2003, էջ 385-396:

Ուլուբաբյան, Խաչենի իշխանությունը - Բ. Ուլուբաբյան, Խաչենի իշխանությունը X-XVI դդ., Երևան, 1975:

Артамонов, История хазар — М. И. Артамонов, История хазар, Ленинград, 1962.

Большаков, Ист. халифата - О. Г. Большаков История халифата, Москва, т. 1, 1989, т. 2, 1993 (2002), т. 3, 1998.

Ислам, энц. словарь - Ислам, энциклопедический словарь, Москва, 1991.
История Ирана — Н. В. Пигулевская, А. Ю. Якубовский, И. П. Петрушевский, Л. В. Строева, А. М. Беленицкий, История Ирана с древнейших времен до XVIII века, Ленинград, 1958.
Крачковский, т. IV — И. Ю. Крачковский, Избранные сочинения, т. IV, Москва-Ленинград, 1957.
Новосельцев, Хазарское государство — А. П. Новосельцев, Хазарское государство и его роль в истории Восточной Европы и Кавказа, Москва, 1990.
Тер-Гевондян, Армения — А. Н. Тер-Гевондян, Армения и Арабский Халифат, Ереван, 1977.
Хинц, Меры и веса — В. Хинц, Мусульманские меры и веса, с переводом в метрическую систему, перевод с немецкого Ю. Э. Брегеля, Москва, 1970.
Beladsori – Liber expugnationis regionum auctore al-Beladsori, ed. M. J. de Goeje, Lugduni Batavorum, 1866.
Denys de Tell Mahre – Chronique de Denys de Tell Mahre, tr. J. B. Chabot, Paris, 1895.
EOI, CD-ROM – Encyclopaedia of Islam, CD-ROM edition, Leiden, Brill.
Hitti, History of the Arabs - Ph. Hitti, History of the Arabs, from the earliest times to the present, sixth edition, London, 1958.
Ibn Taghribirdi - Ibn Taghribirdi, an-Nudjum az-Zahira fi muluk Misr w al-Qahira, 1-12, Qahira, 1929-1956.
Minorsky, Sahl ibn Sunbat - V. Minorsky, Sahl ibn Sunbat of Shakki and Arran, Caucasica, IV, BSOAS, 1953, XV/ 3.
Shorter Enc. of Islam – Shorter Encyclopaedia of Islam, ed. by H. A. R. Gibb and J. H. Kramers, Leiden, 1953.
Tabari – Tarikh at-Tabari, Le Caire, I-X, 1960-1969.
Yaqubi – Yaqubi, Tarikh, Beyrouth, I-II, 1960.

SUMMARY

On the eve of the Arab conquest Armenia was divided and dominated by two empires of the time: The Byzantium and the Sasanian state. The two giants were weakened by a long struggle with each other and were soon defeated by the young and energic Moslem state within hardly a decade (633-642).

In a very short period Syria, Mesopotamia, Egypt and the greater part of Iran were conquered by the Arabs. Armenia took much longer. The first campaigns were undertaken in 40-50s of the 7th century right after the occupation of neighbouring Northern Mesopotamia (Djazira) and Atropatena (Adharbaydjan). But these campaigns were followed by half a century of struggle between the Caliphate and Byzantine empire with varying success, which provided an opportunity for the Armenian princes to manoeuvre between two superpowers. This balance came to an end at the end of the 7th and the beginning of 8th centuries, during the powerful caliph Abd al-Malik of the Umayyad dynasty. Together with former Persian Armenia and the great part of the Byzantine Armenia, the lands of Iberia (Djurzan), Albania (Arran), Sharwan and the mountainous regions of Caucasus up to the pass of Darband were definitely subjugated. These lands formed a province within the Arab Caliphate called "Arminiya". In the beginning the center of the province was Dwin (arab. Dabil), and from the 2nd part of the 8th c. there were two centers - Dwin and Partav (Bardaa).

The province of "Arminiya" together with Adharbaydjan, Djazira and the so called "Thughur" (Arab-Byzantine frontier region) formed Northern territories of the vast empire, which had an exceptional role in the almost incessant wars of the Caliphate against its two principal rivals - the Byzantine empire and the Khazar state.

At the 2nd half of the 9th century, especially after the death of the Abbasid Caliph Mutawakkil (861), the process of dismemberment of the Caliphate advanced increasingly. Together with Maghrib, Egypt, Iranian and Central Asian provinces, Armenia also, under the Bagratuni (Bagratid) dynasty, proclaimed its independence (previously lost in 428) in 885 and was recognized a sovereign state both by the Caliphate and Byzantium.

In spite of that, in the first decades of the 10th century the Sadjid rulers of Adharbaydjan tried, in the name of the Caliph, to subdue Bagratid Armenia, and succeeded for a short time, but finaly failed in their policy after 928. After that, there were no new attempts to dominate Armenia, as the Caliphate itself was not only decreased, but soon (945) was submitted to the Iranian Buwayhid dynasty.

As early as in the late 8th century, during the reign of Harun al-Rashid (786-

809) some Arab tribes settled in various regions of Armenia, creating emirates on lands which formerly belonged to Armenian rebel princes. These emirates survived after the end of the Caliphate domination in Armenia, and even after the fall of the Bagratid kingdom (1045). In the same time, especially after the Seljuk invasions (11th c.) the ethnic image of the emirates was changed. For that period one can already speak about them as Moslem, rather than Arab, emirates, since during centuries instead of Arabs Kurds, Turks and other Moslem peoples settled there.

After the Seljuk invasions, and mainly, after the battle of Manazkert (Mantzikert) in 1071, which was disastrous for the Byzantine empire, huge masses of Armenians fled from Armenia to the inner provinces of the Empire and to the closest Arab countries. So already at the end of the 11th century there was solid Armenian population and even Armenian principalities, not only in some provinces of Asia Minor, but also in Northern Syria and Djazira (Northern Iraq). Lesser by number, but equally important Armenian communities were settled in Central and Southern Syria and Egypt. Some representatives of the latter were even promoted to the position of Fatimid vizirs, such as Badr al-Djamali (or al-Gamali), Bahram (Vahram) al-Armani and others.

In the Eastern Mediterranean the fates of two nations crossed once again, when a new Armenian state emerged and survived for three centuries in Cilicia (11-14th cc.). Armenian-Arab contacts are worth mentioning in the 12-13th cc. during the Crusades: the complex relationship of the Armenian kingdom of Cilicia with the state of Nur al-Din, with Salah al-Din Ayyubi, and in the 13-14th cc., the mostly hostile relations of Armeno-Cilicia with the Mameluk sultanate. Finally, from the beginning of 16th c. both Arabs and Armenians were dominated by the Ottoman Turks, and, for about 400 years, the two nations shared the same destiny within the Ottoman empire until the end of the World War I.

These contacts, spanning more than a millennium, from the 7th c. to the 17-18th cc., gave birth to various cultural interchanges. The recreation of a nation-state in 885 only signified political separation of Armenia and Armenians from the Arab world. As for cultural ties between the two nations, they became closer after the end of Arab domination than were during the Caliphate rule. This has its explanation that Arab literature, science and culture had developed and reached their peak in 9-10th cc. as the political and military power of the Caliphate was coming down.

The Armenian-Arab relations can be followed more significantly in fields as medicine, botany, chemistry, veterinary science etc. One can also add literary and religious contacts (mutual translations of historical and religious works, fairy tales, fables etc.), which refer first of all to Armenian-Arab Christian contacts during the Middle Ages. As a result of these translations an important number of

borrowings (mainly medical terms, plants' names etc) from Arabic were included in the lexicon of Middle Armenian (12-16th cc.), of which the majority is no longer used in modern literary Armenian language.

Finally an important field of Armenian – Arab exchanges comprises the works of medieval historians and geographers. On the one hand we come across Armenian scholars of the 7-14th cc: Sebeos, Ghevond, Hovhannes (John) Drasxanakertci, Thovma (Thomas) Artcruni, Grigor (Gregory) Tathevatci and others, whose writings include notable remarks on Prophet Muhammad, Koran, the creation of the Caliphate, the Arab conquests. They have especially abundant references to the history of Armenia under Arab domination, the governers and generals of "Arminiya" province, the revolts of Armenian princes against the Caliphate and the wars of the Caliphate against the Byzantine empire and the Khazars.

On the other hand the works of Arab historians and geographers of the 7-16th centuries contain rich facts about the history of Armenia and Armenians, including the history of a) "Arminiya" province as a part of the Caliphate; b) the Bagratid Armenian kingdom and the smaller Armenian states of the same age; c) the Cilician Armenian kingdom, and d) the Armenian communities and prominent Armenians in the Arab world.

We can confirm with confidence that, together with the Armenian, Syriac, Greek, Latin, Byzantine, Georgian, Persian and Turkish sources, the writings of Arab authors have an indispensable significance for the investigation of political, military, economic and cultural history of medieval Armenia.

The writings of Arab authors were used for composing the Armenian history already at the end of the 18th c. and during the 19th c., when the first investigations of the new age on Armenian history appeared. But a really deep scientific research of medieval Arab Sources started in Armenia in the 20th c., especially in the 2nd half of the century. From 1961 a series of publications appeared in Yerevan by the Academy of Sciences of Armenia called "Foreign sources about Armenia and Armenians". Till 1990 15 volumes of these series appeared. Together with translations from other languages, two of the series volumes were dedicated to Arab sources. The first was a volume translated and edited by prominent orientalist Hakob Nalbandian, which includes passages from the works of Yaqut al-Hamawi, Abu-l-Fida and Ibn Shaddad (13-14th cc.). The next volume on Arab sources was completely dedicated to the prominent historian of the 13th c. Ibn al-Athir. Dr. Aram Ter-Ghevondian translated and published passages from the famous "al-Kamil fi-l-Tarikh" and the "History of the Atabegs of Mosul". This book appeared in 1981.

The notable armenologist and orientalist Aram Ter-Ghevondian (1928-1988) apart from the mentioned volume, made a huge contribution during the last 3

decades of his life (9 monographs and about a hundred articles) to the investigation of the history of Armenia under Arab rule and Armenian-Arab relations in general. Among them are "Arab emirates in Bagratid Armenia" (Yerevan, 1965, in Arm., Lisbon, 1976, in Eng., Aleppo, 2003, in Arab.), "The new Arab edition of Agathangelos" (Yerevan,1968, in Arm.), "Armenia and Arab Caliphate" (Yerevan, 1977, in Rus.), "Armenia in the 6-8th centuries" (Yerevan, 1996, in Arm.), etc.

The last unpublished volume included translations from several Arab sources. Professor Aram Ter-Ghevondian had envisaged a whole series of translations done chronologically beginning from the 9th c. Unfortunately this vast undertaking was interrupted with the passing away of the prominent orientalist. He managed to complete only the first volume with translations of passages from original Arab texts and an important introduction.

Thanks to the **Calouste Gulbenkian Foundation (Lisbon, Portugal)** and the noble initiative of **Director of the Department of Armenian Affairs Dr. Zaven V. Yegavian** the publication of the present volume was made possible. The present volume embodies a continuation of the series "Foreign sources about Armenia and Armenians" as its 16th volume and the third one dedicated to Arab sources.

It includes passages from the works of historians and geographers of the 9-10th cc. Beginning from Abu Yusuf's "Kitab al-Kharaj", Wahb ibn Munabbih's and Ibn Hisham's "Kitab al-Tijan", Wakidi's "Futuh al-Sham", Khalifah ibn Khayyat's "Tarikh", Ibn Kutayba's "Kitab al-Maarif", Abu Hanifa al-Dinawari's "Kitab al-Akhbar al-Tiwal", Baladhuri's "Futuh al-Buldan" and "Tarikh" of Yaqubi.

Geographers are presented by the works of prominent figures of 9th c., such as Khorezmi (Kitab Surat al-Ard), Djahiz (al-Tabassur bi-l-Tijara), Ibn Khordadbeh (Kitab al-Masalik wa l-Mamalik),Yaqubi (Kitab al-Buldan), Ibn al-Faqih (Kitab al-Buldan), Ibn Rusta (Kitab al-Alak al-Nafisa), Farghani (Kitab al-Harakat al-Samawiya wa Ilm al-Nujum), Kudama ibn Jaafar (Kitab al-Kharaj wa Sinaat al-Kitaba) and finally three famous geographers of the 10th century - Istakhri (Kitab Masalik al-Mamalik), Ibn Hauqal (Surat al-Ard) and al-Mukaddasi (Ahsan al-Takasim fi Maarifat al-Akalim). On the whole it presents 19 works of 18 scholars, including valuable reports on the 7-10th cc. history of Armenia, province of "Arminiya"(Armenia, Iberia, Albania, Sharwan, Darband), "Thughur" (Arab-Byzantine frontier region) and the neighbouring countries.

These works include abundant facts on the political and economic history of Armenia, its legal and administrative situation within the system of the Caliphate, information about mountains, rivers, lakes, flora and fauna, as well as notable remarks about cities, crafts and trade of medieval Armenia.

ՑԱՆԿԵՐ

ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐ*

Ա

Աբբան իբն Սադակա - 179
Աբբան իբն Օսման – 310
Աբբաս իբն Աբու Մութթալիբ - 286
Աբբաս իբն Զուֆար իբն Ասիմ ալ-Հիլալի – 230, 376, 381
Աբբաս իբն Մամուն (խալիֆայի որդի) – 215, 385, 389
Աբբաս իբն Մուհամմադ իբն Ալի իբն Ուբայդալլահ իբն Աբբաս – 179, 255, 369, 371
Աբբաս իբն Մուհամմադ իբն Մուսա ալ-Ջաաֆար – 380, 381
Աբբաս իբն Ջաբիր իբն Յազիդ իբն Ջաբիր իբն Աբդալլահ ալ-Բաջալի - 374
Աբբաս իբն ալ-Վալիդ իբն Աբդ ալ-Մալիք – 150-154, 157, 158, 242, 260, 359
Աբդալլահ (Բաբեկի եղբայր) - 217, 218
Աբդալլահ ալ-Մամուն իբն Հարուն ալ-Ռաշիդ - 380, 472
Աբդալլահ Շիբլ ալ-Ահմաս - 295
Աբդալլահ իբն Աբդ ալ-Մալիք – 147, 148, 236, 256, 368
Աբդալլահ իբն Ալի – 174, 178, 263, 363, 365, 366
Աբդալլահ իբն Ամիր իբն Քարիզ - 128, 202,
Աբդալլահ իբն Ամր ալ-Հիմյարի - 146
Աբդալլահ իբն Աասդ իբն Քարազ ալ-Կիսրի – 146
Աբդալլահ իբն Բաղիլ իբն Վարկա ալ-Խուզաին - 345
Աբդալլահ իբն ալ-Բաթթալ – 167, 362
Աբդալլահ իբն Զիյադ իբն Աբու Լայլա ալ-Խասասամի - 471
Աբդալլահ իբն Զուբայր – 306, 308
Աբդալլահ իբն Թահիր իբն ալ-Հուսայն – 216, 237, 252, 256
Աբդալլահ իբն Խազիմ ալ-Տամիմի - 380
Աբդալլահ իբն Կայս – 352
Աբդալլահ իբն Հայսամ - 372
Աբդալլահ իբն Հատիմ իբն ալ-Նուման ալ-Բահիլի – 148, 149, 275, 498
Աբդալլահ իբն ալ-Հաքամի – 149
Աբդալլահ իբն Հուզայֆա ալ-Սահմի - 283
Աբդալլահ իբն Հումայդ - 179
Աբդալլահ իբն Մալիք ալ-Խուզաի- 214, 622
Աբդալլահ իբն Մասաադա - 145, 352
Աբդալլահ իբն Մարուան - 364
Աբդալլահ իբն Մութի – 353
Աբդալլահ իբն Մուհամմադ իբն Ալի իբն Աբդալլահ իբն Աբբաս – 364, 366
Աբդալլահ իբն Մուհրիզ - 466, 468
Աբդալլահ իբն Մուսա - 151
Աբդալլահ իբն Մուսլիմ – 173, 213,
Աբդալլահ իբն Ջաաֆար ալ-Համադանի – 299
Աբդալլահ իբն Ռաբիա ալ-Մախ-զումի - 307
Աբդալլահ իբն Սալիհ իբն Ալի – 181, 184, 187, 289
Աբդալլահ իբն ալ-Վալիդ իբն Հիշամ իբն ալ-Ղազ - 235
Աբդալլահ իբն Օմար իբն Աբդ ալ-Ազիզ - 353, 357, 364
Աբդ ալ-Աալա իբն Մայմուն իբն Միհրան – 173

** Այբբենական դասակարգման մեջ արաբերենի «ալ» որոշիչ հոդը հաշվի չի առնված*

Աբդ ալ-Ազիզ իբն Զուֆար – 183
Աբդ ալ-Ազիզ իբն Մուհամմադ իբն Մարուան – 172
Աբդ ալ-Ազիզ իբն Հայյան ալ-Անթաքի – 238
Աբդ ալ-Ազիզ իբն ալ-Հաջջաջ իբն Աբդ ալ-Մալիք – 363
Աբդ ալ-Ազիզ իբն Հատիմ իբն Նուման ալ-Բահիլի – 148, 149, 156-158, 275
Աբդ ալ-Ազիզ իբն Հարիս իբն ալ-Հաքամ իբն Աբու-լ-Աս – 158
Աբդ ալ-Ազիզ իբն ալ-Վալիդ - 153
Աբդ ալ-Համիդ ալ-Քարիր – 173
Աբդ ալ-Համիդ իբն ալ-Դահհաք – 181
Աբդ ալ-Համիդ իբն Յահիա - 291
Աբդ ալ-Համիդ իբն Զաաֆար - 269
Աբդ ալ-Մալիք – 172
Աբդ ալ-Մալիք (խալ.) – 147, 149, 150, 153, 213, 231 - 233, 236, 252, 259, 264, 276, 284, 300, 306-310, 352, 355
Աբդ ալ-Մալիք իբն Խալիֆա ալ-Հարաչի - 374
Աբդ ալ-Մալիք իբն Հիչամ – Տես Իբն Հիչամ
Աբդ ալ-Մալիք իբն Հումայդ - 179
Աբդ ալ-Մալիք իբն Մարուան իբն Մուհամմադ - 168, 172
Աբդ ալ-Մալիք իբն Մուսլիմ ալ-Ուկայլի – 277, 360
Աբդ ալ-Մալիք իբն Ջահհաֆ ալ-Սուլամի - 381
Աբդ ալ-Մալիք իբն Սալիհ – 181, 183, 184, 187, 241, 255, 373, 376-378
Աբդ ալ-Յազիդ - 156
Աբդ Շամս – 122, 250, 616
Աբդ ալ-Ջաբբար իբն Աբդ ալ-Ռահման ալ-Ազդի – 179, 469
Աբդ ալ-Ռահման ալ-Բահիլի – 494
Աբդ ալ-Ռահման իբն Աբդ ալ-Մալիք իբն Սալիհ – 183, 184,
Աբդ ալ-Ռահման իբն Աուֆ – 97, 107
Աբդ ալ-Ռահման իբն Խալիդ իբն ալ-Վալիդ - 144, 212, 351
Աբդ ալ-Ռահման իբն Մասլամա - 246
Աբդ ալ-Ռահման իբն Մուհամմադ (Աբդ ալ-Ռահման Գ, Խալանիայի) – 597, 599-600
Աբդ ալ-Ռահման իբն Մուհամմադ իբն ալ-Աչաաս ալ-Քինդի – 291
Աբդ ալ-Ռահման իբն Սաբիթ ալ-Ջումահի – 307
Աբդ ալ-Ռահման իբն Սաիդ իբն Կայս ալ-Համադանի – 353-354
Աբդ ալ-Ռահման իբն Սուլայմ ալ-Քալբի – 159
Աբդ ալ-Ռահման իբն Սուլայման ալ-Քալբի - 359
Աբդ ալ-Վահհաբ իբն Իբրահիմ իբն Մուհամմադ իբն Ալի - 176, 177, 258, 259, 467
Աբդ ալ-Վահիդ - 175
Աբդ ալ-Քաբիր իբն ալ-Համիդ իբն Աբդ ալ-Ռահման իբն Յազիդ իբն ալ-Խաթթաբ - 180, 373
Աբդ ալ-Սալամ ալ-Յաչքարի – 182
Աբդ ալ-Սամադ իբն Ալի – 181
Աբրահա - 124
Աբրահամ – 607
Աբու-լ-Աբբաս Ահմադ իբն Աբու Յակուբ իբն Զաաֆար իբն Վահբ իբն Վադիհ ալ-Քաթիբ ալ-Աբբասի ալ-Յակուբի – Տե՛ս Յակուբի
Աբու-լ-Աբբաս Ահմադ իբն Թուլուն – 602
Աբու-լ-Աբբաս Ահմադ իբն Մուհամմադ իբն Քասիր ալ-Ֆարղանի – Տե՛ս Ֆարղանի
Աբու-լ-Աբբաս ալ-Սաֆֆահ (խալիֆա) – 173, 174, 178, 237, 251, 263, 280, 364 - 366, 462, 500, 516
Աբու Աբդ ալ-Ռահման ալ-Կինի – 145
Աբու Այյուբ - 145
Աբու Այյուբ ալ-Մաուրիյան – 179, 305
Աբու Բաքր Ահմադ իբն Մուհամմադ իբն ալ-Ֆակիհ – Տե՛ս Իբն ալ-Ֆակիհ
Աբու Բաքր Սիդդիկ (խալիֆա) – 104, 115, 116, 129, 140, 203, 224, 225, 285, 303, 306, 330, 339, 347
Աբու-լ-Զուայզաա - 149, 150
Աբու Իսհակ Իբրահիմ իբն Մուհամմադ ալ-Ֆարիսի – Տե՛ս Իսթախրի
Աբու Իսհակ ալ-Մուտասիմ Բիլլահ (խալիֆա), տես նաև Մուտասիմ- 189, 190, 215, 216, 263, 382, 384, 385
Աբու Իսհակ ալ-Մաջարդանի - 640
Աբու Խասիբ - 179
Աբու Հանիֆա (իրավագետ)- 95, 99, 100, 107, 301, 302, 310, 655
Աբու Հանիֆա ալ-Դինավարի – 205, 206, 254
Աբու-լ-Հուդայլ Մուհամմադ իբն Հուդայլ ալ-Ալլաֆ – 215
Աբու Հուբայրա, Աբու Հուբայրա - 182, 186
Աբու Մանսուր Ահմադ իբն ալ-Աբբասի - 619
Աբու Մանսուր ալ-Քատիբ - 179
Աբու Միխնաֆ – 225
Աբու Մուսա ալ-Աչաարի – 110, 128, 138, 139, 202, 248, 345
Աբու Մուսլիմ – 178, 216
Աբու Մուսլիմ ալ-Շարի (խարիջի)- 364, 374, 474
Աբու Յուսուֆ – 95, 96, 111, 116, 254, 301, 302
Աբու Յուսուֆ (սենեկապետ) – 150
Աբու Նատիլ Ռիյահ իբն Աբդ ալ-Ղասսանի – 149
Աբու Շայխ իբն Աբդալլահ ալ-Ղանավի – 147
Աբու Զաաֆար ալ-Մանսուր (խալիֆա) – 174-179, 181, 213, 234, 258, 260, 263, 280, 365-368, 379, 422, 423, 462, 463, 465, 469, 500, 516
Աբու Սաիդ ալ-Հասան իբն Բահրամի - 591
Աբու Սաիդ Մուհամմադ իբն Յուսուֆ (կառ.) – 238, 393
Աբու Սուր – 187
Աբու Ուբայդա իբն ալ-Ջառահ - 112-115, 129, 135-138, 141, 142, 163, 203, 224, 226-231, 235, 243, 244, 259, 311, 339-343, 515
Աբու Ումամա ալ-Սուդա իբն Աջլան ալ-Բահիլի – 225
Ադի իբն Այաչ – 150
Ադի իբն Ադի – 156, 157, 276
Ազազրիհ - 285
Ազիզ (ֆաթ. խալ.) – 605
Աթա իբն Յասար (մաուլա) – 158
Ալա իբն Ահմադ- 263, 282
Ալամ – 206
Ալեքսանդր Հոռոմ - Տե՛ս Երկկոտոչավորը
Ալի Հուսայն իբն Նումայր ալ-Սուքունի – 146
Ալի ալ-Մուսայյիր իբն Զուհայր – 181
Ալի իբն Աբու Թալիբ (խալ.) – 101, 116, 275, 286, 296, 297, 311, 330, 342, 377
Ալի իբն ալ-Հուսայն իբն Սիբա ալ-Կայսի (կառ.) – 354, 388
Ալի իբն Յահիա ալ-Արմանի – 242, 388, 396, 399
Ալի իբն Սուլայման իբն Ալի – 181, 251, 261
Ահմադ իբն Հարուն ալ-Շայբանի – 187
Ահմադ իբն Մուհամմադ ալ-Աչաարի – 133
Ահմադ իբն Մուհամմադ ալ-Մուստահին - 396
Ահմադ ալ-Մուտամիդ Ալալլահ (խալ.) - 398
Ահմադ իբն Սաիդ իբն Մուսլիմ ալ-Բահիլի – 190, 391
Ամիր իբն Իսմայիլ - 468
Ամր իբն ալ-Աս իբն Վաիլ ալ-Սահմի – 129, 138-140, 142, 203, 213, 224, 225, 231, 283, 339, 340, 341, 344, 347, 349, 350, 515, 602

Ամր իբն Կայս ալ-Սուքութի – 157, 357, 358
Ամր իբն Մանսուր – 184
Ամր իբն Մուհրիզ ալ-Աչչատի – 149
Ամր իբն ալ-Սադի ալ-Ղանավի – 147
Այյուբ իբն Սուլայման իբն Արդ ալ-Մալիք – 156
Անաստաս (Նաստաս) – 184
Անաստասիոս (Անաստասիուս) - 334, 335
Աչաաս իբն Կայս ալ-Քինդի – 275, 294, 296, 299, 349, 493, 499
Աչոտ, Գագիկի որդի Համազասպի որդի – 282, 394
Աչտար – 212,
Աչրաս իբն Արդալլահ ալ-Սուլամի – 163, 164
Ապոլոնիոս (Բուլունիուս) – 523
Ապոլոնիոս (Բալինաս) Հոռոմը - 501
Աշնադին – 129, 203, 339
Ասիմ իբն Արդալլահ իբն Յազիդ ալ-Հիլալի – 161, 171, 173, 177, 362, 364
Ասիմ իբն Զայդ - 172
Աստներսեհ
Աստպատ իբն Բյուրասպ (Բայուրասպ)- 492
Աստպատ իբն Իրան իբն ալ-Աստւադ իբն Սեմ իբն Նուհ - 492
Արմին, Նոյի որդի, Հաբեթի որդի Թորգոմի որդի, կամ Արմին իբն Լանթա (Հաբեթի որդի Յունանի որդի) - 494, 651
Աբա իբն Կայս իբն Շուրա իբն ալ-Արկամ ալ-Քինդի – 160
Արտաչիր Պապական – 209
Արտավան (Արդաուան) - 337
Աքրամ Դիա ալ-Օմարի – 133
Աֆչին Հայդար իբն Քաուս – 189, 190, 216-218, 281, 282, 383, 387-390, 447, 492, 493

Բ

Բաբեկ – 189, 190, 215-218, 297, 386, 387, 389, 447, 473, 492, 493
Բագարատ Աչոտի որդի (Խլաթի պատրիկ) – 256, 282, 393
Բաթթալ (Արդալլահ իբն ալ-) – 162, 167, 169, 361, 362
Բալաղուրի – 223, 224
Բալջա - 124 .
Բակիյ իբն Մախլադ - 133
Բահրամ Գոռ (Բահրամ Ջուր) - 445
Բահրամ Ջուչնաչ – Տե՛ս Վահրամ Վչնասպ
Բասիր – 186
Բենդույ (Բինդավայհ) – 210, 211
Բիզար – 185, 186
Բիչր իբն Արդ ալ-Մալիք - 311
Բիչր իբն Մայմուն - 251
Բիչր իբն Սաֆուան Մուհամմադ իբն Աբու Բաքրի – 160, 162
Բիչր իբն ալ-Վալիդ - 154
Բիսր (Բիչր) իբն Աբու Արթաատ ալ-Ամիրի – 139, 351, 352
Բիսթամ իբն Լայս ալ-Սասալաբի – 172
Բիսթամ իբն Նարսի (Ներսեհ) - 290
Բիսթամ իբն ալ-Սուլուս ալ-Ռաբիա - 381
Բուխարի – 133
Բուխտունուսսուր – Տե՛ս Նարուզդոնոսոր
Բուղա Ավագ (Բուղա ալ-Քաբիր, Ավագ Բուղա) - 274, 282, 389, 393, 394, 499
Բուղա Կրտսեր (Բուղա ալ-Սաղիր) - 298, 392, 395

Գ

Գուստեհեմ (Բիսթամ) – 210

Դ

Դայսամ իբն Շաղալավայհ – 622, 624, 642
Դարեհ (Դարահ), Դարեհի որդի Դարեհ (Դարեհ Գ) – 336, 481, 562
Դահհաք (երկվիշապ)- 501
Դահհաք իբն Կայս ալ-Ֆիհրի – 173, 212, 280
Դահհաք իբն Կայս ալ-Հարուրի – 364
Դաուդ իբն Արդ ալ-Համիդ - 238, 243, 246
Դաուդ իբն Իսմայիլ – 186
Դաուդ իբն ալ-Նուման - 376
Դաուդաչտ, Աբու-լ-Կասիմ Յուսուֆ իբն ալ-Դաուդադ իբն ալ-Դաուդաչտ - 625
Դերանիկի որդին, Անձևացյաց, Վանի ու Ուտանի տերը - 636
Դինավարի – Տե՛ս Աբու Հանիֆա ալ-Դինավարի:

Ե

Եզդան Վչնասպ (Յազդան Ջուչնաս), մեծ վզուրկ – 208 - 210
Եզիդ իբն Արդ ալ-Մալիք - 309
Եզիդ իբն Աբու Սուֆիան (Դամաս. կառ.) - 129, 203, 224, 225, 243, 311, 339, 341, տե՛ս նաև Յազիդ իբն Աբու Սուֆիան
Եզիդ իբն Հունայն ալ-Թաի ալ-Անթաքի – 236
Եզիդ իբն Մազիադ ալ-Շայբանի – Տե՛ս Յազիդ իբն Մազիադ ալ-Շայբանի
Եզիդ իբն Մուավիա (խալ.) - Տե՛ս Յազիդ իբն Մուավիա
Եզիդ իբն Ուսայդ - Տե՛ս Յազիդ իբն Ուսայդ
Եվկլիդես – 214
Երկկոտոչավորը (Ալեքսանդր Հոռոմ, Ալեքսանդր Մակեդոնացի) - 123, 124, 336, 452, 476, 501, 503, 504, 535, 553, 562, 563

Զ

Զայդ իբն Ամր – 287
Զայդ իբն ալ-Խաթթաբ - 373
Զայդ իբն Մուսա իբն Զաաֆար իբն Մուհամմադ - 381
Զայդ իբն Սաբիտ – 310-312
Զավազանի պատրիկը – 247, 636
Զենոն (կայսր) - 334
Զիհլ իբն Ամր ալ-Ուզրի – 145
Զիյադ իբն ալ-Ջառահ – 148, 351
Զրադաչտը (Զարադուչտ) – 298, 337, 446, 493
Զուբայր իբն ալ-Ավվամ – 139, 140
Զուֆար իբն Ասիմ իբն Արդալլահ իբն Յազիդ ալ-Հիլալի – 177, 183, 369

Թ

Թարիկ (դորավար) – 152
Թարիկ ալ-Ահդար - 172
Թարսիոսը (Եվտիքես)- 334
Թեոդոս (Մավրիկիոս կայսեր որդին) - 211
Թեոդոսիոս (Սիուդուսուս), Թեոդոսիոս Ա - 333
Թեոդոս Փոքր (Թեոդոսիոս Բ) – 334
Թեոփիլոս (Տուֆիլ) կայսր – 383
Թուլայհա իբն Խուայլադ (Խուվայլիդ) ալ-Ասադի – 288, 290
Թուլուն, Աբու-լ-Աբբաս Ահմադ իբն Թուլուն – 602

Ի

Իբն Ալի - 264
Իբն Աուֆ – 158
Իբն Աֆֆան – Տե՛ս Օսման իբն Աֆֆան խալիֆա
Իբն ալ-Բահի - 446
Իբն ալ-Բուայա – 386, 392
Իբն Զուբայդա - 549
Իբն Թաբաթբա - 380
Իբն Խորդադբեհ – 330, 431, 509, 583
Իբն Հուբայրա - 251, 309, 359
Իբն Մալիք իբն Ադհամ ալ-Բահիլի – 239
Իբն Մասուդ - 309
Իբն Մարջանա - 353
Իբն Մութի – 353
Իբն ալ-Մուկաֆֆա - 305
Իբն Մուջահիդ - 397
Իբն Յազիդ - 300
Իբն ալ-Նուֆայլ – 300
Իբն Զաաֆար ալ-Հասանի - 591

Իբն Ռուստա - 509
Իբն Սալիհ – 235
Իբն Սալմ ալ-Բահիլի – 280
Իբն Սերապիոն – 410
Իբն ալ-Ֆակիհ – 419, 479
Իբն Աբու Ալիյա - 140
Իբն Աբու Զիբ - 301, 302, 310
Իբն Աբու-լ-Սաջ – 572, 622, 636
Իբն Աբու Սարհ – 143
Իբն ալ-Զուբայր – 231, 276, 307, 353-355
Իբն Կուտայբա - 201, 202
Իբն Հանբալ – 133
Իբն Հաուկալ - 581
Իբն Հիշամ - 121, 122
Իբն Հումայդ ալ-Թուսի - 178, 189
Իբն Մուքաուիզ - 145
Իբն Սաադ - 223
Իբն Սավադա - 641-642
Իբն ալ-Քալբի – 135-138, 145, 146, 148, 160, 161, 163, 165, 167, 294, 296
Իբրահիմ – Տե՛ս Աբրահամ
Իբրահիմ (Մուհամմադի որդի) – 138
Իբրահիմ իբն Խազիմ – 185
Իբրահիմ իբն ալ-Կասիմ - 376
Իբրահիմ իբն Մալիք իբն ալ-Հարիս ալ-Աշտար – 213, 353-355
Իբրահիմ ալ-Մուայյադ Բիլլահ – 392, 397
Իբրահիմ իբն Մուհամմադ ալ-Ֆազարի - 466
Իբրահիմ իբն Մուսա իբն Ջաաֆար - 381
Իբրահիմ իբն Զիբրիլ – 187
Իբրահիմ իբն Սալիհ իբն Մուջալիդ - 179, 182
Իբրահիմ իբն ալ-Վալիդ - 171, 362-363
Իբրահիմ իբն Օսման իբն Նահիք – 373, 376, 377
Իդրիս իբն Իդրիս - 595
Իլյան (Նոյի որդի Հաբեթի որդի) – 123
Իյադ իբն ալ-Հարիս - 352
Իյադ իբն ալ-Ղանմ ալ-Ֆիհրի – 104, 129, 138, 139, 142, 203, 243-249, 256, 261, 270, 301, 343, 484
Իյադ իբն Ջաաֆար – 376
Իյաս իբն Կաբիսա ալ-Թաի - 286
Իչա - 524, 525
Իսա իբն Ալի – 180, 260, 371
Իսա իբն Մուսա ալ-Խորասանի – 182, 370
Իսա իբն Նաջիհ – 179
Իսա իբն ալ-Շայխ – 397, 398 - 399
Իսա իբն Քասիր ալ-Նակկաշ – 176
Իսհակ իբն Աբու Ֆարուա - 248
Իսհակ իբն Իբրահիմ – 386, 387
Իսհակ իբն Իսմաիլ իբն Շուայբ - 281, 282, 385, 388, 390, 392, 394, 452
Իսհակ իբն Մուսլիմ ալ-Ուկայլի – 129, 172, 173, 277, 280, 362, 364, 365
Իսհակ իբն Սալիհ իբն Մուջալիդ - 179
Իսհակ իբն Սուլայման ալ-Հաշիմի (կառ.) – 376, 377
Իսմաիլ իբն Զուֆար – 213
Իսմաիլ իբն Իբրահիմ – 310
Իսմաիլ իբն Շուաբ -՝377
Իսմաիլ իբն Սուբայհ ալ-Հառանի – 380
Իսմայիլ իբն Ալի իբն Աբդալլահ իբն Աբբաս իբն Աբդ ալ-Մութթալիբ – 471
Իսմատ ալ-Քուրդի – 386
Իսմատ իբն Աբու Իսմատ – 380
Իսմատ իբն Իսամ – 185
Իսքանան – 122
Իրմին (Արմին), որդի Նաուրաջի, որդի Սեմի – 206

Լ

Լևոն կայսր – 334, 362

Խ

Խազիմ իբն Խուզայմա ալ-Տամիմի - 175, 298, 367, 373, 375, 471
Խալիդ իբն Աբդալլահ ալ-Բաջալի – 309

Խալիդ իբն Բարմաք - 471
Խալիդ իբն Յազիդ իբն Մազիադ - 281, 388, 390, 394, 500
Խալիդ իբն Յազիդ իբն Մուավիա - 284, 285
Խալիդ իբն Յազիդ իբն Ուսայդ ալ-Սուլամի - 374
Խալիդ իբն Սաիդ իբն Ասի իբն Ումայյա - 224
Խալիդ իբն ալ-Վալիդ իբն ալ-Մուղիրա ալ-Մախզումի - 115, 116, 129, 135, 136, 138, 139, 203, 225-227, 244, 249, 259, 285, 286, 339-341, 345, 351, 515
Խալիֆա իբն Խայյաթ – 133, 134, 178
Խարիջա իբն Հանաֆա - 139
Խոսրով (Քիսրա) Անուշիրուան – 97, 206, 265, 474, 495, 535
Խոսրով Պարուեզ - 209, 210, 211, 212, 248, 285, 286, 289, 305, 341, 342, 436, 553
Խորեզմի - 409
Խուզայմա իբն Խազիմ ալ-Տամիմի (կառ.) - 175, 188, 281, 298, 373, 375, 376, 471, 500
Խուռազադ - 212, 290

Կ

Կաբիսա իբն Ջուայր ալ-Խուզաի – 150
Կալի – 268, 498
Կահթան – 122
Կամբիզ - 501
Կայս իբն Համզա ալ- Համադանի – 145
Կայս իբն Մաքչուհ - 288
Կայս իբն Սինան ալ-Մինկարի - 285
Կասիմ (Հարունի որդի) - 187, 373, 377
Կասիմ իբն Ռաբիա ալ-Սակաֆի – 275, 499
Կասիմ իբն Ռաշիդ - 243
Կավատ (Կուբադ) – 124, 206, 265, 338, 486, 490, 494, 495, 560
Կիսսա (Իրենե կայսրուհի)- 187
Կյուրեղ(Ալեքսանդրիացի) - 334
Կոստանդին(Կուսթանթին) բռնակալ (Կոստանդին Ե կայսր), Լևոնի որդի - 167, 173, 175, 255, 257, 258, 260, 362, 366
Կոստանդին, Հերակլի որդի, (Կոստաս Բ) - 283, 335
Կոստանդին (Կոստանդին Ա կայսր) – 333, 520
Կուսամ իբն Ավանա ալ-Քալբի – 162
Կուտայբա իբն Մաան իբն Մալիք – 142
Կուտայբա իբն Մուսլիմ – 151, 152, 274, 490

Հ

Հաբեթ – 122, 124, 332, 338, 494
Հաբիբ իբն Մասլամա ալ-Ֆիհրի – 141-144, 228, 231, 246, 247, 254-256, 261, 262, 268 - 273, 275, 344, 345, 351, 494, 498, 499
Հազար Թարխան – 168
Հազկերտ, Պարսից թագավոր (Հազկերտ Գ) – 288-290, 292, 342, 490, 535
Հաթիբ իբն Աբու Բալտա - 140
Հայդար իբն Քաուս ալ-Աֆշին – Տես Աֆշին Հայդար իբն Քաուս
Հայյան ալ-Նաբթի – 155
Հանի իբն Կուբայսա (Կաբիսա) իբն Մասուդ ալ-Շայբանի - 286
Հաջջաջ իբն Աբդալլահ – 165
Հաջջաջ իբն Յուսուֆ – 147, 153, 233, 239, 291, 292, 300, 306-308, 355, 436, 466, 469, 474, 490
Հասան Հուսնի իբն ալ-Վահհաբ - 419
Հասան իբն Ալի ալ-Բադդիսի (կառ.) - 281, 500
Հասան իբն Կահթաբա - 176, 180, 240, 255, 258, 260, 261, 281, 366, 367, 371, 500
Հասան իբն Մուսաաբ - 189
Հասան իբն Սալիհ – 305, 306
Հասան իբն Սահլ - 382
Հասան իբն Օմար իբն ալ-Խաթթաբ

ալ-Տաղլիբի – 251
Հատիմ իբն Զուրայք - 397
Հատիմ իբն Նուման ալ-Բահիլի – 213, 276
Հարիս իբն Աբբաղ իբն Զիյաղ - 212
Հարիս իբն Արդալլահ իբն Ռաբիա ալ-Մախզումի - 307
Հարիս իբն Արդ ալ-Ռահման ալ-Հարաչի – 174
Հարիս իբն Ամր ալ-Թաի – 161, 162, 276, 361
Հարիս իբն Միաքին - 383
Հարուն ալ-Ռաշիդ (խալ.) – 95, 180-184, 187, 188, 214, 230, 234, 239, 242, 250, 370 - 372, 376, 380, 472
Հարուն ալ-Վասիկ Բիլլահ իբն Աբու Իսհակ – Տես Վասիկ խալիֆա
Հեղինե (Հայլանա)- 484
Հերակլ կայսր – 137, 140, 228, 229, 235, 283, 306, 335
Հերմես (Հիրմես)- 481
Հիշամ ալ-Քալբի – 133
Հիշամ իբն Աբդ ալ-Մալիք (խալ.)- 161, 163-167, 170, 237, 238, 251-253, 257, 277, 309, 359, 360, 362, 439
Հիշամ իբն Ամր ալ-Տաղլիբի - 466
Հովհաննես (Յահիա)- 335
Հովնան որդի Թոննիկի (Յունան իբն Տուրնիկ) – 393, 494
Հովսեփ (Հակոբի որդի) - 501
Հուբայրա իբն ալ-Սարաջ ալ-Հադրամի – 148
Հուզայֆա - 141
Հուզայֆա իբն ալ-Յաման ալ-Աբսի – 275, 293-296, 343, 346, 474, 499
Հուլաղու - 623
Հուլուան Ամաղեկացի - 501
Հումայդ իբն Կահթաբա - 178, 369
Հուսայն (Ալիի որդի) – 353, 354, 611
Հուսայն իբն Մուալիմ ալ-Անթաքի – 242
Հուսայն իբն Նումայր ալ-Սուքույնի – 354, 355
Հուսայն ալ-Խաղիմ – 252, 398
Հուստինոս (Յուսթուս) երկրորդ - 335
Հուստինոս երրորդ - 335
Հուրմուզդ Զուրաբիզին – 207, 208

Ղ

Ղամր իբն Յաղիդ իբն Աբդ Աբդ ալ-Մալիք իբն Մարուան – 171, 252, 362, 369
Ղիսաա (Ագուսթա), Իրենե կայսրուհի – Տե՛ս Կիսսա

Մ

Մաայուֆ իբն Յահիա - 177, 178
Մադաինի – 133, 223, 285, 291, 295, 304, 305, 307
Մազիար – 215
Մալալա իբն Հիքմա - 180
Մալիհ ալ-Արմանի (Հայազդի Մլհը)- 555
Մալիք իբն Աբդալլահ ալ-Խասասամի – 262, 351, 352
Մալիք իբն Անաս – 95, 254, 301
Մալիք իբն ալ-Աչտար - 341
Մալիք իբն Թաուկ իբն Աւտաբ ալ-Տաղլիբի - 251
Մալիք իբն Հուբայրա - 145, 351
Մալիք իբն Ուբայդալլահ ալ-Հանաֆի – 149,
Մահդի (Մուհամմադ ալ-Մահդի) խալիֆա - 179-182, 234, 237-240, 242, 243, 247, 250, 260, 261, 264, 367, 368, 370, 371, 373, 469-472, 484, 593, 640
Մամուն (խալ.) – 127, 129, 203, 214-216, 237, 238, 251, 256, 263, 281, 298, 372, 378-385, 409, 431, 472, 500, 531, 617
Մայմունա - 158
Մայմուն ալ-Ջուրջումանի – 148, 232
Մայմուն իբն Համզա - 251
Մանի իբն Համմադ ալ-զինդիկ - 337
Մանսուր (Ֆաթ. խալ.) - 594
Մանուել (Ներքինի) – 142, 283, 284
Մանուել պատրիկ - 382
Մանուչիհր (Մանուջիհր) - 336
Մասլամա իբն Արդ ալ-Մալիք (կառ.) – 148-156, 161-163, 165, 166, 169, 170, 232, 238, 255, 277, 278, 357, 359, 361, 488
Մասլամա իբն Հիչամ – 167, 168, 362
Մասլամա իբն Յահիա - 176, 239
Մասուդ իբն Աբու Մասուդ - 352
Մասուդ իբն Կիլիջ Արսլան ալ-Սալջուկի (Ռումի տեր) – 615
Մարզուբան - 216
Մարզուբան իբն Մուհամմադ - 622, 624, 636, 641, 642
Մարիամ (կայսեր դուստրը) – 211
Մարիամ (Մուհամմադի որդի Իբրահիմի մայրը)- 138
Մարիամ (Ատվածածին) – 333, 657
Մարտիք իբն Խաքան – 162
Մարուան իբն ալ-Հաքամ – 231, 259, 271, 310, 348
Մարուան իբն Մուհամմադ (խալիֆա) - 160, 166-174, 237, 239, 260-262, 271, 278, 280, 291, 297, 298, 360, 362, 363, 377, 472, 492, 498, 499
Մարուան իբն Մուսա իբն Նուսայր – 151
Մարուան իբն ալ-Վալիդ - 152
Մաուրիան ալ-Ռումի – 269, 338
Միլակ (Միլաք) իբն Սուֆար (Սաֆֆար) ալ-Բահրանի – 158, 160, 276
Միկլաս (սակլար, սլավոն) – 173
Միհրան (մաուլա) – 213
Մինհալ իբն Ումրան իբն Կինան ալ-Քիլաբի – 182
Միքայել (Միխայիլ) պատրիկ – 179, 180
Միքայել – 260, 261, 383
Մովսես (Մուսա), Իմրանի որդի - 495, 501
Մուամմար իբն Իսա ալ-Աբդի – 186
Մուավիա Ա (խալ.) – 144, 145, 212, 225, 231-233, 235, 236, 243, 245, 249, 254, 256, 259, 261, 268, 269, 275, 283, 306, 311, 312, 330, 345-351, 498, 499, 516
Մուավիա իբն Հիչամ – 161-163, 165, 167-170, 361, 362
Մուաֆիր իբն Յաաֆուր – 122
Մութահհար – 216
Մուլարրադ իբն Հարմալա - 175
Մուխալլադ իբն Մուկատիլ – 174
Մուխալլադ իբն Յաղիդ իբն Օմար իբն Հուբայրա - 184
Մուխարիկ իբն ալ-Ակկար – 178
Մուխտար (մաուլա) – 146
Մուխտար իբն Աբու Ուբայդ ալ-Սակաֆի – 353, 354
Մուկադդասի - 649
Մուկատիլ իբն Հաքիմ ալ-Անաքի – 174, 178
Մուկաուկիս, Մուկաուկաս (պատրիարք) – 140, 142, 283
Մուհամմադ (մարգարե) – 96, 104, 116, 121, 127, 133, 223, 272, 303, 312, 330, 335
Մուհամմադ (Ամրի որդի) - 347
Մուհամմադ ալ-Ամին կամ Մուհամմադ իբն Հարուն (խալ.) - 214, 372, 377-380, 472
Մուհամմադ ալ-Մուստանսիր – 392, 395
Մուհամմադ իբն Աբդալլահ ալ-Մանսուր - 369
Մուհամմադ իբն Աբդալլահ իբն Աբդ ալ-Ռահման իբն Աբու Ամրա ալ-Անսարի – 255
Մուհամմադ իբն Աբդալլահ իբն Թահիր - 397
Մուհամմադ իբն Աբդ ալ-Ռահման - 352
Մուհամմադ իբն Աբու Բաքր – 160
Մուհամմադ իբն Ալի – 392, 399
Մուհամմադ իբն Ալի Աբու Թալիբ - 353
Մուհամմադ իբն Ահմադ ալ-Ագդի – 636, 641

Մուհամմադ իբն Աչաաս - 255
Մուհամմադ իբն Ատտաբ - 381
Մուհամմադ իբն ալ-Բախս – 298, 493
Մուհամմադ իբն ալ-Բուայս – 386, 392
Մուհամմադ իբն Զահրա - 381
Մուհամմադ իբն Զուհայր իբն ալ-Մուսայիբ ալ-Դաբբի – 376, 380
Մուհամմադ իբն Իբրահիմ – 188, 259, 261 - 263, 369, 371, 376, 380
Մուհամմադ իբն Իդրիս իբն Աբդալլահ իբն Հասան իբն Հասան - 564
Մուհամմադ իբն Խալիդ Բուխարախուդահ (կառ.) - 216, 388, 390
Մուհամմադ իբն Խալիդ իբն Բարմակ – 188
Մուհամմադ իբն Խալիդ իբն Յազիդ իբն Մազիադ ալ-Շայբանի (կառ.) - 394
Մուհամմադ իբն ալ-Կասիմ – 147, 153, 233, 239
Մուհամմադ իբն Համդա իբն Մալիք – 380
Մուհամմադ իբն Համմադ - 389
Մուհամմադ իբն ալ-Հասան – 180, 301-302, 381
Մուհամմադ իբն Հիշամ – 169
Մուհամմադ իբն Հումայդ ալ-Համադանի - 381
Մուհամմադ իբն Մալիք – 352, 355
Մուհամմադ իբն ալ-Մահդի - 462
Մուհամմադ իբն Մարուան - 146-151, 153, 158, 169, 259, 271, 276, 300, 355, 356, 362, 483, 498
Մուհամմադ իբն ալ-Մուխայիա ալ-Խիլաթի (Խլաթեցի) – 265
Մուհամմադ իբն Մուհամմադ իբն Զայդ - 380
Մուհամմադ իբն Մուսա ալ-Խորեզմի – Տե՛ս Խորեզմի
Մուհամմադ իբն Յազիդ իբն Մազիադ - 281, 500
Մուհամմադ իբն Յուսուֆ ալ-Մաբրուազի – 238
Մուհամմադ իբն ալ-Նադր իբն Յաբիմ ալ-Հիմյարի – 174
Մուհամմադ իբն Ջամիլ – 188
Մուհամմադ իբն Ռաշիդ - 230, 240, 255-256
Մուհամմադ իբն ալ-Ռավվադ ալ-Ազդի – 381, 446
Մուհամմադ իբն Սուլ - 365
Մուհամմադ իբն Սուլայման ալ-Ազդի ալ-Սամարկանդի – 388, 621
Մուհամմադ իբն ալ-Վասիկ (խալ.) – 398
Մուհամմադ իբն Ուբայդալլահ ալ-Վարսանի – 388, 389
Մուհամմադ իբն ալ-Ֆարաջ - 384
Մուհրիզ իբն Աբու Մուհրիզ - 146
Մուղիրա իբն Ախրա ալ-Արդի – 149
Մուղիրա իբն Շուբա - 141, 275, 287, 292, 294, 295, 304, 345, 346, 373, 492, 499
Մունաբբիհ – 121
Մուշեղ (Մուսիլ ալ-Արմանի), Մուշեղ Մամիկոնյան, Ջ դար- 211
Մուշեղ (Մուշայիլ ալ-Արմանի), Մուշեղ Մամիկոնյան, Ը դար – 281, 500
Մուսա ալ-Ակթա - 217
Մուսա ալ-Հադի (խալիֆա) – 182, 261, 370, 371, 373, 378, 380, 472
Մուսաաբ իբն Սաադ իբն Մալիք – 158
Մուսաբ ալ-Զուբայր – 223, 231, 306, 308
Մուսա իբն Զուբարա - 282, 394
Մուսա իբն Խսա - 374
Մուսա իբն ալ-Մուբարաք ալ-Յաչքարի - 381
Մուսա իբն Մուսաաբ - 179, 181
Մուսա իբն Նուսայր – 149, 151, 152
Մուսա իբն Սուլայմ – 179
Մուսա իբն Քաաբ ալ-Մարա - 174, 257, 366
Մուսալլա- 252
Մուսայիբ իբն Զուհայր – 181, 259. 262, 466, 468

Մուսաննա իբն Հադիսա (Հարիսա) ալ-Շայբանի – 285, 287, 339, 341
Մուսավիր իբն Ուկրա - 172
Մուսաֆիր իբն Բուջայր – 173
Մուսաֆիր իբն ալ-Կասսաբ - 173, 280
Մուսաֆիր իբն Քասիր- 365
Մուսլիմ իբն Ռաբիա ալ-Ուկայլի – 213
Մուտադիդ (խալիֆա)- 616
Մուտազդ (խալիֆա)- 396, 397
Մուտամիդ (խալիֆա)- 330, 398, 431
Մուտամիր իբն Սուլայման ալ-Բասրի – 240, 263
Մուտասիմ (խալ.) – 129, 190, 203, 215, 216, 218, 236, 238, 243, 263, 270, 274, 281, 298, 385-391, 441, 472, 499, 500, 555, 558
Մուտավաքքիլ Ալալլահ, խալ. – 223, 226, 233, 234, 242, 255, 281, 282, 298, 391-396, 399, 499, 500, 531
Մուֆլիհ, ծառա (դուլամ)- 622

Ն

Յազդան (սաս. վեղիր) – 208-209
Յազդան Վչնասպ - Տե՛ս Եզդան Վչնասպ
Յազիդ իբն Աբդալլահ - 397
Յազիդ (Եզիդ) իբն Աբդ ալ-Մալիք (խալ.) - 157, 158, 160, 170, 239, 276, 358
Յազիդ իբն Աբու Սուֆիան – 129, 203, 224, 225, 243, 311, 339, 341
Յազիդ իբն Աբու Քաբչա ալ-Սաքսաքի – 149
Յազիդ իբն Անբասա - 376
Յազիդ իբն Ասադ ալ-Բաջալի – 348
Յազիդ իբն Բիլալ ալ-Յամանի - 381
Յազիդ իբն Թայիֆ ալ-Շարի – 184
Յազիդ իբն Հատիմ – 366
Յազիդ իբն Հիան - 388
Յազիդ իբն Հունայն – 148
Յազիդ իբն ալ-Հուռ ալ-Աբսի – 144
Յազիդ իբն Մազիադ ալ-Շայբանի (կառ.) - 184, 185, 188, 214, 281, 373 – 375, 500
Յազիդ իբն Մուավիա (խալ.) - 212, 259, 352, 353, 515-516
Յազիդ իբն ալ-Մուռ – 145
Յազիդ իբն Մուխալլադ ալ-Ֆազարի – 241
Յազիդ իբն Մուհալլաբ - 154, 155, 239
Յազիդ իբն Յասլա իբն Դախմ ալ-Աբսի – 171
Յազիդ իբն Շաջարա - 352
Յազիդ իբն ալ-Վալիդ - 172, 363
Յազիդ իբն Ունս - 354
Յազիդ իբն Ուսայդ ալ-Սուլամի (կառ.) – 148, 153, 177, 178, 274, 276, 278, 280, 366, 367, 369, 500
Յազիդ իբն ալ-Ֆայդի – 179
Յազիդ Վաղարշ (Բալաշ) - 338
Յահիա ալ-Հարաշի – 185, 374
Յահիա իբն Աբու Խհակ - 141
Յահիա իբն Աբու-լ-Հուռ – 172
Յահիա իբն Բաքիր իբն Աբու Ռիբահ իբն Աբու Ումարա - 173
Յահիա իբն ալ-Հաքամ – 356
Յահիա իբն Մուհամմադ իբն Ալի – 365
Յահիա իբն Ռավվադ - 392
Յահիա իբն Սաիդ - 377
Յահիա իբն ալ-Վալիդ - 471
Յասար իբն Սակլաբ - 184
Յուբարա(Բուղբարա)- 216, 217
Յուսուֆ իբն Աբու-լ-Սաջ – 625, 631, 638, 640, 641
Յունան իբն Տուրնիկ - Տե՛ս Հովնան որդի Թոռնիկի
Յուսուֆ իբն Մուհամմադ ալ-Մաբրուազի (կառ.)- 282, 500
Յուսուֆ իբն Ռաշիդ ալ-Սուլամի – 373
Յուսուֆ իբն Օմար - 309

Ն

Նաբիհ իբն Աբդալլահ ալ-Անաղի - 147

Նաբուգոդոնոսոր (Բուխտունուսսուր) - 535
Նեստոր (պատրիարք) - 334
Նիկեփոր (Նիկիփուր) կայսր – 187, 612
Նոյ (որդի Ղամեքի որդի Մաթուսաղայի) – 123, 124, 128, 202, 206, 332, 338, 492, 501, 516, 550, 651
Նուման իբն Ամր իբն Մուկրան ալ-Մուզանի – 292
Նուման իբն Զուրաա - 252
Նուման իբն Մուկրան – 292, 293
Նուման իբն ալ-Մունզիր - 286

Շ

Շադդադ իբն Աադ - 123
Շահրիար (Որմզդի որդի) – 211, 288, 535
Շամմախ իբն Դարար ալ-Սաալաբի - 297
Շամմախ իբն Շուջա - 280
Շամմար իբն ալ-Աթթաֆ ալ-Հիմյարի – 123
Շամմար Յուրիչ իբն Նաչիր ալ-Նաամ թագավոր – 124
Շապուհ (Սաբուր)- 337, 429
Շիհաբ իբն Աբդալլահ (ծովակալ) - 177
Շիհաբ իբն Քաաիր - 466
Շիրուան չահ Մուհամմադ իբն Ահմադ ալ-Ադղի – 636
Շուրահբիլ իբն Զու-լ-Քիլա ալ-Հիմյարի - 354
Շուրահբիլ իբն Հասանա - 129, 136, 203, 224, 340

Ո

Որմիզդ (Հորմուզդ) – 207 - 210, 534

Պ

Պաղոմեոս – 409, 410, 431, 433, 434, 535, 590

Ջ

Ջաաֆար ալ-Քուրդի – 215
Ջաաֆար իբն Աբդալլահ իբն Հաշիմ ալ-Տաղլիբի – 185
Ջաաֆար իբն Ահմադ ալ-Հաղզա (Հաղդա) - 391
Ջաաֆար իբն Դինար (ալ-Խայյաթ) – 216, 217, 396
Ջաաֆար իբն Հանզալա - 175
Ջաաֆար իբն ալ-Մանսուր – 251, 377, 492
Ջաաֆար իբն ալ-Մուտասիմ – Տե՛ս Մուտասիմ խալիֆա
Ջաբալա իբն ալ-Այհամ – 228, 235, 340, 341
Ջաբան – 159, 437
Ջայհանի – 509, 583
Ջաջա - 124
Ջառահ, իբն Աբդալլահ ալ-Հաքամի (կառ.) - 158-161, 163-165, 170, 273, 276, 277, 358, 359, 361
Ջարաչա իբն Նայբան – 186, 187
Ջարիր – 163
Ջարիր իբն Աբդալլահ – 290, 297, 346-347
Ջարիր իբն Յազիդ ալ-Բաջալի - 378
Ջաուհար ալ-Սիկիլլի - 603
Ջիբրիլ իբն Յահիա - 175, 176, 367
Ջիդար իբն Կայս (կառ.)- 172
Ջունադա իբն Արու Ումայա - 144, 352
Ջունայդ իբն Աբդ ալ-Ռահման ալ-Մուռի – 164

Ռ

Ռահիչ – 123
Ռաշիդ - տես Հարուն ալ-Ռաշիդ
Ռավանդ իբն Բիուարասֆ (Բիուրասպ) - 483
Ռաուհ իբն Հատիմ ալ-Մուհալլիբի – 262, 281, 367, 500
Ռում (որդի ալ-Յաֆսարի, որդի Սեմի) – 206
Ռուստամ – 287, 288, 290, 341, 342

Ս

Սաադ իբն Արու Վակկաս – 96, 287, 289, 342
Սաադ իբն Ամր իբն Հարամ ալ-Անսարի - 250
Սաադ իբն ալ-Աս – 128, 129, 143, 202
Սաադ իբն Զայդ իբն Ամր իբն Նուֆայլ ալ-Ադավի – 287, 340
Սաադ իբն ալ-Հաքամ իբն Ուտբա - 296
Սաադ իբն Մալիք – 142
Սաբիտ իբն Խասիմ – 165
Սաբիտ իբն Նուայմ ալ-Ջուզամի – 280, 362
Սաիդ ալ-Խայր - 250
Սաիդ իբն Աբդ ալ-Մալիք – 161, 250, 300, 359, 361
Սաիդ իբն Ամիր իբն Հուզայմ (ալ-Հիզյամի) – 137, 142, 244, 248, 249
Սաիդ իբն Ամր ալ-Հարաշի – 158, 164-166, 170, 277, 278, 359, 360
Սաիդ իբն ալ-Աս – 143, 268, 296, 297
Սաիդ իբն Բուհլուլ – 171
Սաիդ իբն Հայսամ - 375
Սաիդ իբն Հիչամ – 164, 361
Սաիդ իբն Մուհամմադ ալ-Հառանի ալ-Լահբի – 373
Սաիդ իբն Սալիհ - 398
Սաիդ իբն Սալիմ – 281
Սաիդ իբն Սալմ իբն Կուտայբա ալ-Բահիլի – 375, 500
Սաիդ իբն Սարիա Խուզաի – 296
Սաիդ իբն Սարհ - 378
Սակելլարիոս (Սակիլլար) – 137
Սահիմ իբն ալ-Մուջահիր – 232
Սալիհ իբն Աբդ ալ-Ռահման – 291, 292, 305
Սալիհ իբն Ալի – 174 - 176, 233, 237, 239, 240, 258, 260, 369
Սալիհ իբն Բայհասի ալ-Քիլաբի – 187
Սալիհ իբն Իբադա ալ-Համադանի – 299
Սալիհ իբն Սուբայհ ալ-Քինդի – 365
Սալիմ ալ-Բարալլուսի – 237
Սալիմ ալ-Բուրնուսի – 180
Սալման ալ-Խայլ – 268, 269
Սալման իբն Ռաբիա ալ-Բահիլի – 142, 143, 268, 269, 273, 274, 288, 345, 476, 494, 498, 499
Սալման ալ-Ֆարիսի – 474
Սահլ Սմրատի որդի (Սահլ իբն Սինբաթ) – 218, 281, 387, 388
Սահսահ – 186, 379
Սայֆ ալ-Դաուլա - 581, 612, 614, 615, 652
Սարջուն իբն Մանսուր Հոռոմ (ալ-Ռումի) – 145, 149
Սավադա Արու-լ-Սաբահ իբն Սավադա ալ-Քինդի – 157, 159, 642
Սաֆֆահ - Տե՛ս Արու-լ-Աբբաս (խալ.)
Սաֆֆահ իբն Քուրդուս – 213
Սեմ (Սամ) - 206, 338, 492, 651
Սեննեքերիմ, Սինհարիբ (ծանարցի) - 636
Սեննեքերիմ (Խաչենի տեր) - 641, 642
Սմբատ (Սինբադ) - 175
Սմբատ Աչոտի որդի – 575, 577, 630, 638, 642
Սողոմոն Դավթի որդի - 520
Սուլայման իբն Աբդ ալ-Մալիք (խալիֆա) - 154, 156, 276, 357
Սուլայման իբն Աբդալլահ ալ-Աասամ – 182
Սուլայման իբն Արու Ջաաֆար – 188, 376, 469
Սուլայման իբն Արու Սաիդ - 591
Սուլայման իբն Աֆթա ալ-Կուրաշի – 243, 244
Սուլայման իբն Հիչամ – 168 - 170, 362, 363
Սուլայման իբն Մուջալիդ - 179, 466, 468
Սուլայման իբն ալ-Յազիդ իբն ալ-Ասամ ալ-Ամիրի - 376
Սուլայման իբն Ռաշիդ ալ-Սակաֆի – 184
Սուլայման իբն Սաադ - 149, 264

Սուլայման իբն Սարդ ալ-Խուզաի – 353, 354, 357
Սումամա իբն ալ-Վալիդ իբն ալ-Կաակաա իբն Խալիդ ալ-Աբսի – 178, 180, 260, 371
Սուֆիան իբն Աուֆ ալ-Ղամդի (Ղամիդի) – 144, 259, 346, 352
Սուֆիան իբն Ումայա իբն Աբդ Շամս - 311

Վ

Վաղղահ – 155, 161, 361, 467, 468
Վաղիհ (մասուլա) – 329, 367, 466, 468
Վալիդ իբն Աբդ ալ-Մալիք (խալիֆա) – 149, 151, 153, 154, 232, 233, 239, 356
Վալիդ իբն Աբդ ալ-Մալիք – 146, 149, 151, 154, 363, 490
Վալիդ իբն Թարիֆ ալ-Շարի – 184, 185
Վալիդ իբն ալ-Կաակաա ալ-Աբսի - 277
Վալիդ իբն Հիշամ – 157, 359
Վալիդ իբն Յազիդ (խալ.) - 171, 172, 173, 239, 262
Վալիդ իբն ալ-Վալիդ - 171, 185
Վալիդ իբն Ուկբա իբն Աբու Մուայթ – 142, 143, 251, 295, 296
Վակիդի – 127, 128, 224, 226, 233, 236, 240 - 242, 244, 246, 248, 249, 254, 256, 257, 260, 262, 269, 270, 276, 287, 288, 289, 294, 297, 300, 301, 307, 308, 310-312, 340, 345, 356
Վահան(Բահան) – 137, 340
Վահր իբն Մունաբբիհ – 121, 122, 123, 128, 163, 202, 504
Վահրամ Ջուբին – 207-212
Վահրամ Վչնասպ (Բահրամ Ջուչնաչ) – 207
Վասիկ Բիլլահ (խալ.) – 233, 390, 409, 452, 453, 472, 504
Վասսաբ (մասուլա) – 158
Վարդան (մասուլա) – 213, 283, 347, 348, 350
Վարդան Խուդահ (թագավոր) – 151
Վրթանես (Վարտանես, Վարտանա) – 168

Տ

Տուման չահ – 167, 169

ՈՒ

Ուբայդա իբն Արդ ալ-Ռահման ալ-Ջաբուանի – 163, 165
Ուբայդ իբն Աուս ալ-Ղասսանի – 145
Ուբայդալլահ ալ-Հարիսի - 364
Ուբայդալլահ իբն ալ-Ակթա - 256
Ուբայդալլահ իբն Զիյադ - 212, 308, 353, 354, 355
Ուբայդալլահ իբն ալ-Մահդի – 281, 500
Ուբայդալլահ իբն Ռիբահ – 144
Ուկբա իբն Ամիր ալ-Ալի ալ-Ջահնի - 283
Ումայր իբն Հուբաբ ալ-Սուլամի – 213, 255, 277
Ումայր իբն Սաադ - 245, 248-250, 254
Ումայր իբն Սահդ ալ-Անսարի – 142
Ումայր իբն Վահբ ալ-Ջամհի – 139
Ումմա Ջաաֆար Զուբայդա - 251, 297, 492
Ումրան իբն ալ-Մինհալ – 181, 397
Ումրան իբն ալ-Վաղղահ – 466, 468
Ուջայֆ իբն Անբասա – 189, 384
Ուտբա իբն Ֆարկադ ալ-Սուլամի - 139, 141, 294 - 296, 299, 300, 301, 483

Փ

Փիլիպպոս - 535

Ք

Քաաբ իբն Համիդ ալ-Աբսի (ալ-Ուբսի)– 149, 170, 361
Քաուսար իբն ալ-Աուսադ ալ-Ղանավի – 173
Քաուսար իբն Զուֆար իբն ալ-Հարիս ալ-Քիլաբի - 260
Քեյ Խոսրով – 336
Քուչ, Քամի որդի - 501
Քուսան (Գուսան) պատրիկ, ալ-Արմանի – 174, 270

Օ

Օմար իբն Արդալլահ ալ-Ակթա - 396
Օմար իբն Աբդ ալ-Ազիզ (խալ.) - 106, 156, 157, 236, 238, 250, 276, 309, 358, 436, 616
Օմար իբն Այյուբ ալ-Քինանի - 373
Օմար իբն ալ-Խաթթաբ (խալիֆա) – 96-99, 101, 104-107, 110, 114, 116, 129, 135, 137-143, 202, 203, 226, 227, 243, 246, 248, 250, 252, 253, 274, 286, 290, 292, 294, 296, 299, 300, 309-311, 340, 343, 350, 358, 436, 475, 483, 484, 499, 515
Օմար իբն Հարիս – 150
Օմար իբն Հաֆսուն - 497
Օմար իբն Հուբայրա ալ-Ֆիզարի (ալ-Ֆազարի)- 155, 156, 158, 309, 357-359
Օմար իբն Սաադ ալ-Անսար – 235, 354
Օմար իբն Ումրան իբն Ջամիլ ալ-Ֆազարի – 186
Օսման իբն Աբու Ուբայդա - 163
Օսման իբն Աֆքալ - 381
Օսման իբն Աֆֆան (խալիֆա) – 116, 128, 142-144, 148, 202, 249, 254, 268, 269, 273, 275, 295, 311, 350, 473, 498, 499, 612
Օսման(Ուսման) իբն Հայյան ալ-Մուռի – 158, 159, 359
Օսման իբն Հանիֆ – 105, 106, 359
Օսման իբն Հունայֆ – 343
Օսման իբն Մումամա ալ-Աբսի - 381
Օսման իբն Վալիդ իբն Ուկբա իբն Աբու Մուայթ - 276
Օսման իբն Ումարա իբն Խուբայմ (կառ.) – 281, 500

Ֆ

Ֆադիլ իբն Աբու Սահլ - 186
Ֆադլ իբն ալ-Աբբաս – 376, 377
Ֆադլ իբն Մուհամմադ - 376
Ֆադլ իբն Ցահիա - 187, 281, 371, 373, 374, 500, 622
Ֆադլ իբն ալ-Ռաբիա - 378, 380, 471
Ֆադլ իբն Սալիհ – 181, 369, 371, 376
Ֆադլ իբն Սահլ – 381
Ֆադլ իբն Սուլայման - 468
Ֆաթիմա (Աբու Մուալիմի դուստր) – 216
Ֆաթիմա (Մուհամմադի դուստր) – 216
Ֆահիլ իբն Մուհամմադ ալ-Քինդի - 160
Ֆարադղակ – 163
Ֆարաջ ալ-Խախյ – 183
Ֆարաջ իբն Սուլայման ալ-Խադիմի - 241
Ֆարիս (որդի Ասուարի, որդի Սեմի)- 206
Ֆուդալա իբն Ուբայդ ալ-Անսարի – 145, 351, 352

ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐ

Ա

Աբիղոս – 442, 488
Արյան Աղեն – 482
Աղանա - 176, 188, 239-240, 335, 383, 389, 441, 443, 512, 513, 515, 537, 548, 554, 558, 607, 616, 618-620
Աղարմա - 546
Աղեն – 536, 592
Աղնուն – 556, 607
Աղրիական (ծով) - 510
Աղիլա - 584
Աղկալա - 146
Աղրամա - 251
Ալանաց երկիր, Ալանք (ալ-Լան)– 160, 168, 335, 338, 359, 361, 449, 452, 476, 500, 502, 512, 526, 527, 538, 572, 589, 609, 622

Ալանաց դռներ, Դրունք Ալանաց (Բաբ ալ-Լան) – 160, 163, 168, 265, 266, 273, 278, 280, 338, 359, 448, 494, 495, 500, 526
Ալեքսանդրեկ – 232, 235, 440, 548, 607, 615, 620
Ալեքսանդրիա - 140, 142, 283, 284, 333 - 335, 344, 424, 513, 537, 552, 563, 603,-607
Ալխեսիրաս (ալ-Ջազիրա)- 596
Ալմերիա - 596
Ալուսա - 250, 416, 438
Ախրամ բերդ - 149
Ակրա (Աքքա) – 226, 513, 537, 556, 607, 619, 657
Ակրահոուդ (Մարաղա) - 298
Ահար – 623, 626
Ահրար Հովիտ - 271
Ահուազ - 128, 202, 206-208, 252, 337, 345, 350, 427, 451, 462, 475, 513, 514, 537, 550, 551
Ամանոս (Լուքքամ) լեռներ – 230-232, 238, 416, 453, 481, 608, 609, 614, 615, 617, 618
Ամիդ - 139, 182, 185, 186, 206, 207, 212, 213, 247, 249, 255 345, 397, 416, 427, 439, 440, 484, 513, 515, 537, 546, 547, 552, 578, 609, 641, 659
Ամիդ Բալադ - 416
Աղրակ – 282, 394, 448
Աղմաթ - 587
Աղուան (ալ-Ռան, Առան) գետը – 159, 265, 266, 358, 454, 501, 512
Ամասիա - 335, 513, 538
Ամկ – 146, 259 - 261, 361, 440
Ամկ Տիզին – 233
Ամմույա - 537
Ամորիոն (Ամմուրիյա) – 129, 151, 180, 190, 203, 215, 235, 238, 263, 335, 385, 389, 442-444, 488, 513, 537, 555, 558
Ամուլ - 425
Այլատ – 224, 593
Այն Զարբա - Տե՛ս Անազարբա
Այն ալ-Համիդա - 247
Այն Շամս (Հելիոպոլիս) – 142
Այն ալ-Ռումիյա - 251, 440, 547
Այն ալ-Վարդա - 247, 248
Այն ալ-Ջար (Այնճար)- 363
Անազարբա, Անարզաբա (Այն Զարբա) - 188, 241, 441, 515, 554, 607
Անաջ – 160
Անատ – 115, 212, 250, 253
Անատոլիկոն (Նաթիուս)- 443, 554, 558
Անբար – 174, 250, 300, 311, 365, 416, 438, 462, 466, 513, 516, 537
Անբարի դուռ – 379, 472
Անդալուս (Իսպանիա) – 151, 152, 331, 425, 451, 479 - 481, 485, 488, 510, 513, 549, 564, 581, 585, 587-591, 595 - 599
Անդարաբ - 446, 545, 573, 627
Անդուրան գյուղ – 179
Անթաբուլս – 140, 141
Անթարթուս – 556, 607, 612, 618
Անթարսուս - 548
Անկարա - 190, 382, 443, 444
Անձևացիք (Ջավազան) – 632, 636
Անսինա - 536
Անտիոք(Անթաքիա) – 137, 138, 145, 148, 150, 153, 223, 228-242, 333-336, 351, 356, 359, 439, 440, 450, 453, 481, 485, 488, 492, 513, 515, 537, 548, 554, 608, 613, 618, 619
Անփա - 607
Աչտափիրա - 536
Աչուչ (Աչոցք)- 271
Ապահունիք, Ապահունիս (Բաջունայս) - 265, 271, 413, 448, 495, 515, 551
Ապամեա (Ֆամիա) - 515, 608
Աջդաբիա - 586
Աջնադին – 129, 203, 339
Առան (Աղվանք) - 265, 269, 273, 274, 282, 338, 388, 448, 454, 476, 494, 495, 497, 501, 512, 515, 551, 572, 574, 576, 577, 585, 587, 589, 599, 621, 622, 623, 627, 629, 630, 634, 635, 637, 642, 649, 651, 655, 656
Առան գետ – Տե՛ս Աղուան գետ
Առաջին Արմինիա - 265, 448, 494
Ասբիջար - 513, 586
Ասիա երկիր – 415
Ասիա, Փոքր Ասիա - 143
Ասիա, Միջին Ասիա - 531
Ասկալոն – 345, 513, 517, 537, 556, 607, 619, 620
Ասորիք (Շամ)- 96, 97, 104, 111, 115, 122-124, 127-129, 141, 143, 144, 150, 161, 170-172, 174, 202, 212, 214, 215, 223-226, 228-234, 236, 239, 240, 243, 249, 250, 252-254, 256, 258, 261, 263, 264, 268, 269, 275, 277, 287, 292, 297, 301, 305, 311, 331, 339, 346, 349, 351, 352, 354, 355, 367, 368, 369, 371, 392, 431, 435, 453, 462, 465, 470, 481, 482, 485, 491, 492, 499, 512-516, 537, 547, 548, 554-557, 573, 585, 588, 590, 591, 593, 597, 606-614, 616, 617-621, 629, 634, 640, 652
Ասորիքի ծով - 443, 488, 510-513, 537, 557, 558
Ասորիքի դուռ – 463-466, 468, 469, 516
Ասուան – 536, 548
Ասֆիջան - 537
Ավասիմ – 230, 235, 264, 335, 351, 378, 381, 439, 442, 515, 552, 554, 608, 613, 618, 619
Աստալիա - 517
Ատրպատական (Ադարբայջան) – 122, 123, 141, 142, 149, 152, 156, 157, 161 - 164, 166, 167, 171, 172, 174, 185, 206, 207, 210, 211, 274, 275, 277, 280, 294-300, 337, 344, 349, 350, 352, 358, 359, 361, 366, 367, 374, 375, 381, 386-389, 392, 415, 428, 435, 437, 445-447, 462, 471, 482, 489, 490-494, 499, 501, 512-515, 537, 545, 547, 548, 550, 552, 572, 574-577, 581, 585, 587, 609, 617, 621-623, 625, 629, 630, 631, 633, 635-637, 640, 642, 649, 651, 654,
Արաբա - 225, 383, 482, 490, 584, 587, 590, 608
Արաբական խալիֆայություն – 133
Արաբիա, Արաբաց երկիր - 100, 121, 124, 330, 331, 479, 536, 571, 639
Արածանի - 453
Արակա - 556, 607
Արարադ (Ջուդի) լեռ – 128, 202, 206, 332, 550, 609
Արաքս (ալ-Ռաս) գետ – 159, 162, 218, 265, 274, 277, 454, 475, 499, 501, 502, 511, 512, 575, 576, 585, 590, 623, 627, 628, 633, 635, 650, 651, 656, 657
Արդ ալ-Բայդա - 247, 438, 484, 485
Արդաբիլ – 163-165, 277, 280, 294, 297, 361, 446, 447, 473, 490, 515, 545, 547, 550, 572, 574-578, 623, 625, 628-630, 633, 635, 637, 639-641, 651, 654, 657-659
Արդաբիլի դաշտ (Մարջ Արդաբիլ) – 165, 547
Արդաբիլի գետ – 358, 454
Արդխաթ (Արտաչատ)- 271
Արզն (Արզան) – 151, 185, 186, 247, 393, 439, 440, 484, 513, 515, 537, 546, 547, 550, 552, 575, 623, 632, 641, 659
Արթան – 282
Արիչ – 556
Արճեչ (Արջիչ) – 265, 271, 448, 495, 515, 551, 576, 578, 623, 631, 632, 634, 641, 651, 659
Արճեչի (Վանա) լիճ - 656
Արմինիա, տես Հայաստան – 148, 149, 151,
Արմինիակուս - 444

Արչակ – 164, 297
Արջ լեռ – 453, 481
Արջ համաստեղություն – 123, 473
Արջան – 490, 514
Արջիլ ալ-Սուղրա - 280
Արջիլ ալ-Ֆուբրա - 280
Արջիչ – Տե՛ս Արճեշ
Արսուֆ – 537, 556, 607
Արտահան (Արթահայ) - 273
Արտաքին Հայաստան (Արմինիա ալ-Խարիջա) - 609
Արուլիյա (Ազրուլիյա) – 161
Արքիդոնա - 597
Արևելյան ծով – 450, 454
Արևելյան ծովի կղզիներ - 437
Արևմտյան ծով – 124, 450
Աքրաղ գետ - 271
Աքքա (Ակրա) - 226, 513, 537, 556, 607, 619, 657
Աուգաղաստ – 586, 589, 596, 610
Աուզաի – 227, 233, 254, 301, 611
Աուլիյա - 149
Աֆլաջունիա (Պափլագոնիա) – 167, 442
Աֆրիկա (Աբրիկ). Փոքր Ասիայում – 144
Աֆրիկա (Իֆրիկիա) – 129, 435

Բ

Բաադրա - 299
Բաալբեք, Բաալբեկ – 136, 227, 231, 233, 340, 515, 611, 619
Բաադրա - 550
Բաաբրայա -185, 439, 550
Բաբար - 295
Բաբելոն (Միջագետքի) – 122, 124, 206, 290
Բաբելոն, Բաբիլոն (Եգիպտոսի), Ալյուն – 139, 516, 563
Բաբելոնիա - 588
Բար ալ-Աբուար - Տե՛ս Դարբանդ
Բար Բարիկա - 266
Բար Լաղիկա - 266
Բար ալ-Խորասան - 368
Բար Սալուա - 512
Բար Սամասախ (Սամսախ) - 266
Բար Վակ - 367
Բար Ֆիրուզ Կուբադ - 266, 448, 495
Բագարվան (Բաջարուան)-280, 294, 295, 297
Բաղաղիչ - 300
Բաղդ (Բագդ) – 216, 217, 366, 387, 446-448, 473, 494
Բաղրանտ - 587
Բաղաբդա - 206, 247, 439, 485, 515, 550, 552
Բաղալեթ (Բաղալիտ) – 273, 498
Բաթիհա - Տե՛ս Բաթաիհ
Բաթնա - 180
Բաինասա - 546
Բալաղ -172, 185, 251, 301, 439, 453, 482, 484, 485, 513, 515, 537, 546
Բալաղ Բաարբայա - 550
Բալաղ Նուման – 186,
Բալաղ ալ-Ջամիայն - 548
Բալանջար – 143, 158-160, 168, 274, 275, 338, 346, 358, 448, 449, 494-496, 499
Բալինիաս – 556, 607
Բալիս – 335, 416, 439, 442, 513, 537, 551, 608, 614, 619
Բալխաբ - 577, 637, 658
Բալիխ (գավառ) – 335, 416, 551, 608
Բալկա - 608, 619
Բալհարա - 437
Բալջա - 124
Բալուանքահ – 297
Բալուանքիրջ - 446
Բաթահ (ճահճուտ)– 416, 453, 475
Բահլ - 537
Բահրա - 439, 445, 608, 609
Բահրայն – 144, 207, 331, 346, 350, 462, 474, 536, 553, 591
Բահուդրա - 299
Բահուրասիր - 288
Բաղաիր- 527
Բաղասական – 274, 294, 437, 447, 499
Բաղդադ - 95, 102, 127, 133, 189, 201, 213-215, 223, 241, 242, 250, 251, 255, 329, 330, 368, 370, 372, 378, 379, 381-383, 387, 388, 393, 396, 397, 399, 416, 431, 435, 438, 449-451, 453, 461-463, 465, 468-472, 474, 475, 482, 484, 492, 513, 516, 537, 543, 545, 546, 553, 571, 581, 597, 598, 602, 631, 652, 654
Բաղեչ (Բաղլիա) – 247, 282, 394, 547, 575, 578, 623, 632, 641, 651, 653, 659
Բաղրասի լեռնանցք – 235, 238
Բամակդա - 440, 546
Բամիանի լեռներ - 586
Բայաս – 230, 554, 607, 618, 620
Բայդա - 163, 168, 238, 449, 484, 485, 496
Բայդակ - 515
Բայլական (Տե՛ս նաև Փայտակարան) – 143, 164, 165, 265, 273, 274, 276, 277, 280, 281, 345, 365, 374, 447, 448, 454, 473, 476, 499-501, 512, 545, 574, 577, 626, 630, 637, 652, 658, 659
Բայտ ալ-Մակդիս – 537, 607
Բայտ ալ-Սաբիր (Գահի տուները) ամրոց – 169
Բանդանիջին – 186, 491
Բանիաս - 607
Բանուհադրա - 483
Բաչջիրդ - 587
Բաջա - 548, 563, 587, 588, 596
Բաջալ - 515
Բաջարմա - 182, 301, 483, 484, 515
Բաջարուան – 439, 440, 446, 449, 495, 515, 546
Բաջուդդա - 245
Բաջունայս – Տե՛ս Ապահունիք (Ապահունիա)
Բառան – 153,
Բառանջար - 143, 158-160, 168, 274, 275, 338, 346, 358, 448, 449, 494-496, 499
Բառիյա - 185, 251
Բառկավա - 659
Բասիա - 416
Բասրա - 95, 97, 102, 121, 133, 144, 201, 212, 233, 243, 263, 287, 292, 295-297, 346, 347, 355, 366, 368, 378, 380, 381, 398, 419, 435, 451, 461, 462, 470, 474, 475, 491, 501, 502, 513, 537, 543, 591
Բասրայի ծով – 513, 536, 537
Բասրայի դուռ – 463, 465, 466, 467, 516
Բասֆուռաջան – Տե՛ս Վասպուրական
Բավաղիջ – 550, 552
Բաուրուն - 607
Բարդիջ – 274, 499, 574, 630, 638, 651, 658
Բարզա - 299, 446, 447, 493, 545, 546, 659
Բարզանդ - 216, 298, 387, 447, 473, 492, 493, 545, 551, 572, 574, 577, 623, 626, 637, 651, 654, 658
Բարզանջ – 512, 658
Բարկա - 140, 513, 537, 564, 586
Բարկաիդ - 546
Բարջամա - 155
Բեյրութ – 134, 556, 607, 611, 618, 619, 629
Բերկրի – 493, 575, 578, 623, 632, 634, 641, 651, 659
Բիբլոս – 556, 607
Բիկաա, Բեկաա - 136
Բիհլար - 545
Բիրու - 536
Բյուզանդիա - 154, 174, 177, 223, 207, 331, 394, 431, 451, 575, 588, 590-591, 631, 632
Բոլոնիա (Բուլունիա) – 168
Բուխարա - 151, 331, 469, 481, 513, 514, 537, 563, 586, 614
Բուխխ - 267
Բուկա - 230, 238, 239, 439, 608
Բուհայրա կղզի – 154
Բուսֆուռաջան – Տե՛ս Վասպուրական

Բուվվա (Մուվվա) - 163
Բուրթաս - 587
Բուրջան – 332, 333, 338, 444, 491, 513, 514, 538, 557

Գ

Գալիսիա (Ջալիկիա) - 587
Գաղատիա - 415
Գանա - 586
Գանձակ - բաժանել Ատրպ. և Ուտիքը – 446, 447, 493, 574, 575, 577, 622, 628, 630, 633, 638, 651, 656, 658
Գեղան (Ջիլան) – 294, 297, 298, 338, 362, 428, 446, 449, 493, 495, 561, 590, 609, 654
Գեղարքունի (Քիլքուն) – 577, 638, 658
Գոհարեղենների կղզիներ (Ջազիրատ ալ-Ջաուհար) - 410
Գոր (Ջուր) - 427

Դ

Դարիլ – Տե՛ս Դվին
Դարիկ – 175, 243, 260, 357, 599, 605
Դաբսա - 157, 184
Դահան Շիր - 496
Դահխաուական (Խաուական) – 545, 658, 659
Դամասկոս – 129, 134, 135, 136, 203, 223, 224, 226, 227, 231, 232, 235, 240, 264, 275, 335, 339, 340, 343, 351, 352, 363, 382-384, 419, 451, 453, 499, 513, 515, 516, 537, 552, 556, 608, 610, 611, 613, 618, 619
Դամիեթ – 335, 393, 513, 537
Դամիր – 300, 605
Դայբուլ - 536
Դայբուր - 550
Դայլամ (Դելումք) – 155, 512, 537, 561, 572, 574, 586, 587, 590, 609, 622, 623, 629
Դայր ալ-Ակդահ – 282, 363
Դայր ալ-Ատիկ – 461
Դասին – 225, 483, 550, 609
Դասիր – 299
Դարա - 139, 185, 186, 207, 212, 247, 439, 440, 484, 485, 515, 546, 550, 562
Դարաբադ - 515, 550
Դարաբաջիրդ - 514
Դարբ ալ-Հաջաս – 260, 261
Դարբ ալ-Ռահիբ (վանականի լեռնանցք) – 178
Դարբանդ (ալ-Բաբ, Բաբ ալ-Աբուաբ) – 123, 152, 153, 159, 162, 165, 265, 274, 277-280, 338, 359, 360, 362, 364, 373, 375, 390, 415, 447-449, 453, 476, 481, 488, 489, 494, 497, 498, 502, 511, 515, 527, 547, 560, 574, 576, 577, 599, 609, 622, 628-630, 635, 638, 650, 651, 653, 656-658
Դարուադ - 216, 217
Դիար Բաքր – 439, 585
Դիար Մուդար – 249, 311, 335, 351, 373, 381, 383, 438, 439, 462, 484, 485, 515, 551, 552, 585
Դիար Ռաբիա - 249, 251, 351, 388, 390, 439, 462, 484, 515, 550, 552, 585
Դիդոյք (Դուդանիյա) – 279, 338
Դիդուբե (Դիդունա) - 273
Դիմմիմա - 214
Դինավար – 201, 216, 265, 350, 435, 446, 447, 513, 537, 545, 576, 578, 623, 641, 659
Դմավանդ - 427, 513, 537
Դորիլեում (Դարաուլիյա) – 236, 442, 444
Դորոտեոս (Դուրիտույս) - 480
Դվին (Դարիլ) նաև Դուին – 148, 265, 266, 269, 271, 272, 275, 281, 374, 390, 447, 448, 475, 476, 494, 495, 498, 500, 512, 515, 546, 547, 551, 574, 576, 577, 578, 623, 630, 632, 636, 638, 641, 651, 653, 654, 655, 656, 657, 658, 659
Դվինի գետ - 358, 454
Դուբբիյա - 225
Դուդանիյա, տե՛ս Դիդոյք – 266, 273, 495
Դուլուք (Տլուք)- 262, 439, 440, 515, 556, 608
Դունկուլա - 536, 586
Դուրդուկիյա - 266, 495

Ե

Եգիպտոս – 97, 121, 129, 139, 140, 141, 142, 144, 203, 223, 225, 226, 227, 283, 284, 329, 330, 334, 344, 346, 348, 349, 350, 355, 368, 378, 382, 383, 386, 392, 393, 397, 425, 426, 427, 431, 435, 451, 462, 470, 479, 480, 481, 513, 531, 534, 536, 537, 548, 549, 552, 554, 556, 571, 581, 584, 586, 588, 589, 590, 591, 593, 596, 597, 599, 602, 603, 604, 605, 606, 607, 609, 614, 616, 617, 618, 620, 628, 640
Եգիպտոսի ծով – 510-511
Եղեսիա (Ռուհա) – 138, 213, 244, 245, 246, 247, 249, 251, 254, 263, 335, 343, 345, 376, 438, 440, 484, 485, 515, 546, 547, 551, 614
Եղեսիայի դուռ – 244-245
Եկբատան – 537, 609
Եմեն – 99, 107, 121, 144, 224, 240, 292, 331, 346, 351, 377, 378, 381, 423, 426, 428, 435, 451, 480, 482, 515, 536, 545, 553, 590, 592, 593, 599, 602, 603, 617, 640
Եմեսա (Հիմս) – 136, 160, 164, 223, 227, 229, 230, 232, 233, 244, 247, 260, 264, 275, 335, 340, 341, 345, 351, 357, 363, 439, 453, 481, 499, 513, 515, 537, 552, 556, 608, 609, 611, 612, 618, 620, 630
Եպիփանիա (Համա)- 439, 515, 608, 612
Երկրորդ Արմինիա - 265, 448, 494
Երջանկության կղզիներ - 488
Երրորդ Արմինիա - 265, 448, 494
Երուսաղեմ (Իլիյա), տե՛ս նաև Սուրբ քաղաք – 129, 138, 203, 263, 264, 341, 342, 343, 513, 537, 607, 610, 618, 619, 649
Եփրատ – 122, 123, 124, 184, 186, 213, 247, 250, 253, 258, 269, 287, 335, 366, 368, 416, 439, 450, 453, 454, 462, 463, 467, 470, 471, 475, 482, 483, 485, 489, 490, 512, 547, 548, 549, 550, 551, 552, 575, 585, 587, 606, 608, 609, 614, 618, 620, 629

Զ

Զարադանի - 608
Զարի (ճակատ.) - 174, 186
Զարեր (Մեծ և Փոքր), գետեր – 484, 512, 623, 633
Զարիջ - 437
Զանկա - 585
Զանջան – 446, 493, 575, 576, 577, 623, 633, 639, 655
Զայտունա - 251
Զապետրա (Զիքաթիրա) – 129, 203, 252, 262, 263, 388, 389, 440, 513, 515, 537, 547, 555, 620
Զավդիս – 577, 658
Զատ ալ-Լուջում (Սանձերի վայր)- 271, 272
Զարահ լիճ - 586
Զարան – 300
Զարանջ - 514
Զարիքրան (Զարուրիքրան) երկիր – 169, 267, 360
Զաֆար - 536
Զիմար – 121
Զինջ - 428, 587
Զինջան – 446, 473, 489, 490, 501, 502, 515, 547, 659
Զինջիների ծովը – 501

Թ

Թաբարիյա - 136

Թարարիստան – 128, 155, 202, 215, 338, 367, 425, 431, 435, 445, 446, 489, 491, 510, 511, 513, 515, 537, 552, 574, 586, 587, 590, 609, 617, 627, 634, 635
Թարարիստանի ծով (Կասպից) – 512, 513, 514, 576, 586, 629, 633
Թարարջի - 555
Թարարսարան – 169, 267, 277, 279, 338, 360, 449, 494
Թաիֆ – 224, 311, 536, 650, 657
Թայասան – 295, 338, 446, 561
Թայր – Տե՛ս Տայք
Թարաբուզանդայի (Տրապիզոն) ծով- 266
Թարոմ – 493, 576, 635
Թարաբուլուս - 586
Թարսուս - Տե՛ս Տարսոն
Թեոդոսիոպոլ (Կարին, Կարնո քաղաք, Կալիկալա) – Տե՛ս Կարնո քաղաք, Կալիկալա
Թին – 162
Թիոխիս(Տաուխիս) լիճ, Վանա լիճ - 271, 498
Թիրհան – 301, 483, 515, 550, 552
Թոխարիստան – 163, 438, 490
Թռեղք (Տարիալիտ) - 273
Թուբրուս (Թուլուս) – 154
Թուլաս – 524
Թուխայրիս - 586
Թուս – 189, 377, 381, 441, 513, 514, 537
Թուր Աբդին – 247, 439, 484, 485
Թուրքաց երկիրը – 208, 435, 437, 538

Ի

Իրն Ռահուան (բերդ) – 555
Իրն Սակլաբի (մզկիթ) - 601
Իրն Օմար գետ – 475
Իրն Օմար – 550, տես Ջազիրա
Իբրահիմի մզկիթ - 619
Իթիլ (Ատուլ) - 590
Իլղամ – 159
Իլչան - 123
Իսմիմ - 536
Իկոնիա (Կոնիա) – 177, 336
Իկրիթիա (Կրետե)- 183, 510
Իկրիտիս ծոց, ծով – 124
Իսթախր – 143, 337, 345, 490, 513, 514, 537, 571, 581
Իանայ - 536
Իսրայել – 585, 606, 607
Իսֆահան – 292, 337, 435, 482, 509, 537, 609, 617
Իրան – 223, 435, 439, 479, 481, 549, 553, 571
Իրանչահր – 208, 514, 588
Իրաք – 96, 97, 124, 133, 157, 206, 207, 209, 223, 225, 231, 240, 254, 285, 287, 291, 305, 309, 334, 337, 339, 341, 342, 345, 350, 351, 353-355, 358, 364, 373, 380, 384, 399, 436, 449, 453, 454, 461, 479, 484, 490, 491, 513, 515, 537, 549, 550, 563, 571-573, 576, 581, 585, 587, 590, 591, 594, 599, 605, 609, 612, 614, 617, 622, 627, 628, 634, 639, 640, 650
Իրկավատ (Իրկուբադ) – 206
Իֆրիկիա - 129, 140, 160, 162, 163, 165, 203, 435, 444, 451, 488, 510, 513, 536, 537, 563, 564, 586
Իֆրիկիայի ու Աորիքի ծով (Միջերկրական) – 443, 488, 510-513, 537, 557, 558

Լ

Լազակիյա (Լազակիյա) - 537
Լազիկա - 266, 448, 511
Լայիջան – 574, 576, 577, 622, 630, 636, 638, 651, 653, 658
Լեպե (Լաբ) - 596
Լիբանան – 231-233, 453, 481, 607, 609
Լիբիա - 451, 480
Լոմբարդիա - 585, 587
Լոս Պեդրոքես (Ֆահս ալ-Բալութ)- 597
Լուլուա - 129, 147, 203, 384, 385, 441
Լուղար - 524
Լուրլա - 190
Լուքքամ լեռներ – Տե՛ս Ամանոսյան լեռներ

Խ

Խարուբ (գետ) – 250, 550
Խազարաց ծով, լիճ (Կասպից) – 177, 442, 453, 475, 481, 502, 527, 557-559, 572, 574, 586, 590, 609, 622, 628, 629, 633, 635, 653, 656
Խաղաղության քաղաք – Տե՛ս Բաղդադ
Խաղտիք – 443, 555, 556, 559
Խամլիջ – 449, 451
Խայղաջ – 169
Խանասիրա, Խունասիրա - 157, 608
Խան Բաբաք - 545
Խանիկին – 289, 435
Խանջարա - 152, 162, 361
Խաչդան (գավառ) – 161
Խառան (Հառան) – 138, 139, 178, 212, 213, 245-247, 252, 257, 335, 345, 363, 364, 373, 410, 438, 440, 484, 485, 513, 515, 537, 546, 547, 551, 641
Խարբերդ (Հիսն Զիյադ) – 448, 495
Խարլուխ, Խարլուխիյա - 437, 587
Խարսիանոն (Խարչանա) – 129, 165, 203, 335, 443, 476, 513, 537, 555, 558, 559
Խաֆֆան - 285
Խիրխիզ - 587
Խիրս (Խիրչ) – 279, 367
Խլաթ (Խիլաթ) – 185, 186, 247, 249, 256, 265, 270, 276, 282, 355, 448, 476, 495, 501, 513, 515, 537, 547, 551, 575, 578, 585, 623, 631, 632, 634, 641, 650, 651, 653, 659
Խլաթի (Խիլաթի) լիճ (Վանա լիճ) - 501, 585, 623
Խոյ – 300, 446-448, 473, 493, 546, 572, 578, 623, 625, 626, 641, 651, 657-659
Խորասան – 123, 128, 144, 158, 179, 182, 201, 202, 206, 208, 213, 239-242, 250, 258, 259, 261, 280, 329, 337, 339, 355, 364, 365, 368, 369, 371, 375, 378, 379, 381, 385, 392, 431, 435, 437, 446, 452, 462, 463, 465-467, 469, 481, 484, 489-491, 513-515, 537, 549, 551, 560, 561, 573, 586, 587, 589, 590, 596, 625, 634, 640, 655
Խորեղմ – 409, 410, 427, 469, 491, 502, 513, 537, 560, 581, 586, 587, 635
Խումբին – 168, 169
Խունան (Հունաբակերտ) – 273, 498, 574, 577, 622, 630, 638, 651, 658
Խունաջ – 493, 572, 578, 623, 626, 640, 651, 659
Խուջանդան – 513, 537
Խուռազաղ - 212, 290
Խուրջան - 545

Ծ

Ծանարք (Սաննարիյա) – 273, 269, 448
Ծոց (Խալիջ) Կոստանդնուպոլսի - 181, 558, 587

Կ

Կաբալա (Կապադակ) - 265, 274, 380, 476, 622, 651, 652
Կարիսի - 622
Կաղիսիյա - 212, 287-289, 342, 454, 548
Կաղուին – 489, 513, 515, 537, 548, 561
Կալաատ իրն Քանդաման – 577, 638, 651, 658
Կալաբրիա - 585, 587
Կալամուն - 607
Կալանիկուս (Կալինիկոս) - 438
Կալաուդիյա ամրոց - 258
Կալինիկում (Ռակկա) - 608
Կախեթ (Խախիթ) – 273, 278

Կաղանկատույս (Կաղանկատույք)- 577, 638, 658
Կամախ (Քամախ) – 176, 255, 257, 367, 440, 453, 489, 547
Կամբիզան (Կամբեճան) - 266
Կայրուան – 488, 513, 537, 563, 584, 593, 594, 595, 603
Կանաղ ծով - 510
Կանաչ ծով – 536, 563
Կանբա - 177
Կանդահար – 513, 536
Կասր Բանի Նազի – 440, 546
Կարդա, Կարդա դյուղ (Սամանին, Թամանին) - 171, 172, 202, 206, 247, 439, 515, 550, 552
Կարդա լեռ – 128, 202
Կարիատ ալ-Կիրմիզ - 271
Կարիատ ալ-Ֆուբատ - 551
Կարիճան ծով (Միջերկրական) – 153
Կարկիսիա, Կիրկիսիա - 213, 246, 247, 250, 251, 412, 438, 484, 513, 515, 537
Կարմա - 176
Կարնո քաղաք (Կալիկալա), տե՛ս Թեոդոսիոպոլ – 256, 265, 268-270, 275, 338, 448, 453, 454, 475, 476, 481, 489-491, 495, 498, 501, 511-513, 537, 547, 551, 556, 558, 575, 631, 632, 651
Կարսուն - 520
Կեսարիա (Կայսարիյա) - 129, 146, 159, 161, 164, 167, 203, 513, 537, 556, 607, 619
Կիլիկիա - 385, 633
Կիննասրին – 138, 229, 230, 236, 239, 244, 259 – 261, 264, 335, 341, 351, 357, 363, 378, 381, 439, 440, 513, 515, 516, 537, 548, 552, 608, 612, 613, 618, 619, 652
Կիրկիսիա - Տե՛ս Կարկիսիա
Կխոեթ (Կուհուիթ) - 273
Կղարջք (Կալարջիտ) – 273, 498
Կողոնիա - 351, 443
Կոստանդնուպոլիս – 156, 215, 228, 229, 333-335, 348, 352, 357, 370, 371, 385, 413, 442-444, 450, 485, 488, 509, 511, 513, 517, 518, 522, 523, 538, 557, 581, 585, 587, 629, 632
Կովկասյան լեռներ – 167, 267, 448, 453, 572, 577, 585, 609, 622, 637
Կորդովա - 564, 597, 598
Կորսիկա - 161, 510
Կուբակիք գետ - 258
Կուզզա - 177
Կուլզում (Կլիսմա) – 421, 450, 451, 480, 491, 492, 513, 536, 537, 584, 588, 590, 593, 607-609
Կուհիստան – 514, 586
Կում – 206, 481, 513, 515, 537, 552
Կումամ - 546
Կումիս – 292, 425, 427, 513, 515, 536, 537, 552
Կուռա ամրոց – 129, 187, 203,
Կուր (ալ-Քուռ) գետ – 159, 161, 166, 274, 276, 375, 416, 454, 475, 499, 501, 512, 573, 575, 577, 585, 590, 622, 628, 629, 633, 638, 652, 656
Կուրուս – 335, 381, 439, 510, 515, 554, 618-620

Հ

Հաալա - 301
Հաղաս – 181, 241, 252, 260, 261, 262, 370, 377, 440, 515, 547, 555, 607, 608, 615, 620
Հաղասի լեռնանցք – 143, 146, 178, 179, 183, 261, 515
Հաղիր (Հալեբի) – 230,
Հաղիսա - 250, 300, 416, 454, 483, 512, 515, 550, 626
Հաղրա - 439, 483
Հաղրամաուտ – 482, 536, 592
Հաղ Բահաղրա - 550
Հաթերս (Հաթերք) – 577, 658
Հալեբ - 137, 138, 228, 230, 341, 363, 381, 439, 440, 513, 515, 537, 548, 608, 612, 613, 614, 618, 619
Համադան – 187, 287, 294, 345, 346, 350, 435, 479, 489, 490, 491, 513, 515, 537, 552, 561, 563, 609
Համզին (Խումբին) երկիր – 169, 276, 279, 360, 373
Հայաստան (Արմինիա) – 122-124, 142, 144, 147-151, 153, 156-158, 160, 161, 163, 167-174, 185, 187, 206, 207, 211, 214, 218, 223, 228, 230, 248, 254, 263, 265-269, 274, 275-277, 280-282, 298, 300, 329, 331, 337, 338, 345, 354, 355, 359, 362-367, 373-377, 380, 381, 387, 388, 390, 392, 393, 396, 398, 428, 431, 435, 443, 445, 447-449, 452-454, 462, 471, 475, 476, 481, 482, 489-495, 497, 498-502, 504, 511-516, 537, 546, 548, 549, 551, 552, 559-561, 572, 574, 575-577, 581, 585, 587, 599, 609, 621, 622, 623, 629, 630-634, 636-638, 642, 649, 651, 655, 656
Հայկական ծով (Վանա լիճ) - 511
Հանի – 551, 556
Հանձիթ – 416, 549
Հաչիմիյա - 264, 462
Հաջար – 536, 591
Հավերժության կղզիներ - 510
Հարավային ծով – 431, 451, 480
Հարաք - 270
Հարիս – 416, 548, 576, 623, 650 - Տե՛ս Մեծ Մասիս լեռ
Հարճլանք (Հարջլիան) - 274, 499
Հարունիյա (Հարունիա) – 242, 441, 515, 554, 607, 609, 615, 620
Հաուլայա - 185
Հաուֆ - 383
Հաուրան – 339, 556, 619
Հերակլիա - 214, 335, 376, 377, 441, 442, 513, 538
Հերատ – 207, 208, 438, 481, 514, 537, 563
Հիբտուն – 299, 483
Հիղան (Խայդան, Հայդան) – 143, 159, 166
Հիմս (Հոմս) - Տե՛ս Եմեսա
Հիյանա - 299
Հիջազ - 224, 240, 254, 296, 344, 353, 471, 509, 536, 591, 593, 617
Հիսն ալ-Հադիդ (Երկաթե բերդ) – 155, 357
Հիսն Մանսուր – 263, 440, 515, 547, 555, 615, 620
Հիսն ալ-Մարաթ – 144, 357
Հիսն ալ-Ջադիդ (Նոր բերդ) – 152
Հիսն Սարֆանդ - 556
Հիվար լեռ – 233
Հիտ – 187, 212, 250, 416, 438, 513, 537, 553
Հիրա - 100, 111, 115, 285-287, 308, 311, 365, 462, 490
Հիրյադա - 556
Հիրտանա լեռնանցք – 179
Հոբբե (Յաֆա) - 556, 607, 610, 618-620
Հոմս (Հիմս)- Տե՛ս Եմեսա
Հոռոմների դուռ (Բար ալ - Ռում)- 185, 186
Հորդանան (Ուրդուն) – 136, 165, 224, 225, 226, 240, 264, 335, 340, 341, 351, 482, 516, 552, 556, 608, 610, 618, 619
Հորդանան գետ - 607
Հռոմ (Ռումիյա)- 451, 474, 513, 517, 537
Հուեսկա (Ուխշկա) - 596
Հուլուան – 185, 289, 290, 292, 350, 416, 428, 435, 436, 454, 490, 513, 537, 551, 576, 609
Հուսայնիյա - 555
Հուսայն փողոց (որտեղ) - 465
Հուր - 300

Ղ

Ղադիրա (Գադիրա) կղզի - 510
Ղազալա - 153, 166
Ղազզա - 225, 513, 556, 619
Ղաթֆասին – 162, 442
Ղարիու - 586

Ղաֆիկ - 597
Ղութթա (Դամասկոսի)- 226, 339, 610, 618, 619
Ղումիկ – 169, 526

Մ

Մաադան ալ-Ջաջ – 230, 374
Մաալլա - 299
Մաան – 608, 618
Մաանբա լեռ - 416
Մաառատ Միսրայն – 439, 608
Մաառատ ալ-Նուման - 608
Մաասուֆ – 214
Մադաին – 435, 453, 512
Մադինա (Յասրիբ) - 95, 96, 99, 100, 127, 133, 138, 144, 224, 244, 285, 287, 292, 293, 295, 306, 310-312, 331, 345, 346, 354, 356, 381, 453, 481, 491, 509, 535, 552, 591
Մադինատ ալ-Սալամ (Խաղաղության քաղաք) – Տե՛ս Բաղդադ
Մադյան – 537
Մադիհ - 249
Մադիհ Օմար - 551
Մաղնիյա - 547
Մաղքութթ (Մասկաթ) – 143, 166, 265, 267, 274, 277, 345, 360, 495, 499, 502, 560, 584
Մաթթակ – 180, 465
Մալագա (Մալկա) - 596
Մալաթիա - 144, 146, 152, 161, 165, 169, 173, 175, 176, 184, 255, 256-259, 261, 262, 270, 335, 356, 357, 362, 366, 396, 397, 416, 440, 443, 453, 463, 481, 489, 513, 515, 537, 547, 549, 555, 558, 607, 608, 614, 618, 620, 641
Մալթին - 556
Մահ – 187, 207
Մահար - 536
Մահդիյա - 584, 593
Մահին - 292
Մահրուբան - 537
Մահուզ - 395, 607
Մաղրիբ - 129, 149, 160, 203, 223, 237, 329, 331, 349, 355, 368, 392, 425, 426, 431, 435, 438, 450, 462, 473, 479, 489, 513, 536, 537, 546, 550, 553, 563, 564, 584-586, 588-590, 591, 593, 595, 597, 603, 617, 620, 635, 640
Մաղրիբի ծով – 510, 511, 513, 514, 537, 538
Մամեստիա (Մասսիսա) – 143, 146-148, 175, 177, 184, 235, 236, 237- 239, 241, 243, 355, 356, 368, 441, 443, 453, 463, 481, 512, 513, 515, 537, 548, 554, 558, 607, 616, 618, 620
Մայմադ - 277, 294, 623
Մայաֆարիկին – Տե՛ս Նիփրկերտ
Մայորկա (Մայուրկա) կղզի – 151, 599
Մանազկերտ – 575, 631, 632, 651, 652, 659
Մանբիջ (Մամբուկ) – 137, 138, 247, 259, 262, 341, 376, 416, 439, 484, 513, 515, 537, 548, 549, 556, 608, 614, 618-620
Մանգլիս – 272, 273
Մանսուրա - 435, 463, 536, 591
Մանսուրա (Հայաստանի) – 447, 547
Մանսուրա գետ – 511
Մանսուրիյա - 594
Մասդար երկիր – 169
Մասիսա - Տե՛ս Մամեստիա
Մասկաթ - Տե՛ս Մաղքութթ
Մասֆինա լեռ - 549
Մավերաննահր – 331, 438, 571, 587, 588
Մարակիա - 607
Մարաղա - 298, 446, 447, 473, 492, 493, 515, 545, 547, 572, 575, 577, 578, 623, 625, 626, 633, 634, 639-641, 651, 653, 658, 659
Մարայիս - 548
Մարանդ - 298, 386, 392, 446, 447, 473, 493, 515, 545, 546, 550, 572, 623, 626, 633, 651, 654, 658, 659
Մարաշ – 146, 177, 180, 259, 260, 261, 361, 370, 440, 515, 547, 555, 607-609, 615, 620
Մարբալա - 270
Մարբոգ - 537
Մարդին – 247, 484, 550
Մար ալ-Հասա - 270
Մարզուբանայն – 154
Մարի - 551
Մարիամի վանք - 524
Մարիս - 481
Մարոկկո – 133, 451
Մարջ (Խառանի ու Ռակկայի միջև)- 171, 212, 226, 299, 483, 515, 559
Մարջ Արղարիլ - 165
Մարջհայնա - 483
Մարջ Հուսայն - 242
Մարջ ալ-Հիջարա - 158
Մարջ ալ-Շահմ – 184, 356, 443
Մարջ Սաբալան – 164
Մարջ ալ-Վարակ – 270
Մարջ ալ-Ուսկուֆ - 442
Մարվռուդ - 537
Մաուսիլ - Տե՛ս Մոսուլ
Մեծ Խաս գետ (Նահր Խաս ալ-Ազիմ)- 470
Մեծ Իրանք, Մեծ Առանք (Իսբիան) – 274, 499
Մեծ Կուենք (Միակուան) – 274, 499
Մեծ Հայք (Արմինիա ալ-Քուբրա) – 123,
Մեծ Հոռմ – 513, 537
Մեծ և Փոքր Մասիսներ (Հարիս և Հուայրաս) - 416
Մեոտիս – 410, 511
Մերոյե (Մարայիս) - 548
Մեքքա - 100, 124, 133, 144, 174, 224, 306, 307, 311, 331, 332, 346, 369, 453, 473, 474, 481, 491, 509, 535, 536, 545, 552, 584, 591, 599
Միանիջ – 293, 294, 299, 366, 446
Միհրան գետ – 511, 585, 587
Միսաս - 607
Մինորկա (Մինուրկա) կղզի - 151
Միջագետք – 97, 186, 207, 330, 331, 431, 453, 484, 485, 489, 555, 581, 585, 614, 620, 641
Միջերկրական ծով – 233, 410, 511, 517, 585, 587, 590, 591, 603, 604, 611, 615, 616, 617, 618, 620
Մծբին (Նասիբին) – 138, 139, 172, 178, 182, 185, 186, 207, 212, 213, 246, 247, 249, 343, 364, 381, 390, 427, 439, 440, 484, 513, 515, 537, 546, 547, 550, 581
Մոսուլ –139, 164, 171, 172, 175, 186, 212, 214, 240, 249, 269, 294, 299-301, 332, 350, 353-355, 364, 365-368, 378, 381, 415, 416, 428, 437, 462, 471, 482-484, 513-515, 537, 546, 548, 550, 552, 609, 626, 629, 634, 658
Մուավիա ալ-Աուդի - 294
Մուղայբար - 551
Մուլտան – 153, 585
Մուկաթթամ լեռ - 609
Մուղիլա - 550
Մուսա Արաղ - 447, 659
Մուսակկար բերդ - 238, 616, 618
Մուտավաքքիլիյա - 274, 547
Մուհամմադիյա - 261, 367, 537
Մուզան (Մուկան) – 294, 362, 623
Մուբսիա - 596
Մուքս (Մոկս) - 270

Յ

Յաղու ռուստակ (չրջան) – 159
Յամամա - 350, 462, 474, 536, 553
Յասրիբ - Տե՛ս Մադինա
Յարմուք – 137, 138, 228-230, 340, 341
Յունա - 280, 393, 596
Յունան - 280, 577, 658

Ն

Նարբուլուս – 607, 619
Նահմա - 607

Նահր գետ – 300, 438
Նահրաբան – 454, 475
Նահրայն – 290, 379
Նահրաուան (Նահրավան) գետ – 379, 453, 454, 470, 512
Նահր ալ-Մալիք (Սամուր) գետ - 651
Նահր Սաիդ, գետ - 438
Նախճավան (Նախչավա) – 148, 266, 271, 276, 281, 388, 416, 447, 448, 490, 494, 495, 500, 513, 515, 537, 546, 551, 575, 578, 623, 630, 632, 636, 641, 658, 659
Նաջդ - 224, 292, 536
Նաջրան – 100, 109
Նասդին - 607
Նասիբին – Տե՛ս Մծբին
Նավիսա - 250
Նավաքիս - 537
Նարիզ դյուղ – 299, 366, 446, 447, 493, 546, 659
Նարիր - 294
Նարսաբադ - 301
Նեհավենդ, Նիհավանդ - 123, 187, 513
Ներքին Հայաստան (Արմինիա ալ-Դախիլա) – 609, 630, 631, 633, 642
Նիեբլա (Լիբլա) - 596
Նիկիա - 333, 335, 442, 443, 517
Նիկոպոլիս - 554
Նինվե - 299, 483, 550
Նիչապուր – 454, 513, 514, 537, 635
Նիր - 545
Նփրկերտ (Մայափարիկին) – 185, 186, 206, 207, 212, 213, 246, 247, 381, 396, 439, 440, 484, 515, 546, 550, 552, 575, 578, 609, 623, 632, 633, 641, 659

Շ

Շաբթա - 510
Շաբուրան (Շապորան) – 265, 448, 622
Շաթի ալ-Ֆուրատ - 551
Շակաչեն (Շակաչին) – 274, 499
Շահաբունս (Շահապոնս, Շահապոնք) - 266
Շահրզուր, Շահրազուր – 172, 294, 301, 416, 490, 515, 548, 550, 552
Շամախի (ալ-Շամմախիյա) - 638
Շամմասիյա (Բաղդադի արվարձ.) - 393, 471
Շամքոր (Շամքու) – 274, 498
Շայզար – 439, 515, 608, 612
Շաչ – 152, 415, 481, 513, 514, 537, 562, 586
Շաչ և Թարբանդ (Դարբանդ) երկիր - 415
Շավչեթ (Շաուչիտ) – 273, 498
Շապուր – 490, 514
Շարան - 483
Շարկիյա նահանգ - 140
Շաքան (Շաքե) - 266
Շիզ - 294, 446, 447, 473, 493
Շիկկ ալ-Քուֆա - 288
Շիմշեթ - 254-256, 260, 262, 265, 274, 397, 413, 416, 440, 448, 453, 476, 481, 495, 513, 515, 537, 546, 547, 549, 555, 608, 620, 641
Շինկան լեռներ – 511
Շիրազ - 425, 490, 513, 514, 537, 576, 577, 609
Շիրակ (Սիրաջ) – 265, 271, 448, 494, 515, 551, 575
Շիրվան, Շարվան, Շարուան – 153, 494-496, 499, 622, 630
Շնհեր (Քիլաբ) ամրոց – 266, 365, 374, 495

Ո

Ողնուց (Կանոպուս) – 434

Ջ

Ջինաց երկիր – 512, 536, 563, 587-589
Ջինաց ծով – 510, 589
Ջորջորդ Արմինիա - 174, 254, 265, 338, 359, 448, 495
Ջող (Սուլ) – 153, 154

Պ

Պալմիրա (Տադմոր) - 608
Պաղեստին (Ֆիլաստին) – 224, 225, 228, 262, 264, 280, 329, 335, 340, 348, 350, 355, 377, 378, 397, 398, 516, 552, 556, 607, 608, 610, 618, 619
Պարսից ծով (ծոց) – 410, 510, 584, 587, 589-593, 609
Պարսկական Հայաստան - 490
Պարտավ (Բարդաա) – 142, 143, 148, 164, 173, 265, 274 – 278, 280, 281, 345, 360, 374, 388, 416, 427, 447, 448, 473, 475, 476, 490, 493-495, 498, 500, 502, 512, 513, 537, 546, 547, 550, 573, 574-577, 622, 623, 627, 628, 630, 631, 633, 635-638, 651, 652, 654, 656, 658
Պափղագոնիա (Աֆլաջունիա)- 167
Պելուզիում - 607
Պեչինա (Բաջանա) - 596
Պեքինա (Բիջանա) - 599
Պիրամոս (Ջայհան) գետ – 180, 183, 237, 258, 260, 370, 441, 512, 616, 633
Պոնտոսի ծով(Սև ծով) – 510, 511, 548
Պոտանդոն (Բաղանդուն) գետ – 129, 203, 215, 385, 441, 442

Ռ

Ռաաֆարիյա - 395
Ռաբալ (Ջիրալ) – 128, 155, 202, 206, 214, 298, 350, 368, 381, 385, 387, 392, 422, 462, 489, 490, 514, 515, 547, 608
Ռաբալատա - 453
Ռաբալա - 556, 607
Ռաբարուան – 299, 546, 548, 623
Ռաբիրսա ու Ռաբիրկա - 123
Ռազիրա, տե՛ս նաև Վերին Միջագետք - 97, 124, 128, 129, 138, 139, 142, 149, 151, 153, 157, 160, 164, 166-168, 171, 172, 174, 176, 178, 181, 182, 186, 188, 202, 203, 206, 213-215, 223, 226, 228, 234, 236, 243, 244, 246, 248-251, 254, 256-258, 260, 261, 263, 268, 270, 271, 275, 280, 300, 335, 337, 343, 346, 351, 357, 363, 364, 366-368, 378, 383, 410, 431, 435, 439, 462, 471, 479, 482, 484, 485, 489, 492, 500, 512, 514-516, 550, 572, 575, 576, 581, 585, 587, 591, 597, 602, 608, 614, 617, 620, 622, 626, 631, 632, 634, 651
Ռալուա - 212, 289, 290
Ռալուտի (Գողիաթ) որդու երկիր - 587
Ռամահ - 556
Ռայհան (Ջեյհան)գետ – Տե՛ս Պիրամոս
Ռաննաբա - 513, 537
Ռաջա - 124
Ռավախք (Ռավախիթ) – 273, 498
Ռար – 163, 363, 450
Ռարաբլուս - 608
Ռարաչ - 536
Ռարբուլ - 454
Ռարդաման (Գարդման) – 266, 273, 448
Ռարմա - 536
Ռարնի (Գառնի) - 271
Ռարջումա - 230, 231, 233
Ռիբալ նահանգ - Տե՛ս Ռաբալ
Ռիբտուն – 550
Ռիբրալկո (Ռարբալ ալ-Ուչուն)- 596
Ռիդդա - 450, 536, 591
Ռիլբայա - 493
Ռիհ - 607
Ռիսր Մանբիջ – 549, 614, 618
Ռիրուֆտ – 513, 514, 537
Ռուլլար - 440, 546
Ռուդի լեռ - Տե՛ս Արարադ
Ռումա - 439, 554
Ռումբան – 153
Ռունիա - 607
Ռուսիա ալ-Լարուա - 608

Ջուրզան - Տե՛ս Վիրք
Ջուրնան - 546
Ջուրջան – 128, 155, 180, 202, 427, 428, 491, 497, 513, 515, 537, 552, 563, 574, 629, 634, 635
Ջուրջանի ծով (Կասպից)- 510, 511, 512, 537
Ջուրսումա - 150

Ռ

Ռաաբան – 262, 515, 556, 608
Ռաբաթ – 133
Ռաբիատ Բանի Տամիմ - 551
Ռադան – 186
Ռախլ - 123
Ռակամ - 608
Ռակկա - 129, 203, 212, 214, 251, 257, 263, 264, 276, 343, 345, 366, 378, 416, 438-440, 462, 470, 482, 484-485, 512, 515, 537, 546, 547, 593, 629, 652
Ռակկադա - 593, 595, 603
Ռահբա - 251
Ռամլա - 391, 451, 513, 515, 516, 537, 607, 609, 610, 618, 619
Ռամմ գետ – 167
Ռանհիա - 526
Ռաս ալ-Այն – 182, 184, 185, 247, 248, 250, 439, 484, 485, 513, 515, 537, 550
Ռաս ալ-Ջումջումա (Գանդի հրվանդան) – 584
Ռասուֆ - 513
Ռասրայֆա, Ռաս Քայֆա - 247, 252, 484, 515
Ռաֆիկա - 250, 366, 416, 438, 462, 482, 484, 485, 594, 608
Ռաֆհ – 526, 556, 606, 610, 618
Ռեգիո (Ռայու) – 531, 597
Ռեյ – 128, 175, 202, 209, 210, 287, 292, 331, 345, 350, 427, 435, 445, 454, 482, 489, 490, 491, 512, 513, 515, 537, 552, 561, 563, 573, 575, 609, 617, 627, 628, 631, 635, 640
Ռիքաբ լեռնանցք – 183
Ռուաս - 608
Ռուբաս գետ - 358
Ռում, Ռումի երկիր (Բյուզանդիա) – 113, 129, 137, 142, 144-149, 152-158, 160-165, 167-169, 173-175, 177-180, 182, 183, 187-190, 203, 206, 207, 211, 214, 215, 218, 228, 232, 234, 235, 239-242, 253, 256, 259-263, 266, 268, 270, 275, 284, 285, 333, 335, 337, 344, 346, 349, 351, 352, 356, 357, 359, 362, 369, 371, 376, 382-385, 389, 391, 394, 396, 436, 441, 443, 444, 451, 453, 476, 479, 485, 486, 488, 489, 494, 510, 512, 513, 538, 546, 549, 553, 555-560, 575, 585, 587-591, 606, 608, 609, 615-617
Ռումի ծով (Սև ծով) – 514, 538, 585, 590, 591, 603, 604, 606, 607, 611, 615-618, 620
Ռումիյա - 335, 395, 451, 474
Ռույան – 374, 425, 445, 489, 548
Ռուսաֆա - 251, 257, 439, 469, 470, 471, 484, 598, 608
Ռուսիա – 232

Ս

Սաալաբիյա - 287
Սաբա - 536, 592, 607
Սաբալանի դաշտ (Մարջ Սաբալան) – 164, 294
Սարալան լեռ – 572, 624, 635
Սարաթ - 288
Սաբիդուդ - 575, 639
Սաբինա Մանգլիս - 273
Սաբուրխաստ – 446, 447, 545, 659
Սախդ իբն Հիշամ – 164, 361
Սախդ. Վերին Սախդ (Եգիպտ.)- 536, 586, 604, 609
Սալամիա - 513, 537, 608, 618
Սալմաստ – 300, 446, 447, 473, 493, 546, 572, 578, 623, 625, 626, 633, 641, 651, 653, 658, 659
Սալսալայի լեռներ - 453
Սալուս - 252
Սախրա - 607
Սակարիա գետ - 444
Սահմանային ամրություններ գոտի (Սուղուր) – 129, 187, 203, 207, 243, 268, 366, 369-371, 378, 383, 391, 394, 462, 476, 499, 515, 546, 555, 574, 606, 608, 610, 612, 614-617, 620, 641
Սամա - 586
Սամալու – 129, 203, 242, 370, 371, 382, 443
Սամանդար – 168, 268, 448, 449, 495, 502
Սամանին (Թամանին), տես Կարդա – 128, 332, 609
Սամառա - 215, 282, 298, 331, 386, 387, 390, 392, 394-397, 416, 431, 452, 453, 471, 472, 504, 513
Սամարկանդ - 123, 427, 513, 514, 537, 561-563, 586
Սամաղան - 515
Սամղան – 550, 552
Սամչուլղա (Շամչուլղե) – 266, 495
Սամոսատ (Սումայսաթ) – 138, 139, 213, 246, 247, 262, 335, 365, 371, 413, 416, 438, 440, 453, 482, 484, 485, 489, 513, 515, 537, 547, 549, 556, 608, 609, 614, 620, 641
Սամորա (Սամուրա) - 596
Սամցխե (Սամասխի) – 266, 273, 449, 495, 498
Սամուր գետ - Տե՛ս Մալիք գետ
Սայքարա - 167
Սայհուն գետ (Կիլիկիայում) - 240
Սայսար - 545
Սանաա - 96, 121, 482, 536, 592
Սանդարա - 152,
Սավադ (Ստորին Միջագետք) - 98, 100, 102, 106, 129, 186, 202, 207, 285, 290, 291, 301, 330, 337, 343, 350, 358, 431, 435, 436, 453, 470, 475, 476, 489, 514, 516, 549, 550, 551, 553
Սատրուդան - 294
Սարագոսա (Սարակուսա) - 596
Սար Աչին - 525
Սարախս – 454, 513, 514, 537
Սարատ – 294, 299, 368, 446, 447, 453, 493, 545, 577, 640, 651, 658, 659
Սարատ գետ – 461, 467
Սարաֆանդա - 607
Սարբաթ – 185
Սարդա - 167
Սարդաուսալ – 155
Սարդինիա - 161, 510
Սարսար գետ- 379, 483
Սարուջ (Սրուճ) – 247, 251, 343, 438, 440, 484, 485, 515, 547, 551, 632
Սաուսանա - 148
Սաֆիդուդն գետ - 633
Սաֆսաֆի լեռնանցք – 183, 184, 187,
Սելևկիա (Սալուկիա) – 176, 336, 443, 476, 481, 554, 558
Սիբանա (Սիփան) - 270
Սիդոն – 510, 537, 556, 607, 619
Սիլվե (Շալար) - 596
Սիկիլիա - 149, 151, 163, 165, 335, 444, 485, 488, 510, 581, 596, 601
Սիմակ լեռ - 608
Սիմլա - 163
Սինդ - 144, 233, 239, 279, 437, 450, 451, 463, 474, 480, 512, 513, 536, 537, 585, 587, 588
Սինդ գետ – 511, 536
Սինդարադ - 187
Սիննան բերդ – 147
Սիննն – 483, 512, 515, 550, 552
Սիննն Սումայրա - 446, 545
Սինջար – 212, 213, 246, 248, 249, 439, 483, 484, 485, 550
Սինտրա (Շինտրա)- 596
Սիջիլմասա - 587, 610
Սիջիստան – 128, 144, 202, 206, 291, 437, 438, 489, 513, 514, 537, 551, 586, 587, 617

Սիսական (Սիսաջան) – 148, 265, 266, 268, 271, 276, 280, 282, 338, 413, 448, 494, 495, 513, 515, 537, 551, 560, 577, 638
Սիսրիզ - 537
Սիսարա- 159
Սիսիյա (Սիս) - 241
Սիրակուզա (Սարակուս) – 163
Սիրաջ – Տե՛ս Շիրակ
Սիրաջան – 513, 514
Սիրաֆ – 513, 537, 593
Սիրիա - Տե՛ս Ասորիք
Սիֆֆինի (ճակատամարտ) – 212
Սկիթիա - 452, 481
Սղերդ - 549
Սպահան – 206, 292, 331, 337, 345, 397, 425, 427, 462, 482, 489, 490, 513, 515, 537, 551, 563, 573, 609, 617, 627
Սվետիա (Սուայդիյա) - 607
Սուդկանիյա - 185
Սուհրավանդ - 623
Սուղդաբիլ – 266, 448, 494, 495, 515
Սուղուբ – Տե՛ս Սահմանային ամրությունների գոտի
Սունհ ալ-Լուլու – 233
Սուս, Հեռավոր Սուս (Սուս ալ-Ակսա) – 151, 451, 488, 490
Սուրան երկիր – 166
Սուր և Լաքդ - 502
Սուրիա (Հյուսիսային Ասորիք) – 146, 147, 151,
Սուրբ քաղաք (Երուսաղեմ) – 129, 137, 203, 341-343, 513, 607, 609, 610, 618, 619
Սուրտ - 586
Սևերի (Սուդան) երկիրը - 588

Վ

Վադդահիյա - 161, 361
Վադի ալ-Կուրա - 275
Վադի ալ-Սիրա - 438
Վալենսիա (Բալանսիա) - 596
Վահշի ու Արշակի կամուրջներ - 297
Վասպուրական (Բասֆուրաջան, Բուսֆուրաջան) – 148, 265, 266, 270, 271, 282, 338, 448, 494, 495, 551
Վարակ - 270
Վարդանակերտ (Վարսան) - 159, 162, 165, 277, 280, 297, 360, 388, 389, 446, 447, 448, 454, 473, 475, 492, 493, 494, 501, 512, 515, 546, 547, 550, 572, 574, 575, 577, 623, 626, 628, 630, 633, 635, 637, 651, 652, 656, 658
Վարդանի չուկա (Սուկ Վարդան)- 283
Վարդական – 623, 626
Վայս (Վայք) – 266, 495
Վասիթ – 243, 251, 364, 378, 381, 397, 416, 426, 435, 462, 474, 475, 513, 537
Վերա (Ավարի) - 273
Վերին Միջագետք - Տե՛ս Ջազիրա
Վերին Ոստան (Խստան ալ-Ալա) – 206
Վիրք (Ջուրզան) – 143, 265, 266, 272, 273, 281, 282, 338, 345, 360, 375, 377, 413, 416, 448, 476, 494, 513, 515, 538, 551, 635
Վրթանեսի հողը - 168
Վրկան (Ջուրջան)– 128, 154, 155, 180, 202, 427, 428, 449, 451, 491, 497, 502, 537, 552, 561, 563, 574, 629, 635
Վրկանա ծով (Կասպից)- 451, 454, 501, 510-513, 537, 538

Տ

Տաբալա - 536
Տաբրիզ (Թաբրիզ)- 298, 366, 446, 473, 493, 545, 572, 573, 623, 625, 650, 651, 654, 658, 659
Տաբուկ – 224
Տալբաս - 250
Տալ Աբդա - 440, 547
Տալ Աբու-լ-Ջաուզա - 185
Տալ ալ-Հիան – 236
Տալ Ղաֆրան - 252
Տալ Մազարա - 252, 438
Տալ Մահրա - 440, 546
Տալ Մաուզան – 551
Տալ Ջաուֆար – 546, 547
Տալ Վան – 446, 545, 659
Տալ Ֆարուղա - 546
Տալմիս – 162
Տաղադդուղ երկիր - 538
Տամառա - 435, 454, 512
Տայդա - 607
Տայք (Թայր)- 265, 271, 448, 494, 551
Տանախ – 451, 511
Տանհամատ - 585
Տանժեր(Թանջա) – 152, 451, 480, 537, 584, 586, 589
Տասուբ - 627
Տարոն (Թարուն) – 282, 551, 552
Տարենտե(Թուրանդա) – 148, 256, 257
Տարսոն (Թարսուս)– 129, 183, 203, 215, 235, 236, 240-242, 261, 335, 352, 371, 372, 385, 391, 394, 412, 441, 443, 488, 513, 515, 518, 537, 548, 554, 558, 607, 616-618, 620,
Տաքրիտ – 301, 515
Տելլ Մաուզա - Տե՛ս Տալլ Մաուզան
Տիանա (Թուանա) – 129, 148, 150, 174, 176, 184, 188, 203, 232, 441
Տիրնեթ – 123, 424, 435, 513, 537, 562, 587, 588
Տիրերիադ, Տիբերիա (Թաբարիյա) – 136, 513, 537, 574
Տիգրիս գետ – 171, 185, 212, 214, 239, 288, 290, 299, 305, 350, 365, 368, 379, 386, 389, 415, 439, 440, 450, 453, 454, 461, 462, 466, 467, 468, 469, 470-472, 474, 475, 482, 483, 490, 501, 512, 516, 549, 575, 576, 585, 587, 609, 629, 632, 633
Տիգրոն (Մադաին) – 137, 207, 209-212, 288, 289, 342, 393, 435, 446, 453, 461, 474, 490
Տիհամա - 451, 480, 536
Տիննիս – 335, 513, 537, 605
Տիբրիտ (Տաբրիտ) – 230, 416, 483, 550, 552, 609
Տյուրոս (Սուր) – 226, 449, 510, 513, 537, 556, 607, 618, 629, 657
Տորտոզա (Թուրթուչա)- 596
Տրապիզոն – 266, 537, 575, 587, 607, 632
Տրի (Տիար) - 274
Տրիպոլիս (Ասորիքի)– 488, 513, 537, 556, 619, 620
Տրիպոլիս (Աֆրիկայի) – 586, 607
Տրտու (Սարսուր) գետ - 274
Տուլակ (Բուլակ)բերդ - 149
Տուլիա - 485, 488
Տումանի երկիր – 169
Տփղիս (Տաֆլիս) – 163, 265, 272, 273, 278, 367, 376, 388, 394, 447, 448, 452, 475, 476, 494, 512, 524, 546, 547, 574-577, 599, 622, 629, 630, 633-635, 638, 651-653, 656-659
Տևրիկ - 512

ՈՒ

Ուբուլլա - 368, 398, 450, 454, 462, 474, 492
Ուղայբ - 287
Ուխթար - 537
Ուլուա - 586
Ուչնու – 573, 623, 626
Ուշրուսանա - 338, 481, 513, 514, 537
Ուջան - 572
Ուսֆուկա - 597
Ուտի (Ուղ) – 274, 499
Ուրմ – 297, 446, 494
Ուրմիա (քաղաք) – 298, 299, 446, 447, 473, 493, 546, 572, 575, 578, 623, 625, 626, 633, 634, 641, 651, 653, 656-659

Փ

Փայտակարան (Տե՛ս նաև Բայլական) - 447, 448, 454, 473, 476, 493-495, 499, 500, 512, 545, 546
Փոքր Ասիա - 143

Ք

Քաաբա - 435, 584
Քարթլ – 152, 437, 469, 490, 513, 537
Քազմ - 586
Քաղկեդոն – 513, 538
Քայսում – Տե՛ս Քեսուն
Քանղա - 627
Քանիսատ (Քանիսա) ալ-Սաուդա (Սև եկեղեցի)- 188, 243, 441, 537
Քասալ – 431, 498
Քասմիլի - 587
Քարալ - 536
Քարղարիլ ծով (Կասպից) - 496
Քաֆարբայա - 236, 512, 607, 616
Քաֆար Տուսա - 213, 251, 381
Քաֆր Թաբ - 608
Քաֆր Հաղդա - 252
Քաֆր Հաջար – 439, 484
Քեսուն (Քայսում) – 262, 381, 383, 440, 555
Քիլաբ (Շնհեր) ամրոց - 266, 365, 374, 495
Քիլիս - 556
Քիսալ – 273, 278, 448, 498
Քիրան – 169
Քիրման – 128, 202, 206, 355, 364, 427, 437, 451, 489, 490, 513, 514, 537, 551, 585, 587, 591, 617
Քուլաաբա - 446, 493, 545, 573, 578, 659
Քուղա - 586
Քուստի (Քուստասջի) - 273
Քուստի Փառնես (Քուսֆարնես) - 498
Քուֆա - 95, 97, 102, 139, 141-144, 158, 174, 201, 250, 264, 268, 269, 274, 292, 294-297, 303, 304, 308, 343, 346, 353, 368, 378, 380, 381, 416, 424, 435, 451, 453, 461-463, 465-468, 470, 475, 482, 491, 499, 512, 513, 516, 537, 591

Օ

Օման – 421, 422, 427, 451, 462, 474, 482, 490, 501, 502, 536, 553, 584, 592
Օտրանտ - 587

Ֆ

Ֆայյում – 513, 537, 585, 605
Ֆասա - 425, 427, 490, 513, 514, 537
Ֆասիրա - 607
Ֆարմա - 450, 491, 492, 513, 556
Ֆարղանա - 152, 164, 338, 513, 531, 537, 562, 590, 591
Ֆարս – 124, 128, 147, 202, 206, 207, 211, 337, 350, 368, 426, 427, 451, 462, 489, 495, 514, 548, 551, 571, 573, 581, 585-587, 591, 593, 609, 617, 628
Ֆիլա ռուստակ (չրջան) – 159
Ֆիլան – 169, 267, 338, 345, 449, 452, 494, 502
Ֆիղամ (Ֆիկամ)- 150
Ֆուսթաթ – 283, 513, 531, 537, 602-604, 609
Ֆուրան լիճ - 150

ՑԵՂԱՆՈՒՆՆԵՐ, ՏՈՀՄԱՆՈՒՆՆԵՐ, ԿՐՈՆԱԿԱՆ ՀԱՄԱՑՆՔՆԵՐ, ԱՂԱՆԴՆԵՐ

Աբբասյաններ, Աբբասի տուն – 172, 214, 280, 329, 330, 331, 364, 369, 595, 631
Ալաններ – 160, 167, 527
Ալմոհադներ –
Աղլաբիներ – 595, 603
Արաբներ – passim
Արամեացի (նաբթ) – 231, 232, 237, 256, 288, 543
Անապատի բնակիչներ - 98
Արշակունիներ - 553

Բ

Բաթինիներ (իսմայիլականներ) - 637
Բակլիյա (կարմատյան) - 637
Բայալիկա (պավլիկյաններ) - 555
Բայհասիներ - 172
Բանու Ամիր իբն Լուի տոհմ – 145, 277
Բանու Խաչին ցեղ (Կուդաայի մի ճյուղը) – 149
Բանու Ջուամահ ցեղ – 224
Բանու Սաադ - 158
Բանու Ումայյա - Տե՛ս Օմայաններ
Բարմաքի տոհմը – 372, 471
Բուլղարներ (բուրջան) Դանուբի – 156, 509, 587, 589

Գ

Գոգ ու Մագոգ (Յաջուջ Մաջուջ) – 123, 589
Գոթերը – 124

Դ

Դահսաս (ցեղ) - 527

Ե

Եմենի թագավորը – 124, 592
Եմենի ցեղ – 179, 224, 435, 602

Ջ

Ջայդ ցեղ – 172,
Ջութթեր - Տե՛ս ծաթեր

Թ

Թաբարսաբանչահ – 267, 277, 279, 449
Թաթարներ - 538
Թուլունիներ - 329
Թուրքեր, տե՛ս նաև խազարներ – 123, 124, 151, 152, 157, 159, 164, 165, 207, 208, 215, 332, 338, 358, 361, 395-398, 452, 480, 481, 489, 491, 500, 504, 518, 524, 561-563, 588, 589

Ի

Իբադիներ - 564
Իդրիսի – 330
Իյադ ցեղ – 235
Իսմայիլի որդիներ(արաբներ) – 444
Իսրայելցիներ - 329

Լ

Լախմ ցեղ – 228
Լեզգիների թագավոր, Ջարչանչահ - 267
Լիրանի թագավոր, Լիրանչահ - 267

Խ

Խազարներ – 156, 158, 159, 160, 162, 163, 164, 165, 166, 168, 207, 435, 437, 452, 499, 500, 502, 513, 524, 525, 537, 556, 560, 635
Խարիջիներ (չուրատ) – 280, 355, 364, 564
Խոսրովներ (Սասանյաններ) - 561
Խուզերը – 124
Խութեցիներ (ալ-խուայթիյա) - 282
Խուռամիներ (խուռամյաններ) խուռամիյա, տես մուհամմարաներ – 188, 189, 214, 216

Ծ

Ծաթներ (ալ-ջութթ) – 124, 189, 233
Ծանարներ – 280, 367, 375, 376, 388, 390, 391, 394, 498, 500

Կ

Կայս ցեղ – 172, 263
Կուդաա ցեղ – 137, 149
Կուրայշ ցեղ, տոհմ – 307, 311, 348, 379
Կուրաք ցեղ - 311

Հ

Հաբեթի որդիներ (Նոյի որդի) – 122, 124, 333
Հակորիկներ (Յաակուբիյա)- 335

Հայեր – 123, 147, 148, 256, 297, 312, 338, 500, 524, 555, 575, 577, 588, 615, 630, 631, 636, 654, 655
Հայր իրն Ամր տոհմ – 184
Հանաֆիների (Հանիֆիական) մազհաբ - 95
Հանբալիներ - 655
Հաչիմ ցեղ, Հաչիմիներ – 230, 354, 364, 365, 369, 397
Հիմյար ցեղ – 146, 150, 592
Հոռոմներ – passim

Ղ

Ղանմ ցեղ- 186, 235, 335
Ղասսան (ցեղ և իշխանություն) - 228
Ղումիք ժողովուրդ - 276

Մ

Մաաֆիր ցեղ - 602
Մալիքի (մազհաբ) - 383
Մահմեդականներ – passim
Մարդայիտներ (Ջարաջիմա) – 230, 231, 232, 233, 238
Մարուանի որդիներ (Մրվանյաններ), տես նաև Օմայաններ – 226
Մուհամմարաներ (աղանդ)– 180

Յ

Յամիմ ցեղ – 182
Յաջուջ – Տե՛ս Գոգ ու Մագոգ

Ն

Նիմր իրն Կասիթ ցեղ – 171

Շ

Շայբան, Շայբանի ցեղ – 172, 185, 186,
Շիիներ – 353, 655

Պ

Պածինակներ (պեչենեգներ) – 525, 587
Պարսիկներ – 124, 208, 212, 227, 237, 248, 267, 285, 286, 287-290, 292-293, 295-297, 304-306, 308, 309, 329, 336, 338, 341, 342, 351, 420, 438, 448, 461, 473-475, 534, 549, 553, 588, 591

Ջ

Ջաաֆարիների տոհմ – 182
Ջամհ տոհմ – 160
Ջավիդաններ – 473
Ջարաջիմա - 356
Ջուդամ – 228

Ռ

Ռաբիա ցեղ – 172, 175, 249, 355, 373
Ռուդայնիներ - 626

Ս

Սաբիներ – 100, 102, 103, 107, 610
Սակի ցեղ – 232
Սամարացիներ – 100, 102, 103
Սարիրի տեր – 267, 449, 452, 494, 502, 574
Սիյաբիջաներ – 233
Սիրիացիներ – 228, 347, 348
Սլավոններ (Սակալիբա) – 156, 167, 237, 278, 332, 335, 357, 394, 437, 449, 462, 480, 485, 500, 509, 514, 538, 588, 589, 595
Սմբատի որդիներ (բանու Սինբաթ) Բագրատունիներ - 642
Սուլայմ ցեղ – 163, 164, 257
Սուղդեր, սողդեր – 124, 151, 158,
Սևորդիք (Սիավարդիյա)- 274, 499

Վ

Վահրարդանչահ, լեռան խաքան - 267

Տ

Տամիմ ցեղ – 186, 249, 291
Տաննուխ ցեղ – 230, 235, 609
Տաղլիբ ցեղ - 99, 100, 109, 110, 184, 185, 186, 252-254
Տումանի ժողովուրդ - 279

Ք

Քիլաբ ցեղ - 275
Քրդեր – 124, 147, 218, 274, 294, 299, 483, 499, 573, 626, 628, 653, 654

Օ

Օմայաններ – 133, 234, 238, 261, 281, 297, 298, 309, 330, 363, 492, 516, 563, 598, 611, 628, 631

Ֆ

Ֆաթիմյաններ – 603, 605
Ֆերղանացիներ – 124

ԱՐԱԲ ՄԱՏԵՆԱԳԻՐՆԵՐ
Թ-Ժ ԴԱՐԵՐ

Կազմի ձևավորում	**Գ. Մարիկյան**
Համակարգչային շարվածք	**Վ. Տեր-Ղևոնդյան** **Մ. Յավրումյան**
Համակարգչային ձևավորում	**Ա. Աղուզումցյան**
Սրբագրիչ	**Վ. Դերձյան**

Ստորագրված է տպագրության 21.11.05 թ.:
Թուղթը՝ օֆսեթ: Տպագրությունը՝ օֆսեթ: Չափսը՝ 60x84 $^{1}/_{16}$:
Հրատ. 38.5 մամուլ, տպագր. 44.0 մամուլ = 41.0 պայմ. մամուլի:
Տպաքանակ՝ 300: Պատվեր՝ 101:

Երևանի համալսարանի հրատարակչություն, Երևան, Ալ. Մանուկյան 1

Երևանի համալսարանի տպարան, Երևան, Աբովյան 52

9(47.925)
Ц-82 +

42